ՎԱՉԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ

Ելույթներ և հոդվածների
ժողովածու

«Վ.Ի.Վ. ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ»
ԵՐԵՎԱՆ
2002

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Մեր շարժումը ձևավորվեց, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովուրդը արտահայտեց Հայաստանին վերամիավորվելու իր արդար և բնական ցանկությունը, որը վավերացվեց ԼՂԻՄ Մարզային խորհրդի փետրվարի 20-ի որոշմամբ[1]: Եվ քանի դեռ Ղարաբաղը շարունակում է իր արդար պայքարը, մենք իրավունք չունենք նրան մենակ թողնել:

2. Շարժման նպատակն է՝ հիմնվելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա և առաջնորդվելով ԽՍՀՄ սահմանադրությամբ, հասնել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչության օրինական պահանջի բավարարմանը:

3. Կենտրոնական ու տեղական մամուլի, լրատվական գործակալությունների ու հեռուստատեսության խեղաթյուրված ինֆորմացիան, իշխանությունների հանցավոր անճարակությունը կամա թե ակամա բորբոքեցին ամբոխի վայրենի կրքերը, որոնք հանգեցրին Սումգայիթի ջարդին[2]: Բոլոր մեղավորները պետք է արժանի պատիժ կրեն օրենքի առաջ: Բայց նույնիսկ այդ սարսափելի դեպքերը չկարողացան շեղել մեր ժողովրդին իր ընտրած ճանապարհից, չհանգեցրին ազգամիջյան ընդհարումների Հայաստանում: Դա մեկ անգամ ևս ԽՍՀՄ բոլոր ժողովուրդներին և ամբողջ աշխարհին ցույց տվեց, որ շարժումը ոչ թե ազգամիջյան ընդհարում կամ թշնամություն է, այլ արդար, դեմոկրատական, սահմանադրական շարժում, որն իր պայքարում օգտագործում է ողջ քաղաքակիրթ աշխարհի ընդունած ձևերն ու միջոցները:

4. Շարժումն ուղղված չէ որևէ ժողովրդի դեմ: Մեր սկզբունքն է՝ խաղաղ ու համերաշխ ապրել հարևան բոլոր ժողովուրդների հետ: Բայց հանրահայտ է, որ խաղաղությունը և համերաշխությունը կայուն են լինում միայն այն դեպքում, երբ չեն ոտնահարվում ժողովրդի ազգային շահերը:

5. Համաշխարհային պատմական փորձը ցույց է տալիս, որ որևէ ժողովուրդ կամ պետություն չի կարող ունենալ հովանավոր ժողովուրդներ կամ պետություններ, այլ կարող է ունենալ դաշնակիցներ, որոնց դաշինքը պայմանավորվում է ընդհանուր շահերով և այդ շահերը պաշտպանելու յուրաքանչյուրի ընդունակությամբ: Չկան մշտական թշնամիներ և մշտական բարեկամներ, կան մշտական ազգային շահեր: Մեր միակ հենարանը մեր ժողովրդի հավաքական ուժն է:

6. Շարժումը կրոնական երանգ չունի, և մենք գտնում ենք, որ ճիշտ չէ այն տեսակետը, թե կա հայ ժողովրդին սպառնացող որևէ կրոնական շարժում: Խաչակրաց արշավանքները

վաղուց ավարտվել են: Այժմ ժողովուրդների փոխհարաբերություններում ազգային և պետական շահերը շատ ավելի մեծ դեր են խաղում, քան կրոնական ընդհանրությունները ու հակասությունները:

7. Շարժումը մերժում է շարունակ քարոզվող այն սխալ և կեղծ «դիվանագիտությունը», որն օգտագործում է համաժողովրդական քծնանքը և հավատարմության անտեղի հավաստումները: Համաշխարհային պատմության մեջ դեռ ոչ մի հարց չի լուծվել նման ճանապարհով: Մեր միակ հենարանը մեր ժողովրդի հավաքական ուժն է:

8. Եթե ոմանց թվում է, թե մեր ժողովրդի արդար շարժումը կարելի է կասեցնել սումգայիթներով, ապա նրանք չարաչար սխալվում են:

«Ղարաբաղ» շարժման կազմկոմիտե[3]
1988թ., մարտի 19

ԻՆՉ Է ՊԱՆԻՍԼԱՄԻԶՄԸ ԵՎ ԻՆՉ Է ՊԱՆԹՈՒՐՔԻԶՄԸ

Մեր սահմանադրական շարժման հակառակորդները ցանկանում են, որ «սիմետրիայի» համար Հայաստանում ևս ընդհարում տեղի ունենա հայերի և ադրբեջանցիների միջև: Դա հնարավորություն կտար այս շարժումը ներկայացնել որպես ընդհարում երկու բարբարոս ազգերի միջև և ոչ իբրև դեմոկրատական, սահմանադրական շարժում:

Հայ և ադրբեջանցի ժողովուրդներին հակադրելու համար հաճախ օգտագործում են պանիսլամիզմ և պանթուրքիզմ հասկացությունները:

Ինչպես հայերը, այնպես էլ ադրբեջանցիները, սկսած 1920-ական թվականներից, զգալիորեն կտրվեցին համաշխարհային քաղաքական մտքի զարգացումից: Մինչդեռ պանիսլամիզմ և պանթուրքիզմ գաղափարներն այն ժամանակներից ի վեր շատ են փոխվել և այժմ նոր իմաստ ու բնույթ ունեն:

Պանիսլամիզմը նախապես եղել է վերազգային կրոնաքաղաքական շարժում՝ ուղղված այլակրոն ժողովուրդների դեմ: Հետագայում պանիսլամիզմը տրոհվեց, և տարբեր պետություններ սկսեցին օգտագործել այն իրենց քաղաքական նպատակների համար: Ներկայումս պանիսլամիզմն ուղղված չէ ոչ մահմեդական որևէ ժողովրդի դեմ, այն մի հոսանք է, որի նպատակն է միավորել իսլամական երկրներին՝ ի հակադրություն Արևմուտքի տնտեսական և մշակութային ներխուժման: Բայց իսլամական երկրների ազգային և պետական շահերն ու հակասությունները մեր օրերում ավելի մեծ դեր են խաղում, քան նրանց միավորմանը ձգտող կրոնական գաղափարախոսությունը: Հենց այդ պատճառով էլ իսլամական երկրները հաճախ դաշնակցում են Արևմուտքի կամ Արևելքի երկրների հետ:

Պանթուրքիզմի նպատակն է եղել մի պետության մեջ միավորել բոլոր թուրքալեզու ժողովուրդներին՝ Խաղաղ օվկիանոսից մինչև Բալկաններ: Դա չհաջողվեց ինչպես XIX դարի վերջին, այնպես էլ XX դարի սկզբին: Այժմ այդ խնդիրն առավել ևս անլուծելի է: Այդ պատճառով պանթուրքիզմը, կորցնելով իր նախկին քաղաքական ուժը, ունենալով փոքր քաղաքական կշիռ, պահպանվել է որպես մշակութային, պատմագիտական, լեզվական, կրոնական, էթնիկական ընդհանրության գաղափար: Երբեմն էլ թուրքալեզու ժողովուրդների տնտեսական, սոցիալական դժգոհությունները հանգեցնում են պանթուրքիզմի գաղափարական առանձին բռնկումների, որոնք երկարատև քաղաքական շարժում չեն դառնում:

Մեր ժողովուրդը պետք է իմանա, որ թե՛ պանիսլամիզմը և թե՛ պանթուրքիզմն՝ իրենց այսօրվա վիճակով սկզբունքորեն բնավ ուղղված չեն հայության դեմ: Բավական է նշել, որ

հարյուր հազարավոր հայեր ապրում են իսլամական երկրներում՝ պահպանելով իրենց ազգային դեմքը, դպրոցը, թերթը, եկեղեցին:

«Ղարաբաղ» շարժման կազմկոմիտե
1988թ., մարտի 22

ՍԻՐԵԼԻ՛ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Այժմ, երբ ամբողջ աշխարհի հայությունը համախմբվել է Ղարաբաղի հարցի արդար լուծման շուրջ, երբ մենք բոլորս զարմանքով տեսանք, թե ինչպիսի հզոր կենսական ուժով է օժտված հայ ազգը, երբ սկսեցինք հավատալ, որ մեր ազգը մեծ ապագա ունի և կարող է նորից կանգնել մյուս քաղաքակիրթ ազգերի շարքում, իր լուման ներդնել համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ, ավելի ու ավելի մեծ թվով հայեր սկսեցին գիտակցել՝ այն առանցքը, որի շուրջ հավաքված է մեր ազգը, մեզ միմյանց կապող թելը հայոց լեզուն է:

Դարերի ընթացքում կորցնելով պետականությունը, ենթարկվելով բազմաթիվ հողային տրոհումների, զրկվելով Մեծ Հայքի տարածքի հիմնական մասից՝ մենք կորցրել ենք նաև հայության մի շարք հատվածներ ոչ միայն պատերազմների և ջարդերի պատճառով: Հայությունից հեռացել են նրանք, ովքեր դադարել են խոսել հայերեն, և որոնց հետագա սերունդները չեն ստացել հայկական կրթություն: Մեր թշնամիները միշտ աշխատել են խլել մեզանից մեր լեզուն, փակել հայկական դպրոցները: Դա է պատճառը, որ Ղարաբաղի հայության հիմնական պահանջներից մեկն էլ մայրենի լեզվով կրթությունն է:

Ապագայի հանդեպ մեր ազգի հավատի կորուստը, կեղծ ապահովության պատրանքը հանգեցրել են այն բանին, որ նույնիսկ Հայաստանում ապրող հայերի մի մասը կտրվել է իր ազգային լեզվից, ստեղծվել է հայ ժողովրդի մի նոր, ոչ հողային բնույթի տրոհում:

Այժմ իրավիճակը փոխվել է, մենք սկսել ենք հավատալ մեր ազգի ապագային, պայքարի մեջ ենք, պետք է գնանք մինչև վերջ մեր ազգային նպատակներն իրագործելու համար:

Նա, ով իր զավակին չի տալիս հայկական դպրոց, մի կտոր է պոկում հայությունից, թուլացնում նրա ուժը:

Նա, ով իր զավակին չի տալիս հայկական դպրոց, չի հավատում իր ազգի ապագային, հետևաբար իրեն դուրս է համարում մեր պայքարից:

Նա, ով իր զավակին չի տալիս հայկական դպրոց, դժբախտացնում է նրան, կտրում ազգը սնուցող հազարամյակների աղբյուրից՝ հայոց լեզվից:

Ղարաբաղյան շարժման շատ մասնակիցներ, մանավանդ նրանք, ովքեր ծնվել ու մեծացել են Հայաստանից դուրս, երկար տարիներ կարևորություն չեն տվել հայոց լեզվի իմացությանը: Այդ մոլորությունը ողբերգություն էր դարձել մեզ համար: Մենք գիտակցեցինք այն անհերքելի ճշմարտությունը, որ առանց մայրենի լեզվին տիրապետելու՝ հնարավոր չէ լինել ժողովրդի հարազատ զավակը, զգալ նրա ոգին, հարգել մյուս ժողովուրդներին, նրանց լեզուն ու մշակույթը:

Ղարաբաղյան շարժման մասնակիցներ
Իգոր Մուրադյան
Վազգեն Մանուկյան
1988թ., մայիսի 7

ՄԵՆՔ ԸՆՏՐԵՑԻՆՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Երբ սկսեցինք այս պայքարը, բոլորս էլ գիտակցում էինք, որ մեծ հույսեր չկան: Հայ ժողովուրդը ընտրեց սահմանադրական ուղին: Մենք գիտեինք, որ շատ փորձություններ են լինելու և գնացինք սահմանադրական ուղիով, մեզ պատասխանեցին Սումգայիթով: Եկեք հասկանանք. մենք խաղալիք կդառնանք, եթե ընդհարումներ սկսենք ադրբեջանցիների հետ, նրանք էլ կլինեն խաղալիք: Ինչու՞ մեզ պատասխանեցին Սումգայիթով: Ինչպես երևում է, մենք, առանց խորը գիտակցելու, կպանք պետության շատ նուրբ թելերին: Ո՞րն է այդ թելը, դա

մեր ընտրած սահմանադրական ուղին է: Այս պետությունն ուզում է ամբողջ աշխարհին ապացուցել, որ իրավական, դեմոկրատական պետություն է և կարողանում է գնալ սահմանադրական ուղիով: Բայց մեր շարժումը գնաց այդ ուղիով, և դեմն արգելք դրվեց: Ամեն ինչ արվում է, որ ընդհարում սկսվի հայերի և ադրբեջանցիների միջև: Դա չի լուծի Ղարաբաղի հարցը, դա կշեղի մեզ: Ո՞րն էր մեր պահանջը, երբ առաջին անգամ սկսեցինք համագործակցել Ռուսաստանի հետ. ուզում էինք ստեղծել անկախ պետություն: Ինչո՞վ ավարտվեց՝ կոտորածով: 15 թվին աղաչում էինք, որ փրկեն մեր կյանքը: Մենք Ղարաբաղն էինք ուզում, հիմա լաց ենք լինում Սումգայիթի զոհերի համար:

Ո՞րն է ելքը: Այն ամենը, ինչը շեղում է սահմանադրական ուղուց, սխալ է, կկործանի և՛ ժողովրդին, և՛ Ղարաբաղի հարցը: Պետք է գնալ սահմանադրական ուղիով: Հունիսի 15-ին Գերագույն խորհրդի նստաշրջանն է: Պետք է պահանջել, որ ժողովուրդը, կառավարությունը, պատգամավորները պատասխան տան Ղարաբաղի ժողովրդին: Դա է ուղին: Ոչ մի դեպքում չպետք է շեղվել այդ ուղուց, շեղումը կորստաբեր է: Ես մի ուրիշ բան էլ ասեմ. շարժումն ընդլայնել է իր սահմանները: Սա արդեն միայն Ղարաբաղի հարց չէ: Սահմանադրական ճանապարհին կիրառվեց գործադուլի գաղափարը, որն ընդունում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը: Փետրվարյան գործադուլները տեղի ունեցան մեր խանդավառության շնորհիվ: Մեզ գործադուլը պետք էր: Գործադուլների մասին որոշումներն այսուհետև պետք է ընդունել շրջահայացորեն և հասնել այն բանին, որ գործադուլը դառնա մեր զենքը: Առաջարկում եմ՝ բոլոր գործարաններում, հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծել գործադուլային կոմիտեներ, որպեսզի հարկ եղած դեպքում գործադուլ արվի ոչ թե ինչ-որ մեկի ասելով, հրապարակում հավաքվելով, բորբոքվելով, այլ սառը դատողությամբ, որոշման մեջ ամեն ինչ հաշվի առնելով: Անհրաժեշտ է ստեղծել այդպիսի կազմակերպությունների ցանց Հայաստանում:

Այսօրվա գործադուլը պետք է պայմանավորված լիներ Ղարաբաղի գործադուլով: Բայց նրանց գործադուլը նույնպես հրահրված է: Գտնում եմ, որ Լիգաչովի խոսքերը չպետք է այդպես բորբոքեին Ղարաբաղի ժողովրդին: Արդեն նախորդ ամսվա ընթացքում շատ բնական կապեր ստեղծվեցին Հայաստանի և Ղարաբաղի միջև, որոնք կարող էին շարունակվել, որոշ դադար էր հարկավոր:

Պետք չէր այդպես սուր ընդունել: Եվ շատ սխալ կլինի, եթե ամեն դատարկ խոսքից Ղարաբաղում գործադուլ արվի, մենք էլ հավաքվենք այստեղ, որոշենք գործադուլ անել: Գործադուլը զենք է մեր ձեռքին, որը անհրաժեշտ է կշռադատված, նպատակահարմար պահին գործի դնել: Գիտեմ, որ հիասթափեցնում եմ ձեզ, դուք սպասում էիք, որ հիմա գործադուլի կկոչեմ: Բայց ես գտնում եմ, որ դեռ այդ պահը չէ: Մինչև հունիսի 15-ը կպահանջենք, որ նստաշրջանն ընդունի համապատասխան որոշում: Մինչ այդ Ղարաբաղում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, որ ստիպված լինենք վերանայել այդ որոշումը: Ես նորից եմ հիշեցնում, որ գործադուլի որոշումները կատարվեն սառը դատողությամբ, կշռադատված: Եվ մի ուրիշ բան. շարժումն սկսվեց որպես Ղարաբաղյան շարժում, բայց մեծացրեց իր սահմանները: Այժմ մեր որոշումներից է կախված ոչ միայն Ղարաբաղի հարցը, այլև հայ ժողովրդի ճակատագիրը:

Որոշում ընդունելու համար մոտ ժամանակներս ստեղծելու ենք իրավասու մարմին: Այս հարցի կապակցությամբ երևի լավ կլինի, որ բոլորս համագործակցենք: Չդադարեցնելով մեր պայքարը՝ խորհրդակցություններ կհրավիրենք պարզելու համար, թե ինչպիսի մարմին է պետք, որ ղեկավարի այս համազգային շարժումը: Ղարաբաղի գործադուլի արդյունքում ահա արդեն հինգ օր է՝ բուհերի ուսանողները նստած են հարթակին: Կարծում եմ, որ ամբողջ ժողովրդի անունից պետք է շնորհակալություն հայտնենք նրանց: Հայտնեմ նաև, որ համալսարանի մի խումբ դասախոսներ որոշել են մինչև լույս նստել ուսանողների հետ:

Վ. Մանուկյանի ելույթը Ազատության հրապարակում,
1988թ., հունիսի 2

ՆՊԱՏԱԿԸ ՄԵՐ ՇԱՐԺՈՒՄԸ ՋԱՐԴԵԼՆ Է

Այս ամենի դիտավորությունը հասկանալի է. ոչինչ պատահական չի լինում: Սումգայիթի նպատակը մեզ վախեցնելն էր: Սրա նպատակը մեր շարժումը ջարդելն է, ժողովրդին

բորբոքելը, քաոսային վիճակ ստեղծելը և այդպիսով ընդմիշտ Ղարաբաղի հարցը փակելը: Այնպես որ մենք պետք է շարունակենք մեր պայքարը, բայց լինենք զգոն: Եվ միշտ հաշվի առնենք հակառակորդի քայլերը:

Այժմ խնդրում եմ նախ՝ մինչև ժամը 10-ը ազատել հրապարակը, այստեղ մնալն իմաստ չունի, երկրորդ՝ եթե կոմիտեի անունից անծանոթ մարդիկ հայտնվեն, նրանց չենթարկվեք, շատ հավանական է, որ այդպիսի փորձեր լինեն: Մեր առջև դրված է մի մեծ խնդիր. պայքարը լինելու է երկարատև, կլինեն նաև զոհեր, բայց չպետք է հրաժարվել պայքարից, պետք է լինել զգոն: Իսկ վաղը առավոտյան ժամը 10-ին կհանդիպենք այստեղ:

Հայտնեք ձեր ծանոթներին, բարեկամներին, որ համազգային գործադուլ է լինելու: Եթե այս հրապարակը շրջապատվի զորքով, ապա միանգամից ուժի մեջ է մտնելու «մեռյալ քաղաք» սկզբունքը. գործադուլ՝ առանց միտինգների, առանց երթերի: Մենք միջոց կգտնենք՝ կհաղորդենք: Զորքի հետ ոչ մի ընդհարում:

Վ. Մանուկյանի ելույթը Ազատության հրապարակում օդանավակայանի[4] դեպքերից անմիջապես հետո, 1988թ., հուլիսի 5

ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԻՆ

«Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը ձեզ կազատի»:
Ավետարան ըստ Հովհաննեսի, գլ. 8, հ.32

1988թ. փետրվարի 20-ի՝ Ղարաբաղի Մարզխորհրդի հայտնի որոշմամբ հայ ազգային-ազատագրական պայքարը մի նոր փուլ մտավ: Հայաստանի հետ Ղարաբաղի վերամիավորման խնդիրը դրվեց սահմանադրական հիմքերի վրա: Պայքարի հիմնական միջոցներից Հայաստանի և Ղարաբաղի հայությունը ընտրեց գործադուլը: Հարցի նպաստավոր լուծման մեր հնարավորությունները գնահատելիս նախ անհրաժեշտ է հասկանալ Մոսկվայի դիրքորոշումը Ղարաբաղի հարցում:

Միանգամից պետք է մերժել այն սխալ կարծիքը, թե քանի որ Ռուսաստանը, ինչպես և մենք, քրիստոնյա երկիր է, ապա նրա շահերը պահանջում են նեցուկ կանգնել նույն կրոնը դավանող ժողովրդին: Արդեն վաղուց է, որ համաշխարհային քաղաքականության մեջ քրիստոնեությունը դեր չի խաղում, այսինքն՝ ոչ մի քրիստոնյա երկիր առևտրական, ռազմական դաշինքներ կնքելիս հաշվի չի առնում դիմացինի քրիստոնյա կամ ոչ քրիստոնյա լինելը: Խաչակրաց արշավանքները վաղուց է, ինչ ավարտվել են, և այժմ ժողովուրդների ու պետությունների փոխհարաբերություններում ազգային և պետական շահերը շատ ավելի մեծ դեր են խաղում, քան կրոնական ընդհանրությունները ու հակասությունները: Չհասկանալով այդ պարզ սկզբունքը և ապավինելով քրիստոնյա Ռուսաստանին՝ մենք անընդհատ կորցրել ենք հողային տարածքներ և միլիոնավոր հայրենակիցներ:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ-ում բնակվող մահմեդականներին, ապա նույն վիճակում գտնվելու պատճառով ազգային, տնտեսական, սոցիալական դժգոհությունները հանգեցնում են իսլամական կրոնի շուրջ նրանց բնական միավորմանը՝ ընդդեմ կենտրոնական իշխանությունների: Այդ միավորումը ուղղված չէ հայերի դեմ: Ուստի վտանգի կենթարկենք մեր ժողովրդին, եթե դիմակայենք այդ միավորմանը, ակամա գործիք դառնանք և համախմբված մահմեդական դժգոհությունը ուղղենք մեզ վրա: Ընդհակառակը, ապրելով նույն երկրում, մենք ունենք բազմաթիվ ընդհանուր շահեր այդ ժողովուրդների հետ: Նշենք նաև, որ հարյուր հազարավոր հայեր ապրում են իսլամական երկրներում՝ պահպանելով իրենց ազգային դեմքը, դպրոցը, թերթը, եկեղեցին: Հարցադրումը պետք է պարզ ու հստակ լինի. մեր վեճը և դրա հանգուցալուծումը ոչ թե մահմեդականության, այլ Ադրբեջանի ու Մոսկվայի հետ է կապված:

Ինչու՞ Մոսկվան շահագրգռված չէ՝ արդար լուծելու Ղարաբաղի հարցը, ինչու՞ է դա հակասում նրա շահերին:

ա) Ամեն մի տարածքային պահանջի, նույնիսկ երկրի ներսում, նա բացասաբար է վերաբերվում, որովհետև Ռուսաստանի հսկա տարածքը բաղկացած է ուրիշ ժողովուրդներից զավթած հողերից: Նա շրջապատված է երկրներով, որոնցից համարյա յուրաքանչյուրն ունի նման պահանջ ԽՍՀՄ-ից, և այդ պատճառով ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության հիմնահարցերից մեկն է՝ պահպանել ներկա վիճակը՝ հրաժարվելով քննարկել որևէ հողային պահանջ: Ամեն մի այդպիսի քննարկում՝ մանավանդ հիմնավորված պատմական նախադրյալներով, վտանգավոր է և կարող է որպես նախադեպ ծառայել:

բ) Շատ վտանգավոր է համարվում որևէ հարց լուծել ժողովրդի պահանջով. դա կարող է վարակիչ օրինակ ծառայել ինչպես երկրում խճճված ազգային հարցի լուծման համար, որը կհանգեցնի կայսրության փլուզման, այնպես էլ սոցիալ-տնտեսական հարցերի լուծման առումով, որը կարող է խլել իշխանությունը տիրող խավի ձեռքից:

Այս երկու հանգամանքներն այնքան հզոր են, որ եթե նույնիսկ Ադրբեջանը փետրվար ամսին համաձայներ զիջել Ղարաբաղը, Մոսկվան ամենայն հավանականությամբ թույլ չէր տա: Այսպիսով Ղարաբաղի հարցը դրական լուծելու համար հայերը պետք է դիմեին այնպիսի միջոցների, որոնց կիրառումը և հետևանքների վտանգավորությունը ԽՍՀՄ-ի համար կգերակշռեին նշված երկու փաստարկին: Հայերն ընտրեցին առաջին հայացքից ամենաանմեղ միջոցը՝ սահմանադրական ուղին և որպես պայքարի ձև՝ գործադուլները: Մեզ պատասխանեցին Սումգայիթով, այսինքն՝ օգտագործեցին շատ հզոր և օգտագործողին վարկաբեկող միջոց: Դա ցույց է տալիս, որ մեր ընտրած ճանապարհն այնքան էլ անմեղ չէ, և Մոսկվան դա շատ վտանգավոր է համարում:

Ինչն է խնդիրը: Տնտեսության և արտաքին քաղաքականության մեջ հասնելով ճգնաժամային վիճակի՝ ԽՍՀՄ-ի ղեկավարությունը գիտակցեց, որ այս կացությունից դուրս գալու միակ միջոցը երկրի ներսում վարչական ղեկավարման ձևերը ինչ-որ չափով սահմանափակելն է, նաև արտաքին աշխարհին որպես դեմոկրատական, իրավական պետություն ներկայանալը, որպեսզի վստահություն ներշնչելով և ժամանակավոր դադար ստանալով՝ կնքի ձեռնտու պայմանագրեր, արտասահմանից ստանա վարկեր, նոր տեխնոլոգիաներ, զարգացնի նորագույն ռազմական տեխնիկայի արտադրանքը: Այս նոր քաղաքականությունը կապված է Գորբաչովի անվան հետ, բայց պետք է հասկանալ, որ դա նրա քմահաճույքը չէ, այլ քաղաքական խիստ անհրաժեշտություն, որը գիտակցում է ԽՍՀՄ-ի ողջ ղեկավարությունը: Այս պայմաններում հայերի կողմից սահմանադրական ուղիով կատարվող համառ, հետևողական քայլերը և գործադուլները, որոնք ցնցում են ամբողջ սոցիալիստական ճամբարը՝ առաջ բերելով ազգային-ազատագրական և սոցիալական արդարության համար մղվող պայքարի մեծ ալիք, իշխանություններին դնում են ծանր կացության մեջ: Կամ պետք է կատարել մեր ժողովրդի սահմանադրական կամքը, որը ինչպես ասացինք, հակասում է պետության արմատական շահերին, կամ դիմել պետական տեռորի և դրանով իսկ արժեզրկել նոր քաղաքականության շնորհիվ ձեռք բերված բոլոր առավելությունները: Գտնվեց երրորդ ճանապարհը՝ հայերին ջարդել ադրբեջանցիների ձեռքով՝ ռուսական կայսրությունում բազմիցս կիրառված ու ստուգված մի ձև:

Փետրվարի 20-ին Ղարաբաղի Մարզխորհրդի հայտնի որոշմանը անմիջապես հետևեց քաղբյուրոյի կտրուկ մերժումը, որը, ցույց տալով Մոսկվայի դիրքորոշումը, ոտքի հանեց իշխանություններին հլու-հնազանդ ադրբեջանցիներին: Այդ որոշումն՝ իր անարդարությամբ, վիրավորական շտապողականությամբ, դժգոհության մեծ ալիք առաջացրեց Ղարաբաղում և Հայաստանում, որտեղ տեղի ունեցան բողոքի բազմամարդ ցույցեր, և սկսվեց գործադուլ: Դա անակնկալ էր կենտրոնական իշխանությունների համար: Ծայր առան կենտրոնական մամուլի և հեռուստատեսության միջոցով կազմակերպված վայրագ հարձակումները հայության վրա, երկդիմի և գրգռիչ հաղորդումները ժողովուրդների բարեկամության մասին, Կատուսևը[5] արեց իր սադրիչ հայտարարությունը: Այդ բոլորի արդյունքը եղավ հայերի ջարդը Սումգայիթում:

Ըստ հավաստի վկայությունների Մոսկվան նախապես գիտեր կազմակերպվող ջարդերի մասին: Հայտնի է, որ Լուկյանովը[6] Երևանում Կենտկոմի անդամի համար անսպասելի խորաթափանցությամբ նախազգում և սպառնում էր, որ Ադրբեջանում կարող են տեղի ունենալ

ջարդեր հայերի նկատմամբ: Պատմությունից գիտենք, որ ամեն մի ջարդի հետևում կանգնած են իշխանությունները:

Սումգայիթի նպատակն էր վախեցնել հայերին, ետ պահել նրանց իրենց արդար պահանջից: Չստացվեց: Ղարաբաղը և Հայաստանը շարունակում են գնալ իրենց ընտրած ճանապարհով՝ անընդհատ հարվածներ ստանալով միտումնավոր անպատիժ թողնված և դրանով իսկ լկտիացած ադրբեջանցիներից:

Ի՞նչ նպատակ են հետապնդում այդ կազմակերպված հարվածները:

1. Կոտորածներով սարսափեցնել ժողովրդին, ստիպել, որ հրաժարվի իր պահանջներից:

2. Հայերին համբերությունից հանելով՝ ստեղծել նույնպիսի ընդհարում Հայաստանում, որը հնարավոր լինի որակել «հայկական Սումգայիթ» և ողջ աշխարհին այս ամբողջ պատմությունը ներկայացնել ոչ թե որպես սահմանադրական արդարացի պահանջ, այլ իբրև երկու բարբարոս ժողովուրդների ազգայնամոլ պայքար՝ դրանով իսկ մոռացնել տալով, որ սեղանին դրված է ժամանակակից քաղաքակրթության հիմնաքարերից մեկը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը:

3. Հնարավորություն ունենալ երկդիմի հայտարարություններ անելու, թե իբր իշխանությունները չեն բավարարում հայերի արդարացի պահանջը, քանզի վախենում են, որ հարցի դրական լուծման դեպքում տեղի կունենան հայերի զանգվածային սպանություններ Ադրբեջանում, և իշխանություններն անզոր կլինեն այդ ջարդերի դեմն առնել:

Անընդհատ կրկնելով այս վերջին հայտարարությունը՝ իշխանությունները դիտավորյալ երկու ժողովուրդներին դրդում են ընդհարումների՝ ձևացնելով, թե իբր վախենում են միայն ջարդերից, դրանով իսկ հուշելով նրանց, որ հարցը կլուծվի նրա օգտին, ով կարող է ավելի շատ սումգայիթներ կազմակերպել:

Պետք է գիտակցել, որ հայ-ադրբեջանական ընդհարումները ԽՍՀՄ-ի համար լուրջ վտանգ չեն ներկայացնում, այն դեպքում, երբ մեր սահմանադրական շարժումը, գործադուլները, առաջացնելով ազատագրական պայքարի ալիք ինչպես երկրի ներսում, այնպես էլ սոցիալիստական ճամբարում, լուրջ քաղաքական ճնշում են Մոսկվայի վրա:

ԽՍՀՄ-ի այժմյան իրավիճակում մեր ժողովուրդն իր արդար պայքարի համար ընտրել է ամենաազդեցիկ ուղին, որը, հուսով ենք, վաղ թե ուշ կբերի հաղթանակի: Բայց եթե այնուամենայնիվ ԽՍՀՄ-ը իր քայլերով վերջնականապես ապացուցի, որ իր շահերը ոչ մի կետում չեն համընկնում մեր ազգային շահերի հետ, ապա չպետք է մոռանալ, որ սահմանադրության մեջ կա նաև 72-րդ հոդվածը:

Ղարաբաղյան շարժման
Հայաստանի կոմիտեի անդամ
ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
1988թ., հուլիսի 16

ԽՍՀՄ ԳԽ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ՈՐՈՇՈՒՄԸ[7]

Մամուլի մասին խոսելիս մենք մոռացանք ամենաէականը: Գորբաչովն իր ելույթում ասաց, որ մենք պետք է ամեն ինչ բաժանենք այնպես, որ հաղթած և պարտված ժողովուրդներ չլինեն: Այսօր առավոտվանից Բաքվի բոլոր հայկական տների առաջ ադրբեջանցիները զուռնա-դհոլով երգում-պարում են, ուրախություն է նրանց մոտ, իսկ մեզ մոտ սուգ է: Գիշերը ժողովուրդը չի քնել, իսկ հիմա հարյուր հազարներով հավաքված սրտատրոփ լսում են իրար. կարևորը դա է, դա է պետք նշել:

Մենք միշտ ձգտել ենք, որ ռուսները մեզ շատ սիրեն: Նրանց ասում ենք՝ մենք քաղաքակիրթ ազգ ենք, վայելուչ ենք պահում մեզ փողոցներում, խոտերը չենք տրորում, լավ ենք խոսում, երգում ենք, մեզ սիրեք, մեզ լավություն արեք: Երբեք այդպիսի ազգին լավություն չեն անում: Ազգը ամեն ինչի պետք է հասնի իր ուժով, իր համախմբվածությամբ: Մենք այժմ

ցույց տվեցինք մեր ուժը, և խորհրդային մամուլի պատասխանը կոմիտեին ապացույցն էր մեր ազգի հոգեկան ու մտավոր բարձր հատկությունների: Մենք առաջին անգամ կարողացանք խփել նպատակակետին, ցույց տալ, որ ուժ ենք, որ մեզ պետք է հաշվի առնել: Եվ մենք կշարունակենք խփել, որպեսզի հասնենք մեր նպատակին: Բայց մի հարց է առաջանում. երբ դու խփում ես, քեզ էլ կարող են խփել: Այժմ կա նաև այդ վտանգը: Հասկանանք նաև այդ հանգամանքը: Քաղաքը շրջապատված է զորքով, վայրագ զորքով, որը սպասում է հարմար պահի, որ հարձակվի ժողովրդի վրա: Երկու օր առաջ ինձ կանչեց ՊԱԿ-ի կադրերի պետի տեղակալը և ասաց, որ մեր ժողովրդի պատմության մեջ սև էջ կգրվի: Ես նրան պատասխանեցի, որ դա սև էջ կլինի նաև Խորհրդային Միության պատմության համար:

Միշտ պետք է հաշվի առնել այդ հանգամանքը: Մենք ապրում ենք մի պետության մեջ, որն առանց աչք թարթելու՝ կարող է 20 միլիոն մարդ ոչնչացնել: Սակայն գիտենք նաև պետության այժմյան վիճակը՝ խոր ճգնաժամը: Նա հետ է մնում ամեն ինչից, իր համար ամենակարևոր բանից՝ ռազմական ուժով արդեն չի կարողանում հասնել մյուս պետություններին: Պիտի ձևացնի, պիտի վստահություն ներշնչի, ցույց տա, որ դեմոկրատական երկիր է: Այնպես որ ամեն մի այդպիսի ընդհարում նրա համար լուրջ սպառնալիք է: Խիստ բարդ քաղաքական խաղ է: Շատ դժվար է դրա եզրերը գտնել: Հարկավոր է լինել համառ, զգոն և խորությամբ կշռադատել բոլոր հանգամանքները:

Ժողովուրդը ինչ-որ կերպ պետք է արձագանքի երեկվա նիստի անբարոյական, անիրավական որոշմանը: (Ժողովուրդը վանկարկում է՝ գոր-ծա-դուլ): Այդ նիստը կարելի է համարել անբարոյականության գագաթնակետ: Իսկ այն կոչե՞րը: Նրանց նպատակը մեզ հանգստացնելն է: Ես կարծում եմ, որ անհրաժեշտ է երկու բան հաշվի առնել. չնահանջել, բայց և շատ առաջ չցցվել: Այս խնդիրը ծայրահեղ զգուշություն է պահանջում: Բայց վախենալ և ասել՝ եկեք այնպես անենք, որ մեզ սիրեն, այսինքն՝ մոռանանք Սումգայիթի զոհերին, ներենք ամեն ինչ, ներենք, որ Երևանում հազարավոր մարդիկ ինֆարկտ են ստացել այս օրերին, հանդուրժենք Խաչիկի գնդակահարությունը և մտածենք՝ չստացվեց, ու գնանք մեր տնե՞րը: (Ժողովուրդը վանկարկում է՝ գոր-ծա-դուլ):

Նորից հիշենք, որ Ղարաբաղում տասնյակ հազարավոր հայեր հուսահատ վիճակում են, և նրանց միակ ապավենը մենք ենք: Նրանց պաշտպանը Խորհրդային Միությունը չէ, Միացյալ Նահանգները չէ, ուրիշները չեն, մենք ենք միայն: Եվ դրա համար պետք է ուժեղ լինենք, կարողանանք պահպանել մեզ, որպեսզի նեցուկ լինենք Ղարաբաղի ժողովրդին:

Վ. Մանուկյանի ելույթը
Մատենադարան հարթակում,
1988թ., հուլիսի 20

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ[3]

Պատմական ներկա ժամանակաշրջանում հայ ժողովուրդը անդամն է ժողովուրդների մի դաշնակցության, որը հռչակվել է որպես սուվերեն հանրապետությունների կամավոր միություն՝ հիմնված ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա: Միության կենտրոնական իշխանությունը պարտավորված է իր ներքին և արտաքին քաղաքականության մեջ արտահայտել և պաշտպանել բազմազգ պետության բոլոր ազգերի և հանրապետությունների իրավունքները:

Ղարաբաղյան շարժումը, որն ունի իր նախապատմությունը և որին 1988-ի փետրվարից մասնակցում է ողջ հայ ժողովուրդը, գոյացել է Արցախի հայության ինքնորոշման բնական և արդար իրավունքի իրագործման նպատակով, իրավունք, որը ոտնահարվել է 1921 թվականին:

Նպատակ ունենալով Արցախի և Հայաստանի վերամիավորումը՝ Ղարաբաղյան շարժումը բնական եղանակով իր մեջ ընդգրկեց հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված բոլոր գլխավոր հարցերը, որոնք գուցե և առաջին հայացքից անմիջականորեն առնչված չթվան արցախյան խնդրին: Որևէ առանձին կենսական հարց լուծելու անհրաժեշտ պայմանը ժողովրդի զարթոնքն է, նրա ուժերի լիակատար համախմբումը: Ամեն խնդիր չէ, որ կարող է արթնացնել ժողովրդին, ազգը միավորել մի այնպիսի միասնական գաղափարի շուրջ,

ինչպիսին հանդիսացավ Արցախի վերամիավորման հարցը: Ջարթոնք ապրող ազգն արդեն սկսում է ավելի սուր զգալ նաև իր մյուս չլուծված խնդիրների ցավը, հասկանալ, որ այդ բոլոր խնդիրները կազմում են մեկ շղթա, և դրանցից յուրաքանչյուրի լուծումը պայման է ստեղծում առաջխաղացում կատարելու մյուս խնդիրների լուծման ուղղությամբ:

Շարժման ընթացքում առաջ քաշված խնդիրներից յուրաքանչյուրը սերտորեն կապված է մեր ժողովրդի գոյատևման հետ: Դրանց մի մասը առաջադրվել է դեռևս մինչև փետրվարյան օրերը, իսկ երբ շարժումն ստացավ հսկայական ծավալ և խորություն, այդ խնդիրները բնականորեն միահյուսվեցին Ղարաբաղյան շարժմանը: Վերջինս, աճելով, դուրս եկավ իր առջև դրված խնդրի լուծման շրջանակներից, բայց միշտ անշեղորեն պահպանեց հիմնական ուղղությունը՝ Արցախի վերամիավորումը Հայաստանի հետ, դառնալով իսկական համազգային շարժում՝ ինչպես ներգրավված մասնակիցների քանակով, այնպես էլ առաջ քաշված խնդիրների բազմազանությամբ:

Շարժման շրջանակների լայնացումը, նրանում նորանոր խնդիրների ընդգրկումը, ինչպես և բազմաթիվ մարդկանց գործուն մասնակցություն ունենալու պատրաստակամությունը մեզ բերել են այն համոզման, որ անհրաժեշտ է շարժմանը տալ կազմակերպական ավելի հստակ ձև: Այդ նպատակով Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն ձեռնարկում է Հայոց համազգային շարժում կազմակերպության ստեղծմանը, զուգահեռաբար, մինչև Հայաստանի և Արցախի վերամիավորումը, պահպանելով նախկինը՝ Ղարաբաղյան շարժում անունը:

Մինչ կառուցվածքային հարցերին անդրադառնալը, ձևակերպենք մեր շարժման սկզբունքները, որոնք բխում են հայ ժողովրդի պատմական փորձից և առավել խորությամբ գիտակցվեցին վերջին վեց ամիսների իրադարձությունների ընթացքում: Ներկայացնենք նաև Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) նպատակները և դրանց իրականացման համար առաջարկվող գործելակերպը:

Հայոց համազգային շարժման գաղափարական սկզբունքները

1. Անժխտելի է, որ հայերը, ինչպես և ամեն մի ազգ, լավագույն ձևով կարող են դրսևորել իրենց ընդունակությունները և նպաստել համաշխարհային քաղաքակրթության զարգացմանը՝ ապրելով ազատ ժողովրդավարության պայմաններում., առանց արտաքին ճնշման, ինքնուրույն որոշելով իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի բնույթը:

Ակնհայտ է նաև, որ միայն այդպիսի պայմաններում է հնարավոր պահպանել յուրաքանչյուր անհատի ի ծնե տրված իրավունքները, որոնցից կարևորագույններն են՝ կյանքի ապահովությունը, անձնական ազատությունը և երջանկության ձգտումը:

2. Պետական կազմավորման Գերագույն իշխանությունը ժողովրդի կամքն է՝ արտահայտված համաժողովրդական հանրաքվեներով կամ ազատ ընտրություններով ստեղծված ներկայացուցչական խորհրդարանի վճիռներով:

Ժողովրդի կամքի նկատմամբ գործադրված ցանկացած բռնություն միջազգային նորմերով սահմանված նրա ինքնորոշման իրավունքի խախտում է:

3. Մեր ազգի գոյատևման կարևորագույն երաշխիքը հայոց լեզուն է. այն հաղորդակցման միջոց լինելուց բացի, մտածելակերպ է, մշակույթ և քաղաքականություն:

4. Հայ ժողովուրդն իր ազգային ծրագրերն իրագործելիս պետք է ապավինի իր ուժերին, հույս չդնի հովանավորության վրա: Ամեն մի հակառակ պնդում ժխտվում է պատմական փորձով և ծառայում է մեր ժողովրդին հոգեկան ստրկության մեջ պահելու գործին: Ստրկամտության արտահայտություն է նաև այն մտայնությունը, ըստ որի՝ ազգն ունի մշտական բարեկամ և մշտական թշնամի:

5. Մենք մերժում են անբարոյական և մեր ազգի համար անպտուղ այն քաղաքականությունը, որը մի կողմից, իբրև «դիվանագիտություն», ենթադրում է հավատարմության անտեղի հավաստիացումներ և համաժողովրդական քծնանք այլ ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից՝ պահանջում է թշնամություն քարոզել մյուս ժողովուրդների կամ կրոնների դեմ:

6. Մեր շարժումն ուղղված չէ որևէ ժողովրդի դեմ: Մեր սկբունքն է՝ խաղաղ ու համերաշխ ապրել հարևան բոլոր ժողովուրդների հետ: Բայց մենք համոզված ենք, որ խաղաղությունը և

համերաշխությունը ամուր են լինում միայն այն դեպքում, երբ հիմնվում են արդարության վրա, երբ չեն ոտնահարվում որևէ ժողովրդի իրավունքները:

7. Ներկայումս ժողովուրդների փոխհարաբերություններում ազգային և պետական շահերը շատ ավելի մեծ դեր են խաղում, քան կրոնական ընդհանրություններն ու տարբերությունները: Սրբազան պատերազմների ժամանակաշրջանը վաղուց անցել է: Կորցրել են իրենց քաղաքական ուժը նաև այն գաղափարախոսությունները, որոնց նպատակն է մեկ պետության մեջ միավորել միևնույն ծագումն ունեցող ժողովուրդներին (պանթուրքիզմ, արաբական միասնություն, պանիսլամիզմ և այլն), քանի որ այժմ միջպետական հարաբերություններում նկատելի է ոչ թե էթնիկական կամ կրոնական ընդհանրությունների, այլ տնտեսական, գաղափարախոսական և ռազմական շահերի գիտակցումը:

8. Ժողովրդի պատմության մեջ արտաքին գործոններն, անշուշտ, կարևոր դեր են խաղում, բայց վտանգավոր է, երբ ժողովուրդն իր հաջողությունների և անհաջողությունների պատճառը միայն իրենցից դուրս է որոնում: Դա կազմալուծում է նրան և տանում ազգային ինքնավերացման: Անբարենպաստ պայմանները, արտաքին ճնշումը ժողովրդին կարող են ստիպել դիմելու նահանջի, բայց այն ազգերը, որոնք իրեց մեջ ապագայի նկատմամբ հավատ, բարոյական ու հոգեկան ուժ են պահպանում և դրանք դրսևորում վճռական պահերին, ոչ միայն ապահովում են իրենց ազգային գոյությունը, այլև հասնում են իրենց իղձերի իրականացմանը:

9. Մենք համերաշխ ենք բոլոր այն շարժումների հետ, որոնք հիմնված են ինքնորոշման, ժողովրդավարության և սոցիալական արդարության սկզբունքների վրա: Մենք մերժում ենք ազգային խտրականության և ազգայնամոլության բոլոր դրսևորումները:

Հայոց համազգային շարժման մոտակա նպատակները

Մեր շարժման առաջնահերթ նպատակը եղել և մնում է Արցախի և Հայաստանի վերամիավորումը, որի իրականացումը սերտորեն կապված է հայ ժողովրդի մյուս չլուծված կենսական խնդիրների հետ: Այդ պատճառով Հայոց համազգային շարժումը, որպես մոտակա ծրագիր, հրատապ է համարում նաև հետևյալ նպատակների իրագործումը, որոնցից ամեն մեկն առանձին վերցրած կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի գոյատևման և նրա դարավոր իղձերի իրականացման համար:

1. Ընդլայնել մեր հանրապետության սուվերենությունը, իրականացնելով հետևյալ անհրաժշետ միջոցառումները.

- Տնտեսական և ինքնաֆինանսավորման միջոցով ապահովել հանրապետության տնտեսական ինքնուրույնությունը.
- վերականգնել հայկական ազգային զորամիավորումները.
- Հիմնվելով ՍՍՀՄ Սահմանադրության 30-րդ հոդվածի վրա, դիվանագիտական կապեր հաստատել և հյուպատոսություններ փոխանակել այն երկրների հետ, որտեղ կան սփյուռքահայության խոշոր կենտրոններ:

2. Նպաստել ժողովրդավարության ամրապնդմանն ու խորացմանը մեր երկրում՝ ելնելով ժողովրդի շահերից և գիտակցելով, որ միայն ժողովրդավարության պայմաններում է հնարավոր լուծել այն խնդիրները, որոնք դրված են Հայոց համազգային շարժման առջև:

3. Խստորեն կիրառել Հայկական ՍՍՀ Սահմանադրության՝ հանրապետության պետական լեզվին վերաբերող 72-րդ հոդվածը:

Այդ նպատակով մշակել և ընդունել հայոց լեզվի պաշտպանությանն ուղղված օրենսդրական ակտերի համակարգ:

4. Հասնել այն բանին, որ Հայկական ՍՍՀ-ում բոլոր հայ երեխաները կրթություն ստանան մայրենի լեզվով, ձգտելով այդ հնարավորությունն ստեղծել նաև հանրապետությունից դուրս բնակվող հայության համար:

5. Անհաշտ պայքար ծավալել Հայաստանի բնության պահպանության և կենսոլորտի մաքրության ապահովման ուղղությամբ, գիտակցելով, որ հանրապետությունում ստեղծված էկոլոգիական ծանր վիճակը ոչ միայն սպառնում է ներկա սերնդի առողջությանը, այլև կարող է հանգեցնել հաջորդ սերունդների մտավոր և ֆիզիկական անլիարժեքության: Առաջնահերթ խնդիր դարձնել մանավանդ հայկական ատոմակայանի և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման փակումը:

6. Հասնել այն բանին, որ Հայկական ՍՍՀ և ՍՍՀՄ Գերագույն սովետներն ընդունեն 1915թ. հայերի ցեղասպանության փաստը և դիմեն Միացյալ ազգերի կազմակերպությանը՝ այդ փաստը ճանաչելու պահանջով:

7. Ապրիլի 24-ը Հայաստանում հայտարարել Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, այն համարելով ոչ աշխատանքային:

8. Մշտապես առաջ քաշել պատմականորեն Հայաստանի մաս կազմող, ինչպես նաև միջազգային փաստաթղթերով Հայկական ճանաչված տարածքների վերամիավորման պահանջը, գիտակցելով, որ այդ պահանջի իրականացումը հնարավոր է միայն այնպիսի ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ, որը հիմնված է մեր շարժման գաղափարական սկզբունքների վրա:

9. Վերանայել անցյալի հայ ազգային շարժումների և գործիչների քաղաքական գնահատականը:

10. Մայիսի 28-ը հայտարարել հայոց պետականության վերականգնման համազգային տոն, Հայկական Հանրապետության եռագույն դրոշն ընդունել որպես ազգային խորհրդանիշ:

11.Հայոց համազգային շարժման մեջ ընդգրկել համայն հայությանը:

12.Ապահովել հայոց եկեղեցու ազատ գործունեությունը, հավատացյալների պահանջով բացել նոր եկեղեցիներ, վերականգնել հայ ազգային-կրոնական տոներն ու սովորույթները:

13.Պայքար ծավալել Հայկական ՍՍՀ բնակավայրերի պատմական անվանումների վերականգնման ուղղությամբ:

Թվարկված նպատակները կարող են լրացվել շարժման մասնակիցների առաջարկությունների և դիտողությունների հիման վրա:

Հայոց համազգային շարժման գործելակերպը

Հայաստանի և Արցախի վերամիավորման համար հայ ժողովուրդը հենց սկզբից ընտրեց պայքարի սահմանադրական ուղին: Հայոց համազգային շարժումը, ծնվելով Ղարաբաղյան շարժումից, բնականորեն պետք է որդեգրի պայքարի նույն սահմանադրական ուղին, որը մենք հասկանում ենք հետևյալ կերպ.

1. Լիովին օգտվել գործող սահմանադրությամբ քաղաքացիներին տրված իրավունքներից, այն է՝ ակտիվորեն մասնակցել պետական և հասարակական մարմինների բոլոր կարգի ընտրություններին, հասնելով այն բանին, որ այդ ընտրություններում արտահայտվի ժողովրդի իրական կամքը, հետ կանչել այդ կամքը չարտահայտող կամ արհամարհող դեպուտատներին, անհրաժեշտության դեպքում ժողովրդի ձայնը լսելի դարձնել միտինգների, ցույցերի և գործադուլների միջոցով:

2. Հասնել գործող սահմանադրության այն հոդվածների վերանայմանը, որոնք կաշկանդում են ժողովրդավարությունը և մտցնել նոր հոդվածներ, որոնք համապատասխանում են ժողովրդավարության սկզբունքներին:

3. Գործել օրինականության սահմաններում, դրա հետ մեկտեղ պայքար մղելով սահմանադրության ոգուն և ժողովրդի շահերին հակասող օրենքների և հրահանգների վերանայման ուղղությամբ:

4. Ազգային խնդիրների լուծմանը հասնելու նպատակով Հայոց համազգային շարժումը անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել ուրիշ ազգերի այն կազմակերպությունների հետ, որոնց գործելակերպը, քաղաքական սկզբունքները և նպատակները չեն հակասում մերին:

5. Ազգային ժողովրդավարական պայքարի ճանապարհին շարժումը պատրաստ է համագործակցել հանրապետության իշխանությունների հետ բոլոր այն դեպքերում, երբ վերջիններիս գործունեությունը համապատասխանի հայ ժողովրդի ազգային շահերին:

6. Բացի ցույցերից ու միտինգներից, ժողովրդական լայն զանգվածների հետ հաղորդակցվելու համար Հայոց Համազգային Շարժումը պետք է ունենա նաև իր գրավոր տեղեկատվական միջոցները՝ պարբերական հանդեսներ, փաստաթղթերի ժողովածուներ և այլն:

Հայոց համազգային շարժման կազմակերպչական ձևերը

Մենք կարծում ենք, որ ճիշտ չէ ժողովրդական շարժումը դնել մեկընդմիշտ որոշված կոշտ կաղապարի մեջ: Իր կառուցվածքով մեր կազմակերպությունը պետք է լինի մի կենդանի մարմին, որը կզարգանա և կփոփոխվի իր գործունեության ընթացքում՝ առաջադրվող

խնդիրների լուծման տրամաբանությամբ: Դա յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն կտա լիովին դրսևորել մեր ժողովրդին բնորոշ ձեռներեցություն և հնարագիտություն: Ընդունելով շարժման սկզբունքները, նպատակները, գործելակերպը և դառնալով նրա անդամ, յուրաքանչյուր ոք ինքն է որոշում գործունեությանը իր մասնակցության կերպն ու չափը: Նշենք շարժման կառուցվածքի ստեղծման հիմնական ուղիները, դրան գործուն կերպով մասնակցելու հնարավոր ձևերը.

1. Հիմնարկ-ձեռնարկության աշխատակիցների ժողովում քննարկվում են Հայոց համազգային շարժման սկզբունքները, նպատակներն ու գործելակերպը, և դրանք ընդունող աշխատակիցները կազմում են մի խումբ՝ իրենց հայտարարելով շարժման խմբային անդամ: Այնուհետև ընտրում են խորհուրդ, որն այդ մասին տեղյակ է պահում կոմիտեի լիազոր ներկայացուցչին: Անհրաժեշտության կամ նպատակահարմարության դեպքում շարժման մասնակից հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցները, կոմիտեի գիտությամբ կարող են կազմել տարածքային կամ ճյուղային-մասնագիտական միություններ:

2. Արդեն գոյություն ունեցող կամ ստեղծվելիք հասարակական կազմակերպությունները, որոնք ընդունում են ՀՀՇ-ի ծրագիրը և ցանկանում են մասնակցել շարժմանը, որոշում են ընդունում այդ մասին և կապ հաստատում լիազորի հետ:

3. Յուրաքանչյուր ոք կարող է դառնալ շարժման մասնակից, ընդգրկվելով վերոհիշյալ կազմակերպության մեջ:

4. Հայաստանի տարբեր քաղաքներում և շրջաններում, ինչպես նաև հանրապետությունից դուրս գտնվող հայաբնակ վայրերում նույն ձևով կարող են կազմավորվել ՀՀՇ խմբային անդամություններ և կազմակերպություններ, որոնք ստեղծում են իրենց խորհուրդները:

Շրջանային կոմիտեների և կազմակերպությունների ներկայացուցիչներից, կոմիտեի մասնակցությամբ և օգնությամբ, կկազմվի առաջին համազգային խորհուրդը, որն ավելի մանրամասն կմշակի կազմակերպության ծրագիրն ու կառուցվածքը և կղեկավարի շարժումը:

Մինչև համազգային խորհրդի ստեղծումը, կազմակերպության գործունեությունը կղեկավարի Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեն:

Վազգեն Մանուկյան
Ղարաբաղյան շարժման
Հայաստանի կոմիտե
«Ազատության» հրապարակ
1988թ., օգոստոսի 19, Երևան

ՄԵՆՔ ԲՈԼՈՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԽԱՂԱՂ ԱՊՐԵԼ, ՄԵԶ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ ՊԵՏՔ ՉԵՆ

Վճռական պահերին ժողովուրդը պետք է միասնական լինի: Հայաստանում կան տարբեր կազմակերպություններ. նպատակների, գործելակերպի առումով նրանք քիչ բանով են իրարից տարբերում: Մենք կոչ ենք անում նրանց միասնական ճակատով հանդես գալ մեր բոլոր ազգային հարցերում:

Ինչ վերաբերում է ինքնորոշման խմբին, ապա ես կանդրադառնամ միայն նրանց գաղափարին: Այն ժողովուրդը, որը չի ձգտում անկախության, դատապարտված է մահվան: Այն, ինչ ասվեց ինքնորոշման խմբի մասին, ոչ մի դեպքում չի կարելի վերագրել նրանց գաղափարին, այսինքն՝ անկախության գաղափարին: Մեր բոլոր չարիքների պատճառն այն է, որ մենք վաղուց ենք հեռացել այդ գաղափարից: Մեզ միշտ ահաբեկել են շրջապատով: Ո՞ր շրջապատով, մահմեդականների՞: Դա վտանգ չէ:

Ովքե՞ր են մեր հարևանները, Թուրքիան, Պարսկաստանը, Վրաստանը, Ադրբեջանը: Մենք բոլորի հետ կարող ենք խաղաղ ապրել, մեզ միջնորդներ պետք չեն: Իսկ եթե առաջանան հարցեր այդ հարևանների հետ, եթե ի վիճակի լինենք լուծելու այդ հարցերը, կլուծենք, եթե ոչ, կլռենք: Բայց չպետք է բացառել բոլոր հարևանների հետ խաղաղ, համերաշխ ապրելու հնարավորությունը: Մենք համոզել ենք ինքներս մեզ, ինչպես նաև Ռուսաստանին, որ առանց նրա ապրել չենք կարող, նա էլ ինչ ուզում է, մեզ հետ անում է: Այո, մեր և Ռուսաստանի հարաբերությունների հիմքում այդ չարիքն է ընկած, մեր բոլոր կորուստները դրանով են պայմանավորված:

Վ. Մանուկյանի ելույթը

«Ազատության» հրապարակում,
1988թ., սեպտեմբեր

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՍԿՍՎԵԼ Է

Ինչպես հայտնի է, այս գիշերվա ընթացքում Հայաստանի տարածքում ոչ մի միջադեպ չի եղել: Բաքվում պարետային ժամ մտցված չէ: Վիճակը լարված է, բայց նախորդ օրն էլ էր այդպես, միտինգներ են արվում:

Երեկ հայտարարեցին, որ Բաքվում պարետային ժամ է մտցվել: Սուտ է: Կիրովաբադում են մտցրել: Այնտեղ հայերը ստեղծել են ջոկատներ, որպեսզի պաշտպանեն իրենց ընտանիքները, հայկական թաղամասերը:

Ղարաբաղում ժամը 4-ի տվյալներով ընդհարում չի եղել: Այդ դեպքում պետք է հարցնել՝ ի՞նչ է պատահել: Երեկվա նստաշրջանում ելույթ ունեցավ Վոլսկին[9]: Հայտարարեց, որ Նախիջևանում գնացք են շուռ են տվել, խիստ լարված իրավիճակ է Բաքվում, կան զոհեր: Դահլիճում իրարանցում սկսվեց: Այսինքն՝ պատերազմը սկսվել է, բոլորը պետք է վեր կենան ու գնան իրենց տեղերը: Նման պայմաններում Վոլսկին առաջարկեց, որ առանց մյուս հարցերը քննարկելու՝ նստաշրջանը միանգամից քվեարկի, այսինքն՝ ինչպես առաջարկել էին, բոլորը գնան իրենց պարտականությունները կատարելու, որովհետև պատերազմ է: Մի կերպ հասանք այն բանին, որ նստաշրջանը հետաձգվեց, ընդմիջում հայտարարվեց, որպեսզի շուտափույթ որոշումներ չընդունվեն: Ես դեռ ավելին կասեմ, Վոլսկու հայտարարությունը նման է Կատուսևի հայտարարությանը: Կատուսևի հայտարարությունը ադրբեջանցիներին ոտքի հանեց, և ընդհարումներ սկսվեցին Ադրբեջանում: Վոլսկու երեկվա հայտարարությունը այնպիսի վիճակ ստեղծեց, որ նույն բանը կարող էր տեղի ունենալ նաև Հայաստանում:

Նրա ասածները սուտ էին՝ նախապես մտածված և որոշակի նպատակ հետապնդող: Ո՞րն էր նպատակը: Երկուսը կարելի է նշել: Տարբերակներ շատ կան, բայց բավական ինֆորմացիա է պետք ունենալ հասկանալու համար, թե բանն ինչ է: Նրա հայտարարությունը, ինչպես ասացի, կարող էր հանգեցնել ընդհարումների Հայաստանում:

Եթե միտինգից հետո դուք այստեղ էիք, տեսած կլինեք մի ավտոմեքենա՝ ադրբեջանական համարանիշով: Մի քանի տասնյակ հազար մարդ հավաքվել, պահանջում էին դուռը բացել: Շատ հավանական է՝ տաքարյուն մեկն էլ լիներ, խփեր վարորդին, սպաներ: Ի՞նչ ալիք կստեղծեր դա Ադրբեջանում: Այսինքն՝ նպատակներից մեկը նույնն էր, ինչ որ Կատուսևինը: Եվ երկրորդ՝ նրանց շտապ պետք էր նստաշրջանն ավարտել իրենց ուզած որոշումներով: Ինչպես միշտ, ոչ միայն խորհրդային իշխանության օրոք, մինչև այդ էլ՝ Ցարական Ռուսաստանում, երբ հայերը հեղափոխական, ազատագրական գործունեություն էին սկսում, ռուսները ադրբեջանցիների, թուրքերի միջոցով խփում էին հայերին: Այսօր նույն պատկերն է կրկնվում: Կազմակերպում է Ռուսաստանը, խփում են թուրքերը կամ ադրբեջանցիները: Այնպես որ հետագայում էլ երևի այս իրավիճակը կարող է կրկնվել, պետք է զգոն լինել, սադրանքների չենթարկվել: Շատ մեծ ընդհարումներ կարող էին լինել Հայաստանում և Ադրբեջանում, եթե մենք զգոն չլինենք այս գիշեր:

Իշխանությունները չեն ուզում, որ նստաշրջանն ընդունի մեր ուզած որոշումները, ուրեմն մենք պիտի այնպես անենք, որ նստաշրջանը տեղի ունենա այսօր կամ ամենաուշը վաղը: Նստաշրջանը պետք է ընդունի մեր ուզած որոշումները: Ո՞ր որոշումն է նրանց ամենաշատը սարսափեցնում: Յուրաքանչյուր ազգի համար չկա ավելի սուր, ավելի կենսական բան, քան անկախությունը, որովհետև միայն այդ պայմաններում ժողովուրդը կարող է դրսևորել այն հատկությունները, որոնք իրեն տրված են Աստծուց:

1920 թվականին մեզնից վերցրին անկախությունը, խոստացան ինքնուրույնություն: Այդ ինքնուրույնությունը ապահովվում էր սահմանադրական կետերով, որոնք մինչև հիմա չեն կատարվում: Մեկ տարի է, ինչ մենք փորձում ենք իրագործել այդ կետերը, այժմ ուզում են ընդունել սահմանադրության նոր կետեր, որոնցով էապես կսահմանափակեն մեր ազատությունը, ինքնուրույնությունը: Բռնի կարելի է մեր ինքնուրույնությունը խլել, բայց մենք երբեք կամավոր չենք քվեարկի մեր ինքնուրույնությունը ուրիշին տալու համար: Այնպես որ մեր առաջնահերթ խնդիրն է գումարել Գերագույն խորհրդի նստաշրջան, ընդունել բոլոր այն

կետերը, որոնք մենք պահանջում էինք: Եթե չհաջողվի հրավիրել նստաշրջանը ինչ-ինչ պատճառներով, եթե նրանք հետաձգեն, ձգձգեն, Գերագույն խորհրդի մեր դեպուտատները չպետք է մասնակցեն նրանց նստաշրջանին: Մենք կամավոր չենք քվեարկի մեր ազատության սահմանափակման համար:

Վ. Մանուկյանի ելույթը Ազատության հրապարակում
Խոջալուի դեպքերից հետո[10],1988թ.,
սեպտեմբերի 23

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԱՅՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ՉԷ, ԴԱ ԱՅՆ ՓՈՐՁԱՔԱՐՆ Է, ՈՐԸ ՑՈՒՅՑ ԿՏԱ, ԹԵ ՄԵՆՔ ԻՆՉՊԵՍ ԿՄՏՆԵՆՔ 21-ՐԴ ԴԱՐ

Չերչիլն, իր «Համաշխարհային ճգնաժամ» հինգհատորյակում, ամփոփելով առաջին համաշխարհային պատերազմի արդյունքները, գրել է. «Հայերը, այդ հին ու մեծ պատմություն ունեցող ազգը, ընդմիշտ դուրս եկան համաշխարհային պատմության ասպարեզից»: Նա սխալվեց, մենք վերադարձանք: Վերադարձանք մեր Ղարաբաղի հարցով, մեր եռագույնով:

Չպետք է սխալվել: Մեր քաղաքական ասպարեզ գալը պայմանավորված չէր նամակներով, որոնք գրում էինք տասնյակ տարիներ, կամ ահաբեկչական գործողություններով թուրք դեսպանների դեմ: Քաղաքական ասպարեզ դուրս եկանք համաժողովրդական շարժումով, Ղարաբաղյան շարժումով: Այդ հարցի լուծման առաջին ձեռնարկումները մեծ արդյունքներ չտվեցին: Փետրվարին մեզ թվում էր, որ եթե ամուր կանգնենք, բոլոր հարցերը կլուծվեն: Պայքարը երկարեց և դեռ երկարելու է: Մենք կհաղթենք միայն այն դեպքում, երբ դառնանք ազգ-կազմակերպություն: Ամբողջ ազգը դառնա մի կազմակերպություն՝ հիմնված ճիշտ ազգային քաղաքականության վրա:

Ղարաբաղյան հարցը միայն Ղարաբաղի հարցը չէ, դա այն փորձաքարն է, որը ցույց կտա, թե մենք ինչպես կմտնենք 21-րդ դար: Նորից կոտորվելո՞վ, թե մեր հզոր կամքը թելադրելով, մեր նպատակներին հասնելով: Հայոց համազգային շարժումը, որ առաջարկվեց ստեղծել, պետք է համախմբի ամբողջ հայությանն իր հարցերը լուծելու համար: Այս յոթ-ութ ամսվա ճանապարհին մի շարք հաղթանակներ տարանք, բայց և, ցավոք, զոհեր տվեցինք: Ես գտնում եմ՝ մեծ հաղթանակ էր այն, որ մեր ժողովուրդը սկսեց օգտագործել անկախություն բառը: Անկախություն բառն օգտագործել դեռևս չի նշանակում այն ունենալ: Անկախություն բառն օգտագործել նշանակում է հասկանալ, որ ամեն ազգ իր նպատակներին կարող է հասնել միայն անկախ լինելով: Եվ պետք է խորը գիտակցել, որ դա է յուրաքանչյուր ազգի առաջնահերթ խնդիրը:

Երբ խոսվում է անկախության մասին, անընդհատ կրկնվում է նույն նախադասությունը. «Բայց չէ՞ որ թուրքերը մեզ կոչնչացնեն»: Մի կողմ թողնենք այն հարցը՝ այդ նախադասությունը քաղաքական իրավիճակն արդյոք ճի՞շտ է արտահայտում, թե՞ ոչ: Դեռ կվերադառնանք այդ հարցին: Քննենք վերոնշյալ նախադասության քաղաքական իմաստը: Ով որ ասում է, թե թուրքերը մեզ կոչնչացնեն, եթե մենակ լինենք, նա ասում է, որ Ղարաբաղը մեզ պետք չէ: Բացատրեմ թե ինչու: Եթե մենք ինքնուրույն չենք կարող գոյատևել, եթե թուրքերը մեզ կոչնչացնեն, ուրեմն միակ ելքը Ռուսաստանի կազմում լինելն է: Դրանից ի՞նչ է բխում. այն, որ Ռուսաստանը մեզ զիջումներ չի անի, մենք կլինենք նրա ստրուկը, նա կվարվի մեզ հետ՝ ինչպես ուզենա: Միայն արհամարհանքով կարելի է վերաբերվել այդպիսի ազգին: Իսկ հիմա տեսնենք՝ գուցե իսկապե՞ս թուրքերը մեզ կոչնչացնեն: Ինչի՞ վրա է հիմնված այդ կարծիքը: Նախ՝ 1915 թվականի սարսափը, որի պատճառը միայն ողբերգությունը կոտորածը չէր. դա բարդ քաղաքական խաղ էր, որը մենք տանուլ տվեցինք: Երկրորդ՝ ասում են, որ եթե նորից ինքնուրույն հանրապետություններ լինեն, Թուրքիան կմիանա Ադրբեջանի և Միության թրքախոս հանրապետությունների հետ (միջինասիական հանրապետություններ, Յակուտիա և այլն), կստեղծվի մի ընդհանուր հզոր պետություն: Հայաստանը կանգնած է նրանց ճանապարհին, և նրանք ստիպված կլինեն ոչնչացնել Հայաստանը: Այդպիսի ծրագրեր եղել են: Եղել են XIX դարի վերջին, XX դարի սկզբին, երբ կրոնի դերը շատ ավելի մեծ էր

համաշխարհային քաղաքականության մեջ, քան հիմա: Բայց ոչինչ չստացվեց: **20-րդ դարում այդ կրոնական, էթնիկական շարժումները համարյա վերացել են: Թուրքիայում կազմակերպություններ իհարկե մնացել են, կան, որ հարցերին նայում են այդ տեսակետից, բայց նրանք հզոր քաղաքական ուժ չունեն: Թուրքիայի առաջին նպատակը եվրոպական պետություն դառնալն է, նրա տնտեսական, ռազմական շահերը պարտադրում են, որ նա ձգտի դառնալ եվրոպական պետություն: Երբեմնի պանթուրքիստական ծրագիրը պահպանվում է որպես մշակութային շարժում: Ինչպես ասեմ. ինչ-որ մի ծիլ մնացել է, բայց դա արդեն ուժ չունի: Ամենաբարձր գագաթնակետում նա չկարողացավ այդ հարցը լուծել, ուր մնաց հիմա:**

Ինչպե՞ս պետք է կազմակերպվենք, որպեսզի լուծենք մեր հարցերը: Իմ ներքին համոզմունքն այն է, որ մենք կլուծենք այդ հարցը և 21-րդ դար կմտնենք որպես հասունացած ու հզորացած ժողովուրդ:

Վ. Մանուկյանի ելույթը
Ազատության հրապարակում,
1988թ., սեպտեմբերի 28

ՄՈՍԿՎԱՆ ԼԱՎ ԳԻՏԻ, ՈՐ ՀԱՅԵՐԻՑ ԻՐԵՆ ՈՉ ՄԻ ՎՏԱՆԳ ՉԻ ՍՊԱՌՆՈՒՄ

Արդեն ութ ամիս է, ինչ մեր ժողովուրդն անընդմեջ՝ փուլերի բաժանված պայքար է մղում: Նախ գնահատենք վերջին փուլի՝ անցած մեկուկես-երկու ամսվա արդյունքները:

Եթե սկսենք մանրամասն գնահատել այն ամենը, ինչ եղավ այդ ընթացքում՝ գործադուլներ, նստացույցեր, դասադուլներ, հացադուլներ, ընտրություններ, շատ կխճճվենք, թեև դրանց մանրամասն վերլուծությունը մի օր կանենք: Ուստի վարվենք հետևյալ կերպ. տեսնենք, թե մեկուկես-երկու ամիս առաջ ինչպես էինք պայքարում, ինչ ծրագրերով, ինչ վիճակում էինք:

Ղարաբաղի հարցը: Կային պայքարի և այլ ոլորտներ, դրանց ես այսօր չեմ անդրադառնա: Մեկուկես ամիս առաջ հայտնի էր, որ Մոսկվայում ազգությունների խորհրդի հանձնաժողովը քննարկելու է Ղարաբաղի ստատուսի հարցը: Ի՞նչ մտադրություններ կային: Լրջորեն քննարկվում էր միայն մեկ հարց՝ Ղարաբաղի Ինքնավար Մարզը դարձնել ինքնավար հանրապետություն՝ թողնելով Ադրբեջանի կազմի մեջ: Դրան համաձայն էին շատերը: Անգամ Ղարաբաղի պայքարի առաջին գծում գտնվող այն տնօրենները, որոնց նպատակն էր Ղարաբաղը վերամիավորել Հայաստանին, այնուամենայնիվ մտածում էին, որ տվյալ պահին, պայքարի տվյալ փուլում միակ բանը, որին կարելի է հասնել, մարզը հանրապետություն դարձնելն է: Նույն կարիծիքի էին նաև ազգությունների խորհրդի հանձնաժողովի Հայաստանի ներկայացուցիչները:

Այդպիսով մենք մտանք պայքարի՝ այսօր քննարկվող փուլը: Ինչո՞վ դուրս եկանք: Այժմ արդեն, ինչպես հայտնի է, Մոսկվայում լրջորեն քննարկվում է նաև Ղարաբաղը Ադրբեջանից անջատելու հարցը: Բոլոր տնօրենները Ստեփանակերտում վճռականորեն պնդում են, որ միակ ընդունելի քայլն անջատումն է: Նույն եզրակացությանն են հանգել նաև Հայաստանի ներկայացուցիչները, կառավարության անդամները, որոնք մասնակցելու են խորհրդակցությանը: Ուրեմն ընդհանուր հանրագումարով պայքարի այս փուլի արդյունքները պետք է դրական գնահատել: Բայց անհրաժեշտ է մի բան հաշվի առնել. եթե քննարկվում է անջատման հարցը, դա դեռ չի նշանակում, թե իրոք անջատվելու է, դրանից չի բխում նույնիսկ, թե մարզը հանրապետություն կդարձնեն: Քաղաքական իրավիճակը շատ արագ է փոխվում, և ընդունելի որոշումների բնույթն էլ կարող է շատ արագ փոխվել: Ամեն ինչ կախված է մեր պայքարից:

Ես կցանկանայի անդրադառնալ նաև մեր պայքարի նախորդ փուլերին: Ինչպես գիտենք, Ղարաբաղի հարցը շատ վաղուց էր արծարծված, դեռ տասնյակ տարիներ առաջ փորձեր էին արվում՝ այդ հարցը լուծելու: Գրվում և Մոսկվա էին ուղարկվում հազարավոր նամակներ, դիմումներ, կոչեր, ստորագրություններ, որոնց հիմքում ընկած էր հետևյալը. չեղյալ հայտարարել 1921թ. որոշումը և Ղարաբաղը վերամիավորել Հայաստանին: Հայտնվեցին տեսաբաններ, որոնց տեսակետը պարզ էր. համոզել Մոսկվային, թե Ղարաբաղը Հայաստանին տալը

ձեռնտու է իրեն: Ինչպե՞ս: Նախ՝ Մոսկվային համոզել, թե մահմեդականությունը՝ իբրև այդպիսին, պոտենցիալ վտանգ է Ռուսաստանի համար: Նրանց կարծիքով, եթե մենք անընդհատ համոզենք Մոսկվային, շարունակ ապացուցենք, որ Ղարաբաղը մերն է, և ասենք, որ մենք էլ դեմ ենք մահմեդականությանը, ապա ռուսները Ղարաբաղը կմիավորեն Հայաստանին:

Եթե քննենք այս տեսակետը, կտեսնենք, որ այն շատ թերի կողմեր ունի: Նախ՝ ճշմարիտ չէ բուն գաղափարը, ըստ որի ռուսներին մենք կարող ենք ցույց տալ իրենց շահերը: Մենք՝ հայերս, որ հարյուրավոր տարիների ընթացքում կորցրել ենք մեր ժողովրդի հատվածները և մեր տարածքները, մի ժողովրդի, որը շարունակ ձեռք է բերել տարածքներ և մարդկային զանգվածներ (ծուլելով), բացատրում ենք, թե որն է նրա շահը: Սա աբսուրդ է:

Փետրվարյան օրերին զուգահեռ առաջ քաշվեց և սկսեց զորանալ մի նոր տեսակետ: Երբ հասկանալի դարձավ, որ Ղարաբաղը Հայաստանին միացնելը ձեռնտու չէ Մոսկվային, որ այդ միացումը հակասում է նրա շահերին, որ Մոսկվան վտանգավոր է համարում Ղարաբաղը Հայաստանին միացնելը, ոմանք մտածեցին, թե պետք է ընտրել պայքարի նոր ճանապարհ, այնպիսի վտանգ ստեղծել Մոսկվայի համար, որ նա ընկնի երկընտրանքի մեջ, և Ղարաբաղը Հայաստանին տալը ավելի քիչ վտանգավոր թվա նրան, քան չտալը: Այս տեսակետն էլ անհիմն է:

Մոսկվան լավ գիտի, որ հայերից իրեն ոչ մի վտանգ չի սպառնում: Այդ մեր հին ազգային քաղաքականությունն է, որ մենք ինչպես մեզ և ամբողջ աշխարհին, այնպես էլ Ռուսաստանին համոզել ենք, թե մենք շրջապատված ենք մահմեդականներով, որոնք մեր ոխերիմ ու գենետիկ թշնամիներն են, որ մենք ոչ մի ելք չունենք, որ այդ թշնամիները մեզանից տասնյակ անգամ ավել են, ուստի մեր միակ միջոցը գոնե մի հավատարիմ բարեկամ ունենալն է: **Այդ սխալ գաղափարը մենք ներարկել ենք և՛ մեր, և՛ Մոսկվայի մեջ, և նա մեզանից ոչ մի վտանգ չի սպասում, մտածում է.«Մեկ է, այդ ժողովուրդը առանց ինձ դիմանալ չի կարող»:** Ահա այս գաղափարը անընդհատ կցվել է մեր ազգին, կցվել է տարբեր կողմերից, կցվել կազմա-կերպված ձևով: Մի 3-4 անգամ ինձ հրավիրել են ՊԱԿ, տարբեր պատճառներով՝ կապված մեր այս շարժման հետ: Ու ի զարմանս պարզվեց, որ այնտեղ հավաքված են ամենահայրենասեր մարդիկ: Նրանք քարոզում էին՝ չէ՞ որ դուք գիտեք, որ առանց Ռուսաստանի ապրել չենք կարող, թուրքերը մեզ կուտեն: Այսպես միալար քարոզվում է այդ միտքը: Մի բան, որ մեր ժողովրդին դարձնում է անկամ, անդեմ, զրկում պայքարի հնարավորությունից:

Երբ խոսում ես մեր մտավորականության ներկայացուցիչների հետ, որոնք հասկանում են այս ամենը, ասում են. «Հա, այդ ամենը պարզ է, բայց ժողովրդին պետք չէ ասել»: Երբ սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, Ռուսաստանը 300 հազար հայերի կոչ արեց հայկական կամավորական ջոկատներ ստեղծել, որոնք պիտի օգնեին ռուսական բանակին՝ գրավելու Թուրքիան: Դրանից հետո էլ խոստացավ ինքնավարություն Թուրքիայից գրավված հողերում: Ազգային գործիչներից շատերը, հատկապես դաշնակցական կուսակցության մի շարք անդամներ գիտակցում էին, որ շատ վտանգավոր կլինի հայության համար, եթե ստեղծվեն այդպիսի ջոկատներ, քանի որ այդ վեց հազար հոգին չէ, որ պիտի գրավեին Թուրքիան, բայց ծայրաստիճան կգրգռեին Թուրքիայի ղեկավարներին:

Ուրեմն մեր ազգային գործիչները գիտակցում էին, որ այդ ճանապարհը հղի է վտանգներով, որ դա կարող է հայ ժողովրդին կործանել: Բայց քանի որ նրանք տարիներ շարունակ ատելություն էին ներշնչել Թուրքիայի նկատմամբ, քարոզել էին, որ միակ հնարա-վորությունը Ռուսաստանի օգնությամբ հայկական հողերը գրավելն է, գործիչների մեծ մասը լծվեց կամավորական ջոկատներ կազմակերպելու գործին: Հենց որ ազգային գործիչների մի մասը դեմ կանգնեց կամավորական ջոկատներ ստեղծելուն, ժողովուրդն ըմբոստացավ, քանի որ դաստիարակվել էր այն ոգով, որ իր միակ թշնամին Թուրքիան է, որ պետք է զինվել և կռվել նրա դեմ, և դրա շնորհիվ Արևմտահայաստանի ինքնավարություն կստանա:

Եվ հայ ազգային այն գործիչները, որոնք դեմ էին կամավորական ջոկատներ կազմելուն, ստիպված հենց իրենք ղեկավարեցին այդ շարժումը, որպեսզի ձեռքից բաց չթողնեն ժողովրդի վրա իրենց ազդեցությունը: Ինչու՞ եմ սա հիշում: Ցույց տալու համար, որ երբ մի ժողովուրդ ատելությամբ է լցվում մի այլ ժողովրդի նկատմամբ, դա զրկում է նրան մանևրելու հնարավորությունից: Դա շատ սարսափելի բան է: Քաղաքական իրավիճակը փոխվում է, քաղաքական գործիչները հասկանում են, ջանում են ուղղություն տալ շարժմանը, բայց հնարավոր չի լինում, քանի որ ժողովուրդը տասնյակ տարիների դաստիարակության իներ-

ցիայով շարունակում է գնալ սխալ ուղղությամբ, և քաղաքական գործիչները հարկադրված համակերպվում են:

Փետրվար ամսին բազմաթիվ ելույթներում, բազմազան փաստերով ապացուցում էինք, որ այն տեսակետը, թե մենք իբր ունենք մի հավերժական թշնամի ու մի հավերժական բարեկամ, սխալ է: Այն, որ մենք կամաց-կամաց սկսեցինք հրաժարվել այդ վնասակար տեսակետից, դուր չեկավ որոշ շրջանների, և սկսեցին հայ-ադրբեջանական ընդհարումներ հրահրելու փորձեր անել: Նրանց համար միակ փրկությունը ազգամիջյան կոտորածն էր, որը մոռացության էր մատնում այն քաղաքական, իրական փաստերը, որոնք դրված էին սեղանին:

Սակայն ժողովուրդը գնաց այլ ճանապարհով, սկսեց կամաց-կամաց գիտակցել ճշմարտությունը և շարունակում է էլ ավելի խորը գիտակցել: Հենց դրանով սկսեցինք վտանգ ներկայացնել Մոսկվայի համար: Ուրեմն, եթե հայերը գիտակցեն այս նոր քաղաքականությունը, մանևրելու հնարավորություն ստեղծեն, կարողանան համակերպվել քաղաքական իրավիճակին և դառնան մեկ բռունցք, մեկ կազմակերպություն, դա արդեն բավականին վտանգավոր կլինի Մոսկվայի համար, և նա կմտածի՝ թողնել, որ հայերը շարունակեն համախմբվե՞լ, թե՞ Ղարաբաղը տալ Հայաստանին: Բայց կարող է և այնպես լինել, որ հայության համախմբումը, մի բռունցք դառնալը, քաղաքական իրավիճակը գիտակցելը, այնուամենայնիվ, համարժեք լինի այն վտանգին, որը կապված է Ղարաբաղը Հայաստանին տալու հետ: Ղարաբաղը Հայաստանին տալը վտանգավոր է: Հայերը, երբ համախմբվում են, սկսում են գիտակցել նոր քաղաքականությունը, դա էլ է վտանգավոր դառնում Մոսկվայի համար, ուրեմն Մոսկվան չպետք է թողնի, որ հայերը համախմբվեն, գիտակցեն, և պետք է աշխատի Ղարաբաղը տալ….

Անհրաժեշտ էր, որ մի քանի միլիոն հայեր դառնան տասնյակ միլիոններ, և դա հաջողվեց: Հիմա բացատրեմ: Մեր գործադուլները, քաղաքական պայքարը, բացի ներքին հարցերը լուծելուց, նաև օրինակ ծառայեցին սոցիալիստական երկրներում ապրող փոքրաթիվ ժողովուրդների համար: Պատահական չէ, որ մեր գործադուլներից հետո անմիջապես գործադուլներ արվեցին Լեհաստանում, շարժումներ սկսվեցին Մերձբալթիկայում: Այսինքն՝ մենք կարողացանք ստեղծել ավելի մեծ վտանգ, քան կարող էին ստեղծել 4-5 միլիոնը: Մենք սկսում ենք շրջել նավակը և դա կշարունակենք: Բայց չէ՞ որ միանգամից հարց է առաջանում՝ մենք ընթանում ենք Մոսկվայի համար վտանգավոր ճանապարհով: Մոսկվան ունի երկու հնարավորություն. կամ պիտի Ղարաբաղը տա մեզ, որպեսզի մենք չշարունակենք այդ ճանապարհով գնալ, կամ պիտի ճնշի մեզ և դիմի ահաբեկչության: Արգավանդի, Խոջալուի և դրանց հաջորդող մյուս դեպքերը ցույց տվեցին կառավարությանը, որ 100-120 մարդ ոչնչացնելով՝ շարժումը չի մարի, ավելի կբորբոքվի: Մենք ապացուցեցինք, որ կարող ենք կանգնել և պայքարել: Ուրեմն, պետք է դիմեին լայնածավալ ահաբեկչության: Բայց նրանք չեն կարող այդ անել, որովհետև Խորհրդային Միությունն այժմ շատ ծանր վիճակում է: Տնտեսությունը լիովին քայքայված է, իսկ դա հանգեցնում է ռազմական ուժի թուլացման, մինչդեռ այդ ուժն այն է, ինչի վրա հիմնված է այս պետությունը: Կորցնելով ռազմական ուժը՝ նա կորցնում է ամեն ինչ: Ուստի Խորհրդային Միությունը սկսեց նոր քաղաքականություն՝ դեմոկրատացման քաղաքականությունը: Ես ուզում եմ ընդգծել, որ դա Գորբաչովի քմահաճույքը չէ, դա քաղաքական անհրաժեշտություն է: Եթե Գորբաչովի տեղը մեկ ուրիշը լիներ, նա նույնպես ստիպված կլիներ գնալ այդ նույն ճանապարհով. իհարկե, երանգները տարբեր կլինեին՝ կապված անձի հետ:

Նոր քաղաքականության իմաստը ո՞րն է. արդեն հասկանալի դարձավ, որ հին ձևերով ղեկավարել մեծ տնտեսությունը հնարավոր չէ, այն կքայքայվի: Մյուս կողմից՝ քանի որ պետությունը դեմոկրատական է համարվում,անհրաժեշտ է ցույց տալ, որ իրենք այնքան էլ վտանգավոր չեն, իրենց հետ կարելի է բանակցել: Իրենց պետք է դրամ տալ, նոր տեխնոլոգիաներ, և դրանց շնորհիվ պետությունը ոտքի կկանգնի և՛ տնտեսապես, և՛ ռազմականորեն: Եթե նա Հայաստանում լայնածավալ ահաբեկչության դիմի, ստիպված կլինի հրաժարվել այդ նոր ճանապարհից, արդեն իսկ ստացված պտուղներից:

Մի այլ հարց ևս. մենք կարող ենք ի վերջո մի այնպիսի ծանր վիճակի մեջ դնել պետությանը, որ նրա համար գերադասելի լինի դիմել ահաբեկչության՝ հրաժարվելով նոր քաղաքականությունից: Մենք պետք է այդ հանգամանքը միշտ հաշվի առնենք: Այսինքն՝ միշտ գնանք անդունդի եզրով, բայց չսայթաքենք: Ոմանք անվտանգության համար առաջարկում են անդունդի եզրից նահանջել: Սակայն համաշխարհային պատմության մեջ դեռ ոչ մի շարժում չի հաղթել, եթե չի գնացել եզրով: Եթե մենք անվտանգության համար անդունդի եզրից այս կողմ քաշվենք, շատ կնահանջենք և ոչ մի բան չենք շահի: Պետք է միշտ մոտ լինենք եզրին:

Երբ ընդհուպ մոտենում ենք սահմանագծին, դա անմիջապես զգում ենք. ամբողջ գիշեր ոռնում են ինքնաթիռները, զորք է լցվում Հայաստան, հասկանում ենք, որ անդունդի եզրին ենք, հարկավոր է զգույշ քայլեր անել:

Մենք կշարունակենք մեր պայքարը: Ժողովրդին պատմության օրինակներով ցույց կտանք, որ այն տեսակետը, ըստ որի մենք մի բարեկամ և մի թշնամի ունենք, սխալ է: Մենք ցույց կտանք, որ այսօր այն առավել ևս սխալ է: Օրինակ կծառայենք սոցիալիստական երկրների բոլոր ճնշված ժողովուրդների համար, ալիքային շարժում կառաջացնենք: Կկարողանանք համախմբել բոլոր ճնշված ազգերին՝ ստեղծելով հզոր ուժ: Եվ ես հայտարարում եմ. եթե Մոսկվան իմանար, թե ինչ վիճակում կլինի այս շարժումը սեպտեմբերին, ապա փետրվարին կգերադասեր Ղարաբաղը տալ Հայաստանին, եթե Մոսկվան իմանա, թե ինչ վիճակում կլինի շարժումը մեկ տարի հետո, հիմա Ղարաբաղը կմիացնի Հայաստանին:

Վ. Մանուկյանի ելույթը
Ազատության հրապարակում,
1988թ. հոկտեմբերի 14

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԵՏՔ Է ՀՈՒՅՍԸ ԴՆԻ ԻՐ ՈՒԺԵՐԻ ՎՐԱ ԵՎ ՓՆՏՐԻ ՈՉ ԹԵ ՀՈՎԱՆԱՎՈՐՆԵՐ, ԱՅԼ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐ

Այսօր՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանի ժամանակ, Զորի Բալայանը կարդաց ազգային քաղաքականության մի հայեցակարգ, որը ոչ մեկի համար նորություն չէ: Բայց պետք է հասկանալ՝ ճի՞շտ է այն և ի՞նչ է տալիս մեզ: Ըստ այդ հայեցակարգի՝ գոյություն ունի մի պանթուրքիստական դավադրություն՝ ուղղված հայերի դեմ, ուղղված ռուսների դեմ: Ռուսները գիտակցելով ու հասկանալով, որ հայերը այդ պայքարի առաջին գոտում են, պետք է ամեն կերպ ուժեղացնեն Հայաստանը: Մասնավորապես Ղարաբաղը տան Հայաստանին: Այս պարզ տեսության մասին է խոսքը: Ես նորից եմ կրկնում. այդ տեսությունը նորություն չէ, տասնյակ տարիների ընթացքում այն անընդհատ շոշափվել է: Իսկապես, գոյություն ունի՞ այժմ պանթուրքիստական դավադրություն: Եկեք նախ այս հարցին պատասխանենք: XIX դարի վերջում և XX դարի սկզբում գոյություն ունեին որոշ տեսություններ, քաղաքական հոսանքներ, որոնց նպատակն էր էթնիկական հիմքի վրա ստեղծել պետություններ. օրինակ՝ պանսլավոնական, այսինքն՝ կար սլավոնական ազգերը միավորող և միասնական պետության ստեղծման ձգտող քաղաքական հոսանք: Գոյություն ուներ պանթուրքիստական գաղափարախոսություն, այն է՝ բոլոր թրքախոս ժողովուրդները մի պետություն էին ստեղծում՝ Թուրքիայից մինչև Յակուտիա: Կար արաբական միասնություն, այսինքն՝ բոլոր արաբները միավորվում էին մի պետության մեջ: Փորձեր են արվել այդ գաղափարախոսությունները դարձնել իրականություն: Բայց ապարդյուն:

Ամեն մի գաղափարախոսություն ունի իր ազդեցության գագաթնակետը, որից հետո անկում է ապրում: Պանթուրքիստական գաղափարախոսությունն իր գագաթնակետին հասավ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Այդ տեսությունը չհաջողվեց իրականացնել պատերազմի ընթացքում: Դրանից հետո այն թուլացավ: Ինչու՞: XX դարի ամենահզոր ուժը անկախության ձգտումն է: Ամեն մի փոքրաթիվ ժողովուրդ, ամեն մի ազգ ձգտում է ստեղծել անկախ պետություն: Ստեղծվեցին հարյուրավոր նոր պետություններ: Եթե XIX դարում, XX դարի սկզբին թրքախոս ժողովուրդները միգուցե համաձայն լինեին համախմբվել մի ընդհանուր պետության մեջ, ապա այժմ նրանցից ամեն մեկը ձգտում է իր սեփական պետությունը, իր անկախությունն ունենալ: Դա վերաբերում է ոչ միայն թրքախոս ժողովուրդներին: Դա մի ընդհանուր միտում է ամբողջ աշխարհում:

Հարց է առաջանում՝ այժմ կա՞ այդ պանթուրքիստական գաղափարախոսությունը: Այո, կա, բայց փոխել է իր բնույթը, թույլ քաղաքական ուժ ունի: Թուրքիայում կան կազմակերպություններ, որոնք ձգտում են կապեր հաստատել մյուս թրքախոս ժողովուրդների հետ հիմնականում մշակութային, էթնիկական և այլ սկզբունքներով: Իհարկե, կան մարդիկ, որոնք ուզում են ստեղծել այդպիսի թուրանական պետություն: Բայց, ինչպես ասացի, մեր ժամանակներում այդ միտումը որոշիչ լինել չի կարող: Թուրքիան ուրիշ ավելի հզոր միտում ունի: Նրա նպատակն է մուտք գործել եվրոպական ընդհանուր շուկա: Այժմ սա ավելի կենսական խնդիր է, քան թուրանական պետություն ստեղծելու անիրական ձգտումը:

Ասածներիս ճշտությունը կարելի է ապացուցել բազմաթիվ օրինակներով (թեկուզ այն, որ Միջին Ասիայում իրար դեմ պատերազմում են թրքախոս ժողովուրդները):

Այդ դեպքում ինչու՞ է անընդհատ արծարծվում պանթուրքիստական տեսությունը: Զորի Բալայանն ի՞նչ նպատակով առաջ քաշեց այդ շինծու տեսությունը: Կարելի է մտածել, որ քաղաքականության մեջ դավադրություն փնտրելը (ասենք՝ պանթուրքիստական) նման է հոգեկան հիվանդության: Սառը հաշվարկ է ուղղակի ռուսներին խաբելու համար: Խաբել՝ ասելով, որ մենք ունենք ընդհանուր թշնամի, առաջին գոտում ենք, վտանգի տակ, ուժեղացրեք մեզ: Այդպես մտածողները քաղաքականապես խակ են: Քաղաքականության մեջ այդպիսի ստի վրա կառուցել որևէ քաղաքական շարժում, ինչ ասեմ, գավառական, 19-րդ դարի մակարդակի տգիտություն է, ուրիշ ոչինչ: Չնայած կան այս խնդրի ուրիշ կողմեր, որոնց մասին կուզենայի խոսել: Մանավանդ երբ հայը համոզում է ռուսին… 200-300 տարի է՝ ռուսներին համոզում ենք, որ մենք իրենց ամենից ավելի նվիրված ազգն ենք, որ իրենց շահը պահանջում է մեր թիկունքին կագնել և ամեն ինչով օգնել մեզ, որպեսզի մենք հզորանանք: Ես գտնում եմ, որ հայ ժողովրդի պատմության ամենասև էջը Իսրայել Օրու առաքելությունն է: Ամեն մի ազգ, կորցնելով պետականությունը, ձգտում է ստեղծել անկախ պետություն: Հայերը փորձում էին այդ անել հարյուրավոր տարիների ընթացքում: Բայց հայտնվեց Իսրայել Օրին, որը դռնեդուռ ընկավ և սկսեց փնտրել հովանավոր ազգ, որը պահի-պահպանի մեզ ու ընծաներ տա: Դրանից հետո մենք անընդհատ կորցրել ենք, կորցրել ենք բազում հայերնակիցներ ու հողային տարածքներ: Եվ այսքանից հետո շարունակում ենք հույս տածել, թե Ռուսաստանին կխաբենք, ու նա կսկսի մեզ օգնել: Դա ուղղակի ծիծաղելի է: Ռուսը աշխարհի ամենահզոր ազգերից մեկն է հիմա և շատ լավ գիտի իր շահը:

Իսկ ի՞նչ անենք: Այն, ինչ անում էիք մեկուկես տարի շարունակ: Հիմա կբացատրեմ: Ուրեմն, ինչպես ասացի, հույս ունենալ, թե մենք կկարողանանք մոլորեցնել ռուսներին, անիմաստ է: Նման փորձ արվել է բազմիցս, և միշտ վերջում ասել ենք, թե ռուսները մեզ դավաճանեցին: Ոչ, ռուսները մեզ չեն դավաճանել: 1889 թվականին ասում էինք, թե Անգլիան մեզ դավաճանեց: Ոչ, Անգլիան մեզ չի դավաճանել: Հետո, թե Ֆրանսիան մեզ դավաճանեց: Ոչ, Ֆրանսիան մեզ չի դավաճանել, թե 1918-ին՝ վրացիները մեզ դավաճանեցին: Ոչ, վրացիները մեզ չեն դավաճանել: Պարզապես ամեն մի ազգ, ժողովուրդ, պետություն մտածում էր իր շահի մասին: Իսկ մենք ուզում էինք, որ մեզ հովանավորեն: Չէ՞ որ մենք քրիստոնյա, լավ ժողովուրդ ենք: Դա ստրկամտություն է, քաղաքական մուրացկանություն: Այդ ճանապարհով կարող ենք կորցնել արյուն, կորցնել հողային տարածքներ և մնալ ծեռնունայն:

Ի միջի այլոց, ասեմ, որ մի նոր տեսություն էլ է առաջացել և կամաց-կամաց երևի թափ կառնի: Ջոն Կիրակոսյանը, հասկանալով, որ պանթուրքիզմով էլ ռուսներին չես խաբի, մի նոր բան հնարեց՝ սիոնիզմը: Համոզված լինելով, որ Ռուսաստանը պայքարում է սիոնիզմի դեմ, սկսեց ապացուցել, որ սիոնիզմը նաև հայության դեմ է, դե, ուրեմն, մենք միասին ենք, Ռուսաստան, օգնիր մեզ, միասին պայքարենք սիոնիզմի դեմ: Նման գաղափարախոսությունների հետևանքով ծեռք ենք բերում թշնամիներ և չենք գտնում բարեկամներ: Թշնամացնում ենք մեր դեմ մեր հարևան բոլոր ժողովուրդներին: Հարց է առաջանում. պանթուրքիզմի մասին անընդհատ խոսվում էր, ժողովուրդն էլ էր խոսում, բայց հրապարակավ ոչ ոք համարձակություն չունեցավ արտահայտվելու, որովհետև դա դիպչում էր Խորհրդային Միության արտաքին քաղաքականությանը: Ինչու՞ դա թույլ տվեցին, որպեսզի մեզ ստրուկ պահեն, որովհետև պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որը թելադրում է Զորի Բալայանը, չխաբելով Ռուսաստանին, մեզ ստրուկ է դարձնում: Այդ տեսությունն է, որ խանգարում է մեզ մտածել անկախության մասին: Այդ գաղափարախոսությունով տոգորված՝ որոշ ազգային գործիչներ մինչև 1988թ. փետրվարը նամակներ էին գրում Մոսկվա՝ խնդրելով, որ Ղարաբաղը միացնեն Հայաստանին: Նրանք, ովքեր հույս էին փայփայում, մի անգամ ևս հասկացան և ասացին՝ ռուսները մեզ դավաճանեցին, Ղարաբաղը չտվեցին, հասկացան, որ այդ ճանապարհով ոչ մի բանի հասնել չի լինի:

«Ղարաբաղ» կոմիտեն առաջարկեց երկրորդ ճանապարհը՝ ժողովուրդը պետք է հույսը դնի իր ուժերի վրա և փնտրի ոչ թե հովանավորներ, այլ՝ դաշնակիցներ: Մեծ տարբերություն կա հովանավորի և դաշնակցի միջև: Երբ քեզ թվում է, թե հովանավոր ունես, թուլանում ես, ամբողջ հույսդ դնում ես հովանավորի վրա, նրա ծեռքում խաղալիք ես դառնում: Եվ նա քեզ օգտագործում է իր քաղաքական շահերի համար: Իսկ եթե ինչ-որ մեկի դաշնակիցն ես լինում, ունենում ես պարտավորություններ: Դաշնակցության մեջ միշտ գոյություն ունի մրցակցություն, որը լարում, կրկնապատկում է ժողովրդի ներքին ուժերը, պայքարի է մղում և, ի վերջո, արդյունք է տալիս:

Ղարաբաղյան շարժումը սկսվեց գործադուլներով, ցույցերով: Որո՞նք էին նպատակները: Առաջին հերթին՝ մենք հասկացանք, որ այս պետությունում ստեղծվել է մի իրավիճակ, որ, իր շահերից ելնելով, պետք է ինչ-որ չափով թույլ տա դեմոկրատական շարժում, գոնե կեղծ ձևով պետք է գործի սահմանադրությունը: Եվ մենք գործադուլներով, ցույցերով ուզեցինք գործի դնել սահմանադրությունը: Ղարաբաղի հարցը միջազգային հարց է. ազգերի ինքնորոշման սկզբունքն է՝ ամբողջ աշխարհի համար ընդունելի: Մենք ուզեցինք այդ ճանապարհը բացել: Ինքնախաբեությամբ չէինք զբաղվում, հույս չունեինք, թե 2-3 տարուց հետո այս երկիրը դեմոկրատական կդառնա և հաշվի առնելով միջազգային օրենքները՝ Ղարաբաղը կմիացնի Հայաստանին: Ոչ: Գործադուլները նաև այլ նպատակ էին հետապնդում: Մենք հասկացանք, որ Խորհրդային Միությանը, Ռուսաստանին ձեռնտու չէ Ղարաբաղը միացնել Հայաստանին, որովհետև կան բազմաթիվ այդպիսի հարցեր: Ռուսաստանի տարածքը կազմված է ուրիշ ժողովուրդներից խլված տարածքներից, և Ռուսաստանի ամբողջ քաղաքականությունը ստատուս քվո պահպանելն է: Այսինքն՝ ով ինչ վերցրել է, թող իրեն մնա: Ամեն մի խախտում նրա համար վտանգավոր է: Այ, դա է Ռուսաստանի հիմնական վախը: Ուրեմն Ղարաբաղը մեզ տալը նրա համար վտանգավոր է: Մենք որոշեցինք ստեղծել մի այնպիսի կացություն, որ Ղարաբաղը չտալը նրա համար ավելի վտանգավոր լինի: Երբ գործադուլներ, ցույցեր էինք անում, բացի այն որոշակի պահանջները, որ դնում էինք նստաշրջանների, Մոսկվայի առջև, գիտակցում էինք, որ դրանց ալիքը կծավալվի սոցիալիստական երկրներում, ազգային ազատագրական շարժումներ կսկսվեն: Կայսրությունը կսկսի ներսից ճաքեր տալ, և դա շատ ավելի վտանգավոր կլինի Մոսկվայի համար, քան Ղարաբաղը Հայաստանին տալն ու ստատուս քվոն փոխելը: Մենք գնացինք այդ ճանապարհով և հույս ունեինք, որ Մոսկվան կհասկանա, թե ինչ է իրեն սպասում: Բայց կարծես թե չէր հասկանում: Փորձում էինք բացատրել, բայց ապարդյուն: Շարժումը թափ առավ, արագացրեց իր ընթացքը, և դուք նկատեցիք, որ բոլոր սոցիալիստական երկրներով անցավ այդ ալիքը, շատ ազգեր ստեղծեցին դեմոկրատական միավորումներ, իշխանությունը մասամբ վերցրեցին իրենց ձեռքը, և եթե փետրվարին մենք չունեինք դաշնակիցներ, այժմ ունեցանք: Իսկ ո՞վ է մեր դաշնակիցը. Խորհրդային Միության դեմոկրատական շարժումը, ինչպես Մերձբալթիկայի, այնպես էլ Մոսկվայի և Լենինգրադի: Դեմոկրատական դաշնակիցների շարժումներ կլինեն և՛ Միջին Ասիայում, և՛ Սիբիրում, ամենուր, սրանք են մեր բնական դաշնակիցները: Մենք իրենց ենք պետք, իրենք՝ մեզ: Սա ամենաբնական քաղաքական կապն է: Ուրեմն՝ փուլը փոխվեց: Մենք արդեն պիտի կարողանանք դառնալ դաշնակից: Որպեսզի արժանի դաշնակից լինենք, պետք է դեմոկրատիան զարգացնենք Հայաստանում: Այսինքն՝ նոր հարց առաջացավ:

Դեմոկրատիայի զարգացումը Հայաստանում երկու ուղղությամբ է ընթանում: Ինքնըստինքյան ժողովրդավարության զարգացումը ձեռնտու է մեր ժողովրդին, պետք է լուծել հայերի կենսական խնդիրները: Սակայն, բացի դրանից, ժողովրդավարական հանրապետություն ստեղծելով՝ ամրապնդում ենք մեր դաշնակցական կապը մյուս ժողովրդավարական շարժումների հետ:

ԳԽ նստաշրջանը կարող է ընդունել մի որևէ որոշում: Նստաշրջանը ընդ որում կախարդական փայտիկ չէ, եթե որոշում է ընդունվում, որ Իսպանիան պատկանում է Հայաստանին, Իսպանիան չի պատկանի Հայաստանին: Չի կարելի դեպուտատին խնդրել.«Չեռք բարձրացրու՝ Իսպանիան մեզ տան»: Մենք պետք է գիտակցենք, թե ինչ ենք սպասում նստաշրջանից: Նախ՝ ժողովրդավարություն: Սա է մեր նպատակը: Կան բազմաթիվ հարցեր, բազմաթիվ նպատակներ, որոնք կլուծվեն միայն այն դեպքում, երբ հասնենք ժողովրդավարության: Ես դարձյալ ուզում եմ կրկնել՝ ժողովրդավարությունն անհրաժեշտ է մեր ժողովրդին ներքին կյանքի սոցիալական և այլ հարցեր լուծելու, միաժամանակ նաև ամուր դաշնակիցներ ունենալու համար:

Սակայն միայն դաշնակցով գործն առաջ չի գնա: Ազգը պետք է հզորանա ներքուստ: Ո՞րն է հզորության աղբյուրը, ինչն է մեզ դարձնում ազգ, ինչո՞վ ենք մենք ազգ և ինչո՞վ է մեր ազգը տարբերվում մյուսներից: Կան մեր անցյալ և ապագա սերունդներին իրար շաղկապող անտեսանելի թելեր, որոնցից ամենաէականը լեզուն է: Այն մեր հզորության աղբյուրն է: Առանց լեզվի գոյություն չէր ունենա մեր ազգը:

Հայ ազգը, հարյուրավոր տարիներ զրկվելով անկախությունից, շատ հիվանդություններ է ստացել, շատ բան խաթարվել է: Լեզվի պահպանության և մաքրության խնդիրը առաջնային է, բայց պետք է վերադարձնել նաև մեր ազգային դիմագիծը: Դա առանձին խոսակցության նյութ է:

Բացի անտեսանելի թելերից, անհրաժեշտ են նաև տեսանելի թելեր, այսինքն՝ կազմակերպվածություն, կազմակերպություն, որն ընդգրկի ողջ հայությունը: Դա կարող է բաղկացած լինել բազմաթիվ փոքրիկ կազմակերպություններից, բայց մենք բոլորս պետք է լինենք միասնական: Այդ միասնության մեջ, իհարկե, կարող են լինել հակասություններ, բայց դրանք պետք է լինեն ավելի թույլ, քան մեր միասնական ուժն է: Մենք, ի դեմս այդ կազմակերպության, տեսնում ենք Հայոց համազգային շարժումը: Ո՞րն է լինելու ՀՀՇ-ի նպատակը: Մենք ասում ենք՝ հայ ազգի իղձերի կատարումը: Մի օր մենք կունենանք անկախ պետություն, դա մեր առաջնահերթ իղձերից մեկն է: Այն կիրականանա: Մենք բազմաթիվ խնդիրներ ունենք, որոնք կլինեն նաև անկախ պետություն ունենալուց հետո: Այդ բոլոր խնդիրները հնարավոր է լուծել, եթե կապված լինեն և՛ տեսանելի, և՛ անտեսանելի թելերով:

Ունենանք դաշնակիցներ և ոչ թե հովանավորներ:

Վ. Մանուկյանի ելույթը
Մատենադարանի հարթակում,
1989թ. սեպտեմբեր

ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ հասկացանք այս մեկուկես տարվա ընթացքում: Այն, ինչ որ պիտի իմանայինք մինչև այդ: Մեր պայքարում հույսներս միայն մեզ վրա պիտի դնենք: Ինչքան ինքնուրույն լինենք, այնքան ավելի լավ կլուծենք մեր ազգային հարցերը: Հետևաբար պետք է ձգտենք ստեղծել անկախ պետություն, որը ազգային խնդիրների լուծման միակ երաշխիքն է: Ի՞նչ հնարավորություններ կան: Ի՞նչ ուղղությամբ է գնում Խորհրդային Միությունը: Աշխարհի երեսին մնացել է վերջին մեծ կայսրությունը, վերջին դինոզավրը, որը քարանձավներում թաքնված՝ XX դարի վերջին ուզում է սողոսկել քաղաքակիրթ ժողովուրդների շարքը՝ մնալով դինոզավր, պահպանելով կայսրությունը:

Վերջին 100 տարվա ընթացքում Ռուսաստանը կանգնած է եղել ընտրության առջև. կամ պահել կայսրությունը՝ զոհաբերելով իր տնտեսությունը, մշակույթը, գիտությունը, կամ հրաժարվել նվաճումներից և ինքուրույն գնալ առաջ: Ընտրությունը եղել է հօգուտ կայսրության պահպանման: Այժմ, երբ խորհրդային երկիրը ծանր տնտեսական, ռազմական, քաղաքական ճգնաժամի մեջ է, երկրի ղեկավարությունը, Գորբաչովը որոշեցին լուծել անլուծելի մի խնդիր՝ պահպանել կայսրությունը և միաժամանակ զարգացնել երկիրը: Ինչպե՞ս անել այդ բանը: Գորբաչովի համար օրինակ է ծառայում Միացյալ Նահանգները, նա մտածում է, ամեն մի շրջանի, հանրապետության առավելագույն ինքնուրույնություն տալով, միաժամանակ և՛ ապահովել առաջխաղացումը և՛ պահել կայսրության ամբողջականությունը: Այդ խնդիրը լուծելու համար նա ձգտում է տնտեսության արագ զարգացման, որի շնորհիվ անջատողական տրամադրություններն ավելի ու ավելի քիչ մարդկանց կզբաղեցնեն, բայց չի հաջողվում: Սոցիալիստական տնտեսությունը քայքայվում է մեծ արագությամբ, և հայտնի չէ, թե ինչպես կարելի է կասեցնել այդ արագընթացը: Եթե անգամ նրան հաջողվեր տնտեսությունը բարձրացնել, դարձյալ մնում էր մի հարց: Միացյալ նահանգներում տարբեր ազգության ժողովուրդներ են՝ առանց իրենց հայրենիքի, իսկ այստեղ միավորված են հայրենիքներ, որոնք հազարամյակների պատմություն ունեն: Այդ ժողովուրդները երբեք չեն համաձայնի, իրենց ինքնուրույնությունը կորցրած, միասին առաջ քայլել:

Այդ առումով մեզ սպասում են շատ ծանր տարիներ: Իհարկե, երբ պարզվի, որ կայսրությունը քանդվում է, նորից կփորձեն բռունցք ցույց տալ, սեղմել, բայց ապարդյուն, քայքայման գործընթացը շարունակվելու է: Դա կտևի 1,2,3 տարի: Հետևաբար ինքնին քաղաքական զարգացումն էլ կհանգեցնի մեզ այնքան անհրաժեշտ անկախության:

Պետք է պատրաստ լինենք անկախությանը, պետք է մեր հանրապետությունը տնտեսապես հզորացնենք, տնտեսությունը դարձնենք ինքուրույն, կարողանանք կապեր ստեղծել մեր հարևանների հետ: Դրա շնորհիվ միայն կմնանք, կդիմանանք և կլուծենք մեր խնդիրները: Երկրորդ՝ մենք պիտի կարողանանք պաշտպանել մեր ժողովրդին, կազմակերպել ինքնապաշտպանությունը: Ոչ թե ֆիդայական շարժում, այլ կազմակերպված ինքնապաշտպանություն: Երբ տեղի էին ունենում Ադանայի կամ Սումգայիթի ջարդերը, մենք չպետք է դիմեինք քաղաքակիրթ աշխարհին, թե տեսեք՝ մեզ հետ ինչ են անում, եկեք մեզ

օգնության, այլ չպիտի թույլ տայինք, որ այդպիսի բաներ լինեին: Ամեն մի հարվածին պիտի պատասխանենք հակահարվածով: Ի դեպ, Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ Ֆրանսիան բավական հզոր երկիր էր իր տնտեսությամբ, իր ռազմական ուժերով, սակայն մի քանի շաբաթում Գերմանիան նվաճեց Ֆրանսիան, որովհետև ժողովուրդը հոգևոր հզորություն չուներ: Առանց հոգևոր հզորության, տնտեսական հզորությունը ոչինչ է:

Մեր հոգևոր հզորության կարևորագույն աղբյուրներից մեկը մեր լեզուն է: Կան մարդիկ, որոնք ասում են՝ այս նեղ վիճակում ի՞նչ իմաստ ունի բարձրացնել լեզվի հարցը: Հիշենք, որ **Տեր Զորի** անապատներում, ուր Թուրքիայի կառավարությունը աքսորեց հայերին ջարդերից հետո, նրանք, ովքեր չգիտեին հայերեն տառերը, կիսամեռ վիճակում ավազի վրա գրում էին դրանք, որ սովորեն, գիտեին, որ մեր ազգը, մեր հզորությունը լեզուն է: Այժմ, երբ մեկուկես տարի շարունակ Մոսկվան թքում է մեր ժողովրդի երեսին, մենք արժանապատվություն չունեցանք: Դրա ապացույցն է Երևանում առաջին դասարանցիների 26 տոկոսի ռուսական դպրոց գնալը: Միայն համոզելը քիչ է: Գերագույն խորհուրդը պետք է որոշում ընդունի, որ հայերը իրավունք չունեն ոչ հայկական դպրոց գնալ:

Մեր հզորության մյուս աղբյուրը մեր հավատն է, եկեղեցին, քրիստոնեությունը, որը 1500 տարի պահել է մեզ: 70 տարի առաջ փորձեցին այդ հավատը փոխել կոմունիստական հավատի: Չստացվեց: Ժողովուրդը չընդունեց: Ընդունողները 20-ական թվականներին հանդես եկան որպես ժողովրդի դահիճներ, մեր ազգային շահերի դավաճաններ:

Էջմիածնով պետք է մեր ժողովուրդը կազմակերպվի, որ բացվեն հարյուրավոր նոր եկեղեցիներ, վերականգնվեն հները, Երևանում պետք է տասնյակ գործող եկեղեցիներ լինեն, ոչ թե տուրիստների համար, այլ՝ մեր ժողովրդի:

Ղարաբաղի հարցը: Դեռ 1988թ. փետրվարյան միտինգներում ասվեց, որ Ղարաբաղը մեզ չեն տա, մենք Ղարաբաղը պիտի վերցնենք: Հիմա Ադրբեջանը մի ինչ-որ թուղթ է հրապարակել: Մենք էլ թուղթ կհրապարակենք: Ադրբեջանի այդ սուվերենության օրենքի մեջ (ընդհանրապես ասած, ամեն մի ազգի սուվերենություն պետք է ողջունել, ամեն մի ժողովուրդ ունի իր սուվերենության իրավունքը) կոպտորեն խախտվում է Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքը:

Ես մանրամասն չեմ վերլուծի, թե ինչու է այդ փաստաթուղթը հակասում Խորհրդային Միության սահմանադրությանը, միջազգային օրենքներին: Մանավանդ որ Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում է ընդունել, որ ինքը անկախ միութենական տարածք է, և իր տարածքում չեն գործում Ադրբեջանական Հանրապետության օրենքները: Այնպես որ այդ փաստաթուղթը ուշացած է:

Ազգային խորհուրդը նաև որոշում ունի, որ ամեն մի միջամտություն Ղարաբաղի գործերին կընդունի որպես ագրեսիա և կդիմի համապատասխան քայլերի, հակահարված կտա: Մեկուկես տարի Ղարաբաղը չի ենթարկվում Ադրբեջանին, մեկուկես տարի Ղարաբաղը անկախ է: Մոսկվայում կամ Բաքվում հրապարակված ոչ մի թուղթ չի կարող փոխել այդ եղելությունը: Միակ վտանգն այն է, որ Խորհրդային Միությունը կարող է բանակի միջոցով օգտագործել ադրբեջանցիներին և փոխել իրավիճակը: Դա է վտանգավոր, թղթերը վտանգավոր չեն: Թղթի դեմ միշտ էլ կարելի է թուղթ հնարել: Ղարաբաղը մեկուկես տարի անկախ է: Նա կշարունակի իր գործը, իսկ մենք նեցուկ ենք նրան: Փաստորեն Ղարաբաղի շրջափակումն է միայն, որ խանգարում է իրականացնել միացումը:

Մի երկու խոսք հասարակական կարծիքի մասին: Իհարկե, հասարակական կարծիքը շատ մեծ նշանակություն ունի: Կարևոր է, թե ի՞նչ որոշում կընդունի ԱՄՆ-ի Կոնգրեսը, ի՞նչ կգրեն արտասահմանյան թերթերը, ի՞նչ է մտածում խորհրդային ժողովուրդը: Բայց հիշենք, որ երբեք հայերի նկատմամբ այնպիսի նպաստավոր հասարակական կարծիք չի եղել, ինչպես Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և պատերազմի ընթացքում: Ամբողջ աշխարհի հասարակական կարծիքը մեր կողմն էր, և ի՞նչ ստացանք մենք: Մեկուկես միլիոն զոհ, կորցրինք Արևմտյան Հայաստանը:

Հասարակական կարծիքը անհրաժեշտ է այն դեպքում, երբ քո հզորությունը բավարար է խնդիրը լուծելու համար: Այդ դեպքում հասարակական կարծիքը շատ կարևոր օժանդակ դեր է խաղում: Սակայն հրապուրվել հասարակական կարծիքով, նշանակում է կրկնել մեր բոլոր հին սխալները և վտանգել նաև այս մեր հողակտորը, մեր ժողովրդին: Այսինքն՝ մեր նպատակը պիտի լինի անընդհատ հզորանալ և առաջադրել այնպիսի խնդիրներ, որոնք համապատասխանում են մեր հզորության չափին: Մենք անսպառ հնարավորություններ

ունենք մեր հզորությունը ավելացնելու, որը կհամապատասխանի այն մեծ, վեհ նպատակների իրականացմանը, որոնք և առաջադրել է ժողովուրդը: Հզորության համար մեծ նշանակություն ունի նաև կազմակերպվածությունը, միասնությունը:

Միասնությունը միասնության համար ոչ մի դեր չի խաղում: Միասնությունը պիտի լինի ինչ-որ հիմքի շուրջ, ինչ-որ հիմքի վրա: Ժողովրդի միասնությունը, ազգի միասնությունը, ինչպես ասացի, լեզուն է: Իսկ խնդիրներ լուծելու համար անհրաժեշտ է կազմակերպվածություն: Մենք անընդհատ փորձում ենք ժողովրդին կազմակերպել ՀՀՇ-ի շրջանակներում:

Նոյեմբերի 4-ին, 5-ին տեղի կունենա համագումարը: Շուտով կհրապարակվի ՀՀՇ-ի կանոնադրությունը: Մենք կանոնադրությունը մշակելիս աշխատել ենք այնպես, որ բոլոր առողջ, ազգային մտածողություն ունեցող կազմակերպությունները ներգրավվեն այդ կազմակերպության մեջ:

Ես ձեզ մաղթում եմ ոգու հզորություն. հիշեք նաև, որ մեր հարցերը մենք ենք լուծելու:

Վ.Մանուկյանի ելույթը 1989թ., հոկտեմբեր

ՊԱՅՔԱՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՂԹԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՋԻՆՎԵԼ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ, ՀԶՈՐԱՆԱԼ

Ոմանք պնդում են, որ Սումգայիթի կամ Բաքվի դեպքերը խաղաքարտ են, որը պետք է օգտագործել, այն մեր ժողովրդին շահ կբերի: Սուտ է: Ինչպես Ադանան մեզ չօգնեց, այնպես էլ Սումգայիթը չօգնեց, չի օգնի նաև Բաքուն: Կոտորվելիս օգուտ չես ստանում, կոտորվելիս միայն վնասվում ես: Իհարկե, պետք է հաշվի առնել Մոսկվայի դիրքորոշումը, իհարկե, պետք է հաշվի առնել Ադրբեջանին, բայց բուն էությունն ինչն է. Հայաստանն ու Ադրբեջանը պայքարում են Ղարաբաղի համար, ով ուժեղ լինի, նա էլ կվերցնի: Ղարաբաղը մեր բուն հողն է, որը բնակեցված է հայերով: Դա է մեր ուժը:

Այս պայքարում մենք դրական շատ բաների ենք հասել, և դա է զայրացնում Ադրբեջանին: Այնպես որ չպետք է վախենալ, թե կան բազմաթիվ ուժեր, որոնք մեր դեմ դավադրություն են նյութում: Ոչ: Ամեն ինչ կախված է մեզանից, և մենք պետք է այդ պայքարում հաղթենք: Ես համոզված եմ՝ կհաղթենք:

Գետաշենի, Շահումյանի և Մանաշիդի կռիվները ցույց տվեցին, որ հայերը կարողանում են խիզախորեն կռվել: Մանաշիդի պայքարը իմ աչքի առաջ է, ես չեմ մոռանա, թե ինչպես մի տղա դանակը ձեռքին խրամատից խրամատ էր վազում, բարձունք էր գրավում, նա հրացանով վերադարձավ: Դա է մեր պայքարի ուղին: Այդ պայքարում հաղթելու համար պետք է լինենք հզոր, կարողանանք կազմակերպվել, զինվել: Նույնը փորձում է անել Ադրբեջանը: Իհարկե, պնդել, որ մեր ժողովուրդը միասնական է, հակասություններ չկան, սխալ կլինի: Նույնն էլ Ադրբեջանում է: Նրանց ժողովրդական ճակատը տրոհվել է երեք մասի, որոնց մեջ սուր հակասություններ կան: Սուր հակասություններ կան այստեղից գնացած ադրբեջանցիների և տեղացիների միջև, Նախիջևանի ադրբեջանցիների և մյուս շրջանների ադրբեջանցիների միջև: Նրանք փորձում են կազմակերպվել, փորձում ենք կազմակերպվել և մենք:

Ի՞նչ դեր է խաղում զորքը: Մենք կարող ենք հրաժարվել ամեն ինչից, հրաժարվել Ղարաբաղից, կարող ենք դատարկել Գետաշենը, Շահումյանը, խորհրդային զորք հրավիրել՝ խոստովանելով մեր թուլությունը, պաշտպանություն խնդրել: Համաձա՞յն եք դրան: (Ոչ:) Այդ դեպքում մեր կոչերը, որ զորքը մեզ պաշտպանի, անիմաստ են և նույնիսկ սխալ: Բաքվում զորքը չապահովեց հայերի անվտանգությունը, թեպետ լավ կլիներ, որ ապահովեր:

Բայց ասեմ, որ Մանաշիդի պայքարից հետո ես չեմ զգում, որ զորքի ներկայությունը Շահումյանում և Գետաշենում ինչ-որ ձևով առավելություն է տալիս մեզ: Եթե նույնիսկ ինչ-որ մի պահ առավելություն տա, ինչ-որ պահ պաշտպանի, բացասական երևույթ է, որը մեր ժողովրդին հանգստացնում է՝ իբր մի զորք կա, որը իրեն կպաշտպանի: Ո՞վ ասաց, որ զորքի նպատակը մեզ պաշտպանելն է: Այդ զորքի առաքելությունը այս պետության քաղաքական նպատակներն իրականացնելն է, ոչ թե մեզ պաշտպանելը:

Չեմ ուզում երկարացնել: Մեկ անգամ ևս կոչ եմ անում, մենք պայքարի մեջ ենք, այդ պայքարում մեծ արդյունքների ենք հասել, և կհաղթենք միայն այն դեպքում, եթե կարողանանք զինվել, կազմակերպվել, հզորանալ: Միակ ուղին դա է. և՛ հետագայում, և՛ իրավաբանորեն, և՛ իրավական տեսակետից, և՛ փաստացիորեն Հայաստանին միացած կլինի և՛ Ղարաբաղը, և՛ Գետաշենը, ու կշարունակենք իրագործել մեր ժողովրդի մյուս նպատակները: Մենք և՛ կունենանք անկախ պետություն, և՛ կլուծենք ազգային մեր մյուս խնդիրները: Միայն թե չպետք վախենանք, հույսը ուրիշների վրա չդնենք և չմտածենք, որ մեր դեմ դավադրություններ են կազմակերպվում: Ո՛չ: Մենք բաց ճակատով կանգնած ենք մեր թշնամիների առջև:

Վ. Մանուկյանի ելույթը
Ազատության հրապարակում,
1990թ., հունվարի 17

ՉՈՐՍ ՀԱՐՑ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

-Ձեր կարծիքով, ո՞րն է մեր ազգի նպատակը, և ի՞նչ տվեցին շարժման այս երկու տարիներն այդ նպատակի իրականացմանը:

-Մեր ժողովրդի ազգային, քաղաքական նպատակները երկուսն են՝ անկախ պետականության վերականգնումը և հողային հարցը, այսինքն՝ մեզնից բռնագրավված հողերի վերադարձը: Եվ որպես այդ քաղաքական նպատակների իրագործման վերջնական արդյունք՝ Հայաստանն իր արժանի տեղը կզբաղեցնի մյուս քաղաքակիրթ երկրների շարքում: Քաղաքական այս երկու նպատակները երբեմն միացնում են մի բանաձևի մեջ՝ միացյալ, անկախ Հայաստանի ստեղծում: Պիտի նկատել սակայն, որ այդ երկու խնդիրներն ինչ-որ իմաստով նույնիսկ իրարամերժ են: Դրանցից յուրաքանչյուրը՝ անկախ պետականության վերականգնումը և հողային հարցը, յուրահատուկ քաղաքականություն, տարբեր դաշնակիցներ ու թշնամիներ են ենթադրում: Ուստի հնարավոր չէ այդ երկու հարցը միաժամանակ լուծել: Պետք է ընտրել, նախապատվությունը տալ մեկին, հետո անցնել մյուսին:

Այստեղ ուզում եմ առանձնացնել Ղարաբաղի հարցը՝ որպես առանձին խնդիր: Մեր պատմական Հայաստանից փաստորեն մնացել է հայերով բնակեցված երկու խոշոր բեկոր՝ այսօրվա մեր հանրապետությունը և Ղարաբաղը: Այսօր դրված է այդ երկու բեկորների վերամիավորման հարցը:

Քաղաքական նպատակների իրագործման առումով պետք է քննարկել, թե որ հարցին տալ նախապատվությունը՝ անկախ պետականության վերականգնմանը, թե՞ բռնագրավված հողերի վերադարձին, ո՞րն է դրանցից այսօր իրագործելի:

Նախքան իրագործելիության մասին խոսելը նկատենք, որ հողային հարցը լուծել կարողանալու համար նախ անհրաժեշտ է ունենալ անկախ պետություն, առանց որի հողային հարցեր չեն լուծվում: Ոչ մեկը երբեք հողային տարածք չի նվիրի մեզ, չի նվաճի մեզ համար, չի անի մեր փոխարեն այն, ինչ մենք պետք է անենք: Վերջին երկու տարիները մեկ անգամ ևս ապացուցեցին այդ պարզ քաղաքական ճշմարտությունը: Հետևաբար այժմ մեր ժողովուրդը պետք է կենտրոնանա անկախ պետականության վերականգնման խնդրի վրա: Առանց անկախ պետականության՝ հնարավոր չէ հողային հարցեր լուծել ոչ քաղաքական, ոչ էլ ռազմական միջոցներով: Պատահական չէ, որ նույնիսկ Ղարաբաղի հարցը, որը պարզ հողային հարց չէ, մեր ժողովրդին կամա թե ակամա բերեց անկախության գաղափարին: Հայաստանի և Ղարաբաղի վերամիավորման ուղղությամբ բոլոր արմատական քայլերն անելիս մենք մեզ պահում էինք որպես համարյա անկախ պետություն: Միայն այդ պայմանով մենք կարողացանք որոշ արդյունքների հասնել: Օրինական հարց է ծագում. հնարավո՞ր է այսօր վերականգնել անկախ պետականությունը: Այստեղ սովորաբար երկու խոչընդոտ են նշում: Նախ՝ այն, որ այսօր Հայաստանը Ռուսաստանի կողմից նվաճված տարածք է: Իսկ պատմական փորձը ցույց է տալիս, որ պետությունները երբեք ինքնակամ չեն հրաժարվում իրենց գրաված տարածքներից: Ուրեմն Ռուսաստանը բնականաբար պետք է խանգարի մեր անկախ պետականության վերականգնմանը: Բայց այժմ Խորհրդային Միությունում քաղաքական այնպիսի իրավիճակ է ստեղծվել, երբ խնդրի լուծումը մոտ է թվում: Ռուսաստանը, հետ մնալով մյուս երկրներից, փորձում է միաժամանակ երկու իրարամերժ

խնդիր լուծել. հզորանալ տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային տեսանկյունից և միաժամանակ պահել կայսրությունը: Բայց կայսրությունը պահելու համար պետք է ուժ կիրառել, իսկ երկրի զարգացման համար որոշակի ազատություններ տալ ժողովրդին: Միայն ազատ պայմաններում է հնարավոր զարգացումը: Իսկ ազատությունը, ժողովրդավարությունը, բնականաբար, ուժեղացնում են կենտրոնախույս ուժերը, մանավանդ որ մեծ արագությամբ շարունակվում է քանդվել պետության տնտեսությունը: Այս իրարամերժ խնդիրների լուծման ճանապարհին Ռուսաստանը կամա թե ակամա, հավանաբար, ստիպված կլինի հրաժարվել որոշ հանրապետություններից, ինչպես ստիպված եղավ հրաժարվել իր հսկողության ոլորտում գտնվող Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներից: Հետևաբար ներկա իրավիճակը հույս է ներշնչում, որ քաղաքական ճիշտ պայքարի շնորհիվ Խորհրդային Միության ընդհանուր քաղաքական իրավիճակն, ի վերջո, անկախություն նվաճելու հնարավորություն կտա մեզ:

Շատերը նշում են նաև երկրորդ խոչընդոտը. անկախություն ստանալուց հետո մենք ստիպված կլինենք դեմ հանդիման կանգնել հզոր Թուրքիային, որի նպատակն է ոչնչացնել Հայաստանը և Հայաստանի վրայով միանալ իր հետ կրոնական և էթնիկական որոշ ընդհանրություններ ունեցող Ադրբեջանին: Նախ պատասխանեմ այն մարդկանց, ովքեր անկախության գաղափարին հակադրում են այս փաստարկը: Պիտի հասկանանք, որ ռուսական բանակն այստեղ է գտնվում ոչ թե հայերին պաշտպանելու համար, այլ որովհետև այդ են պահանջում կայսրության շահերը: Խորհրդային Միությունը քանդվող կայսրություն է, և վաղ թե ուշ նրա շահը կպահանջի, որ բանակը գնա այստեղից: Այնպես որ այս կամ այն կերպ մենք կանգնելու ենք այդ խնդրի առաջ:

Հիմա Թուրքիայի և Ադրբեջանի վերամիավորման խնդրի մասին: XX դարում նույն ծագումն ունեցող երկու ազգ դեռ չեն միավորվել միևնույն պետականության մեջ: Ընդհակառակը, յուրաքանչյուր էթնիկական միավորում ձգտում է ինքնուրույն պետականության: Այդ պատճառով պետք է խոսել ոչ թե Թուրքիայի և Ադրբեջանի վերամիավորման, այլ (եթե գործը դրան հասնի) այն մասին, որ Թուրքիան կարող է Հայաստանի վրայով գնալ և նվաճել Ադրբեջանը: Ադրբեջանն էլ է ուզում անկախ լինել, ինչպես և մնացած բոլոր ազգերը: Ադրբեջանի, Թուրքիայի միավորմանը ձգտող քաղաքական ուղղություն Թուրքիայում, ինչ խոսք, կա: Կան որոշակի քաղաքական շրջաններ, որոնք այդ խնդիրն են հետապնդում, հայտարարում, որ Թուրքիայի շահերից է բխում այդ միավորումը: Թուրքիայի շահն այդպես գնահատող քաղաքական շրջանակների կշիռն այժմ մեծ չէ, այնտեղ գերակշռում է մեր ժամանակաշրջանին բնորոշ այն քաղաքականությունը, որն ուղղված է երկրի տնտեսության, արդյունաբերության, առևտրի, գիտության և մշակույթի զարգացմանը:

Հիմա դժվար է կանխագուշակել, թե քաղաքական իրավիճակի փոփոխության դեպքում այս ուժերից որը կգերիշխի, բայց այսպիսին է պատկերը գրեթե բոլոր պետությունների համար: Ոչ մի պետություն երաշխիք չունի, որ իր հարևանն իր վրա չի հարձակվի: Ահա թե ինչու յուրաքանչյուր պետություն համապատասխան քաղաքականություն է վարում և ստեղծում իրավիճակին համապատասխանող զինյալ ուժեր: 1918 թվականին, երբ Հայաստանն անկախություն ստացավ, շատ ծանր վիճակում էր, բայց կարողացավ դիմագրավել Թուրքիայի հարձակմանը: Այն ժողովուրդները, որոնք ուզում են օգտվել միայն անկախության շնորհիվ տրվող բարիքներից, բայց վախենում են անկախությունից, դատապարտված են ոչնչացման, և այդ ժողովուրդների վերացումից չի աղքատանում այս աշխարհը:

Շարժման երկու տարիների ընթացքում տասնյակ հազարավոր հայեր խորապես գիտակցեցին այս պարզ քաղաքական ճշմարտությունները, հասկացան, որ մեր քաղաքական խնդիրները լուծելու համար պետք է հրաժարվել ռուսական կողմնորոշումից: (Ասեմ, որ ռուսական կողմնորոշումից հրաժարվելն ամենևին էլ Ռուսաստանի հետ թշնամանալը չէ): Հասկացան, որ մեր քաղաքական խնդիրները հետապնդելիս մենք պետք է միայն մեր ուժերի վրա դնենք հույսներս՝ չհրաժարվելով, իհարկե, դաշնակիցներ ունենալուց: Դաշնակիցներ, բայց ոչ հովանավորներ: Գիտակցենք, որ անկախություն ձեռք բերել հնարավոր է միայն այն դեպքում, երբ համապատասխան, ոչ թշնամական հարաբերություններ ունենանք բոլոր հարևանների հետ:

-Ես ուշադրություն դարձրեցի, որ մեր բռնագրավված հողերի մասին խոսելիս դուք խուսափեցիք պահանջատեր բառը օգտագործելուց: Պատահակա՞ն էր դա արդյոք:

-Ոչ, պատահական չէր: Այդ ծիծաղելիության աստիճան գոռոզ բառի տակ, ըստ իս, թաքնված է խղճուկ քաղաքականություն. դիմել ողջ աշխարհին՝ պահանջելով արդարություն: Ես գերադասում եմ այն քաղաքականությունը, որը արդարություն ոչ թե մուրում է ամեն մի խաչմերուկում, այլ նվաճում է՝ հիմնվելով սառը հաշվարկի, խելոք քաղաքականության և ուժի վրա:

-Ինչպիսի՞ քաղաքական հոսանքներ եք դուք տեսնում այժմ հայության մեջ:

-Ասպարեզում են տասնյակ քաղաքական կազմակերպություններ, և ամեն օր ծնվում են նոր բանակներ, ճակատներ, կազմակերպություններ, շատերը՝ 3-4 հոգուց բաղկացած: Ես նույնիսկ կազմակերպություն գիտեմ, որը բաղկացած է մեկ հոգուց: Անցան այն ժամանակները, երբ քաղաքականությամբ զբաղվելը վտանգավոր էր, և ասպարեզում կային երկու-երեք կազմակերպություններ: Այժմ դա ոմանց համար ձեռնտու զբաղմունք է: Ամեն մի կազմակերպություն շտապ գրում է իր ծրագիրը, նպատակները, աշխատում է տեղ զբաղեցնել քաղաքական ասպարեզում: Կատարյալ խառնաշփոթ է: Այս ամենը մակերեսի վրա է: Մակերեսի վրա են նաև մարդկային հավակնությունները, շատերի համար անհասկանալի առճակատումները, միասնության կեղծ կոչերը: Ընդերքում գնում է խուլ, հզոր և անհաշտ պայքար երկու քաղաքական ուղղությունների միջև, միայն երկու: Այդ ուղղություններից մեկը ես նկարագրեցի առաջին հարցին պատասխանելիս:

Ո՞րն է երկրորդ ուղղությունը: Այդ քաղաքական հոսանքի հիմքում ընկած է հետևյալ պատկերացումը: Մենք փոքրաթիվ քրիստոնյա ազգ ենք, գտնվում ենք մահմեդական օվկիանոսի մեջ, որը թշնամաբար է վերաբերվում մեզ: Հետևաբար այս աշխարհագրական դիրքում դիմանալու, ֆիզիկապես չբնաջնջվելու միակ երաշխիքը որևէ հզոր քրիստոնյա երկրի հովանավորությունն է: Այդ տեսակետից բնական ձևով ուղղվում ենք դեպի Ռուսաստան: Ի՞նչ գին պետք է վճարել. հրաժարվել անկախության ձգտումից: Կամ օգտվելով այդ հովանավորի հզորությունից, ընդհանուր շահ ցույց տալով՝ շահագրգռել նրան և նրա միջոցով գրավել մեր պատմական հողերը, որից հետո կարելի կլինի միայն դնել անկախության խնդիրը: Որպես ընդհանուր շահ, որպես խայծ՝ օգտագործել պանթուրքիզմի վտանգը: Թույլ տալ, որ մեզ իրենց շահերի համար օգտագործեն բոլորը, ովքեր հարց ունեն Թուրքիայի հետ:

Այդ քաղաքականությունը մենք «փայլուն» ձևով օգտագործեցինք XX դարասկզբին և ստացանք կոտորած:

Առաջարկվում է մեկ անգամ ևս փորձել: Նախ մենք չէ, որ Ռուսաստանին պետք է բացատրենք՝ ով է նրա թշնամին, կամ որն է նրա շահը: Դա ծիծաղելի է: Եվ հետո, ինչ է նշանակում ընդհանուր շահ: Եթե մենք, քրդերը և Ռուսաստանը ուզում ենք Վանը, դա չի նշանակում, որ մեր շահերը համընկան, որովհետև ամեն մեկն ուզում է իր համար: Եթե մի րոպե մոռանանք, որ Ռուսասատանն այժմ քանդվող կայսրություն է և հնարավորություն ունի շարունակել իր ծավալապաշտական քաղաքականությունը՝ գրավել Վանը, ապա համոզված ենք՝ այն չեն տա Հայաստանին, ինչպես ժամանակին չտվեցին Ղարաբաղը և Նախիջևանը: Պատճառը բոլշևիկների յուրահատուկ քաղաքականությունը չէր, Ստալինի հայատյացությունը չէր, Մոսկվայում նստած ղեկավարների կաշառված կամ բթամիտ լինելը չէր: Դա Ռուսաստանի կայսրության շահն էր, և եթե մենք այդ բանը չհասկանանք, ապա դատապարտված ենք անընդհատ կրկնելու նույն սխալները՝ ամեն անգամ վճարելով մեր հայրենակիցների կյանքով, մեր նախնիների մեզ թողած հողային տարածքներով:

Այս քաղաքական գիծը տանելով, Ռուսաստանի շահերին ծառայելով՝ մենք միայն գրգռում ենք մեր բոլոր հարևաններին՝ ոչ մի բան չշահելով և զրկում ենք մեր ազգին իր ուժերին ապավինելուց, քաղաքական և այլ միջոցներով պայքարելու և արհավիրքներին պատրաստ լինելու հնարավորությունից: Այս քաղաքական գիծն առաջ տանողները ռուսական բանակի հետ կգնան, մեր ժողովուրդը կմնա՝ կրելով այս կարճատես քաղաքականության դառը պտուղները:

Երբ քայքայվում էր թուրքական կայսրությունը, այն ազգերը, որոնք պայքարում էին իրենց անկախության համար՝ հույները, բուլղարները, սերբերը և ուրիշներ, փրկվեցին և վերականգնեցին իրենց անկախ պետականությունը: Հայերը, որոնք ձգտում էին բարեփոխությունների՝ ապավինելով քրիստոնյա երկրների բարեհաճությանը կամ փորձում էին մի տիրոջ՝ Թուրքիայի ձեռքից անցնել ուրիշ տիրոջ՝ Ռուսաստանի ձեռքը, կոտորվեցին: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում կոտորվեց հրեության այն մասը, որը, բարեկեցիկ կյանքով ապրելով Եվրոպայում, հրաժարվում էր Հերցելի առաջարկած անկախ

պետություն ունենալու գաղափարից: XX դարի երկու մեծ կոտորածները: Ֆիզիկական բնաջնջումից փրկվելու համար, ինքնապաշտպանության համար, ազգային իղձերին հասնելու համար, ինքներս մեզ հարգելու և ուրիշների կողմից հարգվելու համար կա միայն մեկ ճանապարհ՝ դեպի անկախություն:

-Առաջիկա ամիսներին ի՞նչ քաղաքական խնդիրներ է դնում իր առջև ՀՀՇ-ն:

-Առաջիկա կարևորագույն խնդիրը Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրություններն են, որին առաջին անգամ մասնակցելու է նաև Արցախի բնակչությունը: ՀՀՇ-ն ամեն ինչ կանի, որ այդ ընտրություններն ազնիվ պայքարում անցնեն, և ընտրվեն ժողովրդի ընտրյալները: Ի՞նչ ենք մենք սպասում մեր ապագա պառլամենտից՝ մեր Գերագույն խորհրդից: Շատ անգամ քաղաքական ներկա իրավիճակը համեմատում են XX դարասկզբի իրավիճակի հետ: Եվ իսկապես, նմանություններ, իհարկե, կան, բայց կա նաև մի շատ կարևոր առանձնահատկություն: Ներկա վիճակի ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ մենք պետություն ունենք: Այդ պետությունը, ճիշտ է, անկախ չէ, կիսաստրկական վիճակում է… էլի շատ վատ բաներ կարելի է ասել մեր հանրապետության մասին, բայց, այնուամենայնիվ, կան պետական մեխանիզմներ, որոնք հնարավոր է օգտագործել մեր ազգային շահերը հետապնդելու համար: Գերագույն խորհրդի ընտրությունները, լավ պառլամենտ ունենալը հնարավորություն կտան այս կամ այն կերպ աշխատեցնել այդ պետական մեխանիզմը, ազատվել ստրկությունից և քայլ առ քայլ գնալ դեպի ինքնուրույնություն և անկախություն: Ներկա քաղաքական իրավիճակը թույլ է տալիս հուսալ, որ այդ խնդիրները լուծելի են: Սա՝ դեպքերի բնական ընթացքի դեպքում:

Բայց, ինչպես Արևելյան Եվրոպայում վերջին ամիսներին կտրուկ և անսպասելի արագացավ դեպքերի ընթացքը, այնպես էլ կարող է կտրուկ փոխվել Անդրկովկասի իրադարձությունների ընթացքը: Ուստի անհրաժեշտ է կազմակերպված ինքնապաշտպանություն ունենալ և պատրաստ լինել բոլոր հնարավոր իրադարձություններին: Սա նույնպես կարևոր խնդիր է, որը պետք է իրականացնել Գերագույն խորհրդի ընտրությունների հետ կապված աշխատանքներին զուգահեռ: Բանաձևը պարզ է. պետք է պատրաստ լինել պատերազմի, բայց քաղաքական միջոցներով փորձել կանխել այն: Իմիջիայլոց, նկատենք, որ և՛ մեր պատմական փորձը, և՛ վերջին իրադարձությունները ցույց են տալիս՝ ոչ մի բան այնքան չի նպաստում խաղաղությանը, որքան հակառակորդի կողմից այն փաստի ըմբռնումը, որ նրա ամեն մի հարվածին կհետևի մեր դաժան հակահարվածը:

-Ձեր վերաբերմունքը ժողովրդավարության նկատմամբ:

-Մարդկությունն իր զարգացման ընթացքում տարբեր ասպարեզներում ստեղծել է ղեկավարման ձևեր, մեխանիզմներ: Տնտեսության ոլորտում դա շուկան է, և բոլոր նրանք, ովքեր հրաժարվեցին տնտեսությունը կառավարելու այդ մեխանիզմից, դատապարտեցին իրենց տնտեսությունը քայքայման, խոչընդոտեցին իրենց երկրներում արդյունաբերության և գիտության զարգացմանը, ինչպես մենք դա տեսնում ենք կոմունիստական երկրներում: Նույն կերպ այն երկրները, որոնք հրաժարվեցին պետությունը կառավարելու ժողովրդավարական ձևից, դատապարտեցին իրենց երկրներին հետամնացության, հանգեցրին խորը սոցիալական անարդարության և հակասությունների: Բայց չկա ընդհանուր ժողովրդավարական կառավարման ձև. կա հունական ժողովրդավարություն, ճապոնական, ամերիկյան և այլն: Համընկնելով ընդհանուր գծերով, դրանք տարբերվում են դետալներով և փոխվում են ժամանակի ընթացքում՝ հարմարվելով տվյալ ժողովրդին և նրա առջև դրված քաղաքական նպատակներին: Ըստ դրա, ամեն մի ժողովրդավարություն ունի իր սահմանները՝ համապատասխանեցված ժողովրդի ապրելաձևի ավանդույթներին, չգրված օրենքներին: Ճապոնիայում, օրինակ, ժողովրդավարությունը սահմանափակված է հազարավոր չգրված օրենքներով, որոնք կառավարում են ճապոնացու կյանքը:

Մեր ժողովուրդը, երկար ժամանակ զրկված լինելով պետականությունից, բաժանված լինելով տարբեր պետությունների միջև և ստիպված հարմարվելով այդ երկրների նիստուկացին, կորցրել է ընդհանուր ազգային սովորությունների, ավանդույթների, չգրված օրենքների մի զգալի մասը, և այդ պատճառով մեծ չափի ժողովրդավարությունը կարող է մահացու լինել մեր ազգի համար, փոշիացնել նրան, կտրել իրար հետ կապող, իրար նկատմամբ պարտավորություններ ունենալու բոլոր թելերը: Մեզ համար շատ կարևոր է վերականգնել մեր ազգային սովորույթները, կրոնական ավանդույթները և բարոյականությունը: Դրանով պետք է որոշվեն մեր ժողովրդավարության սահմանները: Հակառակ դեպքում

կլինի անհատների ամբոխ և ոչ թե ազգ: Հավակնություն չունենալով գծել մեր ազգին պիտանի ժողովրդավարության եզրերը՝ այնուամենայնիվ նշեմ այդ եզրերից մեկը: Մեզ իրար կապող և մեր ազգը բնորոշող կարևորագույն թելը հայոց լեզուն է: Կորցնելով մայրենի լեզուն՝ մենք կդադարենք ազգ լինելուց: Հետևաբար մեր ժողովրդավարության եզրը այնպիսին պետք է լինի, որ մենք իրավունք ունենանք պարտադրել բոլոր հայերին խոսել հայերեն և երեխաներին տալ միայն ազգային դպրոց: Ոչ մի ռուսական դպրոց Հայաստանի տարածքում: Ասում եմ՝ կարևոր չէ՝ ինչ լեզվով է ասում, կարևոր է՝ ինչ է ասում: Սուտ է, մեր ազգի համար վտանգավոր սուտ: Առաջինը նույնչափ կարևոր է, ինչքան երկրորդը:

«Հայք», 4 մարտի 1990,. թիվ 4-5

ԳՆԱՑՔԻՑ ԹՌՉԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Ոչ մի ազգ, ոչ մի պետություն չի կարող իր տնտեսական և քաղաքական ծրագրերը կազմելիս ելնել միայն իր ցանկություններից, ներքին իրականությունից: Անհրաժեշտ է ոչ միայն գնահատել հարևանների և ողջ աշխարհի իրավիճակը, այլև կանխատեսել, թե ինչ ուղղությամբ է շարժվելու աշխարհը, ըստ այդմ կառուցել ազգային ծրագրերը, որոշել խնդիրների լուծման հերթականությունը: Ճշգրիտ հաշվարկել դեպքերի զարգացման ուղղությունը, իհարկե, հնարավոր չէ, պետք է ուղղակի քննարկել հավանական տարբերակները և գործողությունների ընթացքում, հարմար առիթի դեպքում ինչ-որ չափով գնալ նաև խելամիտ ռիսկի, առանց որի հնարավոր չէ ոչ մի խնդրի իրականացում: Եթե հաշվարկներ, կանխատեսումներ չկան, ապա սովորաբար ընտրում են երկու հնարովի պահվածքներից մեկը. կամ կծկված տրվում են հոսանքին՝ սպասելով, թե ինչ կլինի (սովորաբար ինքնիրեն ոչ մի լավ բան չի լինում), կամ նյարդերը չեն դիմանում անորոշ լարվածությանը, և հիստերիկ ոգևորությամբ դիմում են «մահ կամ ազատություն» կարգախոսին, որը եթե ընդունելի է անհատի համար, ապա անընդունելի է, երբ վերաբերում է ողջ ազգին: Այդ երկու պահվածքների դրսևորումն էլ վառ արտահայտված է այժմյան իրականության մեջ:

Մեր ազգը ապրում է այժմ իր համար մի բախտորոշ ժամանակաշրջանում, երբ կամաց-կամաց բոլորիս մեջ հասունանում է այն համոզմունքը, որ դեպքերի զարգացումը կարող է հնարավոր դարձնել մեր ազգի դարավոր երազանքի իրականացումը՝ անկախ պետականության վերականգնումը, առանց որի անլուծելի կմնան մնացած համարյա բոլոր ազգային խնդիրները: Շատերին վախեցնում են ինքնուրույն գործելու այն հնարավորությունները, որոնք բացվել են մեր առջև: Առհասարակ ամենածանր բեռը ինքնուրույն որոշումներ ընդունելու պատասխանատվությունն է, ստրկությունը «քաղցր» է նրանով, որ վերացնում է մարդու վրայից այդ ծանր բեռը՝ ազատելով նրան պատասխանատվության զգացումից: Ստրկությանը սովոր մարդը վախենում է ազատությունից, պատասխանատվությունից: Պատահական չէ, որ այժմ, երբ մեր առջև բացվել են ազգի ապագայի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ ընդունելու և իրագործելու հնարավորություններ, կան մարդիկ, որոնք հուսահատված խոսում են ինչ-որ փակուղու մասին: Ոչ, փակուղի չկա, կա մի դժվարին ճանապարհ, որով անցել են շատ ազգեր, և որը տանում է դեպի երջանկություն: Պետք են միայն համագործակցություն, միասնություն, խելացի հաշվարկ և վճռականություն:

Փորձենք այժմ կռահել, թե ինչ ուղղությամբ է շարժվում ԽՍՀՄ-ը, որոնք են այդ շարժման դրդապատճառները, և, ըստ դրա, տեսնենք, թե ինչ է հնարավոր անել և ինչպես: Այս հարցերի շուրջ ամենատարածված տեսակետը, որը սկզբում քարոզում էր «Ղարաբաղ» կոմիտեն, հետագայում քարոզում էին նաև բազմաթիվ կազմակերպություններ և անհատներ, հետևյալն է: Խորհրդային Միությունը, գտնվելով տնտեսական և քաղաքական խորը ճգնաժամի մեջ, ստիպված դիմեց վերափոխումների՝ փորձելով ստեղծել դեմոկրատական հասարակություն, ազատ տնտեսություն: Օգտվելով այդ հանգամանքից, մենք պետք է ձգտենք տնտեսական անկախության, ինքնիշխանության և հարմար պահին պատրաստ լինենք հռչակելու անկախություն: Այնուամենայնիվ անկախությունը շատերին վախեցնում է Թուրքիայի հարևանության պատճառով (հետաքրքիր է, որ այդ նույն մարդիկ անհասկանալի խիզախությամբ անընդհատ խոսում են Թուրքիայից հողերը հետ վերցնելու մասին), և այդ պատճառով առկա է նաև հետևյալ մտայնությունը. ձգտել կոնֆեդերացիայի և բավարարվել

դրանով, չէ որ եվրոպական երկրներն էլ, զիջելով իրենց անկախության որոշակի մի մասնիկ, ստեղծում են նոր տիպի դաշինք, հետևաբար դա է զարգացման ուղին: Նախ նկատենք, որ մի բան զիջելու համար պետք է առաջին հերթին որոշես՝ ում և երբ զիջես, հանուն ինչի զիջես, ինչ ստանաս դրա փոխարեն, և երկրորդ՝ դարից դար փոխվում է անկախության բովանդակությունը, դրա իրավաբանական ստատուսը: Եվրոպայում այժմ տեղի են ունենում գործընթացներ, որոնց այս կամ այն ձևով մասնակից կդառնան աշխարհի գրեթե բոլոր երկրները՝ ստեղծելով սկզբում պետությունների փնջեր, որոնք հետագայում կձուլվեն մեկ համաշխարհային միասնության մեջ, և դրա արդյունքում կձևակերպվի, թե ինչ է նշանակում անկախությունը 21-րդ դարում:

Նկատենք նաև, որ պետության կազմավորման կոնֆեդերատիվ ձևը անկայուն է, և պատմությանը հայտնի գրեթե բոլոր կոնֆեդերացիաները (Շվեյցարական, ԱՄՆ-ի, գերմանական և այլն) անցել են նույն ուղին՝ կոնֆեդերացիա, հետո ֆեդերացիա, ի վերջո դարձել են միասնական ունիտար պետություն:

Մենք առայժմ խոսենք Խորհրդային Միությունում տեղի ունեցող գործընթացների մասին և տեսնենք՝ ճի՞շտ է արդյոք վերոհիշյալ տեսակետը, ըստ որի հնարավոր է ձեռք բերել անկախություն՝ հանդարտ գնալով դեպի ինքնիշխանություն:

Հասկանալու համար, թե ինչ է տեղի ունենում այժմ ԽՍՀՄ-ում, ինչ ուղղությամբ է նա շարժվելու, և որոնք են այդ շարժման դրդապատճառները, կատարենք մի փոքր պատմական էքսկուրս: Ռուսաստանում դարերի ընթացքում փոխվում էին կառավարման ձևերը, բայց անփոփոխ էր մնում քաղաքականությունը՝ ծավալապաշտությունը: Իր ծավալվելու ընթացքում նա հասավ մեզ, գրավեց մեր հողերի մի մասը:

Պետք է լավ գիտակցել, որ Ռուսաստանի այստեղ գալը ոչ մի ձևով կապված չէր մեր դիմումների կամ կողմնորոշման հետ: Ռուսաստանը կատարում էր իր առաքելությունը՝ ծավալապաշտությունը (հետաքրքիր է նկատել, որ նվաճված ժողովուրդների մի մասը Ռուսաստանում ապրում էր ավելի լավ պայմաններում, քան բուն ռուսները. այդ երևույթը ունի խորը արմատներ, բայց դա առանձին խոսակցության նյութ է):

Ջավթողական քաղաքականության ներքին տրամաբանությունը պարտադրում էր Ռուսաստանին չհանդուրժել իր ճանապարհին անկախ պետությունների ստեղծումը, անել ամեն ինչ, որպեսզի նվաճված ազգերը հնարավորություն չունենան ստեղծելու իրենց անկախ պետությունները: Այդ նպատակով իրագործվում էր նվաճված ազգերի ռուսականացման քաղաքականությունը, ռուսականացում լեզվով, մշակույթով, խառը ամուսնությունների միջոցով և այլն: Այն դեպքերում, երբ դա չէր հաջողվում, արվում էր ամեն ինչ, որպեսզի տվյալ ազգը մեծամասնություն չկազմի իր պատմական տարածքում: Դրան էին ծառայում տեղահանությունները, ջարդերը, նվաճված տարածքները ռուսներով վերաբնակեցնելու քաղաքականությունը: Այդ պատճառով օբյեկտիվորեն մեր դարավոր իղձի իրականացումը՝ միացյալ անկախ Հայաստանի ստեղծումը, հակասում էր Ռուսաստանի շահերին: Եվ այդ է նաև պատճառներից կարևորագույնը, որ մեզ չհաջողվեց ապահովել մեր հայրենակիցների մի զգալի մասի ֆիզիկական գոյությունը XIX դարի վերջում ու XX դարի սկզբում (Թուրքիայի շահագրգռվածությունն ու դերը այս հարցում հայտնի է, մենք այժմ խոսում ենք Ռուսաստանի մասին), խնդիր, որը մեզ հաջողվում էր իրականացնել դարերի ընթացքում՝ ապրելով ծանր պայմաններում՝ թուրքական և պարսկական կայսրությունների տիրապետության տակ: Այս առիթով նկատենք, որ եթե ծավալապաշտական քաղաքականություն իրագործող Ռուսաստանը մեր ազգային իղձերի իրականացման բնական թշնամին է, ապա Ռուսաստանի հրաժարումը այդ քաղաքականությունից հնարավորություն է ստեղծում վերականգնել մեր պետականությունը, և մեր անկախ պետության բնական դաշնակիցը կարող է լինել նոր ժողովրդավարական Ռուսաստանը: Ծավալապաշտական Ռուսաստանը օբյեկտիվորեն մեր թշնամին է: Ոմանց կարծիքով, եթե իր ծավալապաշտության մեջ նա հասած լիներ գոնե մինչև Վան, հետո քանդվեր, միգուցե մենք այժմ ավելի շահած լինեինք. բայց, նախ, եթե նա այդ տարածքները գրաված լիներ, ապա մեկ է, այդտեղ այժմ հայեր չէին բնակվի (հավանաբար այդ տարածքներում կստեղծվեին թուրքական և քրդական հանրապետություններ), ապացույց՝ Առաջին համաշխարհային պատերազմի պատմությունը, Նախիջևանը և այլն: Երկրորդ՝ տեսանելի ապագայում այդպիսի բան չի սպասվում, ծավալապաշտական քաղաքականությունն այժմ հակասում է մարդկության զարգացման ուղուն, Ռուսաստանի հնարավորություններին, և եթե մենք, չունենալով պետականություն, անորոշ սպասենք

մարդկության զարգացման այն փուլին (եթե այդպիսի փուլ գա), որը նորից հնարավոր դարձնի Ռուսաստանի ծավալապաշտական քաղաքականությունը, նույն անիմաստ հույսերը կապելով դրա հետ, ապա մինչ այդ մենք կդադարենք գոյություն ունենալ որպես ազգ:

Դեմոկրատական Ռուսաստանը մեր բնական դաշնակիցը կարող է լինել, հիշենք միայն, որ անկախ պետություն ունենալու դեպքում է միայն հնարավոր իրական դաշնակիցներ ունենալ:

Պատմության, քաղաքականության ոլորտներում գործում են օրենքներ, որոնք կախված չեն այս կամ այն անհատի ցանկությունից: Այդ օրենքներից նշենք պարզ, բայց մեր դիտարկման համար կարևոր մի կանոն: Ամեն մի պատմական ժամանակաշրջանում գոյություն ունի մարդկության ընդհանուր զարգացման ուղի, և եթե մի որևիցե պետության արտաքին և ներքին քաղաքականության ուղղվածությունը չի համընկնում զարգացման ընդհանուր ուղուն, ապա այդ պետության ներսում առաջանում են պետությունը քանդող ուժեր, և ինչքան մեծ է շեղումը մարդկության ընդհանուր զարգացման սլաքի և տվյալ պետության կառուցվածքի ու քաղաքականության ուղղվածության սլաքների միջև, այնքան մեծ է քանդող ուժերի զորությունը, այն ուժերի, որոնց նպատակը՝ իրենց իսկ կողմից խորը չգիտակցված, շատ հաճախ նույնիսկ երկրի շարժման ուղղությունը հնարավորինս մարդկության զարգացման ուղղությանը համապատասխանեցնելն է: Մեծ եռանդ, ուժ կիրառելով՝ իշխողները կարող են միաժամանակ այդ երևույթների դեմն առնել, կծկվել՝ երկիրը դատապարտելով տնտեսական, քաղաքական, ռազմական, գիտական, մշակութային և բարոյական լճացման: Ինչքան երկար տևի այդ լճացումը, այնքան մեծ կլինի պայթյունը: Օրինակ կարող են ծառայել իրադարձությունները Ռումինիայում:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով որոշ կայսրություններ քանդվելով վերափոխվեցին նոր պետությունների, որոնց ընթացքի ուղղության սլաքները շատ թե քիչ համապատասխանեցին մարդկության զարգացման ուղղության սլաքին, օրինակ՝ Թուրքիան, Ավստրո-Հունգարիան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այդ ճանապարհով գնացին Անգլիան, Իսպանիան, Պորտուգալիան և այլք: Եվ այժմ մնացել է վերջին խոշոր դինոզավրը՝ Ռուսաստանը:

Մարդկության զարգացման այժմյան ուղղության՝ պետությունների հզորացման, գիտության և տեխնիկայի, տնտեսության և մշակույթի զարգացման հիմքում ընկած է մի կախարդական բառ՝ ազատություն: Դա է մարդկության զարգացման ուղին, և այդ հոսանքին հակառակ գնալու բոլոր փորձերը, ինչքան էլ հզոր և վեհ գաղափարներով պատճառաբանված լինեն, դատապարտված են անհաջողության: Օրինակ կարող են ծառայել կոմունիստական և ֆաշիստական գաղափարախոսությունները և դրանց քաղաքականության իրականացման փորձի տապալումը:

Այժմ հերթը հասել է Ռուսաստանին: Ինչպես արդեն նշել ենք, դարերի ընթացքում անշեղորեն իրագործելով ծավալապաշտական քաղաքականություն՝ Ռուսաստանը ժամանակի ընթացքում փոխել է իր կառավարման ձևերը: Կառավարման վերջին ձևը բոլշևիզմն է: Ծավալապաշտական քաղաքականության վերջին փորձը՝ Աֆղանստանի նվաճումը, տապալվեց: Կառավարման վերջին ձևը երկիրը բոլոր ասպարեզներում կանգնեցրեց խորը ճգնաժամի առջև: Ավելին, կայսրությանը թույլ կպած կտորները՝ Լեհաստանը, Հունգարիան, սկսեցին կամաց-կամաց պոկվել: Կայսրությունն արդեն ուժ չուներ՝ պահելու նրանց: Ամբողջ մարդկությունը սարսափով նայում էր քայքայվող հսկային, որի բեկորների տակ կարող էր թաղվել ողջ աշխարհը:

Աշխարհը զինվում էր՝ պատրաստվելով պաշտպանել իրեն հավանական արհավիրքից և լարված ուշադրությամբ հետևում էր կայսրության հոգևարքին: Պայթյունից խուսափելու մի միջոց կար. արագ փոփոխություններ կատարել երկրի արտաքին և ներքին քաղաքականության ոլորտում՝ աշխատելով փոփոխությունների ընթացքը պահել հսկողության տակ: Խնդիր դրվեց նվազագույն տարածքային կորուստներով, նվազագույն փոփոխություններով փոխել կառավարման ձևը, երկիրը հարմարեցնել աշխարհի զարգացման ուղղությանը՝ ապահովելով գիտության, տեխնիկայի, տնտեսության և ռազմական արդյունաբերության առաջընթացը նոր պայմաններում: Ռուսաստանում հայտնվեց մի մարդ, որն իր վրա վերցրեց այդ բարդ խնդրի իրականացումը. այդ մարդը Գորբաչովն է: Եթե սկզբում թվում էր, որ վերափոխման գործը կարելի է առաջ տանել փոքր ձևափոխությունների միջոցով, ապա ընթացքում պարզվեց, որ փոփոխությունները և կորուստները մեծ են լինելու, և

ամենասարսափելին այն է, որ դրանց ընթացքը և արագությունը հնարավոր չէ պահել լիակատար հսկողության տակ: Չարժե ինքնախաբեությամբ զբաղվել, երկրի ղեկավարման հին ձևը, կոմունիստական կուսակցության ղեկավար դերը ոչնչացնում է ինքը՝ Գորբաչովը՝ վարպետորեն առաջ մղելով ժողովրդին: Այդ խնդիրը դեռ վերջնականապես լուծված չէ, բայց արդեն հասկանալի է, որ իշխանության կոմունիստական ձևը դատապարտված է: Բնական պատճառներով երկրի տարբեր հատվածներում այդ իշխանության վերացումը կատարվում է տարբեր արագությամբ: Ինքը՝ Գորբաչովը, նպատակ ունենալով հնարավորինս պահպանել կայսրության ամբողջականությունը, շահագրգռված է, որ ծայրամասերում այդ երևույթն առավել դանդաղ ընթանա: Ավելին, շատ վարպետորեն փորձ է արվում Ռուսաստանի կողմից նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը, որը բնականորեն պետք է ուղղված լիներ կայսերապաշտական քաղաքականության դեմ, ուղղել կայսրությունը ղեկավարելու ձևի դեմ, ազգային-ազատագրական պայքարը, որի բնական նպատակն է անկախությունը, փոխարինել հակակոմունիստական պայքարով: Օգտվելով իրենց բնորոշ յուրահատուկ պայմաններից՝ որոշ հանրապետությունների, օրինակ, Լիտվային, հաջողվեց ընտրել պայքարի ճիշտ ուղղություն՝ զանազանելով կայսերական քաղաքականությունը նրա իրագործման ձևից և վարպետորեն հավասարակշռություն պահելով պայքարի այդ երկու ուղղությունների միջև: Ես չեմ խոսում ի պաշտպանություն կոմունիստական կուսակցության, դա մարդկության և մեր ազգի հանդեպ հանցագործ կազմակերպություն է, որը պետք է իջնի քաղաքական թատերաբեմից, ես ուղղակի կոչ եմ անում սառը կշռադատել մեր քաղաքական պայքարի ուղղությունը:

Ստիպված լինելով քանդել հին ղեկավարման ձևը, տալով արդեն տարածքային կորուստներ Արևելյան Եվրոպայում, Մերձբալթիկայում՝ Գորբաչովը ձգտում է վերափոխումներից հետո պահպանված տարածքների վրա ստեղծել մի միասնական դեմոկրատական պետություն, որի տնտեսությունը ղեկավարվում է ազատ շուկայի մեխանիզմով, ստեղծել մի կայուն միասնական երկիր, որն արդեն ենթակա չէ քանդվելու, և որի զարգացման ուղղությունը հնարավորին չափ համապատասխանում է մարդկության զարգացման ուղղությանը:

Կհաջողվի՞ արդյոք Գորբաչովին լուծել այս խնդիրը, և ի՞նչ է սպասում մեզ այդ ճանապարհին:

Ինչպես նշեցինք, ԽՍՀՄ-ի բռնած ճանապարհի անհամապատասխանությունը մարդկության ընդհանուր զարգացման ուղու հետ երկրի ներսում առաջացրեց այնպիսի երևույթներ, որոնք սկսեցին քանդել կայսրությունը: Տնտեսությունը կամաց-կամաց դառնում էր անկառավարելի, կենտրոնում ընդունված որոշումները հնարավոր չէր լինում իրագործել: Պաշտոնական գաղափարախոսությունը, որը կարևոր դեր էր խաղում երկիրը ղեկավարելու գործում, աստիճանաբար կորցնում էր իր ազդեցությունը: Տնտեսության քայքայումը, նավթի գների իջեցումը միջազգային շուկային հնարավորություն չէին տալիս տարբեր նեռարկումների միջոցով իրեն ամուր կապված պահել սոցիալիստական երկրները: Լեհաստանում սկսվեց ազգային-ազատագրական պայքար, անհաջողություններ՝ Աֆղանստանում: ԽՍՀՄ-ը հետզհետե ավելի ու ավելի էր հետ մնում աշխարհի երկրների մեծ մասից տնտեսության, գիտության, նոր տեխնոլոգիաների մշակման գործում: Դա չէր կարող չազդել ԽՍՀՄ-ի ամենակարևոր հատկանիշի՝ ռազմական արդյունաբերության, ռազմական ուժերի վրա: Կար վտանգ, որ այն փաստի գիտակցումը, թե ժամանակը աշխատում է իր դեմ, կարող է դրդել երկրի ղեկավարությանը դիմել արկածախնդրության, սկսել իրականացնել իր ռազմական հնարավորությունները՝ չթողնելով, որ մնացյալ աշխարհն իրենից առաջ անցնի: Բայց երկիրը ղեկավարող «ծերակույտը» չունեցավ այնքան վճռականություն, կամ, ավելի ստույգ, ունեցավ խոհեմություն և չդիմեց այդ քաղաքականությանը, որը կարող էր կործանարար լինել ամբողջ մարդկության համար: Այդ տեսակետից չափազանց մեծ էր ԱՄՆ-ի և նրա այն ժամանակվա պրեզիդենտ Ռ.Ռեյգանի ցուցաբերած վճռականությունը, շանտաժի չենթարկվելը և ռազմական արդյունաբերության մեջ նորագույն տեխնոլոգիայի օգտագործման ծրագրի իրականացումը:

Այս ամենը հանգեցրեց այն բանին, որ ԽՍՀՄ-ի ղեկավարությունը դիմեց «ոտքերը վերմակի չափով մեկնելու» քաղաքականությանը և փորձեց վերափոխումների միջոցով հասնել մնացյալ աշխարհին: Սկզբում այդ քաղաքականության մեջ կար բլեֆի ինչ-որ տարր, փոքր վերափոխումներով խնդիրը լուծելու ցանկություն: Բայց իրադարձությունների ներքին

տրամաբանությունը ցույց տվեց, որ փոփոխությունները պետք է լինեն շատ խորը, իսկ նախորդ ժամանակաշրջանում կայսրության նվաճած տարածքների կորուստները՝ բավական մեծ: Սկսվեց իրադարձությունների մի շղթա, որոնց ուղղությունը և արագությունը կենտրոնը չկարողացավ իր հսկողության տակ պահել, զորքի և ՊԱԿ-ի օգտագործումն այդ նպատակով զգալի արդյունքներ չի տալիս: Տնտեսությունը վարչահրամայական եղանակով ղեկավարելու մեթոդներից հրաժարումն արագացրեց տնտեսության քայքայումը, որը կարող է հանգեցնել և՛ տնտեսական, և՛ քաղաքական քաոսի: Մյուս կողմից՝ անընդհատ հետաձգվում են մասնավոր բարեփոխումները, որոնց իրագործման առաջին փուլը բնորոշվելու է հսկայական արժեզրկումով ու գործազրկությամբ, որոնք այս բազմազգ կայսրությունում կհանգեցնեն անկանխատեսելի քաղաքական հետևանքների: Հասկանալի է նաև, որ տնտեսական բարեփոխումների իրականացման դեպքում տնտեսությունը երկրի ղեկավարության համար ամբողջովին կդառնա անկառավարելի՝ բերելով իր հետ նաև քաղաքական գործընթացի ան-կառավարելիություն:

Այս պայմաններում ոչ միայն մենք, այլ նաև երկրի ղեկավարությունը, որը մեզանից անհամեմատ շատ ավելի մեծ հնարավորություններ ունի ազդելու տեղի ունեցող գործընթացների վրա, չի կարող հաշվարկել կամ կռահել, թե ինչ ճանապարհով կընթանա երկիրը, ինչ է նրան սպասում այս կամ այն որոշումը ընդունելիս: Կարելի է միայն նշել դեպքերի զարգացման մի քանի հնարավոր տարբերակներ: Բայց մինչ այդ տարբերակների քննարկմանն անցնելը խոսենք ցանկությունների մասին: Մ.Գորբաչովի վարած քաղաքականությունից կարելի է կռահել, որ նրա ցանկությունն է ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում կառուցել մի միասնական պետություն, որը հարմարեցված լինելով մարդկության զարգացման ուղղությանը՝ իր կառուցվածքով նման լինի ԱՄՆ-ին: Երկիրը բաժանված լինի մասերի (հանրապետություններ, ինքնավար միավորումներ, Ռուսաստանի երկրամասեր), որոնցից յուրաքանչյուրը ունենա մոտավորապես այնպիսի ազատություն և իրավունքներ, որպիսիք ունի ԱՄՆ-ի յուրաքանչյուր նահանգ:

Դատելով ըստ Արևմուտքի քաղաքական գործիչների հայտարարությունների և նրանց կողմից վարվող քաղաքականության՝ Արևմուտքը շահագրգռված է, որ Գորբաչովի այս ծրագիրը իրականանա: Այդ շահագրգռվածության արմատները պարզ են, ագրեսիվ, մեծ ռազմական ուժ ունեցող, բայց փակ և չզարգացող տնտեսության տեր կայսրության կամ նրա քայքայումից հետո առաջացած փոքր, տնտեսապես թույլ, ազգամոլությամբ տառապող և իրար դեմ պատերազմող պետությունների փոխարեն Արևմուտքը կցանկանար ունենալ մի հարևան, որի դեմոկրատական կառուցվածքը և բաց տնտեսական համակարգը երաշխա-վորեին Արևմուտքի ռազմական ապահովությունը՝ միաժամանակ բացելով նրա առջև հսկայական շուկա: Այնպես որ Արևմուտքը իր պրագմատիկ նպատակներից ելնելով՝ տվյալ ժամանակաշրջանում, ի տարբերություն նախորդ փուլի, չի խրախուսում ԽՍՀՄ-ի կազմում գտնվող որոշ հանրապետությունների անջատողական քաղաքականությունը: Չնայած դրան, ժամանակ առ ժամանակ հաշվի առնելով համաշխարհային հասարակական կարծիքը, Արևմուտքն ստիպված անում է որոշակի հայտարարություններ, նույնիսկ որոշ քայլեր՝ հիմնված այնպիսի համամարդկային արժեքների վրա, ինչպիսիք են ազատությունը, ազգերի ինքնորոշման իրավունքը և այլն: Արևմուտքի քաղաքականության մեջ շատ մեծ դեր է խաղում նաև այն մտավախությունը, որ հանրապետությունների կենտրոնախույս շարժումը կարող է հանգեցնել քաոսի՝ անկանխատեսելի վտանգավոր հետևանքներով ոչ միայն կայսրության, այլև իր իսկ Արևմուտքի համար: Մտավախություն կա նաև, որ այդ շարժումը կարող է ստիպել ԽՍՀՄ-ին վերադառնալ իր նախորդ վիճակին:

Այսպիսով, Մ.Գորբաչովի և Արևմուտքի ցանկությունները այս հարցերում համընկնում են: Բայց միևնույն է, այդ ցանկությունները լրիվ իրագործվել չեն կարող: Կայսրությունը ստիպված է կրել տարածքային կորուստներ: Օրինակ կարող է ծառայել մերձբալթյան հանրապետու-թյունների անխուսափելի անջատումը կայսրությունից: Այդ մտքի հետ արդեն ստիպված հաշտվել է համարյա ամբողջ Ռուսաստանը: Գոյություն ունի երկու կարևոր հանգամանք, որոնք թույլ չեն տա ԽՍՀՄ-ի ամբողջ տարածքում ստեղծել ԱՄՆ-ի նման մի պետություն: Առաջին՝ ի տարբերություն ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի կազմում գտնվող շատ ժողովուրդներ ներառվել են կայսրության կազմի մեջ իրենց պատմական հայրենիքով, և շատ մեծ է վերստին սեփական պատմության ուղին կերտելու նրանց ցանկությունը: Երկրորդ՝ այն տնտեսական վերափոխումները, որոնք անխուսափելիորեն պետք է իրագործվեն ԽՍՀՄ-ում, և որոնք գոնե

սկզբնական շրջանում կուղեկցվեն ժողովրդի կենսամակարդակի կտրուկ իջեցումով, կնպաստեն կենտրոնախույս ուժերի հզորացմանը: Յուրաքանչյուր հանրապետություն, բնականորեն ելնելով իր շահերից, կաշխատի իր տնտեսության զարգացումը իրականացնել ուրիշների հաշվին, հարուստը չի ցանկանա կիսվել աղքատի հետ: Օրինաչափ է նաև, որ տնտեսական վերափոխումները տարբեր ձևերով և տարբեր արագություններով ավելի հեշտ է իրագործել կայսրության առանձին մասերում, քան մեծածավալ կայսրության ամբողջ տարածքում միաժամանակ և միևնույն եղանակով: Այս հանգամանքը ևս կնպաստի կենտրոնախույս ուժերի հզորացմանը:

Այժմ տեսնենք՝ մենք ինչ ենք ուզում:

Հասկանալի է, որ Ռուսաստանը չի վերանա աշխարհի երեսից, և վաղ թե ուշ կայսրությունից մնացած ամենամեծ բեկորի վրա կկառուցվի միասնական Ռուսաստան: Մի կողմ թողնենք, թե քանի փուլում կիրականացվեն այդ խնդիրները, ինչ զոհեր կպահանջվեն, ինչ արհավիրքներ կհանդիպեն ճանապարհին: Ենթադրենք (համարյա ֆանտաստիկ մի բան) մեզ հաջողվում է անցնել բոլոր արհավիրքների միջով և ստեղծվելիք միասնական դեմոկրատական Ռուսաստանի մասը կազմել: Արդյոք դա մեզ ձե՞ռք է տալիս, թե՞ ոչ: Ըստ իս, ոչ: Եթե այդ գրեթե անհավանական տարբերակը իրագործվի, և մենք մասը կազմենք միասնական դեմոկրատական Ռուսաստանի, ապա դրանով կվերջանա հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը, ինչպես որ, օրինակ, վերջացած է Շոտլանդիայի և Ուելսի ազգային պատմությունը. երկրներ, որոնցում կան, իհարկե, անկախության ձգտող կուսակցություններ, բայց այդ ժողովուրդների համատարած անգլիացումը, Մեծ Բրիտանիայում տիրող իրավահավասարությունը, բարձր կենսամակարդակը հանգեցրել են այն բանին, որ շոտլանդացիների ու վալիացիների ճնշող մեծամասնությունը սոսկ էկզոտիկ մի բան է դարձել: Այդպիսով այդ ժողովուրդները դուրս են մղվել մարդկության պատմության թատերաբեմից, և ինչպես այժմ չկան շումերներ, արամեացիներ, դակեր, գարգարացիներ, ինչ-որ ժամանակից հետո չեն լինի նաև շոտլանդացիներ, վալիացիներ: Մի՞թե մենք ուզում ենք նույն բախտին արժանանալ:

Մենք՝ հայերս, տեսել ենք՝ ինչպես են կառուցվում եգիպտական բուրգերը, պատերազմել ենք Ասորեստանի և Հին Հռոմի դեմ, Տիգրան Մեծի ժամանակ տարածվել ենք մինչև Կարմիր ծով, ականատես և մասնակից ենք եղել համաշխարհային կրոնների՝ քրիստոնեության ու մահմեդականության առաջացմանն ու տարածմանը, մեր աչքերի առջև ստեղծվել և քանդվել են հզորագույն կայսրություններ, շատ բան ենք տվել աշխարհին ու շատ բան վերցրել՝ անցնելով փորձություններով լի ճանապարհ, բայց իմ խորին համոզմամբ, ամեն ինչ դեռ առջևում է, մենք դեռ չենք կատարել այն առաքելությունը, որի համար ստեղծել է մեզ Աստված, և սրբապղծություն կլինի Աստծո, մարդկության և մեր նախնիների հանդեպ, եթե մենք հրաժարվենք կրել մեր խաչը, չիրագործենք անկախ պետականությունը վերականգնելու մեր հնարավորությունը առաջին իսկ հարմար պահին: Հետևաբար դեպքերի զարգացման այն ֆանտաստիկ տարբերակը, որի իրականացման դեպքում մենք, հրաշքով անցնելով քանդվող կայսրությանը սպասող բոլոր արհավիրքների միջով, մասը կկազմենք միասնական Ռուսաստանի, մեզ ձեռք չի տալիս: Մենք պետք է ձգտենք վերականգնել մեր անկախ պետականությունը:

Ցանկություններից և ֆանտաստիկ վարկածներից նորից գանք մեր օրերին: ԽՍՀՄ-ը, լուրջ հանգամանքներից դրդված, մինչ այդ եղած մի կայուն վիճակից անցնում է մի այլ կայուն վիճակի: Մենք այժմ գտնվում ենք այդ անցման ժամանակաշրջանում, անջատվելու հնարավորությունը երբեք բնութագրական չէ պետության կայուն վիճակին: Հետևաբար անկախ պետականության վերականգնման մեր ցանկությունը պետք է իրագործենք հենց այս անցման ժամանակաշրջանում, որի տևողությունը մեզ դեռ հայտնի չէ:

Դիտարկենք դեպքերի զարգացման հնարավոր տարբերակները:

1. Անգլիական տարբերակ

Սա մեզ համար ամենացանկալի, բայց և ամենաանհավանական տարբերակն է, որն իրականանալու դեպքում ԽՍՀՄ-ում կկատարվի նույնը, ինչ կատարվեց Մեծ Բրիտանիայի կայսրությունում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այսինքն՝ բոլոր նվաճված ժողովուրդները գրեթե առանց պայքարի հետզհետե կստեղծեն իրենց անկախ

պետությունները: Դեպքերի այսպիսի զարգացումն ամենաբարենպաստն է մեզ համար, որովհետև հնարավորություն է տալիս չշտապել, քայլ առ քայլ բարելավել տնտեսությունը, հանրապետությունում ստեղծել առողջ բարոյական մթնոլորտ, ազատվել յոթանասուն տարիների ընթացքում մեզ պարտադրված բարքերից, վերադառնալ ազգային արմատներին, զարգացնել ժողովրդավարության սաղմերը, այս կամ այն ձևով վերջնականապես լուծել Ղարաբաղի հարցը և հետո, առանց մեծ պայքարի, հարմար պահին դուրս գալ ԽՍՀՄ-ի կազմից: Դեպքերի այսպիսի բարենպաստ զարգացումը ես գրեթե անհավանական եմ համարում հետևյալ պատճառներով: Դրանցից մեկը արդեն նշեցի՝ ԽՍՀՄ-ի տնտեսական անկայուն վիճակն է, որից հանդարտ դուրս գալու ճանապարհը չի երևում: Երկրորդ. Անգլիան իր կայսրությունը ստեղծելիս հիմնականում առաջնորդվում էր անգլոսաքսերին բնորոշ պրագմատիկ նպատակներով՝ հետապնդելով նյութական շահ, և երբ փոխվեց համաշխարհային տնտեսական համակարգը, երբ տեղի ունեցավ գիտատեխնիկական հեղափոխությունը, որը զարգացման նոր հեռանկարներ բացեց, և արդեն գաղութներ ունենալով չէր պայմանավորված երկրի տնտեսության զարգացումը, Անգլիան առանց մեծ պայքարի ազատություն տվեց իր նվաճած ժողովուրդներին: Ռուսաստանի դեպքում քիչ այլ է պարագան: Այս երկրի զավթողական քաղաքականությունն ուներ մի կարևոր յուրահատկություն. Ռուսաստանն, իհարկե, տնտեսապես օգտվում էր իր նվաճած երկրների բնական հարստություններից, բայց դա չէր նրան առաջ մղող հիմնական պատճառը: Ռուս ժողովրդի մեջ շատ խորն է մտած այն գաղափարը, որ նվաճողական քաղաքականություն վարելով և տարածվելով՝ կատարում է Աստծուց թելադրված առաքելություն, երջանկացնում է այն ժողովուրդներին, որոնց նվաճում է իր տարածվելու ճանապարհին ու ռուսացնում: Ռուսաստանի համար հեշտ չի լինի հրաժարվել այդ գրեթե միստիկ բնույթ կրող ազգային փիլիսոփայությունից: Կա նաև մի այլ հանգամանք. նույնիսկ Անգլիան հեշտությամբ չհրաժարվեց իր նվաճած այն տարածքներից, որոնք կազմում էին իր ազգային տարածքի անմիջական շարունակությունը: Շատ մեծ դժվարությամբ նա ազատություն տվեց Հարավային Իռլանդիային, իսկ Հյուսիսայինը դեռ պայքարի մեջ է, բացի դրանից, չազատագրվեցին Շոտլանդիան և Ուելսը: Իսկ Ռուսաստանի նվաճած բոլոր տարածքները իր տարածքի անմիջական շարունակությունն են կազմում, և պարզ է, որ այդ տարածքներին նա հեշտությամբ ազատություն չի տա:

Անգլիական տարբերակը քննարկելիս հարկ եմ համարում նշել նաև, որ նույնիսկ Անգլիայից հեշտությամբ ազատագրված գաղութները, որպես կանոն, նախապես հռչակում էին անկախ պետություն ստեղծելու իրենց նպատակը, ապա բանակցություններ վարում Անգլիայի կառավարության հետ, ընդ որում, նշվում էր անցման շրջանի ժամկետը, որի ընթացքում միայն հնարավոր էր լինում քայլ առ քայլ գնալ դեպի ինքնուրույնություն: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ եթե դեպքերը զարգանան այս գրեթե անհավանական տարբերակով, անհրաժեշտ կլինի վճռականություն ցուցաբերել և պաշտոնապես հայտարարել անկախ պետականություն վերականգնելու մեր նպատակի մասին, որից հետո՝ կենտրոնի հետ վարվելիք բանակցությունների դրական արդյունքի դեպքում, հնարավոր կլինի զարգացնել անկախ տնտեսություն:

2. Կանգառների տարբերակ

Դիտարկենք դեպքերի զարգացման առավել հավանական այս տարբերակը: Ամենայն հավանականությամբ Ռուսաստանի՝ միասնական դեմոկրատական պետության ստեղծման ճանապարհը մի քանի հանգրվան կունենա: Եթե ԽՍՀՄ-ին հաջողվի ինչ-որ չափով դուրս գալ ներկայիս ծանր ճգնաժամից, մի քիչ իր զարգացումը հարմարեցնի համաշխարհային զարգացման ուղղությանը, բարձրացնի ժողովրդի կենսամակարդակը, հնարավորություն ունենա մոտենալու ժամանակակից տեխնոլոգիաներին, ապա կառաջանան ուժեր (ամենայն հավանականությամբ հենց ինքը՝ Գորբաչովը), որոնք շահագրգռված կլինեն չշարունակել ընթացքը վերափոխումների ուղղությամբ և բավարարվել ձեռք բերածով: Նորից դռները կփակվեն այն ժողովուրդների առջև, որոնք մինչ այդ անջատված չեն լինի կայսրությունից, և կստեղծվի կիսադեմոկրատական մի պետություն, որն այդ վիճակում կմնա մինչև իր հաջորդ հարմարեցումը համաշխարհային զարգացման հոսանքին: Եվ այսպես փուլ առ փուլ, յուրաքանչյուր փուլն՝ իր անկանխատեսելի արհավիրքներով, իսկ փուլերի միջև ընկած ժամանակամիջոցներում՝ մեզ սպասող ազգային ուծացում: Պայթյուն պայթյունի ետևից, որոնցից

յուրաքանչյուրը կարող է մեր ազգի գոյատևման վերջակետը դնել: Այս պայմաններում անկախ պետականության վերականգնումը ոչ միայն հետապնդում է ազգային վեհ նպատակներ, ոչ միայն ազատագրում ստրկությունից, բարեկեցիկ կյանքի հնարավորություն ընձեռում, այլև դառնում է մեր ժողովրդի գոյատևման միակ պայմանը:

3. Քանդվելու տարբերակ

Ինչպես արդեն նշեցինք ԽՍՀՄ-ի այժմյան վիճակը նկարագրելիս, երկրի տնտեսությունը անելանելի վիճակում է, ընդլայնվել են կենտրոնախույս ուժերը, տեղի են ունենում անկառավարելի գործընթացներ, որոնք կարող են հանգեցնել կայսրության փլուզման:

Եթե փորձ արվի կոպիտ միջամտությամբ կանգնեցնել երկրում տեղի ունեցող գործընթացը, ապա կարճատև դադարից հետո դա անխուսափելիորեն կհանգեցնի քաոսի, պայթյունի, և կայսրությունը կսկսի քանդվել ավելի մեծ արագությամբ: Այդ դեպքում մեզ սպառնում է կայսրության փլատակների տակ մնալու վտանգը: Ցանկալի է ոչ թե պայթյունի շնորհիվ ձեռք բերել մեր անկախությունը, այլ այդ քայքայումը դիմավորել որպես արդեն անկախ պետություն՝ ճանաչված աշխարհի այլ պետությունների կողմից: Բացի մնացած ակնհայտ առավելություններից, նշենք նաև հետևյալը. չնայած մեր հարևան Թուրքիան ջանքեր է թափում՝ գնալու աշխարհի ընդհանուր զարգացման ուղղությամբ, արտաքին նվաճողական քաղաքականությունից անցնելով ներքին զարգացման քաղաքականության, դառնալով զարգացած (և պետք է խոստովանել, որ բավականին առաջադիմել է այդ ճանապարհին), բայց ԽՍՀՄ-ի անղեկավարելի քայքայման դեպքում շատ հավանական է, որ Թուրքիայում գլուխ բարձրացնեն առայժմ քաղաքական մեծ կշիռ չունեցող ուժերը, և այդ երկիրը մի պահ շեղվի իր ընտրած վերոհիշյալ ճանապարհից, կլանի ԽՍՀՄ-ի առավել հեշտությամբ մարսվող բեկորները ու հետո նորից գնա իր ճանապարհով:

Դեպքերի նշված զարգացման պարագայում նման վտանգ կարող են ներկայացնել ԽՍՀՄ-ի մյուս հարևանները՝ ջանալով կլանել քայքայվող կայսրության ուրիշ հատվածներ: Հասկանալի է, որ եթե մինչ այդ մենք անկախացած լինենք, կունենանք մեծ առավելություններ ինչպես Հայաստանի պաշտպանության, այնպես էլ մեր որոշ ազգային հարցերի լուծման գործում:

Այսպիսի զարգացումը հնարավոր կլինի այն դեպքում, եթե, չնայած ԽՍՀՄ-ի ղեկավարության ջանքերին և Արևմուտքի ցանկությանը, հնարավոր չլինի ազդել անղեկավարելի գործընթացների վրա և կանխել երկրի՝ պայթյունով ու քաոսով քանդվելու հեռանկարը: Այդ գործում շատ մեծ նշանակություն ունի ԽՍՀՄ-ում գործող ուժերի զսպվածությունը, հանուն ընդհանուր շահի՝ հրաժարումը եսամոլական ձգտումներից: Ասածս լուսաբանելու համար բերեմ Մերձբալթյան հանրապետությունների օրինակը. օգտվելով հարմար առիթից, իմ կարծիքով, ճիշտ հաշվարկ անելով, նրանք կատարեցին վճռական քայլ՝ միմյանցից տարբեր ձևերով հռչակելով անկախություն: Եվ չնայած նրանք անկախություն դեռևս չեն ստացել և այդ գործընթացը կարող է տևել տարիներ, գլխավորն արված է, նրանք ապահովել են իրենց մի կողմ քաշվելը ԽՍՀՄ-ի փլուզման դեպքում, իրագործել են իրենց ժողովուրդների փափագը, ստացել ինքնուրույն զարգացման հնարավորություն: Թեև այդ գործողություններով նրանք դժվարին կացության մեջ դրեցին ԽՍՀՄ-ի մյուս ժողովուրդներին, ավելացրին լարվածության աստիճանը երկրում, պոկեցին մի կարևոր օղակ ազատագրվող ժողովուրդների շղթայից, ժողովուրդներ, որոնք ջանում էին ուս ուսի տված, քայլ առ քայլ ազատագրվել կայսրությունից: Կարելի՞ է արդյոք մեղադրել մերձբալթյան հանրապետություններին եսամոլության մեջ: Կարելի է մեղադրել, կարելի է և չմեղադրել, դա չէ էականը, այլ այն, որ քաղաքական պարզագույն օրենքը ասում է՝ եթե ունես ազգային որևէ ծրագիր իրականացնելու հնարավորություն, ապա պարտավոր ես այն անմիջապես օգտագործել, չզոհաբերել ազգային շահը հանուն ուրիշների: Հետո կարող է ուշ լինել: Ով չի օգտվում իրեն ընձեռված այսպիսի հնարավորությունից, պատմությունը նրան չի ներում: Այդպիսին են քաղաքականության դաժան օրենքները, և կամա թե ակամա մենք էլ պետք է ենթարկվենք այդ օրենքներին:

Այս տարբերակի քննությունը ցույց է տալիս, որ մեր ազգային ծրագրի իրականանալու հնարավորությունը շատ հավանական է:

Նախորդ մասում նշեցինք մի կարևոր իրողություն. ԽՍՀՄ-ը, լուրջ հանգամանքներից դրդված, մինչ այդ եղած մի կայուն վիճակից անցնում է մի այլ կայուն վիճակի: Մենք այժմ գտնվում ենք այդ անցման շրջանում: Կարևոր է նկատել, որ անջատվել հնարավոր է միայն անցման շրջանում, անջատվելու հնարավորությունը երբեք բնորոշ չէ պետության կայուն վիճակին: Այդ տեսանկյունից ելնելով՝ մենք քննեցինք դեպքերի զարգացման տեսականորեն հնարավոր երեք տարբերակ: Բացի առաջին տարբերակից, որի իրականանալու

հնարավորությունը չնչին է, մյուս տարբերակների քննությունը ցույց է տալիս, որ պետք է անջատվել հնարավորին չափ շուտ. դանդաղելը կարող է վտանգավոր լինել ազգի գոյության համար:

Շտապելն անհրաժեշտ է նաև այլ պատճառով: Բանն այն է, որ այն մտայնությունը, թե մնալով ԽՍՀՄ-ի կազմի մեջ՝ հնարավոր է զարգացնել մեր տնտեսությունը և հետո նոր դուրս գալ, անհիմն է: Դա այն խայծերից մեկն է, որով աշխատում են մեզ պահել կայսրության մեջ, մինչև իրենք կկարգավորեն իրենց հարցերը, այսինքն՝ անցման շրջանի խայծ: Իրականությունն այն է, որ մեզ տալիս են ինչ-որ քանակությամբ մթերք ու հումք, որոնց դիմաց պահանջելու են ավելի ու ավելի մեծ վճար, մյուս կողմից՝ բազմաթիվ օրենքների միջոցով մեզ արգելում են ինքնուրույն զարգացնել մեր տնտեսությունը: Իհարկե, մեծ պայքար ծավալելով՝ կկարողանանք շրջանցել առաջացած խոչընդոտների մի մասը, բայց միշտ կառաջանան նորերը, և մեր գերագույն խորհրդի հիմնական աշխատանքը դարձյալ կլինի բողոքի նոտաներ կազմելը, կենտրոնի հետ անընդհատ առճակատման մեջ մտնելը և միշտ չնչին արդյունքներով: Ոչ մի բան այնքան չնպաստեց մերձբալթյան հանրապետություններին շտապ անկախության ճանապարհն ընտրել, որքան վերջին շրջանի իրենց փորձից եկած այն համոզմունքը, որ հնարավոր չէ զարգացնել տնտեսությունը՝ շարունակելով մնալ ԽՍՀՄ-ի կազմի մեջ: ԽՍՀՄ-ի տնտեսությունը դեռ երկար ժամանակ շարունակելու է գահավիժել՝ իր հետ քաշելով նաև մեզ, չտալով զարգացման ոչ մի հեռանկար: Մենակ մնալով՝ մենք սկզբում, հնարավոր է, ավելի մեծ արագությամբ ընկնենք տնտեսական անդունդը, բայց և կապված չլինելով հսկայական երկրի քայքայված տնտեսությանը՝ անհամեմատ ավելի արագ դուրս կգանք անդունդից: Այս հարցում մեծ նշանակություն կունենան մեր ինքնուրույն լինելը, հայ ազգին բնորոշ ձեռներեցությունը և սփյուռքի գոյությունը:

Այսպիսով պետք է շտապել անկախանալ: Բայց առաջանում է նպատակը իրականացնելու հնարավորության հարցը: Ճիշտ է, ԽՍՀՄ-ի կազմի մեջ մնալը մեզ ոչ մի հեռանկար չի խոստանում, ճիշտ է, դանդաղելը կարող է վտանգավոր լինել մեզ համար, բայց ճիշտ է նաև, որ նույնչափ վտանգավոր կարող են լինել չմտածված հապճեպ քայլերը: Մենք դառը փորձ ունենք, գիտենք, թե ինչքան վտանգավոր է կտրուկ շարժումներ անելը քայքայվող կայսրության մեջ: Այդ տեսակետից այժմ քննենք տիրող իրավիճակը ԽՍՀՄ-ում:

Վերը նշեցինք, որ ռուս ժողովրդի համար շատ դժվար կլինի համակերպվել այն մտքի հետ, որ կարող է կորցնել նվաճած տարածքների մի մասը (դա ինչ-որ չափով բնորոշ է բոլոր նվաճողներին): Այս հարցում մեծ նշանակություն ունի ինչպես ռուս ժողովրդին հատուկ հոգեբանությունը, որը նրա մեջ արմատացել է դարերի ընթացքում, այնպես էլ նրա ցանկությունը՝ շարունակել ռազմական., քաղաքական նպատակներով օգտվել նվաճված տարածքներից: Բայց այժմ մի զարմանալի հոգեբանական վիճակ է ստեղծվել ռուս ժողովրդի մեջ, որը նպաստավոր է մեր նպատակներին հասնելու համար: Բանն այն է, որ Ռուսաստանի խճճվածությունը սեփական գործերի մեջ մի պահ մոռացնել է տվել նրա կայսերական բնազդն ու ձգտումները: Երկրի անմխիթար տնտեսական վիճակի համար մեղավորներ փնտրելը և այդ վիճակից դուրս գալու ձգտումը ռուսներին բերել են այն համոզման, որ իրենք մինչ այժմ ծառայում էին նվաճված ժողովուրդներին «երջանկացնելուն» ու սկսում են հետապնդել իրենց տնտեսական շահերը՝ մի քիչ նեղացած «անշնորհակալ» ժողովուրդներից և ասելով՝ գնացեք, ինքներդ պահեք ձեր գլուխը: Բացի դրանից, վերջին երկու տարվա իրադարձությունները, հրապարակումները ռուսների մի մասի մեջ առաջացրել են նվաճված ժողովուրդների հանդեպ մեղքի զգացում, և նրանք ձգտում են ապացուցել, որ հրաժարվում են իրենց նախորդ քաղաքականությունից, համաձայն են ազատություն տալ այդ ժողովուրդներին (նույն մեղքի զգացումն էր առաջացել գերմանացիների մեջ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որն այժմ մեծ արագությամբ չքանում է իրենց հզորանալուն զուգընթաց): Այս ամենը անցողիկ է և կարճատև. Ճիշտ է նկատել Մ.Գորբաչովը իր ելույթներից մեկում, որ կայսերապաշտությունը նստած է իրենց գեների մեջ: Ավելին, ես կասկածում եմ, որ այս ամենի մեջ օբյեկտիվ պատճառների հետ միասին խառն է նաև Մ.Գորբաչովի մատը:

Բանն այն է, որ ինչպես մենք նկատեցինք վերը, Մ.Գորբաչովը փորձում է միաժամանակ լուծել երկու իրարամերժ խնդիրներ: Մի կողմից ապահովել երկրի դեմոկրատական, տնտեսական զարգացումը՝ աշխատելով գնալ համաշխարհային առաջընթացի ուղղությամբ, մյուս կողմից՝ ձգտում է անհավասարաչափ զարգացման, դավադրությունների, զորքի, տնտեսական և ազգային խայծերի միջոցով անցման շրջանում պահպանել կայսրության տարածքային ամբողջությունը: Համոզվելով, որ երկու խնդիրը միաժամանակ լուծել հնարավոր չէ, նա, իմ կարծիքով, ընտրելով համաշխարհային առաջընթացի ուղին, ստիպված եկել է այն եզրակացության, որ պետք է համակերպվել տարածքային որոշ կորուստների մտքին: Իհարկե, ինչքան քիչ, այնքան լավ: Բայց դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե ինքը՝ ռուս ժողովուրդը, համաձայնի դրան: Գորբաչովը մի կողմից սկսում է ռուս ժողովրդի մեջ

զգուշությամբ ներարկել այդ գաղափարը, մյուս կողմից՝ անսպասելիորեն խոսում է «պապերի արյունով նվաճված» տարածքները չկորցնելու մասին: Դա նրա սիրած քաղաքականությունն է: Սկզբում հրում է հարցը առաջ, ստեղծում հասարակական կարծիք, հետո սկսում է զսպել, որպեսզի գործընթացը վտանգավոր արագություն և մեծ չափեր չստանա, միաժամանակ խոսելով հակառակ ընթացքի մասին՝ իր համար ալիբի է ապահովում: Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել: Հիշենք միայն մեկը. նա նույն ձևով վարվեց բազմակուսակցական համակարգի անցնելու գործում: Երբ 1988թ. անսպասելիորեն սկսեց խոսել այն մասին, որ բացի կոմունիստականից, ուրիշ կուսակցություններ պետք չեն, շատերին հասկանալի դարձավ, որ կոմունիստական կուսակցության մենիշխանությունը դատապարտված է: Գորբաչովն ինքն իրեն միշտ վերագրում է զսպող ուժի դեր, որը հարմարվում է քաղաքական հանգամանքներին: Նույնիսկ կարևոր չէ՝ ինքը գիտակցում է իր այդ քաղաքականությունը, թե դա կատարվում է բնազդով: Կողքից նայելիս կարելի է միայն հիանալ, թե ինչքան վարպետորեն է դա արվում: Այնպես որ, իմ կարծիքով, ռուս ժողովրդի կայսերապաշտական տրամադրությունների փոփոխման մեջ իրական պատճառների հետ դեր է խաղում նաև գորբաչովյան վերը հիշատակված քաղաքական խաղը: Այժմ Ռուսաստանում տիրող տրամադրություններից վարպետորեն օգտվեց Բ.Ելցինը՝ ստանալով մեծ քաղաքական կշիռ և դրանով իսկ ավելացնելով ԽՍՀՄ-ի անկայունության աստիճանը:

Վերն ասվածը չի նշանակում, թե Մ.Գորբաչովը առանց դիմադրելու կհամաձայնի Հայաստանի անկախ պետականությունը վերականգնելու գաղափարին, կամ որ ռուս ժողովուրդը հեշտությամբ կհաշտվի դրա հետ: Իմ կարծիքով, պարզապես սկսվել է մի շրջան, որը նպաստավոր է մեր անկախության հարցը բարձրացնելու համար, և այդ ժամանակաշրջանը կարող է երկար չտևել: Բայց վճռական նշանակություն ունի, թե մենք ինչպես կբարձրացնենք այդ հարցը:

ԽՍՀՄ-ի ղեկավարության համար անընդունելի կլինի և մեզ համար՝ շատ վտանգավոր, եթե մենք անկախություն հռչակենք Լիտվայի օրինակով: Դեր են խաղում մի քանի հանգամանքներ.

1. ԽՍՀՄ-ի ստրատեգիական նպատակները տարբեր են նրա Եվրոպական մասում, Կովկասում և Միջին Ասիայում: Քանի որ, երկրի զարգացման ուղղությունը համապատասխանեցնելով մարդկության ընդհանուր զարգացմանը, ԽՍՀՄ-ը ձգտելու է Եվրոպական շուկայի մասը կազմել, ուստի Եվրոպայում կորցրած նրա տարածքները այս կամ այն կերպ (իհարկե, նախկինից անհամեմատ թույլ չափով) կշարունակեն կապված լինել նրա հետ: Կովկասում ազատագրված ժողովուրդների մի մասը կարող է մտնել ուրիշ երկրների տնտեսական խմբի մեջ (այս դեպքում ԽՍՀՄ-ի համար շատ կարևոր նշանակություն կստանա Թուրքիայի ընդհանուր շուկա մտնելու հարցը): Միջին Ասիայի հանրապետությունները կորցնելը շատ ավելի վտանգավոր է, քանի որ նրանք անկասկած կմտնեն ուրիշ երկրների տնտեսական, քաղաքական փնջի մեջ և ընդմիշտ կորսված կլինեն Ռուսաստանի համար:

2. Կովկասը Ռուսաստանի ավելի հին նվաճումներից է, քան մերձբալթյան նվաճումը: Ոչ միայն Ռուսաստանը, այլ նաև Արևմուտքը հակված է ընդունելու, որ այդ տարածքներն արդեն Ռուսաստանի անբաժանելի մասն են: Բացի դրանից, Մերձբալթյան հանրապետությունների միացումը ԽՍՀՄ-ին մինչև օրս չի ճանաչվում մի շարք երկրների կողմից: Պետք է հաշվի առնել նաև, որ զորքի միջամտությունը Մերձբալթյան երկրներում, չհամապատասխանեցնելով նրանցում եղած խաղաղ քաղաքական պայքարի ձևերին և Արևմուտքի հիշողության մեջ արթնացնելով ԽՍՀՄ-ի ռազմական միջամտությունները Եվրոպայում (Հունգարիա, Չեխոսլովակիա և այլն), մեծ դիմադրության կհանդիպի Արևմուտքի կողմից: Դա չի կարող հաշվի չառնել Մ.Գորբաչովը, այս դեպքում առկա է նախորդ տարիներին ձեռք բերված և ԽՍՀՄ-ի համար շատ կարևոր միավորներ կորցնելու վտանգը: Զորքի միջամտությունը Անդրկովկասում դարձել է արդեն սովորական մի երևույթ և «ըմբռնումով» է ընդունվում Արևմուտքի կողմից: Այն մի փոքր անհանգստացնում է միայն անմիջական հարևաններին՝ Իրանին և Թուրքիային: Անդրկովկասում ցանկացած պահի կարելի է առաջացնել զինված ընդհարումներ, և զորքի օգտագործումը կլինի «պատճառաբանված» ու կանցնի Արևմուտքի լռության պարագայում:

Այժմ մեզ համար մեր անկախ պետականությունը վերականգնելու միայն մի ճանապարհ կա՝ սահմանադրականը, որը հնարավորություն է տալիս այդ գործն անել առանց կենտրոնի հետ առավել բացահայտ միջոցների դիմելու: Ճիշտ է, ամեն ինչ արվեց, որ մեր ժողովրդի մեջ թերահավատություն առաջանա սահմանադրական ուղու նկատմամբ, բայց ուրիշ ելք չկա: ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունել է միութենական հանրապետությունների անջատվելու

վերաբերյալ մի բարդ օրենք, որից օգտվելով միայն՝ երևի կկարողանանք դիմել սահմանադրական եղանակով ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու քայլին: Պետք է դիմել այդ օրենքին՝ չմտնելով օրենքի կիրառման մանրամասների մեջ: Նկատենք միայն, որ օրենքից օգտվելուց առաջ անհրաժեշտ է ժողովրդի հետ բացատրական աշխատանք տանելու նախապատրաստական շրջան, ապա պետք է անցկացնել ոչ պաշտոնական հանրաքվե՝ անջատվելու հարցի վերաբերյալ ժողովրդի կարծիքն իմանալու համար: Դրանից հետո միայն Հայաստանի Գերագույն խորհուրդը իրավունք կունենա դիմելու օրենքին և կատարելու վճռական քայլեր: Բայց պետք է շտապել. մեզ տրված հնարավորությունը կարող է այլևս չկրկնվել: Պատմությունը ուշացողներին չի ներում: Առաջին քայլերը անելուց հետո հնարավորություն կունենանք բանակցելու ԽՍՀՄ իշխանությունների հետ մեր նոր՝ առայժմ կիսաանկախ կարգավիճակի վերաբերյալ, որում, ըստ օրենքի, կարող ենք մնալ 5 տարի՝ իրադրության փոփոխման դեպքում այժմյանից անհամեմատ ավելի մեծ հնարավորություններ ունենալով այս կամ այն վճռական քայլին դիմելու: Առայժմ չխոսենք, թե ինչ հակահարված կարող է տալ մեզ ԽՍՀՄ-ը մեր սահմանադրական իրավունքին դիմելու դեպքում: Տեսնենք, թե ինչ ենք ուզում ստանալ ԽՍՀՄ իշխանությունների հետ բանակցելու միջոցով, ինչ կարող է տալ մեզ այն կիսաանկախ կարգավիճակը, երբ դեռ ԽՍՀՄ կազմի մեջ ենք, բայց ինչ-որ չափով արդեն ինքնուրույն ենք: Նկատենք նաև, որ անկախությանը դիմելու մեր քայլը կնպաստի հարևանների հետ հարաբերությունների կտրուկ լավացմանը, մեզ վրա կբևեռվի ամբողջ աշխարհի ուշադրությունը, որով հրապուրվելը, իհարկե, վտանգավոր է, բայց որից չօգտվելը՝ անմտություն: Իսկ կիսաանկախ վիճակին հասնելը, եթե դա մեզ հաջողվի, և եթե Ռուսաստանը ստիպված լինի ընդունել այդ փաստը, միանգամից Ռուսաստանի աչքին արհամարհված ստրուկից կվերածվենք ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող ընկերակցի: Մենք ի՞նչ ծրագրեր պետք է փորձենք իրականացնել անցման այդ կիսանկախ ժամանակաշրջանում. տնտեսության ոլորտում կտրուկ շրջադարձ դեպի մասնավոր սեփականություն, ազատ շուկա, հողի և արտադրամիջոցների մասնավոր, անձնական և բաժնետիրական սեփականություն, բաց դռներ արտասահմանյան կապիտալի համար, մասնավոր սեփականության երաշխավորված անձեռնմխելիություն: Պետք է ոչ միայն խրախուսել արտասահմանյան երկրների հետ համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, այլև հնարավորություն տալ տարբեր երկրների իրենց ձեռնարկությունները հիմնադրել մեր հանրապետության տարածքում: Այժմ ամբողջ աշխարհում այդ է զարգացման ուղին: Մենք էլ ինչ-որ ժամանակից հետո ձեռնարկություններ կունենանք ուրիշ երկրներում:

Կարևոր է մասնավոր սեփականության անցնելը և ազատ շուկայի ստեղծումը կատարել շատ արագ և կտրուկ առաջ ընկնել ԽՍՀՄ-ից: Դա մեզ հնարավորություն կտա համեմատաբար թեթև տանել պետական սեփականությունից մասնավորին անցնելու շրջանին բնորոշ ինֆլյացիան: Սկզբնական շրջանում մեր գործողությունների պատճառով առաջացած ինֆլյացիան կտարածվի խորհրդային ամբողջ դրամի հսկայական ծավալի վրա՝ առաջացնելով չնչին փոփոխություն: Բայց հետո պետք է շտապ անցնել սեփական դրամի ստեղծմանը, հակառակ դեպքում խորհրդային տնտեսության, ուստի և դրամի հիվանդ վիճակը թույլ չեն տա մեզ զարգացնել մեր տնտեսությունը: Մի խոսքով, տնտեսական անդունդը ընկնելիս պետք է բռնել խորհրդային դրամից և դուրս գալիս օգտվել սեփականից: Կյանքը ինչ-որ ժամանակ ծանր կլինի, հետո կամաց-կամաց կլավանա: Եթե մեկը պնդում է, թե հնարավոր է իրագործել այնպիսի տնտեսական ծրագիր, որ առանց կենսամակարդակի որոշ իջեցման միանգամից կարող է բարելավել ժողովրդի նյութական վիճակը, ապա նա ոչինչ չի հասկանում տնտեսությունից կամ ստելով՝ աշխատում է դուր գալ ժողովրդին, վաստակել քաղաքական կապիտալ: Դժվարություններ լինելու են, բայց ուրիշ ճանապարհ չկա (եթե մնանք ԽՍՀՄ-ի կազմում, ավելի ծանր ու երկարատև տնտեսական դժվարություններ կլինեն):

Պետությունը և բարեգործական ընկերությունները պետք է աշխատեն մեղմել չքավորի վիճակը: Կարևոր է գիտակցել նաև, որ միայն տնտեսության զարգացումն է հնարավորություն տալիս՝ հասնելու սոցիալական արդարության: Քիչը հավասարաչափ բաժանելը բերում է միայն հավասարաչափ աղքատության և զարգացման դադարի: Պետք է պայմաններ ստեղծել, որ մարդիկ հնարավորություն ունենան հարստանալու, բայց ազնիվ աշխատանքի, մասնավոր առևտրական-արտադրական ձեռնարկություններ հիմնելու, ձեռներեցության շնորհիվ և ոչ թե կողոպուտի միջոցով: Պետության պարտականությունն է հետևել, որ աղքատները շատ աղքատ չլինեն, հնարավորություն ունենան մարդավայել կյանքով ապրելու, իսկ

հարուստները չօգտագործեն իրենց հարստությունը տնտեսության մեջ մենիշխանության հասնելու համար:

Սեփական դրամին անցնելուց հետո երկիրը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է Հայաստան հրավիրել միջազգային տարբեր ֆինանսական կազմակերպությունների: Ընդհանրապես ինչքան տարբեր երկրների կապիտալներ ներդրված լինեն Հայաստանում, ինչքան շատ տնտեսական կապերի, միությունների մեջ մտնենք, այնքան ավելի շատերը շահագրգռված կլինեն մեր անկախությունը ապահովելու մեջ: Իսկ հողի, արտադրամիջոցների մասնավոր սեփականությունը Հայաստանում կստեղծի մի խավ, որը ոչ միայն վեհ նպատակներից, այլև անձնական շահերից ելնելով, շահագրգռված կլինի պահպանել մեր անկախությունը:

Տնտեսության զարգացման համար, իհարկե, շատ մեծ նշանակություն ունի նաև մեր բոլոր հարևանների հետ առևտրական կապեր հաստատելը, հնարավորություն ունենալը օգտվելու համար նրանց ճանապարհներից՝ փոխադարձ օգուտ ստանալով այդ կապերից: Թուրքիայի հետ առևտրական կապերը չեն հակասում մեր ազգային շահերին և ըստ որոշ տեղեկությունների, նման առևտուրը իր համար շահավետ է համարում նաև Թուրքիան: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, թե ինչպես նույնիսկ բարդ քաղաքական հակասությունները չեն խանգարում հարևան երկրներին իրար հետ առևտրական հարաբերություններ հաստատել: Այդ նպատակով տարվելիք բանակցությունների մեր պայմանը պետք է լինի, իհարկե, Թուրքիայի կողմից 1915թ. ցեղասպանության փաստի ընդունումը՝ իր բոլոր հետևանքներով: Պարզ է, որ Թուրքիան էլ իր կողմից կներկայացնի իր պայմանները: Ես, անշուշտ, գիտակցում եմ, որ իմ այս առաջարկությունը ոգևորություն չի առաջացնի հայերիս, մանավանդ սփյուռքահայության շրջանում: Սփյուռքահայության մեջ տասնյակ տարիների ընթացքում հակաթուրքական գործոնը որոշակի ազգապահպան դեր է կատարել: Հոգեբանորեն դժվար է վերադառնալ իրական քաղաքականությանը, երբեմն շատ ճկուն այն քաղաքականությանը, որը վարում էր Թուրքիայի հետ Հայկական Հանրապետության ղեկավարությունը 1918-1920-ի դժվարին տարիներին: Բայց այդ իրական քաղաքականությունն անհրաժեշտ է, ժամանակը չի սպասում: Անմտություն կլինի միայն չորս հարևան ունենալու պայմաններում կամավոր հրաժարվել նրանցից մեկի հետ տնտեսական կապեր հաստատելուց և դրանով իսկ էապես սահմանափակել մեր մանևրելու հնարավորությունները: Առևտրական կապեր հաստատել Թուրքիայի հետ չի նշանակում մոռանալ 1915-ի ցեղասպանությունը, չի նշանակում նաև հրաժարվել մեր պատմական հողերից: Մենք դեռ կվերադառնանք այդ հարցին:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ տնտեսությունը և ընդհանրապես երկիրը զարգացնելու համար ամենակարևոր հումքը մարդն է: Այն հետամնաց երկրները, որոնք ազգային ծրագրեր էին իրականացնում՝ կառուցելով պողպատածուլական գործարաններ, չզարգացան, իսկ նրանք, որոնք ուրիշներից պարտքով վերցրած դրամը ծախսեցին մասնագետներ պատրաստելու համար, այժմ մեծ քայլերով գնում են դեպի ընդհանուր բարեկեցություն: Ուստի չպետք է խնայել դրամական միջոցները մեր աճող սերունդը դաստիարակելու, կրթելու, մասնագետներ պատրաստելու համար: Շատ կարևոր է պարտադիր ուսուցումը ժամանակակից հայկական ազգային դպրոցում: Բարձրագույն դպրոցը, ստանալով ինքնուրույնություն, պետք է լայն կապեր հաստատի աշխարհի առաջադեմ գիտական կենտրոնների հետ, ուսանողության մի մասը պետք է ուսում ստանա նաև տարբեր երկրների լավագույն համալսարաններում: Ազգային կապիտալի ամենաարդյունավետ ներդրումը մասնագետներ պատրաստելն է:

Ինչ վերաբերում է ռազմական ծրագրերին, ապա, ամենայն հավանականությամբ, անցման շրջանում Հայաստանում գտնվող խորհրդային բանակը կշարունակի կատարել իր ստրատեգիական խնդիրները, իսկ մենք պետք է հնարավորություն ստեղծենք՝ ունենալու մեր ազգային բանակը: Այդ գործում, համակերպվելով մեր անխուսափելի անջատման փաստին, մեծ դեր կարող է խաղալ նաև ԽՍՀՄ-ը: Հետագայում, եթե Ռուսաստանը ցանկանա պահպանել ռազմական բազաներ մեր հանրապետության տարածքում, ապա դա պետք է դառնա առանձին բանակցությունների առարկա:

Ինչ վերաբերում է պետության կառուցվածքին, ապա հեծանիվ հնարելու հարկ չկա: Գոյություն ունի մեզանից շատ առաջ անցած ազգային այլ պետությունների փորձը:

Մենք նշեցինք, թե ինչ ծրագրեր ենք ուզում իրականացնել կիսաանկախությունից անկախություն գնալու ճանապարհին, բայց տեսնենք՝ մեզ հնարավորություն կտրվի՞ դառնալ կիսաանկախ: Ինչպես արդեն նշեցինք, այժմ սահմանադրական ճանապարհով անկախության գնալու բարենպաստ ժամանակ է. այդ կերպ անկախության գնալը թույլ չի տա ԽՍՀՄ–ի ղեկավարությանը բացահայտ ճնշում գործադրել մեզ վրա: Բայց դա չի նշանակում, որ դավադրությունների միջոցով փորձեր չեն արվի՝ մեզ հետ պահել այդ ճանապարհից: Օրինակ՝ փորձ կարվի արհեստականորեն սրել Ղարաբաղի հարցը, Հայաստանի ու Ադրբեջանի սահմանի վրա առաջացնել հայ-ադրբեջանական ընդհարումներ: Այդ դեպքում, հաշվի առնելով կողմերի շահագրգռվածությունները ու հնարավորությունները, կարելի է ռազմական և դիվանագիտական ճանապարհով շտկել իրավիճակը: Տնտեսական ճնշումը նույնպես մեծ արդյունքներ չի բերի, ինչը չարդարացրեց նույնիսկ Լիտվայի պարագայում, երբ դա արվում էր բացահայտ: Բացի այս ամենից՝ պետք է գիտակցել՝ հաշվի առնելով երկրում տեղի ունեցող գործընթացները և տնտեսության արագ քայքայումը, որ այն տնտեսական ճնշումը, որը մեր դեմ կարող են կիրառել այժմ, շատ կարճ ժամանակից հետո դառնալու է սովորական երևույթ՝ անկախ մեր վարքից: Իրական վտանգը մեզ սպասում է ուրիշ կողմից:

Ընդհանրապես, եթե անդրադառնանք Անդրկովկասում տիրող քաղաքական պատկերին, ապա կարելի է նկատել, որ ԽՍՀՄ-ի ղեկավարությանը հաջողվել է Ադրբեջանի և Վրաստանի շարժումները այս կամ այն ձևով անվտանգ դարձնել իր համար: Ջորքի միջոցով Ադրբեջանում շարժումը ջարդելուց հետո ժողովրդին տարբեր ձևերով կաշառել են. ամենամեծ կաշառքը Արցախն է: Արցախը և՛ կաշառք է, և՛ միջոց՝ Ադրբեջանին հետ պահելու կենտրոնախույս ձգտումներից: Ադրբեջանում այժմ մեծ շարժում չկա, չնայած ոչ մեկը չի կարող կանխատեսել, թե ինչ կլինի այնտեղ վաղը: Վրաստանի շարժումը այնքան է տրոհված, կենտրոնն այնքան հնարավորություններ ունի՝ խաղարկելու ազգային փոքրամասնությունների հարցը, և այնտեղ գործող կազմակերպություններն այնքան հեշտ են տրվում այդ խաղին, որ Վրաստանը նույնպես շատ չի մտահոգում ԽՍՀՄ-ի ղեկավարությանը: Ազգային փոքրամասնությունների հարցը, ինքնավար միավորումների գոյությունը հնարավորություն են տալիս կենտրոնին զսպել դեպի անկախություն գնալու Վրաստանի ձգտումը: Վրաստանի շարժումն ունի արտաքին փայլ, բայց ոչ՝ խորը էություն:

Այլ է պատկերը Հայաստանում: Մեր շարժումը, առաջինը լինելով ԽՍՀՄ-ում, մինչև այժմ պահպանել է իր միասնությունը, չնայած վերջին ժամանակաշրջանում զգացվում են ուժերի տրոհման որոշակի երևույթներ: Մինչև վերջերս շարժման միասնության կարևորագույն պատճառն այն էր, որ նա հավաքված էր մի ձողի շուրջ. դա Արցախի հարցն էր: Պակաս նշանակություն չուներ նաև մեր ազգային զարմանալի, դարերի ընթացքում արմատացած, շատերիս կողմից գուցե խորը չգիտակցված հատկանիշը՝ ցուցաբերել ուրիշ ազգերի համար անհասանելի և անհասկանալի կուռ միասնություն ազգային որևիցե հարցի շուրջ: Այժմ Արցախի հարցը չի կարող լինել շարժման ձող, չնայած մեր ժողովուրդը խորը գիտակցում է այդ հարցի վճռական նշանակությունը մեր ապագայի համար և կգնա բազմաթիվ զրկանքների այն վերջնականապես լուծելու նպատակով: Եվ մի օր, երբ առաջանա դրա անհրաժեշտությունը, ժողովուրդը միասնական պոռթկումով կկանգնի Արցախի մեր քույրերի ու եղբայրների կողքին՝ պաշտպանելու նրանց հնարավոր ոտնձգություններից: Չնայած այս ամենին, Արցախի հարցը, այնուամենայնիվ, այժմ շարժման ձող չէ: Այս հանգամանքը բացատրելու համար հարկ չկա փնտրել դավաճաններ կամ դավադրություններ: Կան օբյեկտիվ պատճառներ: Ժողովրդի մեծ մասը եկել է այն համոզման, որ զանգվածային շարժումը այժմ չի կարող նպաստել Արցախի հարցի լուծմանը, անհրաժեշտ է քչերի ամենօրյա պրոֆեսիոնալ աշխատանք, պետական մոտեցում: Շատերն արդեն հասկացել են՝ ինչ խոր շահեր են թաքնված այդ հարցի հետևում, հասկացել են նաև, որ այն աշխատանքը, որի նպատակն է մեր ազգի, պետության հզորացումը, ոչ թե շեղում է մեզ Արցախի հարցից, այլ ընդհակառակը, էապես ավելացնում է մեր հնարավորությունները՝ լուծելու այդ հարցը: Եթե Արցախի հարցը չի կարող լինել շարժման ձողը, ապա ինչը՞ կփոխարինի նրան:

Անդունդ գլորվող կայսրությունում տնտեսական, սոցիալական բարեփոխումներով հրապուրվելը անիմաստ է և չի կարող միավորել մեր ողջամիտ ժողովրդին: Կոմունիստական կուսակցությունն ավելի լավ, ազգային կուսակցությամբ կամ կուսակցություններով, «վատ» ղեկավարներին «լավերով» փոխարինելը միգուցե անհրաժեշտ աշխատանք է, բայց նույնպես չի կարող շատ ոգևորել մեր ժողովրդին, միավորել նրան: Ընդհակառակը, եթե չկա վերջնական

նպատակ, ապա այդ պայքարը միայն կարող է նպաստել ազգի տրոհմանը: Այդ ուղղությամբ գնալով և մեծ ջանքեր թափելով՝ մենք չնչին արդյունքներ կունենանք: Գոյություն ունի միայն մի խնդիր, որի լուծումը ռեալ է, որի իրականացումը իսկապես կնպաստի մեր ազգի հզորացմանը, մի խնդիր, որին հասնելու ճանապարհին իշխանության հարցը լուծվում է բնական ճնով, որպես միջոց և ոչ թե որպես նպատակ՝ չտրոհելով մեր ազգային միասնությունը, մի խնդիր, որը միայն կարող է համախմբել ողջ աշխարհի հայությանը և որը միայն կարող է դառնալ շարժման ծող: Դա անկախ պետականությունը վերականգնելու խնդիրն է: Մենք դա դեռ խոր չենք գիտակցում, բայց Մոսկվան արդեն լավ հասկանում է, որ մենք ուշ թե շուտ կգանք այդ եզրակացության: Այդ է պատճառը, որ մեր շարժումն այժմ կայսրությունը համարում է իր համար ամենավտանգավորը Անդրկովկասում: Մոսկվան, գիտակցելով վտանգը, գերադասում է մեր հանրապետությունում իշխանությունը հանձնել իր համար այս նոր ժամանակներում անընդունելի, վարկաբեկված, հին ժամանակներից մնացած շահամոլ մարդկանց, միայն թե այն չանցնի ժողովրդին, շարժմանը: Ընդունում են չարյաց փոքրագույնը: Ժամանակավոր իշխանություն՝ շարժումը ջարդելու լիազորություններով: Ինչքան էլ դժգոհենք մեր միասնության պակասից, այն միասնությունը, որ այժմ ցուցաբերում է մեր ժողովուրդը, և որի նմանն այժմ կարելի է տեսնել միայն Մերձբալթյան հանրապետություններում, վախեցնում է Մոսկվային: Դրսից հարվածելը՝ կազմակերպելով հայ-ադրբեջանական ընդհարումներ կամ տնտեսական ճնշման դիմելը կարող են միայն նպաստել մեր ժողովրդի միասնությանը: Դա լավ են հասկանում Մոսկվայում, և խնդիր է դրված ամեն գնով տրոհել և ջարդել շարժումը:

Փորձ կարվի, և ես համոզված եմ՝ մոտ ժամանակներս, նույնիսկ չսպասելով մեր վճռական քայլերին, հերյուրանքներով շփոթեցնել ժողովրդին, թեկուզ կարճ ժամանակով վարկաբեկել շարժումը, առաջ մղել քաղաքում հայտնված որոշ անհայտ ծագում ունեցող զինված ջոկատներ, բանակներ, որոնք գտնվում են իշխանությունների վերահսկողության տակ, ընդհարումներ ստեղծել ջոկատների միջև, դրանց տրամադրել շարժման ղեկավարների դեմ, մինչև իսկ դիմել տեռորի: Եթե հաջողվի զենքի միջոցով ջարդել շարժումը, ապա կարճ ժամանակամիջոցում կզինաթափվեն ջոկատները (չարժե ինքնախաբեությամբ զբաղվել, խորհրդային բանակի համար դա դժվար գործ չէ):

Այս ամենն անելու համար անհրաժեշտ կլինի ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների, մանավանդ ռուսների մեջ հակակրանք առաջացնել հայ ժողովրդի նկատմամբ: Բաքվում նույնանման նպատակի հասան՝ կազմակերպելով հայ բնակչության ջարդեր: Երևանում նույն արդյունքների կհասնեն՝ կազմակերպելով նորից մայիսի 27-ի[11] նման դեպքեր: Դա դժվար չէ, եթե հաշվի առնենք, թե ինչ խառնաշփոթություն է տիրում զինված ջոկատների ենթակայության և ինքնագլուխ գործելու հարցում, եթե հաշվի առնենք նաև, որ երրորդ դասարանի կրթություն ունեցող ամեն մի «խմբապետ», հավաքելով իր ենթակայության տակ 7–10 զինված տղաներ, հնարավորություն է ստանում անպատիժ բռնագրավել մեքենաներ, դրամ շորթել, ինքնուրույն որոշումներ ընդունել ազգի ապագայի վերաբերյալ և իր գործողություններով ամբողջ ազգը կանգնեցնել անդունդի եզրին: Երբ Երևանում գոյություն ունեցող և իշխանությունների կողմից փայփայված այդ ջոկատները կատարեն իրենց հատկացված դերը (նույնիսկ չգիտակցելով, թե ինչ են անում), ապա կգա նաև նրանց վերջը: Պետք է լուրջ բացատրական, կազմակերպչական աշխատանք տանել ջոկատների հետ, արագ իրագործել Գերագույն խորհրդի որոշումը անվտանգության խորհուրդ ստեղծելու մասին, և այն ջոկատները, որոնք չեն ենթարկվի խորհրդին, հայտարարել օրենքից դուրս: Բայց այս ամենը հնարավոր է իրագործել միայն այն դեպքում, երբ մեր ժողովուրդը, գիտակցելով վտանգը, անհանդուրժողականություն ցուցաբերի ամեն մի զինված մարդու նկատմամբ, որը գտնվում է սահմանային գոտուց այս կողմ, նաև՝ զինված մարդու կողմից մարդկային արժանապատվությունը վիրավորող ամեն մի ոտնձգության հանդեպ: Անհրաժեշտ է նաև մեծ աշխատանք տանել ԽՍՀՄ-ի ժողովուրդներին մեր դիրքորոշումը, խնդիրները, գործելակերպը բացատրելու համար, ստեղծել բարենպաստ հասարակական կարծիք:

Անկախության ճանապարհով գնալու համար մեզ պետք է միասնություն: Եվ մենք կհասնենք միասնության: Բայց գոյություն չունի վերացական միասնություն, միասնությունը ստեղծվում է միայն ինչ-որ մի վեհ գաղափարի, իրական նպատակի շուրջ: Այդ նպատակը, այդ գաղափարը անկախությունն է:

Սահմանադրական եղանակով անկախության գնալը առաջացնում է բազմաթիվ խնդիրներ, որոնցից ամենադժվարը երևի Նախիջևանի հարցն է (որը պայմանավորված է նրա կղզիացված վիճակով): Կանգ չառնելով այդ իսկապես բարդ հարցի հնարավոր լուծումների տարբերակների քննարկման վրա՝ անցնենք Արցախի հարցին:

Քննարկվող հարցի հետագա ընթացքը լավ հասկանալու համար անհրաժեշտ է, իհարկե, համակողմանի խոր վերլուծության ենթարկել ղարաբաղյան շարժման նախորդ շրջանի ամբողջ քաղաքական պատմությունը: Առերես երևացող վազվզոցի, հանրահավաքների, գործադուլների, կոտորածների, Մոսկվայում, Երևանում ու Բաքվում ընդունված որոշումների տակ թաքնված էր բարդ, շատերի համար անհասկանալի խաղ, շահերի բախում, երբեմն նուրբ քաղաքականություն: Հարվածներ ու հակահարվածներ: Բազմաթիվ հարցեր: Հրահրվե՞լ է արդյոք ղարաբաղյան շարժումը, թե՞ բնական ձևով է առաջացել: Ի՞նչ իմաստ ուներ գնալ սահմանադրական ուղիով, եթե առջևում պարզ նշմարվում էր սահմանադրության 78-րդ հոդվածով ստեղծված սահմանադրական փակուղին: Ինչու՞ էր Մոսկվան պաշտպանում Ադրբեջանին: Արդյոք մենք մեզ ճի՞շտ պահեցինք Սումգայիթի ողբերգությունից հետո: Ո՞վ կազմակերպեց Սումգայիթը և ինչու՞: Ինչո՞վ բացատրել բանակի այն հսկայական դերը, որ նա ունեցավ 1988թ. նոյեմբերին Ադրբեջանից հայերին դուրս հանելու և Հայաստանից ադրբեջանցիներին տեղահանելու գործում: Ինչու՞ ձերբակալվեց «Ղարաբաղ» կոմիտեն և դրանից հետո Արցախում ստեղծվեց հատուկ կառավարման կոմիտե: Ադրբեջանի կողմից Հայաստանը շրջափակման ենթարկելը արդյոք անբարոյականությու՞ն էր, թե՞ սրամիտ և ազդեցիկ քաղաքական քայլ: Ինչու՞ նոյեմբերի 28-ի[12] որոշումը ընդունելիս մերձբալթյան ներկայացուցիչները մեր դեմ քվեարկեցին: Ինչո՞վ բացատրել, որ չնայած դեռևս «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալված ժամանակ առաջարկվել էր Գերագույն խորհրդում որոշում ընդունել այն մասին, որ Արցախը Հայաստանի անբաժանելի մասն է, սակայն մենք դեմ էինք այդպիսի որոշում ընդունելուն: Ինչու՞ «Ղարաբաղ» կոմիտեն դեկտեմբերի 1-ին պարտադրեց Գերագույն խորհրդին որոշում ընդունել միացյալ հանրապետություն ստեղծելու վերաբերյալ: Ճի՞շտ էր արդյոք այդ որոշումը, թե՞ սխալ: Ի՞նչն էր պատճառը, որ 1989թ. աշնանը Հայաստանի շրջկոմների քարտուղարները, գործարանների տնօրենները, Կենտկոմը աշխատում էին իրենց ձեռքը վերցնել ղարաբաղյան շարժումը, և հաճախ այն տպավորությունն էր ստեղծվում, որ «Ղարաբաղ» կոմիտեն այլևս չի զբաղվում Ղարաբաղի հարցով:

Այս ամենը և բազմաթիվ այլ հարցեր դեռ սպասում են վերլուծության, սպասում են իրենց քաղաքական մեկնաբանմանը: Չարժե փնտրել բարդ դավադրություններ: Այս բոլոր հարցերն ունեն պարզ տրամաբանական պատասխաններ, բայց կարևորն այն է, որ դրանք բոլորը կապված են իրար հետ, պատահական չեն և կազմում են քաղաքական շղթա: Նշված հարցերի պատասխանները, երևույթների բացատրությունը մի առանձին հոդվածի նյութ կարող են լինել: Ինչ վերաբերում է հարցի ապագա ընթացքին, ապա կարճ ասեմ: Մենք, իհարկե, պետք է փորձենք միս ու արյուն տալ դեկտեմբերի 1-ի որոշմանը, բայց այդ որոշումը դեռ երկար ժամանակ իրականացնել հնարավոր չի լինի: Ավելին, որոշ դեպքերում կօգտագործվի մեր դեմ: Որոշումը և նրա իրականացման ուղղությամբ տարվելիք հնարավոր աշխատանքները պետք է համարել առայժմ մեր ներքին գործը՝ չթմբկահարելով այն ուրիշների մոտ: Արտաքին աշխարհին Արցախի հարցը պետք է շարունակի ներկայանալ իր բնական տեսքով, այսինքն՝ որպես մի հարց, որի հիմքում ընկած են ազգերի ինքնորոշման և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները, առանց կապելու այդ հարցը Հայաստանի հետ: Շատ կարևոր քաղաքական նշանակություն ունի այն հանգամանքը, որ մի քանի ամիս է, ինչ Արցախը, փաստորեն առանց Հայաստանի միջամտության, շարունակում է պայքարել իր ինքնուրույնությունը պահպանելու համար: Արցախի պայքարն իսկապես ինքնուրույն պայքար է՝ հանուն իր ազատության, հիմնված վերը հիշատակված միջազգային իրավունքի սկզբունքների վրա: Միջազգային իրավունքի սկզբունքները, իհարկե, սոսկ վերացական են և ինքնըստինքյան ոչ մի հարց չեն լուծում, եթե դրանց հետևում կանգնած չէ շահագրգռված ու կարող մի ուժ: Բայց դրանք ամբողջ աշխարհի կողմից ընդունված միջազգային իրավունքի այն սկզբունքներն են, որոնք անտեսել չի կարող և ոչ մի պետություն, և որոնք իրավական ու բարոյական հիմք են ցանկացած ազգային-ազատագրական պայքարի համար: Առանց պայքարի՝ ոչ մի հարց չի լուծվում, բայց հաղթանակի հասնելու համար միայն մեկ ուժը

հաճախ բավական չի լինում, կարևոր նշանակություն է ունենում նաև բարենպաստ հասարակական կարծիքը: Այս կապակցությամբ նկատենք, որ ճիշտ է, իհարկե, այն կարգախոսը, ըստ որի մենք հույսներս պետք է դնենք միայն մեր ուժերի վրա, բայց դա չի նշանակում, որ պետք է արհեստականորեն մեկուսացնենք մեզ՝ ընդունելով բոլորից նեղացածի կեցվածք: Չարժե մի ծայրահեղությունից մյուսն ընկնել:

Հաշվի առնելով իրական հնարավորությունները՝ պետք է աշխատել ռազմական տեսակետից Արցախը դարձնել անմատչելի բերդ՝ ապահովելով նրանում ազգային կազմի գոնե ներկա վիճակը, իսկ քաղաքական, տնտեսական տեսակետից անհրաժեշտ է պահպանել և խորացնել Արցախի ինքնուրույնությունը՝ նկատի ունենալով, որ այն ուղղությունը, որով այժմ գնում է ԽՍՀՄ-ը, կարող է նպաստավոր լինել այդ խնդրի իրականացման համար (զգուշությամբ կարելի է օգտվել նաև կենտրոնում առաջացող հակասություններից):

Եվս մի հանգամանք. չպետք է ենթարկվել կենտրոնի այն շանտաժին, որը մեր անկախությունը կաշխատի կապել Ղարաբաղի հարցին: Մեր կողմից անկախություն հռչակելը և կիսաանկախ վիճակում մնալը, սպասելով դեպքերի զարգացմանը, ավելացնում է Արցախի հարցի լուծման մեր հնարավորությունները: Այդ հարցը լուծելու տեսակետից ոչ մի նոր հեռանկար չի բացվի մեր առջև, եթե շարունակենք մնալ ԽՍՀՄ-ի կազմի մեջ:

Անկախ հայկական հանրապետության գոյության երաշխիքների մասին խոսելիս բնականաբար հիշատակվում է Թուրքիայի նման հարևան ունենալու վտանգը: Նախորդ մասում մենք արդեն նշեցինք, որ ԽՍՀՄ-ի հանկարծակի անկառավարելի փլուզման դեպքում կարող է վտանգ առաջանալ, որ Թուրքիան, մի պահ շեղվելով ներքին զարգացման իր ընտրած ուղուց, կփորձի կլանել կայսրության դյուրամարս բեկորների մի մասը: Դա այն կարևոր պատճառներից մեկն է, որն ստիպում է մեզ շտապել անկախություն ստանալ մինչ այդպիսի հնարավոր վտանգավոր պահի առաջ գալը: Դատողությունների այն մասի հետ, որ Թուրքիան կարող է փորձել կլանել բեկորների մի մասը, բոլորը հեշտությամբ համաձայնում են, բայց շատերը չեն ընդունում, որ Թուրքիան ընտրել է ներքին զարգացման այնպիսի ուղի, որ խաղաղ պայմաններում հնարավոր է Թուրքիայի և Հայաստանի գոյակցությունը: Որպես ապացույց՝ միշտ բերում են Կիպրոսի օրինակը: Ես մանրամասն չեմ քննի Կիպրոսի խնդիրը, ուղղակի կբերեմ հանրահայտ փաստեր՝ ընթերցողին թողնելով ինքնուրույն դատողությունները այդ փաստերի շուրջը: Նկատենք միայն, որ հարևան անկախ պետությունների խաղաղ գոյակցությունը երաշխավորվում է ոչ միայն զարգացման ուղու վերաբերյալ նրանցից յուրաքանչյուրի ընդունած որոշումով, ոչ միայն ռազմական ուժի շնորհիվ հակառակ կողմի մեջ առաջացած զսպվածությամբ, այլև միջազգային պարտավորություններով, բազմաթիվ երկրների շահերով, հավասարակշռություն պահպանելու միտումով: Նվաճումները հնարավոր են դառնում, երբ այս կամ այն ձևով քանդվում է միջազգային պարտավորությունների շղթան, երբ անկայուն վիճակ է ստեղծվում ռեգիոնում, տեղի են ունենում հեղափոխություններ և հեղաշրջումներ, երբ փոխվում է այլ երկրների շահերի ուղղվածությունը և, բացի դրանից, առկա են լինում քիչ թե շատ բավարար հիմքեր ռազմական ուժի միջամտության համար: Այդ տեսակետից նույն վիճակում են գտնվում գրեթե բոլոր անկախ պետությունները, յուրաքանչյուրի գոյությունը ապահովվում է ռազմական ուժով, վարած քաղաքականությամբ, միջազգային պարտավորություններով և տարածաշրջանում տիրող կայունությամբ: Այժմ անցնենք Կիպրոսի պատմության որոշ փաստերի շարադրմանը:

1925-ից Կիպրոսը անգլիական գաղութ էր: 1955-ից սկսվեց ազգային-ազատագրական պայքարը անկախ պետություն ստեղծելու նպատակով: 1959թ. երեք շահագրգիռ երկրների՝ Անգլիայի, Թուրքիայի, Հունաստանի միջև կնքվեց Ցյուրիխ-Լոնդոնյան պայմանագիրը, ըստ որի այդ երկրները հանդիսանում են Կիպրոսի անկախության երաշխավորները՝ ճանաչելով նրա անկախության իրավունքը: Ըստ այդ պայմանագրի՝ Անգլիան ստացավ կղզում ռազմական բազաներ ունենալու, իսկ Հունաստանն ու Թուրքիան՝ զորամասեր պահելու արտոնություններ: 1960թ. Կիպրոսը ընդունեց սահմանադրություն, ըստ որի նրա նախագահը պետք է լինի ազգությամբ հույն, փոխնախագահը՝ թուրք, պառլամենտի 35 դեպուտատներին ընտրում է հունական համայնքը, 15-ին՝ թուրքականը: 1963թ. տեղի ունեցավ ընդհարում երկու համայնքների միջև, որից հետո թուրքերը հրաժարվեցին մասնակցել Կիպրոսի խորհրդարանի, կառավարության և պետության այլ հաստատությունների աշխատանքներին: 1967թ. ստեղծվեց թուրքական գործադիր վարչություն: 1974թ. սրվեցին Հունաստանի և

Թուրքիայի հարաբերությունները էգեյան ծովում հայտնաբերված նավթի հանքավայրերի պատկանելության հարցի կապակցությամբ: 1974-ի հուլիսին Կիպրոսի հունական զինվորականությունը խռովություն բարձրացրեց օրինական կառավարության դեմ՝ պահանջելով կղզին միացնել Հունաստանին: Դրան հաջորդեց Թուրքիայի զորքերի ներխուժումը կղզի, որոնք 1974-ի հուլիս-օգոստոսի ընթացքում զավթեցին Կիպրոսի տարածքի 40 տոկոսը: ՆԱՏՕ-ի երկրների և ԽՍՀՄ-ի շահերի միջև առաջացել էր հազվագյուտ ներդաշնակություն այս ներխուժման ժամանակ. ոչ մեկը չմիջամտեց, արվեցին սոսկ պաշտոնական հայտարարություններ հասարակական կարծիքը հանգստացնելու նպատակով: Հունաստանում 1974-ի հուլիսին զինվորական վարչակարգը հեռացավ իշխանությունից, իշխանության գլուխ անցավ Կ.Կարամանլիսի կառավարությունը, որը 1974-ի օգոստոսի 14-ին հայտարարեց ՆԱՏՕ-ից Հունաստանի դուրս գալու մասին: 1975-ի փետրվարին Կիպրոսի թուրքական համայնքի ղեկավարությունը միակողմանիորեն հայտարարեց Կիպրոսի ֆեդերատիվ պետություն ստեղծելու մասին: Այժմ Կիպրոսի Հանրապետությունից զատված տարածքը միավորված չէ Թուրքիայի տարածքին, այլ պարզապես հռչակված է նոր անկախ պետություն, որը ճանաչել է միայն Թուրքիան: Աշխույժ բանակցություններ են գնում տարբեր շահագրգիռ երկրների միջև Կիպրոսի հարցի շուրջ: ԽՍՀՄ-ում տեղի ունեցող գործընթացների շնորհիվ Թուրքիայի նշանակությունը ՆԱՏՕ-ի երկրների համար բնականոն ձևով իջնելու է, և շատերը հույս ունեն, որ վաղ թե ուշ կվերականգնվի Կիպրոսի միասնական անկախ պետությունը կղզու ամբողջ տարածքում:

Անկախության հետ կապված ևս մի հարց կա, որը շատ է հուզում մեր ժողովրդին: Ինչպե՞ս պետք է իրականացվի Թուրքիայի կողմից զավթված և այժմ գրեթե հայկական բնակչություն չունեցող մեր պատմական հողերի վերամիավորումը Հայաստանի Հանրապետությանը, չէ՞ որ անկախ պետության վերականգնումով մենք, այնուամենայնիվ, համարյա բոլոր ասպարեզներում անհամեմատ ավելի թույլ կլինենք, քան Թուրքիան: Ես չգիտեմ, և եթե որևէ մեկն առաջարկի իրական ծրագիր հողերի միավորման նպատակին հասնելու համար, ես համոզված եմ, որ մենք ամբողջ ազգով կմիավորվենք, կյանք ու եռանդ չենք խնայի այդ գործի համար: Բայց մի բան հաստատ գիտեմ. այն հույսերը, թե Ռուսաստանը մի օր կվերադառնա իր ծավալապաշտական քաղաքականությանը, հնարավորություն կունենա խլել Թուրքիայից մեր հողերը, դրանից հետո այդ հողերը կտա մեզ և հետո կքանդվի որպես կայսրություն՝ հնարավորություն տալով մեզ ունենալ Միացյալ Անկախ Հայաստան, լիովին անհիմն են, մեր ժողովրդին տանում են դեպի անգործություն և ստրկություն՝ աշխարհի երեսից մեզ՝ որպես ազգ, վերացման դատապարտելով: Նույնչափ անհիմն են այն հույսերը, որ ՄԱԿ-ի կողմից 1915 թվականի ցեղասպանության ճանաչումը (որն ինքնին կարևոր նշանակություն ունի մեր ժողովրդի համար) կարող է հանգեցնել այն բանին, որ մեր հողերը վերադարձվեն մեզ: Այժմ միակ հույսը, որ ես տեսնում եմ, այն է, որ պատմական անկանխատեսելի ելևէջները, որոնք մեզ կարող են հնարավորություն տալ՝ լուծելու մեր հողային հարցերը, պետք է ընդունել որպես անկախ մի ազգ, պետություն և ոչ թե որպես Ռուսաստանին ձուլվող էթնիկական մի միավորում: Ասածս, ինչ խոսք, չի նշանակում, որ մենք պետք է մոռանանք մեր հողային պահանջները, պարզապես պահանջատիրությունը չի կարող մեզ համար այժմ լինել ազգային-պետական քաղաքականություն: Այն պետք է լինի տարբեր հասարակական կազմակերպություններին, հայրենակցական միություններին միավորող գաղափար, միշտ վառ պահվի ժողովրդի հիշողության մեջ, դառնա մեր երիտասարդության երազանքը, մինչև որ հնարավորություն ստեղծվի՝ լուծելու այդ խնդիրը: Նույն կերպ է վերաբերվում համանման հարցին հզոր Գերմանիան:

Անգլիացիներն ասում են, որ ունեն երկու հզոր զենք՝ միջուկային ռումբ և իրենց ժողովրդի պատմությունը: Մենք չունենք առաջինը, չենք օգտվում երկրորդից: Ժամանակն է, որ մեր պատմաբաններն ու գրողները հրաժարվեն ժողովրդին թուլացնող լացկանությունից, մեր պատմության միայն դժբախտ էջերը հիշատակելու մորմոքից: Մենք հզոր ազգ ենք եղել և նորից պետք է դառնանք հզոր: Մենք համարվել ենք արևելքի լավագույն զինվորը, աշխարհին տվել անզուգական ճարտարապետություն, պետականության կորստից հետո խաղաղ առևտրական միջոցներով հսկայական կշիռ ենք ձեռք բերել Հնդկաստանում, Չինաստանում. անգլիական պառլամենտում է հնչել այն խոսքը, թե առանց հայերի հետ համագործակցելու՝ հնարավոր չէ նվաճել Հնդկաստանը, մենք կանգնած ենք եղել այն ռեֆորմացիայի

ակունքների մոտ, որը հեղաշրջեց Եվրոպան և հանգեցրեց ժամանակակից քաղաքակրթության առաջացմանը: **Աստված մեզ պահպանել և տարել է հազարամյակների փորձությունների միջով ոչ այն բանի համար, որ այժմ անգործության և անվճռականության պատճառով մեր ազգը դատապարտենք վերացման... Վախկոտները, թույլերը թող հեռանան հայրենիքից, նրանք ազգի փոշին են, թող մնան ուժեղները, նրանք, ովքեր ձգտում են իրենց հայրենիքում մարդուն արժանավայել կյանքով ապրել, ովքեր հավատում ունեն մեր ազգի ապագային, ովքեր իրենց էությամբ հայ են, հայերեն են մտածում, կառչած են մեր նախնիների պատմությանը, մեր հողին ու ջրին: Եվ մենք, ուս ուսի տալով, նորից կվերականգնենք մեր նախկին հզորությունը, մեր պետությունը:**

«Հայք» մայիսի 19, 27, հունիսի 10,17,
1990, թիվ 15, 16, 18, 19

ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԻ ՋԱՐԹՈՆՔԸ ՇԱՏ ԹԱՆԿ ԿՆՍՏԻ ՄՅՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՎՐԱ

1986-ին Միխայիլ Գորբաչովը հրապարակավ հայտարարեց, որ ի տարբերություն աշխարհի այլ երկրների, ԽՍՀՄ-ում ազգային հարցը գրեթե լիովին լուծված է: Սակայն Լեռնային Ղարաբաղ անունով Անդրկովկասի մի ինքնավար մարզ շուտով պետք է հերքեր այս պնդումը: Այնտեղ ծավալված դեպքերը ծնունդ տվեցին գորբաչովյան դարաշրջանի առաջին անկախ քաղաքական շարժմանը՝ «Ղարաբաղ» կոմիտեին, որն ստեղծվեց մինչ այդ բոլորովին անծանոթ մի խումբ մտավորականների կողմից: Մաթեմատիկոս Վազգեն Մանուկյանը նրանցից մեկն է: Մեկը այն «ծայրահեղականներից» (Գորբաչովի որակումով), որոնք համարձակվեցին մարտահրավեր նետել նիրհող հսկային: Ոչ պաշտոնական մամուլում հրապարակված մի հոդվածում նա մատնանշում է Սումգայիթի (1988թ. փետրվար) դեպքերում Մոսկվայի խաղացած դերը և կոչ անում երկու հարևան ժողովուրդներին՝ հայերին և ադրբեջանցիներին մեկտեղ լուծել բոլոր ծագած հարցերը:

Կոմիտեի մյուս անդամների հետ նա բանտից դուրս եկավ ժողովրդական հուժկու ճնշման շնորհիվ:

Քանի որ Վազգեն Մանուկյանը Մոսկվայի քաղաքականության գիտակ է, նրա համար Կրեմլը գաղտնիքներ չունի: Ստորև վարչապետն իր յուրահատուկ մոտեցումն է դրսևորում Ռուսաստանում կատարվող վերափոխումների նկատմամբ:

-Դուք հետաքրքրվու՞մ եք Ռուսաստանի Դաշնրապետության քաղաքական իրավիճակով:

-Շատ: Մեր քաղաքականությունը սերտորեն կապված է ՌԽՖՍՀ-ի ներկա գործընթացներին: ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների նման մեր ապագան ևս մեծապես պայմանավորված է նրանով, թե զարգացման ինչ ուղի կընտրի Ռուսաստանը: Նա կարող է ընտրել կայսրությունը՝ այն դարձնելով իր հզորության գործիքը և կամ՝ զարգացնել սեփական տնտեսական, գիտական և մշակութային պոտենցիալը: Պետք է խոստովանել, որ անցյալում նա միշտ նախապատվությունը տվել է առաջին ուղուն:

-Մի՞շտ:

-Գրեթե: Բացառությամբ, երևի, 1917թ. փետրվարյան հեղափոխությանը հաջորդած կարճատև շրջանի: Սակայն հետագայում բոլշևիզմը, գիտակցաբար, թե ոչ, ընտրեց կայսրությունը: Այսօր առկա է նույն պայմանական այլընտրանքը, սակայն կարծում եմ, որ Ռուսաստանն ընտրել է զարգացման ուղին:

-Այսինքն՝ այն, ինչ Արևմուտքում գորբաչովականություն՞ն է կոչվում:

-Ուղին, որ այսօր ընտրում է ԽՍՀՄ-ը, Գորբաչովի բարի կամեցողության արգասիքը չէ, այն բխում է անհրաժեշտությունից, քանի որ ԽՍՀՄ-ն այսօր հետ է մնում բոլոր բնագավառներում, այդ թվում նաև՝ (որ ամենակարևորն է) ռազմական: Պետք է նշել, որ այս հարցում վճռորոշ դեր խաղաց Արևմուտքի, մասնավորապես Ռեյգանի հետևողական քաղաքականությունը:

-Ի՞նչ եք կարծում, Գորբաչովը մտածու՞մ էր արդյոք երկրի ապագաղութացման մասին, երբ ընտրում էր զարգացման ուղին:

-Բնավ ոչ: Գորբաչովը սխալ գործեց՝ կարծելով, թե հնարավոր է կայսրությունը պահպանելով՝ միաժամանակ հասնել տնտեսական զարգացման: Հետագա դեպքերը ցույց տվեցին, որ այս երկու միտումները հակասում են իրար: Այդպես նա կորցրեց Արևելյան Եվրոպան:

-Արևմուտքում կարծում են, թե դա կատարվեց Գորբաչովի կամքով...

-Նա պարզապես ընտրության հնարավորություն չուներ: Ըստ իս, նա հիմա արդեն հասկացել է, որ այդ երկու նպատակները միասին չի կարելի իրագործել և համակերպվել է տանուլ տալու մտքին: Բայց, իհարկե, նվազագույն կորուստներով: Նա փորձում է առավելագույն արդյունքի հասնել նվազագույն գնով: Ինձ թվում է, թե Գորբաչովի նպատակը ԱՄՆ-ի նման պետություն ստեղծելն է, որքան էլ այս երկու երկրները տարբերվեն միմյանցից: Երևի կարծում է, թե հանրապետություններին նահանգի կարգավիճակ տալով, ներկա Ռուսաստանում մի շարք այդպիսի նահանգներ ստեղծելով, այս ամենը զարգացնելով ու կենսամակարդակը բարձրացնելով՝ կկարողանա անջատողական միտումները խարխլել:

-Դա իրագործելի՞ է ԽՍՀՄ-ում:

-Գուցե: Համենայն դեպս դրա համար անհրաժեշտ է տնտեսության կտրուկ զարգացում: Իսկ դա չափազանց դժվար է, քանի որ ենթադրում է շուկայական տնտեսակարգ և մասնավոր սեփականություն: Մինչդեռ հոգևարքի մեջ գտնվող մեր տնտեսությանը դա կարող է բուժելու փոխարեն տեղնուտեղը սպանել՝ առաջ բերելով դրամի խիստ արժեզրկում և սարսափելի գործազրկություն: Գորբաչովն անելանելի վիճակում է. ոչ կարող է վերադառնալ նախկին դրությանը, ոչ էլ գնալ արմատական փոփոխությունների: Ինչ վերաբերում է մեզ, ապա Խորհրդային Միության շրջանակներում մենք ոչ մի ելք չենք տեսնում մեր տնտեսության համար: Եվ սա վերաբերում է ԽՍՀՄ-ի բոլոր հանրապետություններին, որոնցից յուրաքանչյուրն ինքնուրույն ավելի հեշտությամբ կկարողանա վիճակը կարգավորել:

-Իսկ Ռուսաստա՞նը: Նա նու՞յնպես շահագրգռված է դուրս գալու ԽՍՀՄ-ից:

-Այդ գաղափարը ես լուրջ չեմ ընդունում: Ռուսները միշտ համոզված են եղել, որ կատարում են ինչ-որ միստիկական առաքելություն, որ երջանկություն ու քաղաքակրթություն են բերում իրենց ենթարկած «հետամնաց» ժողովուրդներին: Այսօր նրանք խիստ վիրավորված են, երբ իրենց մեղադրում են՝ անվանելով զավթիչներ ու ստրկատերեր: Նույնիսկ սկսում են մտածել, որ եթե իրենց բոլոր ջանքերը նվիրեին միմիայն իրենց, ապա այսօր շատ ավելի հարուստ կլինեին: Կարծում եմ՝ չպետք է անտեսել Գորբաչովի դերը այս մտայնության տարածման գործում:

-Միթե՞ Գորբաչովի:

-Անշուշտ, դա նրա քաղաքականության հիմնական դրույթներից մեկն է: Նա միշտ արհեստականորեն առաջ է բերում որևէ շարժուձև, հետո այն ճնշում է: Այդ անում է, նախ, որպեսզի ***ալիբի*** ունենա շարժման թշնամիների աչքում և ապա, որովհետև ցանկացած շարժուձև ԽՍՀՄ-ում միտում ունի՝ անկառավարելի չափեր ընդունելու: Օրինակ՝ ես համոզված եմ, որ նա բազմակուսակցությունն առաջ քաշեց ոչ միայն այն պատճառով, որ ստիպված էր, այլ որովհետև դա համապատասխանում էր նրա քաղաքական գծին: Նա սկսեց սուր ճոճել նոր կուսակցություններ ստեղծելու գաղափարի դեմ, երբ դեռ ոչ ոք այդ մասին չէր էլ խոսել: Մի բան, որ հանգեցրեց 6-րդ հոդվածի վերացմանը: Նույնը վերաբերում է Լենինին: Ըստ ունեցած տվյալների, նա է «տակից» թույլ տվել, որ սկսվի քննադատությունը, իսկ հրապարակավ հանդես է եկել պաշտպանի դերում: Սակայն գործընթացն արդեն սկսված է...

-Այս ամենում ո՞րն է Ելցինի դերը:

-Ես դա դեռևս հստակ չեմ պատկերացնում: Մի բան պարզ է. ճարպկորեն հարվածի տակ դնելով նոմենկլատուրան՝ նա դրա շնորհիվ կարողացավ քաղաքական կշիռ ստանալ: Բայց երբ պետության հոգսն ամբողջապես ընկնի նրա ուսերին, ինչպե՞ս կդրսևորի իրեն՝ չեմ կարող ասել: Գորբաչովի մեջ շատ բաներ չեմ ընդունում, նրա քաղաքականությունը աղետալի հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի, Ղարաբաղի համար, բայց որպես քաղաքական գործիչ՝ իր ունեցած կշռով, նրան չի կարելի համեմատել Ելցինի հետ: Նա վիթխարի դեր է խաղում իր

ժողովրդի պատմության մեջ՝ անկախ այն բանից, թե դա ինչպես կարող է անդրադառնալ իմ ժողովրդի վրա:

*-Ի՞նչ եք կարծում, իրո՞ք Գորբաչովը **դեմոկրատ** է:*

-Կարծում եմ՝ նա ձգտում է ԽՍՀՄ-ի զարգացմանը: Դրան հասնելու համար հարկավոր է հրաժարվել թե՛ միակուսակցությունից, թե՛ մենիշխանությունից և թե՛ սոցիալիստական տնտեսակարգից: Համոզված եմ, որ Գորբաչովը խորապես գիտակցում է համակարգի արմատական փոփոխման անհրաժեշտությունը: Բայց և գիտի, որ ժողովուրդը դեռ դրան պատրաստ չէ: Այստեղից էլ բոլոր հակասությունները, խուսանավումները... Բայց նա նախանշված ուղուց չի շեղվում:

-Իսկ գուցե նրա միակ նպատակը իշխանությունը պահե՞լն է:

-Իր սեփական իշխանությու՞նը: Չեմ կարծում: Ընդհակառակը: Նա իշխանությունն օգտագործում է որոշակի նպատակով: Նա շատ ավելի պարզ միջոց ուներ սեփական իշխանությունը պահելու համար: Նա կարող էր իշխել որպես մի Կաստրո, հեշտ ու հանգիստ կյանք վարել ... Որքան էլ ճգնաժամային լիներ երկրի վիճակը, 10-15 տարի դեռ կարելի էր այդպես ձգել:

-Ինձ թվում է՝ շատ գորբաչովապաշտ եք արտահայտվում:

-Բայց նա հասկացավ, որ ԽՍՀՄ-ի վիճակն անտանելի է, և ի՞նչ պիտի ձեռնարկեր, եթե ոչ տնտեսությունը վերականգնել: Այս ուղին էլ նա ընտրեց: Նրան, անշուշտ, թվաց, թե մի քանի քայլն այս ուղղությամբ բավական կլինի տնտեսությունն առողջացնելու համար: Իրականում ոչ թե մի քանի, այլ մի քանի տասնյակ անգամ հարյուրավոր քայլեր էին պետք: Գորբաչովն, ըստ էության, պատրաստ էր այդ ուղիով մինչև վերջ ընթանալ:

-Իսկ ռազմական հեղաշրջման վտանգ կա՞:

-Այո, բայց ինչու՞ ռազմական: Կարծում եմ՝ Գորբաչովն ինքն էլ ընդունակ է՝ այդպիսի հեղաշրջում կատարելու:

-Չեմ հասկանում, Դուք Գորբաչովին որակում եք որպես նորացման վճռական կողմնակից, միաժամանակ գտնում եք, որ նա ընդունակ է պետական հեղաշրջման:

-Գորբաչովն ունի մեկ նպատակ՝ գերիշխող և ժամանակակից Ռուսաստան: Եթե նա զգա, որ երկիրը դեպի կործանում է գնում, կտրուկ շրջադարձ կանի՝ առանց սպասելու, որ նախախնամությունը թատերաբեմ բերի մեկ ուրիշին: Նրա համար ամենակարևորը երկրի ճակատագիրն է: Անշուշտ, ես ի վիճակի չեմ նրա մտքերը կարդալ, բայց կարծում եմ, որ իրեն ամրապնդելու համար նա ամեն ինչ կանի, որպեսզի ժողովրդավարական պետություն հաստատվի: Եթե վճռական լինի այս ուղղությամբ, ապա ստիպված կլինի զոհաբերել որոշ տարածքներ: Եվ նա կարծում է, որ դրանից հետո ընդհանուր վիճակն այնքան կբարելավվի, որ հնարավոր կլինի խուսափել պայթյունի վտանգից: Այնուամենայնիվ, քանի որ վախենում է իր միջամտության անցանկալի հետևանքներից, ապա մշտապես անկայուն վիճակում է հայտնվում՝ երկու հակադիր ուղղությունների արանքում: Գուցե վերջիվերջո նա երկու մասի՞ բաժանվի: Արևմուտքն էլ է դժվար վիճակում, կարծում է, թե Գորբաչովի միջոցով կկարողանա իր նպատակներին հասնել:

-Կարծում եք՝ Արևմուտքը սխալվու՞մ է:

-Այսօր Արևմուտքը պրոգորբաչովյան է, ինչպես անցյալում կուրորեն պրոհիտլերյան էր: Իմ գորբաչովամետությունն այն է, որ ես նրան մշտապես պիտի հիշեցնեմ այն արմատական փոփոխությունների մասին, որոնք ինքն է ի սկզբանե կատարել, բայց որոնք ամեն վայրկյան փորձում է ոտնահարել:

-Արևմուտքը շատ է վախենում խժդժություններից...

-Խժդժություններ կլինեն: Վաղ թե ուշ Ռուսաստանը կընտրի զարգացած երկրների ուղին, որը, սակայն, լի է վտանգներով: Արևմուտքի քաղաքական գործիչները դա լավ գիտեն: Եթե մի կարճ պահ նրանք նպաստավոր դիրքորոշում ունեցան ԽՍՀՄ-ը խարխլող ազգային շարժումների նկատմամբ, ապա այսօր նրանք ավելի շատ հակված են Գորբաչովի «Միացյալ Նահանգների» տարբերակի կողմը: Նրանց կարելի է հասկանալ. նրանք նախընտրում են գործ ունենալ ոչ ռազմատենչ ժողովրդավարական մի մեծ տերության հետ, որը տնտեսական համագործակցության վիթխարի հնարավորություններ կընձեռի, և ոչ թե բազմաթիվ թերզարգացած փոքրիկ պետությունների հետ, որոնք միմյանց հետ մշտական

պատերազմական հարաբերությունների մեջ են գտնվում: Սակայն Արևմուտքը պետք է վերջիվերջո ըմբռնի, որ որոշ հանրապետություններ, միևնույն է, դուրս կգան ԽՍՀՄ-ից, ասենք, բալթյան երկրները: Իսկ եթե ներկա իրավիճակը շարունակվի, ապա կովկասյան երեք հանրապետությունները ևս կհետևեն նրանց օրինակին: Մարտավարական տեսանկյունից Ռուսաստանն Անդրկովկասից ավելի դժկամությամբ կհրաժարվի, քան բալթյան երկրներից:

-Ինչու՞:

-Երբ Ռուսաստանը ժողովրդավարական դառնա, միևնույնն է, կհարի ընդհանուր շուկային: Նա կարող է այսօր հաշտվել Արևելյան Եվրոպայի, նույնիսկ բալթյան հանրապետությունների «կորստյան» հետ, քանի որ ապագայում նրանց կվերագտնի մի հանրության մեջ, որտեղ կկարողանա որոշակի վերահսկողություն սահմանել իր նախկին վասալների նկատմամբ: Մինչդեռ Կովկասում ոչ ոք չի կարող կանխորոշել, թե ինչպիսի դաշինքներ կկնքեն երեք հանրապետությունները ապագայում: Բայց սրանք էլ վերջիվերջո կարող են պահպանվել ռուսական ազդեցության ոլորտներում: Խնդիրը միանգամայն այլ է Միջին Ասիայում: Նրա ազատագրումը անխուսափելիորեն կհանգեցնի կապերի խզման և նոր դաշինքների հաստատման այն քաղաքական հանրության հետ, որին այս հանրապետությունները կապված են լեզվամշակութային և կրոնական ընդհանրություններով: Այս կորուստը Ռուսաստանի համար անդառնալի կլինի, հետևաբար ամենից քիչ սա կհանդուրժի: Ուրեմն սպասենք նոր ազգամիջյան ընդհարումների տարածաշրջանում...

-Հնարավո՞ր է, որ Սիբիրն անջատվի Ռուսաստանից:

-Դրան չեմ հավատում, չնայած 1918-ից ի վեր նման շարժում չկա: Տնտեսական տեսանկյունից Սիբիրի, ինչպես և մեզ բոլորիս համար չափազանց շահավետ կլիներ անջատվել Ռուսաստանից, ասենք, մոսկվաբնակներից: Ես ուսանել եմ Նովոսիբիրսկի ակադեմիական քաղաքում և շատ եմ սիրում սիբիրցիներին: Գուցե սա սուբյեկտիվ վերաբերմունք է, բայց Սիբիրում չունես քաոսի, խառնաշփոթության այն զգացողությունը, որ կա Մոսկվայում: Մարդիկ այստեղ շատ ավելի խաղաղ են, սիրալիր, ազնիվ, քաղաքավարի, պարկեշտ ու մեծահոգի: Եվ շատ ավելի աշխատասեր:

-Չե՞ն խմում:

-Դե, Սիբիրում ինչպե՞ս չխմես: Բայց, անտարակույս, նրանք շատ ավելի նախածեռնող ու հնարամիտ են և շատ կուզենային սեփական տնտեսություն ստեղծել, բայց, ըստ իս, այդպիսի անջատման համար անհրաժեշտ պայմաններ չկան:

-Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է Ռուսաստանի ժողովրդավարական շարժման ապագան:

-Այն նպաստավոր պայմաններում է: Սակայն այդ շարժումը ևս երկընտրանքի առջև է: Եթե իշխանությունը արագ վերցվի, այն նույնքան արագ էլ կարող է կորսվել: Լեհաստանում «Համերաշխությունը» մեծ վստահություն է վայելում, որը նրան գործելու ազատություն է տալիս: Ռուսաստանում այդպես չէ: Առաջին իսկ անհրաժեշտության դեպքում (իսկ այդպիսիք անպատճառ կլինեն) հասարակական կարծիքը կհրաժարվի նրանցից:

-Դուք շատ լավատես չեք:

-Ոչ: Չեմ ասում, թե ժողովրդավարների ձախողումը անհրաժեշտության հետևանք կլինի: Բայց տնտեսությունը քայքայված է, և որպեսզի այն բարելավվի, նախ անհրաժեշտ է հիմնովին քանդել: Այդ դեպքում դրան հաջորդող կենսամակարդակի կտրուկ անկման համար ժողովուրդը անպատճառ կմեղադրի ժողովրդավարներին: Բոլոր դեպքերում միտումն անդունդը գլորվելն է: Այսօր ավելի ձեռնտու է լինել ընդդիմադիր ուժ, քան իշխանություն ունենալ: Նույն բանն է նաև Հայաստանում. մեծ զոհաբերություն է իշխանությունն այսօր վերցնելը: Դրանով մենք մեզ ատելի ենք դարձնում ժողովրդի աչքում 2-3 տարի: Միակ մխիթարությունն այն է, որ մի քանի տարի անց ազգային հերոս կդիտվենք: Միշտ էլ եղել են մարդիկ, որոնք սևագործ են եղել, և եղել են այնպիսիք, ովքեր ուրիշի ձեռքով շագանակ են հանել կրակից: Ինչևէ, ո՞վ գիտե, գուցե ժողովրդավարներն այնքան ճարպիկ գտնվեն, որ տնտեսության փլուզման պահին կարողանան ցատկել անդունդի վրայից...

-Դուք հույս չե՞ք դնում արտասահմանի օգնության վրա:

-Դեռ ոչ մի տեղ բարեգործության շնորհիվ քայքայված տնտեսությունը ոտքի չի կանգնել: Արևմուտքի միջոցները երբեք չեն հերիքի վիճակը կարգավորելու համար: Արևմուտքը կարող է

օգնել, բայց հիմնական աշխատանքը ժողովուրդը պիտի անի: Իսկ դա պահանջում է կոլեկտիվ հոգեբանության և ներքին կառուցվածքների կերպափոխում:

-Ի՞նչ կասեիք Մարշալի ծրագրերի մասին:

-Ինչքան էլ ավերիչ էր Երկրորդ համաշխարհային պատերազմը, այն չէր կարող դարերով արմատացած կառուցվածքները հիմնովին ավերել: Մինչդեռ ԽՍՀՄ-ում այսօր վերականգնելու բան չկա: Ի՞նչ գոյություն ուներ: Քիչ բան: Ի՞նչ ավերվեց: Ամեն ինչ, ներառյալ մարդկանց հոգեբանությունը, նրանց հավատը: Այսօր գյուղացուն հող են առաջարկում, նա հրաժարվում է, քանզի վախենում է, որ հազիվ տված՝ նորից ձեռքից կխլեն: Մասնավոր սեկտորում մարդիկ այսօր այնպիսի գործեր են ձեռնարկում, որոնք կարճ ժամանակում մեծ եկամուտ կբերեն: Ոչ ոք ռիսկ չի անում երկարաժամկետ ներդրումներ կատարել:

-Ի՞նչ կլինի, եթե Ռուսաստանի ժողովրդավարները ձախողվեն:

-Անտարակույս կուժեղանա շովինիստական հոսանքը: Այն բաղկացած է երկու ենթախմբից. ա) բոլշևիկ շովինիստներ, որոնց գաղափարախոսությունը նպաստեց կայսրության պահպանմանը, բ) միապետականներ, որոնք կողմնակից են ցարական կայսերապետության հին ու բարի մեթոդների վերադարձին:

-Ինչպիսի՞ն կլինեն հետևանքները մյուս ժողովուրդների համար:

-Ռուսական շովինիզմի զարթոնքը շատ ծանր կնստի ժողովուրդների վրա: Հետևաբար պետք է օգտվել դրա ժամանակավոր մեղմացումից և նախապատրաստվել անկախությանը: Այժմ ևեթ պետք է ջանալ դուրս գալ Միության կազմից: Համոզված եմ, որ միայն ԽՍՀՄ-ից անջատվելու սահմանադրական օրենքին հետևելը կօգնի Հայաստանին, բայց պետք է արագ գործել, որովհետև կշեռքի նժարը շուտով կթեքվի դեպի խստացում: Կայսերապետական գաղափարն այնքան խորն է նստած ռուսական հոգեբանության մեջ, որ «ինքնամեկուսանալու» այս միտումները երկար չեն տևի: Բավական է տնտեսականի թեթև բարելավում, որպեսզի ռուսների աչքում վերականգնվի կայսրության ողջ հմայքը: Այդ ժամանակ տնտեսությունը կքայքայվի, թե կվերականգնվի, միևնույն է, մեր ճանապարհները դեպի անկախություն վերստին կփակվեն:

-Ձեր կարծիքով, Ռուսաստանի տնտեսական վիճակը կբարելավվի՞:

-Իհարկե: Մի՞թե Ռուսաստանը կարող է վերջնականապես ավերվել: Մեծաքանակ ժողովուրդ, որն ունի անսահման տարածքներ, հարուստ պաշարներ, նշանակալի մարդկային պոտենցիալ ... Վաղ թե ուշ պետությունը կվերակառուցվի: Հարցը միայն այն է, թե ներկա տարածքի ո՞ր մասի վրա: Թվում է, թե ապրում ենք բացառիկ մի ժամանակաշրջանում, որը գուցե այլևս չկրկնվի, երբ ժողովուրդները կարող են անջատվել Ռուսաստանից՝ առանց խոշոր բախումների:

-Ինչպիսի՞ն է ծայրամասային հանրապետություններում ապրող ռուսների վերաբերմունքը:

-Ինչպես բոլոր ոչ բնիկ ազգությունների ներկայացուցիչները, ռուսները ևս սկսել են վերադառնալ հայրենիք: Այս արտահոսքը հատկապես զգալի դարձավ ԽՍՀՄ-ից դուրս գալու օրենքի ընդունումից հետո: Ըստ այդ օրենքի, անկախությունը ձեռք է բերվում հանրաքվեի միջոցով, բայց այն շրջանները, որոնք կքվեարկեն դրա դեմ, կմնան ԽՍՀՄ-ի կազմում՝ որպես կղզյակներ նորաստեղծ պետությունների մեջ, որն էլ, անշուշտ, կստիպի հանրապետություններին՝ դիմելու հայրենիքը այլազգիներից «մաքրելու» քաղաքականությանը: Մասնավորապես Միջին Ասիան արագ տեմպով լքում են ռուսները, հրեաները, հայերը: Չնայած մենք դեռ չենք կարողանում տեղավորել Ադրբեջանից բռնագաղթված մեր 300 հազար հայրենակիցներին:

-Հայաստանում հակառուսական տրամադրություններ կա՞ն:

-Ոչ, ռուսասիրությունը մեզ մոտ նույնիսկ շատ ուժեղ է: Հայոց համազգային շարժումը սերտ կապեր է պահպանում Ռուսաստանի տարբեր ժողովրդավարական կուսակցությունների հետ: Նրանք մեր դաշնակիցներն են, քանի որ իրենց ծրագրային դրույթներում նախատեսել են ժողովուրդների ազատագրումը: Իհարկե, այդ դրույթը Սախարովի նման մարդկանց համար զուտ մարդասիրությունից է բխում, մյուսների մոտ ավելի սառը դատողության արգասիք է: Վերջինները ներկայումս Ռուսաստանում ամենամեծ հեղինակությունն են վայելում: Այդ են ապացուցում ընտրությունները: Չգիտեմ՝ ո՞ր ուղղությամբ կընթանան հետագայում այս ժողովրդավարները: Եթե Ռուսաստանն ընտրի կայսերապետական ուղին, կդառնա մեր

թշնամին: Եթե ժողովրդավար դառնա, մեր բնական դաշնակիցը կլինի: Եվ այն քենը, որ ոմանք ունեն մեզ իշխողների նկատմամբ, շուտով մոռացության կմատնվի: Բայց պիտի ասեմ, որ կան ժողովուրդներ, որոնք «բարեկամական» նույնպիսի զգացումներ չեն տածում ռուսների նկատմամբ:

-Օրինակ՝ Միջին Ասիայի ժողովուրդները:

-Այդքան հեռու չգնանք: Ես ապշած էի, թե որոշ ուկրաինացի ղեկավարներ ինչ թշնամանք ունեն ռուսների նկատմամբ: Ամենայն հավանականությամբ Արևմտյան Ուկրաինայի խիստ սուր անջատողական միտումը խաղաղ ելք չի կարող ունենալ:

-Մոսկվան ի՞նչ կարող է անել, որպեսզի արգելի Ուկրաինայի անջատումը, քանի որ դա աղետալի կլինի ողջ Միության համար:

-Ռուս որոշ պատգամավորներ առաջ են քաշում «Ռուսաստան-Ուկրաինա-Բելոռուսիա համադաշնակցության» գաղափարը, այսինքն՝ իբրև դաշինքի ամենաթույլ, ազատ տեսակ: Բայց փարիսեցիությունն ինձ համար ակնհայտ է, քանի որ պատմությունն ապացուցում է, որ ի վերջո բոլոր համադաշնակցային հիմունքներով ստեղծված երկրները վերածվում են ունիտար պետության: Ասենք, Միացյալ Նահանգները, Շվեյցարիան, Գերմանիան: Ինչ վերաբերում է Խորհրդային Միությանը, ապա դեռ որոշակի ծրագիր գոյություն չունի, բայց միջռեգիոնալ պատգամավորական խմբի որոշ անդամները առաջարկում են մի մոդել, որը ոչ դաշնակցային է, ոչ համադաշնակցային, որտեղ յուրաքանչյուր հանրապետություն կունենա յուրահատուկ կարգավիճակ և իրավունքներ: Ես բավականին թերահավատ եմ նման հիբրիդ կառուցվածքի նկատմամբ:

-Շատ են խոսում ռուսական ազգային զգացումների զարթոնքի մասին: Դուք ի՞նչ կասեիք:

-Դա շատ բնական է: Բոլշևիզմը կարողացավ պահպանել կայսրությունը՝ որպես պետություն, բայց այդ պետությունը ոչ ազգային էր, ոչ էլ ռուսական: Ինչպես մյուս ազգերը, ռուսները ևս կտրվեցին իրենց արմատներից: Եվ բնական է, որ նոր պայմաններում ռուսներն էլ իրենց իրավունքները պահանջեն: Անշուշտ, դա կարող է ծնել նաև մեզ համար խիստ վտանգավոր ծայրահեղական դրսևորումներ:

-Այդ դեպքում պարադոքսալ է թվում մամուլում վերջերս անընդհատ կրկնվող այն միտքը, թե ռուսների ազգային հպարտության զգացումը անկում է ապրում: Ռուսների տասից մեկն է հպարտանում իր երկրով: Ինչպե՞ս եք դա բացատրում:

-Իրական անցյալի մասին լրատվության հեղեղը շատ հանկարծակի թափվեց ռուսների գլխին: Այն, ինչ Մոսկվայում ուսանելու տարիներին ես և իմ ռուս ընկերները վաղուց գիտեինք, քանի որ արգելված գրքեր էինք կարդում, տասնյակ միլիոնավոր մարդիկ անհաղորդ էին: Նրանք ցնցված էին այդ բացահայտումներից, ամաչում էին, շփոթված էին: Բայց վաղ թե ուշ ռուսները կվերագտնեն իրենց հպարտությունը, քանի որ առանց դրա՝ ոչ մի ազգ չի կարող գոյատևել: Իմ կարծիքով, դա անցողիկ երևույթ է: Ինձ թվում է՝ այսօր ռուսներին ամենից շատ մտահոգում է կենսամակարդակի անկումը, շատ ավելի, քան, ասենք, հայերին: Այս պահին մենք շատ ավելի ծանր պայմաններում ենք, քան ռուսները. երկրաշարժ, շրջափակում, 300 հազար բռնագաղթվածներ և այլն: Բայց Ղարաբաղի հիմնահարցը, պատերազմի վտանգը, նոր գծագրվող հեռանկարները թույլ չեն տալիս մեր ուշադրությունը սևեռել կենսամակարդակի վրա: Ռուսաստանում մտավորականներ կան, որոնք մտահոգված են ազգի ապագայով, բայց մեծամասնությունն այսպես է խորհում. «Մենք շատ երկար պայքարել ենք, տառապել, զոհողություններ արել, իսկ այսօր ուտելու բան չունենք»: Այդ պատճառով էլ այսօր ամենից շատ ժողովրդայնություն է վայելում նա, ով խոստանում է մարդկանց կերակրել:

-Իսկ ու՞ր մնացին «միասնական» առաքելությունները:

-Դրանց ակունքները պետք է փնտրել ռուս գյուղացիական համայնք հասկացողության մեջ: Ռուսների հոգեբանությունը համայնքային է: Հայերն ավելի անհատապաշտ են, այդ պատճառով էլ անհամբերությամբ են սպասում մասնավոր սեփականությանը անցնելուն, որպեսզի իրենց սեփական գործը հիմնեն: Եթե հայի հարևանը հարուստ է, նա ձգտում է նրանից ավելի հարուստ դառնալ: Մինչդեռ, եթե ռուսը հարստանում է, մյուսները ձգտում են, որ նա աղքատանա և վերադառնա իրենց շարքերը: Իմ համեմատությունը կոպիտ է, բայց վիրավորական շեշտադրում չունի ռուս ժողովրդի հանդեպ: Նրանց հոգեբանությունն է այդպիսին:

-Գուցե դա կոմունիզմի՞ արդյունքն է:

-Ավելի շուտ՝ հակառակը: Կոմունիզմի ուղու ընտրությունը գուցե հենց այդ համայնքային հոգեբանությունից է բխում: Ռուսներն ու հայերը գրեթե նույն ժամանակահատվածում են կրել կոմունիստական գաղափարախոսության լուծը., միևչդեռ մասնավոր սեփականության ձգտումը հայերի մեջ շատ ավելի ուժեղ է: Այստեղ կարևոր է հաշվի առնել, այսպես ասած, «ազգային հանճարի» գործոնը: Պատմության տարբեր շրջաններում տարբեր «առևտրական ժողովուրդներ» են եղել՝ փյունիկեցիներ, հույներ, հրեաներ: Հայերը դրանց թվում են: Նրանք այդ բնագավառում շատ արդյունավետ են գործել: Մասնավոր սեփականության, առևտրի ավանդույթները, տված խոսքի նկատմամբ հարգանքը դարերով ամրապնդված է նրանց մեջ: Անշուշտ, դա իր հետքն է թողնում ընդհանուր հոգեբանության վրա: Հայերը պատրաստ են, նրանք շատ ավելի դյուրությամբ կհարմարվեն նոր պայմաններին, քան ռուսները:

-Ե՞րբ եք նախատեսում անցնել նոր տնտեսակարգին:

-Հայաստանի նորընտիր խորհրդարանի հենց առաջին նստաշրջանի ընթացքում: Իհարկե, մենք չենք մոռանում նաև Ղարաբաղի խնդիրը՝ միաժամանակ գիտակցելով, որ այդ հարցում մենք ոչ մեկի վրա հույս չենք կարող դնել: Բայց լավ կլիներ, որ Արևմուտքը մի քիչ ավելի հետաքրքրվեր այդ հարցով, դա մի հիանալի բարոմետր է ամբողջ ԽՍՀՄ-ի քաղաքական զարգացման միտումները բացահայտելու համար:

-Ինչու՞:

-Ղարաբաղի հարցը մի յուրահատուկ լաբորատորիա է, որտեղ փորձարկվում են ժողովրդավարական և հետադիմական ուժերը: Այն ամենը, ինչ կատարվում է ԽՍՀՄ-ում, նախ իր փորձաշրջանն է անցնում այնտեղ. վերակառուցման շրջանի առաջին խոշոր գործադուլները, բանակի օգտագործումը որպես միջամտող ուժ, առաջին կոտորածը (Սումգայիթ), որն անմիջապես չդատապարտվեց և հետագայում կրկնվեց Ֆերգանայում, Բաքվում, այժմ էլ Կիրգիզիայում, առաջին իսկապես ժողովրդավարական ընտրությունները (երկու նախարար՝ ներքին և արտաքին գործոց, «Ղարաբաղ» կոմիտեի երկու թեկնածուների հետ ընտրապայքարում պարտվեցին 1988թ. հոկտեմբերի մեծամասնական ընտրությունների ժամանակ), ժողովրդի վրա բանակի բացած առաջին կրակը («Զվարթնոց» օդանավակայան, 1988թ. հուլիս), որը նույն սցենարով կրկնվեց Թիֆլիսում, շրջափակումը, որը մեզ մոտ կատարելության հասցվելուց հետո տեղափոխվեց Լիտվա: Կարելի է ասել, որ ամեն մի նոր միջոցառում նախ փորձաշրջան է անցնում Ղարաբաղում, հետո ստանում ավելի լայնամասշտաբ կիրառություն: Արևմուտքի գործն է, թող մտածի, որ չարժե Ղարաբաղի համար նեղը գցել Գորբաչովին: Բայց թող նա գիտակցի, որ Ղարաբաղում կիրառված մեթոդներն իրենց նպատակին են հասնում այսօր, իսկ վաղը կամ Գորբաչովը, կամ բանակը, կամ էլ մի երրորդ անձ այդ նույն մեթոդները կկիրառի, բայց արդեն այլուր և այն էլ հազարապատիկ հզորությամբ:

Հարցազրույցը՝ Ուրսուլա Գոթիեի
«Նուվել Օբսերվատոր» (Փարիզ),1990, նոյեմբեր
Հարցազրույցը տեղի է ունեցել 1990թ. մայիսին,
Երևանում

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ
Վ. Մանուկյանի ծրագիրը

Յուրաքանչյուր ազգ ձգտում է հզորանալ, ընդլայնել իր ազդեցության ոլորտը: Դարից դար փոխվում են հզորության չափանիշները, ազդեցության ոլորտն ընդլայնելու ձևերը, բայց մի պարագա մնում է անփոփոխ. բոլոր ժամանակներում և բոլոր ազգերի համար հզորանալու առաջին անհրաժեշտ պայմանն է անկախ պետություն ունենալը:

Այժմ քաղաքական իրավիճակը հնարավորություն է տալիս մեզ սկսել այն, ինչի համար մենք պայքարում էինք, այն է՝ անկախ պետականությունը վերականգնելու գործընթացը:

Վերականգնելով մեր պետականությունը՝ մենք առաջին կարևոր քայլը կկատարենք մեր ազգի դարավոր իղձերի իրականացման ուղղությամբ: Այժմ մեր առջև ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են ամբողջ աշխարհի հայության

համախմբվածությունը և համագործակցությունը, մեզանից յուրաքանչյուրի պատասխանատվության զգացման դրսևորումը: Անկախության վերականգնման ճանապարհին հաջողվեց կտրել մեզ կենտրոնի հետ կապող ամենակարևոր թելերից մեկը՝ այժմ Հայաստանի ղեկավարությունը ենթակա չէ Մոսկվային, կտրվեց կոմունիստական կուսակցության կենտրոնից դեպի մեզ ուղղված շոշափուկը, և ես համոզված եմ, որ հայ կոմունիստները իրենց մեջ այնքան ուժ և խոհեմություն կգտնեն, որ իրենց կուսակցությունն իրենք կանջատեն Մոսկվայից և կդարձնեն ազգային: Կտրվեց մի կարևոր թել, մեր Գերագույն խորհուրդը կկտրի ևս բազմաթիվ թելեր, որոնք մեզ կապում են կենտրոնի հետ, շատ թելեր էլ կտրվելու են իրենք իրենց: Բայց մեր հետագա քաղաքական քայլերը էապես կախված են մեր տնտեսական համակարգից: Մի կողմից՝ մենք ժառանգում ենք քայքայված, անդունդի եզրին գտնվող պետություն, մյուս կողմից՝ կոչված ենք ոչ միայն վերականգնելու այն, այլև ստեղծելու անկախ պետությանը բնորոշ տնտեսական կառուցվածքներ: Լրիվ տնտեսական անկախություն, իհարկե, գոյություն չունի, նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգները չի կարելի անվանել լրիվ անկախ տնտեսություն ունեցող պետություն. նա բազմաթիվ թելերով կապված է աշխարհի բոլոր պետությունների հետ և տնտեսապես կախված է այդ կապերից, միևնույն ժամանակ որոշումներ ընդունելիս նա ևս լրիվ անկախ չէ, պետք է հաշվի առնի մրցակիցների հնարավոր պատասխան քայլերը: Չկա լրիվ տնտեսական անկախություն, բայց կան տնտեսական անկախության աստիճաններ: Այդ տեսակետից մենք այժմ գրեթե զրոյի վրա ենք:

Եթե մարդը տնտեսապես կապված է միայն մեկի հետ, այն էլ՝ իրենից հզորի, ապա նա ստրկական վիճակում է, իսկ եթե կապված է հարյուրավորների հետ, ապա նա ազատ մարդ է: Տնտեսության, ինչպես և քաղաքականության մեջ գործում է նույն օրենքը. որքան շատ գործընկերներ ունենաս, այնքան ավելի շատ մանևրելու հնարավորություն կընձեռվի, այնքան ավելի անկախ կլինես: Հետևաբար անկախ պետություն ստեղծելու գործընթացի ժամանակ պետք է բազմաթիվ նոր տնտեսական կապեր ստեղծել այլ երկրների հետ: Բայց այդպիսի կապեր ստեղծելու համար անհրաժեշտ է արտադրել անպիսի ապրանքներ, որոնք հնարավոր է հանել միջազգային շուկա: Խոսքը միայն ապրանքի որակի մասին չէ, ես նկատի ունեմ այն հանգամանքը, որ այսօր մենք արտադրում ենք շուրջ 3,5 մլն անվանատեսակի արտադրանք, այսինքն՝ արտադրում ենք ամեն ինչ, միաժամանակ՝ ոչինչ, հիմնականում դետալներ, կիսաֆաբրիկատներ, որոնցով համաշխարհային շուկա դուրս չես գա: Այն տնտեսական կապերը, որոնք մեզ կապում են կենտրոնի և մյուս հանրապետությունների հետ, ոչ թե նպաստում են մեր տնտեսության հզորացմանը, այլ ծառայում են մեզ ստրկության մեջ պահելուն:

Այժմ անդրադառնանք մեր քայքայված տնտեսությունը վերականգնելու հնարավորության հարցին: Խորհրդային Միությունն իր կազմավորման սկզբից, հրաժարվելով ազատ, ինքնաղեկավարվող տնտեսությունից, ստեղծեց ամբողջությամբ կենտրոնից ղեկավարվող պլանային սոցիալիստական տնտեսական համակարգ՝ պնդելով, որ այդպիսի կառուցվածքը ապահովում է երկու կարևոր խնդիրների լուծում. առաջին՝ տնտեսական ավելի արագ զարգացում, և երկրորդ՝ սոցիալական հավասարություն և արդարություն: Չիրականացավ ո՛չ առաջինը, ո՛չ երկրորդը: Ինչ մասնավորապես վերաբերում է սոցիալական արդարությանը, ապա բերեմ միայն մի ցուցանիշ: Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության՝ ընդհանուր թվի 20 տոկոս ամենահարուստները 20 տոկոս ամենաաղքատներից 3 անգամ ավելի բարեկեցիկ են ապրում: Խորհրդային Միությունում այդ ցուցանիշը հավասար է 6-ի, իսկ Հայաստանում՝ 9-ի: Եվ դա համատարած աղքատության պայմաններում: Այս երևույթի դեմ պետք է, իհարկե, պայքարել, սակայն նաև պետք է հիշել բոլշևիկյան հեղափոխության դասերը՝ կապված էքսպրոպրիացիայի երևույթի հետ: Այդ իսկ պատճառով ճիշտ կլինի ընթանալ հակառակ ուղղությամբ: Պետք է ոչ թե մարդկանց հարկադրաբար դնել տնտեսական սահմանափակումների մեջ, այլ իրենց կապիտալը ներդնելու և դրա հետ կապված եկամուտներ վաստակելու ազատություն տալ: Պետք է մշակել տնտեսական ու իրավական պաշտպանության մեխանիզմներ, որոնք թույլ կտան, որ մարդիկ իրենց ունեցած միջոցները դնեն շրջանառության մեջ:

Սոցիալական արդարություն հնարավոր չեղավ ստեղծել, հնարավոր չեղավ ապահովել նաև տնտեսության նորմալ զարգացում: Այժմ սոցիալիստական տնտեսությունը սկսել է մեծ

արագությամբ քայքայվել, այն փրկելու բոլոր ջանքերը ապարդյուն են անցնելու: Կենտրոնի փորձը՝ ԽՍՀՄ ամբողջ տարածքում միաժամանակ իրագործել դանդաղ տնտեսական վերափոխումների ծրագիր, սոցիալիստական տնտեսությունից անցնել մասնավոր սեփականության և շուկայական հարաբերությունների, նույնպես արդյունքի չբերեց:

Հզորացան կենտրոնախույս ուժերը, և հիմա շատ հանրապետություններ փորձում են ինքնուրույն դուրս գալ տնտեսական ծանր վիճակից, իրագործել ինքնուրույն ծրագրեր: Այժմ հանրապետություններն ավելի ու ավելի մեծ արագությամբ են հեռանում կենտրոնից՝ շարունակելով, այնուամենայնիվ, կենտրոնի և միմյանց հետ կապված մնալ ընդհանուր դրամով և նախորդ տասնամյակների ընթացքում սոցիալիստական տնտեսության շնորհիվ ստեղծված որոշ ավանդական և առայժմ դեռ անհրաժեշտ, բայց հետագայում գրեթե անիմաստ դառնալու դատապարտված տնտեսական կապերով: Սկսվում է մրցավազք հանրապետությունների միջև: Քայքայվող սոցիալիստական տնտեսությանը գալիս է փոխարինելու մի տնտեսություն, որի հիմքում ընկած են մասնավոր սեփականություն, բաժնետիրական ընկերություններ, ազատ շուկա: Առաջ կընկնեն այն հանրապետությունները, որոնք ավելի շուտ կկողմնորոշվեն, որոնք ունեն ավելի մեծ բնական հարստություններ, ավելի լավ գիտատեխնիկական և բանվորական ուժ, ավելի ձեռներեց բնակչություն: Սոցիալիստական տնտեսությամբ բնորոշվող կապերը կխզվեն, կառաջանան նորերը, եթե մենք հետ ընկնենք այդ մրցավազքից, ապա ինչ-որ ժամանակից հետո չենք ստանա վառելանյութ, մթերք, հումք, և դա ոչ թե անկախություն հռչակելու, այլ բնական տնտեսական պատճառներով: Հետ մնալու դեպքում այն ապրանքները, որոնք մենք մինչև այժմ վաճառում էինք Ռուսաստանին և դրա փոխարեն ստանում մթերք, վառելանյութ և այլն, ուղղակի պետք չեն լինի Ռուսաստանին, կամ նա այդ նույն ապրանքները՝ ավելի բարձրորակ, կկարողանա գնել այլ աղբյուրներից: Այդ տեսակետից մեր տնտեսությունը շատ խոցելի է:

Այսպիսի դաժան պայմաններում մենք պետք է սկսենք մեր մրցավազքը՝ աշխատելով քանդվող հին սոցիալիստական տնտեսությունը որքան կարելի է շուտ փոխարինել նոր տնտեսությամբ, որի հիմքում ընկած կլինի մասնավոր սեփականությունը: Դժվարին ճանապարհ պետք է անցնել: Մի կողմից՝ անհրաժեշտ է արագացնել պետական սեփականությունը մասնավոր դարձնելու գործընթացը, մյուս կողմից՝ գոնե ինչ-որ չափով միաժամանակ պետք է պահել ապագա չունեցող սոցիալիստական տնտեսության մի մասը՝ գործազրկության կտրուկ աճը կանխելու և տնտեսության համար անհրաժեշտ հումք ստանալու նպատակով: Նոր տնտեսությունը զարգացնելու գործում մեծ նշանակություն կունենա ինքնուրույն վարկային քաղաքականության մշակումը, բայց դա կարող է անհնարին դառնալ կենտրոնական իշխանությունների դիմադրության դեպքում: Կենտրոնը կաշխատի թույլ չտալ, որ մենք առաջ ընկնենք, և նա այս հարցում մեծ առավելություն ունի, քանի որ մեր զարգացման հիմքում ընկած է իր դրամը: Մեր տնտեսությունը զարգացնելու և ինքնուրույն դարձնելու գործում շատ մեծ նշանակություն կունենա այն հանգամանքը, թե որքանով կկարողանանք գտնել արտասահմանյան ֆինանսական աղբյուրներ:

Այս պայմաններում հնարավոր չէ մոտ ապագայում նկատելիորեն բարձրացնել ժողովրդի կենսամակարդակը. միակ բանը, որ ես տեսնում եմ, իրավիճակը ինչ-որ չափով կայունացնելու հնարավորությունն է և մի քանի տարվա ընթացքում այն մեխանիզմների ստեղծումը, որոնք հնարավորություն կտան դուրս հանել մեր տնտեսությունը այս ճահճից: **Բայց ոչ մի տնտեսական, քաղաքական հարց լուծել հնարավոր չի լինի, եթե Հայաստանում չապահովվի երկու կարևորագույն սկզբունքների առկայությունը՝ լայն ժողովրդավարություն և կարգուկանոն:** Ոչ մի բան մեզ այնքան չի հեռացնում մեր երազանքից՝ անկախ պետության վերականգնումից, ոչ մի բան այնքան չի խանգարում մեր տնտեսության զարգացմանը, որքան անօրինական գործող զինված ջոկատների ստեղծած ապակայունացումը: Այս պայմաններում ոչ ոք ոչ մի կոպեկ չի ներդնի Հայաստանի տնտեսության մեջ: Պետք է հատուկ օրենք ընդունել ներքին գործերի նախարարության վերաբերյալ, հանել այն Մոսկվայի ենթակայությունից՝ ենթարկելով միայն մեր կառավարությանը, վերակառուցել, դարձնել երեք մասերից բաղկացած՝ ոստիկանությունից, քննչական կամ հետախուզական բաժնից և հանրապետության պաշտպանության բաժնից: Երրորդ բաժնում պետք է ընդգրկել բոլոր այն առողջ զինված ջոկատները, որոնց նպատակը ոչ թե թալանն է, այլ հայրենիքին ծառայելը:

Դրա հիման վրա հետագայում կստեղծվի Անկախ Հայաստանի բանակը: Իսկ պետական կառուցվածքներից դուրս գոյություն ունեցող ամեն մի զինված կազմավորում պետք է ընդունել որպես ավազակախումբ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Կուզենայի ավելացնել ևս մի բան, որը կարևոր եմ համարում: Մեր բոլոր ջանքերը զուր կանցնեն, չի օգնի ոչ մի հերոսություն, ոչ մի հնարք, չի հաջողվի վերականգնել անկախ պետականությունը, լուծել Արցախի հարցը, զարգացնել տնտեսությունը, եթե այդ ազգային խնդիրների շուրջը չհամախմբվի ամբողջ հայությունը՝ լցված մի զգացումով, որը ես կանվանեի առողջ ազգայնականություն:

Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ իր հուշերում Ու.Չերչիլը, գրելով հայերի մասին և հիշատակելով 1915թ. ցեղասպանությունն ու 1920թ. հանրապետության վերացումը, նշում է, որ, իր կարծիքով, հայերի պես հին և նախկինում հզոր ազգն ընդմիշտ դուրս եկավ համաշխարհային քաղաքական թատերաբեմից: Բայց մենք վերադառնում ենք, վերադառնում ենք լի վճռականությամբ՝ վերականգնելու մեր նախկին փայլն ու հզորությունը:

Վարչապետ Վ. Մանուկյանի ելույթը
1990 թ., օգոստոսի 13-ին ՀՀ ԳԽ-ում
«Հայք» 17 օգոստոսի, 1990 թ.

ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇԻ ՀՈՒՅՍԻ

Ինչ պայմաններում է գտնվում այս հսկա պետությունը՝ ԽՍՀՄ-ը: Քայքայումը շարունակվում է: Ե՛վ տնտեսական, և՛ քաղաքական կառուցվածքի փլուզումը շարունակվում է: Եվ վերջը չի երևում: Այդ վիճակը հարվածում է մեզ, որովհետև մեր տնտեսությունը էապես կախված է միութենական տնտեսությունից, և ամեն մի փոփոխություն, խոչընդոտ մեծ դժվարություններ է առաջացնում Հայաստանում: Քայքայմանը զուգընթաց քննարկվում են տարբերակներ երկիրն այս վիճակից դուրս բերելու համար: Առաջարկվում են տարբեր ծրագրեր. կա Շատալինի ծրագիրը, կա Ռիժկովի ծրագիրը: Ժամանակ առ ժամանակ Մոսկվա են հրավիրվում հանրապետությունների նախարարների խորհուրդների նախագահները: Նման փոքր շրջանակներում քննարկվում են այս վիճակից դուրս գալու հնարավորությունները. առայժմ այդպիսի հնարավորություն չի երևում: Իսկ հիշյալ երկու ծրագրերը հիմնականում ինչո՞վ են իրարից տարբերվում: Ռիժկովի ծրագիրը (որի հեղինակը Աբալկինն է), ենթադրում է՝ կա մի միասնական պետություն, որը գտնվում է ծանր վիճակում, և այդ վիճակից դուրս բերելու համար պետք է անցնել տնտեսության նոր՝ շուկայական մեխանիզմների ու ողջ երկրի տարածքում իրականացնել որոշ բարեփոխումներ: Շատալինի ծրագիրը փոքր-ինչ տարբերվում է: Նա գտնում է, որ գոյություն ունեն ինքնավար, ինքնիշխան հանրապետություններ, որոնք, կնքելով պայմանագրեր, ձևավորում են միասնական տնտեսական համակարգ, որպեսզի ստեղծեն նոր տնտեսական միջավայր: Նախնական մոտեցումներն այս երկու նախագծերի առնչությամբ տարբեր են: Նախագծերի մեջ կան տարբերություններ: Հիմնական տարբերությունն ազատ փողը տնօրինելու միջոցն է: Ժողովրդի ձեռքին հսկայական գումար կա: Եվ երբ անցնենք շուկայական մեխանիզմին, ինֆլյացիան սարսափելի մեծ կլինի: Ես խոսում եմ հիմնական տարբերությունների մասին: Երկու ծրագրերն էլ, եթե իրականացվեն, Խորհրդային Միությունը կդառնա մի պետություն, որը նման կլինի Ցարական Ռուսաստանին: Այսինքն՝ կլինի մի տնտեսություն, ամբողջական մի շուկա, որը կթելադրի իր օրենքները, և ինքնուրույնության այն աստիճանը, որն այժմ տրվում է ինքնաբերաբար, այս կամ այն ձևով կվերանա: Որպեսզի երկիրը միասնական շուկա ունենա, պետք պաշտպանված լինի միասնական պարիսպով: Խոսքն առևտրի մասին է: Եթե մի հատվածում պարիսպը ցածր լինի (նկատի ունեմ մաքսատները և այլ ծառայություններ), ամեն ինչ կարող է այդտեղով հոսել: Եվ որքան էլ հաճելի բառեր գրված լինեն նախագծերում, որքան էլ մեծ ազատություններ տրվեն, պետք է գիտակցել, որ այդ պարագայում տեղական իշխանությունները կկատարեն նույն դերը, ինչ Ցարական Ռուսաստանում: Այսինքն՝ որոշ արտոնություններ կունենան և ընդամենը ոստիկանական գործառույթ կկատարեն:

Այսպիսով երկու ճանապարհ է սպասվում. կամ պետությունը տնտեսությունը քայքայելով կառաջանա, տնտեսական առումով շատ դժվար կացության մեջ դնելով, մեզ կմոտեցնի քաղաքական անկախությանը, կամ այդ ծրագիրը կիրականանա (որն առայժմ քիչ հավանական է), տնտեսական վիճակը կբարելավվի, բայց մենք կհեռանանք անկախությունից: Այժմ մենք այդ խաչմերուկում ենք, պետք է վճռել, հանգել քաղաքական և տնտեսական որոշումների: Դժվար է ասել՝ որքան ժամանակ է մեզ տրված այդ որոշումներն ընդունելու համար: Այս ամենը հանգեցրել են նրան, որ մենք կենտրոնից որևէ տնտեսական օգնություն ստանալու հույսն աստիճանաբար կորցնում ենք, որ մեր հայացքը պիտի շրջենք դեպի ներս և տնտեսությունը ներսից զարգացնելու համար պահպանենք բոլոր տնտեսական կապերը Խորհրդային Միության հետ, աշխատենք նոր տնտեսական կապեր ստեղծել ուրիշ երկրների հետ:

Մենք ստեղծում ենք նոր՝ արտաքին տնտեսական հարաբերությունների նախարարություն, որը մեզ հնարավորություն կտա տնտեսական կապեր հաստատել աշխարհի մյուս երկրների հետ: Երեկվա քննարկման ժամանակ առաջարկություն եղավ նոր նախարարություն ստեղծելու փոխարեն ընդլայնել արտաքին գործերի նախարարությունը, որպեսզի նա ստանձնի վերոնշյալ դերը: Դա, իհարկե, գործնականում կարելի է իրականացնել, բայց և կարող է հարուցել բարդություններ: Նշեմ միայն մեկը: Քաղաքական տեսանկյունից մենք բավական զգույշ քայլեր պետք է անենք Թուրքիայի նկատմամբ, մեզանից նուրբ քաղաքականություն է պահանջվում: Տնտեսական տեսանկյունից պիտի արագ քայլեր անենք և կապեր հաստատենք Թուրքիայի հետ: Դրա համար էլ երկու տարբեր նախարարություններ պետք է լինեն՝ տարբեր ֆունկցիաներով: Մենք արդեն Թուրքիայի որոշ ֆիրմաներից փոխանակման առաջարկություններ ենք ստացել: Նրանք մեզ կտան միս, կաշի, մենք նրանց՝ աղ, էլեկտրալամպեր: Այս առումով, պետք է ասեմ, որքան էլ զարմանալի թվա, բավականին լավ աշխարհագրական դիրք ունենք: Ես քաղաքականությունը նկատի չունեմ: Մեր հարևանների որոշ մարզեր այնպիսի վիճակում են, որ այն ապրանքը, որը մենք չենք կարողանա վաճառել Եվրոպայում, կարող ենք վաճառել նրանց: Եվ դրանից պետք է օգտվել: Ուրեմն արտաքին տնտեսական կապեր ստեղծելու համար մենք պետք է ստեղծենք նոր նախարարություն:

Ներքին զարգացումը, ինչպես գիտենք, շուկայական հարաբերությունների ստեղծումն է: Ընդ որում երկու տարբեր մոտեցում կա. մեր մոտեցումը տարբերվում է միութենականից: Խոսքը որոշ հիմնարկ-ձեռնարկություններ մասնավոր դարձնելու մասին է: Շուկա ստեղծելու հիմնական ճանապարհը, որով ուզում է գնալ Խորհրդային Միությունը, հետևյալն է. հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվներին տալ մեծ ազատություններ: Նախարարությունների դերը նվազեցնել, իսկ հիմնարկությունների դերը մեծացնել, որպեսզի նրանք ներգրավվեն շուկայական հարաբերությունների մեջ: Այսինքն՝ դա նույն սոցիալիստական տնտեսությունն է, սակայն վերափոխված: Ունեցվածքը կրկին պետական է, բայց ղեկավարվում է ոչ թե կենտրոնացված ձևով, այլ յուրաքանչյուր հիմնարկություն ինքն է մտնում շուկայական հարաբերությունների մեջ: Հավանաբար դա անխուսափելի է Ռուսաստանի համար, կարծում եմ՝ անընդունելի Հայաստանի համար:

Մենք շուկայական հարաբերությունների անցնելու մյուս ճանապարհը պետք է ընտրենք. անցնենք մասնավոր սեփականության, իսկապես վաճառենք: Այս դեպքում էլ մեր սկզբունքն այլ է: Կենտրոնն աշխատում է պետական օրենքներով ձեռնարկություններին մեծ ազատություն տալ: Իսկ մենք, կարծում եմ, պետք է գնանք հակառակ ուղղությամբ և որոշենք՝ վաճառե՞լ, թե՞ չվաճառել պետական ունեցվածքը: Տարբերություններ կարող են լինել հետագայում ընդունվելիք օրենքների և Խորհրդային Միության օրենքների միջև: Շուկա ստեղծելու համար ձեռնարկություններին ազատություն տալու կարիք կա, իսկ այնտեղ, որտեղ անհրաժեշտ է մասնավոր սեփականություն ստեղծել, կենտրոնացման: Թեև մենք ներկայացնելու ենք օրենքները, որոնք կքննարկվեն, կընդունվեն կամ չեն ընդունվի, ուզում եմ նախապես մեր աշխատանքային խմբի նկատառումներն ասել: Մասնավոր սեփականություն կդառնան հողը, փոքր հիմնարկ-ձեռնարկությունները, խոշորները կդառնան բաժնետիրական ընկերություններ: Բաժնետոմսերի 30 տոկոսը վաճառքի դուրս կբերվի ազատ շուկա, իսկ 20 տոկոսը կմնա կառավարությանը: Սա ընդունված ձև է, որը գործում է ողջ աշխարհում:

Ինչպես ասացի, մեզ բավական ծանր քաղաքական-տնտեսական վիճակ է սպասում, բայց գիտակցելով, որ մենք ապրում ենք մեր ժողովրդի համար բախտորոշ ժամանակաշրջանում, նաև պետք է հասկանանք, որ այս ընթացքում ապրողներիս յուրաքանչյուրի գործողությունը մնալու է սերունդների հիշողության մեջ: Հարցերը կարելի է լուծել այն դեպքում, երբ ողջ ժողովուրդը գիտակցաբար համախմբված լինի: Եթե ներգրավենք լավագույն մասնագետների, ստեղծենք հանձնաժողովներ և փորձենք իրականացնել ծրագրեր, իսկ ժողովուրդը միայն հանդիսատես լինի, ոչինչ չի ստացվի: Ուստի պետք է կարողանանք մեկնաբանել մեր ծրագրերը, որպեսզի ժողովուրդը համախմբված լինի այս գործում:

ՀՀ վարչապետ
Վ. Մանուկյանի ելույթը
ՀՀ ԳԽ-ում, 1990թ., սեպտեմբերի 13
«Հայք» 20 սեպտեմբերի 1990 թ.

ԶՈՐԱՀԱՆԴԵՄՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՆՔ[1]

Արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Վազգեն Մանուկյանը, որն իր ողջույնի խոսքն ուղղեց գնդի մարտիկներին:

«Հուզումնալից է այս պահը: Մենք ճանաչում ենք միմյանց: Շատերիդ հետ ենք հանդիպել և՛ Կոռնիձորում, և՛ Մանաշիդում, երասխավանի ճակատամարտի ժամանակ: Փոխվել են ժամանակները: Մենք ըմբոստ ուժ էինք, որ ուզում էինք պաշտպանել մեր ժողովրդին և մեր պայքարը գնում էր ոչ միայն արտաքին թշնամու դեմ, այլ նաև ներքին.

Այժմ մենք ունենք մեր հանրապետությունը: Այն դեռ լրիվ անկախ չէ: Մենք ստիպված ենք հաշվի առնել տարբեր հանգամանքներ: Բայց մենք քայլում ենք այդ ուղղությամբ. և կհասնենք քաղաքական անկախության, տնտեսական անկախության: Շատ մարդիկ, որոնք նախորդ շրջանում բուռն գործունեություն էին ծավալում, ցավոք սրտի, այսօրվա պայմաններում չեն կարողանում գտնել իրենց տեղը կյանքում: Դուք գտաք այդ տեղը, ձեր վրա վերցնելով մի շատ ծանր և հերոսական պարտականություն՝ ծառայել ժողովրդին, ծառայել նվիրվելով: Ես ողջունում եմ և կուզենայի ձեզ ներշնչել այդ բարձր ոգին, երազանքի ոգին: Երազանքի՝ որ մենք նորից պիտի դառնանք մի հզոր ազգ՝ արժանի մեր պապերին: Մենք դեռ շատ բան ունենք տալու աշխարհին և սա մեր առաջին քայլերից մեկն է, որ մեզ տանում է այդ ուղղությամբ: Մենք կունենանք հզոր պետություն, հզոր բանակ, հզոր տնտեսություն և կվերադարձնենք մեր նախնիների փայլը:

Ողջույն ձեզ»:

«Հայք», թիվ 34, 9 հոկտեմբերի, 1990թ.

ՈՒՆԵՆԱՆՔ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԸ

Վերջին մի քանի տարիների ընթացքում մենք նպատակադրվել ենք ստեղծել հզոր ազգային պետություն, վերականգնել մեր նախնյաց փառքը, ազդեցություն ունենալ այս աշխարհում, և ոչ թե մի կերպ գոյատևել: Հզոր դառնալու առաջին քայլն անկախ պետության ստեղծումն է, ուստի մեծ նշանակություն էր տրվում շարժմանը, որ ծառայելու էր անկախ

պետության ստեղծմանը: Մենք ստեղծեցինք մեր պետությունը. այն դեռ անկախ չէ: Ես համոզված եմ, որ ամենաուշը մեկ-երկու տարվա ընթացքում կկարողանանք անկախ պետություն ունենալ: Բարդությունները չնշեմ, դրանք շատ են: Նախօրոք ես էլ չէի գիտակցում: Հիմա, որպես կառավարության նախագահ, ամենօրյա գործունեության շնորհիվ որոշակի եզրահանգման եմ եկել, թե ինչ հարաբերություններ պետք է ստեղծենք աշխարհի երկրների հետ՝ խզելով նախկին ինչ-ինչ կապեր և հաստատելով նոր կապեր, նոր հարաբերություններ: Սա տևական գործընթաց է: Կառավարության անդամներն այս կամ այն կերպ արդեն ձեռնամուխ են եղել այս աշխատանքին: Եվ մենք, որ այժմ ունենք մեր պետությունը, պետք է կարողանանք բոլոր հարցերին վերաբերվել պետական տեսանկյունից:

Այստեղ հավաքվածների զգալի մասին ես ճանաչում եմ. նկատի ունեմ ձեր քաղաքական և կազմակերպական նախկին գործունեությունը: Շարժմանը մեծապես նպաստել եք դուք և նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով այսօր բացակայում են: Ձեր դերն անժխտելի է, բայց հիմա անհրաժեշտ է ձեր գործունեության մեջ փոփոխություններ մտցնել: Խնդիրը հետևյալն է. մենք պետք է ձգտենք ունենալ մեր սեփական ազգային բանակը, ոչ թե պարտիզանական, ֆիդայական խմբեր, որոնք մեր ժողովրդին կտանեն կործանման: Բանակ ստեղծելու խնդիրն առաջին օրից դրված է, բայց որոշ հանգամանքներ կային, որոնց հետ մենք պիտի հաշվի նստեինք: Նախ՝ չէինք ուզում, որ այն ցուցադրական լինի. հայտարարեինք, որ բանակ ենք ստեղծում, և ոչնչի չհասնելով՝ քաշվեինք մի կողմ՝ մեզ վրա սևեռելով կենտրոնի և Ադրբեջանի ավելորդ ուշադրությունը: Այդ պատճառով գնացինք այլ ճանապարհով, որով վաղ թե ուշ կգնան նաև մյուս հանրապետությունները: Ներքին գործերի նախարարության համակարգում ստեղծեցինք մի ստորաբաժանում՝ ջոկատ՝ ներգրավելով նրանց, ովքեր, զենքը ձեռքներին, արդեն հավատարմագրվել էին հայրենիքին ծառայելուն: Այսինքն՝ նրանց տրվեց պետական կարգավիճակ: Ես խնդրել եմ Վազգեն Սարգսյանին, Գերագույն խորհդրի պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովի անդամներին, որ մի շաբաթվա ընթացքում ներկայացնեն պաշտպանության կոմիտեի կառուցվածքը:

Մենք կստեղծենք պաշտպանության կոմիտե, որի կարգավիճակը դեռ որոշված չէ՝ կլինի պետակա՞ն կոմիտե, թե՞ Նախարարների խորհրդին առընթեր պետական կոմիտե, որտեղ կներգրավվեն ԴՕՍԱԱՖ-ը, քաղաքացիական պաշտպանությունը, զինկոմները, որովհետև մեր Գերագույն խորհուրդն արդեն որոշում է կայացրել հայ զինակոչիկների Հայաստանում ծառայելու մասին: Այս պարտականությունը պիտի դրվի Նախարարների խորհրդի վրա, որն իրականացնելն, ի դեպ, շատ բարդ է: Այս ամենով պիտի զբաղվի կոմիտեն, բայց այն ոչ թե հասարակական կազմակերպություն է, այլ կառավարության մեջ գործող մի օղակ: Ես հետևյալ կերպ եմ պատկերացնում երկրապահ ջոկատների ապագան. մի մասը կվերադառնա տուն, մյուս մասը չի գտնի իր տեղը, իսկ մի զգալի, առողջ մասը կմտնի այդ կոմիտեի ստորաբաժանումների մեջ և մեր ազգին կծառայի արդեն պետականորեն, որն անչափ էական է: Իհարկե, խորհրդարանի վերահսկողությամբ: Հիմա նոր կառուցվածքներ ստեղծելն իմաստ չունի: Պետք է առաջնորդվել այն կառուցվածքներով, որոնք գոյություն ունեն ողջ աշխարհում:

Ինչու՞ եմ ասում, թե ոմանք կվերադառնան տուն, որովհետև շատերը, օրհասական պահին ընտանիքը, աշխատանքը թողնելով, գիտակցաբար հայրենիքն էին պաշտպանում: Եթե նրանք համոզվեն, որ իրենց գործը շարունակողներ կան, ապա, ինչպես ասացի, կվերադառնան: Կլինեն նաև այնպիսիները, որոնք կուզենային ծառայել, բայց թեթև կյանքի են սովոր, այսինքն՝ անձնազոհ են, բայց զինվորական կարգուկանոնի չենթարկվող: Նրանք էլ կվերադառնան:

Ինչո՞վ են զբաղված այժմ ջոկատները. նախ սահմանների պաշտպանությամբ: Ասեմ, որ պետական կառույցները դրանով կզբաղվեն, իհարկե, ձեզ ներգրավելով: Անշուշտ, դա մի քանի օրում չի լինի, բայց այդ ուղղությամբ պետք է շարժվենք: Այնուհետև, կային ջոկատներ, որոնք կառավարությանն օգնում էին այս կամ այն հարցում, օրինակ, ծխախոտի: Դա իմ խնդրանքով արվեց, որովհետև ստեղծվել էր անվերահսկելի իրավիճակ: Նախագահության երեկվա նիստի ժամանակ մի որոշում ընդունեցինք. ստեղծում ենք հանձնաժողով, որն իրավունք ունենա աշխատանքից ազատել ղեկավար անձանց: Մենք չենք ուզում՝ դա լինի ՉԵԿԱ-ի նման: Մի խոսքով, ստեղծվում է մի մարմին, որը պիտի վերահսկողություն սահմանի ամենաստորին օղակներից սկսած մինչև ամենավերինը: Սա, ըստ իս, կարևոր մի քայլ է: Երեկ նախագահության նիստում որոշում ընդունվեց նաև ԲԽՍՍ-ի վերաբերյալ: Մենք այն անվանա-

փոխեցինք այսպես՝ Հանրապետության ունեցվածքի պաշտպանության բաժին: Կկատարվեն նաև կադրային փոփոխություններ: Ուզում ենք, որ բաժինը ծառայի մեր ժողովրդին:

Ներկա իրավիճակում հրամայական է ոչ թե պարտիզանական ջոկատների ստեղծումը, այլ զինյալ միավորումներին պետական կառուցվածքների մեջ ներգրավելը: Շատ է կարևորվում մի հանգամանք. եթե ստեղծվի պաշտպանության կոմիտեն, հնարավորություն կընձեռվի շատերին ներգրավելու այդ աշխատանքներում, որն, ի դեպ, ֆինանսական մեծ ծախսերի հետ է կապված: Ամեն մի պետություն առաջընթաց ապրելիս պիտի առաջնորդվի սրանով՝ ինքը կարո՞ղ է զինվորական ծախսեր հոգալ, թե՞ ոչ: Եթե Հայաստանում ամեն ինչ այսպես մնա, գների բարձրացում չլինի, մեր եկամուտները եկող տարի կկազմեն 2 միլիարդ ռուբլի, ծախսերը՝ 5 միլիարդ: Ռուսաստանում եկամուտները կկազմեն 150 միլիարդ ռուբլի, ծախսերը՝ 300 միլիարդ: 150 միլիարդի վնաս է կրելու Ռուսաստանը: Ասածս պարզ է. ստեղծվելիք ստորաբաժանումներում կլինեն այնպիսիները, որտեղ մարդիկ պիտի ծառայեն կամավոր հիմունքներով՝ առանց աշխատավարձ ստանալու:

Մեր վերջնական անկախություն ստանալու ճանապարհին ամենից առավել կարևորվում է, այսպես կոչված, **դրսի ճանապարհների բացումը:** Մենք արտասահմանյան, նաև հայազգի բիզնեսմենների հետ պետք է համագործակցենք փոխշահավետ պայմաններով: Այս տեսակետից առավել քան կարևորվում է մի հարց՝ երկրի ներկա իրավիճակը: Խորհրդային Միությունն այժմ ընթանում է դեպի քաղաքական, տնտեսական, ռազմական քաոս, նրա ամենատարբեր հատվածներում ստեղծվում են զինված ջոկատներ: Անշուշտ հասկանալի է՝ այն ճանապարհը, որը մենք արդեն անցել ենք, **Միությունը դեռ նոր պիտի անցնի**, բայց քանի որ նա հսկայածավալ է և միատարր ազգային բնակչություն չունի, այդ քաոսի մեջ կմնա երկար ժամանակ: Մենք քաոսից դուրս ենք եկել: Հիմա, երբ հանդիպում ենք արտասահմանյան բիզնեսմենների հետ, ձգտում ենք, որ նրանք հանգեն անաչառ եզրակացության՝ Խորհրդային Միությունում քաոսը դեռ օբյեկտիվորեն շարունակվելու է, մինչդեռ Հայաստանն, ընդհակառակը, հետզհետե դառնում է կայունության և խաղաղության կղզի: Միայն այս պայմաններում նրանք միջոցներ կներդնեն Հայաստանի տնտեսության մեջ, միայն այս դեպքում մենք կկարողանանք տնտեսապես զարգանալ, հզորանալ և զարգացած տնտեսության պայմաններում ստանալ անկախություն: Այս իսկ պատճառով Խորհրդային Միությունը չի ուզում, որ Հայաստանը լինի կայուն ու խաղաղ մի երկրամաս, որպեսզի արտասահմանյան ֆիրմաները ֆինանսական ներդրումներ չանեն: Միությունն արհեստականորեն՝ ամենատարբեր ձևերով է ուզում իրավիճակը խառնել մեզ քաջ ծանոթ լրագրային հրապարակումներով: Նպատակը մեկն է՝ հանկարծ Հայաստանը չդառնա արտասահմանյան կապիտալի բազա: Հիմա մեր յուրաքանչյուր քայլը պայմանավորելու է Հայաստանի ճակատագիրը, նրա ապագան: Ամեն մի մարտիկ, ջոկատ և որևէ այլ կազմակերպություն պետք է այս ամենը հստակորեն գիտակցի: Ես համոզված եմ, որ Միությունը երկար ժամանակ ուշքի չի գա, իսկ մենք արագորեն կմտնենք զարգացման ոլորտ: Սա, իհարկե, պայմանավորված է մեր ժողովրդավարական խորհրդարանով, բայց ես առավել կապում եմ մեր ժողովրդի ձեռներեցության հետ: Մնում է լրջորեն խորհել նաև **ազգային կարգապահության** մասին, որը շատ առումներով կնպաստի մեր ազգի բարգավաճմանը, հզորացմանը:

ՀՀ վարչապետ Վ. Մանուկյանի ելույթը ՀՀ ԳԽ-ում
1990թ., հոկտեմբերի 21

ՄԵՐ ԱԶԳԻՆ ՄԵԾ ԱՊԱԳԱ Է ՍՊԱՍՈՒՄ

Թե ինչ վիճակում է հանրապետությունը, բոլորդ երևի մոտավորապես պատկերացնում եք: Նույն արագությամբ շարունակվում է սոցիալիստական տնտեսության քայքայումը, և մենք հույս ունենք, որ պետք է ծնվի նոր տնտեսություն, որի նախադրյալներն արդեն կան: Մենք պատրաստել ենք օրենքներ սեփականության, բաժնետիրական ձեռնարկությունների, հողի մասնավորեցման մասին: Դրանք կներկայացվեն Գերագույն խորհուրդ. հոկտեմբերի 29-ին կքննարկվի սեփականության մասին օրենքը: Մեր ներկայացրած մյուս օրենքները Գերագույն խորհրդում կքննարկվեն հաջորդաբար: Նախատեսել ենք դեկտեմբերի 1-ից սկսել

մասնավորեցումը: Այսինքն՝ շուտով կսկսվի որոշ պետական ձեռնարկությունների վաճառքը ժողովրդին:

Մեզ շատ է անհանգստացնում քաղաքական իրավիճակը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ մի խումբ մարդիկ՝ կառավարության, Գերագույն խորհրդի ինչ-որ մի մաս, զբաղված են գործով, իսկ մի զգալի մասը հանդիսատեսի դերում է, մի կողմ քաշված՝ սպասում է, թե ինչ արդյունքներ կստացվեն: Եթե մեր ծրագրերի մեջ չկարողանանք ներգրավել ամբողջ ժողովրդին, չկարողանանք բացատրել, թե ինչ ենք անում, ինչ վիճակում է հանրապետությունը, եթե չհաջողվի ամբողջ ժողովրդով համախմբվել այդ ծրագրերի իրականացման համար, ապա ոչ մի բան չի ստացվի: Իմ մեջ որոշ քաղաքական դատարկության տպավորություն է առաջացել: Դրա մեղքը և՛ Նախարարների խորհրդինն է, և՛ Գերագույն խորհրդինը: Հավանաբար պատճառն այն է, որ չենք կարողանում հաճախակի հանդիպումներ ունենալ, ներկայացնել մեր ծրագրերը, պատմել, թե ինչ վիճակում է հանրապետությունը: Այս քաղաքական դատարկությունը պետք է լցնել: Տեղական խորհուրդների ընտրություններից շատ բան է կախված, որովհետև մեր ծրագրերի իրականացման խնդրում տեղական իշխանությունները մեծ դեր են կատարում: Այժմ տեղական իշխանությունները շրջաններում քնած վիճակում են: Եվ շատ ծրագրեր, նախագծեր, հրահանգներ, որ վերևից տրվում են, տեղ չեն հասնում կամ թերի են կատարվում:

Նշեմ նաև հետևյալը. ամբողջ Խորհրդային Միությունում քաոս է տիրում՝ և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով: Ամենուրեք միտինգներ են, ստեղծվում են զինված ջոկատներ, տնտեսությունը քայքայվում է: Կարծում եմ՝ Հայաստանն այդ սահմանագիծն անցել է, և եթե Խորհրդային Միությունում օրեցօր քաոսը խորանում է, մեզ մոտ վիճակը ավելի ու ավելի է կայունանում: Խորհրդային Միությունը դուրս կգա այդ վիճակից, թե ոչ, կամ որքան ժամանակ է դրա համար անհրաժեշտ՝ դժվարանում եմ ասել, որովհետև նա մեծ ծավալ է, մեծ մարմին: Նա ավելի դժվարությամբ դուրս կգա այդ քաոսից: Առանց կայունացման՝ հնարավոր չէ տնտեսական բարգավաճումը: Քայլերը, որոնք ուղղված են քաղաքական կայունացմանը, մեզ կբերեն նաև տնտեսական բարգավաճում: Բազմաթիվ արտասահմանյան ֆիրմաներից ներկայացուցիչներ են գալիս. նրանք էլ են, ի դեպ, ընդունում, որ իրենք կկարողանան Խորհրդային Միության շուկա մտնել Հայաստանի միջոցով: Մեզ շատ առաջարկություններ են անում: Մենք պետք է կարողանանք Հայաստանում ստեղծված այդ կայունացման վիճակը պահել: Պետք է միշտ հիշել, որ այսօր պետական կառուցվածքներից դուրս ոչ մի զինված մարդ չի կարող օգուտ բերել իր ազգին:

Անհրաժեշտ է սովորել պետականորեն մտածել: Սխալ ենք՝ հարցեր բարձրացրեք, ասեք՝ այս բանն այսպես պետք է անել: Սակայն հիշեք՝ կառավարությունը պետք է ղեկավարի: Թե չէ մի վեհ, հայրենասեր երիտասարդ՝ շատ հաճախ համապատասխան կրթություն չունեցող, ինքնուրույն որոշում է ընդունում, որի պատճառով ամբողջ հանրապետությունն է տուժում:

Ինչ վերաբերում է տնտեսական ծրագրերին, ապա այստեղ էլ կա հակասություն: Ինչպես գիտեք, Խորհրդային Միությունը անցնում է շուկայական տնտեսության: Բայց մենք էապես տարբեր ենք ընկալում այդ հարաբերությունները: Ես, Նախարարների խորհրդի մեր ընկերները այլ կերպ ենք հասկանում շուկայական տնտեսությունը, կենտրոնը՝ այլ: Եվ այս խնդրում մեծ հակասություն կարող է առաջանալ: Շուկայական տնտեսության անցնելու մի ճանապարհ կա, որը ընտրեցին և՛ Լեհաստանը, և՛ Հարավսլավիան, և՛ Հունգարիան, և որը հիմա ընտրում է Խորհրդային Միությունը: Այդ ճանապարհը հետևյալն է. կան պետական ձեռնարկություններ, որոնց ազատության չափը մեծանում է, թույլ է տրվում, որ նրանք միմյանց հետ մտնեն պայմանագրային հարաբերությունների մեջ, ստեղծեն պետական ձեռնարկությունների շուկա: Այսինքն՝ պետական ձեռնարկությունները հանդես են գալիս որպես մասնավոր ձեռնարկություններ, սովորում են տնտեսական խաղին, հետո աստիճանաբար սկսվում է պետական ձեռնարկության մասնավորեցումը: Մենք կգնանք հակառակ ճանապարհով, ուզում ենք սկզբում պետական ձեռնարկությունները դարձնել մասնավոր սեփականություն, հետո նոր անցնել շուկայական մեխանիզմի: Սա հակասում է վերը նշված փորձին, բայց մենք գտնում ենք, որ դա է ճիշտ ճանապարհը:

Մենք առայժմ գտնվում ենք Խորհրդային Միությունում, և այն արժեզրկումը, որը կառաջանա երկրում, մեր որդեգրած տարբերակի դեպքում Հայաստանում փոքր չափեր կընդունի, նույնիսկ շահեկան կլինի: Այնպես որ ճանապարհները տարբեր են: Մինչդեռ ի՞նչ է ստացվում, Գորբաչովը անընդհատ պետք է հրահանգներ ուղարկի Մոսկվայից ու մեր պե-

տական ձեռնարկությունների ազատությունը մեծացնի: Ինչքան այդ ազատությունը մեծանա, այնքան դժվար կլինի մասնավորեցումը: Հետևապես դա ինչ-որ կերպ պետք է կանխել: Դա լուրջ հարց է: Ասում եմ՝ թող պետական ձեռնարկությունը գործի մասնավորի նման, մասնակցի տնտեսական հարաբերություններին: Մի փոքրիկ օրինակ բերեմ. մեր մի գործարան Կանադայում կոշիկ է վաճառում. մեկ զույգ կանացի կոշիկը միջնորդին տրվում է 6 դոլարով: Միջնորդը Կանադայի համապատասխան ֆիրմային է վաճառում 25 դոլարով, սա էլ իր խանութում՝ 100 դոլարով: Ոչ մեկին չեմ ուզում մեղադրել, բայց իմ մեջ կասկած է առաջացել, որ միջնորդին վաճառվում է ոչ թե 6, այլ 8 կամ 10 դոլարով, իսկ տարբերությունը ինչ-որ մեկի գրպանն է գնում: Այս օրինակը ցույց է տալիս, թե ինչ է նշանակում, երբ պետական ձեռնարկությունը աշխատում է որպես մասնավոր: Այսինքն՝ պետական միջոցները, ունեցվածքը, առանց որևէ ռիսկի, օգտագործում են անձնական շահի համար: Մեր տնտեսությունն այդպես չի կարող զարգանալ, մյուս երկրների նման մենք էլ կընկնենք ճահճի մեջ ու չենք կարողանա դուրս գալ: Հետևաբար, առանց սպասելու, թե Խորհրդային Միությունը մասնավորեցման ինչ ուղի է բռնելու, մենք կտրուկ քայլերի կանցնենք:

Հակասություն կա նաև մեր ձգտման և այն իրավիճակի միջև, որում գտնվում ենք: Մենք ուզում ենք անկախ պետություն ստեղծել, սակայն Նախարարների խորհուրդն անընդհատ զբաղված է Մոսկվայից եկող տարբեր հեռախոսազանգերին, հեռագրերին պատասխանելով: Մոսկվան մեզ անընդհատ դնում է այնպիսի վիճակի մեջ, որ մենք ինչ-որ իմաստով խնդրատուի դերում հանդես գանք: Եվ եթե մենք մեր սեփական տնտեսությամբ չզբաղվենք, մասնավորեցում չանենք, իսկապես կախման մեջ կմնանք: Խորհրդային Միությունը հսկայական վալյուտա է ծախսում և դրանով գնված շատ ապրանքներ է մեզ տալիս: Մենք ստանում ենք 240 միլիոնի թեթև արդյունաբերության, 220 միլիոնի սննդի արդյունաբերության հումք, 300 միլիոնի լայն սպառման ապրանքներ և այլն: Ցորեն մեզ պետք է տարեկան մեկ միլիոն տոննայի չափով: Այնպես որ մեր տնտեսական քաղաքականությունը շատ հակասական է: Մոսկվայում ժամանակ առ ժամանակ հրավիրում են հանրապետությունների նախարարների խորհուրդների նախագահներին: Ռիժկովը կամ Գորբաչովը անցկացնում են համապատասխան միջոցառում: Եվ բավական ծիծաղելի է, երբ հանրապետություններից մեկի ներկայացուցիչը վեր է կենում ու ասում, թե իրենք Խորհրդային Միության մեջ են գտնվում, և Միությունը պարտավոր է իրենց տալ այսինչն ու այնինչը: Ոգևորված ելույթ է ունենում, և բոլորը ծափահարում են, ամեն ինչ լավ է: Կես ժամ հետո այս նույն մարդը վեր է կենում, թե չէ՞ որ իրենք սուվերեն, անկախ հանրապետություն են, Միությունն ի՞նչ իրավունք ունի իրենցից վերցնել այսինչն ու այնինչը: Եվ դա այդ խորհրդակցությունների համար բնականոն իրավիճակ է: Բոլորն այդ խաղին սովորել են: Բոլորը, և մենք նույնպես վարում ենք այդ անորոշ քաղաքականությունը: Վիճակն է ինքնին մեզ թելադրում, թե ինչով պետք է առաջնորդվել նման հարցերում:

Ասեմ, որ հիմնական խնդիրը մեր քաղաքական միասնությունն է: Եթե չունենանք քաղաքական միասնություն, ամբողջ ժողովրդով չունենանք միասնական ծրագիր, ստույգ չիմանանք, թե ինչ ենք ուզում, չենք կարողանա դիմանալ զրկանքներին: Այն ճանապարհը, որով պետք է գնանք, մեզ բարգավաճման, ազգի հզորացման է տանելու: Բայց այդ ճանապարհին զրկանքներ ենք կրելու: Մարդը պետք է հավատ ունենա, վստահություն ունենա, որ դժվարություններին դիմանա: Հետևաբար անհրաժեշտ քաղաքական աշխատանք պետք է տանեն և՛ Նախարարների խորհուրդը, և՛ Գերագույն խորհուրդը, և՛ գոյություն ունեցող բազմաթիվ կազմակերպությունները: Մենք պետք է մեր ժողովրդի համար ապահովենք այս միասնությունը: Դա մեր բոլորի գործն է, և այս խնդրում շատ մեծ դեր ունեն կատարելու մամուլը, հեռուստատեսությունը: Միայն միասնությամբ կկարողանանք մեր խնդիրները լուծել: Միայն միասնությամբ կկարողանանք Ղարաբաղի հարցը վճռել:

Եվ ես միասնության կոչ եմ անում: Մենք հիմա Խորհրդային Միության մեջ կայունացման կղզի ենք դառնում, և ես համոզված եմ, որ կդառնանք նաև բարգավաճման կղզի: Մեծ ապագա է սպասում մեր ազգին: Պետք է ներքին վստահություն, հույս, հավատ ունենանք, համախմբվենք, որպեսզի կարողանանք մեր բոլոր խնդիրները լուծել:

Հատվածներ վարչապետ Վ.Մանուկյանի
1990թ. հոկտեմբերի 27-ի մամուլի ասուլիսից
«Հայաստանի Հանրապետություն»,

1990, հոկտեմբերի 30

ԼՑՎԵՆՔ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ, ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ՀԱՄԱԽՄԲՎԵԼ

Մենք, ի վերջո, պետք է հասկանանք, թե ինչ է կատարվում Խորհրդային Միությունում: Այն շարժումը, որը տեղի է ունենում այսօր, ինչ-որ իմաստով ալիքաձև բնույթ է կրում: Մի քանի ամիս առաջ հանրապետությունների ոգևորությունն ավելի մեծ էր: Հորիզոնական կապերի ստեղծման, բազմաթիվ պայմանագրերի կնքման փորձեր էին արվում: Բայց այն մեխանիզմները, որոնք պետք է նպաստեն այդ պայմանագրերի կատարմանը, դեռևս լիովին մշակված չեն: Այս ընթացքում ամեն ինչ արվեց, որ ժողովուրդը խուճապահար լինի: Թեպետ դրա համար նաև օբյեկտիվ պայմաններ կային, բայց արհեստական պայմանները, որ առաջացնում էր կենտրոնը, ավելին էին: Շատ հանրապետություններում իրապես խուճապ առաջացավ (դրան նպաստեց նաև պարենային անբավարարությունը), և հիմա կարծես թե խուճապի այդ ալիքը իջնում է:

Գորբաչովը կարողանում է վարպետորեն գնալ այդ ալիքն իջեցնելու ճանապարհով: Նրա ներկայիս առաջարկություններն իր ծրագրի, այսինքն՝ Խորհրդային Միությունից ամերիկյան տիպի մի պետություն ստեղծելու ծրագրի, դրույթներից են: Ես պետք է նշեմ, որ մեր հանրապետությունն էլ զերծ չմնաց խուճապից: Իհարկե, կային դժվարություններ, և ապագայում էլ լինելու են, բայց շատ դժվարություններ էլ պայմանավորված են հենց խուճապով: Օրինակ՝ հացի պրոբլեմը: Եթե մինչև այսօր Երևանում արտադրվում էր 250 տոննա հաց, ապա այսօր արտադրվում է 420 տոննա, բայց ժողովուրդը կրկին խուճապի մեջ է: Թեպետ մենք զրույցի ժամանակ կանդրադառնանք պարենի խնդրին, բայց չզարմանաք, եթե ասեմ, որ պարենի հիմնահարցը ես չեմ համարում ամենակարևորը: Պարենի հարցն այս կամ այն կերպ կլուծվի: Մտահոգողն այն ընդհանուր, գորշ մթնոլորտն է, որ ներկայումս տիրում է Հայաստանում: Ամենասարսափելին հենց այդ մթնոլորտն է:

Ոմանք ասում են, թե մենք անցման շրջանում ենք: Ոչ, սա անցման շրջան չէ: Սա նոր ժամանակների սկիզբն է: Մեր ժողովուրդը մի նոր դարաշրջան է մտնում, և սա այդ դարաշրջանի սկիզբն է: Հետադարձ չկա, և մենք քայլելու ենք այս ճանապարհով: Քայլելու ենք՝ ձգտելով հզորանալ, դառնալ հզոր մի ազգ, ունենալ անկախ պետություն, լուծել մեր ազգային խնդիրները: Երբ մենք սկսեցինք մեր առաջին քայլերը անել, թվում էր, թե դա մեծ ոգևորություն կառաջացնի մտավորականության շրջանում: Հիշենք պատմությունը. նման ժամանակներում սովորաբար վեպեր, երգեր ու բանաստեղծություններ են գրվում: Ասել կուզի՝ նյութական ծանր պայմաններում ժողովրդի ոգին, այնուամենայնիվ, բարձր է լինում: Այսօր չգիտեմ՝ այս մթնոլորտի համար ում մեղադրել, կառավարությա՞նը, պառլամենտի՞ն, թե՞ մտավորականությանը: Երևի բոլորս ենք մեղավոր: Այս գորշ մթնոլորտում դժվար կլինի որևիցե խնդիր լուծել: Ես, իհարկե, չեմ կարող այդ մթնոլորտը փոխելու ձևեր առաջարկել, բայց եթե ներքին ոգևորություն չունենանք, կդառնանք տրոհված մի բազմություն, և յուրաքանչյուրը կմտածի՝ ինչպես մի կտոր հաց ճարի կամ, ասենք, մահճակալ, որի համար հազարավոր մարդիկ հերթ են կանգնում: Ես ուղղակի կոչ եմ անում մեր մտավորականությանը, երիտասարդությանը լցվել լավատեսությանբ, համախմբվել, մեր ժողովրդին ցույց տալ ճանապարհները, բացահայտել, թե ինչ է կատարվում:

Հետաքրքիր է, որ այսպիսի գորշ մթնոլորտ չկա ձեռներեց մարդկանց շրջանում: Նրանք կարողանում են ազատությունն օգտագործել: Նրանք կամաց-կամաց խաղի մեջ են մտնում: Տնտեսությամբ զբաղված մարդկանց շրջանում ավելի մեծ ակտիվություն կա, քան մտավորականության: Մենք չենք կարողանում օգտվել ազատությունից: Այսօր, իրապես, մեծ ազատություն է տրված, ստեղծագործելու ազատություն է տրված ժողովրդին: Բայց թերևս սովորության համաձայն, չենք կարողանում դրանից օգտվել և սպասում ենք, որ ավելին տրվի:

Հատվածներ վարչապետ Վ.Մանուկյանի

1990թ. նոյեմբերի 17-ի մամուլի ասուլիսից
«Հայաստանի Հանրապետություն»,
1990, նոյեմբերի 20

ՄԵՆՔ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱԶԳ ԵՆՔ

Ես գիտեմ, որ այսօր և՛ ձեզ, և՛ ինձ, և՛ բոլորին բազմաթիվ հարցեր են հուզում՝ պարենային, կադրային հարցերը, հողի մասին օրենքի, մասնավոր սեփականության անցնելու, շրջաններում արտակարգ լիազորներ նշանակելու խնդիրները: Եվ դրանք իրոք հրատապ են: Ես շատ կարևոր եմ համարում նաև իրավիճակը Արցախում: Բայց այսօր կուզենայի խոսքս սկսել մի ուրիշ հարցից: Այժմ կառավարությունը քննարկում է թե՛ տնտեսական, թե՛ կադրային հարցեր, բայց, ի վերջո, ամեն ինչ հանգում է շատ կարևոր հարցին՝ ո՞րն է մեր քաղաքական ուղղությունը: Պարզվում է, որ եթե մենք չհստակեցնենք, թե ինչ քաղաքական ուղի ենք ընտրելու, ինչ ճանապարհով ենք գնալու, շատ հարցերի պատասխաններ այսօր ուղղակի հնարավոր չի լինի գտնել: Նույնիսկ կադրային հարցում մեծ նշանակություն ունի, թե ինչ ճանապարհով ենք գնալու:

Մենք ընդունել ենք Հռչակագիր անկախության մասին, հռչակել ենք, որ մեր հանրապետությունը քայլ առ քայլ գնում է դեպի անկախ պետություն: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս, ի՞նչ քայլեր անելով: Այսօր գրեթե բոլոր հանրապետություններն էլ հայտարարել են, որ իրենք փորձում են դառնալ անկախ պետություն: Լիտվան հռչակեց, որ ինքն անկախ է: Ոչ մեկը չընդունեց նրա անկախությունը, և նա անկախ չէ: Բնական է, որովհետև անկախությունը էապես պայմանավորված է նաև ուրիշների կողմից այն ճանաչելով: Փորձեր կատարվեցին անկախ տնտեսություն կառուցելու: Այդ փորձերը ևս անհաջող էին: Նույն ձախողումներն ունենք և մենք:

Փորձենք պատկերացնել, թե ինչ է նշանակում անկախ տնտեսություն: Իհարկե, աշխարհում բացարձակ անկախ պետություն գոյություն չունի: Բոլոր երկրներն էլ տնտեսապես կապված են միմյանց հետ: Մինչև այժմ միակողմանի կապերով կապված էինք Խորհրդային Միության հետ, և տնտեսական անկախությունը մենք պատկերացնում ենք հետևյալ կերպ. ոչ թե կտրել այդ կապերը, այլ որոշ դեպքերում խորացնել դրանք: Մենք պետք է կարողանայինք ստեղծել նաև նոր կապեր ուրիշ երկրների հետ, և այդ տնտեսական կապերի ցանցը պիտի ստեղծեր հավասարակշռություն, միակողմանի կախվածություն չէինք ունենա: Մենք կարո՞ղ ենք ուրիշ երկրների հետ կապեր ունենալ, թե ոչ: Եկեք ինքնախաբեությամբ չզբաղվենք: Ամեն օր արտասահմանյան տարբեր ֆիրմաների ներկայացուցիչներ, սփյուռքահայեր մոտենում են տարբեր առաջարկներով (որոնց մի մասը ցնդաբանություն է, մի մասը՝ շատ արժեքավոր), բայց պետք է խոստովանենք, որ մեր արտաքին հարաբերությունները լիովին գտնվում են Կենտրոնի վերահսկողության տակ: Իհարկե, այդ արգելքները շրջանցելու բազմաթիվ ձևեր կան, և որոշ խելոք մարդիկ էլ այդ ձևերն առաջարկում են, բայց շրջանցելով՝ մենք անկախություն չենք ստանա: Որքան էլ խորամանկ լինենք, մեր դեմ կանգնած է կայսերական դարավոր փորձ ունեցող մի պետություն, որը մեզնից խորամանկ է, լծակներն էլ իր ձեռքում են: Արտաքին կապերից զատ, կա նաև ներքին տնտեսություն: Օրինակ՝ Խորհրդային Միությունն ընդունել է փոքր ձեռնարկությունների մասին օրենք: Մենք քննարկում ենք, թե ինչպես տեղայնացնենք այդ օրենքը, որովհետև դա շատ կարևոր է: Ամբողջ աշխարհում փոքր ձեռնարկությունները տնտեսության զարգացման խթան են: Բայց տնտեսության մեր մոտեցումը հիմնովին տարբեր է: Եթե մենք ուզում ենք անցնել մասնավոր սեփականության և փոքր ձեռնարկությունները պատկերացնում ենք որպես մասնավոր սեփականություն, ապա Խորհրդային Միությունն ուզում է ստեղծել շուկայական մեխանիզմներ՝ պահելով պետական սեփականությունը: Հետագայում կունենանք հզոր գիշատիչներ, որոնք մեծ դեր կկատարեն: Բայց դա ժամանակի խնդիր է: Եվ մինչ մենք դա իրականացնենք, նրանց պետական փոքր ձեռնարկությունները մեծ ուժ կունենան Հայաստանում:

Մենք անընդհատ հակասությունների մեջ ենք Խորհրդային Միության հետ: Եվ գտնում եմ, որ ճողոպրելու այս ճանապարհով անկախություն չենք ստանա: Վերջին ժամանակներս

Խորհրդային Միությունում մեկ ուրիշ գործընթաց է նկատվում: Բոլորը կարծես կրկին հավաքվում են Կենտրոնի շուրջը: Ես վախենում եմ, որ մենք կարող ենք պահը կորցնել: Կամ կկորցնենք պահը, և այս պետությունն ինչ-որ ձևով կկարողանա միասնական գնալ, կամ այն կսկսի քանդվել, մենք էլ նրա հետ, փլատակների տակ կմնանք: Մի ձև կա, որ ես առաջարկել եմ թե՛ իմ «Գնացքից թռչելու ժամանակը» հոդվածում, և թե՛ Գերագույն խորհրդի իմ ելույթներից մեկում: Մենք ունենք մի առավելություն, որը հանրապետություններից և ոչ մեկը չունի: Դա միատարր բնակչությունն է: Այն, ինչ որ մենք կարող ենք անել, ուրիշ ոչ մի հանրապետություն անել չի կարող: Առաջինը՝ հանրաքվեն է: Առաջին հայացքից այն ծիծաղելի է թվում: Ես համոզված եմ, որ հանրաքվեի արդյունքները դրական կլինեն, ժողովրդի 70-80 տոկոսն անկախության կողմ կքվեարկի: Եվ եթե մեզ հաջողվի ստանալ դրական արդյունք, ապա այդ փաստաթուղթը միջազգային մեծ կշիռ կստանա: Խորհրդային Միությունը դա շրջանցել չի կարող: Եթե հիշում եք, Գորբաչովն էլ էր ասում, որ ԽՍՀՄ-ից դուրս գալու մի ձև կա՝ հանրաքվե, որ խորհրդարանի որոշումը դեռևս ամբողջ ժողովրդի կարծիքը չէ: Ինչու՞ է նա այսպես մտածում: Նա համոզված է, որ հանրաքվեն լիովին համապատասխանում է ԽՍՀՄ սահմանադրությանը: Հաշվի առեք, որ Արևմուտքը երբեք չի ընդունի որևէ հանրապետության անկախությունը, եթե այն չի ընդունվել Խորհրդային Միության կողմից:

Մեր անկախությունը նախ հարկավոր է պարտադրել Կենտրոնին: Հանրաքվեի արդյունքներով կարող ենք արժանապատվությամբ, առանց զգացմունքների, բանակցությունների գնալ Մոսկվա: Նշել մեր անկախության փուլերը, նշել, թե այդ փուլերում ինչ պարտավորություններ ունենք մենք, ինչ պարտավորություններ՝ դիմացինը, և այդպես շարունակ: Իսկ հիմա, եթե մեր ձեռնարկություններից որևէ մեկը կապ է հաստատում արտասահմանի հետ, վալյուտա է աշխատում, ապա դրա 40 տոկոսը գնում է ԽՍՀՄ-ին՝ պարտքերը մարելու համար: Ես կարծում եմ, որ առաջին փուլում Հայաստանի պարտքերը հենց ԽՍՀՄ-ի արտաքին պարտքի այն մասն են, 400-500 միլիոն դոլար, որ մենք վերցրել ենք մեզ վրա: Այդ պարտքերը մարելը դժվար չէ: Գուցե շատերին դուր չգա, բայց միայն կաուչուկ արտադրելով՝ 2-3 տարում պարտքերը կարող ենք մարել: Եվ կարելի է գծագրել, թե փուլ առ փուլ ինչպես ենք գնալու անկախության: Կարող եք հարցնել՝ իսկ եթե Կենտրոնը չհամաձայնվի՞: Չհամաձայնվի, մեր ընտրած ճանապարհը կա ու կա: Այս վիճակում չափազանց դժվար է անկախ տնտեսական ծրագրեր իրականացնել: Եթե անկախություն չունենանք, տնտեսական ծրագրերի մի մեծ մասը պարզապես անհնար կլինի իրականացնել: Հիմա ընդունում ենք հողի մասին օրենքները: Ստեղծում ենք մի խավ, որն էապես շահագրգռված կլինի անկախությամբ, բայց մյուս կողմից՝ իրոք, գյուղացին ինքն էլ երաշխիքներ պետք է ունենա, որ հողն իր ձեռքից չեն վերցնի: Իսկ ո՞րն է երաշխիքը. միայն անկախությունը:

Ես ուզում եմ մի ուրիշ հարցի անդրադառնալ: Անկախության նպատակը միայն լավ ապրելը չէ: Անկախությունը միջանկյալ և կարևոր քայլ է: Բայց ունենք մեր գերխնդիրը: Ազգային հարցերում իմ մոտեցումը միշտ եղել է հանուն այդ գերխնդրի լուծման: 1915 թվից հետո հայությունը սփռվել է աշխարհով մեկ: Այն տպավորությունն է ստեղծվել՝ 1915 թվի պատճառով է, որ մենք սփյուռքահայություն ունենք: Դա ինքնախաբեություն է: Մենք դարեր շարունակ սփռված ենք եղել աշխարհում, պետք է բաց աչքով նայենք ճշմարտությանը: Ճակատագրով սփռված ենք աշխարհով մեկ, և եթե նույնիսկ ունենանք մեր անկախ պետությունը, միևնույն է, բոլոր հայերով այստեղ չենք կարող հավաքվել: Մենք համաշխարհային ազգ ենք, ու մեր խնդիրներն էլ համաշխարհային են: Դարերի ընթացքում հայերս միշտ փորձել ենք կազմակերպվել, ստեղծել որոշակի կառուցվածքներ, ազդել ամբողջ աշխարհի քաղաքականության վրա և մեր տեղը գտնել աշխարհում: Չի հաջողվել, որովհետև չի եղել կորիզը: Այդ կորիզը կարող է լինել միայն անկախ պետությունը: Անկախ պետությունն ինձ համար ոչ միայն մեր բարեկեցությունն է, այլև այն կորիզը, որի շուրջ պետք է համախմբվի ամբողջ հայությունը: Սփյուռքահայությունն այսօր, այո, պետք է օգնի հայրենիքի անկախացմանը, իսկ վաղը մենք կօգնենք դրսի հայությանը: Մենք համաշխարհային կառույցներ պիտի ունենանք: Այս ուղղությամբ հարկ է մտածել ու գործել: Աշխարհի ամեն ծայրում ապրող հայը պիտի գիտակցի, որ պարտք ունի հայրենիքի, իր ազգի նկատմամբ: Եթե ճակատագիրը նրան ուրիշ տեղ է տարել, դրանում խորհրդավոր բան կա: Մեր ազգը մի քիչ տարբեր է ուրիշ

ազգերից: Մենք պարտք ունենք կատարելու, մենք առաքելություն ունենք, որը իրականացնելու համար անկախ պետություն պետք է ունենանք: Ես ուզում եմ, որ ներքին ըմբռնում լինի, թե մենք ինչ ճանապարհով ենք ուզում գնալ: Իհարկե, այդ ճանապարհը պետք է քննարկել: Դուք կարող եք ինձ հետ չհամաձայնվել, բայց պետք է համաձայն լինեք քննարկմանը: Այսպես անորոշ մնալ չի կարելի: Մենք ասում ենք՝ զրկանքների մեջ ենք, սննունդ չկա, որովհետև գնում ենք դեպի անկախություն: Սուտ է: Ողջ Խորհրդային Միությունում է այդպես: Դրա պատճառներն ուրիշ են: Մենք զրկանքների մեջ ենք՝ առանց նպատակի: Ավելի լավ է՝ զրկանքները մի քիչ շատ լինեն, բայց նպատակը հստակ լինի: Եվ այս տեսակետից շատ մեծ նշանակություն ունի մեր ազգի ներքին բարոյականությունը:

Միայն տնտեսական խնդիրներով մենք որևէ բանի հասնել չենք կարող: Մենք պետք է լուծենք մեր ազգային բարոյական խնդիրները: Այդ տեսակետից շատ վտանգավոր է մտավորականության ընդհատակ անցնելը: Ես կողմնակից եմ, որ մտավորականությունը լինի քննադատի դերում: Իհարկե, կարելի է ընդհատակ անցնելու պատճառները գտնել, կարելի է այս կամ այն մարդուն մեղադրել, բայց դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ մեր մտավորականությունը (չեմ ասում միայն տիտղոսավորները) ազգի միջնաբերդը դառնա, որի շուրջ հավաքվի ազգը և կարողանա լուծել իր հարցերը:

Վարչապետ Վ.Մանուկյանի ելույթը 1990թ.
դեկտեմբերի 15-ի մամուլի ասուլիսում
«Հայաստանի Հանրապետություն»,
1990, 16 դեկտեմբերի

ՏԻՐԱՊԵՏԵՆՔ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆԸ, ՀՍՏԱԿԵՑՆԵՆՔ ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մի քանի խոսք ընդհանուր իրավիճակի մասին: Վերջին ասուլիսի ժամանակ ասացի, որ ստեղծվել է գորշ մթնոլորտ: Գուցե իսկապես մի քիչ խտացված են գույները, և չափազանցություն կա, բայց երևույթն, այնուամենայնիվ, առկա է: Այդ գորշությունը, իհարկե, Միության տնտեսական կացության հետևանք է, սննդամթերքի պակասի և այլն: Նույն վիճակն է, իմիջիայլոց, նաև որոշ հանրապետություններում, որտեղ հաղթել է շարժումը[2]: Դա արգասիք է նաև այն մեծ ոգևորության, թե շարժումները կգան իշխանության գլուխ, ամեն ինչ միանգամից կբարելավվի, և մենք անկախություն կստանանք: Բայց շարժումները եկան, բախվեցին բարդ տնտեսական կապերի հյուսվածքին, կանգ առան և սկսեցին վերադասավորել իրենց ուժերը: Առաջացան որոշ հիասթափություններ, առջևում էլ ծանր աշխատանք էր սպասվում:

Անդրադառնանք մեր հանրապետությանը: Նշեմ երկու կարևոր հանգամանք, որոնք ազդում են այդ մթնոլորտի վրա՝ քաղաքական անորոշությունը և կարգուկանոնի պակասը:

Նախ քաղաքական անորոշության մասին: Մենք մեծ քայլ կատարեցինք դեպի անկախություն՝ կտրելով այն հիմնական թելը, որը մեզ կապում էր Մոսկվայի հետ: Ամռանը Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց, ընտրություններ անցկացվեցին, և կապը, որ հնարավորություն էր տալիս Մոսկվային թելադրել իր քաղաքական կամքը, կտրվեց: Մենք ընդունեցինք հռչակագիր Հայաստանի անկախության մասին: Որոշ քայլեր այդ ուղղությամբ արվեցին, բայց ես պետք է ասեմ, որ այս ճանապարհով գնալով՝ մենք անկախություն չենք ստանա: Ի՞նչ է կատարվում: Մենք սպասում ենք: Այսինքն՝ Գերագույն խորհուրդը, Նախարարների խորհուրդը, անկախության գործընթացն ինչ-որ չափով իրենց վրա վերցնելով, որոշ նախադրյալներ ստեղծելով անկախության համար, այնուամենայնիվ հիմնական գործը թողել են պարոն Գորբաչովին. նա երկիրը կքանդի, և մենք անկախություն կստանանք: Ինձ թվում է՝ այս հարցում պետք է որոշակիություն մտցնել:

Ժողովրդի համար շատ ծանր է, երբ չկա նախագիծ, չկա քայլերի հերթականություն, որը լուծում է իր առջև ծառացած խնդիրները: Այդպիսի նախագիծ մենք չունենք: Ես բազմիցս խոսել եմ դրա մասին: Իմ կարծիքը մնում է նույնը: Այսօր ոչ թե պետք է մանևրենք, որովհետև մանևրելու հնարավորություն է տրված, այլ հաշվի առնենք, որ մենք մանևրելու շատ ավելի

մեծ հնարավորություն ենք տալիս Կենտրոնին: Պետք է ավելի որոշակի լինենք այս հարցում: Անհրաժեշտ է հանրաքվե անցկացնել, պարզել ժողովրդի կարծիքը, արժանապատվությամբ, առանց առճակատումների, գնալ Մոսկվա և պայմանագիր կնքել՝ քանի տարի է տևելու այս անցման շրջանը, հստակեցնել, թե փուլ առ փուլ ինչպես է իրականացվելու մեր անկախությունը: Այլապես մենք մի քայլ ենք անում, Մոսկվան՝ հակառակ քայլ, և պարզվում է, որ մենք դոփում ենք նույն տեղում: Տնտեսական բնագավառում, օրինակ, քայլեր ենք անում՝ ասենք, հինգ քայլ առաջ ենք գնում, հետո Կենտրոնը մի որոշում է ընդունում, և վեց քայլ նահանջում ենք: Դա մեր ցանկությունից չի կախված: Մենք Միության հետ կապված ենք ընդհանուր դրամով, չունենք տնտեսական սահման, այսինքն՝ անհասկանալի բարդ հյուսվածք է ստեղծված, որը ջարդելը շատ դժվար է: Եվ ամեն մի որոշման արձագանք, որն ընդունում է կենտրոնը (մենք, իհարկե, կարող ենք ասել, որ այդ որոշմանը չենք ենթարկվում), խողովակներով գալիս, հասնում է մեզ: Ասեմ, որ Հայաստանի կառավարությունը նախապատրաստում է տնտեսական բարեփոխումների ծրագիր: Բայց համոզված չեմ, որ այդ ծրագիրը կկարողանանք իրականացնել այն հերթականությամբ, որ նախատեսված է, որովհետև դա միայն մեզնից չի կախված:

Արդեն ասացի, թե ինչպես եմ վերաբերվում անկախությանը: Չեմ գտնում, որ Լիտվայի օրինակով առճակատումն այսօր օգուտ կտա, իսկ նստել տեղում և մտածել, որ մենք խորամանկություն կանենք և դիմացիները դա չեն հասկանա ու թույլ կտան մեզ առաջ գնալ, անհեթեթություն է: Եվ եթե մենք քաղաքական որոշակիություն մտցնենք այդ հարցում, կունենանք քաղաքական որոշակիություն նաև Արցախի խնդրում: Դրանք, համոզված եղեք, միմյանց հետ կապված հարցեր են: Եվ անկախության գնալու ուղին հստակեցնելը կհստակեցնի նաև Արցախի հարցը: Մենք կիմանանք մեր անելիքը: Դիմացիներին էլ արդեն դժվար կլինի մանևրել: Ամեն ինչ շատ հստակ ձևակերպված կլինի:

Հիմա անդրադառնամ կարգուկանոնին: Հանրապետությունում, իսկապես, վիճակը ծանր է: Սննդի մասին չէ, որ ես ցանկանում եմ խոսել: Ես՝ որպես Նախարարների խորհրդի նախագահ, կարող եմ ասել, որ Հայաստանում սով չի լինի: Այլ հարց է, որ տարբեր տեղերից դժվարությամբ Հայաստան բերված սնունդը բաժանվում է ոչ հավասարաչափ, ոչ արդար: Հանրապետությունում քաոս է տարբեր պատճառներով և տարբեր ոլորտներում: Իհարկե, տնտեսական անարդարությունը վերացնելու համար հարկավոր է հիմնարար լուծումներ գտնել: Պետք է անցնել մասնավոր սեփականության, որն ինչ-որ չափով կկարգավորի վիճակը: Բայց այս պայմաններում մասնավոր սեփականության անցնել հնարավոր չէ: Ամբողջ տնտեսությունը կանցնի մաֆիայի ձեռքը: Իսկ դա ոչ միայն կհակասի սոցիալական արդարությանը, այլև կքանդի մեր տնտեսությունը: Մասնավոր սեփականության հիմնական նպատակը, հիմնական առավելությունը մրցակցությունն է: Բայց այս ճանապարհով եթե գնանք, տնտեսությունը կհանձնենք մաֆիային, և ազատ մրցակցություն չի լինի: Կլինեն գաղտնի պայմանավորվածություններ, զենքի օգտագործում տնտեսական մրցակցության մեջ: Մենք փորձում ենք որոշ կադրային փոփոխություններ անել: Քրեական գործեր ենք հարուցել: Միայն ծխախոտին վերաբերող 37 քրեական գործ է հարուցվել, առևտրի ոլորտում՝ շուրջ 43, բայց սա լուծում չէ: 70 տարի Խորհրդային Միությունը ստեղծում էր լծակներ, որ կարողանա վերահսկել պետական ունեցվածքը, բայց արդյունքի չհասավ:

Նախկինում շրջանները տեր ունեին՝ շրջկոմի առաջին քարտուղարը: Վատ էր, բայց շրջանը տեր ուներ: Մենք այդ համակարգը վերացրինք: Եվ ճիշտ արեցինք: Բայց փոխարենը նորը չստեղծեցինք: Չհաջողվեց: Այդ համակարգը կստեղծվի, իհարկե, և բնական է՝ ժողովրդավարության հիմքի վրա: Պարզ է, որ ընտրություններ կլինեն, օրենքներ կընդունվեն տեղական խորհուրդների մասին: Ի վերջո, մենք կունենանք այդ լծակները, այդ իշխանությունը: Դրա տերը պետք է լինի ժողովուրդը, որն իր կամքը կարտահայտի ընտրությունների միջոցով: Շրջաններ կան, որ ուղղակի անտերության են մատնված և՛ գյուղատնտեսության, և՛ արդյունաբերության, և՛ քաղաքական բնագավառներում: Մենք կորցնում ենք թափը: Կորցնում ենք և՛ քաղաքականության, և՛ տնտեսության, և՛ կադրային քաղաքականության առումով: Կադրային քաղաքականությունը մենք սկսեցինք զրոյից: Եվ խորհրդարանը մեզ սատար չկանգնեց: Յուրաքանչյուր խոսք, որ այստեղ ասվում է, յուրաքանչյուր քվեարկություն մեծ նշանակություն է ունենում մեր ժողովրդի համար: Եվ այն,

ինչ որ տեղի էր ունենում այստեղ, որոշ չափով նպաստում էր նաև գործադիր իշխանությունների թուլացմանը: Մենք փաստորեն հնարավորություն ենք տալիս դրսի ուժերին կազմակերպված ձևով ազդել մեր կադրային քաղաքականության վրա, դա անթույլատրելի է: Նման պայմաններում կձգձգվի այս աշխատանքը և ավարտին կհասցվի շատ ուշ: Մինչդեռ մեր առջև դրված են և՛ քաղաքական, և՛ ուրիշ խնդիրներ:

Վարչապետ Վ.Մանուկյանի ելույթը
ՀՀ Գերագույն խորհրդում
1990թ. նոյեմբերի 30-ին
«Հայաստանի Հանրապետություն»,
1990, 1 դեկտեմբերի

ՄԵՐ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ՝ ԿԴԱՌՆԱ՞ՆՔ ԱՐԴՅՈՔ ՄԵՆՔ ՀԶՈՐ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱԶԳ

Նախ անդրադառնամ Պարսից ծոցում ծավալված պատերազմական իրավիճակին, որը մեծ նշանակություն ունի ոչ միայն մեր, այլև ողջ աշխարհի համար: Մենք՝ հայերս, սփռված ենք աշխարհով մեկ, և այն, ինչ կատարվում է աշխարհում, այս կամ այն չափով անդրադառնում է մեզ վրա: Իհարկե, այն պատերազմը, որ Պարսից ծոցում մղում են միացյալ ուժերը, արդար պատերազմ է և ևս մեկ անգամ ապացուցում է, որ XX դարի վերջում հնարավոր չէ ուժի միջոցով անպատիժ գրավել թեկուզ մի փոքր պետություն: Բայց կան հանգամանքներ, որոնք ինչ-որ չափով առնչվում են մեզ, և ցանկալի չէ, որ այդ պատերազմը երկար տևի: Բանն այն է, որ հազարավոր հայեր են ապրում Իրաքում և այս կամ այն կերպ կարող են տուժել:

Հաջորդ կարևոր հանգամանքն այն է, որ պատերազմը ծավալվում է Հայաստանի սահմաններին շատ մոտ: Պատերազմն իր ազդեցությունն ունեցավ և շարունակելու է ունենալ Խորհրդային Միության ներքին քաղաքականության վրա: Մինչ այդ ուզում եմ նշել, որ եթե այդ պատերազմը երկարի, կարող է վերաճել զարգացած երկրների և հետամնաց մահմեդական երկրների միջև պատերազմի, որն անխուսափելիորեն իսլամական ֆունդամենտալիզմի նոր ալիք կառաջացնի մահմեդական երկրներում, որն, ինչ խոսք, ցանկալի չէ:

Հիմա անդրադառնանք նախորդ հարցին՝ պատերազմի ազդեցությանը: Խորհրդային Միությունում վերջին երկու տարիներին բավականաչափ բարդ գործընթացներ էին կատարվում: Տարբեր հանրապետություններում ազգային, ժողովրդավարական ուժերը պայքար էին մղում իշխանության համար, որն իհարկե, ինքնանպատակ չէր, այլ որոշ ծգտումներ իրականացնելու միջոց էր: Այն ժամանակ էլ հասկանալի էր, որ առջևում վտանգներ կան, որովհետև ճոճանակը կարող էր և հետ դառնալ: Իշխանությունը վերցնելուց, պատասխանատվություն ստանձնելուց հետո շատ քիչ հնարավորություններ կային էապես բարելավելու տնտեսական վիճակը, և ժողովրդավարական ուժերը, ինչ-որ իմաստով, իրենց վրա էին վերցնում իրավիճակի վատթարացման պատասխանատվությունը: Հիասթափությունը նորից կարող էր առաջ մղել աջակողմյան ուժերին: Ամառվա ամիսներին հանրապետություններում մեծ ոգևորություն էր տիրում, և թվում էր, թե մի քանի քայլից հետո դրանցից մի քանիսը ինքնուրույնություն կստանան, որն, ինչ խոսք, հետաքրքրական էր և թույլ էր տալիս հանրապետություններին ազատվել Կենտրոնի տնտեսական ճնշումից: Սակայն այդ մեխանիզմները լավ չաշխատեցին: Ինչու՞: Նախ՝ ժամանակը սուղ էր, և հնարավոր չեղավ ստեղծել անհրաժեշտ բոլոր կառույցները, երկրորդ՝ չկային այդ պայմանագրերի իրականացումը ապահովող լծակներ: Աշխարհի բոլոր երկրներն են միմյանց հետ տնտեսական կապերով կապված, և մշակված մեխանիզմներ կան, որոնք բոլորին ստիպում են կատարել իրենց պարտավորությունները: Խորհրդային հանրապետությունները այդ մեխանիզմները չունեին: Բացի դրանից, իշխում էր եսամոլությունը, հանրապետությունները քաղաքակիրթ աշխարհից հետ էին մնացել, և յուրաքանչյուրն ուզում էր ինչ-որ բան վերցնել, իսկ իրենից պահանջվածը՝ չտալ: Պատժելու մեխանիզմներ էլ չկային: Այս տեսակետից կենտրոնը շատ

ավելի լավ վիճակում է: Նրա ձեռքին է հսկայական մի մեքենա՝ բանկային համակարգը, որի միջոցով նա կարող է պատժել, կարող է ապահովել պայմանագրերի կատարումը:

Կար նաև մի ուրիշ հանգամանք: Խորհրդային Միության հեղինակությունն արտասահմանում ընկնում էր, նրան վարկեր չէին տրամադրում, տնտեսական վիճակը վատանում էր, և հանրապետություններում խուճապ էր առաջանում: Զգացվում էր, որ ամրանում է կենտրոնական իշխանության ուժը: Դա ոգևորում էր կենտրոնին: Առջևում Պարսից ծոցի պատերազմն էր: Արևմուտքը շահագրգռված էր, որ Խորհրդային Միությունն իր հետ լինի, և աչքերը կփակեր, եթե նա ներսում որոշ քայլեր ձեռնարկեր: Ու կենտրոնն սկսեց ավելի ձգել պտուտակները՝ աշխատելով վերադառնալ հին, միասնական պետությանը:

Իմ կարծիքով, Լիտվայում Գորբաչովը սխալվեց: Նա ինչ-որ մի եզր անցավ, Լիտվայի դեպքերն, իրոք, արյունալից էին, բայց Արևմուտքի արձագանքը ցույց տվեց, որ նույնիսկ պատերազմական այս օրերին Խորհրդային Միությանը այդպիսի բան չի ներվի: Իսկ դա՝ հատկապես տնտեսական առումով, խորհրդային երկրի համար մեծ նշանակություն ուներ: Լիտվայի դեպքերի քաղաքական նշանակությունը մեծ է: Արյունահեղությամբ էլ, իհարկե, մեզ հարկավոր չէ զարմացնել: Մայիսի 27-ին մենք ավելի շատ զոհեր ունեցանք, բայց դա իր արձագանքը գտավ: Դա էլ հասկանալի էր՝ Պարսից ծոցի պատերազմը: Կենտրոնի ձգտումը՝ այս թոհուբոհի մեջ որոշ խնդիրներ լուծել, հանգեցրեց նրան, որ իրավիճակը սրվեց նաև Արցախում: Պետք է խոստովանել, որ մեր ձեռքում շատ քիչ լծակներ կան իրավիճակը շտկելու և կատարվող դեպքերի վրա ազդելու համար: Համեմատենք անցած ամռան ոգեշունչ ամիսների հետ, տարբեր հանրապետություններում վճռականությամբ լի ժողովրդական շարժումները անցնում էին իշխանության գլուխ, և թվում էր, թե հեշտությամբ կկարողանան հաղթահարել տնտեսական խոչընդոտները. դա չիրականացավ:

Այսօր մենք էլ ենք այդ գործընթացի մեջ և պարտավոր ենք գնահատել մեր անելիքները: Ինչպես մինչ այժմ եղած բոլոր կայսրություններն են քանդվել, այնպես էլ կքանդվի Խորհրդային Միությունը և կքանդվի մոտ ժամանակներս: Մեր ժողովուրդն ընտրեց անկախության ուղին, ընդունեց, որ մենք ուզում ենք ստեղծել անկախ պետություն, որը մեր դարավոր երազանքն է: Բայց քանի որ կայսրությունը քանդվում է, կարող է լինել և այնպիսի պահ, որ անկախ մեր ցանկությունից, անկախություն ստանանք: Այնուհանդերձ շատ էական է, որ մենք ցանկանու՛մ ենք մեր անկախությունը: Իսկ դրան պետք է պատրաստվել:

Ի՞նչ քայլեր է հարկավոր անել: Մեր ցանկությունն է անկախանալ՝ ունենալով որոշ ինքնուրույն պետական կառույցներ, ինքնուրույն տնտեսական իրավիճակ, անկախանալ՝ առանց պատերազմների մեջ մտնելու: Մենք պետք է ստեղծենք ներքին կառույցներ, որոնք բնորոշ են անկախ պետությանը: Դրանք իշխանության կառույցներ են՝ բանակը, այն ծառայությունը, որն ապահովում է հանրապետության հետախուզությունն ու հակահետախուզությունը և այլն: Ի՞նչ է հարկավոր անել տնտեսության մեջ: Որպեսզի տնտեսապես մեզ ապահով զգանք (իսկ մեր տնտեսությունն այսօր խոցելի վիճակում է), պետք է անցնենք մասնավոր սեփականության: Դա տնտեսությունը կդարձնի ավելի ճկուն: Պատմական փորձը ցույց է տալիս, որ բոլոր թերություններով հանդերձ, դա է տնտեսությունը զարգացնելու միակ ուղին: Մենք, իհարկե, այդ ճանապարհի առաջին քայլերն արել ենք: Իհարկե, դժվարություններ կան ընդհանուր ապապետականացման կուրսի մեջ, և հիմնականը սոցիալական արդարության հարցն է: Պետական ունեցվածքը կարելի է տալ մասնավորին, բայց դժվարն է այն այնպես կազմակերպել, որ չխախտվի արդարության սկզբունքը:

Սակայն տնտեսությունը զարգացնելու համար միայն մասնավոր սեփականության անցնելը բավական չէ, պետք է կարողանանք մտածել նաև մեր տնտեսության ռազմավարական նպատակների մասին:

Էներգետիկայի մասին. մենք էներգիայի ոչ մի ինքնուրույն աղբյուր չունենք: Արևի ճառագայթների կամ քամու էներգիայի վրա հույս դնելն այնքան էլ իրատեսական չէ: Դա մեր էլեկտրաէներգիայի 5-10 տոկոսը կարող է ապահովել: Մեր հիմնական հումքը գազն է և մազութը, իսկ դրանց հետ կապված յուրաքանչյուր միջադեպ աղետալի վիճակի մեջ է դնում մեր էներգետիկան: Իհարկե, տարբեր առաջարկներ կան: Նույնիսկ համարձակ առաջարկ կա՝ մտածել 10 բալանոց սեյսմակայունությամբ ատոմակայանի մասին: Դրանք քննարկվելիք

խնդիրներ են, բայց կասկածից վեր է, որ պետք է լուրջ գրաֆիկ կազմվի, թե ինչպես ենք պատկերացնում ապագա Հայաստանի էներգետիկան: Արևմուտքի երկրների զարգացման հիմքը նրանց ձեռք բերած նախնական կապիտալն էր, որն ինչ-որ չափով նրանք ստացան գաղութատիրական քաղաքականության միջոցով: Մենք այդ նախնական կապիտալը չունենք և պիտի գնանք այն ճանապարհով, որով գնացել է ողջ մարդկությունը. զարգացնենք գյուղատնտեսությունը, վաճառենք հումքի մի մասը, և դա մեզ կտա այն նախնական կապիտալը, որով ինչ-որ բաներ կարող ենք անել:

Այժմ կցանկանայի անդրադառնալ այն հարցին, թե մեր անկախությունը ձեռք բերելու ինչ ճանապարհներ կան: Այսօր քննարկվում է երեք ճանապարհ: Առաջինն այն է, որով հիմա ընթանում ենք, այսինքն՝ գիտենք, թե ինչ է հարկավոր անել, անընդհատ հարմարվում ենք այն վիճակին, որում տվյալ պահին գտնվում է Խորհրդային Միությունը, և անում ենք այն քայլը, որը տվյալ դեպքում հնարավոր է կատարել: Եվ քանի որ Խորհրդային Միության ներքին կյանքում գերակշռում է անորոշությունը, դա փոխանցվում է նաև մեզ: Մեր ծրագրերի մեջ որոշ անորոշություն է առաջանում, որը վհատեցնում է մարդկանց. մարդիկ որոշակիություն են սիրում:

Երկրորդ ճանապարհը, որի մասին ևս մի քանի անգամ արդեն խոսել եմ, հանրաքվեն է: Կա Խորհրդային Միության օրենքը. հանրաքվեի արդյունքներով դուրս ես գալիս Խորհրդային Միության կազմից: Այդ պահը վճռականություն է պահանջում, այն հղի է որոշակի վտանգներով, բայց հանրաքվեի փաստն արդեն միջազգային նշանակության հանգամանք է, և դա չի կարող ուրիշ երկրների կողմից շրջանցվել: Դրա հետ պետք է հաշվի նստել: Միաժամանակ, քանի որ դա վերապահված է սահմանադրությամբ, կենտրոնն էլ չի կարող այդ փաստն անտեսել: Մենք արդեն հասկանում ենք, որ Հայաստանի անկախությունն ուրիշները կարող են ճանաչել այն դեպքում, եթե կենտրոնը ստիպված լինի ճանաչել: Դա է Արևմուտքի քաղաքականությունը: Հանրաքվեից հետո կարելի է կենտրոնի հետ պայմանավորվել փուլերի և պարտավորությունների մասին:

Երրորդ ճանապարհը. Հայաստանի Գերագույն խորհուրդը ժամանակ առ ժամանակ պետք է հայտարարի մեր անկախ լինելու մասին, անկախ Հայաստանի անձնագրեր բաժանենք կամ թագավոր ընտրենք և հայտարարենք, որ մենք անկախ ենք, անկախ թագավորություն ենք և այլն: Այսինքն՝ թատերայնություն… Քաղաքականության մեջ դա ոչ մի դրական արդյունք չի կարող տալ, ընդհակառակը, կարող է վնասել: Դա կնշանակի գեղեցկության համար հարվածի տակ դնել ժողովրդին:

Դարձյալ անդրադառնամ հանրաքվեին: Խորհրդային Միության հանրաքվեին մասնակցելն ուղղակի անիմաստ է, որովհետև այնտեղ որոշակի ոչինչ չկա: Որոշ հանրապետություններ հայտարարել են, որ իրենք այդ հանրաքվեին չեն մասնակցելու: Իմ կարծիքով, մենք նույնպես չպետք է մասնակցենք: Բայց եթե որոշենք, որ հանրապետությունում հանրաքվե ենք անցկացնելու, ապա դա ավելի շուտ պիտի անենք, քան Խորհրդային Միությունը: Մենք չպետք է շփոթենք մեր և Խորհրդային Միության հանրաքվեները:

Կրկին անդրադառնամ մեր տնտեսությանը: Այն, իրոք, խոցելի վիճակում է: Մենք հպարտ հայտարարություններ ենք անում, բայց նվաստացուցիչ հանգամանքներում դիմում ենք պարեն, բենզին, և զանազան ապրանքներ ստանալու համար: Յուրաքանչյուր հանրապետություն ինչ-որ լծակ ունի, որով կարողանում է ազդել Կենտրոնի վրա: Մեր հանրապետությունը այդ լծակը չունի: Փորձեմ մի վտանգավոր հարցի մասին խոսել: Հանրապետությունում ի՞նչ արտադրություններ փակվեցին. կաուչուկի արտադրությունը, ատոմակայանը, Ալավերդու գործարանը: Վերջինս այն վիճակում էր, որ ոչ մի վերանորոգում արդյունք չէր տա, ստիպված էինք փակել: Բայց ինչի՞ դա հանգեցրեց. պղինձ, որը ստրատեգիական հումք է, մեծ արժեք ունի միջազգային շուկայում և մեծ քանակությամբ վալյուտա կարող էր բերել (մեր նախնական կապիտալը կազմելուն կարող էր ծառայել), չունենք: Ալավերդու գործարանն, այո, պետք է փակվեր, բայց մի սկզբունք անհրաժեշտ է ընդունել. քանի դեռ նորը չենք կառուցել, հնից չհրաժարվենք: Մենք այսօր ուզում ենք նոր պղնձաձուլական գործարան կառուցել: Կառուցել միջազգային չափանիշներով, սակայն դրա համար անհրաժեշտ է 120-150 մլն դոլար:

Ատոմակայանի մասին: Շատ վտանգավոր էր, այո: Եթե այն վթարվեր, մենք պետք է Հայաստանը թողնեինք: Ատոմակայանի փակելը ճիշտ էր: Բայց կարելի էր մտածել: Միգուցե հնարավոր էր այն անվտանգ դարձնել: Այդ հնարավորությունները թերևս կային: Այսօր մեզ անհրաժեշտ է ծրագրեր կազմել: Երկու ծրագիր կա. ապապետականացումը և ստրատեգիական խնդիրները:

Մի քանի խոսք մեր հանրապետության ներքին կյանքի մասին: Փոփոխություններ, իհարկե, կատարվում են, թեպետ կան բաներ, որոնց արդյունքը հետագայում կերևա: Խորհրդային Միությունում քաոսը դեռ կշարունակվի: Խոսքը տնտեսական, քաղաքական անկայունության, հանցագործության չափերի մասին է: Եվ որքան էլ դժգոհենք մեր ներքին կյանքից, պիտի նկատենք, որ Հայաստանը կայունության մի կղզի է, և յուրաքանչյուր վաղվա օրն ավելի կայուն է նախորդից: Այդ բանը լավ են զգում թե՛ արտասահմանյան բիզնեսի ներկայացուցիչները, թե՛ քաղաքական գործիչները: «Ժամանակ» ծրագրով շարունակ հայերին վարկաբեկելու պատճառներից մեկն էլ սա է: Աշխարհին ուզում են ցույց տալ, որ Հայաստանը չէ Խորհրդային Միության այն կղզին, որի վրա կարելի է հենվել: Դա կենտրոնական իշխանությունների «նուրբ» քաղաքականությունն է: Խեղաթյուրված տեղեկատվության միջոցով նա փորձում է խանգարել Հայաստանին՝ դառնալու կապիտալի ներդրման և տնտեսական բարգավաճման կղզի:

Հարյուր տարին մեկ է մեր ժողովրդի համար այնպիսի պահ լինում, երբ նրա կատարած քայլն անդրադառնում է ապագա սերունդների վրա, ողջ հայ ժողովրդի պատմության վրա: Ես բոլորին կոչ եմ անում՝ զգանք այս պահի պատասխանատվությունը և ներքին հանդարտությամբ ու ոգևորությամբ ընդունենք այն: Մեր ջանքերից է կախված մեր ապագան: Կլինեն տարբեր խավեր, շերտեր, կազմակերպություններ, կուսակցություններ, յուրաքանչյուրը կհետապնդի իր շահը, բայց այդ ամենը կլինի միասնության մեջ: Եթե մենք հիմա միասնական ազգ չլինենք, կկորցնենք պահը:

Ես երազում եմ այն ժամանակները, երբ մեր հանրապետությունում, սփյուռքի հետ միասին, կստեղծենք այնպիսի կառույց, որը կբազմապատկի մեր ուժերը և հնարավորություն կտա ազդելու աշխարհի տարբեր կետերի վրա: Մեր միասնությունից է կախված՝ կդառնա՞նք արդյոք հզոր ու համաշխարհային ազգ, թե՞ ոչ:

Վարչապետ Վ.Մանուկյանի ելույթը
1991թ. հունվարի 21-ի մամուլի ասուլիսում
«Հայաստանի Հանրապետություն» 1991, 22 հունվարի

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՐԱՄՆ ԱՆՎՍՏԱՀԵԼԻ Է

-Պարոն վարչապետ, ե՞րբ տեղեկացաք այս որոշման մասին:

-Երեկ առավոտյան հանրապետություն ժամանեցին երեք ընկերներ, մեկը ֆինանսների նախարարությունից էր, մյուսը բանկի ներկայացուցիչ էր, երրորդը՝ ՊԱԿ-ի: Նրանք հայտնեցին, որ երեկոյան «Ժամանակ» ծրագրով հայտարարություն է լինելու, սակայն իրենք էլ տեղյակ չեն, թե ինչի համար են գործուղվել Հայաստան: Մենք կապվեցինք մյուս հանրապետությունների հետ, տեղեկացանք, որ ամեն տեղ նույն վիճակն է: Երեկոյան ժամը 9-ին ստացա կառավարական հեռագիր, որում կցկտուր ասված էր նոր որոշման, նոր փոփոխությունների մասին: Մանրամասնությունները, ինչպես մեր մյուս քաղաքացիները, ես և կառավարության անդամները տեղեկացանք «Ժամանակ» ծրագրից:

Դա արդեն անընդունելի է. և ևս մեկ անգամ ընդգծում է մեր կախվածությունը, մեր անկախ չլինելը:

-Ինչպե՞ս եք վերաբերվում այս որոշմանը, այն կիրարկվելու՞ է մեր հանրապետությունում, թե՞ ոչ:

- Իմ վերաբերմունքը խիստ բացասական է: Մի կողմ թողնենք որոշման մեջ եղած անբարոյականությունը, մի կողմ թողնենք, որ իրավական պետությունը այսպիսի որոշումներ

ընդունելու իրավունք չունի, դա բնորոշ է միայն տոտալիտար սոցիալիստական երկրին և ևս մի անգամ ապացուցում է, որ երկիրն այդպիսին էլ մնացել է: Որոշումն անընդունելի է նաև տնտեսական առումով: Նախ այն անվստահություն է առաջացնում ժողովրդի մեջ իշխանությունների նկատմամբ, անվստահություն՝ խորհրդային դրամի նկատմամբ, անվստահություն՝ հետագա ծրագրերի նկատմամբ: Եվ այդ հարվածը, այդ մինուսը շատ ավելի մեծ է, քան այն փոքր արդյունքները, որոնք սպասվում են. մի քանի միլիարդ, մի քանի տասնյակ միլիարդ ռուբլի կարող են շահել այդ գործողության ընթացքում:

Երկրորդ՝ որոշումը լավ կազմակերպված և մշակված չէ: Ես համոզված եմ, որ շատ փոքր արդյունքների կհասնեն, որովհետև մարդիկ, իրար օգնելով, կաշխատեն այս կամ այն ձևով շրջանցել որոշումը և իրենց ձեռքի, իրենց տրամադրության տակ եղած դրամները այս կամ այն կերպ իրացնել:

Մեր հանրապետության համար սա մեծ հարված է, որովհետև մենք ունենք ծրագրեր մեր ունեցվածքի ապապետականացման մասին: Կա դրամ, որը մեծ քանակությամբ կուտակված է անմաքուր ձեռքերում: Մենք ցանկանում էինք, ունեցվածքը վաճառելով, այդ գումարի մի մասը ստանալ և բաշխել սոցիալական վատ վիճակում գտնվող շերտերին: Մեր ժողովրդին վերադարձնել և օգտագործել մեր տնտեսության զարգացումը խթանելու համար: Փաստորեն, այս որոշմամբ ուզում են քար գցել մեր ծրագրերի վրա: Այս տեսակետից էլ մեզ համար այն ընդունելի չէ:

Կկիրարկվի օրենքը, թե ոչ. պետք է ասեմ, որ մեծ բարդություններ կան: Կենտրոնն ունի երկու հզոր ուժ՝ բանակը և բանկային համակարգը: Եվ դժվար է պայքարել բանկային համակարգի դեմ, որովհետև դեռևս մեզ վրա ազդելու շատ մեծ լծակներ կան: Այդ պատճառով հիմա սկսում ենք կիրառել այդ օրենքը, բայց միևնույն ժամանակ կապվում ենք մյուս հանրապետությունների հետ: Ըստ առավոտյան ստացած տեղեկությունների, բոլոր հանրապետություններում դեռ խուճապ է, դեռ հստակ կողմնորոշում չկա: Ես համոզված եմ, որ այս նեղ պայմաններում ժողովուրդը կհամախմբվի, և մեծ կորուստներ չեն լինի: Տեղական մարմիններին համապատասխան կարգադրություններ են ուղարկվել մինչև նոր որոշում ընդունելը:

-Պարոն վարչապետ, այս որոշումը մեր ժողովրդին դրական որևէ բան կարո՞ղ է տալ:

-Չեմ կարծում, բացի այն հանգամանքից, որ Արցախի մեր հայրենակիցները մի քանի օր հանգիստ կշնչեն, որովհետև ադրբեջանցիները զբաղված կլինեն իրենց փողերով:

Վարչապետ Վ. Մանուկյանի հեռուստահարցազրույցը,
1991թ. հունվարի 23
«Հայաստանի Հանրապետություն» 24 հունվարի

ՎճՌԱԿԱՆ ՔԱՅԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

-Հայոց համազգային շարժումը Հայաստանի Հանրապետության իշխանության գլուխ անցավ՝ իր նախընտրական ծրագրում ունենալով Հայաստանի անկախության խնդիրը: Գերագույն խորհրդի ընտրություններում ՀՀՇ-ի հաղթանակ տանելուց հետո անցել է մոտ յոթ ամիս: Այս ընթացքում Հայաստանի նորընտիր իշխանություններն ի՞նչ վճռական քայլեր են արել Հայաստանն անկախ դարձնելու ուղղությամբ:

-Նախ՝ ի՞նչ է նշանակում իրական անկախություն: Անկախությունը կապված է ուրիշ պետությունների կողմից այն ճանաչելու հետ: Ոչ մի խորհրդային հանրապետություն դրան չի հասել: Բոլորին հայտնի է Արևմուտքի դիրքորոշումը՝ պաշտպանել ԽՍՀՄ-ի ամբողջականությունը, չհակառակել Գորբաչովին: Եթե կենտրոնը կամ Գորբաչովը չճանաչեն մեր հանրապետության անկախությունը, այլ պետություններ չեն ճանաչի: Այդ տեսակետից մենք, բազմաթիվ մանր քայլեր անելով հանդերձ, մի պահ պետք է վճռական քայլ կատարենք, որից հետո միայն կճանաչվի Հայաստանի անկախությունը: Ես բազմիցս ասել եմ, որ այժմ այդ ճանաչմանը հասնելու միակ ճանապարհը Հայաստանում հանրաքվե անցկացնելն է:

Իմիջիայլոց, Խորհրդային Միության նկատմամբ Արևմուտքի վերաբերմունքի մեջ էլ նկատելի է մի փոքր փոփոխություն. նա Միությունը որոշ հարցերում սկսել է դիտել որպես հանրապետությունների փունջ, ասոցիացիա: Այս փոփոխություններում էական դեր խաղացին Լիտվայի դեպքերը:

Ի՞նչ փոփոխություններ կան մեր հանրապետությունում: Մեր ներքին հարցերը լուծելիս մենք գրեթե անկախ ենք: Իհարկե, կենտրոնի կողմից պարտադրված որոշ տնտեսական բնույթի որոշումներին ստիպված ենք լինում ենթարկվել, քանի որ մի տնտեսական համակարգի մեջ ենք, ու գործում է ուժեղի և թույլի հարաբերությունը: Վերջերս ինձ ներկայացրին նախկինում Հայաստանում մարդկանց պաշտոնների նշանակման կարգը. հարյուրից ավելի պաշտոն մեզ մոտ ժամանակին Մոսկվան էր հաստատում կամ նշանակում: Այժմ կարող ենք որևէ պաշտոնում, հաջող կամ անհաջող, ինքնուրույն նշանակում կատարել, գլխավորն այն է, որ անկախ ենք ընտրության մեջ: Բացի այդ, ԽՍՀՄ-ի հաստատած օրենքները մենք վերանայում ենք և դրանց որոշակի մասը մերժում:

-Շատերը ՀՀՇ-ն գնահատում են որպես կոմկուսի իշխանությունը տապալող ուժ: Վաղ թե ուշ կոմկուսը տապալվելու էր: Շատերն էլ ՀՀՇ-ի մեջ տեսնում էին Հայաստանի անկախության համար պայքարող կազմակերպություն, և այսօր վերջիններս որոշ հիասթափություն են ապրում:

-ՀՀՇ-ն շատ հետևողականորեն իրականացնում էր մի ծրագիր, որի որոշ դրույթներ դժվար ըմբռնելի էին մեր ժողովրդի համար: Անկեղծ ասած, անկախության գաղափարը խոր նստած չէր հայերիս մեջ: Դժվարին խնդիր էր հայերիս միջից հանել զգացմունքային քաղաքականության հակումը և արմատավորել յուրաքանչյուր պետությանը բնորոշ հավասարակշռված քաղաքականություն: ՀՀՇ-ն իր առջև դրեց այդ բարդ խնդիրը և լուծեց այն: Այնպես որ ՀՀՇ-ն հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի կյանքում:

-Վերջերս Ձեզ հետ անցկացված մամուլի ասուլիսի ժամանակ դուք խոսեցիք Հայաստանում արտահայտված անկախության թատերական ճանապարհի մասին և քննադատեցիք այն: Դուք նկատի ունեիք Պարույր Հայրիկյանի՞ն:

-Ճիշտն ասած, առանձին անհատի նկատի չունեմ: Խոսքս մտայնության մասին է, որ 2-3 օրվա ընթացքում բացահայտ նկատվել է որոշ մարդկանց գործողություններում. հայտարարություններով, գեղեցիկ կեցվածքներով, հեքիաթային, ֆանտաստիկ ձևերով այս շատ իրապաշտ աշխարհում փորձում են լուծել որոշակի մեծածավալ խնդիրներ:

-Լիտվայի քաղաքականությունն ինչ-որ առումով թատերական էր՝ հռչակագրեր, հայտարարություններ:

-Ես չէի ասի, որ Լիտվայի ճանապարհը շատ թատերական էր, բացի հայտարարություններից, այնտեղ բազմաթիվ մեխանիզմներ էին ստեղծվել, օրենքներ մշակվել:

-Ի վերջո նման օրենքներ Հայաստանն էլ է ընդունել:

-ԽՍՀՄ-ում առաջին ամենախիզախ քայլը կատարեց Լիտվան՝ հայտարարելով իրեն անկախ պետություն: Այդ քայլը թատերական չէր, այլ սառը հաշվարկով էր արված: Կարելի է քննել՝ այդ հաշվարկը ճիշտ էր, թե սխալ, դա այլ հարց է: Պարզ երևում է՝ ինչպես լիտվացիները նախապատրաստվեցին հռչակագրին: Մանրամասն քննեցին Մոլոտով-Ռիբենտրոպ պայմանագիրը, օգտագործեցին Լիտվայի եվրոպական երկիր լինելը, հաշվի առան, որ շատ երկրներ չեն ճանաչել Խորհրդային Միության կողմից Լիտվայի օկուպացումը և այլն: Այս պաշարի վրա էլ կառուցեցին իրենց քաղաքականությունը: Լիտվան առանձնապես չէր ցանկանում այլ հանրապետությունների հետ կապվել և լինել ընդհանուր ազգային-ազատագրական, ժողովրդական շարժման մեջ, որովհետև լիտվացիները գտնում էին, որ իրենց ճանապարհն ուրույն է, և ավելի հեշտությամբ կհասնեն անկախության: Նրանք գնացին այդ ճանապարհով, հռչակեցին Լիտվայի անկախությունը, հետո շատերը, որ կարծում էին միանգամից իրենց իղձերը կիրականանան, դառը հիասթափություն ապրեցին: Բայց Լիտվան հետևողականորեն, նույնիսկ նահանջներով գնաց դեպի իր նպատակակետը: Իսկ վերջին իրադարձություններով (իհարկե, ցավալի է, երբ մարդիկ են զոհվում) Լիտվան մի մեծ քայլ արեց դեպի անկախություն:

Սողեսող, միայն մանևրելով հնարավոր չէ հասնել անկախության, վճռական համարձակ քայլը անհրաժեշտություն է: Կարծում եմ՝ Լիտվան իր հռչակագրից հետո կատարեց երկրորդ շատ կարևոր քայլը և ընդհուպ մոտեցավ անկախության՝ տալով ընդամենը տասներեք զոհ:

-Դուք ընտրել եք հանրապետության՝ տնտեսական հզորացման միջոցով անկախության գնալու ուղին: Սակայն մարդկության պատմության մեջ կարծես նման օրինակներ չկան: Բոլոր ստրկացված ազգերը տարբեր կայսրություններից անկախացել են տնտեսական ավերումների, պատերազմների միջոցով: Այդպիսի օրինակները շատ են հենց 20-րդ դարում: Հայաստանը բացառությո՞ւն է:

-Ոչ: Ես իդեալական տարբերակը պատկերացնում եմ այսպես. առաջինը՝ անկախություն ենք նվաճում, հետո՝ տնտեսությունը պետականից փոխադրում ենք մասնավորի, ապա երկրում հաստատում ենք ժողովրդավարություն: Այս տրամաբանական հերթականությունը, սակայն, մեր ժամանակների խառնաշփոթության պայմաններում հնարավոր չի լինում պահպանել: Եվ հաճախ այդ երեք քայլերը խճճվում են: Ես էլի եմ կրկնում՝ մեր առաջնային խնդիրն է հանրապետությունում անկախության համար հանրաքվե անցկացնելը: Այդ քայլից հետո կենտրոնից և այլ պետությունների կողմից մեր անկախությունը ճանաչելու հավանականությունը մեծ է: Բայց քանի դեռ Հայաստանում հանրաքվե չի անցկացված, ներկա ժամանակաշրջանը հարկավոր է հնարավորին չափ օգտագործել՝ իրականացնելով տնտեսական բարեփոխումներ:

-Ի դեպ, երբ հրապարակվեց Ձեր «Գնացքից թռչելու ժամանակը» հոդվածը, Դուք այն ժամանակ իշխանություն չունեիք: Այսօր Դուք Հայաստանի Հանրապետության Նախարարաց խորհրդի նախագահն եք, և քայլերի հաջորդականությունը ավելի հեշտ իրագործելի պետք է լինի Ձեզ համար:

-Ես իմ հայացքները չեմ փոխել և մշտապես քարոզում եմ վերոհիշյալ գաղափարները, որոնք, ցավոք, շատերի մեջ չեն հասունացել: Կենտրոնի՝ համամիութենական հանրաքվե անցկացնելու որոշումը շատ հանրապետություններում արթնացրեց ինքնուրույն հանրաքվեի գաղափարը. օրինակ՝ Վրաստանը, մերժելով միութենականը, մարտի 31-ին որոշել է առանձին հանրաքվե անցկացնել: Կարծում եմ՝ Հայաստանում էլ շատ ռեալ է նման ծրագրի իրականացումը, որը մեր հանրապետության ազգային միատարրության պայմաններում հաջողությամբ կպսակվի:

-Ձե՞ք կարծում, որ հանրաքվեին նախապատրաստվելու քարոզչությունը ուշանում է:

- Դժվարանում եմ ասել: Իսկապես, հնարավոր է, որ գնացքը մտնի թունել: Երբեմն ինձ թվում է, թե գնացքն արդեն թունելում է: Բավական բարդ քաղաքական իրավիճակ է Խորհրդային Միությունում: Պարսից ծոցի պատերազմը անհանգստություն է պատճառում, որ կարող է ձգվել և, Աստված գիտե, ինչ հետևանքներ թողնել: Մյուս կողմից՝ նշեցի Արևմուտքի վերաբերմունքում դրական տեղաշարժերը, որոնցից, որպես մի բարենպաստ իրադրությունից, պետք է օգտվել: Ոմանք կոչ են անում սպասել ավելի բարեպատեհ առիթի և նոր կտրուկ քայլ կատարել դեպի անկախություն: Քաղաքականության մեջ այդպիսի դժվարին խնդիրներ լուծելիս հաշվարկից բացի վճռականություն է հարկավոր: Միայն մաթեմատիկական ճշգրիտ հաշվարկներով նմանօրինակ խնդիրներ լուծել հնարավոր չէ: Ներքնազգացողությամբ պետք է ճիշտ պահը ընտրել:

-Անցյալ տարվա գարնանը Խորհրդային Միության ժողովրդավարական և ազգային շարժումները մի ընդհանուր տեսակետ ունեին, ըստ որի կայսրության փլուզումը օրերի հարց է, և հնարավորին չափ շուտ պետք է օգտվել այդ իրավիճակից: Սակայն աշնանը պարզվեց, որ կայսրությունը դեռևս ամուր է, և շատերը հուսախաբվեցին: Այս ամենը հնարավո՞ր էր արդյոք հաշվարկել:

- Այո: Այն ոգևորությունը, որ կար գարնանը և ամռանը, հետզհետե նվազեց աշնանը: 1990թ. մայիսին ֆրանսիական «Լե նուվել օբսերվատուդ» պարբերականին տված հարցազրույցում ես, կիսելով որոշ քաղգործիչների մտահոգությունը, ասացի, որ տարբեր հանրապետություններում ժողովրդավարական ուժերի իշխանության գլուխ անցնելը հնարավորություն չի տա խոշոր հաջողությունների հասնել, քանի որ տնտեսական բազմաթիվ խոչընդոտներ կան: Հետագայում հիսաթափության ժամանակաշրջան կգա, և Խորհրդային

Միության իշխանությունը, հնարավոր է, հետզհետե անցնի աջակողմյանների ձեռքը: Դեռևս այդպիսի բան չի եղել, բայց ճոճանակի շարժումը դեպի հետ, այնուամենայնիվ, նկատվում է: Թե ճոճանակը ինչքան հետ կգնա, դեռ հայտնի չէ:

-Հայոց պետականության ամրապնդումը հետապնդող և Հայաստանի անկախությանը ձգտող ամենազորեղ կազմակերպությունը ՀՀՇ-ն է: Պետք է խոստովանենք, որ ՀՀՇ-ն այսօր թույլ է իր կառուցվածքով:

Հայաստան մուտք գործած Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը վերջին երկու տասնամյակներում փոխել է իր քաղաքականությունը և Հայաստանի անկախության համար պայքարող կուսակցությունից վերածվել հողային պահանջներ ներկայացնող և հայոց անկախությունը մերժող կուսակցության: Հայտնի է, որ Դաշնակցությունը շատ ամուր կառուցվածքներ ունի, որոնցով կարող է հաղթել հայ անկախական հոսանքներին և գրավել հանրապետության իշխանությունը: Այս հանգամանքը կարո՞ղ է սպառնալ հեռանկարում Հայաստանի անկախությանը:

-Այն, որ ՀՀՇ-ն և Հայաստանի մյուս բոլոր կազմակերպությունները կառուցվածքով շատ փխրուն են, ակնհայտ է: ՀՀՇ-ին բնորոշ է եղել անորոշ կառուցվածքով մարմին, բայց հստակ կառուցվածքով շարժումը ղեկավարող վարչություն և հստակ քաղաքական գիծ: ՀՀՇ-ն թույլ է կառուցվածքով, բայց շատ ուժեղ է եղել իր գործունեությամբ:

Ես համաձայն չեմ, թե դաշնակցությունը դեմ է Հայաստանի անկախությանը: Այո, դաշնակցական շատ ղեկավար գործիչների ելույթներն ու հոդվածները իրենց մեջ պարունակում են ձեր անհանգստությունը առաջացնող մտքեր: Բայց ընդհանուր առմամբ դաշնակցականները նույնպիսի հայ, ազգային մարդիկ են: Շատ հարցերում համաձայն են մեր հայացքներին: Ի վերջո, ՀՀՇ-ի գաղափարները, որոնք հարազատ էին դաշնակցությանը ինչ-որ փուլում, նորից սողոսկելու են այժմյան դաշնակցության մեջ: Գուցե դաշնակցությունը դառնալու է վաղվա ՀՀՇ-ի կազմակերպված ձևը: Բոլոր դեպքերում ես կարծում եմ, որ ՀՀՇ-ի հիմքի վրա կստեղծվի մի հզոր ազգային կուսակցություն, որն իր ձեռքը կվերցնի մեր ժողովրդի բախտը:

-Հայաստանում քաղաքական տարբեր հոսանքներից առավել վառ արտահայտված են ժողովրդավարականը և ազգայինը: Դրանցից որի՞ն եք Դուք համակրում:

- Դժվար է տարբերակել ժողովրդավարականը և ազգայինը: Ինձ թվում է՝ այդ հոսանքների ներկայացուցիչներն էլ լավ չեն պատկերացնում դրանց առանձնահատկությունները: Կարելի է հետաքրքիր անեկդոտներ պատմել ազգայնականների հակազգային գործունեության և ժողովրդավարների իշխանատենչ մոլուցքների ու ամբողջատիրության ձգտելու մասին: Սա չէ էականը: Այսօր հանրապետությունում գոյություն ունեցող կուսակցությունները իրականում կուսակցություններ չեն: Դրանք ազգային, բավական անորոշ, բայց և վեհ գաղափարներ են հետապնդում: Շատ խելոք մարդիկ են այսօր հավաքվում և հռչակում մի նոր կուսակցության ծնունդը, որը, ի վերջո, վերածվում է ակումբի կամ աղանդի: Ամեն ինչ առջևում է: Իսկական կուսակցություններ կառաջանան միայն անկախ պետություն ստեղծելուց հետո:

-Հայերի համաշխարհային ազգ լինելու Ձեր գաղափարը նշանակում է աշխարհով մեկ ցրված լինե՞լը, թե՞ համաշխարհային դեր ունենալը; Ի վերջո, գնչուներն էլ են աշխարհով մեկ սփռված:

- Ե՛վ մեկը, և՛ մյուսը: Չի հնչի, եթե մեկն ասի, թե գնչուները համաշխարհային ազգ են, այսինքն՝ սփռված լինելը բավարար պայման չէ համաշխարհային ազգ լինելու համար: Ֆրանսիացիները սփռված չեն, բայց որոշիչ ազդեցություն են ունեցել մարդկության պատմության մեջ: Այդուհանդերձ ֆրանսիացիներն էլ համաշխարհային ազգ չեն: Համաշխարհային ազգ ասելով՝ ես հասկանում եմ սփռված, կազմակերպված, մարդկության զարգացման վրա որոշակի ազդեցություն ունեցող:

-Պարսից ծոցի ներկայիս իրավիճակը երբեմն բնութագրվում է որպես Արևելքի ու Արևմուտքի պատերազմ: Եթե անգամ այս պատերազմը մոտ ժամանակներս ավարտվի, դրանով իրականում այդ առճակատումը չի ավարտվում: Հայաստանն ապագայում ի՞նչ դեր կարող է ունենալ այս հակամարտության մեջ:

-Իրաքի պատերազմը կարող է վերաճել Արևելքի և Արևմուտքի պատերազմի, սակայն դա դեռևս այդպես չէ: Տա Աստված, որ մնա իր սահմաններում: Բայց որ Արևելքի և Արևմուտքի մեջ կա հակամարտություն, բացահայտ զգացվում է: Այն միշտ չէ, որ զինված ձևեր է ընդունում, հիմնականում դա արտահայտվում է գաղափարական, մշակութային, տնտեսական պայքարներով: Մենք էլ գտնվում ենք Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում: Մի կողմից՝ մենք Արևելքի ժողովուրդ ենք՝ արևելքին բնորոշ կենցաղով, բայց մյուս կողմից էլ հարազատ ենք Արևմուտքին մեր կրոնով, մշակույթով, գուցեև որոշ չափով խառնվածքով: Այս երկվությունը մենք պետք է օգտագործենք որպես առավելություն: Մեր միջանկյալ վիճակով այդ հակամարտության շղթայում պետք է կարողանանք Արևելքի և Արևմուտքի հաշտության օղակը դառնալ, ու այդ դերով անհրաժեշտ լինել թե՛ մեկին, թե՛ մյուսին: Իսկ եթե փորձենք այս կամ այն կողմը անցնել, շատ վտանգավոր կլինի Հայաստանի համար:

- Այսինքն՝ հայերի համաշխարհային ազգ լինելու գործնական արտահայտությունը կլինի այդ հաշտարար առաքելությո՞ւնը:

- Համաշխարհային ազգի գաղափարի մեջ մի առաջնային իմաստ էլ կա, որ ես չեմ նշել. առաքելություն ունենալը: Թե որն է այդ առաքելությունը, հիմա դժվար է պատասխանել:

Հարցազրույցը՝ Վահան Իշխանյանի
«Հայաստանի Հանրապետություն», 1991, 12 փետրվարի

«ՆԱԻՐԻՏԸ» ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԼԾԱԿ

-Ղարաբաղյան շարժման հաշվարկները, որ Հայաստանում սկսված ժողովրդավարական ընդվզման ալիքից Մոսկվան կվախենա և Ղարաբաղի հարցում հայանպաստ զիջումներ կանի, իրականում սխալ դուրս եկան: Այսինքն՝ Մոսկվայի վրա ինչ-որ լծակով ազդելու գաղափարը տանուլ տվեց: Այսօրվա իշխանությունն էլ լծակներ ունի, որով փորձում է ազդել Մոսկվայի վրա՝ անկախության հարցում: Արդյոք «Նաիրի՞տն» էլ այդ լծակներից մեկը չի դառնում, և բացառվու՞մ է այս անգամ էլ տանուլ տալը:

-Նախ՝ շարժման մասին:

Մենք հասկանում էինք, որ Ղարաբաղյան շարժումը ԽՍՀՄ մյուս հանրապետություններում հուզումների շղթայական ռեակցիա կառաջացներ, և որ Կենտրոնը դրանից խուսափում էր: Նա մեր շարժումը խափանելու երկու միջոց ուներ. ճնշման միջոցը, որը նոր քաղաքականության պայմաններում ձեռնտու չէր, երկրորդը մեր պահանջները բավարարելու միջոցն էր: Բայց սա էլ վտանգավոր էր, քանի որ մյուս հանրապետություններում էլ ոտքի ելնելու ազդանշան կարող էր դառնալ:

Ճիշտ է այս շարժումը Ղարաբաղի հարցում չարդարացրեց մեր սպասելիքները, բայց Կենտրոնի սպասելիքները նույնպես չարդարացան…

Ինչ վերաբերում է լծակներին, մեզ համար «Նաիրիտը» երբեք Կենտրոնի վրա ազդելու լծակ չի եղել: Թերևս լծակ բառն օգտագործել եմ ելույթներիցս մեկի ժամանակ, բայց հստակ կերպով բացատրել եմ, որ նա լծակ է միմիայն տնտեսության մեջ:

Մենք հիմա երկու գերխնդիր ունենք, նախ՝ դիմանալ, գոյատևել որպես ազգ և ստեղծել զարգացած տնտեսություն: Մեր տնտեսության կառուցվածքն այնպիսին է, որ նույնիսկ գոյատևելն է դժվար, գոյատևելու համար լծակներ են պետք: «Նաիրիտը» կարող է նման լծակ լինել: Մեր տնտեսապես քայքայված հանրապետությունն այնպիսի փակ, տեխնոլոգիապես հզոր գործարան ունի, որով կարող է դրամ վաստակել, որից և կսկսի իր տնտեսության հետագա զարգացումը: Ունենք և հրաժարվում ենք մեր ունեցածն օգտագործելուց:

Էկոլոգների վախը, ինձ թվում է, մի փոքր չափազանցված է…

Ի վերջո, էկոլոգիական շարժումն աշխարհում քաղաքակիրթ շարժում է դարձել: Ի՞նչ է նշանակում սա: Մասնագետները որոշում են այս կամ այն օբյեկտի վտանգավորության աստիճանը, բարձրագույն մարմինն ընդունում է որոշումներ՝ ինչն է ինքը վտանգավոր համարում, ինչը ոչ: Հետո արդեն արդյունաբերողները և կառավարությունը կարող են հիմնել

ցանկացած ձեռնարկություն՝ նշված նորմերին համապատասխան: Մեր ժողովուրդն էլ պիտի սովորի էկոլոգիական շարժումն այդ ձևով ընդունելը:

Պետք է որոշել վտանգավորության ցուցանիշը, հետո նոր խոսել առանձին գործարանների մասին: Եթե ցուցանիշները բավարարում են, «Նաիրիտը» պետք է գործի, չեն բավարարում՝ չպետք է գործի: «Նաիրիտն», այո, երկրի ապագա տնտեսությունը կառուցելու հզոր լծակ է: Բացի այդ, կուզեի, որ մեր ժողովուրդը վերջապես հասկանար մի բան. էկոլոգիական շարժումը քաոսային, միտինգային, քաղաքական պայքար չէ: Էկոլոգիան մարդկությանն ամենահուզող խնդիրներից է և պետք է քաղաքակիրթ լինի, ինչպես ամբողջ աշխարհում է. մասնագետ-գիտնական-Գերագույն խորհուրդ, և ոչ թե՝ փողոցներ, դրոշներ, մեգաֆոններ: Ճիշտ է, դրանից է սկսվել էկոլոգիական շարժումը, եթե չլինեին այդ հասարակական շարժումները, հիմա աշխարհում այսքան մեծ ուշադրություն ու միջոցներ չէին հատկացվի էկոլոգիական խնդիրների լուծմանը: Բայց որպես հասարակական շարժում այն արդեն իրեն սպառել է: Ես ուզում եմ, որ մենք օգտվենք համաշխարհային էկոլոգիական շարժման պտուղներից: Ճիշտ է, թերևս Արևմուտքում էկոլոգիական շարժման պրակտիկան դեռևս չի ավարտվել, բայց այն բարձրակետը, որին այդ շարժումը հասել էր 60-ականների վերջին և 70-ականներին, այժմ չկա: Կարևորն այն է, որ հասարակության, գիտնականների ուշադրությունը սևեռվեց մի հարցի վրա, որից կախված է մարդկության ճակատագիրը:

Մեզ մոտ հիմա միտինգներ անել՝ նշանակում է զանազան մարդկանց առիթ տալ իրենց հաշիվների համար թևերը քշտելու…

«Գարուն», 1991, փետրվար

ՆՎԵՐ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՊԱՏԺԵԼՈՎ

1991թ. մայիսի 12-ին Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդում տեղի ունեցավ վարչապետ Վազգեն Մանուկյանի մամուլի ասուլիսը արտասահմանյան լրագրողների հետ: Նախարարների խորհրդի նախագահը, անդրադառնալով Հայաստանի սահմանամերձ շրջաններում, Գետաշենի ենթաշրջանում, Շահումյանի շրջանում և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում կատարված իրադարձություններին, դրանց քաղաքական շարժառիթներին և կենտրոնի վարած քաղաքականությանը, մասնավորապես ասաց.

-Ամենայն հավանականությամբ հարկ է պարզաբանել, թե ինչու տեղի ունեցան այդ իրադարձությունները և ինչ շարունակություն կունենան:

Որո՞նք էին այդ իրադարձությունների պատճառները: Կան մի քանի վարկածներ: Հավանաբար նախ հարկ է անդրադառնալ պաշտոնական վարկածին: Այն ասում է, որ Հայաստանում կան շատ գրոհայիններ, որոնք անընդհատ ընդհարումներ են կազմակերպում սահմանի վրա, և նրանց նկատմամբ իրականացվում է պրեզիդենտի հրամանագիրը: Այսինքն՝ ձերբակալում են այդ գրոհայիններին և զինաթափում: Նախ եկեք պարզաբանենք՝ կա՞ն արդյոք գրոհայիններ Հայաստանում: Օգոստոսին մեր երկրում կային կազմակերպություններ, որոնք զինված էին և քաղաքական գործունեություն ծավալելու հետ մեկտեղ հայտարարել էին, որ զինված ջոկատներ են և զբաղված են նաև Հայաստանի սահմանների պաշտպանությամբ: Բնականոն այդ երևույթն սկսվեց Սումգայիթում, Բաքվում տեղի ունեցած իրադարձություններից հետո, երբ մեր ժողովուրդը տեսավ, որ բանակը չի կարող պաշտպանել իր պատիվն ու արժանապատվությունը, կյանքը, և մարդիկ սկսեցին զինվել՝ հանուն ինքնապաշտպանության: Օգոստոսին այդպիսի ջոկատները սակավաթիվ չէին, նրանք ունեին իրենց շտաբները, կազմակերպված էին և այլն: Նրանց գուցե կարելի էր անվանել գրոհայիններ:

Բայց օգոստոսի վերջին խորհրդարանը որոշում ընդունեց այդ ջոկատները զինաթափելու մասին, հայտարարվեց, որ պետությունը չի հանդուրժի զինված խմբավորումներ պետական կառուցվածքներից դուրս: Եվ սկսվեց որոշման հետևողական իրականացումը: Զինաթափվեցին խոշոր ջոկատներ, ձերբակալվեցին ջոկատների ղեկավարները, և առգրավվեց մեծ քանակությամբ զենք: Ջոկատները լուծարվեցին: Այսօր ես կարող եմ ասել, որ Հայաստանում կան զինված մարդիկ, այնպիսիք, ինչպիսիք կան և ողջ Խորհրդային

Միությունում: Երբ տեղի են ունենում խոշոր ռազմական իրադարձություններ, զինված մարդիկ կարող են միավորվել: Բայց եթե այսօր անդրադառնանք Հայաստանի իրադրությանը, պիտի ասենք, որ միևնույն է, նույնիսկ այս վերջին իրադարձությունները Հայաստանին հետ չտարան օգոստոս: Չկան շտաբներ, խոշոր զինված ջոկատներ, բայց, բնականաբար, կան զինված մարդիկ: Մեր կառավարությունը գտնում է, որ պետական կառուցվածքներից դուրս չեն կարող գոյություն ունենալ զինված կազմավորումներ, և այդ քաղաքականությունը հետևողականորեն կիրականացվի:

Հիմա տեսնենք, թե ինչ կատարվեց ամենասկզբում: Հակառակ կողմից սկսվեց հրաձգություն, և նախորդ ժամանակների փորձով ակնհայտ էր, որ երբ սահմանի վրա սկսվում է հրաձգություն, բոլոր զինված մարդիկ կենտրոնանում են սահմանագլխին՝ սահմանը պաշտպանելու: Իմ կարծիքով, դա արված էր միտումնավոր. մարդկանց կանչել սահմանի մոտ, դեսանտայինների ուժերով ձերբակալել և ապացուցել զինված ջոկատների գոյությունը Հայաստանում: Բայց այս անգամ նրանք շփոթվեցին: Նրանք հաշվի չէին առել, թե ինչ ահռելի աշխատանք է կատարվել Հայաստանում: Սահմանի վրա հրաձգություններից հետո անսպասելիորեն դեսանտ իջեցրին, բայց փաստորեն չկային զինված ջոկատներ, որպեսզի ձերբակալվեին: Եվ նրանք ստիպված էին ձերբակալել և սպանել խաղաղ բնակիչների, միլիցիայի աշխատակիցների: Փաստորեն ձերբակալված է 104 մարդ: Փաստերը դեռևս ճշտվում են: Ամենայն հավանականությամբ նրանցից մի քանիսի նկատմամբ քրեական գործեր կհարուցվեն, կջանան ապացուցել, որ նրանք գրոհայիններ են, իսկ մնացած մասին, հավանաբար, ազատ կարձակեն, որովհետև այդ 104 պատանդների կամ գերիների ճակատագիրը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է:

Հայաստանի դատախազությունն անընդհատ կապի մեջ է ԽՍՀՄ դատախազության հետ, համապատասխան ծառայությունները, կառավարությունը զբաղվում են այդ հարցերով: Դա մեզ համար շատ կարևոր է: Բայց, իհարկե, մի մասի նկատմամբ քրեական գործեր կհարուցեն և կջանան ապացուցել, որ նրանք քրեականներ են: Հիշեք, որ երկրաշարժից անմիջապես հետո ձերբակալվեց «Ղարաբաղ» կոմիտեն, նրա նկատմամբ հարուցվեց քրեական գործ, բայց չհաջողվեց ապացուցել, որ նրանք զբաղվում են հակասահմանադրական գործունեությամբ:

Հիմա անդրադառնանք ոչ պաշտոնական վարկածներին: Առաջինը կապված է այն գործողությունների հետ, որոնք ուղղված են պահպանելու Մութալիբովի իշխանությունը: Ես չեմ ուզում անդրադառնալ Ադրբեջանի իշխանություններին առնչվող հարցերին, որովհետև դա Ադրբեջանի ժողովրդի գործն է, և մեր խառնվելն անիմաստ է: Թող նրանք որոշեն, թե իրենց ինչ իշխանություն է հարկավոր: Բայց, իհարկե, կենտրոնի կողմից Ադրբեջանին նվիրատվություն անելու որոշ դրսևորումներ առկա են: Ամենայն հավանականությամբ դա առնչվում է 9-ի պայմանագրին[5] ևս:

Իրադարձությունները տեղի ունեցան Գետաշենում, որովհետև այն անընդհատ փշի նման անհանգստացնում էր Ադրբեջանի իշխանություններին, և նրանք ծրագրում էին ազատել Գետաշենը, կազմակերպել տեղահանությունը: Այդ նվերը նրանց տրվեց: Այն, ինչ կատարվեց Գետաշենում, սարսափելի էր ու անմարդկային: Ես երբեք չէի մտածի, որ XX դարի վերջին այն տարածքում, որն ուզում է մտնել համաշխարհային քաղաքակրթության համակարգ, կարող են տեղի ունենալ այնպիսի սարսափելի իրադարձություններ, ինչպիսիք եղան Սումգայիթում, Բաքվում, Գետաշենում: Իրադարձությունները, որ կատարվում են Լեռնային Ղարաբաղում, չի կարելի միայն Ադրբեջանի ներքին գործը համարել: Այս երեք տարիների ընթացքում այն, ինչ տեղի էր ունենում Ղարաբաղում, այսպես թե այնպես արծագանքվում էր և ազդում ամբողջ Խորհրդային Միությունում տեղի ունեցող դեպքերի վրա: Նույնիսկ եթե խոսքը վերաբերում է անձնագրային ռեժիմի ստուգմանը, այդ գործին պետք է մասնակցեին նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ներկայացուցիչները, որովհետև դա ոչ թե Ադրբեջանի կամ Հայաստանի, այլ ամբողջ Խորհրդային Միության գործն է:

Երրորդ վարկածն այն է, որ Հայաստանին հարվածեցին, որովհետև նա բռնել է անկախության ուղին, և պատժելով Հայաստանին՝ ցանկանում էին ցույց տալ մյուս հանրապետություններին, թե ինչ է սպասում իրենց, եթե շարունակեն անկախության ուղին: Եթե կանգ ենք առնում այս վարկածի վրա, ապա պետք է ավելի հանգամանորեն

անդրադառնանք այն ամենին, ինչ կատարվում է Խորհրդային Միությունում՝ կապված անկախանալու հարցերի հետ: Ինձ համար միանշանակ է. Խորհրդային Միությունը կայսրության այն տեսքով, ինչ այսօր է, գոյություն ունենալ չի կարող: Այն պետք է փլուզվի և վերածվի մի շարք պետությունների, որոնց մի մասը շաղկապված կլինի տնտեսական որոշակի պայմանագրերով: Խորհրդային Միության փլուզումն անխուսափելի է: Հարց է առաջանում՝ ի՞նչպես:

Երկու ճանապարհ կա: Առաջինը կարելի է անվանել խաղաղ ճանապարհ: Այն, որ Խորհրդային Միության փլուզումն անխուսափելի է, ընդունվում է բոլորի կողմից: Խորհրդային Միության տնտեսության զարգացման համար հանրապետություններին տրվում են ավելի ու ավելի մեծ իրավունքներ, և ինչ-որ չափով վերանում է սահմանն անկախ հանրապետությունների և այն իրադրության միջև, որում նրանք գտնվում են: Որովհետև՝ ինչ է նշանակում անկախություն, այսօր դժվար է որոշել: Եթե այդ համոզվածությունը լիներ, ոչ մի հանրապետություն չէր հայտարարի ԽՍՀՄ-ից իր դուրս գալու մասին, և խաղաղ ճանապարհով այդ ամենը կարելի էր շարունակել: Բայց ես խիստ կասկածում եմ, որ իրադարձությունները կզարգանան այս ճանապարհով: Խորհրդային Միությունում կան ուժեր, որոնց համար շատ կարևոր է Միության պահպանումը կայսրության տեսքով: Այդ ուժերն են՝ Խորհրդային Միության ռազմական մեքենան, կուսակցական ապարատը և ժողովուրդների մի մասը, հատկապես ռուս ժողովրդի, որոնք հին սովորույթով կարծում են, թե հզորությունը կայսրության պահպանման մեջ է: Այն դեպքում, երբ XX դարի վերջում հզորությունը ուժեղ տնտեսությունն է, զարգացած ինֆրակառուցվածքը և այլն:

Այդ պատճառով Խորհրդային Միության զարգացումը տեղի է ունենում ալիքաձև: Միությունը երբեմն սեղմվում է, այսինքն՝ այդ ուժերը երբեմն հաղթում են, և հետո նորից սկսում է ընդարձակվել: Բոլոր հանրապետությունները ջանում են այդ սեղմված ժամանակ այնքան էլ չերևալ: Բայց երբ Միությունն սկսում է ընդարձակվել, այսինքն՝ երբ դեմոկրատական ուժերը ընդարձակում են Միությունը, յուրաքանչյուր հանրապետություն աշխատում է պոկել հնարավորին չափ շատ: Եվ անընդհատ առաջանում են ռազմական ընդհարումներ, ինչպես Վիլնյուսում, Հայաստանում և այլուր: Փոքր հանրապետությունները դրանից շատ են անհանգստացած: Պատահական չէ, որ այն վեց հանրապետությունները, որոնք այսպես թե այնպես հայտարարում են անկախության իրենց ուղու մասին, ամենափոքրերն են Խորհրդային Միությունում: Մեծ հանրապետությունը մանևրելու ավելի մեծ հնարավորություն ունի, կարող է շարունակել իր գոյությունը Խորհրդային Միությունում և հարմար պահի դուրս գալ: Փոքր հանրապետությունների պաշտպանությունը ռազմական այս գործողություններից համաշխարհային հանրության կարծիքն է, այդ պատճառով էլ նրանք բոլորից շուտ են հայտարարում անկախության ուղու մասին՝ ակնկալելով համաշխարհային հասարակայնության պաշտպանությունը: Յուրաքանչյուր սեղմման ժամանակ առաջանում են ռազմական ընդհարումներ, և հանրապետությունները վախենում են, որ այդպես շարունակվելու դեպքում ինչ-որ պահի կարող են առաջանալ խոշոր պայթյուններ, և իրենք կկորցնեն գոյատևելու իրենց իրավունքը:

Ահա այսպիսի գործընթացներ են այսօր տեղի ունենում Խորհրդային Միությունում: Ես չեմ կարծում, թե այն գործողությունները, որոնք ուղղված էին Հայաստանի դեմ, բացատրվում են նրանով, որ պետք է պատժել Հայաստանին և ցույց տալ մյուսներին: Ամենայն հավանականությամբ երկրորդ վարկածն ավելի ճիշտ է: Այսինքն՝ նվիրատվություն Ադրբեջանին, որի շարունակությունը հանգեցրեց այս ամենին, քանի որ Խորհրդային Միության սեղմումը վերջին երկու տարիներին ավելի ուժեղ է: Ընդ որում այդ սեղմումն իրականացավ 9-6 բանաձևով: Ե՞րբ նորից կսկսվեն դեմոկրատական գործընթացները՝ հիմա դժվար է ասել:

Վարչապետ Վ. Մանուկյանի ելույթը
1991թ. մայիսի 12-ի մամուլի ասուլիսում
«Հայաստանի Հանրապետություն», 1991, 18 մայիսի

ԱՆԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՄԵԾ ՊԱՅՔԱՐ Է ԳՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

-Պարոն վարչապետ, «Հայք» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերում հրապարակված ՀՀԾ խորհրդի հայտարարությունը [6] տարակուսանք է առաջացրել, հետաքրքիր է Ձեր կարծիքը այդ հայտարարության մասին:

-Այսօր արդեն Գերագույն խորհրդի նախագահության նիստում հայտարարություն արեցի այդ հարցի կապակցությամբ:

Վերջին երկու ամսիների ընթացքում հանրապետությունում ծայր են առել բամբասանքներ և բանսարկություններ՝ կապված իմ անվան հետ: Վարկաբեկում են ինձ, վարկաբեկում են կառավարությանը: Դա կազմակերպված գործ է, որով հիմնականում զբաղվում են ՀՀԾ-ի վարչության նախագահ Վանո Սիրադեղյանն ու վարչության որոշ անդամներ՝ ունենալով համապատասխան հովանավորություն: Բնականաբար ես չեմ կարող անտարբեր մնալ այն ամենի նկատմամբ, ինչ արատավորում է իմ անունը, վիրավորում արժանապատվությունս:

21 տարեկանից ես շարժման մեջ եմ և շուրջ քառորդ դար ծառայում եմ իմ ժողովրդին: Եղել եմ տարբեր կազմակերպություններում, ինքս ստեղծել եմ կազմակերպություններ, որոնց նպատակն է եղել իրականացնել մեր ազգային իղձը՝ ունենալ անկախ, ազատ Հայաստան, համախմբված հայություն: 1988թ. փետրվարից՝ ամենասկզբից ես մասնակցել եմ ղարաբաղյան շարժմանը:

Երբ «Ղարաբաղ» կոմիտեից դուրս եկան Իգոր Մուրադյանը, Գագիկ Սաֆարյանը և մյուսները, ես այդ կոմիտեի մեջ ներգրավեցի Լևոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Դավիթ Վարդանյանին, և մենք գործում էինք միասնաբար՝ հույս ունենալով լուծել Ղարաբաղի հարցը: Միաժամանակ մենք առաջ քաշեցինք նաև ազգային այլ հարցեր, ստեղծվեց Հայոց համազգային շարժումը:

Նախորդ տարիների իմ ողջ փորձը, գիտելիքները ես ներդրեցի այդ շարժման մեջ: Նույնն էին անում նաև շարժման մյուս մասնակիցները: Հիմա ինձ համար դառն է, իհարկե, խոսել այդ մասին, որովհետև մասնակիցների մի մասը քաղաքական առումով իմ աշակերտներն են եղել: Եթե խոսքը վերաբերեր միայն ինձ, իբրև մասնավոր անձի, թերևս այդքան սուր չընդունեի անվանս շուրջ տարածված զրպարտանքները: Բայց չէ որ ես կառավարության նախագահն եմ, և այն ամենը, ինչ դիպչում է ինձ, դիպչում է նաև կառավարությանը, հարվածում այն բոլոր համակարգերին, որոնք մենք դժվարությամբ ստեղծել ու բարեփոխում ենք: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ դիմեցի Գերագույն խորհրդի հանրապետական խմբի ներկայացուցիչներին՝ ի գիտություն, որ հանրապետությունով մեկ բամբասանքներ են տարածվում, անստորագիր թռուցիկներ են տպվում, բանակցություններ վարվում: Ի վերջո հանրապետությունում քաոսային դրություն կստեղծվի: Ուստի ես առաջարկեցի, որ հանրապետական խումբը հավաքվի, և մենք միասին մեկ առ մեկ քննարկենք բոլոր ծառացած հարցերը:

Ինձ երեկոյան հեռախոսով հայտնեցին, որ այդ օրը հանրապետական խումբը հավաքվել չի կարող: Հաջորդ օրը տպվեց ՀՀԾ-ի հայտարարությունը: Դա անբարոյական հայտարարություն էր, գրեթե ազգադավ քայլ: Ես մանրամասն չեմ քննարկի հայտարարության բոլոր կետերը, բայց ուզում եմ նշել հետևյալը. վերջին 10-11 ամիսների ընթացքում պետական կառույցները չեն փոխվել, մինչդեռ Նախարարների խորհրդում կառուցվածքային մեծ փոփոխություններ են տեղի ունեցել: Ստեղծվել են նոր նախարարություններ, լուծարվել՝ մի քանիսը, փոխվել է տնտեսական վիճակը, հողի սեփականաշնորհումը գրեթե ավարտվել է. դա կառավարության ծրագիրն է, և կառավարությունը, զօրուգիշեր աշխատելով, իրականացրել է այդ ծրագիրը Գերագույն խորհրդի հետ միասին: Այնպես որ ճիշտ չէ, թե կառուցվածքային փոփոխություններ չեն եղել: Եղել են, սեփականաշնորհումից հետո ավելի շատ կլինեն:

Երբ տնտեսության համակարգը նույնն է մնում, կառավարման համակարգի մեջ մեծ փոփոխություններ կատարելն իմաստ չունի: Այդպիսին է կառավարության մոտեցումը:

Կադրային քաղաքականության մասին: Հիմնական դժգոհությունը վերաբերում է այս կամ այն նախարարին: Սակայն այդ դժգոհությունը հաճախ չի փաստարկվում կամ թույլ է փաստարկվում: Եթե հիմնավոր, համոզիչ ապացույցներ կան նախարարի վատ աշխատանքի,

պաշտոնական դիրքի չարաշահումների, ապա ես չեմ հապաղի ազատել նրան աշխատանքից: Դա դժվար չէ: Բայց հարցն այն է, որ սովորաբար նախարարին են վերագրվում պաշտոնյաների այն օղակի թերությունները ու չարաշահումները, որի գոյության մասին կառավարությունում շատ անգամ տեղյակ էլ չեն լինում, կադրային բոլոր փոփոխությունների մասին չէ, որ մենք պարտավոր ենք իմանալ:

Ինչու՞ չի խոսվում տնտեսության զարգացման մեր ծրագրերի, ընտրած ուղու և ուղղությունների մասին, որը շատ ու շատ ավելի կարևոր է, քան այսինչ կամ այնինչ նախարարի ձեռնհասությունը:

Մենք բանակցություններ ենք վարում այլ երկրների հետ, շատ բանկեր արդեն համաձայնվում են ներդրումներ կատարել մեր տնտեսության մեջ: Դա ծանր, դժվարին, չերևացող աշխատանք է, ինչպես որ առհասարակ չերևացող է գործադիր մարմնի դրական աշխատանքը: Ես բնավ էլ այն մտքին չեմ, թե կառավարությունն անթերի է, սխալներ ու բացթողումներ չունի: Կարելի է և պետք է խոսել թերությունների մասին: Սակայն կադրային քաղաքականության մեջ թույլ տրված ինչ-ինչ սխալները կամ տնտեսության բնագավառում առկա բացթողումները որքան էլ անցանկալի լինեն, ճակատագրական չեն կարող լինել մեր ժողովրդի համար: Եվ ես երբեմն սարսափով եմ մտածում, թե մեր քաղաքական ղեկավարությունը ինչ որոշումներ կընդունի, ինչ արձագանք կգտնի դա, ինչ կկորցնի կամ կշահի մեր ժողովուրդը այդ օրենքներից…

Առջևում մեծ արժեզրկում է սպասվում, մինչև այս տարվա վերջը՝ 100-150 տոկոս: Այս ծանր պայմաններում մենք աշխատում ենք տնտեսությունը տանել ճիշտ ուղիով՝ մտածելով և՛ այսօրվա, և՛ ապագայի մասին, մանավանդ որ նորի ծիլերը երևում են: Մենք անում ենք ամեն ինչ ժողովրդի վիճակը փոքր-ինչ թեթևացնելու համար:

Նախագահության նիստերում մանրամասն քննում ենք՝ որտեղից ինչ, ինչքան և ինչպես: Բայց ինչ էլ անես, համատարած դեֆիցիտի, համընդհանուր ճգնաժամի պայմաններում բավարարել ժողովրդի բոլոր պահանջները հնարավոր չէ: Եվ այս դեպքում օգտվելով առիթից, իհարկե, դժվար չէ խաղալ ժողովրդի զգացմունքների վրա, շատ հեշտ է քննադատել կառավարությանը: Բայց դա ազնիվ խաղ չէ: Ավելին՝ ազգադավ գործ է:

-Դուք ներկայացրիք իրավիճակը, իսկ ինչո՞վ բացատրել դա:

-Դուք նկատի ունեք բամբասանքներն ու բանսարկությունն՞րը: Ես ասեմ, որ անբարոյական և մեծ պայքար է գնում իշխանության համար: Կարծում եմ՝ բոլորն էլ տեսնում են դա և հասկանում: Փորձեր են արվում շարքից հանել և վարկաբեկել բոլոր նրանց, ովքեր կարող են հետագայում պրեզիդենտական թեկնածուներ լինել:

Ճիշտ քաղաքականությունը կարևոր բան է, տնտեսական ճիշտ ծրագրերը կարևոր են նույնպես, բայց շատ ավելի կարևոր մի բան կա՝ բարոյականությունը:

Մեր դրոշի վրա պետք է գրված լինի բարոյականություն և պարկեշտություն, եթե մենք խախտենք դա, ապա կկորցնենք ինքներս մեզ, մեր ժողովրդին: Մենք ձեռքից բաց կթողնենք մեր ազգի աստեղային ժամը: Այն առճակատումները, որ ստեղծվում են կուսակցությունների միջև, անթույլատրելի են: Քաղաքական պայքար պետք է, բայց մենք պետք է միշտ ունենանք նույն ձգտումը՝ ստեղծել անկախ հայկական պետություն՝ հզոր, և այդ հզորության երաշխիքներից մեկը մեր ժողովրդի բարոյականությունն ու ոգին պետք է լինի, և ոչ թե բանսարկությունները, որոնց մասին, ցավոք, ստիպված ենք խոսել:

-Դուք խոսեցիք քաղաքական հարցերի մասին: Ի՞նչ կասեիք հանրաքվեի և միութենական պայմանագրի մասին ներկա իրավիճակում:

-Իմ կարծիքը հանրաքվեի մասին շատ առիթներ եմ ունեցել հայտնելու: Սեպտեմբերի 21-ին համոզված եմ, որ մեր ժողովուրդը կպատասխանի «այո», որովհետև «ոչ»-ի հետևանքները ահավոր են: «Ոչ»-ը կնշանակի, որ մեր ժողովուրդը քաղաքական ասպարեզից երկար ժամանակով դուրս կշպրտվի, պատվազուրկ կլինի: Դա ազգային արժանապատվության հարց է, նաև՝ քաղաքական հարց: Թե ինչ պետք է անենք «այո» պատասխանից հետո, այլ խնդիր է: Երբեմն այնպես է ընկալվում, թե «այո» պատասխանը ձորի մի եզրից մյուսը թռչելն է, մինչդեռ դա սահուն ճանապարհ է դեպի ապագան:

Ինչ վերաբերում է պայմանագրին, այսօր Գերագույն խորհրդի նախագահության նիստում քննարկելիս եղան շատ արժեքավոր դիտողություններ, առաջարկություններ: Խոսքը Աշոտ Ոսկանյանի, Դավիթ Վարդանյանի, Ռաֆայել Ղազարյանի և մյուսների առաջարկությունների մասին է: Խորհրդային Միության Գերագույն խորհուրդը դիմել է վեց հանրապետություններին. բավական մեղմ և փաստորեն իր դռները բացելու մի ժեստ է անում, ըստ որում չի ասում՝ պայմանագիր կնքեք, ասում է՝ եկեք ճշտենք մեր հետագա կարգավիճակը:

Ես համաձայն եմ այն առաջարկություններին, որոնք ասում են, թե պետք է պատասխանել այդ դիմումին՝ քաղաքավարի ասելով, որ և՛ մենք, և՛ մյուս հանրապետությունները, նույնիսկ իննյակի, իհարկե, ձգտում ենք անկախության: Անշուշտ, տարբեր հանրապետություններում ինքնուրույնության ըմբռնումը տարբեր է, դա կորոշի ապագան, ինքը՝ ժողովուրդը, բայց մենք, կապված լինելով 14 հանրապետությունների հետ, ձգտում ենք անկախության: Բոլոր դեպքերում մենք շահագրգռված ենք երկարատև հարաբերություններ պահպանել այդ հանրապետությունների հետ, ճշտել մեր կարգավիճակը, որովհետև անկախության ճանապարհը սահուն պետք է լինի և կտևի տարիներ, իսկ տնտեսական առումով գուցեև դեռ շատ ավելի երկար կապված լինենք այդ պետությունների հետ: Մենք պետք է փորձենք ներկայացուցիչ ուղարկել, ասենք, որպես դիտորդ մասնակցելու այդ աշխատանքներին, պետք է ակտիվ կոնսուլտացիաներ ունենանք իննյակի հանրապետությունների հետ, նշենք, որ մեր դիրքորոշման մեջ շատ մեծ նշանակություն ունի Արցախի ու նրա հետ կապված իրադարձությունների հարցը:

Ես կարծում եմ, որ նախաձեռնություն հանդես կբերենք՝ կապվելու այն հինգ հանրապետությունների հետ, որոնք մնացել են: Ընդհանրապես Խորհրդային Միությունում, իմ կարծիքով, հիմա այնպիսի ժամանակաշրջան է սկսվում, երբ քաղաքական առճակատումները, քաղաքական պայքարը փոխարինվելու են տնտեսական համագործակցության փորձերով: Նոր խմբավորումներ կառաջանան հիմնականում տնտեսական հիմքի վրա, որովհետև ինձ թվում է, թե բոլոր հանրապետություններն էլ հասկանում են, որ տարբեր ճանապարհներով անկախություն կստանան: Այնպես որ արժեքավոր մտքերը, որոնք ասվեցին նախագահության նիստում, սրանք էին, ես համակարծիք եմ դրանց: Կարելի է, իհարկե, հստակեցնել, որոշակի դարձնել որոշ գաղափարներ, արժե այդ ուղղությամբ մտածել, համենայն դեպս, ես կողմնակից եմ ակտիվ քաղաքականության, վիրավորված երեխայի կեցվածք ընդունելը ընդհանրապես իմաստ չունի: Ես կողմնակից չեմ պայմանագրի ստորագրմանը, մանավանդ այս պայմաններով, բայց արձագանքել պետք է. ակտիվ մասնակցել այդ աշխատանքներին: Կեցվածքը, որ մենք ընդունում ենք, չեմ կարծում, թե շահավետ է մեզ համար և համապատասխանում է մեր կշռին կամ հարիր է լուրջ քաղաքականությանը: Մի խոսքով, ակտիվ քաղաքականություն և անկախություն:

-Շնորհակալություն:

-Ես կուզենայի երկու խոսք էլ ավելացնել:

Ցավոք, ես պետք է խոստովանեմ՝ այն կազմակերպությունը, որն այժմ իրեն անվանում է ՀՀՇ, չկայացավ, ՀՀՇ-ում կան շատ գնահատելի մարդիկ: Եվ պետք է ստեղծել նոր միություն, ես արդեն գիտեմ, որ կան պատգամավորներ, կան Հայոց համազգային շարժման շատ անդամներ, որոնք համախմբվելով՝ ուզում են ստեղծել նոր միություն՝ ազգային ժողովրդավարական միություն, որը համախմբի ազգի առողջ ուժերը, ազգային ուժերը, որոնք վարակված չեն սոցիալ-դեմոկրատական հոսանքներին բնորոշ հատկանիշներով, այլ ազգային են, ազգային հողի վրա են, որոնք ձգտում են ազգային միասնության, որոնք ձգտում են ազգին բարձրացնել, ձգտում են բարոյականության: Դեռ այդ միությունը ստեղծված չէ, բայց ես ինձ համարում եմ նրա անդամ: Որքան ինձ հայտնի է, այդ միությունը պիտի թույլ տա, որ անդամակցեն ցանկացած կուսակցության ներկայացուցիչներ, այսինքն՝ պարտադիր չէ կուսակցությունից դուրս գալ: Եվ ես կարծում եմ, որ մեր ազգի ապագայի համար այդ միությունը մեծ նշանակություն կարող է ունենալ, եթե ճիշտ հիմքերի վրա դրվի, և այն անհատները, որոնք զբաղվում են այդ գործով, լինեն պարկեշտ, լինեն նվիրյալներ:

Մոտ օրերս հայտարարություն կլինի այդ միության մասին, և ես կոչ եմ անում մեր շարժման առողջ տարրերին, այն մարդկանց, որոնք ամեն ինչ թողնելով՝ նետվեցին այս շարժման մեջ, մտնեն այս միության մեջ և նպաստեն մեր ազգի ապագայի կերտմանը:

Մենք պետք է կարողանանք ստեղծել անկախ պետություն, կարողանանք գիտակցել, որ համաշխարհային ազգ ենք, որ ունենք առաքելություն և պիտի արժանի լինենք այդ առաքելությանը:

Շնորհակալություն:

Վարչապետ Վ. Մանուկյանի հարցազրույցը
հեռուստատեսությամբ, 1991թ., հուլիս
Վարեց Տիգրան Պասկևիչյանը

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՇԱՆՍԵՐԸ ՄԵԾ ԵՆ

Վաղը՝ օգոստոսի 13-ին, լրանում է իմ վարչապետ ընտրվելու մեկ տարին: Բնական կլիներ ամփոփել այս մեկ տարում կատարվածը. ի՞նչ են արել գործադիր իշխանությունները, ի՞նչ հաջողություններ կան, ի՞նչ բացթողումներ և թերություններ: Ձեր հարցերով դուք հավանաբար կշոշափեք այդ ամենը, իսկ ես կուզենայի առաջ անցնել: Խոսենք, ավելի լավ է, ապագայի մասին, որովհետև առջևում վճռական և ծանր օրեր են, և արժե քննարկել այն, ինչ սպասվում է:

Կամենում եմ անդրադառնալ առաջիկա կարևորագույն հարցերին՝ հանրաքվեին և միութենական պայմանագրին: Ես չեմ ուզում քննարկել մեր ընտրած ուղու ճշմարտացիությունը, որովհետև անկախության ազգային նշանակությունը բացատրության կարիք չունի: Մենք որոշում ենք ընդունել սեպտեմբերի 21-ին հանրաքվե անցկացնել: Հանրաքվեի դրական արդյունքը, ճիշտ է, դեռևս անկախություն չէ, բայց անկախության հասնելու կարևորագույն քայլերից մեկն է, թերևս՝ վճռականը: Հանրաքվեն այս կամ այն կերպ կապվում է միութենական պայմանագրի հետ, և դա հասկանալի է, որովհետև մեր ժողովրդի կենսական շահերին առնչվող հարց է: Ինչ վերաբերում է հանրաքվեի արդյունքին, ապա կասկած չունեմ, որ մեր ժողովուրդը կպատասխանի «այո»: Հանրաքվեի հարցը դուրս է գալիս քաղաքական շրջանակներից: Որքան հիշում եմ, Իգոր Մուրադյանն է քաղաքականից զատ այն համարել ազգային արժանապատվության հարց: Ես չեմ պատկերացնում ազգ, որը «ոչ» է պատասխանում անկախ պետականություն ունենալուն: Գուցե խիստ երևա, բայց «ոչ»-ից հետո այդ ազգը արժանի՞ է արդյոք գոյատևելու: Ես համոզված եմ՝ «այո» կասի ժողովրդի ճնշող մեծամասնությունը:

Պետք է քննարկել նաև այն հարցը, թե հանրաքվեից հետո մեզ ինչ է սպասում: Երբեմն հարցնում են, թե ինչ ծրագիր ունի կառավարությունը, ինչ է անելու հանրաքվեից հետո: Ասեմ, որ խոսել հատուկ ծրագրի մասին անիմաստ է: Ամեն ինչ պարզ է. ի՞նչ տարբերակներ կարող են լինել: Առաջինը՝ գրեթե անհավանական մի բան՝ հանրաքվեին պատասխանում ենք «այո», և Խորհրդային Միությունը մեզ դուրս է շպրտում: Այսինքն՝ հայտարարում է, թե մենք անկախ պետություն ենք, և ինքը մեզ հետ գործ չունի: Ես չեմ ուզում մանրամասն քննարկել, թե ինչու է դա անհավանական, երևի բոլորդ էլ հասկանում եք: Բայց ինչ կլինի մեզ հետ այդ դեպքում: Եթե ոմանց թվում է, թե կառավարությունը կարող է ինչ-որ ծրագիր մշակել, և մենք, դուրս գալով միջազգային շուկա, մեզ կպահենք, ապա չարաչար սխալվում են: Մենք կունենանք այնպիսի մի քայքայված տնտեսություն, որ ինքներս պահել չենք կարողանա: Եվ այդուհանդերձ այս տարբերակը ես դրական եմ համարում: Մենք ստանում ենք դարերով երազած մեր անկախությունը, թեև միանգամից ընկնում ենք շատ ծանր վիճակի մեջ: Բայց այդ ծանր վիճակում մենք՝ արդեն որպես անկախ պետություն, կկարողանանք օգտվել համաշխարհային հասարակայնության աջակցությունից, ոտքի կկանգնենք, դա տարիներ կտևի, բայց վաղ թե ուշ կդառնանք նորմալ պետություն, կբարգավաճենք:

Երկրորդ տարբերակն այն է, ինչ մենք ուզում էինք. հանրաքվեից 5 տարի անց գնում ենք Մոսկվա բանակցությունների և քաղաքակիրթ ձևով, սահմանադրորեն, քայլ առ քայլ, առանց իրար վիրավորելու, անջատվում ենք Խորհրդային Միությունից: Այս տարբերակը ես համարում եմ գրեթե անհնարին, թեև դա լավ տարբերակ է, որովհետև մենք կկարողանանք քիչ կորուստներով ստեղծել մեր անկախ պետությունը:

Երրորդ տարբերակը ամենահավանականն է. մեզ դուրս չեն շպրտում: Արտաքին սահմանը մնում է, մեզ հայտարարում են երկրորդ տեսակի հանրապետություն, սկսում են ճնշումներ՝ և ռազմական, և տնտեսական: Եվ դա տևում է բավականին երկար: Սա ամենածանր տարբերակն է:

Չորրորդ տարբերակը. եթե ամեն ինչ մնա այնպես, ինչպես որ հիմա է: Այսինքն՝ ոչ մի պայմանագիր հանրապետությունների միջև չի կնքվում, մենք շարունակում ենք գոյատևել Խորհրդային Միությունում, բայց վճռական քայլն արդեն արած ենք լինում անկախության վերաբերյալ մեր հանրաքվեով և հարմարվելով հանգամանքներին՝ այսպես թե այնպես ստանում ենք անկախություն:

Բոլոր դեպքերում անկախություն ստանալու շանսերը մեծ են, բայց դրան հասնելու ճանապարհը՝ շատ դժվարին: Այս պայմաններում, իհարկե, արժե մտածել, թե ովքեր կարող են լինել մեր դաշնակիցները, որպեսզի ուս ուսի ավելի հեշտ անցնենք այդ դժվարին ճանապարհը: Արտաքին դաշնակիցների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի և այլոց հետ ես լուրջ հույսեր չեմ կապում. նրանց դիմելը քաղաքական մուրացկանության պես մի բան է: Հասարակական կարծիք, իհարկե, պետք է ստեղծել, բայց դա չէ մեզ փրկողը: Մեր բնական դաշնակիցները այն հանրապետություններն են, որոնց հետ միասին կազմում ենք այս Խորհրդային Միությունը: Ի՞նչ է ընկած այս դաշնակցության հիմքում: Բոլոր հանրապետությունները ձգտում են ստեղծել անկախ պետություն: Ըստ որում յուրաքանչյուրն իր ճանապարհն է ընտրել, մեկը՝ հանրաքվեի միջոցով, մյուսը՝ պայմանագրին միանալով, այն հույսով, թե հետո ինչ-որ կերպ դուրս կգա, բայց, ինչպես ասացի, բոլորն էլ ձգտում են անկախության: Սակայն բոլոր հանրապետություններն էլ հասկանում են, որ հիմա միայնակ չեն կարող դիմանալ: Անկախ քաղաքական որոշումներից՝ տնտեսապես դեռ 5-10 տարի իրար հետ կապված են լինելու և ինքնուրույն ապրել չեն կարողանալու: Այս դեպքում շահագրգռվածություն կա, որը թույլ է տալիս հուսալու, թե այդ հանրապետությունների հետ կարելի է դաշինք կնքել, որը ըստ էության կապված է միութենական պայմանագրի հետ:

Իհարկե, մենք կարող ենք հայտարարել, թե միութենական պայմանագրին չենք միանում, հանրաքվեից ստանում ենք դրական արդյունք և գնում ենք առաջ: Կարող է պարզվել, որ դա ամենաճիշտ տարբերակն է: Բայց դա փակ աչքով սառը ջրի մեջ նետվելու պես մի բան է, կարող է լավ լինել, կարող է՝ վատ: Հիմա այդ տարբերակը գնահատել հնարավոր չէ: Կա մյուս ծայրահեղ տարբերակը. պայմանագիրը կնքում ենք, հանրաքվեն հետածգում, բայց դա նշանակում է հրաժարվել ընտրած ուղուց, ազգային արժանապատվությունը ոտնատակ անել և հետագայում որևէ արդյունքի չհասնել: Ուրեմն ի՞նչ պետք է անենք: Ո՞ր դեպքում պայմանագիրը իմաստ կունենար ստորագրել. միայն մի դեպքում: Եթե նրանում կետ լիներ, թե ինչպես ենք դուրս գալու: Այդ պարագայում մեզ համար նշանակություն չէր ունենա՝ 1922 թվականի պայմանագրից ենք դուրս գալիս, թե՞ 1991-ի, և հասկանալի է, որ պայմանագիր կնքելը իմաստ կունենար: Ամենայն հավանականությամբ դրան հասնել հնարավոր չի լինի, թեև շատ հանրապետություններ ուզում են այդ կետը մտցնել պայմանագրի մեջ, բայց առայժմ որևէ արդյունք չկա:

Երկու ճանապարհ կա: Բոլոր հանրապետություններն էլ շահագրգռված են մնալու ընդհանուր տնտեսական համակարգի մեջ: Ակտիվ քաղաքականություն վարելով հանրապետությունների՝ և 9-ի, և 5-ի հետ (որոնք մեզ հետ կազմում են վեցյակ)՝ մենք որոշակի արդյունքների կարող ենք հասնել: Համենայն դեպս տնտեսական առումով փորձում ենք այդ անել: Մենք 1992թ. օգոստոս ամսին պայմանագիր կկնքենք Ռուսաստանի հետ, որում ոչ մի կետով չի շոշափվի, թե ով է 9-ի մեջ, ով՝ 6-ի: Մենք այդպիսի պայմանագրեր կնքել ենք միջինասիական հանրապետությունների հետ և շարունակում ենք աշխատել այդ ուղղությամբ: Աշխատում ենք գտնել պայմանագրերին մասնակցելու ձևը՝ ասոցիացված անդամ կամ որևիցե

այլ բան, որպեսզի չհրաժարվելով անկախության ճանապարհից, այնուամենայնիվ, մեզ հարվածների տակ չդնենք: Ինչպիսի՞ տնտեսական հարվածներ կարող են լինել: Ասենք, պայմանավորվածություններ ունեինք ամերիկյան մի քանի ֆիրմաների հետ, որոնք ցանկանում էին գնել մեր խոշոր գործարաններից մի քանիսը: Հիմա նրանք հետ են կանգնում այդ մտքից, որովհետև ասում են՝ իրենց համար Հայաստանը հարմար խողովակ էր միութենական շուկա մտնելու համար, բայց քանի դեռ մեր վիճակը, մեր պայմանագրերը մյուս հանրապետությունների հետ և՛ տնտեսական, և՛ քաղաքական առումով կայուն չեն, ներդրումներ չեն անի: Այսպիսի դեպքեր էլի կան: Սա ցույց է տալիս, որ անկախության գնալով՝ մենք պիտի կարողանանք, այնուամենայնիվ, մեր հարաբերությունները պահել մյուս հանրապետությունների հետ, օգտվել տնտեսական մեր կապերից: Ես ընդհանուր եմ խոսում, բայց ցանկալի կլիներ այս թեմաների շուրջը հանգամանորեն խոսել, ոչ թե ելնել պոպուլիստական դիրքերից: Անհրաժեշտ է լրջորեն քննարկել՝ ինչ կերպ կառուցենք մեր կապերը, փոխհարաբերությունները՝ առանց հրաժարվելու մեր ընտրած ուղուց:

Ես համոզված եմ, որ կհաջողվի ստեղծել ժողովրդավարական պետություն: Ժողովրդավարության մասին առհասարակ մեծ վեճեր են առաջանում՝ ի՞նչ է դա իրենից ներկայացնում: Երբ մենք Խորհրդային Միության մի մասն էինք, այն կարգերը, որ կային Հայաստանում, թելադրված էին Խորհրդային Միության կողմից, մենք չէինք ընտրել այդ կարգերը: Հիմա, երբ մենք դուրս ենք գալիս ազատ աշխարհ, պետք է պարզել, թե որն է հայերիս համար կառավարման լավագույն ձևը. գուցե դա թագավորությունն է, միությունը կամ մի այլ բան: Բայց ուզում եմ նշել, որ ժողովրդավարությունը նույնպես մեզ պարտադրված է: Ես հիմա չեմ վիճարկում այն հարցը՝ ժողովրդավարությունը լավագույն ձևն է, թե ոչ, այդ վեճը անիմաստ է: Ինչպես սոցիալիստական երկրում մեզ այն կարգերն էին թելադրված, այնպես էլ հիմա, երբ մենք դուրս ենք գալիս ազատ աշխարհ, վերջինս է թելադրում, որ եթե մենք իր հետ ուզում ենք գործ ունենալ, պետք է ընդունենք այն կարգերը, որոնք ընդունված են այդ աշխարհի կողմից, այն է՝ ժողովրդավարական կարգերը, դեմոկրատիան: Այլ հարց է, եթե տարբեր երկրներում դեմոկրատիան տարբեր աստիճաններ չունենար: Ճապոնիայում դեմոկրատիան մի բան է, Ֆրանսիայում՝ մեկ այլ բան, Իսպանիայում՝ բոլորովին այլ: Մենք պետք է կարողանանք գտնել ժողովրդավարության այն եզրերը, որոնց դեպքում մեր ժողովուրդը չի դառնա ապազգային, սովորական, անորոշ մի ժողովուրդ:

Մեր ճանապարհի ուղղությունը պարզ է՝ սոցիալիստական պետական տնտեսական կառուցվածքից անցնել մասնավոր սեփականության, որի հիմքում ընկած է անհատի ձեռներեցությունը, մասնավոր սեփականությունը: Այդ ճանապարհը շատ դժվարին է, սպասվում են սոցիալական բարդ խնդիրներ: Եվ անկախ այն բանից, թե ով կվարի կառավարության ղեկը, ինչ իշխանություններ կլինեն, մենք անխուսափելիորեն այդ ճանապարհով ենք անցնելու, դա է մեր ժողովրդին ապագա խոստանում: Բայց անցման շրջանը ծանր է լինելու. կխորանա սոցիալական շերտավորումը, վեր կելնի մարդկանց մի խումբ, որն առաջին հայացքից համակրանք չի ներշնչի: Առհասարակ այն կարծիքը կա, որ ազգի 2-3 տոկոսն է օժտված ձեռներեցության բնածին ունակություններով, բայց Հայաստանում դա կկազմի 10-15 տոկոս, հետո տարիների ընթացքում կմաղվի, կմնա 2-3 տոկոսը:

Առանձնապես ծանր վիճակ կստեղծվի մտավորականության համար, նա կլինի անպաշտպան, և հատուկ ծրագրեր մշակելու կարիք կլինի, որպեսզի այդ տարիներին մտավորականությունը կարողանա իրեն պահպանել. անցման շրջանից հետո ամենակարևոր ուժը գիտական, ստեղծագործ մտավորականությունն է լինելու, և նա պետք է պահպանվի, ազգին առաջ մղի: Իհարկե, կստեղծվեն սոցիալական պաշտպանվածության մեխանիզմներ, դրանք կան ողջ աշխարհում, այդ նույն մեխանիզմներից կօգտվենք և մենք: Բայց ասել, թե այդ ճանապարհը սովորական, հանդարտ ընթացքով գնալով՝ այս աշխարհագրական դիրքում կստեղծենք Շվեյցարիայի կամ Դանիայի պես մի պետություն ու կբարգավաճենք, սխալ կլինի: Մեր ժողովրդից անընդհատ պահանջվելու է հոգեկան լարվածություն, ոգևորություն, ուժերի լարում ու թռիչք:

Հիմա Խորհրդային Միության մյուս հանրապետություններում դա լավ զգում են, որոշ ժողովուրդների մեջ ներքին լիցքավորում է կատարվում, զսպանակի սեղմում, նրանք վերանայում են իրենց պատմությունը, իրենց տեղն են ուզում գտնել աշխարհում: Խոսքը և՛ վրացիներին է վերաբերում, և՛ միջինասիական ժողովուրդներին. նրանք համախմբվում են, հոգեկան լիցք կուտակում իրենց մեջ, զգում են, որ առաքելություն ունեն: Ամեն մի ժողովուրդ իր առաքելությունն ունի և գիտակցում է, որ թռիչք է պետք, ոչ սովորական թռիչք, ոչ սովորական պայմաններում: Առանց զորության ու կորովի կարևորագույն խնդիրները չեն լուծվի, և մենք կունենանք մեկուսացված մի թույլ պետություն, որը դատապարտված կլինի ոչնչացման: Թերևս խիստ եմ ասում, բայց կարծում եմ՝ միտքս հասկանալի է:

Վարչապետ Վ.Մանուկյանի
մամուլի ասուլիսը,1991թ., օգոստոսի 12
«Հայաստանի Հանրապետություն»,
1991 թ., 14 օգոստոսի

ԱՌԱՆՑ ՀԱՎԱՏԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼ

Սիրելի՛ հայրենակիցներ, մեկ տարի է անցել այն օրից, ինչ մեր Գերագույն խորհուրդն ընդունեց անկախության հռչակագիրը, և մեր ժողովուրդը հայտարարեց, որ առաջնահերթ ազգային խնդիրը անկախ պետականության վերականգնումն է: Հազիվ թե որևէ մեկը այժմ չընդունի, որ ազգային խնդիրների մեջ դա իրոք առաջնահերթն է:

Համաշխարհային պատմությունը ժողովուրդների, ազգերի մրցակցություն է հանուն իրենց բարեկեցության, ազդեցության ոլորտի ընդլայնման, հզորացման, և այդ պայքարում կարևորագույն նշանակություն ունի ազգի ինքնակազմավորումը՝ որպես պետություն: Այսինքն՝ հզորության երաշխիքն ու նախապայմանը պետություն ունենալն է: Հարյուրավոր տարիներ չունենալով պետականություն՝ մենք փորձել ենք լուծել տարբեր ազգային խնդիրներ, բայց ոչինչ չի ստացվել, և ինչ-որ պահից սկսած արդեն ազգային խնդիր էր դարձել զուտ գոյատևելը:

Ծանր կորուստներ տալով՝ մենք ավելի լավ ենք գիտակցում, թե ինչ անհրաժեշտություն է պետականության վերականգնումը: Մենք հռչակեցինք մեր առաջնահերթ խնդիրը՝ անկախ պետականության վերականգնումը, և ես գտնում եմ, որ դրա համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ: Բայց կարող է հարց ծագել՝ մի՞թե նախորդ հարյուրամյակների ընթացքում այդպիսի բարենպաստ պայմաններ չեն եղել: Ծանոթանալով մեր պատմությանը՝ ես տեսնում եմ, որ մանավանդ վերջին 2-3 հարյուր տարվա ընթացքում եղել են պահեր, երբ կարելի էր վերստեղծել մեր պետությունը, բայց մենք կորցրել ենք այդ հնարավորությունը: Այդ հարյուրամյակների պատմությունը ես կանվանեի կորցրած հնարավորությունների պատմություն: Ի՞նչն է պատճառը, ինչու՞ ենք կորցրել այդ հնարավորությունները: Իմ կարծիքով, պակասել է ներքին հավատը մեր ուժերի, մեր ազգի ապագայի, մեր առաքելության նկատմամբ: Այն ազգերը, որոնք կորցնում են այդ հավատը, ծուլվում են, կամաց-կամաց վերանում են աշխարհի երեսից:

Առանց հավատի՝ հնարավոր չէ ոչ պետություն ստեղծել, ոչ էլ երկար ժամանակ պահպանել այդ պետությունը: Հայտնի են բազում ազգեր, որոնք կազմավորվել են իբրև պետություն, հզորացել են… Երբ խորանում ենք նրանց պատմության մեջ, տեսնում ենք, որ ամեն մի այդպիսի ժողովուրդ, ամեն մի ազգ ունեցել է մի պահ, երբ պահանջվել է, որ ի մի բերվի իր ողջ հոգեկան հզորությունը, ոգևորությունը, հավատը, և այդ ամենն ուղղվի դեպի ապագան: Այդ հավատը, իմ կարծիքով, 2-3 հարյուր տարվա ընթացքում մեզ խիստ պակասել է:

Կարելի է մշակել նուրբ քաղաքականություն, կարելի է իրականացնել բարդ քաղաքական խաղեր, բայց դրանք արդյունք չեն տա, եթե այդ քաղաքականության հետևում կանգնած չէ մի

ժողովուրդ՝ համախմբված նույն ազգային պատգամով, նույն ազգային հավատով, նույն ազգային իղձերով:

Ես շնորհավորում եմ մեր ժողովրդին ճիշտ ուղու՝ անկախ պետականության վերականգնման հռչակագիրն ընդունելու համար և կոչ եմ անում մեր բոլոր քաղաքական գործիչներին, մտավորականությանը զարգացնել մեր ժողովրդի մեջ եղած հզորության հատիկը, բարոյական ուժ տալ նրան, հավատ ներշնչել մեր ազգի ապագայի նկատմամբ, որովհետև միայն այդ դեպքում կկարողանանք լուծել մեր խնդիրները: Ու նաև համախմբվելով: Ողջ աշխարհի հայությունը համախմբվելով կկարողանա լուծել իր առջև դրված խնդիրները: Այս աշխարհագրական դիրքում Հայաստանը, անգամ եթե լինի անկախ պետություն, միայն հզորությամբ չի կարողանա լուծել իր ազգային խնդիրները, եթե կազմակերպված չլինի որպես մի համաշխարհային կառույց: Սա ժողովրդավարության սահմանափակում չէ, ֆաշիզմ չէ, սա ազգային անհրաժեշտություն է, և եթե մենք կորցնենք այս պահը ևս, ապա մեր կորցրած հնարավորությունների շղթային կավելանա ևս մի օղակ:

Վարչապետ Վ.Մանուկյանի ելույթը
հեռուստատեսությամբ՝ ՀՀ ԳԽ
անկախության հռչակագրի ընդունման
տարելիցի առթիվ,
1991թ., օգոստոսի 23-ին

ՅՈՒՅԱԲԵՐԵՆՔ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆ

– Մեծարգո վարչապետ, օգոստոսի 19-ին [7] Խորհրդային Միությունում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որը բարեբախտաբար ձախողվեց: Ներկա իրավիճակի մասին Ձեր գնահատականը:

–Նախ պետք է անդրադառնալ այն հարցին, թե ինչ իրավիճակ էր տիրում ԽՍՀՄ-ում մինչև այդ հեղաշրջումը: Ասեմ, որ իրավիճակը բավականաչափ մտահոգիչ էր: Խորհրդային Միությունը տրոհվում է, հանգում անկախ պետությունների ստեղծման: Տնտեսական վիճակը շարունակ վատանում է, իսկ քաղաքական առումով տեղի է ունենում, այսպես կոչված՝ բաբախում. երկիրը սեղմվում է ու լայնանում: Մարտի 17-ի հանրաքվեն վարպետորեն օգտագործեցին կենտրոնական իշխանությունները, և Խորհրդային Միությունը սկսեց սեղմվել: Դրան ավելացավ մի այլ երևույթ. այն քաղաքական ճոճանակը, որը թեքվել էր դեպի ժողովրդական շարժումները, սկսել էր հետ դառնալ: Շատ վայրերում հաղթել էին ժողովրդավարական շարժումները, և տնտեսությունը շտկելու պատասխանատվությունն արդեն ընկել էր ժողովրդավարական ուժերի վրա, իսկ տնտեսական ծանր վիճակից ժողովրդի դժգոհությունն այս կամ այն կերպ կապվում էր ժողովրդավարական իշխանությունների հետ: Բնական էր սպասել, որ ճոճանակը հետ կդառնա, և աջ ուժերը գնալով կաշխուժանան:

Այս պայմաններում շատ մտահոգիչ էր մեր ուղին: Մեր ժողովուրդը որոշել է վերականգնել իր անկախ պետականությունը, դա քաղաքական միակ ճիշտ ճանապարհն է, որով մենք պետք է գնանք, սակայն նշածս երևույթները տանում էին դեպի փակուղի: Սպասվում էին ուժեղ հարվածներ՝ և՛ քաղաքական, և՛ ռազմական, և՛ տնտեսական: Եվ մանևրելու միակ հնարավորությունը միութենական պայմանագրի շուրջ որևիցե լուծում գտնելն էր: Ավելացնեմ, որ Խորհրդային Միությունում և մանավանդ Հայաստանում խիստ ծանր իրավիճակ էր ստեղծվել վառելիքի և սննդի հարցերում: Օրերս Նախարարների խորհրդի նախագահության նիստում մտածում էինք ստեղծել հատուկ լիազորություններով օժտված մի կոմիտե, որն իր ձեռքը վերցնի ձմռան նախապատրաստական աշխատանքները, որովհետև հին ձևով այդ աշխատանքները իրականացնել հնարավոր չէր: Ուզում եմ ասել, որ և՛ կենտրոնին, և՛ հանրապետություններին նույն հարցերն էին մտահոգում: Գորբաչովին չհաջողվեց վարկեր վերցնել, և դա էլ ավելի դժվարացրեց վիճակը:

Այս պայմաններում սկսվեց հեղաշրջումը: Դա ուղղված էր ժողովրդավարության դեմ, ազատությունների և ազգերի իրավունքների դեմ: Այդ ամենն, իհարկե, հասկանալի էր, և օգոստոսի 20-ին մամուլի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ես ասացի, որ, այսպես կոչված, ԳԿՉՊ-ն ամենաշատը երկու-երեք ամիս կդիմանա: Երկու-երեք ամսից հետո

նույն խնդիրներն են ծառանալու, և երկիրը նորից սկսելու է բացվել: Այսինքն՝ այս բոլոր բացասական երևույթների մեջ մի դրական տարր կա, որ մեզ ինչ-որ ձևով հանում էր այդ փակուղուց. սեղմման փուլը, որը կարող էր տևել մեկ-երկու տարի, կարճանում, դառնում էր երեք ամիս: Ես, իհարկե, չէի կարող կանխատեսել, որ ոչ թե երկու-երեք ամիս կտևի, այլ՝ երեք օր: Եվ արժանին պետք է մատուցել Ռուսաստանի ժողովրդավարական շարժմանը, Ելցինին այս պայքարում ցուցաբերած նրանց վճռականության համար: Մեզ հասկանալի էր, որ հարցը լուծվել է Մոսկվայում: Առաջին օրը՝ 19-ի վաղ առավոտյան, ես կապվեցի Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, և մենք հանդիպեցինք: Հանդիպմանը ներկա էին Գերագույն խորհրդի նախագահության և կառավարության անդամներ: Մենք քննարկեցինք իրավիճակը և մշակեցինք մեր կողմնորոշումը, որը ձեզ ծանոթ է, փաստաթղթերը հրապարակված են: Կարծում եմ՝ այն պայմաններում ճիշտ էր համապատասխան զգուշություն ցուցաբերելը, այլապես հանրապետությանն ու ժողովրդին կարող էինք հարվածի տակ դնել: Դրանից հետո մենք բազմիցս հանդիպեցինք և՛ Նախարարների խորհրդում, և՛ Գերագույն խորհրդում, բավականին մանրամասն քննարկեցինք իրավիճակը: Երեք օրն անցավ, և առաջին հայացքից թվում էր, թե Խորհրդային Միությունը վերադառնում է իր հին՝ նախահեղաշրջումային վիճակին, բայց այդպես չեղավ: Մի նոր շրջան սկսվեց Խորհրդային Միության, ես կասեի, աշխարհի համար:

Ի՞նչ կանխատեսումներ կարելի է անել, ի՞նչ ճանապարհով կգնա Խորհրդային Միությունը: Կանխատեսումներ անելը բավական դժվար և անշնորհակալ գործ է, բայց թվում է՝ պետք է իրականանա այն, ինչի մասին խոսեց նաև Նազարբաևը[8]: Այսինքն՝ յուրաքանչյուր հանրապետություն կձգտի հռչակել անկախություն: Բայց բոլոր հանրապետությունները միմյանց հետ կապված են այնպիսի տնտեսական կապերով, որոնցից այնքան էլ հեշտ չի լինի ազատվել, և, ամենայն հավանականությամբ, կստեղծվի ժամանակավոր մի դաշինք 15 հանրապետությունների միջև, որը կներառի տնտեսական, հավանաբար նաև որոշ քաղաքական, ռազմական հարցեր: Հանրապետությունները կսկսեն իրար հետևից հռչակել անկախություն: Դժվար է ասել՝ կհասցնե՞ն արդյոք բոլորն անել այդ քայլը, թե՞ ոչ: Հիմա մեծ ոգևորություն կա Մոսկվայում, նաև՝ արտասահմանում, և նրանք հեշտությամբ ընդունում են այդ քայլերը: Որոշ ժամանակ անց կարող է իրավիճակը փոխվել: Լուրջ հաշվարկներ դեռ չեն արվել: Երբ որևէ հանրապետություն մի բան է ներկայացնում, ապա հակվածություն կա՝ այն, ինչ փաստացի եղել է, դա ընդունել: Այդ առումով մեզ համար վճռական ժամանակաշրջան է, և մենք պետք է կամք ցուցաբերենք ու որոշ հարցեր հիմա լուծենք: Հետո կարող է ավելի դժվար լինել, որովհետև այդ տրամադրությունը կարող է անցնել և՛ կենտրոնին, և՛ Ռուսաստանին, և՛ արտասահմանին:

Կենտրոնի մասին: Հասկանալի է, այս օրերին կենտրոնն էապես թուլացավ: Ռուսաստանը հիմա շահագրգռված է ունենալ մի թույլ կենտրոն, որը ենթարկվի իրեն, և որի միջոցով պահի Խորհրդային Միությունը, հանրապետությունները: Հետագայում, իմ կարծիքով, փոփոխություն կլինի. Ռուսաստանի տնտեսական հզորությունն այնքան մեծ է, որ մյուս հանրապետությունները կաշխատեն համախմբվել, որպեսզի տնտեսապես դիմակայեն այդ հզորությանը: Ու թերևս գա մի պահ, երբ արդեն ոչ թե Ռուսաստանը, այլ մյուս հանրապետությունները ձգտեն ունենալ կոորդինացնող կենտրոն, որի միջոցով իրենց հարցերը լուծեն Ռուսաստանի հետ: Այսինքն՝ կենտրոնն անհրաժեշտություն կդառնա հանրապետությունների համար: Հիմա, իհարկե, հնարավոր չէ խիստ որոշակի ասել՝ ինչպես կլինի, բայց որոշակի է մի բան՝ ինչ քաղաքական որոշումներ էլ ընդունեն հանրապետությունները, տնտեսական առումով նրանց փոխկապվածությունը առժամանակ կմնա, իսկ դա կտանի տարբեր բլոկների ստեղծման: Ինչ բլոկների՝ հիմա դժվար է ասել:

Մի բան հաստատ կարող եմ ասել. այս վճռական օրերին մենք պետք է կարողանանք արագ որոշումներ ընդունել և ցուցաբերել միասնություն: Միասնություն գործադիր և օրենսդիր իշխանությունների, քաղաքական կազմակերպությունների միջև. ամբողջ ժողովուրդը պետք է միասնական լինի: Այն միտքը, թե մարդկանց մի խումբ, վերևում՝ Օլիմպոսում նստած, հարցեր է լուծում ժողովրդի համար, անտարբերություն է առաջացնում ժողովրդի մեջ: Մինչդեռ վճռական օրերին մեր ամբողջ ժողովուրդը պետք է մասնակցի քաղաքական որոշումների ընդունմանը, ըմբռնի դրանց անհրաժեշտությունը, համախմբված լինի որոշակի գաղափարների շուրջը: Առանց դրա՝ քաղաքական հարցեր հիմա չեն լուծվի: Եվ այդպիսի վճռական քայլեր անելու համար պայմանները նպաստավոր են հիմա:

Բավական խառն իրավիճակ է նաև Անդրկովկասում, մասնավորապես Ադրբեջանում: Այստեղ էլ պայքարում են ժողովրդավարական և հետադիմական ուժերը: Առայժմ ժողովրդավարական ուժերի համակրանքը (խոսքը Ռուսաստանի և Միության մասին է) մեր կողմն է: Ինչ կլինի վաղը՝ դժվար է ասել: Ուստի այն, ինչ կարելի է անել այսօր, չպետք է հետաձգել վաղվան, ահա թե ինչու մենք բոլոր քայլերն անում ենք: Այդ քայլերի մեջ միայն շախմատային նրբանկատություն ցուցաբերելը բավական չէ. շատ կարևոր է, որ դրանց մասնակից լինի ողջ ժողովուրդը՝ ազգի ապագայի նկատմամբ հավատով համախմբված: Բնականաբար այս ամենը վերաբերում է նաև Արցախի մեր հայրենակիցներին: Դա շատ անհրաժեշտ է: Այսքանը:

Ես չեմ ուզենա հիմա մանրամասնել, թե ինչ է նշանակում վճռական քայլեր: Համենայն դեպս, նախարարների խորհուրդը որոշ նախագծեր ուղարկել է Գերագույն խորհուրդ՝ կապված և՛ բանակի ստեղծման, և՛ ներքին գործերի, և՛ հետախուզության ու հակահետախուզության հետ: Գերագույն խորհրդում լրջորեն քննարկվում են մեր անկախությանը վերաբերող տարբեր հարցեր: Նոր քայլերի հետ կապված որոշումներ դեռ չեն կայացվել, բայց ես համոզված եմ, որ կկայացվեն: Կան հարցեր, որոնք պետք է անհապաղ լուծել, առանց սպասելու սպառիչ տեղեկությունների: Պատերազմի ժամանակ հրամանատարը հաճախ որոշումներ է ընդունում՝ մանրամասն տեղեկություններ ունենալով հակառակորդի ուժերի մասին: Իհարկե, ցանկալի է ամեն ինչ իմանալ: Բայց մինչև իմանաս, պահը կկորցնես: Իմ կոչն է՝ պահը չկորցնել:

Վարչապետ Վ. Մանուկյանի
հարցազրույցը հեռուստատեսությամբ,
1991թ., օգոստոսի 27
«Հայաստանի Հանրապետություն»,
1991 թ., 29 օգոստոսի

ԿԼԻՆԻ ԴԺՎԱՐԻՆ ՊԱՅՔԱՐ

Մի քիչ ծայրահեղ կթվա, եթե ասենք, որ հիմա թերևս գտնվում ենք այն վիճակում, որում կարող էինք գտնվել՝ առանց նախորդ տարիների պայքարի, ուղղակի մեր պայքարը սկսելով օգոստոսի 22-ին: Ասածիս մեջ, իհարկե, ծայրահեղություն կա, բայց և՝ ճշմարտության հատիկ: Այդ դեպքում հարց է առաջանում՝ գուցե սխա՞լ էր նախորդ տարիների պայքարը, գուցե սխա՞լ էինք մենք: Գուցե զու՞ր էին մեր կորուստները: Ես այդ կարծիքին չեմ: Ես կարծում եմ, որ նախորդ պայքարի շնորհիվ հիմա գտնվում ենք ուրիշ կետում, ավելի լավ վիճակում, ավելի առաջացած դեպի Անկախությունը:

Ինչ որոշումներ ընդունեցինք մեր իշխանության գալուց հետո: Ընդունեցինք հռչակագիրը, հայտարարեցինք, որ կարևորագույն ազգային խնդիրը անկախ պետականության վերականգնումն է: Չնայած, իհարկե, չէր բացառվում, որ միջանկյալ պահեր լինեին, երբ գնայինք փոխզիջումների, լինեինք տարբեր կոնֆեդերացիաների, ֆեդերացիաների մեջ, բայց ճանապարհը նշված էր՝ դեպի անկախ պետականություն: Մենք բոլորս գիտակցում էինք, որ դրա համար իրավական հիմք կարող է լինել հանրաքվեն: Որոշում ընդունվեց անցկացնել հանրաքվե: Մենք գիտակցում ենք նաև, որ Հայաստանը նույնիսկ քաղաքական անկախություն ստանալուց հետո դեռ երկար տարիներ տնտեսապես կապված կլինի մյուս հանրապետությունների հետ: Դա անխուսափելի է: Նույն վիճակում են գտնվում Միության մյուս հանրապետությունները: Բոլորս էլ հասկանում էինք, որ մի քանի տարվա ընթացքում ստեղծել մի այնպիսի համակարգ, որով քաղաքական անկախությանը կմիացնենք նաև ռեալ տնտեսական ինքնուրույնությունը, անհնար է:

Կար մի ուրիշ հարց՝ Արցախը: Մենք հասկանում էինք, որ գնալով անկախության, մենք անընդհատ հարվածներ ենք ստանալու: Ու հարվածելու են Արցախով: Այդ ժամանակ մենք բնազդով զգում էինք (դա ձևակերպվում էր որոշ ելույթների մեջ), որ առանց հրաժարվելու Արցախի և Հայաստանի վերամիավորման մտքից, առանց հրաժարվելու Արցախի հարցից, այնուամենայնիվ, պիտի փորձեինք այդ երկու խնդիրներն իրարից անջատել: Արցախի խնդիրը պետք է վերածվեր միաջազգային հասարակայնության, Խորհրդային Միության ժողովրդավարական ուժերի խնդրի: Դա շատ դժվար էր, բայց այդ ուղղությամբ զգալի

աշխատանք արվեց: Որոշ հաջողություններ ունեցանք: Իսկ ինչպե՞ս վարել առօրյա քաղաքականությունը: Այստեղ էլ գրեթե ամեն ինչ պարզ էր: Մենք տեսնում էինք, որ Խորհրդային Միությունում քաղաքական փլուզումը ընթանում է ալիքաձև: Նա երբեմն սեղմվում էր մի միասնական պետության մեջ, և այդ ժամանակ պետք էր վարել զգույշ քաղաքականություն: Բայց ամեն մի սեղմումից հետո սկսում էր քաղաքական ընդարձակումը, երբ յուրաքանչյուր հանրապետություն աշխատում էր լավագույն ձևով օգտագործել ստեղծված հնարավորությունները: Դա մենք գիտակցում էինք, բայց, ցավոք սրտի, շատ անգամ մեզ չէր հաջողվում: Մենք ցնցվում էինք, երբ սեղմում էր լինում, և չէինք օգտվում թուլացման հնարավորություններից: Գիտակցելով այդ քաղաքականությունը՝ երբեմն ճիշտ, երբեմն սխալ գնում էինք այդ ճանապարհով:

Աննախադեպ ծանր վիճակ ստեղծվեց մայիս ամսից հետո, երբ Խորհրդային Միությունը սկսեց սեղմվել: Զգացվում էր, որ դա բավական երկար է տևելու: Առաջ քաշվեց միութենական պայմանագրի հարցը: Մենք սկսեցինք անընդհատ հարվածներ ստանալ: Շատ մտահոգիչ էր վիճակը: Նրանք, ովքեր զբաղվում էին տնտեսությամբ, լավ հասկանում էին, թե ինչ է կատարվում, և անընդհատ մտորում էին այս կամ այն ձևով մասնակցել միութենական պայմանագրին, իհարկե, առանց հրաժարվելու մեր անկախության ճանապարհից, կամ իբրև ասոցիացված անդամ կամ բանակցությունների գնալով՝ ինչ-որ ձևով դուրս գալ այն ծուղակից, փակուղուց, որի մեջ կամա թե ակամա ընկել էինք: Մեր բախտը բերեց:

Հեղաշրջման երեք օրն ասես ի վերուստ տրվեց, որպեսզի դուրս բերի մեզ փակուղուց: Եվ ասեմ, որ ստեղծված այդ 9-6 համախումբը իր մեջ ինչ-որ անբնական բան էր պարունակում, որովհետև տարբեր հանրապետությունների տնտեսության ղեկավարների, որոշ քաղաքական գործիչների հետ բանակցելիս բոլորը գտնում էին, որ քաղաքական որոշումների ժամանակները անցել են, պետք է անցնել տնտեսական հարցերի: Այսինքն՝ 15 հանրապետությունները պիտի մի տնտեսական համակարգի մեջ լինեն, բայց քաղաքական տեսակետից կարող են ունենալ անկախ, կիսաանկախ վիճակ: Այսինքն՝ այդ պրոցեսի մեջ անբնականություն կար: Անբնականությունը պայթեց: Հեղաշրջումից հետո ստեղծվեց մի տարօրինակ իրավիճակ: Առաջացան հնարավորություններ, որոնց մասին երազելն անգամ հնարավոր չէր: Դեմոկրատական էյֆորիա սկսվեց: Պետության ղեկավարները միշտ առաջնորդվում են հաշվարկներով: Բայց նրանք չեն կարողանում անտեսել ժողովրդի ճնշումն իրենց վրա: Այդ ժամանակ դեմոկրատական ճնշումը այնքան մեծ էր, որ կարելի էր ստանալ այն, ինչ սովորական հաշվարկներով ստանալ հնարավոր չէր: Դա իմ կարծիքն է, և ոչ միայն իմ: Խորհրդակցություններ եղան Գերագույն խորհրդի նախագահությունում, տևեցին 2-3 օր: Պետք էր, առանց սեպտեմբերի 21-ի հանրաքվեից հրաժարվելու, այնուամենայնիվ, Գերագույն խորհրդում հայտարարել անկախություն:

Դա տուրք չէր մոդային: Եթե մյուս հանրապետությունները հռչակում էին, մոդայի հետևից չէ, որ ընկել էին: Կային տարբեր պատճառներ: Որոշ հանրապետություններում դրա միջոցով իշխող խավը ուզում էր պահել իր իշխանությունը: Որոշ հանրապետություններ գնում էին նորմալ ճանապարհով, ստեղծված իրավիճակից պետք էր օգտվել: Այդ պայմաններում անկախության հռչակումը մեզ որևէ վնաս չէր կարող տալ: Աշխարհը շատ էր բարիացել:

Անհնար էր ուժի կիրառումը այդ ժամանակ: Եվ պետք է ասեմ, որ մերձբալթյան հանրապետություններից հետո միայն Հայաստանն էր, որի անկախությունը համաշխարհային հասարակական կարծիքը, ռուսական ժողովրդավարական շարժումները այս կամ այն կերպ ընդունել էին: Մենք շատ արյուն էինք թափել, պայքար էինք մղել, և եթե անկախություն հռչակեինք, ամենայն հավանականությամբ մեզ չէին ճանաչի, բայց հետևողականորեն կմնայինք մեր դիրքում: Եվ չէինք նահանջի: Ամսի 22-ից Արցախն էլ պետք է միանգամից հռչակվեր անկախ հանրապետություն: Խորհրդային Միության ժողովրդավարական շարժումը պետք էր Ղարաբաղին, Ղարաբաղն էր այդ շարժման առաջամարտիկը: Եվ նույն թշնամիներն ուներ, նույն յազովները, պուգոները, կրյուչկովները[9]: Եվ այն պարտքի զգացումը, որով համակված էր ժողովրդավարական շարժումը, կնպաստեր Հայաստանի անկախության հռչակումը և Ղարաբաղի անկախ հանրապետության հռչակումը ինչ-որ ձևով իրարից անջատել: Մտովի մենք չենք բաժանում և միշտ սատար ենք կանգնելու Ղարաբաղին, բայց այդ պահին Ղարաբաղի հարցը ճիշտ կլիներ տալ ժողովրդավարական շարժման ձեռքը: Եվ ինչ-որ լուծումներ կարող էին գտնվել: Եթե ոչ կառավարական, ապա դեմոկրատական շարժման ճնշումն այս կամ այն ձևով կառավարությունը պետք է հաշվի առներ:

Այդ էլ չարվեց:

Մյուս հանրապետությունները, երբ հռչակում էին անկախություն, նաև նախապատրաստվում էին համագումարի: Պարզ չէր, թե ինչ կլիներ: Ամեն մեկն ուզում էր մի քարտ ունենալ, որ համագումարի ժամանակ կարողանար կողմնորշվել:

Հիմա անդրադառնանք Մոսկվայի պայմանագիրը ստորագրելուն: Մենք, իհարկե, գնացինք Մոսկվա՝ առանց խաղաթուղթ ունենալու: Ճիշտ կլիներ ունենալ այդ անկախության խաղաթուղթը: Հիմա հարց է առաջանում. Մոսկվայում իմաստ ունե՞ր ստորագրել այդ փաստաթուղթը, թե՞ ոչ: Իմ խորին համոզմամբ, հեղաշրջման շնորհիվ դուրս գալով մի ծուղակից, ստորագրելով՝ մտանք մյուս ծուղակը, որովհետև շատ հավանական է, որ հիմա այստեղից դուրս գալը տանի նույն առճակատումներին: Եվ կրկին Ղարաբաղի հարցը օգտագործվեց ծուղակից մեր դուրս գալու պահին: Իհարկե, հիմա այնքան արագ են ընթանում դեպքերը, այնքան բարենպաստ պայմաններ են ստեղծվում, որ կարող ես մի հնարավորությունը կորցնել, բայց մի ուրիշը գտնել:

Սակայն առաջնորդվել դրանով իմաստ չունի, ցանկացած բարենպաստ պայման պետք է օգտագործել մինչև վերջ: Ամենայն հավանականությամբ ճիշտ կլիներ չստորագրել, կանգնել կողքի, դա առճակատում չէր առաջացնի: Մեր նախորդ եռամյա առճակատումներին նոր առճակատում չէր ավելանա: Մենք կասեինք՝ սեպտեմբերի 21-ին հանրաքվե պիտի անենք, կարող ենք որպես դիտորդ մասնակցել, իսկ հանրաքվեի արդյունքով կորոշենք մեր մասնակցության աստիճանը այս նոր ստեղծվելիք Միությունում: Ընդ որում, եթե խոսում ենք զգուշության մասին, ապա դա էր զգույշ քաղաքականությունը, ոչ թե փակ աչքերով մի բանի մեջ մտնելը: Ասեմ, թե ինչպիսին է իրավիճակը: Խորհրդակցություն էր անցկացվում 1992 թվականի տնտեսական պայմանագրերի մասին: Մասնակցում էին բոլոր 15 հանրապետությունների ներկայացուցիչները: Առաջարկված էր Յավլինսկու ծրագիրը[10]. անկախ նրանից՝ դուք մոսկովյան անդամ եք, թե չէ, կարող եք ստորագրել այս տնտեսական պայմանագիրը, որը կնքվում է 5 տարով, և որի շնորհիվ մեծ տերությունները կարող են գոյատևել: Այսինքն՝ արդեն եկել են այն եզրակացության, որ տնտեսությունը և քաղաքականությունը պետք է իրարից զատել: Մեզ քաղաքական տեսակետից հնարավորութունէր տրված մի քայլ ևս անել դեպի անկախություն: Մենք չարեցինք, իսկ տնտեսության տեսակետից ինչ-որ երազում էինք, իրականացվում էր: Չնայած այս քայլերը հանգեցրին նրան, որ մեր հարաբերությունները արդեն իսկ վատ էին Ադրբեջանի հետ, հիմա էլ պիտի վատանային Վրաստանի հետ: Եվ մենք փակվում ենք վերևից: Նրանք անկախության կողմնակից են, մենք՝ Միության:

Երեկ ես լսում էի ելույթները: Ելույթ էին ունենում մարդիկ, որոնք, 3-4 տարի թաքնված, չէին համարձակվում խոսել անկախության դեմ, հիմա նրանց լեզուն բացվեց: Իսկապես, պետք է խոստովանել, որ նախորդ 100-ամյակի ընթացքում մեր ժողովրդից բավականին հեռացել էր անկախության զգացումը: Մենք դժվարությամբ, պայքարի միջոցով մտցրինք ժողովրդի մեջ այդ գաղափարը: Հիմա մեծ ուրախությամբ նորից հրաժարվում ենք՝ հանուն կոնֆեդերացիայի, հույս ունենալով, որ այդ վիճակն այդպես էլ կմնա: Չի մնա: Կամ մենք այդ Միությունում կդառնանք շոտլանդացիների նման էկզոտիկ մի ազգ, կամ դուրսը կլինենք: Կլինի դժվարին պայքար, բայց կունենանք անկախ պետություն, կկարողանանք իրա-կանացնել մեր ազգի նպատակները:

Հիմա չմասնակցելն այդ մարմինների աշխատանքներին արդեն ենթադրում է որոշ առճակատում: Դժվար է ասել՝ ինչ ուղղությամբ կգնա այդ միությունը: Կան ուժեր, որոնք ձգտում են նորից համախմբվել, ուժեղացնել այն: Խոսքը և՛ կենտրոնի, և՛ Ռուսաստանի, և՛ որոշ հանրապետությունների ղեկավարությունների մասին է, որոնք միայն միության միջոցով կարող են պահել իրենց իշխանությունը հանրապետություններում: Դա հստակ երևում է Միության միջինասիական հանրապետությունների օրինակով: Դա սեփական ժողովրդի դեմ պայքարելու մի ձև է: Կան ուժեր, որոնք ձգտում են ուժեղացնել այդ միությունը: Բայց կան նաև պատմական օբյեկտիվ ուժեր, որոնք քանդելու են այն: Մենք նորից ընկնում ենք քաոսի, առճակատումների շրջապտույտը: Տա Աստված՝ ես սխալվեմ, և նորմալ ճանապարհով գնանք: Բայց ոչ մի բան չէր խանգարում մի կողմ կանգնելուն ու սպասելուն: Ամենայն հավանա-կանությամբ, թողնելով մեր ներկայացուցչությունները տնտեսական կոմիտեների մեջ, որոնք հիմա գործում են Մոսկվայում մինչև ամսի 21-ը, պետք է կասեցնել մեր մասնակցությունը Պետական խորհրդում և սեպտեմբերի 21-ից հետո վերանայել այդ հարցը: Ինչքան ուշ այդ անենք, այնքան ավելի մեծ առճակատում կպահանջվի մեր կողմից: Վերացավ նախորդ առճա-

կատումը. մենք նորից մտնում ենք նոր առճակատումների մեջ: Սա է իմ կարծիքը այս հարցի վերաբերյալ:

Բայց ասեմ նաև, որ պայքարը նոր է սկսվում: Եթե մեկը մտածում է, որ մենք արդեն լավ վիճակում ենք, սխալվում է: Ոչ: Մենք պայքարել ենք, և պայքարը շարունակվելու է: Իսկ դրա համար պետք է ունենանք միասնական ժողովուրդ: Ի՞նչ է նշանակում միասնական ժողովուրդ: Ոմանք ասում են՝ դա անհնարին է: Իսկապես կան տարբեր քաղաքական կազմակերպություններ, որոնք բոլոր շրջանակներում իրար հետ պետք է քաղաքական պայքար մղեն: Իսկապես կան տարբեր խավեր՝ տարբեր շահերով ու հակասություններով: Եվ այն միասնությունը՝ որպես կատարյալ միասնության, որի մասին երբեմն խոսում են, հնարավոր չէ: Բայց մենք պետք է միասնական լինենք մեր ազգային խնդիրների, մեր հավատքի, մեր ապագայի, մեր ազգի առաքելության շուրջը: Յուրաքանչյուր անհատ (մանավանդ ստեղծագործ մտավորականությունը), կամա թե ակամա, բնազդով թե գիտակցաբար, գիտակցում է, որ պատահական չէ իր աշխարհ գալը, որ մի բան պիտի թողնի աշխարհին, ինչ-որ բան պետք է ստեղծի. ասենք, մի բանաստեղծություն պետք է գրի, մի թեորեմ ապացուցի... Եվ ներքին հավատն է, որ մարդկանց ստեղծագործական ուժ է տալիս:

Նույնն է ազգերի համար: Այն ազգը, որը կորցնում է հավատքը իր առաքելության, իր ազգի նկատմամբ, ու նրան մտահոգում են լոկ սոցիալական հարցեր, դատապարտված է սոսկ գոյատևման:

Երբ ասում եմ ազգ-կազմակերպություն, նորություն չեմ ասում: Այդ միտքը հնչել է 1988-ի ելույթների ժամանակ: Ինչու՞ այն ժամանակ դա չէր որակվում որպես այլ բան: Իսկապես, յուրաքանչյուր ազգի նպատակը ինքնակազմավորումն է: Ազգային պետության մեջ ինքնակազմավորումը բերում է պետության ստեղծմանը: Բայց մեր ազգի համար, որի մեծ մասը Հայաստանից դուրս է, սփռված է աշխարհով մեկ, ինքնակազմավորումը պետք է լինի համաշխարհային ինքնակազմավորում:

Եվ դա ֆաշիզմ չէ, որում ինձ մեղադրում են: Այդ մեղադրանքները շատ նման են 30-ական թվականների պիտակներին: Ի՞նչ ենք ուզում, ապազգային բազմություն՞ն դարձնել մեր ժողովրդին: Մեր ազգի հավատքը սասանվում է: Այս խնդրում, իհարկե, շատ մեծ նշանակություն ունեն սոցիալական հարցերը: Երբ մենք իշխանության եկանք, բոլորս լցված էինք հավատով: Ժողովուրդն էլ էր հավատում, որ շատ կարճ ժամանակում կլուծվեն սոցիալական հարցերը. չի լինի կաշառակերություն, արդար, բարգավաճող հասարակարգ կստեղծվի, և մենք կկարողանանք գնալ առաջ: Դա տեղի չունեցավ: Իհարկե, կարելի էր ավելի լավ աշխատել այդ ուղղությամբ, բայց մենք ըմբռնեցինք, որ դա ոչ թե մեկ, այդ երկար տարիների ջանքեր է պահանջում:

Նույն հոգսերը Մերձբալթիկայում էին, նույն սոցիալական հարցերը: Ապստամբություններ էլ էին լինում, բայց ազգային միասնությունը չէր սասանվում: Ես նորից եմ ասում՝ չեմ ընդունում մինչև կյանքի վերջը այս կամ այն կազմակերպության կամ կուսակցության դեմ պայքարելու կոչերը: Ներկայումս ես չեմ տեսնում մի կազմակերպություն, որը չի մտածում ազգի ապագայի մասին: Բոլոր կազմակերպություններն այս կամ այն կերպ մտածում են, և փոխանակ դիմելու «բաժանիր, որ տիրես» սկզբունքին, ընդհակառակը, պետք է համախմբել ուժերը, որպեսզի յուրաքանչյուրը կարողանա իր լուման ներդնել այն պայքարի մեջ, որը մեզ սպասում է առջևում: Ես ուզում եմ դիմել ՀՀՇ-ի իմ հին ընկերներին. իշխանության գալուց առաջ, երբ մենք պայքարում էինք բռնատիրության դեմ, միասնաբար գործում էին երկու տարբեր ուժեր՝ ստեղծագործ և քանդող, որոնք մի նպատակ ունեին: Միայն այս տոտալիտար կարգերը քանդելով մենք ստեղծեցինք, և այժմ ժամանակն է, որ քանդող ուժերն անջատվեն ստեղծագործ ուժերից: Ես կոչ եմ անում իմ բարեկամներին, իմ ընկերներին, որպեսզի մենք միասնաբար կարողանանք լուծել մեր խնդիրները, եկեք թողնենք կասկածները, բանսարկությունները...

Ձեռք ձեռքի, ուս ուսի տված գնանք առաջ: Միայն քաղաքական գործիչների շախմատային խաղերով մեր հարցերը չեն լուծվի, եթե մեր ժողովուրդը համախմբված չլինի ազգային իղձերի, ազգային գաղափարների շուրջը:

Վարչապետ Վ.Մանուկյանի ելույթը
ՀՀ ԳԽ նստաշրջանում,
1991թ. սեպտեմբերի 10

ՄԵՐ «ԱՅՈ»-Ն ԿՀԻՇԵՆ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ

-Պարոն Մանուկյան, ի՞նչ է կատարվում, Ձեր կարծիքով, աշխարհի 1/6 մասը կազմող տարածքում, որի անունը դեռևս հայտնի չէ, և այդ գործընթացների հետ կապված՝ ի՞նչ է սպասում մեզ առաջիկայում:

- Այն, որ Խորհրդային Միությունը փլուզվում է, ոչ մեկի համար գաղտնիք չէ, դա կատարվում է մեր աչքի առաջ և այդ ընթացքում ծառանում են բազում խնդիրներ, որոնց լուծման նպատակով կառավարությունը կազմել ու կազմում է ծրագրեր. դրանց մասին խոսվել է, այդ ծրագրերը մնացել են ուժի մեջ: Բազմաթիվ հարցեր կան, որոնց ես այսօր չեմ անդրադառնա, կառանձնացնեմ միայն երեքը: Առաջինը անկախության հարցն է: Մենք հայտարարել էինք, որ մեր ազգային թիվ մեկ նպատակը անկախ պետականության ստեղծումն է: Մենք պետք է ձգտենք, որ մյուս պետությունները ճանաչեն մեր անկախությունը՝ գիտակցելով, որ դա կախված է այն բանից, որ Խորհրդային Միություն կենտրոն անվանումով ինստիտուտը ճանաչի մեզ: Այդ առումով մենք բավականին մոտ ենք լուծմանը: Սեպտեմբերի 21-ին տեղի կունենա հանրաքվե, «այո» պատասխանի մասին ոչ մի կասկած չկա, որից հետո Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշում կընդունի անկախության վերաբերյալ և կդիմի Պետական խորհրդին՝ պնդումով, որ վերջինս ճանաչի մեր անկախությունը: Եթե Պետական խորհուրդն ու հանրապետությունները ճանաչեն մեր անկախությունը, ապա կճանաչեն նաև մյուս պետությունները: Դրանից հետո մենք կձգտենք գտնել տասը հանրապետությունների հետ համագործակցելու տարբերակները: Եթե Պետական խորհուրդը չճանաչի մեր անկախությունը, այդ դեպքում այնտեղ աշխատելը նպատակահարմար չէ: Բայց անմիջապես ուզում եմ ասել, որ դա չի նշանակում, թե մեր հարաբերությունները կխզենք մյուս հանրապետությունների կամ այն մարմնի հետ, որը հիմա կենտրոն է կոչվում:

Երկրորդ խնդիրը. մենք միշտ հայտարարել ենք, թե ձգտելով քաղաքական անկախության, գիտակցում ենք, որ տնտեսական անկախություն ընդհանրապես գոյություն չունի, դա հասկանալի է: Պատկերացնենք, օրինակ, որ Ֆրանսիայի կառավարությանն առաջարկվեր կազմել մի տնտեսական ծրագիր, թե ինչպես պետք է գոյատևել եվրոպական համագործակցության բոլոր երկրների հետ կապերը խզելու դեպքում: Ֆրանսիայի կառավարությունը, ամենայն հավանականությամբ, կպատասխաներ, որ այդպիսի տնտեսական ծրագիր կազմել հնարավոր չէ: Դա վերաբերում է բոլոր երկրներին, այնպես որ տնտեսական անկախություն գոյություն չունի, բայց մեր տնտեսական կախվածությունը միակողմանի է. և մենք, առանց մյուս հանրապետությունների հետ համագործակցելու, երկար չենք դիմանա, շատ բարդ իրավիճակ կստեղծվի: Այդպես է նաև մյուս հանրապետությունների համար: Մոսկվայում մենք միշտ հայտարարել ենք՝ ձգտելով քաղաքական անկախության՝ կողմնակից ենք, որ բոլոր 15 հանրապետություններն իրար հետ ունենան տնտեսական դաշինք և շարունակեն իրենց համագործակցությունը տնտեսական ասպարեզում: Եվ հիմա այդ հնարավորությունը ստեղծվել է: Կան տարբեր ծրագրեր, բայց հիմնականը Շատալինի և Յավլինսկու տնտեսական ծրագրերն են: Երկու օր առաջ Պետական խորհրդի նիստ էր, որտեղ ԳԽ-ի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ մասնակցում էի նաև ես: Այնտեղ մանրամասն քննարկվեց Յավլինսկու ծրագիրը, և որոշվեց այն ընդունել որպես հիմք:

Ի՞նչ է ասում այդ ծրագիրը. 15 հանրապետությունները, անկախ իրենց կարգավիճակից, ինքնիշխան, առանձին պետություն են, թե ոչ (խոսքը, պարզ է, վերաբերում է մերձբալթյան հանրապետություններին), միասին պետք է կազմեն տնտեսական դաշինք, հինգ տարով պայմանագիր կնքեն իրար հետ և համագործակցեն տնտեսական ասպարեզում: Այսինքն՝ Պետական խորհրդի աշխատանքներին մասնակցելուց մեր հրաժարվելը չի խանգարում մասնակցելու մեզ համար ամենակարևոր ոլորտին՝ տնտեսական համագործակցությանը. դա է մեր ձգտումը, մեր երազանքը, և դա իրականանում է: Ինչ վերաբերում է Յավլինսկու ծրագրին, ես չէի ուզենա տնտեսական նրբությունների մեջ մտնել, բայց ինձ ավելի սրտամոտ է Շատալինի ծրագիրը, որովհետև այն ավելի մեծ ինքնուրույնություն է տալիս հանրապետություններին և իրականացվում է: Ասեմ, որ Պետական խորհրդի նիստերին Ղրղզստանի պրեզիդենտն առաջարկեց Յավլինսկու ծրագրի փոխարեն Շատալինի ծրագիրն ընդունել որպես հիմք: Դա չընդունվեց մյուս հանրապետությունների կողմից: Որոշվեց

Յավլինսկու ծրագիրը վերամշակել և ստորագրել: Մերձբալթյան հանրապետություններից Լատվիան է մասնակցել այդ պայմանագրին: Կետեր կան, որոնք գուցե բոլոր հանրապետությունները ստորագրեն, բայց հնարավոր չլինի իրականացնել, կամ խուսափեն իրականացնել: Ընդմիջումների ժամանակ, երբ խոսում էի մյուս հանրապետությունների նախարարների խորհրդի նախագահների հետ, զգացի, որ բոլորը կստորագրեն, բայց որոշ կետեր կաշխատեն չկատարել: Լավն այն է, որ հինգ տարով է, և ցանկացած պահի կարող ենք պայմանագիրը չեղյալ հայտարարել:

Երրորդ հարցը, որի մասին բազմիցս խոսվել է, և որը մեզ համար շատ կարևոր է, այն է, որ պետք է աշխատենք Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինք կնքել, որը երաշխավորելով մեր և Ռուսաստանի ստրատեգիական շահերը՝ չսահմանափակի մեր ազատությունը և չխանգարի հարևանների հետ մեր հարաբերություններին. դա նուրբ հարց է:

Մոսկվայում մենք որոշ զրույցներ ունեցանք, և ես հուսով եմ, որ այդպիսի դաշինք հնարավոր կլինի կնքել: Այդպիսով, մենք որոշ կետերում դառնում ենք անկախ պետություն՝ աշխատելով ճանաչվել այլ պետությունների կողմից: Տնտեսական առումով մենք դեռ ինչ-որ ժամանակ կախվածություն կունենանք Միության մյուս հանրապետություններից՝ ձգտելով կապվել նաև ուրիշ երկրների հետ, բայց այդ խնդրում բարդություններ կան, ժամանակ է պահանջվելու: Այդպես եմ ես տեսնում վիճակը և մեր անելիքները:

Բայց այսօր մի այլ հարց կա՝ ձմեռվա հարցը, որը սարսափեցնում և վախեցնում է Խորհրդային Միության բնակչությանը: Կարևորագույնը պարենն է և էներգետիկան: Վառելիքի և էներգետիկայի առումով մենք լրիվ կախման մեջ ենք գտնվում: Ինչ վերաբերում է մթերքին, ապա ջանք չենք խնայում, որպեսզի հանրապետությունն ապահովենք պարենով: Մի քանի օր առաջ Բուշի հանձնարարությամբ Միացյալ Նահանգներից պատվիրակություն էր եկել օգնություն ցույց տալու նպատակով. ուսումնասիրում էր Խորհրդային Միության հանրապետությունների տնտեսական վիճակը: Նրանք բավական զարմացած գնացին Հայաստանից: Մինչ այդ եղել էին յոթ հանրապետություններում և, իրենց իսկ վկայությամբ, ոչ մի տեղ այդչափ մշակված գյուղատնտեսական ծրագրեր չէին տեսել: Որոշ հանրապետություններ մինչև իսկ պահանջարկի թվերը չէին կարողացել ներկայացնել: Մի քանի օրից կգա Միացյալ Նահանգների գյուղատնտեսության նախարարը, և մենք կփորձենք այդ աշխատանքը հասցնել ավարտին: Բացի դրանից, հնարավոր է, որ եվրոպական համագործակցության երկրները զգալի օգնություն ցույց տան Խորհրդային Միությանը: Մենք հարց ենք դրել, որ Հայաստանին հասանելիք օգնությունը տրվի ոչ թե Խորհրդային Միության միջոցով, այլ անմիջաբար:

Էներգետիկայի հարցը, ինչպես ասացի, ավելի բարդ է. մազութի արտադրությունը Խորհրդային Միությունում մոտավորապես 30 տոկոսով նվազել է: Այն ճանապարհները, որոնցով մազութ ենք ստանում, ժամանակ առ ժամանակ փակվում են, փորձում ենք ածուխ առնել փոխանակության միջոցով:

Անցյալ տարի, երբ ձմեռը չէր սկսվել, ես պաշտոնապես հայտարարեցի, որ սով չի լինի: Ես հիմա էլ պիտի ասեմ, որ ձմեռը բարեհաջող կանցնի: Ճիշտ է, մեծ ջանքեր ու զոհողություններ կպահանջվեն, բայց կհաղթահարենք:

Խորհրդային Միության մյուս հանրապետությունների հետ մեր տնտեսական կապերը պահելով հանդերձ՝ պետք է գիտակցենք, որ դրանք ոչ թե մեր տնտեսության զարգացմանը նպաստող կապեր են, այլ գոյատևման կապեր: Զարգացմանը նպաստող կապերը պետք է լինեն մյուս առաջադեմ երկրների հետ:

-Պարոն Մանուկյան, դուք ասացիք՝ ոչ մի երկիր, մինչև անգամ Ֆրանսիան, չի կարող կազմել անկախ տնտեսության ծրագիր, բայց, բնականաբար, ամեն մի երկիր ունի իր տնտեսական ծրագիրը: Մեզ մոտ շատ է ասվում այն մասին, որ սեպտեմբերի 21-ին մեր ժողովուրդը կասի իր «այո»-ն, բայց մենք չունենք սեպտեմբերի 22-ի ծրագիրը:

-Նախ ասեմ, որ մենք չենք կարողանում գնահատել այն, ինչ ունենք: Սեպտեմբերի 22-ի ծրագիրը սեպտեմբերի 21-ին չպետք է պատրաստվեր: Անկախությանը պատրաստվում էինք օգոստոսից սկսած: Դա աննկատ էր անցնում մեր ժողովրդի համար, որովհետև չկար պարեն, հոսանք, ժողովուրդը իրավացիորեն դժգոհում էր: Սոցիալական լարվածություն կար, անարդարություն կար, որոշ բնագավառներում քաոսային վիճակ կար: Բնական է՝ ժողովուրդը դա է տեսնում: Բայց ուզում եմ ասել, որ միայն դա չպետք է տեսնել; Առաջին ծրագիրը, որ ես մտածել էի իրականացնել, երբ որ ընտրվեցի վարչապետ, սեփականաշնորհումն էր, այն մեր գյուղացիներին հայրենիք էր տալիս: Ցանկացած մասնագետ կասի, որ սեփականաշնորհման

հիմքը հողի սեփականաշնորհումն է: Դա ամենածանր հարցն է: Շատ երկրներ կան, որոնք չեն կարողացել ավարտին հասցնել հողի սեփականաշնորհումը: Դա աշխարհի ամենաբարդ խնդիրներից մեկն է: Մենք առաջ քաշեցինք այդ հարցը: Կառավարությունը քննարկեց, հիմնական դրույթները որոշեց: Գերագույն խորհրդում օրենքներ ընդունվեցին, հարյուր - հազարավոր մարդկանց ջանքերով դա իրականացվեց: **Եվ մենք դարձանք ԽՍՀՄ-ում միակ հանրապետությունը, որը կատարել է հողի սեփականաշնորհումը: Դա ճանապարհ է դեպի անկախություն: Երկրորդ. երեկվանից իմ սեղանին դրված է մի նոր հեռախոս, սեպտեմբեր ամսին մենք պայմանագիր կնքեցինք ATT ամերիկյան ֆիրմայի հետ և արդեն արբանյակային կապ ունենք աշխարհի հետ: ԽՍՀՄ-ում այդպիսի կապ ոչ մի հանրապետությունում չկա: Իսկ բիզնեսի հիմքում ընկած է կապը: Միությունը 60 միջազգային ալիք ունի: Մենք՝ արդեն 180, մի քանի ամսից կունենանք 270 ալիք: Այսինքն՝ ապագայի կարևորագույն քայլերից մեկն արդեն արված է: Երրորդ հարցը՝ մենք Երևանում գործարար մարդկանց հավաքեցինք և որոշում ընդունեցինք հայկական բանկ ստեղծելու մասին: Այսօր Եսայի Ստեփանյանը մեկնեց Փարիզ, որտեղ վերջին բանակցություններն են տեղի ունենում: Ստեղծվում է հայկական բանկ, հիմնադրամը 200 մլն դոլար է, որից 10 մլն ներդնում է կառավարությունը: Այդ հիմնադրամին մասնակցում են Եվրոբանկը (Աթալլիի բանկը), մի քանի եվրոպական բանկեր, սփյուռքահայեր: Այդ 200 մլն հիմնադրամով բանկը կարող է Հայաստանին 4 միլիարդ դոլարի վարկ տրամադրել (1: 20 հարաբերություն է):**

Դա ԽՍՀՄ-ում աննախադեպ երևույթ է: Նշանակում է, որ դու քո սեփական բանկից 4 միլիարդ վարկ կունենաս: Դա կարևոր խնդիր է: Ես կարող եմ նշել ուրիշ խնդիրներ, որոնցով էապես տարբերվում ենք մյուս հանրապետություններից: Մենք խորհրդակցության էինք Պետական խորհրդում, որտեղ քննարկվում էին Խորհրդային Միության ԳԱ-ի կարգավիճակի և գիտության ֆինանսավորման հարցերը: Կատարյալ շփոթ ստեղծվեց և հարցը չլուծվեց: Մինչդեռ մենք միակ հանրապետությունն ենք, որ ստեղծել ենք միջազգային ստանդարտներին համապատասխան գիտության ֆոնդ, և գիտության ֆինանսավորումը կատարվելու է այդ ֆոնդի միջոցով: Հիմա արդյունքները չնչին են և չեն երևում: Բայց դա կարևորագույն քայլ է. միջազգային կառույցներին համապատասխանող մի կառույց ունենալ, որը ֆինանսավորի գիտության զարգացումը: Ժամանակ կանցնի, և կտեսնեք, թե ինչ մեծ արդյունք կտա այդ նախաձեռնությունը:

Մի ուրիշ քայլ էլ ասեմ: Բոլոր հանրապետությունների տնտեսության՝ պետպլան կոչվող նախարարությունները, որ անվանում են էկոնոմիկայի նախարարություն, 10 օրով հավաքվել էին Բրյուսելում: Այնտեղ բանակցություններ էին վարվում եվրոպական համագործակցության երկրների հետ:

Մենք ներկայացրինք 36 ծրագիր: Ըստ որում ծրագիր պատրաստելիս մեծ ջանքեր թափեց մեր իմֆորմացիայի ինստիտուտը: Հարյուրավոր մարդիկ աշխատեցին ծրագրերի վրա: Միակ հանրապետությունը, որը համեմատելի էր մեզ հետ, Ուկրաինան էր, որը կարծեմ 15 ծրագիր էր ներկայացրել: Հատուկ նշվեց, որ Հայաստանը առջևում է, միջազգային ստանդարտներին համապատասխանող տնտեսական ծրագիր է ներկայացրել, որը կարող է ֆինանսավորվել: Այս տարի եվրոպական համագործակցության երկրները 450 մլն էքյու են տալու Խորհրդային Միությանը: Մեր բնակչությունն ու տնտեսությունը ստանալու էին 8-9 մլն էքյու, բայց քանի որ մյուս հանրապետությունները ծրագրեր չէին ներկայացրել, իսկ մենք ներկայացրել էինք, որոնք արդեն կարելի է ֆինանսավորել, սպասում ենք, որ մոտավորապես 30-40 մլն. էքյու կստանանք: Դա ոչ թե վարկ է, այլ օգնություն այդ ծրագրերը իրականացնելու համար: Այսինքն՝ այս հարցում էլ ենք մենք պատրաստ: Հիշատակածս հարցերը ցույց են տալիս, թե որքանով ենք պատրաստ նոր ստեղծվող կարգավիճակին: Մենք բազմաթիվ պայմանագրեր ունենք տարբեր երկրների ֆիրմաների հետ: Այստեղ մինչև հիմա արտասահմանյան խոշոր գործարաններ չեն բացվել, դրա համար երբեմն մեղադրում են արտաքին տնտեսական կապերի նախարարին. ադարացի չէ, որովհետև դա ամբողջ Խորհրդային Միության ցավն է, արտասահմանյան կապիտալ չէր ներմուծվում: Պատճառն ամենից առաջ այն է, որ պակասում են կառույցները, որոնք կարող են այդ կապիտալը ճիշտ օգտագործել, իսկ Հայաստանն՝ իր կառույցներով, մյուսներից առաջ է անցել:

Երրորդ՝ քաղաքական անորոշ վիճակ էր. վիճակի փոխվելու հետ մենք սկսեցինք բանակցություններ վարել և հիմա երկու պայմանագիր ենք ստորագրելու: Ռումինիայի և Լեհաստանի կառավարություններն են դիմել մեզ, որպեսզի իրենց հետ պայմանագրեր

կնքենք: Մոտ ժամանակներս կամ նրանց վարչապետները կգան Հայաստան, կամ ես կմեկնեմ Վարշավա, Բուխարեստ, և այդ պայմանագրերը կստորագրենք:

Հեղաշրջման տապալումից անմիջապես հետո հրավիրեցինք արտաքին հարաբերություններով զբաղվող մեր մասնագետներին՝ քննարկելու համար այն միտքը, որ կադրերի պատրաստման, վարկերի ստացման համար մեր բնական շուկան, տնտեսական հարաբերությունները պետք է Արևելքի հետ կառուցել: Մենք նամակներ ուղարկեցինք Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների վարչապետներին և մոտ ժամանակներս կսկսենք հարաբերություններ հաստատել այդ երկրների հետ տնտեսական, քաղաքական, մշակութային փոխշահավետ համագործակցություն իրականացնելու համար: Շարունակվում են այն աշխատանքները, որ սկսել էինք ամիսներ առաջ մեր անմիջական հարևանների՝ Իրանի և Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններ հաստատելու նպատակով: Այդ ամենը ժամանակ է պահանջում: Բայց ես լավատես եմ և կարծում եմ, որ մենք այն հանրապետություններից ենք, թերևս միակը, որն արդեն պատրաստ է անցնելու նոր կարգավիճակի:

Մեր ժողովուրդը մասնավոր սեփականության անցնելու հոգեբանական արգելքներ չունի: Ի դեպ, սեփականաշնորհումը ընթանում է աննկատ, մինչդեռ մեկ ամսում 200 տարբեր օբյեկտներ ենք սեփականաշնորհել: Մեծ թափով կշարունակենք և մեկ տարուց հետո չենք ունենա առևտրի նախարարություն այն տեսքով, ինչ հիմա կա, օրինակ, չեն լինի պետական խանութներ, խանութներում նույն ստանդարտ ապրանքների փոխարեն կլինի բազմազանություն և այլն: Ճիշտ է, այս ընթացքում ծառանում է մի խիստ կարևոր խնդիր. սոցիալական արդարության խնդիրը: Սա արդեն կառավարության հոգսն էլ է: Ինչ վերաբերում է ժողովրդին, նա պատրաստ է տնօրինելու իր բախտը, կառուցելու մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակարգ՝ քաջ գիտակցելով նաև անցնելիք ուղու դժվարությունները: Մենք հիմա նոր պայմաններին համապատասխանող, միջազգային կառույցները լավ պատկերացնող,արտասահմանյան ֆիրմաների, նախարարների հետ լուրջ և նուրբ բանակցություններ վարելու կարողություն ունեցող մասնագետների կարիք ունենք: Մեզանում այդպիսիները քիչ են, այդ պատճառով երևի շարունակենք ներգրավել սփյուռքահայ մասնագետներին: Ներկայումս, ճիշտ է, ժամանակավոր, Հայաստանում է Վահրամ Ներսիսյանը, որը միջազգային բանկի լատինամերիկյան բաժնի վարիչն է և արդեն երրորդ անգամ է, որ արձակուրդ է վերցնում ու գալիս Հայաստան: Աշխատում է օրուգիշեր, օգնում և՛ բանակցություններ վարելիս, և՛ ծրագրեր կազմելիս: Հավանաբար ինչ-որ ժամանակից հետո նա մշտական բնակություն հաստատի այստեղ: Նման հայեր շատ կան, որոնք կգան, կօգնեն մեզ: Մասնագետների հարցը ամենակարևորն է: Ցանկացած երկիր, եթե ուզում է զարգանալ, առաջին հերթին պետք է պատրաստի մասնագետներ:

-Ինչպե՞ս եք պատկերացնում անկախ ժողովրդավարական Հայաստանի ապագան, մեր ժողովրդի ապագան: Ի՞նչ հեռանկարներ կան:

-Ես մի անգամ արդեն առիթ եմ ունեցել ասելու, որ եթե մարդ չզգա, որ աշխարհ է եկել օգտակար մի գործով հետք թողնելու, ոչ թե միայն ուտել-խմելու համար, ապա նա ներքին ուժ չի ունենա և ոչինչ չի ստեղծի: Նույնը ազգերի դեպքում է: Մեր ազգն անցել է հազարամյակների ճանապարհ և ծառայություններ է մատուցել ժամանակակից քաղաքակրթություններին: Քաղաքակրթությունները փոխվում են. կար Հունաստանի քաղաքակրթությունը, Չինաստանի քաղաքակրթությունը, կա եվրոպական քաղաքակրթություն, գուցե 2000 թվին ինչ-որ ուրիշ, նոր քաղաքակրթություն առաջանա նոր ձևերի, նոր սկզբունքների հիման վրա: Եվրոպական քաղաքակրթության ստեղծման մեջ մեծ դեր են խաղացել նաև հայերը: Այդ դերի մասին մենք քիչ ենք խոսում: Բայց ժամանակակից Եվրոպան փոքր-ինչ այլ կլիներ, եթե հայերը չմասնակցեին Եվրոպայի քաղաքակրթության ստեղծմանը: Այն նոր քաղաքակրթության մեջ, որը պետք է ստեղծվի, ես կարծում եմ, հայերը հսկայական ավանդ են ունենալու: Եվ ես դա համարում եմ առաքելություն: Առաքելությունը թշնամությունը չէ ուրիշ ազգերի նկատմամբ, ոչ ժողովրդավարական համակարգը չէ: Առաքելություն նշանակում է, որ Աստված քեզ պատահական չի ստեղծել, քո առջև խնդիրներ է դրել, և դու պարտավոր ես դրանք իրականացնել:

Ես գտնում եմ, որ հայերը բացառիկ ազգերից մեկն են (բացառիկ ասելով ես չեմ ուզում նսեմացնել մյուս ազգերին, դա չի նշանակում թշնամություն մյուսների նկատմամբ), բացառիկ՝ Արևմուտքի և Արևելքի միջև կապի առումով. շատ կարևոր օղակ է հարավի և հյուսիսի, անցյալի և ապագայի միջև: Մենք հին ժողովուրդ ենք, պարտավորություններ ունենք

մյուս ժողովուրդների հանդեպ, և որպեսզի դրանք կարողանանք կատարել, պետք է հզոր լինենք: Թույլ մարդու մինչև իսկ ամենախելոք խոսքը տեղ չի հասնում, մինչդեռ ուժեղի կիսախելոք խոսքն անգամ անցնում է: Մենք պետք է կարողանանք մեր դերը կատարել: Դրա համար պետք է հզոր լինենք: Մենք պետք է ունենանք պետություն: Դա առաջին քայլն է, բայց հարկ է հիշել, որ հայերի մի մասը Հայաստանից դուրս է ապրում, և եթե ուրիշ ազգերի համար ինքնակազմավորում նշանակում է պետություն ստեղծել, ապա մեզ համար պետությունը կորիզն է, մինչդեռ մենք պետք է կարողանանք կազմակերպել ողջ ազգը: Դա է ազգ-կազմակերպությունը: Դա չի նշանակում զինվորական կարգապահություն. դա նշանակում է արդի աշխարհին համապատասխանող միջազգային և պետական ու ոչ պետական կառույցներ, որոնք հնարավորություն տան մեր ազգին խնդիրները լուծելիս հենվել ոչ միայն մեր պետության հզորության, այլ նաև համայն հայության վրա:

Ես ուզում եմ օրինակ բերել. եթե եվրոպական համագործակցության երկրների խորհրդակցությունում Մերձբալթյան երկրները դիտվում են որպես եվրոպական երկրներ, որոնց օգնություն ցույց տալը բնական է համարվում, իսկ Անդրկովկասը, փաստորեն, Ասիա է և եվրոպական համագործակցության հետ կապ չունի, ապա Հայաստանի հարցը այլ է, որովհետև Եվրոպայում շատ հայեր կան, որոնք կստիպեն, որ հայերին ճանաչեն աշխարհում, այսինքն՝ դրսի հայությունը լոբբիի այդ դերը կատարում է: Եվ ես կարծում եմ, որ մենք պետք է ձգտենք համախմբել այդ ազգ-կազմակերպությունը: Այստեղ բնական է, որ մենք հետևենք հրեաներին և ուրիշներին՝ իրենց համապատասխան կառույցների օրինակով մերը ստեղծելու համար: Նրանց գործարար մարդկանց առաջին քայլն այդ կառույցների ստեղծում էր: Դրան պետք է նպաստեն նաև իշխանությունները, քաղաքական կուսակցությունները՝ աշխատելով համագործակցված: Ես այսպես եմ տեսնում մեր ազգի ապագան:

Գիտակցում եմ, որ մենք ունենք առաքելություն: Իսկ այդ առաքելությունը կատարելու համար պետք է լինենք հզոր, հզորանալու համար պետք է կարողանանք կազմավորվել որպես համաշխարհային ազգ, որն իր հերթին պահանջում է ունենալ անկախ պետականություն: Դա է մեր ճանապարհը: Ճանապարհ, որը կբերի մեզ հզորության, մեր ժողովրդի բարգավաճմանը: Եվ ես շատ պայծառ եմ տեսնում մեր ապագան: Ճիշտ է, մեր ժողովուրդը, մեր մտավորականությունը, բոլորս այսօր տնտեսական ծանր վիճակում ենք, բայց պետք է առաջ նայենք ու տեսնենք վաղվա օրը:

Եվ ահա աննկատ մոտեցանք մի շեմի՝ սեպտեմբերի 21-ին: Այդ օրը Հայաստանն ինչ-որ սիմվոլիկ ձևով դառնալու է անկախ: Մենք կարևոր շեմ ենք անցնում և պետք է գիտակցենք այդ բանը:

Ու եթե վաղը թոռներս ինձ հարցնեն. «Պապիկ ջան, այդ շեմը անցնելիս դու քայլ արե՞լ ես, մեր տոհմը մասնակցե՞լ է», ես հպարտությամբ կասեմ՝ այո, մասնակցել եմ: Ես գիտեմ, որ պատասխանը «այո» է լինելու, և մեր «այո»-ն հիշելու են սերունդները:

Վարչապետ Վ. Մանուկյանի հեռուստազրույցը
1991թ. սեպտեմբերի 19-ին
Հարցազրույցը վարեց Տիգրան Պասկևիչյանը
«Հայաստանի Հանրապետություն», 1991, 20 սեպտեմբերի

ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ ՉԷ, ՈՐ ԹՈՂՆՈՒՄ ԵՄ ՀԱՍԱԿԱՐԳԸ՝ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՎ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Հարգելի պատգամավորներ, հարգելի նախագահություն:

Ես հիմա կանցնեմ քննարկվող հարցին՝ կապված Յավլինսկու ծրագրի հետ, բայց մինչ այդ անհրաժեշտ եմ համարում մի քանի հայտարարություն անել:

Առաջինը՝ պրեզիդենտական ընտրությունների մասին, որոնք հանգեցրել են այն իրավիճակին, որ բորբոքելով ոմանց իշխանատենչությունը, հիվանդագին երևակայությունը և կասկածամտությունը՝ հասցնելու է հոգեկան հիվանդության շեմին: Այս պայքարը ապակայունացնում է մեր հանրապետության ներքին կյանքը, էապես ազդում է մեր տնտեսական համակարգի գործունեության և նույնիսկ մեր քաղաքական որոշումների ընդունման վրա: Ինձ համար խորապես վիրավորական է նաև, երբ այստեղ՝ դահլիճում և դրսում հնչում են

զրպարտանքներ: Եվ Գերագույն խորհրդից ոչ ոք հարկ չի համարում միջամտել կամ հետաքննություն պահանջել՝ պարզելու համար, թե մեղադրանքներից որն է ճիշտ, որը՝ սխալ: Հաշվի առնելով այդ ամենը (ներկայացված է նաև Դավիթ Վարդանյանի կարծիքը)՝ ես պաշտոնապես հայտարարում եմ, որ դուրս եմ գալիս պրեզիդենտական ընտրությունների պայքարից՝ հանելով իմ թեկնածությունը: Էթիկայի պարզագույն օրենքը, իմ մարդկային արժանապատվությունը և սկզբունքները բերում են ինձ այն համոզման, որ մինչև հոկտեմբերի 16-ը ես պետք է հրաժարվեմ նաև վարչապետությունից: Եվ ես պաշտոնապես դիմում եմ ձեզ հրաժարականով՝ խնդրելով օրակարգ մտցնել հարցը: Իմ տեղակալները լիովին հնարավորություն ունեն՝ շարունակելու այն գործը, որը ես արել եմ մինչև այժմ: Ինչպես կընդունվի հրաժարականս, և տեղակալներիցս ով կշարունակի այն համակարգի ղեկավարությունը, որը վստահված է ինձ, կորոշի Գերագույն խորհուրդը:

Երկրորդ՝ այս նոր կարգավիճակը, որն ստեղծվել է Խորհրդային Միությունում, անկախությունը, որը հռչակեց մեր հանրապետությունը, նոր դռներ են բացել մեր առջև, մեծ հնարավորություններ կան տնտեսության զարգացման առումով, մենք ստանում ենք բազմաթիվ առաջարկություններ տարբեր երկրներից: Դժվարություններ կլինեն, բայց ճանապարհը պարզ է, այնպես որ վատ վիճակում չէ, որ թողնում եմ համակարգը՝ հրաժարվելով վարչապետությունից:

Երրորդ հարցը. երկու օր Գերագույն խորհրդում քննարկվում է մի փաստաթուղթ: Ես չեմ մասնակցել այդ քննարկմանը, բայց ուզում եմ երկու խոսքով հայտնել իմ կարծիքն այդ փաստաթղթի մասին: Հարյուրավոր տարիներ մարդկությունը պայքարել է, որպեսզի գործադիր իշխանության համար ստեղծի հակակշիռ, որը միակ երաշխիքն է ժողովրդի ազատության: Տարբեր հակակշիռներ կան, ես կնշեմ երեք կարևորագույնը: Առաջինը պառլամենտն է, երկրորդը՝ մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսությունը, որը կենտրոնացված գործադիր իշխանությանը զուգահեռ ստեղծում է նաև բազմաթիվ այլ հզոր կետեր՝ տարբեր ֆիրմաներ, տարբեր անհատներ ունենում են այնպիսի հզորություն, որ գործադիր իշխանությունը դժվարանում է նրանց ճնշել, և դա հակակշռում է գործադիր մարմնի մենաշնորհն իշխանության նկատմամբ: Երրորդը, որը նույնպես շատ կարևոր է, ավանդույթներն են և՛ հասարակության մեջ, և՛ քաղաքական կազմակերպություններում:

Ցավոք սրտի, մենք չունենք երկրորդը, այսինքն՝ մասնավոր սեփականության վրա հիմնված բազմիշխանություն, մենք չունենք երրորդը, այսինքն՝ ժողովրդավարական ավանդույթներ: Այդ է պատճառը, որ մենք մեծ ուշադրություն պետք է դարձնենք այն հակակշռին, որն ստեղծում է Գերագույն խորհուրդը: Ես փաստաթղթի քվեարկությանը չմասնակցեցի, որովհետև այն անորոշ էր, շատ հարցեր բաց են մնացել. այդ նույն փաստաթղթով և՛ ժողովրդավարական հանրապետություն կարելի է ստեղծել, և՛ դիկտատուրա: Այդ ամենը դեռ առջևում է, ես հուսով եմ, որ հիշյալ հարցերը լրջորեն կքննարկվեն, երբ այստեղ դրվի Գերագույն խորհրդի կարգավիճակի հարցը:

Մի հարցի մասին էլ կուզենայի խոսել: Ծիծաղելիորեն բոլոր դիկտատուրաները հիմնվում են նույն ձևով: Դիմում են ժողովրդին՝ ասելով, թե երկրում քաոս է, կաշառակերություն, հանցագործությունները շատ են, և պետք է ուժեղ ձեռք, ուժեղ իշխանություն, որպեսզի վերջ դրվի քաոսին: Դա հայտնի ձև է, և առանց միմյանցից տեղյակ լինելու, դա օգտագործել են հազարավոր մարդիկ հազարավոր տարիների ընթացքում: Եթե խոսենք մեր պետության՝ Հայաստանի մասին, իսկապես քաոս կա, որը պայմանավորված է տարբեր հանգամանքներով: Պատճառներից մեկն իսկապես այն է, որ այս մեկ տարվա ընթացքում, չնայած դրա մասին բազմիցս ասվել է, չհաջողվեց կարգավորել իշխանության համակարգը, հստակեցնել Գերագույն խորհրդի և գործադիր իշխանությունների լիազորությունները: Դա չհաջողվեց հստակեցնել օրենքներով, ես հիմա տեսնում եմ, որ քննարկվող օրենքներում նույնպես չկա: Երկրորդը իրավապահ մարմինների ոչ արդյունավետ աշխատանքն է: Խոսքը և՛ կառավարության համակարգում գտնվող ներքին գործերի նախարարության, և՛ Գերագույն խորհրդի համակարգում գտնվող դատախազության ու դատարանների գործունեության մասին է:

Բայց կա քաոսի մի դրսևորում, որը վերացնելու մեր բոլոր փորձերը կբերեն դիկտատուրայի, կաթվածահար կանեն հանրապետության կյանքը: Դա քաոսի այն դրսևորումն է, որը պայմանավորված է պետական սեփականությունից մասնավոր սեփականության անցնելու պարագայով, և քաոսի նույն այդ դրսևորումը առկա է Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներում, բոլոր հանրապետություններում: Վերացնել քաոսի այդ դրսևորումն, առանց զոհաբերելու մեր ապագան, հնարավոր չէ: Սա ես խնդրում եմ հաշվի առնել, և համակեպվել, որ առաջիկա տարիներին քաոսի ինչ-որ տարր այնուամենայնիվ Հայաստանում լինելու է: **Եվ ես նաև կոչ եմ անում, որ երբ մենք օրենքներ ենք ընդունում, անենք ոչ թե այս կամ այն անհատի, այս կամ այն պաշտոնը ստանալու համար, այլ հանրապետության, մեր ազգի**

ապագայի, նաև մեզ համար: Պաշտոնյա կամ պատգամավոր լինելուց զատ և ամենից առաջ բոլորս քաղաքացիներ ենք, ունենք ընտանիք և երեխաներ և ցանկանում ենք, որ մեր ընտանիքները, մեր երեխաներն ապրեն ազատ: Խնդրում եմ երբեք չմոռանալ այս հանգամանքը:

Անցնենք հաջորդ հարցին, որի շուրջ ևս ես իմ հակիրճ նկատառումները կասեմ, առավել մանրամասն քիչ հետո կխոսի Հրանտ Բագրատյանը: Ամիսներ շարունակ մենք պնդել ենք, թե նպատակ ունենք ստեղծել քաղաքական անկախ պետություն և որպես այդպիսին՝ ճանաչվել այլ պետությունների կողմից, հնարավորություն ունենալ վարել ազատ քաղաքականություն, բայց միաժամանակ միշտ նշել ենք, թե պետք է շարունակենք մնալ Խորհրդային Միությունը կազմող հանրապետությունների տնտեսական համակարգի մեջ: Դա պայմանավորված է երեք հանգամանքով: Առաջինը՝ մեզ համար կենսական նշանակություն ունեցող այն ապրանքները, վառելանյութը և սնունդը, որ ստանում ենք ԽՍՀՄ տարբեր վայրերից, մենք չենք կարող գնել արտասահմանից, որովհետև մեր արտադրությունը ոչ մեկ, ոչ էլ երկու տարում հնարավորություն չի ունենա դուրս գալ միջազգային շուկա, վաստակել այնքան վալյուտա, որ կարողանանք այդ ամենը գնել: Սա մեզ պարտադրում է լինել այդ համակարգի մեջ: Երկրորդ՝ Հայաստանում հիմա գոյություն ունի երկու տնտեսություն: Մեկը, այսպես կոչված, սոցիալիստական տնտեսությունն է, որը քայքայվում է և շարունակելու է քայքայվել, այն փրկել հնարավոր չէ: Բայց դա մեզ հնարավորություն է տալիս փոխանակման միջոցով ստանալ մթերք ու վառելանյութ և ապահովել աշխատատեղեր: Այդ համակարգը, այդ տնտեսությունը քանդվելու են, և այն կապերը, որ մենք ունենալու ենք մյուս հանրապետությունների հետ, չեն նպաստելու մեր տնտեսական զարգացմանը: Դուք հիշեք, որ մյուս հանրապետությունների հետ ունեցած մեր բոլոր տնտեսական կապերը մեզ պետք են գոյատևելու, այլ ոչ թե այդ քանդվող տնտեսության անկումը դանդաղեցնելու կամ զարգացնելու համար: Եվ մենք ստիպված ենք կապված մնալ Խորհրդային Միության մյուս հանրապետությունների հետ՝ միաժամանակ մեր նոր տնտեսությունը՝ հիմնված մասնավոր սեփականության վրա, արագորեն զարգացնելով և կապեր ստեղծելով մյուս երկրների հետ: Այդ երկու հանգամանքները տարիների ընթացքում վերացվելու են, ճիշտ զարգացման դեպքում մենք մի քանի տարի հետո դրա անհրաժեշտությունը չենք ունենա: Բայց կա երրորդ հանգամանքը, որն ավելի երկարատև բնույթ ունի՝ չզրկվել ԽՍՀՄ-ի հսկայական շուկայից:

Այսպիսի հակասական մտքերով մենք ուզում ենք միանալ տնտեսական ծրագրի: Մեզ առաջարկված է Յավլինսկու ծրագիրը: Այդ ծրագրի միակ դրական բանն, ըստ իս, այն է, որ նրանից կարելի է դուրս գալ: Իր բոլոր հրապուրիչ կողմերով հանդերձ՝ դա միասնական պետություն ստեղծելու տնտեսական ծրագիր է: Հրաժարվել են կայսրությունը քաղաքական, ռազմական միջոցներով պահելու ձևերից, անցել են ավելի քաղաքակիրթ ձևի՝ տնտեսական միջոցների: Հիմնականում դա արտահայտվում է բանկային համակարգի մեջ, դրա մասին ավելի մանրամասն կխոսվի այստեղ, այնուամենայնիվ ես գտնում եմ, որ մենք ստիպված ենք այդ ծրագիրը ստորագրել: Մեր մարդիկ հիմա գտնվում են Մոսկվայում, փորձում ենք այդ ծրագրում փոփոխություններ մտցնել, և ծրագրին միանում ենք դուրս գալու հավանականությամբ: Դա պետք է հիշել: Եվ այդ նույն նպատակով են մտնում նաև մյուս հանրապետությունները, բացի թերևս Ռուսաստանից: Հենց այդ պատճառով Յավլինսկու ծրագրի շատ կետեր ուղղակի չեն էլ աշխատելու հետագայում:

Ծրագրի հետ միասին, իհարկե, պետք է քննարկել նաև քաղաքական կառույցները, որոնք մեզ կապում են մյուս հանրապետությունների հետ: Խոսքը Պետական խորհրդի մասին է և այն մարմնի՝ օրենսդիր կամ չգիտեմ ինչ, ուր մենք պետք է քսան պատվիրակ ուղարկենք: Ես կարծում եմ, որ մենք չպետք է մասնակցենք պետխորհրդի աշխատանքներին, դա մեզ ոչինչ չի տալիս. պարզապես Յավլինսկու վտանգավոր ծրագրին, որին ստիպված ենք միանում, ավելանում է մի նոր վտանգ, պետք չէ այնտեղ ուղարկել մեր քսան պատվիրակներին: Երբեմն այսպիսի թյուր կարծիք է ստեղծվում, որ եթե մենք գնում ու շատ ջերմ զրույցներ ենք ունենում Գորբաչովի, Ելցինի և մյուսների հետ, ապա Հայաստանի գործերը լավ կընթանան: Դա հրապուրիչ է հասարակ ժողովրդի համար, բայց ովքեր զբաղվում են քաղաքականությամբ, պետք է մի բան պարզ գիտակցեն. երբ գնում ես բանակցությունների, ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ հզորություն կա քո ետևում, քո հանրապետության տնտեսական ռազմական հզորությունն ինչ աստիճանի է հասել: Եվ պատկերավոր ասած, եթե գնում ես բանակցությունների՝ թիկունքիդ ունենալով 10 թնդանոթ, ապա պիտի ձգտես հասնել այնպիսի արդյունքի, որին հնարավոր չէր հասնել 9 թնդանոթով, բայց երբեք հույս չունենաս, թե կարող ես հասնել մի արդյունքի, որի համար պետք է 11 թնդանոթ: Չգիտեմ՝ ընկալվե՞ց ասածս, թե ոչ. չի կարելի շատ հրապուրվել այդ ջերմ հարաբերություններով, պետք է հստակ գիտակցել, որ մեր հիմնական ճանապարհը մեր տնտեսական և ռազմական հզորությունն է, մնացած ամեն ինչ կախված է դրանից, և ես կարծում եմ՝ մասնակցել այդ պետական խորհուրդներին իմաստ չունի:

Վերադառնալով Յավլինսկու ծրագրին՝ ասեմ, որ այդ ծրագիրը քննարկել ենք և՛ կառավարությունում, և՛ Գերագույն խորհրդի որոշ հանձնաժողովներում, նաև միասին ենք քննարկել: Արդեն ասացի, որ մեր ներկայացուցիչները գտնվում են Մոսկվայում, մենք ունենք մեր դիտողությունները, որոնց մի մասին համամիտ են նաև մյուս հանրապետությունները: Դուք գիտեք, որ Յավլինսկու ծրագրին ամենից կտրուկ Ղրղզստանն է դեմ, որոշ հարցերում մեզ հետ համագործակցում է Ուկրաինան, բայց մոսկովյան բանավեճերում անգամ մենք հաճախ միայնակ ենք մնում՝ փորձելով, այնուամենայնիվ, այդ տնտեսական ծրագիրը փոխել այնպես, որպեսզի նպաստի մեր անկախությանը: Եթե չեմ սխալվում, Յավլինսկու ծրագիրը ձեզ բաժանված է, ես հիմա կխնդրեմ Հրանտ Բագրատյանին, որ նա մանրամասնորեն, կետ առ կետ ներկայացնի այն դիտողությունները, որոնք արվել են Գերագույն խորհրդի հանձնաժողովներում և կառավարությունում այդ ծրագիրը քննարկելիս:

Ավարտելով իմ ելույթը՝ ես նորից ուզում եմ հիշեցնել իմ խնդրանքը՝ իմ հրաժարականի հարցը մտցնել այս կամ առաջիկա նիստի օրակարգ:

Շնորհակալություն:

Վարչապետ Վ. Մանուկյանի ելույթը
ՀՀ ԳԽ նստաշրջանում,
1991թ., սեպտեմբերի 25
«Երկիր», 28 սեպտեմբեր 1991 թ.

ՊԵՏՔ Է ՕԳՏՎԻԼ ԳԻՏՆԱՆՔ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԵՆ ԵՎ ՈՉ ԹԵ ԾԱՌԱՅԵՆՔ ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՇԱՀԵՐՈՒՆ

Իր հետ ժամադրված էինք սեպտեմբերի 21-ի անկախության «այո»-ի հանրաքվեեն առաջ, երբ դեռ պաշտոնի վրա էր: Սակայն մեր տեսակցությունը տեղի ունեցած օրը՝ հոկտեմբերի 2-ին, հրաժարած էր թե՛ վարչապետի պաշտոնեն և թե՛ հանրապետության նախագահի պաշտոնին թեկնածութենեն: Հետևաբար մեր հարցազրույցը փոխանակ կառավարական տան իր գրասենյակին մեջ տեղի ունենալու, տեղի ունեցավ իր բնակարանին մեջ, նվազ պաշտոնական պայմաններու տակ, բայց ոչինչ կորսնցուց իր շահեկանութենեն, ընդհակառակն, մեզի համար դարձավ ավելի շահեկան, ավելի հետաքրքրական, որովհետև Վազգէն Մանուկյանը, Հայաստանի ներկա իրականության գլխավոր կերտիչներեն մեկը որպես, Հայոց համազգային շարժումի գաղափարախոս-տեսաբանը, որ «Գնացքից թռչելու ժամանակը» եկած կը նկատեր, ամենեն դժվարին պայմաններուն տակ կառավարության ղեկը ամուր բռնողը, հանրաքվեեն և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման գործընթացը վարող վարչապետը որպես, հարմարագույն անձնավորությունն էր մեզ հուզող հարցերուն պատասխանելու, զանոնք լուսաբանելու:

Պրն Մանուկյան այդ օրը հրաժարած ըլլալով վարչապետութենեն, մենք ալ հրաժարեցանք կանխապատրաստված մեր հարցումներեն: Եվ զրույցը եղավ սրտաբաց, անմիջական, ինքնաբուխ: Արծարծեցինք Հայաստանի թե արտերկրի յուրաքանչյուր հայը մտահուզող հարցերը՝ անկախությունը, անկախության ապագան, գալիքը, ինքնապաշտպանությունը, տնտեսական վիճակը իր բոլոր երեսներով ու հեռանկարներով, ներքին քաղաքական իրավիճակը, ժողովրդավարությունը, որուն կը ձգտինք, Արցախը և արցախյան հիմնահարցի կարգադրության հնարավորություններն ու ճանապարհները, Ժելեզնովոդսկի համաձայնագիրը, Սփյուռքահայության դերը անկախ պետականության կերտման գործընթացին մեջ: Բայց այս բոլորեն առաջ ուզեցինք իմանալ, թե ինչու՞ ինք այնքան անակնկալորեն ուզեց «կողք կանգնել» իր իսկ կողմե կերտված գործընթացին նվիրագործումը հանդիսանալու սահմանված նախագահական ընտրության նախօրյակին:

Հրաժարումեն ետք մերժած էր որևէ հրապարակային ելույթ ունենալ, որևէ մամուլի ասուլիս տալ, նախագահական ընտրապայքարի ընթացքին վրա ազդել փորձելու ամբաստանության չենթարկվելու համար: Այս պատճառով ալ մեզմե խնդրեց հարցազրույցը չհրատարակել հոկտեմբերի 16-են առաջ:

–21 սեպտեմբերի հանրաքվեով մեր ժողովուրդը միաձայնությամբ և ազգային տոնախմբության մթնոլորտի ներքև «այո» ըսավ անկախության, առանց սակայն տիրացած ըլլալու անկախ պետականության, ամբողջական և իրական անկախության համար կենսական ինքնապաշտպանության և տնտեսական միջոցներուն: Այս իրողության լույսին տակ ինչպե՞ս կը պատկերացնեք գալիքը:

-Ես առիթ ունեցա նստաշրջանի ժամանակ երկու խոսքով նկարագրելու, թե ինչպես եմ պատկերացնում գալիքը: Ես գտնում եմ, որ Հայաստանն իսկապես պետք է դառնա անկախ պետություն, ճանաչվի մյուս պետությունների կողմից, վարի անկախ քաղաքականություն, բայց տնտեսապես նա պարտավորված է ինչ-որ ժամանակ կապված լինել միութենական ընդհանուր կառույցների հետ, մյուս հանրապետությունների հետ: Բայց ես, նորից նշեմ, որ դա չի նպաստում մեր տնտեսության զարգացմանը մոտալուտ ժամանակներում: Այդ կապերն ավելի շատ մեզ պետք են փոխանակման միջոցով ապահովելու համար կենսական նշանակություն ունեցող սննդամթերքը, վառելանյութը և դանդաղեցնելու քանդումը այդ տնտեսության: Անխուսափելիորեն դա քանդվելու է: Բազմատասնյակ գործարաններ փակվելու են, և հնարավոր չէ այդ գործարանները նույնիսկ սեփականաշնորհել կամ հետագայում օգտագործել: Այս գործընթացները լինելու են: Մեզ պետք է, որ դա դանդաղ ընթանա, որպեսզի աշխատազրկություն չլինի, մարդիկ աշխատանքի տեղ ունենան, մենք նյութ ունենանք փոխանակելու մթերքի և այլնի հետ, միաժամանակ մեզ նոր տնտեսություն է պետք՝ սեփականաշնորհված, ձեռներեց մարդկանց կողմից ստեղծված, որոնց պետությունը պետք է օգնի: Նոր տնտեսությունը պետք է կապված լինի մյուս երկրների հետ: Ես այդտեղ եմ զարգացում տեսնում:

Ես կողմնակից չեմ մեր քաղաքական սերտ կապվածությանը Խորհրդային Միությանը: Սա վտանգավոր եմ համարում մեր ժողովրդի համար, որովհետև քայքայումը Խորհրդային Միությունում շարունակվելու է: Եվ շատ հավանական է, որ քաոս լինի, պետք է մի քիչ շուտ այդ քաոսից կողք կանգնել:

Իհարկե պետք է բանակ էլ ստեղծվի, այդ ամեն ինչն էլ, բայց դրա համար պարտադիր չէ, որ միութենական բոլոր քաղաքական կառույցների մեջ մնանք: Մեզ տնտեսական կառույցներն են պետք: Այստեղ է տարբերությունը իմ ասած կուրսի: Ես գիտեմ, որ իմ ասածը շատերի կողմից ընդունելի չէ: Ես ընդունում եմ, որ անկախության գաղափարը հայերի հոգու մեջ խորը նստած չէ: Ինձ համար երբեք ընդունելի չէ, որ հայերի առաքելությունն է դեմոկրատական շարժումը զարգացնել Խորհրդային Միությունում, որ Խորհրդային Միությունը չքանդվի: Դա չէ հայերի առաքելությունը. պիտի օգտվենք հանգամանքներից, ոչ թե ծառայենք ուրիշների շահերին:

–Ինքնապաշտպանության հարցի վրայեն շատ հարևանցի անցաք, մինչդեռ մենք պաշարված վիճակ ունինք, առճակատումի հավանականություններ կան…

-Հայաստանն իհարկե կունենա բանակ: Բայց եթե մեկնումեկը Հայրենիքում մտածում է, որ մենք կունենանք այնպիսի բանակ, որը պատերազմելու է Թուրքիայի հետ կամ Թուրքիայի հարձակմանը կդիմանա, նա չարաչար սխալվում է, այդպիսի բանակ մենք չենք ունենա: Մենք կունենաք բանակ, որը մտածել կտա հարձակվողին՝ այնուամենայնիվ իմաստ ունի՞ հարձակվել, թե ոչ: Մենք կունենաք բանակ, որն ավելի ուժեղ կարող է լինել, քան Վրաստանի բանակը կամ Ադրբեջանի բանակը: Այդ գործերը պետք է լուծենք քաղաքական ճանապարհով: Փոքր բանակը էլի զսպող ուժ է նաև խոշոր պետության համար:

-Երկիրը ներկա իրավիճակին առաջնորդող գործընթացը կերտող ղեկավարության գլխավոր մեկ դեմք եք և սակայն այդ գործընթացին նվիրագործումը հանդիսանալու սահմանված նախօրյակին երկիրը և ժողովուրդը դրիք ձեր հրաժարականի անակնկալին առջև թե՛ վարչապետութեեն և թե՛ նախագահության թեկնածութեեն: Ինչու՞:

-Մի քիչ բարդ հարցում է: Սակայն ես ասեմ, որ վարչապետությունից դուրս գալը լրիվ կամավոր չէր: Ամեն ինչ արվում էր, որ ինձ դրդեին այդ քայլին: Այսինքն՝ ինձ համար հնարավորություն չէին ստեղծում աշխատելու: Այս քաղաքական պայքարը հանգեցրել էր նրան, որ իսկապես վերջին մի երկու ամիսը ես իմ ուժերից էապես ավելի պակաս էի աշխատում, իսկ առջևում բավականին ծանր ձմեռ է լինելու: Ես դուրս եկա, որպեսզի եթե նույնիսկ ինձանից ավելի վատ աշխատող էլ նշանակվի, այնուամենայնիվ նրան աշխատելու հնարավորություն կտրվի, որովհետև զուտ քաղաքական շահերից ելնելով՝ թիրախ էին դարձրել կառավարությունը և թույլ չէին տալիս աշխատել: Դա բացահայտ զգացվում էր և Գերագույն խորհուրդի ղեկավարության կողմից, և Հայոց համազգային շարժման

ղեկավարության կողմից: Դա բացահայտ էր դարձել այլևս: Այդ պայմաններում աշխատելը անիմաստ էր:

Ինչ վերաբերում է ընդհանուր տնտեսական կուրսին, չնայած որ դա պաշտոնապես չգրվեց, իմ ելույթների մեջ ես հստակ ասել եմ իմ կուրսը՝ մեծ արագությամբ պետք է գնալ դեպի սեփական աշխարհ, մեծ արագությամբ հնարավորություն տալ գործարար մարդկանց՝ աշխատելու: Օրինակ, ներկայացված է և հիմա քննարկվելու է հարկային տեսչության ծրագիրը, որին ես դեմ եմ և փաստաթուղթը չստորագրեցի: Հիմա, որքան գիտեմ, քննարկվելու է և կստորագրվի: **Բավական խիստ օրենքների միջոցով ուզում են հարկեր հավաքել, բայց պետք է հասկանալ, որ այս պայմաններում դա որևէ դրական արդյունք չի տա: Գործարար մարդիկ Հայաստանը կթողնեն ու կգնան պարզապես: Հիմա պետք է համակերպվել այն մտքի հետ, որ հարկերի գծով ոչինչ չես կարողանա հավաքել. նախ պետք է սպասել, որ մարդիկ նախնական կապիտալ ձեռք բերեն, կարողանան գործին տիրապետել, գործը առաջ տանել:** Ջուտ ոստիկանական միջոցներով այդ բանը չի կարելի անել: Իմ կարծիքով, նոր կուրսը, որով ընթանում է Հայաստանը, այնքան էլ նպաստավոր չի լինի գործարար մարդկանց համար: Ես գոնե այդպես եմ մտածում: Դա ինձ համար մտահոգիչ է: Էլի մտահոգող բաներ կան, բայց ես չեմ ուզում խոսել դրանց մասին: Գիտեք բանն ինչ է: Ես կանխատեսումներ եմ արել, բայց այդ կանխագուշակումները եթե ես հիմա դրանք մեկնաբանեմ, կարող է չարամտություն համարվել: Լավ է, որ ժողովուրդն ինքն իրեն համոզվի: Տեսականորեն ես գիտեմ՝ ինչից ինչ է բխում: Ժողովուրդն ինքը կապրի, կտեսնի:

–Խորհրդարանին մեջ ունեցած ձեր ելույթին մեջ կերպով մը հասկցուցիք, որ մինչև նախագահական ընտրություն պատահելիքին մեղսակից չեք ուզեր ըլլալ:

-Բացի մնացած ամեն ինչից, գիտե՞ք՝ ինչու ես ուզեցի դուրս գալ, որովհետև քաղաքական պայքարը թեժանում էր և արդեն մտնում էր ոչ քաղաքակիրթ ձևերի մեջ: Եվ եթե ես իմ թեկնածությունը չհանեի, ապա ավելի քաոսային վիճակ կստեղծվեր Հայաստանում: Ես ուզեցի կողք կանգնել, որպեսզի մի քիչ հանդարտվեն այդ կրքերը:

–Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց ժողովրդավարական, խորհրդարանական, նախագահական դրությունը իբրև պետական կառույց: Կը խորհի՞ք, որ այս դրությամբ պարտադրված դեմոկրատական խաղին կանոնները իրապես հարգելու վրայ են: Ձեր ելույթը մտածել կու տա, որ ոչ:

–Իհարկե, լրիվ չեն հարգում, և դա իր պատճառներն ունի: Երկար ժամանակ պետք է անցնի, որպեսզի մարդիկ սովորեն և հասկանան, թե ինչ է նշանակում ժողովրդավարություն: Ժողովրդավարությունը միայն խոսքեր չեն: Դա գործելակերպ է, որ պետք է անցնի մարդկանց արյան մեջ, սովորություն դառնա, պետք է ստեղծվեն համապատասխան մեխանիզմներ ապահովելու համար ժողովրդավարությունը: Այդ ամենը դեռ հեռու է մեզանից, և դրա պատճառով երբեմն շատ անցանկալի երևույթներ են տեղի ունենում ու տեղի կունենան: Տա Աստված, որ չխորանան դրանք, այսինքն՝ կամաց-կամաց կարողանանք գնալ դեպի լիակատար ժողովրդավարության:

–Մեր հասկացողությամբ, դեմոկրատական պետության մեջ, երբ վարչապետը հրաժարի, կառավարությունը ինքնաբերաբար փուլ կու գա: Մինչդեռ, հոս նկատեցինք, որ դուք հրաժարեցաք, սակայն կառավարությունը կը շարունակե գործել ամբողջական իրավասությամբ և ձեր տեղակալներեն մեկուն նախագահությամբ: Դեմոկրատական դրությունը կը թույլատրե՞ նման բան: Պետք չէ՞ նշանակվի նոր վարչապետ և կազմվի նոր կառավարություն:

-Երբ որ ես հրաժարվեցի, փաստորեն հարցն այդպես դրվեց: Դա փաստորեն ամբողջ կառավարության հրաժարականն էր, և Գերագույն խորհուրդը խնդրեց իմ նախարարներից, որ նրանք շարունակեն աշխատել, մինչև որ ընտրվեն կամ նշանակվեն նոր նախարարներ, և նրանք համաձայնվեցին: Չնայած մի մասը մտածում է դուրս գալու մասին, շարունակում է աշխատել, որպեսզի հանրապետությունը վնաս չկրի:

-Չերկարելու համար կ՛երևի մնանք ընդհանրություններու մեջ: Ուրեմն թույլ տվեք խոսիլ քիչ մըն այլ Արցախի հիմնահարցի մասին: Վերջին հանգրվան որպես բոլոր երևույթները ցույց կու տան, որ Ժելեզնովոդսկի փաստաթուղթը[11], որ քաղաքական լուծման մը որոնման ճանապարհի շրջագիծեն ներս կը մտնե, իրականության մեջ բան չփոխեց իրավիճակեն: Իսկ անդին տեսակետ մը կա, որ այդ հարցին լուծումը կրնա գալ միայն զինյալ ազատագրական պայքարով, ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին:

–Միայն զինյալ պայքարով, իհարկե, Ղարաբաղի հարցը չի լուծվի, միայն բանակցություններով՝ նույնպես: Դրանք միասնական պետք է գնան, և դա անխուսափելի է: Ես այսպես եմ մտածում: Միտում կար պայմանավորվելու, որպեսզի Ղարաբաղում լինի խաղաղ վիճակ, բայց ես դա էլ եմ վտանգավոր համարում: Մի կամ երկու տարի այդ խաղաղ վիճակը կլիներ, բայց կամաց-կամաց հայերին այդտեղից կքշեին: Այս իրադրությունում, եթե պատերազմական վիճակ չլինի, միևնույնն է, հայերին այդտեղից կքշեն: Այսինքն՝ Ղարաբաղում բանակցությունների միջոցով խաղաղություն ապահովելը նորից կտանի հայաթափման: Ղարաբաղը պիտի լինի զինված ամրոց, և իմ կարծիքով, ամենայն հավանականությամբ չի հաջողվի Ղարաբաղը միացնել Հայաստանին: Մոտ ժամանակներում չեմ տեսնում նման հավանականություն: Նույնիսկ եթե Ադրբեջանի կազմում մնա, բայց լինի զինված ամրոց, որպեսզի ոչ մեկը չկարողանա ներխուժել Ղարաբաղ, և ինքն իր ինքնուրույն կյանքով ապրի, ձևականորեն ադրբեջանական լինելով, ոչ մի Ելցին, ոչ մի Նազարբաև երաշխիք չի կարող լինել, որ զինաթափված Ղարաբաղը կարող է չհայաթափվել: Այսպիսի բան չկա:

Ինչ վերաբերում է բանակցություններին, բարդ ու ծանր բանակցություններ էին: Ես չեմ ուզում մանրամասնությունների մեջ մտնել: Մեզ շատ տհաճություններ պատճառեցին այդ բանակցությունները: Ես սկզբունքայնորեն այնքան էլ կողմնակից չէի բանակցություններ սկսելուն: Ուշ կամ շուտ բանակցությունները պետք է լինեին, բայց ոչ այս պահին, ավելի ուշ, ինձ թվում է, նպատակահարմար կլիներ: Մանուչարյան Աշոտին, մեր տղաներին պետք է խորհուրդ տալ, որ Լեոյի վերջին հատորները մի անգամ ևս կարդան, որովհետև այդ նույն բաները, ինչ որ հիմա արվում են, պարզապես բառացիորեն կրկնվում են: Պատմությունն անտեսելը սխալների պատճառ է դառնում:

Համենայն դեպս բանակցությունները բարդ էին ու ծանր: Ես միշտ մտածում եմ, որ բանակցությունների մեջ երրորդ կողմ չպիտի լինի: Ինձ համար շատ ավելի հեշտ է ադրբեջանցիների հետ նստել, բանակցել դեմ առ դեմ, քան մի երրորդ կողմի ներկայությամբ, որովհետև երրորդ կողմն ունի իր շահագրգռությունը: Երրորդ կողմի շահագրգռությունը պարտադիր չէ, որ համընկնի մեր շահերին և նույնիսկ Ադրբեջանի շահերին: Նա իր շահն ունի, որը կարող է վնասակար լինել մեզ համար:

-Այլ խոսքով «կոմիսիոն» պիտի վերցնեն, այնպես ինչպես ընդհանուր երևույթ դարձած է այս օրերուն Հայաստանի մեջ:

-Իհարկե, և այդ «կոմիսիոնը» կարող է շատ թանկ լինել: Մի օր Ելցինն ու Նազարբաևը պետք կլինեին: Ուղղակի ժամանակը չէր:

-Նախընտրական նպատակները չկայի՞ն արդյոք:

-Շատ հավանական է: Ես իմ ելույթի ժամանակ ասացի, որ այս նախընտրական արշավը ազդում է տնտեսական քաղաքականության վրա, մենք չենք կարող իրականացնել մեր տնտեսական քաղաքականությունը, և այդ իսկ պատճառով անընդհատ հարվածներ են գալիս: Ցանկանալով ինձ հարվածել՝ քանդում են տնտեսական այն կառույցները, որոնք ես մի կերպ կարողացել եմ հիմնել: Ես ասացի՝ ավելի լավ է դուրս գամ, որ այդ կառույցները չքանդվեն: Մյուս կողմից՝ ազդում է քաղաքական որոշումների վրա, որ շատ վտանգավոր բան է:

Միացյալ Նահանգներում էլ, երբ նախագահական ընտրություններ պիտի լինեն, վերջին տարում տարվում է այն քաղաքականությունը, որը նպաստավոր պիտի լինի ընտրական շահերին: Սակայն Միացյալ Նահանգներն այնքան հզոր, այնքան կայունացած պետություն է և այնքան ավելի քիչ կախում ունի ժողովուրդը կառավարությունից, որ այնտեղ դա վտանգավոր չէ: Բայց մեր պայմաններում դա սարսափելի է. ամեն մի սխալ կարող է ճակատագրական լինել: Այսինքն՝ իմ կողք կանգնելը նրա համար էր, որպեսզի հնարավորին չափ առճակատումները պակասեն և հնարավորին չափ խուսափեն տնտեսական կառույցները քանդելուց կամ սխալ քաղաքական որոշումներ ընդունելուց:

-Այսպես մտածողներ ալ եղան. ձեր հրաժարումը քաղաքական մարտավարություն մըն է ձեր և Լևոն Տեր-Պետրոսյանին կողմե: Այլ խոսքով, դուք իր վստահելի վարչապետն եք, ձեր հրաժարականով դուք պիտի դյուրացնեք իր ընտրությունը, և սակայն այնուհետև ապահով եք, որ պիտի վերստանձնեք կառավարության ղեկը, վարչապետ պիտի նշանակվիք դարձյալ իր ընտրութենեն ետք:

-Այդ տպավորությունը կարող են ունենալ նրանք, որոնք լավ չեն իմանում «Ղարաբաղ» կոմիտեի և Հայոց համազգային շարժման պատմությունը:

Ես եղել եմ «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարը: Իմն են եղել գաղափարները: Մանավանդ մինչև մեր ձերբակալվելը անվերապահորեն արվում էր այն, ինչ որ ես էի ասում: Երբ որ

ազատվեցինք, բարդություններ առաջացան, որովհետև մարդիկ որ բանտից դուրս եկան, բոլորը ազգային հերոս դարձան, ենթարկվելը դժվարացել էր: Նույնիսկ պահ եղավ, ես էլ անջատվեցի, ղեկավարությունից հրաժարվեցի: Հայոց համազգային շարժումը երբ ստեղծվեց, նախագահ ընտրվեցի: Դա էլ քչերը գիտեն: Որոշ ժամանակից հետո ես առաջարկեցի, որ Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահ ընտրվի: **Այսինքն՝ այդ ամբողջ կուրսը տանողը ես էի, ոչ թե Լևոնի համար հավատարիմ վարչապետ էի, այլ ինձ համար նրանք գործընկերներ էին, որոնք իրականացնում էին այն ծրագրերը, որոնց մասին ես մտածել էի տասնյակ տարիների ընթացքում: Ես հստակ ուզում էի, որ կողք կանգնեմ, որովհետև զգում էի, որ նրանց վարած քաղաքականությունն իմ սրտով չի լինելու: Ես ուզում եմ, որ իմ անունը առանձնանա:**

–Ինչպե՞ս կպատկերացնեք սփյուռքահայության դերը ներկա հանգրվանին մեջ, և ի՞նչ են ձեր ակնկալությունները սփյուռքեն անկախ պետականության կերտման գործընթացին մեջ:

-Եթե ավելի հեռու փորձենք նայել, ես դա մի քանի անգամ ասել եմ և պիտի կրկնեմ, պիտի տեսնենք, որ այնուամենայնիվ, հայության մեծ մասը՝ 50 տոկոսից ավելին, ապրում է Հայաստանից դուրս: Եվ եթե մենք կառուցենք մեր ազգային պետությունը և հիմնվենք միայն այդ ազգային պետության հզորության վրա, մենք փաստորեն օգտագործած չենք լինի մեր ազգի հզորության մի զգալի մասը: Ուրեմն մենք, պետություն ստեղծելով հանդերձ, պիտի կարողանանք այնպես անել, որ մեր ազգային իղձերի իրականացմանը մասնակից լինի աշխարհի ողջ հայությունը: Որպեսզի ողջ հայությունը մասնակից լինի, նա պիտի տարբեր կառույցներում ընդգրկվի (դրանք կարող են լինել և՛ կառավարական, և՛ ոչ կառավարական): Երկու օրինակ կարելի է բերել: Գերմանիան Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Հսկայական ուժեղ պետություն ունեին և գաղութներ լատինամերիկյան երկրներում: Նրանք լավ օգտագործում էին գաղութներն ի նպաստ Ռեյխին: Համեմատած Գերմանիայի հզորության հետ՝ դա չնչին հզորություն էր, սակայն օգտակար՝ իրենց համար: Դա Սփյուռքը օգտագործելու գերմանական տարբերակն է: Հրեական տարբերակը. Իսրայելից դուրս ապրող հրեաների հզորությունն ավելի մեծ է, քան Իսրայելում ապրող հրեաներինը: Եվ այնտեղ ստեղծված կառույցները, որոշ տեղերում, նույնիսկ կառավարությունից ավելի հզոր են: Հայերի պարագայում էլ, ինչ-որ չափով նման կառույցներ պետք է ստեղծել: Կար ժամանակ, երբ շատ մեծ նշանակություն ուներ տարածությունը պետության համար. հիմա, ինձ թվում է, չնայած որ տարածությունն ինձ համար էլ, որպես հայի, որպես տաճկահայի, մեծ նշանակություն ունի, փոխվել են ժամանակները: Հիմա կարելի է փոքր տարածություն ունենալ՝ որպես հիմք, բայց ամբողջ աշխարհում կառույցներ հիմնել, ինչպես Իսրայելը::

Այսինքն՝ ոչ թե սփյուռքահայությունը պետք է դայակ լինի և նվիրատու Հայաստանին, ոչ, այլ պետք է լինի ընդհանուր և ինքնատիպ մի կառույց: Եթե Ավստրալիայի հայերին մի բան սպառնա, ամբողջ հայությունը պետք է կարողանա դրա վրա ազդել: Հայերը տարբեր ծայրամասերում կարող են տարբեր քաղաքականություն վարել, նույնիսկ երբեմն՝ իրար հակասող, բայց ներքին պայմանավորվածությամբ, որ նույն գիծն ենք պահում: Որովհետև այն, ինչ ճիշտ է Ավստրալիայում, կարող է սխալ լինել Միացյալ Նահանգներում կամ Պարսկաստանում: Այդպիսի ընդհանուր կառույցները պետք է լինեն, որովհետև դա հնարավորություն կտա մեր ազգի ամբողջ հզորությունը օգտագործել: Բայց որպեսզի դրան հասնենք, սկզբնական շրջանում իսկապես սփյուռքահայությունը ինչ-որ չափով պիտի օգնի Հայաստանին՝ կապիտալ ներդրումներով, կապեր ստեղծելով աշխարհի պետությունների ու կառավարությունների հետ: Բայց նկատի ունենալով, որ ապագայում ոչ թե այդ աշխատանքն է շարունակվելու, այլ հակադարձ, Հայաստանից էլ պետք է այդտեղ աշխատանք արվի, և միասնական կառույցներ ստեղծվեն: Օրինակ՝ սփյուռքահայերը, ենթադրենք, երկու միլիոն դոլար հավաքեցին և տվեցին Հայաստանին գործարար կառուցելու համար. ես դա համարում եմ դատարկ բան: Հայաստանին ոչ մի օգուտ չի տա այդ երկու միլիոնը: Բայց եթե, ասենք, ֆրանսահայերը կարողանան, իրենց կառավարության վրա ազդել և անել այնպես, որ Ֆրանսիայի կառավարությունը մեկ-երկու միլիոն դոլար ծախսի հայ մասնագետներ պատրաստելու համար, դա ավելի շահեկան կլինի: Բոլոր պետություններն էլ գումարներ ունեն, սփյուռքահայերը պիտի այնպես անեն, որ այդ գումարներից հատկացվեն Հայաստանին: Եթե հայն է մեկ միլիոն տալիս, հայությունը դրանից բան չի շահում, ներսում մի

միլիոն մի տեղից գնում է մյուս տեղը. դրա բերած օգուտը ո՞րն է: Պետք է դրսից կարողանաս գումար բերել: Իսկ դրա հնարավորությունները կան:

-Ըսել կուզեք՝ հայկական գաղթօջախները պետք է կամուրջ ծառայեն և ընեն այնպես, որ միջազգային տնտեսական միջոցները ու հզոր դրամագլուխները ուղղեն դեպի Հայաստան, փոխանակ իրենց սեփական գրպանը պարպելու: Կրնա՞ք ներկա գործընթացով, և եթե այո, երբ և ինչպես հասնիլ հայության երկու թևերու իրական միաձուլման:

–Հայտնեմ, որ հիմա քաղաքացիության հարցը լրջորեն քննարկվում է: Օրինակ, կա մի տարբերակ, որ սփյուռքահայերը դառնան Հայաստանի հավասարազոր քաղաքացի: Ես գտնում եմ, որ դա այնքան էլ ճիշտ չէ: Այսինքն՝ նրանք մեր քաղաքացու բոլոր պարտականություններն ու իրավունքները չպիտի ունենան (բանակում ծառայելու և այլն): Ես գտնում եմ, որ դա կվտանգի սփյուռքահայությանն այն երկրներում, որտեղ նրանք ապրում են: Բայց կարող է լինել քաղաքացիության երկրորդ տարբերակը՝ ավելի սահմանափակ իրավունքներով: Այդպիսի մի բան պետք է ստեղծենք: Քաղաքացիության օրենքը, այնուամենայնիվ, կծառայի՝ աշխուժացնելու հայերի շրջանառությունը: Թեև պետք է ասել, որ այդ հարցը ունի իր բարդությունները, ինչպես, ասենք, Իսրայելում, ուր Եվրոպայից և Ասիայից եկած հրեաները իրար հետ չեն կարողանում ապրել, իրար հանդեպ անհանդուրժողական են:

Ես կարծում եմ, որ հայերը աշխարհի ամենամիասնական ազգերից են՝ իրար հանդեպ անհանդուրժողականությամբ հանդերձ: Մենք ներսից տեսնում ենք միայն այդ փոքր խոչընդոտները, բայց դրսից նայողը տեսնում է, թե մենք ինչքան միասնական ենք: Զարմանալիորեն միասնական: Հետևաբար այն խնդիրները, որոնք մյուս ազգերի համար դժվար լուծելի են, մեզ համար այնքան էլ դժվար չեն, միայն թե չպետք է տարվենք եվրոպական երևույթներով: Ես դեմոկրատիայի կողմնակից եմ: Իհարկե, մեզ պետք է խոր ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվել բայց այն ժողովրդավարությունը, որը ջնջում է ազգային առանձնահատկությունները, մեզ համար վտանգավոր է: Մեզ պետք է ճապոնական ժողովրդավարությունը: Ճապոնացիները պահպանում են իրենց դիմագիծը, մշակույթը, չեն ուզում դառնալ անորոշ եվրոպացի, ուզում են, ճապոնացի մնալով հանդերձ, օգտվել այդ գյուտից՝ ժողովրդավարությունից և լավ են օգտվում: Հայերս էլ պետք է այդ ճանապարհն ընտրենք: Դրա համար մեր ազգային մտածողությունը, ներքին հավատը, պատմության վրա հիմնված հզորության զգացումը չպետք է կորցնենք: Այնուամենայնիվ մենք հզոր ներուժ ունեցող ազգ ենք, բայց հիմա հիվանդություններ ունենք, որոնք ինչ-որ կերպ պիտի բուժվեն: Այն իշխանությունը, որը գալիս է իշխանության՝ օգտվելով ժողովրդի հիվանդություններից, չի նպաստում մեր ազգին: Պետք է հիվանդությունները բուժելով գաս իշխանության: Իշխանության գլուխ գալու ամենից հեշտ ձևը հիվանդությունների վրա հիմնվելն է:

-Այլ խոսքով, ազգային ժողովրդավարություն կը ցանկաք մեր ժողովուրդին:

-Ճիշտ այդպես, ազգային ժողովրդավարություն: Եվ պետք է ասել, որ շատ երկրներում ազգային է ժողովրդավարությունը, Ֆրանսիայում էլ, Գերմանիայում էլ: Նույնիսկ տնտեսությունն առանց դրա հնարավոր չէ զարգացնել:

Ինձ համար ուսանողական տարիներից առաջնորդող մի թեզ էր Ադամ Սմիթի այն տեսակետը, որ մեր նպատակը ոչ թե մարդկանց փոխելն է և դարձնելը միայն պարկեշտ ու մյուսների մասին մտածող, այլ մեր նպատակն է ստեղծել այնպիսի համակարգ, որտեղ յուրաքանչյուր սրիկա, իր շահերը հետապնդելով հանդերձ, ծառայի միաժամանակ հասարակությանը: Ուզում ես հարստանալ, գործարան ես կառուցում, որով մյուսներին էլ օգուտ ես բերում: Այսինքն՝ տնտեսական կառույցում թվում էր, որ դա իդեալականն է: Կապիտալիզմի հիմքում Ադամ Սմիթը[12] այդ մտածումն ունեցել է: Բայց հետագայում պարզվեց, որ եթե տնտեսական քաղաքականության հիմքում փիլիսոփայական, գաղափարախոսական տարր չմտնի, այդ համակարգը լավ չի գործի: Ֆրանսիացիները ժամանակ առ ժամանակ իրենց մոտ հոդվածներ են հրապարակում, որտեղ համեմատվում են գերմանացիների հետ, ուզում են նրանցից առաջ անցնել, ավելի հզոր լինել:

Ամեն մարդ պիտի զգա, որ ինքն իր ազգին է ծառայում կամ ծառայում է ընդհանուր մարդկությանը, կամ իր ընկերներին է ծառայում: Միայն անձնական շահի վրա հիմնված տնտեսական համակարգը լավ չի գործում: Ուստի ես ասում եմ, որ այդ ազգայինը անպայման պետք է մասնակից լինի Հայության կյանքին, և առանց դրան տնտեսություն էլ չի զարգանա:

Հարցազրույցը՝ Սարգիս Նաճարյանի,

«Արարատ» (Բեյրութ)
1991, հոկտեմբեր

ԻՄ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆ ԱՍԵՆԱԾԱՆԸՆ ԷՐ

-Արդեն 4 ամիս է անցել ձեր հրաժարականից: Այդ ընթացքում ավելի ծանրացավ հանրապետության տնտեսական վիճակը: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ Դուք, կանխազգալով ձմռան դժվարությունները, հրաժարվեցիք պատասխանատվությունից: Այս դեպքում ի՞նչը հաղթեց, ձեր սկզբունքնե՞րը, թե՞ իրականության դառը հեռանկարը:

-Իմ հրաժարականում բացակայում էր պատասխանատվությունից խուսափելու հարցը: Ես այժմ էլ կարող եմ կանխատեսել, որ այս տարի ավելի է վատանալու: Տնտեսության քայքայումը շարունակվելու է, և ո՛չ պայմանագրերով, ո՛չ այլ ձևերով այդ ընթացքը կանգնեցնել հնարավոր չէ: Դա բնական գործընթաց է, որը տեղի է ունենում ոչ միայն նախկին ԽՍՀՄ-ի, այլև Հայաստանի տնտեսության մեջ: Իսկ նոր տնտեսությունը շատ դանդաղ է ստեղծվում: Այդ պատճառով անընդհատ կենսամակարդակի անկում է լինելու: Մյուս կողմից՝ էներգետիկայի ճգնաժամը անցյալ ձմեռվա համեմատ այս տարի ավելի ծանր է: Պատճառները շատ են: Նախ մոտ 20 տոկոսով ԽՍՀՄ-ում պակասել է նավթի արդյունաբերությունը: Երկրորդ՝ անցյալ տարի ամռանը մենք մի համարձակ որոշում ընդունեցինք. հրաժարվեցինք գազի մի մասից՝ այն տալով Վրաստանին և հնարավորություն ստացանք այնտեղ գազամուղ կառուցել՝ այդպիսով լուծելով ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող խնդիր: Ինչքան էլ շարունակվեն այդ օբեկտիվ դժվարությունները, այնուամենայնիվ իմ վարչապետության տարին ամենածանրն էր: Որովհետև քաղաքական տեսակետից մենք մեծ առճակատումների մեջ էինք կենտրոնի հետ, իսկ բաշխման ֆունկցիան հիմնականում նրա ձեռքում էր: Եվ եթե ժողովուրդը տեսնում էր, թե ինչ ռազմական ճնշում էր գործադրվում մեզ վրա, ապա անհայտ էր մնում տնտեսականը: Այդ պայմաններում Հայաստանի մատակարարման ապահովումն ավելի բարդ էր, քան հիմա: Թեև այժմ նախկին ԽՍՀՄ-ի տնտեսական վիճակն ավելի է ծանրացել, շրջափակումները դեռ շարունակվում են, բայց արդեն դրական հարաբերություններ կան Ռուսաստանի և մյուս հանրապետությունների հետ:

-Դուք հույս ունե՞ք, որ ինչ-որ մեկը ձեր փոխարեն կարող է հանրապետությունն այդ վիճակից դուրս բերել:

-Անկեղծ ասած, հանրապետությունում չեմ տեսնում մի մարդ, որն այդ գործը ավելի լավ աներ: Բայց նաև գիտեի, որ ով էլ զբաղեցնի այդ պաշտոնը, հանդիպելու է նույն դժվարություններին: Երբ դարձա վարչապետ, գիտեի, որ անընդհատ ընդունվելու են հարկադրված որոշումներ, որոնք տվյալ պահին ոչ միշտ են դրականորեն ազդելու ժողովրդի կենսամակարդակի վրա: Եվ բնական է, որ սոցիալ-քաղաքական կամ տնտեսական դժգոհություններն ուղղվելու էին իմ դեմ: Իսկ վարչապետ կարելի է աշխատել այն դեպքում, երբ ունես ամուր թիկունք, կա քաղաքական ուժ, որը սատար է կանգնում քեզ: Երբ թիկունքդ բացվեց, պետք է դուրս գաս վարչապետությունից: Թերևս դա էր իմ հրաժարականի պատճառներից մեկը: Ես մտածում էի, որ գուցե գա մի մարդ, որն ավելի ամուր թիկունք կունենա և իրեն ավելի հեշտ կլինի աշխատել:

-Հրաժարականի առիթով արտասանած ձեր ելույթում նշեցիք, որ առճակատումն ուժեղացավ մայիս ամսից հետո, և տարվող քաղաքական կուրսը «ոչ միշտ էր համընկնում ձեր ներքին քաղաքական համոզմունքներին»: Ո՞վ էր թելադրում այդ քաղաքականությունը:

-Ես բազմիցս նշել եմ, որ այն ուղին, որով գնում ենք, համընկնում է Հայոց համազգային շարժման գաղափարներին և «Գնացքից թռչելու ժամանակն է» հոդվածին: Խոսքը վերաբերում է միայն տակտիկական և ներքին քաղաքականության որոշ հարցերին: Դրանց որոշմանը ես էլ եմ մասնակից եղել: Եվ այն, ինչ համարենք սխալ, դրա պատասխանատվության մի մասն էլ ինձ վրա է ընկնում: Ես չեմ խուսափում պատասխանատվությունից: Իսկ առճակատումների շարունակումը կարող էր արագացնել տնտեսության քայքայումը: Դրա համար էլ դուրս եկա, որպեսզի այդ առճակատումները չազդեն մեր տնտեսության և քաղաքականության վրա: Որովհետև այդ ժամանակ համակարգը լավ չի աշխատում, և բոլորը սպասում են արդյունքի: Իսկ դա հանգեցնում է նրան, որ տնտեսական համակարգն էլ նորմալ չի աշխատում:

-Քաղաքականություն թելադրողի անվան տակ ես նկատի ունեի նաև կենտրոնին, որն իր լրատվության գաղտնի աղբյուրների միջոցով կարող էր որոշակի ազդեցություն ունենալ մեր հանրապետության ղեկավարության վրա:

-Ես գաղտնի և ոչ գաղտնի պաշտոնական լրատվություն էի ստանում միութենական արտաքին գործերի նախարարությունից, նախարարների խորհրդի կաբինետից: Ներքին տեղեկատվություն էի ստանում ՊԱԿ-ից: Դրանց մեջ երբեմն զգացվում էր ուղղվածությունը, և երևում էր, թե դրանով ինչ ուղղությամբ են ուզում քեզ տանել: Ես հեշտությամբ իրարից զանազանում էի նպատակաուղղված և բնական տեղեկատվությունը:

-Իսկ բանտում անցկացրած օրերը ինչ-որ կերպ անդրադարձա՞ն ձեր հայացքների վրա: Ովքե՞ր ձեզ հետ զրուցեցին և ի՞նչ առաջարկեցին:

-Այնտեղ համենայն դեպս ես, բացի քննիչներից, որոնք հետաքննում էին իմ գործը, այլ անձանց հետ որևիցե խոսակցություն չեմ ունեցել: Այդ 6 ամսում իմ հայացքների մեջ վճռական որևէ փոփոխություն չի եղել: Ուղղակի հնարավորություն եղավ ավելի հանգիստ մտածելու և կարդալու այն գրքերը, որոնք ես պատվիրել էի: Մինչ այդ իրավունք կար միայն բանտի գրադարանից օգտվել: Բայց Գորբաչովի սկսած բարեփոխումները ազդել էին նաև բանտերի վրա, և ես կարողացա նորից կարդալ Ջոն Կիրակոսյանի, Լեոյի գրքերը և զուգահեռներ անցկացնել մեր շարժման ու XX դարի սկզբի շարժման միջև: Ես երբեմն զգում էի, որ այն սխալները, որոնք արվել են XX դարի սկզբին, մենք կարծես թե անում ենք կամ ուզում ենք անել: Այդ ընթացքում կարողացա վերանայել շարժման ժամանակ ձևավորված իմ որոշ հայացքները, անգամ գրառումներ կատարել:

-Իսկ դրսում կատարվող իրադարձությունների մասին ոչինչ չգիտեի՞ք:

-Բանտից դուրս գալու հաջորդ օրը ես իմ ընկերներին հրավիրեցի մեր տուն և միանգամից սկսեցինք որոշումներ ընդունել: Այդ օրերին մտերիմներից շատերը մեղադրում էին ինձ՝ ասելով, թե չարժե միանգամից մտնել շարժման մեջ, որովհետև չգիտենք, թե ինչ է տեղի ունեցել 6 ամսվա ընթացքում: Միգուցե իրոք կարելի էր այլ կերպ վարվել, թեև չեմ կարծում, որ արդյունքում շեշտակի տարբերություն լիներ:

-Դուք համարվում էիք ՀՀՇ-ի գաղափարախոսներից մեկը և դեռ 1991-ի փետրվարին համոզված հաստատում էիք, թե «ինչ էլ լինի, ՀՀՇի հիման վրա կստեղծվի ուժեղ ազգային կուսակցություն, որը կզբաղվի մեր ժողովրդի ճակատագրով»: Չստեղծվեց: Նույն ճակատագրին արժանացավ նաև Ազգային ժողովրդավարական միությունը: Ո՞րն է պատճառը, անձի՞նք, թե գաղափարախոսությունը:

- Ավելի շուտ անձինք և օբյեկտիվ պատճառները: Բայց ես հույսս չեմ կորցրել: Կարևոր չէ, ես ՀՀՇ-ի դուրսն եմ, թե ներսը: Կարևորն այն է, թե այդպիսի ազգային ուժ կլինի՞ Հայաստանում: ՀՀՇ-ն այդպիսի ուժ դառնալու շատ նախադրյալներ ուներ: Բայց կան հանգամանքներ, որոնք խանգարում են դրան: Կյանքը միայն ցույց կտա՝ հնարավո՞ր է դա, թե ոչ: Համենայն դեպս մենք՝ շարժման ակտիվ մասնակիցների մի մասը, ովքեր դուրս եկան ՀՀՇ-ից, Դավիթ Վարդանյանը, Արշակ Սադոյանը, Շավարշ Քոչարյանը և այլք, փորձում ենք ստեղծել Ազգային ժողովրդավարական միություն, որը կարողանա կատարել այն, ինչ չի կատարում ՀՀՇ-ն: ԱԺՄ-ն հիմա էլ սկզբնավորման, ձևավորման շրջանում է և լուրջ խոսել այդ կազմակերպության մասին դեռ վաղ է: Ժամանակը ցույց կտա՝ կկայանա՞ արդյոք այդ կազմակերպությունը, ի՞նչ փոխհարաբերություններ կունենա ՀՀՇ-ի հետ: Մենք նպատակ չունենք ստեղծել զանգվածային շարժում: Երբեմն ինձ թվում է, թե Հայաստանը բազմազգ պետություն է դարձել: Կա ՀՀՇ-ական ազգ, դաշնակցական, ռամկավարական, ԱԻՄ-ական: Եվ մի նոր «ազգ» ավելացնել այդ բազմազգ պետությունում երևի իմաստ չունի: Իմ կարծիքով Հայաստանում կգործի երկու-երեք կուսակցական համակարգ և կստեղծվեն կուսակցական դաշինքներ: Եվ մենք, վերագնահատելով ամբողջ քաղաքական իրողությունը ու տեսնելով, որ այդ հարցերով ուրիշ կուսակցություններ են զբաղվում, նոր կուսակցություն չենք ստեղծի:

-Ձեր կառավարության օրոք բազմիցս քննադատվում էր ձեր կադրային քաղաքականությունը: Հետագայում դուք էլ համոզվեցիք, որ նշանակումներից մի քանիսը չարդարացրին իրենց: Իսկ Գևորգ Վարդանյանը կամ մի քանի այլ դեմքեր, որոնք ձեր օրոք քննադատվում էին, ներգրավվեցին նաև ներկա կառավարության կազմում: Կարելի՞ է ենթադրել, որ ձեր բոլոր նշանակումներին մասնակից է եղել նաև հանրապետության նախագահը:

-Նշանակումներ կատարելիս վճռական դերը ես էի խաղում, բայց միշտ խորհրդակցում էի Ղարաբաղ կոմիտեի որոշ անդամների կամ արդեն համակարգում աշխատող մարդկանց հետ:

-«Ազգ»-ը բազմիցս անդրադարձել է ձեր գործունեությանը և՛ սեփական հոդվածներով, և՛ արտատպումներով՝ նկատի ունենալով բազմակարծության հայտնի ավանդույթները: Սակայն, որքան ինձ հայտնի է, դուք այնքան էլ սառնասրտորեն չեք դրանք ընդունել:

-Ես միշտ հեշտությամբ եմ ընդունում քննադատությունը և աշխատում եմ դրանից օգուտներ քաղել, հասկանալ, թե որն է ճիշտը: Բայց այդ ծանր տարում, երբ ամբողջ պատասխանատվությունը վերցրել էի ինձ վրա, և ոչ միայն տնտեսական բնագավառը, այլև սահմանամերձ պատերազմի ղեկավարումը, շրջափակումը, այդ լարված աշխատանքի ժամանակ տարբեր պատճառներով հարվածներ էի ստանում: Մի մասը չէր հասկանում, մի մասն արդարացիորեն քննադատում էր, մի մասն էլ ուղղակի ցանկանում էր քաղաքական հաշվեհարդար տեսնել: Նման պայմաններում աշխատելը մարդուն բավական զգայուն է դարձնում, և ես համաձայն եմ ձեզ հետ, որ երբեմն ավելի սուր արձագանք էի տալիս քննադատությանը, քան գուցե պետք էր: Այսինքն՝ դա պայմանավորված էր լարված աշխատանքով, որի ժամանակ չես զգում, թե քեզ գնահատում են կամ սատար են կանգնում: Բացի դրանից, մեր շարժումն իշխանության եկավ առանց փորձ ունենալու, առանց կադրային քաղաքականության, առանց նախապատրաստված ծրագրի, և այդ առումով անցած տարին և՛ շարժման, և՛ ինձ համար դարձավ փորձառական տարի: Մի բան պարզ է, որ եթե փորձը վարելը հանձնարարվեց ինձ, ապա հարվածներն էլ ես պետք է ստանայի: Այդ ընթացքում շարժումը շատ թշնամիներ ուներ, որոնք բանսարկությունների միջոցով լարված մթնոլորտ էին ստեղծում հանրապետությունում: Հիմա ավելի հանգիստ է, և այդ նույն մարդկանց նշանակումը, անգամ ծանր տնտեսական վիճակը մարդկանց կողմից այլ կերպ է ընդունվում: Ժողովուրդը հասկացավ, որ իշխանությունը ժամանակավոր չէ: Բայց ասեմ, որ այդ մեկ տարով ես հպարտ եմ, շատ մեծ աշխատանք կատարվեց, և շատ կարևոր գործերի հիմքեր դրվեցին:

-Համալսարանում ունեցած ելույթում նշել եք, որ շարժման նախորդող տարիներին երազում էիք դաշնակցական լինել, սակայն մի շարք հարցերում տարաձայնություններ ունեք և ձեր հայացքներին ավելի մոտ է ռամկավարների սոցիալական դոկտրինան: Ի՞նչը խթանեց այդ շրջադարձին:

-1965 թվականից սկսած՝ ընկերներիս հետ միասին տարված էինք ազգային գաղափարներով և հայությանը միշտ ցանկացել ենք տեսնել հզորացած անկախ պետություն ունեցող ազգ: Այդ տեսակետից մեզ իր հայացքներով ամենամոտը դաշնակցությունն էր՝ որպես ազգային խնդիրների լուծման շուրջը համախմբված կուսակցություն: Նախորդ 20-25 տարիների ընթացքում ես հանդիպել եմ և ունեմ թե՛ դաշնակցական, թե՛ ռամկավար ընկերներ: Ռամկավարների կուսակցության մասին շատ քիչ բան գիտեի, և ուժեղ կազմակերպված կուսակցության տպավորություն չէր թողնում. ուղղակի կարող, ազգային լավ մարդկանց մի խմբի, ավելի շատ ակումբի էր նմանվում: Անկեղծորեն իմ կարծիքն այդպիսին է:

-Այդպես էլ կա, կուսակցությունը գործում է ակումբների ձևով:

-Իսկ դաշնակցությունը կուռ ազգային կառուցվածք ունի: Բայց դաշնակցության հետ առաջին հակասությունը պահանջատիրության հարցն է: Պահանջատիրությունը մեր ազգային քաղաքականության մեջ պետք է լինի, բայց զուտ քաղաքական տրամաբանությամբ մենք պետք է գիտակցենք, որ ազգային բոլոր երազանքներին հասնելու համար անհրաժեշտ է ունենալ անկախ պետություն: Մեր անկախությունն այս կամ այն ձևով կապված է Թուրքիայի հետ: Մենք գտնվում ենք Թուրքիայի և Ռուսաստանի միջև և նուրբ ու լուրջ քաղաքականություն պետք է վարենք նրանց հետ՝ միշտ մնալով իրապաշտ: Մեր պետական քաղաքականությունը, ի տարբերություն ազգային քաղաքականությանը, իր մեջ պահանջատիրություն չպետք է պարունակի: Դա է միակ երաշխիքը, որ մենք ունենանք անկախ պետություն՝ չհրաժարվելով մեր երազանքներից: Երբ եկանք իշխանության գլուխ, մեծ դեր սկսեցին խաղալ տնտեսական ծրագրերը: Դաշնակցությունը՝ ազգային գաղափարը առաջ տանող կուսակցությունը, որը պետություն չունի, իր սոցիալական, տնտեսական հակումներով ավելի ընկերային է: Իսկ ռամկավարների մեջ մենք տեսնում ենք այն կուսակցությունը, որը կնպաստի արդեն անկախ պետությունում իրականացնելու մասնավոր սեփականությանն անցնելու տնտեսական ծրագրերը: ՌԱԿ-ը միայն հիմա՝ Հայաստանի հողի վրա, ակումբատիպ կուսակցությունից կարող է դառնալ շատ ազդեցիկ և կարևոր կուսակցություն, եթե իր ձեռքը վերցնի և դառնա Հայաստանում ազատ ձեռներեցության

առաջացման հենարան: Նաև այդ նոր ստեղծվող խավի պաշտպանությունը վերցնի իր ձեռքը: Հիմա նոր ձեռներեց մարդկանց խավ է ստեղծվում և պետք է զանազանել, թե ով է ուղղակի օգտվում մեխանիզմի փլուզումից և հարստություն դիզում, և ով է իր գիտելիքներն ու կարողությունները օգտագործում տնտեսության զարգացման համար: Եվ ամենակարևորը, այդ նոր խավի հոգում պետք է սերմանել նաև հասարակության հանդեպ պատաս-խանատվության զգացում:

-Դուք ասում եք, որ պահանջատիրությունը չի կարող մեզ համար լինել պետական քաղաքականություն: Իսկ ձեր մասին ունեցած տեղեկությունների համաձայն, 1967 թվականին անգամ փորձել եք Մոսկվայում Թուրքիայի դեսպանատան դրոշը իջեցնել: Հետո ձեզ հետ եղել են լուրջ խոսակցություններ: Արդյո՞ք դրանք չեն անդրադարձել ձեր դիրքորոշման վրա:

-Դա առաջին անգամն էր, երբ մեզ հաջողվեց ցույց կազմակերպել թուրքական դեսպանատան առջև: Որևէ խոսակցություն ինձ հետ այդ մասին չի եղել: Ճիշտ է, երբ կազմակերպեցինք, այն ժամանակվա համալսարանի կոմերիտական քարտուղար Ռուսլան Խասբուլատովը կանչեց և ասաց, որ ավելի լավ է համալսարանից դուրս գանք: Այդպիսի խոսակցություններ եղել են, բայց դրանք ազդել չէին կարող: Ապրիլի 24-ը Հայաստանի ժողովրդի մեջ հայրենասիրության ալիք առաջացրեց: Ոմանք այդ ալիքի վրա մնացին, ոմանք հետ քաշվեցին, ոմանք էլ (ինչպես նաև ես) սկսեցին մտածել, թե այդ ձգտումների իրականացման համար ինչպիսի քաղաքականություն է պետք վարել: Այդ հարցում, իհարկե, ինձ վրա մեծ ազդեցություն են թողել Ռաֆայել Իշխանյանի հետ ունեցած զրույցները:

-Չորս տարիների ընթացքում Ղարաբաղի խնդրի լուծման ուղիների հարցը դիտարկվեց տարբեր տեսանկյուններից: Այժմ այն թևակոխել է մի նոր փուլ: Ինչպե՞ս եք գնահատում այս նոր իրավիճակը:

-Ես շատ ուրախ եմ, որ և՛ մենք, և՛ Ղարաբաղի ժողովուրդը հասկացանք, որ ինչքան էլ բողոքենք, նուրբ քաղաքական խաղեր խաղանք, եթե զենքը ձեռքիդ չես կարողանում պաշտպանել քո մի թիզ հողը, բանակցություններն օգուտ տալ չեն կարող: Իհարկե, հարցերը պետք է լուծել քաղաքակիրթ ձևով, բանակցությունների միջոցով, բայց դա այն դեպքում, երբ տեղում ապրող ժողովուրդը զենքը ձեռքին լի է վճռականությամբ՝ պաշտպանելու իր հողը: Քաղաքականություն դեռ չի նշանակում, որ թույլ պետք է տաս քեզ խփեն, քո հողից քշեն, հետո արդարության համար մեկ ուրիշը գա քո համար այդ հողը վերցնի: Եվ այժմ երաշխիքն այն է, որ Ղարաբաղի ժողովրդի այդ համոզվածությունը մնա և այդ տարածքն ունենա իր ինքնուրույնությունը:

-Այժմ կարծեք թե անկախ պետություն ենք, կա նոր հանրակցություն: Եթե վերադառնանք ձեր ծրագրային «Գնացքից թռչելու ժամանակն է» հոդվածին, ապա իրականացավ ձեր նշած տարբերակներից մեկը: Եվ ի՞նչ է, մենք արդեն թռել ենք գնացքից, ցատկել ենք ուրիշ գնացք, թե՞ մնացել նույն վագոնում:

-Այս հանրակցության հետ կապված երկու տարբերակ կա: Առաջինն այն է, որ սա ժամանակավոր դաշինք է, և հանրապետություններից յուրաքանչյուրը կնքել է՝ ձգտելով ժամանակ շահել: Դա վերաբերում է թե՛ Ռուսաստանին և Ուկրաինային, թե՛ Ադրբեջանին, որի հայացքն ուղղված է դեպի մահմեդական երկրները, և նա նույնպես ժամանակ է շահում ինքնուրույն քաղաքականություն վարելու համար: Եթե հանրակցությանը վերաբերվենք որպես ժամանակ շահելու ձև, ապա այն շահավետ է, և մնում է որոշել, թե ինչ ենք ուզում շահել: Սա ժամանակավոր երևույթ է, և պետք է հասցնենք ուժեղանալ: Մենք մի գնացքից ուրիշ գնացք չթռանք: Գնացքը կանգնեց: Բոլոր ուղևորներին ասացին՝ համեցեք, դուրս եկեք գնացքից: Այժմ, մի քիչ դիմադրելով, դուրս ենք գալիս գնացքից:

-Վարչապետությունից հրաժարվելուց և միաժամանակ ձեր թեկնածությունը նախագահական ընտրություններից հանելուց հետո դուք մասնակցեցիք Գերագույն խորհրդի նախագահի ընտրություններին: Նշանակու՞մ է դա, թե դուք հետագայում նույնպես չեք հրաժարվելու ակտիվ քաղաքական կյանքից:

-Այո:

-Կա՞ ձեզ համար որևէ հարց, որ որոշիչ է, բայց որի պատասխանը դժվարանում եք գտնել:

-Երբեմն ինձ հարց եմ տալիս՝ կարո՞ղ է մենք իսկապես այս աշխարհում այլևս առաքելություն չունենք: Թե մի փոքրաթիվ ազգ ենք, որը պետք է մտածի միայն իր գոյատևման, կենցաղի, լավ ապրելու մասին և ասի, որ հասել է իր նպատակին: Թե՞ մեր հոգու մոխրացած կայծը մի օր կբոցկլտա, և մենք կկարողանանք դառնալ հզոր, ուժեղ ազգ, որը

որոշիչ դեր կխաղա համաշխարհային քաղաքակրթության զարգացման ասպարեզում: Եթե առաջին տարբերակն է, ապա դա շատ հիասթափեցնող է: Ես ներքուստ համոզված եմ, որ երկրորդ տարբերակն է: Եվ այս անկախ պետություն ստեղծելու համար արվող քայլերը, Արցախի հարցը, Սփյուռքն ու Հայաստանը միավորելու ձգտումը, դրանք այն քայլերն են, որոնց միջոցով մենք կկարողանանք Աստծո տված հնարավորությունները իրականացնել: Հազարամյակների ընթացքում քաղաքակրթության վրա ունեցած ազդեցության դերը պետք է նորից վերցնենք մեր ձեռքը: Այդ հույսը ինձ եռանդ է տալիս: Ինձ հարցնում եք, ո՞րն է այդ հարցը: Այդ հարցն այն է՝ մենք սովորակա՞ն ազգ ենք, թե՞ համաշխարհային: Իմ կարծիքով մենք համաշխարհային ազգ ենք՝ բոլոր դրսևորումներով, և՛ սփռվածությամբ, և՛ կազմակերպվածությամբ, և՛ նպատակներով, և՛ հնարավորություններով: Չնայած ասեմ նաև, որ սովորական ազգ գոյություն չունի: Ամեն մի ազգ ինչ-որ մի բանի համար պետք է այս աշխարհում, և երբ անելիք չունի, ապա կամաց-կամաց անհետանում է աշխարհի երեսից՝ ձուլվելով և կորցնելով իր ազգային հատկանիշները:

-Ի՞նչ եք սպասում 1992-ից: Ինչպիսի՞ն եմ ձեր կանխատեսումները մեր ազգի, մեր հանրապետության համար:

- Դա ամենաբարդ հարցն է: Ավելի հեշտ է երկար ժամանակի համար պատասխանել, քան կարճ: Մի տարին լի է անորոշություններով: Ես հուսով եմ, որ Ղարաբաղը կկարողանա պահպանել իր ինքնուրույնությունը և կդառնա ինքնուրույն միավոր: Համենայն դեպս, այդ ուղղությամբ կարևոր քայլեր կարվեն: Կարծում եմ, որ Ադրբեջանի ժողովուրդը, հանդիպելով ուրիշ դժվարությունների, կհամակերպվի այդ մտքի հետ: Դա շատ համարձակ ենթադրություն է: Համոզված եմ նաև, որ չնայած Հայաստանում շարունակվելու է տնտեսության անկումը, բայց մենք օրենքներ կընդունենք, նախադրյալներ կլինեն, որպեսզի սկսվի մասնավոր սեփականության վրա հիմնված տնտեսության վերելքը: Կշարունակվի մեր անկախության ճանաչման շքերթը: Կկարողանանք մյուս երկրների հետ կապվել, բայց մեծ հույսեր փայփայել, թե նրանք խոշոր կապիտալ ներդրումներ կանեն Հայաստանում կամ վարկեր կտան, անհիմն է: Նույնիսկ որոշ դեպքերում պետք է ազատվել նաև վարկերից: ***Մեր տնտեսության մեջ դեռ չկա այն համակարգը, որ վարկեր վերցնելով՝ կարողանանք եկամուտներ ապահովել: Դրա համար այդ համակարգը պետք է արագ վերակառուցել: Առաջիկա տարիներին ես կանխատեսում եմ այն, ինչը այժմ կատարվում է Արևելյան Եվրոպայում: Ցավոք սրտի, օբյեկտիվ պատճառներն այնպիսին են, որ ծեռներեց մարդկանց համար ինչ-որ ժամանակ ծեռնտու կլինի առևտրով զբաղվել, քան ներդրումներ կատարել տնտեսության մեջ:*** Ես հուսով եմ, որ 1992 թվականը երջանիկ տարի կլինի մեր ժողովրդի համար: Մենք կկարողանանք մեր առօրյա ճնշող կենցաղից վեր բարձրանալ և տեսնել մեր պետության, մեր ժողովրդի ապագայի այն ոգևորիչ ուրվագծերը, որոնք մղող ուժ կհանդիսանան մեր ազգային իղձերին հասնելու համար:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Հակոբ Ասատրյանը
«Ազգ», 1992, 11 հունվարի

ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ ՏՈՆԵԼ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

- Շուշիի գրավումը հակասական տրամադրություններ է առաջացրել՝ ազգային հպարտության զգացում և անհանգստություն: Առայժմ չի տրվել որևէ լուրջ գնահատական: Ինչպե՞ս եք Դուք գնահատում Արցախում կատարվող իրադարձությունները:

-Գոյություն ունի տեսակետ, որ Ղարաբաղն իր գրեթե անլուծելի հարցերով խոչընդոտում է Հայաստանի Հանրապետության ոչ միայն տնտեսական զարգացմանը, այլև նույնիսկ գոյատևմանը: Ըստ այդ տեսակետի, միակ հնարավոր լուծումը «լավ» ինքնավարության պայմաններով Ղարաբաղն Ադրբեջանի կազմի մեջ թողնելն է: Չնայած այդպես պնդողները հասկանում են, որ Ղարաբաղը շատ արագ կհայաթափվի: Մի մասն այդպես է մտածում՝ հավանաբար վախենալով անկանխատեսելի պայքարի մեջ կորցնել այն փափուկ աթոռները, որոնք իրենք զբաղեցնում են: Մի ուրիշ մասի համար անկեղծորեն դա մտահոգիչ հարց է՝ կապված մեր ժողովրդի գոյատևման հետ: Այսպես մտածողներին Շուշիի ազատագրումն,

իհարկե, ուրախություն չպատճառեց, բայց իրականում միգուցե ավելի մտահոգիչ էր, քան ուրախալի:

Ժողովրդի զգալի մասն այդպիսի «նուրբ» դատողություններ չի անում և ուրախանում է, ինչպես յուրայինի ցանկացած հաղթանակի համար կուրախանար: Շատ քչերը գիտակցեցին, որ Շուշիի ազատագրումը շրջադարձային կետ է մեր ժողովրդի պատմության մեջ, և որ այդ հաղթանակն է ապահովելու ոչ միայն Ղարաբաղի, այլև մեր ողջ ժողովրդի գոյատևումը: Գորբաչովը Ղարաբաղի հարցի մասին խոսելիս ասում էր, որ չպետք է լինեն հաղթող և պարտվող կողմեր: Իրականում այդպես չի լինում: Սա միայն տարածքի, 200000 հայի կամ պատմական արդարության հարց չէ: Հարցն արդեն բարձրացված է: Կորցնելով Ղարաբաղը (շատ հավանական է, որ դա հանգեցներ նաև Ջանգեզուրի կորստին), մեր ժողովուրդը կկորցներ հավատը ազգի ապագայի նկատմամբ, կհուսահատվեր, կբարոյալքվեր: Բոլորը և, որ շատ կարևոր է, մեր հարևանները արհամարհանքով կվերաբերվեին մեզ, մենք կդառնայինք անպաշտպան: Հաղթանակը բերում է ամեն ինչ, այդ թվում նաև հարգանք մյուս ազգերի կողմից և պաշտպանվածություն: Խոջալուն և Շուշին ամբողջ աշխարհին ապացուցեցին, որ մենք իրավունք ունենք գոյատևելու և հզորանալու:

Սրանք գեղեցիկ խոսքեր չեն, այդպիսի գնահատականներն են մտնում քաղաքական հաշվարկների մեջ: Սա հարցի մի կողմն է. մյուսը՝ Շուշի քաղաքը մեր ժողովրդի պատմության մեջ յուրահատուկ դեր է խաղացել և մեծ ուրախություն է, որ Շուշին հիմա նորից մերն է: Ես չեմ հիշում, որ վերջին հարյուրամյակներում մենք որևէ քաղաք պատերազմելով հետ նվաճած լինենք: Անընդհատ կորուստներ ենք ունեցել, և սա, փաստորեն, մեր առաջին խոշոր հաղթանակն է:

Այնուամենայնիվ, որքան էլ դժվար պայմաններում ենք հիմա ապրում, մեր ժողովուրդը պետք է ուրախությամբ և հպարտությամբ տոներ Շուշիի ազատագրումը: Ես հիշում եմ, թե ինչպես էր ժողովուրդը տոնում Տիգրան Պետրոսյանի կամ «Արարատ» թիմի հաղթանակը: Ամբողջ ժողովուրդը փողոց էր դուրս գալիս: Եվ հիմա ինձ համար անհասկանալի է, թե այսպիսի կարևորագույն հաղթանակն ինչու չի նշվում ազգովի:

-Կարելի՞ է Ղարաբաղում տեղի ունեցած վերջին իրադարձությունները, ես նկատի ունեմ Հանրապետության հռչակումից մինչև Շուշիի ազատագրումը, համարել 1988 թվականին սկսված ղարաբաղյան շարժման օրգանական շարունակությունը:

- Ղարաբաղյան շարժման ժամանակ գաղափարների պակաս չի զգացվել: Պատերազմի հարցը, Արցախը, անկախության հարցը և այն ամենը, ինչը մենք հիմա տեսնում ենք, առաջարկվել և քննարկվել են դեռ 1988թ. փետրվար-մարտ ամիսներին, բայց ամեն ինչ կարելի է անել այն ժամանակ, երբ դա կարելի է անել: Օրինակ, Ղարաբաղի անկախության հարցը քննարկվում էր 1988-ին Ազատության հրապարակում, առաջարկվում էր թռուցիկներ տարածել, բայց այն ժամանակ այդ գաղափարն իրականացնել ոչ միայն անկարելի էր, այլև ընդունելի չէր լինի հենց Ղարաբաղի ժողովրդի կողմից: Այն ժամանակ չկար անկախության անհրաժեշտության խոր գիտակցումը: Նույն կերպ անիմաստ էր այն ժամանակ մտածել Ադրբեջանի հետ պատերազմելու մասին: Այդպիսի առաջարկություններ էլ են եղել և քննարկվել: Առավել ևս անիմաստ էր դա միութենական կայուն բանակի գոյության պայմաններում: Ղարաբաղյան շարժումն՝ իր ներքին տրամաբանությամբ, ամեն անգամ իրականացնելով այն, ինչ հնարավոր էր, հասավ այս փուլին, և սխալ է մտածել, որ առանց նախորդ փուլն ավարտելու՝ կարելի էր անցնել հաջորդին: Չեմ ուզում ասել, թե ղարաբաղյան շարժումը վրիպումներ չի ունեցել: Ունեցել է, ունեցել է նաև սխալներ, բայց գործողությունները հիմնականում համապատասխանեցված են եղել տվյալ պահին գոյություն ունեցող հնարավորություններին:

Այսուհանդերձ Շուշիի ազատագրման համար մենք առաջին հերթին պարտական ենք հենց իրենց՝ ղարաբաղցիներին, մեր մարտիկներին, զորավարներին, պետական, կուսակցական կառույցներին, առանց որոնց հնարավոր չէր հաղթանակը: Բայց պետք է հիշել, որ այդ հաղթանակն ապահովված էր նաև մեր ժողովրդի նախորդ տարիների մղած պայքարով, և մենք բոլորս մաս ունենք այդ հաղթանակում: Փորձը ցույց է տալիս, որ մեր ժողովուրդը հաջողությունների կարող է հասնել, երբ ազգային գաղափարախոսությամբ տոգորված՝ իր գործունեության մեջ հենվում է շարժման ընթացքում ձևավորված քաղաքական

աքսիոմների վրա: Ի վերջո պատահական չէ, որ հաջողություններ եղան այն ժամանակ, երբ արցախահայությունը, հույսն ուրիշներից կտրելով, սկսեց ինքնուրույն լուծել իր հարցերը:

-Ի՞նչ եք կարծում, հնարավոր կլինի՞ այժմ ձեռք բերված հաղթանակը պահել, և ընդհանրապես ի՞նչ է մեզ սպասում ապագայում:

- Շուշիի գրավումով և Լաչինի միջանցքը բացելով՝ Ղարաբաղն իսկապես դարձավ ինքնուրույն հայկական պետություն և այդ փաստի հետ ստիպված պետք է հաշվի նստեն բոլորը: Ադրբեջանն, իհարկե, դեռ երկար չի հաշտվի այդ մտքին՝ փորձելով ժամանակ առ ժամանակ պատերազմական գործողություններ ծավալելով, ետ վերցնել Ղարաբաղը: Հաշվի առնելով Ադրբեջանի և Ղարաբաղի կարողությունների հարաբերությունը՝ Հայաստանն այդ ամբողջ ժամանակահատվածում պետք է նեցուկ լինի Ղարաբաղին, պատրաստ, որքան էլ դա անցանկալի լինի, հարկ եղած դեպքում ռազմական գործողություններ ծավալել անգամ մեր հանրապետության սահմաններում:

Ռուսաստանը, զբաղված լինելով իր ներքին հարցերով, առայժմ գրեթե չի միջամտում Այսրկովկասի գործերին, բայց կամաց-կամաց այդ վիճակը փոխվում է. Ռուսաստանը, նորից ոտքի կանգնելով, ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձնելու այն իրադարձություններին, որոնք կատարվում են այստեղ: Ռուսաստանի շահերն են՝ ապահովել ուժային հաշվեկշիռը, այսինքն՝ թույլ չտալ, որ երեք հանրապետություններից մեկը շատ հզորանա, և թույլ չտալ Թուրքիայի ազդեցության ուժեղացումը Այսրկովկասում: Ամենայն հավանականությամբ Ռուսաստանը հաշտվել է արցախյան վերջին իրադարձությունների հետ, և դա իր համար ուժերի ընդունելի հաշվեկշիռ է:

Եթե մենք Թուրքիայի կամ Նախիջևանի սահմաններում արհեստական միջադեպ չստեղծենք, ապա մոտ ժամանակներում Թուրքիայի ռազմական միջամտությունը գրեթե բացառվում է: Հետագայում դա կախված կլինի մեր վարած քաղաքականությունից: Շատ վտանգավոր կլինի, եթե մենք չվարենք հավասարակշռված քաղաքականություն՝ միարժեք մտնելով հակաթուրքական կոալիցիաների մեջ, Թուրքիայի կողմից ընդունվելով որպես թշնամի, որպես վտանգավոր գործիք իր ավելի հզոր թշնամիների ձեռքին: Կարճ ժամանակում, ինչպես դա տեղի ունեցավ դարասկզբին, համաշխարհային քաղաքական վիճակը կարող է կտրուկ փոխվել, և մեզ համար գրեթե անհնարին կդառնա այդ պայմաններում, այդ կարճ ժամանակահատվածում ապահովել մեր պետության գոյությունը:

Բայց ինչպիսի հավասարակշռված քաղաքականություն էլ վարվի Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի հետ, միևնույն է, միայն արտաքին երաշխիքները բավական չեն մեր պետության գոյատևման և բարգավաճման համար: **Մեր պետությունը պետք է լինի բավական ռազմականացված, որպեսզի հնարավոր լինի ապահովել նրա պաշտպանությունը: Ժողովուրդը պետք է համախմբված լինի ազգային մտածողության, ազգային արժեքների շուրջ, իշխանությունները՝ անձնազոհության, բարոյականության և պատասխանատվության օրինակ ծառայեն ժողովրդին: Միայն այդ պայմանների իրականացմամբ, ստեղծելով բարգավաճող ազգային պետություն, կարելի կլինի պահպանել և բազմապատկել այն, ինչ որ մենք ունենք:**

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Տիգրան Պասկևիչյանը
«Երկիր»,1992թ., մայիսի 13

ՄԵՐ ՄԻԱՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՉԷ

- Պրն Մանուկյան, Գերագույն խորհրդում ստեղծվել էր սահմանամերձ շրջանների պաշտպանվածությունը ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով, որի նախագահը Դուք

էիք: Օրերս խորհրդարանում ներկայացվեց հանձնաժողովի եզրակացությունը, որտեղ անբավարար են գնահատված այդ ուղղությամբ տարվող աշխատանքները, որո՞նք են դրանց արմատները:

- Գերագույն խորհրդում տվյալ հարցի քննարկումները վերաբերում էին ոչ միայն սահմանամերձ շրջաններին, այլև, այսպես կոչված, համալիր ծրագրին: Նստաշրջանում խոսվեց և՛ ընդհանուր քաղաքականության, և՛ հանրապետությունում տիրող բարոյա-քաղաքական մթնոլորտի, տնտեսական համակարգի, ինչպես նաև բանակի ձևավորման մասին: Պայմանականորեն կարելի է ասել, որ այն բաժանվեց 3 մասի:

Նախ դատապարտվեց այն քաղաքականությունը, որը մեր հայրենիքի պաշտպանությունը ենթադրում է կատարել հիմնականում քաղաքական միջոցներով և ապավինել մեզ մոտ տեղակայված ԱՊՀ-ի զինված ուժերին: Կյանքը ցույց տվեց, որ եթե երկիրը չունի բանակ, ապա այն խաղալիք է դառնում և քաղաքական փոփոխությունների դեպքում նա երաշխիքներ չի ունենում իր սահմանները պաշտպանելու համար:

Երկրորդը հանրապետության բարոյահոգեբանական մթնոլորտն է, որը չի նպաստում ժողովրդի հայրենիքի պաշտպանության անհրաժեշտության գիտակցմանը, հնարավորություն չի տալիս մոբիլիզացնել ժողովրդին, կենտրոնացնել կառավարության աշխատանքները կանոնավոր բանակ ստեղծելու ուղղությամբ:

Հարցերի երրորդ փունջը որոշակի խնդիրների համախումբ է՝ կապված պարետությունների, սահմանապահ զորքերի, ռազմականացված բնակավայրերի, երկրապահ ջոկատների հետ, որոնց լուծումը պետք է գտնի կառավարությունը:

Կարելի է առանձնացնել նաև չորրորդը. բացակայում է այն իրավական մեխանիզմը, որով պայմանավորվում է բանակի ստեղծումը: Չկան զինված ուժերի զինվորական, դատախազության, դատարանի, ոստիկանության մասին օրենքներ:

Դա մեր թերացումն է: Միայն այդ օրենքների ընդունումից հետո կարագանա բանակի ստեղծման գործընթացը: Մեր գնահատականները վերաբերում էին հարցերի ամբողջ համալիրին, և ես կարծում եմ, որ այդպիսի գնահատական կարելի էր տալ առանց հանձնաժողով ստեղծելու և մանրամասն ուսումնասիրելու:

- Իսկ ի՞նչ կասեք հարցի ապագայի մասին:

- Փաստորեն Գերագույն խորհուրդն ընդունեց բոլոր այն կետերը, որ մենք էինք առաջարկել: Սա և՛ իրավական դաշտի ստեղծման, և՛ կառավարության կողմից համապատասխան աշխատանքներ տանելու հարցն է: Հատուկ սրությամբ բարձրացվեց նաև սահմանամերձ գոտու բնակչության սոցիալ-կենցաղային բնույթի հարցերը:

Հանձնաժողովի եզրակացության առաջին կետում նախատեսվեց դիմել ՀՀ նախագահին, որ նա մեկամսյա ժամկետում ներկայացնի Հայաստանի պաշտպանության մասին հիմնադրույթները: Ամեն մի երկիր ունենում է իր պաշտպանության ստրատեգիան:

Ես որպես օրինակ կբերեմ ԱՄՆ-ը, շատ երկրներ անկախություն ձեռք բերելուց հետո որդեգրեցին պետություն կառուցող այդ մոդելը: Որոշ դեպքերում դա բերում էր սուր հակասությունների ազգային ավանդույթների առումով, իսկ որոշ դեպքերում էլ դա օգտակար էր լինում: Եթե ԱՄՆ-ի օրինակով շարժվենք, ապա նրանց, այսպես կոչված՝ «աստեղային պատերազմը» փաստորեն պաշտպանության հիմնադրույթներ է, որ նրանց պետության նախագահը՝ Ռեյգանը, առաջարկեց իր ելույթներից մեկում: Ըստ ԱՄՆ-ի օրենքների, այդ նախագիծը պետք է հաստատվեր կոնգրեսի կողմից, որից հետո արդեն կմասնավորեցվեր բազմաթիվ ծրագրերի և կսկսեր իրականացվել: Սակայն այդ ծրագիրը այդպես էլ կոնգրես չմտավ: Ճիշտ է, բյուջեից կային որոշ հատկացումներ, ինչ-որ գումար, սակայն ծրագիրը չդարձավ Ամերիկայի պաշտոնական ստրատեգիան, հիմնադրույթը: Մի քանի ամիս առաջ ԱՄՆ-ի այժմյան նախագահ Բուշը համալսարաններից մեկում ելույթ ունենալիս առաջարկեց նոր իրավիճակին համապատասխանող մեկ-երկու էջից բաղկացած հիմնադրույթներ: Այդ հիմնադրույթները այժմ պետք է մտցվեն կոնգրես, քննարկվեն, և ընդունվելուց հետո սենատը համապատասխան օրենքներ կմշակի: Պենտագոնը, դրանք ի գիտություն ընդունելով, կսկսի մշակել զորքերի կառուցվածքը, կուսումնասիրի նրանց կրճատմանը կամ ավելացմանը վերաբերող հարցերը: Նույնը սպասվում է նաև Հայաստանում: Հանրապետության նախագահը

պետք է առաջարկի ինչ-որ հիմնադրույթներ, որոնք, եթե ընդունվեն Խորհրդարանի կողմից, ապա հիմք կհանդիսանան հարյուրավոր օրենքների, կարգադրությունների: Հիմնադրույթներից պետք է բխեին մեր զինված ուժերի կառուցվածքը, թվաքանակը և այլն:

- *Ցանկալի է իմանալ Ձեր կարծիքը վերջերս կայացած իշխանության և ընդդիմության սուր առճակատման մասին: Որո՞նք են առճակատման արմատները և ինչու՞ էիք դուք մեղմացնում այն:*

- Առճակատումը բնական էր, որովհետև մենք կորցրեցինք Շահումյանը և Մարտակերտը: Երբ պետությունը հաղթում է, ոչ մի առճակատում չկա: ***Պարտության դեպքում իշխանությունները պատասխանատու են այդ պարտության համար, պատասխանատու են՝ անկախ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից:*** Ես կարող եմ նշել որոշակի պատճառներ, թե ինչ պետք չէ անել: Բացի դրանից, քանի որ Շահումյանի հանձնումն անսպասելի էր, ժողովրդի մի մասի մեջ կասկածներ առաջացան, որ դա ինչ-որ խաղ է, տարբեր քաղաքական ուժեր սկսեցին իրար մեղադրել, դրանով իսկ նպաստելով հանրապետությունում կասկածամտության ծավալմանը: Անկեղծ ասած՝ ես կասկածամիտ մարդ չեմ, և շատ անգամ պարտությունները բացատրում եմ պաշտոնյաների անկարողությամբ, ծուլությամբ, իրավիճակի անտեղյակությամբ: Իսկ այդ օրվա իմ մեղմ ելույթը կապված է այն բանի հետ, որ առճակատումը հասել էր այն աստիճանի, որ, ինչպես ասում են, «ջրի հետ երեխային էլ կարող էր դուրս շպրտել»: Եվ դրա համար ես նպաստում էի, որ ընդունենք փոխզիջման տարբերակը, և դրության հետագա սրում չլինի: Այլ ճանապարհը մեզ փակուղի էր տանում:

Ինձ թվում է, որ այն որոշումը, որ ընդունեցինք, իսկապես լավ որոշում է, հարցերը կանոնավորվում էին, այսինքն՝ արտաքին աշխարհին ցույց տրվեց, որ մեր քաղաքական դիվանագիտության մեջ մենք ունենք մի եզր, որից այն կողմ անցնել չենք կարող, և իմաստավորվեց Արցախում կռվող մարտիկների թափած արյունը:

- *Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն իր ելույթներից մեկում նշեց, որ Ձեզ առաջարկել է մի շարք պաշտոններ, սակայն դուք մերժել եք: Ինչու՞:*

- Այդպիսի խոսակցություն եղել է: Նախագահն ասաց, որ ինձ առաջարկում է խորհրդատուի պաշտոն: Նախագահն այս ամենը այլ կերպ ներկայացրեց, ասելով, որ իմ հրաժարվելը այդ պաշտոնից ԱԺՄ-ի թելադրանքով է: Իրականում ԱԺՄ-ի ոչ մի ճնշում չի եղել, և ես դեռևս ինքնուրույն կարող եմ որոշումներ ընդունել: Ես իսկապես մերժեցի խորհրդատուի պաշտոնի տարբերակը, որովհետև դա իմ աշխատանքի բնագավառը չէ: Ես առաջարկեցի այլ տարբերակ, երբ ազգային անվտանգության խորհրդի խորհրդակցությունների ժամանակ կքննարկվեն սահմանների պաշտպանության, բանակի ստեղծման, ինչպես նաև Արցախի հարցերը, ես միշտ պատրաստ եմ մասնակցել այդ խորհրդակցություններին և ամեն ինչով կօգնեմ այդ գործին: Բայց դրա համար ինձ որևէ կարգավիճակ ունենալ պետք չէ: Ես նպատակ ունեմ ստրատեգիական հետազոտությունների կենտրոն ստեղծել: Դա լինելու է հասարակական մի ծառայություն, որը կկարողանա մշակել այն ազգային ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն պետության կողմից, որովհետև իմ աշխատանքով, իմ փորձից ելնելով ես գիտեմ, որ կառավարությունը, գործադիր իշխանությունները զբաղված են առօրյա հոգսերով և երբեմն չեն կարողանում տեսնել, թե ինչ է մեզ սպասվում ապագայում և դեպի ուր է պետք գնալ: Հետևաբար անհրաժեշտ է մի այդպիսի կենտրոնի գոյությունը: Նման մարմին գոյություն ունի շատ երկրներում:

- *Ժամանակին Հայաստանի նախագահը մեղադրեց Դավիթ Վարդանյանին պաշտոնամոլության մեջ՝ ասելով, որ Դուք վարչապետ եղած ժամանակ առաջադրել եք Դ.Վարդանյանին արտգործնախարարի պաշտոնում, սակայն խորհրդակցելով Լևոն Տեր-Պետրոսյանի հետ՝ փոխել եք Ձեր կարծիքը:*

- Այն ժամանակ, երբ Լևոն Տեր-Պետրոսյանը Գերագույն խորհրդի նախագահն էր, իսկ ես՝ վարչապետը, ըստ օրենքների, վարչապետն ինքն էր որոշում նախարարների խորհրդի կազմը, դրանից հետո այդ թեկնածուները պետք է անցկացվեին Գերագույն խորհրդով: Այնուհետև ինձ լիազորեցին, որ առանց Գերագույն խորհրդի ես նշանակեմ նախարարներին: Փաստորեն ես, համաձայն օրենքի, առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու, իրավունք ունեի նախարար

նշանակել: Բայց ես իհարկե խորհրդակցում էի, որովհետև մարդ էի, որովհետև մարդն իր վրա երբեք չի կարող վերցնել այդպիսի պատասխանատվություն: Սկզբում ես ստեղծել էի մի փոքր խումբ, որը զբաղվում էր կադրերի առաջադրմամբ: Որոշ կադրերի հարցով ես խորհրդակցում էի «Ղարաբաղ» կոմիտեի այս կամ այն անդամի հետ, որոշ կադրերի հարցով խորհրդակցում էի արդեն գործող գործադիր իշխանությունների ներկայացուցիչների հետ: Ես չեմ ուզում նշել, թե որ թեկնածությունը ում հետ եմ քննարկել, բայց վերջնական որոշումը ես էի ընդունում:

Իսկապես, Դավիթ Վարդանյանին առաջարկել եմ արտգործնախարարի պաշտոնը և այդ հարցով խոսել եմ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Նա կողմնակից էր այդ որոշմանը: Սակայն առաջարկս մերժել է ինքը՝ Դավիթ Վարդանյանը: Ընդհանրապես Գերագույն խորհրդի շատ պատգամավորների եմ առաջարկել այս կամ այն պաշտոնը, սակայն ոմանք այն մերժել են: Նույնիսկ անցյալ տարվա հունիսին ինքը՝ Տեր-Պետրոսյանն էր ինձ առաջարկում Դավիթ Վարդանյանին արտաքին գործերի նախարար նշանակել, սակայն, կրկնում եմ, Դավիթ Վարդանյանն ինքն է մերժել այդ առաջարկը:

- *Ի՞նչ կավելացնեք:*

- Մենք բավական ծանր վիճակում ենք գտնվում: Բայց ես հավատում եմ մեր ժողովրդին, հավատում եմ մեր ապագային: Մեզանում բացակայում է միասնության միտումը: Շատերին թվում է, թե այդ միասնությունը հեքիաթային է: Իհարկե, հեքիաթային կլիներ, եթե բոլոր կուսակցությունները միանային, և ստեղծվեր մեկ կուսակցություն: Դա իրոք անհեթեթություն կլիներ: Սակայն կան շատ հարցեր, որոնք միասնական են բոլոր կուսակցությունների համար, այդ հարցերի շուրջ նրանք կարող են միավորվել, և իշխանությունները պետք է նպաստեն դրան: Այսինքն՝ միավորող ուժը պետք է լինի իշխանությունը: Բայց, ցավոք, հակառակն է տեղի ունենում: Անընդհատ քարկոծվում է այս կամ այն կազմակերպությունը, անհատը: Ազգը, որ մի պահ միասնացել էր, նորից տրոհվեց մասերի: Ես չեմ խոսում խավերի մասին: Իհարկե, նրանք կան, հակասական շահեր ունեն: Բայց այս վիճակում մենք պետք է միասնության ձգտում ունենանք, և իշխանությունները պետք է իրականացնեն այդ ձգտումը: Ցավոք, այժմ իշխանությունները իրականացնում են հակառակ ծրագիր:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Կարեն Հեքիմյանը
«Անկախություն», 1992թ., 24 հուլիսի

ԱՐՑԱԽԸ ՀԱՅ ԱԶԳԻ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ Է

Երեկ ԳԽ նիստերի դահլիճում տեղի ունեցավ պաշտպանության հարցերի գծով պետական նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանի մամլո ասուլիսը: Հանդես գալով կարճ նախաբանով, նա հայտնեց, որ իր աշխատանքի երեք հիմնական կողմերը լինելու են Արցախի խնդիրը, պաշտպանական համակարգն՝ իր կառույցներով, և ռազմարդյունաբերական համալիրը: Խոսելով Արցախի խնդրի շուրջ՝ Վ.Մանուկյանը շեշտեց, որ, իր կարծիքով, Արցախը հայ ազգի հետագա գոյատևման բանալին է, և եթե կան մարդիկ, ովքեր կարծում են, թե Արցախը տալով՝ կարող են խաղաղություն ձեռք բերել, չարաչար սխալվում են, բայց նշեց նաև, որ արդյունքի հասնելու համար կիրառելի է նաև փոխզիջումների տարբերակը:

Այնուհետև ձայնը տրվեց լրագրողներին: Այն հարցին, թե կարելի՞ է արդյոք մի տարի առաջ վարչապետի պաշտոնից հրաժարական տալը և կրկին պետական կառույց վերադառնալը դիտարկել որպես Լ.Տեր-Պետրոսյան – Վ.Մանուկյան քաղաքական խաղ, պետնախարարը միանշանակ ժխտական պատասխան տվեց: Զբաղեցրած պաշտոնում ռազմավարական որոշումներ կայացնելու իրավասության վերաբերյալ հարցին Վ. Մանուկյանը պատասխանեց.«Ռազմավարական որոշումները կայացվելու են կոլեգիալ ձևով, և ես մասնակցելու եմ դրանց»: Ներքին գործերի նախարարության և ԱԱՊՎ-ի գերատեսչությանը չենթարկվելու մասին տրված հարցին նա պատասխանեց, որ ինքն իրավունք կունենա պատերազմական իրավիճակում ՆԳՆ ռազմական ստորաբաժանումները օգտագործել, իսկ ԱԱՊՎ-ից իրեն տրվում են հետախուզական տեղեկություններն ամբողջությամբ:

Հարց եղավ նաև ԱԺՄ-ի մասին: Վ. Մանուկյանը տեղեկացրեց, որ ԱԺՄ-ում ոչ միայն իր համախոհներն են, այլև մտերիմ ընկերները, և նրանք չեն ողջունել իր այս պաշտոնը ստանձնելու որոշումը: «Բացի դրանից,– ասաց նա – պաշտոնական կառույցները ապակուսակցականացված են, և ես գոնե ֆորմալ ձևով պետք է հեռանայի ԱԺՄ-ից»:

Անդրադառնալով Պոլ Հոբլի ծրագրին՝ պետնախարարի պաշտոնակատարը կտրուկ հայտարարեց, որ նման ծրագրերի կազմումը առանձին անհատների երևակայության գործն է, իսկ հայ ազգի գործը իր հողը ամբողջական պահելն ու նման բաները անուշադրության մատնելն է:

Թղթակցի այն հարցին, թե իր՝ ռազմական կառույցներում ընդգրկվելը նշանակու՞մ է արդյոք Հայաստանի ռազմական դոկտրինայի փոփոխություն, Վ. Մանուկյանը մատնանշեց, որ մինչև հիմա լուրջ մշակված դոկտրին առանձնապես չի եղել:

Խոսելով Ղազախստանի նախագահ Նազարբաևի՝ վերջերս հայտնած այն մտքի մասին, որ նպատակահարմար կլիներ ԱՊՀ-ի մեջ մտնող երկրներին միավորել կոնֆեդերատիվ պետության տեսքով, Մանուկյանը ասաց, որ դա միգուցե բխում է Ղազախստանի շահերից, բայց ինքը կտրուկ դեմ կլինի Հայաստանի անկախ կարգավիճակը կորցնելուն. «Որովհետև, – շեշտեց նա, – ցանկացած հարց հնարավոր է լուծել միմիայն անկախ պետականություն ունենալու դեպքում»:

Լրատվական պատերազմում մեր կրած պարտությունների պատճառները պետնախարարը համարեց շատ լուրջ խնդիր և առաջարկեց բոլոր լրագրողների հետ քննարկել խնդիրը՝ համատեղ ուժերով լուծումներ գտնելու նպատակով:

«Երկիր», 1992, 19 սեպտեմբերի

ԵՍ ՉԷԻ ԿԱՐՈՂ ԴՐՍՈՒՄ ՄՆԱԼ. ԴՐՎԱԾ Է ԱՐՑԱԽԻ ԼԻՆԵԼ-ՉԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

Արցախի խնդիր, բանակի ստեղծում, պաշտպանական և ռազմարդյունաբերական համակարգեր. այս հարցերը կընդգրկի իր աշխատանքներում նախկին վարչապետ, այժմ պաշտպանության գծով պետնախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանը: Երեկ ԳԽ նիստերի դահլիճում կայացած մամուլի ասուլիսում նա կրկին վերհիշեց մեկ տարի առաջ իր կողմից արված հայտարարությունները՝ ասելով, թե Արցախի խնդիրը մեր ազգի ապագայի բանալին է: Միևնույն ժամանակ նա նշեց, թե ինքը չգիտի որևէ գաղտնի միջոց, որը կհանգեցներ Արցախի հարցի լուծմանը: Փոխարենը նա կարևորեց ազգի միասնությունը նախ Ղարաբաղի, ապա ազգային բանակի խնդրում: Սակայն, ըստ նրա, դրան չի նպաստում հանրապետությունում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտը: Վազգեն Մանուկյանը

մեկ անգամ ևս կրկնեց, թե մենք սովորական ազգ չենք և պետք է կարողանանք զանազանել ազգի համար ճակատագրական նշանակություն ունեցող հարցերը երկրորդականներից:

«Պետք է մշակենք հստակ արտաքին քաղաքականություն»,-ասաց նա: Իսկ ո՞րն է նրա վերադարձի պատճառը, նախագահի հետ համատեղ մշակած տակտիկական քա՞յլը, թե պատասխանատվությունն ամբողջությամբ չկրելու փորձը: Մեր այս հարցի առիթով պետնախարարը որոշ համեմատություններ կատարեց և պատասխանեց. թե ոչ մի խաղ չի եղել, ուղղակի վարչապետությունից դուրս գալու պահին ինքը եղել է դրսում՝ ընդդիմության մեջ: Իսկ հիմա չի կարող այդպես մնալ, որովհետև դրված է Արցախի լինել-չլինելու խնդիրը: Պրն Մանուկյանը կարևորեց նաև իր մեծ դերը արցախյան շարժման մեջ և նշեց, որ իր պատասխանատվությունը պետք է կարողանա մինչև վերջ կրել: Իսկ այն հարցին, թե այս անգամ կունենա՞ արդյոք թիկունքից որևէ աջակցություն, նա ասաց, որ Լևոն Տեր Պետրոսյանի, ՀՀՇ-ի և իր միջև այն ժամանակ եղած շատ սուր հարցերն արդեն մեղմացել են և հույս ունի, թե իրեն սատար կկանգնեն ժողովրդի մի մասն ու տարբեր կուսակցություններ, որոնց հետ նույնպես պատրաստ է համագործակցել:

«Ազգ», 1992 , 19 սեպտեմբերի

ՊԵՏՆԱԽԱՐԱՐ ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Կառավարությունում սպասվում են նոր նշանակումներ

Մինչ նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի տեղը դեռևս թափուր է, Հայաստանի նախագահը երեկ ստորագրեց մի նոր հրամանագիր, որով պաշտպանության հարցերով պետնախարար Վազգեն Մանուկյանին նշանակեց պաշտպանության նախարար: Հայաստանի նախագահի մամուլի ծառայության հաղորդման համաձայն, Վազգեն Սարգսյանը կկատարի նախագահի խորհրդականի և սահմանամերձ շրջաններում նախագահի անձնական ներկայացուցչի պարտականությունները: Օրերս մեր թերթին տված հարցազրույցում Վազգեն Սարգսյանը նշել էր, թե ինքը պատրաստ է դուրս գալ, բայց այն դեպքում, երբ հասնենք իրական հաջողությունների: Այդ պահը թերևս դեռ չէր եկել, բայց հանրապետության նախագահը գերադասեց ընտրել Վազգեն Մանուկյանին, որը մինչ այդ հայտարարել էր, թե պետք է ժամանակավորապես դադարեցնել խորհրդարանի գործունեությունը և իրականացնել ռազմական իրավիճակին հատուկ միջոցառումներ: Դա է վկայում նաև խորհրդարանի երեկվա նիստում նախագահի կողմից Վ. Մանուկյանի ներկայացրած օրենքի նախագիծը, որով նախատեսվում են առանձին շրջաններում ռազմական դրություն մտցնելու միջոցառումներ:

Պրն Մանուկյանն առայժմ հրաժարվեց մեկնաբանել իր նոր նշանակումը՝ ասելով, թե դեռ վաղ է, և ամենայն հավանականությամբ այդ առիթով ինքը կանցկացնի մամուլի ասուլիս: Մեկնաբանելով պաշտպանության նախարարի նոր նշանակումը՝ Հայաստանի նախագահի մամուլի քարտուղար Ռուբեն Շուգարյանն ասաց, թե դա կապված է պաշտպանության համակարգում կատարվող կառուցվածքային փոփոխությունների հետ: «Վազգեն Սարգսյանն արդեն բավական աշխատանք է կատարել այդ պաշտոնում, և այժմ կարևորվում է նրա դերը որպես ռազմական գծով խորհրդականի և սահմանամերձ շրջաններում նախագահի ներկայացուցչի, քանզի նա ակտիվորեն համագործակցում է և ֆիդայական ջոկատների, և՛ պետական կազմավորումների հետ»,-ասաց պրն Շուգարյանը:

Այժմ, երբ պաշտպանության համակարգում նոր փուլ է սկսվում, դրված է ազգային բանակի ստեղծման հարցը, մամուլի քարտուղարի կարծիքով, ավելի ճիշտ կլիներ այդ գործընթացին նախկին վարչապետի մասնակցությունը, որն արդեն որոշակի փորձ ունի, և, համատեղելով պետնախարարի ու պաշտպանության նախարարի պաշտոնները, կհամակարգի զինված ուժերի և ռազմարդյունաբերական համալիրի աշխատանքները: Ինչ վերաբերում է նախարարների փոփոխությանը, ապա նրանց ուժերը պետք է օգտագործվեն այնտեղ, որտեղ ավելի արդյունավետ կլինեն:

Մամուլի քարտուղարը նաև նշեց, որ առաջիկայում կառավարական համակարգում սպասվում են նոր փոփոխություններ և նշանակումներ:

Հակոբ Ասատրյան
«Ազգ», 1992, 21 հոկտեմբերի

ՍՊԱՆԵՐԻ ԶՈՐԱԿՈՉԸ ԿՆՊԱՍՏԻ ԲԱՆԱԿԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ

Այսօր աշխատանքային այցով Մոսկվա կմեկնի Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը: Մինչև նոյեմբերի 6-ը նախատեսվող հանդիպումների ընթացքում ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարները կքննարկեն ռազմարդյունաբերական համալիրին և զինված ուժերի խնդիրներին վերաբերող հարցեր: Մոսկվա մեկնելուց առաջ մեր թղթակիցը պրն Մանուկյանին խնդրեց մեկնաբանել հանրապետությունում ընթացող զորակոչը: Նախարարն ասաց, թե սպաների զորակոչին զուգահեռ նոյեմբերի 10-ից կսկսվի նաև 18 տարին բոլորած երիտասարդների զորակոչը: Սպաների զորակոչն ունի մի հիմնական նպատակ: Եթե մենք ուզում ենք զորակոչիկներով բանակ ստեղծել, ապա պետք է նաև սպայական անձնակազմը լրացնելու մասին մտածենք և ընդգրկենք այն երիտասարդներին, ովքեր ժամանակին ստացել են զինվորական կոչում, բայց չեն ծառայել բանակում: Բացի դրանից, այսպիսի դեպքերում կիրառվում է նաև ամրացման գաղափարը: Այն ժամանակին մշակվել է Խորհրդային Միության կողմից և արդեն բավականին հնացած է: Կառավարության որոշման մեջ մի կետ կա, որով որոշվում է, թե ում չի կարելի ընդգրկել այդ զորակոչի ժամանակ: Այդ ցուցակները պատրաստվում են ըստ նախարարությունների և այսօր երեկոյան կներկայացվեն, իսկ այնուհետև կհաստատվեն կառավարության կողմից:

Նախարարն ավելացրեց նաև, որ ի տարբերություն 18 տարեկան զորակոչիկների, սպաները կստանան բարձր աշխատավարձ: «ես կարծում եմ, որ սպասվող մեծ գործազրկության պայմաններում շատերը շահագրգռված կլինեն ոչ միայն կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ, այլև կկարողանան այդ աշխատավարձով պահել իրենց ընտանիքները»,-եզրափակեց նախարարը:

Ա. Հ.
«Ազգ», 1992թ., 3 նոյեմբերի

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Ինչպես էլ ձևակերպելու լինենք ղարաբաղյան պատերազմը, անհերքելի փաստ է, որ այսօր Հայաստանը գտնվում է պատերազմի մեջ, և այդ պատերազմը մղվում է հայ ժողովրդի գոյատևման համար: Ակնհայտ է նաև, որ երիտասարդ հանրապետությանն այսօր կենսականորեն խաղաղություն է անհրաժեշտ: Իհարկե, հազիվ թե գտնվի որևէ մեկը, որը հրաժարվի խաղաղությունից:

Բայց խնդիրը դրան հասնելու ուղիների մեջ է: Վերջերս հանրապետության մամուլում շատ քննարկվեց Աշոտ Բլեյանի առաջարկած ուղին, և կարծես թե իշխանության բարձրաստիճան որևէ ներկայացուցիչ չփորձեց ի հակակշիռ դրա՝ որևէ այլ տարբերակ առաջարկել:

Բայց ահա շաբաթ օրը կայացած մամուլի ասուլիսի ժամանակ ՀՀ պետնախարար, պաշտպանության նախարարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանը հայտարարեց, թե խաղաղության կարելի է հասնել միայն այն դեպքում, եթե հասնենք ինչ-որ հաղթանակների, և բանակի գաղափարախոսությունն է՝ հաղթանակի միջոցով հասնել խաղաղության: Շարունակելով իր միտքը՝ նա պարզաբանեց նաև, թե ինչ է նշանակում հաղթանակ. **«Հաղթանակ նշանակում է, որ այն տարածքը, որը բնակեցված էր հայերով՝ ամբողջությամբ Արցախը և Հայաստանը, պետք է նորից լինի հայերի ձեռքում, իսկ այնուհետև գուցե երկարատև պաշտպանության միջոցով ապացուցել, որ այն մեր ձեռքից խլել հնարավոր չէ»:** Միայն դրանից հետո, ըստ պետնախարարի, կարելի է նստել բանակցությունների և ինչ-որ

ձևով կարգավորել խնդիրը, իսկ մինչ այդ պետք է պատերազմել և մտածել, ոչ թե շուտափույթ խաղաղության, այլ հաղթանակի մասին:

Իսկ արդյոք Հայաստանն այսօր ի վիճակի՞ է հասնել հաղթանակի: Պրն Մանուկյանն այս հարցում բավականին լավատես է, ըստ նրա, **Հայաստանում այսօր ստեղծվում է բանակ, սպայական զորակոչն արդեն ավարտվել է, և զորակոչվում են զորակոչային տարիքի պատանիները, Հայաստանն արդեն ունի հակաօդային պաշտպանություն, որը թեև այնքան հուսալի չէ, որքան կցանկանար նախարարությունը, այնուամենայնիվ հիմքը կա և այլն: Նախարարի կարծիքով, Հայաստանն այս պատերազմում վերոհիշյալ ձևակերպմամբ հաղթելու համար մի շարք նախադրյալներ ունի:** Նախ՝ Հայաստանի և Արցախի բնական պայմաններն այնպիսին են, որ բավականին դժվար է գրավել, բայց և հեշտ է պաշտպանել: Երկրորդ գործոնը հոգեբանական է. վերջին հաշվով ադրբեջանական բանակը նվաճողական պատերազմ է մղում, իսկ ղարաբաղցի զինվորները պաշտպանում են իրենց հայրենի հողը, և դա նրանց հնարավորություն է տալիս հաճախ անհամեմատ փոքր ուժերով հասնել հաղթանակների: Ըստ պրն Մանուկյանի, բոլոր դեպքերում հայկական ուժերը կարևոր մարտերում հաղթել են, իսկ պարտվել են միայն այն ժամանակ, երբ հաղթանակները թուլացրել են ներքին կազմակերպվածությունը: Պետնախարարն այն կարծիքը հայտնեց, որ եթե չլինեին Մարտակերտի և Շահումյանի պարտությունները, արդեն այսօր Ադրբեջանում մարդկանց հոգեբանությունն այլ կլիներ:

Պրն Մանուկյանն անդրադարձավ նաև, այսպես կոչված՝ «բլեյանիզմին» և Ադրբեջանի տնտեսական հզորությանը, հայտարարեց, որ խաղաղության դեպքում Հայաստանը կարճ ժամանակահատվածում մեծ տնտեսական թռիչք կապրի և տնտեսական հզորությամբ անհամեմատ կգերազանցի Ադրբեջանին: Իսկ ինչ վերաբերում է պրն Բլեյանի տեսակետին, ապա նա միայն այն կարծիքը հայտնեց, թե պատերազմող պետություններում սովորաբար պարտվողական տրամադրությունների համար պատասխանատվության են կանչվում՝ ընդհուպ մինչև գնդակահարություն:

Պաշտպանության նախարարը վճռական է խաղաղության հասնելու իր ուղու ընտրության հարցում և լավատես դրա իրականացման հնարավորության նկատմամբ: Մնում է հուսալ, որ նրա լավատեսությունը հնարավորին չափ արագ կանդրադառնա Հայաստանի սահմանների պաշտպանվածության և ղարաբաղյան պատերազմի ընթացքի վրա:

Արամ Արղության
«Ազգ», 1992, 1 դեկտեմբերի

ՂԱՐԱԲԱՂԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՐ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆ ԵՆ

Գոյություն ունի միասնական հայոց բանակ, և Հայաստանի ու Ղարաբաղի զինված ուժերն այդ բանակի բաղկացուցիչ մասերն են, երեկ կայացած մամուլի ասուլիսում հայտարարեց Հայաստանի պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը: Ըստ նրա, Ղարաբաղի վերջին ռազմական հաջողությունները բացատրվում են միայն ու միայն հայկական բանակի հզորությամբ և ոչ թե ռուսական բանակի մասնակցությամբ կամ աջակցությամբ, և ժամանակն է, որպեսզի հայ ժողովուրդն ավելի վստահ լինի սեփական ուժերի վրա:

Ադրբեջանական բանակի վերջին խայտառակ պարտությունների պատճառները, Հայաստանի պաշտպանության նախարարի կարծիքով, բազմաթիվ են. նախ տարբեր են երկու բանակների (Ղարաբաղի և Ադրբեջանի) առջև դրված բարոյական խնդիրները, եթե առաջինը պայքարում է իր անկախության համար, երկրորդի նպատակները զուտ նվաճողական են, երկրորդ՝ ադրբեջանցիները նոր կազմավորվող ազգ են, իսկ հայ ժողովուրդը հնուց հայտնի է որպես հրաշալի կռվող ազգ, երրորդ՝ հայկական կողմն ի սկզբանե գերադասեց ռազմական գործողություններում չօգտագործել 18-ամյա պատանիներին, չորրորդ՝ հայկական կողմին հաջողվեց ֆիդայական ջոկատների հիմքի վրա ստեղծել կանոնավոր ստորաբաժանումներ, հինգերորդ՝ նախկին խորհրդային բանակում կային մեծաքիվ հայազգի սպաներ, մինչդեռ

Ադրբեջանում խորհրդային բանակի ազգությամբ ադրբեջանցի սպաներին բավականին կասկածանքով են վերաբերվում և այլն: Ինչ վերաբերում է ԼՂՀ զինված ուժերի զենքի, զինամթերքի, վառելիքի հայթայթմանը, ապա նախարարը տեղեկացրեց, որ դրանց հիմնական աղբյուրները երեքն են. ինչ-որ բան մնացել էր Ղարաբաղից ռուսական զորքերի դուրսբերումից հետո, օգնում է Հայաստանը և ամենակարևորը՝ Ղարաբաղին զենք և զինամթերք է «մատակարարում» Ադրբեջանը: Պրն Մանուկյանն այն կարծիքը հայտնեց, թե վերջին աղբյուրն առաջիկայում ևս կշարունակի գործել:

Անշուշտ խոսվեց նաև Քելբաջարի շրջանի վերջին ռազմական գործողությունների միջազգային արձագանքների մասին: Այս առթիվ Հայաստանի ռազմական գերատեսչության ղեկավարը տեղեկացրեց, թե ՄԱԿ-ը հանդես է եկել բավական զուսպ հայտարարությամբ, ավելացնելով, թե փաստորեն ագրեսորների դեմ կիրառվող բոլոր պատժամիջոցները ռազմականից բացի արդեն մի քանի տարի է, ինչ կիրառվում են Հայաստանի նկատմամբ: Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական հակամարտությանը Թուրքիայի հնարավոր միջամտությանը, ապա պրն Մանուկյանը նախ պրովոկացիոն անվանեց այն հարցը, թե ինչ կլինի, եթե Թուրքիան հարձակվի Հայաստանի վրա, ապա այն կարծիքը հայտնեց, թե Թուրքիայի շահերը հազիվ թե նրան թույլ տան ռազմական միջամտության դիմել:

Բուն ռազմական գործողությունների մասին նախարարը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղի ուժերի կողմից Քելբաջարի շրջանի գրավումը ռազմական առումով ամենաճիշտ որոշումն է, այլապես վտանգի տակ էր Ղարաբաղի գոյությունը:

Ինչ վերաբերում է իրադարձությունների ծավալմանը, ապա պրն Մանուկյանը հայտարարեց, թե բոլոր հարցերը պետք է լուծվեն բանակցությունների սեղանի շուրջ, և վերջին գործողությունները բավականին ամրապնդել են Ղարաբաղի դիրքերը: «Անձամբ ես այն կարծիքին եմ, որ Ղարաբաղը չի ընդունի որևէ որոշում, որով Լեռնային Ղարաբաղը կլինի Ադրբեջանի կազմում»,- ասաց նա: Նախարարն այն կարծիքը հայտնեց նաև, թե Ղարաբաղի միակ երաշխիքն այսօր բանակն է, և ղարաբաղցիները չեն վստահում ոչ միայն ՄԱԿ-ի զորքերին, այլև մինչև անգամ Հայաստանի բանակին, ուստի երբեք չեն համաձայնի զինաթափվել: Ամբողջ խնդիրն, ըստ նախարարի, սահմանների անձեռնմխելիության և ինքնորոշման իրավունքի սկզբունքների շեշտադրումն է, և եթե Արևմուտքը սահմանների անձեռնմխելիության սկզբունքին հասել է երկու պատերազմներից հետո, ապա նույն սկզբունքը չի կարող անվերապահորեն ընդունելի լինել նախկին Խ.Միությունում, որտեղ սահմանները գծվել են հաճախ գրչի մի շարժումով: «Համոզված եմ, որ Ղարաբաղը կհաղթի և ի վերջո կհասնի նրան, որ իրավաբանորեն կհաստատվի այն, ինչը փաստացի իրականություն է»,-հայտարարեց Հայաստանի պաշտպանության նախարարը:

Արմեն Բաղդասարյան
« Ազգ», 1993, 6 ապրիլի

ԱՍԵՆԱԽԱՂԱՂԱՍԵՐ ՈՒԺԸ ԲԱՆԱԿՆ Է

գտնում է ՀՀ պաշտպանության նախարարի
պաշտոնակատար Վազգեն Մանուկյանը

Եռամսյա ընդմիջումից հետո Վ.Մանուկյանը կրկին հանդիպեց լրագրողների հետ՝ ներկայացնելու համար վերջին իրադարձությունների իր մեկնաբանություններն ու հայկական բանակի կազմավորման վերաբերյալ նկատառումները:

Բանակի կազմավորման գործում թերությունների մասին շատ է խոսվում, և պրն Մանուկյանը այդ խոսակցությունների հիմնական մասին համաձայն չէ, քանի որ, ըստ հանրահայտ ռազմական աքսիոմի, անհնար է ուժեղ լինել ամեն տեղ, պետք է ուժեղ լինել կարևորագույն տեղերում: **Բանակի կազմավորումն ընթանում է և՛ Հայաստանում, և՛ Ղարաբաղում, ընդհանուր առմամբ դա տարբեր պետություններում կազմավորվող նույն միասնական Հայոց բանակն է, որի հանդեպ, որքան էլ ցավալի է, վստահության պակաս կա: Վ.Մանուկյանն ասաց, որ իրեն մտահոգում է ոչ այնքան վերջին գործողություններին ռուսական զինամիավորումների մասնակցության մասին ադրբեջանական քարոզչությունը,**

որքան հայերիս մտմտուքը, թե մեր հաղթանակներն անհնարին են առանց կողմնակի օժանդակության: Երկրորդը՝ Քելբաջարը հեշտությամբ զիջելով՝ Զանգեզուրը գրավելու առևտրի մտավախությունը (Վ.Մանուկյանը շեշտեց «Ազգի» հրապարակումը): Սա վկայում է, որ մեր ժողովուրդը դեռ չի վարժվել սեփական ուժերին վստահելուն, դեռ չի պատկերացնում, թե ինչքան է հզոր, թե ինչպիսի մեծ խնդիրներ է ունակ իր առջև դնելու և լուծելու: **«Բոլոր այն հաջողությունները, որ մենք այսօր ունենք ռազմական ասպարեզում, վաղն ունենալու ենք տնտեսական և քաղաքական ասպարեզներում»,** - հայտարարեց Վ.Մանուկյանը:

Վերջին գործողությունները բնականաբար փոփոխություններ են մտցնում նաև Ղարաբաղի հարցում: Ապացուցվեց, որ Ադրբեջանն անզոր է լուծել հարցը ռազմական ուժով: Վ. Մանուկյանն ընդգծեց իր կարծիքը, ըստ որի ոչ մի տարբերակ , որը կենթադրի Ղարաբաղի մնալն Ադրբեջանի կազմում, իրական չէ: Ոչ մեկի խոստումները երաշխիք լինել չեն կարող: Ղարաբաղը հասկանում է, որ իր գոյության միակ երաշխիքը զինված պաշտպանությունն է: Ոչ մի խոստում չի կարող հիմք լինել այս պաշտպանությունը թուլացնելու համար: Ղարաբաղցիներն այսօր կասկածով են վերաբերվում նույնիսկ ՀՀ քաղաքականությանը՝ երկմտելով, թե դրա հետևանքով ԼՂՀ շահերը կարող են տուժել:

Սահմանների անձեռնմխելիության սկզբունքն ընդունելի է Եվրոպայում, որտեղ երկու համաշխարհային պատերազմ եղավ այդ սահմանները ճշտելու համար: Այդ սկզբունքի իրագործումը կամայականորեն սահմանագծված այս տարածքում ընդունելի և իրական չէ:

Վ.Մանուկյանը համոզմունք հայտնեց, որ Ղարաբաղը կհաղթի և իրավաբանորեն ձեռք կբերի այն անկախությունը, որը փաստորեն ձեռք է բերել:

«Երկիր», 1993, 8 ապրիլի

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՊԱԳԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ՁԵՌՔԻՆ Է

1993 թվականի մայիսի 28-ին գրեթե ավարտված էր Հայաստանի կանոնավոր բանակի ձևավորումը, որի բաղկացուցիչ մասն էր Ղարաբաղի բանակը: Գրավված էր Քելբաջարը, հետ էր վերցված Մարդակերտը, ջարդվել էր Ադրբեջանի բանակի ողնաշարը, և շարունակվում էր սկսված հաղթանակների շարքը: Համաժողովրդական մեծ ոգևորության ալիք էր առաջացել, և տեղի ունեցավ առաջին ռազմական շքերթը, որը ընդունում էր այդ ժամանակվա պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանը: Ստորև ներկայացնում ենք նրա ելույթը ռազմական շքերթն ընդունելիս:

Մեծարգո նախագահ, Վեհափառ Տեր,
հարգելի հյուրեր, պարոնայք գեներալներ, սպաներ, զինվորներ

75 տարի առաջ՝ հարյուրամյակների ընդմիջումից հետո՝ 1918 թվականի մայիսի 28-ին մեր ժողովրդին բախտ վիճակվեց վերականգնել ազգային պետականությունը, ստեղծել անկախ պետություն: Այդ անկախությունը մենք վերականգնեցինք ռազմական հաղթանակով, Սարդարապատի ճակատամարտում:

Մարդկության զարգացման այժմյան ուղղության պետությունների հզորացման, գիտության և տեխնիկայի, տնտեսության և մշակույթի զարգացման հիմքում ընկած է մի կախարդական բառ՝ ազատություն: Դա է մարդկության զարգացման ուղին, և այդ հոսանքին հակառակ գնալու բոլոր փորձերը, ինչքան էլ հզոր և վեհ գաղափարներով դրանք պատճառաբանված լինեն, դատապարտված են անհաջողության: Ազատությունը ազգերի և ժողովուրդների համար դրսևորվում է անկախ պետականությամբ և կարևորագույն երաշխիքն է ազգային իղձերի իրականացման, ժողովրդի բարեկեցության: Անկախ պետականության գոյության կարևորագույն երաշխիքն է բանակը: 1918 թվականին մեր անկախության վերականգնումը պայմանավորված էր Սարդարապատի հաղթանակով, անկախության կորուստը՝ 1920թ. ռազմական պարտությամբ: Այժմ նույնն է պատկերը. մեր պետության գոյությունը, ներքին կյանքը, պետականության կառուցումը, մեր ժողովրդի ազատությունը և

ապագան ազգային բանակի ձեռքին է, կախված է նրա հաղթանակներից և պարտություններից: Եվ մեր ժողովուրդը, նորածին պետությունը ստեղծեցին հաղթանակող բանակ, որը մարտնչում է արդարության, ազատության, մեր ազգային իղձերի իրականացման համար: Այն, որ մենք այսօր հնարավորություն ունենք խաղաղ պայմաններում հպարտությամբ նշել մեր անկախ պետականության վերականգնման տարեդարձը, պարտական ենք այն հերոսներին, ովքեր իրենց կյանքը զոհաբերեցին ռազմաճակատներում, հանուն մեր ժողովրդի գոյության, հանուն մեր ազգի հզորացման: Այժմ մենք ունենք հզոր բանակ, համալրված լավագույն սպաներով, խիզախ զինվորներով, համակված ազգային ոգով, և այդ բանակը ի վիճակի է հաջողությամբ լուծել բոլոր այն խնդիրները, որոնք իր առջև կդնի մեր ժողովուրդը, մեր պետությունը:

Կեցցե մեր ժողովուրդը, կեցցե մեր անկախ պետությունը, կեցցե մեր ազգային բանակը:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԿՐԿԻՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է

կամ հաղթող բանակի պարտված հրամանատարը

Հայաստանի պաշտպանական համակարգի շուրջ խոսակցություններն անցած շաբաթ բավականին շատ էին: Դրանք հիմնականում հանգում էին նրան, որ հնարավոր է ՀՀ պաշտպանության նոր նախարարի նշանակում: Դեռ ավելի քան մեկ ամիս առաջ «Հայլուրը» ենթադրություն արեց, որ բուժման նպատակով Փարիզ մեկնող Վազգեն Մանուկյանը ամենայն հավանականությամբ չի վերադառնա որպես նախարար: Այդ ենթադրությունն արդարացավ, ինչպես որ արդարացան վերջին օրերին Հայաստանում ունայնորեն պտտվող շշուկները նոր նախարարի թեկնածության մասին: Օգոստոսի 21-ի երկու հրամանագրերով Լ. Տեր Պետրոսյանը Սերժիկ Սարգսյանին նշանակեց ՀՀ պաշտպանության նախարար, իսկ Վազգեն Մանուկյանին ազատեց պաշտպանության նախարարի պաշտոնակատարի պաշտոնից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ: Սերժիկ Սարգսյանը մինչ այս նշանակումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի գլխավոր հրամանատարն էր և դիտվում էր որպես ՀՀ իշխանությունների հետ առավել համագործակցող գործիչ:

Ինչ մնում է Վազգեն Մանուկյանին և նրա «այլ աշխատանքին», ապա պետք է նշել, որ նրա համախոհների համար առկա հրամանագրի ստորագրումը բավականին անսպասելի էր, և նրանք քիչ հավանական համարեցին կառավարության կազմում նրա նոր նշանակումը: Հավանաբար այն նաև անսպասելի է եղել հենց Վ.Մանուկյանի համար, քանզի ընդամենը մի քանի օր առաջ լուրեր էին պտտվում, որ Փարիզից խորհրդատվություններ է անցկացնում իր գործընկերների հետ՝ նախարարության համակարգում որոշ կադրային փոփոխություններ իրականացնելու շուրջ: Չի կարելի բացառել, որ հենց այդ խորհրդատվություններն էլ արագացրել են նախագահական հրամանագրի ստորագրումը: Մի բան պարզ է՝ հրամանագիրը ստորագրվեց հենց այն պահին, երբ ընդամենը հինգ օրից նախարարը պետք է վերադառնար Երևան:

Պարզ տրամաբանությունը հուշում է, որ արդեն մեկ ամիս սպասող նախագահը կարող էր ևս հինգ օրով հետաձգել իր հրամանագրերի ստորագրումը՝ գոնե իր իսկ դավանած «էթիկայի կանոնները» չխախտելու համար:

Այսպիսով Աշոտ Մանուչարյանից հետո ասպարեզը վերստին թողեց նաև Վազգեն Մանուկյանը: Եթե առաջինի համար կանխատեսում են վերադարձ դեպի ուսուցչական գործունեություն, ինչն այնքան էլ հավանական չի թվում, ապա երկրորդի համար, հաշվի առնելով այն իրողությունը, որ նա մեկ անգամ արդեն հեռացել ու վերադարձել է, հնարավոր են համարում նոր նշանակումը՝ չբացառելով հենց վարչապետի պաշտոնը: Թույլ ենք տալիս մեզ կասկածել վերջին ենթադրության առնչությամբ, չնայած որ դիտորդները պնդում են, թե լուրջ խոսակցություններ կան ՀՀ ներկա վարչապետին փոխելու շուրջ, և արդեն պատրաստ է նույնիսկ պատճառաբանող ձևակերպումը. «Ձմեռ-93 ծրագիրը տապալելու համար»:

«Հայլուր»

«Երկիր», 1993, 24 օգոստոսի

ՇԱՏԵՐԸ ԿԱՐԾՈՒՄ ԷԻՆ, ՈՐ ԻՆՁ ԿԴԱՐՁՆԵՆ ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈՒԽԱԶ

«Ես կարծում եմ, որ մեր բանակը պետք է պատրաստ լինի հետ մղելու ագրեսիան դեպքերի ցանկացած զարգացման պարագայում: Որքան մարտունակ լինեն մեր զորքերը, այնքան փոքր կլինի ուժով հարց լուծելու գայթակղությունը»:

1992թ. ամռանը Լեռնային Ղարաբաղը ողբերգություն էր ապրում. մեկ ամսում ադրբեջանական զորքերը գրավեցին Շահումյանն ու Մարդակերտը, հայերի կողմից վերահսկվող տարածքների մոտ 50 տոկոսը: Թվում էր՝ ևս մեկ ճիգ, և ղարաբաղյան հարցը կլուծվի վերջնականապես:

Հենց այդ ժամանակ Վազգեն Մանուկյանը դարձավ Հայաստանի պաշտպանության նախարար, և պատերազմի ընթացքը սկսեց աստիճանաբար փոխվել: ԽՍՀՄ ցամաքային զորքերի շտաբի պետի տեղակալ Տեր-Գրիգորյանցի ակտիվ մասնակցությամբ կազմավորվեց փոքրաթիվ, բայց մարտունակ բանակ: 1992թ. աշնանից սկսած հաջողվեց կասեցնել ադրբեջանցիների առաջխաղացումը, իսկ 1993թ. գարնանը հայերը հակահարձակման անցան և արդեն օգոստոսին ջախջախեցին ադրբեջանական բանակի հիմնական հարվածային ուժերը:

Ռազմական առումով ղարաբաղյան պատերազմը հայերը շահել են: Լավագույն դեպքում տարիներ են պետք, որպեսզի Ադրբեջանը կարողանա մարտունակությամբ ինչ-որ չափով ղարաբաղյան բանակի հետ համեմատելի զորքեր ստեղծել: Այժմ հայկական ղեկավարությունը պետք է կարողանա հաղթանակի պտուղները խելամտորեն օգտագործել: Բայց սա խնդիր է, որը հազվադեպ է հաջողվել լուծել: Սկսվել են տարածայնություններ: ԼՂՀ պատգամավորները և ղեկավարությունը, ի տարբերություն Լ. Տեր-Պետրոսյանի, անընդունելի են համարում ԵԱՀԽ-ի պլանը, և առաջին հերթին Ադրբեջանի գրավված տարածքներից առանց նախապայմանների (առանց լուրջ փոխհատուցման) նահանջելը: Ինչպես երևում է հարցազրույցից, նույն կարծիքին է նաև Վազգեն Մանուկյանը:

-Մեզ փոխանցեցին ոչ թե երկու, այլ մեկուկես դիվիզիա: Ադրբեջանի համեմատ մենք ստացանք չնչին չափով սպառազինություն: Հայաստանում կար 500 վագոն զինամթերք, Վրաստանում՝ 2000-5000, Ադրբեջանում՝ 10 հազար վագոն: Այնպես որ ադրբեջանական 20 կրակոցին մեկով ենք պատասխանում: Բայց ոչինչ, մեր հրետանավորները լավն են:

Մենք խիստ նեղված ենք բանակը քանակական առումով մեծացնելու հարցում և ստիպված ենք լավացնել որակը: Մեր բանակի կառուցվածքը մոտավորապես կրկնում է խորհրդային բանակինը: Նախկին խորհրդային զենքն է, խորհրդային բանակի սպաները: Ես գտնում եմ, որ խորհրդային բանակը աշխարհի լավագույն, ուժեղ բանակներից մեկն էր:

Ինչպես նախկինում, հիմա էլ զորակոչվում են 18 տարեկանները, բայց ի տարբերություն Ադրբեջանի, անպատրաստ նորակոչիկներին որպես թնդանոթի միս չենք օգտագործում սահմանների վրա: Մենք այնպիսի կորուստներ չենք կրում, ինչպես Ադրբեջանը, և արդյունքում ներքին քաղաքական վիճակը մեզ մոտ շատ ավելի կայուն է:

Մարտական պատրաստության հարցում ձգտում ենք հետևել ոչ թե խորհրդային, այլ ամերիկյան մեթոդիկային: Զգալիորեն կրճատված է շարքային պատրաստությունը: Նորակոչիկին միանգամից սովորեցնում ենք զենքի հետ վարվելուն, առանց երկար տեսությունների:

-Ինչպե՞ս եք համագործակցում Ձեր առաջին տեղակալի՝ գլխավոր շտաբի պետ գեներալ Տեր-Գրիգորյանցի հետ:

-Մեր բանակում շատ են նախկին խորհրդային բանակի զինծառայողները, բայց ռազմական շինարարության մասնագետներ շատ կան: Անցյալ տարի, երբ վիճակը երբեմն-երբեմն դառնում էր ծայրահեղ ճգնաժամային, շատերը, նույնիսկ պրոֆեսիոնալները, առաջարկում էին մարտադաշտ նետել բոլոր ուժերը: Իսկ գեներալ Տեր-Գրիգորյանցը առաջարկեց ռազմական շինարարության երկարաժամկետ ծրագիր, բանակի աստիճանական հզորացման համակարգ՝ անկախ տվյալ պահին մարտական գործողությունների ընթացքից:

-Հայաստանի տարածքում (Գյումրի) տեղաբաշխված է ռուսական մոտոհրաձգային դիվիզիան: Ինչպե՞ս եք համագործակցում ռուսական զորքերի հետ:

-Վերջերս հրավիրված էինք որպես դիտորդներ մասնակցելու այնտեղ անցկացվող զորախաղերին: Շատ բան ենք սովորում ռուսներից, մանավանդ Գյումրիի դիվիզիան «հին» ավանդույթներ ունեցող զորամաս է, չնայած թերի է կազմավորված:

-Ինչպե՞ս կվերաբերվեր ձեր կառավարությունը այդ և այլ ռուսական զորամասերը հայ նորակոչիկներով լրացնելու գաղափարին:

-Դա բացառված չէ: Երևանում նման առաջարկը միայն կողջունեին: Գյումրիի դիվիզիայում ներկայումս ծառայում են որոշ թվով տեղաբնակներ: Բայց մենք կարող ենք նորակոչիկներով համալրել ռուսական զորամասերը: Հարցը լուրջ ուսումնասիրություն է պահանջում: Հարկավոր է ուշադիր ուսումնասիրել Հայաստանի, Ռուսաստանի համապատասխան օրենքները և այլն:

-Կա՞ն ռուսական զորամասերում մշտական կապի հայ սպաներ, ինչպես ընդունված է դաշնակից երկրի տարածքում տեղաբաշխված ՆԱՏՕ-ի զորքերում:

-Ոչ: Նրանք մեզնից գաղտնիքներ ունեն, մենք՝ նրանցից: Իսկ հարաբերությունները բարեկամական են:

-Մեկ տարի առաջ Հայաստանն ու Ռուսաստանը ստորագրեցին կոլեկտիվ անվտանգության պայմանագիր: Հայաստանը նույնիսկ վավերացրեց այն: Բայց առայժմ պայմանագիրը, ինչպես ԱՊՀ շրջանակներում ընդունված այլ փաստաթղթեր, չի գործում...

-Ես գտնում եմ՝ դեռ վաղ է ԱՊՀ միացյալ զինված ուժեր ստեղծելը: Դա իմաստ կունենա, եթե ԱՊՀ բոլոր երկրները պաշտոնապես ընդհանուր թշնամի ունենան: Առայժմ երկրների մեծ մասը նույնիսկ ռազմական դոկտրինա չունի:

Իսկ պայմանագրի առկայությունը, երբ ժամանակ առ ժամանակ պաշտպանության նախարարները հավաքվում են, խնդիրներ քննարկում, փաստաթղթեր ստորագրում, խիստ կարևոր է:

-Հայաստանում շատերը կասկածանքով են վերաբերվում Թուրքիային: Դեռևս սառը պատերազմի ժամանակ Արևելյան Անատոլիան կահավորվել է լայնածավալ ռազմական գործողություններ իրականացնելու ծրագրով, իսկ թուրքական բանակը իսկապես ուժեղ է: Ըստ Ձեզ, որքանո՞վ է իրական «թուրքական սպառնալիքը»:

-Թուրքիայի հանրապետությունն այսօր տնտեսապես կողմնորոշվում է դեպի Եվրոպա: Անդրկովկասի հարցերին ռազմական միջամտությունը նրա շահերից չի բխում: Բայց Թուրքիայում կան արմատական ուժեր, որ կցանկանային փոխել երկրի պետական քաղաքականության ուղղությունը: Բացի դրանից, Թուրքիան որոշակի պարտավորություններ է ստանձնել Ադրբեջանի հանդեպ, և սկզբունքորեն դա կարող է Թուրքիային դրդել իր համար ըստ էության ոչ օգտակար քայլերի: Եթե չկա հակադրվող ուժ, միշտ կա հարցը ուժով լուծելու գայթակղություն: ԱՊՀ գոյությունը, Հայաստանում տեղաբաշխված ռուսական զորքերն անշուշտ զսպող գործոն են:

-Պատմությունը բազմաթիվ դեպքեր է հիշում, երբ երկիրն ու ժողովուրդը զինված բախման մեջ են ներքաշվում հակառակ առողջ տրամաբանության ու սեփական շահերի: 1974թ. թուրքական զորքերը ներխուժեցին Կիպրոս, և հակառակ համաշխարհային հասարակական կարծիքի, մինչև օրս այդ երկրի տարածքի 40 տոկոսը շարունակում են պահել: Երբ գրավվեց Քելբաջարը, թուրքական մի քանի տասնյակ տանկ դուրս բերվեցին ուղիղ նշանառության գոտի՝ Գյումրիի դիվիզիայի դեմ դիմաց: Որպես պաշտպանության

Նախարար նախատեսու՞մ եք արևմտյան սահմաններում հնարավոր սպառնալիքի դեմ հակահարված, թե՞ ուժերի հարաբերակցությունն այնքան ակնհայտ է, որ պաշտպանության մասին մտածելն ավելորդ է, և իրական են միայն դիվանագիտական միջոցները:

-Ինչ խոսք, նախապատվությունը տրվում է դիվանագիտական միջոցներին, բայց մենք պաշտպանությունից չենք հրաժարվի, նույնիսկ եթե հակառակորդը մի քանի տասնյակ անգամ ուժեղ է: Ես գտնում եմ, որ մեր բանակը ցանկացած դեպքում պետք է պատրաստ լինի ագրեսիան հետ մղելու: Որքան ավելի մարտունակ լինեն մեր զորքերը, այնքան ուժով հարց լուծելու գայթակղությունը կփոքրանա:

-Ռուս-թուրք-ամերիկյան նախաձեռնությունը հավանության արժանացավ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի, հետո նաև Հայաստանի, Ադրբեջանի, ԼՂՀ կառավարությունների կողմից: Ի՞նչ կարծիք ունեք այդ մասին:

-Որպես պաշտպանության նախարար՝ ես ենթարկվում եմ Հայաստանի կառավարության որոշումներին: Բայց որպես մարդ և քաղաքական գործիչ՝ չեմ ողջունում այդ նախաձեռնությունը: Այն պրակտիկ չէ, անարդար է և շատ դժվար է կյանքի կոչել: 1988 թվականից Ղարաբաղը պայքարում է ազատության համար շատ ուժեղ հակառակորդի դեմ, և Քելբաջարը կարող է վերադարձնել, եթե հակառակ կողմը ևս զիջումներ անի, վերադարձնի Գետաշենը, Շահումյանը, որոնք հիմա պահում է:

-Հայկական բանակն ու պաշտպանության նախարարությունը զորավի՞գ են ղարաբաղյան բանակին:

-Իհարկե: Երբ չկար ոչ հայկական, ոչ ղարաբաղյան բանակ, հայաստանցի ֆիդայիները կռվում էին Ղարաբաղում: Հիմա ԼՂՀ-ն՝ որպես պետություն իր բանակով, ավելի ու ավելի է առանձնանում: Նրանք մեծ քանակով ռազմավար ունեն:

-Ղարաբաղում ունեցած Ադրբեջանի անհաջողությունները հանգեցնում են ներքին քաղաքական ճգնաժամի. բանակային 2-րդ կորպուսի հրամանատար Սուրաթ Հուսեյնովը ապստամբեց Էլչիբեյի և ԱժԴ-ի դեմ և դարձավ վարչապետ: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է Բաքվում այնպիսի ռեժիմի իշխանության գալը, որը կհրաժարվի Ղարաբաղը նվաճելու փորձերից:

-Մենք շահագրգռված ենք, որպեսզի Ադրբեջանի կառավարութունը դադարեցնի կրակն ու նստի բանակցությունների: Ի վերջո Ղարաբաղը կդառնա անկախ պետություն: Որքան շուտ Բաքվում հայտնվի կառավարություն, որը կճանաչի Ղարաբաղը, այնքան շուտ կավարտվի պատերազմը:

-Չե՞ք վախենում, որ կպարտվեք իրար սպառելու պատերազմում: Չէ՞ որ Ադրբեջանի և՛ տնտեսական հնարավորությունները, և՛ աշխարհաքաղաքական դիրքը շատ ավելի գերադասելի են:

- Բախման հենց սկզբից Ադրբեջանում հույս ունեին 1-2 տարում մեզ ծնկի բերել: Բայց մենք չենք սպառվել: Այսօր մեր բանակը բոլորովին չի զիջում ադրբեջանականին, և եթե անհրաժեշտ է, դեռ շատ կարող ենք դիմանալ:

-Ի դեպ, ինչպե՞ս է Հայաստանին հաջողվում շրջափակման պայմաններում ռազմական տեխնիկան մարտական վիճակում պահել: Շարունակու՞մ եք Ռուսաստանի հետ համագործակցել ռազմատեխնիկական բնագավառում:

-Խնդիրներ ունենք՝ կապված և՛ զինամթերքի, և՛ տեխսպասարկման հետ: Ռուսաստանը ձգտում է չեզոքություն պահպանել, ինչը դժվարացնում է ռազմատեխնիկական համագործակցությունը:

-Խորհրդային ժամանակներում Հայաստանում զգալի ռազմարդյունաբերական հզորություն կար: Ինչպե՞ս է այն օգտագործվում այժմ:

-Մենք ժառանգություն ստացանք ռազմական գործարանների հսկա քանակ, բայց դրանք տարբեր դետալներ էին արտադրում միասնական խորհրդային համալիրի համար: Դա մեր բանակին քիչ բան էր տալիս: Ներկայումս ձգտում ենք վերականգնել ընդհատված տեխնի-կական կապերը: Նույնիսկ շրջափակման պայմաններում Հայաստանը չի ընդհատում Ռուսաստանին որոշ եզակի դետալների և հանգույցների առաքումը:

-Որպես պաշտպանության նախարար երբեք չե՞ք սարսափել, որ կպարտվեք այս պատերազմում:

- Այո, անցյալ ամառ, երբ ադրբեջանցիները հաջող հարձակումներ էին գործում: Այն ժամանակ ես համարվում էի Լ. Տեր-Պետրոսյանի ընդդիմադիրների կենտրոն, բայց ես

այնուամենայնիվ համաձայնեցի զբաղեցնել պաշտպանության նախարարի պաշտոնը նրա կառավարությունում, որովհետև ազգի առաջ պատասխանատվություն էի զգում որպես ղարաբաղյան շարժման մասնակից: Այն ժամանակ շատերն իսկապես կարծում էին, որ պատերազմը տանուլ կտանք, և ինձ կդարձնեն քավության նոխազ:

Չեմ բացառում, որ որոշ ժամանակ հետո Ադրբեջանը նոր լայնածավալ հարձակում ձեռնարկի Ղարաբաղի վրա: Եթե դա էլ հետ մղվի, երևի ներքին քաղաքական վիճակը Բաքվում վերջնականապես կհասունանա խաղաղություն կնքելու համար:

Պավել Ֆեյգենհաուեր
«Սեգոդնյա»

Հ.Գ. – Հարցազրույցը կայացել է նախքան նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի կողմից Վ.Մանուկյանին պաշտոնաթող անելու հրամանագրի ստորագրվելը:

«Երկիր», 1993, 27 օգոստոսի

ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԱՅԴ ԵՐԱԶԱՆՔԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԻ

Երբ սկսվեց Մարտակերտի գործողությունը, միաժամանակ հարձակում ձեռնարկվեց տարբեր ռազմաճակատներում: Գործերը լավագույն վիճակում էին Մոնթեի ղեկավարած ճակատում. նա առաջ էր մղվում: Ու հանկարծ՝ զանգ, զեկուցեցին, որ Մոնթեն զոհվել է... Միանգամից երկու զգացում համակեց ինձ՝ սուր ցավ և զայրույթ: Մոնթեն իրավունք չուներ իրեն փամփուշտի զոհ դարձնելու, զոհվելու: Իսկ ռազմաճակատը նրա կորստով տուժելու էր: Եվ տուժեց: Մերոնք այդ օրը նահանջեցին: Այդ մեկ զորավարի մահն այդքան մեծ հետք թողեց իրադարձությունների վրա:

Զայրույթն, իհարկե, միանգամից անցավ, բայց ցավը մնաց, և երևի մինչև կյանքի վերջ ես, իմ ընկերներն ու բարեկամները տանենք այդ ցավը: Մոնթե Մելքոնյանը քաջ զինվոր էր, չնայած խիզախ զինվորներ շատ ունենք: Մոնթե Մելքոնյանը գրագետ հրամանատար էր, չնայած գրագետ հրամանատարներ շատ ունենք: Մոնթե Մելքոնյանը յուրահատուկ, հազվագյուտ մարդ էր, որի նմանն Աստված ամեն սերնդում մի քանիսն է ստեղծում: Ամեն հայի հոգու մեջ ինչ-որ չափով ազգային երազանք, ազգին նվիրվելու ձգտում կա: Նա կարող է ամբողջ կյանքն ապրել, ու այդ երակը չբացվի, ինքը չիմանա դրա գոյության մասին: Բայց սկսում է պատերազմը, նրանք հայտնվում են ռազմաճակատում, հերոսություն են գործում: Բայց Մոնթեն նրանցից չէր, Մոնթեն ավելին էր: Նա այն ջահն էր, որը լուսավորում ու ի հայտ էր բերում մյուսների թաքնված լույսը: Եվ եթե մի ազգ 2-3 սերունդ զուրկ լինի նման ջահերից, այդ ազգը դատապարտված է մահվան: Մեծ ջահ կորցրեցինք: Ու զարմանալի էր, որ արևմուտքից եկած այդ տղան, որն իր կյանքը վառելով՝ մատուցում էր հայրենիքին, մերվեց մեր շրջապատին: Ասեմ, որ նույնիսկ գյուղացու խորամանկություն էր ձեռք բերել: Քելբաջարի գործողությունից հետո բարդ քաղաքական իրավիճակ էր ստեղծվել: Մի կողմից՝ զորքը շատ ոգևորված էր, և ուզում էր առաջ գնալ, մյուս կողմից՝ քաղաքական նկատառումները թույլ չէին տալիս: Միակ ուղղությունը, որով իմաստ ուներ առաջ գնալ, Մարտակերտի ուղղությունն էր: Մյուսներով իրավունք չունեինք գնալ, դեռ աշխարհը կանգնել, պահանջում էր, որ զորքը հանեինք Քելբաջարից: Իմ ու Մոնթեի վերջին հանդիպումը եղավ դա: Մոնթեն եկավ ինձ մոտ, ասաց՝ պրն. նախարար, մեր տղաներն ուզում են գրավել Ղուբաթլին, ես կտրականապես դեմ եմ, շատ լավ պատկերացնում եմ քաղաքական իրավիճակը: Փաստեր ներկայացրեց, բայց նաև հայտնեց, որ Լաչինի վիճակը պետք է լավացնել: Մի քիչ առաջ կգնանք, կանենք այս գործողությունը, այն գործողությունը, Ղուբաթլին կշրջանցենք, ամեն ինչ քաղաքական տեսակետից նորմալ կլինի: Սենյակումս հավաքված զինվորները միանգամից ծիծաղեցին: Կա ներքին տրամաբանություն, երբ A քայլն անում ես, B քայլն անում ես, C-ն արդեն կարող ես և ինքդ չանել: C քայլն ինքնաբերաբար Ղուբաթլիի գրավումն էր: Մոնթեն իր խորամանկության միջոցով ուզում էր անցկացնել դա, ինձանից էլ նեղացած գնաց: Իսկ ես գտնում էի, որ այդ պահին քաղաքական հաշվեկշիռը բացառում էր այդ գործողությունը:

... Մեծ կորուստ ունեցանք: Մոնթե Մելքոնյանը միայն զինվոր չէր, հայրենասեր չէր, նա նաև ջահ էր: Մի մեծ ջահ մարեց: Իհարկե, հիմա փողոցներ ու դպրոցներ անվանենք Մոնթեի անունով, և պետք է անենք դա: Ողջունում եմ պաշտպանության նախարարության որոշումը, այն շատ կարևոր է: Բայց այնուամենայնիվ նրա հիշատակը պահպանելու գործում ամենակարևորը Մոնթեի ծրագրերի իրականացումն է: Նրա ծրագրերը չէին սահմանափակվում մի քանի քառակուսի մետր հող կամ մի քանի գյուղ ազատագրելով: Նրա ծրագրերն ավելի հեռուն էին գնում: Ես ասում եմ, այս պատերազմը մենք կավարտենք հաղթանակով:

Հաղթանակով նշանակում է Ղարաբաղ, որն Ադրբեջանի կազմի մեջ չէ: Ես համոզված եմ, որ մենք այդ հաղթանակին հասնելու ենք: Եվ Մոնթեի երազանքը՝ տեսնել աշխարհով մեկ սփռված ազգը մի հզոր պետություն, կատարվելու է: Իսկ այդ հզորությունը նաև անհատների հզորությունն է: Հզոր պետության մեջ մարդն ապրում է ազատ, հպարտ, որ այդ պետության, այդ ժողովրդի մասնիկն է:

Վազգեն Մանուկյանի ելույթը
Մոնթե Մելքոնյան հիմնադրամի
բացման արարողությանը
Երևան, 1994թ., հուլիսի 28,
Կամերային երաժշտության տուն

ՄԵՆՔ ՀԱՂԹԵԼ ԵՆՔ ՄԵՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԱՐՅԱՆ ԳՆՈՎ

Սիրելի հայրենակիցներ:

Մենք բոլորս ուշադիր լսեցինք ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի օգոստոսի 5-ի ելույթը: Գնահատականներ չենք ուզում տալ ելույթին, միայն ասեմ, որ իմ կարծիքով, վայել չէր պետության ղեկավարին այդպիսի ելույթ ունենալ: Բայց նրանում բարձրացվեցին բազմաթիվ հարցեր, որոնք պատասխան են պահանջում, և մենք կփորձենք պատասխանել :

Առաջինը պատերազմի և խաղաղության հարցն է: Ի դեպ, ասեմ, որ ելույթում և՛ Վազգեն Սարգսյանը և՛ Լևոն Տեր-Պետրոսյանը նշեցին, որ հանդիպում է տեղի ունեցել ԱԺՄ-ի հետ, որի ժամանակ նրանք զգուշացրել են կամ խոսել այդ մասին: Ասեմ, որ հանդիպում իրոք տեղի ունեցել է՝ ոչ պաշտոնական, գաղտնի, և իմ ելույթի մեջ մի երկու խոսքով կպատմեմ նաև այդ հանդիպման մասին:

Իմ նպատակը չէ հիմա մանրամասն վերլուծել Ղարաբաղի շարժման և պատերազմի պարտություններն ու հաղթանակները: Բայց, այնուամենայնիվ, պետք է գտնել պատճառը, թե ո՞նց էր, որ մենք հաղթած դուրս եկանք մինչև հիմա: Նախագահը սխալ պատասխան է տալիս դրան, որովհետև իրեն այս րոպեին ձեռնտու է այդպիսի պատասխան տալը: Նա ասում է՝ մենք հաղթեցինք, որովհետև Ադրբեջանում պառակտում կար: **Ո՛չ: Մենք հաղթում էինք, և մեր հաղթանակների պատճառով Ադրբեջանում առաջանում էին պառակտումներ, և փոփոխվում էին հանրապետության նախագահները: Շուշիից և Լաչինից հետո փոխվեց Մութալիբովը, Քելբաջարից, Մարտակերտից և Աղդամից հետո փոխվեց Էլչիբեյը:**

Իր ասածով նա լուծում էր այդ րոպեի խնդիրը, բայց դա նվաստացուցիչ էր մեր ժողովրդի համար, որովհետև ժողովուրդն է հաղթել: Մեր հաղթանակով մենք պարտական ենք մեր ժողովրդին, մեր ֆիդայիներին, մեր զինվորներին, մեր այն սպայական կազմին, որ հիմա ծառայում է մեր բանակում և Ղարաբաղում, այն կազմակերպական աշխատանքին, որ կատարվեց Հայաստանի բանակում և Ղարաբաղի ղեկավարության կողմից Ղարաբաղում: Եվ ամենակարևորն այն է, որ բանակի առջև և՛ Ղարաբաղում, և՛ Հայաստանում խնդիր դրվեց՝ հաղթել: Հնարավոր չէ հաղթել, եթե չի դրված այդպիսի խնդիր: Մենք դեռ չենք հիշում, որ հանրապետության նախագահը մեր ժողովրդի առջև, կառավարության առջև կամ իր առջև որևիցե խնդիր դնի: Ասում է միայն՝ կանենք այն, ինչ հնարավոր է: Ունենալով այսպիսի զինվորականություն, սպայական կազմ, այսպիսի ժողովուրդ, մենք էլի կարող էինք պարտվել, եթե դրված չլինեին ռազմական խնդիրներ: Մեր այս հաղթանակը հարյուրավոր ու հազարավոր զոհեր պահանջեց: Ջոհվեցին շարժման մասնակից տղաներ, որոնցից շատերին մենք ճանաչում էինք և՛ դեմքերով, և՛ անուններով:

Շարժման օրերին մեզ համար անընդունելի է եղել պատերազմի միտքը: Մենք միշտ խուսափել ենք պատերազմի մեջ ներքաշվելուց: Մեզ պարտադրեցին պատերազմ, և մենք հաղթեցինք: Եվ այն պարզաբանումը, թե Ադրբեջանը երկու անգամ մեծ է կամ այսքան զենք ունի, բոլորը դատարկ խոսակցություններ են: Ազգային քաղաքականության մեջ թվաբանությունն անզոր է: Բարձրագույն մաթեմատիկան է գործում, բայց շատերն էլ ծանոթ չեն այդ գիտությանը: Առաջին հայացքից թվում էր, որ հաղթանակների շնորհիվ կհասնենք խաղաղության: Այնուամենայնիվ, ի՞նչ նպատակ ունեինք մենք Ղարաբաղի հարցում: Ղարաբաղի ժողովուրդը դուրս էր եկել ազգային ազատագրական պայքարի, մեր նպատակն

էր, որ նա հաղթանակ տանի, և խաղաղություն տիրի: Խաղաղություն ոչ թե ամեն գնով, այլ ազգային հարցը լուծելու շնորհիվ: Եվ թվում էր, նորից կրկնում եմ, որ հաղթանակներից հետո Ադրբեջանի ժողովուրդը կհաշտվի այն մտքի հետ, որ Ղարաբաղն իր համար արդեն կորած է, կստորագրի պայմանագիր, և դրանից հետո Ղարաբաղը, Հայաստանը և Ադրբեջանը կանցնեն խաղաղ շինարարության, կանցնեն իրենց ժողովուրդների հարցերի լուծմանը: Ցավոք սրտի, դա տեղի չունեցավ: Ես գտնում եմ, որ իրական խաղաղությունը, ինչքան էլ դրսից ուժեր գան ու արանքում կանգնեն, կարող է լինել միայն այն դեպքում, երբ կամ հայերը հաշտվեն այն մտքի հետ, որ Ղարաբաղը իրենցը չի, կամ՝ Ադրբեջանցիք: Բնական է, որ մեր ժողովուրդը երբեք չի հաշտվի, մանավանդ հաղթանակներից հետո: Ադրբեջանի ժողովուրդը, իմ կարծիքով, մոտ էր այդ մտքին, եթե կողքից, ուրիշ երկրների կողմից չխրախուսվեր, որ այդ իրավիճակը կարելի է փոխել:

Հիմա ի՞նչ վիճակ է տիրում: Բանակցություններ են վարվում: Ես մանրամասն այդ բանակցություններին չեմ անդրադառնա, բայց ուզում եմ ասել, որ անընդունելի կլինի ցանկացած փոփոխություն, որտեղ չհշվի Ղարաբաղի անկախության կարգավիճակը: Եթե այդպիսի փաստաթուղթ չլինի, դա ուղղակի պատերազմի հետածգում է նշանակում: Տա Աստված, որ հնարավոր լինի խաղաղ բանակցությունների միջոցով հարցը լուծել: Բայց ամենայն հավանականությամբ դա չի լինի: Այդ դեպքում պատերազմը, ցավոք սրտի, կշարունակվի, բայց թերևս ուրիշ բնույթ կրի: Մենք մի անգամ այդ մասին խոսելիս օգտագործեցինք Իսրայել բառը: Լևոն Տեր-Պետրոսյանը վարպետորեն և միտումնավոր հակառակ ձևով ներկայացրեց: Ի՞նչը նկատի ունեի ես, երբ ասում էի, որ պատերազմը նմանվում է Իսրայելին: Նկատի ունեի անընդհատ պատերազմական վիճակ: Իսրայելի պատերազմն այդպիսին էր. լինում էր 6 օր պատերազմ, մի քանի տարի խաղաղություն, մի ամիս պատերազմ, մի քանի ամիս խաղաղություն: Դա մեր ուզածը չէ: Բայց, ցավոք սրտի, մեզ կարող է պարտադրվել այդպիսի սցենար, և մենք պետք է պատրաստ լինենք նաև դրան: Իսկ այդպիսի սցենարի պատրաստ լինելու համար պետք է ունենանք հզոր բանակ:

Ինքնախաբեությամբ չզբաղվենք: Հնարավոր չէ թույլ պետությունով ունենալ ուժեղ բանակ: Բանակ, որը հիմնված է միայն տղաների անձնազոհության վրա, այդ բանակը երկար ժամանակ հաղթանակներ տանել չի կարող, եթե իր մեջքին չունենա հզոր պետություն: Հզոր ասելով՝ ես ի նկատի չունեմ միայն տնտեսապես: Դա ակնհայտ է: Բայց ես ասում եմ, եթե պետությունում թալան է, թալանը մտնում է նաև բանակ: Բանակը պետության շարունակությունն է, մեր հասարակության շարունակությունը: Եթե այսօր հասարակության մեջ տիրում է անբարոյականություն և ցինիզմ, ապա շուտ թե ուշ այդ հիվանդությունները կտարածվեն նաև բանակում: Եթե հասարակությունում կաշառակերություն է տիրում, ապա այդ ախտը կներխուժի նաև բանակ՝ քայքայելով այն: Այսպիսով, հետագայում բանակի ուժեղացման մասին խոսելով մենք պետք է խոսենք բացառապես պետության ուժեղացման մասին: Այս առիթով ես նույնպես ուզում եմ նշել. երբեմն մեր ժողովրդին հուշում են, թե հաղթանակները եղան, որովհետև Ռուսաստանը մեզ օգնեց: Ես ուզում եմ այդ հարցին բացահայտ պատասխանել: Այն ժամանակ Ռուսաստանի գնահատականը հետևյալն էր: Քաղաքական տեսակետից Ռուսաստանը մեզ հետ էր: Իր գնահատականով Ադրբեջանի բանակն Անդրկովկասում ամենահզոր բանակն էր, երկրորդ տեղը Հայաստանն էր, Վրաստանը բանակ չուներ: **Այն գործողությունները, որ կատարվեցին ռազմաճակատում՝ Քելբաջարում, անսպասելի էր ինչպես Ադրբեջանի համար, այնպես էլ Ռուսաստանի: Մենք հաղթել ենք մեր զինվորների արյան գնով, մեր ուժով ենք հաղթել. հիշեք այդ բանը: Եվ ձեր սիրտը թող լցվի հպարտությամբ:**

Երբ մենք ապացուցեցինք, որ ուժեղ ենք, մեզ հետ սկսեցին հաշվի նստել: Եթե դու քեզանից ուժ չես ներկայացնում, քեզ կարող են խղճալ, ողորմություն տալ, բայց դու գործընկեր չես: Հիմա վերադառնանք այն հանգամանքին, որ անընդհատ նշվում է՝ էլչիբեյի և Գամսախուրդիայի տարբերակը[2], թե ինչու՞ Հայաստանում տեղի չունեցավ, Վրաստանում և Ադրբեջանում տեղի ունեցավ, և վերագրվում է մեր իշխանություններին, թե իբր նրանք ամեն ինչ արեցին, որ Հայաստանում այդպիսի բան տեղի չունենա: Որ Հայաստանում այդպիսի բան տեղի չունեցավ, ունի բազմաթիվ պատճառներ, բայց ես հիմա ասեմ կարևորագույնը: Ի տարբերություն Հայաստանի, և՛ Ադրբեջանը, և՛ Վրաստանը, եթե ոչ իրավաբանորեն, ապա փաստացիորեն ֆեդերատիվ պետություններ էին, որոնց մեջ կային ազգային

փոքրամասնություններ, անկլավներ: Եվ այն ազատագրական շարժումը, որ սկսվեց ամբողջ սոցիալիստական ճամբարում, Խորհրդային Միությունում, եկավ հասավ այդ փոքրաթիվ ժողովուրդներին, որոնք սկսեցին ազատագրական պայքար մղել: Ադրբեջանի և Վրաստանի իշխանությունները փորձեցին ռազմական ձևով լուծել հարցը, սկսեցին կրել պարտություններ, և նրանց ներսում տեղի ունեցան հեղաշրջումներ: Դա էր հիմնական պատճառը, այդ տեսակետից մենք էապես տարբերվում ենք նրանցից: Բայց մեծ նշանակություն ունի նաև մեր ժողովրդի յուրահատկությունը: Մեր ժողովուրդը թույլ չի տա այդպիսի բան: Ես չգիտեմ՝ ինչ ծայրահեղ վիճակ պետք է լինի, որ ժողովուրդը գնա այդ քայլին: Երկրորդը՝ մեր քաղաքական այն կազմակերպությունները և գործիչները, որոնք ի վիճակի էին այդպիսի բան անել, իրենց երբեք թույլ չեն տա, խոհեմություն կցուցաբերեն: Եվ երրորդ՝ մենք իշխանության եկանք, այնուամենայնիվ, որոշակի ծրագրերով: Այդ ծրագիրը նշված է «Գնացքից թռչելու ժամանակը» հոդվածաշարում, և այնտեղ ասված է, որ մեր առաջին թշնամին ներքին զինված ջոկատներն են: Ոչ թե այն տղաները, որոնք այդ ջոկատների մեջ են: Բայց Հայաստանի համար ամենամեծ վտանգը ներկայացնում էին իշխանություններից դուրս գտնվող ջոկատները, որոնք կարող էին ընկնել այս կամ այն ազդեցության տալ և փորձել ինքնուրույն լուծել քաղաքական հարցերը: Մեր իշխանության գալու առաջին րոպեից իսկ սկսեցինք պայքարել նման ջոկատների դեմ: Ջինաթափվեց ՀԱԲ-ը, ձերբակալվեց Սարի թաղի Վրեժը, և այդպես շարունակաբար ամբողջ Հայաստանում: Այս կազմակերպություններում անձնազոհ, ազգային տղաներ էին: Նրանք ազգի թշնամիներ չէին: Խոսքը կազմակերպվածության մասին է, կազմակերպությունների, որոնք չէին ենթարկվում պետությանը: Եվ հիմա այդ նույն տղաները գտնվում են կառույցների մեջ և արիաբար կռվում են ռազմաճակատներում: Այդ գործը սկսվեց, հերթը հասավ հանցավոր կազմակերպություններին, որոնք զբաղված էին թալանով և ռեկետով, և հիմա Հայաստանում փաստորեն այդպիսի ուժ գրեթե չկա:

Այսպիսով, բացի հիմնական պատճառից, կային այս երեք պատճառները, որոնք զուսպ պահեցին մեր հանրապետության ներքին կյանքը, և որը խախտվեց միայն պարտությունների ժամանակ, երբ մենք մեծ պարտություններ կրեցինք՝ թողնելով Շահումյանը, Մարդակերտը, Մարտունաշենը: Եվ ես ասեմ, որ այն ժամանակ ստեղծված այդ շարժումը, դաշինքը (խոսքը Ազգային դաշինքի մասին է–«Ա») մեծ դեր խաղաց հետագայում ռազմական իրավիճակը շտկելու գործում: Եվ անձնականն էլ ասեմ: Երբ ես պաշտպանության նախարար էի, անընդհատ զգում էի այդ կուսակցությունների շունչը իմ հետևում՝ և՛ ԱԻՄ-ի, և՛ Դաշնակցության, և՛ Հանրապետական: Հայրենիքի պաշտպանությունը բոլորի գործն է: Ոչ մեկն այստեղ խաղ չէր անում:

... Հիմա առաջ գնա՞լ ռազմական տեսակետից. նոր ռազմական հաղթանակները ոչինչ չեն ավելացնի մեր քաղաքական հարցերին: Պետք է շարունակել բանակցությունները, բայց պատրաստ լինել վատ սցենարի: Վատ սցենարը պարբերական պատերազմն է, ոչ թե անընդհատ պատերազմը: Դրա համար պետք է ունենալ ուժեղ պետություն, ուժեղ բանակ:

Էլչիբեյին և Գամսախուրդիային ես մի անգամ էլ եմ ուզում անդրադառնալ, որովհետև երբեմն հետևյալ հարցն էլ է արծարծվում: Երբ մենք գրավեցինք Շուշին, դա պատմական մեծ հաղթանակ էր մեր ժողովրդի համար, և մենք, փաստորեն, չնշեցինք դա: Այն տարիներին, երբ Բրազիլիայի հավաքականը ֆուտբոլում առաջնությունը շահում էր, Բրազիլիայի ազգային եկամուտը մեծ թռիչք էր ունենում: Այսինքն՝ ոգևորությունը նպաստում է և՛ տնտեսության զարգացմանը, և՛ գիտության զարգացմանը, և՛ ամեն ինչին: Օրինակ են բերում, թե էլչիբեյն ու Գամսախուրդիան իրենց ժողովուրդներին ոգևորում էին, տեսա՞ք, ինչով վերջացավ: Այո, ոգևորում էին: Ճիշտ քաղաքական գործիչներ չէին, ճիշտ չէին ոգևորում: Իսկ ինչու չի բերվում Չերչիլի օրինակը, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կարողանում էր համախմբել իր ժողովրդին, ինչու՞ չի բերվում Դը Գոլի օրինակը, Մարգրետ Թետչերի օրինակը: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհում այդպես է: Իհարկե, մտածել, որ ժողովուրդը միշտ ոգևորված լինի, մոլորություն է: Բայց ամեն առիթ օգտագործել, որպեսզի ժողովուրդը ոգևորվի, իսկ սովորական կյանքում ոգևորության մի փոքր ֆոն բոլոր պետություններում կա և՛ Ամերիկայում, և՛ Ֆրանսիայում, և՛ Գերմանիայում: **Առանց ոգևորության՝ ոչ մի աշխատանք առաջ չի գնա: Երրորդ հանրահավաքի ժամանակ այստեղ հավաքված էին և՛ հանցավոր աշխարհի ներկայացուցիչներ, և՛, ցավոք սրտի, զինվորներ, որոնց ուղարկել էին: Մենք դա**

համարում ենք անթույլատրելի: Սրանից 1,5 տարի առաջ, երբ Պարույր Հայրիկյանը մեծ հանրահավաք կազմակերպեց, և եկան ու շրջապատեցին նախագահի դղյակը, Անվտանգության խորհրդի նիստ էր, ես էլ էի մասնակցում: Որոշում ընդունվեց փաստաթուղթ գրել, մատ թափ տալ հավաքված ժողովրդի վրա: Պետք է ստորագրեին ներքին գործերի նախարարը, ԿԳԲ-ի պետը և պաշտպանության նախարարը: Եվ ասացին՝ հինգ րոպեում հրաժարական ես տալու և դուրս գալու, եթե չես ստորագրում: Ես հարցը դրեցի այսպես՝ նախագահները գալու ու գնալու են, պաշտպանության նախարարները գալու ու գնալու են, բանակը մնալու է, բանակը հայրենիքի պաշտպանության համար է: Եվ բոլոր հավաքներում, որ տեղի են ունեցել մեր սպայական կազմի հետ, ես միշտ ասել եմ նույնը. բանակը իրավունք չունի հեղաշրջում անելու, բանակը իրավունք չունի ենթարկվելու իշխանություններին, եթե նրանք ուղղվում են ժողովրդի դեմ: Այս երկու բանից բանակը պիտի մի կողմ կանգնած լինի, երբ նա օգտագործվում է սեփական իշխանությունը պահելու համար:

Հաջորդ հարցը, որ միշտ կիրարկվում է, Ղարաբաղի հարցն է: Հիշենք այն հայտնի ելույթը, որ Լևոն Տեր-Պետրոսյանն ունեցավ Դաշնակցության դեմ: Այդ ամբողջ ելույթի մեջ անընդհատ նշվում էր, թե, ժողովո՛րդ, դու ապրում ես վատ, որովհետև Ղարաբաղում պատերազմ է, որովհետև Ղարաբաղի ժողովուրդն ուզում է իր անկախությունը պահպանել: Այսինքն՝ սեպ էր խրվում Ղարաբաղի ժողովրդի և Հայաստանի ժողովրդի միջև: Երկրորդ անգամ, Պարույրի հանրահավաքներից հետո, երբ ես չստորագրեցի այդ փաստաթուղթը, պարտադրեցին, Սերժ Սարգսյանը հեռուստացույցով ելույթ ունեցավ և Ղարաբաղի կողմից սպառնաց ժողովրդին, որ եթե դուք չհանդարտվեք, ապա մենք կխառնվենք: **Երրորդ անգամ դա արեց Լևոն Տեր-Պետրոսյանն իր վերջին ելույթում: Չի՛ կարելի կարճատև, փոքր խնդիրներ լուծելու համար զոհաբերել մեր ազգային մեծ արժեքները: Այդ ամեն ինչի մասին խոսվել է այն հանդիպման ժամանակ, որի մասին ձեզ ասացի:** Երրորդ հանրահավաքից հետո ես զանգեցի Ղարաբաղ՝ Ռոբերտ Քոչարյանին, հայտնեցի իմ անհանգստությունը իրավիճակից, որ զինվորներն օգտագործվում են այսպիսի հանրահավաքները ճնշելու համար: Նա անհանգստացած էր. հանրապետությունում վիճակի ապակայունացումը կարող էր այս կամ այն ձևով ազդել Ղարաբաղի պատերազմական վիճակի վրա: Ես ասացի, որ երկու շաբաթը մեկ արված հանրահավաքները այդպիսի դեր կատարել չեն կարող, Բաքվին խրախուսել չեն կարող, մանավանդ որ Բաքվում շատ լավ գիտեն, թե ովքեր են կազմակերպում հանրահավաքները: Դա իրենց շանս չի տալիս: Բայց Քոչարյանն ասաց, թե իրեն անհանգստացնում է ուրիշ բան: Եթե երկու կողմից մեկն ու մեկը՝ մենք կամ իշխանությունները, ընդունեն սխալ որոշում կամ սխալ մտադրություն ենթադրեն դիմացինի մեջ, ընկնեն հիստերիկայի մեջ, ապա հանրապետությունում կարող է իսկապես ապակայունացում տեղի ունենալ : Ես ասացի՝ մեր կողմի համար ես լրիվ վստահ եմ, բայց վստահ չեմ իշխանությունների հարցում: Ռոբերտ Քոչարյանը խորհուրդ տվեց հանդիպել և խոսել Վազգեն Սարգսյանի հետ: Մի քանի օրից հետո ինձ զանգեց Վազգեն Սարգսյանը և ասաց, որ ուզում են հանդիպել ինքը, պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, Ղարաբաղի զորքերի գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանը: Մենք հանդիպեցինք «Արցախ» կոմիտեում: Ես շարադրեցի բոլոր այն մտքերը պատերազմի և խաղաղության մասին, որ հաղորդեցի ձեզ, ասացի, որ եթե իսկապես Հայաստանում խառնաշփոթ լինի, առավելագույնս բանակի կողմից կարող է լինել, բայց ոչ ժողովրդի անկարգության պատճառով: Հանդիպումը եղել է գաղտնի, բայց ոչ պաշտոնական զրույց, և ես չէի կարծում, որ նախագահը կամ Վազգեն Սարգսյանը կօգտագործեն մեր զրույցը: Բայց ես ձեզ հիմա պատմեցի, թե ինչ է տեղի ունեցել այդ հանդիպման ժամանակ:

Այնուամենայնիվ հարց է առաջանում՝ այս հանրահավաքները ինչ նպատակ են հետապնդում: Տարբեր մարդիկ տարբեր մտադրություններ ունեն մեր դեմ, և ասում են՝ իրենք այս են ուզում, և սկսում են քննադատել: Ես պարզ ասեմ, մենք հետապնդում ենք 4 նպատակ:

Նպատակ համար առաջին. հանրապետությունում ստեղծվել էր մի այնպիսի վիճակ, որ ժողովրդին հուշում էր, թե իշխանությունների դեմ խաղ չկա: Դե, ասենք, ամեն մեկդ ձեր տանը նստեք, վեր ընկեք տեղներդ, մենք կանենք ինչ որ պետք է, կվայելեք: Մեր դեմ խաղ չկա: Եվ ժողովուրդը, մենակ մնալով, չզգալով իր ուսին իր հարևանի, բարեկամի, իր ազգակցի ուսը,

ընկճվում էր: Եվ պետք էր մի ուժ, որ հավաքեր նրան, ասեր՝ ո՛չ: Ամբողջ աշխարհում միակ ուժը, որի դեմ խաղ չկա, ժողովուրդն է:

Հասա՞նք այդ նպատակին: Ես ասում եմ՝ ոչ լիովին, որովհետև, այնուամենայնիվ, այստեղ հավաքվածները ամբողջ ժողովուրդը չեն: Դե, բնական է, հնարավոր էլ չէ ամբողջ ժողովուրդին հավաքել: Բայց տեղաշարժեր արդեն զգացվում են մարդկանց հոգեբանության մեջ: Մարդիկ զգում են, որ ինչ-որ բան կարելի է փոխել, և արդեն մտածում են այդ ուղղությամբ՝ ի՞նչ է պետք փոխել և ո՞նց է պետք փոխել:

Երկրորդ. կլինի այս իշխանությունը, թե կփոխվի, իշխանություններին պետք է պարտադրել որոշ հարցեր, որ նա լուծի ժողովրդի համար: Շավարշ Քոչարյանը մանրամասն բացատրեց, շատ հարցեր, որ հիմա ստորագրվում են, սրանից մեկուկես տարի առաջ ասվել են: Դա կոչվում է կոնստրուկտիվ ընդդիմություն, երբ որ դու մի բան ասում ես, հետո մեկուկես տարի անց հանրահավաք ես անցկացնում և դա ստորագրում: Այսինքն՝ այս հանրահավաքները նաև ճնշման ձև են: Օրինական ճնշման ձև են՝ լուծելու մեր ժողովրդի կենցաղի և ազգային նպատակների հարցերը:

Երրորդ. ժողովրդի կամքը կարող է արտահայտվել ընտրությունների միջոցով: Շուտով ընտրություններ են լինելու՝ և՛ պառլամենտի, և՛ նախագահի: Այս պայմաններով եթե շարունակենք մեր ընթացքը, ժողովուրդը չի գնա ընտրությունների (եթե գնա էլ, մեկ է, արդյունքները լրիվ կեղծվելու են): Դա բացահայտ երևում է: Ոստիկանական մեքենան թույլ չի տա, որպեսզի ժողովուրդն իր կամքը արտահայտի:

Չորրորդ նպատակն այն է, ինչի մասին մենք բազմիցս ասել ենք: Միգուցե վաղաժամ ընտրություններ՝ և՛ նախագահի, և՛ Գերագույն խորհրդի: Համաձայնության կառավարություն և այլն, և այլն: Բայց այս նպատակներին կարելի է հասնել միայն մի դեպքում: Միգուցե մենք՝ այստեղ հավաքվածներս, գտնում ենք, որ դա ճիշտ է, բայց ժողովուրդը գտնում է, որ ճիշտ չէ: Ուստի պետք է իմանանք ժողովրդի կարծիքը, որը կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ և՛ հանրահավաքներով, և՛ կոլեկտիվների որոշումներով, և՛ ժողովներով, և՛ հանրաքվեով: Դրանից հետո այս հարցերը պետք է լուծվեն օրինական ճանապարհով: Այսինքն՝ պառլամենտի միջոցով: Ուրեմն ժողովուրդը պետք է ազդի պառլամենտի վրա և, բացի դրանից, խորհրդարանում ներկայացված կուսակցությունները կարողանան համախմբվել այդ ծրագրի շուրջը: Ուրեմն մեր առաջին երեք նպատակները մենք իրագործում ենք բոլոր դեպքերում, չորրորդ նպատակը կախված է ժողովրդից և մյուս կուսակցություններից: Բայց մենք լի ենք վճռականությամբ՝ մինչև վերջ գնալ այս ճանապարհով: Ես ասեմ, որ իշխանությունները միշտ, արդեն որերորդ անգամ է, կատարում են նույնը: Իրենք ասում են՝ դու գնա առաջ, գնացքի պես սլացիր առաջ, մենք էլ գնացքի պես կսլանանք քո դիմացից: Բախում որ եղավ, ժողովրդի համար վատ է: Դու ժողովրդի մասին մտածում ես, ազգի մասին մտածում ես, դե շեղվիր: Այնպես է ստացվում, որ իրենք չեն մտածում: Ես ասեմ, որ մենք գնալու ենք օրինական ճանապարհով, բայց ոչ մի ուժի միջոցով մեզ մեր ճանապարհից շեղել հնարավոր չէ:

Այնուամենայնիվ հիմա ես ուզում եմ անդրադառնալ մեր տարբեր կուսակցությունների քաղաքական նպատակներին: Ճիշտ է, ժողովուրդը դեռ քաղաքականացված չէ այն իմաստով, որ կուսակցությունները մի նոր երևույթ են մեր ժողովրդի համար: Ժողովրդի ամենաակտիվ զանգվածը երևի ներգրավված չի կուսակցությունների մեջ: Բայց մեր ժողովրդին էլ են հուզում կարևոր հարցեր՝ մեր անկախության հարցը, մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ, մեր հանրապետության կառուցվածքային հարցը: Կոպիտ ասած՝ կապիտալի՞զմ, թե՞ սոցիալիզմ: Այս բոլոր հարցերը հրատապ են, և այդ հարցերն էլ պետք է պատասխան ստանան: Մենք ձեռք բերեցինք անկախություն և, իմ կարծիքով, անկախությունը ազգային սրբություն է մեզ համար: Բայց մի բան հաշվի առեք: Անկախության գաղափարը հիմա աշխարհում ձևափոխվում է: Հպարտ, միայնակ անկախություն այլևս չի ընդունվում: Տարբեր երկրներ, զիջելով իրենց անկախության մի փոքր մասնիկ, կարողանում են համախմբվել դաշինքների մեջ և արդեն ոչ թե առանձին-առանձին, փոքր պետություններ են իրար հետ խոսում, այլ խոսում են թիմերով: Այստեղ հարց է առաջանում. Հայաստանը ո՞ր թիմի մեջ պետք է լինի: Բնական է, մենք հայացքը ենք գցում դեպի նախկին հանրապետությունները, դեպի Ռուսաստանը: Եվ այստեղ միտք է առաջանում է: Կան քաղաքական կազմակերպություններ և գործիչներ, որոնք պնդում

են, թե պետք է վերականգնել Խորհրդային Միությունը՝ հիշելով, որ այն ժամանակ գոնե կենցաղային տեսակետից մենք լավ էինք ապրում: Եվ այս միտքը ներշնչվում է մեր ժողովրդին: Ես ուզում եմ մի փոքր վերլուծել, տեսնենք, թե ինչ է մեզանից կախված, և թե ինչ է կատարվում Ռուսաստանում:

Ռուսաստանում հիմա կա երեք քաղաքական ուժ: Մի ուժը, իսկապես, ցանկանում է Խորհրդային Միության վերականգնումը: Բայց դա արդեն էլ հին Խորհրդային Միությունը չի լինի: Հին Խորհրդային Միությունը հիմնված էր կոմունիզմի, սոցիալիզմի գաղափարների վրա, որը ենթադրում է հավասարաչափ բաշխում ժողովրդի մեջ: Հիմա նրանք, ովքեր ուզում են վերականգնել Խորհրդային Միությունը, ելնում են ռուսական ազգային մտածողությունից: Այսինքն՝ մենք կլինենք՝ մի քրջոտ արվարձան, և հզոր կենտրոնը՝ Ռուսաստանը: Մեզ համար այլևս հնի վերադարձ չի լինելու: Մեզ համար դա անընդունելի է, դա չի իրականացվի, որովհետև դա ոչ հայ ժողովրդի համար է շահավետ, ոչ էլ ռուս ժողովրդի, որն ընտրել է ներքին զարգացման ուղին:

Երկրորդ ուժը, որը կա Ռուսաստանում, զբաղվում է Ռուսաստանի զարգացմամբ, բայց միևնույն ժամանակ ստրատեգիական տեսանկյունից ուզում է իր թաթի տակ պահել Անդրկովկասը, Միջին Ասիան և այլն, և այլն: Իրենց համար մեծ նշանակություն չունի՝ Հայաստանը զարգանում է, չի զարգանում, ժողովրդավարություն է, թե դիկտատուրա: Դա իրենց հոգսը չէ: Իրենց համար կարևոր է, որ Հայաստանը լինի իրենցը: Մի կարճատև դաշինքը այդ ուժի հետ կարող է օգտակար լինել՝ կապված Ղարաբաղի հարցի հետ: Բայց երկարատև դաշինքը մեզ օգուտ չի բերելու:

Բայց կա նաև երրորդ ուժը Ռուսաստանում, որը կամաց-կամաց ոտքի է ելնում, և նրանն է ապագան. Ռուսաստանի տնտեսապես զարգացում, ժողովրդավարական պետություն և դաշինք մյուս պետությունների հետ, որոնք ունեն մոտավորապես նույն կառուցվածքը, մոտավորապես նույն ազգային եկամուտը մեկ շնչի համար: Այդ տեսակետից այդպիսի դաշինք մեզ Ռուսաստանի համար պետք է: Այդ երրորդ ուժը հաղթելու է Ռուսաստանում, և պետք է արագորեն պատրաստել մեր տնտեսությունը, մեր կառույցները, որպեսզի կարողանանք նրա հետ դաշինքի մեջ մտնել: Մենք հիմա գտնվում ենք խաչմերուկում: Ինչո՞վ են պայմանավորված այս հանրահավաքները: Բացի այն չորս պատճառից, որ ես ասացի, կարևորագույնն այն է, որ մենք գտնվում ենք խաչմերուկում: **Մենք կարող ենք գնալ մի ճանապարհով և դառնալ, կներեք արտահայտությանս համար, մի քրջոտ պետություն, որտեղ գրագետ մարդը տեղ չունի, ժողովուրդը անկախ չէ, բայց մի կերպ ապրում է, արտաքուստ դեմոկրատական պետություն, որտեղ կան կուսակցություններ, որտեղ խորհրդարանում վիճում են՝ ստորակետ դնել աջ կողմից, թե ձախ, և կա մյուս ճանապարհը: Մենք մեր առջև չպետք է դնենք միայն գոյատևելը կամ սոված չլինելը, դա խնդիր չէ:** Մեր առաջին ճանապարհը ես անվանում եմ սովորական ժողովրդի ճանապարհ, երկրորդը՝ համաշխարհային ժողովրդի, երբ մրցակցության մեջ է աշխարհի մեծ պետությունների ժողովուրդների հետ և այդ մրցակցության մեջ կարողանում է առաջավոր դիրքեր գրավել: Այս պատերազմի հաղթանակներն էլ ցույց են տալիս, որ մենք արեցինք այն, ինչ որ հարյուրավոր ժողովուրդներ չէին կարող անել: Եթե ժողովրդի առջև դրվի խնդիր, ժողովուրդն այդ խնդիրները կլուծի, մենք ի վիճակի ենք այդ խնդիրները լուծել: Ես հասկանում եմ, որ իսկապես շատ դժվար է ժողովրդի համար, որն ապրում է այս անհիրավական վիճակում, սոցիալապես ճնշված, երբ ոչ մեկի աշխատավարձը չի հերիքում, որպեսզի նա նորմալ ապրի, դժվար է ժողովրդին պատմել բարձր, ամպագոռգոռ նպատակների մասին: Ես գիտեմ, որ մեր ժողովուրդը հուսահատված է: Հուսահատված չէ, սխալ բառ է: Հիասթափված է: Ես անգամ փոքր-ինչ իմ մեջ էլ եմ զգում այդ հիասթափության բարդույթը:

Մենք 70 տարի ապրում էինք Խորհրդային Միությունում, շատ հպարտ էինք մեզնով: Ասում էինք՝ մենք աշխարհի ամենախելոք ազգն ենք, ունենք Վիկտոր Համբարձումյան, Արտեմ Ալիխանյան, Տիգրան Պետրոսյան, ունենք լավագույն եկեղեցիներ, ունենք մի հզոր Սփյուռք: Խորհրդային Միությունը քանդվեց, երկաթյա վարագույրները մի կողմ նետվեցին, հարյուր հազարավոր մեր հայրենակիցները դուրս եկան, աշխարհով պտտեցին, տեսան հրաշալի կոթողներ, որ կառուցել են մյուս ժողովուրդները: Տեսան, թե ինչպես մեզ պես մարդիկ ապրում

են ազատ, հպարտ, բարեկեցիկ կյանքով: Տեսան և հիասթափվեցին, ասացին՝ նրանք մեզանից լավն են, մենք նրանցից խելոք չենք, բարձր չենք: Ոչինչ, կանցնի ժամանակ, և շատ կարճ ժամանակ, և դուք նորից կտեսնեք, որ աշխարհի լավագույն կառույցները մեր եկեղեցիներն են, որ մենք խելոք ժողովուրդ ենք, որ իրապես տարբերվում ենք շատ ու շատ ժողովուրդներից մեր միասնությամբ, մեր աշխատասիրությամբ, մեր ձեռներեցությամբ և պետք է գնանք դեպի մեր ապագան, ապագա պետության կառուցումը: ***Բոլոր հարցերը հնարավոր է լուծել, ես նորից եմ ուզում կրկնել: Պատերազմում արդեն պարտվում էին թվաբանությամբ, թուղթ ու մատիտով հաշվում էին, որ պատերազմ հնարավոր չէ: Մենք հաղթեցինք: Նույն մարդիկ թուղթ ու մատիտով հիմա հաշվում են, որ հնարավոր չէ ապահովել նվազագույն զամբյուղը, հնարավոր չէ տնտեսությունը զարգացնել: Եթե մենք ունենանք իշխանություն, որը ժողովրդից է, սիրում է ժողովրդին, բանիմաց է և պատրաստ է իր շուրջը համախմբել ժողովրդին, ապա բոլոր այդ հարցերը շատ կարճ ժամանակում կարող եմ լուծվել :***

Վ.Մանուկյանի ելույթը
1994թ. օգոստոսի 12-ի հանրահավաքում
«Ասպարեզ», 1994, 20 օգոստոսի

ՀՋՈՐ ԲԱՆԱԿ ԿՈՒՆԵՆԱՆՔ ՄԻԱՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՅՑԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՄԲ

Ազգային բանակի կազմավորումը մեկ քայլանոց գործողություն չէր: Շարժման ժամանակ, երբ զինված ընդհարումներ սկսվեցին Ղարաբաղում և հանրապետության սահմանների վրա, Հայաստանում թե՛ կազմակերպված, թե՛ ինքնաբուխ կերպով առաջացան ֆիդայական երկրապահ ջոկատներ: Երբ շարժումը 1990 թվականին եկավ իշխանության, պարզ էր, որ տարբեր կազմակերպությունների ու տարբեր անհատների ենթարկվող զինված խմբերը քաղաքական լուրջ վտանգ էին ներկայացնում: Նախնական շրջանում ընդհանուր ղեկավարման կենտրոն ստեղծելու բոլոր փորձերը հաջողությամբ չպսակվեցին: Այդ ջոկատներում հիմնականում հավաքված էին հայրենասեր և ազնիվ տղաներ: Խնդիր դրվեց վերացնել ջոկատները, բայց այդ մարդկանց ներգրավել պետական կառույցներում: Այդ ժամանակ մենք Խորհրդային Միության կազմում էինք, և հայտարարել, թե ստեղծվում է հայկական բանակ, իրատեսական խնդիր չէր: Մենք գնացինք ուրիշ ճանապարհով: Ես՝ որպես վարչապետ, հրաման տվեցի ներքին գործերի նախարարությունում ստեղծել համապատասխան ստորաբաժանում, որը դարձավ ապագա բանակի սաղմը:

Երբ 1991-ի գարնանը սկսվեցին հայտնի դեպքերը Գետաշենում, Շահումյանում, Ղարաբաղում և Հայաստանի սահմաններում, պետությունը կոչ արեց, և ջոկատները վերաստեղծվեցին ու մտան միասնական շտաբի ենթակայության տակ: Նույն ժամանակ ստեղծվեց Պաշտպանության կոմիտե, որը Խորհրդային Միությունում երրորդն էր Ռուսաստանից և Ուկրաինայից հետո: Այդ վիճակը բավական երկար տևեց և շարունակվեց նաև Խորհրդային Միության փլուզումից հետո: Առաջին փուլում հաջողվեց փայլուն հաղթանակ տանել՝ Շուշին և Լաչինը: Բայց արդեն նոր խնդիրներ էին գոյանում: Խորհրդային Միության փլուզումը, Հայաստանի և Ղարաբաղի անվտանգությունը պահանջում էին հայկական հզոր բանակի ստեղծում: Մենք շատ լուրջ և զգաստացնող պարտություններ կրեցինք՝ հանձնելով Շահումյանը, Մարտակերտի մի մասը և Արծվաշենը: Եվ պարզ էր, որ ջոկատների միջոցով հնարավոր չէր պատերազմը շարունակել: Անհրաժեշտ էր բանակ:

Բանակի ստեղծման ընթացքը համընկավ իմ պաշտպանության նախարար դառնալու հետ: Ղարաբաղում ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե, Ռուսաստանից Հայաստան եկան արհեստավարժ զորավարներ և սպաներ: Ինչի՞ վրա էինք հենվում բանակը ստեղծելիս: Մենք ունեինք մարտական փորձառություն ձեռք բերած ու հայրենիքին նվիրված

փայլուն զինվորներ և խորհրդային բանակում ծառայած արհեստավարժ սպայական կազմ, որ վերադարձավ Հայրենիքին ծառայելու: Հայաստանում տեղաբաշխված խորհրդային բանակից ժառանգություն էր մնացել որոշակի քանակությամբ զենք և զինամթերք, որն անհամեմատ քիչ էր Ադրբեջանին մնացած տեխնիկայից ու զինամթերքից:

Սակայն բանակի կազմավորման գործում ամենակարևորն այն էր, թե ինչ խնդիր է դրվում բանակի առջև: Այդ փուլում, չնայած բանակցություններ էին ընթանում Հայաստանի ու Ադրբեջանի միջև, ակնհայտ է, որ Ադրբեջանը, ոգևորված Շահումյանի, Մարտակերտի ու Արծվաշենի իր հաղթանակներից, հույս ուներ, որ հարցը կլուծի ռազմական ուժով: Բանակի առջև դրվեց հետևյալ խնդիրը. Ղարաբաղի հարցը պետք է լուծվի քաղաքական ճանապարհով, բայց մինչև հակառակորդը ջախջախիչ պարտություն չկրի, լրջորեն բանակցությունների սեղան չի նստի: Հաղթանակի խնդիրը մեծ ոգևորություն առաջացրեց բանակում, և հարցի ռազմական մասը լուծվեց:

Ներքաղաքական կյանքում բանակի միջամտությունը նշանակում է, որ կամ բանակը ինքը հեղաշրջում է անում, կամ իշխանությունների հրամանով դուրս է գալիս ժողովրդի ու քաղաքական ընդդիմության դեմ: Երկու դեպքերի համար էլ բազմաթիվ պատմական օրինակներ են հայտնի, և Հայաստանում երկուսն էլ պետք է բացառվեն: Պաշտպանության նախարար լինելով՝ ես այս հարցը հստակ ձևակերպել եմ սպայական ժողովների ու տարբեր ստորաբաժանումների հետ հանդիպումների ժամանակ: Ներքաղաքական կյանքին չմիջամտելու սկզբունքը շատ մեծ գոհունակությամբ է ընկալվել բանակում: Այնուամենայնիվ հարց է ծագում. կա՞ արդյոք այդ վտանգը Հայաստանում, թե ոչ: Դրա հավանականությունը ես շատ փոքր եմ համարում:

Ինչ վերաբերում է բանակի ապագային, ապա բանակը կունենա նույն ճակատագիրը, ինչ պետական մնացած կառույցները: Բանակի ստեղծումը առանձին գործ է, բայց ստեղծելուց հետո հանդիպեցինք նույն հիմնահարցերին, որ կան մյուս նախարարություններում, մյուս կառույցներում: Այսօր արդեն հզոր բանակ ունենալու համար միայն բանակով զբաղվելը հարցը չի լուծում: **Բանակը պետության և հասարակության շարունակությունն է, և բանակի հզորացումն արդեն լուծվելու է ընդհանուր պետական կառույցի բարեփոխմամբ:**

Վազգեն Մանուկյան.
Հայաստանի նախկին վարչապետ
և պաշտպանության նախարար
«Դրոշակ», 19 հոկտեմբերի, 1994

ԵՍ ԱԶՆԻՎ ԽԱՂԻ ԿՈՂՄՆԱԿԻՑ ԵՄ

-Պատմեք, խնդրեմ, Ձեր մանկության մասին:

-Հայրս ԵՊՀ պրոֆեսոր էր: Հորս կողմից ոչ մի ազգական չունեի՝ պապիցս բացի, որին 1915թ. հորս հետ միասին հաջողվել էր փրկվել եղեռնից: Մենք շատ երջանիկ ընտանիք ունեինք, քանի որ հայրս ու մայրս ապրում էին կատարյալ համերաշխության ու ներդաշնակության մեջ, և դա փոխանցվում էր ինձ ու երեք քույրերիս: Մի խոսքով, շատ երջանիկ մանկություն եմ ունեցել:

-Վազգեն Մանուկյանի անվան շուրջ ստեղծվել է մի հետաքրքիր իմիջ, ըստ որի նա ամենահեռատես ու իմաստուն քաղաքագետն է նախկին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներից: Ինչո՞վ դա կբացատրեք:

-Այդ մասին ես չեմ դատելու: Դրանից հրաժարվելն այնքան էլ հաճելի չէ, իսկ հաստատելը՝ առավել ևս: Այնպես որ այդ հարցին ավելի լավ է չանդրադառնանք:

-Դուք ազնի՞վ մարդ եք:

-Այո, ես ինձ ազնիվ եմ համարում, և ինձ համար ազնիվ անունը աշխարհում ամեն ինչից վեր է:

-Բայց քաղաքականությունը բոլորովին էլ ամենաազնիվ ու մաքուր զբաղմունքը չէ:

-Ես չէի ասի, թե 1988 թվականից մենք զբաղվում էինք քաղաքականությամբ: Դա ավելի շուտ ազգային-ազատագրական շարժում էր: Ես ինձ ավելի շատ ազգային գործիչ էի համարում, քան քաղաքագետ: Իսկ հետո ես դարձա պետական գործիչ: Այդ երկու բնագավառներն էլ ազնվություն են ենթադրում:

Մեծ տերությունների արտաքին քաղաքականության մեջ այսօր էլ նկատվում են անբարոյականության օրինակներ: Բայց այդ գործերի մեջ ընդգրկված քաղաքական գործիչներին անիմաստ է անբարոյական համարել, քանի որ հաճախ նրանք այդպես են վարվում՝ ելնելով իրենց պետության շահերից: Իմ կարծիքով, աշխարհն աստիճանաբար հասնում է նրան, որ անազնվությունն արտաքին քաղաքականությունից կամաց–կամաց վերանում է:

Քաղաքական անբարոյականության երկրորդ տիպը քաղաքական երկպառակություններն են, որոնց նպատակը իշխանության գրավումն է: Ես չէի ուզի, որ Հայաստանում իշխի անբարոյականության այս տիպը: Ցավոք, մեր իշխանության գալուց հետո շատ շուտ սկսվեցին այդ կարգի խաղերը: Ես կարծում եմ՝ դրանք կարող էին սկսվել 10-15 տարի հետո, երբ պետությունը ոտքի կկանգներ: Ցավոք սրտի, պետք է արձանագրեմ, որ Հայաստանում պետականության հաստատման հենց սկզբից արդեն շատ էր անազնվությունը: Ես համարում եմ, որ ինքս չեմ մասնակցել այդ խաղերին, թեպետ որոշ գործեր բացատրություն են պահանջում, որովհետև երբեմն դրանք գնահատվում են ոչ այնպես, ինչպես եղել են իրականում:

Իմ կարծիքով, ցանկացած մարդ, ով իր ժողովրդի պատմության շրջադարձային պահերին ցանկանում է որևէ բանով օգտակար լինել նրան, պետք է առաջնորդվի Կանտի ասույթով. «Աստղազարդ երկինք՝ գլխիցս վերև, բարոյական օրենք՝ սրտիս մեջ»

-Դուք ի վիճակի՞ եք մի երկու զինվոր զոհել, որպեսզի վերջում շահեք խաղը:

-Այդ հարցին դժվար է վերացական պատասխան տալ: Եթե այդ զինվորները մարդիկ են, ուրեմն ինչ, զոհել մարդկա՞նց: Անգլիացիք ունեն «ազնիվ խաղ» հասկացողությունը: Ես հենց այդպիսի խաղի կողմնակից եմ:

Մեր դպրոցում երեխաների միջև գոյություն ուներ, այսպես կոչված, ազնվության կոդեքսը: Ես շատ կուզեի, որ այսօրվա քաղաքական խաղում, եթե կարելի է դա խաղ անվանել, հետևեին հենց այդ կոդեքսին:

-Ասում եմ՝ եթե մարդն ինչ-որ հետաքրքրություններ ունի, նա երջանիկ է: Ունե՞ք այնպիսի հետաքրքրություն, որը երջանկացնում է Ձեզ:

-Երևի ոչ: Ես շատ երջանիկ էի 1988թ. փետրվարին: Շարժումը դեռ նոր էր սկսվում, մենք հավաքվում էինք Իգոր Մուրադյանի մոտ, և տուն վերադառնալիս ես երջանկությունից երգում էի: Ես միշտ երազել եմ այն ժամանակների մասին, երբ մեր ժողովուրդը կարթնանա և կբռնի իր ազգային սրբազան երազանքների իրականացման ուղին՝ անկախություն, Ղարաբաղյան հարց: Եվ ես կատարելապես երջանիկ էի, որ ինձ հաջողվեց տեսնել այդ ամենը և մասնակցել դրան:

Ես այսօր էլ ինձ երջանիկ եմ համարում, քանի որ այն, ինչի մասին երազել եմ պատանեկան տարիներից, իրագործվեց, ավելին, ես իմ բաժինն ունեմ այդ ամենի մեջ: Բայց այն, ինչ այսօր տեղի է ունենում Հայաստանում, միայն հիասթափեցնում է ինձ, քանի որ մենք ուզում ենք վերադարձնել կորցրած դիրքերը. իհարկե, ոչ անձնական իմաստով: Ես կարծում եմ, որ Հայաստանին աստեղային ժամ էր տրված, և մենք բաց թողեցինք այն: Այսօր պայքարն արդեն ոչ թե երջանկություն է, այլ պարտք:

-Ֆուտբոլում գոյություն ունի «վերջին հույսի ֆոլ» տերմինը. դեպի դարպասը վազող խաղացողին ցած են գցում տուգանային հրապարակում: Դուք այդպիսի միջոցների երբևէ դիմե՞լ եք:

-Ինձ վայր գցել են, ինքս՝ երբեք:

-Լինու՞մ են դեպքեր, երբ այնքան պրոբլեմ եք ունենում, որ աշխատանքից հետո չեք ուզում տուն վերադառնալ:

-Ընդհակառակը, երբ ինձ համար ծանր է լինում, ես միշտ տուն եմ ձգտում, քանի որ միայն ընտանիքումս եմ հանգստություն գտնում:

-Այդ դեպքում մի փոքր պատմեք Ձեր ընտանիքի մասին:

-Կինս նախկին ուսանողուհիս է: Մենք ծանոթացանք, երբ նոր էի սկսել համալսարանում դասավանդել: Ես ինձ շատ երջանիկ եմ զգում ընտանիքում, իսկ դա շատ կարևոր է ինձ համար: Ես գիտեմ, որ բավական է մտնեմ տուն, անմիջապես ինձ հանգիստ ու լավ եմ զգում: Երեք հրաշալի աղջիկ ունեմ: Ես ոչ միայն ցանկացած ծնողի նման սիրում եմ երեխաներիս, այլև հպարտ եմ, որ նրանք նորմալ, ազնիվ մարդիկ են մեծանում: Նրանք շատ բան են տեսել և

կարող են ինքնուրույն եզրակացություններ անել: Մեր տունը «Ղարաբաղ» կոմիտեի շտաբն էր, և աղջիկներս հնարավորություն ունեին շփվելու ամբողջ շարժման հետ: Ես գերադասում եմ, որ նրանք իրենց սեփական կարծիքն ունենան, իրենք որոշեն՝ որն է լավը և որը՝ վատը: Այդ առթիվ մի դեպք պատմեմ: Երբ 10-րդ դասարանում էի, մի անգամ միլիցիայում հայտնվեցի: Ինձ հարցաքննում էին, որպեսզի ասեմ՝ ովքեր են ընկերներս: Երբ բոլոր փորձերն ապարդյուն անցան, կանչեցին մորս, որպեսզի նա ստիպի ինձ խոսել: Սակայն մայրս մտավ սենյակ ու անմիջապես հարցրեց. «Դու հո որևէ բան չե՞ս ասել նրանց»: Ահա պատվի հենց այդպիսի կոդեքսն եմ ես ճիշտ համարել ողջ կյանքում:

-Եթե կարելի է, պատմեք գրականության, երաժշտության, գեղանկարչության մեջ Ձեր հետաքրքրությունների մասին:

-Ցանկացած երաժշտություն էլ սիրում եմ, սկսած սիմֆոնիկից, վերջացրած ժամանակակիցով: Մեծ տպավորություն է գործել ինձ վրա Սալվադոր Դալիի. նրա «Խորհրդավոր ընթրիքի» արտանկարն արդեն 20 տարի՝ է կախած է իմ սենյակում: Շատ եմ սիրում մեր հայ գրողներին, ամբողջ կյանքիս վրա անջնջելի հետք են թողել Րաֆֆու ստեղծագործությունները: Սիրում եմ նաև ռուս դասականներին՝ Չեխովին, Դոստոևսկուն, Տոլստոյին: Փոքր ժամանակ սիրում էի արկածային գրականությունը: Ցավոք սրտի, շարժման սկզբից ի վեր ինձ շատ հազվադեպ է հաջողվել գիրք կարդալ: Հաճախ դետեկտիվ ու ֆանտաստիկա եմ կարդում անջատվելու համար:

-Ինչպե՞ս եք վերբերվում կրոնին:

-Այդ հարցում գտնվում եմ իմ սերնդին հատուկ վիճակում: Աթեիստ չեմ, բայց չեմ կարող նաև հավատացյալ համարվել: Ժամանակ առ ժամանակ գնում եմ եկեղեցի, մոմ եմ վառում, աղոթում եմ: Ես գիտակցում եմ, որ ինձ համար անհասանելի ինչ-որ բան գոյություն ունի, որ կյանքը հենց այդպես չի կարող ավարտվել, որ գոյություն ունի մի ուրիշ կյանք:

-Բնութագրեք Ձեր սերունդը:

-Ընկերներիս և ինձ համար շրջադարձային էր 1965 թվականը: Այն ժամանակ ես առաջին կուրսի ուսանող էի: Ապրիլի 24-ի երթը մեր մեջ անհաղթահարելի մի ձգտում առաջացրեց. գիտակցել Հայաստանի դերը համաշխարհային պատմության մեջ, նրա ապագան: 1965-ից սկսած մեզ հետ մնացածները զարգացման մի քանի փուլ անցան: Սկզբում կարդում էինք մեր ազգի պատմությանը վերաբերող գրքեր: Հետո սկսեցինք Նիցշե ու Շոպենհաուեր կարդալ, հետաքրքրվեցինք քաղաքականությամբ ու տնտեսությամբ: Ազատության այն զգացումը, որ ունեցանք 1965 թվականին ու Խրուշչովի ժամանակ, ընդմիշտ մնաց: Մեզ հաջորդած սերունդն ավելի պրագմատիկ էր:

-Ձեզ երբեք չի՞ ջղայնացնում այն փաստը, որ Հայաստանի բնակչության 70-80%-ը ճանաչում է Վազգեն Մանուկյանին: Ընդհատակ անցնելու ցանկություն չե՞ք ունենում:

-Ժամանակ առ ժամանակ ես անցնում եմ ընդհատակ, ինչը բազմաթիվ կասկածների ու խոսակցությունների տեղիք է տալիս: Իհարկե դուրեկան է, երբ քեզ գիտեն, բայց ես շատ եմ ուզում, որ ինձ ոչ ոք չճանաչի, որ հանգիստ քայլեմ փողոցով: Ես շատ խիստ պահպանում եմ իմ անձնական կյանքը պահող սահմանը:

-Ինձ միշտ մի հարց է հետաքրքրել. 1988 թվականին դուք բոլորդ՝«Ղարաբաղ» կոմիտեի անդամներդ, մի ամբողջական ամուր խումբ էիք: Այսօր դուք «բարիկադների տարբեր կողմերում եք»: Եթե մի կողմ թողնենք քաղաքականությունը, դուք միմյանց նկատմամբ ոչ մի ընկերական զգացումներ չե՞ք պահպանել: Ես չեմ հավատա, որ դուք, Լևոն Տեր-Պետրոսյանը կամ Վանո Սիրադեղյանը միմյանց նկատմամբ երբեք նոստալգիկ զգացումներ չեք ունենում:

-Ինչ էլ որ լինի, ես՝ որպես քաղաքական գործիչ, առաջ եմ մղելու այն քաղաքականությունը, որը ճիշտ եմ համարում իմ պետության ու ժողովրդի համար: Բայց ներքին զգացումներ, իհարկե, մնացել են: Համենայն դեպս իմ մեջ դրանք կան: Դա ոչնչի չի օգնում, բայց չի էլ խանգարում:

-Այդ դեպքում պատկերացրեք, որ բացվում է Ձեր աշխատասենյակի դուռը, և ներս է մտնում հանրապետության նախագահը կամ ներքին գործերի նախարարը:Դուք կկարողանայի՞ք հանգիստ նստել ու զրուցել ոչ թե քաղաքականությունից, այլ ուղղակի, հենց այնպես:

-Ինձ թվում է՝ կկարողանայի:

-Ձեր սիրտը երբևէ կոտրե՞լ եք:
-Ոչ, այն պարզապես վիրահատել եմ:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Արա Թադևոսյանը
«Մաքսիմում», 1994, 2 նոյեմբերի

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ

Ես կարծում եմ, որ խիստ չափազանցված է վերջերս մեր հասարակության մեջ տարածված այն կարծիքը, թե մասոնությունը կամ ինչ-որ մի X կազմակերպություն է վճռում աշխարհի բոլոր հարցերը: Դա ինձ հիշեցնում է ժամանակին Արևմուտքում տարածված հեքիաթը «Մոսկվայի ձեռքի մասին»: Ինչու վերջերս մեզանում սկսեցին լրջորեն խոսել մասոնների մասին: Իմ կարծիքով, երկու պատճառ կա: Առաջին. երբ մարդը դժվար է կողմնորոշվում քաղաքականության ու տնտեսության մեջ, ձգտում է մի ունիվերսալ բացատրություն գտնել ամեն ինչի համար: Եվ երկրորդ. շատ հեշտ է համարել, որ քեզանից ոչինչ կախված չէ: Այն, որ բազմաթիվ հատուկ ծառայություններ կան, որոնք ձգտում են շատ բաների վրա ազդել, անշուշտ, բոլորին է հայտնի: Բայց համարել, թե դրանք վճռորոշ դեր են խաղում պատմական իրադարձություններում, պարզապես ծիծաղելի է:

Որքանո՞վ էր ԽՍՀՄ փլուզումը պայմանավորված ներքին պատճառներով, և որքանով էր դա արտաքին ուժերի գործունեության արգասիք: Այս հարցը հուզում է ոչ միայն մեզ՝ հայերիս, այլև նախկին Միության ողջ բնակչությանը: Այդ մասին բազմաթիվ հոդվածներ են հրապարակվել, բազմաթիվ վարկածներ, քիչ չեն նաև ճիշտ դատողությունները: Ելնելով պատմական օրինաչափություններից, կարելի է վստահաբար ասել, որ ԽՍՀՄ-ի նման կայսրությունը, բնակեցված բազմաթիվ ժողովուրդներով, յուրաքանչյուրն՝ իր հայրենիքով, իր բնակության տարածքով, որոնցից շատերը ժամանակին իրենց պետականությունն են ունեցել, վաղ թե ուշ պիտի փլուզվեր: Պատմությունը վկայում է, որ այդպիսի կայսրությունները սովորաբար փլուզվում են զինված կոնֆլիկտների ժամանակ: ԽՍՀՄ-ի փլուզումն այդ տեսակետից բացառություն է, քանի որ այն տեղի ունեցավ խաղաղ ժամանակ և բավական «պատկառելի» ձևով՝ առանց արյունահեղությունների և խոշոր ցնցումների: Այսպես թե այնպես պատմական տեսակետից ամեն ինչ տրամաբանական է:

Այս ամենում մեծ դեր խաղաց տնտեսությունը: 70-ականներին սոցիալիստական երկրներում կենսամակարդակի բարձրացման ընդհանուր հիմքի վրա՝ պայմանավորված նավթի գների բարձրացումով, նրանց տնտեսությունը սկսեց տեղապտույտ անել, և սոցիալիստական ճամբարի շատ երկրներ բարեփոխումներ արեցին: Այն ժամանակ քննարկելով այս հարցը նեղ շրջաններում՝ մենք գալիս էինք այն եզրակացության, որ բարեփոխումներն անհրաժեշտ են, թեև հղի են ազգային մեծ բռնկումներով: Փոփոխությունները այսպես թե այնպես մեծ ազատություն կբերեին, որը վաղ թե ուշ ջրի երես կհաներ ազգային հարցերը, որոնք ԽՍՀՄ-ում խորքերն էին քշված:

Եթե հետևենք փուլերին, ապա Ստալինի ժամանակ զուգահեռաբար ուժեղ տոտալիտար վարչակարգի հետ կար նաև գաղափարախոսություն, որը զսպում էր տասնյակ միլիոնավոր մարդկանց: Խրուշչովը մասամբ հրաժարվեց տոտալիտարիզմից, ավելի շատ ազատություն տվեց, բայց դարձյալ գաղափարախոսական խնդիրներ առաջ քաշեց, նպատակներ առաջադրեց հասարակությանը: Բրեժնևի օրոք կենսամակարդակը բարձրացավ, բայց սկսվեց դիրեկտորների և փոքրիկ «խաների» ցինիկ կառավարումը: Արդյունքում այն որոշումները, ցուցումները, որ գալիս էին վերևից, չէին հասնում ներքևներին, յուրաքանչյուր «խան» իր ուզածն էր անում: Մեքենան սկսեց տեղապտույտ անել: Անդրոպովը փորձեց պետությունը նորից «ունիտար» դարձնել՝ խստացնելով կարգապահությունը, բայց չկարողացավ առաջադրել հասարակության համար ընդունելի գաղափարախոսության խնդիրներ: Գորբաչովը, հրաժարվելով այդ ամենից, բռնեց բարեփոխումների ուղին: Ըստ իս, դա անհրաժեշտության թելադրանքով էր, բայց ուղին սխալ էր հաշվարկված, այն բազմաթիվ խոցելի կողմեր ուներ: Այսուհանդերձ բարեփոխումներն սկսվեցին:

Գրեթե միաժամանակ Հայաստանում սկսվեց շարժումը՝ կապված Ղարաբաղի՝ մեր ժողովրդին ամենից շատ հուզող հարցերից մեկի հետ: Այդ հարցի երևան գալը ես օրինաչափ եմ համարում, թեպետ այնպիսի տպավորություն էր ստեղծվել, թե սկզբնական շրջանում Մոսկվան էր խրախուսում: Թե դա ինչով էր պայմանավորված, ինձ համար մինչև օրս անհասկանալի է, բայց առաջին երեք պատվիրակությունները Մոսկվայից վերադարձան հուսադրված: Ղարաբաղի ժողովուրդը ոգեշնչվեց, մարդկանց թվաց, թե այդ նոր պայմաններում կարելի է խնդիրը լուծել:

Որքան էլ հիմա արտաքին սկզբնաղբյուրներ փնտրելու լինենք, բոլոր դեպքերում ղարաբաղյան հարցը ներսից էր և օրինաչափ բնույթ ուներ:

Հարկ է հիշատակել, որ ղարաբաղյան շարժման հետ, կամ նույնիսկ ավելի վաղ, Հայաստանում մի այլ շարժում էր սկսվել՝ բնապահպանական: Ընդ որում, սկզբնական շրջանում երկուսն էլ հավասարապես ձգում էին ժողովրդին, համենայն դեպս բնապահպանական հանրահավաքները պակաս զանգվածային չէին: Բայց ղարաբաղյան շարժումը «հաղթեց»:

Ոմանք համարում են, թե դա ՊԱԿ-ն էր «դեմ տվել»: Չեմ ուզում խորանալ այնտեղ, ուր ոչինչ հստակ հնարավոր չէ իմանալ, բայց, ըստ իս, դա բնական էր, եթե հաշվի առնենք մեր ժողովրդի մտածելակերպը: Նա մի երազանք է ունեցել, որի շնորհիվ, դարեր շարունակ չունենալով պետականություն, պահպանվել է որպես ազգ և գործել թե՛ հայրենիքում, թե՛ բնօրրանից դուրս: Այդ երազանքը կոչվում է Հայ դատ, որը ես և՛ նեղ իմաստով եմ հասկանում, և՛ համընդհանուր: Նեղ ըմբռնումը կապված է Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության հետ, երբ մեր նախապապերին վտարեցին իրենց տարածքներից, շատերին պարզապես բնաջնջեցին, իսկ մյուսները ցրվեցին աշխարհով մեկ: Բնական է, ժողովրդի մեջ պատմական արդարության պահանջ, կորցրածը վերադարձնելու և անգամ վրիժառության անհրաժեշտություն առաջացավ: Այդ զգացմունքները, ինչպես բաց վերք, մշտապես ապրում էին ժողովրդի հոգում: Միաժամանակ հայերի մեջ միշտ եղել է պետականության և Հայրենիքի երբեմնի հզորության վերականգնման, իբրև համաշխարհային ուժեղ ազգ պատմական թատերաբեմ վերադառնալու երազանքը: Հենց այդպես եմ ես ընկալում Հայ դատի համընդհանուր իմաստը, որը ավելի լավ է՝ անվանենք «հայկական երազանք»:

Վերադարձը պատմական ասպարեզ միշտ կապվել է անկախ պետություն ստեղծելու, ինչպես նաև կորցրած հողերը վերադարձնելու հետ: Սակայն եթե անցյալ դարերում համաշխարհային ազգի լինելությունը, հզորությունը հիմնականում պայմանավորված էին տարածքների մեծությամբ և ռազմական ուժով, ապա XXդ. վերջում, պետությունների ու ժողովուրդների մրցակցությամբ, չնվազեցնելով այդ գործոնների նշանակությունը, սկսեցին ավելի շատ կարևորվել նոր գործոններ: Մրցակցությունը տնտեսության, գիտության, նոր տեխնոլոգիաների, մշակույթի, նոր գաղափարների, բնապահպանության ոլորտներում, և այդ ամենի հիման վրա ռազմական մրցակցությանը եկավ փոխարինելու քաղաքական ազդեցության ընդլայնումը աշխարհում: Եվ առաջին դիրքեր մղվելու խնդրում որոշիչ դեր է խաղում պետության ողջ բնակչության, ժողովրդի ներգրավման աստիճանը այդ գործընթացում, ոչ թե անդադար զոհաբերությունների պահանջը մարդկանցից, այլ ընդհա-կառակը, առաջխաղացման ամեն մի քայլով ժողովրդի բարգավաճմանը նպաստել: Կարևոր է նաև, թե որքանով է արդար կառուցված այդ հասարակությունը, որքանով է այն ազատ, որքանով են մրցակցության պտուղները արդար բաշխվում հասարակությունում՝ չնվազեցնելով շուկայական, մրցակցային տնտեսության արդյունավետությունը: Ի դեպ, դա նույնպես խորհրդային կայսրության փլուզման հիմնական պատճառներից մեկն էր և երաշխիքն այն բանի, որ եթե Ռուսաստանն ուզում է համաշխարհային պետություն լինել, ապա այն քաղաքական ուժերը, որոնք մարտնչում են կայսրության վերականգնման համար, դատապարտված են ձախողման:

Եթե վերադառնանք մեր խոսակցության թեմային, ապա Ղարաբաղի հարցը հստակ արտահայտում էր և՛ պատմական արդարության վերականգնման, և՛ հայկական երազանքն իրականացնելու, և՛ Ղարաբաղի ժողովրդի ազատության հարցերը:

Ղարաբաղյան շարժումը բնավ ԽՍՀՄ-ը փլուզելու նպատակ չէր հետապնդել, թեև նման գործընթացների հնարավորությունը, անգամ անխուսափելիությունը հաշվի էր առնվում: Արտաքուստ շարժման գործիչները զգացմունքային մարդիկ էին թվում, որոնք գործադուլներ

էին կազմակերպում, զինվում էին, մասնակցում ինչ-որ ընդհարումների. թվում էր, թե ամեն ինչ քաոսային է, առանց ներքին պլանավորման: Իրականում «Ղարաբաղ» կոմիտեի գործողությունները բավականին պրագմատիկ էին, և ամբողջ շարժումը՝ քաղաքական առումով, մինչև իշխանության անցնելը կարելի է պայմանականորեն չորս փուլի բաժանել:

Առաջինը բավականին կարճատև էր, երբ ղարաբաղյան խնդիրը բնականոն ու լուծելի էր համարվում, քանզի լինելով ազատության և արդարության հարց, թեկուզև ձևականորեն, տեղավորվում էր Գորբաչովի հռչակած հասարակության վերակառուցման շրջանակներում: Միաժամանակ հարցը բարձրացրած մարդիկ փորձում էին բացատրել Մոսկվային, որ դրա լուծումը ձեռնտու է ռուսաստանյան շահերի տեսակետից, քանի որ Հայաստանը՝ որպես քրիստոնեական երկիր, Ռուսաստանի հետ վաղեմի պատմական կապեր ու տարածաշրջանում ընդհանուր հետաքրքրություններ ունենալով, նրա հենարանն է Անդրկովկասում: Բայց այն ժամանակ ունիտար պետությունում դա «չէր գործում» և չէր էլ կարող գործել:

Երբ պարզ դարձավ, որ Մոսկվան մտադիր չէ լուծելու ղարաբաղյան հարցը, սկսվեց երկրորդ փուլը: Պահանջներ առաջադրվեցին և փորձեր արվեցին, կենտրոնի վրա ճնշում գործադրելով, հարկադրել խնդիրը լուծել: Ձգտում կար Գորբաչովին ընտրության առջև կանգնեցնել՝ կամ ուժ գործադրել և այդպիսով կորցնել Արևմուտքում շահած բարենորոգչի ու ժողովրդավարի միավորները, կամ լուծել խնդիրը: Սակայն այդ փուլում պարզ դարձավ, որ Մոսկվան չի ցանկանում նախադեպ ստեղծել, որից ծայր կառնի համանման խնդիրների մի ամբողջ շղթա:

Երրորդ փուլը պայմանավորված էր այն գիտակցությամբ, որ Մոսկվան վախենում է նախադեպ ստեղծել: Հարկ էր ցույց տալ նրան, որ ղարաբաղյան խնդրի լուծումը ձգձգվելու դեպքում մենք այնպիսի կուրս կվարենք, որն ավելի մեծ վտանգ կներկայացնի Կենտրոնի համար, քան խնդրի դրական լուծմամ դեպքում ստեղծված նախադեպի վտանգն է: Մենք բռնեցինք Հայաստանի անկախության ուղին, սկսեցինք «ճոճել նավակը» օրինակ ծառայելով այլ ազգային շարժումների, մասնավորապես բալթյան երկրների համար, կապեր հաստատեցինք այդ շարժումների հետ՝ խթանելով կենտրոնախույս միտումները: Կենտրոնը պետք է որոշեր՝ այդ երկու սպառնալիքներից որն է ավելի վտանգավոր: Ես կարծում եմ, որ նրանք չկարողացան ժամանակին գնահատել երկրորդ վտանգը: Երրորդ փուլն ավարտվեց Երևան զորքեր մտցնելով և «Ղարաբաղ» կոմիտեի անդամների ձերբակալությամբ:

Չորրորդ փուլը դաշնակիցների որոնումը դարձավ: Այդպիսիք մեզ համար կարող էին լինել ժողովրդավարական շարժումները սոցիալիստական ճամբարում և ազատական-ժողովրդավարական ուժերը Արևմուտքում: Այն, ինչ արվում էր ժողովրդավարացման և ազատականացման ուղղությամբ, ինքնին կարևոր խնդիր էր, բայց դաշնակիցների որոնումն անհրաժեշտ էր և ոչ պակաս կարևոր:

Ցավոք, կոմիտեի որոշ անդամներ, ինչպես և Լևոն Տեր-Պետրոսյանը, այդպես էլ մնացին չորրորդ փուլում՝ մոռանալով վերջնական նպատակը՝ հայկական երազանքի իրականացումը: Դա շահավետ էր. խրախուսվելով որոշակի ուժերի կողմից՝ դու հայտնի ես դառնում աշխարհում, համարվում ես ընդդեմ կայսրության, հանուն ժողովրդավարության պայքարի մարտիկ:

Այս չորս փուլերի նկարագրությունն, անշուշտ, ներկայացվեց խիստ ընդհանուր գծերով և բնավ չի կարող ղարաբաղյան շարժման պատմություն լինել. այն բացառիկ խոր էր, զարմանալիորեն հարուստ իրադարձություններով ու հարյուր հազարավոր մարդկանց ստեղծագործությամբ: Տեսադաշտից, մասնավորապես, դուրս մնացին ռազմական ընդհա-րումների, զինված ջոկատների ստեղծման հիմնարար հարցերը: Ուզում եմ նշել միայն, որ դեռ 1988թ., երբ կանխատեսվում էր, որ հետագայում Հայաստանի և Ադրբեջանի միջև բանը կարող է հասնել խոշոր ռազմական գործողությունների, ես հանձնարարեցի փորձագետներին վերլուծել զինված հակամարտության իրավիճակը և հնարավոր արդյունքները: Եզրակացությունները մխիթարական չէին: Ուստի շուտափույթ ինքնապաշտպանության ջոկատներ ստեղծելով՝ մենք միաժամանակ անում էինք ամեն ինչ, որպեսզի խուսափենք ռազմական գործողություններից, հարցը լուծենք քաղաքական ճանապարհով: Բայց դեպքերի տրամաբանությունը, ինչպես և պետք էր սպասել, հանգեցրին նրան, որ պատերազմը մեզ

պարտադրվեց, և ինչպես միշտ, պարզվեց, որ փորձագետները սխալվում են՝ թերագնահատելով մեր ժողովրդին: Մենք հաղթեցինք:

Այդ փուլերից ո՞րն ինձ համար բեկումնային դարձավ ղարաբաղյանից առավել գլոբալ հարցերի անցնելու տեսակետից:

Սկսած 20 տարեկանից, երբ սկսել եմ քաղաքականությամբ զբաղվել, ինձ համար որոշիչ գործոն է եղել Հայ դատի գլոբալ նշանակությունը, մասնավորապես անկախ ժողովրդավարական պետության ստեղծումը, Ղարաբաղի հարցի լուծումը: Բացի դրանից, ես երբեք խնդիր չեմ դրել աշխարհի բոլոր հայերին հավաքել Հայաստանում, ընդհակառակը, համոզված եմ, որ նրանք պետք է լինեն աշխարհի տարբեր կառույցներում և այլ ազգերի հետ մրցակցելով՝ դուրս գան առաջավոր դիրքեր:

Ուստի ինձ համար երբեք մեկից մյուսին անցնելու խնդիր չի եղել. այդ բոլոր խնդիրները ես ընկալել եմ ընդհանուր համալիրով:

Երբ մենք սկսեցինք «նավակը ճոճել»՝ սպառնացող վտանգ ստեղծելով իշխանությունների համար, կտրուկ առաջ եկավ անկախության հարցը: Մի կողմ թողնենք այն, որ ես դա համարում էի ազգային գլխավոր նպատակներից մեկը: Կենտրոնում այն կարծիքին չէին, որ մեր շարժումը անկախ պետություն ստեղծելու լուրջ մտադրություններ ունի, դա համարում էին դատարկ սպառնալիք: Այնտեղ որոշակի գիտեին մեր ժողովրդի մեծ մասի կարծիքը, թե մեր շրջապատով ԽՍՀՄ կազմում լինելը մեզ պարզապես ֆիզիկական անվտանգություն է ապահովում: Որպեսզի ուժեղացնեինք ճնշումը Մոսկվայի վրա, հարկ էր ցույց տալ, որ մենք կգնանք դրան: Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու հարց առաջացավ: Բայց ժողովրդի մեծ մասի համար դա անհասկանալի էր, քանի որ մտածելակերպի հետ մեկտեղ կար նաև վախի զգացում: Շարժման թեքումը դեպի անկախություն և մանավանդ Թուրքիայի հետ կապերի միտումը որոշակի ներքին տարաձայնություններ առաջացրին կոմիտեի և մտավորականության մի հատվածի միջև, որոնք և հետագայում զգացնել տվեցին: Այն ժամանակ դա պրագմատիկ մոտեցում էր, բայց համազգային տեսանկյունից ոչ այնքան հասկանալի: Դա հայկական երազանքի իրականացման որոշակի փուլի և Հայ դատի հակասության շրջան էր:

Ես այնքան էլ համաձայն չեմ, որ Հայաստանում երբևէ լուրջ հակառուսական տրամադրություններ են եղել: Մյուս հանրապետությունների գործընթացների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ հակառուսական տրամադրությունները մեզանում նվազագույնն էին, համեմատեք Մերձբալթիկայի կամ Վրաստանի հետ: Եվ եթե ասում ենք, որ Հայաստանում պետական լեզուն հայերենն է, որ հայ երեխաները պետք է հայկական դպրոցում սովորեն, ապա դա միանգամայն բնական ու օրինաչափ է: Ես հիմա էլ եմ այդպես մտածում, սակայն դրա մեջ ոչ մի հակառուսական բան չկա, ինչպես որ հակառուսական ոչինչ չկա անկախ պետություն ստեղծելու ձգտման մեջ: Թեև չի կարելի չխոստովանել, որ ռուսատյացության որոշ տարրեր Հայաստանում այնուամենայնիվ եղել են, սակայն շարժումն ինքնին երբեք հակառուսական ուղղվածություն չի ունեցել, այլ հարց է, որ այն ուղղված է եղել Կենտրոնի դեմ: Չի կարելի դրանք շփոթել: Կարելի է հիշել «Գնացքից թռչելու ժամանակն է» հայտնի հոդվածաշարը, որը որոշակի մի փուլում ծրագրային էր շարժման համար: Ցավոք, շատերը միայն վերնագրով են դատում՝ չխորանալով բովանդակության մեջ: Հոդվածում իրադարձությունների հնարավոր տարբերակների վերլուծությունը հանգեցրել է այն եզրակացության, որ անկախ և ժողովրդավարական Հայաստանի ու Ռուսաստանի լինելության անխուսափելիությունը կարող է հանգեցնել շահերի համընկմանը ընդհուպ մինչև ռուսական ռազմական բազաների տեղադրումը Հայաստանի տարածքում:

Ինչ վերաբերում է շարժման որոշակի հակակոմունիստական ուղղվածությանը, ապա բնական է, շարժման նպատակները հակասում էին կոմունիստական գաղափարախոսությանը: Սակայն այն շրջանում, երբ Կենտրոնը զանգվածային հարձակում սկսեց շարժման դեմ, և հասկանալի էր, որ կոմունիզմը՝ որպես գաղափարախոսություն և ինքը՝ կուսակցությունը, հեռանում են պատմության ասպարեզից. ես կողմնակից չէի հակակոմունիզմի ճանապարհով հասարակությունում առճակատման խորացմանը: Ընդհակառակը, ազգային խնդիրների լուծումը ազգային միասնություն էր պահանջում, և կոմունիզմի դեմ պայքարը՝ որպես գաղափարախոսություն և հասարակությունը կազմակերպող ուժ, չէր կարելի վերածել պայքարի այն մարդկանց դեմ, ովքեր կոմկուսի անդամ էին, որոնց մեծ մասը, ի դեպ, չէր կրում

այն գաղափարախոսությունը, որը բռնի պարտադրված էր մեր ժողովրդին դրսից: Հատկապես հասարակության արհեստական պառակտումից խուսափելու ձգտումը, ինչպես նաև տնտեսական բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը հանգեցրին հայտնի և միարժեք չընկալվող այն հայտարարությանը, թե «մենք կուլակաթափությամբ չենք զբաղվելու»: Դա բոլոր մեղքերի թողության գիր չէր, ավելի շուտ՝ ապագան անցյալին չզոհաբերելու ցանկություն: Իսկ մեղքերով պետք է զբաղվեն ոչ թե քաղաքական գործիչները, այլ իրավապահ կառույցները: Հարցի մյուս կողմն էլ կա: «Ղարաբաղ» կոմիտեի ազդեցությունը ժողովրդի վրա, անշուշտ, մեծ էր: Բայց թերևս ավելի մեծ էր Կենտրոնական հեռուստատեսության ազդեցությունը, որն այն ժամանակ հակակոմունիզմ էր քարոզում, կոսմոպոլիտական ժողովրդավարություն և ազատականություն: Հիշենք այն ժամանակվա տրամադրությունները հատկապես լյումպենացված զանգվածներում. պայքարել կոմունիստների դեմ, բնաջնջել նրանց, բռնագրավել ունեցվածքը և այլն: Ինձ մասամբ հաջողվեց մեղմել այդ հարվածը, բայց վերջին հաշվով «հեղափոխական» տրամադրությունները հաղթեցին, իմ դուրս գալուց հետո տնտեսական բարեփոխումները արգելակվեցին, մենք թանկագին ժամանակ կորցրինք, իսկ հիմա փորձում ենք վերստին կենդանացնել այդ գործընթացը, բայց ավելի անբարենպաստ պայմաններում:

Ոմանք պնդում են, որ հատկապես իմ վարչապետ եղած ժամանակ սկսեցին ձևավորվել մաֆիոզ կառույցները: Ես կտրականապես մերժում եմ այդ պնդումը:

Հասարակությունը միշտ էլ «հեղափոխություններից» արագ և շոշափելի արդյունքներ է սպասում՝ հաշվի չառնելով, որ մարդիկ և կառույցները սկզբնական շրջանում նույնն են մնում: Կոռուպցիան և մաֆիոզ կառույցները գոյություն են ունեցել և 70-80-ական թթ.: Երբ մենք իշխանության եկանք, անհապաղ մասնավոր սեփականության անցնելու խնդիր առաջացավ: Ես հանձնարարել էի Հր. Բագրատյանին (այն ժամանակ էկոնոմիկայի նախարարն էր) երեք ցուցակ կազմել:

Առաջին՝ այն ձեռնարկությունները, որոնք ռազմավարական նշանակություն ունեն Հայաստանի համար, ենթակա չեն սեփականաշնորհման և կառավարվում են պետության կողմից, ընդ որում՝ բավականին խիստ մեթոդներով: Երկրորդ ցուցակում այն խոշոր գործարաններն էին, որոնք առանձին նշանակություն և հետաքրքրություն չէին ներկայացնում: Հարկ էր դրանք մասնատել մի շարք մանր ձեռնարկությունների և յուրաքանչյուրը սեփականաշնորհել: Երրորդում մանր ձեռնարկություններն էին, որոնք սկզբից ևեթ պետք է սեփականաշնորհվեին:

Կոռուպցիայի դեմ պայքարը հաջողությամբ է պսակվում այն դեպքում, երբ պետությունը որքան հնարավոր է անմիջականորեն քիչ գործառույթներ է ունենում տնտեսության կառավարման մեջ, թեև դա էլ բավարար չէ, եթե հասարակությունն իր առջև բարոյական վեհ նպատակներ չի դնում, որոնց հիման վրա էլ կատարվում է արժեքների գնահատում հասարակության շրջանում: Բայց ինչու՞ այն ժամանակ չիրականացվեց սեփականաշնորհումը: Պատասխանն ինքնըստինքյան պարզ է. դրանից կօգտվեր նախ ամբողջ ժողովուրդը, երկրորդ՝ վերակառուցման ժամանակ առաջացած կոոպերատորների դասը, և երրորդ՝ կոմունիստական նոմենկլատուրան, որը միջոցներ ուներ: Այս դասերը հետագայում ջախջախվեցին, կուլակաթափվեցին, նրանց փոխարեն նոր շերտ ստեղծվեց, որն այսօր արդեն հարստացել է ժողովրդի հաշվին: Այ, հիմա նրանք արդեն կարող են սեփականաշնորհում անցկացնել՝ սեփականությունը տալ այդ նոր դասին:

Սեփականաշնորհումը հնարավորինս արագ կատարելու իմ ցանկության պատճառներից մեկը Միության բաժանման ժամանակ Հայաստանի համար «յուղոտ պատառներ» ձեռք գցելու հնարավորությունն էր, քանի որ արդեն ունեինք պատրաստի մասնավոր կառույցներ, որոնց թիկունքում կանգնած էր պետությունը: Ցավոք սրտի, ես այն ժամանակ չհասցրեցի այդ անել: Արագ սեփականաշնորհման անհրաժեշտության երկրորդ պատճառը հետևյալն էր: Տնտեսական բարեփոխումներն անհրաժեշտ էր անցկացնել այն ժամանակ, երբ ժողովուրդը համեմատաբար բարվոք սոցիալական վիճակում էր: Բայց ակնհայտ էր, որ ժամանակի ընթացքում Միության և ընդհանուր տնտեսության միաժամանակյա փլուզման հետ տեղի կունենա նաև ժողովրդի լայն զանգվածների աղքատացում:

Կարող է հարց առաջանալ, թե մեր ինչին են պետք սեփականաշնորհումը, ազատականացումը, անցումը շուկային: Ապրում էինք էլի: Դա, ինչպես և այդ ծրագրերի

իրականացման ուղիները, առանձին խոսակցության նյութ են: Ասեմ միայն, որ շուկայական, ավելի ճիշտ, մրցակցային տնտեսությունը ավելի արդյունավետ է, քան պլանայինը: Ընդգծում եմ՝ շուկայական տնտեսության արդյունավետությունը մրցակցության մեջ է: Իսկ Հայաստանում այսօր պարադոքսալ մոդել է ստեղծվում՝ շուկա առանց մրցակցության: Ուզում եմ նշել, որ տնտեսության ազատականացման այն մոդելը, որ առաջարկում են մեզ Արևմուտքի որոշ շրջանակներ, հնարավոր է՝ բարի մտադրություններով, հաշվի չեն առնում ո՛չ տեխնիկապես զարգացած ձեռնարկությունների գոյության փաստը երկրում, ո՛չ բարձր որակավորում ունեցող հարյուր հազարավոր մասնագետներին, ո՛չ մեր ժողովրդի մտածելակերպը, ո՛չ էլ նրա բնական հավակնությունները: Այդ նախագծերի իրականացումը կհանգեցնի նրան, որ Հայաստանում 1,5 մլն մարդ կմնա, որոնք հիմնականում կզբաղվեն մանր առևտրով, արհեստներով, լոլիկ աճեցնելով ու կոշիկ կարելով:

Ի դեպ, երբ ես վարչապետ էի, կողմնակից էի արագ տնտեսական բարեփոխումների, բայց Միությունից՝ դանդաղ դուրս գալուն: Որքան երկարեին այդ գործընթացները, այնքան Հայաստանը կշահեր: Միությունից Հայաստանի դուրս գալու լավագույն տարբերակի մասին ավելի հանգամանալից կարելի է կարդալ վերոհիշյալ «Գնացքից թռչելու ժամանակն է» հոդվածաշարում: Բայց, ինչպես ասում են, մարդը ծրագրում է, Աստված՝ որոշում: Միության փլուզման խնդրում վերջնական, վճռական դեր խաղաց, իհարկե, պուտչը: Որպեսզի գնահատենք և՛ շարժումը, և՛ նրա արդյունքները, արժե վերլուծել նաև շարժման մասնակիցների դրդապատճառները: Ոմանց համար դա պայքար էր Ղարաբաղի համար, պայքար հայկական երազանքի համար: Այդ մարդկանց մեծ մասն ընդգրկվել էր ֆիդայական ջոկատներում, այնուհետև տեղափոխվել բանակի կառույցները: Նրանցից շատերը զոհվեցին ռազմաճակատում, ողջ մնացածները աստիճանաբար հեռանում են իշխանություններից՝ հիասթափվելով այն ամենից, ինչ կատարվում է հիմա:

Ոմանց համար դա պայքար էր հանուն արդար, բարգավաճող հասարակության: Նրանք բոլորն արդեն հիասթափվել են, մի կողմ են քաշվել, շատերը հեռացել են հայրենիքից:

Շատերի համար, որոնք կոմունիստական հասարակական կյանքում հաջողության չէին հասել, հիմնականում իրենց անկարողության պատճառով, շարժումը փոխհատուցման հավանականություն էր: Նրանց առաջ էին մղում վրեժի ծարավը նախկին հասարակությունում անձնական հաջողության հասած մարդկանց նկատմամբ և նորում ինչ-որ բանի հասնելու իղձը: Նրանց մեծ մասը հիմա վատթար վիճակում է, քան նախորդ հասարակությունում, շատ քչերն են հաջողության հասել: Ոմանց թույլ է տրվել օգտվելու կերակրամանից, և նրանք, լինելով այսօրվա վարչակարգի թվացյալ հենարաններից մեկը, կկրծեն յուրաքանչյուրի կոկորդը, ով հետամուտ է փոփոխությունների, հետամուտ արդարության:

Ոմանց համար շարժումը ասպարեզ էր անձնական պատվախնդրությանը հագուրդ տալու, անձնական հաջողությունների հասնելու համար՝ երբեմն նույնիսկ ռիսկի ենթարկելով այն ամենը, ինչ արդեն ունեին հասարակությունում: Նրանք հաղթեցին, և նրանց միացան մարդիկ, որոնք ընդհանուր ոչինչ չունեին շարժման հետ, մարդիկ, որոնք յուրաքանչյուր հասարակությունում կձգտեն միայն անձնական շահի և կիպ կկպչեն յուրաքանչյուր իշխանության: Եվ նրանք հիմա այժմյան վարչակարգի հիմնական հենարանն են:

Երբ մենք իշխանության եկանք, ես մնացի մեն-մենակ մի կողմից՝ ոչ ռեալ, արագ, արդար փոփոխություններ պահանջող հասարակության հետ, մյուս կողմից՝ բոլոր լծակները ձեռքն առնելու տենչանքով լի և բոլոր սողանցքները մտնելու ձգտող «տղերքի» թավալվող ալիքի հետ: Ես փորձում էի հակազդել դրան: Տեր-Պետրոսյանը, Արարքցյանը և Սիրադեղյանը հմտորեն օգտվում էին դրանից և ալիքը փոխարկեցին վիթխարի բաբանի՝ ուղղելով իմ դեմ, վարպետորեն օգտագործելով քարոզչական հնարքները, սուտն ու ճիշտը իրար խառնելով, իմ դեմ տրամադրելով շարժման մասնակիցներին: Թեև սկզբունքորեն դեմ չէին ինձ պահպանելուն. այն աշխատանքը, որ ես էի անում, նրանք երբեք չէին անի: Բայց ես չէի ուզում մնալ և օգնել այն կուրսի անցկացմանը, որը, ըստ իս, չէր նպաստելու հայկական երազանքի իրականացմանը, առավել ևս, որ ի հակակշիռ դրան մեջտեղ բերվեց «սովորական» ժողովրդի դրույթը, որը նպատակազրկելով հասարակությանը՝ հնարավորություն չի տալիս գնահատելու կատարվածը՝ արդարացնելով ամեն անգործունեություն, ամեն չարաշահում (ամեն տեղ էլ այդպես է): Դրա համար էլ հեռացա: Իսկ լռում էի, որովհետև անիմաստ էր որևէ բան

բացատրել. ժողովուրդն ինքը պիտի ամեն բանում համոզվեր: Իմ խոսքերը կարող էին ընկալվել իբրև վիրավորված ինքնասիրության պտուղներ կամ չբավարարված հավակնությունների վրեժ:

Ի՞նչ ասել է «Տեր-Պետրոսյանը անցկացնում է Մանուկյանի կուրսը»: Կոմիտեի մի նշանակալի հատվածը ձևավորված քաղաքական հայացքներ չուներ: Այո, նրանք շատ սովորեցին ինձանից, շատ բան սովորեցինք՝ փորձով: Տեր-Պետրոսյանն, անշուշտ, բավական խելոք է, բայց ես չեմ տեսել, որ նա իր գործունեության մեջ ստեղծագործական ճիրք դրսևորեր, այն դեպքում, երբ շարժումը դինամիկ էր, այն զարգանում էր և շարունակ պահանջում էր ստեղծագործել: Եվ հիմա ասել, թե Տեր-Պետրոսյանը անում է այն, ինչ ես գուցե ասել եմ ինչ-որ փուլի ժամանակ, անհեթեթություն է:

Պատասխանատվություն զգու՞մ եմ ես կատարվածի համար: Այո: Բայց ինձ մեղավոր չեմ զգում: Դա չի նշանակում, որ ես սխալներ չեմ արել: Ինչպես ամեն մարդ, ես էլ սխալներ ունեցել եմ, բայց դրանք սկզբունքային կամ չարամիտ բնույթ չունեին, ուղղելի էին, և դրանց պատճառով չէ, որ հայտնվեցինք այս դեգրադացված հասարակության մեջ: Ինչ վերաբերում է մեղքի և պատասխանատվության տարբերությանը, ապա մի պարզ օրինակ բերեմ: Ենթադրենք՝ ես ընկերներիս հետ որս եմ կազմակերպում, որի ժամանակ մեկը սպանում է մյուսին: Ես՝ որպես կազմակերպիչ, զգում եմ իմ պատասխանատվությունը, բայց ես ինձ մեղավոր չեմ համարում, քանի որ ինքս չեմ կրակել և չեմ նպաստել դրան:

Հիմա սովորույթ է դարձել ներկայիս բոլոր ձախորդությունների համար մեղադրել «Ղարաբաղ» կոմիտեին: Պիտի նշեմ, որ այն բոլոր նպատակները, որ դրել էր իր առջև շարժումը, հիմնարար բնույթ ունեին, համապատասխանում էին հայկական երազանքին, մեր ժողովրդի մտածելակերպին, համընկնում էին համաշխարհային քաղաքակրթության զարգացման ընդհանուր ուղղությանը, և շարժմանը մասնակցում էր ամբողջ ժողովուրդը: Ինչ վերաբերում է «Ղարաբաղ» կոմիտեի գործողություններին, իհարկե, սխալներ եղել են, բայց ես գտնում եմ, որ ժամանակին դա միակ քաղաքականապես գրագետ կազմակերպությունն էր հայկական իրականության մեջ, որի գործունեությունը ես՝ որպես կոմիտեի համակարգող, աշխատել եմ խարսխել քաղաքական չորս կանխադրույթների վրա:

1. Հայկական երազանքը կարելի է իրականացնել՝ լինելով աշխարհում ընթացող գործընթացների հունի մեջ:

2. Հարկավոր է ոչ թե արդարություն աղերսել այս աշխարհի հզորներից՝ խաղալիք դառնալով նրանց ձեռքին, այլ պայքարել՝ հենվելով ժողովրդի ուժերի վրա: Դաշնակիցներ այդ պայքարում միշտ կարելի է գտնել, եթե լինենք աշխարհի գործընթացների հունի մեջ:

3. Երազանքն իրականացնելու համար պետք է վարել ոչ թե ռոմանտիկ, այլ պրագմատիկ քաղաքականություն՝ հաշվի առնելով ներկայիս աշխարհի իրողությունները:

4. Պրագմատիզմը պահանջում է գործել հնարավորի սահմաններում, բայց սահմանները մեծ մասամբ ոչ ոքի հայտնի չեն, ենթակա չեն հաշվարկման, և եթե բարդ խնդիր է լուծվում, մեծ մասամբ հարկադրաբար, ապա փորձի հիման վրա պետք է համարձակվել հասնելու այդ սահմանին: Հաճախ պարզվում է, որ ենթադրվող սահմանը կարելի է հեռացնել՝ այդպիսով ընդլայնելով հնարավորի տիրույթը (այդպես, քայլ առ քայլ մենք Ղարաբաղում ռազմական հաղթանակի հասանք): Բայց այդպիսի ճանապարհը՝ ենթադրվող հնարավորի սահմանները տեղաշարժող, քաղաքական գործիչներից մեծ վարպետություն և ինտուիցիա է պահանջում, ինչպես նաև վճռականություն, հավատ և փորձառություն: Հաշվարկված հնարավորին կարող է հասնել ամեն մեկը:

Իշխանության գալով՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամների մի մասը կորցրեց հոգու երազանքը (եթե, իհարկե, ուներ), պրագմատիզմը ինքնանպատակ դարձավ և արտաքին քաղաքականությունից անցնելով ներքինին՝ շատ արագ վերածվեց կործանարար ցինիզմի, որը նեղացնելով հնարավորի տիրույթը և ավերելով շարժմանը արժանի երբեմնի մասնակիցների հոգիները, որոնք հայտնվել էին իշխանական կառույցներում, կարող է ի չիք դարձնել նույնիսկ այն նվաճումները, որոնց հասավ մեր ժողովուրդը: Քամահրական վերաբերմունք ու անվստահություն առաջացավ այն ժողովրդի ուժի հանդեպ, որը, փաստորեն, տարավ ամբողջ պայքարը նախորդ փուլում: Եվ միայն հայկական երազանքն իրականացնելու բաղձանքը չէ, այլ հատկապես պատասխանատվության զգացումն է ստիպում ինձ մնալ քաղաքական ասպարեզում, մտնել այն գործընթացների մեջ, որոնք թերևս

այնքան էլ իմ սրտով չեն: Ես ուրախ կլինեի, եթե նոր մարդիկ հայտնվեին, բայց նրանք այդպես էլ չեկան: Հայաստանում գաղափարների պայքար չկա, գաղափարական միտքը չի զարգանում, չկան նոր գաղափարներ, և մեր ազգի առաքելության ու ապագայի վերլուծություններ չեն մշակվում, ինչպես դա կատարվում է, ասենք, Ռուսաստանում: Այնտեղ շատերն են զբաղված ոչ միայն իշխանության համար պայքարով, այլև նոր գաղափարների ձևավորմամբ համաշխարհային քաղաքակրթության ապագայի և դրանում Ռուսաստանի տեղի համար: Դա իմ մեջ նախանձի զգացում է առաջացնում, որովհետև Հայաստանում, ցավոք, ես դա չեմ տեսնում:

Իսկ աշխարհը փոխվում է, փոխվում արագորեն, և եթե մենք հրաժարվենք ստեղծագործական մոտեցումից քաղաքականության և տնտեսության ոլորտներում, ապա նույնիսկ այն դեպքում, եթե փորձենք իբրև ուշիմ աշակերտ ըմբռնել այն, ինչ գրված է եվրոպական դպրոցական դասագրքերում, մենք, միևնույնն է, դարձյալ հետ ենք մնալու՝ կորցնելով մեր ապագան:

Կարելի՞ է արդյոք շտկել իրավիճակը, ստեղծել Հայաստանում քիչ թե շատ տանելի սոցիալական և իրավական պայմաններ նրա բնակչության համար: Իհարկե, կարելի է: Հիշում եմ, երբ կորցրեցինք Շահումյանն ու Մարդակերտը, մեր նախագահն առաջարկեց գնալ նվաստացնող և Ղարաբաղի ժողովրդի շահերը անտեսող ցանկացած խաղաղության, քանի որ Ադրբեջանին հաղթել հնարավոր չէ, և դրան սրտի խորքում շատերն էին համաձայն: Մի կողմ թողնենք, որ դրանից նույնիսկ պրագմատիզմի հոտ չէր գալիս, քանի որ այդ ժամանակ Ադրբեջանի համար բանակցությունները պարզապես վարագույր էին, նա համոզված էր իր անառարկելի ռազմական հաղթանակի հարցում: Բայց հաղթեցինք մենք: Այժմ պնդում են, թե ժողովրդի ներկայիս անօրինական վիճակը միմիայն օբյեկտիվ պատճառների հետևանք են: Սուտ է: Այստեղ ևս կարելի է հաղթանակի հասնել, և դրա համար ինչ-որ «տնտեսական կախարդական պլանների» հարկ չկա: Մի քիչ խելք, պարկեշտություն և անձնուրաց նվիրում ժողովրդին: Հրաշք չի լինի, միանգամից բարգավաճող երկիր չենք դառնա, բայց եթե կենսամակարդակը բարձրանա, մարդկանց մեջ հավատ առաջանա վաղվա օրվա հանդեպ, վստահություն, որ արդար հասարակություն է կառուցվում, այդ դեպքում միայն հնարավոր կլինի խոսել առավել բարդ խնդիրների մասին, որոնց լուծման համար անհրաժեշտ է հարյուր հազարավոր մարդկանց ստեղծագործական հետաքրքրություն: Բայց դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ մարդիկ համոզվեն, որ ջանքերը կնպաստեն իրենց և դրանով իսկ պետության բարգավաճմանը: Մի բանում ես համոզված եմ. համընդհանուր ազնիվ նպատակներ, համընդհանուր հավակնություններ չունեցող հասարակությունը, որի յուրաքանչյուր անդամ մտահոգված է միայն իր սեփական իրավունքներով, իր սեփական շահով, լինի դա սոցիալիստական թե իրավական ժողովրդավարական պետության պայմաններում՝ շուկայական տնտեսությամբ, դատապարտված է գորշ, անիմաստ, թերևս տանելի, սակայն և ոչ վայելուչ ապրելակերպի՝ զուրկ երջանկության զգացումից: Զարգացող քաղաքակրթության մեջ միշտ առկա է, գուցե և թույլ, բայց հավատի ու ոգեշնչման մշտական ֆոնը, որը կտրուկ խտանում է պատմության բեկման պահերին, դրան ավելանում է նաև ի վերուստ թելադրված ինչ-որ մի միսիա կատարելու զգացումը: Այդ զգացումը բնորոշ է ստեղծագործող ամեն մի անհատի և ուժ է տալիս նրան անհնարինը հնարավոր դարձնելու: Այդ ֆոնի կորստյան հետ սկսվում է հասարակության աստիճանական դեգրադացիա:

Բայց մենք մեծ բարձունքներ կհաղթահարենք, եթե հայկական երազանքը բուն դնի մեր ժողովրդի հոգու խորքում, դառնա մեր գոյության նպատակը: Եվ այդ դեպքում, ես համոզված եմ, որ մենք կրկին կվերականգնենք մեր հայրենիքի երբեմնի հզորությունը, կվերադառնանք պատմության ասպարեզ որպես համաշխարհային ազգ, կհամախմբենք ու կկազմակերպենք Սփյուռքը հանուն հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրների լուծման՝ նպաստելով նրա հզորացմանն ու բարգավաճմանը, յուրաքանչյուր երկրի սփյուռքահայ համայնքին հնարավորություն ընձեռելով զբաղվելու այն խնդիրներով, որոնք բխում են տվյալ երկրի յուրահատուկ պայմաններից: Սփյուռքի խնդիրները յուրաքանչյուր երկրում կարող են տարբեր լինել, երբեմն հակասական, բայց բոլորը միասին պետք է լինեն Հայ դատի համընդհանուր ընթացքի մեջ:

Մեր ժողովուրդը պետք է գիտակցի, որ ղարաբաղյան հարցի դրական լուծումը ապագայի բանալին է: Մեր ժողովուրդը պետք է իր առջև խնդիր դնի առաջավոր դիրքեր գրավել ժողովուրդների ու պետությունների այն մրցակցությունում, որը տեղի է ունենում միջազգային ասպարեզում տնտեսության զարգացման, գիտության ու նոր տեխնոլոգիաների ստեղծման, մշակույթի ու բնության պահպանության, թույլ զարգացած երկրների օգնության ոլորտներում՝ ավելի ընդլայնելով իր քաղաքական ազդեցությունը աշխարհում և իր լուման ներդնելով համաշխարհային քաղաքակրթության զարգացման բնագավառում:

Այդ նպատակներին հասնելու համար պետք է ոչ թե հպարտ միայնության մեջ մնալ, այլ գործուն կերպով համագործակցել մյուս ազգերի ու պետությունների հետ՝ խմբեր կազմակերպել ու մտնել դրանց մեջ: Մենք շատ հնարավորություններ ունենք, շատ դաշնակիցներ այդ խնդիրները լուծելու համար:

Այդ ամենը իրականացնելու համար մեզ անհրաժեշտ է անկախ ժողովրդավարական, իրավական պետություն՝ համաշխահային տնտեսության մեջ ներգրավվելու ունակ մրցակցային տնտեսությամբ: Պետությունը պետք է սահմանափակի ուժեղների կամայականությունները, օգնի թույլերին, հավասար պայմաններ ստեղծի յուրաքանչյուրի բարգավաճման համար: Պետությունը չպետք թույլ տա մենիշխան, մաֆիոզ խմբավորումների ստեղծումը, որոնք սահմանափակում են շուկայական մեխանիզմների գործունեությունը, միաժամանակ նպաստի հարկադրաբար Հայաստանի տարածքում մենիշխան մնացած արտադրությունների մրցունակությանը՝ իր վրա վերցնելով բարձր տեխնիկական արտադրությունների ստեղծման հոգսը, եթե անգամ դրանք սկզբնական շրջանում շահութաբեր չեն, բայց անհրաժեշտ են ազգային նպատակների համար: Ոչ թե շուկան, այլ կառավարության նպատակաուղղված գործողությունները միայն կարող են մեր երկրի տնտեսությունը շահութաբեր հավասարակշռության ցածր կետից բարձրացնել շահութաբեր հավասարակշռության ավելի բարձր կետի:

Պետք է ստեղծել պայմաններ, որպեսզի մեր պետության յուրաքանչյուր բնակիչ ապրի ազատ, հպարտ իր ազատությամբ, իր պատմությամբ, իր ազգային պատկանելությամբ, ապրի բարգավաճող, ազգային սովորություններով, ազգային ոգով ու բարոյականությամբ տոգորված հասարակությունում՝ հակազդելով ցինիկ պրագմատիզմի հզոր հոսանքին, այն «մշակույթի» հոսանքին, որի հիմքում մարդկային ամենցածր բնազդներն են ընկած, այն հոսանքին, որ ողողում է այսօր ամբողջ աշխարհը, որ հզոր է, բայց ձախողման դատապարտված:

Եվ ապրելով այդպիսի հասարակության մեջ՝ մարդ հպարտ կլինի ու երջանիկ՝ մեծ գործերին մասնակից լինելու համար:

Սա ուտոպիա չէ, այլ մեր ջանքերին արժանի ու իրականանալի միակ ճանապարհը, մյուս բոլոր ճանապարհները տանում են գոյատևման փակուղի:

Վ. Մանուկյան

«Գոլոս Արմենիի», 1994, N145-147.

ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՍԵՐԻՑ Է

- Ինչպիսի՞ն է այսօր հայոց քաղաքական ուժերի տեղաբաշխման հարթությունը. ովքե՞ր են ծայրաբևեռներում, և կա՞ արդյոք ձևավորվող կենտրոն, թե՞ վերջինս առայժմ երազանքների ոլորտից է:

- Բավական բարդ հարց է, արդեն կայացած ժողովրդավարական պետություններում շատ հստակ է երևում այն գիծը, որին համապատասխան՝ մի մասը գնում է ձախ, մյուսը՝ աջ, և ձևավորվում է կենտրոնը: «Աջ» կամ «ձախ» արտահայտությունները կապված են կա՛մ տնտեսական-ընկերային քաղաքականության, կա՛մ պետական կառավարման սկզբունքների հետ: Ցավոք, մեր պայքարը ծավալվում է այլ մակարդակում, ես չէի ասի, թե Հայաստանում պայքարն ընթանում է ազատական և ընկերվարական հոսանքների միջև: Իրականում մարդկանց մի խումբ տիրում է իշխանության լծակներին և բնական ձևով չի ուզում հրաժարվել դրանցից: Եղածը պահելու համար դիմում է այնպիսի եղանակների, որոնք ժողովրդավարական պետություններում անհնարին են, որովհետև առկա են լուրջ

հակակշիռներ: Այստեղ հակակշիռներ չկան, պարզապես իշխանության դիմաց կանգնած են կուսակցություններ, որոնք պայքարում են ազատության համար: Հնարավոր է, որ նրանցից մեկնումեկը գա իշխանության և փորձի նույն մեթոդները կիրառել, բայց այսօր պայքարը ծավալվում է բռնապետական և ժողովրդավարական սկզբունքների միջև: Որոշ կուսակցություններ, իհարկե, ձգտում են կանգնել կենտրոնում, օրինակ, ՀՌԱԿ-ը, բայց նրանց հանդեպ իմ ողջ հարգանքով հանդերձ, պիտի ասեմ, որ այժմ ապագայի հարցն է լուծվում, և ժողովուրդն այդ կենտրոնով չէ, որ կողմնորոշվելու է, քանի դեռ հստակ չէ այն գիծը, որի վերաբերմամբ լինեն աջակողմյաններ, ձախակողմյաններ ու կենտրոն:

- Ինչպե՞ս եք գնահատում ազատականությունը՝ որպես պետական քաղաքականության հենք:

- Ազատականությունը ընդհանուր հասկացություն է, այն ինքնին ենթադրում է տարբեր ըմբռնումներ: Օրինակ, զուգադրենք Ֆրիդմանի մոնետար տնտեսության մոդելը և Քեյնսի մոդելը, երկուսն էլ ազատական շուկայի մոդելներն են, բայց էապես տարբեր դեր են վերապահում պետությանը՝ հատկապես ընկերային քաղաքականության ոլորտում: Երբ ճգնաժամի պահին Ֆրանկլին Ռուզվելտը դարձավ ԱՄՆ նախագահ, հռչակեց նոր կուրս՝ հիմնված Քեյնսի տեսության վրա, և չի կարելի ասել, թե նա ազատական տնտեսության կողմնակից էր: Ազատական տնտեսություն և շուկա ստեղծելու համար սեփականաշնորհումից զատ առավել կարևոր է այնպիսի պետության ձևավորումը, որտեղ մարդն ապահով զբաղվի մասնավոր ձեռներեցությամբ: Օրենքների գործառնության պայմաններում սեփականաշնորհելով պետական ձեռնարկությունների մի մասը՝ ընդամենը մեծացվում է այն դաշտը, որտեղ արդեն գործում էր շուկան: Լոկ սեփականաշնորհմամբ, օրենքների բացակայության կամ չգործելու դեպքում, երբ մարդ վստահություն չունի իր սեփականության ճակատագրի հանդեպ, ապահովագրված չէ անօրինական հարկահանությունից, անհնար է ազատ շուկայի գոյությունը: Մեր գործարարները աշխատում են դրամ չներդնել տնտեսության զարգացման մեջ: Կապիտալը շատ զգայուն է ու վախկոտ, երկու-երեք անհաջող փորձ, և լուրը կայծակնային արագությամբ տարածվում է գործարար բոլոր շրջանակներում: Ստեղծեք բարենպաստ պայմաններ՝ օրենքներով և դրանց հանդեպ հարգալի վերաբերմունքով, նիստուկացով, և նրանք կգան: Հակառակ դեպքում սեփականաշնորհումը չի աշխատեցնում շուկայական մեխանիզմները, այլ մի ձեռքից ունեցվածքն անցնում է մյուսին:

-Հասարակության մեջ վերջերս ամրակայվում է «ընդդիմություն չկա» արտահայտությունը: Դուք ի՞նչ կերպ եք գնահատում Հայաստանի ընդդիմադիր ուժերի կազմակերպվածության աստիճանը:

- Բնական է՝ ընդդիմություն կա, եթե այն չլիներ, իշխանությունը շատ ավելի փափուկ ձևերով կիրականացներ իր ծրագրերը: Ընդդիմության առկայությունն է ստիպում նրան անցնել թույլատրելի գործողությունների եզրը: Այլ հարց է՝ որքանով է կազմակերպված ընդդիմությունը: Բազմաթիվ փորձեր են եղել՝ երկու դաշինք: Չէի ասի, թե անհույս է վիճակը, պարզապես ժամանակ է պահանջվում կուսակցությունների լիարժեք կայացման և գաղափարական միավորման համար: Այժմ քանի որ հակադրվել են ժողովրդավարությունն ու բռնապետությունը, նույն ճամբարում հայտնվում են այնպիսի կուսակցություններ, որոնք աշխարհում ոչ մի տեղ միասին չպիտի գործեին, օրինակ՝ համայնավարներն ու ԱԻՄ-Ք-ն: Ցավոք, մեր պետության այս անբնական վիճակը չի նպաստում ընդդիմության գործուն կազմակերպմանը: **Սակայն իրական ընդդիմությունը միշտ ժողովուրդն է, ցանկացած պետություն, որտեղ ժողովուրդը չի պայքարում հանուն իր իրավունքների, դատապարտված է:** Կուսակցությունները ժողովրդի շարժման կազմակերպողներն են լոկ: Այսօր ժողովրդի մեջ իշխողը խոր հիասթափությունն է, այստեղից էլ՝ «երկրորդ անգամ չենք գնա պայքարի» դարձվածքը: **Ես մի պարզունակ, փոքր-ինչ զավեշտական օրինակ բերեմ. մի անգամ շուկայից խակ ծմերուկ գնելուց հետո չարժե տանը նստել ու լաց լինել, թե հիասթափվել եմ կյանքից ու ծմերուկ այլևս չեմ գնի:** Գնելու ես այնքան, մինչև քեզ հասածը պատահի: Հիասթափության պատճառով չպայքարելը ընդունելի չէ: Ընդսմին, այս ամենը ձեռնտու է իշխանություններին, որոնք զուգահեռաբար տարածում են ևս մի տեսակետ. «Սրանք արդեն կշտացել են, նորերը կգան, մինչև նրանք էլ կշտանան, ժողովուրդը վերստին քաղցած կմնա»: Քաղաքական անգրագետ մի մոտեցում. նորմալ երկրում իշխանության չեն գալիս կշտանալու համար, ժողովրդավարություն նշանակում է վերահսկում, և եթե մեկնումեկը իշխանության է գալիս կշտանալու նպատակով, ապա նա ձախողված է: Իշխանությունների կողմից թելադրված այս

մտքերը համընկնում են մարդու պարզունակ բնազդային մտածողությանը՝ ավելի հեռացնելով ժողովրդին քաղաքական պայքարից:

- Ի՞նչ է ազգայնականությունը ձեր ըմբռնմամբ և, ո՞րն է «առողջ» և «հիվանդ» ազգայնական ուղղությունների սահմանագիծը:

- «Ազգայնականությունը» իմ տեսանկյունից ընդունելի բառ չէ, նրա գռեհկացված տարբերակը ենթադրում է մի ժողովրդի գերբացառիկություն և արհամարհանք այլոց հանդեպ, այն սովորաբար որակվում է իբրև ազգայնամոլություն: Այլ բան է ազգայինը: Երկու հզոր գաղափարական հոսանքներ՝ համայնավարությունը և ազատականությունը, իրենց ողջ բևեռային տարբերությամբ հանդերձ, վերջնակետում իրականացնում են նույն երազանքը՝ միացյալ երջանիկ մարդկություն, մի պետություն: Ճիշտ է, երջանկության նրանց ըմբռնումները տարբեր են, բայց այս երկուսն էլ ազգայինը համարում են անցողիկ. երկրորդական-երրորդական հասկացություն՝ վերապրուկ: Ուստի մեր այն քաղաքական գործիչները, ովքեր ոչ խոր գիտելիքներով, ոչ խոր ազգային արմատներով անցան ազատականությանը, 20-ական թթ. համայնավարների պես դարձան աշխարհաքաղաքացի: Բայց կա երրորդ մոտեցումը. ըստ Կանտի, Աստված, արարելով յուրաքանչյուր ժողովրդի, օժտել է նրան մի անփոխարինելի առաքելությամբ: Ողջ համաշխարհային պատմությունը ժողովուրդների համագործակցության և մրցակցության պատմություն է, որտեղ ամեն մի ազգ ձգտում է առաջընթացի: Նախորդ դարերում մրցակցությունն անցնում էր տարածքների նվաճման ռազմական ուղիով, այսօր առավելապես գիտամշակութային առաջնության պայքարի ժամն է, այսինքն՝ տարածքներ և հեղինակություն արդեն ձեռք են բերում ոչ միայն զենքով: **Այն ազգերը, որոնք հասնում են վերին դիրքերին և իրավունք ունեն կոչվելու համաշխարհային, մարդկությանը տալիս են արժեքների նոր համակարգ, նոր գաղափարներ և նիստուկաց:** Այս տեսակետից ազգությունը ոչ թե հետամնաց գաղափար է, այլ մի կաղապար, որն ապահովում է ազատ մրցակցությունը ժողովուրդների միջև և շնորհիվ դրա՝ համաշխարհային քաղաքակրթության զարգացումը: Այն ժողովուրդները, որոնք փորձեցին կառուցել իրենց քաղաքակրթությունը՝ նմանվելով ուրիշներին, մտածելով, թե իրենց մշակույթը հետամնաց է, պետք է արագ ազատվել դրանից և ընդօրինակել եվրոպականը, ոչ մի հաջողության չհասան, նրանք ուղղակի փլուզվեցին որպես ազգ: Ազգի զարգացումը պետք է խարսխվի ազգային մշակույթի, կրոնի, ավանդութային վարքագծի և բարոյականության վրա:

- Մեր հասարակությունն այսօր գերքաղաքականացվա՞ծ է, թե՞ ընդհակառակը՝ ապաքաղաքականացված, և որո՞նք են դրա խորքային պատճառները:

-Ընդհանրապես զարգացած երկրներում մարդիկ քաղաքականությամբ չեն հետաքրքրվում, որովհետև երջանիկ են: Իշխանությունների փոփոխությունները էապես չեն ազդում նրանց ապրելակերպի վրա: Մոտ տասը տարի առաջ սոցիոլոգիական հարցում էր անցկացվել, և ամերիկացիների 80-85 տոկոսը նշել էր, որ երջանիկ է զգում իրեն: Ինձ համար դա շատ զարմանալի է, որովհետև ես չեմ ճանաչում իմ ծանոթներից, ընկերներից մեկին, որն այն ժամանակ կամ այսօր անկեղծորեն ասեր, թե երջանիկ է: Գուցե մեր և նրանց երջանկության պատկերացումները տարբեր են, բայց եթե ժողովուրդն ապրում է քաղաքականապես հավասարակշռված պետության մեջ, վստահ է, որ ապահովագրված է ամեն տեսակ հեղաշրջումներից, անկումներից դեպի բոլշևիզմ կամ ֆաշիզմ, ապա քաղաքականությամբ չի հետաքրքրվում: Քաղաքականությամբ չեն հետաքրքրվում նաև այն ժողովուրդները, որոնք վստահ են, որ դա անհույս է: ԽՍՀՄ-ում քաղաքականությամբ զբաղվում էին լոկ սակավաթիվ այլախոհները, մնացածները հեռու էին քաղաքականությունից ոչ թե երջանկության պատճառով, այլ պարզապես գիտեին՝ դա ապարդյուն է: Այս տեսանկյունից մեր երկրում առաջինը իսպառ բացառվում է, երկրորդը կա մասամբ: Իր հավաքականության մեջ, այնուհանդերձ, հասարակությունը բավական քաղաքականացված է. մարդիկ գիտակցում են, որ քաղաքական փոփոխությունների ճանապարհով է հնարավոր շտկել իրադրությունը, ուղղակի նրանք չեն վստահում դեռևս ոչ ոքի և չեն տեսնում այն ուժը, որին ապավինելով՝ կարող են փոխել իրենց կյանքը:

-Ինչպիսի՞ն է, ըստ Ձեզ, «քաղաքականություն» և «բարեկրթություն» հասկացությունների հարաբերությունը:

- Բարեկրթությունն ազգային մշակույթի, բարոյականության և արդարության բաղադրիչ մասերից է: Մենք դարերով զրկված ենք եղել պետականությունից և աշխարհիկ ու հոգևոր

շատ կորուստներ, նահանջներ ենք ապրել, այսօր էլ, երբ ընկերային լարված վիճակում արժեքների ընդհանուր վերագնահատում է սկսվել, խարխլվում են անգամ բարոյականության հիմքերը՝ մեծի ու փոքրի հարաբերությունները: Երբ մի երիտասարդ թղթակից աչառու գրում է որևէ հեղինակության մասին, անկախ ամեն ինչից, թե որ թևում է գտնվում այդ հեղինակությունը՝ ընդդիմության թե իշխանության, ես խորապես վիրավորվում եմ: Դու կարող ես ինձ քննադատել, և ես պատրաստ եմ ընդունել ցանկացած քննադատություն, բայց երբ միտումնավոր են խոցում, ապա դա վատ նշան է և ցույց է տալիս քաղաքակրթության կորուստը:

-Ինչպիսի՞ կառավարման համակարգի կողմնակից եք Դուք, խորհրդարանային հանրապետության, թե՞ նախագահական:

- Մեր կուսակցությունը կողմնակից է խորհրդարանական հանրապետության, բայց եթե որդեգրվել է նախագահական կառավարումը, ապա այն ևս հնարավոր է ազգաշահ դարձնել, եթե հստակ տարանջատվեն նախագահի և վարչապետի գործառույթները: Նախագահը, ըստ իս, վերին ատյանը պետք է լինի, ժողովրդավարության սկզբունքների երաշխավորն ու պաշտպանը, փոքր-ինչ բարձր՝ տնտեսավարման կոնկրետ, մասնավոր գործունեությունից:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Նարինե Դիլբարյանը
«Առավոտ», 1995,13 հունիսի

ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋ ՉԵՄ ՈՒՆԵՑԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ

-Պրն Մանուկյան, Դուք միշտ իշխանավարման նախագահական տարբերակի կողմնակից եք եղել, իսկ ԱԺՄ-ում պառլամենտական թևը գերակշռող է: ՀՀ նախագահի լիազորությունների անսահմանափակությամբ հեղինակության ձևավորումը Ձեր տեսակետի մեջ փոփոխություն չի՞ մտցրել:

-Պետությունների հզորացման չափանիշները դարից դար փոխվում են: Սրանից մի քանի հարյուր տարի առաջ, եթե հայկական պետություն լիներ, երևի իսկապես նպատակահարմար կլիներ ուժեղ թագավորական իշխանություն ունենալ, ուր կբացառվեր տեղական, պառակտողական որևէ գործողություն: Այն ժամանակ պետությունների միջև հիմնականում ռազմական պայքար էր մղվում տարածքներ նվաճելու ասպարեզում: Այլ են ժամանակները, հիմա նոր իրավիճակ է ստեղծվել աշխարհում: Ժողովուրդների և պետությունների մրցակցությունը հետզհետե տեղափոխվում է մեծ ազատություններ պահաջող ասպարեզներ: Տնտեսության արդյունավետ զարգացման, նոր տեխնոլոգիաների, մշակույթի զարգացման համար ներքին մեծ ազատություններ են պետք: Փորձը ցույց է տալիս, որ ազատ ժողովրդավարության գերակայությամբ պետություններն ավելի զարգացած են, քան բռնապետությունները:

Հետաքրքրական է նշել, որ ռազմական ասպարեզում ևս, որի կարևորությունն այնուամենայնիվ մնացել է, ժողովրդավարական պետությունները կարողանում են ավելի հզոր լինել: Ազատ ժողովրդավարության պայմաններում պետությունները մարդկանց ներքին կարողությունների դրսևորման առավել հնարավորություններ են ընձեռում:

Տարիներ առաջ, երբ Լ. Տեր-Պետրոսյանը ԳԽ նախագահ էր, ես՝ վարչապետ, մեզ մոտ ոչ այն է նախագահական, ոչ այն է պառլամենտական համակարգ էր, կամ և՛ մեկն էր, և՛ մյուսը: Դա աշխատանքի որոշ ասպարեզներում շփոթություն էր ստեղծում: Որոշակի տարորոշման

բացակայությունը առաջին հերթին հանգեցնում էր պատասխանատվության, անորոշության: ԳՆ նախագահը հանդես էր գալիս որպես առաջին մարդ, բայց իշխանության ռեալ լծակները գտնվում էին իմ ձեռքում: Եվ երբ մայիսյան դեպքերը, Գետաշենի անկումը տեղի ունեցան, ես առաջինը Գերագույն խորհրդում հարց բարձրացրեցի, թե պետք է մի մարդ պատասխանատու լինի՝ որպես պետության ղեկավար: Պառլամենտականն ընդունեինք՝ վարչապետն էր պատասխան տալու, նախագահականի դեպքում՝ նախագահը: Գուցե ճիշտը պառլամենտականն էր, բայց զարգացած կուսակցություններ չունենալու պատճառով ես կոչ արեցի անցնել կառավարման նախագահական համակարգի: Բայց իմ կոչի մեջ խոսք չկար նախագահի անսահմանափակ լիազորությունների մասին: **Այսօրվա նախագահական համակարգը, առավել ևս առաջարկվող Սահմանադրության տարբերակը գործնականում նախագահին փոխարինելու ոչ մի հնարավորություն չի տալիս: Այս հարցը պիտի լուծվի հեղաշրջմամբ, որն, ըստ իս, շատ վտանգավոր է պետության համար:**

Երբ ԱԺՄ առաջին համագումարում հարց դրվեց, թե որ համակարգն է ավելի ձեռնտու Հայաստանի համար, պառլամենտակա՞նը, թե՞ նախագահականը, կուսակցությունը պառլամենտականի կողմ քվեարկեց, ես ձեռնպահ մնացի, որովհետև որոշակի մտորումներ ունեի: Կարծում եմ, կարելի է ընդունել և՛ մեկը, և՛ մյուսը, եթե միայն հստակ տարանջատված են իշխանության ճյուղերը, մշակված են հավասարակշռությունը ապահովող մեխանիզմները:

- Բազմաթիվ պատմական օրինակներ են հայտնի, երբ բանակը հեղաշրջում է կատարում կամ իշխանությունների հրամանով դուրս է գալիս քաղաքական ընդդիմության դեմ: Այսօր, երբ ներազգային միասնությունը խաթարված է, և քաղաքական կյանքը՝ առավել քան շիկացած, չե՞ք տեսնում արդյոք Հայաստանի ներքաղաքական կյանքին բանակի միջամտության, քաղաքացիական պատերազմի բռնկման հավանականություն: Ես հիշում եմ՝ 7-8 ամիս առաջ դուք այդ վտանգը բացառում էիք, իսկ հիմա՞, հունիսի 21-ի դեպքերից հետո՞….

-Պաշտպանության նախարար աշխատելու ընթացքում Ազգային բանակի սպաների և զինվորների հետ բազմիցս եմ առիթներ ունեցել զրուցելու այդ հարցի շուրջ: Բանակը չի ուղղվելու ժողովրդի դեմ հանուն իշխանության, բանակն իրավունք չունի հեղաշրջում անելու, այդպիսին է եղել ինձնից սպաներին և զինվորներին հաղորդվող և փոխադարձաբար ներքին զգացողությամբ ու խոր համոզվածությամբ փոխանցվող մտայնությունը: Որ, ըստ իս, հոգեբանական արժեք է ձեռք բերել:

Բանակը պետք է զբաղվի սահմանների պաշտպանությամբ: Սա է ճշմարտությունը: Այս ճշմարտությամբ էին առաջնորդվում այն տղաները, որ կամավոր բանակ էին մտել, այս ճշմարտությունն էր ներարկվում ԽՍՀՄ բանակից եկածների մեջ: Այնպես որ այսօր էլ ես բացառում եմ բանակի զինված հարձակումը ժողովրդի վրա, այլ հարց է, որ իշխանությունների ձեռքում կան կիսաբանակային զինված կառույցներ, որոնք կարող են գնալ այդպիսի քայլերի, ինչպես և եղավ:

- Ի՞նչ կտա ընդդիմության ուշացած միավորումը: Ինչպե՞ս եք պատկերացնում ազգային համաձայնության կառավարության ձևավորումը: Որո՞նք են լինելու նրա առաջնային նպատակներն ու խնդիրները:

- Ազատ, ժողովրդավարական երկրում ընդդիմության միավորման մասին խոսելը պարզապես անհեթեթություն պիտի լիներ: Որովհետև կուսակցություններն ունեն տարբեր ծրագրեր, և նույնիսկ եթե ծրագրի ինչ-որ մասեր համընկնում են, նրանք տարբեր միջոցներով են փորձում այդ խնդիրներն իրականացնել: Ժողովրդավարական պետության մեջ կլիներ ոչ թե ընդդիմության միավորում, այլ գաղափարակիր կուսակցությունների միավորում՝ միասնական ընտրարշավ ծավալելու համար: Կամ արդեն ձևավորված խորհրդարանում միասնական բլոկի ստեղծում՝ հիմնական հարցերի լուծման ժամանակ ձայների մեծամասնություն ապահովելու համար: Երբ պետությունը վերածվում է բռնատիրության, ընդդիմությունը համախմբվում և պայքար է ծավալում հանուն ազատության: Սկսվում է ընդդիմության դիմադրության շարժումը, և բոլոր կուսակցությունները, մի կողմ թողնելով իրենց տարաձայնությունները, միանում են: Այսօր մենք մոտ ենք այս վիճակին: Ընդդիմության միասնությունը կարող է ուժեղանալ այն դեպքում, երբ պետության ճնշումը մեծանա: Իսկ եթե իշխանությունը քաղաքական գործունեության լայն հնարավորություն ընձեռեր, ընդդիմության միավորման խնդիր, թերևս, չէր լինի:

Ի՞նչ է նշանակում կոալիցիոն կամ ազգային համաձայնության կառավարություն: Կոալիցիոն կառավարությունը հստակ քաղաքական տերմին է: Եթե պառլամենտի որոշմամբ են ընտրվում գործադիր իշխանությունները՝ վարչապետը, նախարարները, ապա կուսակցություններն իրար հետ համաձայնության են գալիս՝ մեծամասնությամբ ապահովելով կաբինետի կազմը: Այլ բան է ազգային համաձայնության կառավարությունը: Այստեղ որոշիչը ձայների մեխանիկական քանակը չէ: Երբ մեկ կամ երկու ուժ, ընտրությունների ժամանակ ձայների մեծամասնություն հավաքելով, հնարավորություն են ունենում ձևավորելու ողջ կառավարությունը և այնուհանդերձ սոսկ իրենց չեն վերապահում հաղթության պտուղները ճաշակելու իրավունքը, այլ գտնում են, որ պետք է համախմբվել-միաբանվել և իբրև ապացույց իշխանության լծակներ-պորտֆելներ են տալիս նաև ընտրությունների ժամանակ քիչ ձայներ հավաքած կուսակցություններին, ստեղծվում է ազգային համաձայնության կառավարություն: Ես գտնում եմ, որ հիմա միասնաբար գործելու ժամանակ է: Հեքիաթային մի հնարավորությամբ ԱԺՄ ձեռքն անցնեին գործադիր իշխանությունները, խորհրդարանը, ես կողմնակից կլինեի կիսել դրանք այլ կուսակցությունների հետ: Սա անհրաժեշտություն է հանրապետությունում առաջընթացի նորմալ պայմաններ ապահովելու համար:

-Պրն Մանուկյան, ՀՀ նախագահը բազմիցս հայտարարել է՝ եթե սահմանադրությունը չընդունվի, ինքը հրաժարական կտա: Ի՞նչ եք կարծում, կկատարի՞ իր խոստումը:

-Ոչ:

-Իշխանությունն իրավունք չունի սխալվելու, այդպիսի ազատություն իրեն կարող է թույլ տալ ընդդիմությունը, քանի դեռ ընդդիմություն է, բայց իշխանություն դառնալուց հետո նա ևս պիտի անսխալականության ծգտի: Ձեր՝ իբրև ընդդիմության և իբրև իշխանության սխալները:

-Համաձայն չեմ այդ մտքին: Իշխանությունն էլ կարող է սխալներ թույլ տալ: Իսկ անսխալականության պիտի ձգտի ցանկացած մարդ, կուսակցություն, ընդդիմություն, իշխանություն: Այդ ձգտումը բոլորի մեջ պետք է լինի: Իշխանությունն էլ կարող է սխալվել: Դրա համար կան դեմոկրատական մեխանիզմներ: Եթե սխալները փոքր են և չեն ազդում երկրի ապագայի վրա կամ ներքին դժգոհություններ չեն առաջացնում, չէի ասի, թե ներվում են, բայց սրբագրելի են: Կան սխալներ, որոնց համար իշխանություններին միանգամից փոխում են: Չսկսեմ թվարկել սխալներս, երևի ոչ մեկը ինձնից ավելի չի տեսնում, չի գիտակցում դրանք: Ես ներսից եմ տեսնում ամեն ինչ: Իմ խորին համոզմամբ հիմնարար սխալներ թույլ չեմ տվել:

-Ի սկզբանե Դուք ընդդիմություն էիք, ապա դարձաք իշխանություն, հիմա նորից ընդդիմություն եք: Ինչի՞ է հանգել Ձեր ներառնծնային հանուն ընդդեմ հարցը....

-Այդ հարցադրումը երբեք ինձ չի տանջել: Ընդդիմության զգացողություն, իշխանության զգացողություն. ինչ-որ չափով արհեստական է հնչում: Իհարկե, եթե դու իշխանություն ես, ավելի հեշտ է ցանկալին իրականություն դարձնել: Պայքարի մեջ ես չեմ ունեցել իշխանության և ընդդիմության խնդիր:

Ազգային ծրագրեր կան, որ պետք են մեր ժողովրդին, և 21 տարեկանից ես փորձել եմ դրանք իրականացնել: Բախտը ժպտաց, ստեղծվեցին այդ ծրագրերն իրականացնելու ռեալ հիմքեր: Այսքան բան: Թե չէ կյանքս չեմ բաժանում ընդդիմության և իշխանության:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Անահիտ Եսայանը
«Լրագիր», 1995, 4 հուլիսի

ԲՈԼՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԱԼԻՔՆԵՐԸ ՄԻ ՕՐ ԻՋՆՈՒՄ ԵՆ՝ ԱԹՈՌՆԵՐԻՆ ԹՈՂՆԵԼՈՎ ՄԻ ՔԱՆԻ ՀՈԳՈՒ

Մեր շարժումը պետք է վերագտնի ազգային բարոյականության և արդարության սեփական սկզբունքները

Հուլիսի 1-5-ը Իրանի Իսլամական Հանրապետություն էր այցելել Ազգային ժողովրդավարական միության նախագահ Վազգեն Մանուկյանը: Հայաստան վերադառնալուց հետո նա սիրով «Լրագրի» հետ կիսեց մեր մերձավոր հարևան երկրից ստացած անմիջական տպավորությունները, խոհերը, ենթադրությունները:

ՀՐԱՎԵՐՔ

-Իրանի Իսլամական Հանրապետություն այցելելու հրավերք ստացա Իմամ Խոմեյնիի մահվան 6-րդ տարեդարձի ծիսակատարությունները նշող իրանական պաշտոնական հանձնաժողովից, ու հաճույքով ընդունեցի այն: Առաջին անգամ պետք է լինեի Իրանում: Ինձ միշտ հետաքրքրել է այդ պետությունը, նրա ժողովուրդը, որի հետ հայերս կապված ենք բազմադարյա պատմության ընդհանուր էջերով, մշակութային արժեքների ու բարոյականության նորմերի պահպանման՝ մեր երկու ժողովուրդների գրեթե միատեսակ հատկանշական մտահոգությամբ: Անշուշտ, ինձ համար էական էր նաև այն, որ Իրանը առանձնահատուկ ռազմավարական հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի համար:

-Իմամ Խոմեյնիի մահվան 6-րդ տարեդարձը ըստ երևույթին Իրանում նշվեց մեծագույն շուքով:

-Ավելին դժվար է պատկերացնել, ծիսակատարությունը տեղի ունեցավ Իմամ Խոմեյնիի դամբարանում, որը հսկայական դահլիճ է: Այն լեփ-լեցուն էր բազմահազար մարդկանցով՝ ոտաբոբիկ, կողք կողքի նստած: Եվ մեծ ուշադրությամբ լսում էին ելույթները: Բոլորը ոգևորված էին, խանդավառված… Իմ ստացած տպավորությամբ, Իմամ Խոմեյնիի թողած կրոնամշակութային և ազգային առանձնահատուկ գաղափարախոսության ազդեցությունն այնքան ներգործուն է Իրանում, որ կոգևորի իրանական ժողովրդի դեռևս շատ-շատ սերունդների:

ՈՉ ՀԵՌՈՒ ԱՆՑՅԱԼՈՒՄ

-Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ ի՞նչ դեր էր վերապահված Իրանին, երբ Դուք վարչապետ էիք:

-Այն ժամանակ էլ առանձնապես շահագրգռված էի Իրանի հետ հարաբերություններում զարգացնելու համագործակցության հնարավոր բոլոր ոլորտները, նախ, բնականաբար, Հայաստանի համար կենսական ու ռազմավարական նշանակություն ունեցողները: (Հիշեցնեմ, որ վարչապետի գործունեության շրջանակներն այն ժամանակ այլ էին, քան այսօր, քանի որ պետական կառուցվածքն էր ուրիշ, նախագահական համակարգ չկար, և նախագահի այժմյան լիազորությունների մեծ մասը վարչապետի ձեռքին էր: Ինչևէ:)

Ձեր հարցին դժվար է պատասխանել առանց անդրադառնալու Հայաստանի այն ժամանակվա արտաքին քաղաքական կացությանը: Մենք ԽՍՀՄ կազմում էինք, որը մեր աչքի առջև արագորեն փլուզվում էր. դա մեզ տալիս էր անկախություն ու առաջադրում բազմաթիվ հիմնախնդիրներ:

Ա. Ակնհայտ էր Ղարաբաղի համար Ադրբեջանի դեմ պատերազմի սպառնալիքը, ընդ որում նախաձեռնողը մենք չէինք,: Դա փակելու էր Ադրբեջանի ճանապարհը, խափանելու էր գազատարի աշխատանքը: Արագորեն շարունակում էինք գազամուղը Վրաստանով անցկացնելու աշխատանքները և փորձում էինք միջոց գտնել նաև Իրանի կողմից գազամուղ անցկացնելու համար: Այդ հարցում անփոխարինելի էր հանգուցյալ Թաթարյանը, որի կապերը, եռանդը, մասնագիտական գիտելիքներն ու փորձառությունը պարզապես ապշեցնում էին:

Բ. ԽՍՀՄ փլուզմանը զուգընթաց Կովկասի ժողովուրդների՝ անկախության համար մղվող պայքարի ծավալումն ու Ռուսաստանի՝ այս տարածաշրջանից անորոշ ժամանակ հեռանալը հանգեցնելու էին հյուսիսային ճանապարհների փակման: Ու ստիպված էինք փորձել բացելու հարավային ճանապարհները՝ Իրանով ու Թուրքիայով: Ընդսմին, վերոհիշյալ զարգացումները հանգեցնելու էին Այսրկովկասում քաղաքական ու տնտեսական վակուումի առաջացման, որը, բնականաբար, Թուրքիան պիտի փորձեր լցնել: Ուրեմն Իրանի հետ մեր հարաբերությունները նաև կարող էին կատարել մեզ համար այնքան անհրաժեշտ հակակշռի դերը. Իրանը մեզ համար ճանապարհ էր, առևտուր, գազ, հակակշիռ… Այդ կապակցությամբ փորձում էի անմի-

ջական հարաբերություններ հաստատել Իրանի ղեկավարության հետ՝ իրանահայությունն ունենալով միջնորդ-կապող օղակ և օգտագործել ԽՍՀՄ ԱԳՆ համակարգը:

Գ. Սկզբունքային էի համարում ձևավորել մի հասարակություն, որի տնտեսական ու քաղաքական կառուցվածքը նման են արևմտյանին, բայց և համապատասխանում են հայկական մենթալիտետին (հաշվի առնելով, որ քրիստոնեության շնորհիվ մենք շատ ընդհանրություններ ունենք, հատկապես ազգային մշակույթի առումով, Արևմուտքի հետ): Այսինքն՝ արևմտյան տիպի ազատ հասարակություն՝ հիմնված մեր ազգային արժանիքների վրա: Մյուս կողմից՝ մենք արևելյան ժողովուրդ ենք: Արևելքի (մասնավորապես՝ արաբական) երկրներում ապրում են հարյուր հազարավոր մեր հայրենակիցներ: Այս ամենը ստիպում էր ամենայն պատասխանատվությամբ մոտենալ Հայաստանի, այսպես ասած, արևելյան քաղաքականության հղկման խնդրին: Եվ այս հարցում էլ կրկին ու կրկին իր ծանրակշիռ տեղն ու դերն ուներ Իրանը:

Վարչապետի պաշտոնը թողնելուցս մեկ ամիս առաջ նամակով դիմել էի արաբական հինգ երկրների ղեկավարներին՝ առաջարկելով բանակցել տնտեսական, քաղաքական, մշակութային խնդիրների շուրջ: Ես հեռացա՝ չհասցնելով պատասխան ստանալ: Չգիտեմ, թե Լևոն Տեր-Պետրոսյանի այցը Եգիպտոս և Սիրիա ինքնուրու՞յն քայլ էր, թե՞ պայմանավորված էր հիշյալ նամակներով: Ամեն դեպքում ցավալի է, որ այդ այցելությունները լուրջ շարունակություն չունեցան:

ԱՅՍՕՐ

-Քաղաքական գործիչները սովորաբար զանազան նկատառումներով խուսափում են խոսել արտաքին ներկա քաղաքականության շուրջ՝ դժկամությամբ, բայց և այնպես բավարարվելով պաշտոնական տեսակետի արծանագրմամբ:

- Աշխարհը փոխվում է: Ստեղծվում են ռազմական, տնտեսական, քաղաքական տարբեր միավորումներ: Ինչպիսի՞ կամ ո՞ր միավորման մեջ է լինելու Հայաստանը. այս հարցը դեռևս մնում է առկախ: Ճիշտ է, փորձում ենք ԱՊՀ միավորում ստեղծել և ինտեգրացվել, ճիշտ է, այդ բլոկը դեռևս իրապես կայացած չէ, բայց և ճիշտ է այն, որ այդ ուղղությամբ ջանքերը միայն ողջունելի են: ԱՊՀ բլոկի կայացման խնդրում կարող է որոշիչ լինել նաև Մոսկվայի ու Վաշինգտոնի հարաբերությունների ճշտումը: Եթե Մոսկվան չդիմանա, Հայաստանի գլխին կարող է կախվել մյուսի վասալի վասալը դառնալու վտանգը: Իսկ եթե Մոսկվան հաջողությամբ դիմակայի, ապա չի հանդուրժի Երևանի սիրախաղը Վաշինգտոնի հետ:

-Այս տեսակետից կրկին Իրա՞նն է ծեռք բերելու հակակշռի դերը:

-Անշուշտ: Եվ ոչ միայն Իրանը: Մեզ պետք է գտնել ևս մեկ հակակշիռ: Վաղ թե ուշ այս միաբևեռ աշխարհը փոխվելու է: Եվրոպան նույնպես պետք է իր հարաբերությունները ճշտի Նահանգների հետ: Ու մեզ արդեն այսօր պետք է շատ լուրջ մշակել նաև Արևմտյան քաղաքականություն: Ու Իրանից բացի ունենալ նաև երկրորդ հակակշիռ: Հակակշիռը՝ հակակշիռ, սակայն, իմ խորին համոզմամբ, մեր ժողովրդի համար ամենակարևորը ինքնուրույն ժողովուրդ դառնալն է և ստեղծելը մի պետութուն, որը հիմնված լինի բարոյականության, արդարության, սեփական արժեչափերի վրա՝ փոխանցված մեր մշակույթով, ավանդույթներով, որոնց էլ պետք է համապատասխանեցվի արևմտյան ազատ հասարակության մոդելը:

Իսկ հավասարակշռված քաղաքականության հայտնի սկզբունքը հանգեցրեց Հայաստանի այսօրվա կրկնակի կախվածության տխուր պատկերին: Կարծում եմ, ճիշտ քաղաքականություն չէ Իրանի հետ բանակցությունների գնալու հանգամանքը խաղաթուղթ դարձնել՝ ԱՄՆ-ից ևս մեկ տոննա հացահատիկ ստանալու համար:

-Այսօր Հայաստանից Իրան են տեղափոխում մետաղի ջարդոն, վերամշակված գունավոր մետաղներ, Իրանից՝ երկրորդական կարգի սննդամթերք, հագուստ, կոշկեղեն:

-Իհարկե այդպես է, սակայն դա ոչ միայն Հայաստանին ձեռնտու չէ, այլև Իրանին. վերջինս առավել լուրջ հարաբերությունների շահագրգռություն ունի: Բայց ուրախալի է, որ մեր կառավարությունը որոշ նախագծեր ունի, որոնք քննարկվում են Իրանի կառավարության հետ: Եվ եթե այդ նախագծերը, կապված, ասենք, էներգետիկայի հիմնախնդիրների հետ, իրականացվեն, կարելի է միայն ողջունել:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱԿԱՏԱԳՐԵՐԸ

-Մեր ժողովուրդը վաղուց արդեն, թեև անցել է սոսկ 7 տարի, ապրում է 1988-ի ազգային զարթոնքի հուշակարոտը: Մինչդեռ, թեև իսլամական հեղափոխությունը 16 տարեկան է, իրանցիները պահպանում են իրենց հեղափոխական ոգևորությունը:

-Բոլոր շարժումները, հեղափոխությունները (թե՛ ֆրանսիականը, թե՛ ռուսական փետրվարյանը, թե՛ մեր շարժումը, թե՛ իսլամական հեղափոխությունը Իրանում), ունենալով տարբեր նպատակներ, իրականացնելով տարբեր գաղափարներ, օգտագործելով մեղմ կամ դաժան մեթոդներ, ունեն մի ընդհանուր բնորոշ գիծ. ողջ ժողովուրդը (կամ նրա գերակշիռ մասը), ինչ-որ գաղափարներով ոգևորված, համախմբվում է՝ դառնալով երջանիկ ապագայով ապրող, անձնազոհ եղբայրություն: Հետո այդ ոգևորության ալիքը իջնում է՝ իշխանության աթոռներին թողնելով մի քանի հոգու: Եվ ամբողջ շարժումը սկսում է գնահատվել այդ մի քանի հոգու գործունեությամբ, նրանց և ալիքի ներկայացուցիչների փոխհարաբերություններով: Այս տեսակետից շատ հետաքրքրական է Իրանի շարժումը: Իմ տպավորությունն էր (միգուցե այցի կարճատևության պատճառով խաբուսիկ), որ այդ շարժումը իսկապես պահպանվել է:

Իմամ Խոմեյնիի մահվան տարեդարձի ծիսակատարության ժամանակ ես ականատես եղա հարյուր հազարավոր մարդկանց ոգևորության: Իրանի ամենաազդեցիկ անձանցից մեկի՝ Լարիջանիի հետ հանդիպման ժամանակ ինձ զարմացնում էին իմ թարգմանիչ՝ հասարակ գյուղացի Հոսեյնիի և Լարիջանիի անբռնազբոսիկ հարաբերությունները, Հոսեյնիի մեծագույն հարգանքը Լարիջանիի հանդեպ և միաժամանակ գիտակցումը, որ միևնույն շարժման անդամ են ու իրավահավասար: Չկար մեկի ստորաքարշությունն ու քծնանքը, չկար մյուսի գոռոզամտությունն ու ինքնահիացումը:

Երբ Իսլամական հեղափոխության առաջնորդ Խոմեյնին Ֆրանսիայից վերադաձավ Իրան, նրան դիմավորեց 8 մլն մարդ: Նրա հուղարկավորությանը մասնակցում էր 12 մլն մարդ: Եվ դա այն դեպքում, երբ Իրաքի դեմ պատերազմում իրանցիները բազում զոհեր էին տվել, երբ ժողովրդի կենսամակարդակը դժվար թե բարձր լիներ: Այդ երևույթը Իրանում բացատրում էին ոչ միայն այն հանգամանքով, որ Իմամ Խոմեյնիի գաղափարները ժողովուրդը ընդունել է, այլ նաև առաջնորդի համեստ նիստուկացով իշխանության գալուց հետո, նրա նշանակած իշխանավորների համեստությամբ, բարյացակամությամբ, ժողովրդի շահերին իրապես նվիրվածությամբ:

Հիշածս Լարիջանիի հետ բավական ծավալուն զրուցեցի Իսլամական հեղափոխության բուն գաղափարների շուրջ: Նա, լինելով ԱՄՆ Վելսիի համալսարանի շրջանավարտ, մասնագիտությամբ՝ մաթեմատիկոս, զբաղեցնում է առաջին հայացքից համեստ պաշտոն՝ Իրանի Իսլամական Խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահի տեղակալն է: Բայց և իր երկրի Անվտանգության խորհրդի անդամն է և, ինչպես նշեցի, Իրանի ամենաազդեցիկ ու հեղինակավոր դեմքերից մեկը: Նա այսպես էր բացատրում մահմեդական երկրների փորձը. Արևմուտքի քաղաքակրթության ճանապարհով գնալը, կրկնելով նրանց պետական, տնտեսական կառույցները, այդ նույն երկրներին չբերեց հաջողություն՝ հակասելով սեփական մտածելակերպին, սովորույթներին, նիստուկացին… Նույնը կարելի է ասել նաև մահմեդական այն երկրների մասին, որոնք փորձեցին գնալ սոցիալիզմի ճանապարհով:

Մինչդեռ Իմամ Խոմեյնիի գաղափարն այն էր, որ Իրանը պետք է զարգանա իր ուրույն ճանապարհով՝ իր տնտեսական ու պետական կառույցները հիմնելով իր մշակույթի վրա, որում Իսլամը հսկայական դեր ունի: Եվ Իսլամական հեղափոխության նպատակը իրանցիների անկախության., ազգային դեմքի, ավանդույթների, մշակույթի, բարոյականության պահպանումն էր:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՇԱՀԵՐ

-Ինչի՞ն պետք է լինի մեր աշխարհաքաղաքական ռազմավարությունը Արևմուտքի և Հյուսիսի շահերի հանգուցակետում՝ մասնավորապես Իրանի հետ հարաբերությունների խնդրում:

- Մեր պետության արևելյան քաղաքականության սկզբունքային դրույթներից մեկը, իմ խորին համոզմամբ, պետք է լինի աշխարհի համար օրինակելի քրիստոնյա Հայաստանի և մահմեդական Իրանի փոխհամագործակցությունը: Աշխարհը վաղուց կարոտ է նման երևույթի, և դրա օրինակը մենք պետք է լինենք: Իրանում իմ զրույցների ընթացքում պարզ դարձավ, որ դա հնարավոր է և Իրանի համար միայն ու միայն ողջունելի: Այս համագործակցությունը մեզ համար ճանապարհ է բացում…

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Գևել Նալբանդյանը
«Լրագիր», 1995, 20 հուլիսի

ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԵԼ ՊԱՐՏԱԴՐՎՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՂԹԵԼ ՆԱԵՎ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

-Հայաստանում քաղաքական պայքարի մի էական փուլ ավարտվեց, ամեն մեկն իր ճանապարհով իշխող վարչակազմն ու ընդդիմությունը եկան-հասան 1995թ. հուլիսի 5, ամփոփեցին վերջին հինգ տարին և հիմա դարձյալ կանգնած են դեմ առ դեմ պայքարը շարունակելու վճռականությամբ: Ի՞նչ նշանավորեց հուլիսի 5-ը, Ձեր կարծիքով, ի՞նչն է արձանագրելի ստեղծված իրավիճակում:

-Հուլիսի 5-ը կարելի է համարել և՛ պարտություն, և՛ հաղթանակ: Եվ ահա թե ինչ առումով. մենք նախապես գիտեինք, որ նրանք կեղծելու են բոլոր արդյունքները, սկզբում պետական քարոզչության միջոցներով փորձելու են «մշակել» ժողովրդին, հետո նրան վախեցնելու, սիրաշահելու, կաշառելու համար օգտագործելու են պետական ողջ մեքենան: Երրորդը՝ ամբողջությամբ իրենց ձեռքում էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, և այնտեղ ցանկացած ցուցանիշ կարող էին ապահովել, այսինքն՝ պարզ քվեարկությամբ ոչնչացնել իրենց ոչ ձեռնտու արդյունքը և նույն կերպ ստանալ այն, ինչ իրենց անհրաժեշտ է: Այս պայմաններում ես մեծ հաղթանակ եմ համարում, երբ ժողովուրդը Սահմանադրությանը ասաց «ո՛չ»: Շեշտեմ, որ և՛ մեր, և՛ ընդդիմադիր մյուս կուսակցությունների համար սա շատ ավելի կարևոր հարց էր, քան մեր թեկնածուներին Ազգային ժողովի պատգամավոր ընտրելը: Սա հիմնարար խնդիր էր, որովհետև խոսքը ոչ թե տակտիկական մի պահի մասին էր, այլ ողջ ազգի ապագայի:

Անկեղծ ասած, վերջին երկու տարվա ընթացքում բավական մեծ հիասթափություն կար, մտածում էի, լավ, պայքարել, գնալ մինչև վերջ, զոհվել, բայց հանուն ինչի՞, ու՞մ, շուրջդ համատարած ապականություն է, կեղտ ու անբարոյականություն: Այսօր ժողովրդի դրսևորած կամքը, վճռական «ոչ»-ը շատ մեծ ուժ է տալիս և՛ անձամբ ինձ, և՛ մյուս քաղաքական գործիչներին: Մենք տեսանք, որ առողջ ազգ ունենք, նա դիմացավ այս բոլոր ճնշումներին, երբեմն զոհաբերեց մարտավարական հարցերը, երբեմն չկարողացավ դիմադրել, բայց շատ ծանր վիճակի մեջ գտնվելով, այնուամենայնիվ, հայ ժողովուրդը, ինչպես միշտ, հազարամյակների պատմության մեջ, ազգային ռազմավարության հարցում ճիշտ կողմնորոշվեց: Այլ խնդիր է, որ նրա կամքը կեղծվեց. հիմա իշխանությունն ասում է՝ հանրաքվեի արդյունքն «այո» է: Ժողովուրդը գիտի, որ ինքը «ոչ» է ասել: Սա ամենակարևոր արդյունքն է: Մյուս արդյունքները, այն ամենը, ինչ արեցին, չարաշահումներ, բռնի ուժ, սանձարձակություն, բացահայտ խախտումներ, տվյալների խեղաթյուրում, տեսականորեն մենք գիտեինք դեռ այն ժամանակ, երբ գնում էինք ընտրության: Ասեմ, որ մենք վեճ ունեինք Դաշնակցության հետ: Դաշնակցությունը նախապես ասում էր՝ միևնույն է, արդյունքն այսպիսին է լինելու, իմաստ չունի մասնակցելը, իսկ մենք, տեսականորեն դա հասկանալով, ասում էինք՝ պետք է այն արդյունքի հասցնել, որպեսզի ժողովուրդն ինքը համոզվի, թե իր դիմաց ինչ անբարո ուժ է կանգնած: Կարծում եմ՝ այդ խնդիրը լուծվեց: Ժողովուրդը տեսավ, թե ինչ է ներկա իշխանությունը: Այդ առումով, ինչքան էլ զարմանալի թվա, հուլիսի 5-ի արդյունքները ես դրական եմ գնահատում:

Հիմա այն մասին թե իրականում ինչ գործընթացներ են կատարվում. հանրահայտ վիճակ ու ընթացք է. երկիրը ստացել է անկախություն, և իշխանավորները, չունենալով բարոյական սկզբունքներ, անում են ամեն ինչ, որպեսզի մնան իշխանության գլուխ: Ես պետք է ասեմ, որ այս վիճակը նրանց ոչ միայն իշխանություն ու փառք է տալիս, այլև հսկայական գումարներ, և նրանք կամավոր չեն հրաժարվելու դրանից: Մյուս կողմից՝ իմ և Լ. Տեր-Պետրոսյանի միջև 1991-ին սկսված վեճն է շարունակվում՝ սովորակա՞ն, թե՞ համաշխարհային ազգ: Սովորական ազգ, այսինքն՝ այն, ինչ հիմա կատարվում է, համաշխարհային ազգ, այսինքն՝ մեծ ձգտումներ և աշխատանք, որպեսզի աշխարհով մեկ սփռված հայը կարողանա միասնաբար ինքնադրսևորվել: Եթե դու գնում ես երկրորդ ճանապարհով, իշխանավորների իշխանությունը սահմանափակ է, որովհետև այդ դեպքում պիտի հաշվի նստեն եկեղեցու հետ, ոչ թե աշխատեն կոտրել նրան, դարձնել իրենց ենթական, պիտի հաշվի նստեն դաշնակցության հետ, ոչ թե կոտրեն, փորձեն դարձնել իրենցը: Պիտի հաշվի նստեն ընկերային բազմաթիվ

խավերի, շերտերի հետ, որ սփռված են աշխարհով մեկ: Հիմա մենք գնում ենք սովորական ազգի ճանապարհով: Ես խոսել եմ մեր երկրի դեսպանների հետ. Հայաստանի դիվանագիտական անձնակազմերը, գտնվելով Բեյրութում, Իրանում, մյուս երկրներում, փաստորեն մեկուսացման մեջ են, տեղի հայկական բնակչության հետ շփում չունեն, սա անբնական, արտառոց կացություն է:

Հաջորդ հարցը. անպտուղ, անիմաստ է այն հույսը, թե ինչ-որ երկրներ կմիջամտեն մեր ներքին կյանքին և կուզեն Հայաստանը դարձնել ժողովրդավարական, ուժեղ երկիր: Երբեք այդպիսի բան չի լինելու: Չկա աշխարհում մի պետություն, որը շահագրգռված է հայ ժողովրդի հզորությամբ, հայկական պետության ուժեղությամբ. սա մեր գործն է, և մենք պետք է կարողանանք այդ խնդիրը ինքներս լուծենք: Եվ ունենալով հուլիսի 5-ի իրական արդյունքները, մեր ժողովրդին առողջ տեսնելով՝ ես համոզված եմ, որ այդ խնդիրները լուծելի են. ընդ որում լուծելի են կարճ ժամանակում: Ասում եմ վստահորեն՝ լուծելի են մեկ-երկու տարում:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Ա.Վարդանյանը
«Հուսաբեր», 1995, 7 օգոստոսի

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ ՉԿԱ

- Ետխորհրդարանական քաղաքական ժամանակահատվածը Ձեզ համար նշանավորվեց դեպի Արևմուտք և ԱՄՆ այցերով, ո՞րն է նրանց գործնական նպատակադրումը:

-Չէի ասի միայն Արևմուտք, որովհետև հասցրեցի լինել նաև Պարսկաստանում, բազմիցս եղել եմ Ռուսաստանում: Իսկ նպատակները երեքն էին. ուսումնասիրել այդ երկրներում ապրող Սփյուռքահայության կառույցները, նրանց հոգսերը և հնարավորությունները, ծանոթանալ այդ պետություններում տիրող վիճակին, քաղաքականությանը և ներքին կյանքին: Մենք այժմ մի նոր աշխարհ ենք մտել, որի հետ պետք է ծանոթանալ, այնուամենայնիվ սովորելու շատ բան կա: Բացի դրանից, կարևոր նշանակություն ունեն այն հանդիպումները և անձնական ծանոթությունները, որ կայացան այդ երկրների կառավարող շրջանակների, քաղաքական գործիչների հետ: Վարչապետությունից հետո ես շատ հրավերներ եմ ստացել, բայց կյանքը Հայաստանում այնքան եռուն էր, որ ես ափսոսում էի Հայաստանից բացակայած յուրաքանչյուր օրը: Այժմ քաղաքական կյանքը մի քիչ ավելի հանդարտվել է, լճացել, և դա այցելությունների ժամանակ ու հնարավորություն է տալիս:

-Ի՞նչն է, Ձեր կարծիքով, այսօր համախմբում սփյուռքահայ տարբեր գաղութներին, կա՞ արդյոք հավաքական շահ և միաժամանակ՝ պառակտում:

-Արտերկրում հայությանը երեք խնդիր է համախմբում.

ա) Հայ դատը, որը միավորում է սփյուռքահայերի անգամ այն հատվածին, որը կտրված է զուտ հայկական հասարակական կյանքից,

բ) անկախ հայկական պետությանը օգտակար լինելու ձգտումը. ցավոք, Հայաստանում վիճակն այնպիսին չէ, որ մարդիկ կարողանան իրենց զգացմունքների դրսևորումը գործնական հիմքերի վրա դնել և

գ) հայ մշակույթի, եկեղեցու, լայն առումով՝ հայապահպանության նպատակը:

Այս երեքը հայության միավորողն են, բայց կան նաև բաժանող հանգամանքներ: Հիմնականը, իհարկե, քաղաքական հայացքների տարբերությունն է, որը մեծ մասամբ գալիս է ավանդաբար: Այսինքն՝ դաշնակցականի ընտանիքում ծնված երեխան դառնում է դաշնակցական, ռամկավարինը՝ ռամկավար, հնչակինը՝ հնչակ: Երբեմն դա ավելի վճռական նշանակություն ունի, քան այն քաղաքական հայացքների տարբերությունը, որ առկա է տվյալ կուսակցությունների մեջ:

-Ձեզ համար կազմակերպված հանդիպումների ընթացքում մտահոգող հարցերի ի՞նչ ընդհանուր շրջանակ էր ձևավորվում:

-Եթե փորձենք սահմանել ընդհանուր հարցերը, որոնք ինձ տվել են տարբեր երկրներում կամ քաղաքներում, ապա մի անգամ ևս պետք է հիշել այն դաստիարակությունն ու կրթությունը, որ ստանում է սփյուռքահայ երեխան: Թե՛ ընտանիքում, թե՛ դպրոցում նրան դաստիարակում են հայրենիքին օգտակար լինելու, ինչ-որ չափով հանուն ազգի իրեն

զոհաբերելու զգացողությամբ: Եվ այս հայեցակետից Ազգային ժողովի ընդունած «Քաղաքացիության մասին» օրենքը նրանց համար անհասկանալի էր: Սփյուռքահայությունը ներքին ողբերգություն է ապրում. ցեղասպանությունից հետո կեղեքված, լլկված հայը սփռվել է ողջ աշխարհով, զրոյից անձնական բարեկեցություն կառուցել, միաժամանակ զոհողությունների գնով վերականգնել իր ինքնությունը՝ կուսակցությունները, ակումբները, դպրոցն ու եկեղեցին: Սերնդեսերունդ փոխանցվել է այն միտքը, որ վաղ թե ուշ լուծվելու է Հայ դատի խնդիրը և Հայաստանը դառնալու է անկախ, իսկ իրենք ծառայելու են հայրենիքին: Բայց այդ անկախ պետությունը հանկարծ Սփյուռքին ասում է. «Դուք ավելորդ եք»: «Քաղաքացիության մասին» օրենքը մեծ վրդովմունք է առաջացնում, վրդովեցնում է նաև այն, որ ՀՀ անձնագիր, քաղաքացիություն կարող ես ստանալ դրամով: Հայաստանի անձնագիրը սփյուռքահայերից շատերի համար զուտ խորհրդանշական արժեք ունի, բայց վաշխառուի պես մեր պետությունն ուղղակի վաճառում է այդ անձնագրերը: Կամ տալիս է այն սփյուռքահայերին, որոնք իշխանությունների հայեցակետից դիտվում են «բարեհույս»: Թերևս նպատակահարմար է մի երկու խոսք ասել նաև «սև» ցուցակի մասին, որտեղ գրանցված մարդկանց չի թույլատրվում այցելել Հայաստան: Որպես օրինակ՝ բերեմ Կարո Արմենյանի անունը, որը Արևմուտքի խոշորագույն ֆիրմաների ներկայացուցիչ է՝ հարգված Վաշինգտոնի կառավարական շրջաններում, իրական հայ մտավորական: Նա իր ողջ կյանքը նվիրել է Հայ դատի շրջանակներում Թուրքիայի դեմ պայքարին, բայց ոչ միայն ազատ մուտք ունի Թուրքիա, այլև կոնֆերանսների ժամանակ հրավերներ է ստանում, իսկ Հայաստան նրա մուտքը կասեցված է: Հայությանը շատ են մտահոգում նաև Ղարաբաղը, Հայաստանի ներքին կյանքը:

-Նկատի ունեք, որ սփյուռքահայության մեջ հուսախաբության և մեկուսացվածության տրամադրություններ են երևան գալիս:

-Պետք է նշել, որ սփյուռքահայության զգալի մասն ապրում է այնպիսի երկրներում, որտեղ կայուն ժողովրդավարություն է, մարդու իրավունքների և օրենքների գերակայություն: Այդ հայեցակետից Հայաստանում տեղի ունեցածը նրանց համար շատ անգամ անհասկանալի և անընդունելի է: Դա էլ բազմաթիվ հարցեր էր առաջացնում հուլիսի 5-ի ընտրությունների և հանրաքվեի օրինականության շուրջ: Հուսախաբությունը մեծ է, սակայն հետաքրքրությունը կորած չէ: Բայց եթե նման վիճակը տարիներ տևի, մարդիկ, իրոք, տեսնելով, որ Հայաստանի պետությունն իրենցից մեկուսի զբաղված է իր գործերով, վերջնականապես կհամոզվեն, որ ոչ մի ձևով պիտանի լինել չեն կարող, և հայ գաղթօջախները դանդաղորեն կծուլվեն, կուծանան:

-Իսկ ամերիկյան քաղաքական շրջանակներում ի՞նչ վերաբերմունք կա Հայաստանի անցած և անցնելիք ճանապարհի նկատմամբ:

-Քաղաքական գործիչների երկակի վերաբերմունք կա. մի կողմից՝ լինելով ժողովրդավարական երկիր՝ տհաճությամբ են համակվում, երբ մի այլ երկրում ոտնահարվում են համամարդկային կարևորագույն արժեքները: Նրանք շատ չեն արտահայտվում, բայց լավ տեղյակ են այս վերջին ընտրությունների արդյունքներին: երկրորդը պետական շահերն են՝ կապված Անդրկովկասում Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի ազդեցության հետ: Գաղափարական և պետական-քաղաքական մոտեցումները երբեմն չեն ներդաշնակվում, և դա բնական է: Ինձ հաջողվեց հանդիպել սենատի հանրապետական մեծամասնության ղեկավար Բոբ Դոուլի հետ, որ գալիք ընտրությունների ժամանակ ԱՄՆ նախագահ դառնալու մեծ հնարավորություններ ունի, ինչպես նաև դեմոկրատական փոքրամասնության ղեկավար Թոմ Դաշըլի հետ: Երկուստեք մեծ հետաքրքրություն կար հայկական հարցերի նկատմամբ: Կոնգրեսականների հետ հանդիպման ժամանակ, երբ ես պատմեցի մեր անկախության և Ղարաբաղի մասին, Ջո Քենեդին ինքը խնդրեց անդրադառնալ մեր ներքին կյանքին: Ես նշեցի, որ, իմ խորին համոզմամբ, յուրաքանչյուր ժողովուրդ, առանց դրսից որևէ միջամտության, պետք է կարողանա լուծել իր արժանապատվության և ազատության հարցերը: Բայց այնուհանդերձ ճիշտ կլինի, որ այլ երկրների քաղաքական գործիչները իրական պատկերացում ունենան Հայաստանի մասին, դա թույլ կտա նրանց չխաբվել, որովհետև մեր հանրապետությունը ներկայացնում են իբրև մի երկիր, ուր «դեմոկրատ» իշխանությունները պայքարում են կոմունիզմի կամ ֆաշիզմի դեմ: Իրականում մեր ժողովուրդը քաղաքականապես շատ հասուն է՝ լի ներքին կյանքի ազատությունների գիտակցությամբ: ես ուզում էի շեշտել՝ Հայաստանում ապրում է մի ժողովուրդ, որն ունի բարձր՝ անգամ արևմտյան չափանիշներով, մակարդակ, նա պայքարել է իր ազատության

համար, զգացել է դրա հոտը, բայց այսօր նման պետության մեջ ոչ թե դանդաղ-դանդաղ քայլեր են արվում դեպի ժողովրդավարություն, այլ 1989-90թթ. համեմատ՝ մենք արագ հետ ենք գնում: Մեր ժողովուրդը ձեռք բերեց ազատություն, բայց մի խումբ բռնազավթեց այն, և մարդիկ չդիմագրավեցին, որովհետև արցախյան պատերազմը կար: Արևմուտքը, սակայն, դատում է ըստ արդյունքների. այսպիսի պետություն ունեք, ուրեմն դրան համարժեք ժողովուրդ եք: Խոսքերով ոչինչ չես ապացուցի, ժողովուրդն է միայն ունակ իր պայքարով և դրա շնորհիվ նվաճված ազատությամբ ապացուցելու իր ինքնությունը:

-Այժմ Հայաստանում քաղաքական կյանքը դարձյալ սկսում է աշխուժանալ ներ- և միջկուսակցական պարզաբանումներով, օրակարգում վստահելի դաշնակիցների խնդիր է՝ արդեն նախագահական ընտրություններին ընդառաջ: Դուք ինչպե՞ս եք գնահատում ԱԺՄ և ավանդաբար ազգային ուժերի դաշինքի հնարավորությունը՝ մասնավորապես ՀՅԴ վերաբերմամբ:

-Իմ գնահատականը այնքան էլ չի համապատասխանում ձերին. Հայաստանում ճահճացում է, ես քաղաքական աշխուժացում չեմ տեսնում: Այն, որ կուսակցությունների ներկայացուցիչները հանդիպում և քննարկում են ապագայի անելիքները, բնական է, դա միշտ էլ եղել է: Իսկ քաղաքական աշխուժացում չկա: Ինչ վերաբերում է դաշնակիցների որոնմանը, եթե տարբեր կուսակցությունների ծրագրերը, նպատակները գոնե կարճ ժամկետներում համընկնում են, ապա նրանք կարող են որոշակի ժամանակ դաշնակիցներ լինելու փորձ կատարել:

-Իսկ ինչո՞վ կհիմնավորեք Հայաստանի քաղաքական ճահճացումը:

-Հիմնական պատճառն այն է, որ ժողովուրդը հիասթափված և վախեցած է: Ես վերադարձա արտասահմանից և իմացա՝ Սիլվա Մամիկոնյանին, որը բավական փոքր պաշտոն ուներ ներկա կառավարությունում, կրճատել են՝ երեսին բացահայտ ասելով՝ հանում ենք, որովհետև մտերիմ ես Վազգեն Մանուկյանի ընտանիքին: Խոսքը վերաբերում է այն Սիլվային, որը շարժման ամենագործուն անդամներից էր՝ հավասար ինձ, Լևոն Տեր-Պետրոսյանին, Բաբկեն Արարքցյանին, Վանո Սիրադեղյանին…

Մենք՝ քաղաքական գործիչներս, բավական համարձակ խոսում ենք: Մեր դեմ դժվար է որևէ բան ձեռնարկել, բացի փամփուշտից ու բանտից: Սակայն բազմաթիվ մարդիկ, քաղաքականության մեջ մտնելով և լինելով ընդդիմություն, պատժվում են, աշխատանքից են հեռացվում, նրանց սպառնում են հիվանդ երեխային բանակ տանել, ձեռներեցներին՝ ճնշում…Հայաստանում քաղաքական հայացքների համար հետապնդում են: Մարդիկ վախեցած են այնքան, որքան Խորհրդային Միությունում: Այսպիսով կուսակցական զանգվածները չեն ընդլայնվում: Բոլորը դժգոհ են, բայց դժգոհ են տանը, վախենում են արտահայտվելուց: Դրան գումարած՝ ծանր սոցիալական վիճակը, հոգսաշատ կենցաղը: 2-3 հոդված մամուլում, 2-3 ելույթ ԱԺ-ում, 2-3 հանրահավաք, դա բնավ էլ քաղաքական կյանք չէ:

-Իսկ միգուցե այդ վախի հիմքում անվստահությո՞ւնն է ընդդիմության, այլընտրանքային ուժերի հանդեպ:

-Անշուշտ, դա նշանակություն ունի, սակայն «ընդդիմություն», «կուսակցություններ» բառերը մոդայիկ են դարձել, բայց դու մարդ ես, տեղում վիրավորում են քո արժանապատվությունը, դու պետք է պայքարես դրա դեմ՝ անկախ այն բանից՝ կա ընդդիմություն, թե չկա: Տեսեք, պետության մեջ համատարած թալան է, համատարած ցինիզմ: Իշխանավորներն արդարացնում են իրենց՝ պնդելով, թե այս ծանր ճանապարհով անցել են գրեթե բոլոր ժողովուրդները, իսկ կաշառակերությունն ամենագո է: Ճիշտ չէ, այս ճանապարհով անցել են այն ժողովուրդները, որոնք ի սկզբանե չեն ունեցել մտավորականություն, կրթություն, բարոյական կողմնորոշումներ: Կաշառակերություն կա ամենուր, բայց դա կյանքի նորմ չէ, այլ մի փոքր խավի «չարաճճիություն», որ բացահայտվելու դեպքում պատժվում է:

-Ձեր բացակայության ժամանակ Երևանում թավշե «հեղաբեկում» էին հրահրում կառավարության փոփոխմամբ: Որպես այլընտրանք ներկա վարչապետին նշվում էր նաև Ձեր թեկնածությունը: Դուք ինչպե՞ս կմեկնաբանեք այս, հնարավո՞ր է արդյոք. ազգային համաձայնության կառավարություն առաջիկայում:

-Վերևներում մեծ պայքար կա, պայքարն ընթանում է իշխանության բարիքներից առավելագույնս օգտվելու և Հայաստանի «յուղալի» կտորները իրար մեջ բաժանելու համար: Ուստի ժամանակ առ ժամանակ նման առճակատումներն անխուսափելի են: Ի՞նչ նպատակով

է օգտագործվում իմ անունը, Աստված գիտե: Ինչ վերաբերում է ազգային համաձայնության կառավարությանը, ապա անհավատալի մի հեռանկար պատկերացնենք՝ ինձ առաջարկում են վարչապետ, և նույնքան անհավատալիորեն ես համաձայնում եմ: Միևնույն է, դրանից ազգային համաձայնության կառավարություն չէր ստացվի: Խոսքը գործարանում նոր հաստոց գնել-չգնելու մասին չէ, այլ ընդհանուր քաղաքական-տնտեսական ծրագիր մշակելու, որի շուրջ կհամախմբվեն ժողովրդի տարբեր շերտերը, գործող կուսակցությունները: Երբեմն դա շատ օգտակար է ճգնաժամից դուրս գալու համար, բայց մոտ ապագայում ես նման հնարավորություն այստեղ չեմ տեսնում:

-ԱԺՄ-ն հռչակում է մի սկզբունք, համաձայն որի իշխանությունը «խորհուրդներ» տալ չի պատրաստվում, դա նշանակու՞մ է, որ համագործակցության դաշտը փակ է:

-Համագործակցությունը անհատներով չի որոշվում: Խաչմերուկից մենք սկսեցինք գնալ մի ճանապարհով, որը տանում է դեպի անբարոյական հասարակություն և բռնապետություն: Այդ ճանապարհին «խորհուրդներ» տալը հիշեցնում է մարդկանց մի եռյակ, որտեղ մեկը խեղդում է մյուսին, իսկ երրորդը առաջարկում է բթամատի առավել հարմար դիրքեր՝ կոչվելով «շինիչ ընդդիմություն»: Մենք ուղղակի կարծում ենք, որ այդ մարդուն պետք չէ խեղդել: Երբ Հայաստանից բացակայում ես, կարոտից սիրտդ խեղդվում է, ուզում ես վերադառնալ, բայց վերադարձից հետո ծնվող առաջին զգացողությունը ոչ այնքան զայրույթն է, որքան ծիծաղը, այս հսկա աշխարհի փոքր անկյունում կառուցել են մեծ ճահիճ, և վիճել, թե գորտերից որն է ավելի գեր ու կանաչ…

-Չե՞ք կարծում, որ Ձեր վարչապետության օրոք դրվեց հիմքն այդ ճանապարհի և այն մտածողության, որ հանուն ինչ-ինչ գաղափարների կարելի է շրջանցել օրենքը, նպատակն արդարացնում է միջոցները:

-Իմ վարչապետությունը կարճ տևեց՝ 1 տարի 1 ամիս: Ու թեև մենք ընտրությունների ճանապարհով եկանք, դա հեղափոխություն էր: Հեղափոխությունները բնորոշվում են այնպիսի հատկանիշով, որ այդ ալիքով իշխանության եկած մարդիկ լինում են մեծամիտ, ինքնավստահ: Երբեմն իրենց վեր դասելով օրենքից և համբերություն չունենալով գնալու օրինական ճանապարհով՝ նրանք գերադասում են արհամարհել օրենքը հանուն այն ծրագրերի, որոնք, իրենց համոզմամբ, ունակ են «երջանկացնելու» ժողովրդին: Վերջնակետում միշտ էլ նպատակների և արդյունքի անհամապատասխանությունն է: Ինձ համար մեծ դաս էր վարչապետությանս առաջին ամիսներին տեղի ունեցած հետևյալ միջադեպը. այն ժամանակվա գործերի կառավարիչ Հրաչիկ Հակոբյանը, որը ինձ հետ պետք է ստորագրեր մի որոշում, հրաժարական տվեց՝ պատճառաբանելով օրենքին հակասող փաստաթուղթ ստորագրելու անկարողությամբ: Փորձեցի հիմնավորել այդ քայլը ժողովրդի համար օգտակարությամբ, իսկ Հրաչիկ Հակոբյանը պատասխանեց.«Ես այդպիսի տերմիններով չեմ մտածում, ես մտածում եմ՝ օրինական է, թե ոչ»: Այդ դեպքը իմ հետագա գործունեության ընթացքում վճռական նշանակություն ունեցավ, ես հասկացա շատ պարզունակ մի բան. ժողովրդի բարեկեցության մասին մտածելով անգամ՝ դու իրավունք չունես օրենքը շրջանցելու: **Իմ հակասության պատճառներից մեկը շարժման ակունքներից եկած և բարձր կարգավիճակ ունեցող «Ղարաբաղ» կոմիտեի որոշ անդամների հետ սկսվեց հենց այս կետից: Իմ գնալուց հետո այդ վտանգավոր ճանապարհը խորացավ, և օրենքի խախտումներն «ի շահ ժողովրդի» բնականորեն վերածեցին խախտումների ի շահ անձնական նպատակների:**

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Նարինե Դիլբարյանը
«Առավոտ», 1995, 22 նոյեմբերի

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՊԱՐԶՈՒՄ Է ԱԺՄ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

Ըստ Վազգեն Մանուկյանի՝ Հայաստանի անկախությանը մոտակա տասնամյակներում վտանգ չի սպառնում ո՛չ տարածաշրջանում, ո՛չ Ռուսաստանի կողմից: Այս իմաստով իզուր են սպասումները, թե Ռուսաստանում իշխանության կգան Խորհրդային Միությունը վերականգնող ուժերը. Ռուսաստանի իշխանություններն ու ժողովուրդը լավ հասկացել են՝ որևէ ֆինանսական, տնտեսական պարտավորություն չվերցնելով, հանրապետություններին իրենց ռազմավարական ազդեցության ոլորտում պահելու առավելությունը:

Պետությո՞ւն ենք կառուցում

Հաճախ մեր իշխանավորներն ասում են՝ մի խանգարեք մեզ, պետություն ենք կառուցում: Ես միանգամից մերժում եմ այդ միտքը՝ այժմ պետություն չի կառուցվում: Մեր պետությունը զրոյից, մեծ դժվարությունների գնով, կառուցվում էր 1918թ., երբ մենք իսկապես անկախություն ձեռք բերեցինք: Եղեռնից, Առաջին համաշխարհային պատերազմից (1914-18թթ.) հետո մեր պապերը կարողացան կառուցել այս պետությունը: 20 թվականին կորցրինք անկախությունը, բայց պետությունը շարունակեց գոյատևել ու զարգանալ: Չքննենք, թե ինչպես: Երկրորդ անգամ անկախություն ստանալիս ունեինք պատրաստի պետություն՝ իր կառույցներով՝ բանակ, ֆինանսական համակարգ, միջազգային հարաբերություններ (արտգործնախարարություն): Զարգացնել պետությունը, հասարակությունը՝ այդ մենք կանենք: Այնպես որ, պետության կառուցման մասին խոսակցությունները խաբեություն են:

1988 -ի շարժման առջև դրված նպատակները իրագործվեցի՞ն

Անկախությունը: Այն ստացանք բարենպաստ պայմաններում՝ աշխարհում տեղի ունեցող գործընթացները, հայրենիքում ապրող հայությունը (3,5 մլն), պատրաստի պետական կառույցները: Ժողովրդավարության խնդիրը, այն պետություններն են դառնում հզոր, որտեղ ժողովրդավարություն է: Սակայն 1991թ. մենք այս խնդրում հետդարձի հսկա քայլ արեցինք: Ճիշտ է, կային օբյեկտիվ դժվարություններ՝ շրջափակում, պատերազմ, երկրաշարժի հետևանքներ: Ճիշտ է, ստեղծեցինք և ԳԽ-ում ընդունեցինք օրենքներ: Բայց ժողովրդավարությունը պետք է հիմնված լինի այնպիսի տնտեսակարգի վրա, որը կախված չէ մեկ-երկու կամ մի քանի հոգուց, համայնավարությունը ևս դրա հնարավորությունը չի տալիս: Չկային ժողովրդավարական ավանդույթներ, որպիսիք նման պետություններում գործում են գրված օրենքներին հավասար: Բայց մենք համոզված էինք, որ շատ արագ կարող ենք անցնել այդ ճանապարհը հարյուր տոկոսանոց գրագետ, Արևմուտքին չզիջող կրթական համակարգով, կլանային բաժանումից զերծ, 1988-ի գաղափարները կրող հասարակությամբ: Ամեն ինչում նահանջեցինք, ամեն ինչը ետ մնաց: Իշխանություններն օգտվելով բնական դժվարություններից, տնտեսության փլուզումից, պատերազմից՝ ժողովրդի կամքին հակառակ ամեն ինչ վերցրին իրենց ձեռքը: Նրանց բռնած ուղին ժողովրդավարություն չտարավ: Դրա վերջին ապացույցն է հուլիսի 5-ը: Հայտնվեցին տասնյակ մտավորականներ, որոնք թերթերում գրեցին իրենց չկարդացած սահմանադրության մասին: Մարդիկ հարմարվեցին՝ ոմանք անձնական շահից ելնելով, ոմանք կիսաանձնական (թատրոնի, ինստիտուտի տնօրենն ասում էր մի քիչ քծնեմ, որ իմ թատրոնը, ինստիտուտը կարողանամ պահել): Եղան ժողովրդի շերտեր, որոնք իսկապես ճնշմանը չդիմացան: Սրանով հանդերձ հուլիսի 5-ի ընտրություններ անցկացվեցին բռնի ուժի միջոցով, իսկ սահմանադրության հանրաքվեի արդյունքներն այդ ուժով այլևս չկարողացան կեղծել, դրանք կեղծվեցին կենտրոնական հանձնաժողովում:

Ազգային միասնության մասին

Ազգային միասնությունն այն պայմանագիրն է, որը սահմանադրությամբ կնքվում է պետության և հասարակության միջև: Այս սահմանադրությունը ընդունելի չէր, որովհետև այն պետք է պայմանագիր լիներ ոչ միայն Հայաստանում ապրող հայերի, այլև սփյուռքահայերի և պետության միջև: Բայց «ընդունված» սահմանադրությունը անկախ դրանից էլ ընդունելի չէ, որովհետև պայմանագիրը կեղծ է, չի վավերացվել ժողովրդի կողմից: Հիմքում կեղծիք է և կեղծիքը շարունակվում է: Ոչ ոք չի կարող այդ վիճակը փոխել, բացի մեր ժողովրդից: Հայաստանում ժողովրդավարության համար պետք է պայքարի ողջ ժողովուրդը: Դա միայն ընդդիմադիր կուսակցությունների խնդիրը չէ, այլ ողջ ժողովրդի: Թող ոչ ոք չմտածի, որ ինքը հարստանալով ու ծախսելով երջանկանալու է: Աղքատ, իրավազուրկ պետությունում երջանիկ

լինել հնարավոր չէ: Բոլոր երկրները, որ անցել են ժողովրդավարության ճանապարհով, ներքին մեծ պայքար են մղել:

Անցա՞նք շուկային

Շարժման առջև դրված մյուս նպատակը շուկայական տնտեսության անցումն էր, ազատ ձեռներեցության, մրցակցության շնորհիվ արդյունավետության ապահովումը: Միության փլուզմամբ նախկին ինժեներա-տեխնոլոգիական պատվերները վերացել են, իհարկե, դժվար է բոլոր իմաստներով: Իշխանություններն ասում են՝ կպահպանենք ֆինանսական խիստ քաղաքականություն, կսահմանափակենք սոցիալական, կրթության, առողջապահության ծրագրերը, կստեղծենք բոլորի համար հավասար պայմաններ, ուժեղը կհզորանա, թույլը կմահանա: Դա դասակարգային մոդել է, դարվինիզմ՝ տնտեսության մեջ, որ լիովին ոչ մի երկրում չի կիրառվել, որովհետև ոչ մի երկիր ժողովրդին թույլ չի տվել, որ իր շահերն անտեսվեն: Սոված ժողովրդի առկայության պայմաններում դա հնարավոր չէ կիրառել, որովհետև ավելի հեշտ է շրջանցել օրենքը, քան մահանալ: Եվ եթե օրենքով էլ կիրառվեր, Հայաստանում բազմաթիվ ճյուղեր կփակվեին (և փակվում են), որովհետև մրցունակ չեն: Դա կարող էր մեկ պլյուս տալ, եթե մրցակցության միջոցով ապահովվեր տնտեսությունը: Բայց Հայաստանում մրցակցություն չկա, շուկա բառը դատարկ բառ է, և ամբողջ տնտեսությունն այսօր անցնում է տասը-քսան ընտանիքների ձեռքը: Նրանց միջև կա մրցակցություն, թե ո՞վ է ավելի մոտ կանգնած նախագահին, իշխանության ղեկին: Կա միայն քաղաքական մրցակցություն: Մեր ժողովուրդը հաղթահարում է մոդելի պարունակած դժվարությունները, բայց տնտեսության զարգացման հեռանկար չի երևում: Ճիշտ է, հայերն այն մարդիկ չեն, որ սովից մահանան, կգնան արտասահման, դրսում կաշխատեն, ազգականները դոլար կուղարկեն, և երկիրը ինչ-որ վիճակում կպահպանվի: Մի ծայրում դարվինիզմ տնտեսության մեջ, մյուսում՝ 10-20 ընտանիքի աֆրիկյան տիպի իշխում, մենք գտնվում ենք այդ ծայրահեղությունների միջանկյալ հատվածում: Մինչև այդ հատվածից դուրս չգանք, տնտեսություն չի զարգանա:

Հայ դատի խնդիրը

Դա մեր ժողովրդի ազգային խնդիրն է: Դեռ կենդանի են այն մարդիկ, որոնք ծնվել են մեր կորցրած երկրում, կրել են դժվարությունները և հայտնվել սփյուռքում, որովհետև հայրենիքից նրանց դուրս են շպրտել: Սփյուռքահայության համար դա նաև իրավունքի խնդիր է: Մենք չենք կարող այդ հարցը մոռանալ: Մեր պետությունը դրանից հրաժարվել չի կարող, բայց երբեմն չի կարող իր քաղաքականության մեջ այն պարզել իբրև դրոշակ: Եվ մենք իրավունք չունենք սփյուռքին ասելու տնտեսական հարաբերություններ ունենք Թուրքիայի հետ, դուք մի զբաղվեք Հայ Դատով: Տնտեսական հարաբերություններ կարող ենք ունենալ, բայց քաղաքական վեճը պետք է շարունակվի:

Արցախի հարցը

Արևմուտքի ջանքերն ակնկալում են այնպիսի լուծում, որ Ղարաբաղը մնա Ադրբեջանի կազմում այս կամ այն ինքնավարությամբ: Կա նավթամուղի խնդիր, որը եթե անցնի Հայաստանով, տարեկան 100 մլն դոլար կարող է բերել: Հաճախ լսում եմ կարծիքներ՝ ինչու հոսանքին դեմ գնանք, եկեք համաձայնենք Արցախի կոնֆեդերատիվ ինչ-որ ձևին և ստանանք մեր շահը: Բայց այս հարցը ոչ մի իրատեսական հիմնավորմամբ այսպես չի կարելի լուծել: Արցախը միայն տարածք չէ, այլ մեր ժողովրդի ապագան: Կորցնելու դեպքում նա չի կարող ոչ պետություն զարգացնել, ոչ էլ որևէ դեր խաղալ աշխարհում:

Սփյուռքը

Սփյուռքը պետք է չմիջամտի Հայաստանի կյանքին և հակառակը: Այս մտայնությունն է զարգացվում: Նախագահի բառերով ասած՝ դա կեղծ կատեգորիա է: Սփյուռք-հայրենիք կապը

ուզում են կարգավորել իշխանությունների միջոցով և ոչ ողջ ժողովրդի մակարդակով: Ով ընդունեց իշխանությունների թելադրանքը՝ նա վեր է բարձրացվում, և հաճախ այն խավը, որն արհամարհված է հայության կյանքում: Սփյուռքի հետ հարաբերությունները պետք է ելնեն Հայրենիք-Սփյուռք միասնության գաղափարից՝ երկբևե՞ռ, բազմաբևե՞ռ, Հայաստանի՞ց կարգավորվող՝ սփյուռքի հետ քննարկելու խնդիր է:

Մեր կողմից ավելացնենք, որ ԱԺՄ 6-րդ համագումարի բանաձևում Հայաստան-սփյուռք հարաբերություններում վարչախմբի քաղաքականությունը անվանված է պառակտիչ, Սփյուռքի ֆինանսական կարողությունները սեփական դիրքի ամրապնդման համար օգտագործող, ՀՅԴ գործունեության կասեցմամբ, ՀՌԱԿ կազմաքանդմամբ և երկքաղաքացիության մասին օրենքի մերժումով, Սփյուռքի և հայրենիքի միջև պատնեշ հանդիսացող:

Քաղվածքներ Ժուռնալիստի տանը 1995թ.
դեկտեմբերի 9-10-ը տեղի ունեցած
ԱԺՄ VI-րդ համագումարում
ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի ելույթից
Մարիետա Խաչատրյան
«Լրագիր», 1995, 12 դեկտեմբերի

ՊԱՅՔԱՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՁԵՎԸ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԻՎԸ ՇԱՐԺԵԼՆ Է

Ապրիլի 13-ին տեղի ունեցավ ԱԺՄ կոնֆերանս, որտեղ որոշում ընդունվեց մասնակցել նախագահական ընտրություններին և առաջադրել ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանին: Սակայն նախագահական մարաթոնին ԱԺՄ-ի ներգրավման հետ կապված են բազմաթիվ հարցեր, որոնք պարզաբանելու նպատակով դիմեցինք ԱԺՄ նախագահ, հանրահայտ քաղաքական գործիչ Վազգեն Մանուկյանին:

-ԱԺՄ-ն արդեն որոշում կայացրեց՝ մասնակցելու նախագահական մարաթոնին: Մյուս կողմից՝ Հայաստանում գրեթե ոչ ոք չի հավատում արդար ընտրություններին: Մտավախություն չունե՞ք, արդյոք, որ Ձեր մասնակցությամբ չեք հասնի շոշափելի արդյունքների, այլ պարզապես կնպաստեք ընտրությունների դեմոկրատական ֆոնի ստեղծմանը:

-Նախ ԱԺՄ-ի ընտրություններին մասնակցելու վերջնական որոշումը կայացվելու է համագումարում: Կոնֆերանսն ուղղակի կոչ արեց, որպեսզի համագումարը գնա այդ ճանապարհով, բայց վերջնական որոշումն ընդունելու է համագումարը:

Երկրորդ՝ արդեն ձանձրույթի է հասցնում այն միտքը, որ Հայաստանում հնարավոր չեն արդար ընտրություններ, և իմաստ չունի մասնակցել ընտրություններին: Ինչ է, Մարսից պետք է ինչ-որ էակներ գան ու Հայաստանում արդարությու՞ն հաստատեն: Միայն պայքարով է հնարավոր դա անել, և պայքարի լավագույն ձևը ընտրությունների միջոցով ժողովրդավարության անիվը շարժելն է: Ուրիշ ճանապարհ ես չեմ տեսնում: Եթե որևէ մեկը առաջարկի իրական այլ ճանապարհ, մեծ հաճույքով կգնամ այդ ճանապարհով:

- Ինչպե՞ս եք գնահատում Ձեր հաղթանակի շանսերը, չէ՞ որ բացի Լ. Տեր-Պետրոսյանից կա ևս մեկ հզոր մրցակից՝ կոմունիստները՝ ժողովրդի կարոտախտային տրամադրություններով, որոնք Զյուգանովի հաղթանակի դեպքում շեշտակի կուժեղանան:

-Կուժեղանան, թե ոչ, ինչ տրամադրություններ կունենա ժողովուրդը՝ ցույց կտա առաջիկա մի քանի ամիսը:

-1990-91 թթ., երբ Դուք վարչապետ էիք, և այսօր կան բազմաթիվ զուգահեռներ Ռուսաստանի շուրջ ընթացող ինտեգրացիոն գործընթացներում: Այն ժամանակ Դուք հարկադրաբար ստորագրեցիք միութենական պայմանագրի տնտեսական բլոկը: Ձեր կարծիքով, ո՞րն է լավագույն գործելակերպն այսօր:

-Նախ էապես տարբեր են գործընթացները: Այն ժամանակ կենտրոնախույզ ուժերն էին հզոր, և գործընթացը շատ բնական էր: Բոլորն էլ հասկանում էին, որ առանձնանալուց հետո վերստին միավորվելու միտում կառաջանա, բայց արդեն ուրիշ սկզբունքների հիման վրա: Ինչ վերաբերում է այն ժամանակ ստորագրած փաստաթղթին, ես ոչ թե ինտեգրացիայի քայլ էի անում, այլ ձգտում էի մեղմացնել եղած գործընթացները, որպեսզի մենք շատ չցցվենք այդ գործընթացներում: Ես մոլորություն չունեի, թե այդ ստորագրությամբ ինչ-որ գործընթացի սկիզբ է դրվում:

Այժմ ես մեծ հաճույքով փաստաթուղթ կստորագրեի Ռուսաստանի և մյուս հանրապետությունների հետ տնտեսական ինտեգրացիայի մասին: Բայց չէի ցանկանա, որ դա բխեր ընտրություններից կամ ցանկացած այլ բնույթի քաղաքական իրավիճակից: Դա լուրջ քայլ է, անհրաժեշտ է ծանրութեթև անել և որոշակի պայմաններով ստորագրել այդպիսի փաստաթուղթը:

-Ժամանակին մամուլը հաղորդել էր, որ ՀՅԴ-ն չեղյալ է հայտարարել Ձեր թեկնածությանն աջակցելու մասին որոշումը, ինչն այնուհետ հերքել եք ինչպես Դուք, այնպես էլ ՀՅԴ-ն: Սակայն, ինչպես ասում են, առանց կրակի ծուխ չի լինում: Ի՞նչ է թաքնված դրա հետևում, և ի՞նչ ընթացք են ստացել ՀՅԴ-ԱԺՄ փոխհարաբերությունները, չի՞ նկատվում, արդյոք, սրման միտում:

-Մինչև 1990թ. ես համոզված էի, որ այդ ասացվածքը ճիշտ է: Հետագայում համոզվեցի, որ առանց որևէ կրակի լինում է ծուխ, ոմանք վարպետորեն ծուխ են արձակում, որպեսզի մյուսները մտածեն, թե ինչ-որ կրակ կա: Թե ում էր դա ձեռնտու, ես կասկածներ ունեմ, սակայն իմաստ չունի առանց փաստերի կասկածները հայտնել մամուլին:

Ինչ վերաբերում է մեր և ՀՅԴ փոխհարաբերություններին, ո՛չ մեր կուսակցությունում, ո՛չ ՀՅԴ-ում անձնական հավակնությունների դերը չնչին է: Ավելի մեծ նշանակություն ունի, թե մենք ինչ մոտեցումներ ունենք մեր ազգի և պետության ապագային վերաբերող հարցերին: Ֆունդամենտալ հարցեր կան, որոնց վերաբերյալ մենք ու ՀՅԴ-ն նույն մոտեցումներն ունենք, հարցեր կան, որոնց դեպքում մտահոգությունները տարբեր են: Այնուամենայնիվ, ես որևէ սրում մեր և ՀՅԴ-ի փոխհարաբերություններում չեմ նկատում:

-Պատկերացրեք, որ Դուք արդեն ընտրվել եք ՀՀ նախագահ: Ինչպիսի՞ մոտեցումներ կունենաք ԼՂՀ հարցի լուծմանը՝ հաշվի առնելով այսօրվա գործընթացները:

-1988թ. սկսած ես այնքան շատ եմ խոսել Ղարաբաղի հարցի շուրջ, և այնքան քիչ են փոխվել իմ մոտեցումները, որ այդ ամենը կրկնել իմաստ չունի: Կարևորագույնը հետևյալն է.

1.Պետք է անել ամեն ինչ, որպեսզի խուսափենք պատերազմից:

2.Ղարաբաղը պայքարում է, որպեսզի լինի Ադրբեջանից անկախ պետություն, և մենք պետք է բոլոր միջոցներով սատար կանգնենք դրան:

Մնացածը քաղաքական բանակցությունների հարցեր են, և տա Աստված, որ քննարկվեն բանակցությունների սեղանի շուրջ և ոչ թե պատերազմի դաշտում: Ե՛վ Հայաստանում, և՛ Ադրբեջանում, և՛ Ղարաբաղում ամենից քիչ պատերազմ են ցանկանում զինվորականները: Պետք է նշեմ, որ որ այսօր ռեալ հնարավորություն կա՝ Ղարաբաղի անկախությունն ապահովելու բանակցությունների սեղանի շուրջ: Այսօրվա գործընթացների միտումները շատ բարդ են, տեղի են ունենում դիրքորոշումների փոփոխություններ ինչպես մեծ տերությունների, այնպես էլ մեր հարևանների մոտ:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Հովհաննես Գալաջյանը
«Իրավունք», 1996, ապրիլի 20-26

ԵՐԲ ՄԵՆՔ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԿՄԵԿՆԵՆՔ

Հայաստանում ընտրություններ են մոտենում, և դժվար է պատկերացնել, թե արևմտյան երկրներում ընտրությունների ժամանակ շոշափվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են անկախությունը, մասնավոր սեփականությունը, ժողովրդավարությունը, շուկայական հարաբերությունները: Այդ երկրներում վեճը բոլորովին այլ հարցերի շուրջն է լինում՝ հարկերի,

սոցիալական ծրագրերի, արտաքին քաղաքականության մեջ երկու հնարավոր ճանապարհներից մեկը ընտրելու: Մեր երկիրն ուրիշ է, հասարակության մեջ բեկում է կատարվել: Եվ պատահական չէ, որ Կոմկուսն ու ՀՀՇ-ն էլ իրենց համագումարներում անդրադառնում էին և՛ այդ հարցերին, և՛ պատմական էքսկուրսներ էին կատարում: Հասարակությունում իշխող այս տրամադրությունը պարտադրում է մեզ էլ անդրադառնալ այդ հարցերին:

Նախ՝ ԽՍՀՄ-ի փլուզումը և շատերի կարոտախտն այն կյանքի համար, որ կորցրեցինք: Իհարկե այդ կարոտախտի մեջ կան բնական տարրեր: Բայց այն միտքը, թե ԽՍՀՄ-ը փլուզեցին ինչ-որ դավաճաններ, ԱՄՆ-ի հետախուզությունը, սիոնիստական ինչ-որ կազմակերպություններ կամ մասոններ, անհիմն է: Դրանք հնչում են, որովհետև հեշտ են ընկալվում ժողովրդի կողմից, որովհետև եթե մի բան քանդել են չարամիտները, ուրեմն կարելի է վերականգնել: Իրականում այդ ամենի խորքում ընկած են օբյեկտիվ գործընթացներ: Համաշխարհային շարժում է տեղի ունենում, որին դեմ կանգնել հնարավոր չէ: Իր գոյության ընթացքում ԽՍՀՄ-ը որոշակի հաջողությունների հասավ: Թեպետ ժողովուրդը տվեց միլիոնավոր զոհեր, կորցրեց ազատություններ, բայց եթե խոսքը Հայաստանի մասին է, չպետք է ուրանալ մեր բնակչության կտրուկ աճը, տեխնիկական մտավորականության առաջացումը, վախի կորուստը ապագայի նկատմամբ: Իհարկե, շատ ծանր գնով, բայց այդ խնդիրները լուծվում էին: Խաղաղ մրցակցության գործընթացները, որ տեղի էին ունենում Արևմուտքի և ԽՍՀՄ-ի միջև, քանդեցին ԽՍՀՄ-ը: Տնտեսական համակարգը մրցունակ չէր, ազգային հարցերը, որ թաքցրած էին խորքում և խլացրած, մի օր ջրի երես ելան: Գորբաչովը չէ, մեկ ուրիշը լիներ, գուցե ավելի լավ արվեր այդ ամենը, մենք ավելի քիչ կորուստներով դուրս կգայինք այս պատմական փորձությունից: Բայց մենք պետք է տեսնենք այն, ինչ որ կա:

Ցանկացած վերադարձ անցյալին հնարավոր չէ: Բայց նախկինից շատ դրական բաներ կարելի է վերցնել: Մենք վատ վիճակից չեկանք լավ վիճակի, վատ վիճակից ընկանք ավելի վատ վիճակի մեջ: Պատմական էքսկուրսներ են արվում շարժման վերաբերյալ: Իսկապես շարժումը մեր ժողովրդին ինքնավստահություն տվեց, այն և՛ մեր ազգային ճնշված զգացմունքների զարթոնքն էր, և՛ համաժողովրդական էր: ՀՀՇ-ի համագումարում նշվեց, որ ստեղծվել է գաղափարախոսություն: Իրոք, քաղաքական հայացքների այն համակարգը, որը ձևավորվեց այդ տարիներին, կարևոր էջ եմ համարում հայ քաղաքական մտածողության մեջ: Բազմաթիվ ազգային հարցերից վերցվեցին նրանք, որոնք հնարավոր էր տեղավորել համաշխարհային գործընթացների մեջ, դրվեցին պրագմատիկ հիմքերի վրա, և փորձ արվեց լուծել այդ հարցերը: Հայ դատի հարցը այդ ժամանակաշրջանում քաղաքական հոսանքի մեջ չէր տեղավորվում, անկախության, Ղարաբաղի հարցերը տեղավորվում էին, և մեր ազգային հարցերի մեջ շեշտադրումների փոփոխություններ տեղի ունեցան:

Հիմա շատ է խոսվում «Ղարաբաղ» կոմիտեի մասին: Ես կարդացի Բաբկեն Արարքցյանի խոսքը այն ժամանակվա մասին, կոլեգիալության մասին: Իսկապես դա միասնական մարմին էր, իսկապես դրվում էին հարցեր, որոնք կոլեգիալ էին որոշվում, բայց ամեն մեկն ուներ իր դերը, և ինչքան էլ ես հիմա քննադատեմ, ինչքան էլ թշնամական հարաբերություններ ունենամ կոմիտեի որոշ անդամների հետ, չեմ կարող ուրանալ ամեն մեկի արածը: Այնտեղ և՛ Վանո Սիրադեղյանը մեծ դեր ուներ, և՛ Աշոտ Մանուչարյանը, և՛ Դավիթ Վարդանյանը, և՛ Լևոն Տեր-Պետրոսյանը: Կարելի է և ուշադրություն չդարձնել Բ.Արարքցյանի ելույթում տեղ գտած որոշակի միտումնավոր «սխալների», համահարթեցման փորձի վրա (վարում էինք վարատեղից):

Բայց սա արդեն անձնական հարց չէ: Շարժման պատմությունը կեղծելու փորձը, նենգափոխությունն է ինձ հուզում, որովհետև մենք այդ դասը անցել ենք (երբ Ստալինը փորձում էր իրենց շարժման նոր պատմություն գրել) և գիտենք, թե դա ինչ հետևանքների է բերում: Շատ դիպուկ են Օուրելի[1] խոսքերը. «Ով իսկողության տակ է պահում անցյալը, վերահսկում է ապագան»:

Ներկայիս կարևորագույն հարցը, որը մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի համար, Ղարաբաղի հարցն է: Ես մանրամասն վերլուծություններ չեմ ուզում անել: Այն մտել է քաղաքական բանակցությունների ոլորտ, և իմ կարծիքով, այս վերջին ամիսների ընթացքում որոշ բարենպաստ փոփոխություններ են նկատվում համաշխարհային շահերի տեսակետից, որոնք հույս են ներշնչում, թե Ղարաբաղի հարցը քաղաքական միջոցներով կկարողանանք

կամաց-կամաց լուծել: Մենք ամեն ինչ պետք է անենք, որպեսզի այդ հարցը լուծենք քաղաքական միջոցներով՝ չթողնելով, որ մեզ կրկին ներքաշեն ռազմական գործողությունների մեջ: Ես համոզված եմ, որ այս ընտրությունների ժամանակ Ղարաբաղի հարցը շահարկման առարկա չի դառնա: Պատերազմից սարսափելի, կեղտոտ բան աշխարհում չկա: Մեզ այդ պատերազմը ուղղակի պարտադրեցին, և մենք հաղթեցինք այդ պատերազմում: Եվ տա Աստված, որ այդ պատերազմը չվերսկսվի:

Բայց եթե վերսկսվի՞, ինչպիսի՞ բանակ ունենք: Թաքցնելու բան չէ բանակի վիճակը, բոլորս այնտեղ ծանոթներ ունենք, բարեկամներ, գիտենք, թե ինչ է կատարվում: Իհարկե բանակում կան և՛ լավ, և՛ վատ ստորաբաժանումներ, բայց նրա ընդհանուր մթնոլորտն այն է, ինչ մթնոլորտում ապրում է ինքը՝ հանրապետությունը: Իհարկե, բանակի ղեկավարությունից շատ բան է կախված, բայց եթե մի հասարակությունում իշխում է լկտիություն, զոռբայություն, անբարոյականություն, կաշառակերություն, նույնը այս կամ այն ձևով կդրսևորվի բանակում: Եվ եթե մենք ուզում ենք բանակը ուժեղացնել, առաջին հերթին պետք է պետությունը ուժեղացնենք, դարձնենք իսկապես նորմալ, օրինական պետություն, որտեղ կարգ ու կանոն լինի: Մեր կուսակցությունում քննարկվում է նաև ժամանակի ընթացքում ավելի փոքր, բայց ավելի մարտունակ, պրոֆեսիոնալ բանակ ունենալու հարցը,որը դեռ լուրջ հաշվարկներ, մասնագիտական մոտեցումներ է պահանջում: Առաջին փորձը մենք կատարեցինք իմ՝ պաշտպանության նախարար եղած ժամանակ: Կիրառեցինք պայմանագրային կարգավիճակը, մի ամբողջ բրիգադ կազմված էր միայն բարձր աշխատավարձ ստացող և ռազմական փորձ ունեցող կամավորներից: Ես կարծում եմ, որ այդ փորձի արդյունքները դրական էին, և այդ ուղղությամբ պետք է գնալ:

Մեր ժողովրդի մեջ մի նոր մտահոգություն է առաջացել, որը նախորդ տասնամյակներում չի եղել: Համենայն դեպս 60-ականներից այս կողմ չի եղել. անձնական անպաշտպանությունն ու անզորությունն իր հանդեպ կատարվող անօրինականությունների և վախը ապագայի նկատմամբ: Վախ, որ ծերությունդ ապահովված չէ, որ քո աշխատավարձով ոչ միայն հետ գցել չես կարող, այլև ընտանիքդ չես կարող պահել, վախ գործազրկությունից, վախ, որ եթե հիվանդանաս, ինչպե՞ս ես բուժվելու, վախ, թե ինչպես ես երեխայիդ կրթության տալու: Հայաստանում ցանկացած ազգային, տնտեսական ծրագիր, ցանկացած քաղաքական փոփոխություն հիմքում պետք է ունենա ժողովրդին անպաշտպանությունից, ապագայի նկատմամբ վախից ազատելը: Չի կարելի ժողովրդին հերոսության կոչեր անել, եթե նա սոված է, ծարավ է և չի տեսնում իր ապագան: Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ են բազմաթիվ սոցիալական ծրագրեր, որոնք ապահովեն և՛ ծերերին, և՛ հիվանդներին: Ամեն ոք պետք է կարողանա օգտվել բժշկական ծառայությունից:

Զարմանալին այն է, որ ՀՀԾ-ի համագումարում նախագահի ելույթում մեր ամենօրյա մտահոգության առարկան նույնիսկ արձագանք չգտավ: Սոցիալական ծրագրերը լուծելու համար պետք են ֆինանսներ, որոնց աղբյուրները բավականին լավ են երևում: Առաջինը, որ միանգամից աչք է ծակում, ստվերային տնտեսությունն է և որոշ գնահատականներով հասնում է մինչև 70%-ի: Ի՞նչ է նշանակում ստվերային տնտեսություն: Ծավալվում է տնտեսական գործունեություն, բայց այն չի հաստատագրվում, և ոչ մի գումար բյուջե չի մտնում: Բայց սա չի նշանակում, թե այդ մարդիկ ազատ աշխատում են: Նրանցից գումարներ գանձվում են, սակայն մուծվում են ներքին գործերի նախարարության, հարկային տեսչության, մաքսային վարչության աշխատակիցների գրպանները: Դրանք հսկայական գումարներ են: Միայն այդ գումարներով կարելի է 2-3 անգամ ավելացնել մեր պետության բյուջեն:

Մյուս աղբյուրը կարող էր սեփականաշնորհումը լինել՝ վաճառքից գոյացած մեծ գումարներ բյուջե մտնելու և սեփականաշնորհված ձեռնարկությունների ավելի արդյունավետ աշխատանքի շնորհիվ: Իրականացվող սեփականաշնորհումը խայտառակություն է: Սեփականաշնորհման նպատակն, ի վերջո, ո՞րն է: Հայտնի է, որ մի շարք ոլորտներում մասնավոր սեփականությունն ավելի արդյունավետ է, քան պետական սեփականությունը: Այդպիսի բան մեզանում տեղի չունեցավ: Չաշխատող գործարանները չնչին գներով վաճառեցին ծանոթ-բարեկամներին, այդ գումարներից գրեթե ոչինչ չմտավ բյուջե: Եվ գործարանները այդպես էլ չաշխատեցին, շատերն էլ թալանվեցին:

Բայց միայն ստվերային տնտեսության դեմ պայքարելով, միայն սեփականաշնորհումը ճիշտ ձևով իրականացնելով չէ, որ Հայաստանում պետք է առաջանան այդ գումարները: Նախ անհրաժեշտ է աշխատեցնել տնտեսությունը, արդյունաբերությունը, ստեղծել աշխատատեղեր: Մինչդեռ Հայաստանի ներկա տնտեսական քաղաքականությունը դրան չի նպաստում: Հայաստանում համատարած բարոյալքում է, կաշառակերություն, թալան: Կարող է հարց առաջանալ՝ բայց չէ որ համայնավարների օրոք և իմ վարչապետ եղած ժամանակ էլ կար կաշառակերություն, այն կա նաև արևմտյան երկրներում: Սակայն նշված պետությունների հասարակական կյանքը նկարագրելիս մենք այդ երևույթը իր կարևորությամբ, ազդեցությամբ կհիշատակեինք 20-րդ, 30-րդ տեղերում, իսկ մեր հասարակության նկարագիրը երևի պետք է սկսել հենց այդ կետով: Իսկ դա արդեն որակական տարբերություն է: Մենք կարող ենք ընդունել լավ օրենքներ, որոնք համապատասխանում են միջազգային ստանդարտներին, բայց այս համատարած թալանի և կաշառակերության մթնոլորտում ոչ մի մարդ լուրջ ներդրումներ չի անի Հայաստանի տնտեսության մեջ: Երբ մենք կառավարությունում քննարկում էինք սեփականաշնորհման և նոր տնտեսական քաղաքականության հարցը, մասնագետների կարծիքը շատ հստակ էր. ամենավտանգավորը Հայաստանի նման փոքր երկրի համար կարող էին լինել մաֆիոզ խմբավորումները, որոնք միշտ հակված են տնտեսական մրցակցությունը փոխարինել քրեական մրցակցությամբ: Պայքար մղվեց այդ կառույցների դեմ: ՆԳՆ-ն, շատ հաճախ օրենքներ խախտելով, կրակելով, քանդեց արդեն գոյություն ունեցող հանցագործ խմբավորումները, բայց ինքը դարձավ այդպիսի կառույց: Այժմ արդեն կան տարբեր մաֆիոզ կառույցներ՝ կապված իշխանությունների այս կամ այն օղակի հետ: Երբ մաֆիոզ կառույցները պետական հովանու տակ են, այդպիսի երկիրը դատապարտված է կայուն ճահիճ դառնալու: Ես չեմ բացառում, որ արտասահմանյան ֆիրմաները որոշ ներդրումներ անեն: Այդ օրինակը մենք տեսնում ենք տասնյակ աֆրիկյան պետություններում: Գալիս է որևէ ֆիրմա, անձնական հարաբերություններ է ստեղծում պետության ղեկավարության հետ և նույնիսկ օգտվում է այն հանգամանքից, որ հարկի փոխարեն պետք է կաշառք տա ու արտոնություններ ստանա: Մի գործարան էլ կկառուցեն, ու մենք պետք է հպարտանանք, որ Հայաստանում ներդրում է արվել, գործարաններ ունենք: Աֆրիկյան կամ ասիական այդ պետություններում էլ փողոցներում վխտում են մերսեդեսներ, որոշ մարդիկ կառուցում են դղյակներ, բայց նման երկրները դատապարտված են: Մենք հիմա գնում ենք այդ ճանապարհով:

Ես խոսում եմ գործնական, իրականացվող քաղաքականության մասին, բայց կա նաև տնտեսական գաղափարախոսություն, որով շարունակ հպարտանում է մեր կառավարությունը: Դա պարզ, նեոկլասիկ մոդելն է՝ բաց դռների քաղաքականություն, ոչ մի արտոնություն: Արդյունաբերության թույլ ճյուղերը պիտի մահանան, ուժեղները՝ զարգանան և մտնեն համաշխարհային ինտեգրացիայի մեջ: Չեն մտնելու: Այժմ Հայաստանում օրենքները հանգեցրել են նրան, որ որևիցե բան արտադրելը ավելի թանկ է, քան բերելը: Չկա շուկայի պաշտպանվածություն: Որոշված չէ, թե Հայաստանի արդյունաբերության որ ճյուղն ես զարգացնելու, որ շոգեքարշի նման իր հետևից տանի մնացած ճյուղերը: Այդ ճյուղի համար պետք է ստեղծվեն արտոնյալ պայմաններ, ներդրումներ, տարվի համապատասխան հարկային, վարկային քաղաքականություն: Մի կողմ թողնենք մաֆիոզ կառույցները, մի կողմ թողնենք կաշառակերությունը, մի կողմ թողնենք այն, որ Հայաստանում մրցակցություն չկա: Նույնիսկ եթե գործնականորեն ու ազնվորեն իրականացվի այն մոդելը, որ մեզ առաջարկվում է, հանգեցնելու է նրան, որ Հայաստանում մնալու է 1,5 մլն մարդ, որոնք աճեցնելու են լոլիկ (ես չգիտեմ, լոլիկ դեռ իմաստ կունենա՞ Հայաստանում աճեցնել, թե ոչ), և աշխատելու են որոշ փոքր ձեռնարկություններ: Բայց եթե նույնիսկ իրականացվի մեր առաջարկած տնտեսական քաղաքականությունը, ինչպիսի արտոնյալ պայմաններ էլ ստեղծենք մեր արդյունաբերության կամ գյուղատնտեսության այս կամ այն ճյուղի համար, միևնույնն է, Հայաստանը միայնակ ինչքան էլ շուկան պաշտպանի, ինչքան էլ ազնիվ ներքին քաղաքականություն վարի, նա իր ներքին փոքր շուկայով լուրջ զարգացում ապահովել, արդյունաբերությունում նոր աշխատատեղեր ստեղծել չի կարողանա, պետք են արտաքին, դյուրամատչելի շուկաներ: Հայաստանում կային հարյուրավոր մեծ հզորություն ունեցող գործարաններ, որոնք աշխատում էին ԽՍՀՄ-ի ռազմարդյունաբերական համալիրի համար:

Միության փլուզումը բերեց նրան, որ պատվերները վերացան, և մեր գործարանները դարձան անաշխատունակ:

Ամբողջ աշխարհում տեղի են ունենում ինտեգրացիոն գործընթացներ, բայց մի խումբ երկրներում դրանք կատարվում են ավելի արագ: Այժմ մեզ համար էական նշանակություն ունի, թե Հայաստանը երկրների որ խմբի հետ է և ինչպես է մտնելու տնտեսական ինտեգրացիոն գործընթացների մեջ: Եթե մենք չգնանք դրան, ապա մեր արդյունաբերությունը դատապարտված է, որովհետև այս արդյունաբերությամբ մտնել համաշխարհային շուկա և այնտեղ մրցունակ ապրանք վաճառել մենք այժմ չենք կարող: Եվ մենք պետք է այդ պետությունների հետ պայմանավորվենք (որոնց հետ մտադիր ենք ավելի սերտ համագործակցության մեջ մտնել, և բնական է, որ դրանց շարքում կլինեն Ռուսաստանը և նախկին հանրապետությունները), թե ինչ ապրանքների արտադրությամբ ենք մենք զբաղվելու, ինչ մաքսեր են դրվելու, որպեսզի այդ խմբի ընդհանուր տարածքը պաշտպանված լինի, և ինչ ձևերով են մաքսային հարկերը ժամանակի ընթացքում իջեցվելու, որպեսզի կարողանանք մեր ապրանքը հետզհետե մրցունակ դարձնել նաև միջազգային շուկայում: Դա է ճանապարհը: Եթե չգնանք արդյունաբերական երկիր դառնալու ճանապարհով, դատապարտված ենք խղճուկ գոյատևման:

Եվ տրամաբանորեն այս խնդիրն առնչվում է կրթությանը: Մեզ՝ հայերիս համար կրթությունը միշտ էլ շատ կարևոր նշանակություն է ունեցել: Պատմությունից գիտենք, որ նույնիսկ 1915թ. գաղթի ճանապարհներին մարդիկ իրենց երեխաներին գիր ու գրականություն են սովորեցրել: Դա մեր ազգային մտածողությունն է: Եվ ԽՍՀՄ-ում ապրելով՝ մենք ունեցել ենք շատ բարձր կրթական համակարգ, մենք շատ հարցերում հետ էինք ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից, բայց ոչ կրթական համակարգում: Հիմա այդ համակարգը քանդվում է: Երբեմն մեղադրում են, թե Բլեյան Աշոտը քանդում է այդ համակարգը: Շատ ավելի խոր են պատճառները: Կրթական համակարգը չի հետաքրքրում այն իշխանություններին, որոնց հիմնական նպատակը ամեն գնով իշխանությունը պահելն է: Այդ խնդիրը լուծելու համար կարևոր են ոստիկանությունը, բանակը, կարևոր է, թե որ գործարանը ում կպատկանի, բայց կրթական համակարգը այնքան էլ կարևոր չէ, նույնիսկ եթե քանդվի, ավելի լավ, անգրագետ մարդկանց վրա իշխելը հեշտ է: Ես կարծում եմ, որ այդ համակարգի փլուզումը կապված է նաև ապագայի նկատմամբ մեր իշխանությունների պատկերացումների հետ: Իրենց տեսած Հայաստանում չկա 3,5 միլիոն մարդ, չկա զարգացած արդյունաբերություն: Ուրեմն մեծ ջանքեր թափել կրթական համակարգի վրա իմաստ չունի: Եվ եթե մեր պետությունը արդյունաբերական երկիր դառնալու ուղի չի բռնում, ապա կրթությունը մնում է սոսկ բարի ցանկություն:

Հարց է ծագում. եթե մենք ունենք ինչ-որ ծրագրեր, ապա ինչու՞ չենք համոզել ամբողջ հասարակությանը, մի լավ թագավոր ընտրել, որպեսզի նա ամեն ինչ իրականացնի: Ես ուզում եմ, որ մենք գիտակցենք՝ այս ընտրությունները թագավորի ընտրություններ չեն լինելու: Վերցրեք աշխարհի ամենախելացի, ամենաազնիվ, ամենագրագետ մարդուն թագավոր նշանակեք, և հարց է, թե ինչ կդառնա այդ մարդը երեք տարուց հետո: Այս թագավորական համակարգը, այս սահմանադրությունը Հայաստանում զարգացում չի տալու: Լ.Տեր-Պետրոսյանն ասում է, որ 90%-ով իրականացրել է ՀՀՇ-ի գաղափարախոսությունը, բայց նա մի բան չի նկատել այդ գաղափարախոսության մեջ: **20-րդ դարի ողջ մարդկության, գիտության, տեխնիկայի զարգացման, ամեն ինչի հիմքում կա մի գաղափար, մի կախարդական բառ՝ ազատություն:** Չկա ազատություն, չի լինի զարգացում: Ուստի մեր ժողովուրդը ոչ միայն պետք է կարողանա ընտրել մարդու, որը լինի խելացի, գրագետ, ապրի ժողովրդի ներկայով, գծագրի մեր պետության ապագան, այլև գիտակցի, որ գնում ենք նաև պետական համակարգի աստիճանական փոփոխության՝ դարձնելով այն իսկապես ժողովրդավարական: Հայերը միշտ փախել են այն երկրից, որտեղ գլուխ է բարձրացրել ազգայնամոլությունն ու բռնապետությունը: Հայերի զարգացման լավագույն պայմանը ազատությունն է: Վրաստանն ունի ծով, Ադրբեջանը՝ նավթ, մենք ունենք ժողովուրդ, որը ազատության պայմաններում հրաշքներ է գործում: Եվ մեզ համար այդ նույնն է, ինչ որ Վրաստանի համար ծովը կամ Ադրբեջանի համար նավթը: Մեր հումքը ազատությունն է:

Այժմ որոշվում է մեր երկրի ապագան, մեր ապագան, մեր երեխաների ապագան: Եվ ես դարձյալ ուզում եմ կրկնել. չկա կուսակցություն, որի հետ մենք չկարողանանք բանակցել ու ընդհանուր եզրեր գտնել իրականացնելու համար այն խնդիրները, որոնք կանգնած են մեր ժողովրդի, մեր պետության առջև: Հարյուրամյակների ընթացքում մեզ պահում էր ոչ միայն եկեղեցին, ոչ միայն լեզուն, այլև ընդհանուր երազանքը, որ համախմբել էր մեր ամբողջ ժողովրդին: Երազանքը, որ մենք մի օր անկախ պետություն կունենանք, պաշտպանված կլինենք հալածանքներից, բարգավաճող կյանքով կապրենք բարոյական և ազգային մթնոլորտում, հպարտ կլինենք, որ հայ ազգի, պետության ներկայացուցիչն ենք: Նաև երազում էինք ուրիշ պետությունների հետ մրցել, աշխարհին ինչ-որ բան տալ… Հիմա մենք միայն ստանում ենք: Ստանում ենք ցորեն, ստանում ենք ողորմություն, և գնահատում ենք՝ լավ նախարար է, տեսեք, գնաց 10 մլն դոլար ողորմություն բերեց: Համոզված եմ, որ շուտ թե ուշ մեր ժողովուրդը կկարողանա իր մեջ այն ուժը գտնել, որը դուրս կբերի իրեն այս խղճուկ գոյատևման վիճակից՝ տանելով մեր ազգային երազանքների իրականացման ճանապարհով: Մենք մտնում ենք 21-րդ դար, և համոզված եմ՝ դա լինելու է խաղաղ դար, խաղաղ մրցակցության դար: Եվ Սփյուռքը, որը առաջացել է մեր ազգային ողբերգությունից՝ 1915 թվի ցեղասպանությունից, բայց արդեն հզոր դիրքեր ունի տարբեր երկրներում, մեզ լրացուցիչ շանսեր է տալիս՝ հասնելու աշխարհում առաջավոր դիրքերի: Եվ մենք համոզված ենք՝ կհաղթահարենք այդ դժվարությունները, Սփյուռքի հետ կստեղծենք միասնական կառույցներ, Հայաստան պետությունը կկարողանա առաջ գնալ: Եվ մենք մի օր կրկին այս դահլիճում կհավաքվենք ու կասենք, թե հզոր պետություն ենք: Ինչու՞, որովհետև աշխարհում մի ժողովուրդ սոված էր, մենք իրենց հաց ուղարկեցինք: Դա կլինի մեր հզորության չափանիշը:

Վազգեն Մանուկյանի ելույթը
ԱԺՄ VII համագումարում, 12 հունիսի
«Այժմ», 1996, 19-25 հունիսի

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՑ ՊԱԿԱՍ ԽԵԼՔ ՉԷ, ԲԱՅՑ ԴԱ ԴԵՌ ԱՐԺԱՆԻՔ ՉԷ

-Միանգամայն համաձայն ենք, որ Վազգեն Մանուկյանը Լևոն Տեր-Պետրոսյանից պակաս խելոք չէ, բայց չէ որ դա դեռ արժանիք չէ: Ձեր ծրագրի ինչ հաղթաթուղթ կարող եք ցույց տալ հասարակությանը:

-Նախ՝ հարկ է որոշել՝ ինչ հատկություններ են պահանջվում հանրապետության նախագահից: Այդպիսի ըմբռնում մեր հասարակությունում դեռևս չկա: Խելքը բաղկացուցիչներից մեկն է, բայց ես չէի ասի, թե նախագահի ընտրությունների ժամանակ դա գլխավորն է: Ինչ վերաբերում է ծրագրին, անտարակույս, այն մեծ դեր է խաղում, բայց մարդիկ միայն ծրագրեր չեն ընտրում, իրականում նրանք լիդերներ են ընտրում, որոնց ճանաչում են, որոնց մասին լսել են, ում գործունեությանը ծանոթ են:

Ես մտադիր չեմ հասարակությանը որևէ հաղթաթուղթ ցույց տալ: Նա ճանաչում է, ինչպես և ինձ, քաղաքական գործիչներին, որոնք այժմ ասպարեզում են, թող ընտրի:

-Ռուսաստանում գործում ինտեգրացիոն գործընթաց է: Ինչպես եք Դուք գնահատում այսօր չորս պետությունների միությունը, ինչպես է այն համադրվում Ձեր հայտնի բանաձևին՝ «Հարկավոր է գնացքից թռչել, որպեսզի չհայտնվենք Խորհրդային Միության փլատակների տակ»:

-Այն ժամանակ Խորհրդային Միության փլուզման օբյեկտիվ գործընթաց էր: Փլուզում էր և՛ քաղաքական, և՛ ռազմական ոլորտում, և՛ տնտեսությունում: Դիմակայել գործընթացին անիմաստ էր, ընդհակառակը, հարկ էր օգտագործել այն հասնելու համար կարևոր ազգային նպատակին՝ անկախությանը: Բայց մենք ջանում էինք հնարավորինս վերահսկել այն, երբեմն արգելակել, որպեսզի դուրս գանք դրանից նվազագույն կորուստներով: Այդ էր մեր կառավարության նպատակը, մեր գրվանի տակ դրած ցանկությունը: Ես կրկնում եմ, գործընթացն օբյեկտիվ էր, բայց դեռ այն ժամանակ էլ ես պնդում էի, որ հետո կարող է սկսվել հակառակ՝ օբյեկտիվ գործընթաց:

Երկու՝ փլուզման և ինտեգրացիայի գործընթացները օբյեկտիվ հիմք ունեն: Լավ քաղաքական գործիչը նա չէ, ով առաջ է մղում իր գիծը, այլ նա, ով խորն է ըմբռնում գործընթացի օրինաչափությունները և ջանում է արագացնել կամ արգելակել՝ օգտագործելով դրանք տվյալ գործընթացի պայմաններում հնարավոր ազգային կամ պետական նպատակներին հասնելու համար: Այն ժամանակ մենք ճիշտ էինք վարվում: Համակերպվելով օբյեկտիվ գործընթացներին՝ մենք հայ ժողովրդին մոտեցնում էինք մեր պետության անկախության, ինքնուրույն ապրելու անհրաժեշտության մտքին և միաժամանակ կասեցնում էինք տնտեսական փլուզման գործընթացը: Այժմ աշխարհում համընդհանուր ինտեգրացիոն գործընթացներին զուգահեռ, որոնք ընդգրկում են բոլոր երկրները, այս կամ այն խումբ երկրներում առավել արագընթաց ու խորը ինտեգրացիոն գործընթացներ են կատարվում: Այն երկրները, որոնք ներգրավված չեն այդ գործընթացներում, դատապարտված են քարշ գալուն:

Հայաստանը, մնալով անկախ պետություն, պետք է որոշի, թե որ խմբի մեջ մտնի: Եվ բնական է, որ ուրվագծվում է նախկին Խորհրդային Միության հանրապետությունների և Ռուսաստանի խումբը: Նմանապես և օբյեկտիվ ինտեգրացիոն գործընթացներին զուգահեռ կոնյունկտուրային խաղ է գնում՝ կապված Ռուսաստանի ներքին ընտրությունների և մյուս հանրապետությունների ներքին խնդիրների հետ: Դա ինտեգրացիային անցանկալի երանգ է տալիս, որը անհրաժեշտ տնտեսական գործընթացում երբեմն վերածվում է կոնյունկտուրայինի, քաղաքականի:

-Ստացվում է, որ եթե Ձեր կամքով լիներ, մենք կմտնեինք այդ «քառյակի» մեջ:

-Ես այդպիսի բան չասացի, և իմ կարծիքով, այստեղ առավել կշռադատված մոտեցում է հարկավոր: Այ, բոլորն ասում են՝ «ինտեգրացիա». իսկ ի՞նչ է նշանակում այդ հասկացությունը, ո՞րն է դրա էությունը: Նախ հարկավոր է դա որոշել: Ժողովրդի մի մասի մեջ, որը տեսնում է, թե ինչ դժվարին կացության մեջ են ինքն ու հանրապետությունը, և չի տեսնում իր ապագան, շոշափելի են անցյալին վերադառնալու կարոտախտի պոռթկումները, որպեսզի թեկուզ փոքր եկամուտ ունենալով՝ չմտածի վաղվա օրվա մասին: Հույսերը՝ իբրև թե հարկավոր է միավորվել ուրիշ երկրների հետ, որոնք կօգնեն մեզ ապրել, չարդարացան: Խոսքն այլ բանի մասին է՝ վաճառահանման շուկայի: Առայժմ առկա գործընթացներում, լինի Բելառուսը և Ռուսաստանը կամ նույն այդ «քառյակը», ավելի շատ քաղաքական կոնյունկտուրա է, քան տնտեսական:

Ես կողմ եմ, որպեսզի մենք բանակցություններ վարենք Ռուսաստանի և մյուս հանրապետությունների հետ և պայմանավորվենք, թե ով արդյունաբերության որ ճյուղն է զարգացնելու: Եվ խրախուսելու համար համատեղ մաքսային պատ դնենք, որպեսզի մեր ապրանքը վաճառքի հանվի Ռուսաստանում, ռուսականը՝ մեզ մոտ, այսինքն՝ պրոտեկցիոնիզմ իրականացնենք: Միաժամանակ հարկ է պայմանավորվել, թե ինչ արագությամբ իջեցնել պատը, որպեսզի մեր արտադրանքը կրկին չհայտնվի երկաթե վարագույրի ետևում և մրցունակ դառնա նաև արևմտյան շուկաներում: Դրա համար հարկավոր են խոշոր ներդրումներ, արդյունաբերության սկզբնական աջակցություն, որից հետո արդեն սկսվում է ելքը արտաքին շուկա:

Բերեմ Ճապոնիայի օրինակը: Այնտեղ բաց մաքսատուն էր, ճապոնացիները սովորել էին այն ժամանակվա լավագույն ամերիկյան մագնիտաֆոններին: Երբ Ճապոնիան գնեց դրանց արտադրության արտոնագիրը, բարձրացրեց մաքսատուրքը, որպեսզի դժվարացնի մագնիտաֆոնների ներկրումը: Երկրի ներսում մրցակցություն ծավալվեց: Եվ հենց որ Ճապոնացիները կարողացան հագեցնել իրենց շուկան, նրանք սկսեցին աստիճանաբար իջեցնել պատը, որպեսզի մրցակցություն սկսվեր արտաքին շուկայի հետ: Ճապոնիան նետվեց արտաքին շուկաները՝ ապահովելով սեփական շուկան:

Մի խոսքով, գոյություն ունի տնտեսական քաղաքականություն, իսկ հենց այնպես խոսել ինտեգրացիայի մասին, հենց այնպես ինչ-որ փաստաթղթեր ստորագրել, ավելի շուտ կոնյունկտուրա է, քաղաքականություն: Ես առայժմ չեմ տեսնում, որ այդ երկրները նստեն ու տնտեսական հարցեր լուծեն, և յուրաքանչյուր երկիր պարտավորություններ և սահմանափակումներ ստանձնի:

-Արդյոք դա նշանակու՞մ է, որ Դուք համակարծիք եք Լևոն Տեր-Պետրոսյանին, որը զգուշավորություն է ցուցաբերում ինտեգրացիոն քաղաքականությունում:

-Ինձ համար մի քիչ դժվար է խոսել դիրքորոշումների համընկնելու կամ չհամընկնելու մասին, քանի որ մարդիկ սովորաբար միևնույն մտքերը հայտնում են տարբեր մղումներով: Ինձ չի հետաքրքրում, թե ում կարծիքի հետ է համընկնում կամ չի համընկնում իմ կարծիքը: Ես այդպիսի վերլուծություն սովորաբար չեմ անում: Ինձ համար կարևոր է իրերի իրական դրությունը: Հայաստանի տնտեսական քաղաքականությունը ներկայումս չի նպաստում ինտեգրացիային, որովհետև հանրապետությունում խնդիր չի դրվում այն զարգացած արդյունաբերական երկիր դարձնել: Այժմ Հայաստանում այլ տնտեսական խնդիրներ են դրվում: Առայժմ չխոսենք չարաշահումների, կոռուպցիայի մասին, այն մասին, որ չկա տնտեսական մրցակցություն, այլ կա քաղաքական մրցակցություն: Եթե ամեն բան մի կողմ թողնենք և կենտրոնանանք այն ծրագրի վրա, որը փորձում է իրականացնել կառավարությունը, ապա դա նեոկլասիկ մոնետար, լիբերալ համակարգ է՝ բաց դռներով, առանց որևէ պրոտեկցիոնիզմի: Այդպիսի քաղաքական կոնյունկտուրայով այն, եթե նույնիսկ ազնվորեն կիրառվի, չի կարող նպաստել, որպեսզի հանրապետությունը զարգացած արդյունաբերական երկիր դառնա: Իսկ եթե Հայաստանը չունի զարգացման համար համապատասխան ծրագրեր, ապա ինտեգրացիան սահմանափակվում է ռազմական համագործակցությամբ: Եթե Լևոն Տեր-Պետրոսյանը ուրվագծեր Հայաստանի արդյունաբերության զարգացման նպատակը՝ տնտեսության այս կամ այն ոլորտը հովանավորելով, ընդ որում շուկայական, տնտեսական մեթոդներով, ոչ թե վարչական, այդ դեպքում ինտեգրացիան տրամաբանորեն կբխեր այդ ամենից: Այլ պարագայում ինտեգրացիան կոնյունկտուրային բնույթ է կրում:

-Զարգացման հե՞չ ուղիներ եք տեսնում, եթե Ռուսաստանում իշխանության գան, ասենք, զյուգանովականները:

-Կառավարման նախագահական ձևն ինքնին հանգեցնում է նրան, որ նախագահական ընտրությունների ժամանակ հասարակությունը բաժանվում է երկու մասի: Դա բնորոշ է բոլոր նախագահական կառավարումներին: Հասարակության երկփեղկում է տեղի ունենում նաև Ռուսաստանում: Ընդ որում քչերն են ուշադրություն դարձնում այն հանգամանքին, որ և՛ Ելցինի, և՛ Զյուգանովի քաղաքականությունը, եթե նրանցից մեկը դառնա նախագահ, իննսուն տոկոսով համընկնում է: Այլ հարց է, որ հասարակության ժողովրդավարական հատվածին վախեցնում է Զյուգանովի իշխանության գալու դեպքում կոմունիստական կարգերի վերականգնումը: Դա բնական է նախընտրական պայքարում: Իր հերթին, Զյուգանովը հրապարակավ հայտարարում է, որ Ելցինի շուրջը հավաքվել են երկիրը թալանող մարդիկ: Այս ամենը հարիր է նախընտրական քարոզարշավին: Իրականում երկու լիդերների քաղաքականությունը էական հատվածներում կհամընկնի: Օբյեկտիվ գործընթաց է: Ինքը՝ Ելցինը, մնալով ժողովրդավարության ռելսերի վրա, կոսմոպոլիտ ժողովրդավարությունից շրջադարձ է կատարում դեպի մեծապետականություն, դեպի սոցիալական հիմնախնդիրներ:

-Ինչպես երևում է, նրան հասարակությունն է խթանում:

-Անկասկած: Մի ժամանակ մենք կլանված էինք Հելբրեյթի «Հասարակության կոնվերգենցիան» հետաքրքիր գրքի ընթերցմամբ: Հեղինակը պնդում էր, որ Խորհրդային Միությունը և Արևմուտքը տարբեր կետերից կգան միևնույն հասարակությանը: Այժմ, մի քիչ չափազանցնելով, գրեթե նույնը կարող եմ ասել Ելցինի և Զյուգանովի մասին: Այն, ինչ պիտի լինի, կլինի և՛ Ելցինի, և՛ Զյուգանովի օրոք: Դուր է գալիս մեզ, թե դուր չի գալիս գործընթացը, այն, միևնույնն է, կընթանա երկու լիդերների օրոք էլ: Ուստի չարժե խառնվել այդ վեճին:

-Արևմուտքի քաղաքական սպեկտրում բնականորեն ներգրավվում են օպորտունիստները, կատարվում է գույնի, երանգի արագ փոփոխություն, հրաժարում սկզբնական նպատակներից ու դիրքորոշումներից: Որքանով է քաղաքական գործիչների նման ճկունությունը հարաբերակցվում ազնվություն և սկզբունքայնություն հասկացություններին:

-Դուք մի քիչ չափազանցնում եք: Ամեն մի քաղաքական լիդեր, ամեն մի կուսակցություն իր ռազմավարական աշխարհայացքում «լյուֆտ» ունի: Քաղաքական գործիչը իրավունք ունի այդ «լյուֆտում» խաղալ: Իսկ ահա այն մարդկանց, ովքեր անցնում են այդ սահմանները, հազիվ թե հնարավոր լինի սկզբունքային քաղաքագետ համարել: Ավելին, անսկզբունքային քաղաքագետները երբեք հաջողության չեն հասնում: Խաղը հնարավոր է սեփական ծրագրի

«Լուֆտի» սահմաններում: Եթե, ասենք, շարժման կողմնակիցները, ես կամ Լևոն Տեր-Պետրոսյանը, կամ մի ուրիշը հայտարարեն, որ հարկ է անցնել լիակատար պետական սեփականության, կոմունիստական, սոցիալիստական կարգերի, ապա դա արդեն խաղ չէ, այլ՝ անսկզբունքայնություն: Եթե մեզանից որևէ մեկը ասի, որ Հայաստանը չպետք է անկախ լինի, դա դարձյալ դավաճանություն կլինի, այդպես էլ կընկալվի:

-Մեր թերթը մի քանի ամիս առաջ հրապարակեց հարցազրույց Անդրանիկ Միհրանյանի հետ, որում նա պնդում էր, թե Հայաստանում չկա քաղաքական այն լիդերը, որը կարող է ձեռնոց նետել Լևոն Տեր-Պետրոսյանին: Դուք համաձա՞յն եք նրա կարծիքին:

-Մի կողմ թողնենք անձերը: Ուղղակի նշենք. Հայաստանում կա նախագահ, և ինչ-որ մեկը պետք է նրան ձեռնոց նետի: Դա բավական դժվար է այնպիսի կառուցվածքում, որպիսին այժմ Հայաստանում է: Ժողովուրդը պետք է ճանաչի քաղաքական գործչին, ստուգի նրան աշխատանքում մինչ կվստահի նրան պետության կառավարումը: Բերենք Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակը: Ո՞վ է այնտեղ դառնում նախագահ կամ այդ պաշտոնի հավակնորդ: Կամ սենատոր, կամ նահանգապետ: Ֆրանսիայում Շիրակը նախագահ դարձավ այն բանից հետո, երբ դրսևորեց իրեն իբրև մայրաքաղաքի քաղաքապետ: Վաղ թե ուշ Ռուսաստանում նախագահի պաշտոնի համար կհավակնեն գուբերնատորներ, Լուժկովի կարգի մարդիկ, քաղաքապետեր: Հայաստանում նման հնարավորությունները խիստ սահմանափակ են, անկախ քաղաքական գործիչը հնարավորություն չունի ցույց տալու ժողովրդին, թե ինչի է նա ընդունակ:

-Պատճառն ի՞նչ է:

- Իշխանության կառուցվածքն իսկ այդպիսին է:

-Բայց չէ՞ որ Ռուսաստանում նույնպես նախագահական իշխանություն է:

-Այո, Ռուսաստանում նախագահական կառուցվածք է, բայց Ռուսաստանը մեծ երկիր է, ավելի ժողովրդավարական: Այնտեղ բավական շատ են ընտրովի պաշտոնները: Ժամանակի ընթացքում դա կարտահայտվի: Մեզանում փաստորեն ընտրովի պաշտոններ չկան: Եթե անգամ մի որևէ նախարար իրեն լավ դրսևորի գործում, նա, այնուամենայնիվ, կախյալ մարդ է: Իսկ անկախ քաղաքական պաշտոններ Հայաստանում չկան՝ բացի մեկից՝ նախագահականից: Ես թերևս մի քիչ չափազանցնում եմ, բայց այդպիսի համակարգերում գործող նախագահից իշխանության անցումը մի ուրիշի բավական դժվար է: Եվ անկախ այն հանգամանքից, թե ով է նախագահը: Ինչ վերաբերում է Լևոն Տեր-Պետրոսյանի կամ ուրիշ հավակնողների անձնական հատկություններին, ապա շատ քաղաքական գործիչներ կան, որոնք օժտված են անհրաժեշտ բարոյական, բանական առանձնահատկություններով և հանրապետությունը ղեկավարելու ձիրքով:

-Ինչպե՞ս եք վերաբերվում այլ ընդդիմադիր կուսակցությունների բլոկին: Պատրա՞ստ եք հրաժարվել Ձեր թեկնածության առաջադրումից՝ հանուն ընդդիմության բլոկի միասնական թեկնածուի:

-Երբ ասում են, թե պատրաստվում են ծրագիր առաջադրել և ոչ թե անձ, ապա դա կամ թյուրըմբռնում է, կամ խաբեություն: Նույնիսկ մենք՝ հայերս, որ ժողովրդավարական հասարակության ոչ այնքան հարուստ փորձ ունենք, դրանում գործնականում համոզվել ենք: Համանման ծրագրերի առկայությամբ իրականում իրագործվում են բացարձակապես տարբեր բաներ: Եվ անհատը քաղաքականությունում շատ մեծ դեր է խաղում, մանավանդ այն երկրներում, որոնք կայացման փուլում են: Երբ հանրապետությունում սկսեն աշխատել ժողովրդավարության մեխանիզմները, իշխանության անկախ կառույցների մեխանիզմները, անհատի ազդեցությունը հավանաբար այդքան նշանակալի չլինի, ինչպես որ հիմա է: Այո, կարևոր է ծրագիրը, բայց մեծ է անհատի դերը, կկարողանա՞ նա փոխել իրավիճակը Հայաստանում: Այդ տեսակետից, եթե միավորվեն որոշ կուսակցություններ, եթե նրանք ունենան ընդունելի ծրագրեր և մարդիկ՝ ունակ իրականացնելու դրանք, եթե գտնվի լիդեր, և ես վստահ լինեմ, որ նա, դառնալով նախագահ, կկարողանա դուրս բերել երկիրը ներկայիս փակուղային իրավիճակից, ապա առանց մտածելու՝ կհանեմ իմ թեկնածությունը: Քանի որ իշխանությունն ինձ համար վերացական մի բան չէ, որի մասին երազում են այլ քաղաքական գործիչները: Ես այնտեղ եղել եմ, ես դա գիտեմ: Ինձ համար իշխանությունը աշխատանք է, որի համար զոհաբերում ես և՛ ընտանիքդ, և՛ ընկերներիդ, և՛ սովորություններդ:

-Ինչպիսին է Ձեր ընտրախավը: Ո՞վ է Ձեր ընտրողը, քանի տարեկան է նա, ինչ կրթություն ունի, կի՞ն է, թե տղամարդ:

-Միանգամայն արդիական հարց է յուրաքանչյուր երկրի, քաղաքական գործչի համար, բայց ոչ Հայաստանի: Մեզանում բոլորը, այդ թվում և հասարակությունը, շերտավորվել են: Շատ ավելի հեշտ է պարզապես «ժողովուրդ» ասել, քան խոսել հասարակության առանձին շերտերի մասին: Անկասկած դրանք կան, ես մի քիչ չափազանցնում եմ, բայց հարցն այն է, որ այնպիսի երկրում, ինչպիսին Հայաստանն է, չկան բնակչության որոշակի շերտեր, դրանք դեռ չեն ձևավորվել: Ընտրախավը լղոզված է:

-Եվ այնուամենայնիվ ի՞նչպիսի ընտրող կցանկանայիք: Ում եք քարոզում:

-Ավելի ճիշտ կլիներ հարցնել՝ իմ ընտրողի դերում ում կուզենայի տեսնել: Այդ հարցին կպատասխանեմ: Ես կուզենայի, որ նրանք լինեին երիտասարդներ՝ մտահոգված իրենց երկրի ճակատագրով, այն երկրի, որում պիտի ապրեն: Դա բնակչության առավել նշանակալի հատվածն է, որտեղ իշխում է ոչ թե վրեժխնդրության, կարոտախտի, ռևանշի ծարավը, այլ ապագայի ցանկությունը: Վերջերս հեռուստացույցով հաղորդում էր սոցիոլոգիական հետազոտությունների մասին: Նշվում էր, որ երիտասարդության մոտ չորս տոկոսն է հետաքրքրվում քաղաքականությամբ: Միանգամից ասեմ՝ բարձր ցուցանիշ չէ: Իհարկե, հանգիստ պայմաններում երիտասարդությունը համեմատաբար քիչ է հետաքրքրվում քաղաքականությամբ: Ի՞նչն է մեր երկրում այդպիսի անտարբերության պատճառը: Երիտասարդության մի մասը (իսկ ես շատերի հետ եմ հանդիպում) իր ապագան չի կապում երկրի ապագայի հետ: Այս երկիրն արդեն իրենց քիչ է հետաքրքրում, նրանք մտածում են մի բանի մասին. ինչպես կրթություն ստանալ և մեկնել որևէ տեղ աշխատանքի որոնումներով: Իսկ ինչ կկատարվի հայրենիքում՝ նրանց շատ էլ չի հուզում: Սա է ողբերգությունը:

-Դուք շարժումը սկսեցիք այն թիմի հետ, որն այժմ իշխանության ղեկին է: Կա՞ն նրանց մեջ մարդիկ, որոնց հանդիպելիս Դուք կհրաժարվեիք ձեռք սեղմել:

-Ես չէի ուզենա պատասխանել այդ հարցին: Ցանկալի էր, որ զրույցն ավելի շատ նպատակների շուրջը լիներ, թեպետ ես ինքս խոսեցի անհատի, պատմության մեջ ունեցած նրա դերի մասին: **Այսօր մեր հասարակությունը պետք է գիտակցի (ըմբռնումը, ըստ երևույթին, կլինի ժամանակի ընթացքում), որ նախագահի ընտրությունը՝ ժողովրդի կադրային քաղաքականությունն է:** Դա բավական դժվար է իրականացնել: Նախ պետք է որոշել այն հատկությունների համալիրը, որոնցով պետք է օժտված լինի նախագահը: Այլ հասարակություններում գրված օրենքները ձևավորում են նախագահական թեկնածուի կերպարը, առանց այդ բարենպաստ իմիջի նա պարզապես նախագահ չի դառնա: Մեզանում նման բան չկա, քանզի դեռ չի ձևավորվել հասարակությունը:

Հայաստանում հրատապ է ոչ միայն իշխանության հերթափոխի հարցը: Երկու մեծ խնդիր: Առաջինը՝ մարդիկ հիասթափված են. իբրև թե պայքարել են, իսկ ի՞նչ են արդյունքում ստացել: Բայց նրանք մոռանում են, որ ամբողջ աշխարհում ժողովուրդը դարերի ընթացքում անընդմեջ պայքարել է: Արհմիություններում՝ աշխատավարձը բարձրացնելու համար, հասարակական կազմակերպություններում՝ այս կամ այն անձին պատգամավորական կամ կոնգրեսմենի թեկնածու առաջադրելով: Աստված մի արասցե, եթե մեր ժողովուրդը նպատակադրվի ոչ թե մշտական, անընդհատ պայքար մղել իր իրավունքների համար, այլ միայն շուկայի ու բարի թագավորի սպասման: Այդպիսի հասարակությունը դատապարտված է: Երկրորդ խնդիրը ազգային էլիտայի ձևավորումն է: Դրա մեջ մտնում է մտավորականության, քաղաքական գործիչների, հոգևորականության, սպաների, բիզնեսմենների, արդյունաբերողների մի մասը: Նրանց շարքերում կարող են հայտնվել նաև անարժանները, բայց էլիտայի բոլոր ներկայացուցիչների մեջ գերակշռում է ընդհանուր աշխարհայացքը երկրի զարգացման ուղիների մասին: Եվ ով էլ որ այդ մարդկանցից դառնա նախագահ, նրա վրա, օրենքից բացի, սահմանափակումներ կդնի հենց էլիտան, հասարակությունը: Էլիտարությունը յուրաքանչյուր հասարակության օբյեկտիվ բնույթ է, բայց դա առանձնաշնորհ չէ, այլ պատասխանատվություն ազգի, պետության ճակատագրի համար: Էլիտայի հասկացությունը ժողովրդավարական հասարակությունում առանձին խոսակցության նյութ է:

Այնժամ, երբ դեռ չեն լուծվել այդ երկու կարևոր խնդիրները, մեզանում ամեն ինչ հանգեցնում են լոկ իշխանության փոփոխության մասին խոսակցությունների: Երբեմն առաջնահերթ են դիտում այնպիսի հարցեր, որոնք ոչ մի ընդհանուր բան չունեն իշխանության

փոփոխության հետ: Ահա և ստացվում է, որ ոմանց համար կուրսի փոփոխությունը բարի թագավոր գտնելն է, ուրիշների համար՝ տիրակալ, որը իրեն լավ կողմերով դրսևորի, ընդ որում մոռանալով, որ թեպետ, անկասկած, նախագահի անհատականությունը ինչ-որ դեր խաղում է արտաքին քաղաքականությունում, շատ ավելի կարևոր նշանակություն ունի, թե ինչ երկիր է քո թիկունքում: Եվ եթե խոշոր զարգացած, 100-200 մլն բնակչությամբ երկրում նախագահը մի փոքր հիմար է, իսկ փոքր, հարյուրհազարանոց երկրի ղեկավարը, ասենք, Նոբելյան մրցանակակիր է, միևնույնն է, առավելությունը առաջինինն է:

-Նկատի ունենալով նախորդ՝ ԱԺ ընտրությունների և սահմանադրության ընդունման հանրաքվեի տխրահռչակ փորձը՝ մշակվե՞լ են նախագահական ընտրությունների վերահսկման մեխանիզմներ: Դուք համոզվա՞ծ եք, որ ընտրությունները անխարդախ կանցնեն:

-Ոչ, իհարկե: Բայց խնդիրն այլ է. որքանով մեքենայությունները կազդեն ընտրությունների արդյունքների վրա:

-Եվ ոչինչ հնարավոր չէ՞ անել:

-Հարկ է հասկանալ, թե ինչ է կատարվում Հայաստանում: Ես կրկին կանդրադառնամ իշխանության կառուցվածքին: Հանրապետությունում կուսակցությունները չեն զարգանում: Ինչու՞: Նախ՝ իշխանության կառուցվածքն այնպիսին է, որ երկրում դեր ունի միայն նախագահը, որի ընտրությունները կայանում են հինգ տարին մեկ անգամ: Խորհրդարանը քաղաքականությունում փաստորեն ոչ մի դեր չի խաղում, քաղաքականությունը դառնում է երկրորդական զբաղմունք: Առհասարակ այն երկրներում, որտեղ ուժեղ է նախագահական իշխանությունը, կուսակցությունները պակաս զարգացած են, քան խորհրդարանական երկրներում: Երկրորդ՝ քաղաքականությամբ զբաղվելը թանկ հաճույք է: Քաղաքականությունը փող արժե: Հարկ է ունենալ թերթեր, կառույցներ և այլն: Հանրապետությունում նման միջոցներ չկան, կուսակցությունները ֆինանսավորող աղբյուրներ չեն ստեղծվել: Չկան անկախ ֆինանսական, տնտեսական աղբյուրներ, ամեն ինչ կախված է կառավարությունից: Այն կուսակցությունները, որոնք կարող էին ֆինանսավորվել դրսից, փակ են: Դա որոշ չափով դժգույն է դարձրել հանրապետության քաղաքական կյանքի ներկապնակը: Իսկ որպեսզի վերահսկվեն ընտրությունները, ահռելի քանակությամբ մարդիկ են հարկավոր: Եվ հետո: Նախորդ ընտրություններում բոլորը միաձայն ասում էին, որ դրանք արդար չեն եղել, բայց, ինչպես անգլիացիները կասեին, անազնիվ խաղ էր գնում: Գուցեև որոշ բաներ տեղավորվում են օրենքի շրջանակներում, բայց եղել է և այնպես, որ կաշառք են տվել, բացահայտ սպառնացել են մարդկանց: Համոզելու միջոցները, լինեն օրինական, թե ոչ, անազնիվ են եղել: Իսկ դա վերահսկել գործնականում գրեթե անհնար է: Ազնիվ խաղի համար կամք է հարկավոր, և ես կարծում եմ, որ վաղ թե ուշ մեր ժողովուրդը և քաղաքական գործիչները կդրսևորեն այն:

-Ե՞րբ եք Դուք վերջին անգամ հանդիպել Լևոն Տեր-Պետրոսյանի հետ:

-Եթե չեմ սխալվում, մի երկու տարի առաջ, երբ պարգևատրում էին զինվորականներին: Ես արդեն դուրս էի եկել կառավարության կազմից, բայց ինձ հրավիրել էին՝ իմանալով, որ ինձ հուզում և մտահոգում է այն ամենը, ինչ կապված է բանակի հետ:

-Դուք ցանկություն ունե՞ք հանդիպել նրա հետ, զրուցել:

-Շփումները հնարավոր են, երբ դրված են համազգային շահեր, երբ քո տեսակետը կարող է ընդունվել: Ահա և առաջին դաշինքի ժամանակ ուժեղ պայքար էր գնում ընդդիմության և նախագահի միջև: Իսկ Արցախում սկսվել էին Ստեփանակերտի ռմբակոծությունները: Ինձ լուր հասավ, որ իշխանությունները պատրաստվում են էվակուացնել կանանց և երեխաներին, բայց զգուշանում են ընդդիմության մեղադրանքներից՝ իբր իրենք դատարկում են Ղարաբաղը: Ես հարկ համարեցի անձամբ զանգահարել Լևոն Տեր-Պետրոսյանին և ասել, որ մեր պայքարի պատճառով չպետք է տուժի բնակչությունը, ես նույնպես կողմ եմ կանանց ու երեխաների էվակուացիային և ամեն ինչ կանեմ, որպեսզի ընդդիմությունը չօգտագործի այդ գործողությունը իշխանությունների դեմ:

Պետք է խաղի որոշակի կանոններ լինեն: Դրանք կարող են մշակվել աստիճանաբար, բայց շատ բան կախված է նրանից, թե ինչ օրինակ են տալիս քաղաքական գործիչները, լինեն նրանք ընդդիմադիր թե իշխանամետ կառույցներ:

-Կոնֆորմիզմը՝ չափավոր, օգտակա՞ր է:

-Ոչ, պարզապես թշնամությունը երբեմն ավելի մեծ թշնամություն է ծնում և հնարավորություն չի ընձեռում հանգիստ և անաչառ խորանալ խնդրի, հակասության էության մեջ: Լինում է, որ մենք մեր կուսակցությունում երկար վիճում ենք, բայց հասնում ենք մի սահմանի, երբ մեկը չի լսում ընդդիմախոսի առարկությունները, այլ պարզապես ջանում է զորացնել իր փաստարկները: Այդ դեպքում ես առաջարկում եմ ավարտել վեճը, վերսկսել քննարկումը մի ժամից և անգամ հաջորդ օրը: Իսկ անձնական վիրավորանքները ես ջանում եմ արագ մոռանալ: Հավանաբար դա լավ չէ քաղաքական գործչի համար: Բայց կան շատ ավելի կարևոր բաներ, քան անձնական վիրավորանքները:

ԱԺՄ նախագահ Վ. Մանուկյանի հարցազրույցը
«Ուրարտու», 1996, հուլիս, թիվ 21

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԱՅԱՑՔ

ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼՆ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ՉԷՐ

Վարչապետության տարին

Պետք է խոստովանեմ, որ ես ներքին մեծ տագնապով համաձայնեցի վարելու այդ պաշտոնը: Ճիշտ է, լինելով «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատոր, հետագայում ՀՀՇ վարչության առաջին նախագահ և փաստացիորեն ղեկավարելով այն հզոր շարժումը, որ ծավալված էր Հայաստանում, ես արդեն ունեի ղեկավարման որոշակի փորձ, մյուս կողմից՝ մոտ 20 տարվա ընթացքում ուսումնասիրելով և դասավանդելով մաթեմատիկական մեթոդների կիրառումը այժմյան տնտեսագիտության մեջ՝ ես ունեի որոշակի տնտեսագիտական գիտելիքներ՝ ազատ տնտեսությանը վերաբերող, բայց կառավարական մեքենա ղեկավարելու համար դա քիչ էր, պակասում էին փորձը, գիտելիքները պետական կառավարման կառույցների վերաբերյալ: Պետք է խոստովանել, որ մասնագետների կարծիքով ես բավականին շուտ տիրապետեցի այդ գործին: Բայց միևնույնն է, մինչև իմ վարչապետության վերջին օրն անընդհատ նորը սովորելու անհրաժեշտություն էր զգացվում: Կյանքն այն ժամանակ շատ արագ էր փոխվում՝ պահանջելով նոր, մինչ այդ կառավարական համակարգին չհանդիպած, անծանոթ խնդիրների լուծում:

Հիմնական դժվարությունները, որոնք առաջացան հենց առաջին օրից, հետևյալն էին. հարաբերություններ Մոսկվայի հետ: Մի կողմից, մեր շարժումը մի ուժ էր, որ հռչակել էր անկախությունը՝ որպես նպատակ և իր նախկին գործունեության ընթացքում անընդհատ առճակատումների մեջ էր կենտրոնի հետ Ղարաբաղի հարցի շուրջ: Մյուս կողմից, ես՝ որպես վարչապետ, պարտավոր էի ստեղծել բարեկամական հարաբերություններ ԽՍՀՄ-ի իշխանությունների հետ ապահովելու համար մեր հանրապետության տնտեսական կյանքը: Պետք է ասել, որ դա շատ արագ իրականացվեց, ես միշտ բարիդրացիական, գործնական հարաբերություն եմ ունեցել ԽՍՀՄ-ի տնտեսական ղեկավարության հետ: Դրական էր վերաբերմունքը ոչ միայն մեր հանրապետության, այլ նաև իմ նկատմամբ: ԽՍՀՄ-ի տնտեսական կառույցների հետ լիարժեք հարաբերություններ ստեղծելու գործում մեծ նշանակություն ունեին այն փորձված նախարարները, որոնց ես պահեցի համակարգի մեջ: Ցավոք սրտի, նրանց մի մասին ես հրաժեշտ տվեցի իմ վարչապետ եղած ժամանակ՝ քաղաքական ճնշումներից ելնելով, մի մասին աշխատանքից ազատեցին իմ վարչապետությունից դուրս գալուց հետո: Այստեղ ես սկսեցի ականատես շոշափել կադրային քաղաքականությունը, որը, պետք է ասել, ամենադժվարին հարցն է, երբ երկրի ներսում կտրուկ փոխվում է քաղաքական իշխանությունը, տնտեսական համակարգը: Մի կողմից՝ ձգտում կար պահպանել այն մարդկանց, որոնք ունեին բարձր պրոֆեսիոնալ մակարդակ, կապեր ինչպես կենտրոնական կառավարության, այնպես էլ մյուս հանրապետությունների կառավարությունների հետ, և նաև

լավ էին տիրապետում այն կառույցներին, որոնք գտնվում էին իրենց հսկողության տակ: Մյուս կողմից՝ հասարակության մեջ ձգտում կար նոր Հայաստանը կառուցել նոր մարդկանցով, որոնք պետք է ունենային ոչ միայն պրոֆեսիոնալ հատկություններ, այլ նաև բարձր բարոյականություն և տիրապետեին այն նոր տնտեսական հարաբերութուններին, դեպի ուր մենք ուզում էինք գնալ ողջ հասարակությամբ: Երրորդ կողմից՝ կադրային հարցերում ինձ վրա կար մեծ և արդարացի ճնշում այն թիմից, որի հետ պայքարելով՝ եկել էի իշխանության: Ես այդ ճնշումը արդարացի եմ համարում, որովհետև այն բնական է և կիրառվում է ցանկացած դեմոկրատական երկրում, որտեղ ընտրությունների միջոցով ասպարեզ է գալիս նոր ղեկավարություն: Ինչպես միշտ, երեք ձմերուկ մի ձեռքով բռնելը անհնարին էր, մանավանդ որ շատ դժվար էր կարճ ժամանակում ընտրել և պատրաստել նոր կադրեր: Եվ այդ պատճառով ցանկացած կադրային նշանակում դժգոհություն էր առաջացնում ճամբարներից գոնե մեկում, որոշ նշանակումներ՝ բոլոր ճամբարներում: Կադրային հարցում ես ունեցա սխալներ, ոչ լրիվ մտածված նշանակումներ: Բայց քանի որ նշանակումների ժամանակ ես չէի հետապնդում անձնական շահ, համոզված էի, որ ժամանակի ընթացքում կստեղծվեն կադրային քաղաքականության ճիշտ մեխանիզմներ և, անհաջող մարդկանցից ազատվելով, հնարավոր կլինի պատասխանատու պաշտոններում նշանակել ավելի գրագետ կադրեր: Ցավոք, իմ դուրս գալուց հետո ես չեմ տեսնում բարելավումներ այդ հարցում, ուղղակի առաջին օրերի սպասումները, երբ ամբողջ ժողովուրդը անհամբեր հետևում էր կադրային նշանակումներին, փոխվեցին անտարբերության: Հօգուտ ինձ պետք է ասեմ, որ իմ վարչապետության օրոք հաջողվեց պահպանել պրոֆեսիոնալների այն կարևորագույն շերտը՝ գործարանների տնօրեններին: Այժմ այդ շերտը գրեթե լիովին ջախջախված է: Իմ վարչապետության ժամանակաշրջանը երևի ամենածանր ժամանակաշրջաններից էր ԽՍՀՄ-ի տնտեսական պատմության մեջ, երբ աչքիդ առաջ քանդվում էր ողջ հասարակական-տնտեսական համակարգը, և պետք էր մի ձեռքով պահել այն, ինչ հնարավոր էր փրկել, մյուս ձեռքով՝ փորձել կառուցել նորը: Նախորդ ժամանակաշրջանից ծանոթ ապրելակերպը պահպանել հաջողվում էր մեծ դժվարությամբ: Բայց, այնուամենայնիվ, իմ վարչապետության օրոք մեր բնակչությունը օրական 24 ժամ ապահովված էր հոսանքով, աշխատում էին գործարանները, ընդհատումներով շարունակվում էր կտրոնային համակարգի գործունեությունը, որի միջոցով բնակչությունը ստանում էր անհրաժեշտ սննդամթերքները, չկար գների կտրուկ աճ:

Այն պայմաններում, երբ սկսվել էր ԽՍՀՄ-ի տնտեսական համակարգի փլուզումը՝ առաջ անցնելով քաղաքականից, դեռ հնարավորություն կար, ճիշտ է, արդեն դժվարությամբ, բայց նոր ինքնուրույն կապեր ստեղծելով հանրապետությունների հետ, այնուամենայնիվ, լուծել այդ խնդիրները: Մեծ ռիսկի գնալով՝ հնարավոր եղավ նաև փրկել մեր ժողովրդի դրամական խնայողությունները ԽՍՀՄ-ի վարչապետ Պավլովի այն անսպասելի քայլից հետո, երբ նա սկսեց փոխել 50 և 100 ռուբլիանոց դրամանիշները: ԽՍՀՄ-ի փլուզման պայմաններում հայտնվեց աղետի գոտին: Միության տարբեր հանրապետություններից եկած շինարարները սկսեցին թողնել-հեռանալ՝ շատ հաճախ ձգտելով տանել այն տեխնիկան, որը բերել էին իրենց հետ: Ջոկատները, տեղական իշխանությունները, շինարարության նախարարությունը փորձում էին երբեմն ուժի միջոցով, երբեմն համոզելով, փոխզիջումների գնալով, պահել աղետի գոտու տեխնիկական միջոցները: Որոշ բաներ հաջողվեցին, բայց եղան չարաշահումներ, թալան: Չնայած բոլոր դժվարություններին՝ իմ վարչապետության օրոք 1990թ. հանձնեցինք 500 հազար քմ բնակելի տարածք, 1991թ.՝ 750 հազար: Ո՛չ նախորդ տարիներին, ո՛չ էլ հետագայում այդ թվերը չեն գերազանցվել:

Մեծ արագությամբ այդ դժվարին ժամանակ շարունակվում էր մեր կողմից Վրաստանի տարածքով Հայաստան մտնող գազամուղի կառուցումը: Եվ այն իսկապես դարձավ Հայաստանի կյանքի ճանապարհը, երբ փակվեց Ադրբեջանի տարածքով եկող գազամուղը: Արագորեն շարունակվում էր նախկին տնտեսական համակարգի փլուզումը, արդեն սկսվել էր նոր տնտեսական հարաբերությունների առաջացում՝ մասնավոր առևտուր, հողի սեփականաշնորհում, մասնավոր փոքր ձեռնարկությունների ստեղծում, պետական փոքր ձեռնարկությունների փորձնական սեփականաշնորհում: Այս ամենը ապագայի տեսակետից կարևոր նշանակություն ունեցող քայլեր էին և համապատասխանում էին մեր ժողովրդի այն

ժամանակվա ցանկություններին, բայց միևնույն ժամանակ առաջացնում էին որոշակի անցանկալի երևույթներ, որոնց դեմ կառավարությունը չէր կարողանում արդյունավետ պայքար մղել՝ չունենալով վերահսկողության կանոնավոր մեխանիզմներ: Խնդիրը դրված էր, փորձեր էին արվում այն լուծել, բայց ես չեմ կարող հպարտանալ, որ իմ ժամանակ այդ խնդիրը լուծվեց:

Իմ հրաժարականից հետո խնդրի լուծումը, ըստ իս, սխալ ուղղությամբ ընթացավ, վերահսկողության մեխանիզմները չէին աշխատում իշխանության վերին էշելոնում, իսկ ներքևում կաշառակերության պահպանման հետ առաջացել էր այնպիսի սարսափ «վերահսկող» կառույցների նկատմամբ, որ ուղղակի սպանում է ամեն մի տնտեսական նախաձեռնություն՝ գրեթե անհնար դարձնելով քիչ թե շատ լուրջ տնտեսական ձեռներեցությամբ զբաղվելը: Ունքը շտկելու փոխարեն աչքը հանեցին: Անհրաժեշտ է նշել նաև, որ մասնավոր սեփականությանը և շուկայական տնտեսությանը անցնելը ինքնանպատակ չէր: Դա ուղղակի, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, լավագույն միջոցն է ապահովելու համար ժողովրդի բարեկեցությունը՝ հիմնված տնտեսական գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների առավել արդյունավետության վրա: Հայաստանը փոքր պետություն է, որը չնայած նախորդ ժամանակաշրջանում արդյունաբերական երկիր էր, բայց գրեթե չուներ համաշխարհային շուկա դուրս գալու մրցունակ արտադրանք: Այդպիսի պայմաններում դիմել շուկայական հարաբերություններին՝ որպես կախարդական փայտիկի, հույս ունենալով, թե այն ինքնուրույն կլուծի մեր տնտեսական խնդիրները, անհեթեթություն է: Շուկայական հարաբերությունները, ազատ մրցակցությունը (եթե նույնիսկ այն անկեղծորեն իրականացվի) շատ օգտակար գործիք պետք է դառնան կառավարության ձեռքում՝ իրականացնելու համար որոշակի նպատակներ: Մեր կառավարության օրոք մենք առևտրի, սպասարկման ոլորտի, միջնորդական ծառայությունների զարգացման հետ միասին կարևոր էինք համարում Հայաստանը պահպանել որպես զարգացած արդյունաբերական երկիր, որի հիմքի վրա պետք է շարունակեին զարգանալ մեր գիտական և կրթական համակարգերը: Այդ խնդիրը ենթադրում է բարեփոխումների ավելի բարդ ծրագիր, քան սոսկ միայն սեփականաշնորհումը: Նշեմ, որ այդ ուղղությամբ իմ վարչապետության օրոք կառավարությունը որոշակի քայլեր էր թափում:

Նորից շահագործման հանձնվեցին կարբիտի և կաուչուկի արտադրությունները, շահագործման հանձնվեց միջազգային կապի նոր համալիրը, որը մեզ այդ կարևորագույն հարցում միանգամից առաջ մղեց մյուս հանրապետություններից: Կապի միջոցները կառուցվեցին խոշորագույն ամերիկյան ֆիրմայի կողմից, որի հետ պայմանագիր կնքեցինք: Երկար բանակցություններից հետո պատրաստվում էինք Փարիզում գրանցել խոշոր բանկ, որի հիմնադիրները պետք է հանդիսանային Հայաստանի կառավարությունը և մեծահարուստ սփյուռքահայերը Ֆրանսիայից, Շվեյցարիայից, ԱՄՆ-ից, Վենեսուելայից: ԱՄՆ-ում ԽՍՀՄ-ը ներկայացնող դեսպանի օգնությամբ Հայաստան եկան ամերիկյան խոշորագույն ֆիրմաների ներկայացուցիչներ, որոնց միջոցով փորձում էինք իրականացնել մեր այն գործարարների կոնվերսիան, որոնք նախորդ ժամանակաշրջանում կատարում էին ԽՍՀՄ-ի ռազմաարդյունաբերական համալիրի պատվերները, իսկ այժմ արդեն հիմնականում զրկված էին այդ պատվերներից: Շատ կարևոր էինք համարում Հայաստանում պղնձածուլական գործարանի կառուցումը, որի վերաբերյալ լուրջ բանակցություններ էին տեղի ունենում Ֆրանսիայի կառավարության և ԱՄՆ-ի Յուտա նահանգի գործարար շրջանակների հետ: Ցավալի է, որ այդ կարևորագույն և շահավետ գործարանը մինչև այժմ կառուցված չէ Հայաստանում: Սփյուռքի կողմից մեծ հետաքրքրություն կար Հայաստանի տնտեսության նկատմամբ, գրանցվում էին բազմաթիվ համատեղ ձեռնարկություններ: Երևանում առաջին անգամ տեղի ունեցավ հայաստանցի և սփյուռքահայ գործարար մարդկանց համատեղ համաժողովը: Բայց ոչ միայն այդ հարցերն ու ԽՍՀՄ-ի տնտեսական փլուզումն էին, որ խնդիրներ էին դնում կառավարության առջև, ծանր էր նաև Հայաստանի ներքին կացությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ նախորդող ժամանակաշրջանում շարժումը իր գործունեությամբ կամա թե ակամա քանդում էր Հայաստանի կառավարման մեխանիզմները, վերացրել էր կարգ ու կանոնը, հարգանքը օրենքի, իշխանությունների նկատմամբ: Ազգային նպատակներ

հետապնդող բազմաթիվ զինված ջոկատների հետ միասին ասպարեզ էին եկել նաև զինված ջոկատներ, որոնք հայրենիքի պաշտպանության անվան տակ թալանում և տեռորի էին ենթարկում Հայաստանի բնակչությանը: Մենք այդ ժամանակ ստեղծեցինք նոր պետական կառույցներ՝ ներգրավելով նրանց մեջ հայրենիքի պաշտպանության գործին նվիրված ազատամարտիկների մեծ մասին, որոնց հիմքի վրա հետագայում սկսեց ձևավորվել մեր բանակը: Նաև հայտարարվեց պայքար այն զինված կառույցների նկատմամբ, որոնք շարունակում էին զբաղվել ռազմական, տնտեսական անօրինական գործունեությամբ: Կառավարությունը շատ վճռական միջոցների դիմեց Հայաստանում նորից կարգ ու կանոն հաստատելու նպատակով: Այդ աշխատանքը շարունակվեց նաև իմ վարչապետությունից դուրս գալուց հետո: Եվ այդ հարցում մենք էապես առաջ ընկանք մեր հարևաններից՝ Վրաստանից ու Ադրբեջանից՝ ապահովելով ներքին կյանքի կայունությունը: Միևնույն ժամանակ այդ տարիներին սկսվեց նոր հոգեբանության ձևավորումը մեր հասարակության մեջ. առաջին անգամ էր, որ ժողովուրդ իշխանություններ հարաբերություններում իշխողը, պահանջողը, վերահսկողը դառնում էր ժողովուրդը: Դա յուրաքանչյուր անհատի ներքին արժանապատվության զգացումի կտրուկ աճ էր, որը բնորոշ է ազատ հասարակությանը, և որի վրա է հիմնված նրա զարգացումը: Այդ տարիներին իրական էր համարվում արդար հասարակության կառուցումը: Պատահական չէ, որ 1990-91թթ. ընդունելության քննությունները աննախադեպ արդար էին: «Ի՞նչը մնաց այն օրից...»: Ես կարծում եմ, որ իմ ղեկավարած կառավարությունը իր բոլոր թերություններով ու սխալներով հանդերձ, ոգևորված իր վրա դրված առաքելությամբ, միասնական թիմ էր, որը մեծ քայլ արեց Հայաստանում նոր հասարակություն, նոր տնտեսական համակարգ ստեղծելու գործում՝ աշխատելով ԳԽ-ի հետ միասնական: Եվ այդ տեսակետից առաջինն էինք նախկին ԽՍՀՄ-ի տարածքում: Թե՛ դրանից, թե՛ մեր հստակ քայլերից դեպի ժողովրդավարություն ուրիշ պետությունների կողմից հարգանքի զգացում առաջացավ Հայաստանի նկատմամբ: Սպասումները մեծ էին. կյանքը չարդարացրեց սպասումները:

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՅՆ ՎԻՃԱԿԻՆ Է, ՈՐՈՒՄ ՄԵՆՔ ԵՆՔ ԳՏՆՎՈՒՄ

Հողի սեփականաշնորհումը

Պետք է ասել, որ մեզ սննդով օգնող երկրներում չկան «կոլխոզներ» և «սովխոզներ»: Համայնավարական ժամանակաշրջանում նույնիսկ ԽՍՀՄ-ի պես ահռելի հարուստ հողատարածքներ ունեցող երկիրը չէր կարողանում կերակրել իր ժողովրդին և ստիպված էր սնունդի հսկայական գնումներ կատարել զարգացած երկրներից: Այդ սնունդի, ինչպես նաև անասնակերի մի մասը տրամադրվում էր Հայաստանին: Եվ նոր կարգավիճակի պայմաններում, որը սկսեց իշխել ԽՍՀՄ-ի նախկին տարածքում, այդպիսի անբնական վիճակը շարունակվել չէր կարող: Իր բոլոր թերություններով հանդերձ հողի սեփականաշնորհումը ճիշտ էր, և արդեն ակնհայտ է, որ եթե հողը մնար պետական, ապա մեր գյուղատնտեսությունից բացարձակապես ոչինչ չէր մնա, ինչպես որ եղավ արդյունաբերության բնագավառում, խոշոր գործարաններում: Ամեն ինչ ուղղակի թալանվելու էր, ուրիշ ոչինչ: Գյուղացուն գոնե հողը մնաց, մյուսներին ոչինչ չմնաց: Բայց համաձայն լինելով հողի սեփականաշնորհման հետ՝ ես անընդունելի եմ համարում այն վիճակը, որում հայտնվեց մեր գյուղատնտեսությունը, մեր գյուղացիությունը:

Դեռևս հողի սեփականաշնորհման ընթացքում կառավարության շրջանակներում քննարկվում էին այն երեք կարևորագույն ծրագրերը, որոնք պետք է իրականացվեին գյուղատնտեսության մեջ, և մինչ այժմ այդ ծրագրերից գրեթե ոչինչ իրականացված չէ: Գյուղացուն դնելով այն անմխիթար վիճակում, որում նա գտնվում է այժմ, վտանգի տակ է դրվում նաև մեր ամբողջ գյուղատնտեսության ապագան, որը ստրատեգիական նշանակության ունի ցանկացած պետության համար: Ներկայացնեմ այդ երեք ծրագրերը.

1. Սեփականաշնորհումից առաջացած փոքր հողակտորների մշակումը արդյունավետ չէ: Հողակտորների աստիճանական խոշորացման պետական ծրագիր էր անհրաժեշտ: Այս տեսակետից համաշխարհային փորձը բազմաթիվ ձևեր է հուշում: Ես ինքս կողմնակից էի հողակտորների խոշորացումն իրականացնել իտալական կոոպերացիայի ձևով, երբ գյուղացիները, կամավոր միացնելով իրենց հողակտորները և տեխնիկան, ստեղծում են կոլեկտիվ տնտեսություն: Սեփականաշնորհումը հենց այդպիսի կոոպերացիայից սկսելու փորձը Հայաստանում հաջողություն չունեցավ, չնայած գյուղացիների կամավոր համաձայնության դեպքում այն նախատեսված էր օրենքով: Հավանաբար հայ մարդու հոգեբանությունից էր, որ նա ուզում էր նախ տեսնել, շոշափել այն հողը, որն արդեն իր սեփականությունն էր, հետո նոր որոշել, թե ինչ անել դրա հետ: Բայց հետագայում կառավարությունը վարկերի և հարկերի համապատասխան քաղաքականության միջոցով պետք է խրախուսեր կոոպերացիայի առաջացումը:

2. Բոլոր երկրներում (բացառությամբ միգուցե Հայաստանի) պետությունը սուբսիդիաների, խոշոր ֆինանսական միջոցների ներդրման միջոցով խրախուսում է իր գյուղատնտեսության գործունեությունը և զարգացումը: Որոշ երկրներում, ինչպես Ճապոնիայում, Նորվեգիայում և այլուր, այդ սուբսիդիաները, մտնելով գյուղատնտեսական ապրանքի գնի մեջ, կազմում են դրա մոտ 70-80%-ը: Այդպիսի ծրագրավորված վերաբերմունք գյուղատնտեսության նկատմամբ այժմ Հայաստանում չկա:

3. Հայաստանը, ինչպես և յուրաքանչյուր երկիր, պետք է որոշի գյուղատնտեսության այն ճյուղերը, որոնց պահպանումն ու զարգացումը իր համար ստրատեգիական նշանակություն ունի և իր ներքին շուկան կպաշտպանի այդ արտադրատեսակների զարգացմանը՝ ստեղծելով նաև նպաստավոր պայմաններ մեր գյուղատնտեսական արտադրանքի արտահանման համար:

Հակասություններ ՀՀՇ-ի ներսում

«Ղարաբաղ» կոմիտեն և հետագայում ՀՀՇ-ն առաջնորդվում էին այն գաղափարական սկզբունքներով ու քաղաքական մոտեցումներով, որոնք նշված էին ՀՀՇ-ի ծրագրերի մեջ և «Գնացքից թռչելու ժամանակն է» իմ հոդվածաշարում: Այդ պատճառով իշխանության գալուց հետո այն հարցերը, որոնց պատասխանները բխում էին մեր գաղափարական սկզբունքներից, մեծ հակասություններ չէին առաջացնում գոնե սկզբնական շրջանում: Բայց պետք է հիշել, որ այդ գաղափարական սկզբունքները հիմնականում վերաբերում էին մեր արտաքին քաղաքականությանը՝ պարունակելով իրենց մեջ իրատեսական մոտեցումներ աշխարհում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ: Բացի պարզագույն լոզունգից, որ շուկան ավելի լավ տնտեսական արդյունքներ է բերում, քան պլանային տնտեսությունը, ոչ մի մշակված տեսակետ կամ հայացքների համակարգ տնտեսական բարեփոխումների վերաբերյալ ՀՀՇ-ում չկար ոչ մինչև իշխանության գալը, ոչ էլ իշխանության գալուց հետո: Եվ բոլորի համար ես հեղինակություն էի այդ հարցերում, ինձ հետ այդ հարցի շուրջը գրեթե չէին վիճում: Ի դեպ, այժմ իրավիճակը տարբեր է. ՀՀՇ-ի մեջ տեղի է ունեցել որոշակի զարգացում տնտեսական հայացքների առումով, և այժմ արդեն բավականին մեծ տարբերություններ կան ՀՀՇ-ի և ԱԺՄ-ի տնտեսական տեսակետների միջև:

Վեճեր էին առաջացնում հիմնականում հետևյալ խնդիրները՝ կադրային նշանակումները, իշխանությունը իրականացնելու ոճը և նպատակները: Հակասությունների և վեճերի աղբյուր էր նաև ոչ կատարյալ պետական կառուցվածքը, որը Կենտկոմի իշխանության վերացման պայմաններում կրում էր երկիշխանության տարրեր: Գործադիր իշխանության բոլոր լծակները գտնվում էին վարչապետի ձեռքում, մյուս կողմից՝ ԳԽ-ի նախագահը ոչ թե պառլամենտի խոսնակ էր, այլ գրեթե զրկված լինելով գործադիր իշխանության լծակներից, այնու-ամենայնիվ, հանդիսանում էր պետության ղեկավար: Այդ ամենը, բացի այն բնական հակասություններից, որոնք գոյություն ունեն ցանկացած երկրում, գործադիր և օրենսդիր մարմինների միջև և օգտակար են պետության զարգացման համար, առաջացնում էր նաև հակասություններ, որոնք կարգավորված չէին օրենքով: Որպես իշխանության երրորդ ուժ՝ հանդես էր գալիս ՀՀՇ-ն՝ փորձելով կատարել նախկին Կենտկոմի դերը: Օրենքներով և ավանդույթներով չկարգավորված հարաբերությունները օգտագործելու բոլորի ձգտումը՝ խառնվել միմյանց գործերի մեջ, խառնաշփոթ էր առաջացնում: Առաջին հերթին դա

վերաբերում էր կադրային քաղաքականությանը, որպես բոլորի կողմից ամենահասկանալի և շահավետ հարց: Եվ եթե տնտեսական հարցերում ՀՀԾ-ն այն ժամանակ գրեթե փորձ չէր անում միջամտել կառավարության աշխատանքներին, ապա կադրային հարցերում ձգտում ուներ թելադրողի դիրքերից հանդես գալ: ՀՀԾ-ի այդ չբավարարված մղումից վարպետորեն օգտվում էին Լ. Տեր-Պետրոսյանը, Բ. Արարքցյանը և Վ. Սիրադեղյանը՝ ՀՀԾ-ն իրենց բուռը հավաքելու և, վերջին հաշվով, պետության ղեկը ամբողջությամբ իրենց ձեռքը վերցնելու նպատակով: Բնական է, որ դա հանգեցնում էր նաև անձնական հակասությունների, մանավանդ որ նրանց մեջ կասկածներ էին առաջանում, թե ես, իբր, ձգտում եմ, իրենց դուրս մղելով, ամեն ինչ իմ ձեռքը վերցնել:

Առհասարակ դեմոկրատական երկրներում, երբ կուսակցությունը ընտրությունների միջոցով գալիս է իշխանության, տարբեր ձևերով է լուծվում կուսակցության մասնակցությունը կադրային քաղաքականություն իրականացնելու հարցը: Մեզ մոտ չկային այդ հարցերը կարգավորող ոչ օրենքներ, ոչ ավանդույթներ, և վտանգ կար, որ երկիրը կարող էր մեծ արագությամբ ընթանալ դեպի քաոս և տնտեսական փլուզում, և ես, որպես վարչապետ, ուղղակի ֆիզիկապես հնարավորություն չունեի զբաղվելու այդ բացը լրացնելու գործով:

Պետք է նաև նկատի ունենալ, որ խոսքը ոչ թե լավ կամ վատ կադրային նշանակման, այլ, ըստ էության, իշխանության մասին էր: Իշխանության լծակները իմ ձեռքում պահելու ցանկությունը պայմանավորված չէր միայն այն հանգամանքով, որ ըստ օրենքի, պատասխանատվությունը դրված էր ինձ վրա, պայմանավորված չէր նաև նրանով, որ իշխանության լծակները ձեռքում պահելը «քաղցր» պարտականություն է: Վերջ ի վերջո էականը այն է, թե ինչի համար են դրանք օգտագործվում և ինչպես: Այս հարցում, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանի, երբ հնարավոր էր լինում միասնական որոշումներ ընդունել, ստեղծվել էր նոր իրավիճակ: Նոր կարգավիճակի պարագայում շատերի մեջ արդեն իրազեկության պակաս էր նկատվում: Ոմանց մեջ իշխանության օղակներում գտնվելը առաջացրել էր գլխապտույտ և անձնական շահի գիտակցում: Ոմանք, միգուցե մեր ժողովրդի լավը ցանկանալով, առաջարկում էին, ըստ իս, ոչ ճիշտ լուծումներ:

Ինձ ներքուստ վրդովեցնում էր այն հանգամանքը, որ այդ ծանր պայմաններում, երբ փլուզվում էր Խորհրդային Միությունը, քանդվում էր համատեղ տնտեսական համակարգը, տեղի էին ունենում ռազմական գործողություններ, և ես՝ որպես վարչապետ, գտնվում էի ծանր լծի տակ, Լ. Տեր-Պետրոսյանը և ՀՀԾ-ի մյուս քաղաքական ղեկավարները չէին փորձում համախմբել ժողովրդին, ցույց տալ մեր ազգային նպատակները, ոգևորել, որպեսզի մենք միասնության շնորհիվ կարողանայինք անցնել այդ բեկումնային պահը: Ինձ համար բացարձակապես ընդունելի չէր այն անհանդուրժողական ոճը՝ «Ով մեզ հետ չէ, մեր դեմ է» կարգախոսով: Ինձ համար ընդունելի չէր այն ոճը, երբ ոմանք ատելության զգացումով էին վերաբերվում և հալածում նրանց, ովքեր խելքով, ինտելեկտով կամ իրենց կյանքի ընթացքում աշխատած գումարներով գերազանցում էին ՀՀԾ-ի ղեկավարության այս կամ այն անդամին: Ինձ համար ընդունելի չէր, որ ժողովրդի շահերի հետապնդումը կատարվի անօրինական ճանապարհով, դա հղի էր շատ վատ հետևանքներով ապագայի համար: Ինչ վերաբերում է իշխանությունը պահելու նպատակին, ապա ինձ համար իշխանությունը, Հայաստանի անկախությունը, Հայաստանում ժողովրդավարական կարգերի հաստատումը, ժամանակակից տնտեսավարական համակարգին անցնելը միջոց էին իրատեսական քաղաքականություն վարելու ճանապարհով իրականացնելու համար մեր ազգային դարավոր երազանքը, որը ես ձևակերպեցի «համաշխարհային ազգ» գաղափարով: Ես առիթ ունեցել եմ այդ մասին խոսելու, այժմ չանդրադառնամ դրան: Այդ գաղափարին Լ.Տեր-Պետրոսյանը հակադրեց «սովորական ժողովուրդ» գաղափարը, որը, ըստ իս, նշանակում էր որևէ պարտավորություն չվերցնել մեր ազգի ապագայի խնդրում, գնալ սովորական ճանապարհով, այն ամենը, ինչ ինքնիրեն կստացվեր, ներկայացնել իբրև օբյեկտիվ անհրաժեշտություն: Ինչպես երևում է, ես լավատես էի, և սովորական ժողովուրդ ասածը այն վիճակն է, որում մենք գտնվում ենք այժմ:

Այդ «իշխանություն՝ հանուն իշխանության, իշխանություն՝ ամեն գնով» կարգախոսի հետևողական իրականացումը հասցրեց նրան, որ ՀՀԾ-ի ղեկավարությունից դուրս եկա ոչ միայն ես, այլ նաև շարժման շատ ու շատ հին և վաստակ ունեցող անդամներ: Ես ինձ մեղավոր եմ զգում այն տրոհման համար, որը տեղի ունեցավ և օգտակար չէր Հայաստանին, որովհետև մինչ այդ և՛ «Ղարաբաղ» կոմիտեում, և՛ ՀՀԾ-ում մեծ հեղինա-կություն ունեցող

ղեկավար էի, շատերի համար ուսուցիչ և ինչքան էլ զբաղված լինեի, ես ավելի զգոն ու համբերատար պետք է լինեի տեղի ունեցող երևույթների նկատմամբ և դեպքերի այդպիսի ընթացք թույլ չտայի: Քաղաքական գործչի այդ հատկությունները միշտ էլ անհրաժեշտ են եղել նախորդ տարիների ընթացքում փրկելու համար «Ղարաբաղ» կոմիտեն ու շարժումը փլուզման վտանգից: Բայց ինչ-որ պահից հետո, երբ աստիճանաբար իմ դեմ սկսեց օգտագործվել ոչ ազնիվ խաղ, դա անհնարին դարձավ: Մի կողմից՝ և՛ Հայաստանի, և՛ արտասահմանյան մամուլում փորձ էր արվում, նենգափոխելով շարժման պատմությունը, բացառիկ դեր վերագրել Լ. Տեր-Պետրոսյանին, որը նա շարժման ժամանակ չուներ, դրանով իսկ նախապատրաստելով ժողովրդի աչքում խարիզմատիկ ղեկավարի կերպար ստեղծելը, մյուս կողմից՝ իրենք սկսեցին աննախադեպ բամբասանքների տարածումը իմ անձի մասին: Մի քանի տարբեր անհաջող փորձերից հետո նրանք կարողացան գտնել պետության գործադիր իշխանության լծակներին տիրանալու լուծումը, այն է՝ անցկացնել ԳԽ-ում նախագահական համակարգի հարցը, և քանի որ ամենահավանական նախագահական թեկնածուն Լևոն Տեր-Պետրոսյանն էր, ընտրվելու դեպքում նա, օրինական ձևով շրջանցելով ինձ, տնօրինելու էր մինչև այդ վարչապետի ձեռքում գտնվող կառավարման լծակները: Այդ ծրագրի իրականացման պարագայում շարունակել վարչապետ աշխատելը, նույնիսկ եթե ինձ թողնեին այդ պաշտոնում, ես համարեցի անիմաստ: Եվ ես չէի գտնում, որ իշխանության լծակները անցնում են արժանի մարդկանց խմբին, որոնք կկարողանային և կցանկանային այն ճիշտ օգտագործել: Մնում էր կա՛մ նախագահ դառնալ, կա՛մ հրաժարական տալ:

ՍԻ՞ԹԵ ՄԵՆՔ ԱՐԺԱՆԻ ՉԵՆՔ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հրաժարում նախագահական ընտրություններից

Նախագահական ընտրությունների շեմին արդեն հասկանալի էր, որ ժողովրդի համար Լևոն Տեր-Պետրոսյանը ավելի գերադասելի էր, քան ես, և հետևաբար նրա նախագահ ընտրվելու հավանականությունը ակնհայտորեն ավելի մեծ էր, քան իմը: Դրա պատճառների բացատրությունը փնտրելիս պետք է նշել, որ տարբեր հանգամանքների հետ կարևոր նշանակություն ուներ նաև, թե ինչ դեր էինք մենք մեր վրա վերցրել նախորդ ժամանակաշրջանում: ԽՍՀՄ-ի տնտեսական փլուզման պայմաններում ես զբաղված էի կառավարության և երկրի բնականոն գործունեությունը ապահովելու անշնորհակալ գործով: Լևոն Տեր-Պետրոսյանը ի պաշտոնե հանդիպումներ էր ունենում տարբեր երկրների ղեկավարների հետ, իսկ դա, որպես նորույթ, շոյում էր մեր ժողովրդի ինքնասիրությունը՝ մեծացնելով նրա համակրանքը Լևոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Բայց պետք է հաշվի առնել, որ ընտրությունները ոչ միայն անհատական պայքար են, այլ նաև թիմային: Հաղթում է ոչ այնքան անհատը, որքան թիմը: Ինչպես ես արդեն նշեցի, իշխանության գալուց հետո ՀՀՇ-ի ղեկավարությունը բաժանվեց երկու խմբի, որոնք տարբերվում էին իրենց մոտեցումներով իշխանությունը իրականացնելու ոճի և նպատակների խնդրում: Արդեն սկսել էին առաջանալ նաև անձնական հարցեր: Այդ պայմաններում Լևոն Տեր-Պետրոսյանին հաջողվեց, առանց առանձնապես ջանք թափելու, իր կողմնակիցների օգնությամբ, կիրառելով հայտնի մեթոդներ, իր անձը պաշտպանող թիմ դարձնել ՀՀՇ-ի մեծամասնությանը:

Իհարկե, թեև կային որոշակի դժվարություններ, կարելի էր փորձել կառավարության լծակները գործադրել իշխանությունը պահելու և նախագահական ընտրություններին հաղթելու համար: Սակայն հայտնի է, որ այդ ձևի կիրառումը սովորաբար հանգեցնում է կեղծիքների, բռնությունների, իրենց իշխանությունը չարաշահող «փոքրիկ իշխանիկների» գոյացմանը և գցում է քեզ թակարդի մեջ. դու ունենում ես իշխանություն, բայց երկիրը կամա թե ակամա գնում է մի ուղիով, որը հնարավորություն չի տալիս իրականացնել այն նպատակները, հանուն որոնց դու եկել ես իշխանության: Դա ընդունելի ճանապարհ չէ:

Գոյություն ուներ ևս մի հնարավորություն. իմ կողմնակիցների թիմը զգալիորեն կուժեղանար, եթե Դաշնակցությունը, որի շարքերը արագորեն համալրվում էին ՀՀՇ-ից հիասթափված շարժման ակտիվ անդամներով, պաշտպաներ իմ թեկնածությունը: Սակայն Դաշնակցությունը առաջադրեց Սոս Սարգսյանին: Ստեղծված պայմաններում շարունակել

մասնակցությունը նախագահական ընտրություններին, կամա թե ակամա սրելով իրավիճակը Հայաստանում, ես և իմ կողմնակիցները համարեցինք անիմաստ, մանավանդ որ ժողովրդի մեծ մասին դժվար կլիներ այն ժամանակ բացատրել «Վազգեն-Լևոն» պայքարի իմաստը:

Մնում էր, ստիպված դուրս գալով ակտիվ քաղաքականությունից, ձևավորել գաղափարակիցների թիմ՝ ԱԺՄ-ն, հուսալով, որ ՀՀՇ-ում հաղթած մեծամասնության քաղաքականությունը այնուամենայնիվ չի վտանգի Հայաստանի ապագան:

Պաշտպանության նախարարի պաշտոնի ստանձնումը

Մենք գտնվում էինք ծանր ռազմական իրավիճակում: Շուշիի փայլուն հաղթանակից շատ քիչ ժամանակ անց կորցրել էինք Շահումյանը, Մարդակերտի մեծ մասը, Արծվաշենը, խուճապ էր տիրում ռազմաճակատում: Ընդդիմությունը համախմբված էր բավականին ուժեղ դաշինքի մեջ, քաղաքական պայքար էր մղվում, և այդ իրավիճակում, որը թվում էր անելանելի ռազմական տեսակետից, Լ. Տեր-Պետրոսյանը հրավիրեց ինձ և առաջարկեց պաշտպանության պետնախարարի պաշտոնը: Մի կողմ թողնենք, թե ինչը դրդեց Լ. Տեր-Պետրոսյանին անել այդ առաջարկությունը: Ես պատասխանեցի, որ մենակ այդ հարցը լուծելու իրավունք չունեմ, դա դաշինքով պետք է լուծվի: Դաշինքի նիստում այդ առաջարկությունը քննարկվեց, և հակադիր առաջարկություններ արվեցին: Մեկը մենք էինք առաջարկում, այն է՝ ստեղծել պաշտպանության պետկոմիտե, որի մեջ մտնեին տարբեր պետական կառույցների ղեկավարներ և ընդդիմության ներկայացուցիչներ, կոմիտեն իր վրա պարտավորություն վերցներ ռազմական գործողությունների համար, ունենար լիարժեք լիազորություններ և ողջ պատասխանատվությունը իր վրա վերցներ: Առաջարկվում էր, որ այդ կոմիտեի ղեկավարը լինի ընդդիմությունից: Դաշնակցության կողմից այլ առաջարկություն արվեց, որ այդ կոմիտեի նախագահը լինի Լ.Տեր-Պետրոսյանը՝ ունենալով, ինչպես կոմիտեի յուրաքանչյուր անդամ, մեկ ձայն, և կոմիտեի կազմում ընդդիմության ներկայացուցիչների թիվը լինի ոչ պակաս, քան պետական կառույցների ներկայացուցիչներինը: Մենք գտնում էինք, որ դա իմաստալից առաջարկություն չէ: Փաստորեն երկրի ղեկավարը պիտի պատասխանատվություն կրի պարտությունների և հաղթանակների համար, բայց որոշումների մեջ և՛ ինքը ունենա մի ձայն, և՛ ընդդիմության ներկայացուցիչները: Այդպիսի բան աշխարհում չի լինում: Մենք դեմ էինք այդ առաջարկությանը, բայց որպեսզի դաշինքը չտրոհվի, համաձայնվեցինք: Մի քանի այլ կուսակցությունների ներկայացուցիչներով հանդիպեցինք Լ.Տեր-Պետրոսյանի հետ: Նա այն մերժեց՝ որպես անհեթեթ առաջարկություն, և կրկնեց, որ ինձ արված նախորդ առաջարկությունը մնում է ուժի մեջ:

Դաշինքի նիստին ես այդ հարցը բարձրացրի և ասացի, որ հակված եմ ընդունել այդ առաջարկը, որովհետև այն հնարավորություն է տալիս ռազմական իրավիճակը փոխել: Բայց եթե դաշինքի մեջ որևէ կուսակցություն դեմ լինի, ապա ես կմերժեմ Լ.Տեր-Պետրոսյանի առաջարկությունը: Դաշինքի բոլոր կուսակցությունները հայտարարեցին, որ իրենք դեմ չեն, որպեսզի ես ընդունեմ առաջարկությունը և դառնամ պաշտպանության պետնախարար: Ես համաձայնեցի: Այդ պահից ի վեր այն գործողությունները, որ սկսեց անել բանակը, քաղաքական կուրսի փոփոխություն էին և մեծ առճակատում էին առաջացնում քաղաքական և ռազմական ղեկավարների միջև: Հիշեք, թե ինչպես Ղափանի օպերացիայից հետո մեր բանակը մտավ Ադրբեջանի տարածք և վերցրեց որոշ բարձունքներ, որոնք մեծ կարևորություն ունեին Ղափանը պաշտպանելու համար, և միևնույն ժամանակ, հարվածը իր վրա վերցնելով, Հայաստանը հնարավորություն տվեց, որ Ղարաբաղում արագորեն ձևավորվեր Մարդակերտի քանդված ռազմաճակատը: Գերագույն խորհրդում մեծ հարձակումներ սկսվեցին իմ դեմ՝ որպես պաշտպանության նախարարի, և այդ հարձակվողները հիմնականում ՀՀՇ-ի ներկայացուցիչներն էին: Նրանք մեր ժողովրդի վատը չէին ցանկանում, և իմ դեմ պայքարելիս իրենց անձնական շահերը չէին թելադրում: Ուղղակի ՀՀՇ-ի պրագմատիկ (իրատեսական) մտածելակերպի մեջ չէին տեղավորվում այդ ռազմական գործողությունները, նրանք ճիշտ չէին կարողանում հաշվարկել մեր քաղաքական և ռազմական հնարավորությունները: Այնինչ, իմ կարծիքն էր, որ իրատեսական որոշումներ ընդունելու դաշտն ավելի մեծ էր, քան թվում էր իրենց: Կյանքը ցույց տվեց այդ տեսակետի ճշտությունը: Եվ պետք է ասեմ, որ իհարկե մենակ չէի, նույն տեսակետին էին նաև Հայաստանի բանակի ողջ ղեկավարությունը, զինվորականությունը, Ղարաբաղի քաղաքական և ռազմական ղեկավարությունը, ողջ ժողո-

վուրդը: Հաջողությունները ռազմաճակատում բերեցին քաղաքական կուրսի փոփոխություն: Ռազմական հաղթանակները նպատակ էին հետապնդում պաշտպանել մեր ժողովրդին, նաև ապացուցել Ադրբեջանին, որ նա չի կարող պատերազմի միջոցով լուծել Ղարաբաղի հարցը, դրանով իսկ պարտադրելով նրան գնալ լուրջ քաղաքական բանակցությունների: Քելբաջարի գրավումից հետո, երբ մեր զորքը գտնվում էր արդեն Մարդակերտում, և նախապատրաստվում էին հարավային գործողությունները, ես անվտանգության խորհրդի նիստում ասացի, որ այս ամենից հետո, երևի մի 6 ամիս անց Ադրբեջանը կփորձի ռազմական ուժեղ գործողություններով հետ վերադարձնել այդ բոլորը: Ես հավաստիացրեցի անվտանգության խորհրդի անդամներին, որ իրենք կարող են հանգիստ մնալ, մենք չենք պարտվելու, որից հետո ես ինքս կամովին դուրս կգամ պաշտպանության նախարարությունից, որովհետև իմ անելիքները արդեն այդպիսով ավարտված կլինեն: Կսկսվի խաղաղության շրջան: Ինչ-ինչ պատճառներով ինձ ավելի շուտ առաջարկվեց, որ ես դուրս գամ: Ես այդ պատմությանը անդրադառնալ չեմ ուզում:

Վազգեն Մանուկյանի և Լ. Տեր-Պետրոսյանի գաղտնի համաձայնության առասպելը

Հետաքրքիր կլիներ իմանալ իմ շահը այդ խաղի մեջ: Անկեղծ ասած, այդ ասեկոսեները նոր չեն: Ինձ դրա մասին բազմիցս ասել են իմ դաշնակցական ընկերները, և պատահական չէ, որ այդպիսի կարծիքները արհեստականորեն տարածվում են քաղաքականացված շրջանակներում, մասնավորապես Դաշնակցության մեջ: Դա նոր պրոբլեմ չէ: Պետք է ասեմ, որ չնայած գաղափարական որոշ հակադրություններին ԱԺՄ-ի և Դաշնակցության միջև, դաշնակցականները բավականին հարգալից վերաբերմունք ունեն և՛ մեր կուսակցության, և՛ անձամբ իմ նկատմամբ, մանավանդ իմ պաշտպանության նախարար եղած ժամանակից հետո: Եվ այն ուժերը, որոնք այդ համարում են անցանկալի և կուզենային, որ ՀՅԴ-ի ներսում իմ և ԱԺՄ-ի նկատմամբ համապատասխան վերաբերմունք չլիներ, միտումնավոր կերպով ներսում այդպիսի բամբասանքներ են տարածում, որպեսզի կուսակցությունը ավելի կառավարելի լինի իրենց համար: Մեծ կուսակցությունը կառավարելու համար երբեմն ներքին բամբասանքները օգտակար են լինում: ՀՅԴ-ն բացառություն չէ: Նույնը վերաբերում է ՀՀՇ-ին: ՀՀՇ-ի մեջ էլ իմ վարչապետ եղած ժամանակ, բացի նրանից, որ անցած ուղու որոշակի նենգափոխություն էր կատարվում, սկսվեց բամբասանքների մի տարափ, որպեսզի ՀՀՇ-ն պաշտպան չլինի ինձ: Ես պետք է ասեմ, որ ՀՀՇ-ում մինչև օրս էլ տարածում են այդ բամբասանքները: Նույնիսկ անհեթեթության հասնող: Հիշում եմ՝ անցյալ տարի ականջիս հասավ, որ ՀՀՇ-ի այն տղաների մեջ, որոնք շատ սուր հակահամայնավար են, լուրեր են տարածում, որ Մոսկվայում ինձ դիմավորում է Սուրեն Հարությունյանը և այլն, և այլն: Բամբասանքներ՝ կապված Դավիթ Վարդանյանի կամ Արշակ Սադոյանի հետ: Դա բամբասանքների տարածված, բայց մտահոգիչ ձև է, իբր գաղտնի տեղեկությունների միջոցով փորձում են կառավարել այս կամ այն կուսակցությունը: Եթե լիներ միայն կուսակցությունը, դեռ ոչինչ: Բայց այդպիսի փորձեր եղել են և կլինեն կառավարելու համար մեր ողջ ժողովրդին, ընդ որում ոչ միայն ներքին ուժերի կողմից: Դա իսկապես կարևոր պրոբլեմ է, և մեր ժողովուրդը, մեր հասարակությունը պաշտպանված չէ ուրիշի կամ ներքին որևէ խմբակցության ձեռքին խաղալիք դառնալու վտանգից: Այդ խնդիրը զարգացած երկրներում լուծվում է ազատ, ամեն ինչի մեջ մուտք ունեցող մամուլի, անկախ դատական համակարգի, պառլամենտական լսումների, զարգացած ազգային անվտանգության ծառայություն ունենալու միջոցով և վերջապես հասարակական կյանքի հիմքում ընկած և հասարակության, նրա էլիտայի մեջ խորությամբ ներթափանցված գաղափարական, փիլիսոփայական, քաղաքական, բարոյական սկզբունքների գոյության միջոցով, որոնք ապահովում են հասարակական կարծիքի կայունությունը, երևույթները նույնանման գնահատելու հնարավորությունը: Այս խնդիրը ինձ հուզել է վաղուց ի վեր, և XX դարի մեր ժողովրդի պատմության շատ էջերի բացատրությունը փնտրելիս այնպիսի ազգային քաղաքական լուրջ գործիչներ, ինչպիսիք Ռ.Դարբինյանը և մյուսներն էին, ակամայից նշում էին, թե ինչպես են հաճախ մեր ժողովրդի բնական զգացմունքները շահագործվել ի վնաս մեր ժողովրդի: Այդ մտորումների արդյունքն էլ եղավ «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական պրագմատիզմը:

Վերադառնալով իմ վարչապետ եղած ժամանակին, ասեմ, որ երբ սկսվեց պայքար իմ և Լ.Տեր-Պետրոսյանի միջև, սկսվեցին հակասություններ ՀՀՇ-ի ներսում: Ես պարզ տեսնում էի, որ Հայաստանում կային նաև օտար ուժեր, որոնք յուղ էին լցնում այդ հակասությունների վրա՝ փորձելով Հայաստանում ունենալ իրենց համար հարմար իրավիճակ, հարմար իշխանություններ:

Արտաքին ուժեր

Իհարկե, ԽՍՀՄ փլուզման հիմքում ընկած էին օբյեկտիվ դրդապատճառներ, որոնց մասին հրապարակվել են բավականին լուրջ հետազոտություններ, հոդվածներ: Հնարավոր էին այդ փլուզման տարբեր ճանապարհներ, ես չեմ կարծում, որ իրականացվեց լավագույնը, նույնիսկ կարելի է ասել, որ ԽՍՀՄ-ի ղեկավարությունը այդ ժամանա-կաշրջանում իրականացնում էր բավականին անմիտ քաղաքականություն: Ես չեմ բացառում իհարկե, և նույնիսկ համոզված եմ, որ Արևմտյան պետությունները, ձգտում ունենալով ազատվել այն վտանգից, որ ներկայացնում էր ԽՍՀՄ-ը իրենց և ամբողջ աշխարհի համար, հատուկ ծառայությունների միջոցով փորձում էին միջամտել այդ պրոցեսին: Բայց պետք է խոստովանել, որ բուն պրոցեսը օբյեկտիվ էր, միջամտությունները իհարկե կարող էին նշանակություն ունենալ, բայց փոխել իրավիճակը դրանք չէին կարող:

Ինչ վերաբերում է Ղարաբաղյան շարժմանը, ապա այն ուներ իրական ազգային արմատներ, կրում էր համաժողովրդական բնույթ՝ հետագայում ներգրավելով իր մեջ մեր ժողովրդին հուզող բոլոր հարցերը: Իհարկե կային պահեր, որոնք մնացին մութ և անբացատրելի նաև ինձ համար, չնայած ես գրեթե միշտ գտնվում էի «խոհանոցում»: Բայց մեծ հաշվով եթե խոսենք, ապա ոչ թե մեզ օգտագործեցին, այլ մենք, հասկանալով՝ ինչ է տեղի ունենում, աշխատեցինք օգտվել առիթից, ընթացող համաշխարհային հոսանքի մեջ տեղադրել մեր ազգային հարցերի այն մասը, որը համահնչյուն էր այդ պրոցեսին և դրա շնորհիվ կարող էին լուծվել: Այժմ արդեն մեր երկրի ներսում լուծվելիք հարցերը մեր ժողովրդի գործն են, և եթե չկարողանանք լուծել, ուրեմն մենք արժանի չենք այն հնարավորություններին, որոնք տվեց ճակատագիրը:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱԶԳ ԼԻՆԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է...

Մինչև 1988թ. շարժումը անկախ պետություն չունենալու պայմաններում քաղաքական հարցերով հիմնականում զբաղվում էին սփյուռքի կուսակցությունները և Հայաստանի մտավորականության վերնախավը: Քաղաքական մոտեցումներում իշխում էր այն մտածելակերպը, որը ես կանվանեի քաղաքական ռոմանտիզմ: Բայց մինչև քաղաքական ռոմանտիզմին և քաղաքական պրագմատիզմին իրատեսական բնութագրումներ տալը նպատակահարմար է հատուկ կանգ առնել նաև մի երևույթի վրա, որը, մի գուցե անհաջող, կարելի է անվանել ազգային ռոմանտիզմ: Ազգային և քաղաքական ռոմանտիզմը էապես տարբեր բաներ են: Ազգային ռոմանտիզմը ժողովրդի մեջ տարածված և քարոզվող, նրա դրական առանձնահատկությունները երբեմն չափազանցնող գնահատականն է, նրա հատուկ դերի ընդգծումն է համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ, երբեմն նրա կրած առանձնահատուկ տառապանքների վերապրումը, որոնք տարբերում են իրեն մյուս ժողովուրդներից, երբեմն առաքելության գիտակցումը:

Ազգային ռոմանտիզմի հիմնական աղբյուրներն են տվյալ ժողովրդի պատմությունը, մշակույթը, ներկա պահի հաջողությունները կամ զրկանքները: Քարոզիչներն են գրողները, արվեստագետները, պատմաբանները, քաղաքական, զինվորական գործիչները: Ազգային ռոմանտիզմի հիմքի վրա են առաջանում այս կամ այն ազգային գաղափարախոսությունները, դրա վրա է հիմնված հայրենասիրությունը, դա է հիմնականում թելադրում ազգային նպատակները:

Ազգային ռոմանտիզմը, եթե այն չի հասցնում ժողովրդին գավառական սնապարծության կամ քամահրանքի ուրիշ ժողովուրդների նկատմամբ, կամ եթե այդ ազգային ռոմանտիզմի վրա չի առաջանում այնպիսի սարսափելի երևույթ, ինչպիսին ֆաշիզմն է, ապա պետք է համարել դրական երևույթ, որը այս կամ այն չափով բնորոշ է բոլոր ժողովուրդներին:

Դեռ Ն.Բերդյաևը «Ռուսաստանի ճակատագիրը» գրքի մեջ զարմանք էր հայտնում, որ յուրաքանչյուր ազգ, նույնիսկ այնպիսի փոքրաթիվ, ինչպես էստոնացիները կամ հունգարացիները, գտնում են, որ հենց իրենք են մարդկությանը հաղորդում ճշմարտությունը բարու և չարի մասին և հավաստում են իրենց ազգի առաքելական նշանակությունը:

Ազգային ռոմանտիզմը, առանց այն ծայրահեղությունների, որոնց մասին արդեն նշեցինք, իսկապես դրական երևույթ է ինչպես տվյալ ժողովրդի, նրան պատկանող անհատների, այնպես էլ համաշխարհային քաղաքակրթության զարգացման համար: Չժխտելով մրցակցությունը անհատների միջև հասարակության ներքին կյանքում՝ այն ապահովում է մրցակցության ծգտումը նաև ժողովուրդների միջև, նպաստում նրանց ստեղծագործական ոգու արթնացմանը՝ դրանով իսկ ապահովելով համաշխարհային քաղաքակրթության զարգացումը:

Ազգային ռոմանտիզմը հնարավորություն է տալիս կառուցել հասարակական կյանքը՝ հիմնված ազգային մշակույթի և ավանդույթների վրա, ձևավորելով նաև հասարակական կյանքը կարգավորող յուրահատուկ ազգային բարոյականություն, էթիկա: Ճգնաժամի պահերին ազգային ռոմանտիզմը ապահովում է ժողովրդի աննձնազոհությունը և միասնությունը, առանց որոնց հնարավոր չէր լինի այդ դժվարությունները հաղթահարել: Միևնույն ժամանակ «հզոր», «վեհ», և «մեծահոգի» թիմի անդամ լինելը ավելի իմաստալից և երջանիկ է դարձնում անհատի կյանքը՝ տալով նրան ներքին հպարտության և պիտանիության զգացում, որոնց բացակայության դեպքում հասարակությունը դատապարտված է վերածվելու դժբախտ եսասերների ամբոխի: Պիտանիության, օգտակար լինելու զգացումը, որը շատ էական է յուրաքանչյուր անհատի համար, գալիս է իհարկե ոչ միայն ազգային պատկանելության գիտակցումից, թեև չի կարելի թերագնահատել դրա դերը այդ հարցում: Եթե ազգային ռոմանտիզմը, մրցակցության ծգտումը ուրիշ ժողովուրդների հետ նախորդ ժամանակներում հանգեցնում էր պետությունների էքսպանսիվ (զավթողական) քաղաքականությանը՝ պատերազմների, ապա այժմ այն ավելի շատ նպաստում է մրցակցությանը խաղաղ ասպարեզներում. տնտեսություն, առևտուր, նոր տեխնոլոգիաներ, գիտություն, մշակույթ, սպորտ. քաղաքական ազդեցության ոլորտի ընդլայնում: Ե՛վ Ֆրանսիան, և՛ Ճապոնիան, և՛ Գերմանիան շատ ավելի թույլ զարգացած պետություններ կլինեին, եթե հասարակական կյանքը կազմակերպելիս նրանք հենվեին միայն շահի գաղափարի վրա՝ մի կողմ թողնելով կրոնական, փիլիսոփայական, բարոյական, ինչպես նաև ազգային ռոմանտիզմից բխող գաղափարը: Պատահական չէ, որ Ելցինը ընտրվելուց հետո անսպասելի կերպով և ոչ այնքան տեղին հայտարարեց, որ պետք է ստեղծել Ռուսաստանի համար ազգային գաղափարախոսություն: Այդ հայտարարությունը միայն քաղաքական կոնյունկտուրայից չէր բխում և ավելի խոր իմաստ ուներ: Առանց ազգային ռոմանտիզմի և ազգային գաղափարախոսության՝ ժողովուրդը, մանավանդ զարգացման համար կարևորագույն գործոնի՝ լիբերալիզմի պայմաններում, դատապարտված է փոշիացման և թույլ պետություն, հասարակություն ստեղծելու: Նույնիսկ ԱՄՆ-ն, որ բազմազգ պետություն է, ունի միասնական մի գաղափարախոսություն, առաքելության զգացողություն (որ «ազգային» պետք է անվանել չակերտներով), այն է՝ ազատության, ժողովրդավարության տարածումը աշխարհով մեկ և «թիմային» համաշխարհային մրցակցության մեջ լինել առաջին տեղում:

Քաղաքական ռոմանտիզմը բոլորովին այլ երևույթ է: մեր քաղաքական ռոմանտիզմը դարերի ընթացքում պետություն չունենալու պատճառով դրսևորվում էր հետևյալ կերպ: Կամ հենվելով մյուս պետությունների, միջազգային կազմակերպությունների կողմից հռչակված արդարության գաղափարների վրա՝ փորձել դրանց միջոցով լուծել մեր ազգային հարցերը՝ թե՛ տարածքային, թե՛ Հայ դատի: Կամ, հենվելով ուրիշ պետությունների շահերի վրա, փորձել շահագրգռել նրանց, որպեսզի, դարձյալ հիմնականում նրանց միջոցով, լուծվի մեր ազգային այս կամ այն հարցը: Ընդ որում, երբեմն ստիպված հարկ էր լինում հուշել ուրիշ պետություններին իրենց այնպիսի շահի գիտակցումը, որը նրանք չունեին: Նույն քաղաքական մոտեցումները տարբեր ժամանակաշրջաններում կարելի է բնութագրել համապատասխանաբար քաղաքական ռոմանտիզմի կամ քաղաքական պրագմատիզմի դրսևորումներ: Օրինակ, այն հանրաքվեն, որը մենք 1991թ. կազմակերպեցինք Հայաստանի անկախությանը հասնելու և այն իրավաբանորեն ձևակերպելու համար, էապես տարբերվում է այն հանրաքվեից, որը 70-ական թվականներին առաջարկում էին անցկացնել հայ այլախոհների որոշակի շրջանակներ, առաջինը բխում էր իրատեսական

քաղաքականությունից, երկրորդը քաղաքական ռոմանտիզմի դրսևորում էր. հենվելով ՄԱԿ-ի և մյուս կազմակերպությունների հռչակած ինքնորոշման սկզբունքի վրա՝ փորձել հասնել Հայաստանի անկախությանը: Այն ժամանակ դա չէր կարող գործել: Նույն քաղաքական ռոմանտիզմի դրսևորում էր, երբ մեր մտավորականության որոշ վառ ներկայացուցիչներ փոձում էին Ղարաբաղի կամ Հայ դատի հարցը լուծել՝ համոզելով ԽՍՀՄ-ի ղեկավարությանը, որ պանթյուրքիզմը և պանիսլամիզմը Ռուսաստանի կենսական շահերին սպառնացող երևույթներ են, և Հայաստանը այդ տեսակետից կարող է հանդես գալ որպես ռուսական շահերի ֆորպոստ մեր տարածաշրջանում, հետևաբար Ռուսաստանի շահերը պահանջում են ամեն գնով ուժեղացնել Հայաստանը: Այն ժամանակ դա գործել չէր կարող: Այդ ռոմանտիկ քաղաքականությունը շատ կորստաբեր էր մեր ժողովրդի համար, որովհետև մենք, երբեմն մեզ շատ խորաթափանց համարելով, թույլ էինք տալիս, որ ուրիշ պետությունները մեզ օգտագործեն իրենց շահերը հետապնդելիս, հույս ունենալով, որ մեր շահերը համընկնում են, և կօգտվենք նաև մենք: Այդպիսի քաղաքականության արդյունքում մեր բոլոր անհաջողությունների պատճառը փնտրում էինք մեզանից դուրս, և դա չէր նպաստում մեր ժողովրդի, մեր հասարակության զարգացմանը և կազմակերպմանը: Սփյուռքում Դաշնակցությունը տասնամյակների ընթացքում կատարում է անգնահատելի մեծ աշխատանք հայապահպանման. սփյուռքահայության հասարակական կյանքի կազմակերպման և նրան ազգային խնդիրների շուրջ համախմբելու գործում, հայության շրջանում ազգային ռոմանտիզմի պահպանման գործում: Այնուամենայնիվ, Դաշնակցությունը վերստին սկսեց զբաղվել լուրջ քաղաքականությամբ 60-ականներից հետո, երբ կարևորագույն երկու ազգային խնդիրներից (Հայ դատ և Հայաստանի անկախություն) նա ընտրեց Հայ դատի խնդիրը և սկսեց քաղաքական գործունեություն այդ հարցում հաջողության հասնելու համար: Այդ քաղաքականությունը կրկին տառապում էր ռոմանտիզմով, բայց երբ Հայ դատի գրասենյակները ստեղծվեցին և դրա շնորհիվ հետզհետե մտան այն պետությունների քաղաքականության մեջ, ուր նրանք ապրում էին, Դաշնակցության մեջ սկսեց աստիճանաբար ձևավորվել պրագմատիկ քաղաքական գործիչների մի շերտ՝ առաջացնելով որոշակի հակասություններ նրանց և ավանդական դաշնակցության միջև: Նույն ձևով Դաշնակցության մեջ սկսեց անցում կատարվել ռոմանտիզմից պրագմատիզմին 1918-20թ.թ., երբ անկախ պետություն ունենալը հետզհետե պարտադրում էր իրատեսական քայլեր: Իրատեսական քաղաքականության տեսական վերլուծությունների լավագույն նմուշների կարելի է հանդիպել դաշնակցական հայտնի գաղափարախոսների և գործիչների հոդվածներում, որոնք գրվեցին օտարության մեջ 20-30-ական թվականներին: Այդ հետազոտությունները նպաստեցին «Ղարաբաղ» կոմիտեի քաղաքական պրագմատիզմի ձևավորմանը, որը երբեմն չէր ընդունվում հասարակության այն շերտերի կողմից, որոնք տառապում էին քաղաքական ռոմանտիզմով:

Անդրադառնալով պրագմատիկ քաղաքականությանը, առանց մանրամասնությունների մեջ ընկնելու, նշենք միայն, որ այն ենթադրում է մեր ազգային, պետական խնդիրները լուծելիս ընթանալ համաշխարհային պրոցեսների հունով, հաշվի առնել ուրիշների շահերը և հենվել սեփական ժողովրդի, պետության ուժերի վրա՝ շարունակ ավելացնելով դրանք: Այդ դեպքում դաշնակիցներ միշտ էլ կարելի է գտնել:

Իհարկե, քաղաքական իրատեսությունը միակ ընդունելի միջոցն է՝ լուծելու համար մեր առջև ծառացած պետական, ազգային, քաղաքական խնդիրները: Բայց եթե պետության ղեկավարները օժտված չլինեն ներքին խորը բարոյականությամբ, համակված չլինեն ազգային և համամարդկային իդեալներով, և եթե, բացի դրանից, պետության, հասարակության կառուցվածքը այնպիսին է, որ չկա իրենց զսպող ուժ, ապա զրկված լինելով արգելակներից՝ այդ քաղաքական իրատեսությունը կարող է ծառայել սոսկ անձնական նպատակներ հետապնդելու համար՝ հետզհետե վերափոխվելով քայքայիչ ցինիզմի: Այժմ Հայաստանի ղեկավարության մեջ առաջանում է մի շերտ՝ առայժմ փոքր, բայց մեծանալու հակում ունեցող, որը քաղաքական ռոմանտիզմի նկատմամբ արհամարհանքը տարածում է նաև ազգային ռոմանտիզմի վրա՝ առաջ քաշելով այն գաղափարը, որ ամենայն ազգայինը հետամնացություն է և չի համապատասխանում համաշխարհային պրոցեսներին, այդպիսով հետզհետե տարածելով իր ցինիկ վերաբերմունքը նաև համամարդկային արժեքների վրա, համարելով, որ դրանք միայն օգտագործվում են ուրիշներին խաբելու համար: Ինչի՞ց է գալիս այդ հայացքների համակարգը, մանավանդ որ իրենց իշխանության է բերել և իշխանությունը

ամրապնդել ոչ այնքան իրենց քաղաքական իրատեսությունը, որքան մեր ժողովրդին բնորոշ ազգային ռոմանտիզմը, առանց որի չէր լինի 1988թ. շարժումը, չէր լինի Ղարաբաղի պատերազմի հաղթանակը, չէր լինի մեր ժողովրդի համբերատարությունը 1992-94թ.թ. պատերազմի ծանր օրերին: Ես կարծում եմ, որ այստեղ կան 3 պատճառներ, որոնց կշիռն ու նշանակությունը տարբեր են.

1. Արևմուտքին ամեն գնով դուր գալու ձգտումը: Բնական է, որ Արևմուտքը զգուշանում է ոչ իր արժեքների համակարգում զարգացած ժողովուրդների ազգային զգացմունքներից՝ վախենալով, որ դրանք կարող են վերափոխվել ազգայնամոլության՝ բերելով ոչ իրատեսական, էքսպանսիվ քաղաքականություն, դրանով իսկ վտանգելով միջազգային կայունությունը: Դա բնական վախ է Արևմուտքի համար, և հասկանալի է, որ նա երբեմն ծայրահեղության մեջ է ընկնում՝ աշխատելով այդ ժողովուրդների մեջ չխրախուսել ազգային զգացմունքները, պահպանելով «դեղամիջոցը» միայն իր համար: Որոշ դեպքերում նշանակություն ունեն նաև մրցակցության կամ ազդեցության ոլորտում պահելու հարցերը:

2. Քաղաքական չտեսություն: Առաջին ծանոթությունները միջազգային քաղաքականության՝ ինչպես երևացող, այնպես էլ թաքնված զսպանակների հետ իշխանավորների մի մասի մեջ գլխապտույտ են առաջացրել՝ տանելով նրանց ծայրահեղությունների, որոնք բնորոշ են ցանկացած չտեսությանը: Եվ դրանց գումարվում է երիտասարդ քաղաքական գործիչների մի նոր շերտ, որոնք ազգայինի մերժումը և ցինիզմը ընդունում են որպես յուրատեսակ «առաջադեմ» գաղափարախոսություն: Ծանոթ երևույթ է՝ «Հռոմի պապից էլ կաթոլիկ»:

3. Վախը պատժի, իշխանությունը կորցնելու նկատմամբ: Ամեն մի գաղափարականացված հասարակություն, էլիտա, որը խորությամբ ներծծված է ազգային, համամարդկային գաղափարներով, առաջ է բերում էթիկայի հարցեր, և այդ էթիկայի մեջ չի տեղավորվում այն, ինչ անում են իշխանավորները Հայաստանում, չի տեղավորվում Սահմանադրությունը կեղծիքով անցկացնելը, չի տեղավորվում համատարած թալանը, որ կա Հայաստանում: Չի տեղավորվում արհամարհական վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ, ժողովրդի զգալի մասի սովամահության շեմին կանգնած լինելը, երբ իշխանավորները իրենց համար դղյակներ են կառուցում: Այդ ամենը իշխանավորների մեջ առաջացնում է ձգտում՝ մեր հասարակությունից արմատախիլ անելու ազգային ռոմանտիզմը ամբողջությամբ, որպեսզի նրա վրա չծագի էթիկայի հարցը, քանի որ պատժիչ կարող է դառնալ իշխանավորների համար: Այն վայրագ հարձակումները, որ կատարվում են Դաշնակցության դեմ, մասամբ պայմանավորված են այդ վախի զգացումով: Դա իր հերթին հանգեցնում է մի ձգտման. ամբողջ աշխարհին ցույց տալ հայ ժողովրդի քաղաքական ուժերի՝ իրենց համար օգտակար պարզունակ նկարը՝ աջակողմյան «առաջադեմ» կուսակցություններ՝ զուրկ ազգայնամոլությունից (իրականում հետզհետե ուղղակի ազգայինից). ձախակողմյան կուսակցություններ՝ հակված համայնավարության, բայց որոնց զարգացումը իշխանությունների հովանու ներքո կդարձնի նրանց ինտերնացիոնալ ձախակողմյան կուսակցություններ. և ազգայնամոլական փոքր կուսակցություններ, որոնք կօգտագործվեն որպես «բոբո» Արևմուտքին վախեցնելու և նրանից իշխանությունը պահելու նպատակով այս կամ այն զիջումներ կորզելու համար: Այդ «բոբոներից» ամենասարսափելին Դաշնակցությունն է, որը պետք է ներկայացվի միջազգային հասարակայնությանը որպես ազգայնամոլական, տեռորիստական կազմակերպություն (նման իռլանդական կամ բասկերի համապատասխան կազմակերպություններին): Այդ ամենի անունն է՝ սովորական ժողովուրդ:

Մենք հինավուրց ժողովուրդ ենք՝ յուրահատուկ ու զարգացած մշակույթով, որն առաջինն է պետականորեն ընդունել քրիստոնեությունը: Դարերի ընթացքում հալածանքների ենթարկվելով՝ մենք ձեռք ենք բերել դիմակայելու, իրար օգնելու, ինքնակազմակերպվելու բացառիկ ունակություն: Պատմության բերումով սփռված լինելով աշխարհով մեկ՝ մենք մեծ ներդրում ենք ունեցել նաև ուրիշ ժողովուրդների զարգացման մեջ:

Կանգնած լինելով համաշխարհային քաղաքակրթության ակունքներում՝ մեր ժողովուրդը արդեն իսկ շատ բան է տվել մարդկությանը և շատ բան սովորել: Այն ժողովուրդը, որ չի կոտրվել նույնիսկ աննախադեպ ցեղասպանությունից, արժանի է և բոլոր հնարավորություններն ունի իր առջև դնելու համաշխարհային ազգ դառնալու խնդիրը:

Համաշխարհային ազգ լինել նշանակում է ազգերի մրցակցության ու համագործակցության մեջ առաջավոր դիրքեր նվաճել, համամարդկային

քաղաքակրթությունը հարստացնել նոր գաղափարներով, մտածելակերպով ու արժեքներով: Այդ խնդիրը լուծելու նախապայմանն է՝ վերականգնել պետականությունը, ստեղծել համազգային կառույցների միասնական համակարգ, վերադառնալ քաղաքական թատերաբեմ որպես ուժեղ, զարգացած ազգ: Կառուցել պետություն, որի յուրաքանչյուր անհատ լինի պաշտպանված ու ազատ մարդ՝ հպարտ իր ազատությամբ, ազգային ինքնությամբ, պետականությամբ: Հայ մարդը պետք է ապրի բարոյականության, ազգային ու համամարդկային արժեքների վրա հիմնված, բոլորի համար ստեղծագործ աշխատանքի ու երջանիկ ապրելու իրական հնարավորություններ ապահովող ազատ ու իրավական հասարակության մեջ:

Վ. Մանուկյան
«Այժմ», 1996, 17-23 հուլիսի, 24-30 հուլիսի,
31 հուլիսի-6 օգոստոսի, 7-13 օգոստոսի

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՐԿԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿԻՐ

Շատ խառնաշփոթ ժամանակաշրջանում է մեզ վիճակվել ապրել: Մի կողմից՝ իրականացել են այն նպատակները, որոնք փայփայում էին հարյուրամյակների ընթացքում մեր նախնիները: Մենք ունեցանք անկախ պետություն, ռազմական հաղթանակներ, որոնք ոչ միայն պաշտպանեցին մեր ժողովրդի շահերը և անվտանգությունը, այլև մեզ պարտադրված պատերազմում ստիպեցին հակառակորդին քաղաքական բանակցությունների ճանապարհը բռնել՝ դրանով իսկ բերելով խաղաղություն երկրին ու ժողովրդին: Մյուս կողմից՝ մենք ականատես ենք ժողովրդին ճնշող մեծամասնության չքավորությանը, ապագայի նկատմամբ հավատի կորստին, հսկայական չափերի հասնող արտագաղթին, գործազրկությանը, երբեմնի անխափան աշխատող կրթական համակարգի փլուզմանը, ժողովրդի ոչ միայն սոցիալական, այլ նաև իրավական պաշտպանվածության բացակայությանը, հասարակության մեջ հետզհետե գլուխ բարձրացնող զոռբայությանը և ստորաքարշությանը: Այդ ամենը հանգեցրել է նրան, որ մեր հասարակությունը հայտնվել է շփոթահար վիճակում, չի կարողանում ճիշտ գնահատել ներկա դրությունը, չի դնում իր առջև խնդիրներ և ավելի շուտ կազմալուծվում է, քան կազմակերպվում: Եվ այդ ամենը հանգեցնում է նրան, որ ժողովրդի մեջ պտտվում են իրարամերժ կարծիքներ: Խոսում են, թե ներկա տնտեսական ծանր իրավիճակը օբյեկտիվ է, և ԽՍՀՄ-ի փլուզումն ու Հայաստանի անկախացումը բնականոն կերպով հասցրել են մեզ այս վիճակին: Ոմանք ասում են, որ Հայաստանը ապագա չունի և արդեն երբեք չի լինի գոնե այն, ինչ մենք ունեինք ԽՍՀՄ-ի օրոք, ոմանք էլ՝ որ Հայաստանը կամաց-կամաց դուրս է գալիս այս կացությունից, որ դրական տեղաշարժեր կան համեմատած 92-93թթ. ծանր օրերի հետ: Մերթ ասում են, որ մինչև ներկա իշխանությունները չփոխվեն, Հայաստանում որևէ դրական փոփոխություն լինել չի կարող, մերթ էլ՝ «ով էլ գա, նույնն է լինելու, սրանք գոնե արդեն կշտացել են և կսկսեն մտածել ժողովրդի մասին, իսկ եթե նորերը գան, կմտածեն կշտանալու մասին՝ վերստին թալանելով ժողովրդին»: Կարծիքները բազմազան են և իրարամերժ, հասարակությունը, տրոհված և իր առջև որոշակի խնդիրներ չդնելով, չի կարողանում կազմակերպվել ու փոխել ներկա իրավիճակը, կամ գոնե ընդունել ներկա իրավիճակի օրինաչափությունը:

Իրականում այս բոլոր կարծիքների մեջ ճիշտն ու սուտը իրար են խառնվել: Վերցնենք արդյունաբերության հարցը: Ես կարևորում եմ այն, որովհետև և՛ արտագաղթի, և՛ գործազրկության, և՛ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավման համար անհրաժեշտ ֆինանսների հայթայթման, և՛ մյուս ժողովուրդների ու պետությունների հետ համընթաց քայլելու հարցերը էապես պայմանավորված են նրանով՝ մեզ կրկին կհաջողվի՞ դառնալ արդյունաբերական երկիր, թե՞ մենք դատապարտված ենք լինելու գավառական, մանր արհեստավորների և առևտրականների երկիր: Արդյունաբերության աշխատանքների խափանման մեջ իհարկե շատ մեծ դեր խաղաց ԽՍՀՄ-ի տնտեսական փլուզման օբյեկտիվ իրողությունը: Երկաթյա վարագույրը բացվեց, ԽՍՀՄ-ի նախորդ տնտեսական տարածքը դարձավ բաց տարածք, և մեր թեթև արդյունաբերությունը բախվեց կատաղի մրցակցությանը իտալական, չինական որակյալ և էժան ապրանքների հետ, միևնույն ժամանակ Հայաստանի տարածքում գործող հարյուրավոր գործարաններ, որոնց արտադրանքը օգտագործվում էր

ԽՍՀՄ-ի ռազմարդյունաբերական համալիրի համար, կտրուկ կորցնելով պատվիրատուին և չունենալով համապատասխան ֆինանսական միջոցներ, որպեսզի կոնվերտացիա կատարեր, այսինքն՝ սպառվող նոր արտադրանքի արտադրություն կազմակերպեր, մատնվեցին անգործության՝ ավելացնելով գործազուրկների թիվը:

Բայց ի՞նչ կապ ունի օբյեկտիվ պատճառների հետ այն հանգամանքը, որ 1993-ի այդ ծանր պայմաններում, այնուամենայնիվ, իրենց աշխատանքը կազմակերպող ձեռնարկությունները, փոխանակ օգտվեին պետության օժանդակությունից, ենթարկվեցին պետական ռեկետի, որից հետո նրանց մի մասը դադարեցրեց աշխատանքը, մյուս մասը նույնիսկ իրենց հաստոցները վերցրին տարան Ռուսաստան և շարունակեցին աշխատել այնտեղ: Օբյեկտիվ ի՞նչ պատճառով էր պայմանավորված, որ գործարանի մասնագետ-տնօրենը հանվում էր աշխատանքից և ձեռնարկությունը ղեկավարվում էր նախկին բանվորի կողմից: Ինչո՞վ բացատրել, որ փլուզվում է ադամանդների վերամշակման գործարանը, որը մեծ եկամուտներ է ապահովում, մանավանդ որ փոքր ծավալների շնորհիվ շրջափակումը նրան չէր վնասում: Իսկ այստեղից վտարված գործարանների տնօրենները իրենց բարձր պրոֆեսիոնալիզմի շնորհիվ այժմ համապատասխան ճյուղերի ղեկավար դիրքեր են զբաղեցնում Ռուսաստանում: Օրինակները կարելի է անվերջ թվարկել: Ինչու նույնիսկ այն գործարանները, որոնք ի վիճակի են աշխատել, կամ աշխատում են անլեգալ, որպեսզի դրա մասին չիմանան իշխանությունները, կամ էլ արհեստականորեն կանգնեցնում են իրենց աշխատանքը՝ սպասելով լավ օրերի, խուսափելով և՛ պետական ռեկետից, և՛ սեփականաշնորհման այն օրենքից, որի դեպքում ինչքան լավ աշխատի գործարանը, այնքան դժվար կլինի գործարանի աշխատողների համար սեփականացնել այն: Ի՞նչ օբյեկտիվ պատճառով է, որ եթե մի ինչ-որ ձեռնարկություն եկամտաբեր է, ապա այդ գործարանի տերերին պարտադրում են մի անբան մարդու՝ որպես բաժնետիրոջ, որպեսզի նա օգտվի եկամուտներից՝ ոչինչ չանելով, այլ ապահովի միայն պաշտպանվածությունը պետական մարմիններից:

Ի՞նչ օբյեկտիվ պատճառով է, որ անընդհատ, առանց դատարանի որոշման, խախտվում է մասնավոր սեփականության անձեռնմխելիությունը, և դրա հետևանքով Հայաստանի ձեռներեցության շրջանակներից դուրս են մղվում հարյուրավոր մարդիկ: Ինչ օբյեկտիվ պատճառով է, որ գործող օրենքները, հարկերի դրույքաչափերը ստեղծում են այնպիսի իրավիճակ, որ ավելի ձեռնտու է ապրանք բերել Հայաստան, քան արտադրել այն: Ինչ օբյեկտիվ պատճառով է, որ Հայաստանում չկա ազատ տնտեսական մրցակցություն, որտեղ պետք է հաղթի ավելի շնորհալին, իսկ որոշ մարդիկ Հայաստանում իրենց հարստությամբ և տնտեսական հզորությամբ զբաղեցրել են ոչ արժանի բարձր տեղեր՝ պետական մեքենայի գործադրման միջոցով իրենցից ավելի արժանավոր մրցակիցներին դուրս մղելով ասպարեզից: Այս ոչ օբյեկտիվ և Հայաստանի տնտեսական աշխատանքը խաթարող պատճառների շարքը կարելի է անընդհատ շարունակել՝ հիշելով և՛ արդյունաբերության խայտառակ սեփականաշնորհումը, որը ոչ ավելացրեց մեր բյուջեն, որպեսզի նրա միջոցով հնարավոր լիներ լուծել ժողովրդի սոցիալական խնդիրները, մարել խնայբանկերում սառեցված քաղաքացիների գումարները, ոչ իրագործեց իր հիմնական նպատակը՝ ապահովել սեփականաշնորհված ձեռնարկությունների ավելի արդյունավետ աշխատանք: Դրանցից մի մասը թալանվեց և դադարեցրեց իր աշխատանքը: Այս ամենը ցույց է տալիս, որ եթե արդյունաբերության, տնտեսության փլուզման պրոցեսների մեջ կային բավականին օբյեկտիվ պատճառներ, ապա ներկա տնտեսական քաղաքականությունը ոչ միայն խորացնում է այդ օբյեկտիվ պատճառները, այլև զրկում է մեզ ապագայից՝ չթողնելով, որպեսզի մենք երբևէ հավակնություն ունենանք կրկին վերադառնալու արդյունաբերական երկրների շարքը:

Չդառնալով արդյունաբերական երկիր՝ անիմաստ է խոսել կրթական համակարգի պահպանման և զարգացման մասին: Եթե մենք, ապրելով ԽՍՀՄ-ում, շատ հարցերում զիջում էինք Արևմուտքին, ապա մեզանում գործող կրթական համակարգը աշխարհում լավագույններից էր, և մի քանի կեղծ դասագրքերից ազատվելուց հետո մեզ մնում էր միայն պահպանել համակարգը, և եթե կարելի է օբյեկտիվ համարել այն ֆինանսական դժվարությունները, որոնք առաջանում էին այդ համակարգը պահելու համար, ապա ի՞նչ օբյեկտիվ պատճառներով է պայմանավորված տասնյակ նոր անորակ դասագրքերի

հրատարակումը (ծնողներից գումարներ հավաքելով) և բացարձակ անուշադրության մատնելը մեր ժողովրդի համար այդ կարևորագույն ասպարեզը:

Ինչ օբյեկտիվ պատճառ կար այս նեղ պայմաններում քանդել Երևանի Հանրապետության հրապարակի պատվանդանը, որը ոչ միայն գեղարվեստական արժեք ուներ, այլև մեզ՝ երևանցիներիս համար հիշատակ էր, որ մնացել էր այս մեր աստիճանաբար անծանոթ դարձող Երևանում: Եվ եթե անհրաժեշտություն էր հանելը, ապա պետք է որոշեինք մենք՝ երևանցիներս, այլ ոչ թե մի ինչ-որ պաշտոնյա իր գրասենյակում: Ինչ օբյեկտիվ պատճառ կար Երևանի պատմության թանգարանի շենքը մասնավոր վաճառքի հանելու, ինչ օբյեկտիվ պատճառ կար, որ շրջանների մեծամասնությունում ժողովուրդը վախեցած լիներ իր գլխին կանգնած ամեն մի փոքր ու մեծ իշխանիկից՝ փորձով համոզվելով, գիտակցելով և՛ իր, և՛ ուրիշների լիակատար անպաշտպանվածությունը նրանց կամայականություններից:

Ի՞նչ օբյեկտիվ պատճառ կա, որ հողը գյուղացուն տալուց հետո պետությունը մի կողմ քաշվի և գյուղատնտեսությունը զարգացնելու փոխարեն, ինչը արվում է աշխարհի բոլոր երկրներում, իր գյուղացիներին վերաբերվի գրեթե որպես թշնամու, որից ինչ էլ պոկես՝ լավ է, այդպիսով լրացնելով բյուջեի միայն մի շատ չնչին մասը: Կարելի է առանձին խոսել և՛ բանակի, և՛ առողջապահական համակարգի, և՛ բանտերում գտնվող ազատամարտիկների, և՛ պատերազմի ընթացքում զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական վիճակի մասին: Բայց կարելի է արդեն այս օրինակների հիման վրա եզրակացնել, որ տնտեսական, սոցիալական, ծանր իրավիճակի մեջ ընկնելիս, եթե նախորդ ժամանակաշրջանում մեծ էին օբյեկտիվ պատճառները, ապա այս անդունդից դուրս գալու և առաջ գնալու համար էական նշանակություն պետք է ունենա մեր ներքին քաղաքականությունը, որը այժմ բացարձակապես չի նպաստում դրան: Իհարկե, վերջին 2 տարիների ընթացքում կա կյանքի որոշ աշխուժացում՝ համեմատած 1992-1993 թթ. ծանր օրերի հետ, բայց չպետք է խաբվել դրանով: Հայերը սովոր են ցանկացած պայմաններում ինքնուրույն քիչ թե շատ բարելավել իրենց վիճակը, բայց, ցավոք, տվյալ պարագայում դրա հնարավորությունը ունի ժողովրդի չնչին մասը միայն: Աֆրիկյան, ասիական ցանկացած հետամնաց երկրի փողոցներում վխտում են «Մերսեդեսները», կան բարձր կարգի ռեստորաններ, սրճարաններ, հյուրանոցներ, լավ ճանապարհներ, իշխանավորների հոյակապ դղյակներ, բայց դրանք այդ երկրների զարգացման ցուցանիշ չեն, այլ կայուն ճահճացման արդյունք:

Իսկ կա՞ ճանապարհ դուրս գալու համար այս վիճակից: Իհարկե, կա: Բայց միայն իշխանությունը փոխելը բավական չէ: Մեր ժողովուրդը, մեր հասարակությունը, մտավորականությունը դիտորդի ու քննադատի դերը պետք է փոխարինի թելադրողի, հասարակության, պետության առջև խնդիրներ դնողի դերով և պարտադրի իշխանություններին մեր նպատակները, կարողանա ըստ նպատակների գնահատել արածները, բավարարված չլինելու պայմաններում կրկին փոխի իշխանավորներին:

Ինչ վերաբերում է այն խնդիրներին, որոնք իր առջև պետք է դնի մեր պետությունը, մեր հասարակությունը, կրկնում եմ, որ դրանցից կարևորագույնն ու առաջնահերթը արդյունաբերության վերականգնումն է:

Հայաստանը աստիճանաբար դարձնել հիմնականում մասնավոր սեփականության վրա հիմնված արդյունաբերական երկիր՝ նպաստելով արդյունաբերության՝ առավելապես բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացմանը: Այդ նպատակին հասնելու համար պահանջվում է իրականացնել նոր տնտեսական քաղաքականություն՝ ապահովելով արդյունաբերության որոշակի ճյուղերի համար նպաստավոր հարկային, վարկային, ինվեստիցիոն պայմաններ, ներքին շուկայի պաշտպանվածություն, արտոնյալ պայմաններ արդյունաբերական արտադրանքի արտահանման համար: Դրա հետ միասին լուծել շուկայի ընդլայնման խնդիրը՝ կտրուկ խորացնելով տնտեսական ինտեգրացիոն (համագործակցության) պրոցեսները Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների հետ: Այդ ճանապարհով՝ ստեղծելով բարձր աշխատավարձով նոր աշխատատեղեր և հնարավորություն տալով մեր քաղաքացիներին մարդավայել ապրել, աշխատել իրենց մասնագիտությամբ, կարելի է ոչ միայն դադարեցնել արտագաղթը, այլև ապահովել ներգաղթը:

Կրկին արդյունաբերական երկիր դառնալու հիմքի վրա ապահովել մեր գիտական, կրթական համակարգերի պահպանումը և զարգացումը:

Հայաստանի տնտեսական զարգացման գործում արտասահմանյան ֆինանսական աղբյուրների օգտագործման հետ միասին հետևողականորեն ապահովել սեփական բանկային համակարգի զարգացումը:

Հետագա հանդիպումների ընթացքում մենք կքննարկենք նաև մյուս ծրագրային դրույթները, որոնք թույլ կտան Հայաստանին դուրս գալ այս ծանր վիճակից: Բայց մի հարց պետք է կարևորել: **Ինչպիսի ծրագրեր էլ առաջարկվեն, եթե մենք մեր պետության մեջ չապրենք բարոյականության ու արդարության չափանիշներով առաջնորդվող հասարակությունում, եթե մեր հասարակական կյանքը հիմնված չլինի ազգային և համամարդկային արժեքների վրա, մեր ազգային մշակույթի և դրանից բխող բարոյականության վրա, որը կարգավորում է հասարակության կյանքը, մենք որևիցե արդյունքի չենք հասնի:**

Վ. Մանուկյանի հեռուստատեսային ելույթը
1996թ. օգոստոսի 12
«Այժմ», 1996, 14-20 օգոստոսի

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ, ՊԱՐԿԵՇՏ ՄԱՐԴԻԿ

Ինչպես արդեն հաղորդել էինք, ընտրարշավի առաջին փուլում առջևում էր Վազգեն Մանուկյանը, և դա նաև շնորհիվ բազմաթիվ հանդիպումների Հայաստանի շրջաններում: Մեր հանդիպումը տեղի ունեցավ Վ.Մանուկյանի Սյունիքից վերադառնալուց անմիջապես հետո, և բնականաբար զրույցում շոշափվեց նաև շրջաններում բնակչության տրամադրությունների հարցը: Սակայն հիմնականում հարցազրույցը ծավալվեց կադրային քաղաքականության և կադրային առկա ռեզերվների օգտագործման շուրջ:

-Վերջերս Դուք բազմաթիվ հանդիպումներ եք ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում: Ինչպիսի՞ն են բարոյահոգեբանական իրավիճակը և ժողովրդի տրամադրությունները շրջաններում:

-Ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ մարդիկ իսկապես ցանկանում են իշխանության փոփոխություն՝ հույս ունենալով, որ դա կարող է շտկել իրավիճակը: Ուղղակի ժողովրդի մի մասին մեջ հուլիսի 5-ը առաջացրել է մտավախություն, որ իրենց մասնակցությունն ընտրություններին էապես չի ազդի արդյունքների վրա: Դրա հետ մեկտեղ վերջերս ժողովրդի մեջ ցանկություն է զգացվում մասնակցել ընտրություններին և փորձել փոխել իրավիճակը: Դժվար է ասել, թե դա ինչով է պայմանավորված, դանակը ոսկորի՞ն է հասել, թե՞ իր դերն է խաղացել Ռուսաստանի ընտրությունների ցուցադրումը հեռուստատեսությամբ: Դրան երևի թե նպաստում էր այն հանգամանքը, որ մինչև այժմ կոպիտ խախտումներ չեն եղել, և դրա շնորհիվ մարդկանց վստահության աստիճանն աճում է:

Ինչ վերաբերում է կեղծիքներին, ապա այսօր ոչ միայն ժողովրդի, այլև իշխանությունների համար հասկանալի է, որ կեղծիքով իրագործված ընտրություններն աղետալի կլինեն նաև իշխանությունների համար: Այդ դեպքում իշխանությունը չի լինի օրինական և հարկադրված կլինի անընդհատ ջանքեր թափել ժողովրդին զսպելու համար: Կարծում եմ՝ միայն բացառիկ դեպքերում իշխանությունները կարող են փորձել դիմելու կեղծիքների, և պատահական չէ, որ Լ. Տեր-Պետրոսյանը Ելցինի օրինակով սկսել է հանդիպել ժողովրդի հետ, ինչը կարելի է միայն ողջունել: Բայց արդեն որոշ մտահոգիչ դեպքեր կան, երբ ղեկավարներն իրենց աշխատողներին ստիպում են ձայնը տալ Լ. Տեր-Պետրոսյանին: Ինչքանո՞վ է դա տեղական նախաձեռնություն կամ թելադրված կենտրոնից, դժվար է ասել, բայց պետք է ամեն կերպ ձգտել զերծ մնալ այն վտանգից, որ ընտրություններից առաջ մարդկանց վախեցնելով կամ կաշառելով՝ ընտրությունների արդյունքում խեղաթյուրվի ժողովրդի կամքը:

-Իշխանության փոփոխության հավանականությանը, ըստ Ձեզ, ինչպե՞ս կարծագանքեն իշխանության տարբեր օղակները: Արդյո՞ք պետք է սպասել կատաղի դիմադրության, թե՞ ավելի հավանական է դրանց հաշտվողական վերաբերմունքը:

-Դա կախված է նրանից, թե ով կընտրվի, ինչքանով է նա ծանոթ Հայաստանի իրական վիճակին և կադրերին, կառավարման ինչպիսի փորձ ունի և ինչքանով է մտադիր կտրուկ փոխել իրավիճակը: Այդ առումով պետք է մատնանշեմ, որ իշխանության օղակներում աշխատողների միայն չնչին մասն է ոչ պիտանի: Պարզապես նրանց բռնությունները, զոռբայությունը այդ համբավը տարածում են ամբողջ իշխանական շերտի վրա: Իշխանության բոլոր օղակներում, բոլոր մակարդակներում կան հայրենասեր, պարկեշտ մարդիկ: Եթե պարզ լինի, որ տեղի չի ունենա կադրերի համատարած փոփոխություն (ինչն, ի դեպ, անհնարին է իրագործել), ապա կատաղի դիմադրություն ցույց կտա միայն այն չնչին փոքրամասնությունը, որն իր վիճակը բարելավելու միակ հույսը կապում է այսօրվա վարչախմբի հետ:

Օգտվելով առիթից՝ հարկ եմ համարում նշել, որ կարելի է կտրուկ փոխել տնտեսական վիճակը, քաղաքականության ուղղվածությունը, սակայն շատ վտանգավոր է, եթե որևէ մեկը փորձի կտրուկ փոխել պետական կառուցվածքը, կադրային համակարգը: Դա ծանրագույն վախճան կունենա:

-Ինչպես հայտնի է, 1990թ., երբ ՀՀՇ-ն եկավ իշխանության, նա ներեց կոմունիստական իշխանության հանցագործությունները: Ձեր ընտրվելու դեպքում ի՞նչ մոտեցում կցուցաբերեք ՀՀՇ-ի վարչախմբի կողմից գործած հանցագործությունների նկատմամբ:

-Ես համոզված եմ մի բանում՝ ժողովրդի հանդեպ կատարած հանցագործությունները պետք է պատժվեն, բայց ոչ թե հեղափոխական տրիբունալների, այլ նորմալ քաղաքացիական դատական համակարգի միջոցով: Եթե որպես պատիժ հասկացվում է մարդկանց անօրինական ձևով ունեցվածքի հափշտակումը, ես դրան կտրուկ դեմ էի ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա: Ինչ վերաբերում է կոմունիստների հանցագործություններին, այնուամենայնիվ, դրանց մեծ մասը ընկնում է այն ժամանակահատվածի վրա, որի համար 1980-90-ական թվականների համայնավարները պատասխանատու չեն:

Նույն մեղքի դեպքում իշխանության եկած Շարժումը ավելի մեծ պատասխանատվություն է կրում, քան համայնավարները: Որովհետև համայնավարական իշխանությունը պարտադրվել էր ժողովրդին, իսկ Շարժումն իշխանության եկավ ժողովրդի ազգային զարգացումների ալիքի վրա: Եվ այդ առումով ՀՀՇ-ի կատարած ցանկացած հանցագործություն ես գնահատում եմ ավելի խիստ, քան համայնավարների կատարած նույնանման հանցագործությունը:

-Վերջին ամիսներին Դուք բավականին հաճախ էիք լինում Մոսկվայում: Արդյոք դա նշանակու՞մ է, որ Դուք որևէ աջակցություն եք ակնկալում մոսկովյան շրջանակներից:

-Երկու-երեք ամիսը մեկ ես միշտ այցելում եմ Մոսկվա, սակայն իմ ազգային արժանապատվությունն ինձ երբեք թույլ չի տա Հայաստանում որևէ փոփոխության հույսը կապել արտասահմանյան այս կամ այն քաղաքական շրջանակների հետ: Նույնիսկ ավելին՝ մեկ տարի առաջ ես երբեմն հանդիպում էի նաև ռուսական քաղաքական շրջանակների հետ, սակայն վերջին այցելությունների ժամանակ ես կտրուկ հրաժարվում էի նման հանդիպումներից: Հայաստանում որևէ բան փոփոխելու ցանկություն ունեցողը պետք է հենվի միմիայն մեր ժողովրդի ներքին ուժերի վրա: Այլ հարց է, որ իշխանության գալուց հետո անհրաժեշտ է լավ հարաբերություններ հաստատել այլ երկրների քաղաքական շրջանակների հետ:

-Ընտրվելու դեպքում ո՞րն է լինելու Ձեր առաջին քայլը, ինչպիսի՞ կադրային քաղաքականություն եք որդեգրելու, և ի՞նչ սկզբունքով է ձևավորվելու կառավարությունը:

-Ընդունված է թեկնածուներին հարցնել առաջին քայլի մասին, կարելի է տանը նստած՝ շատ սրամիտ պատասխան գտնել, սակայն ես չեմ կարծում, որ համակարգային փոփոխությունների մեջ էական նշանակություն ունի առաջին կամ երկրորդ հրամանագիրը: Էականը ամբողջ համալիրն է:

Ինչ վերաբերում է կադրային քաղաքականությանը, ապա պետք է հենվել պրոֆեսիոնալների վրա: Եվ շատ էական է ընդունել օրենք պետական ծառայության մասին, որպեսզի իշխանության եկած ամեն մի ուժ չկարողանա ավելով դուրս շպրտել իրեն անհաճո մարդկանց և բերել իր համախոհներին: Եթե մարդ մտնում է պետական ծառայության համակարգ, ապա նրա կարիերան պետք է կախված լինի միմիայն նրա պարկեշտությունից, պրոֆեսիոնալիզմից և փորձից: Իսկ համակարգն իշխանության փոփոխման ժամանակ պետք

է զերծ մնա ցնցումներից: Այդ առումով անհրաժեշտ է ներգրավել ոչ միայն հայաստանաբնակ, այլև արտերկրի պրոֆեսիոնալ հայերին:

Իսկ կառավարության ձևավորման ժամանակ նախարարներից անհրաժեշտ է պահանջել ոչ այնքան պրոֆեսիոնալիզմ, որքան պարկեշտություն և համակարգն ըմբռնելու կարողություն, որպեսզի նրանք կարողանան ղեկավարել այդ համակարգը: Ցանկալի է, որ անկախ նրանից, թե ով է իշխանության գլուխ, կառավարության մեջ ներգրավվեն բոլոր կուսակցությունների՝ կարող, պրոֆեսիոնալ կադրերը: Սակայն կառավարության մեջ ընդգրկվելուց հետո նրանք պետք է զերծ մնան կուսակցական թելադրանքից:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Հովհաննես Գալաջյանը
«Իրավունք», 1996, օգոստոսի

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌՋԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ

Ապահովելով մեր հասարակության և նրանում գործող կուսակցությունների համագործակցությունը, ինչպես նաև կառավարության աշխատանքներին ներգրավելով պրոֆեսիոնալ գիտելիքներ ու փորձ ունեցող մասնագետների՝ հետևողականորեն իրականացնել հետևյալ ազգային, պետական ծրագրերը:

1. Քաղաքական բանակցությունների միջոցով հասնել Ղարաբաղի անկախ կարգավիճակի ճանաչմանը՝ կանխելով ռազմական գործողությունների վերսկսման հնարավոր փորձերը: Այդ նպատակին հասնելու հիմքում պետք է ընկած լինեն ոչ միայն քաղաքական բանակցությունների ճկունությունը և տարբեր երկրների՝ այս տարածաշրջանում առկա շահերի գիտակցումը, այլև հայոց բանակի այնպիսի վերակազմավորումը և Հայաստանի տնտեսական այնպիսի հզորությունը, որոնք կզսպեն հակառակորդի ցանկությունը՝ ուժային միջամտությամբ լուծելու քաղաքական հարցերը:

2. Հայաստանը վերստին դարձնել արդյունաբերական երկիր՝ հատուկ ուշադրություն դարձնելով արդյունաբերության առավել բարձր տեխնոլոգիական ճյուղերի զարգացմանը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել նոր տնտեսական քաղաքականություն՝ կիրառելով արդյունաբերության որոշակի ճյուղերի համար նպաստավոր հարկային, վարկային, ներդրումային պայմաններ, ներքին շուկայի պաշտպանվածություն, արտոնյալ պայմաններ արդյունաբերական արտադրանքի արտահանման համար: Դրա հետ մեկտեղ լուծել շուկայի ընդլայնման խնդիրը՝ կտրուկ խորացնելով առևտրա-տնտեսական համագործակցության ինտեգրացիոն գործընթացները Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների հետ: Այդ հիմքի վրա ստեղծել բարձր աշխատավարձով նոր աշխատատեղեր, հնարավորություն տալ մեր քաղաքացիներին աշխատելու իրենց մասնագիտությամբ և մարդավայել ապրելու: Այսպիսով կարելի է ոչ միայն դադարեցնել արտագաղթը, այլև ապահովել ներգաղթը:

Իրականացնել մասնավոր սեփականության զարգացումը արդյունաբերության ասպարեզում՝ դրանով ապահովելով ամբողջ տնտեսական համակարգի առավել արդյունավետ աշխատանքը: Կանխել բոլոր այն չարաշահումները, արդյունաբերության քայքայումը, որոնք կատարվում են սեփականաշնորհում իրականացնելու անվան տակ:

Նորից արդյունաբերական երկիր դառնալու հիմքի վրա ապահովել գիտական, կրթական համակարգերի, ինչպես նաև մշակույթի պահպանումը և զարգացումը:

Հայաստանի տնտեսական զարգացման գործում արտասահմանյան ֆինանսական աղբյուրների օգտագործմանը զուգահեռ հետևողականորեն ապահովել սեփական բանկային համակարգի զարգացումը:

3. Հայաստանի էներգետիկական պահանջները բավարարելու և այդ հարցում ուրիշ երկրներից նրա կախվածության աստիճանը նվազեցնելու նպատակով մյուս անհրաժեշտ միջոցառումներին զուգընթաց նախաձեռնել քայլեր ժամանակակից և առավել ապահով (1000

ՄԳՎ) ատոմակայանի կառուցման համար: (Այդ ծրագրի իրականացման դեպքում վերանայել բարոյապես և տեխնիկապես մաշված, վտանգավոր հին ատոմակայանի շահագործման հարցը:)

4. Ապահովել Հայաստանի ընդերքի ռացիոնալ օգտագործումը՝ հասնելով օգտակար հանածոների հանույթի վերջնական արտադրանքի իրացմանը: Այս նպատակի համար առաջնահերթ խնդիր է էկոլոգիապես մաքուր, ժամանակակից պղնձաձուլական նոր գործարանի կառուցումը: Խրախուսել նաև տեղական հումքի վրա հիմնված այլ արտադրությունների զարգացումը:

5. Հայաստանը զարգացած գյուղատնտեսության երկիր դարձնելու, գյուղատնտեսությամբ զբաղվողներին բարձր եկամուտներ ապահովելու, սննդամթերքի տեղական արտադրությունը զարգացնելու նպատակով.

ա) Խրախուսել ավանդական և Հայաստանի համար կարևոր նշանակություն ունեցող գյուղատնտեսական ապրանքների արտադրությունը՝ իրականացնելով օրենսդրական և իրավական ապահովում, պետական և ֆինանսական պարտավորությունների ստանձնում, ներառյալ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին սուբսիդիաների, երկարաժամկետ և կարճաժամկետ արտոնյալ վարկերի տրամադրում, հարկային ճնշման մեղմացում, մատչելի գներով ջրամատակարարումների ապահովում և այլն: Պետականորեն աջակցել գյուղատնտեսական արտադրանքի գնումներ կատարող մասնավոր կազմակերպությունների առաջացմանը և զարգացմանը, օրենսդրորեն և գործնականում ապահովել նրանց միջև արդար տնտեսական մրցակցության ծավալումը, որը կբացառի գյուղացուն ցածր գներ պարտադրելու հնարավորությունը: Իրականացնել գյուղատնտեսական ապրանքների ներքին շուկայի պաշտպանություն, միաժամանակ ստեղծել արտոնյալ պայմաններ նրանց արտահանման համար:

բ) Տնտեսական խթանիչների կիրառմամբ իրականացնել մշակվող հողակտորների խոշորացման քաղաքականություն, որը կապահովի հողի արդյունավետ օգտագործումը, պետականորեն խրախուսել հողի մասնավոր սեփականության վրա հիմնված կոլեկտիվ տնտեսությունների առաջացումը՝ առանց բացառելու հողակտորների խոշորացման այլ ձևերը:

6. Պարզեցված հարկային համակարգի կիրառմամբ, վերահսկող կառույցների բարեփոխման և դրանց աշխատանքը խստիվ կանոնակարգելու միջոցով, հանրապետությունում օրենքի խիստ կիրառմամբ կաշառակերության ու անպատժելիության մթնոլորտի վերացման միջոցով պայքարել տնտեսության ստվերայնությունը վերացնելու համար՝ դրանով իսկ ապահովելով նաև հավասար ու արդար մրցակցության պայմաններ մասնավոր ձեռներեցությամբ զբաղվողների համար: Օրենք ընդունել մասնավոր սեփականության անձեռնմխելիության մասին և այն խստիվ պահպանել: Այդ ամենը կնպաստի մեր տնտեսության մեջ նոր ֆինանսական ներդրումներին և մասնավոր ձեռներեցության զարգացմանը ինչպես արդյունաբերական ապրանքների արտադրության, այնպես էլ առևտրի, սպասարկման, միջնորդային, մասնագիտական ծառայությունների ոլորտներում, ինչը կլինի տնտեսության վերելքի երաշխիքը:

7. Կենսաթոշակների և բյուջետային ոլորտում աշխատողների աշխատավարձի կտրուկ բարձրացման, անվճար բուժսպասարկման և կրթական համակարգի վերականգնման ու բարելավման (խրախուսելով նաև վճարովի մասնավոր ծառայությունների զարգացումը), խնայբանկերի ավանդների վերադարձման, նոր նպաստների և սոցիալական ծրագրերի (ծերերի, բազմազավակ ընտանիքների, պատերազմի վետերանների, հաշմանդամների, զոհված ազատամարտիկների ընտանիքների... վերաբերյալ) միջոցով երաշխավորել Հայաստանի քաղաքացու համար արժանապատիվ կյանք և վստահություն ապագայի նկատմամբ:

Այդ ծրագրերի ֆինանսավորման աղբյուր պետք է լինի պետական բյուջեն, որի կտրուկ աճը կապահովվի արդյունաբերության զարգացմամբ, սեփականաշնորհումից առաջացած գումարներով, ստվերային տնտեսության վերացմամբ, մասնավոր ձեռներեցության համար նպաստավոր պայմաններ ստեղծելով:

8. Աղետի գոտու վերականգնումը համարել համազգային խնդիր: Այդ խնդիրը լուծել՝ օգտվելով ինչպես արդեն նշված տնտեսական բարեփոխումների իրականացումից սպասվող պետական եկամուտների աճից, այնպես էլ միջազգային և համազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցների ներդրումներից:

Իրականացնել պետական օրենսդրական և ֆինանսական պարտավորությունների ծրագիր՝ նպատակ ունենալով թեթևացնել աղետի գոտու բնակիչների ծանր վիճակը, այնտեղ ստեղծել լրացուցիչ նպաստավոր պայմաններ արդյունաբերության, շինարարության, մասնավոր ձեռներեցության զարգացման համար:

9. Պետական կառուցվածքի այնպիսի աստիճանական վերափոխում, որը կապահովի ժողովրդի վերահսկողությունը իշխանությունների նկատմամբ, Ազգային ժողովի վերահսկողությունը գործադիր իշխանությունների նկատմամբ, դատական համակարգի անկախությունը, մարդու արժանապատվության և իրավունքների իրական իրավական պաշտպանվածությունը, օրենքի գերակայությունը հասարակական կյանքում, մամուլի և խոսքի ազատությունը, քաղաքացիական հասարակության ձևավորումը: Ժողովրդի համաձայնության դեպքում կատարել անցում նորանկախ պետության համար առավել արդյունավետ՝ պառլամենտական կառավարման ձևի: Օրենք ընդունել պետական ծառայողի մասին, որը մի կողմից՝ կերաշխավորի նրա պաշտոնավարությունը անկախ կառավարման վերին օղակում քաղաքական ուժերի փոփոխությունից, մյուս կողմից՝ կսահմանի պրոֆեսիոնալ գիտելիքների և փորձի պահանջներ համապատասխան պաշտոն զբաղեցնելու համար: Օրենքով պարտադրել ամենամյա դեկլարացիա եկամուտների մասին:

10. Նպաստել, որ պետության հասարակական կյանքը հիմնված լինի ազգային և համամարդկային արժեքների, ազգային մշակույթի և ավանդույթների վրա: Պայմաններ ստեղծել, որ մեր պետության յուրաքանչյուր անհատ ապրի ազատ, հպարտ իր ազգային, պետական պատկանելությամբ, ապրի բարոյականության ու արդարության չափանիշներով առաջնորդվող, բարգավաճող հասարակությունում, որտեղ չի լինի ազգային որևէ խտրականություն:

11. Պահպանելով խաղաղություն մեր հարևանների հետ, ակտիվորեն մասնակցելով համաշխարհային համագործակցությանը՝ չբավարարվել սոսկ գոյատևման խնդիր լուծելով, այլ արթնացնելով մեր ժողովրդի մրցակցության ձգտումը՝ նպաստել նրա ստեղծագործական ոգու դրսևորմանը: Ազգային, պետական խնդիր դնել ժողովրդի առջև՝ մասնակցելու այն խաղաղ մրցակցությանը, որը տեղի է ունենում միջազգային ասպարեզում տնտեսության, առևտրի, գիտության և նոր տեխնոլոգիաների ստեղծման, մշակույթի, սպորտի և այլ բնագավառներում: Այդ մրցակցությունում, սեփական ներդրումներ կատարելով համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ, դուրս գալ առաջավոր դիրքեր:

Սփյուռքի գոյությունը՝ համազգային կառույցների ստեղծման միջոցով, մեր ժողովրդի բոլոր հատվածների միասնական և փոխշահավետ համագործակցության ճանապարհով, լրացուցիչ նպաստավոր պայմաններ կընձեռի մրցակցությունում առաջավոր դիրքերի հասնելու համար: Համազգային կառույցների ստեղծումը կնպաստի նաև հայապահպանման, ազգային անվտանգության և մեր այլ բազմաբնույթ ազգային, պետական խնդիրների իրականացմանը:

Ընդունելով, որ Սփյուռքի առաջացումը հիմնականում 1915թ. ոճրագործության հետևանք է, որը զրկել է մեր ազգակիցներին իրենց պատմական հայրենիքում ապրելու հնարավորությունից, գիտակցելով, որ Հայ դատը մեր ողջ ժողովրդի ազգային խնդիրն է, իսկ սփյուռքահայության համար ցեղասպանության ճանաչումը՝ նաև իրավունքի խնդիր, մենք գտնում ենք, որ այդ խնդրի լուծման հարցում մեր պետության մասնակցության չափը պետք է պայմանավորված լինի ինչպես ազգային, այնպես էլ պետական իրատեսական շահերով:

Մեր ժողովրդի իրավունքների պաշտպանվածությունը ապահովելու, սփյուռքահայության բոլոր հատվածների հետ սերտ համագործակցություն երաշխավորելու և համազգային կառույցների առաջացումն ու զարգացումը խթանելու նպատակով քաղաքացիության մասին սահմանադրական նոր օրենք ընդունել, որը կպարունակի նաև երկքաղաքացիության իրավունք (պահպանելով իրավունքների և պարտավորությունների համամասնությունը):

Թվարկված ազգային, պետական ծրագրերի հետևողական իրականացման շնորհիվ առաջիկա հնգամյակում Հայաստանում կկատարվեն ներքոհիշյալ բարեփոխումները

1. Կվերանա չքավորությունը, էապես կմեղմանա բևեռացումը ապահով և նվազ ապահով խավերի միջև:

2. Կպահպանվի խաղաղություն Հայաստանում և Ղարաբաղում:

3. Օրենքը պարտադիր կդառնա բոլորի համար՝ սկսած հանրապետության նախագահից:

4. Կստեղծվեն բարձր աշխատավարձով նոր աշխատատեղեր, կվերանա զանգվածային գործազրկությունը:

5. Արտագաղթին կփոխարինի ներգաղթը:

6. Առնվազն 10 անգամ կաճի բյուջետային աշխատողների (պետծառայողների, բժիշկների, ուսուցիչների, զինծառայողների, ոստիկանության, գիտության, մշակույթի և այլ

բնագավառներում զբաղվածների) աշխատավարձը, օրենսդրորեն կիստակեցվեն նրանց իրավական պաշտպանվածությունը և աշխատանքային վեճերի լուծումները:

7. Պետության հովանավորությամբ գյուղի բնակչությանը ժամանակին և մատչելի գներով (որոշ շրջաններում անգամ անվճար) մշտապես ջուր կմատակարարվի: Կտրվեն սուբսիդիաներ (նպատակային անվերադարձ ֆինանսների տրամադրում պետության կողմից), երկարաժամկետ և կարճաժամկետ արտոնյալ վարկեր՝ մասնավորապես գյուղատնտեսական տեխնիկա, թունաքիմիկատներ, պարարտանյութեր, սերմացու գնելու համար: Կապահովվեն գյուղատնտեսական արտադրանքի երաշխավորված գնումներ:

8. Կիրականացվեն նոր սոցիալական ծրագրեր միայնակ ծերերի, թոշակառուների, բազմազավակ ընտանիքների, հաշմանդամների, պատերազմի վետերանների, զոհված ազատամարտիկների ընտանիքների, գործազուրկների, բռնադատվածների, ինչպես նաև փախստականների վերաբերյալ: Կենսաթոշակների, նպաստների արդար վերահաշվարկ, դրանց աճ՝ առնվազն 10 անգամ:

9. Աշխատավարձերը, թոշակները, նպաստները կվճարվեն ժամանակին:

10. Կսկսվի խնայբանկային ավանդների աստիճանական վերադարձը (10 ռուբլին = 1 դոլար հաշվարկով):

11. Բոլոր քաղաքացիների համար կապահովվի անվճար, որակյալ բուժսպասարկում և կրթություն (խրախուսելով նաև վճարովի մասնավոր ծառայությունների զարգացումը):

12. Աղետի գոտում «բարաքներում» բնակվող բոլոր ընտանիքները կունենան բնակարաններ, կվերացվի գործազրկությունը, արտոնյալ պայմաններ կստեղծվեն արդյունաբերության, շինարարության, ձեռներեցության զարգացման համար:

13. Աստիճանաբար կվերադարձվեն խաբված ավանդատուների ավանդները բոլոր այն դեպքերում, երբ տեղի է ունեցել պետության պարտավորությունների կատարման թերացում:

14. Նպաստավոր պայմաններ կստեղծվեն մասնավոր ձեռներեցությամբ զբաղվողների համար արդյունաբերության, առևտրի, սպասարկման ոլորտում, միջնորդային, մասնագիտական ծառայությունների ասպարեզում, մասնավորապես պարզեցված հարկային համակարգի կիրառումով, ինչպես նաև տնտեսական գործունեությամբ (և՛ պետական, և՛ մասնավոր) զբաղվողների ապօրինի հովանավորության և խոչընդոտների վերացումով: Այդ ամենը կնպաստի նաև ազատ մրցակցության հաստատմանը, կաշառակերության և ստվերային տնտեսության արմատների վերացմանը: Օրենքը կկիրառվի նրանց նկատմամբ, ովքեր իրենց դիրքի չարաշահումով կաշառակերության ու անպատժելիության մթնոլորտ են արմատավորում:

15. Խրախուսելով մասնավոր սեփականության իրավունքը և զարգացումը՝ միաժամանակ վերջ կտրվի իրականացվող սեփականաշնորհման այն ձևին, որը արդյունաբերության փլուզման ու արտադրության միջոցների թալանի հիմնական պատճառներից է:

16. Օրենքով կպաշտպանվեն մասնավոր ձեռնարկությունների աշխատողների իրավունքները, կզարգանա արհմիությունների և ձեռնարկատերերի միջև պայմանագրային հարաբերությունը՝ ապահովելով հասարակական համաձայնություն կառավարության միջնորդությամբ:

17. Կընդունվի պետծառայողի մասին օրենք, որը մի կողմից՝ կերաշխավորի նրա պաշտպանվածությունը՝ անկախ կառավարման վերին օղակի քաղաքական ուժերի փոփոխությունից, մյուս կողմից՝ կսահմանի մասնագիտական գիտելիքների և փորձի պահանջներ՝ համապատասխան պաշտոն զբաղեցնելու համար:

18. Պետությունը կկատարի իր կարևոր պարտավորությունը դպրոցի նկատմամբ՝ ապահովելով սովորողների անվճար որակյալ ուսուցումը և դաստիարակությունը ազգային և համամարդկային արժեքներով, հասարակության մեջ ուսուցչի ավանդական բարձր հեղինակության վերականգնումը, նրա սոցիալական պայմանների բարելավումը:

19. Պետական հովանավորությամբ կխթանվի մշակույթի զարգացումը, կերաշխավորվի պատմական հուշարձանների պահպանությունը (կօժանդակվի նաև համապատասխան բարեգործական և առևտրի ճյուղերի զարգացումը):

20. Կերաշխավորվի Հայաստանի բոլոր ազգային փոքրամասնությունների լեզվի, կրոնի, մշակույթի, ավանդույթների պահպանումն ու զարգացումը:

21. Գիտությունը կֆինանսավորվի պետականորեն՝ ապահովելով Հայաստանի արդյունաբերության և տնտեսության այլ ճյուղերի զարգացմանն ուղղված

հետազոտությունները (խրախուսելով նաև մասնավոր ֆինանսավորումը), Հայաստանում ավանդաբար զարգացած ճյուղերի (ինչպես և ֆունդամենտալ) պահպանումը, գիտության հեռանկարային ուղղությունների և նոր տեխնոլոգիաների զարգացումը:

22. Կզարգանան սպորտը և առողջության ակումբների ցանցը ինչպես պետության անմիջական ֆինանսավորման, այնպես էլ առևտրի կառույցների ստեղծման և մասնավոր ներդրումների միջոցով: Կխրախուսվի պրոֆեսիոնալ սպորտի զարգացումը: Այդ ամենը կնպաստի ոչ միայն ժողովրդի առողջական վիճակի բարելավմանը, այլև հայ մարզիկների նոր նվաճումներին:

23. Բանակում կապահովվի կարգ ու կանոն, կբարձրացվի նրա մարտունակությունն ու հայրենասիրական ոգին, կկրճատվի ծառայության ժամկետը, կընդլայնվի պայմանագրային ծառայությունը, կպաշտպանվի զինծառայողի արժանապատվությունը, կբարելավվեն զինծառայողի սոցիալական պայմանները:

24. Արմատապես կբարելավվեն կալանավայրերում մեղադրյալների ու դատապարտյալների պահման կարգը և պայմանները:

25. Կտրուկ կբարձրացվի ինչպես դատաքննական մարմինների պատասխանատվությունը քննվող գործերի օրինականության համար, այնպես էլ փաստաբանի կարգավիճակը: Խստիվ կպահպանվի անմեղության կանխավարկածը:

26. Կվերանայվեն վիճահարույց և հատկապես ազատամարտիկների նկատմամբ զենք, զինամթերք ունենալու մեղադրանքով կայացված դատավճիռները:

27. Կզարգանան մասնավոր հեռուստատեսությունը և ռադիոն, ինչը կնպաստի այդ ոլորտում իշխանության մենաշնորհի վերացմանը: Կվերացվեն անկախ և կուսակցական մամուլի զարգացումը կաշկանդող տնտեսական խոչընդոտները և իշխանությունների միջամտությունը: Թերթերը ժամանակին կհասնեն բնակավայրեր:

28. Կերաշխավորվի կուսակցությունների անկաշկանդ գործունեությունը, կվերացվի պետական հովանավորությունը առանձին կուսակցությունների նկատմամբ:

29. Կվերանայվի արհեստական վարչատարածքային բաժանումը, կիրականացվի անցումը դեպի իրական ինքնակառավարում. մարզպետները և Երևանի քաղաքապետը կընտրվեն անմիջականորեն բնակչության կողմից և կվերահսկվեն ուղղակիորեն ընտրված ավագանիների կողմից:

30. Հայաստանը կվերադառնա ժողովրդավարության հաստատման ուղիով զարգացող անկախ պետությունների շարքը, կբարձրանա նրա միջազգային հեղինակությունը:

31. Պարբերաբար կհրապարակվեն սպառիչ տվյալներ արտասահմանյան վարկերի ստացման, օգտագործման, պարտքերի մարման, ինչպես նաև հումանիտար օգնության բաշխման մասին:

32. Կխորացվեն փոխշահավետ առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի և ԱՊՀ մյուս պետությունների հետ:

33. Կամրապնդվի համագործակցությունը Սփյուռքի մշակութային կենտրոնների և այնտեղ գործող կուսակցությունների հետ: Սփյուռքահայը օտարերկրացի չէ, և դա կամրագրվի երկքաղաքացիության մասին օրենքով:

34. Կձեռնարկվեն քայլեր ԱՊՀ երկրների հայության և այնտեղ աշխատող մեր քաղաքացիների իրավունքների ու շահերի պաշտպանության ուղղությամբ:

35. Հասարակական կյանքում իր անփոխարինելի տեղը կզբաղեցնի հայ ընտանիքը՝ բարոյականության, փոխադարձ հոգատարության ու հարգանքի, ազգային արժեքների սերնդեսերունդ փոխանցման ամուր ավանդույթներով:

ՀՀ Նախագահի թեկնածու Վ. Մանուկյան
Հրապարակվել է «Ազատության» հրապարակում
«Այժմ », 1996, 28. 08 – 03. 09

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԵՎՍ ՄԵԿ ՀՈՒԼԻՍԻ 5 ՍԱՐՍԵԼ

-Ասում եմ՝ ամերիկացիները, նայելով Քենեդուն, մտածում էին այն մասին, թե իդեալական տարբերակում ինչպիսին պետք է լինեն իրենք, նայելով Նիքսոնին՝ իրենց տեսնում էին այնպես, ինչպես որ կան: Ի՞նչ են մտածում մարդիկ՝ նայելով Ձեզ:

-Բայց այդ հարցին ես չէ, որ պետք է պատասխանեմ:

-Դուք քաղաքական գործչի իդեալ ունե՞ք:

-Ճիշտ չէր լինի ասել, թե ես միայն մեկ իդեալ ունեմ: Բայց ես միշտ հիացել եմ Չերչիլով:

-Իսկ ռուսների, խորհրդային քաղաքական գործիչների մե՞ջ: Անկախ գաղափարախոսությունից...

-Նրանց դժվար է զատել գաղափարախոսությունից: Ոչ, ոչ մեկին չեմ տեսնում:

-Անցնենք հայերին...

-Արամ Մանուկյան և Նժդեհ:

-Նրանք շատ տարբեր են...

-Բայց երկուսին էլ միացնում է առաջադրված նպատակների ռոմանտիկությունը: Երկուսն էլ բավական պրագմատիկ են իրենց գործունեության մեջ:

-Դուք համակարծի՞ք եք այն տարածված մտքին, թե քաղաքականությունը կեղտոտ գործ է:

-Ոչ, համակարծիք չեմ: Անցած ժամանակներում ազնվության բացակայությունը չափանիշ է համարվել քաղաքականությունում: Հիմա բարոյականությունն ավելի ու ավելի պարտադիր գործոն է դառնում: Կարծում եմ՝ երկու դարերի խաչմերուկում աշխարհի քաղաքական ասպարեզում կհայտնվեն փիլիսոփայական մտքով մարդիկ: Աշխարհը դուրս է եկել մի վիճակից և մտել է մի ուրիշ վիճակի մեջ: Նոր վիճակի համար անհրաժեշտ են նոր մտածողության մարդիկ: Ազնվության բացակայությունը վերջին հաշվով դատապարտում է քաղաքական գործիչներին և պետություններին:

-Կարծիք է ստեղծվել, թե Դուք բարեհաճ չեք Ռուսաստանի նկատմամբ...

- Դա ճիշտ կարծիք չէ: Մենք փորձում էինք լուծել Ղարաբաղի հարցը, մեր անկախության հարցը և բնականաբար բախվում էինք կենտրոնական իշխանությանը: Ումից կախված ես, նրա դեմ էլ պայքարում ես:

Մեր պայքարում ամենահավատարիմ զինակիցները 1989 թվականին, այնուամենայնիվ, ռուսաստանյան ժողովրդավարական շարժման ներկայացուցիչներն էին, որոնք էլ վերջին հաշվով իշխանության եկան Մոսկվայում: Այդուհանդերձ «ավագ եղբայր» հասկացությունը մեր հարաբերություններում իսպառ բացառված էր: Շատ հարցեր՝ կապված հասարակարգի վերակառուցման հետ, սկզբնական շրջանում Հայաստանում ավելի շուտ էին լուծվում, քան Ռուսաստանում, և նրանք մեզանից սովորելու բան ունեին: Այժմ իրավիճակը տրամագծորեն փոխվել է:

-Քանի որ Դուք հիշատակեցիք Չերչիլին, հիշեմ նրա մտքերից մեկը. ցանկացած պայմանագիր՝ կնքված ռուսների հետ, չարժե անգամ այն թուղթը, որի վրա գրված է...

-Կարծում եմ՝ նա այդ ասել է ջղային վիճակում, ասենք, Ռուսաստանն էլ արդեն այն չէ:

-Չգիտեմ՝ ինչ պայմանագրեր են կնքել միմյանց միջև Ձեր զինակիցները, բայց շատ շուտով այնտեղ պառակտում եղավ, շատ ժողովրդավարներ մեկուսացվեցին իշխանությունից:

-Փոփոխություններ եղան ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում: Ռուսական ժողովրդավարական շարժումը, սակայն, վերևի ճնշման տակ էր և մեծամասնություն չուներ, ինչպես, ասենք, Հայաստանում:

Չնայած դրան՝ Ռուսաստանն այժմ շատ ավելի ժողովրդավարական երկիր է, քան Հայաստանը: Մնալով իշխանության ղեկին՝ Ելցինը շարունակ վերանայում է իր դիրքորոշումները: Մեզանում, ցավոք, այդ վերանայումը գրեթե չկա:

-Ձեզ չի՞ թվում, որ Ռուսաստանն աստիճանաբար մոտենում է իր վերջնական փլուզմանը:

-Ոչ, չի թվում: Ռուսաստանն ազատագրվեց աշխարհի բոլոր գործերում խառնվելու անկրելի բեռից, պահպանեց իր արդյունաբերական, գիտական ներուժը և արագ կարող է ոտքի կանգնել:

-Հետագա ի՞նչ հարաբերություններ եք տեսնում մեր և Ռուսաստանի միջև:

-Այն մարդիկ, որոնց համար անկախությունը շատ կարևոր է, որոնք վախենում են կայսերապաշտական մտածողության վերածնունդից, չեն ցանկանում, որպեսզի Ռուսաստանը կրկին գերտերություն դառնա: Անձամբ ես այդպիսի մտավախություններ չունեմ: Մի կողմից՝ վստահ եմ, որ Ռուսաստանն արդեն երբեք չի ցանկանա կայսրություն դառնալ: Պարզ հաշվարկները ցույց են տալիս, որ դա շահեկան չէ ռուս ժողովրդի համար: Մեզ համար էլ շահավետ է ինքնավար Ռուսաստանի հզորացումը, քանի որ ինչպես տնտեսությունում, այնպես էլ քաղաքականությունում այդ երկիրը մեզ համար շատ կարևոր գործընկեր է:

-Դուք այսպիսի օրինաչափություն չե՞ք նկատել. հենց որ իրավիճակը Ռուսաստանում կայունանում է, մեր ղեկավարները լավացնում են հարաբերությունները այդ երկրի հետ: Եվ հակառակը:

-Ես դժվարանում եմ անվերապահորեն պատասխանել: Իշխանությունները միշտ էլ ցանկանում են ամրացնել իրենց դիրքերը իշխանության ղեկի մոտ: Ունենալով մեկ գլխավոր գործընկեր՝ բնավ պարտադիր չէ հրաժարվել մնացած բոլորից. չէ որ շատ կարևոր եմ և այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են վարկերը, տնտեսական օգնությունը:

Հայաստանի համար, սակայն, այդ հարցը հիմնարար նշանակություն չունի: Ռուսաստանաի հետ համագործակցելու անհրաժեշտությունը, ինչպես նաև արևմտյան աղբյուրներից հրաժարվելու աննպատակահարմարությունը լավ են հասկանում և՛ ՀՀ ղեկավարները, և՛ ժողովուրդը:

-Դուք, երևում է, այն հազվագյուտ մարդկանցից մեկն եք, որոնք լավ գիտեն մեր ներկայիս իշխանությունների գրեթե բոլոր ներկայացուցիչներին: Ի՞նչ եք կարծում, նրանք բաժանվու՞մ են ռուսամետ և թուրքամետ (արևմտամետ, որ նույն բանն է) գործիչների:

-Թուրքամետ կողմնորոշում մեզանում առհասարակ գոյություն չունի: Այդպիսի բաժանում ես չեմ տեսնում նաև իշխանության ներկայացուցիչների մեջ:

Այս առիթով ես չեմ կարող չասել մի մոլորության մասին, որ տիրապետող է հատկապես ընդդիմության շարքերում: Միտում կա, որ եթե ռուսամետ կողմնորոշում ունես, ապա ազգային մտածողություն ունեցող մարդ ես, իսկ եթե արևմտամետ ես, հակառակը: Իրականում ո՛չ մեկը, ո՛չ մյուսը որևէ կապ չունեն «ազգային պետություն» հասկացության հետ:

Ազգային կարող է համարվել միայն այն պետությունը, որը կառուցվում է սեփական մշակութային արժեքների, սեփական պետության հիման վրա: Նման պետության ամենագլխավոր նպատակը առաջավոր շարքեր մղվելն է համաշխարհային մրցակցությունում՝ օգտագործելով բոլոր հնարավորությունները: Այդ նպատակները դնելուց հետո միայն կարող ես որոշել, թե ում հետ ես ուզում անցնել այդ ուղին:

Ինչ վերաբերում է այդ նպատակները իրականացնելու ունակ մարդկանց, ապա նրանք ոգով պետք է մաքուր լինեն, իդեալներին նվիրված, բայց միշտ ղեկավարվեն պրագմատիկ նկատառումներով: Իսկ մեր հասարակությունը, իշխանության ներկայացուցիչները դասակարգվում են երկու կատեգորիայի. ոմանք առաջնորդվում են միայն ռոմանտիզմով, մյուսները՝ միայն պրագմատիզմով՝ ցինիզմի հասցրած:

Իշխանության կառույցներում, սակայն, առկա է ևս մեկ երևույթ, որ շատ ավելի վտանգավոր է, քան, ասենք, Թուրքիային մոտենալը, և որի մասին վերջին շրջանում շատ են խոսում: Հայտնվել են երիտասարդ պետչինովնիկներ, որոնք ազգային արժեքներին վերաբերվում են ինչպես մի մաշված հնաոճ իրի: Ազգերը, նրանց կարծիքով, վաղ թե ուշ կանհետանան, իսկ մոլորակը կվերածվի միասնական պետության: Այդ հոսանքը, ցավոք, թափ է առնում իշխանական կառույցներում:

-Ինչպե՞ս եք ընկալում Հայ դատի գաղափարները:

-Տվյալ փուլում մենք պետք է հասնենք ցեղասպանության ընդունման փաստին, նմանապես Թուրքիայի կողմից:

-Խոսք եղե՞լ է Հայ դատի մասին «Ղարաբաղ» կոմիտեի գոյության առաջին օրերին:

-Ոչ: Մենք կենտրոնի վրա ճնշում էինք գործադրում լոկ Ղարաբաղի խնդրով: Բայց եթե Դուք հիշում եք, մեր ջանքերի շնորհիվ էր, որ ապրիլի 24-ը ամենաածավալուն կերպով նշվեց 1988 թվականին:

-Այն ժամանակ մտածու՞մ էիք այն մասին, որ երբևէ դեպքերը «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին կշպրտեն բարիկադի տարբեր կողմեր:

-Ոչ: Մտքովս անգամ չի անցել: Բայց մենք նաև չէինք մտածում, որ իշխանության կգանք: Եթե այն ժամանակ ես իմանայի, որ իշխանության կգանք, ապա գուցեև կռահեի, որ այդ հողի վրա խնդիրներ կծագեն:

Իրականում խնդիրներ ծագեցին դեռ մինչև իշխանության գալը: Հակասություններ առաջացան, որոնք ժամանակի ընթացքում խորացան:

-Դուք ճի՞շտ եք համարում ձեր հեռանալը իշխանությունից:

-Այո: Թեև ինձ մոտիկ շատ մարդիկ փորձում են ապացուցել, որ այնուամենայնիվ պետք էր մնալ: Իրոք, մնալով՝ ես կարող էի ինչ-որ կերպ հարթել հակասությունները և գոնե մասամբ հասնել նպատակներիս իրականացմանը, որոնք ես դրել էի իմ առաջ 21 տարեկանից ի վեր: Բայց հակասությունները, կրկնում եմ, այնքան խորացան, որ իմ հեռանալը անհրաժեշտություն դարձավ:

-Դուք շատ կողմնակիցներ ունեք, և երբ ես հարցնում եմ՝ հատկապես ինչի համար են նրանք իրենց ձայները տալիս Վազգեն Մանուկյանին, ինձ պատասխանում են. նա ստեղծել է հայկական բանակը:

-Բանակը ստեղծել են նաև ինձանից առաջ: Ես միայն գործուն դարձրի այդ աշխատանքը: Այդ գաղափարի համար աշխատում էր մարդկանց մեծ խումբ: Չի կարելի մոռանալ Նորատ Տեր-Գրիգորյանցին և շատ ուրիշների, ում հետ գործում էինք: Մինչդեռ, իմիջիայլոց, կարևորն ուրիշ հարց է: Եթե ես մի ինչ-որ ավանդ էլ ունեմ, ապա դա հին պատկերացումները կոտրելն է: Դրա շնորհիվ մենք ռազմական մեծ հաջողությունների հասանք: Սկզբնական շրջանում դրա մեջ արկածախնդրության տարր էր զգացվում, բայց ժամանակը ցույց տվեց, որ ես ճիշտ էի:

-Դուք ինքնակա՞մ հեռացաք պաշտպանության նախարարի պաշտոնից, թե՞ հեռանալ տվին:

-Քելբաջարից, Մարտակերտից և մյուս գործողություններից հետո ես չէի ուզում պաշտպանության նախարար մնալ: Աշխատանքի նոր փուլ էր սկսվում, որը ինձ համար հետաքրքիր չէր: Բայց երբ Լ.Տեր-Պետրոսյանը կանչեց ինձ և առաջարկեց հեռանալ, ինձ համար դա անակնկալ էր:

-Նա անձա՞մբ առաջարկեց:

-Այո, անձամբ: Ես ասացի, որ ինքնակամ չեմ ստորագրի հրաժարականը, քանի որ դա դավաճանություն կլիներ այն մարդկանց նկատմամբ, որոնց ես ճակատ էի ուղարկել, իսկ շատերին՝ մահվան: Այդ ժամանակ նա ազատեց ինձ իր հրամանով:

-Դուք չե՞ք կարծում, որ որոշակի համառության դեպքում կարելի է հասնել ցանկացած նպատակի իրականացմանը:

-Անհատականությունը կարող է պարտություն կրել, բայց շարժումն ու գաղափարախոսությունը նպատակասլաց մոտեցման դեպքում միշտ էլ հասնում են ուզածին…

-Պարույր Հայրիկյանի խոսքերով, Ձեր կուսակցությունը առաջիկա ընտրությունները արդար է գնահատում և այդ առումով Ձեզ ՀՀՇ-ի դաշնակից է համարում…

-Իրականում մենք ասում ենք, որ իշխանությունները չեն կարող ևս մեկ հուլիսի 5 մարսել: Եթե նրանք փորձեն կրկնել անցած տարվա սցենարը, ապա այդպիսով ձեռնոց կնետեն ոչ միայն սեփական ժողովրդին, այլև ողջ միջազգային հանրությանը: Ելնելով դրանից՝ իշխանությունները կձգտեն լոկ ծայրահեղ դեպքերում գնալ այնպիսի բացահայտ կեղծումների, ինչպիսիք են մեքենայությունները ձայները հաշվելիս կամ իրենց շահավետ քվեաթերթիկներ գցելը քվետաուփերի մեջ: Բայց իրենք էլ հասկանում են, որ այդ կերպ ստացած իշխանությունը դատապարտված է: Այդպիսով հիմնական աշխատանքը նրանք կկատարեն մինչև ընտրությունները՝ կիրառելով սպառնալիքի, անօրինական խոստումների և այլ մեթոդներ: Կամ այնպես հիմնավոր կհիասթափեցնեն ընտրողներին, որ նրանք առհասարակ ընտրություններին չեն մասնակցի:

Ըստ իս, մարդկանց գիտակցության մեջ որոշակի տեղաշարժեր են եղել: Անցած տարվա հուլիսի 5-ի մեծ հիասթափությունից հետո նրանք հասկացան, որ միայն ընտրությունների ճանապարհով կարող են գոնե ինչ-որ բան փոխել…

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը
վարեց Նարեկ Մեսրոպյանը
«Գոլոս Արմենիի», 1996, 3 սեպտեմբերի

ՆՈՐ ԽԱՉՄԵՐՈՒԿ

Իսկապես ծանր է մեր ժողովրդի ներկա կացությունը, և կարելի էր դիմանալ, եթե լիներ ներքին համոզվածություն, որ կարճ ժամանակում հնարավոր կլինի շտկել իրավիճակը, յուրաքանչյուր մարդ գիտակցեր, որ ամեն մի վաղվա օր, ամեն մի եկող տարի կյանքը կբարելավվի: Ցավոք, չկա այդ համոզվածությունը: Բայց միայն վրդովվելով, միայն բարի ցանկություններ արտահայտելով՝ այս վիճակից դուրս գալ հնարավոր չէ: Պետք են նոր խնդիրներ, գաղափարներ, նոր ծրագրեր, նաև մարդիկ, ովքեր ցանկանում են այդ ծրագրերը իրականացնել: Իմ խորին համոզմամբ, ներկա իշխանությունները կարող են անել միայն այն, ինչ արել են մինչ այժմ, ոչինչ ավելին: Նրանք աշխատում են որևիցե խնդիր չդնել իրենց կամ պետության առջև՝ սահմանափակվելով անորոշ դատողություններով պետության, շուկայական հարաբերությունների մասին կամ արծանագրելով որպես իրենց նվաճում այն, ինչն արդեն իրականացվել է հիմնականում ժողովրդի, ուրիշների ջանքերի շնորհիվ: Պատահական չէ, որ հանրապետության ներկայիս նախագահը իր ելույթներում շեշտադրում է կայունության և Ղարաբաղի անկախության հարցերը: Ինչ խոսք, կայունությունը կարևոր է, և Հայաստանի բոլոր քաղաքական ուժերը իրենց ներդրումն ունեն կայունությունը պահպանելու խնդրում, բայց մեզ պետք է ոչ թե գերեզմանոցում տիրող կայունություն, այլ այն կայունությունը, որը իր մեջ պարունակում է ազատություն և զարգացում: Մեր ժողովրդի համար Ղարաբաղի անկախության հարցը շատ կարևոր է, և մենք ամբողջ ժողովրդով մասնակից ենք եղել այդ խնդրի լուծման ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական գործողություններին: Շատ կարևոր է դրա հետ մեկտեղ ամեն գնով պահպանել խաղաղությունը: Այդ նպատակին հասնելու հիմքում պետք է ընկած լինեն ոչ միայն քաղաքական բանակցությունների ճկունությունը և տարբեր երկրների՝ այս տարածաշրջանում առկա շահերի գիտակցումը, այլ նաև հայոց բանակի այնպիսի վերակազմավորումը և Հայաստանի տնտեսական այնպիսի հզորությունը, որոնք կզսպեն հակառակորդի ցանկությունը՝ ուժային միջամտությամբ լուծելու քաղաքական հարցերը:

Այսպես թե այնպես բոլոր հարցերը, լինի դա Ղարաբաղի հարցը, լինեն խաղաղության, ներգաղթի, կրթության կամ ժողովրդի սոցիալական վիճակի բարելավման հարցերը, հանգեցնում են մի հիմնախնդրի՝ տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի առաջացման:

Բայց սխալ կլինի մտածել, որ մենք մի ինչ-որ սովորական տնտեսական ճգնաժամի մեջ ենք և ինքնըստինքյան, ժամանակի ընթացքում դուրս կգանք ճգնաժամից: Իրականում մենք այժմ ապրում ենք միաժամանակ երեք խոր ճգնաժամ. *առաջինը տնտեսականն է*, որը պայմանավորված է արդյունաբերության փլուզմամբ, գյուղատնտեսությամբ զբաղվելու ոչ եկամտաբեր լինելով, մասնավոր ձեռներեցության առջև ստեղծված խոչընդոտներով:

Երկրորդը բարոյական ճգնաժամն է, որը պայմանավորված է ոչ միայն մարդկանց չքավորությամբ, այլ նաև նրանով, որ հասարակության միջից, իշխանությունների ակտիվ միջամտությամբ, իրենց անձնական օրինակով դուրս են մղվում հազարամյակների ընթացքում մեզ պահպանող այն բարոյական չափանիշները, որոնք հնարավորություն էին տալիս տարբերել լավը վատից, չարը բարուց, և աշխատում են թողնել միայն շահի գիտակցումը, զոռբայությունն ու ստորաքարշությունը: Հասարակության մեջ սերմանվում է ոչ միայն արհամարհանք մեր ազգային արժեքների, այլ նաև համամարդկային գաղափարների նկատմամբ: Գավառացուն բնորոշ խորամանկությամբ ոտնահարվում են այնպիսի համամարդկային արժեքներ, ինչպիսիք են ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության գաղափարները: 1960-ական թվականներից սկսած՝

տասնյակ պետություններ, անկախություն ստանալով և նպատակ ունենալով Արևմուտքի օրինակով արագ զարգանալ, պատճենեցին արևմտյան պետությունների ոչ միայն պետական, այլև տնտեսական կառույցները, ստացան մեծ միջազգային վարկեր, բայց նրանցից շատերը զարգացում չապրեցին, որովհետև հաշվի չառան, որ Արևմուտքի զարգացման հիմքում այնուամենայնիվ ընկած են կրոնական, փիլիսոփայական, բարոյական, ազգային սկզբունքներ: Նրանք, ովքեր փորձեցին իրենց հոգեբանությունից և պատմությունից բխող արժեքները փոխարինել արևմտյան արժեքներով, նույնպես լուրջ արդյունքների չհասան: Հաղթեցին այն երկրները, որոնց հաջողվեց իրենց ազգային մշակույթի, ավանդույթների, ազգային մտածելակերպի, գաղափարախոսության հիմքի վրա ճիշտ «պատվաստել» արևմտյան կառույցները՝ միաժամանակ վերցնելով դրանցից արդեն համամարդկային դարձած այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ազատության, մարդու իրավունքների պաշտպանության գաղափարները: Եվ այստեղ տեղին է նշել այն երրորդ ճգնաժամը, որում մենք գտնվում ենք. *ազգային ճգնաժամը*: Այժմ ոչ միայն փորձ է արվում մեզ զրկել ազգային այն հիմքից, որը խարսխվել է մեր մշակույթի, պատմության, մեր ազգային գաղափարների վրա, այլ նաև մեզ դարձնում են մի ժողովուրդ, որը իր առջև չունի որևէ նպատակ՝ բացի մի կերպ գոյատևելուց: Իսկ մինչ այդ մենք ունեինք անկախ պետություն ստեղծելու նպատակ, որը իրականացվեց, բայց մեծ հիասթափություն պատճառեց նրանում ապրող ժողովրդին. այսպիսին չէինք մենք պատկերացնում մեր անկախությունը, և մեր ժողովրդի մեղքը չէ, որ այսպես դժգույն է մեր անկախությունը: Մենք ունեինք, որպես ազգային խնդիր, Հայ դատը, որը աստիճանաբար դուրս է գալիս ասպարեզից: Մենք ունեինք նաև մի այլ ազգային խնդիր. վերականգնելով մեր անկախ պետականությունը, խաղաղ մրցակցության մեջ մտնելով ուրիշ ժողովուրդների հետ և այդ մրցակցությունում սեփական ներդրումներ կատարելով համաշխարհային քաղաքականության զարգացման ոլորտում՝ դուրս գալ առաջավոր դիրքեր: Այդ ամենը այժմ անվանում են ֆաշիզմ, հայտարարում են, որ ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է, նախագահը հպարտությամբ հայտարարում է, որ մերժում է ցանկացած բարոյախոսություն:

Իրականում այս երեք ճգնաժամերը շատ ամուր են կապված միմյանց: Դրանք կազմում են մի միասնական շղթա, և հնարավոր չէ լուծել մեկը՝ անտեսելով մյուս երկուսը: Այդ տեսակետից մեր կողմից ներկայացված «Նախընտրական ծրագրի հիմնադրույթներում» ներկայացված են այնպիսի պետական, ազգային ծրագրեր, որոնք միասնականորեն, հետևողականորեն իրականացնելով և դրանց շուրջը համախմբելով մեր ամբողջ հասարակության կարող ուժերը, հնարավորություն կընձեռվեն դուրս գալ այս վիճակից և ունենալ ապագա: «Նախընտրական ծրագրի հիմնադրույթներում» նշվում է նաև, թե ինչ արդյունքներ կարելի է սպասել առաջիկա 5 տարիների ընթացքում այդ ազգային պետական ծրագրերի իրականացման դեպքում: Այստեղ և՛ արդյունաբերության վերականգնումն է, և՛ բյուջետային աշխատողների աշխատավարձերի տասն անգամ բարձրացնելը, և՛ նոր սոցիալական ծրագրերի իրականացումը, կենսաթոշակների ավելացումը դարձյալ 10 անգամ, և՛ աղետի գոտու վերականգնումը, և՛ պետական հովանավորությունը գյուղատնտեսության նկատմամբ՝ նպատակ ունենալով ոչ միայն գյուղատնտեսության զարգացումը, այլ նաև այդ ոլորտում զբաղվածների եկամուտների կտրուկ բարձրացումը, և՛ մասնավոր ձեռներեցության զարգացումը, և՛ խնայբանկային ավանդների մաս-մաս վճարումը, և՛ օրենքի գերակայության ապահովումը հասարակության շրջանում: Այդ ամենը՝ որպես «Նախընտրական ծրագրի հիմնադրույթներ», կիրապարակվի առանձին գրքույկով և կբաժանվի մեր քաղաքացիներին, այնպես որ ես մանրամասնությունների վրա կանգ չեմ առնի և չեմ զբաղվի այդ ծրագրի ընթերցանությամբ: Այլ հարց է առաջանում, որը արժանի է քննարկման: Արդյո՞ք հնարավոր է իրականացնել այս ամենը: Արդյոք սա չի մնա որպես ոչ իրականանալի, բարի ցանկությունների մի ցուցակ:

Գոյություն ունի դատողությունների *երկու ճանապարհ*, մեկը նկարագրում է ներկա վիճակը, որից հետո սկսվում են դատողություններ, թե ինչ կատարելագործումներ կարելի է անել, ինչ նպատակներ իրագործել: Այդ ճանապարհը սովորաբար շատ փոքր արդյունքներ է տալիս, չի արթնացնում մարդկանց ստեղծագործական ոգին և հնարավոր չի լինում գնահատել արածը, որովհետև այն, ինչ որ ստացվում է, համարվում է միակ հնարավոր հասանելին:

Երկրորդ ճանապարհը հետևյալն է. դրվում է խնդիր և պատճառաբանվում խնդրի լուծման անհրաժեշտությունը (օրինակ՝ բյուջետային աշխատողների աշխատավարձը պետք է

բարձրացնել 10 անգամ, այլապես նրանք սովամահ կլինեն): Քննարկվում է՝ այդ խնդիրը սկզբունքորեն լուծելի է, թե ոչ (հիմնականում հենվելով ուրիշների փորձի վրա), հետո նոր միայն կազմվում է ծրագիր, թե ինչպես ներկա վիճակից հասնել այդ խնդրի լուծմանը՝ հիմնվելով արդեն մեր երկրի, ժողովրդի, տնտեսության յուրահատկությունների վրա: Ինձ համար միակ ընդունելի ճանապարհը երկրորդն է. միայն այդ ձևով կարելի է հասնել մեծ արդյունքների՝ հասարակության մեջ առաջացնելով անհրաժեշտ ստեղծագործական ոգու արթնացում և հնարավորություն՝ գնահատելու յուրաքանչյուր քայլ՝ մոտենու՞մ ես դու խնդրի լուծմանը, թե՞ ոչ: Ընթացքում միշտ կլինեն փոփոխություններ, նոր իրավիճակներ, նոր գաղափարներ:

Ղարաբաղցիները Շուշին և Լաչինը ազատագրեցին ոչ թե այն բանի շնորհիվ, որ հաշվարկը ցույց տվեց դրա հնարավորությունը, կամ դա ստացվեց ինքնիրեն, այլ որովհետև այդ գործողությունն անհրաժեշտ էր անել, և այն ձևակերպվեց որպես խնդիր: Խնդիրը ձևակերպելուց հետո գտնվեց լուծումը և ոչ թե հակառակը:

Վերցնենք մեր կարևոր խնդիրներից մեկը՝ արդյունաբերության զարգացումը: Մենք ապրում ենք ոչ թե XIX դարում կամ XX դարի սկզբում, երբ բոլոր պետություններում գրեթե զրոյից բնական ճանապարհով սկսվեց արդյունաբերության զարգացումը, այլ մի փոքր երկիր ենք և ապրում ենք այս արդեն զարգացած 20-րդ դարի վերջում: Եվ եթե մենք մեր առջև արդյունաբերության զարգացման խնդիր չդնենք, ինքնիրեն դա չի ստացվի: Այդ խնդրի լուծման համար հարկավոր են մեծ ջանքեր, շատ բարդ խոչընդոտների հաղթահարում. նույնիսկ ազատ մրցակցության արդյունավետ մեխանիզմը չի կարողանա ինքնուրույն լուծել խնդիրը: Հետևաբար արդյունաբերության զարգացումը նախ պետք է ձևակերպվի որպես կառավարության և հասարակության կողմից առաջադրված խնդիր:

Դրանից հետո անհրաժեշտ է նշել խնդրի լուծման մոտավոր ստանդարտ ճանապարհները: Բնական է, այս դեպքում միանգամից միտք է առաջանում՝ ջանքերը ուղղել արդյունաբերության որոշակի ճյուղերի զարգացման վրա՝ գիտակցելով, որ դրանք որպես շոգեքարշ կտանեն իրենց հետևից և մյուս ճյուղերը: Ակնհայտ է նաև, որ արդյունաբերության այդ ճյուղերի համար ներքին շուկայի պաշտպանվածություն, արտոնյալ պայմաններ են հարկավոր արտադրանքի արտահանման համար: Այդ ճյուղերի համար անհրաժեշտ է նպաստավոր հարկային, վարկային, ներդրումային պայմաններ ստեղծել: Ակնհայտ է նաև, որ պետք է լուծել շուկայի ընդլայնման խնդիրները՝ ոչ միայն կտրուկ բարձրացնելով ժողովրդի գնողունակությունը, այլ նաև մտնելով առևտրատնտեսական համագործակցության, ինտեգրացիոն պրոցեսների մեջ երկրների որոշ խմբերի հետ: Մեր պայմաններում անվիճելի է, որ խոսքն առաջին հերթին Ռուսաստանի է և ԱՊՀ-ի մյուս երկրների մասին է: Այս բոլոր լուծումներն ակնհայտ են և տեսանելի:

Այժմ առաջանում է երրորդ խնդիրը. արդյունաբերության ո՞ր ճյուղերն ընտրել, ինչպիսի՞ փոխշահավետ, ինտեգրացիոն փաստաթղթեր կնքել Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների հետ, ինչպե՞ս փոքր քայլերից բաղկացած ծրագիր կազմել և սկսել այն իրականացնել: Դրա համար անհրաժեշտ է իշխանության շրջանակներում համախմբել բանիմաց, խելոք մասնագետների: Այն, ինչից շարունակ խուսափում են ներկա իշխանությունները, որովհետև դա հակասում է իրենց առջև դրված հիմնական խնդրին՝ ամեն գնով պահել իշխանությունը, և ցանկացած խելոք, ինքնուրույն մտածող մարդ իշխանության վերին էշելոնում ընդունվում է որպես վտանգավոր մրցակից: Այդ ամենը հանգեցրել է նրան, որ չնայած իշխանության վերին շերտերում կան և՛ խելոք, և՛ անխելք մարդիկ, բայց ինքը՝ մեր պետության ներկա ղեկավարությունը, միջակության ղեկավարություն է, և այսպիսի բարդ խնդիրներ նրանք նույնիսկ ցանկանալու դեպքում չեն կարող լուծել:

Եթե այս ամենը արդեն կա, առաջանում է չորրորդ կարևոր՝ ֆինանսական աղբյուրների խնդիրը, առանց որի այս ծրագրերը կմնան թղթի վրա գրված բարի ցանկություններ, ոչ ավելին: Հնարավոր ֆինանսական աղբյուրները երեքն են:

Առաջինն այն միջազգային կազմակերպություններն են (օրինակ՝ Համաշխարհային բանկը), որոնք ոչ թե տնտեսական շահ ստանալու դիտավորություն ունեն, այլ ավելի շուտ քաղաքական նպատակներ են հետապնդում: Այդպիսի ֆինանսական կազմակերպությունները, մի կողմից, ձգտում են Հայաստանում լուծել հետևյալ խնդիրները. նպաստել, որպեսզի Հայաստանը դառնա ժողովրդավարական պետություն, որի տնտեսությունը հիմնված լինի մասնավոր սեփականության, ազատ մրցակցության վրա, և

ժողովրդի համար ապահովված լինի գոնե նվազագույն բարեկեցություն: Այս հարցերում նրանք առանձնապես չեն խորանում մեր ժողովրդի առանձնահատկությունների մեջ: Չեն շտապում, ժամանակը մեծ նշանակություն չունի իրենց համար, և հիմնականում առաջնորդվում են ստանդարտ, ուրիշ երկրներում օգտագործված, մեզ հետ գրեթե առնչություն չունեցող ծրագրերով: Մյուս կողմից՝ այսպիսի համաշխարհային ֆինանսական կազմակերպությունները փորձում են իրենց վերահսկողության ու ազդեցության տակ պահել այն երկիրը, որի զարգացումով են զբաղված, առանձնապես շահագրգռված չեն բարդ ծրագրերի իրականացմամբ, որոնք կզարգացնեն տվյալ պետության արդյունաբերական ներուժը՝ առաջացնելով տվյալ ժողովրդի մեջ, իրենց կարծիքով, ավելորդ հավակնություններ: Գտնվելով այս երկու մոտեցումների արանքում, լուրջ բանակցություններ վարելով, փոխզիջումների գնալով այս ֆինանսական կազմակերպությունների հետ՝ հնարավոր է մասամբ ապահովել այն ինվեստիցիաները, որոնք պետք են մեր երկրի արդյունաբերությունը զարգացնելու համար: Ցավոք, մեր իշխանությունները, որոնց հիմնական նպատակը իշխանության գլուխ լինելն է, հալած յուղի տեղ են ընդունում այն ամենը, ինչ իրենց թելադրում են համաշխարհային ֆինանսական կազմակերպությունները, և տրվում են նրանց՝ չհամարձակվելով ռիսկի ենթարկել հարաբերությունները: Դա ոմանք ընկալում են որպես մեր իշխանությունների կողմից տարվող խելոք քաղաքականություն և ապացույց, որ նրանք լավ հարաբերություններ ունեն ազդեցիկ ուժերի հետ: Տրվելով հեշտ է ստեղծել բարեկամական հարաբերություններ: Բայց հարց է ծագում՝ դա օգուտ բերու՞մ է մեր պետությանը:

Երկրորդ ֆինանսական աղբյուրը մասնավոր ներդրումներն են, որոնք շահ ստանալու նպատակ են հետապնդում: Մեր երկիրն այժմ նպաստավոր չէ այդպիսի ներդրումների ներգրավման համար: Խոսքը միայն որոշ օրենքների բացակայության մասին չէ, այլ այն մասին, որ այս համընդհանուր կաշառակերության և ամենաթողության պայմաններում ոչ մեկը չի համարձակվի լուրջ ներդրումներ անել մեր տնտեսության մեջ: Եվ այս մթնոլորտը Հայաստանում ներկա իշխանությունները փոխել չեն կարող, որովհետև դա հակասում է իրենց անձնական շահերին: Այս մթնոլորտից օգտվելով է, որ իրենք և իրենց բարեկամները գերեկամուտներ են ստանում և կամավոր դժվար թե հրաժարվեն դրանից: Այս վիճակից դուրս գալու համար ոչ միայն պետք են նոր և ժողովրդի շահերին նվիրված իշխանություններ, այլև պետության կառավարման այնպիսի համակարգ, այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն տան ժողովրդին, հասարակությանը վերահսկելու գործունեությունը և անհրաժեշտության դեպքում Ազգային ժողովի միջոցով միջամտել այդ աշխատանքներին:

Երրորդ ֆինանսական աղբյուրը սեփական ֆինանսական միջոցներն են, որոնք շատ նորաստեղծ զարգացող պետություններում սկզբնական շրջանում առաջանում են հիմնականում հումքի վաճառքից: Մեր պայմաններում այդ ոլորտն էլ է մտած ստվերային տնտեսության մեջ, որևէ հիմնավոր պետական ծրագիր այդ ուղղությամբ չի մշակվում: Եթե լուրջ հաշվենք մեր բյուջեն, այն չի բավականացնի նույնիսկ մեր բանակը կարգին պահելու, ուր մնաց ուրիշ նպատակների համար: Եվ Հայաստանի ընդերքի արդյունավետ օգտագործումը, ստվերային տնտեսության վերացումը, ձեռներեցությամբ զբաղվողների համար նպաստավոր պայմանների ստեղծելը կարող են էապես նպաստել պետական եկամուտների, ֆինանսների կտուկ աճին:

Բայց նույնիսկ ֆինանսական ապահովումը դեռ չի լուծում խնդիրը: Պետք է օրենքների խստիվ պահպանում, առանց որի որևէ զարգացում հնարավոր չէ:

Հասարակական կյանքի կարգավորում է պետք՝ հիմնված համամարդկային, ազգային գաղափարների վրա, պետք է օրինականության, արդարության, բարոյականության չափանիշներով առաջադրվող ազատ քաղաքացիական հասարակության ձևավորում: Այժմ այն ժամանակաշրջանը, երբ տնտեսության զարգացման հիմնական և միակ խթանիչը համարվում էր անհատի կողմից անձնական շահի հետապնդումը, և դրա վրա էր կառուցվում ամբողջ տնտեսական համակարգը, կոչվում է տնտեսական ռոմանտիզմի ժամանակաշրջան: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը վաղուց ի վեր արդեն հրաժարվել է այդ տեսակետից: Մարդը շատ ավելի բարդ էակ է, շատ ավելի բարդ և բազմազան խթանիչներ ունեցող, որոնց մեջ մտնում են և՛ արժանապատվության զգացումը, և՛ պրոֆեսիոնալիզմի զարգացման անշահախնդիր ձգտումը, և՛ հասարակության կողմից գնահատվելու հարցը, և՛ ուրիշներին պետք լինելու գիտակցումը: **Եվ այդ տեսակետից ազգային «թիմով» համաշխարհային մրցակցությանը մասնակից լինելու գիտակցումը, օրինականության, բարոյականության և արդարության չափանիշներով ապրող հասարակության անդամ լինելը կարևոր գործոններից**

են, որոնք անձնական շահի հետ արթնացնում են մարդու ստեղծագործական ոգին՝ առաջ մղելով և զարգացնելով պետությունը, տնտեսությունը, համաշխարհային քաղաքակրթությունը:

Մինչև 1988 թվականը մենք գնում էինք մի ճանապարհով, որը խաչմերուկներ չուներ, 1988 թվականից մինչև այժմ մեր ճանապարհին կային բազմաթիվ խաչմերուկներ, և անընդհատ պետք էր որոշել, թե ճանապարհներից որն ենք ընտրում: Միշտ չէ, որ ընտրում էինք լավագույնը. երբեմն ընտրվում էր վատագույնը: **Այժմ՝ 1996 թվականի սեպտեմբերին, մենք կրկին հայտնվելու ենք խաչմերուկում և պետք է ընտրենք ճանապարհներից մեկը: Հետո երկար ժամանակ այլևս խաչմերուկի չենք հանդիպի: Ճակատագիրը մեզ տալիս է հնարավորություններ, մենք ենք որոշում՝ ինչպես օգտվել այդ հնարավորություններից, մենք, և ուրիշ ոչ ոք:**

Վ. Մանուկյանի հեռուստաելույթը
1996 թ., 1 սեպտեմբերի
«Այժմ», 1996, 4-10 սեպտեմբերի

ՈՒՆԵՆԱՆՔ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՈՐՏԵՂ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՉԻ ՎԱԽԵՆՈՒՄ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ

Մի ընդհանուր զգացում է բոլորիս համակել՝ վախը: Վախը վաղվա օրվա, ապագայի հանդեպ, վախը ծերությունից, անօգնականությունից, գործազրկությունից, վախը, որ աշխատավարձով ապրել չես կարող, որ երեխայիդ կտանեն բանակ, անդամալույծ կդարձնեն, հետ կուղարկեն, վախը, որ եթե գործ սկսես, կգան գլխիդ կտան, փողդ կտանեն, վախ, որ դու միանգամայն անպաշտպան ես: Եվ այդ վախը երևի այն հիմնական զգացողությունն է, որով հագեցած է մեր հանրապետության մթնոլորտը: Եվ դրա պատճառով է, որ շատերը դառնում են անտարբեր, ապագա չտեսնելով՝ լքում են Հայաստանը: Այս վախը նոր երևույթ չէ. տասնյակ տարիներ աշխարհում մրցում էին երկու համակարգ՝ համայնավարական պետությունը և արևմուտքը: Եթե Խորհրդային Միությունը հպարտանալու մի բան ուներ, ապա դա այն էր, որ մարդիկ չէին վախենում ապագայի համար, գոնե 60-ական թվականներից հետո: Մարդիկ դժգոհ էին կաշառակերությունից, դժգոհ էին, որ չեն կարող երկրից դուրս գալ, դժգոհ էին, որ չեն կարող ձեռներեցությամբ զբաղվել, որ ազգային խնդիրներ չեն լուծվում, բայց մարդիկ ապագայի նկատմամբ վախ չունեին: Արևմուտքում արդյունաբերությունն ավելի արդյունավետ էր, մարդիկ ավելի ազատ էին, բայց այնտեղ վախ կար ապագայի նկատմամբ: Սակայն պետք է նկատեմ, որ վերջին տասնամյակներում Արևմուտքում ևս այդ վախը վերացավ: Ստեղծվեցին բազմաթիվ սոցիալական ծրագրեր, երկրները զարգացան, և հիմա այնտեղ էլ՝ Ֆրանսիայում թե Ամերիկայում, մարդը չի վախենում իր ապագայի համար: Այն վախը, որ ունեին գործազրկությունից, որ հիվանդանալիս բուժվելու համար փող պետք է վճարեին, անցել է, որովհետև իրականացվեցին որոշակի ծրագրեր: Տարբեր երկրներ գնացին տարբեր ճանապարհներով. Շվեդիան՝ սոցիալական ծրագրերն ավելի խորացնելով, Միացյալ Նահանգները՝ իրենց արդյունաբերությունն ավելի արդյունավետ դարձնելով ու հարստանալով: Բայց բոլորն էլ հարցը լուծեցին: Մեր երկրում լավագույն ժամանակաշրջանը 70-ականներին էր, երբ արդեն լուծվել էր այդ հարցը: Ընդերքից հանում էինք էժան նավթը, վաճառում էինք արտասահմանում և դրանով պահում մեր ժողովրդին: Նավթի գները փոխվեցին, արտահանումը դժվարացավ, և ԽՍՀՄ-ը հայտնվեց անելանելի վիճակում: Երևաց, որ անարդյունավետ արդյունաբերությամբ հնարավոր չէ ապահովել ո՛չ տնտեսության զարգացումը, ո՛չ էլ մարդկանց ապագան: Սկսվեցին վերափոխումները, նոր տնտեսական ծրագրերի մշակումը, շարժումները, և Խորհրդային Միությունը փլուզվեց: Դուք այժմյան տրամադրությամբ մի նայեք, մենք ստացանք այն, ինչի մասին դարերով երազում էինք, ունեցանք անկախություն: Տեսանք, որ ժողովրդի հետ միասին կարող ենք ապահովել ներքին ազատություններ, կարող ենք Հայաստանում զարգացնել մասնավոր ձեռներեցությունը, ինչի

հակումն ուներ մեր ժողովուրդը: Սակայն ժամանակն անցավ, և կամաց-կամաց մեր մեջ բնակվեց վախի զգացումը: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս ազատվել դրանից: Այդ է պատճառը, որ մարդկանց մեծ մասը հետ է նայում: Բայց հետևում դատարկություն է: Հիմա պետք է առաջ նայել ու տեսնել՝ իսկապե՞ս մեր ժողովրդին ապահովելու հնարավորություններ կան: Որովհետև շատ դժվար է կոչ անել, թե մենք պետք է հզոր պետություն լինենք, պետք է իրականացնենք մեր ազգային նպատակները: Կոչ անել այն ժողովրդին, որը սոված է, որը ապագա չի տեսնում և վախենում է ապագայից: Մեր կարծիքով, նախ անհրաժեշտ է ընթանալ որոշակի տնտեսական, քաղաքական ծրագրերով, որոնք հնարավորություն կտան վստահ նայել ապագային:

Հարցերի առաջին փունջը քաղաքականն է: Երբ ասում ենք ժողովրդավարություն, թվում է՝ պայքարում ենք վերացական գաղափարների համար, մարդուն Աստծո շնորհած ազատությունը ապահովելու համար, մարդկանց կարծիքը ապահովելու համար: Բայց կա ավելի խորը մի երևույթ էլ, այն համակարգը, որը հիմա իշխում է Հայաստանում: Միապետական համակարգի պայմաններում երբևիցե այս խնդիրները չեն կարող լուծվել: Իսկ ինչի՞ շնորհիվ էին դրանք լուծվում արևմուտքում: Ժողովուրդն անընդհատ պայքարի մեջ էր: Մենք երբեմն ասում ենք՝ մի անգամ ելանք պայքարի, ի՞նչ արդյունք տեսանք, որ նորից ելնենք: Բայց մոռանում ենք, որ աշխարհի ժողովուրդներն իրենց ամենօրյա գործունեությունում պայքարի մեջ են, պայքարի մեջ են արհմիությունների միջոցով աշխատավարձերի բարձրացման համար, պայքարի մեջ են ընտրությունների միջոցով: Ընտրում են այն պատգամավորներին, վարչապետերին, նախագահներին, որոնք ավելի շատ խոստումներ են տալիս ժողովրդին, մի մասը կատարում են, մի մասը՝ ոչ, բայց չկատարելու համար պատժվում են: Ղեկավարի պարկեշտությունն, իհարկե, կարևոր է, բայց էականը համակարգն է: Մեր կարծիքով, Հայաստանի համար լավագույնը ոչ թե այսպիսի նախագահական համակարգն է, այլ պառլամենտական հանրապետությունը: Ընտրությունները պետք է լինեն արդար, որովհետև ընտրությունների միջոցով լուծվում է մի կարևոր հարց, ընտրություններով ժողովուրդն ասում է՝ սրան, սրա արածը ընդունում եմ, թողնում եմ տեղում, չեմ ընդունում՝ հանում, տեղն ուրիշին եմ նշանակում: Ընտրությունները ժողովրդի կադրային քաղաքականությունն են: Մինչև Հայաստանում չլինեն արդար ընտրություններ, մինչև չլինի իսկական պառլամենտական համակարգ, մինչև հասարակական կարծիքը իշխանավորների համար նշանակություն չունենա, որևիցե հարց Հայաստանում լուծել հանրավոր չի լինի: Իսկ այսպիսի թագավորական համակարգը, ըստ որում, երբ կա կեղծիքով ընտրություններ անցկացնելու ցանկություն, մարդկանց կարիք ունի, որոնց վրա պետք է հենվի: Նա պետք է հնարավորություն տա այդ մարդկանց կողոպտել, փող աշխատել, որ իրեն հավատարիմ լինեն:

Միայն տնտեսական հարցերով չի լուծվելու խնդիրը:

Ուզում եմ մինչև տնտեսական հարցերին անցնելը խոսել բանակի մասին: Մեր կուսակցության կարծիքով, պետք է անցնել պրոֆեսիոնալ բանակի: Սա նշանակում է, որ բանակը մասնագիտություն է, աշխատանք. մարդիկ պայմանագիր են կնքում, աշխատում են՝ ստանալով բարձր աշխատավարձ: Դա թանկ հաճույք է, սակայն կլինի մարտունակ բանակ: Ազգային տեսակետից շատ հեշտ է ասել, որ յուրաքանչյուրի պարտքն է ծառայել հանուն հայրենիքի, բայց ներկա վիճակում ես մարտունակ, ուժեղ բանակ ունենալու և ներքին կարգուկանոնը ապահովելու ելքը տեսնում եմ միայն պրոֆեսիոնալ բանակի գոյության պայմաններում:

Ինչպես և ողջ աշխարհում, պետք է լինեն մարդու ծերությունն ապահովող սոցիալական ծրագրեր, առողջապահության հետ կապված սոցիալական ծրագրեր: Բայց հարց է առաջանում՝ չէ որ սոցիալական ծրագրերի իրականացման համար միջոցներ են հարկավոր: Միջոցների հայթայթման առաջին ուղին, այսպես կոչված, ստվերային տնտեսությունն է, որը որոշ հաշվարկներով Հայաստանում 70% է կազմում: Սա նշանակում է, որ ստվերայնությունից ազատվելու դեպքում մեր բյուջեն կարող է 2-3 անգամ մեծանալ: Երկրորդ ուղին սեփականաշնորհումն է: Այս գումարները կարելի էր օգտագործել ավանդների համար, որոնց վճարումը պարտադիր ծրագիր է: Մի հիմնահարց էլ կա. գործարանները սեփականաշնորհվեցին, բայց ինչ է, սկսեցին ավելի լա՞վ աշխատել: Գործարանները պետք է վաճառվեն նրանց, ովքեր ներդրումների միջոցով արտադրությունը եկամտաբեր դարձնելու հնարավորություն ունեն: Այսինքն՝ սեփականաշնորհումը անհիմաստ ձևով անցկացվեց, մինչդեռ այն կարող էր նպաստել բյուջեի ավելացմանը:

Մեր տառապանքների պատճառը սեփականաշնորհումը չէ. իսկապես պետք է լինեն պետության խնամակալության տակ աշխատող գործարաններ և մասնավոր գործարաններ: Տնտեսության արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է գործի խելամիտ կազմակերպումից: Ընդ որում ժողովուրդը պետք է կարողանա վերահսկել, բայց մեր պայմաններում նման վերահսկողություն գոյություն չունի:

Հայաստանում հայտարարված տնտեսական ծրագիրը շուկան է: Իշխանավորները սրան վերաբերվում են ինչպես կախարդական փայտիկի. շուկա սարքեցինք՝ ինքնիրեն ամեն ինչ կուղղվի: Բայց երբ դրամը պահում ես կայուն, հայտարարում ես բաց դռների քաղաքականություն, շուկան չես պաշտպանում, արդյունաբերության մեջքին չես կանգնում, անհրաժեշտ արդյունաբերական ձեռնարկների համար արտոնություններ չես սահմանում, ապա աշխարհի հետ մրցակցության դուրս գալիս կտապալվես:

Մեր պետությունը պետք է արդյունաբերական լինի, մեկ-երկու ճյուղ վերցնի իր հովանավորության տակ, նրանց համար սահմանի հարկային, վարկային արտոնություններ, տվյալ ապրանքի շուկայի պաշտպանությունը ապահովի:

Հայաստանում քայքայվում է կրթական համակարգը, որովհետև այսպիսի տնտեսության պայմաններում այն ուղղակի պետք չէ:

Միայն հովանավորությունը հարցը չի լուծի, պետք է կարողանալ նաև ներդրումներ ներգրավել, ինչը շատ դժվար գործ է: Պետության արտաքին քաղաքականությամբ լուծվում են տնտեսական հարցեր: Ներդրումների, գործընկերներ գտնելու համար մի պայման էլ է հարկավոր: Չնայած նրան, որ Հայաստանում շուկան հռչակվել է, իրականում այն չկա: Տեսականորեն կա, գործնականում չկա: Որովհետև մրցակցությունն ազատ չէ: Պետությունը պետք է ստեղծի այնպիսի իրավական դաշտ, այնպես պետք է պահպանվեն Հայաստանի օրենքները, այնպիսի կարգ ու կանոն պիտի լինի պետությունում, որ մարդիկ վստահորեն ներդնեն իրենց գումարները պետության զարգացման համար: Դրա շնորհիվ կառաջանան նոր աշխատատեղեր, կնվազի գործազրկությունը: Բայց ներդրումներից, հովանավորությունից բացի, պիտի կարողանաս արտադրանքը դրսում վաճառել: Մենք՝ որպես փոքր պետություն, մեր արդյունաբերությունը չենք կարող զարգացնել, եթե չմասնակցենք ինտեգրացիոն գործընթացներին: Եվ դրանք բնական ինտեգրացիոն գործընթացներ են նախկին Խորհրդային Միության հանրապետությունների հետ:

Հետևաբար սոցիալական ծրագրերն իրականացնելու համար հարկ են հետևյալ տնտեսական միջոցները. 1. վերացնենք ստվերային տնտեսությունը, 2. դադարեցնենք այս ձևով սեփականաշնորհումը, դա հանցագործություն է, 3. հայտարարենք, որ մենք արդյունաբերական պետություն ենք, և պետությունը պետք է կարողանա պլանավորման փուլ մտցնել, 4. ապահովենք ներդրումներ, 5. ներգրավվենք ինտեգրացիոն գործընթացներում: Միայն այս պայմաններում աշխատատեղեր կունենանք, ժողովուրդը բարձր աշխատավարձ կստանա, և բյուջեն կկարողանա սոցիալական ծրագրեր իրականացնել: Երբեմն հարց է առաջանում՝ նստենք իշխանավորների հետ, խելք-խելքի տանք, և եթե խելոք ծրագրեր են, թող ներկա իշխանություններն այդ ծրագրերն իրականացնեն, էլ ի՞նչ իմաստ ունի պայքարը իշխանության համար, ընտրությունները և այլն: Բայց ամեն մի իշխանավոր ունի իր ոճը և ուրիշների ասելով՝ այն չի փոխի: Մանավանդ որ մեր կողմից առաջարկվող ծրագրերն էապես սահմանափակում են իշխանավորների իշխանությունը, նրանց եկամուտները: Բնական է, որ իշխանությունները կամավոր դրան չեն գնում: Եվ ծագում է ընտրությունների հարցը: Հուլիսի 5-ից հետո ընտրությունների մասին խոսելիս ասում եմ՝ միևնույն է, պետք է կեղծվի, ինչ իմաստ ունի գնալ մի գործի, որը նախապես հայտնի է, կեղծվելու է: Ժողովուրդն այս վիճակից դուրս գալու ի՞նչ ուղիներ է տեսնում: Ոմանք ասում են՝ թող ժողովրդավարությունը որպես սկզբունք հռչակած երկրներից դիտորդներ գան, տեսնեն՝ ինչ անօրինական ընտրություններ են տեղի ունենում, և փոխեն վիճակը: Ասեմ, որ երբ արևմուտքի ներկայացուցիչները եկան Հայաստան, մենք կորցրեցինք մեր արյունով, մեր պայքարով ձեռք բերած ազատությունները: Նրանք այստեղ մարդկանց բաժանում են դեմոկրատի և ոչ դեմոկրատի, իրենց երկրում նման բան չեն անում: Եթե Քլինթոնին սահմանափակող օրենքները չլինեին, նա բռնակալ կդառնար: Եթե սահմանափակում չլինի, երևի ցանկացած մարդ էլ կաշխատի ընդլայնել իր իշխանությունը: Խոսքը պետք է ժողովրդավարական մեխանիզմներ ստեղծելու և ոչ թե դեմոկրատներին պահպանելու մասին լիներ: Այսինքն՝ Արևմուտքը, Հայաստան գալով, ուժեղացնում է ուժեղին, մինչդեռ ժողովրդավարությունը հավասարակշռություն է:

Մարդկանց մյուս խումբը հույսը կապել է Ռուսաստանի հետ: Ռուսաստանին պետք չէ Հայաստանի զարգացումը, նա այնքան էլ շահագրգռված չէ Հայաստանի ժողովրդավարությամբ, դա մեր լուծելու խնդիրն է, Ռուսաստանին ձեռնտու է Հայաստանում իրեն հարմար իշխանություն ունենալ, քան հաշվի նստել ողջ հայ ժողովրդի հետ: Ոչ մեկին, բացի մեզնից, անհրաժեշտ չէ Հայաստանի հզորացումը, իսկ ժողովրդավարությունը հզորացման աղբյուրն է:

Մեր ազգային խնդիրները լուծելու, աշխարհում սփռված հայության հետ մրցակցության գնալու, ինչ-որ արդյունքների հասնելու, Ղարաբաղը պահպանելու, Հայ դատի խնդիրների մասին խոսելու համար նախ պետք է ունենանք պետություն, որտեղ ժողովուրդը չի վախենում ապագայի համար:

Վ. Մանուկյանի ելույթը հանրահավաքում,
Ազատության հրապարակ,
1996թ. , սեպտեմբերի 6

ՎԱԽԵՑԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ

Ուրախալի օր է այսօր, ազգային միասնության օր: Մեզ հաջողվեց համախմբվել մի խմբի մեջ՝ մի կողմ թողնելով մեր անձնական, կուսակցական շահերը, համախմբվել իրոք մի հզոր թիմի մեջ:

Մենք հպարտ ենք, որ այս թիմի մեջ է Դաշնակցությունը: Մի կուսակցություն, որ Հայաստանում իր շարքերի մեջ ներգրավել է բազում լավագույն տղաների, ովքեր անձնվիրաբար ծառայել են ժողովրդին և մարտնչել Արցախում: Մի կուսակցություն, որ կապահովի Հայաստանի հարաբերություններն աշխարհի բազմաթիվ երկրների հետ, որովհետև ՀՅ Դաշնակցությունը հարաբերություններ ունի թե՛ այդ երկրների ղեկավարների, թե՛ հայ գաղթօջախների հետ:

Մենք հպարտ ենք, որ մեր թիմի մեջ են Պարույր Հայրիկյանը և ԱԻՄ-ը: Մի մարդ, որ իր ամբողջ կյանքը նվիրել է ժողովրդին: Մի անձնավորություն, որ ճանաչված և հարգված քաղաքական գործիչ է ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի բազում երկրներում:

Մենք հպարտ ենք և ուժեղ, որ մեզ հետ է Արամ Սարգսյանը: Մի անհատ, որի ղեկավարած կուսակցության մեջ կան բազմաթիվ հանրահայտ մտավորականներ, իսկ մեր երկրի ապագան բոլոր դեպքերում կապված է մտավորականության հետ:

Մենք հպարտ ենք, որ մեր թիմում է Լենսեր Աղալովյանը: Մի անհատ, որ 1988-ից սկսած հետևողականորեն պայքարում է հանուն Արցախի, և որին մենք վաղուց ենք ճանաչում:

Կան բազում կազմակերպություններ, որ մեզ հետ են: Բայց ես, այնուամենայնիվ, ուզում եմ հատուկ մատնանշել ՍԻՄ-ը: Մի կազմակերպություն, որտեղ համախմբված են իմ ճանաչած ազնվագույն, ժողովրդին նվիրված մարդիկ, ում ոչ մի բան չկոտրեց, ովքեր դիմացան բոլոր փորձություններին և շարունակելով մնալ էլիտար կուսակցություն՝ այսուհետ էլ աշխատելու են ի շահ ժողովրդի:

Պաշտոնական լուրը հայտնեցինք այսօր: Բայց վերջին օրերին, երբ շրջում էինք երկրով մեկ, հանրահավաքներին, փողոցում, ժողովրդի մեջ նորից փայլատակող աչքեր էինք տեսնում, արթնացող հույս, որ իրավիճակը փոխվելու է, և նոր ապագա ենք կերտելու: Հույս, հավատ արթնացավ ժողովրդի մեջ, և այդ հույսով ու հավատով մենք հաղթելու ենք:

Ատելությունը չէ, վրեժխնդրությունը չէ, որ մեզ համախմբեց: Մեզ համախմբողը այն խոր անհանգստությունն է, որ ունենք մեր ժողովրդի, մեր ազգի, մեր պետության ապագայի հանդեպ: Դա ստիպեց, որ համախմբվենք ամբողջ հասարակությունով ու միասնական պայքարենք:

Ինչու՞ եղավ այս ամենը: Տարիներ առաջ մենք անկախություն էինք երազում, որ մեզ պարտադրված պատերազմում հաղթանակի հասնենք, որ խաղաղություն լինի մեր երկրում: Եվ մենք հասանք այդ նպատակներին, և մեր ամբողջ ժողովուրդն էր մարտնչում դրա համար, ու ոչ միայն մենք էինք պայքարում, այլև՝ այսօրվա իշխանավորները: Եվ նրանց ժողովուրդը սիրում էր, վստահում էր: Չմոռանանք դրա մասին: Բռնի ուժով չեկան, ժողովրդի սիրով եկան: Բայց իրենք իրենց վեր դասեցին մեր ժողովրդից, մեր հասարակությունից: Մենք չտեսանք նրանց մեջ սեր ժողովրդի հանդեպ: Մենք տեսանք անպարկեշտություն, բարբարոսություն, մեծամտություն, ինքնասիրահարվածություն, և հասարակությունը խռովեց նրանցից: Մենք երես թեքեցինք նրանցից: Նրանք փորձեցին տնօրինել ոչ միայն պետության, այլև՝ բոլորիս բախտը, համայն հայության ճակատագիրը: Նրանք իրենց շոշափուկներով փորձեցին թափանցել և Սփյուռք, ամենուր փորձեցին մարդկանց խանգարել՝ ապրելու և արարելու: Եվ դա է, որ հանգեցրեց արդյունաբերության քայքայման, թալանի, կրթական համակարգի փլուզման: Եվ հասարակության մեջ տարածվեց զոռբայություն, անպարկեշտություն, ստորաքարշություն: Չէր պատժվում չարը, չէր խրախուսվում բարին: Եվ հասարակությունը, եթե այդ վիճակում մնա, որևէ առաջընթաց չի ունենա: Մեր հայրենակիցներից շատերը թողեցին գնացին: Նոր իշխանության առաջին գործն է լինելու կոչը հայրենակիցներին. վերադարձեք, հայրենիքը ձեր կարիքն ունի:

Մենք ունենք հստակ նպատակներ: Երևի իմաստ չունի մանրամասն ներկայացնել դրանք: Նախ պետք է ստեղծենք դատական համակարգ, որը ենթարկվի ոչ թե իշխանություններին, այլ՝ միմիայն օրենքին, ստեղծենք պետություն, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, որտեղ հասարակությունը ապրում է արժանապատվության, օրինականության, պարկեշտության չափանիշներով:

Մենք հետամուտ ենք լինելու Ղարաբաղի և՛ իրական, և՛ իրավաբանական անկախությանը: Մենք բոլոր միջոցներով կջանանք պահպանել խաղաղությունը, կշարունակենք համագործակցությունը համաշխարհային կազմակերպությունների, մյուս երկրների, մեր հարևանների հետ:

Մեր տնտեսության հիմքում պետք է ընկած լինի արդյունաբերության վերականգնումը: Եթե մենք չդառնանք արդյունաբերական երկիր, ապա դատապարտված է և՛ գիտությունը, և՛ կրթությունը, և՛ մշակույթը, դատապարտված է կործանման ամեն ինչ: Տնտեսական մրցակցության մեջ ով հաղթի, նա էլ կկարողանա թելադրել: Եվ դրա հիմքում ընկած է արդյունաբերության զարգացումը:

Երկրորդ հարցը գյուղատնտեսությունն է: Այն պետք է լինի ոչ միայն արդյունավետ, այլև վայելի պետության հովանավորությունը, և այդ ոլորտի աշխատողների եկամուտները պետք է կտրուկ աճեն:

Մեզ համար շատ կարևոր է մասնավոր ձեռներեցությունը, և ազատ մրցակցության ապահովման համար մենք ջարդելու ենք այսօրվա մաֆիոզ կլանները:

Նախորդ տասնամյակներում շատ էին բացասական երևույթները, սակայն մարդիկ վստահ էին ապագայի հանդեպ: Գիտեին, որ զավակները կրթություն կստանան, որ եթե հիվանդանան, անվճար կբուժվեն, որ կարող են երկու-երեք տարի գումար հավաքել ու գնալ հանգստանալու: Այդ ամենը կորավ: Եվ ժողովրդի մեջ առաջացավ վախ ապագայի հանդեպ: Վախեցած ժողովուրդը ստեղծագործ լինել չի կարող: Եվ միայն սոցիալական ծրագրեր իրականացնելով, կտրուկ բարձրացնելով աշխատավարձերն ու կենսաթոշակները՝ մենք կարող ենք ժողովրդի մեջ վերականգնել վստահությունը ապագայի նկատմամբ:

Եվ հաջորդը. մեր առաջադիմությունը պետք է հիմնվի մեր ավանդույթների և մշակույթի վրա: Բոլոր այն պետությունները, որոնք սկսեցին ամաչել իրենց ավանդույթներից, իրենց մշակույթը համարել հետամնաց, դատապարտվեցին փոշիացման, հետընթացի, կործանման: Եվ շահել են այն պետությունները, որոնք իրենց ավանդույթների, մշակույթի հենքի վրա են վերցրել և աշխատեցրել արևմտյան համակարգերը: Իսկ մեր «վերնախավում» կան մարդիկ, ովքեր ամաչում են, որ իրենք հայ են, մինչև անգամ 5-րդ դասարանի դասագրքերում չքացել է «հայ» բառը:

Յուրաքանչյուր սերունդ գնահատվում է նրանով, թե ինչ երկիր է ժառանգել և ինչ երկիր է հանձնում հաջորդ սերնդին: Մենք ստացանք բարգավաճող երկիր, որի վրա ցանկացանք ավելացնելՂարաբաղ և անկախություն, ժողովրդավարություն, ազատություն, մարդու

իրավունքներ: Մեր միասնության, մեր պայքարի նպատակն է նաև հաջորդ սերնդին թողնել ծաղկուն, հզոր Հայաստան: Ես համոզված եմ, որ այստեղ հավաքված թիմը կհաղթի:

Վ.Մանուկյանի ելույթը
Ազգային համաձայնության դաշինքի
հանդիսավոր նիստում
1996թ.սեպտեմբերի 10, Ֆիլհարմոնիայի դահլիճ
(մասնակի կրճատումներով)
«Իրավունք», 1996, 14-20 սեպտեմբերի

ԿԱՄՔ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ

Ի՞նչ ընթացք են ստացել նախագահական ընտրությունները Հայաստանում: Ի սկզբանե մեզ հայտնի էր, որ իշխանություններն ամեն գնով պետք է ձգտեն պահպանել իրենց իշխանությունը, դա իրենց նպատակն է եղել տարիներ ի վեր, և նրանք այդ ապացուցեցին հուլիսի 5-ի ընտրությունների ժամանակ: Բայց մյուս կողմից հուլիսի 5-ը շատ բացասական տպավորություն թողեց միջազգային հանրության վրա. էապես սահմանափակեց մեր երկրի, իշխանությունների հնարավորությունները միջազգային ասպարեզում: Եվ ձգտելով մնալ իշխանության՝ նրանք այնուամենայնիվ նպատակ ունեն, կրկնելով Ռուսաստանի օրինակը, արդար ընտրություններով իսկապես ստանալ օրինական իշխանություն: Ոչ օրինական իշխանությունը սարսափելի կլիներ իրենց համար ոչ միայն միջազգային ասպարեզում, այլև մեր ժողովրդի աչքերի առջև այդպիսի բան անելը էապես սահմանափակում է նրանց հնարավորությունները: Նրանք վստահ էին, որ արդար ընտրություններով նորից կընտրվի Լևոն Տեր-Պետրոսյանը: Ի՞նչ էր ընկած այդ կարծիքի հիմքում:

Առաջինը՝ ժողովրդի մեջ տարածված էր այն կարծիքը, թե եթե ոչ Լևոնը, ապա ո՞վ: Այսինքն՝ ժողովուրդն այլընտրանք չէր տեսնում և Լևոն Տեր-Պետրոսյանին ընդունում էր որպես չարյաց փոքրագույնը:

Երկրորդը՝ իշխանությունները համոզված էին, որ հուլիսի 5-ից հետո, երբ ժողովրդի կամքը կոտրվեց, ժողովուրդը դժվար թե նորից ոտքի կանգնի և պայքարի: Այդ ամենը հաշվի առնելով՝ նրանք սկսեցին բավականին արդար պայքար՝ հնարավորություններ տալով բոլոր թեկնածուներին մրցելու հավասար պայմաններում: Մեր ներկայացրած ծրագրերը, ելույթները համոզիչ էին ժողովրդի համար, և ժողովուրդը կամաց-կամաց սկսեց արթնանալ այլընտրանքի հնարավորության գիտակցումով: Ժողովրդի մեջ աննկատելի սկսեց նաև հույս ու հավատ արթնանալ, որ Հայաստանում ինչ-որ բան հնարավոր է փոխել: Դա քիչ անհանգստացրեց իշխանություններին, որովհետև երկրորդ կարևոր հարցը՝ ժողովրդի կամքը բարձրացնելը, դեռևս լուծված չէր: Այդ ժամանակ նրանք փորձեցին իրենց նախնական ծրագրին ավելացնել մի նոր դրվագ: Ո՞րն էր այդ դրվագը:

Ի տարբերություն Ռուսաստանի՝ ի՞նչ է տեղի ունենում Հայաստանում: Ռուսաստանում Զյուգանովը ուներ որոշակի քանակությամբ ձայներ, և այդ մարդիկ անպայման գալու էին ընտրությունների: Մնացածներից ով որ գար, ուզեր-չուզեր ձայն էր տալու Ելցինին: Եվ Ելցինը շահագրգռված էր որքան կարելի է շատ մարդ բերել ընտրությունների և բարձրացնել ժողովրդի քաղաքական ակտիվությունը:

Հայաստանում հակառակն էր: Կան որոշակի մարդիկ, որոնք ձայնը տալու են Լևոն Տեր-Պետրոսյանին, նրանք անպայման գալու են ընտրությունների: Հետևաբար եթե մյուսների քանակը քիչ լինի, ապա Լևոն Տեր-Պետրոսյանի մարդկանց ձայները տոկոսով կգերազանցեն մյուսներին, և նա արդար ձևով ընտրված կլինի: Հետևաբար պետք է հուսահատություն առաջացնել ժողովրդի մեջ, անվստահություն: Եվ բամբասանքների, հեռուստատեսային հաղորդումների միջոցով փորձեցին անել այդ: Մեծ արդյունքներ դա չբերեց:

Այդ ժամանակ կատարվեց իրենց համար անսպասելիին՝ առաջացավ միասնական ճակատ իրենց դեմ, միասնական թեկնածու: Ստեղծվեց բավական հզոր թիմ, որի մեջ համախմբված է մտավորականության զգալի մասը Արամ Սարգսյանի և Լենսեր Աղալովյանի միջոցով: Ներգրավված է Դաշնակցությունը, որը տասնյակ երկրներում ունի իր հզոր կապերը տարբեր պետությունների տնտեսական և քաղաքական ղեկավարների հետ: Այդ թիմում է Պարույր Հայրիկյանը, որն իրեն փայլուն դրսևորեց միասնական թեկնածուի առաջադրման հարցում: Եվ դա մեծ ոգևորություն առաջացրեց ժողովրդի մեջ:

Ժողովուրդը կրկին դարձավ այնպիսին, ինչպիսին էր 1988-ին:

Այս վերջին օրերին մենք առավոտ կանուխ դուրս ենք գալիս և ուշ երեկոյան վերադառնում քաղաք՝ շրջելով և հանդիպում ունենալով տարբեր շրջաններում և քաղաքներում: Դուք չեք պատկերացնում՝ ինչ մեծ ոգևորություն է ժողովրդի մեջ, ինչ մեծ վստահություն, թե այս ամենը հնարավոր է փոխել:

Եվ իշխանությունները ընկան հիստերիկ վիճակի մեջ: Ի՞նչ պետք է նրանք անեն:

Իհարկե, հեռուստատեսությամբ նրանք անընդհատ ցույց են տալիս Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումները: Ի դեպ, ասեմ, որ շրջանների մեծ մասում նրան շատ վատ են ընդունել, այդ նկարահանումներն այնքան էլ չեն համապատասխանում իրականությանը: Սկսվում են խոսակցություններ, թե եթե չլինի Տեր-Պետրոսյանը, ապա կսկսվի պատերազմ, որը ծիծաղելի պնդում է: Մենք գտնում ենք, որ ամենակարևոր հարցը Ղարաբաղի անկախությունն է՝ ամեն գնով պահպանելով խաղաղությունը: Եվ մենք՝ այն մարդիկ, ովքեր առնչվել են պատերազմին և տեսել, թե դա ինչ սարսափելի է, ամեն գնով պետք է պահպանենք խաղաղությունը՝ գնալով քաղաքական բանակցությունների Ադրբեջանի հետ, մյուս երկրների հետ, որոնք շահեր ունեն այս տարածաշրջանում: Ավելին ասեմ, այս իշխանությունների մնալը հաստատ տանելու է պատերազմի, որովհետև պատերազմը լինում է այն դեպքում, երբ հակառակորդը դիմացը թույլ երկիր է տեսնում: Մենք այժմ Անդրկովկասում դառնում ենք թույլ երկիր, և օրեցօր մեր հարևանները առաջ են անցնում: Մենք կամաց-կամաց ունենում ենք թույլ տնտեսություն, թույլ պետություն, և բնական է, որ այդ հիմքի վրա կարող ենք ունենալ միայն ու միայն թույլ բանակ, որը դիմացինի համար քաղաքական լուծումների փոխարեն ռազմական լուծումներ փնտրելու գայթակղություն է:

Ցնցումների մասին: Մենք, միավորվելով հինգ կուսակցություններով, հստակ որոշել ենք՝ Հայաստանը հինգ կուսակցութոյունների պետություն չի լինելու, Հայաստանը լինելու է ամբողջ ժողովրդինը: Մենք ներգրավելու ենք կառավարության աշխատանքներում բոլոր այն մարդկանց, ովքեր գրագետ են, ունեն փորձ և պարկեշտ են՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Բայց բոլոր փոփոխությունները, որոնք կատարվելու են պետական կադրային համակարգում, պետք է լինեն դանդաղ, ոչ կտրուկ, առանց ցնցումների: Մենք մի անգամ ապրել ենք այդ ցնցումները 1990-91 թվականներին, և երևի Հայաստանում ոչ ոք ինձնից լավ չի պատկերացնում, թե դա ինչ է նշանակում, որովհետև ես այն ժամանակ վարչապետ էի: Այդ ցնցումներով իշխանության եկած շարժումը պետք է հետզհետե կարգավորեր Հայաստանի կյանքը, և դա հսկայական ջանքեր պահանջեց:

Իհարկե, մեր նպատակն է վերականգնել մեր ժողովրդի իրավունքները, ստեղծել հասարակություն, որը հիմնված լինի բարոյականության, արդարության և օրինականության վրա, հասարակություն, որի հիմքում լինեն մեր ազգային արժեքները: Բայց միաժամանակ մեր առջև որպես կարևոր խնդիր ենք դնում տնտեսական հիմնահարցերը:

Առաջինը արդյունաբերության վերականգնումն է: Արդյունաբերությունը նախորդ տասնամյակներում եղել է Հայաստանի ողնաշարը: Եվ առանց այդ ողնաշարի Հայաստանը դատապարտված է իսկապես գավառական, փոքր և թույլ պետություն լինելու: Երկրորդը ձեռներեցության զարգացումն է, որը Հայաստանում չկա: Մանր առևտուրը և ձեռներեցությունը տարբեր բաներ են: Իհարկե, մանր առևտուրը թող մնա, զարգանա, նպաստավոր պայմաններ կստեղծվեն առևտրի համար, բայց խոսքը ավելի խոշոր ձեռներեցության մասին է: Այժմ Հայաստանը 5-6 հոգի բաժանել են իրար մեջ, ցանկացած անհատ, որը կփորձի մի գործ դնել, դատապարտված է ոչնչացման (ես նկատի ունեմ ոչ ֆիզիկական, ուղղակի նրան հնարավորություն չեն տա աշխատելու): Դա էր պատճառը, որ հազարավոր հայեր, որոնք գնացին Հայաստանից և կուզենային վերադառնալ, ներդրումներ կատարել ու զարգացնել Հայաստանի տնտեսությունը, և՛ իրենք կօգտվեին, և՛ կօգտվեր պետությունը, չեն գալիս Հայաստան:

Մեզ համար շատ էական է պետական հովանավորությունը գյուղատնտեսությանը, առանց որի այն զարգանալ չի կարող: Եվ այդպես է ամբողջ աշխարհում, բոլոր երկրներում

գյուղատնտեսությունը գտնվում է պետության հովանավորության ներքո: Միայն այս ճանապարհով, վերացնելով ստվերային տնտեսությունը և թափ հաղորդելով տնտեսական զարգացմանը, կարելի է կտրուկ բարձրացնել բյուջեն, որը հնարավորություն կտա բարձրացնել կենսաթոշակները, բյուջետային աշխատողների աշխատավարձերը, լուծել սոցիալական հարցերը՝ կապված առողջապահության հետ, որպեսզի ցանկացած մարդ գիտակցի՝ ծերության օրոք նա դուրս չի շպրտվի: Հիվանդանալու դեպքում կապահովվի նրա բուժումը, երեխան մեծանա՝ ապահովված է նրա կրթությունը: Միայն այդպիսի պայմաններում մարդը, չունենալով վախ ապագայի նկատմամբ, կզբաղվի ստեղծագործական աշխատանքով:

Այս նպատակներն են մեզ համախմբել, և մենք համոզված ենք, որ կհաղթենք: Սոցիոլոգիական հարցումները, որոնք տալիս են հեռուստատեսությամբ կամ տպագրում են թերթում, ամբողջովին կեղծ են: Մենք հստակ գիտակցում ենք, որ արդար ընտրությունների դեպքում մենք կհաղթենք հենց առաջին փուլում: Այժմ իշխանությունները փորձում են աշխատեցնել այն մեքենան, որը տանում է կեղծիքների, բայց ես համոզված եմ, որ դա իրենց չի հաջողվի: Ժողովուրդը արթնացել է, ժողովուրդը կամենում է նոր կյանք: Իսկ կեղծիք անողների մեծ մասն էլ մեր ժողովրդի հարազատ զավակներն են, և շատ դժվար է գտնել նրանց, ովքեր հանուն մի քանի տասնյակ մարդկանց իշխանությունը պահպանելու կեղծիքներ անեն, գնան իրենց ժողովրդի դեմ:

Մենք հաղթելու ենք, սիրելի՛ ժողովուրդ, և մենք կունենանք մի պետություն, որտեղ ամեն մարդ կապրի արժանավայել կյանքով, ներքին հպարտությամբ, պաշտպանված, և կիմանա, որ իր համար աշխատելու ու ստեղծագործելու ազատ հնարավորություններ են ստեղծվել: Կզարգանա մեր արդյունաբերությունը, կառաջանան նոր աշխատատեղեր: Մենք մուրացկան ժողովուրդ չենք, ուրիշ պետությունների հումանիտար օգնությունը մեզ պետք չէ: Մենք կզարգանանք ու ինքներս ուրիշներին հումանիտար օգնություն կհասցնենք: Մեզ պետք է աշխատանք, և այդ աշխատանքի հիմքի վրա պետք է զարգանա Հայաստանը, որպեսզի կարողանանք ապրել բարեկեցիկ, երջանիկ կյանքով՝ ապահովելով մեր ծերունիների, հաշմանդամների, զոհված ազատամարտիկների ընտանիքների բարեկեցությունը: Դա մեր պարտքն է նրանց առջև:

ՀՀ.Նախագահի թեկնածու Վ. Մանուկյան
«Այժմ», 1996, 18-24 սեպտեմբերի

ԱՅՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԲՈԼՈՐԻՆՆ Է

Սիրելի հայրենակիցներ,

Հայաստանում հաստատվում է ոչ օրինական իշխանություն. ընտրություններով ակնհայտորեն չանցած, չընտրված նախագահ՝ հենված բիրտ ուժի վրա: Սա կատարվում է բացահայտ՝ ողջ համաշխարհային հասարակության առջև: Եվ եթե այնուամենայնիվ որոշ պետությունների ղեկավարներ շնորհավորում են Լևոն Տեր-Պետրոսյանին, դա դեռ չի նշանակում, թե ընդունում են ոչ օրինական ճանապարհով ընտրված իշխանությունը: Շնորհավորում են ոչ թե այն պատճառով, որ չգիտեն, թե ինչ է կատարվել Հայաստանում, այլ որովհետև այսօր չշնորհավորելը քաղաքական հետևանքներ կբերի, որոնցում այդ պետությունները շահագրգռված չեն:

Այս ամենը, իշխանավորների՝ հոգեկան հիվանդության հասնող ծգտումը՝ ցանկացած գնով մնալ իշխանության ղեկին, մեր ժողովրդին և մեր պետությունը դնում է շատ ծանր վիճակի մեջ՝ հղի վտանգավոր հետևանքներով ինչպես երկրի ներսում, այնպես էր միջազգային ասպարեզում: Մենք կորցնում ենք ոչ միայն համաշխարհային հասարակության հարգանքը՝ դժվարին կացության մեջ դնելով պետության արտաքին հարաբերությունները,

այլև զարգացման կարևորագույն գործոնները. ազատություն, օրինականություն, ժողովրդավարություն:

Գլուխ է բարձրացնում տականքը: Այս ամենը հանգեցնում է մեր տնտեսական ու պաշտպանական ուժի ակնհայտ թուլացման, և զարգացման մակարդակով մենք հետ ենք ընկնելու տարածաշրջանի պետություններից:

Այժմ գործադրվում է անհեթեթ ջանք՝ սեպտեմբերի 25-ի դեպքերը ներկայացնել իբրև պետական հեղաշրջման փորձ:

Իրականում նախորդող օրերին Երևանում տեղի էին ունենում խաղաղ ցույցեր ու երթեր, որոնց մասնակցում էին հարյուր հազարավոր մարդիկ՝ երկու պարզ պահանջով.

հեռուստաժամի տրամադրում ընտրություններում ժողովրդի վստահությանն արժանացած նախագահի թեկնածուին իր թիմակիցների հետ և ընտրությունների արդյունքների վերստուգում:

Հարյուր հազարավոր մարդիկ, պարզ օրինական պահանջներ: Իշխանությունների կողմից՝ ոչ մի արձագանք, բանակցությունների ոչ մի փորձ, ոչ մի փոխզիջում: Հակառակը՝ գրգռիչ հայտարարություններ հեռուստացույցով: Սեպտեմբերի 25-ին կրկնվեց նույնը: Մի խումբ պատգամավորներ՝ իմ ղեկավարությամբ, բանակցություններ էինք վարում ԿԸՀ-ի նախագահ Խաչատուր Բեզիրջյանի հետ պարզ առաջարկության շուրջ: Դրսում՝ այդ պահանջը պաշտպանող հարյուր հազար մարդ: Հանրապետության ղեկավարությունը, ակնհայտորեն տեսնելով ժողովրդի գրգռվածությունը, ոչ մի միջամտության փորձ չարեց, հույս ուներ, որ տեղի կունենան դեպքեր, բիրտ ուժի կիրառումը կցրի ժողովրդին՝ կոտրելով նրա կամքը: Կսկսվեն ձերբակալություններ:

Եղավ այն, ինչ կարելի էր սպասել: Ժողովուրդը ներխուժեց ԿԸՀ-ի տարածք, տեղի ունեցան որոշ անկառավարելի արարքներ, որոնք դատապարտելի էին: Սակայն այդպիսի դեպքեր ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում բոլոր քաղաքակիրթ երկրներում: Ոստիկանությունն օգտագործում է ջուր մղող մեքենաներ, գազ, մահակներ, վահաններ՝ հետագայում քրեական մեղադրանքներ ներկայացնելով կարգուկանոնը խախտած մասնակիցների մի մասին: Մեզանում տեղի ունեցածը, այնուամենայնիվ, տարբերվեց դրանից:

Առաջինը. ժողովրդի առաջ դուրս գալու չմտածված և չպատճառաբանված որոշումը ԱԺ-ի ղեկավարության կողմից տղամարդկություն չէր, այլ քաղաքական գրգռիչ անմտություն: Անկարգություն անողները, արարքի մեղավորները իհարկե կպատժվեն, բայց կատարվեց մյուս երկրների համար երկրորդ աննախադեպը՝ սկսվեց հրազենի օգտագործումը իշխանական բանդաների կողմից:

Նույնիսկ կոմունիստական ռեժիմի դեմ պայքարելիս, միութենական զորքի առկայությամբ, մեր ժողովուրդը այդպիսի բան չէր տեսել համանման դեպքերում, որոնք եղել են, և որոնց մասնակցել են մեր պետության ներկա իշխանավորները: Կրակոցների տակ մենք դուրս հանեցինք ժողովրդին ԱԺ-ի տարածքից: Եթե իշխանությունները, հրազեն օգտագործելով, փորձում էին կոտրել ժողովրդի կամքը, ապա նրանք սխալվեցին. ինչքան շատ էին կրակում նրանք, այնքան ավելի էին խտանում իրենց դեմ կանգնած ժողովրդի շարքերը: Կանգնած էին տասնյակ հազարավոր մարդիկ. կանայք, երեխաներ, ծերեր և երիտասարդներ, որոնք ամեն մի կրակոցին պատասխանում էին սուլոցներով, երգով, «Վազգեն՝ նախագահ» վանկարկումներով:

Իսկապես հրաշալի ժողովուրդ է մեր ժողովուրդը, և այս դեպքերը վերականգնեցին մեր ժողովրդի հարգանքն իր նկատմամբ: Մեր դեմ հրազենով կանգնած էին մեր ժողովրդին ակնհայտորեն ատող, հավանաբար թմրադեղեր օգտագործած անձինք, և ընդդիմության ղեկավարներս, խուսափելու համար հնարավոր զոհերից, ժողովրդի հետ իջանք Ազատության հրապարակ: Այնտեղ ժողովրդի հետ միասին ընդունվեց որոշում՝ հաջորդ օրը ժամը 12-ից շարունակել միայն և միայն խաղաղ ցույցեր՝ նույն պահանջներով:

Հաջորդ օրն ամբողջ քաղաքը պաշարված էր, կատարվում էին զանգվածային ձերբակալություններ:

Գնալով այդպիսի քայլի՝ իշխանություններն ընկան իրենց իսկ կողմից պատրաստված ծուղակի մեջ և այլևս դատապարտված են: Ձորքը քաղաքում միշտ պահել հնարավոր չէ, հնարավոր չէ բոլորին ձերբակալել: Այս ամենը մենք արդեն տեսել ենք 1988-89 թվականներին:

Ներկա անօրինական իշխանությունները չեն կարողանալու ապահովել մեր պետության զարգացումը, տնտեսական վերականգնումը, աճը, սոցիալական հարցերի լուծումը: Նրանք ի

վիճակի են միայն վայելել, ուրիշ ոչինչ: Դա երկար չի տևի: Եթե ոչ ուրիշ երկրների քաղաքական ղեկավարները, ապա նրանց հասարակությունը կդառնա մեր բնական դաշնակիցը և իրենց ղեկավարության վրա ճնշում կգործադրի՝ նպաստելով մեր երկրում ժողովրդավարություն, օրինականություն, տնտեսական և քաղաքական ազատություններ, մարդու իրավունքների պաշտպանվածություն հաստատելուն:

Հաղթելու է մեր ժողովուրդը: Պետք է ժամանակ և խաղաղ միջոցների կիրառում: Մեզ պետք չէ քաղաքացիական պատերազմ, որին անընդհատ փորձում են դրդել իշխանությունները՝ հաշվի չառնելով նույնիսկ Ղարաբաղի հարցը, այլ այն օգտագործելով իբրև քաղաքական դեմագոգիա:

Համբերություն, արիություն, խելամտություն: Այս պետությունը մեր բոլորինն է և ոչ թե մի խումբ մարդկանց կալվածքը:

Վ. Մանուկյանի հայտարարությունը
27 սեպտեմբեր, 1996 թ.
«Այժմ», 1996, 4-10 հոկտեմբերի

ԱՊՕՐԻՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԼԻՆԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ

Ժողովրդի օրինական ընտրյալ Վազգեն Մանուկյանի հետ հանդիպեցինք նրա համեստ, բայց հյուրընկալ օջախում: Պրն Մանուկյանին ամենևին էլ չեն ընկճել վերջին օրերի իրադարձությունները, և նա հստակ պատկերացնում է իր առաջիկա անելիքները: Պետք է արժանին մատուցել նրա սառնասրտությանը. չնայած երկրում սանձազերծված հաշվեհարդարների խրախճանքին՝ Վ.Մանուկյանը ոչ միայն հարկ չի համարում թաքնվել, այլև քաջություն է ունենում հրավիրելու մամլո ասուլիսներ, այսինքն՝ շփման մեջ մտնելու անգամ գրեթե անծանոթ մարդկանց հետ:

Մեր զրույցը, բնականաբար, ընթանում էր վերջին օրերի իրադարձությունների, ինչպես նաև մոտ ապագայի հնարավոր զարգացումների շուրջ:

-Դեռևս ընտրություններից ամիսներ առաջ շատերը պնդում էին, որ Հայաստանում ընտրությունների միջոցով իշխանության փոփոխություն հնարավոր չէ: Դուք, անձամբ ճանաչելով այսօրվա իշխանավորներին, կարող էիք ամեն ինչ ավելի ճշգրիտ կանխատեսել, սակայն գնացիք ընտրությունների ամենայն վճռականությամբ և հետևողականությամբ: Ի՞նչն էր դրդապատճառը:

-Նախորդ տարիների ընթացքում Հայաստանում ձևավորվել էր մի յուրատեսակ ռեժիմ՝ ժողովրդավարական կեղևով բռնապետություն: Ես համոզված էի, որ Լ. Տեր-Պետրոսյանը և իր թիմի մի մասը շատ հստակ պատկերացնում են, թե հակաժողովրդավարական, ապօրինի ճանապարհով իշխանության գալն ինչ մեծ հարված կլինի Հայաստանին և դրանով իսկ հենց իշխանություններին: Սկզբնական ենթադրությունն այն էր, որ իշխանությունները պետք է փորձեն ժողովրդավարական ընտրություններ անցկացնել: Մյուս կողմից՝ հայտնի էր, որ իշխանությունների վերին օղակում կա մարդկանց մի խումբ, որի համար իշխանություն կորցնելը ոչ միայն լծակներ և եկամուտներ կորցնել է, այլ նաև իրենց նախորդ հանցագործությունների համար պատասխանատվության ենթարկվելու հեռանկար, և այդ մարդիկ կանեն ամեն ինչ իշխանությունը պահելու համար:

Ակնհայտ էր, որ Լ.Տեր-Պետրոսյանը և նրա թիմը գերագնահատում էին ժողովրդավարական ճանապարհով ընտրություններում հաղթելու իրենց հնարավորությունը: Դա պայմանավորված էր մի քանի գործոնով: Նախ և առաջ, իրենք համոզված էին, որ ժողովուրդն այլընտրանք չի տեսնում, քանզի ժողովրդի մեջ դժգոհության հետ մեկտեղ տարածված էր այն կարծիքը, թե «եթե ոչ Լևոնը, ապա ո՞վ»: Երկրորդը՝ իրենք համոզված էին, որ հուլիսի 5-ից հետո ժողովուրդը կոտրված է և պատրաստ չէ լուրջ պայքարի: Սոցիոլոգիական հետազոտությունները հաստատում էին իրենց համոզվածությունը: Նրանք հաշվի չէին առել, որ Հայաստանում սոցիոլոգիական հարցումների արդյունքները ճշմարիտ չեն, որովհետև մարդիկ երկրում տիրող վախի մթնոլորտի պատճառով անկեղծորեն չեն պատասխանում այդ հարցումներին և նշում են Լ.Տեր-Պետրոսյանի անունը: Հաշվի առնելով այդ գործոնները և ձգտելով ամեն կերպ ժողովրդավարական ճանապարհով վերընտրվել՝ Լ.Տեր-Պետրոսյանը սկզբնական շրջանում գնաց ժողովրդավարական ճանապարհով:

Հարկ է նշել, որ մեր թիմն ընտրեց ճիշտ մարտավարություն, աշխատեց շատ նուրբ և խելամիտ: Կազմելով մեր ծրագրերը՝ մենք մազաչափ անգամ չշեղվեցինք մեր սկզբունքներից, այն է՝ անկախություն, մասնավոր ձեռներեցություն, Արցախի խնդիր, ազգային մտածողություն: Եվ ստեղծվեց ծրագիր, որ և՛ կառուցողական էր, և՛ համապատասխանում էր ժողովրդի ձգտումներին: Երբ ստեղծվեց միասնական թիմ, դա միանգամից բազմապատկեց մեր հնարավորությունները:

Հակառակորդ թիմն աշխատում էր, իհարկե, շատ վատ, աշխատում էր պարտադրանքներով՝ ստիպելով մարդկանց մասնակցել իրենց հանրահավաքներին: Լ. Տեր-Պետրոսյանի նախընտրական ծրագիրը բացարձակապես չէր համապատասխանում ժողովրդի կարիքներին, և դա վկայում էր, որ նրանք բացարձակապես կտրվել են ժողովրդից: Այդ ամենը հանգեցրեց բնական արդյունքի. մաքուր ընտրություններով մեր հաղթանակն ապահովված էր:

Նրանք մեծ հույսեր էին կապում նաև այն հանգամանքի հետ, որ և՛ ԱԺՄ–ի, և՛ մյուս ընդդիմադիր կուսակցությունների ֆինանսական աղբյուրները կտրված են, սակայն մոռացել էին, որ ժողովուրդն այնքան մեծ ոգևորությամբ ընդունեց իշխանությունը փոխելու հնարավորությունը, մեր ծրագրային դրույթները, որ փաստորեն չնչին գումարներով, հենվելով զուտ մարդկանց եռանդի վրա, հաջողվեց իրագործել այդ ընտրարշավը:

Վերջին երկու-երեք օրը նրանք սթափվեցին և միացրեցին իրենց կեղծիքների մեքենան, բայց նույնիսկ դա չօգնեց: Չնայած նրանք օգտագործեցին զինվորներին մի քանի անգամ քվեարկելու համար, օգտագործեցին մահացածների և բացակայողների ցուցակները, ամենակոպիտ ձևով քվեաթերթիկներ լցրեցին տուփերի մեջ և դիմեցին այլ հնարքների, գիշերը հաշվարկի ժամանակ պարզվեց, որ իրենք շատ խոշոր տանուլ են տալիս: Հաշվարկը դադարեցվեց, շատ տեղերից մենք չկարողացանք ստանալ արձանագրություններ, և նրանք անցան բռնությունների: Այնուամենայնիվ և՛ մեր տրամադրության տակ եղած արձանագրություններով, և՛ ժողովրդի համոզվածությամբ (նույնիսկ Լ.Տեր-Պետրոսյանին քվե տվածների համար), և՛ միջազգային հանրության համար պարզ դարձավ, որ Լ.Տեր-Պետրոսյանը պարտվել է: Օրակարգում ծառացավ իշխանության փոխանցման հարցը:

Եվ գործնական այն մոտեցումը, թե ինչ հետևանքների կհանգեցնի ապօրինի իշխանության ձևավորումը, բախվելով այն իրողությանը, թե իրենց համար ինչ է նշանակում իշխանության կորուստը, պարտվեց, և գերիշխեց երկրորդ մոտեցումը:

Ես հարկ չեմ համարում մանրամասն կանգ առնել սեպտեմբերի 25-ի դեպքերի վրա, քանզի դա ընդամենը միջադեպ է, որ հանգեցրեց երևույթի բացահայտմանը: Իսկ երևույթը հետևյալն է. տանկերով գրավվեց Երևանը, ձերբակալվեցին տասնյակ մարդիկ, այդ թվում պատգամավորներ, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ, ովքեր ծեծի ենթարկվեցին, և դա ցուցադրվեց հեռուստատեսությամբ: Արդյունքում ստացվեց այն, ինչ որ պետք է լիներ՝ անօրինական իշխանություն, ինչը համապատասխան արձագանք գտավ ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում:

Փաստորեն ստեղծվեց անհեթեթ իրավիճակ: Հայաստանը կորցրեց ամեն ինչ արտաքին աշխարհում: Քանի որ ժողովուրդը մերժում է այս իշխանություններին, ապա, եթե արտաքին աշխարհն ընդունի նրանց, իշխանություններն ամեն ինչով պարտական կլինեն արտաքին աշխարհին և դրանով իսկ կդառնան արտաքին ուժերի բացարձակ կամակատար:

Իսկ երկրի ներսում տեղի ունեցավ մի չափազանց կարևոր երևույթ. այն ժողովուրդը, որ թվում էր, թե վերջնականապես «մեռած» է ու կոտրված, կրկին ոտքի կանգնեց, և դա արդեն անհնարին է մարդկանց միջից հանել: Եվ շատ էական է, որ շարժման մեջ ընդգրկվեց երիտասարդությունը: Եթե 1988-ի շարժումը մեր սերնդի շարժումն էր, ապա այս շարժումը երիտասարդ սերնդինն է, որը միշտ կձգտի ազատության և չի հանդուրժի, որ իր երկիրն ունենա հակաօրինական, ոչ ժողովրդավարական իշխանություն:

-Ձեր կարծիքով, ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ այս կեղծիքները Հայաստանի ապագայի համար:

-Մեր իշխանությունների մեջ առկա է մտածողություն, որ բնորոշ է բռնակալներին, հեղափոխական ճանապարհով իշխանության եկածներին: Նրանք համոզված են, որ առանց իրենց երկիրը կկործանվի և առաջընթաց չի ունենա, և նրանք արհամարհանքով են վերաբերվում ժողովրդի կարծիքին: Դա շատ ցայտուն երևում է Լ.Տեր-Պետրոսյանի արտահայտություններում, դա շատ ցայտուն երևում է Վ.Սարգսյանի պարագայում, երբ վերջինս ասաց, որ եթե Լ.Տեր-Պետրոսյանն ստանար զրո ձայն, ապա միևնույնն է, կլիներ նախագահ: Իհարկե, ամեն ինչ որոշում են կոնկրետ շահերը, սակայն այդ մարդիկ իրենց շահերի վրա դնում են սեփական անփոխարինելիության ինքնաներշնչման քողը՝ միաժամանակ տարածելով այդ ինքնաներշնչման վարակն իրենց շրջապատում: Փաստորեն հարցերի հարցը հետևյալն է. կա՛մ գերիշխում է ժողովրդի կամքը և ժողովուրդն ինքն է

ընտրում իր ղեկավարներին և զարգացման ուղին, կա՛մ երկրի և ժողովրդի ապագան վճռում են ինչ-որ «հերոսներ», ովքեր համարում են, որ ժողովուրդը տհաս է իր խնդիրները լուծելու համար: Զարգացած երկրներում այդ վեճը լուծված էր դեռևս XIX դարում, և ապացուցված է, որ երկրի զարգացման համար միշտ ավելի կարևոր է ժողովրդի կամքը: Այս ընտրություններով նախ և առաջ լուծվում է այդ հիմնահարցը և նոր միայն՝ անձերի, կուսակցությունների և ծրագրերի խնդիրը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ եթե երկրի բախտը վճռում են «հերոսները», ապա այդ երկիրը ապագա չունի:

-Փաստորեն, Դուք կարող էիք նախապես կանխատեսել, որ վարչախումբը հենց այնպես չի հնազանդվի ժողովրդի կամքին: Մյուս կողմից՝ լուրեր են պտտվում, թե Դուք ինչպես միևչև ընտրությունները, այնպես էլ ընտրություններից հետո գաղտնի հանդիպումներ եք ունեցել Լ.Տեր-Պետրոսյանի հետ և քննարկել, այսպես կոչված, «կոմպրոմիսային» տարբերակներ, մասնավորապես մատնանշվում է վարչապետի պաշտոնը ստանձնելու տարբերակը: Արդյոք նման փաստեր առկա՞ են:

-Նախ ես ոչ մի հանդիպում չեմ ունեցել ո՛չ Լ. Տեր-Պետրոսյանի, ո՛չ էլ նրա շրջապատի հետ, չեն եղել նաև միջնորդավորված հանդիպումներ: Երկրորդ՝ դեռևս մինչև ընտրությունները ես հայտարարել եմ, որ եթե Լ.Տեր-Պետրոսյանն օրինական ճանապարհով ընտրվի նախագահ, իսկ ես հավաքեմ բարձր տոկոս, ու ինձ առաջարկվի վարչապետի պաշտոն, ես չեմ համաձայնի դրան, որովհետև մեր ճանապարհները են տարբեր: Այսօրվա պայմաններում, երբ իշխանությունն անօրինական է, ցանկացած համագործակցություն նրանց հետ կլինի հանցագործություն իմ կողմից:

-Փաստորեն, Դուք մերժու՞մ եք այն ստվարաթիվ կոչերը, որ պետք է համաձայնության եզրեր գտնել և նստել բանակցությունների սեղանի շուրջ:

-Ոչ: Ես մերժում եմ ապօրինի իշխանության համակարգում պաշտոն ստանալը: Սակայն այն վիճակը, որում հայտնվել է Հայաստանը նրանց մեղքով, աշխարհի կողմից ընկալվել է որպես անօրինական պետություն, բոլորիս համար շատ մտահոգիչ է: Եվ ես համաձայն եմ ցանկացած բանակցությունների, եթե դրանք հետապնդեն արդարության վերականգնման նպատակ: Այսինքն՝ պետք է կատարվեն իրական ստուգումներ, թե ո՞վ է իսկապես ընտրվել նախագահ: Եթե այդ ստուգումները վերջնական արդյունք չտան, կարող է առաջանալ ընտրությունների երկրորդ փուլի հարց: Իսկ եթե կեղծիքների պատճառով տեղի է ունեցել այնպիսի շեղում, որ նախնական պատկերի վերականգնումն անհնարին է, ապա մի քանի ամսվա ընթացքում պետք է անցկացվեն նոր ընտրություններ: Բոլոր դեպքերում, առանց օրինական իշխանության ձևավորման, անհնարին է Հայաստանը պահել արտաքին վտանգից զերծ և ապահովել երկրի ներքին կայունություն: Փոխզիջումը հետևյալն է. ոչ թե «պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ», այլ բանակցությունների միջոցով հասնել Հայաստանում ժողովրդավարական ճանապարհով օրինական իշխանությունների ստեղծման:

-Վարչախումբն այժմ շահարկում է Սահմանադրական դատարանի միջոցով վեճի օրինական հանգուցալուծման հնարավորությունը: Միաժամանակ հայտնի է, որ Հայաստանում այսօր բոլոր դատարանները ձևական են: Այնուամենայնիվ ի՞նչ ընթացք կարող է ստանալ Ձեր դիմումը Սահմանադրական դատարանում:

-Սահմանադրական դատարանը սոսկ իր անունով բավականին հեղինակավոր ինստիտուտ է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում: Իրականում մեզ բոլորիս հայտնի է, որ Հայաստանում Սահմանադրական դատարանը ֆիկցիա է, որը կանի այն ամենը, ինչ իրեն կթելադրեն իշխանությունները: Ինքը՝ Սահմանադրական դատարանի նախագահը, հայտնի դեպքերից հետո հստակ ցույց տվեց իր դիրքորոշումն անպարկեշտ հայտարարություններով: Դա Հայաստանի տխուր իրավիճակն է, չկա որևիցե անկախ մարմին, չկան վերահսկող մեխանիզմներ: Մենք ժամանակին դիմել ենք Սահմանադրական դատարան, ձևական պատճառաբանությամբ դիմումը մերժվել է, սակայն մենք իրավաբանների օգնությամբ պատրաստում ենք վերջնական փաստաթուղթ, որում նաև հստակ նշված կլինի, թե մենք ինչ ենք համարում իրական ստուգում: Եվ այստեղ Սահմանադրական դատարանը պետք է ունենա ստուգումներով զբաղվող անաչառ մարդկանց խումբ, և պետք է հստակ ձևակերպված լինի, թե ինչն ենք մենք ստուգում և ինչ ձևերով: Ըստ որում հարկ է նշել, որ այսօր ձերբակալում են ոչ միայն նրանց, ովքեր ինչ-որ ձևով առնչություն ունեն սեպտեմբերի 25-ի իրադարձությունների հետ, այլ նախ նրանց, ովքեր, ընտրությունների հետ կապված, ինֆորմացիայի տեր են: Ստուգումների ժամանակ պետք է ազատ արձակվեն և մասնակցեն այս ստուգումներին այն մարդիկ, ովքեր պատասխանատու էին ընտրությունների

կազմակերպման համար, և վերականգնվեն իշխանությունների կողմից առգրավված փաստաթղթերը:

-Պետք է ստեղծվեն նաև բնականոն պայմաններ աշխատանքի համար...

-Բնական է: ԱԺՄ գրասենյակն անհասկանալի պատճառներով փակված է: Մեր կուսակցության ներկայացուցիչներն այցելեցին դատախազություն և արդարադատության նախարարություն, բայց առ այսօր պատասխան չեն ստացել, թե ինչ որոշման հիմքի վրա է փակված կուսակցությունը: Մինչև այս բոլոր հարցերը չլուծվեն, ես անիմաստ եմ համարում Սահմանադրական դատարան դիմելը:

-Ի՞նչ քաղաքական գնահատական կտաք ստեղծված իրավիճակին:

-Ամենակարևորն այն է, որ միլիոնավոր հայեր Հայաստանում և Սփյուռքում, ինչպես նաև երկրից հեռացած 100 հազարավոր ՀՀ քաղաքացիներ, ովքեր ամեն ինչ անհույս էին համարում, փաստորեն, վերակենդանացան: Եվ այդ վերակենդանացումը կարճատև երևույթ չէ, այն կոտրել այլևս անհնարին է: Իր ապագայով մտահոգված հայությունը պատրաստ է պայքարել՝ հանուն այդ ապագայի: Այդ երևույթը մնայուն է:

Մյուս կողմից՝ Հայաստանում այսօր չկա օրինական իշխանություն, ինչը հղի է ծանր հետևանքներով: Եթե մոտ ապագայում ի կատար չածվեն մեր պահանջները, այսինքն՝ չձևավորվի օրինական իշխանություն, ապա համայն հայությանը պարզ կդառնա, որ ընտրություններով իշխանություն փոխելն անհնարին է: Ժողովուրդը, հայտնվելով «բետոնե պատի» առջև, ի վերջո, ստիպված կլինի ջարդել այդ պատը: Մենք կհայտնվենք այն սովորական իրավիճակում, որով անցել են բազում բռնապետական երկրներ: Կա՛մ ներկա փուլում ճնշումների միջոցով կկատարվի վերադարձ դեպի ժողովրդավարություն, կա՛մ կարճ ժամանակի ընթացքում տեղի կունենա իշխանության քայքայում, կա՛մ, ինչպես սովորաբար լինում է նման դեպքերում, «բետոնե պատը» կջարդվի հեղափոխության, համաժողովրդական շարժման միջոցով: Դա կարող է լինել Չեխոսլովակիայի «թավշյա» տարբերակով, Ռումինիայի կամ լատինամերիկյան երկրների տարբերակով: Թե ինչպես դա տեղի կունենա և ինչ ժամկետներում, ճշգրիտ կանխատեսել հնարավոր չէ: Դա անհատները և առաջնորդները չէ, որ վճռում են: Սկզբում հեղափոխություն է տեղի ունենում ուղեղներում, ընթանում են խմորումներ, և, ի վերջո, դա պայթում է՝ ծնելով համաժողովրդական շարժում:

-Միջազգային ճնշումը կարծես թե տալիս է արդեն արդյունքներ, և դրա վառ օրինակն այն է, որ Ձեզ սկզբում զրկեցին պատգամավորական անձեռնմխելիությունից, սակայն այնուհետ ոչ թե ձերբակալեցին, այլ հրավիրեցին հարցաքննության՝ որպես վկա: Ձեր կարծիքով, հնարավո՞ր է արդյոք, որ այդ ճնշման ներքո իշխանությունները հարկադրված լինեն նշանակել նոր ընտրություններ:

-Ճնշումը բավականին զորեղ է: Բացառված չէ, որ իշխանություններն այդ ճնշումների ներքո գնան զիջումների: Եվ շատ բան կախված է ժողովրդի վերաբերմունքից: Ժողովուրդն այսօր ծայրաստիճան վրդովված է, և սխալ է կարծել, թե տեղի է ունեցել բևեռացում «լևոնականների» և «վազգենականների» միջև: Լ. Տեր-Պետրոսյանի օգտին քվեարկածների մեծամասնության համար էլ այսօրվա իրավիճակն անընդունելի է: Ճիշտ է, ժողովրդական զայրույթը չի դրսևորվում ցույցերով և հանրահավաքներով. փողոցներում տանկեր են կանգնած, սակայն տեղեկությունները բնակչության տրամադրությունների մասին հասնում են իշխանություններին: Թե ինչքանով այդ գործոնը հաշվի կառնվի, դժվար է ասել:

-Դուք անձամբ հիանալի ճանաչում եք այսօրվա իշխանավորներին: Ըստ Ձեզ, գոյություն ունի՞ որևէ գործոն, որ ստիպի նրանց ենթարկվել ժողովրդի կամքին, թե՞ նրանք մինչև «արյան վերջին կաթիլը» կկռվեն հանուն իշխանության:

-Մինչև ընտրությունները նրանք երբեք լրջորեն չեն մտածել, որ մի օր կարող են զրկվել իշխանությունից: Ընտրություններին նրանք առաջին անգամ տեսան, որ ժողովուրդն իրենց չի հանդուրժում: Այժմ տեղի են ունենում խմորումներ, և բացառված չէ, որ նրանք աստիճանաբար հաշտվեն իշխանությունը կորցնելու մտքի հետ: Թե ի վերջո ի՞նչ է լինելու՝ «պայքա՛ր, պայքա՛ր մինչև վերջ» տարբերակի որդեգրու՞մ, թե՞ հրաժարում այդ անիմաստ և վտանգավոր «պայքարից», դժվար է ասել: Ապօրինի իշխանությունը երբեք կայուն չի լինում:

-Դատախազության հրավերն ընդունելու՞ եք:

-Եթե դատ լինի, կներկայանամ դատարան: Սակայն դատախազություն ներկայանալը, ցուցմունք, բացատրություն տալը, արդարանալը անհեթեթություն եմ համարում:

-Ի՞նչն է պատճառը, որ մեծ մասամբ տանն եք լինում:

-Առաջին օրերին ես իրոք թաքնվում էի, քանզի կարող էին նվաստացուցիչ իրավիճակներ առաջանալ, և առկա էր կյանքի ու մահվան խնդիր: Նրանք շատ լավ յուրացրել են Ստալինի բանաձևը. եթե չկա մարդը՝ չկա նաև պրոբլեմը, և ամեն ինչ անում էին ինձ գտնելու և վերացնելու համար, սակայն դա նրանց չէր հաջողվում: Այսօր իրավիճակը մասամբ փոխվել է, ես չեմ թաքնվում, բայց ստիպված եմ հիմնականում տանը լինել, քանզի ԱԺՄ գրասենյակը փակ է, և հարկադրված եմ տանն աշխատել:

-Ե՞րբ եք մտադիր հանդես գալ ժողովրդի առջև:

-Հեռուստաեթեր ինձ դժվար թե տրամադրեն, իսկ ինչ վերաբերում է հանրահավաքներին, ապա նպատակահարմար չեմ համարում ժողովրդին մղել զորքի դեմ, որը բաղկացած է այդ նույն ժողովրդի երիտասարդ ներկայացուցիչներից: Սակայն համոզված եմ, որ այսօրվա անհեթեթ վիճակը երկար տևել չի կարող:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Հովհաննես Գալաջյանը
«Իրավունք», 1996, 8-14 հոկտեմբերի

ՑԱՆԿԱՑԱԾ ՈԼՈՐՏՈՒՄ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է, ԼԻՆԻ ԴԱ ԸՆՏԱՆԻՔ ԹԵ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Այս հարցազրույցի առիթը «Մոսկովսկիե նովոստի» թերթին տված Լ.Տեր-Պետրոսյանի հարցազրույցն է, որում դեռևս գործող նախագահը մի շարք անհիմն մեղադրանքներ է առաջադրում ժողովրդի ճշմարիտ ընտրյալին՝ Վազգեն Մանուկյանին: Հաշվի առնելով, որ վերոհիշյալ հարցազրույցը արտատպել են Հայաստանի մի շարք լրատվական միջոցներ, մենք դիմեցինք Վազգեն Մանուկյանին՝ որոշ հարցեր պարզաբանելու խնդրանքով, ինչպես նաև առաջարկեցինք պատասխանել մոտավորապես նույն հարցերին, որոնց պատասխանել է Լ. Տեր-Պետրոսյանը:

-Դուք կանխատեսու՞մ էիք դեպքերի այնպիսի զարգացման հնարավորությունը, ինչպիսին տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին:

-Մասամբ: Սակայն մի մասն անսպասելի էր նաև ինձ համար:

Ի՞նչն էր կանխատեսելի: Սեպտեմբերի 23-ին և 24-ին ժողովուրդը մինչև 100 հազարի հասնող ցույցեր էր անում՝ վրդովված ընտրությունների կեղծիքներից և պահանջում էր ԿԸՀ-ում ու մարզերում եղած փաստաթղթերի անաչառ ստուգում, ինչը մերժվում էր ԿԸՀ-ի կողմից: Դա շատ բնորոշ է այս իշխանություններին: Նույնը խոստովանում է Լ.Տեր-Պետրոսյանն իր հարցազրույցում, որ կգան, կհավաքվեն ու կգնան, այսինքն՝ եթե 100 կամ 200 հազար մարդ հավաքի, դա որևէ նշանակություն չունի իշխանությունների համար, նրանք անհանգստանում էին միայն որևէ կտրուկ գործողություն կատարելու դեպքում: Սպասելի էր, որ ժողովուրդի զայրույթը ինչ-որ ձևով կարտահայտվի սեպտեմբերի 25-ին, երբ մարդիկ հավաքված էին ԿԸՀ-ի շենքի առաջ: Սպասելի էր նաև, որ այդ անգամ իշխանությունները պետք է որ խախտեին ժողովրդի հետ չբանակցելու «ավանդույթը», եթե իշխանությունները և, մասնավորապես, Լ.Տեր-Պետրոսյանը հանդես գար ժողովրդի առջև և հայտներ, որ ինքը նույնպես պահանջում է արդյունքների ստուգում, ապա լարվածությունը կլիցքաթափվեր: Չէ՞ որ այդտեղ հավաքված էին ընտրությունների արդարությունն ապահովել ցանկացողները, և նրանց մեջ քիչ չէին իրենց քվեն Լ.Տեր-Պետրոսյանին տված մարդիկ:

Եվ երկրորդը՝ ես ակնկալում էի, որ անվտանգության բավարար միջոցներ կձեռնարկվեն ոստիկանական ուժերի կողմից, որպեսզի տաքարյուն մարդիկ չկարողանան մուտք գործել դարպասից ներս: Անսպասելի էր, որ այդ միջոցները չէին ձեռնարկվել, որ անհայտ մարդկանց դրդմամբ պայթյունին անգամ դիմանալու ունակ այդ ամրակուռ պարիսպը այդպիսի

դյուրությամբ խորտակվեց: Անսպասելի էր, որ Բ.Արարքցյանն ինձ հեռախոսով տեղեկացրեց,որ դուրս է գալու ժողովրդին ընդառաջ, ինչը այդ պահին անհիմն և գրգռիչ գործողություն էր: Ցավալի է, որ ձեռք բարձրացնողներ եղան ԱԺ նախագահի և փոխ-նախագահի վրա, սակայն միաժամանակ հայտնի է, որ մոտիկ գտնվող կուսակցական ուրիշ գործիչների հաջողվեց պաշտպանել նրանց:

Անսպասելի էր, որ քաղաքացիական հագուստով զինյալները սկսեցին կրակել և, ի դեպ, մարտական փամփուշտներով, և անսպասելի էր այն ատելությունը, որով նրանք նայում էին ժողովրդին: Այդպիսի ատելություն չի եղել խորհրդային զինվորների դեմքերին: Անսպասելի էր, որ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանն անձամբ մարդ էր ծեծում և կրակում:

Իրենց համար անսպասելի էր, որ ժողովուրդն այդ կրակոցներից չվախեցավ և կանգնած մնաց այնքան, մինչև մենք կոչ չարեցինք իջնել Ազատության հրապարակ, և զորքն ու ոստիկանությունը չէ, որ ԿԸՀ-ի տարածքից հանեցին մարդկանց, այլ ժողովուրդը մեր խնդրանքով դուրս եկավ այդտեղից:

-«ՄԻ»-ին տված հարցազրույցում Լ.Տեր-Պետրոսյանը կարոտաբաղձություն է հայտնում հզոր կոմկուսի նկատմամբ…

-Լ. Տեր-Պետրոսյանը, փոխանակ իրատեսորեն հաշվի առնի Հայաստանում առկա քաղաքական ուժերը, ապավինել է մի արհեստական սխեմայի, ըստ որի պետք է լինեն «աջակողմյան» (իշխանական) և «ձախակողմյան» բևեռներ, և անգամ նշում է, որ նախանձով է նայում հզոր կոմկուս ունեցող Ռուսաստանին: Ի տարբերություն Լ.Տեր-Պետրոսյանի, ես շատ ուրախ եմ, որ ի տարբերություն շատ և շատ հետխորհրդային երկրների, մեր ընդդիմադիր ուժը ոչ թե կոմունիստներն են, այլ ժողովրդավարության, ազատ տնտեսության և մասնավոր ձեռներեցության կողմնակիցները, և ժողովուրդը քվեարկում է հօգուտ այդ ուժի, քանի որ ձգտում է հենց այդ արժեքներին, այլ ոչ թե դեպի անցյալ: Այդ առումով կարելի է միայն հիանալ մեր ժողովրդի ազատատենչությամբ:

-«ՄԻ»-ի տված «Դուք չէի՞ք սպասում Մանուկյանից նման հարված թիկունքին» հարցին Լ.Տեր-Պետրոսյանը պատասխանում է. «Քաղաքականության մեջ ես չեմ ընդունում դավաճանություն հասկացությունը»: Իսկ Դուք ընդունու՞մ եք:

-Նախ և առաջ, ընդդիմության գործողությունները թիկունքից հարված չէին որևէ մեկի նկատմամբ: Մենք ընտրություններին վերաբերվեցինք որպես ժողովրդավարական միջոցի, և ներկայացնելով մեր ծրագիրը՝ փորձեցինք ստանալ և ստացանք ժողովրդի վստահության քվե: Այն, ինչ արվում էր, արվում էր ի բարօրություն մեր պետության և ժողովրդի:

Ինչ վերաբերում է դավաճանության հարցին, ապա ցանկացած ասպարեզում դավաճանություն կարող է լինել, հնարավոր է դավաճանել քաղաքական սկզբունքներին, էթիկայի նորմերին, թիմակիցներին: Դավաճանությունը ցանկացած ոլորտում անընդունելի է, լինի դա ընտանիք, թե քաղաքական սկզբունքներ:

-Ինչպե՞ս պատահեց, որ «Ղարաբաղ» կոմիտեի նախկին համախոհներն այսօր դարձել են հակառակորդներ: Պառակտման պատճառը միայն իշխանության ծարա՞վն էր:

-Մինչև «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը յուրաքանչյուրս ունեցել է իր կյանքը: Ոմանք ապրում էին իրենց մասնագիտությամբ, ոմանք էլ իրենց նվիրել էին քաղաքական որոշակի գաղափարների իրագործմանը: Ճիշտ է, «Ղարաբաղ» կոմիտեում գործելու տարիները մերձեցրել էին մեզ, սակայն չէին ջնջել այն տարբերությունները, որոնք ունեինք մինչև այդ՝ որպես անձեր և քաղաքական գործիչներ: Անջատումը բնական էր, սակայն ցավալին այն է, որ ջրբաժանը ոչ թե քաղաքական-գաղափարական հիմնահարցերն էին, այլ վերաբերմունքը իշխանության հարցին: Ոմանք համարում էին, որ եթե թիմը եկել է իշխանության, ապա ամեն գնով այդ իշխանությունը պետք է պահի: Մյուսների համար իշխանությունը լոկ միջոց էր՝ իրագործելու այն ազգային-քաղաքական ծրագրերը, որոնց մասին երազել ենք տասնամյակներ շարունակ: Տարանջատման առանցքը վերաբերմունքն էր իշխանության նկատմամբ, որին գումարվեցին նաև որոշ անձնական հարցեր և քաղաքական տարաձայնություններ:

-Սեպտեմբերի 25-ին Դուք գայթակղություն չունեցա՞ք զանգահարել Լ.Տեր-Պետրոսյանին և վաղեմի ընկերոջ իրավունքով ասել, որ ի բարօրություն հասարակության անհրաժեշտ է նստել բանակցությունների: Եվ ընդհանրապես, ո՞րն էր ընդդիմության նպատակը:

-Ես միշտ կողմնակից եմ եղել բանակցությունների, չէ՞ որ իշխանության չեկած ժամանակ մենք Ղարաբաղի հարցով բանակցություններ էինք վարում ադրբեջանցիների հետ, էլ ինչու՞ Հայաստանի ներսում այդպիսի բանակցություններ չպետք է վարենք:

Բանակցությունների նախաձեռնողը պետք է լինի հանրապետության ղեկավարությունը, որն իր վրա մի քիչ ավելի պատասխանատվություն է կրում, քան ընդդիմությունը: Նման փորձ իրենց կողմից երբեք չի եղել: Ես ինքս կողմնակից կլինեի բանակցությունների միջոցով հանդարտեցնելու իրավիճակը, բայց ոչ արդարությունը զոհաբերելու գնով:

Ցավոք, Լ.Տեր-Պետրոսյանի թիմակիցների գործողությունները, Վանո Սիրադեղյանի անպատեհ ելույթը, ֆաշիզմի անհիմն մեղադրանքները խիստ դժվարացնում էին որևէ հարցի շուրջ պայմանավորվելը:

Միակ հարցը, որի շուրջ իմաստ ունեին բանակցությունները, այն էր, թե ինչպե՞ս անել, որպեսզի ընտրություններն անցնեն արդար, և արդյունքները ամփոփվեն արդար: Սակայն արդյո՞ք Լ.Տեր-Պետրոսյանը շահագրգռված էր դրանում:

-Լ.Տեր-Պետրոսյանը Ձեզ համարում է իր հակառակորդը, իսկ Դու՞ք նրան: Նա գլխով երաշխավորում է, որ Դուք շատ ազնիվ, բարոյական, մաքուր մարդ եք, բայց որպես քաղաքական գործիչ՝ շատ վտանգավոր՝ «ֆաշիստ և ամենահամոզված հակադաշնակցական միաժամանակ»: Ի վերջո, ի՞նչ մարդ է Լ.Տեր-Պետրոսյանը:

-Ես առիթ ունեցել եմ անդրադառնալու ֆաշիզմի մեղադրանքներին: Նախ և առաջ մեր ժողովրդի հեղինակությանը շատ ուժեղ հարվածում է աշխարհով մեկ Լ.Տեր-Պետրոսյանի կողմից տարածվող այն քարոզչությունը, ըստ որի, ստացվում է, որ մեր ժողովրդի կեսը ձայնը տալիս է ֆաշիստական հոսանքին: Դա շատ վիրավորական է մեր ժողովրդի համար: Մի կողմից՝ դա կարող է կասկածներ հարուցել մեր ժողովրդի և պետության նկատմամբ և մյուս կողմից՝ բացարձակապես չի համապատասխանում իրականությանը:

Ինչի՞ համար է դա արվում: Հասկանալի է, որ Լ.Տեր-Պետրոսյանի համար շատ հեշտ կլինի պայքարել, եթե առջևը կանգնած լինեն ուժեր, որոնց հնարավոր լինի անվանել ֆաշիստ, կոմունիստ կամ ֆունդամենտալիստ: Այդ դեպքում համաշխարհային հանրության համար ըմբռնելի կլինի նրա՝ հաճախ օրինականության շրջանակներից դուրս մղվող պայքարը: Սակայն այդ պարզունակ խաղը դժվար թե համոզիչ լինի արտաքին աշխարհի համար:

Եթե լուրջ քննարկենք, թե ինչ բան է ֆաշիզմը, ապա պետք է մատնանշենք, որ նա իր մեջ պարունակում է գաղափարախոսություն, ըստ որի տվյալ ազգը ընտրյալ է, պետք է արհամարհի և ատի մյուս ազգերին և իր հիմանխնդիրները լուծի նրանց հաշվին: Այդպիսի գաղափարախոսություն Հայաստանում ընդհանրապես գոյություն չունի: Այլ հարց է, որ աշխարհի զարգացումը տեղի է ունենում տարբեր ազգերի և մշակույթների մրցակցության պայմաններում, և յուրաքանչյուր ազգ ունի ուրույն մտածողություն և մշակույթ, ինչի շնորհիվ ապահովվում է համաշխարհային քաղաքակրթության բազամազանությունն ու հարստությունը: Մենք չենք ցանկանա կորցնել այն, ինչով տարբերվում ենք մյուս ազգերից, որպեսզի կարողանանք ներդնել մեր ուրույն բաժինը համաշխարհային քաղաքակրթության գանձարանում: Այս առումով կարևոր է համաշխարհային մրցակցությանը մասնակցելը: Երբեմն ես օգտագործել եմ «համաշխարհային ազգ» տերմինը, որի գաղափարը բացված է մեր ծրագրում: Դա նշանակում է տարբեր ասպարեզներում՝ գիտության, մշակույթի, բարձր տեխնոլոգիաների և այլն, հասնել առաջավոր դիրքերի և ստեղծել այնպիսի արժեքներ, որոնք կկիսեն արդեն մյուս ազգերը: Կան այդպիսի բազմաթիվ ազգեր՝ ճապոնացիներ, կորեացիներ, գերմանացիներ, հրեաներ, ֆրանսիացիներ:

Ֆաշիզմի հաջորդ հատկանիշը պառլամենտարիզմի և ժողովրդի կարծիքի մերժումն է: Դա բացահայտ երևում է իշխող վարչախմբի և անձամբ Լ.Տեր-Պետրոսյանի մեջ՝ որպես հակապառլամենտարիզմ և առաջնորդամոլություն: Իսկ ընդդիմադիր կուսակցություններն առաջ են քաշում պառլամենտական կառավարման սկզբունքը, որը բացառում է նախագահի մեծ լիազորությունները:

Ֆաշիզմի երրորդ հայտանիշը ծայրահեղ սոցիալիզմն է, որը վարչարարական մեթոդներով մերժում է մասնավոր ձեռներեցության զարգացումը: Մեր ծրագրերում ընդհակառակը՝ մեծ դեր է տրվում մասնավոր ձեռներեցությանը, որի հետ մեկտեղ արդյունավետ հարկային համակարգը պետք է լուծի աղքատության վերացման խնդիրը:

Չորրորդը գործելակերպն է: Ֆաշիստական մեթոդները շատ բնորոշ են մեր իշխանություններին, և նրանք, ովքեր դա չէին տեսնում, սեպտեմբերի 25-26-ին տեսան, թե այս վարչախումբը ինչպիսի ֆաշիստական եղանակներով է վարվում սեփական ժողովրդի հետ:

Ինչ վերաբերում է իմ հակադաշնակցականությանը, անկեղծ ասած, ես կյանքում ոչ մի բանի հակա չեմ եղել: Միշտ քննել եմ՝ ի՞նչն է ընդհանուր և ի՞նչը՝ տարբեր: Այդ տեսակետից մենք ՀՅԴ-ի հետ աշխատանքի ոճի և որոշ գաղափարների շուրջ, իհարկե, ունենք տարաձայնություններ, սակայն առկա են մի շարք ընդհանուր հիմնարար գաղափարներ, որոնք թույլ են տալիս համատեղ արդյունավետ աշխատել՝ ի շահ մեր ժողովրդի և մեր պետության: Լ.Տեր-Պետրոսյանի ինչպիսին լինելու վերաբերյալ պատկերացում կարող են կազմել բոլորը՝ աչքի առաջ ունենալով նրա խոսքն ու գործը: Նրա արարքները բոլորին տեսանելի են, իսկ ինչ վերաբերում է խոսքին, ապա տպավորություն է ստեղծվում, որ նրա պատկերացումներն առաջընթաց չեն ապրել 1990թ. համեմատությամբ: Դա հստակ երևում է նաև նրա երդման տեքստում, որում դրան հավելվել են մի շարք պարզունակ արտահայտություններ: Կարծում եմ, որ նոր գաղափարների բացակայությունը եղավ հենց այն դրդապատճառներից մեկը, որ ստիպեց նրան գնալ կեղծիքների և բռնությունների իշխանությունը պահելու նպատակով:

-Բավականին տարածված է այն կարծիքը, որ հայ ժողովուրդը առանձնացող է և չի սիրում աղբը տնից դուրս հանել…

-Հարկ չկա հատուկ մտածել՝ «աղբը տնից հանե՞լ, թե՞ չհանել»: Մենք՝ որպես պետություն և ժողովուրդ, շահարգրգռված չենք, որ որևէ մեկը միջամտի մեր ներքին գործերին: Երբ առկա է որևէ թերություն, ոչ թե պետք է մտածել՝ դա պետք է քողարկել, թե ոչ, այլ մտածել այդ թերությունը վերացնելու մասին: Թե դա ինչպիսի տպավորություն կստեղծի դրսում, երկրորդական խնդիր է: Եթե մենք լինենք առողջ, օրինավոր, ինքնամաքրվող պետություն, ապա անկախ մեր ցանկությունից՝ կվաստակենք նաև այլ պետությունների և համաշխարհային հասարակայնության հարգանքն ու վստահությունը:

Ես գավառական եմ համարում այն ազգին, որն իր ներքին ախտերը թաքցնելու միջոցով փորձում է ձեռք բերել այլոց հարգանքը: Սովորաբար դա լինում է կարճատև, և այդ ներքին ախտի սրման պատճառով նման երկիրը հայտնվում է ծանր վիճակում:

-Արցախի հարցում արդյո՞ք տարաձայնություններ ունեք Լ.Տեր-Պետրոսյանի հետ, և արդյո՞ք Ձեր գործունեությունը չի վնասում Արցախին:

-Արցախն արդեն վաստակել է իր անկախությունը, և մենք ամեն գնով պետք է սատարենք այդ անկախությանը՝ միաժամանակ ձգտելով հարցը լուծել ոչ թե պատերազմի, այլ քաղաքական բանակցությունների միջոցով:

Արցախի հաջողությունները կախված են նրանից, թե ինչքանով է ուժեղ նրա թիկունքին կանգնած Հայաստան պետությունը: Սակայն ի՞նչ է նշանակում ուժեղ պետություն: Դա մի պետություն է, որտեղ տիրում է օրինականության, բարոյականության, վստահության մթնոլորտ միմյանց և իշխանությունների նկատմամբ, ինչը նպաստում է երկրի զարգացմանն ու նրա միջազգային կշռի մեծացմանը:

Մեր գործունեությունը միշտ ուղղված էր հենց այդպիսի պայմանների ստեղծմանը, և Հայաստանը թուլացավ ոչ թե ընդդիմության գործունեության, այլ իշխանությունների կողմից ընտրությունները կեղծելու հետևանքով: Կարծում եմ, որ եթե այս վարչախումբը մնա իշխանության գլուխ, ապա դրա հետևանքով երկիրը տարեցտարի կթուլանա: Ժողովրդի վստահությունը չվաստակած իշխանությունը չի կարող զարգացնել երկիրը՝ անկախ այն գումարներից, որ կստանա արտաքին աշխարհից:

-«Ղարաբաղ» կոմիտեի պառակտումը վերջնակա՞ն է, թե՞ կարելի է ենթադրել, որ երբևէ դուք կրկին միասին կլինեք՝ հաշվի առնելով Լ.Տեր-Պետրոսյանի պնդումը, թե դուք նույն ծառի պտուղներն եք:

-Իմ քաղաքական հայացքները ձևավորվել էին դեռևս մինչև «Ղարաբաղ» կոմիտեի ստեղծումը, զարգացում են ապրել ինչպես «Ղարաբաղ» կոմիտեում, այնպես էլ հետագայում: Այնպես որ դա չէ այն ծառը, որի պտուղը ես կարող եմ ինձ համարել: Դա կարող է հիմնածառ լինել այն գործիչների համար, ովքեր սկսեցին քաղաքականությամբ զբաղվել միայն «Ղարաբաղ» կոմիտեի անդամ դառնալուց հետո: Եվ ցավոք սրտի, կյանքը ցույց տվեց, որ նրանք չեն կարողանում այդ ծառից հեռու ընկնել:

-Ինչպե՞ս եք կանխատեսում իրադարձությունների հետագա զարգացումը:

-Մինչև ընտրությունները շատերը հիասթափված էին և հիասթափված էին ոչ միայն իշխանություններից, այլև միմյանցից: Շատերին թվում էր, թե իրենք տեսնում են օրինական պետություն դառնալու ուղին, իսկ մյուսները՝ ոչ, ինչի հետևանքով քիչ չէին ժողովրդից հիասթափվածները:

Ընտրությունները հիմնովին փոխեցին այդ պատկերացումները: Երբ մարդիկ միասնաբար ելան պայքարի հանուն օրինական հասարակության, ապա պարզ դարձավ, որ հանուն արդար, օրինավոր պետության ինքնազոհության գնացողները բազմաթիվ են, ինչը իր խոր հետքը թողեց ժողովրդի հոգում: Կարծում եմ, որ այդ դրական լիցքը չի կորչի, և վաղ թե ուշ Հայաստանը կդառնա մի երկիր, որի քաղաքացի լինելը երջանկություն կլինի: Թե կոնկրետ ի՞նչ եղանակներով դա կյանքի կկոչվի, այժմ դժվար է կանխատեսել:

-Իսկ հնարավո՞ր է արդյոք որ այդ ճանապարհին ընդդիմությունը ժողովրդին կրկին առաջնորդի գրոհելու կառավարական շենքերը:

-Հարցի մեջ արդեն իսկ պնդում կա, թե իբր նման գրոհ արդեն եղել է: Սեպտեմբերի 25-ի հանգամանքների մասին արդեն խոսվել է, և հարկ չկա կրկին անդրադառնալու դրան:

Ինչ վերաբերում է ապագայում ստեղծվելիք իրավիճակին, դա կախված է ոչ միայն ընդդիմությունից, այլև իշխանություններից և ժողովրդական տրամադրություններից: Դա կախված է նաև նրանից, թե իշխանությունները ի՞նչ ելքեր կթողնեն ժողովրդին օրինավոր պետություն կառուցելու նրա ձգտման իրագործման ճանապարհին: Ինչպես ասում եմ՝ կապրենք, կտեսնենք:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը վարեց՝
Հովհաննես Գալաջյանը
«Իրավունք», 1996, 15-21 նոյեմբերի

ԵՎ ՄԵՆՔ ԿՀԱՂԹԵՆՔ

Բոլորս լավ հիշում ենք, թե ինչ երազանքներով մտանք այս ճանապարհը, ինչի մասին էր երազում մեր ժողովուրդը, և ինչքան մոտ էինք այդ երազանքին (ես նկատի չունեմ ընտրությունները, սրանք անցողիկ մի բան էին): Ես նկատի ունեմ 1988, 1990, 1991 թվականները: Երբ թվում էր, թե մենք կունենանք մեր անկախ պետությունը, կկարողանանք ապրել բարոյական, ազգային մթնոլորտում, ժողովուրդը կորոշի պետության բախտը, ճակատագիրը: Երբ մեծ հարգանք կար ամբողջ աշխարհի կողմից մեր նկատմամբ: Մենք իսկապես առանձնանում էինք Խորհրդային Միության հանրապետությունների մեջ, եթե մեզ համեմատում էին, համեմատում էին մերձբալթյան երեք հանրապետությունների հետ: Ժողովուրդն իր կամքը կարողանում էր թելադրել, շատ հարցերում մենք առաջ էինք ընկել, և այդ հարգանքը, որին արժանացավ մեր ժողովուրդը իր պայքարի շնորհիվ, տարածվեց և երկրի ղեկավարի վրա, Լ.Տեր-Պետրոսյանի վրա: Եվ ինքն էլ էր այդ հարգանքը վայելում միջազգային ասպարեզում: Մենք էլ էինք վստահում իրեն, ես նկատի ունեմ ժողովրդի մեծ մասին: Ինձ մոտավորապես հայտնի էր, թե ինչ է լինելու, բայց երբ ես հրաժարական տվեցի, նույնիսկ չխոսեցի այդ մասին:

Շատ բարենպաստ պայմաններ էին, և թվում էր, թե երբեք ճակատագիրը այդքան բարեհաճ չէր եղել: Մենք հասկանում էինք, որ ծանր կլինի՝ պատերազմական վիճակ, շրջափակում, տնտեսության քայքայում, բայց դրա հետ միասին պետք է ծաղկեր մեր ժողովուրդը:

Մարդկանց մի խումբ վերցրեց իշխանությունը իր ձեռքը: Պարզվեց՝ մեկը մանկուց երազում էր իր տունը կառուցել (ինչ տղամարդ, որ տուն չկառուցի, մեր հաշվին պիտի տուն կառուցի), մյուսը երազում էր գնալ միջազգային այցելությունների, դատարկ-դատարկ խոսել որպես երկրի ղեկավար, նա էլ իր երազանքին հասավ: Բայց իրենց անձնական երազանքներին հասնելիս նրանք խորտակեցին ժողովրդի երազանքը: Տարիների ընթացքում այնքան էլ ցայտուն չէր զգացվում մեր և նրանց տարբերությունը: Ամեն մեկը դժգոհ էր, բայց համակերպված էր իր վիճակի հետ: Ասում եմ՝ ամեն մի ժողովուրդ արժանի է իր իշխանությանը: Երևի 1990, 1991, 1992 թվականներին իսկապես մեր իշխանությունները և ժողովուրդը իրար համապատասխանում էին բոլոր չափանիշներով: Բայց կամաց-կամաց

ճանապարհները բաժանվեցին, և իշխանությունները արդեն արժանի չեղան ժողովրդին ո՛չ իրենց բարոյական, ո՛չ ինտելեկտուալ կերպարով, ո՛չ էլ աշխատանքներ կազմակերպելու իրենց շնորհքով: Եվ այդ երկու ուղղությունները պարզորոշ երևացին այս ընտրությունների ժամանակ: Ինչ որոշում էլ ընդուներ Սահմանադրական դատարանը, ինչ էլ գրեին թերթերում, մենք գիտենք, որ այս ռեժիմը ջախջախիչ հարված ստացավ, ամոթալի պարտություն կրեց ընտրություններում: Իշխանության փափուկ փոխանցումը էապես բարձրացնելու էր Հայաստանի պատիվը: Դրա փոխարեն մենք ունեցանք հակառակը: Ե՝վ Ղարաբաղի հարցի լուծումը, և՛ մեր տնտեսության զարգացումը, ամեն ինչ իրենք գցեցին մի հաղթաթղթի վրա՝ մնալ իշխանության ամեն գնով, ինչ ուզում է լինի:

Մենք գործերը տվեցինք Սահմանադրական դատարան: Երբեմն խոսակցություններ են լինում՝ մի՞թե հայտնի չէր, թե ՍԴ-ն ինչ որոշում է ընդունելու: Իհարկե հայտնի էր: Բայց ինչու մենք գործերը տվեցինք ՍԴ: Ես երեք պատճառ նշեմ: Առաջին. մենք մի քիչ լավ էինք մտածում մեր իշխանությունների մասին, ասում էինք, որ մենք իրենց շանս ենք տալիս այս անպատվաբեր վիճակից դուրս գալու, ելք գտնելու: Ելք գտնելու որևիցե փորձ չեղավ: Երկրորդ. այնուամենայնիվ մենք ուզում էինք ցույց տալ, որ հավատարիմ ենք մեր ուղուն՝ սահմանադրական ճանապարհով մինչև վերջ գնալ, նոր մտածել ուրիշ քայլերի մասին: Երրորդ. ՍԴ տալը հնարավորություն տվեց բացահայտ ցույց տալ մեր տվյալների մի մասը ժողովրդին, թղթակիցներին, միջազգային դիտորդներին, համաշխարհային հանրությանը: Ես գտնում եմ, որ մեզ ներկայացնող եռյակը, և Աշոտ Մանուչարյանին ներկայացնող եռյակը կարողացան փայլուն կատարել իրենց խնդիրը, և ՍԴ-ում մենք տարանք փայլուն հաղթանակ: Դա կապված չէ վճռի հետ: Վճիռն ու հաղթանակը տարբեր բաներ են, մենք դրանում համոզվեցինք և՛ անցյալ տարվա ընտրությունների ժամանակ, և՛ այս: Այժմ մենք ունեցանք մի իշխանություն, որը բոլոր նախորդ չարիքներին ավելացրեց նաև նորը՝ նրանք օրինական չեն: Եվ նույնիսկ Լ.Տեր-Պետրոսյանի մերձավոր շրջապատը, մոտիկ մարդիկ, որ ինչ-որ չափով նրան հարգում էին՝ ասելով, որ ժողովուրդը նրան ընդունում է, ընտրել է, արտաքին աշխարհը ընդունում է, հիմա գիտեն՝ ո՛չ ժողովուրդն է ընդունում, ո՛չ էլ արտաքին աշխարհը: Մարդկանց հետ շփվելով զգում եմ, թե ինչ հսկայական ատելություն կա իշխանությունների նկատմամբ: Բայց եթե դու մեկին ատում ես, այդ մեկն էլ քեզ է ատում: Մենք այժմ ունենք մի իշխանություն, որը ատում է իր ժողովրդին: Եթե մինչև հիմա չէին սիրում, այժմ սկսել են ատել:

ՍԴ-ն Լ.Տեր-Պետրոսյանի լեգիտիմությունը չավելացրեց: Այն, որ ինքը անօրինական է, գիտի և՛ մեր ժողովուրդը, և՛ համաշխարհային հանրությունը: Եվ դա ներելի չէ: Իրենք այժմ փորձ են անելու նորից հետ տանել ժողովրդին ստրկացման վիճակին: Եվ պատահական չէ, որ հանրահավաքը հայտարարել էին չարտոնված: Պարզվեց, որ Հայաստանում ոչ մի օրենք չի աշխատում, բացի հանրահավաքների օրենքից: Նրանք փորձելու են սեղմելով գնալ մինչև վերջ, դա իրենց չի հաջողվելու, որովհետև ժողովուրդը արդեն ցույց տվեց, որ ինքը չի համաձայնի ստրկացման վիճակում լինել, որում մասամբ նախորդ ժամանակաշրջանում էր գտնվում: Իրենց թվում է, որ հիմնական դժգոհությունը սոցիալական ծանր վիճակի հետևանք է: Իհարկե, սոցիալական վիճակը մեծ նշանակություն ունի, բայց ժողովուրդը բորբոքված էր և իրենց դեմ դուրս եկավ ոչ թե նրա համար, որ տաս կոպեկ իրեն տան, և ինքը հանդարտվի: Ժողովուրդը հասկանում էր, որ այս ռեժիմի օրոք ինքը ապագա չունի: Մինչև չփոխվի ամբողջ քաղաքականությունը, Հայաստանը ապագա չի ունենա, սոցիալական հարցերը չեն լուծվի, ուղղակի մուրացկանությունն է շատանալու:

Դրել են նոր վարչապետ, որի մասին ես ոչ մի վատ բան ասել չեմ կարող, իրավունք էլ չունեմ: ժամանակ կանցնի, կտեսնենք՝ ինչպես է աշխատում, բայց պետք է հասկանանք, որ շատ քիչ բան է կախված նրանից: Ինչու՞ է Հայաստանում տնտեսական վիճակը ծանր: Որովհետև բացի օբյեկտիվ պատճառներից, Հայաստանի տնտեսությունը իրար մեջ բաժանել են մի քանի հոգի (Վ.Սիրադեղյան, Վ.Սարգսյան, Թ.Տեր-Պետրոսյան), մի քանի հոգի քարտեզը (ինչպես լեյտենանտ Շմիդտի որդիները), բաժանել են մի քանի մասի, ամեն մեկը ինչ-որ մի մասի տեր ու տնօրենն է, և ոչ մի շնորհքով մարդ չի կարող քիթը մտցնել այդ տնտեսության մեջ: Այդ կառուցվածքը փոխվելու՞ է նոր վարչապետի օրոք: Ոչ: Շարունակ գնում են շենքեր, շարունակ տարածքներ են վերցնում: Պետական պաշտոնական քաղաքականությունը փոխվելու՞ է: Ոչ: Ես խոսում էի պրակտիկ տնտեսական քաղաքականության մասին, որը շատ դեպքերում անտեսանելի է: Սա այն քաղաքականությունն է, որը չի բերելու տնտեսության զարգացում: Այստեղ պետք էր իսկապես ժողովրդի կողմից ընտրված մարդ, որի թիկունքում կանգնած լիներ ուժ, որը կարողանար գնալ միջազգային կազմակերպությունների հետ նաև բանավեճի, որպեսզի նրանց օժանդակությամբ փոխեր մեր տնտեսության պաշտոնական կուրսը, և երկիրը դառնար արդյունաբերական: Որպեսզի մենք աշխատեինք և ոչ թե մուրացկան դառնայինք: Սրա հետ միասին գնալու է քայքայում, ժանգոտելու է իշխանությունը, մի իշխանություն, որը հարգանք չունի, նույնիսկ իրենք իրենց նկատմամբ

հարգանք չունեն: Կան բաներ, որոնք չեն ներվում: Նույնիսկ թալանչիները, կառավարության մեջ գտնվող տարբեր մարդիկ արհամարհանքով են սկսել վերաբերվել իշխանություններին: Որովհետև նրանք պարկեշտ մարդիկ չեն: Պետական մեքենան չի կարողանալու աշխատել այնպես, ինչպես պետք է աշխատեր, ներքին անհանգստությունը թույլ չի տալու այդ մեքենային աշխատել: Այլ երկրներում, երբ հակասություն է առաջանում ժողովրդի և իշխանությունների միջև, երբ իշխանությունը արժանի չի լինում ժողովրդին, ապա իշխանությունը փոխվում է: Այս ճանապարհով՝ ընտրություններով իշխանությունները ասացին՝ մեզ փոխել հնարավոր չէ: **Եթե մենք՝ ընդդիմադիր կուսակցություններս, չխառնվենք, ինչի՞ է բերելու սա: Բերելու է պայթյունի, մի օր ժողովուրդը պայթելու է, և լինելու են արյունալի դեպքեր, ես սա ցավով եմ ասում, աշխարհի տասնյակ երկրների փորձով եմ ասում:**

Ապստամբելը օրինակա՞ն է, թե՞ ոչ: Երբ ԱՄՆ-ից եկել էր Քոլինզը և Քլինթոնի նամակն էր բերել Լ.Տեր-Պետրոսյանին, հանդիպում ունեցանք դեսպանատանը: Ինձ հարցրեց՝ ի՞նչ գաղափարներով եք դուք առաջնորդվում: Ասացի՝ շատ հեռու մի գնացեք, ձեր հռչակագրով: ԱՄՆ անկախության հռչակագիրը՝ իրենց ամենահարգված փաստաթուղթը, հետևյալն է. **եթե իշխանությունները չեն բավարարում ժողովրդի պահանջները, եթե ժողովուրդը օրինական ճանապարհով չի կարողանում փոխել իշխանություններին, ապա նրա իրավունքն է ապստամբության միջոցով փոխել իշխանություններին: Եվ այդ ճանապարհը կանգնած է մեր առջև: Ես չեմ ասում, թե դա լավ ճանապարհ է, դա կարող է հարկադրված ճանապարհ լինել:**

Ի՞նչ առաջարկություններ ունի ընդդիմությունը այս տեսակետից: Ես ասեմ, որ երբեք այդքան համերաշխ չենք եղել և շարունակելու ենք համերաշխ հետապնդել մեր խնդիրները:

Կարևորագույն խնդիրը, որ այժմ ունենք մեր առջև, խաղաղ ճանապարհով պարտադրել իշխանություններին նոր նախագահական ընտրություններ, ինչպես պահանջեց և Եվրախորհրդարանը: Ինչպե՞ս հասնել դրան: Կա նաև տարբեր երկրների փորձը այդ ուղղությամբ: Ժողովուրդը պետք է ցույց տա իր ընդդիմությունը իշխանություններին: Մենք կազմակերպվելու ենք ոչ միայն հինգ կուսակցություններով, այլև տարբեր կազմակերպություններով ու խմբերով: Դա չի նշանակում ամբողջ օրը գործադուլներ անել (ցավոք սրտի, աշխատանք էլ չկա, որ գործադուլ անենք), անընդհատ հանրահավաքներ անել, դա նշանակում է կազմակերպված ընդդիմություն ներկա իշխանություններին: Մենք օգտվելու ենք նաև համաշխարհային հանրության կարծիքից և դիմելու ենք նաև նրանց օգնությանը: Մեզ համար իհարկե հանդուրժելի չէ, եթե որևէ պետություն միջամտի մեր ներքին գործերին: Մենք մի մասնիկն ենք համաշխարհային հանրության մեջ, և կան օրենքներ, որպեսզի դու դրա մասնիկը լինես: Կան միջազգային կազմակերպություններ, որոնք հետևում են, թե այն երկրները, որոնք մտնում են այդ համաշխարհային թիմի մեջ, ունե՞ն ներքին կյանքի նույն սկզբունքները, ինչ որ ամբողջ աշխարհում: Այդ տեսակետից մեզ դաշնակից են այն համաշխարհային կազմակերպությունները, որոնք ոչ թե հետապնդում են այս կամ այն պետության շահը այս տարածաշրջանում, այլ հետապնդում են համամարդկային, միասնական կեցության պայմանները: Մեզ դա ձեռնտու է: Եվ մենք մեր ժողովրդի ճնշման միջոցով, միջազգային կազմակերպությունների օգտագործման միջոցով պետք է հասնենք այդ նպատակին՝ թողնելով մեր բոլոր նախորդ խնդիրները ուժի մեջ. և՛նոր տնտեսական քաղաքականությունը, և՛ նոր սոցիալական քաղաքականությունը, և՛ նոր ԱԺ-ի ընտրությունները, և՛ նոր սահմանադրությունը: Բայց դրանց ավելանում է առաջին կարևոր քայլը՝ ժամկետից շուտ անցկացնել նախագահական ընտրություններ: Եվ այդ ուղղությամբ է, որ մենք պետք է պայքարենք:

Ես չեմ կարող պատկերացնել մի մարդու, որը հանդուրժի հինգ տարի էլ ապրել այս պայմաններում: Երբեմն ինձ հարցնում են՝ չե՞ս ընկճվել, ես պատասխանում եմ՝ չեմ ընկճվել, բայց զզվում եմ: Այսպիսի զզվելի պետություն սարքեցին, որ ներսում ապրող մարդիկ, մարդիկ, որոնք ամեն ինչ տվել են իրենց ժողովրդին, պայքարել են այս պետության կայացման համար, զզվանքով են վերաբերվում այս պետությանը:

Ոչ միայն մեր կյանքն է վատացել, մենք տարեցտարի հետ ենք գնում: Մենք արդեն հետ ենք Վրաստանից, Ադրբեջանից, և տարեցտարի էլ ավելի ենք հետ մնալու: Դա լարվածություն է առաջացնելու ոչ միայն մեր պետության ներսում, այլև մեր տարածաշրջանում: Եվ մենք հանդարտ, հավասարակշռված ձևով պետք է կարողանանք կազմակերպել խաղաղ ընդդիմություն, որը կարողանա իշխանության փոփոխությունը իրագործել ոչ միայն հեղափոխությունների միջոցով: Մենք դեռ ունենք խաղաղ ճանապարհ, որով պետք է գնանք: Հուսով եմ, որ այս ճանապարհը արդյունք կտա: Միանում եմ Ռ.Ղազարյանի կոչին՝ ծանր է, բայց մի վհատվեք: Մեր դեմ մի չնչին ուժ է: Այդ մեքենային մի նայեք, բանակի ոստիկանության, կառավարության 90 տոկոսը իրենց հետ չեն, աշխատում են, այո, բայց գնացեք ու բոլորի հետ առանձին-առանձին խոսեք, բոլորը հասկանում են, որ այս երկրում ոչ իրենք ապագա ունեն, ոչ իրենց ընտանիքները:

Եվ մենք կհաղթենք:

Վազգեն Մանուկյանի ելույթը 1996թ.
նոյեմբերի 22-ի հանրահավաքում
«Այժմ», 1996, 27.11-03.12

ԱՅՍ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՊԱԳԱ ՉՈՒՆԻ

1996թ. մեր ժողովրդի, մեր պետության համար կարևոր տարիներից մեկն էր: Տեղի ունեցան նախագահական ընտրություններ: 1991թ. ընտրությունները բնական ձևով ընթացան, և չնայած բոլոր թերություններին, ընտրվեց օրինական իշխանություն: Մենք բոլորս հասկանում էինք, որ ունենք օրինական իշխանություն՝ ընտրված ժողովրդի կողմից, և 1996թ. նոր միայն պետք է ստուգվեր՝ իսկապես Հայաստանը դարձե՞լ է ժողովրդավարական երկիր, և հնարավո՞ր է ընտրությունների միջոցով ձևավորել իշխանություն, թե՞ ոչ: Իմ գնահատականներով ընտրությունների ժամանակ Լ. Տեր-Պետրոսյանը և այն վարչախումբը, որ իշխում է Հայաստանում, ջախջախիչ պարտություն կրեցին: Որո՞նք են այդ պարտության հիմքերը: Ե՛վ ժողովրդի սոցիալական ծանր վիճակը, և՛ այն, որ չկան աշխատատեղեր, փակվում են արդյունաբերական ձեռնարկությունները, փլուզվում է կրթական համակարգը, և՛ արտահոսքը հանրապետությունից: Այս փաստերի թվարկումը կարելի է շարունակել, այս ամենը ժողովրդին հարկադրում է իշխանությունների դեմ: Բայց մյուս կողմից՝ մեր ժողովուրդը քաղաքականապես գրագետ և մտածող ժողովուրդ է և կարողանում է հասկանալ, որ իրավիճակի մի մասը օբյեկտիվ հիմքեր ունի, և ժողովրդի քննադատության մեջ պարզորոշ առանձնանում է՝ ինչն է բնական պատճառներով եղել, որտեղ իշխանությունները մեղք չունեն, ով էլ լիներ նույնը կլիներ, և որն է իշխանությունների մեղքը: Եվ այդ համատարած լկտիության, թալանի, ժողովրդի մասին չմտածելու բոլոր երևույթները, որ տիրում էին Հայաստանում, ցույց էին տալիս, որ բնական պատճառների հետ միասին իշխանությունների մեղքն է, որ Հայաստանի ժողովուրդը չի տեսնում իր ապագան այս երկրում: Այս պայմաններում իշխանություններն այնուամենայնիվ համոզված էին իրենց հաղթանակում, և այն առասպելը, թե ինչքան էլ դժգոհ լինեն Լևոն Տեր-Պետրոսյանից, միևնույնն է, այլընտրանք չի տեսնելու ժողովուրդը, այն տարածված միտքը, թե սրանք արդեն կշտացել են, կգան նորերը և նորից պետք է կշտանան, թե ով էլ լինի, նույնն է լինելու Հայաստանի վիճակը, այդ բոլոր առասպելները հօդս ցնդեցին ընտրությունների ժամանակ: Ժողովուրդը և՛ թիմ տեսավ, որը կարող է փոխարինել իշխանություններին, անձեր և ծրագրեր, որոնք կարող են իսկապես փոխել մեր հանրապետության վիճակը, և՛ գնաց այդ թիմի, այդ ծրագրերի հետևից:

Բոլորը հասկանում էին, որ իշխանությունը փոխելուց հետո միանգամից հրաշք տեղի չի ունենալու, բոլորը չեն կշտանալու, բոլորի համար միանգամից աշխատատեղեր չեն բացվելու, բայց այդ ծրագրերի քննարկման ժամանակ մարդիկ հասկանում էին, որ դա ճանապարհ է, որը Հայաստանը կարող է այս վիճակից դուրս բերել, և այդ ճանապարհով գնալու ցանկություն կար: Ընտրությունների ամբողջ ընթացքում, մանավանդ վերջին օրերին, ծավալվեց մի երևույթ, որը ես կանվանեի ոչ թե ընտրարշավ, այլ, ավելի շուտ, համաժողովրդական շարժում, որը շատ նման էր 1988 թվականին: Հանրապետության բոլոր շրջանների հանրահավաքները (իսկ այդ ժամանակ մենք հնարավորություն ունեցանք լինելու բոլոր շրջաններում) հիստերիկ, հակաիշխանական բնույթ չէին կրում: Իսկապես մարդիկ ոգևորված էին, ուրախ էին, լցված էին լավատեսությամբ և գիտակցում էին, որ այս ճանապարհով հնարավոր է հանրապետությունը դուրս բերել ճգնաժամից, և ներքին վստահություն կար, որ այն փոփոխությունները, որոնք սպասվում էին հանրապետությունում, բոլորի շահի հետ է համընկնում: Ինքնավստահություն էր առաջացել ժողովրդի մեջ, որ այս անգամ իշխանությունը փոխելուց հետո նոր իշխանությունը ժողովրդի կողմից լավ կվերահսկվի, եթե չկատարեն պարտավորությունները, նույն ձևով ժողովուրդը կփոխի նաև այդ իշխանություններին: Այդ մթնոլորտում էին տեղի ունենում ընտրությունները

Հայաստանում: Եվ մարդկանց բաժանումը չէր գնում այսպես՝ լևոնական, վազգենական, հարուստներ և աղքատներ, բաժանումն այսպիսին էր՝ ժողովուրդ և ժողովրդից դուրս եկած շատ փոքրաթիվ մի մաս, որը օգտվելով այն բանից, որ գտնվում է իշխանության ղեկի մոտ, իրեն թույլ է տալիս ցանկացած անօրինականություն: Այդտեղ էր ջրբաժանը: Եվ մեր ժողովրդի համար շատ մեծ նշանակություն ունեցավ միասնությունը կուսակցությունների միջև, ընդ որում ժողովրդի կողմից հարգված և սիրված կուսակցությունների միջև: Շատ մեծ նշանակություն ուներ Դաշնակցության, Դեմոկրատական, ԱԻՄ կուսակցությունների, «Արցախ» միության համերաշխությունը, կարևոր նշանակություն ուներ ՍԻՄ կազմակերպությունը և շատ ուրիշ կազմակերպություններ: Այդ միասնության մեջ յուրաքանչյուր քաղաքական գործիչ, կուսակցություն նաև ինքնասահմանափակում էր մտցնում, ինչ-որ իմաստով զոհաբերություն՝ հանուն ընդհանուր շահի, և դա ավելի էր ոգևորում մեր ժողովրդին: Տեղի ունեցավ այն, ինչ շատերը կանխագուշակում էին:

Երբեմն հարցնում եմ՝ մի՞թե սկզբից էլ պարզ չէր, որ տեղի են ունենալու կեղծիքներ, ի՞նչ իմաստ ուներ գնալ այդ ընտրություններին: Շատ քաղաքական գործիչներ, հասարակական կազմակերպություններ, ժողովրդի մի զգալի մասը 1995թ. հուլիսի 5-ից հետո կողմնակից չէին, որպեսզի նախագահական ընտրություններին իրենց մասնակցությունը ցուցաբերեն՝ հայտարարելով, որ միևնույն է, կեղծիքներ տեղի կունենան: Սակայն շատ կարևոր մի բան կատարվեց այս ընտրությունների միջոցով: Եթե մենք բոյկոտեինք ընտրությունները, ապա ժողովուրդը նոր ճանապարհ չէր տեսնի, և պարզ չէր լինի, թե ինչի շնորհիվ են այս իշխանավորները պահում իրենց իշխանությունը, չէր փշրվի առասպելը նրանց մասին: Իմ մեջ ներքին համոզվածություն կար, որ այս ճանապարհով, չնայած կեղծիքներին, հնարավոր է հասնել արդյունքների: Ես երևի մի քիչ գերագնահատում էի իշխանավորների մտահոգությունը Հայաստանի ապագայի վերաբերյալ, որովհետև պարզ երևում է, որ ոչ դեմոկրատական ձևով նշանակված իշխանությունը պետք է կորցնի իր վարկը ոչ միայն մեր ժողովրդի մոտ, այլ նաև արտաքին աշխարհում, այսինքն՝ Հայաստանը մտնելու է մի նոր փուլ՝ շատ ավելի թուլացած: Եվ նրանք իրենց վրա վերցրին այդ պատասխանատվությունը: Պարզվեց, որ կան անձնական շահեր, որոնք ավելի վեր են դասվում, քան ընդհանուր պետական, ազգային շահերը: Շատ կարևոր նշանակություն ուներ նաև, որ իրենց համար անսպասելի էր այն, ինչ որ կատարվեց: Նրանք շոկի մեջ էին: Ընտրություններից մի քանի օր առաջ արդեն հասկանում էին, որ արդար ընտրությունների դեպքում իշխանությունը կորցնում են: Նրանց մեջ հոգեկան նոր վիճակ էր ստեղծվել՝ անսպասելիություն, և ոչ միայն իրենց, այլ նաև արտաքին ուժերի մեջ: Այդ անսպասելիությունը հոգեկան ծանր վիճակի մեջ գցեց իշխանավորներին, և նրանք սկսեցին քայլեր անել, որոնք համարժեք չէին իրավիճակին: Կար նաև խորը գիտակցություն, որ իշխանություն կորցնելը սոսկ իշխանությունն կորցնել չէ, եկամուտների աղբյուրից զրկվել չէ. ոմանք հասկացան, որ պետք է պատասխան տան իրենց արածների համար: Պատասխանատվությունից խուսափելը հանգեցրեց այն բանին, որ նրանք իշխանությունը պահելու համար դիմեցին ամենակոպիտ ձևերին:

Երբեմն հարցնում եմ՝ իսկ կա՞ր ճանապարհ, որով կարելի էր հասնել հաղթանակի իշխանությունը վերցնելու տեսակետից: Ի՞նչ տեղի ունեցավ սեպտեմբերի 25-ին: 22-ի կեղծիքները, 23-ի, 24-ի հանրահավաքները զուգահեռ սկսեցին ուղեկցվել նաև գաղտնի ձերբակալություններով: Արդեն ամսի 24-ի երեկոյան հանրահավաքից հետո ձերբակալվել էին ընտրարշավին մասնակցած 11 վարորդ, բռնագրավվել նրանց ավտոմեքենաները: Այսինքն՝ իշխանությունները, ոչ մի ուշադրություն չդարձնելով ժողովրդի ցասմանը, սկսել էին ներքևից «մաքրել»՝ ձգտելով վախի մթնոլորտ ստեղծել: Բնական էր այն ցասումը, որ կար մարդկանց մեջ, երբ մենք հավաքվեցին ամսի 25-ին: Ես պատասխանատվություն եմ կրում իմ ամեն մի ասածի համար, և եթե պատասխանատուներ են փնտրում իշխանավորները, ձերբակալություններ են անում, նրանք հստակ գիտեն՝ ես եմ ինձ վրա վերցրել պատասխանատվությունը, և ոչ թե այն երիտասարդները, որոնց որպես պատանդ պահում են այժմ բանտերում: Պատասխանատվություն, բայց ոչ մեղավորություն: Ես գիտակցում էի՝ ինչ կարող էր տեղի ունենալ, բայց գնում էի այդ քայլին, որովհետև փորձը ցույց տվեց, որ միայն լարվածության մթնոլորտում իշխանությունները ստիպված կլինեն խոսել ժողովրդի հետ:

Իշխանություններին նույնպես ձեռնտու էր օգտվել այդ հանգամանքներից: Իրենք ուզում էին, որ ստեղծվի անկառավարելի իրավիճակ, սկսվեն փոխադարձ հրաձգություններ, հարձակումներ տարբեր շենքերի վրա, որպեսզի իրենք կարողանան ձևակերպել դա որպես հեղաշրջում: Պետք է ասեմ, որ իրենց դա չհաջողվեց: Ճիշտ է, ժողովուրդը մտավ ներս, և ես կարծում եմ, որ ճիշտ արեց: Բոլոր դեպքերում ես մեղադրում եմ այն մարդկանց (որոնց ով լինելը կասկածներ է հարուցում շատերի մեջ), որոնք ձեռք են բարձրացրել ԳԽ նախագահի և տեղակալների վրա: Մեր նպատակը մարդկանց հետ ֆիզիկական հաշվեհարդար տեսնելը չէ, անձերի նկատմամբ բռնության բոլոր երևույթները դատապարտելի են: Բայց աշխարհի բոլոր երկրներում ժողովուրդը պայքարում է իր ոտնահարված իրավունքների համար, ոչ ոք ժողովրդի ձեռքից այդ իրավունքը վերցնել չի կարող: Կրակեցին, բայց ժողովրդի կողմից կրակոցին պատասխան չեղավ: Ժողովուրդն իրեն պահեց այնպես, կարծես այդ իրավիճակներին տիրապետելու տասնյակ տարիների փորձառություն ուներ: Երբ մենք ասացինք, որ պետք է դուրս գալ տարածքից, հնարավորություն տալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին շարունակելու աշխատանքները, ժողովուրդը հանգիստ ենթարկվեց, դուրս եկավ՝ չնայելով կրակոցներին: Չհաջողվեց դրդել, որպեսզի ժողովրդի կողմից կրակոցներ և հարձակումներ լինեն նախագահական պալատի վրա: Կրակեցին՝ ժողովուրդը չվախեցավ, ընդհակառակը, ինչքան շատ էին կրակում, այնքան շատ ժողովուրդ էր հավաքվում: Շատ հանդարտ ձևով ժողովուրդը, ենթարկվելով իր ղեկավարների կոչին, իջավ Ազատության հրապարակ:

Ես հատուկ գնահատական եմ ուզում տալ երկրապահ ջոկատներին, ՆԳՆ աշխատողներին, պաշտպանության նախարարության աշխատողներին: Մթնոլորտը այնպես էր, որ ժողովուրդը երես էր թեքել իշխանավորներից, և այդ ժողովրդի հետ միասին ՆԳՆ, ՊՆ հիմնական աշխատակազմը, երկրապահ ջոկատների հիմնական անձնակազմը: Այժմ Հայաստանում խաբված մարդ չկա: Եթե մեկը գնդացիրը ձեռքին կրակում է ժողովրդի վրա, ուրեմն շահ ունի. կա՛մ իրեն տվել են հացի գործարան, որ իր ընտանիքի բարեկեցությունը ապահովի, կա՛մ տվել են լույսի վարձը հավաքելու հնարավորություն: Միայն և միայն այդ մարդիկ էին, որ կրակում էին ժողովրդի վրա, և պատահական չէ, որ այնտեղ հավաքվել էին միայն քաղաքացիական հագուստով մի քանի տասնյակ մարդիկ: Իսկ ՆԳՆ և ՊՆ անձնակազմերը այնուամենայնիվ իրենց պահեցին շատ խոհեմ: Ցավոք սրտի, մեր իշխանությունները դասեր առնելու ունակությունից զուրկ են:

Այդ պայմաններում մենք դիմեցինք Սահմանադրական դատարան: Շատերը ասում էին, որ միևնույնն է, ՍԴ-ն ընդունելու է համապատասխան որոշում, բայց մենք ասում էինք՝ իշխանավորներին երկխոսության, այս իրավիճակից դուրս գալու հնարավորություն տանք: Նրանք դրան չգնացին: ՍԴ դիմելը նաև նպատակ ուներ ցույց տալու հասարակության այն հատվածին, որը քիչ առնչություն ուներ ընտրություններին տեղի ունեցած անցուդարձին, ինչ խախտումներ են տեղի ունեցել: Մասամբ դա հաջողվեց: Բուն ընտրություններում պարտվելուց հետո իշխանավորները անընդհատ փորձում էին բացատրել պարտության պատճառները: Առաջին. ասում էին՝ բնական է, ասացին աշխատավարձերը տասն անգամ կբարձրացնեն, և ժողովուրդը գնաց նրանց հետևից: Դա նշանակում է չհասկանալ մեր ժողովրդի հոգեբանությունը, հանրապետությունում տիրող իրավիճակը: Երբ կեղծիքներն ամբողջ աշխարհին հայտնի դարձան, փորձ արվեց անուղղակի ձևով բացատրել, որ իշխանավորների դեմ կանգնած են այնպիսի ուժեր, որոնց դեմ կեղծիքը արդարացված է: Ամբողջ աշխարհում նույնիսկ արևմուտքի երկրները աչքները փակում են, երբ կեղծիք է տեղի ունենում ֆաշիստական կուսակցության դեմ, կոմունիստական կուսակցության, կրոնական ֆունդամենտալիզմ քարոզող կուսակցությունների դեմ: Քանի որ կրոնական ֆունդամենտալիզմի, կոմունիզմի մեղադրանքներ տալ չեն կարող, փորձեցին ֆաշիզմի մեղադրանք տալ: Չանցավ: Բոլոր երկրները շատ հստակ հասկանում էին, որ այդպիսի բան չկա: Այժմ փորձում են այնուամենայնիվ ապացուցել, որ չնայած կեղծիքներ եղել են, բայց Լ.Տեր-Պետրոսյանը ընտրվել է: Ես կոչ եմ անում մեր կուսակցությանը և մյուս եղբայրական կուսակցություններին՝ մենք պետք է միասնական ձևով գիրք գրենք՝ 1996թ. ընտրությունների իրական գիրքը և թողնենք հետագա սերունդներին:

Այս նոր իրավիճակում հիմնական հարցն այն է, թե ինչ է տեղի ունենալու Հայաստանում: Երբեմն մեզ մեղադրում են, թե մենք մեր հայտարարությունների մեջ հույսեր ենք կապում օտար պետությունների հետ: Բերում են Եվրախորհրդարանի կարծիքը, ասում են՝ տեսեք, իրենց պատճառով ուրիշ երկրները խառնվում են մեր ներքին գործերին: Ես վստահաբար ուզում եմ ասել, որ Հայաստանը ներկա իշխանավորների օրոք հիմնականում ղեկավարվում է դրսից, և քանի թուլանում ենք, այնքան ավելի շատ ենք ղեկավարվում մյուս երկրների կողմից: Վերջ ի վերջո, մենք զարգացող պետություն չենք, մենք սպառում ենք անհամեմատ ավելի շատ, քան արտադրում ենք, մենք մուրացկանությամբ ապրող պետություն ենք դառնում: Այն վարկերը, որ գալիս են, չեն նպաստում նոր աշխատատեղեր ստեղծելուն, այլ ավելի շատ նպաստում են ներկա վարչախմբին՝ պահելու իրենց իշխանությունը, հավերժ սպառող պետություն դարձնելով, և դրանով իսկ հետզհետե վերացնելով մեր անկախությունը: Մենք չենք ընդունում որևէ պետության խառնվելը մեր ներքին գործերին, բայց ընդունում ենք միջազգային հանրության միջամտությունը մեր այն փորձերին, որոնք կոչված ենք մեր պետությունը դարձնելու ժողովրդավարական, այսպիսով ուժեղացնելով և դարձնելով այն իրական անկախ պետություն: Ժողովրդի մեջ այժմ որոշակի հիասթափություն կա, բայց նա վախեցած չէ և չի հանդուրժելու, որ մեր երկրում լինի ոչ լեգիտիմ իշխանություն: Իմ կարծիքով, այս իշխանությունների օրոք Հայաստանը ապագա չունի:

Կան հարցեր, որոնք ամբողջ ազգին են վերաբերում: Միշտ, երբ ծանր վիճակ է եղել Ղարաբաղի հարցում, մենք կարողացել ենք ժողովրդին համախմբել: Այն ժամանակ, երբ Խորհրդային Միության կազմում էինք, գիտակցում էինք, որ Ղարաբաղի հարցի լուծումը անցնում է Հայաստանի անկախության միջով: Այժմ հստակ է. հարցը կլուծվի իշխանութունները փոխելու միջոցով: Այս իշխանության օրոք չենք կարող հավաքական ուժ ցույց տալ՝ ո՛չ քաղաքական, ո՛չ տնտեսական: Մեր ժողովուրդը միշտ էլ միասնական է եղել վճռական պահերին:

Խոսք կա, որ պետք է իշխանությունների հետ երկխոսության գնալ: Ես՝ որպես քաղաքական գործիչ, մեր կուսակցությունը՝ որպես քաղաքական կուսակցություն, երբեք դեմ չի եղել երկխոսության, բայց միշտ կարևորել է, թե ինչի մասին ենք իրար հետ խոսում: Միակ թեման, որի շուրջը ես երկխոսություն եմ ենթադրում, նոր ընտրությունների կազմակերպումն է, նոր Սահմանադրության ընդունումը: Երկխոսություն չի կարող լինել պատասխանատվության բաժանման, տնտեսության միասնական վերականգնման մասին: Ոչ մի միասնական ուժով տնտեսությունը այս վիճակից չես կարող հանել, որովհետև դա հակասում է իշխանավորների փոքր շերտի անձնական շահերին:

Չնայած իշխանության բոլոր փորձերին պառակտելու միասնությունը՝ այն աներեր է: Ընդունելու ենք միասնական որոշումներ: Անկախ նրանից, թե ինչ եզրակացության կգանք, մի բան պարզ է. այս վիճակը հանդուրժել հնարավոր չէ: Այս ճանապարհով գնալով՝ առաջիկա ամիսների ընթացքում Հայաստանում խորանալու է տնտեսական, սոցիալական, բարոյական, ազգային ճգնաժամը, խորանալու են հակասությունները ժողովրդի և իշխանավորների միջև: Կատարվելու է իշխանության քայքայում:

Այս պայմաններում մենք միասնական ճակատ պետք է ստեղծենք, մեր հինգ կուսակցություններով պայմանավորվել ենք, որ մնալու ենք և բանակցություններ ենք վարելու մյուս կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների հետ՝ ստեղծելու համար միասնական մի ճակատ, սատար կանգնելու մեր ժողովրդի շահերին, ապահովելու վերադարձը դեպի օրինականություն, ժողովրդավարություն: Այդ ծրագրերի շուրջը կան նախնական պայմանավորվածություններ: Մենք պետք է խոռվածի, մի կողմ կանգնածի կեցվածք չընդունենք, այլ կարողանանք ակտիվորեն մտնել հանրապետությունում տեղի ունեցող պրոցեսների մեջ: Եվ այդ ճանապարհով գնալով՝ մենք պետք է կարողանանք մեր շուրջը համախմբել հասարակության լայն շերտեր, նաև ուժեղացնենք մեր կուսակցությունը: Միասնական ճակատ ստեղծելով, կուսակցության ամրապնդմամբ և հանրապետությունում տեղի ունեցող պրոցեսներին նրա միջամտությամբ, համոզված եմ, կհասնենք հաղթանակի:

Վազգեն Մանուկյանի ելույթը ԱԺՄ խորհրդաժողովում

«Այժմ», 1996, 25-31 դեկտեմբերի

ՀՀ Գլխավոր դատախազ Ա.Գևորգյանին

ԴԻՄՈՒՄ

Դիմում եմ Ձեզ Գերագույն դատարանում «Սեպտեմբերի 25-ի» դեպքերի կապակցությամբ դատավարությունները սկսելու առիթով:

Ձեզ հայտնի է, որ սեպտեմբերի 25-ի դեպքերին մասնակցում էին երկու կողմ, մեկը իշխանական կառույցներն էին՝ Լ.Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ, մյուս կողմից՝ ժողովրդի հոծ բազմություն՝ իմ ղեկավարությամբ: Մեր պահանջն էր ապահովել ընտրությունների արդյունքների ամփոփման հրապարակայնությունը, օրինականությունը և արդարությունը: Ես որևէ ակնկալիք չունեմ, որ Դուք կամ դատարանը ամբողջ ծավալով և օբյեկտիվությամբ կքննեք նախագահական ընտրությունների ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած դեպքերը: Դատարանի և դատախազության նախորդ մի քանի տարիների գործունեությունը գալիս է հաստատելու, որ Ձեր նպատակը ժողովրդին, արդարությանը և օրենքին ծառայելը չէ, երևույթ, որը ցավոք սրտի, բնութագրական է դարձել նաև պետության ամբողջ ղեկավարության համար: Բայց նույնիսկ այս պայմաններում, եթե իրավապահ մարմինները նպատակ են դրել անօրինական ձևով պատժել սեպտեմբերի 25-ի դեպքերին մասնակից մի կողմին միայն, ապա բնական է, որ այսօր, օրենքի և պարզ տրամաբանության համաձայն, պետք է առաջին հերթին դատի տրվեր այն մարդը, որն, ըստ Ձեր վարած քննության, համարվում է դեպքերի կազմակերպիչը, այսինքն ես՝ Վազգեն Մանուկյանս, և ոչ թե անորոշ չափանիշներով ընտրված մի քանի մարդ, որոնց մեղադրանքը, ի դեպ, զուրկ է որևէ իրավական հիմքից:

Ես Ձեզ արդեն հայտնել եմ, որ բոլոր պարագաներում ցուցմունք կտամ միայն դատարանում, քանի որ այն, ինչ ես ասել և արել եմ այդ օրերին, եղել է բացահայտ, հազարավոր մարդկանց ներկայությամբ: Ուստի, առաջարկում եմ ազատ արձակել բոլոր կալանավորներին և սկսել նոր դատավարություն իմ դեմ:

Վ.Մանուկյան
03.03.97թ.

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ԳՆԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ

- Ես սպասում եմ բուռն քաղաքական գարնան, որովհետև ստեղծված վիճակը, որում այժմ ապրում է մեր հասարակությունը, հանդուրժելի չէ, գումարած նաև այն հարցերը, որոնք կապված են իշխանությունների օրինականության հետ: Կարծում եմ՝ դրանք ժողովրդին անպայման քաղաքական ակտիվության կմղեն:

Մինչև հիմա ժողովրդի և ընդդիմության կողմից հարցերը բարձրացվել և լուծվել են քաղաքական պայքարի շրջանակներում, և հասարակության մեջ պտտվող այն լուրերը, թե ընդդիմությունը գարնանը զինված ապստամբության է «պատրաստվում», մեր նպատակների և գործի թյուրըմբռնման հետևանք է: Այդպես մտածելու համար թերևս առիթ է տալիս այն միտումը, որ ցույցերով և քաղաքակիրթ պայքարի միջոցներով ոչ մի բանի չենք հասնի: Կցանկանայի այդպես դատողներին ասել՝ դա երբեք ու երբեք այդպես չէ: Մենք բավական մեծ արդյունքների ենք հասել այդ ճանապարհով՝ մեր շուրջն ենք համախմբել ժողովրդի մեծ մասին, որ վաղվա օրվա և մեր գործի նկատմամբ մեծ հավատ ունի, և այդ հավատն էլ ցույց է տալիս, որ ժողովուրդը կոտրված չէ և իր իրավունքների համար կպայքարի: Սա է պատճառը, որ ես սպասում եմ քաղաքական ակտիվ գարնան:

Ինչ վերաբերում է երկխոսությանը, ապա իմ կարծիքով դրան պետք է գնան իշխանությունները: Մենք շատ հստակ ձևավորել ենք երկխոսության գնալու մեր պայմանները, գտնում ենք, որ նոր իշխանությունները օրինական չեն, և նոր ընտրություններ են անհրաժեշտ՝ և՛ նախագահական, և՛ խորհրդարանական: Մենք գտնում ենք, որ Սահմանադրությունը օրինական չէ, չի նպաստում մեր երկրի զարգացմանը, և պետք է Սահմանադրությունը փոխվի... Ինչ վերաբերում է սոցիալ-տնտեսական հարցերին, դրանք անմիջականորեն կապված են քաղաքական փոփոխությունների հետ:

Ի դեպ, տեղեկացնեմ, որ իշխանություն-ընդդիմություն երկխոսություն եղել է մեկ անգամ (եթե չեմ սխալվում, 92-ին, երբ ստեղծվեց առաջին դաշինքը): Պետք է ավելացնեմ՝ իշխանությունների մեղքով է, որ մինչև հիմա որևէ լուրջ երկխոսություն տեղի չի ունեցել: Ինչ վերաբերում է այս փուլում կայանալիք երկխոսությանը՝ իշխանություն-ընդդիմություն թևերի միջև, թույլ տվեք հարցնել՝ նրանք ցանկանու՞մ են այդպիսի երկխոսություն... Իշխանությունները տեսնու՞մ են վիճակի բարդությունը, այդ վիճակը փոխելու ցանկություն ունե՞ն: Մենք մեր կողմից միշտ էլ հայտարարել ենք, որ պատրաստ ենք երկխոսության՝ միայն ոչ թե դատարկ թեմաների շուրջ և «ձևի» համար, այլ որոշակի քաղաքական-տնտեսական հարցերի հետ կապված:

Ինչ վերաբերում է ընդդիմությանը կառավարության «պորտֆելներից» բաժին հանելուն, ապա ես կարծում եմ, որ այն երկխոսության թեմա դառնալ չի կարող. Հայաստանում 4 մարդու կողմից՝ Լ.Տեր-Պետրոսյան (ղեկավար), Բ.Արարքցյան, Վ.Սիրադեղյան, Վ.Սարգսյան ձևավորվել է մի ինչ-որ ռեժիմ. թե այդտեղ ով կլինի տրանսպորտի, մշակույթի նախարար, ով՝ վարչապետ... էական չէ.... ռեժիմի մեջ փոփոխություն չի մտցվում... Երկիրը գլորվում է նույն ճանապարհով, որով և գլորվում էր, ավելի ու ավելի խորացնելով և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ բարոյական ու ազգային ճգնաժամը:

Վ. Մանուկյան
«Հայաստանի Հանրապետություն», 1997, 12 մարտի

ՇԱՏ ԲԱՆ ՈՒՆԵՆՔ ԴԵՌ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԱԼՈՒ

Սիրելի՛ հայրենակիցներ, գործընկերներ, բարեկամներ:

Երկար ընդմիջումից հետո մենք կրկին հավաքվել ենք, որպեսզի քննարկենք մեր ժողովրդի, մեր պետության առջև ծառացած խնդիրները: Եվ խնդիրները, և նպատակները գրեթե նույնն են մնացել, որովհետև այս ամիսների ընթացքում ոչ մի փոփոխություն չի կատարվել պետության ներքին կյանքում, ոչ մի դրական տեղաշարժ տեղի չի ունեցել պետության ներսում: Եվ մարդկանց սպասումները, թե այս նոր ժամկետում նոր քաղաքականություն, նոր իրավիճակ կստեղծվի, ավաղ, չարդարացան: Եվ վերստին մեր պետությունը փորձում է, ինչպես անջատած շարժիչով մի մեքենա, բարձրանալ բլուրն ի վեր, բայց շարունակ գլորվում է ներքև: Նախորդ տարիներին այդ անջատած շարժիչով մեքենան կարողանում էր իներցիայով շարժվել, որովհետև մեծ էր պոտենցիալը, որ կուտակվել էր նախորդ տասնամյակների և մանավանդ շարժման ընթացքում: **Մեր ժողովուրդը վերջին հարյուրամյակի ընթացքում երբեք այնպիսի բարենպաստ պայմաններ չի ունեցել, որպիսին մենք ունեցանք 20-րդ դարի վերջին, 80-ական թթ.:** Մենք ունեինք պետություն: Ճիշտ է, այդ պետությունը անկախ չէր, բայց պետություն էր: Ջրոյից 1918թ. մեր պապերի ջանքերով (այդ ժամանակ դաշնակցական կուսակցությունն էր), ամենածանր պայմաններում՝

ցեղասպանությունից հետո, առաջին համաշխարհային պատերազմի օրերին, ստեղծվեց անկախ պետություն (1918-20թթ.), որը, ճիշտ է, 1920թ. կորցրեց անկախությունը, բայց շարունակեց զարգանալ որպես պետություն իր գրեթե բոլոր կառույցներով: 3,5 միլիոն բնակչությամբ մենք, բոլոր թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, քայլում էինք համաքայլ ամբողջ աշխարհի հետ, ունեինք զարգացած արդյունաբերություն, գիտություն, մշակույթ: Եվ մեր կրթական մակարդակով, աշխարհընկալումով, զարգացումով ոչնչով չէինք զիջում արևմտյան որևէ երկրի բնակչությանը: Միևնույն ժամանակ ոտքի էր կանգնել Սփյուռքը, ստեղծվել էին Սփյուռքի կառույցները: Եվ սկսած արդեն 1960-ական թթ., մեր մտավորականության մեջ կրկին արթնացավ ազգային մտածողությունը, ձգտումը հասնելու ազգային նպատակներին, իղձերին: Եվ 1980-ական թթ. մենք կապանքների մեջ էինք մեզ զգում, գիտակցում էինք, որ հզոր ենք, որ մեծ ուժ ենք կուտակել, և այն պայթեց 1988 թվականին: Պայթեց և պայթելով ոչ թե թուլացավ, այլ ավելի ուժեղացավ: Հետագա բոլոր հաջողությունները, այդ թվում և ռազմական հաջողությունները ռազմաճակատում, պայմանավորված էին ներքին, նախորդ տարիներին կուտակած ներուժով, որ 1988 թվականին կրկնապատկեց մեր հնարավորությունները: Չափազանց էական է, որ 1988 թվականից ի վեր գործադրվող մեր ջանքերը համահունչ էին համաշխարհային գործընթացներին: Աշխարհում հոսանք կար, մարդկությունը մի ինչ-որ ուղղությամբ էր գնում: Եթե դու այդ ուղղությանը հակառակ գնաս, ինչ պոտենցիալ էլ ունենաս, մարելու է: Եթե դու համաքայլ ես համաշխարհային գործընթացներին, ապա քո ուժերը կրկնապատկվում, բազմապատկվում են: 1988 թվականից մենք համաքայլ էինք, և ուժեր ծախսելով՝ ոչ թե թուլանում, այլ հզորանում էինք: Ընդհանրապես մի տարօրինակ երևույթ գոյություն ունի: Աշխարհի տարբեր երկրներում տեղի են ունենում տարբեր երևույթներ, առաջին հայացքից դրանցից յուրաքանչյուրն իր արմատն ունի, բայց ընդհանրության մեջ կարծես մի խոր արմատ կա՝ ողջ մարդկությանը առաջ տանող: Ես հիշում եմ 60-ական թթ. երիտասարդական շարժումները: Կարծես տարբեր պատճառներ ունեցող: Մի կողմից Մաո Ցզե Դունը, երիտասարդական շարժումը Չինաստանում, Չեխոսլովակիայի դեպքերը, չեխական գարունը, ուսանողական ապստամբությունը Փարիզում, ամերիկյան երիտասարդական շարժումները, հիպիական շարժումը... և նույն ժամանակ՝ 1965թ. հետո երիտասարդական շարժումները Հայաստանում:

Երկրորդ համաշխարհային հոսանքին մենք ականատես եղանք 1988 թվականից սկսած, երբ համահունչ աշխարհին, մյուս սոցիալիստական երկրներում տեղի ունեցող գործընթացներին, համաքայլ առաջ էինք գնում, և ոչ միայն, առաջավոր դիրքերում էինք: Երբեմն ինքներս մեզ մեղադրում ենք, ասում ենք՝ չարժե առաջ ընկնել: Ոչ, միշտ էլ արժե առաջ ընկնել: Եվ ողջ հարգանքը մեր ժողովրդի հանդեպ, պետության հանդեպ առաջացավ այն տարիներին, երբ համընթաց էինք համաշխարհային հոսանքին:

Այժմ մենք հայտնվել ենք շատ ծանր վիճակում: Իհարկե, հանցավոր տնտեսական քաղաքականությունից բացի, այն, որ արդյունաբերությունը վատ վիճակում է. հազար ու մի դժվարություններ կան, պայմանավորված էր նաև օբյեկտիվ պատճառներով: Բայց այս ճանապարհը ապագա չի խոստանում մեր տնտեսությանը, մեր արդյունաբերությանը: Պետության ներսում տիրապետող է անօրինականությունը, լկտիությունը, ցինիկությունը, անպատիժ թալանը, ազգային արժեքների, էթիկայի մերժումը, նույնիսկ քամահարանքը համամարդկային արժեքների նկատմամբ, ձգտումը համաշխարհային արժեքները օգտագործել ի նպաստ անձնական շահերի: Այդպիսի պետությունը ապագա չունի: Եվ մենք արդեն համաշխարհային հոսանքին դեմ ենք գնում:

Բայց կա մի նոր հոսանք, մենք արդեն տեսնում ենք երրորդ հոսանքը: Նույնանման գործընթացներ են տեղի ունենում և՛ Լեհաստանում, և՛ Ալբանիայում, և՛ Բուլղարիայում, և՛ Բելգրադում: Դարձյալ մի ընդհանուր հոսանք: Իհարկե, երբ ժողովուրդը ոտքի էր ելել Ղարաբաղի համար, արդար և ազատ հասարակություն կառուցելու, մենք ուզում էինք նաև տնտեսական բարեփոխումներ իրականացնել, բայց դա ինքնանպատակ չէր: Երբ Կրոմվելը բուրժուական հեղափոխություն էր անում, իր դրոշի վրա գրված էր արդարություն, ազատություն: Ֆրանսիական հեղափոխության դրոշի վրա նույնն էր գրված, Ամերիկայի ժողովրդի հեղափոխության ժամանակ նույնն էր գրված, նույնն էր գրված նաև մեր դրոշի վրա: Եվ Ղարաբաղի հարցը, և ներքին զարգացման բոլոր հարցերը նույն նշանաբանն ունեին՝ արդարություն, ազատություն; մենք չունենք այդ արդարությունը, մենք չունենք այդ ազատությունը: Եվ կրկին մյուս ժողովուրդներին համահունչ ենք, նույն քայլերով մենք պետք է

կարողանանք կանգնել նույն ճանապարհին, կարողանանք զարգանալ, առաջ գնալ: Երկրի ներսում ծավալվող և՛ այդ լկտիությունը, և՛ ցինիկությունը, և՛ թալանը, որ կատարվում է «շուկա» անվան տակ, բոլոր այդ անօրինականությունները արդարացում չունեն և գագաթնակետին հասան 1996 թվականի ընտրությունների ժամանակ: Ես չեմ պատկերացնում, ինչպես կարող է երկրին օգուտ բերել մի մարդ, որ ինքն էլ, ամբողջ ժողովուրդն էլ գիտակցում է, որ իշխանությունը կեղծ է, օրինական չէ: Երբեք այդպիսի իշխանավորները չեն կարող երկրին բարեկեցություն բերել: Եվ մոլորություն է մտածելը, թե վարչապետներ նշանակելով ներսից կարելի է փոխել ռեժիմը (դեռ որոշ մարդիկ ասում են մտնենք ներս, խորամանկությամբ կամ ուժով փոխենք ռեժիմը): **Հնարավոր չէ: Այս ռեժիմը կարող է փոխել միայն ժողովուրդը, ներսից նման ռեժիմները չեն փոխվում:**

Այս ընտրությունները երևան հանեցին նաև նոր երևույթներ, նոր իրավիճակ, որ մասամբ անսպասելի էր: Մենք տեսել ենք, տեսել ենք դաշինքներ և 1991թ. և 1994թ., բայց ես, որ միշտ դաշինքների մասնակից եմ եղել, որոշ թերահավատությամբ եմ վերաբերվել դրանց, պետք է խոստովանեմ, որ 1996թ. դաշինքը բոլորովին ուրիշ էր, դա եղբայրություն էր, դաշինք չէր: Իսկապես, բոլորն իրենց անձնական կուսակցական շահերը մի կողմ թողած, համախմբվել էին: Այդ միասնության մթնոլորտը մինչև այժմ պահպանվել է, և ես կարծում եմ, կպահպանվի: Որովհետև այն խնդիրները, որ ծառացել են մեր առջև, կուսակցական կամ անձնական չեն: Դրանք մեր երկրի ապագան են, մեր ժողովրդի ապագան: Երկրորդ ընտրությունները շատ արագ վերաճեցին ուղղակի ժողովրդական շարժման: Եվ դա սոցիալական դժգոհություն չէր միայն: Ճիշտ չէ մտածել, թե ժողովրդին խոստացան աշխատավարձը բարձրացնել, և ժողովուրդը գնաց ընտրեց: Կեղծիք է: Այդ նշանակում է բացարձակապես չհասկանալ մեր ժողովրդի հոգեբանությունը: Ես պետք է ասեմ, որ ոչ մի երկրում ընտրությունների ժամանակ այդպիսի մանրամասն ծրագրային վերլուծություններ չեն եղել: Նույնիսկ ամենախուլ գյուղում, հանրահավաքի ժամանակ, եթե դու ասեիր, թե սրանք վատն են, սրանք թալանում են, վատ թագավորին պետք է փոխարինել լավ թագավորով, և մենք կբարգավաճենք, քեզ վրա կծիծաղեին: Եթե դու չկարողանայիր նշել օբյեկտիվ պատճառները, չկարողանայիր զատել, թե ինչն է կախված իշխանություններից, եթե դու հիմքում չդնեիր բարոյականության, ազգայինի, օրինականության հարցերը, ոչ մեկը քո ետևից չէր գա: Այդ հավատքով ժողովուրդը համախմբվեց. և դա իսկապես համաժողովրդական շարժում էր, ընտրություն չէր միայն:

Երրորդ արդյունքը, որ մենք տեսանք, այն էր, որ ժողովրդին վախեցնել հնարավոր չէ: Ես չեմ ուզում հանգամանորեն վերլուծել, թե ովքեր էին ջարդում պարիսպները, ինչով էին շահագրգռված իշխանավորները, բայց ժողովուրդը այդ օրը ցույց տվեց նաև, որ իր ազգային արժանապատվության, մնայուն, համամարդկային արժեքների, օրինականության համար պատրաստ է պայքարել և չի վախենում: Եվ դուք տեսաք, թե ովքեր էին դեմ հանդիպման կանգնածները, փաստորեն ժողովուրդը և դիմացը մի քանի տասնյակ կառույցներից դուրս գտնվող զինվածներ: Գուցե նրանցից մի մասը խաբված էր, բայց մյուս մասն էլ հետապնդում էր իր անձնական շահերը, իր հացի գործարանը, էլեկտրահոսանքից իր փող աշխատելը, թալանի իր իրավունքը, մարդ սպանելու իր անպատիժ իրավունքը:

Եթե մենք ուզում ենք այս երկրի վիճակը փոխել, պետք է կարևորենք, որ խոսքը, իսկապես, ոչ թե վատ թագավորը լավով փոխելու մասին է, այլ շատ ավելի խոր բանի մասին: Նախ մենք՝ որպես ժողովուրդ, պետք է պատկերացնենք, թե ինչ նպատակներ ունենք և ինչի շուրջն ենք համախմբված, որն իր հերթին կազմակերպում է, համախմբում այդ հարցերի շուրջը: Մի ամերիկացի միլիարդատեր կար՝ Կարնեգի, ասում էր՝ թողեք մեզ մեր կազմակերպ-վածությունը, վերցրեք մեր գործարանները, վերցրեք մեր բանկերը, վերցրեք մեր փողերը, չորս տարի հետո մենք կվերականգնենք այդ ամենը: Հարավային Կորեան կարողացավ 1950-90թթ. իր ազգային եկամուտը 120 անգամ ավելացնել: Որո՞նք են մեր նպատակները: Ոմանք փորձում են տարբերակել, թե մենք ունենք ազգային նպատակներ և սոցիալական նպատակներ: Ճիշտ չէ: Դրանք բոլորը ազգային նպատակներ են: Եվ Հայ դատն է ազգային նպատակ, և Արցախի հարցն է ազգային նպատակ, և անկախություն պահպանելն է ազգային նպատակ, և Սփյուռքի հետ միասին համաձույլ աշխատելն է ազգային նպատակ: Երկրում օրինական, պաշտպանված, ազատ կյանքով ապրելու համար պայմաններ ապահովելը, բարեկեցիկ կյանք ստեղծելը նույնպես ազգային նպատակ է, նույնչափ կարևոր: Եվ չի կարելի ասել, թե մենք զոհաբերում ենք ինչ-որ մի բան, հանուն մի ինչ-որ ուրիշ բանի: Խաբեություն է: Մարդկանց ազգային զգացմունքների վրա խաղալու փորձ է կատարվում: Եվ պատահական

չէ, որ երբ դժվար իրավիճակում է հայտնվում պետությունը Լ.Տեր-Պետրոսյանը մեծ վարպետությամբ միշտ կարողանում է Ղարաբաղի հարցը օգտագործել ներքին քաղաքական-ության համար: Այդպես արվեց, երբ առաջին անգամ, թևերը քշտած, խոսում էր դաշնակցության դեմ ՝ մտցնելով մի միտք, ժողովուրդ, դու տառապում ես, որովհետև մենք Ղարաբաղին ենք օգնում: Եվ անընդհատ, երբ ներսում հարցի սրացում էր լինում, կառչում էին Ղարաբաղի հարցին: Կրկնում եմ, մեր նպատակները պետք է ձևակերպված լինեն, ապա կազմակերպվածության աստիճանը, դրանից հետո երկրորդ՝ այդ ամենը կարգավորող օրենքների փուլն է, որին հաջորդում է օրենքների կատարման մեխանիզմը և, ի վերջո, տնտեսական ու սոցիալական ծրագրերը: Դրանք բոլորը շաղկապված են, մեկը առանց մյուսի գոյություն ունենալ չի կարող; Լավ նախարարով կամ վարչապետով չէ, որ պետք է Հայաստանը զարգանա: Եթե այս հարցերի կոմպլեքսը չլուծվի, որևիցե բան Հայաստանում հնարավոր չի լինի փոխել: Եվ այդ նկատառումով է, որ մենք համախմբվել ենք:

Ինչ նպատակներ ենք մեր առջև դրել: Հրանտ Խաչատրյանը արդեն ասաց, որ քննարկումներից հետո ոչ թե հարց է դրված, որ նախորդ ընտրությունների արդյունքները պահպանվեն, այլ մենք խնդիրն ավելի լայն ենք դնում: Ինչ խնդիր էլ որ մենք ուզենք լուծել, կարևորագույն նշանակություն ունի իշխանությունների օրինական լինելը: Եթե իշխանությունները օրինական չեն, եթե չկա փոխադարձ վստահություն ժողովրդի և իշխանությունների միջև, որևէ ծրագիր իրականացնել այդ երկրում հնարավոր չէ: Ուստի, որպես հարցի մի փունջ, ներկայացնում ենք և նախագահական նոր ընտրություններ, և Ազգային ժողովի, և սահմանադրության փոփոխություն, և տեղական իշխանությունների նոր ընտրություններ: Իհարկե, այդ պահանջները առանձին-առանձին տարբեր կշիռ, տարբեր կարևորություն ունեն, բայց բոլորը միասին շատ կարևոր են, որպեսզի երկիրը այս վիճակից հնարավոր լինի դուրս բերել: Կգնա՞ն իշխանությունները այս քայլին, կախված է ոչ միայն իշխանություններից, այլև մեզանից: Կախված է նաև ինչ-որ իմաստով այն վիճակից, որում գտնվում է պետությունը արտաքին ուժերի նկատմամբ: Այն իշխանավորները, որոնք համաշխարհային բանկի ուղարկած ամեն մի թղթին վերաբերվում էին ինչպես Աստվածաշնչին, այժմ մի կեցվածք են ընդունել՝ ասելով, թե իրենք անկախական են, ազգային նպատակներով, և թույլ չեն տա որևիցե մեկի միջամտությունը, իսկ ընդդիմությունը, իբր թե, խրախուսում է միջամտությունը: Սուտ է: Մեկ կամ երկու երկիր է, որ գաղափարական նպատակներով է մեկուսացել, մնացած բոլորի մեկուսացումը տեղի է ունեցել նույն ճանապարհով՝ իշխանավորներն իրենց իշխանությունը պահելու համար ստիպված մեկուսացել են՝ երբեմն խաղալով ժողովրդի ազգային զգացմունքների վրա: Վտանգավոր մեկուսացման ճանապարհին է այժմ Հայաստանը: Մենք ինքներս կողմ չենք. որ որևէ պետություն միջամտի մեր գործերին, բայց կողմ ենք, որ մեր պետությունում հաստատվեն այն համամարդկային արժեքները, որոնք հաստատված են մյուս զարգացած պետություններում, և նրանց կարծիքը մեզ համար նշանակություն ունի:

Ինչպե՞ս ենք պատկերացնում մեր աշխատանքները: Մենք, ապրիլի 4-ին, ժամը 3-ին կունենանք հանրահավաք, բայց հանրահավաքներով չէ միայն, որ հարցը լուծվելու է: Այդ հանրահավաքից հետո և՛ Երևանում, և՛ Հայաստանի տարբեր շրջաններում կունենանք փոքր ու մեծ հանրահավաքներ, հանդիպումներ ժողովրդի հետ: Ծավալվելու է քարոզչական աշխատանք: Մենք պետք է կարողանանք պատասխանել ժողովրդի հարցերին, կարողանանք ժողովրդին համախմբել մեր գաղափարների, մեր խնդիրների, մեր կողմից բարձրացվող հարցերի շուրջը: Դա կպահանջի որոշ ժամանակ: Այդ ժամանակի ընթացքում, եթե իշխանությունները ուզեն կլոր սեղանի շուրջը նստել և քննարկել այդ 4 պահանջները, նաև սոցիալական, տնտեսական պահանջները, մենք պատրաստ ենք երկխոսության: Բայց այդ հարցերի շուրջը և ոչ վարչապետի անձի, ինչպես առաջարկվում էր: Մենք պատրաստ ենք: Ո՞չ, ապա եթե ժողովուրդը իսկապես համախմբվի այդ գաղափարներով, ընդունի այդ խնդիրները, մենք պետք է մի օր նշանակենք և ոտքի կանգնենք: Կանգնենք ամբողջ ժողովրդով, կանգնենք և դիմանանք, կանգնենք և հասնենք մեր նպատակներին: Ի՞նչ կլինի, դա արդեն մեզանից է կախված, բայց մենք չպետք է թույլ տանք, որ իշխանությունները հենց միանգամից դա օգտագործեն ընդհարումներ սարքելու համար: Մենք այսօր արդար գործի համար ենք պայքարում, մենք հանդարտ ենք, հավասարակշռված, և ոգևորված ենք, և սառնասրտորեն առաջ ենք գնում:

Երբեմն հարց են բարձրացնում (և դա իսկապես տանջող հարց է եղել ընդդիմության համար այս տարիների ընթացքում), որ Հայաստանի ներքին խռովությունները, անկայունությունը, հանրահավաքները կարող են ազդել Ղարաբաղի հարցի վրա: Պետք է ասեմ, որ նախորդ տարիներին, դժգոհություններ ունենալով, ընդդիմության և՛ կուսակցությունները, և՛ քաղաքական գործիչները աշխատել են իրենց զերծ պահել, որպեսզի հանկարծ չվտանգեն Ղարաբաղի հարցը: Արտաքին վտանգ այժմ Ադրբեջանի կողմից, այս պահին, անկեղծ ասած, ես չեմ զգում: Ինչքան էլ մենք խոսում ենք մեր բանակի թուլացման մասին, ես այնուամենայնիվ ինֆորմացիա ստանում եմ նաև այլ աղբյուրներից: Ես գիտեմ, որ Ադրբեջանի բանակը պատրաստ չէ պատերազմի, և եթե Ալիևը համարձակվի պատերազմ հայտարարել Ղարաբաղին, նա կպարտվի: Եվ ես չեմ կարծում, որ Ադրբեջանը, որ այժմ զբաղված է իր արտաքին քաղաքականությամբ և տնտեսական զարգացմամբ, մոտ ժամանակներս փորձի ռազմական միջամտությամբ լուծել Ղարաբաղի հարցը: Եթե փորձի, այդ դեպքում մենք մի ժողովուրդ ենք, անկախ ամեն ինչից մենք Ղարաբաղին պաշտպան ենք կանգնում: Բայց այս ճանապարհով, որ գնում է մեր պետությունը, մենք կորցնելու ենք Ղարաբաղը: Ես հեռու եմ այն մտքից, որ մեր իշխանավորներից մեկնումեկը կցանկանա կամ կհամարձակվի դավաճանել Ղարաբաղին: Բայց արտաքին քաղաքականության այս մեկուսացման ճանապարհը և ներքին քաղաքականության անառողջ իրավիճակը տանում է փակուղի: Եթե պետությունը չառողջանա, չենք ունենա հզոր տնտեսություն, եթե չունենանք հզոր տնտեսություն, չենք ունենա բանակ: Հասարակության բարոյալքումը կտարածվի նաև բանակում: Կանցնի 1-2 տարի, և մեր բանակը իրոք այլևս մարտունակ չի լինի: Ուստի մեր այս պայքարը նաև Ղարաբաղի համար է, Ղարաբաղի ապագայի համար: Այս ճանապարհով, որ այժմ ընթանում է մեր պետությունը, Ղարաբաղը դատապարտված է:

Մենք իսկապես հարյուրամյակների ընթացքում երազել ենք այս պահի մասին: Այստեղ հնչեց Հայաստանի հիմնը, բոլորս ոտքի կանգնեցինք: Ես Ռաֆայել Ղազարյանին ասացի՝ հիշու՞մ ես 1988 թվականին այստեղ, երբ «Ղարաբաղ» կոմիտեն էր ստեղծվում, հավաքված էինք այս նույն Կինոյի տանը, ո՞վ կմտածեր, որ կանցնի մի քանի տարի, մենք կունենանք անկախ պետություն, և ամբողջ ժողովրդով ոտքի կկանգնենք այն հնչյունների ներքո, որոնք մի ժամանակ բնակարաններում գաղտնի էին հնչում: Ամենաանհիրականանալի բաները իրականացան այս տարիների ընթացքում, և կհիրականանան նաև այն երազանքները, որոնք փայփայել է մեր ժողովուրդը, ունենալ անկախ պետություն, այդ պետությունում ապրել արժանապատիվ, բարոյական մթնոլորտում՝ հենվելով և ազգային, և համամարդկային արժեքների վրա, իբրև ազատ, հպարտ քաղաքացի: Եվ մենք որպես ազգ, սփյուռքի հետ միասին, ձեռք ձեռքի տալով, կմտնենք խաղաղ մրցակցության մեջ ուրիշ ժողովուրդների հետ:

Մենք շատ բան ենք վերցրել աշխարհից, շատ բանով ենք պարտական աշխարհին, բայց շատ բան ենք տվել, շատ բան ունենք դեռ աշխարհին տալու: Եվ ես համոզված եմ, որ այս ճանապարհով մենք առաջ կգնանք, մենք կհաղթենք, և կհիրականանան այն երազանքները, որոնք առաջնորդում էին մեզ 1988 թվականին, որոնք առաջնորդում էին մեր պապերին 1918 թվականին, որոնք առաջնորդում էին մեր պապերի պապերին նախորդ հարյուրամյակների ընթացքում:

Վազգեն Մանուկյանի ելույթը
Ազգային համաձայնության դաշինքի
համաժողովում 1997թ. մարտի 29-ին
«Այժմ», 1997, 2-8 ապրիլի

ԿԱՄՔ ԵՎ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախորդ շաբաթ Ազգային համաձայնության դաշինքը հանրահավաքներ անցկացրեց Գորիսում, Սիսիանում, Կապանում, Եղեգնաձորում: Ամեն տեղ սարսափելի վիճակ է: Ժողովրդի մասին ոչ ոք չի մտածում: Նա երբեք այսպիսի վիճակում չի եղել: Նույնիսկ պարսկական տիրապետության օրոք գյուղական վայրերում ջրի օրենքը ավելի շատ էր պաշտպանում գյուղացու շահերը, քան ներկայիս գործողը: Պետք է ասեմ, որ ժողովուրդը չի կորցրել իր հավատը, սպասում է, վստահ է, որ գալու է այն օրը, երբ մենք բոլորս ոտքի կկանգնենք, դա

նրան ոգեշնչում է: Հարցերի լուծման այդ ճանապարհն են տեսնում մարդիկ: Ասում են՝ Տեր-Պետրոսյանը պարտվեց, և մենք հաղթեցինք, որովհետև ժողովուրդը դժգոհ էր նրանից: Միայն դժգոհությունը բավարար չէ: Ընտրությունների ժամանակ ժողովուրդը համոզվեց երեք հարցում. նա հասկացավ, որ այս իրավիճակից կարելի է դուրս գալ, կարելի է նորից դառնալ արդյունաբերական երկիր, կարելի է ունենալ պետականորեն հովանավորված գյուղատնտեսություն, զարգացած գիտություն, երկիր, որտեղ կա արդարություն, գործում են օրենքները: Եվ ժողովուրդը հասկանում է, որ այս ամենը իշխանության փոփոխության դեպքում կախարդական փայտիկի մի շարժումով, մի օրում չի լինի: Բայց նա տեսավ այդ ճանապարհը և համոզվեց, որ անհնարին է այս իշխանությունների օրոք, այս իշխանություններով այդ ճանապարհով գնալ: Ի վերջո, ժողովրդի համար կարևոր նշանակություն ուներ նաև այն, որ առաջարկվող բոլոր անցումներն ու տարբերակները մեղմ էին, ոչ ցնցումային: Եվ դրա համար էր, որ ժողովուրդը գնաց ընտրության ու քվեարկեց:

Հիմա շարունակ ինձ մոտենում են և ասում, որ անցած 6-7 ամիսներին երկիրը էլ ավելի անհուսալի վիճակում է հայտնվել, միթե այս վիճակից փրկվելու ելք չկա: Մենք դեռ այդ մասին առիթներ կունենանք շատ ավելի մանրամասն խոսելու, բայց առայժմ ասեմ՝ այո, ես համոզված եմ, Հայաստանը այս վիճակից կարող է դուրս գալ, Հայաստանում վերստին կարող է զարգանալ արդյունաբերությունը, Հայաստանում ժողովուրդը վստահությամբ կարող է նայել նոր իշխանությունների երեսին, հպարտ լինել, որ այս երկրի քաղաքացին է և այս ազգին է պատկանում, որ կարող է ապրել արդար պայմաններում: Այս ամենը հնարավոր է և նույնիսկ ավելին: Համաշխարհային գործընթացներն այնպիսին են, որ եթե տնտեսական հրաշք պիտի տեղի ունենա, ապա առաջին հերթին նոր անկախացած երկրներից միայն և միայն Հայաստանում: Եվ մենք կրկին հանգում ենք նույն խնդրին: Երբ իրավիճակն անելանելի է, ինչպե՞ս փոխել իշխանությունները: Հանրահավաքո՞վ: Ասում են՝ մենք դա արդեն տեսել ենք, հավաքվեցինք, ընտրությունների գնացինք, ընտրեցինք, կռվեցինք: Ի՞նչ հույս կա, որ այս անգամ նույն արդյունքը չի լինելու: Շատ կարևոր և մտատանջող հարցեր: Եվ եթե չլինի այն վստահությունը, թե այս ճանապարհով կարող ենք մի բանի հասնել, դժվար կլինի համախմբվել:

Մի քանի հնարավորություն կա: Սովորաբար այսպիսի երկրներում իշխանությունը փոխվում է, երբ ինքը՝ իշխանությունը գիտակցում է, որ չի տիրապետում իրավիճակին, նոր ուղիով չի կարող տանել ժողովրդին, երաշխիքներ է ակնկալում, որպեսզի մեղմ անցումներով հանձնվի իշխանությունը: Մեր իշխանություններն այդպիսի մտայնություն չունեն: Այդ պայմանները ստեղծվեցին ընտրություններից առաջ, բայց նրանք ասացին՝ ոչ: Մենք տվեցինք նոր հնարավորություն՝ դիմելով Սահմանադրական դատարան: Նրանք ասացին՝ ոչ: Դրանից հետո բերեցին նոր վարչապետ՝ Արմեն Սարգսյանին: Նա նույն ծրագրերն էր ներկայացնում, ինչ որ մենք, և վստահություն ներշնչեց ժողովրդին: Տպավորություն էր ստեղծվում, թե իբր իշխանություններն իրենք են փորձում գնալ այդ ճանապարհով, բայց իրականում իրենց դիրքերը Արևմուտքում թուլացել էին, և պետք էր մի մարդ, որի միջոցով կարողանային խաբկանք ստեղծել: Անգամ ժողովրդին խաբելը չէր մտահոգությունը. ի՞նչ է ժողովուրդ, ո՞վ է նրա ձայնը հաշվի առնում: Արմեն Սարգսյանի հետևում չկար այն ուժը, որով, նույնիսկ ցանկության դեպքում, կարողանար բեկում առաջացնել, ուստի կլանները որևէ անհանգստություն չէին ցուցաբերում: Մտածում էին՝ մի քիչ թող խոսի, Արևմուտքից փող կկորզենք և նույն ձևով կշարունակենք մեր կյանքը: Արմեն Սարգսյանը իրենց համար բավական անսպասելի մի կողմ կանգնեց, ազդեց նաև հիվանդությունը, ցանկանք նրան առողջություն:

Կանչեցին Ռոբերտ Քոչարյանին: Մի կողմ թողնենք այն հանգամանքը, որ այդ նշանակումը հարված էր Ղարաբաղին: Նա Ղարաբաղի ժողովրդի ընտրած նախագահն էր, և զարմանալ միայն կարելի է, որ Ռոբերտ Քոչարյանը համաձայնեց գալ այստեղ և անօրինական իշխանությունների օրոք զբաղեցնել վարչապետի պաշտոնը: Ղարաբաղի ճակատագիրը կախված է Հայաստանից: Մենք Ղարաբաղից սովորելու բան ունենք ռազմական գործում, բայց ոչինչ չունենք սովորելու պետության կառավարման ասպարեզում: Ղարաբաղի բանակը ամուր է, բայց Ղարաբաղում նույն հիվանդություններն են, գուցե ավելի խոր, որոնցով տառապում է մեր հասարակությունը: Եվ Հայաստանի առողջացմամբ պիտի այնտեղ ևս առողջացում սկսվի: Այս առումով նույնպես մենք այնտեղից սովորելու բան չունենք,

սովորեցնելու բան ունենք: Մենք և ղարաբաղցիները մի ժողովուրդ ենք, բայց տարբերություններ կան կազմակերպական փորձառության առումով: Իմ կարծիքով, Լ.Տեր-Պետրոսյանն այս նշանակումով նպատակ ուներ սիրաշահել Սփյուռքին, և դա նրան մասամբ հաջողվեց, բայց և գերագնահատեց այն դրական կարծիքը, որ ուներ ժողովուրդը Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ: Այո, ուներ, երբ նա Ղարաբաղում էր:

Հայաստանը այս վիճակից չի կարող միայն վարչական մեթոդներով դուրս գալ: Հիմա կոմիսարներ են ուղարկվում տարբեր հիմնարկություններ վարչապետի կամ կառավարության կողմից: Բայց այդ կոմիսարները չեն կարող վերահսկել կաշառակերությունը: Եթե դու չես վերացնում արմատները, մարդ ուղարկելով կոմիսարության՝ սոսկ փչացնում ես նրան: Մեկ ամիս չի վերցնի, երկրորդ ամսին կվերցնի: Ինձ մտահոգում է մի ուրիշ բան, այն, որ այս նշանակումը բերելու է և բերում է հակասություններ հայաստանցիների և ղարաբաղցիների միջև: Սկսած 92-ից՝ իշխանությունները շարունակ փորձում են հակասություններ առաջացնել: Փառք Աստծո, այժմ այդ հակասությունները չկան, բայց կարող են առաջանալ և կործանարար հետևանքներ ունենալ մեր ազգի համար, Ղարաբաղի համար: Այս ամենը ցույց է տալիս, որ իշխանությունները պատրաստ չեն հեռանալու մեղմ ձևերով: Նման պայմաններում մեզ առաջարկում են գնալ նոր Ազգային ժողովի ընտրությունների: Այդ առաջարկությունը գալիս է Արևմուտքից: Պետք է ասեմ, որ սեպտեմբերի 25-ից հետո օտարերկրյա դեսպանների և դիվանագետների հետ իմ առաջին հանդիպումներին արվում էր այդ առաջարկությունը. մոռանանք, որ նախագահական ընտրությունների արդյունքները ամբողջությամբ կեղծված են, գնանք ԱԺ-ի ընտրությունների: Այդ մտայնությունը կա նաև իշխանավորների մի մասի մեջ: Բոլորն էլ գիտակցում են, որ այս վիճակը երկար պահել հնարավոր չէ: Եվ հասկանալի է, թե ինչու են արևմտյան երկրները առաջարկում այդ տարբերակը: Կան երկրներ, որոնք շահագրգռված են, որ ներկա իշխանությունները մնան, քանզի այսպիսի թույլ Հայաստանը իրենց ձեռնտու է:

Այդպիսով նրանք և՛ իշխանություն են պահում, և՛ նոր ընտրության միջոցով փորձում են մի նոր իմիջ ստեղծել այս պետության համար: Բայց դրանք ընդամենը 1-2 պետություն են: Հիմնականում արևմտյան երկրներն անկեղծ են խնդրին վերաբերվում: Որովհետև քաղաքակիրթ երկրներում նման ճգնաժամի դեպքում տարբերակը նոր խորհրդարանի ընտրությունն է: Եվ դա ճիշտ մոտեցում է: Նույնպիսի մոտեցում կա նաև ներքին շրջանակներում, մի մասը շահախնդիր է, մյուսը՝ անկեղծ: Այդպիսի մոտեցում կա նաև ընդդիմադիր մի շարք քաղաքական գործիչներիշրջանում, և դա էլ է բնական: Շատերի համար դա ձեռնտու է, որովհետև միամիտը կարող է միայն մտածել, թե մարդիկ իրար հետ գզվռտվում են, որպեսզի երկիրը այս վիճակից հանելու պատասխանատվություն վերցնեն: Այս առումով Ազգային ժողովը ձեռնտու է: Միջանկյալ քայլ է, դու կարող ես քննադատել, բայց ոչ մի բանի համար պատասխանատվություն չկրել: Ուստի այս պայմաններում ԱԺ նոր ընտրությունները կարող են ծուղակ լինել: Եթե իշխանությունները արտաքին ուժերի դրդմամբ գնան ԱԺ-ի նոր ընտրությունների, Հայաստանը կբաժանվի մի քանի հարյուր մաֆիոզ խմբերի, սրանց մեջ կլինեն և՛ զինված ջոկատներ, և՛ Վազգեն Սարգսյանի խմբերը, և՛ երկրապահները, և՛ Վանո Սիրադեղյանի խմբերը և այլն: Եվ ժողովրդի մեջ այն տպավորությունը կստեղծվի, թե ինքը հաղթանակ է տարել, իսկ վերջում կպարզվի, որ տակը բան չի մնացել: Ազգային ժողովի ընտրությունների կարելի է գնալ միայն այն դեպքում, երբ իշխանությունները պարտադրված լինեն, ժողովրդի ցասումը հարկադրի, երբ իրենք նահանջելու, փոփոխության մեղմ տարբերակ փնտրելու լինեն: Այդ դեպքում կարելի է բանակցությունների նստել, պայմանավորվել նոր մեխանիզմների, նոր օրենքի շուրջը, կազմակերպել ընտրություններն այնպես, որպեսզի դրանք իսկապես միջանկյալ մի քայլ դառնան Հայաստանը այս վիճակից դուրս բերելու խնդրում: Այսինքն՝ նույն քայլը մի դեպքում ծուղակ է, իսկ մի այլ դեպքում՝ ելք: Ուրեմն անչափ աչալուրջ է պետք լինել նման հարցերի նկատմամբ:

Իսկ ինչ պետք է անի ժողովուրդը, որպեսզի պարտադրի դա: Այս հանրահավաքը, անշուշտ, պարտադրող ուժ ունի, բայց միայն սա բավարար չէ: Ամբողջ ժողովուրդը պետք է ոտքի կանգնի, համախմբվի: Այն մարդիկ, ովքեր ցանկանում են պայքարել իրենց հայրենիքի ապագայի համար, պետք է միավորվեն իրենց նախընտրած կուսակցությունների մեջ: Ցավոք

սրտի, գործարաններն էլ չեն աշխատում, որ արհմիություններն ասպարեզ դուրս գան: Այս պայմաններում նույնիսկ ցանկության դեպքում գործադուլ անելը դառնում է անիմաստ: Համենայն դեպս, ինքնակազմակերպվածություն պիտի լինի: Ինքնակազմակերպվածության գործընթացը պիտի զարգանա նաև կոլեկտիվներում, թաղերում: Առանց դրա՝ ոչինչ հնարավոր չէ: 1988-ին տպավորությունն այնպիսին էր, թե բոլոր գործողությունները մշակում է «Ղարաբաղ» կոմիտեն: Մենք տիրապետում էինք իրավիճակի 40 տոկոսին, ժողովուրդն ինքն էր ստեղծագործում: Խնդիրներ էր դնում և կարողանում էր դրանք լուծել: Եվ մի՛ սպասեք, որ ընդդիմությունը ասի՝ մի քայլ ձախ կամ մի քայլ աջ: Եթե ժողովուրդը համոզված է, որ հարկավոր է պայքարել և իշխանությունը փոխել, միասին լինել, ինքն էլ պետք է ստեղծագործական աշխատանքով զբաղվի:

Բայց նույնիսկ այդ դեպքում հնարավոր է, որ իշխանությունները մինչև վերջ կառչած մնան իրենց աթոռներից: Ի՞նչ կլինի: Նրանք կփորձեն գնալ փոքր ընդհարումների, որպեսզի այդ պատրվակով տանկերով, զորքով նորից ճնշեն ժողովրդին: Հետևաբար վճռականությամբ հանդերձ պիտի լինենք խոհեմ և հաշվարկենք մեր քայլերը: Եթե ժողովուրդը ոտքի կանգնի, և նրանք դիմեն այդ միջոցին, մեր պայքարը, ես համոզված եմ, կանցնի հաջորդ փուլ: Այն կդառնա ազգային ազատագրական պայքար: Ազգային ազատագրական պայքար չի նշանակում պայքար միայն օտար թշնամու դեմ: Սեպտեմբերի 25-ին այն մի քանի տասնյակ մի քիչ խաբված, մի քիչ սրսկված, մի քիչ շահամոլ տղաների աչքերում, որ կրակում էին ժողովրդի վրա և մահակներով խփում, այնպիսի մի ատելություն կար, որ չեմ տեսել 88-ին ռուս զինվորների աչքերում: Ուրեմն ինչու՞ պիտի նրանք հարազատ համարվեն: Եթե գյուղացին պարսկական տիրապետության ժամանակ ավելի բարվոք վիճակում էր, քան ներկայումս, ապա ո՞վ է ավելի հարազատ, և ով՝ թշնամի: Եթե մեր ժողովուրդը լի է ցասումով, եթե ոտքի կանգնի՝ թելադրելու իր պահանջները, և իշխանությունները դիմեն ռազմական միջոցների, մեր ժողովուրդը կանցնի ազգային ազատագրական պայքարի: Բայց մենք բոլորս գիտակցում ենք, թե դա ինչ է նշանակում. դա որոշ չափով հանգեցնելու է քաոսի, որոշ դեպքերում նույնիսկ կորուստների, նախադեպ է ստեղծվելու: Եվ միշտ հարց է ծագելու՝ արժե՞ այդ գնով: Այս պահին չարժե: Բայց եթե ողջ ժողովրդով ոտքի կանգնենք, և նրանք դիմեն այդ ճանապարհին, այն ժամանակ ցանկացած գին արժե տալ ազատության և երկրի ապագայի համար: Քանզի խոսքը լինելու է ողջ ազգի ապագայի մասին, մեր պետության, ժողովրդի, մեր երեխաների ապագայի:

Եվ մի՞թե մենք, որ հազարավոր տարիներ ապրել ենք այս երկրում, տեսել ենք՝ ինչպես են կառուցվել եգիպտոսի բուրգերը, ականատես ենք եղել Բաբելոնի, Ասորեստանի կործանմանը, պատերազմ մղել Հին Հռոմի հետ, մասնակցել համաշխարհային բոլոր հոսանքներին, մի՞թե պիտի թույլ տանք, որ մի քանի բախտախնդիրների ձեռքով կործանվի ժողովրդի ապագան: Համոզված եմ, որ ժողովուրդը կցուցաբերի կամք, վճռականություն, խոհեմություն՝ հասնելու իր նպատակներին: Համոզված եմ, որ ընդդիմադիր կուսակցությունների ղեկավարները օրինակ կծառայեն ժողովրդին իրենց մաքրությամբ, անձնազոհությամբ ժողովրդի շահերին նվիրվածությամբ: Միևնույն ժամանակ համոզված եմ, որ իշխանություններն էլ կցուցաբերեն խոհեմություն, թույլ չեն տա, որպեսզի մեր սահմանադրական, քաղաքական պայքարը վերածի ազգային ազատագրական պայքարի: Համոզված եմ, որ այդ ամենը տեղի կունենա, բայց դրա համար մենք՝ իբրև մեկ միասնական ժողովուրդ, պիտի հավատանք մեր ապագային:

Մենք պայծառ ապագա պիտի ունենանք: Եվ միայն ուս ուսի տված պիտի գնանք այդ ճանապարհով: Եվ առաջին քայլը ապրիլի 24-ը կլինի: Դա քաղաքական պայքարի օր չէ, դա մեր ազգի միասնության օրն է, մեր ընդհանուր դժբախտության օրը, այն օրը, որը համախմբում է մեզ, որը պարտադրեց սփյուռքահայությանը չձուլվել, համախմբվել, մտնել կազմակերպությունների մեջ, որը դարձավ ՀՅ Դաշնակցության դրոշը, և որով նա եկավ հասավ մեզ, ու մենք այժմ միասին գնում ենք առաջ: Մենք արդար գործի համար ենք պայքարում, մենք միասին ենք պայքարում և մենք կհաղթենք:

Վազգեն Մանուկյանի ելույթը
ապրիլի 18-ին կայացած հանրահավաքում

«Այժմ», 1997, 23-29 ապրիլի

ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ Է ՆԵՏՈՒՄ ՄԵԶ

Ավելի քան մեկ տարի է անցել մեր վերջին համագումարից: Եվ այս անցած ժամանակահատվածը հարուստ է իրադարձություններով, բայց երևի ամենակարևորը, որից ելնելով է, որ պիտի անենք մեր եզրահանգումները, նախագահական ընտրություններն էին: Պետք է ասել, որ նախագահական ընտրություններից առաջ շատ քչերն էին հավատում, որ հնարավոր է հաղթել: Երկու պատճառ կար, առաջինը՝ հիասթափված լինելով ներկա իշխանություններից՝ ժողովուրդը, այնուամենայնիվ, այլընտրանք չէր տեսնում, և երկրորդ՝ համոզված էին, որ ցանկացած արդյունքի դեպքում, միևնույնն է, կեղծիքներ են կատարվելու, և Հայաստանում այդպիսով փոփոխություն չի լինելու: Մենք որոշեցինք, այնուամենայնիվ, առաջադրել մեր թեկնածությունը և առաջ գնալ: Կարծիքներ կային, որ միացյալ կուսակցություններով, միասնական ուժերով պետք է ծավալել պայքարը, բայց մենք սկզբում մերժեցինք այդ գաղափարը: Մենք բանակցություններ էինք վարում կուսակցությունների հետ, բայց գիտակցում էինք, որ եթե միայն մեկը չպետք է առաջ մղվի, այլ կուսակցությունները հավաքվելով ու վիճակ գցելով կամ կեղծ ու կիսակեղծ սոցիոլոգիական հետազոտություններով են որոշելու, թե որ թեկնածուին պիտի սատար կանգնեն, այդ միասնությունը արդյունք չէր բերի: Նախ անհրաժեշտ էր, որ ժողովուրդը որոշի, համոզմունքի գա, և ապա նոր դրա շուրջը կուսակցությունների համախմբվածություն լինի:

Հենց առաջին՝ ստորագրություններ հավաքելու փորձը հանգեցրեց մեզ շատ տարօրինակ եզրակացությունների: Գործում էին 3 խմբեր, բացի կուսակցությունից՝ ստորագրություններ էին հավաքում նաև երկու նախաձեռնող խմբեր: Դրա կարիքը գուցե չկար, մենք շատ հավաքեցինք՝ 84 000, բայց մեր նպատակն էր նաև այդ առիթով մտնել տները և տեսնել, թե ինչ են մտածում մարդիկ, և ինչ կարելի է սպասել ընտրություններից: Պիտի ասեմ, որ հենց առաջին քայլերից մեծ ոգևորությամբ համակվեցին ստորագրություններ հավաքողները: Երևանում և Երևանի շրջակայքում մեր օգտին պատրաստվում էր քվեարկել մոտ 40%-ը, Լ.Տեր-Պետրոսյանի օգտին՝ 15%-ը, և 15%՝ մյուս թեկնածուների: Այսպիսին էին տվյալները, այդպես սկսեցինք:

Ի՞նչ սկզբունքներով առաջնորդվեցինք ընտրարշավի ժամանակ: Նախ և առաջ մենք չէինք հրապարակում իրական սոցիոլոգիական պատկերը: Պետական և տարբեր կուսակցությունների, տարբեր հասարակական կազմակերպությունների սոցիոլոգիական հետազոտությունները թերի էին, մենք ավելի լավ էինք պատկերացնում, թե ինչ վիճակում է Հայաստանը, բայց մեր նպատակը չէր թմբկահարել դա, մեզ համար շատ ավելի կարևոր էր ունենալ մի ինկուբացիոն ժամանակաշրջան, երբ տանում ես մեծ աշխատանքներ, ստանում մեծ արդյունքներ, բայց դրանք ջրի երեսին չեն: Եվ երկրորդ՝ որոշված էր, որ քարոզարշավը մենք տանելու ենք ոչ թե հիմնվելով ատելության վրա, այլ դրական ծրագրով ենք առաջ գնալու: Եվ դա մեզ հաջողվեց: Եթե հիշում եք, ողջ նախընտրական շրջանում մեր քննադատությունը շատ մեղմ էր, ավելի շատ առաջարկում էինք ծրագրեր, որոնք պիտի իրականացնեինք իշխանության գալուց հետո, դրանք ընդունելի էին ժողովրդի համար, մանավանդ մեծ խանդավառություն առաջացրեցին մտավորական խավի մեջ, և մենք մեր նպատակների, ծրագրերի տասնյակ հազարավոր քարոզիչներ ունեցանք:

Իշխանությունները համոզված էին, որ չեն պարտվելու, ուստի բարյացկամորեն հնարավորություն տվեցին հեռուստաեթերի, դահլիճների, հանդիպումների, հանրահավաքների, որոնք, ես կարծում եմ, ճիշտ օգտագործեցինք: Ինչ-որ ժամանակից հետո, երբ արդեն մոտ էին ընտրությունները, անհրաժեշտություն առաջացավ, այնուամենայնիվ, միանալու մյուս կուսակցությունների, մյուս թեկնածուների հետ, և սկսվեց բանակցությունների գործընթաց: Մենք շատ էինք կարևորում դա:

Ի՞նչ էինք սպասում Դաշինքից և ինչ ստացանք: Առաջին՝ կազմակերպչական տեսակետից մենք հանդիպել էինք մեծ բարդությունների, որովհետև Հայաստանում

ընտրարշավը կազմակերպելու համար պետք էին տասնյակ հազարավոր մարդիկ: Եվ գալիս էին հազարավոր կամավորներ: Նրանք պետք էին հանձնաժողովներում ընդգրկվելու համար, պետք էին վստահելի անձինք, որ տեղամասերում կեղծիքներ թույլ չտրվեին: Բայց սա բավական չէր: Մեզ պետք էին քաղաքական, կուսակցական փորձ ունեցող մարդիկ, որ պաշտպանված լինեին, իսկ կուսակցության անդամն արդեն պաշտպանված է որոշ չափով իր կուսակցության կողմից: Եվ միացումը այս տեսակետից մեզ հնարավորություններ տվեց: Ես պետք է անկեղծորեն նշեմ, որ ամենամեծ օգնությունը մենք ստացանք Դաշնակցության կառույցներից: Նրանք տարբեր շրջաններում միանալուց հետո մեծ ակտիվությամբ սկսեցին օգնել մեզ: Մեծ նպաստ բերեցին նաև ԱԻՄ, ՍԻՄ և ՀԴԿ կուսակցությունների անդամները: Այսինքն՝ Դաշինքի շնորհիվ կազմակերպչական առումով ակնհայտ դրական արդյունքների հասանք:

Երկրորդը ֆինանսական խնդիրն էր: Դուք գիտեք, որ Հայաստանում բավական բարդ է ֆինանսական խնդիրները լուծել: Փակված են բոլոր ճանապարհները, որպեսզի նվիրատվությունների, ֆինանսական աղբյուրներ գտնելու միջոցով կուսակցությունները զարգանալ կարողանան և ուժ ներկայացնեն: Դա արվում է պետականորեն ներկա իշխանությունների կողմից, և բոլոր կուսակցություններն էլ հայտնվել են ծանր ֆինանսական վիճակում: Սկզբնական շրջանում ստիպված էինք նաև ինքներս պարտք վերցնել: Մենք, իհարկե, օրենքի պահանջով հաշվետվություն ներկայացրել ենք (ինչ գումար է եկել հաշվի վրա և ինչպես է ծախսվել), բայց բոլորս էլ հասկանում էինք, որ այդ գումարներով ընտրություններ չես կազմակերպի: Մոտավորապես, եթե չեմ սխալվում, 40 000 դոլար է կազմել ողջ ընտրարշավի գումարը, որը, համեմատած արդյուքների հետ, շատ չնչին է: Այդ գումարը շատ հեշտ է հաշվել, ես պաշտոնապես ասեմ, 5000 դոլարը, որը մուծում էին սկզբնական փուլում թեկնածուները, այն գումարները, որոնք վճարվում էին հեռուստատեսությանը և ռադիոյին, գրքույկների տպագրության և դահլիճների համար, այն գումարները, որոնք ծախսվեցին վերջին փուլում, երբ մենք շարասյուներով անցանք ամբողջ Հայաստանով: Բայց օգնում էին այլ կերպ, մեկը բենզին էր տալիս, մյուսը մեքենաներ էր տրամադրում, մեծ ու փոքր տպարանները նույնիսկ տնային պայմաններում բազմացնում էին մեր տպագրվող գրքույկները: 40 հազար դոլարին Դաշինք կազմելուց հետո ավելացավ 2 հազար դոլար: Այսինքն՝ այն խոսակցությունները, թե այդ միացումը բերեց հսկայական գումարներ (իսկ դա շատ էր շահարկվում մամուլում և մասնավոր խոսակցություններում), և թե Դաշնակցությունը դրսից բերեց գումարներ և կազմակերպեց ընտրությունները, ճիշտ չէին:

Երրորդը տոկոսների գումարումն է: Միանալը միայն մեխանիկական տոկոսներ չի ավելացնում: Մեխանիկական տեսակետից, ես կարծում եմ, մենք շատ բան չշահեցինք, եթե ուղղակի թվաբանորեն են թվերը գումարվում: Ինչ-որ թվեր գումարվեցին, բայց ինչ-որ թվեր էլ հանվեցին, որովհետև շատերը, մանավանդ կառավարական շրջաններում, վերապահությամբ էին վերաբերվում Դաշնակցությանը: Եվ եթե ժողովրդի մեջ աճում էին տոկոսները Դաշնակցության շնորհիվ, մասամբ էլ նվազում էին որոշ շրջանականերում: Նույնը կարելի է ասել և ԱԻՄ-ի մասին, ՀԴԿ-ի մասին և այլն: Հետևաբար մեխանիկական տեսակետից ես դժվարանում եմ գնահատել, թե քանի տոկոս ավելացավ միասնությունից հետո: Ավելացավ ոչ թե մեխանիկական գումարը, այլ մարդկանց մեջ հույս ծնվեց, որ ինչ-որ բան կարելի է փոխել, և տոկոսը դրա շնորհիվ աճեց: Ընտրությունները վերածվեցին մի շարժման, երբ ժողովուրդը ձգտում էր թոթափել անընդունելի, ատելի իշխանությունները և նոր իշխանություններ ընտրել: Եվ ես համաձայն չեմ, թե հիմնական արդյունքները ատելության ալիքի վրա եկան, ոչ, մեր ժողովուրդը ատելությամբ չէր առաջնորդվում, ճանապարհ էր տեսնում, վստահում էր, որ այս միացյալ ուժերով հնարավոր է այդ ճանապարհով գնալ: Այն, որ ասում էին՝ ով էլ լինի, նույն բանն է լինելու, կոտրվեց: Ես չեմ ուզում մանրամասն կանգ առնել ընտրությունների օրվա վրա, ինչ խախտումներ տեղի ունեցան: Այդ մասին մենք շատ ենք խոսել, և հավանաբար հաջորդ ելույթներում դեռ կխոսենք, ուզում եմ ասել միայն, որ և՛ մեր կուսակցությունը, և՛ Դաշինքի կուսակցությունները միասնական, որպես մի եղբայրություն, անձնազոհ կերպով գնում էին առաջ: Պայմանավորվածություններն այն կապակցությամբ, թե ով պիտի վարչապետ դառնա, ով պիտի զբաղվի արտաքին քաղաքականությամբ և այլն, հենց սկզբում

մերժեցինք: Պայմանավորվեցինք, որ ընտրություններից հետո նախ՝ ամեն մի հարց լուծելու ենք 2/3 ձայների մեծամասնությամբ, երկրորդ՝ կադրային հարցում առաջնորդվելու ենք ոչ թե կուսակցական պատկանելությամբ, այլ պրոֆեսիոնալիզմով և բարոյականությամբ, և երրորդ՝ Դաշինքի կյանքը երկարատև չի լինելու: Դաշինքով մենք ապահովելու ենք իշխանության փոփոխությունը, փոխելու ենք Սահմանադրությունը և կազմակերպելու ենք արդար պայմաններում նոր Ազգային ժողովի ընտրությունները: Դրանից հետո արդեն Դաշինքը կարող էր քանդվել, առաջանային նոր Դաշինքներ, իրար միանային նոր կուսակցություններ, որոնք ավելի մոտ են իրենց գաղափարական սկզբունքներով: Դրանք էին մեր միասնության նպատակներն ու ծրագրերը:

Այնուամենայնիվ, ընտրություններից առաջ ակնհայտ էր, որ իսկապես իշխանությունները բացարձակապես չեն պատկերացնում մեր ժողովրդի հոգսերը, բացարձակապես չեն հասկանում, թե ինչով է շնչում, ապրում մեր հասարակությունը: Այդ երևում էր և՛ իրենց առաջարկած ծրագրերից, և՛ այն հանգամանքից, որ նրանք մինչև վերջ համոզված էին, որ փոքր կեղծիքներով, համարյա բնականոն, արդար ընտրություններով իրենք հաղթելու են: Վերջին օրերին միայն գիտակցեցին, որ չեն հաղթելու, որը և նրանց խուճապի մատնեց: Ու շատ գործողություններ կազմակերպվեցին խուճապի մթնոլորտում: Եվ այն կեղծիքները, որոնք եթե նախապես մտածված լինեին, կարող էին ավելի նուրբ արվել, արվեցին շատ կոշտ ու կոպիտ ձևերով: Ասում են՝ մյուս երկրներում էլ են խախտումներ լինում: Հայաստանում կեղծիքներ չեն եղել: Հայաստանում պարզապես մի մարդ է դարձել նախագահ, որը ընտրված չի. դրա մասին գիտի և՛ ինքը, և՛ ամբողջ ժողովուրդը:

Սկսվեցին ցույցեր՝ սեպտեմբերի 22, 23, 24, արդեն արդյունքները գալիս էին, մենք ցույցեր էինք սկսել, համախմբված էր ամբողջ ժողովուրդը, և ի զարմանս բոլորիս՝ արդեն հրապարակում ոչ միայն միջին տարիքի մարդիկ և մեծահասակներ էին, այլ նաև երիտասարդություն էր: Շատ մեծ դեր խաղաց ուսանողությունը այդ շարժման ժամանակ: Սեպտեմբերի 23-ին Լ. Տեր-Պետրոսյանը ելույթ ունեցավ: Ոմանք մեղադրում են, որ օրենք խախտեց, երբ շամպայնի բաժակը ձեռքին բաժակաճառ ասաց, շնորհավորեց: Իրականում դա օրենքի խախտում չէր, դա հրամանն էր՝ կեղծեք մինչև վերջ, ես եմ մնալու իշխանության գլխին, եթե պետք լինի, ցանկացած միջոցի դիմելով: Եվ այդ հրամանը սկսեց կատարվել ուժային կառույցների միջոցով: Իշխանությունների կողմից ակնարկվում էր մի միտք. Ռուսաստանում էլ կատարվեցին կեղծիքներ, բայց ընդդիմությունը այդ հարցը չբարձրացրեց, որպեսզի և՛ իրեն պահպանի, և՛ երկրին վնաս չբերի, որ ժողովուրդը մտածի, թե հետագայում այնուամենայնիվ կարելի է օրինական ընտրությունների միջոցով իրավիճակը փոխել: Մեր քննարկումների ժամանակ և՛ մեր կուսակցության ներսում, և՛ մյուս կուսակցությունների հետ այդպիսի առաջարկություն չի եղել, որովհետև դա մենք կհամարեինք դավաճանություն: Ես կրկնում եմ, նուրբ կեղծիքներ չեն եղել, ոչ թե մի քանի թերթիկ են գցել տուփի մեջ, կատարվել է զինված հեղաշրջում, և դա կատարվում էր այն գիշերը, երբ ընտրություններ էին գնում: Մարդիկ բռնի ուժով, ոչ թե թաքուն, ամբողջ ժողովրդի առաջ խեղաթյուրում էին ընտրությունների արդյունքները: Այդպիսի պայմաններում եթե մտահոգված ես երկրի ապագայով, վերը նշված ճանապարհով գնալը, համակերպվելը այդ մտքի հետ կնշանակեր դավաճանել այն ժողովրդական շարժմանը, որի ալիքով մենք գնացինք ընտրությունների: Ուստի նման առաջարկություններ չեն եղել:

Ինչ վերաբերում է զինված ձևով իշխանությունը վերցնելու առաջարկություններին, ապա պիտի ասեմ, որ թե՛ մեր կուսակցության, թե՛ մյուս կուսակցությունների որևէ անդամ այդպիսի սցենար չի առաջարկել: Նման առաջարկություններ եղել են կուսակցություններից դուրս գտնվող մարդկանց կողմից: Ինձ շատերն էին մոտենում, ոմանք՝ պրովակատոր, ոմանք՝ միանգամայն անկեղծ, ասում էին՝ այս պայմաններում միայն զինված կերպով կարելի է վերցնել իշխանությունը: Մենք դրան դեմ էինք, դեռ մի կողմ թողնենք՝ հնարավոր էր, թե ոչ: Բայց բացի այն, որ իշխանությունները այդ օրերին դեռ օրինական էին, և դա կնշանակեր իշխանության հեղաշրջում, մի նոր նախադեպ էր ստեղծվելու, երբ մի խումբ մարդիկ կարող էին զենքով փոխել իշխանությունը: Ես չեմ բացառում, որ Հայաստանում կարող է այդպիսի իրավիճակ ստեղծվել, ցավոք սրտի, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

նորանկախ երկրների զարգացումը ցույց է տալիս, որ բոլոր այն երկրներում, որտեղ եղել է այսպիսի նախագահական համակարգ, վերջ ի վերջո հեղաշրջումով են փոխվել իշխանությունները: Բայց այդ օրերին այդպիսի առաջարկություններ չեն եղել, եթե եղել են առանձին անձերի կողմից, մերժվել են:

Իրականում ի՞նչ առաջարկություններ են այդ ժամանակ քննարկվել. առաջին՝ հայտարարվում է, որ Վազգեն Մանուկյանն է նախագահը, նա կազմում է կաբինետ, նշանակում է որոշ նախարարների, և Հայաստանում ստեղծվում է երկիշխանություն: Այդ սցենարը խորությամբ քննարկվել է: Ես չեմ կարծում, որ դա քաղաքական տեսակետից անգրագետ սցենար է, բայց կարծում եմ, որ այն ժամանակ դա հնարավոր չէր իրականացնել, դա հանգեցնելու էր ուղղակի մի առճակատման, որի արդյունքը, հեռանկարը չէր երևում: Եվ անկեղծ պետք է խոստովանեմ, որ ամեն մի սցենար իրականացնելու համար պետք են մարդիկ, որոնք կարող են այդ անել: Բայց այդ սցենարը պահանջում էր մի մարդ (նախագահ հռչակվողը), որը դերասանական շնորհներ ունի: Ցավոք, ես այդպիսի ձիրք չունեմ: Բայց քաղաքական տեսակետից դա իսկապես քննարկելու հարց էր: Ես այնուամենայնիվ համոզված եմ, որ այդ ճանապարհով արդյունքի չէինք հասնի, բնական է, որ կառույցները չէին ենթարկվելու այդ երկրորդ իշխանությանը, ժողովուրդը, որ մեծ արագությամբ ոգևորվում է, մեծ արագությամբ էլ հիասթափվում է, և դա դարձյալ նահանջ էր լինելու՝ ջրի երեսին թողնելով ծիծաղելի վիճակում գտնվող մարդկանց մի մեծ խումբ: Այդ առաջարկությունը քննարկվեց և չընդունվեց:

Կար մյուս առաջարկությունը, որն արվում է մեր և մյուս կուսակցությունների ներսում. կանգնել խաղաղ հանրահավաքների մինչև վերջ, ինչպես Բելգրադում: Ամեն օր ցույցեր, ամեն օր հանրահավաքներ, և դա կհանգեցնի նրան, որ իշխանությունները կզիջեն: Բելգրադի դեպքերից առաջ էլ մեզ այդ սցենարը ծանոթ էր, որովհետև 1988 թվականից մենք բազմիցս ենք եղել նման վիճակներում: Բայց տպավորությունն այնպիսին էր, որ սեպտեմբերի 24-ից մինչև 25-ը արդեն որոշ հիասթափություն կար, և, կարծում եմ, որ նույնիսկ 25-ին հրապարակում ավելի քիչ մարդ կար, քան թե 24-ին: Սկսվել էին ձերբակալություններ: Համենայն դեպս Վանո Սիրադեղյանը լավ է տիրապետում այդ արվեստին. ղեկավարներին ձեռք չտալ, ձերբակալել շարքայիններին: Արդեն 11 ավտոմեքենա վերցրել էին, որոնք եղել էին շարասյուներում, փակված էին Երևան բերող ճանապարհները, ոստիկանության միջոցով սկսվել էին ճնշումները, և ժողովրդի մեջ էլ կրկին 1995 թվականի չավարտված ընտրություններից հետո մեծ հիասթափություն էր առաջացել:

Եվ մի փաստարկ էլ. նախ ես կարծում եմ՝ այն ժամանակ այդպես տևականորեն կանգնելը հնարավոր չէր, երկրորդ՝ դա լրացուցիչ հնարավորություն է տալիս տարբեր ուժերի՝ միջամտելու Հայաստանի ներքին գործերին: Եվ կար մյուս ճանապարհը՝ առանց այդ էլ սրված իրավիճակը ավելի սրել, գնալ-պահանջել ընտրության արդյունքների վերստուգում: Հարցը կտրուկ էր դրվում: Մենք գիտակցում էինք, որ հակառակորդը իր մարդկանցով կարող է շեղել դեպի պետական հեղաշրջման ճանապարհ, այսինքն՝ զինված մարդկանցով գնալ, նախագահական նստավայրը վերցնել: Կարող էր վախ առաջանալ ժողովրդի մեջ, և այդ սցենարի մեջ ռիսկ կար: Ես դրա մասին խոսել եմ և՛ մեր կուսակցության ներսում, և՛ այլ կուսակցությունների հետ, բայց այդպիսի որոշումները կոլեկտիվ պատասխանատվության վրա դնելը սխալ է: Ուստի ես պատասխանատվությունը վերցրեցի ինձ վրա՝ գիտենալով ամեն մեկի կարծիքը: Դա չի քվեարկվել ո՛չ մեր կուսակցությունում, ո՛չ Դաշինքում: Դա եղել է, շատերի կարծիքը հարցնելով, իմ նախաձեռնությունը և իմ պատասխանատվությունը, և, պետք է ասել, ոչ բորբոքված վիճակում, ինչպես հաճախ շեշտվում է: Ոչ, շատ սառնասրտորեն, մտածված որոշում է եղել իմ կողմից: Իրենք խառնվեցին, ինչպես և սպասվում էր:

Բայց այն սցենարը, որով ուզում էին ժողովրդին տանել դեպի նախագահական պալատ և հրաձգություն սկսել, չհաջողվեց: Այնուամենայնիվ, և՛ ժողովուրդն էր զգոն, և՛ բոլոր կուսակցությունների ղեկավարները բավական լավ էին տիրապետում իրավիճակին: Թե՛ Դաշնակցությունը, թե՛ ԱԻՄ-ը, թե՛ ՍԻՄ-ը, թե՛ դեմոկրատական կուսակցությունը, թե՛ Ռաֆայել Ղազարյանը, որը ինձ համար մենակ արդեն մի կուսակցություն է, բոլորը լավ տիրապետում էին իրավիճակին, և մենք այդ վտանգներից կարողացանք խուսափել: Հավաքվեցինք

Ազատության հրապարակում, և այստեղ նոր առաջարկություններ եղան: Մի առաջարկությունն էր՝ ժողովրդին պահել հրապարակում: Բայց ինչ-որ ժամանակից հետո մենք տեսանք, որ մեծահասակները գնում են, մարդիկ հոգնած էին, մնում էր երիտասարդությունը: Հասկանալի էր, որ ուղարկվելու էին ջոկատներ, որոնք կրակելու էին, լինելու էին զոհեր, բայց այդ զոհերը լինելու էին ապարդյուն, անիմաստ զոհեր՝ երկու կողմից: Թող ոչ ոք չմտածի, թե զոհերը լինելու էին մի կողմից: Եվ զոհերի դեպքում էլ, միևնույն է, պարտություն էր լինելու, ուրիշ ոչինչ:

Կար մի սցենար, որ չքննարկվեց, կարծում եմ, որ այն ճիշտ կլիներ: Եթե գիշերը ավտոմեքենաներով, մեգաֆոններով շրջեինք քաղաքով (այդպիսի դեպքեր եղել են տարբեր երկրներում), և ամբողջ ժողովուրդը ոտքի կանգներ: Երևի դա կդժվարացներ և՛ հրածգությունը, և՛ տանկերով քաղաքը գրավելը: Այդ հարցում, ես կարծում եմ, որ մենք ունենք բացթողում: Նախորդ դեպքերում ես բացթողումներ չեմ տեսնում, ես տեսնում եմ փոքր թերություններ, որ կարելի էր շտկել, ինչ-որ մի բան ճիշտ էր, ինչ-որ բան սխալ, բայց տվյալ դեպքում ես սխալը տեսնում եմ:

Սակայն իշխանություններին սեպտեմբերի 25-ով մենք դրեցինք երկընտրանքի առջև: Հայտարարվեց, որ հաջորդ օրը ժամը 12-ին լինելու է հանրահավաք: Դա կլիներ համազգային հանրահավաք, ամբողջ Հայաստանի ժողովուրդը ոտքի կկանգներ, և նրանք կամ իշխանությունը կթողնեին, կամ տանկերով կգրավեին մեր քաղաքը: Իրենք ընտրեցին երկրորդ ճանապարհը: Եվ վերջին պատրանքները, թե ինչպիսի իշխանությունների հետ մենք գործ ունենք, փշրվեցին, մենք ճակատով զարնվեցինք բետոնե պատին:

Ես չեմ ուզում հանգամանորեն խոսել Սահմանադրական դատարանի մասին, հաջորդ շրջանի մասին, դուք լավ տեղյակ եք, թե ինչ կատարվեց այդ ժամանակ: Դաշինքը մնաց, և հարց դրվեց: Դաշինքը որոշեց ամրապնդել իր շարքերը, ավելացնել նոր անդամներ, ստեղծել համաժողովրդական ճակատ իշխանությունների դեմ, և սկսվեց աշխատանք այդ ուղղությամբ: Դաշինքի մեջ մտան նոր կուսակցություններ, այս նույն սրահում մարտ ամսին մենք հավաքվեցինք, և ընդունվեց այն ընդհանուր ուղղությունը, որով պետք է գնար Դաշինքը, այն է՝ նոր ընտրություններ՝ նախագահական, Ազգային ժողովի և տեղական, սահմանադրության փոփոխություն:

Ես կարծում եմ, որ այդ ժամանակ Դաշինքը դեռ պահպանում էր այն ամրությունը, որ ուներ ընտրությունների ընթացքում: Բայց նոր գործընթացներ սկսվեցին նաև Դաշինքի ներսում: Երբ մենք հավաքվեցինք, որ որոշենք, թե ինչ ուղղությամբ, այնուամենայնիվ, գնանք: Մեր կուսակցության կողմից եղավ առաջարկություն, այն է՝ մենք սկսում ենք հանրահավաքներ, մայիսի 16-ին հայտարարում համազգային հանրահավաքի օր (և շատ կարևոր է, որ նախապես հայտարարվի այդ օրը), և շրջելով բոլոր շրջաններում՝ ժողովրդին համախմբել այդ գաղափարների շուրջը: Մյուս կուսակցությունները հիմնականում հավանություն տվեցին այդ սցենարին, բայց չհամաձայնվեցին, որ ամսի 16-ը հնչի որպես որոշակի օր: Սա իր հերթին բերեց նոր թերություններ, քանզի սցենարի մեխը հայտարարվող օրն էր: Մարդիկ հանրահավաքներից ձանձրացել էին, դու կարող ես փայլուն ելույթ ունենալ, բայց մարդիկ անհամբեր էին դարձել, ասում էին՝ տվեք մեզ գործողությունների ծրագիր, ասեք՝ ինչ է լինելու, որպեսզի գանք ու մասնակցենք: Ուղղակի հանրահավաքի գալ և ելույթներ լսել, թեկուզ շատ գեղեցիկ ելույթներ, նրանց համար շատ քիչ էր:

Որոշ աշխատանք այդ ուղղությամբ տարվեց, բայց առաջացան նոր հիմնախնդիրներ: Ուզում եմ մի քիչ բաց խոսել, ոչ պատշաճ միգուցե, բայց բաց, որպեսզի բամբասանքների փոխարեն մենք կուսակցությունով իմանանք իրականությունը: Խոսակցություններ սկսվեցին ՍԻՄ-ի թերթում հրապարակված կատակների, հեգնանքի ու մյուս հարցերի շուրջ: Եվ ես պետք է ասեմ, որ համաձայն էի այն կուսակցությունների հետ, որոնք բարձրացրեցին այդ հարցը, որովհետև այդ ոճը ինձ հարազատ չէ: Բայց ՍԻՄ-ը այլ կերպ էր հարցը դնում. եկեք Դաշինքով նայենք, լավ չենք արել, բայց արդյոք Դաշինքի ամրությունը պահպանվու՞մ է, թե ոչ: Մեջտեղ էր բերվում Լ.Տեր-Պետրոսյանի հետ հանդիպումների, այցելությունների հարցը: Մենք հատուկ որոշում չէինք ընդունել՝ իշխանավորների հետ պե՞տք է հանդիպել, թե ոչ: Բայց արդեն հասկանալի էր, որ երբ Կինոյի տանը ընդունեցինք ծրագիր, ասացինք՝ այս ծրագրի շրջանակներում մենք պետք է բանակցություններ վարենք իշխանությունների հետ,

ցանկացած հանդիպումը այլ հարցով և՛ ժողովրդի, և՛ Դաշինքի անդամների, և՛ իշխանությունների կողմից ընդունվում էր որպես Դաշինքի թուլություն:

Այդ տեսակետից ընդունելի չէին և՛ Պարույր Հայրիկյանի հանդիպումները Լ.Տեր-Պետրոսյանի հետ, և՛ ծանր կացության մեջ հայտնվեցինք, երբ Դաշնակցության բյուրոն եկավ Երևան: Մենք հարգանքով ենք վերաբերվում Բյուրոյին, ըմբռնումով ենք վերաբերվում, որ սփյուռքահայության կյանքը տարբերվում է Հայաստանի կյանքից, որ նրանք այլ խնդիրներ կարող են իրենց առջև դնել: Բայց մենք դեմ էինք հանդիպման կազմակերպման ձևին, որովհետև, կարծում եմ, Բյուրոն գալուց հետո պետք է առաջինը հանդիպեր Դաշինքին, մենք պետք է խոսեինք: Այնուհետև կարելի էր հանդիպել իշխանությունների հետ: Այնինչ մենք իմացանք հանդիպումներ լինելուց հետո, վերջին օրը Բյուրոն ինձ հրավիրեց իրենց մոտ, բայց ես մերժեցի՝ ասելով, թե թող Բյուրոն գա մեզ մոտ հանդիպման: Ես իրենց կողմից պաշտպանված և ընտրված թեկնածուն եմ, երբ Հայաստանից իրենց կանչում են, բնական է, որ առաջինը իրենք պետք է հանդիպեն Դաշինքի հետ: Այստեղ անձնական ամբիցիա չկա: Բայց այստեղ քաղաքականություն է: Եվ սրանք իսկապես թուլացնում էին մեր ուժերը: Ծայր առան երկարատև քննարկումներ այդ հարցերի շուրջը, որոնք, ինձ թվում է, բավական թուլացրին Դաշինքը:

Պետք է ասեմ, որ վերջին օրերս այդ բոլոր խոսակցությունները մի կողմ են դրվել, ամեն մեկը հասկանում է՝ ինչն է ճիշտ, ինչն է սխալ, մենք փորձում ենք նորից միասնական ուժերով գնալ առաջ և, տա Աստված, որ նորից ստեղծվի այն միասնությունը, որով մենք կարողացանք հաղթել ընտրությունների ժամանակ: Եվ ես համոզված եմ, որ այդ ճանապարհը արդյունքի կբերի:

Ի՞նչ կատարվեց ընտրություններից հետո Հայաստանում: Անցան ամիսներ. ոչ մի հիմնախնդիր չի լուծվել՝ ո՛չ տնտեսական, ո՛չ ֆինանսական, ո՛չ գյուղատնտեսության, ո՛չ արդյունաբերության, ո՛չ ներքին քաղաքականության, ժողովրդավարության, ո՛չ արտաքին քաղաքականության: Բոլոր հիմնախնդիրներն ավելի խորացել են, և բոլոր ոլորտներում ճգնաժամ է: Եվ ճգնաժամից այս իշխանությունները դուրս գալ չեն կարող: Դա բացառվում է: Որովհետև իրենց նախորդ քաղաքականությունը, իրենց չմտածված քաղաքականությունը մինչև ընտրություններն արդեն ճգնաժամի էր բերել երկիրը, որին ավելացավ ոչ օրինական իշխանության հարցը: Քաղաքականության մեջ անում են եզրակացություններ, հետևանքները լինում են նուրբ, բայց տևական և մաշող մեր ժողովրդի համար: Այդպես հյուծում են մեր ժողովրդին, այդ վիճակում է այժմ Հայաստանը:

Ինչ փորձեր են կատարվում: Կարևորագույնը Ղարաբաղի հարցն է: Մանավանդ սփյուռքահայերը, տարբեր կուսակցություններ ասում են՝ համախմբվենք Ղարաբաղի հարցի շուրջը: Կեղծ է դա: Այս իշխանությունների օրոք մենք Ղարաբաղը պահել չենք կարող: Այն ջանքերը, որ պետք է թափվեն այդ միասնության վրա, Ղարաբաղի հարցը պահելու վրա, ապարդյուն են: Կործանելու են Ղարաբաղը: Ոչ թե ազգի դավաճան են, ոչ, չեն ստորագրելու, որ Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ է, այդպես չի լինելու: Կործանվելու է երկիրը, կործանվելու է նաև Ղարաբաղի հարցը: Եվ հիմա խոսել այդ միասնության մասին պարզապես անիմաստ է: Մինչև չփոխվի իշխանությունը՝ ձևավորված նոր սկզբունքների հիման վրա, կեղծ է դա:

Երկրորդ մոտեցումը. հիմա Ռոբերտ Քոչարյանը փորձում է, կլաններին ճնշելով, բյուջեն լցնել: Այդպիսի տպավորություն ես ստանում թերթերից: Հայաստանի համակարգը գիտենք, որ բաղկացած է մի քանի կլաններից, որոնք մենաշնորհ ունեն. ծխախոտը մենաշնորհ է, ոգելից խմիչքը մենաշնորհ է, վառելիքը մենաշնորհ է, այդպիսի մենաշնորհով այս փոքր պետությունը մի քանի չարչիի ձեռքում տառապում է, և քանի որ այդ չարչիներից մեկը Լևոն Տեր-Պետրոսյանի եղբայրն է, մյուսը Վանո Սիրադեղյանի մոտիկ ընկերն է, երրորդը չգիտեմ թե ում է հարկ վճարում, չնչին գումարներ են վճարում պետական բյուջե: Եվ պետական բյուջեն չի լցվում: Հիմա Ռոբերտ Քոչարյանը, քանի որ վարչապետ է, փորձում է ինչ-որ ձևով այդ գումարները վերցնել: Բայց դա վերացնելու՞ է կլանային համակարգը, ոչ, որովհետև այդ կլանների մեջ կան նաև ղարաբաղյան կլաններ: Եվ նա, ճնշելով մի կլանը, տեղ է բացելու մյուս կլանի համար, որի դեմ պայքարել արդեն չի կարողանա: Եվ դա մի նոր հիմնախնդիր է առաջացրել Հայաստանի ներսում՝ հայաստանցիներ-ղարաբաղցիներ հակասությունը, որում

բնականությունից բացի, բոլոր այն ուժերը, որոնց դեմ գնում է Ռոբերտ Քոչարյանը, արհեստական ձևով սրում են սա: Բայց դա վաղուց էր սկսվել, դա հետևողական քաղաքականություն էր, որը կատարվում էր իշխանությունների կողմից և՛ Հայաստանում, և՛ Ղարաբաղում, որ սեպ էր խրում հայաստանցիների և ղարաբաղցիների միջև: Եվ հիմա արդեն խոսում են, թե ղարաբաղցիները եկել են՝ նվաճելու Հայաստանը: Ու այս պայմաններում խոսել միասնության մասին Ղարաբաղի հարցի շուրջը ...

Ես չգիտեմ՝ Լևոն Տեր-Պետրոսյանը մտածվա՞ծ արեց այդ քայլը, սպասու՞մ էր այս արդյունքներին, թե՞ մի հիմնախնդիր լուծելով՝ ինքը ստեղծեց մի ուրիշը, ինչպես միշտ է անում: Ես չգիտեմ, բայց ստեղծվեց նոր հիմնախնդիր:

Հիմա առաջացավ մարդկանց մի նոր խումբ՝ շատ սիրված, շատ հարգված, որ ուզում են Լուկաշենկոյի ճանապարհով մտնել Ռուսաստանի կազմի մեջ: Չգիտեմ ինչու, երբ հայերի մեջ հիմնախնդիր է առաջանում, վեճը պտտվում է սրա շուրջը՝ Պարսկաստա՞ն, թե՞ Բյուզանդիա, Ռուսաստա՞ն, թե՞ Անգլիա, Ռուսաստա՞ն, թե՞ Ամերիկա: Չեն ասում՝ բա մե՞նք ինչ ենք դառնում: Դա ստրկամտություն է: Ես գտնում եմ, և նախընտրական ծրագրի մեջ էլ ասում էինք, որ մեզ համար իսկապես շատ կարևոր է լինել նույն թիմի մեջ, ինչ որ Ռուսաստանը, արդյունաբերությունը զարգացնելու համար մեզ հարկավոր է մեծ տարածքներում գործ ունենալ մոտավորապես մեզ նման մրցունակություն ունեցող ապրանքների շուկայում, որը դարձյալ Ռուսաստանն է: Բայց դա ո՞ր Ռուսաստանն է: Մենք հիվանդ ենք, հիվանդ է նաև Ռուսաստանը: Խոսքը առողջացած Ռուսաստանի հետ առողջ հարաբերությունների մասին է, քաղաքական, ռազմական, տնտեսական: Մեծահասակների կարոտախտը կարելի է հաս-կանալ: Բայց Ռուսաստանում էլ չեն կարողանում վճարել աշխատավարձերը, նրանց մոտ էլ է «բեսպրեդել»: Ի՞նչ է, իրենք գալու են մեր իշխանությու՞նը փոխեն: Հենց որ Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ, այս իշխանությունները դառնում են հավերժ, որովհետև արդեն մենք չենք փոխում, իրենք են փոխում և փոխում են այլ սկզբունքներով՝ ինչքանով է ենթակա Հայաստանի ղեկավարությունը իրենց: Սրանցից ավելի ենթակա մարդ գտնել իրենք չեն կարող:

Դեռ մի կողմ թողնենք՝ ինքը՝ Ռուսաստանը ուզում է, թե ոչ, բայց ինձ սարսափեցնում է պատմական հիշողության կորուստը: Երբ անընդհատ նույնն է կրկնվում հայ ժողովրդի պատմության մեջ:

Եվ ի՞նչ հույս ունենք: Ոմանք ասում են՝ դրա միջոցով կլուծենք Ղարաբաղի հարցը: Սուտ է դարձյալ: Ռուսաստանն ինքը ենթարկվում է միջազգային ճնշմանը, Ռուսաստանն իր ազգային շահերն է ոտնահարում արտաքին ճնշման տակ: Եվ ի՞նչ, նա կզիջի իր արտաքին ճնշմանը, կզիջի իր ազգային շահերը, բայց չի զիջի Ղարաբաղի՞ հարցը: Առաջին հարցը, որ կդնի խաղասեղանին զիջումների ժամանակ, կլինի Ղարաբաղն ու Հայաստանը: Իհարկե, այս հոսանքները շատ օգտակար են իշխանավորների համար, լավ կլիներ մի կողմից լինեին ռուսոֆիլ, մյուս կողմից՝ ամերիկոֆիլ, մեկ սրանց սեղմես, մեկ նրանց սեղմես, սրա մոտ ասես՝ նայիր, պահում եմ, որ այն չլինի, նրա մոտ ասես՝ պահում եմ, որ այն չլինի: Շատ հարմար է Հայաստանի ղեկավարության համար, բայց օգտակար չէ մեր ժողովրդի համար:

Գիտե՞ք, կյանքը մարդուն միշտ մարտահրավերներ է նետում: Մարդ կա մարտահրավերը չի ընդունում, կոտրվում է: Մարդ կա, որ մարտահրավերը ընդունում է, դրանով է ճակատագիրը ստուգում մարդուն: Եվ դրանից հետո է ճակատագիրը հնարավորություն ընձեռում: Նույնը կատարվում է ազգերի հետ: Ղարաբաղը մեզ համար մարտահրավեր է: Մեր ամբողջ ապագան կախված է նրանից՝ մենք այդ մարտահրավերը կընդունենք և կհաղթենք, թե՞ կկոտրվենք: Պարտվենք՝ դառնալու ենք չքավոր, այս երկրագնդում արհամարհված մի փոքր պետություն, փոքր ժողովուրդ: Շատ ծանր է վիճակը, բայց մարտահրավերները կան և՛ Ղարաբաղի հարցում, և՛ տնտեսության զարգացման հարցում: Պատահական չէ, որ Միջազգային արտարժույթի հիմնադրամի նախագահը գալիս է և ասում այն, ինչ մենք ասում էինք 2-3 տարի առաջ, որ այս կուրսի շարունակությունը տանելու է նրան, որ Հայաստանում լինելու է 1,5 միլիոն մարդ, աճեցնելու են լոլիկ, լինելու են փոքր առևտրական ձեռնարկու-թյուններ: Այսպիսի Հայաստան են ուզում տեսնել: Դա էլ է մարտահրավեր, մենք կընդունենք, թե ոչ: Ո՞վ կհավատար, եթե մի քանի տարի առաջ ասեին, որ Ռուսաստանը պատերազմ

կիայտարարի Չեչնիային և կպարտվի: 1992թ. քչերն էին հավատում, որ Ադրբեջանի մարտահրավերին մենք պատասխան կտանք և կհասնենք մինչև Արաքս գետը:

Եվ այժմ Հայաստանին, մեր ժողովորդին նետված են մարտահրավերներ: Այդ մարտահրավերները այս իշխանությունների օրոք չեն ընդունվելու, մտքներիցդ հանեք: Միասնություն, այս իշխանությունների հետ լուծել այս կամ այն հարցը չի հաջողվելու: Անառողջ պետություն է, անառողջ իշխանություններ, և անառողջ է դառնում նաև հասարակությունը: Այդպիսի հասարակությունը, այդպիսի ժողովուրդը, այդպիսի պետությունը որևիցե մարտահրավեր չի կարող ընդունել և լուծել:

Միևնույն ժամանակ աշխարհի մարդկությունը սրընթաց գնում է 21-րդ դար: 21-րդ դարը միայն տարեթվի, հարյուրամյակի, հազարամյակի փոփոխություն չէ: Պատահակա՞ն է, թե՞ միստիկ մի բան, բայց XX դարի վերջում փոխվում է ամբողջ մարդկությունը: Նոր երկրագունդ է ձևավորվում, նոր աշխարհայացք, նոր մտածողություն, նոր արժեքներ, նոր սկզբունքներ, նոր դաշինքներ: Եվ եթե մենք, առանց հասկանալու, թե ուր է գնում մարդկությունը, չփորձենք օգտվել դրանից, չփորձենք առաջ գնալ, այլ մեկը երազի Վաշինգտոնի, Լինքոլնի Միացյալ Նահանգների ժամանակաշրջանի մասին, մյուսը երազի Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մասին, երրորդը երազի Մորգանի, Ռոքֆելլերների ժամանակվա այն թալանչի Ամերիկայի մասին, ապա մենք անընդհատ հետ ենք գնալու, առաջ չենք գնալու: Խորհրդային Միության փլուզումը միայն սառը պատերազմի ավարտ և հաղթանակ չէր: Նոր աշխարհ ձևավորվեց: Ճիշտ է, հիմա Միացյալ Նահանգները միաբևեռ աշխարհ է ուզում կառուցել: Տեսականորեն այդ բեռը Միացյալ Նահանգները իր ուսերի վրա տանել չի կարող, առաջանալու են նոր բևեռներ, պետությունների նոր խմբավորումներ:

Պարզ երևում են հետևյալ գործընթացները: Մի կողմից՝ ամբողջ աշխարհում ինտեգրացում է կատարվում՝ և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ ռազմական: Բայց այդ ինտեգրացման գործընթացները հավասարաչափ չեն, կազմվում են պետությունների խմբեր, և տարբեր խմբերում արագությունը տարբեր է: Ես դարձյալ վերադառնամ Ռուսաստանի հարցին. շատ էական կլինի մեզ համար առողջ Ռուսաստանի հետ (Վրաստանի և Ադրբեջանի ցանկությամբ, որովհետև իրենց վրայով չենք կարող անցնել) և մյուս հանրապետությունների հետ լինենք մի թիմի մեջ: Դա մեզ համար շատ կարևոր է: Բայց զարմանալին այն է, որ այդ ինտեգրացիայի հետ աճում է ազգային տնտեսությունը: 60-ական թթ. խոշոր գործարանների ժամանակաշրջանն էր, երբ ստեղծվում էին հսկա գործարաններ, վիթխարի հյուրանոցներ: Նոր ժամանակաշրջան ենք հիմա թևակոխել: Պարզվեց, որ արդյունաբերությունում փոքր գործարաններով կարելի է նույն արտադրանքը տալ, մարդիկ նախընտրում են փոքր հյուրանոցներ: Եվ եթե նախորդ ժամանակաշրջանում փոքրաթիվ ժողովուրդները երաշխիք չունեին, ապա ինտեգրացման նոր փուլը նոր ճանապարհներ է բացում նրանց համար: Դրա հետ միասին հսկայական դեր է սկսում խաղալ Սփյուռքը: Եթե նախկինում այն մեծ դեր խաղաց հիտլերյան Գերմանիայի, հրեաների, չինացիների համար, ապա հիմա Սփյուռքը մեծ դեր է խաղում և՛ Հունաստանի, և՛ Իտալիայի համար: Ամեն մի պետության այժմ ձեռնտու է ինտեգրվող երկրում ունենալ թիմի մասեր, որոնք սփռված են աշխարհով մեկ և դիրքեր ունեն այնտեղ: Այն, ինչ որ մենք ունենք և այժմ կոտրում ենք, որովհետև Լ.Տեր-Պետրոսյանի Դաշնակցության դեմ արշավանքի մեջ կա մի կարևոր բան՝ կոտրել այն կառույցը, որը ինքը չի ստեղծել, որը մեր ժողովուրդն է ստեղծել:

Երկրորդ գործընթացը, որը նույնպես աշխարհում լավ զգացվում է. մի կողմից՝ ազատության ընդլայնում, ամեն մի անհատի ազատության մեծացում, մարդու իրավունքների պաշտպանություն, դրա հետ միասին ամեն մի պետության ներսում ներքին կյանքը ավելի ու ավելի է սկսում կարգավորվել պետության միջոցով: Մի ժամանակվա խոսակցությունները՝ կապիտալիզմ-սոցիալիզմ, արդեն դատարկ բաներ են, դրանք հետամնացություն են, չկա հիմա այդպիսի բաժանում աշխարհում: Պետությունն իր վրա վերցնում է և՛ օրենքների կատարումը, և՛ սոցիալական հարցերը, կա և՛ պետական ունեցվածք, և՛ մասնավոր ունեցվածք, ամեն ինչ աշխատում է ավելի արդյունավետ: Իսկ մեզ մոտ ասես 3-րդ, 4-րդ դասարանի դասագիրքը կարդաս, մեր որոշ նախարարներ, վարչապետներ կրկնում են կկվի

պես այդ նույն պատմությունը, որը վաղուց անցել, գնացել է: Մենք հակառակ ուղղությամբ ենք գնում՝ հետ ենք գնում:

Երրորդ գործընթացը. փոքր տեխնոլոգիաների ժամանակաշրջան է սկսվում, տեղեկատվության ժամանակաշրջան: Այսինքն՝ մի ժամանակաշրջան, որի մասին մեր ժողովուրդը կարող էր միայն երազել: Փոքրաթիվ ժողովուրդ լինելով, առանց հումքի աշխատող ձեռքեր ունենալով գիտության և տեխնիկայի ոլորտում՝ նա փայլուն ապագա կարող է ունենալ XXI դարում: Եվ միայն իշխանությունը փոխելը դեռ քիչ է, հասարակությունը պետք է գիտակցի, թե մեր ժողովուրդը ինչ տեղ է զբաղեցնելու աշխարհում, ինչ ճանապարհով է գնալու: Հասարակական մտածողության զարգացում է մեզ պետք: Որովհետև իշխանության մեխանիկական փոփոխությունը բավարար չէ: Շատ կարևոր է՝ մեր հասարակությունը գիտակցու՞մ է արդյոք, թե հաջողության հասնելու ինչ հնարավորություններ է տվել իրեն ճակատագիրը, և ինքն ինչպես է օգտագործում դրանք: Այդ տեսակետից կրկին ասում եմ՝ մեր կուսակցության խնդիրը, իհարկե, օրինական, ժողովրդի կողմից ընտրված իշխանություն ունենալն է: Դրա համար հարկավոր է օգտագործել ժողովրդի և հասարակության ճնշումը, չբացառել երկխոսությունները, բայց ոչ թե նմանակման երկխոսություններ, երբ հանդիպում են, ուղղակի իրար հետ սուրճ են խմում, հետո պարզ չէ՝ ինչ փոխվեց դրանից, այլ մեր կուսակցության, Դաշինքի և իշխանությունների երկխոսություններ Հայաստանին հուզող ռեալ հարցերի շուրջը: Բայց, բոլոր դեպքերում ինչ էլ անենք, իշխանությունը պետք է փոխվի: Այս իշխանությամբ ոչ էվոլյուցիոն ճանապարհով, ոչ դանդաղ ճանապարհով երկիրը ոտքի չի կանգնի: Այս իշխանությունը պետք է փոխվի:

Ես դիմում եմ մեր կուսակցությանը. զարգացում պիտի ապրեն ոչ միայն իշխանություններն ու հասարակությունը, այլ նաև կուսակցությունները: Կուսակցությունները այդ միտինգային, մեխանիկական, ուղղակի դժգոհ մարդկանց միասնությունից պետք է դառնան ինտելեկտուալ, բարձր մակարդակ ունեցող կուսակցություններ: Եվ կարևորագույն կուրսը, որ մոտալուտ ժամանակներում պետք է վերցնի մեր կուսակցությունը, իր շարքերի խտացումն է: Բայց ուղղակի մարդկային թվաքանակ մեզ պետք չէ, մեզ պետք է, որ կուսակցության մեջ ներգրավվի ժողովրդի ինտելեկտուալ սերուցքը: Մենք մի կուսակցություն ենք, հենվելով մեր ազգային սկզբունքների, ազգային արժեքների վրա՝ նայում ենք դեպի ապագան: Եվ ես համոզված եմ, որ մեր կուսակցությունը առավելություն ունի: Եվ նա պարտավոր է մեր ժողովրդի առաջ կատարելու իր առաքելությունը: Դրա համար անհրաժեշտ է կուսակցության զարգացում, նոր ազատ շրջանակների առաջացում մեր կուսակցության մեջ: Եվ միայն այդ ճանապարհով է, որ կկարողանանք փոխել այս վիճակը, փոխել իշխանությունները, այս հասարակությունը, նոր նպաստավոր խնդիրներ դնել ժողովրդի առջև: Ահա այն խնդիրը, որ դրված է մեր առջև: Եվ ես համոզված եմ, որ այդ խնդիրը մենք կլուծենք: Կլուծենք միասնական, դրա հետ միասին մյուս կուսակցությունների հետ ամեն թաղամասում, ամեն ձեռնարկությունում կկարողանանք պաշտպանել մարդու իրավունքները, սատար կկանգնենք մեր աշխատավորությանը, գյուղացիությանը, մտավորականությանը: Միայնակ ոչ մեկը սրանց դեմ պայքարել չի կարող: Իշխանությունը փոխելու մեծ պայքարի հետ միասին պետք է տեղային պայքարներ լինեն ամեն մի հարցի շուրջը, ամեն մի թաղամասում, ամեն մի գործատեղում:

Եվ երբ հարցն այսպես հիմնավոր է դրվում, երբ գիտես, թե ինչի համար ես գնում զոհաբերության, ինչի համար ես պայքարելու, այն տասնապատկում է ուժերը: Մեզ պետք չի մեքենա կուսակցություն, մեզ պետք է ազատ մտածող կուսակցություն, որը համախմբված է ինչ-որ գաղափարների շուրջ և հանուն այդ գաղափարների կգնա զոհաբերության:

Ի՞նչ ձևով կլինի իշխանության փոփոխությունը՝ ես չգիտեմ: Որովհետև սցենարները կարող են լինել տարբեր: Բայց մի բան հստակ է: Մենք պետք է լինենք հզոր կուսակցություն, պետք է կարողանանք համագործակցել մյուս կուսակցությունների հետ՝ ինչքան էլ դժվար լինի: Դա քաղաքական հմտություն է պահանջում: Տարբեր շահեր, տարբեր սկզբունքներ ունեցող կուսակցությունները կարողանան իրար հետ համագործակցել, իրար նկատմամբ ներողամիտ լինել: Եվ ես համոզված եմ, որ այս Դաշինքով, մեր կուսակցությունով և մեր

ժողովրդով կհաղթենք: Եվ թե՛ մենք, թե՛ մեր երեխաները կտեսնեն այն պայծառ ապագան, որը սպասում է մեր ժողովրդին:

Վազգեն Մանուկյանի ելույթը
ԱԺՄ VIII համագումարում
«Այժմ», 1997, 21-27 մայիսի

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԿԻՆ ԽՍՀՄ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՍՆԱՎԵՐՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

1997թ. օգոստոսի վերջին Հունաստանի մայրաքաղաքում տեղի ունեցավ «Աթենքյան գագաթաժողով-97»-ը, որի ամենամյա անցկացումը արդեն ավանդույթ է դարձել: Այն կազմակերպվում է Հունաստանի քաղաքական գիտությունների համալսարանի կողմից, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ, եվրոպական երկրների ականավոր պետական և քաղաքական գործիչների մասնակցությամբ:

Ազգային ժողովրդավարական միության նախագահ Վազգեն Մանուկյանը կազմակերպիչների կողմից հրավիրված էր մասնակցելու աթենքյան համաժողովին: Սույն հոդվածը այդ համաժողովում կարդացած զեկուցումն է:

Մենք այս զեկուցումով չենք անդրադառնա նախկին ԽՍՀՄ հանրապետություններում կատարվող մասնավորեցման զուտ տնտեսական հարցերին: Դրանք բավական մանրակրկիտ ուսումնասիրում են միջազգային կազմակերպությունները, ինչպես և Համաշխարհային բանկը: Այդ գործընթացում մեզ հետաքրքրում է միայն իշխանության և սեփականության փոխհարաբերությունների հայեցակետը:

90-ական թթ. սկզբում Արևելյան Եվրոպայի երկրները և ԽՍՀՄ նախկին հանրապետությունները բախվեցին յուրահատուկ, համաշխարհային պատմության մեջ նմանը չունեցող մի հիմնախնդրի: Տնօրինելով նախորդ տասնամյակներում կուտակված տրիլիոնների հասնող դոլարների համապետական արժեքներին՝ այդ երկրները որոշում կայացրին անցնել նոր տնտեսական մոդելի, քանի որ խորհրդային շրջանի վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ վարչահրամայական, պլանային տնտեսությունը, ամբողջովին հիմնված պետական սեփականության սկզբունքի վրա, արդեն անարդյունավետ է այն տնտեսական մոդելների համեմատ, որոնք գործում էին արևմտյան երկրներում: Չեռներեցների դասի, շուկայական ինֆրակառույցների, համապատասխան օրենքների և համազգային սեփականությունը գնելու համար այդ երկրների բնակչության ֆինանսական շատ թե քիչ հնարավորությունների բացակայության պայմաններում համարձակ փորձ արվեց անցնելու նոր տնտեսական կուրսի՝ հիմնված մասնավոր սեփականության, մրցակցության և շուկայի հայեցակարգի վրա:

Երկու ճանապարհ կար: Առաջին. պահպանելով իշխանության ավտորիտար համակարգը՝ աստիճանաբար ներգործել և ստիպել, որ գործի դրվեն մասնավոր տնտեսական շուկայական մեխանիզմները, միաժամանակ օժանդակելով պետական ձեռնարկությունների աշխատանքին, որոնք հետզհետե կմասնավորեցվեն: Այդ ճանապարհով է գնում, և բավական հաջողությամբ, Չինաստանը: ԽՍՀՄ-ի համար 90-ականների սկզբին այդ ճանապարհն արդեն անհնարին էր մի քանի հանգամանքների պատճառով. թե՛ վերևից, թե՛ ներքևից ծավալվող հեղափոխական, ժողովրդավարական, ազգային-ազատագրական շարժումները, իշխող կոմկուսի հեղինակության լիակատար կորուստը, ավելի ուշ նաև երկրի մասնատումը: Այդ պայմաններում բնական թվացող դանդաղ մասնավորեցումը անհնարին էր դառնում այն պատճառով, որ այլևս գոյություն չուներ ամբողջատիրական վարչակարգը, որի հետ էր

սերտորեն կապված գոյություն ունեցող պետական բաժնի աշխատանքը: Ամեն ինչ վկայում էր նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում արագ մասնավորեցման օգտին:

Հիմնախնդիրը ընդհանուր գծերով այսպիսին էր. գների ազատականացման հետ միաժամանակ, վերացնելով մասնավոր տնտեսական գործունեության սահմանափակումները, կարճ ժամկետում պետական սեփականության մեծ մասը մասնավորեցվում է: Ձեռներեցների դասի բացակայության պայմաններում սեփականությունն ընկնում էր պատահական մարդկանց ձեռքը, որոնց մեծ մասն ի վիճակի չէր հմտորեն զբաղվելու ձեռներեց գործունեությամբ: Խաղանիշերի գրեթե պատահական բաշխման այդ փուլից հետո, որն անվանենք զրոյական փուլ, մրցակցության և շուկայի մեխանիզմների գործարկման դեպքում սկսվում է խաղը, որի շնորհիվ վաղ թե ուշ կստեղծվի ձեռներեցների դասը, նրա կառավարմանն էլ կանցնի նախկին պետական սեփականությունը: Կսկսվի տնտեսության շուկայական զարգացման բնականոն փուլը: Հնարավոր է, որ տնտեսական մրցակցության արդյունքում սեփականությունը ձեռքից ձեռք անցնելու մի քանի փուլ լինի, բայց վերջ ի վերջո կընկնի այն շերտի ձեռքը, որը կաշխատեցնի տնտեսությունը: Տեսականորեն դա ճիշտ է թվում, և հենց այդ պատճառով Արևմուտքը շատ հաճախ չտեսնելու էր տալիս խաղանիշերի սկզբնական բաշխման արդարության ու օրինականության հարցը: Միայն թե արագ անցնեին զրոյական փուլին, որից հետո սկսվելու էր հաշվումը: Ենթադրվում էր, որ շատ ավելի կարևոր է շուկայական մեխանիզմի աշխատեցնելը, որն էլ սեփականությունը կփոխանցի բանիմաց, համապատասխան ունակություններ ունեցող ու փորձառու մարդկանց ձեռքը: Բայց ժամանակը ցույց տվեց, որ ամեն մի զրոյական կետից չէ, որ կարելի է անցնել բնականոն վիճակի:

Հույժ էական է, թե սկզբնական փուլում սեփականությունը ում ձեռքն է ընկնում: Դրանք պետք է այնպիսի մարդիկ լինեն, ովքեր թեկուզ ինչ-որ չափով միջոցներ ու տնտեսական աշխատանքի փորձ և ձեռներեցության ունակություններ ունեն: Եթե զրոյական կետը շատ է հետ մնում բնականոնից, ապա հետագիծը չի հասցնում մի կետից մյուսին անցնել, և զրոյական փուլից բնականոնին անցնելու ընթացքում տնտեսության այնպիսի փլուզում է տեղի ունենում, որ պետական, պլանային տնտեսությունից առավել արդյունավետ շուկայականին անցնելու սկզբնական նպատակն այդպես էլ չի իրագործվում: Տնտեսության մեծ մասն ավերվում է, և իրոք հարկ է լինում սկսել զրոյից:

Երկու շերտ կար, որոնք բնականոն օրինական պայմանների ստեղծման դեպքում կարող էին հավակնել նախնական սեփականատերերի, ձեռներեցների դերին: Այդ մարդկանց վրա կարելի էր հենվել զրոյական փուլին անցնելիս: Նախ՝ դա կոոպերատորների շերտն էր, որ ձևավորվել էր գորբաչովյան բարեփոխումների արդյունքում, իրոք, և՛ ձեռնարկատիրության ցանկություն ուներ, և՛ ունակություններ: Երկրորդ՝ կոմունիստական տնտեսական նոմենկլատուրայի մի մասը՝ այսպես կոչված «ինդուստրիայի կապիտանները»: Նրանցից շատերը և՛ փող ունեին, և՛ փորձ, և՛ համապատասխան ունակություններ, իսկ նրանց կոմունիստական գաղափարացվածությունը 80-ական թթ. արդեն երկրորդական գործոն էր դարձել:

Այս տեսակետից կարելի է դիտարկել հետևյալ օրինակները:

Մերձբալթիկայում զրոյական տարբերակում բավական ընդգրկումով էին ներկայացված և՛ տնտեսական նոմենկլատուրան, և՛ կոոպերատորների շերտը:

Ռուսաստանում նույնպես երկու շերտն էլ ներկայացված էին, բայց նորմենկլատուրականների ակնհայտ գերազանցությամբ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ այդ երկու շերտերը քաղաքական, տնտեսական հալածանքների ենթարկվեցին իշխանությունների կողմից և լիովին դուրս մղվեցին: Արդյունքում սկզբնական կետն այնքան հեռու մնաց բնականոն վիճակից, որ մինչև իսկ ավելի բարենպաստ պայմաններում շատ դժվար կլինի հաղթահարել զրոյական փուլից բնականոնին անցնելու ճանապարհը:

Բնական է, որ վերահսկողության ավանդական ժողովրդավարական ինստիտուտների, ինչպես նաև ձեռներեցների ձևավորվող դասի բացակայության պարագայում իշխանությունը մասնավորեցման գործընթացի վրա ազդելու աննախադեպ հնարավորություն է ստանում:

Այդ առումով իդեալական կարող է լինել այն իրավիճակը, երբ իշխանության են գալիս բավական ունևոր և ի լրումն՝ որոշակի բարոյական, ժողովրդավարական ներուժ ունեցող մարդիկ: Մնալով քաղաքական ուժ՝ նրանք սոսկ պայմաններ են ստեղծում ազատ շուկայի և

մրցակցության զարգացման համար: Սակայն ոչ մի տեղ այդպես չեղավ, թերևս միայն Մերձբալթիկան մի փոքր չափով մոտեցավ իդեալական տարբերակին:

Գործնականում բոլոր երկրներում գործընթացն այլ ուղղություն ստացավ. իշխանությունը կրողները անմիջականորեն համընկան նրանց հետ, ում ձեռքին հայտնվեց նախնական սեփականությունը: Այնպես ստացվեց, որ իմանալու համար, թե ում ձեռքն է ընկնում սեփականությունը զրոյական փուլում, հարկ էր իմանալ, թե ում ձեռքին է հայտնվել իշխանությունը:

Մերձբալթիկայի, Ռուսաստանի, Հայաստանի սեփականատերերի սկզբնական դասի նշված առանձնահատկությունները բացատրվում են այն գործընթացների տարբերություններով, որոնց արդյունքում այդ երկրներում իշխանափոխություն տեղի ունեցավ: Մերձբալթիկայում տարիներ շարունակ միաժամանակ գնում էր խոր ժողովրդավարական շարժում և ազգային-ազատագրական խաղաղ գործընթաց, որոնք համախմբեցին գրեթե ողջ հասարակությունը: Ռուսաստանում ժողովրդավարական գործընթացը, որ նախաձեռնված էր վերևից, կարճատև եղավ: Հայաստանում, այն գործընթացների հետ մեկտեղ, որ կատարվում էին Մերձբալթիկայում, գոյություն ուներ նաև Ադրբեջանի կողմից պարտադրված հակամարտությունը, իսկ անկախության հարցը սկզբնապես չէր համախմբում ժողովրդին, ընդհակառակը, բաժանում էր, և այդ ամենն ավելի էր հեղափոխականության հանգեցնում: Որքան մեծ է իշխանափոխության հեղափոխականությունը, որքան շատ են զինված գործողությունները, այնքան շատ տնտեսությունից հեռու մարդիկ են մտնում իշխանության կառույցներ:

Այսպիսով նախկին սոցիալիստական ճամբարի շատ երկրներում մասնավորեցումը սկզբում հանգեցնում էր իշխանությունը կրողների և սեփականատերերի դասի համընկնելուն, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհում այդ կապը և սեփականատերերի քաղաքական ազդեցությունը միջնորդավորված են: Իսկ նման համընկնումը հանգեցնում էր նրան, որ իշխանություններին ձեռնտու չէին դառնում երկրում շուկայի և մրցակցության սկզբունքները: Որքան խոր էր այդ համընկնումը, այնքան ձեռնտու չէր իշխանությունների համար տնտեսական մրցակցության մեխանիզմների գործադրումը: Տնտեսական մրցակցության փոխարեն այդ երկրները միջկլանային, քաղաքական, մաֆիոզ մրցակցություն ունեցան, և հետագիծը զրոյական փուլից գրեթե չտեղաշարժվեց: Ավելին, դրանցից մի քանիսում նահանջ սկսվեց ժողովրդավարության այն դիրքերից, որոնք ձեռք էին բերվել դեռևս 90-ական թթ. սկզբներին: Դա չի կարելի բացատրել նրանով, որ այդ երկրների ժողովուրդներին օտարոտի են ժողովրդավարական իդեալներն ու սկզբունքները: Բացատրությունը բոլորովին ուրիշ տեղ պիտի փնտրել:

Մեր համոզմամբ, էական դեր խաղացին հետևյալ հանգամանքները.

- իշխանությունը կրողների համընկնումը սեփականատերերի դասի հետ, որը հասարակությանը զրկեց այն շահերի բազմա- զանությունից, որոնց քաղաքական հակամարտությունները նպաստում են հասարակության ժողովրդավարացմանը.
- իշխանության ձգտումը ամեն գնով ձեռքին պահելու իշխանու- թյան լծակները, քանի որ հակառակ դեպքում կորչում է ոչ միայն իշխանությունը, այլև վտանգվում է արդեն ձեռք բերված հարստությունը, ինչպես նաև վտանգ է առաջանում, որ իրենք կհետապնդվեն նոր իշխանությունների կողմից իրենց կատարած բոլոր անօրինական գործողությունների համար.
- Արևմուտքն, իր հերթին, ելնելով այն կեղծ դրույթից, թե քանի որ 90-ականների սկզբին իշխանության են եկել ժողովրդավարները, ապա ամեն գնով աջակցելով նրանց՝ նա նպաստում է այդ երկրների բարեփոխումներին ու ժողովրդավարացմանը, ուժե- ղացնելով նաև առանց այդ էլ ուժեղ իշխանությունը, նվազեց- նելով այդ երկրների հասարակայնության հնարավորությունները պայքարելու հանուն իր ժողովրդավարական իրավունքների:

Այս ամենի արդյունքում այդ երկրներից մի քանիսում ժողովրդավարության ոլորտում խախտվեց (հաճախ ուժային միջոցներով) ժողովրդավարության հիմնական գործիքը՝ իշխանության ընտրովիությունը: Տնտեսության ոլորտում չի գործում տնտեսական մրցակցության սկզբունքը, որի հետևանքով չի կատարվում սպասված առաջշարժումը զրոյական փուլից խաղանիշերի բաշխման բնականոն տնտեսական փուլին: Դա իր հերթին

հանգեցնում է նրան, որ առավել արդյունավետ տնտեսության, առավել ազատ և արդար հասարակության անցնելու սկզբնապես հռչակված նպատակի փոխարեն տնտեսության աննախադեպ ճահճացում է կատարվում, արտադրության ավերում, ժողովրդի հիմնական զանգվածի աղքատացում, որը զրկում է նրան իր հիմնական սոցիալական իրավունքներից:

Դժվար է համաձայնել այն պնդմանը, թե այդ ամենը անցումային շրջանի օբյեկտիվ անհրաժեշտություն է: Հասարակության մեջ սաստկանում են հեղափոխական տրամադրությունները:

Որպեսզի մրցակցության և շուկայի սկզբունքները գործեն ամբողջ հզորությամբ և նպաստեն տնտեսության՝ զրոյական փուլից բնականոնին անցնելուն, հրատապ անհրաժեշտություն է դառնում իշխանության և սեփականության սկզբնական բաշխումը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ ժողովրդավարական իշխանափոխություն լինի, և իշխանության գան այնպիսի քաղաքական կուսակցություններ, որոնց ձեռնտու լինի մրցակցության մեխանիզմի գործադրումը, ոչ թե սեփականության կամայական վերաձևումը:

Դրա երաշխիքը կարող է լինել նոր իշխանության ընտրովիությունը: Ընդ որում, իշխանության նախկին կրողները կձևավորեն սեփականատերերի սկզբնական շերտը, և հատկապես բազմազանությունը և դրա արդյունքում ներուժերի և շահերի երևան եկած տարբերությունը կստիպի գործադրել անցումային մեխանիզմը:

Այս տեսակետից Մերձբալթիկայի երկրները ոչ միայն բնականոն զրոյական փուլից են սկսել, այլև մի քանի անգամ իշխանափոխություն են ունեցել: Ուստի այստեղ արդեն իշխանությունը կրողների և սեփականատերերի դասի լիակատար համընկնում չկա, և փոխզիջումների ու մրցակցության առողջ դաշտ է ձևավորվել: Իսկ Հայաստանում ինչպես որ հեռու էր զրոյական կետը լավագույնից, այնպես էլ իշխանափոխություն տեղի չի ունեցել:

Ելնելով այս ամենից՝ կարելի է եզրակացնել.

1. Կոմունիստական տնտեսական նոմենկլատուրայի մի հատվածի առկայությունը չպետք է մտահոգի ժողովրդավարական ուժերին, քանզի նրանց կոմունիստական գաղափարացվածությունը թվացյալ է, մինչդեռ նրանք սկզբնական միջոցներ և փորձ ունեն, ինչը շատ ավելի կարևոր է շուկայի անցնելու համար:

2. Թյուր է այն կարծիքը, թե բարեփոխիչները որքան հնարավոր է երկար պետք է իշխանության ղեկին մնան: Մասնավորեցման հիմնական ալիքից հետո իշխանության ժողովրդավարական փոխարինումը պետք է պարտադիր լինի: Միայն այդ դեպքում կարելի է աշխատեցնել տնտեսությունը՝ հիմնված մրցակցության, շուկայի, մասնավոր սեփականության սկզբունքների վրա: Վերն ասվածը գուցե և հակասում է բարգավաճող ազատ հասարակություն կառուցելու գործում հետխորհրդային տարածքում առաջացած պետություններին իրենց օգնության մասին հայտարարած արևմտյան երկրների և միջազգային կազմակերպությունների հանձնարարականներին և գործելակերպին, բայց, մեր կարծիքով, էական է առաջադրված նպատակներին հասնել առանց հեղափոխությունների և ավերիչ հեղաշրջումների:

«Գոլոս Արմենիա», 1997, 25 սեպտեմբերի

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՊԱՍՈՒՄ Է ԿՈՉԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՁԵՎԻ ՄԱՍԻՆ

Ամառային անդորրի համեմատությամբ քաղաքական աշունը բավականին «շոգ» սկիզբ ունի: Աժ առաջին իսկ եռօրյայում տեղի ունեցան իշխանամետ ուժերի կատաղի բախումներ: Իսկ ընդդիմադիր ճամբարում, մի կողմից, աճել է միջկուսակցական լարվածությունը, մյուս

կողմից՝ սեպտեմբերի 25-ին ԱԺՄ-ի նախաձեռնությամբ տեղի է ունենալու հանրահավաք, ինչը և առիթ դարձավ Վազգեն Մանուկյանի հետ հարցազրույց անցկացնելու:

- Լրանում է մի տարին, ինչ ստացել եք ժողովրդի վստահության քվեն: Այս մեկ տարվա ընթացքում ինչպե՞ս եք տնօրինել այդ հսկայական քաղաքական կապիտալը, և որո՞նք են Ձեր թերացումները:

-Դա, բացի հսկայական քաղաքական կապիտալ լինելուց, նաև հսկայական բեռ և պատասխանատվություն է: Ցավոք, ասպարեզ, որտեղ դա հնարավոր լիներ օգտագործել, չկար: Հայաստանում քաղաքական դաշտը շատ սահմանափակ է: Հայտնի պատճառներով ԱԺ չենք գնում, գնալու դեպքում այդ կապիտալը միայն հնարավորություն կտար ժողովրդի հետ ռադիոյով խոսել, և ոչ ավելին: Վերջին դեպքերը՝ Եգորյանին մամլիչի տակ գցելը, ցույց են տալիս ԱԺ-ում ոմանց անհանդուրժողականությունը և մեծամասնության ոչնչություն լինելը: Այնպես որ՝ ԱԺ-ն հարմար ասպարեզ չէ:

Հանրահավաքներով ժողովրդին անընդհատ կոչեր անելը և այդ կոչերով հոգնեցնելը նույնպես անիմաստ է: Իհարկե, հանրահավաքներն անհրաժեշտ են իրավիճակը վերլուծելու և դրանից բխող առաջարկությունները ներկայացնելու համար, բայց հանրահավաքների հնարավորությունները սահմանափակ են:

Սահմանափակում կա նաև հեռուստատեսությունում:

Փաստորեն, փակված են բոլոր քաղաքական ճանապարհները: Այդ տեսակետից, կարծում եմ, չի օգտագործվել այդ կապիտալը:

Այս մեկ տարվա կիսալռությունը նաև փորձ էր՝ տեսնելու, թե ուժի միջոցով իշխանությունը վերցրած խումբը դաս քաղելու՞ է ընտրություններից, փորձելու՞ է շտկել իրավիճակը, երկխոսության մեջ մտնել ժողովրդի հետ: Ես տեսնում եմ, որ տեղի է ունենում հակառակը: Մեկ տարվա ընթացքում ժողովրդի սոցիալական վիճակը կտրուկ վատացել է, և զգացվում է, որ ժողովուրդն այս պետությունում դեր չունի: Մի քանի հոգի իրենց վերապահել են ամեն ինչ որոշողի և ամեն ինչ ունեցողի դեր: Այդ մարդկանց մեջ ձևավորվել է հետևյալ մտածելակերպը. աշխարհում կան մի քանի միլիարդ մարդիկ, ովքեր ոչնչի պետք չեն, և կան մի քանի տասնյակ հազարներ, ովքեր աշխարհում որոշում են ամեն ինչ: Դա դարձել է այդ խմբի ներքին գաղափարախոսությունը, և նրանք իրենց զգում են այդ տասնյակ հազարների մեջ ու այդ վիճակից անհարմարություն չեն զգում:

- Լրանում է նաև սեպտեմբերի 25-ի ժողովրդական հուզումների մի տարին: Այդ իրադարձությունն ընդդիմադիր գործիչները հաճախ գնահատում են գրեթե տրամագծորեն հակառակ տեսանկյուններից: Ձեր կարծիքով, ինչու՞ է ընդդիմադիր գործիչների մի մասը ձգտում սահմանազատվել սեպտեմբերի 25-ից:

- Բնական է, որ հաջողության դեպքում բոլորը հայտարարում են, որ իրենց դերն է մեծ, իսկ դժվարության դեպքում՝ քավության նոխազ փնտրում: Ինձ համար այդպիսի մոտեցումներն ընդունելի չեն, բայց, ցավոք սրտի, վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ այդպիսի մտածողությունը դառնում է համատարած:

Ինչ վերաբերում է սեպտեմբերի 25-ի իրադարձություններին, չեմ կարծում, որ հնարավոր լիներ ցույցերի շարունակությամբ պարտադրել ընտրությունների երկրորդ փուլ կամ վարչախմբի հեռացում: Նույնը սպասվում է նաև ապագայում: Այս իշխանությունները չեն կարող համակերպվել այն մտքի հետ, որ մարդիկ անուններ նշեն թղթերի վրա և գցեն քվեատուփը, ու դրանից հետո իրենք փասափուսեն հավաքեն ու հեռանան՝ տեղը զիջելով այլոց:

Ակնհայտ է, որ Հայաստանում ընտրություններից հետո պետք է լինեն առճակատումներ: Իհարկե, պարտադիր չէ, որ դա հանգեցնի հաշվեհարդարների, բայց հստակ է, որ Հայաստանում առանց մեծ ճնշումների այսուհետ որևէ բան փոխել հնարավոր չի լինի:

Եթե վերադառնանք 1996թ. ընտրություններին, ապա հայտնի է, որ փաստաթղթային կեղծիքները ակտիվորեն շարունակվում էին կատարվել նաև սեպտեմբերի 23-25-ին: Շատ հստակ էր նրանց այս գիծը՝ չզիջել իշխանությունը, և մանկամտություն կլիներ մտածել, որ Ազատության հրապարակում հիասթափեցնող նվազող թափով հանրահավաքներ անցկացնելով՝ հնարավոր էր իրավիճակը փոխել: Այլ հարց է, որ նպատակ չկար, որ ինչ-որ մարդիկ ծեծվեն, և այլն: Բայց հանգամանքներն այնպիսին էին, որ սեպտեմբերի 25-ին ՝ իր բոլոր թերություններով, ծուղակներով հանդերձ, դժվար թե այլընտրանք գոյություն ունենար:

- Դուք շեշտեցիք, որ վարչախումբը մտադիր չէ ընտրությունների արդյունքների հետևանքով հեռանալ, բայց նույն սեպտեմբերի 22-ը ցույց տվեց, որ որտեղ ընդդիմությունն ուներ կուռ կառույցներ, կեղծիքները չհաջողվեցին: Արդյո՞ք դա չի նշանակում, որ կառույցների ամրացումն է ճիշտ ճանապարհը և ապագա ընտրություններում վարչախմբից ծերբազատվելու երաշխիքը:

- Այո՛, իրոք երևանում (որտեղ ուժեղ են կուսակցական կառույցները, վերահսկողությունը) անգամ կեղծիքների պայմաններում նրանց չհաջողվեց գրանցել մեզ 53%-ից պակաս: Նույնը կարելի է ասել այն շրջանների մասին, որտեղ կուսակցությունները (հիմնականում՝ ՀՅԴ-ն, ԱԺՄ-ն և մասամբ ՍԻՄ-ը) ունեին ուժեղ կառույցներ: Դա կարևոր ուղղություն է, և մենք մեծ ջանքեր ենք գործադրում, որպեսզի մինչև հաջորդ ընտրությունները (լինեն դրանք արտահերթ, խորհրդարանական թե նախագահական) ունենանք կուռ կառույցներ:

Բայց դրան էապես խոչընդոտում է այն, որ դժվար է ամենօրյա քաղաքական գործունեությամբ զբաղվել չքավորության և իշխանությունների կամայականության միջավայրում: Այնուամենայնիվ, մենք, համարելով դա կարևոր երաշխիք, գնում ենք կառույցների ուժեղացման ճանապարհով:

Երկրորդ՝ այսօր իշխանություններից երես են թեքում այն մարդիկ, ովքեր ժամանակին նրանց հետ էին: Եթե այսօր լիներ քվեարկություն, Լ.Տեր-Պետրոսյանը մի քանի անգամ քիչ իրական ձայն կստանար, քան 1996-ին:

Մենք մեր հարցերը պետք է լուծենք առանց արտաքին ուժերի միջամտության, բայց պետք չէ անտեսել նաև միջազգային հասարակական կարծիքի դերը: Այդ կարծիքն ինչ-որ չափով 1996թ. նրանց համար անսպասելի էր, բայց այն, ինչ կատարվելու է ապագա ընտրություններում, արդեն անսպասելի չի լինի:

Իհարկե, նշանակություն է ունենալու նաև ընտրությունների մասին օրենքը: Բայց վճռորոշը լինելու է ոչ թե օրենքի նպաստավոր կամ աննպաստ լինելը, այլ այն, թե ժողովրդի մեծամասնությունը կցանկանա՞ մինչև վերջ պաշտպանել իր իրավունքները: Էական է՝ նոր ընտրությունների շեմին ժողովուրդն իրեն կոտրվա՞ծ կզգա, թե՞ ոչ:

- Այս մեկ տարվա ընթացքում ԱԺՄ-ն որքանո՞վ արդյունավետորեն ստեղծեց նոր կառույցներ:

- Մենք ստեղծեցինք կառույցներ մի շարք շրջաններում, որտեղ մինչ այդ կառույցներ չկային: Առկա է բարձր չափանիշներին համապատասխանող անձանց ներհոսք դեպի կուսակցություն:

- Իսկ ի՞նչ փոփոխություն կրեց այնպիսի հետաքրքիր ցուցանիշը, ինչպիսին է կուսակցության շուրջ պտտվող տականքների քանակը:

- Կա մարդկանց շերտ, որ ձգտում ե բոլորի հետ «լավ լինել», և համախմբվում են, հենց որ իշխանության հնարավոր փոփոխության հոտ են առնում: Նրանք ամպի պես քոչում են ՀՀՇ-Կոմկուս-ՀՅԴ-ԱԺՄ երթուղով: Բայց անձամբ ինձ նրանք չեն մտահոգում. ի տարբերություն 1990թ., այժմ մեծ փորձ ունենք և շատ լավ հասկանում ենք, թե ով ինչի համար է գալիս: Նման մարդկանց ձգտում ենք կառույցներում և ծրագրերում ոչ մի դեր չտալ:

Բնական է, որ այդ «ամպը» առավել բազմամարդ էր 1996-ի ընտրությունների շեմին, և այսօր այդ մարդկանց մեծ մասն անհետացել է:

- Այսպիսով, Ձեր խոսքից բխում է, որ կարևոր խնդիր է հայ հասարակության կուսակցականացումը: Ի՞նչ ուղիներ եք տեսնում դրա ակտիվացման համար:

- Ժամանակին տարածված էր այն մտայնությունը, թե կուսակցությունները պառակտում են ազգը, և ամեն ոք պետք է պայքարի հանուն ազգի՝ չմտնելով կուսակցությունների մեջ: Այժմ էապես պակասել է այն մարդկանց թիվը, որոնք հետևում են այդ գործնական արժեք չունեցող գեղեցիկ կարգախոսին: Շատերը հասկացել են, որ կուսակցությունները ժողովրդավարական համակարգի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս են: Եվ, չնայած անբարենպաստ պայմաններին, մարդկանց որոշակի հոսք դեպի կուսակցություններ առկա է: Քարոզչության միջոցով մենք պետք է ձգտենք այդ հոսքն ավելացնել:

- Ձեր կարծիքով, ընդդիմադիր ճամբարը բավարա՞ր է օգտագործել իր քարոզչական ներուժը:

- Ինչքան էլ խոսենք օբյեկտիվ դժվարությունների մասին, ամեն ինչ դրանցով պատճառաբանելը ճիշտ չէ: Անշուշտ, շատ ու շատ հնարավորություններ, կարծում եմ, ճիշտ չենք օգտագործել:

- Շուտով բացվում է հանրահավաքային սեզոնը: Ի՞նչ ակնկալիքներ ունեք դրանից և ինչքանո՞վ արդյունավետ կլինեն հանրահավաքները:

- «Հանրահավաքային սեզոն» հասկացությունն այնքան էլ ճիշտ չէ: Հանրահավաքներն ունեն իրենց որոշակի դերը. երբեմն՝ որոշիչ, բայց սովորաբար՝ միջանկյալ: Սեպտեմբերի 25-ի հանրահավաքում հիմնական նպատակը մեկ տարվա արդյունքների ամփոփումն է և ապագա անելիքների քննարկումը:

Մյուս կողմից՝ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ ստեղծում են խմբեր, որոնք պետք է զբաղվեն կոնկրետ սոցիալական խնդիրներով (էլեկտրաէներգիայի վարձ, կենսաթոշակառուների և վետերանների արտոնություններ, և այլն): Մեզ սպասում է հետևողական պայքար և ծանր աշխատանք՝ Հայաստանի սոցիալական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Շատ մեծ արդյունքներ դրանից չենք սպասում, քանզի սոցիալական լուծումների հիմնական աղբյուրը իշխանությունն է: Առանց իշխանության հարցի լուծման՝ սոցիալական փոփոխություններն ընդամենը կարկատանի դեր են խաղալու:

- Եթե վերադառնանք մի փոքր հետ՝ դեպի հունիսի 13-ը, ապա պետք է արձանագրենք, որ ժողովուրդը բարյացկամորեն արձագանքեց դաշինքի կոչին՝ մասնակցելու համահայկական բողոքի գործողությանը: Ձեր կարծիքով, այսօր ինչպիսի՞ գործողության կոչ է ակնկալում ժողովուրդը ընդդիմադիր ճամբարից:

- Թե ինչ կոչ է ակնկալում ժողովուրդը, և ինչ է հնարավոր անել, երկու տարբեր բաներ են: Թե ի՞նչ կոչ է ակնկալում ժողովուրդը, ինձ համար ակնհայտ է. վերջին տարվա ընթացքում ժողովրդի ատելությունն իշխանությունների հանդեպ բազմապատկվել է: Բնական է, որ ժողովուրդը սպասում է կոչի իշխանությունը փոխելու ձևի մասին:

- Ի՞նչն է պատճառը, որ այս անգամ հանրահավաքը բացվում է ոչ թե դաշինքի կողմից, այլ առանձին կուսակցությունների:

- Յուրաքանչյուր հանրահավաքի պաշտոնական հայտը ներկայացնում է որևէ կոնկրետ կուսակցություն: Սեպտեմբերի 25-ի հանրահավաքի հայտը ներկայացրել է ԱԺՄ-ն, և, բնականաբար, առաջարկելու ենք մյուս կուսակցություններին՝ մասնակցելու հանրահավաքին:

- Ձեր կարծիքով, ի՞նչն է դաշինքի ակտիվության սառեցման և ներդաշինքային լարվածության աճի պատճառը:

- Բացի որոշ կուսակցությունների և գործիչների քաղաքական հավակնություններից, շահերից (ինչի մեջ չարժե խորանալ, որպեսզի բամբասանքների մեծ դաշտ չբացվի), կա օբյեկտիվ պատճառ: Դաշինքը ստեղծվել էր ընտրություններից շուրջ 2 շաբաթ առաջ: Դա կատարեց իր կարևոր դերը. ի հայտ եկավ ժողովրդի ոգևորությունը, ավելացան ընտրություններում ստացած քվեները, և զուտ ժողովրդավարական տեսակետից դաշինքը հաղթեց: Հետագայում դաշինքը համախմբված էր Սահմանադրական դատարանում ընթացող գործի շուրջ: Այնուհետև սկսվեցին մայիսյան իրադարձությունները, երբ փորձ արվեց իշխանություններին հանրահավաքներով պարտադրել արտահերթ ընտրություններ: Երբ որ դա էլ չհաջողվեց, բնականաբար, սառեց դաշինքի կյանքը: Պարզ դարձավ, որ կամ նույն խնդիրների շուրջ պետք է համախմբվել նոր, թարմացած կազմով, կամ՝ նոր խնդիրների շուրջ: Դա դեռ առջևում է: Այն դերը, ինչի համար ստեղծվեց դաշինքը, մասամբ կատարվեց: Իսկ երբ դերակատարն ավելի երկար է մնում բեմում, դա իրեն օգուտ չի բերում:

- Դուք ասացիք՝ «նոր կազմ»: Դրանից բխու՞մ է արդյոք, որ ընդդիմադիր ճամբարում կան ոչ կառուցողական դեր ունեցող ուժեր:

- Ես չէ, որ պետք է գնահատական տամ դաշինքի ներքաղաքական կյանքին: Այն տասնյակ հազարավորները, որ ակտիվորեն հետաքրքրվում են քաղաքականությամբ և հետևում մամուլի հրապարակումներին, շատ լավ հասկանում են, թե ինչ է տեղի ունենում դաշինքի ներսում, և, իհարկե, կտան դրա օբյեկտիվ գնահատականը:

Անշուշտ, Դաշինքի անհաջողության մեջ իր դերը խաղաց նաև այն, որ որոշ կուսակցություններ չցանկացան առաջ տանել այն գաղափարը, որ պետք է ստեղծել համաժողովրդավարական ճակատ և ներգրավել հասարակական, քաղաքական նոր ուժեր, նաև մեծ հարգանք վայելող անկուսակցական գործիչների ու առհասարակ քաղաքականապես ակտիվ անձանց: Դաշինքի 5 կուսակցություններ չէին կարող լուծել իրենց ուժերից վեր խնդիր:

Ես ինձ իրավունք եմ վերապահում խոսել միայն ԱԺՄ-ի անունից և կարող եմ վստահորեն ասել, որ շարունակելու ենք պայքարը: Մեզ համար էական նշանակություն ունի մեր ժողովրդի երազանքների իրականացումը և մեր երկրի զարգացումը: Մենք հստակ գիտակցում ենք, որ այդ ճանապարհին դրված քարը ներկայիս իշխանություններն են, և պետք է փորձենք քարը դեն նետել:

- Անհնարին է, որ Ձեր պես քաղաքական գործիչը, պաշտոնական հրավերով այցելելով Աթենք, չհանդիպեր ՀՅԴ Բյուրոյի հետ: Նրանց հետ որևէ բանակցություն կամ խորհրդակցություն ունեցե՞լ եք և ինչպիսի՞:

- Նախ՝ Աթենքը ՀՅԴ Բյուրոյի հավաքատեղին չէ: Բյուրոյի անդամները տարբեր երկրներից են: Ճիշտ է, այցիցս առաջ Աթենքում գումարվել էր Բյուրոյի լիագումար նիստ, բայց այցի ժամանակ Բյուրոյի անդամները այնտեղ չէին:

Աթենքի հին հայկական համայնքը հիմնականում հարում է ՀՅԴ-ին, և քանի որ դա իմ երկրորդ այցն էր, բնականաբար այնտեղի դաշնակցական ղեկավարների մեջ ընկերներ ունեմ: Թե ինչքանո՞վ նրանց հետ ունեցած զրույցները կարելի է բանակցություն համարել, դժվարանում եմ ասել: Ճիշտ է, ես նրանց հետ ունեմ մի շարք տարածայնություններ, բայց դա չի խանգարում նրանց հետ ընկերություն անել և հարկ եղած դեպքում ՀՅԴ-ի հետ համատեղ գործել:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը
վարեց Հ. Գալաջյանը
«Իրավունք», 19-25 սեպտեմբերի

ԱՅԴ ՄԱՐԴՈՒՆ ՀԱԿԱՑՈՒՑՎԱԾ Է ՂԵԿԱՎԱՐ ԼԻՆԵԼ

Բարդ ժամանակաշրջան է սկսվել՝ կապված Ղարաբաղի հարցի հետ, և Լևոն Տեր-Պետրոսյանի անցկացրած մամուլի ասուլիսը մեր ժողովրդի համար վտանգավոր և վնասակար գաղափարախոսություն է: Երևի պատահական չէ, որ դա սեպտեմբերի 26-ին էր: Անցած տարի մեր բանակի ու տանկերի ուժի ցուցադրումով էր կատարվում ժողովրդին հուսահատեցնելը և ապագան մթագնելը, այժմ արվում է այլ սպառնալիքների միջոցով: Մենք բոլորս գիտակցում ենք Ղարաբաղի հարցի կարևորությունը: Մեր ժողովուրդը խելոք է և հասկանում է, որ Ղարաբաղի հարցի լուծումը լինելու է փոխզիջումների միջոցով: Լ.Տեր-Պետրոսյանը չէ, որ մեզ պիտի բացատրեր, թե փոխզիջումներ պետք է անել, բայց իր ամբողջ ելույթը ոչ թե փոխզիջումների մասին էր, այլ կապիտուլյացիայի: Այսպիսի մի կարծիք էլ կա, ասում են՝ ինքը քայլ է անում, որպեսզի ժողովրդի հակառակ արձագանքը ցուցադրելով՝ դրսին ապացուցի, որ այսպիսի լուծում չի կարող լինել: Ես այդ մարդուն ճանաչելով և հիշելով 1992թ. հայտարարությունները՝ գիտեմ, որ դա խաղ չէ: Սա իր էությունն է, բայց եթե նույնիսկ խաղ լիներ, ապա ոչ միայն մանկամիտ խաղ է, այլև դավաճանություն: Այն գաղափարները, որոնք ասվեցին Ղարաբաղի հարցի շուրջ, ես համարում եմ պետական հանցագործություն: Բանակցությունների թեժ պահին, երբ երկու կողմերը փորձում են գտնել փոխզիջումների ճանապարհ, նա փորձեց սպառնալ մեր ժողովրդին և հրահրել ուրիշներին, որ իրենք էլ սպառնան՝ սպառնացեք Բոսնիայով, ռազմական-քաղաքական, տնտեսական ճնշումներով, որպեսզի մեր ժողովուրդը ընդունի այն, ինչ դուք ուզում եք: Եվ դա բանակցությունների շեմին բերելու է ուղղակի Ադրբեջանի դիրքորոշման կարծրացմանը: Ադրբեջանը հասկացավ, որ իր դիրքորոշումը կարող է լինել շատ կարծր, որովհետև այն մարդը, որն իրեն հռչակել է Հայաստանի ղեկավար, իր ժողովրդին սպառնալով՝ համաձայն է գնալ բացարձակ զիջումների: Միաժամանակ արդեն որերորդ անգամ փորձ է արվում սեպ խրել Հայաստանի և Ղարաբաղի ժողովրդի միջև: Սուտ ասել, թե իր բոլոր դժբախտությունների պատճառը Ղարաբաղն է: «Հրաժարվեք Ղարաբաղից, և մենք կապրենք երջանիկ, մինչև Ղարաբաղի հարցը չլուծվի, մենք բոլորս ապրելու ենք վատ»: Զարմանալի է, թե ինչու լրագրողներից մեկը հարց չբարձրացրեց. «Լևոն Տեր-Պետրոսյան, ինչու՞ դու, քո ընտանիքը, քո եղբայրները, քո շրջապատը, որոնք երազել անգամ չէին կարող «Զապորոժեց» մեքենա ունենալու մասին, հիմա դղյակներ են կառուցում, «Մերսեդեսներով» են մաև գալիս, ֆիրմաներ են ստեղծում,

բոլորը միլիոնատեր են դարձել, այդ ինչու՞ Ղարաբաղի հարցը ձեզ չի խանգարում ապրել, բայց պիտի խանգարի մեր ժողովրդին: Այդ ի՞նչ կեղծիք է»:

Ասում եմ՝ մենք բնականոն պետություն չենք լինի, բայց այդ բնականոն պետության հիմքերը քանդողը հենց ինքը՝ Լ.Տեր-Պետրոսյանն է: 1995-ի, 1996-ի ընտրություններում բռնությունների հեղինակը Հայաստանում ինքն է: Ուրիշներին թող չմեղադրի: Ցանկացած ընտրություն Հայաստանում կատարվում է բռնությունների միջոցով: Ուղարկվում են ջոկատներ, ոստիկանության միջոցով ջարդուփշուր են անում գյուղերում ժողովրդի արժանապատվությունը, մարդկանց ձերբակալում են, բռնությունների են ենթարկում, որպեսզի միայն և միայն իր անձնական շահը առաջ տանի: Եվ մի կարծեք, որ արտաքին որևէ օգնության, ներդրումների միջոցով Հայաստանի հարցը կարող է լուծվել, եթե մենք մնանք այսպիսի անառողջ պետություն, անառողջ հասարակություն, որը իր մեջ ներքին զարգացման ոչ մի սերմ չի պարունակում: Փաստորեն այդ կոչերը՝ վատ է լինելու, շատ վատ է լինելու, դրա անընդհատ կրկնությունը կարծես ժողովրդին ասի՝ թողեք, գնացեք այս երկրից: Մենք մեծ փորձ չունենք երկրի ղեկավար ունենալու, բայց ձեզ հավատացնում եմ, ես մի քիչ ավելի շատ եմ կարդացել կամ լսել տարբեր երկրների նախագահների ելույթներ: Ամեն մեկն իր առջև պատասխանատվություն է դնում, իր պետության, իր ժողովրդի առջև դնում է խնդիրներ, նպատակներ: Այսպիսի բան լսված չէ աշխարհում՝ միայն և միայն սևացնել: Կարծես ժողովրդից հեռու կանգնած մի մարդ խոսի, օտար բանակով եկած մի մարդ:

Միաժամանակ խոսվում է սփյուռքահայության երկքաղաքացիության մասին դիլետանտի մակարդակով: Ես խնդրում եմ՝ այդ մարդուն բացատրեք, որ երկքաղաքացիությունը չի խանգարում մեր բանակին: Այդ պարզ բանն էլ չի հասկացել: Մարդիկ հրաժարվում են մեր քաղաքացիությունից, ընդունում են այլ քաղաքացիություն՝ ստիպված: Երկքաղաքացիության դեպքում իրենք կկարողանային պահպանել նաև այս քաղաքացիությունը: Այսինքն՝ երկքաղաքացիություն չունենալով՝ մեր քաղաքացիների թիվն ենք պակասեցնում:

Ինչ վերաբերում է բանակին, ապա եթե մարդ հպարտ չէ, որ այս պետության քաղաքացի է, որ ունի ուժեղ, ժողովրդին նվիրված հզոր բանակ, ինչպե՞ս կարող եք երիտասարդներին ստիպողաբար տանել բանակ, շատ դժվար է լինելու: Ուզում եմ հիշեցնել, որ բոլորովին այլ էր վիճակը 92-93թթ., երբ մենք պատերազմի մեջ էինք, ոչ միայն կամավորներ էին գնում ռազմաճակատ, այլ նաև մեր երիտասարդության զինակոչը գրեթե ոչ մի հիմնախնդիր չէր առաջացնում զինկոմիսարիատներում: Մարդիկ վստահում էին պետության ապագային, բանակին: Այնպես որ արմատը երկքաղաքացիությունը չէ: Սփյուռքահայության մասին խոսվում է դարձյալ կողքից, դիտողի, փիլիսոփայի կեցվածքով, թե թող սփյուռքահայությունը կազմակերպվի, այս կամ այն անի: Ինքը՝ պետությունը պարտականություններ ունի:

Դաշնակցության մասին: Դաշնակցությունն իրոք ամենակազմակերպված ազգային ուժն է: Դաշնակցությանը մի կողմ նետելը չի նպաստելու մեր և սփյուռքի հարաբերություններին: Այդ աշխատանքը սկսվեց 90-91թթ: Առաջին փորձը կատարվեց գործարարների ընդհանուր համաժողով կազմակերպելով: Դա մի աշխատանք էր, որը շարունակելով՝ կարելի էր արդյունքի հասնել: Ես կարծում եմ, որ Սփյուռքի կազմակերպման աշխատանքը դեռ առջևում է, և այս խնդրում ամեն մեկն իր դերը ունի: Մենք երբեք այսպիսի բարենպաստ պայմաններում չենք եղել:

Անընդհատ կրկնվում է այն ծիծաղելի միտքը, որ չկա ազգային գաղափարախոսություն, որ դա կեղծ կատեգորիա է, որ միայն տոտալիտար երկրներում գոյություն ունի ազգային գաղափարախոսություն: Ես կրկին կխնդրեի բացատրել իրեն, որ ազգային գաղափարախոսությունը շատ պարզ բան է և բնորոշ բոլոր պետություններին: Ամեն մի ժողովուրդ ունի իր ազգային գաղափարախոսության առանձնահատկությունը, որը գալիս է իր մշակույթից, պատմությունից: Եվ հենց առանձնահատկությունն է արժևորում այդ ամենը: Երկրորդը ազգային հպարտությունն է, և երրորդը՝ մրցակցության ձգտումն է մյուս ժողովուրդների հետ: Դա է ստեղծում այն համաշխարհային քաղաքակրթությունը, որի պտուղներից մենք փորձում ենք օգտվել: Դեռ 60-ականներին Նակասոնեն, որը հետագայում դարձավ Ճապոնիայի վարչապետ, դիմում է կառավարությանը, թե հայրենասիրության նվազում է նկատվում դպրոցներում, անհրաժեշտ է փոխել դպրոցի ծրագրերը, քանի որ

հայրենասիրության նվազումը էապես ազդում է դպրոցականների մտավոր ունակությունների վրա: Եթե մարդ, նույնիսկ դպրոցականը, չունի մեծ նպատակներ, ապա դա նվազեցնում է իր մտավոր կարողությունները: Լ.Տեր-Պետրոսյանը ղեկավար լինելու ողջ ընթացքում շարունակ զբաղվել է նրանով, որ կարճացրել է մեր վերմակը: Ամեն մի ժողովուրդ, յուրաքանչյուր մարդ պիտի ոտքը իր վերմակի չափով մեկնի, բայց պետության ղեկավարը պետք է աշխատի անընդհատ երկարացնել այդ վերմակը: Մինչդեռ ինքն այդ վերմակը շարունակ կարճացնում է: Եվ վերջին ասուլիսը նույնպես նպաստում է մեր վերմակի կարճացմանը: Նա իր առջև այդ խնդիրը դրել է դեռևս 1992 թվականից (կապիտուլյացիայի խնդիրը) և շարունակում է, որ մի օր էլ ասեն, թե մեր ոտքերը այս վերմակի տակ չեն տեղավորվում: Ես գտնում եմ, որ այդ մարդուն հակացուցված է ոչ միայն պետության ղեկավար լինել, այլև ցանկացած կոլեկտիվի ղեկավար: Եվ նրան պետք է դիմել, որ նա թողնի գնա, մենք մեր հիմնախնդիրները ինքներս կլուծենք: Ժողովուրդը և՛ ղեկավարներ կգտնի, և՛ կլուծի բոլոր խնդիրները, այդ թվում նաև Ղարաբաղի:

-Լ.Տեր-Պետրոսյանն ասաց, որ գոյություն ունի Ղարաբաղի հարցի լուծման 5 տարբերակ, որոնցից ռեալ են երկուսը՝ փաթեթային և փուլային: Ըստ ձեզ, որն է ամենառեալ տարբերակը:

- Այդ բաժանումը՝ 5 տարբերակների, բավական արհեստական է, ցանկացած հարցի լուծման մի քանի տարբերակներ կարելի է գտնել՝ 3, 15, 56: Ես, իհարկե, չեմ կարող հետևել գաղտնի բանակցություններին, որոնք տեղի են ունենում կողմերի միջև, ես ուղղակի նշեցի, որ Լ.Տեր-Պետրոսյանի ասածը էապես նվազեցնում է մեր հնարավորությունները բանակցություններում և կարծրացնում Ադրբեջանի գրաված դիրքը: Իմ խորին համոզմամբ, այս խմորը դեռ շատ ջուր կվերցնի, իհարկե, մեզ պետք է խաղաղություն, մենք պետք է կարողանանք լուծել և՛ փախստականների հարցը, և՛ տարածքների հարցը, և՛ Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Իմ կարծիքով, այս խնդիրը երկար ժամանակ է պահանջում, և հարձակողական շտապողականությունը խորացնելու է վիճակը, ոչ թե նպաստելու խնդրի լուծմանը: Դուք ուշադրություն դարձրեք համաշխարհային գործընթացներին: Ինտեգրացիա և միաժամանակ ամեն մի փոքր ազգի, պետության ինքնուրույնություն, անկախ գոյություն: Եվ մեր նպատակն է, որ այդ հոսանքները, գործընթացները՝ մարդու իրավունքներ, ազատություններ, տնտեսական զարգացումներ, մտնեն մեր տարածաշրջան: Եվ համոզված եղեք, որ այդ պայմաններում մեր հարցերը շատ ավելի հեշտ կլուծվեն, քան այս պայմաններում, երբ մենք անընդհատ հետ ենք շպրտվում 19-րդ դար, 18-րդ դար:

-1992թ. ի վեր այն գնահատականները, որոնք փոխզիջումային են համարվում կամ պարտվողական, հայտարարում էին Ժ.Լիպարիտյանը կամ արտգործնախարարները: Ի՞նչն էր պատճառը, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծման կապակցությամբ առաջին անգամ խոսեց ինքը՝ Լ.Տեր-Պետրոսյանը:

- 1992թ. նա ասում էր նույնիսկ, որ մենք դատապարտված ենք պարտվելու, ուստի պետք է ընդունել դիմացինի բոլոր պայմանները: Դրանից հետո վերմակը երկարեց, մենք ունեցանք ռազմական հաղթանակներ և արդեն երկար վերմակով էինք կարողանում ուրիշների հետ խոսել: Այս մի տարվա ընթացքում վերմակը էապես կարճացավ, և նա անցավ նախորդ երգին: Թերևս այդպես գնահատեց պահը, միշտ էլ կարող է գտնել մարդիկ, որոնք արտահայտեն իր կարծիքը, հիմա նա ուզում է ապահովել իր ալիբին:

-Դուք օգտագործեցիք պետական հանցագործություն, դավաճանություն բնորոշումները, միգուցե բացեք փակագծերը և նշեք նաև արտաքին ուժը, հօգուտ որի տարվում է այս քաղաքականությունը:

-Ես պետական հանցագործություն եմ համարում, երբ կողմերից մեկը բացում է իր քարտերը և ցույց է տալիս, որ վախենում է այսինչ բաներից ու կիամաձայնի այսինչ պայմաններին: Բնավ հակված չեմ մտածելու, որ մեր իշխանավորները ծառայում են այս կամ այն ուժին, նրանք ծառայում են մի բանի՝ իրենց: Եվ եթե իրենց շահերը պահանջեն ոչնչացնել մյուսներին, կոչնչացնեն: Իսկ տերեր միշտ էլ կգտնվեն, բայց թող չխաբվեն, թե իրենք են տերը: Նրանք իրենց անձնական հարցերն են լուծում: Հետաքրքիր է, այնուամենայնիվ, Լ.Տեր-Պետրոսյանի այդ ելույթը իր միանձնյա՞ որոշումն էր, թե՞ նաև նրանց, ովքեր սվիններով նրան իշխանություն շնորհեցին, բանակի ղեկավարությունը, վարչապետը, կառավարության մյուս անդամները թող բացահայտ ասեն՝ իրենք կիսու՞մ են այդ հայացքները, թե՞ ոչ:

-Այս փակուղային վիճակում հարցի ի՞նչ լուծում եք տեսնում՝ առանց զիջումների: Եվ երկրորդ՝ դուք մեղքի զգացում չունե՞ք, որ ժամանակին «Ղարաբաղ» կոմիտե եք ընդունել մի մարդու, որ լավ չի պատկերացնում հարցի էությունը, և այժմ մենք կանգնում ենք փաստի առաջ:

-Ես չեմ կարծում, որ այս պահին Ղարաբաղի հարցը լուծվելու է: Ո՛չ պետությունները, ո՛չ ժողովուրդները պատրաստ չեն դրան: Երկար ժամանակ է պահանջվելու, որպեսզի վերականգնվի վստահությունը միմյանց հանդեպ: Երկար գործընթաց է լինելու: Եվ ես չեմ տեսնում մի գաղտնի պահած մաթեմատիկական լուծում, որը սեղանի վրա դնելով՝ կարելի է բոլոր կողմերին բավարարել: Ես չեմ բացառում բազմաթիվ լուծումներ, որոնք մենք այժմ չենք էլ պատկերացնում:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, այն ժամանակ մենք իշխանության խնդիր չէինք դրել: Նա ունի մի հատկություն (երբ մի միտք ես մտցնում նրա մեջ, տանկի պես առաջ է գնում՝ առանց շեղվելու, առանց հաշվի առնելու իրավիճակը), որը շատ օգտակար էր շարժման ժամանակ, բայց շատ վտանգավոր պետության ղեկավար լինելու համար: Իսկ «Ղարաբաղ» կոմիտե կազմելիս մենք այդ մտքից շատ հեռու էինք, երբեք չի նախատեսվել, որ Լ.Տեր-Պետրոսյանը ղեկավար դառնա:

-Լ.Տեր-Պետրոսյանը բավական կոշտ արտահայտվեց Սամվել Բաբայանի հասցեին և ասաց, որ Լեռնային Ղարաբաղի կամքը կարող է արտահայտել միայն նախագահը: Արդյոք հակասություն չի՞ առաջանում Հայաստանի և Ղարաբաղի ղեկավարության միջև դիրքորոշումների հարցում, և ո՞վ կդառնա թելադրողը այս հակասության մեջ:

-Սամվել Բաբայանի և Արկադի Ղուկասյանի մտքերի միջև եղած տարբերությունը մեծ չէ: Ուղղակի մեկը իր մտքերը ձևակերպում է զինվորականի ուղղամտությամբ, մյուսը՝ դիվանագետի, քաղաքական գործչի ոճով: Իհարկե, Ղարաբաղի ժողովրդի կամքը պիտի արտահայտի ընտրված նախագահը, բայց փորձ է արվում հակասություն մտցնել նաև Ղարաբաղի ներսում: Հայաստանի ներսում են հակասություն առաջացնում: Ամեն ինչ արվում է միասնական ուժերը թուլացնելու համար: Եվ այդ քաղաքականությունը նոր չէ: Իսկ ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, այն ամբողջ հայ ժողովրդի խնդիրն է, բայց իհարկե առավել շահագրգիռ կողմը Ղարաբաղն է, որն էլ պիտի վճռական որոշումներ կայացնի: Ես Հայաստանի կարծիքը չգիտեմ, ես գիտեմ այն մարդու կարծիքը, որը 1996թ. սեպտեմբերի 26-ին տանկերով գրավեց Հայաստանում իշխանությունը:

-Ինչով եք բացատրում, այնուամենայնիվ, որ Լ.ՏերՊետրոսյանը ընդունում է պարտվողական դիրքորոշումը:

-Դա հոգեբանության հարց է: Եթե խնդիրը վերաբերում է Լ.Տեր-Պետրոսյանի անձնական շահերին, նա երբեք զիջման չի գնում, ինչ վերաբերում է մեզ բոլորիս, հեշտությամբ զիջում է:

-Վերջին հանրահավաքում ԱԺՄ-ն հայտնեց հանուն սոցիալական արդարության պայքարի անցնելու իր պատրաստակամությունը: Մինչև այսօր կարծես թե ոչ մի քաղաքական ուժ չէր փորձել խաղարկել սոցիալական խաղաքարտը: Նշանակու՞մ է արդյոք, որ ձեր գնահատականներով այժմ հանրապետությունում կայունություն է, պատերազմական վտանգներ չկան:

-Պատերազմ չլինելու վերաբերյալ մենք գնահատական տվեցինք 1994թ., երբ սկսեցինք հանրահավաքները: Ժողովուրդը միշտ պետք է բարձրացնի սոցիալական հարցերը: Մեր ժողովուրդը շատ կոտրված, վախեցած, գործազուրկ, ծանր վիճակում է, և կուսակցությունները որոշ օգնություն պետք է ցույց տան նրան կազմակերպվելու համար: ԱԺՄ-ն ոչ թե սոցիալական պայքարը փորձում է վերցնել իր վրա, այլ օգնում է ժողովրդին, որպեսզի նա կարողանա իր պահանջները տեղ հասցնել: Մենք ոչ թե քաղաքական պայքարը փոխարինում են սոցիալականով, այլ մտցնում ենք նաև այդ երանգը:

Վ. Մանուկյանի ասուլիսը ԱԺՄ գրասենյակում,
սեպտեմբերի 30-ին, 1997 թ.
«Այժմ», 1997, 1-7 հոկտեմբերի

ԺԱՄԱՆԱԿԸ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԻ ՄԵՐ ՕԳՏԻՆ

Այն փայլուն հաղթանակներից հետո, որ ունեցավ բանակը, թվում էր, թե հասել ենք մի վիճակի, երբ կաբինետային բանակցություններում, օգտվելով մեր դիրքից, մեր առավելություններից, քաղաքական գործիչները կկարողանան Ղարաբաղի հարցում գտնել բոլորիս համար ընդունելի փոխզիջումային լուծում: Բայց Լ.Տեր-Պետրոսյանի վերջին ասուլիսը, նրա առաջարկած լուծումները կրկին ժողովրդին դուրս են բերել փողոց: Մենք հասկացանք, որ հարցի լուծումը կաբինետներից ակնկալելը դառնում է վտանգավոր մեր ժողովրդի ապագայի համար, և նորից անհրաժեշտություն է առաջացել, որ դրան մասնակից լինի և միջամտի ժողովուրդը: Այո, այն ինչ ասվեց ասուլիսում, ազգային շահերի ոտնահարում է, դավաճանություն, դա նշանակում է հրաժարվել մեր ապագայից:

Բայց եկեք ավելի սառնասրտորեն քննարկենք ստեղծված իրավիճակը: Պատկերացրեք՝ Ալիևը առաջարկեր, որ Ղարաբաղի հարցը լուծվի փուլ առ փուլ, և առաջին փուլում համաձայնվեր ճանաչել Ղարաբաղի անկախությունը, հետո նոր միայն քննարկվեին մյուս հարցերը: Այդպիսի հայտարարությունը մեծ ոգևորություն կառաջացներ մեր ժողովրդի մեջ, բայց ո՞վ չի հասկանում, որ դա հեքիաթ է: Այդպիսի առաջարկություն այժմ հնարավոր չէ, չնայած ստեղծված պայմաններում դա կլիներ ավելի արդար և տրամաբանական, քան Լ.Տեր-Պետրոսյանի արած հայտարարությունը: Առավել ևս, որ որոշ աղբյուրներից հայտնի է՝ նրա վրա արտաքին ուժերի կողմից չի կիրառվել մեծ ճնշում: Ինչու՞ այնուամենայնիվ նա գնաց այդ ճանապարհով: Տարբեր պատճառներ են նշվում. առաջինը՝ Լ.Տեր-Պետրոսյանի իշխանության ոչ օրինական լինելն է, որի մասին գիտեն աշխարհի բոլոր երկրներում: Երկրների մի զգալի մասի ղեկավարները նույնիսկ պաշտոնապես չեն շնորհավորել Տեր-Պետրոսյանի նախագահ դառնալը, մի մասն էլ շնորհավորել է ստիպված, որովհետև այս տարածաշրջանը իրենց համար կարևոր է, չեն ուզում խզել հարաբերությունները Հայաստանի հետ, նույնիսկ եթե իշխանությունները անօրինական են: Այդ պատճառով միջազգային ասպարեզում Տեր-Պետրոսյանի առջև ծագել են որոշակի անձնական դժվարություններ, մեկուսացում, և նա փորձում է այդ վիճակից դուրս գալ Ղարաբաղի հարցում անսպասելի մեծ զիջումների գնալով: Այդ նպատակին հասնելու ձգտումը իհարկե Տեր-Պետրոսյանի համար ունի կարևոր նշանակություն որոշումներ ընդունելիս, բայց Ղարաբաղի հարցի լուծման իր արած առաջարկությունը կարող էր արվել միայն այն դեպքում, երբ լինեին իրական կամ գոնե համոզիչ թվացող նախադրյալներ՝ հարցը լուծելու իր իսկ առաջարկած ձևով:

Ակնարկներ կան, և Վազգեն Սարգսյանը, արդարացնելով Տեր-Պետրոսյանին, ասում է, որ այս ամենը ուղղակի դիվանագիտական խաղ է, քաղաքական գործիչը մի բան է մտածում, բայց ասում է ուրիշ բան: Լ.Տեր-Պետրոսյանը ասաց՝ Ղարաբաղը տալիս ենք, Ղարաբաղի ղեկավարությունը, ինչպես և սպասվում էր, ասաց՝ ոչ, և դրանով հարցը փակվեց: Աշխարհում այժմ այսպիսի մանկամիտ խաղեր չեն արվում: Դիմացինները հիմար չեն: Դու զիջեցիր՝ էլ հետ նահանջելու ճանապարհ չկա, գալիս է հաջորդ քայլը: Առայժմ մի կողմ թողնելով Ղարաբաղը՝ Հայաստանին սկսելու են պարտադրել իրականացնել պարզ, ոչ ռազմական միջոցառումների մի ցուցակ, որը դրված է զիջման հայտարարության տրամաբանության շրջանակներում: Եվ դա բերելու է այն բանին, որ էապես ամբողջ հարվածը ուղղվելու է Ղարաբաղի ժողովրդի վրա՝ նախապես մենակ թողնելով և թուլացնելով նրան ու նաև շանտաժի ենթարկելով, թե նրանց պնդաճակատությունը վտանգում է մեր ողջ ժողովրդի ապագան:

Բերվում է նաև հետևյալ փաստարկը. «փաթեթային» տարբերակով բոլոր բանակցությունները ցույց տվեցին, որ օտար երկրները համաձայն են քննարկել Ղարաբաղի կարգավիճակի հարցը միայն Ադրբեջանի տարածքային ամբողջականության բանաձևի շրջանակներում: Հետևաբար գնանք «փուլայինի», որի մեջ Ղարաբաղի անկախության հարցը չի շոշափվի, սկզբում տանք տարածքները, ժամանակ շահենք, որ հետագայում Ղարաբաղի հարցը այս կամ այն ձևով լուծենք: Դարձյալ հիմարություն: Բավական է դու այդ փաստաթուղթը ստորագրես, կարճ ժամանակից հետո նորից պիտի մտնես բանակցությունների փուլի մեջ, բայց արդեն չունենալով այդ տարածքները, այսինքն՝ հույս ունենալով միայն, որ դիմացինը մի բան կզիջի: Էլ չեմ ասում, որ այն դեպքում, երբ սկսեն այս փաստաթուղթը իրականացնել, Ղարաբաղում ղարաբաղցիներ չեն մնա: Ոչ մի երաշխիք չեն ունենա, որպեսզի մնան իրենց հողում: Դա կարող է բերել նոր պատերազմի, բայց այդ պատերազմում արդեն մեր ժողովուրդը այն ոգևորությունը, այն միասնական ուժը չի ունենա, ինչպես նախորդ պատերազմում: Արդեն ջարդված մի ժողովուրդ, որը դժվար թե կարողանա

դիմակայել: Եվ բոլորն են դա հասկանում: Գնալով այս ճանապարհով, նույնիսկ եթե չվերսկսվի պատերազմը, մենք ոչ միայն չենք լուծի Ղարաբաղի ազատության և իրավունքի հարցը, որի համար մեր ժողովուրդը հերոսական և հաղթական պայքար էր մղում նախորդ ժամանակաշրջանում, այլ հակառակը, դատարկվելու է Ղարաբաղը, վտանգվելու է արդեն կամավոր ձևով թույլի դիրքում կանգնած Հայաստանի ապագան:

Տեր-Պետրոսյանի կողմից առաջարկվող ճանապարհը անսպասելի չէր: Սա շատ հետևողական քաղաքականություն է, որը սկսվեց 1992 թվականից, երբ Հայաստանը ստորագրեց Մինսկի հանձնաժողովի մի փաստաթուղթ (չնայած ուներ վետոյի իրավունք), ըստ որի ընդունվեց, որ Ադրբեջանի կազմի մեջ է Ղարաբաղը, որ Ղարաբաղի պետական կազմավորումը համայնքային է, այսինքն՝ ադրբեջանական և հայկական: Այսինքն՝ ավելի վատ վիճակ, քան ունեինք մինչև 1988թ.: Այն ժամանակ դա շատ նման էր բոլշևիկների Բրեստ-Լիտովսկի համաձայնագրին. տանք տարածքներ՝ պահենք իշխանություն: Առջևում սպասվում էր պատերազմական գործողությունների սրացում, որը, ըստ Տեր-Պետրոսյանի «համոզիչ իրատեսության», բերելու էր մեր պարտությանը: Այժմ նույնչափ «համոզիչ իրատեսություն», որն ինձ հիշեցնում է կկվի իրատեսությունը Հ. Թումանյանի «Չարի վերջը» հայտնի բալլադում: Բայց միգուցե այս անգամ այդ «իրատեսությունը» լուրջ հիմքեր ունի, միգուցե իսկապես ժամանակը աշխատում է հօգուտ Ադրբեջանի, ի վնաս մեզ, և պետք է կամավոր զիջել համեմատաբար փոքրը՝ չվտանգելու համար մեծը: Այս հարցը արժե լրջորեն քննարկել, չնայած պարզ է, որ եթե մենք Ղարաբաղը կամավոր հանձնենք Ադրբեջանին, ապա դժվար թե ժամանակը սկսի աշխատել հօգուտ մեզ և ի վնաս իրենց:

Նախ նշենք մի պարզ քաղաքական սկզբունք, որի ճշմարտացիությունը անընդհատ հաստատվում է միջազգային կյանքի իրողություններով: Նույնիսկ ամենահզոր ժողովրդավարական պետությունը, ինչպիսին ԱՄՆ-ն է, իր շահերը առաջ տանելիս միշտ հաշվի է առնում, թե ինչ գին պետք է վճարի իր նպատակներին հասնելու համար: Շատ անգամ հանդիպելով կազմակերպված, միասնական և վճռական կամք ցուցաբերող դիմադրության՝ նա ստիպված է լինում մասամբ հետ նահանջել՝ փնտրելով ավելի ընդունելի փոխզիջումներ: Առավել ևս, եթե հակառակ կողմը բավարարում է հզորի հասարակության հիմքը կազմող արմատական սկզբունքներին և առաջ է քաշում մի հարց, որը բավարարում է որոշակի միջազգային, բարոյական սկզբունքների:

Այս քաղաքական պարզ սկզբունքի ճիշտ կիրառումն էր, որ մեզ բերում էր քաղաքական հաղթանակներ 1988թ. առաջին հանրահավաքից ի վեր՝ ապահովելով նաև լուրջ դաշնակիցներ (թույլը դաշնակիցներ չի ունենում, ունենում է տերեր): Այժմ Լ.Տեր-Պետրոսյանի ջանքերով այլ է իրավիճակը. թուլանում է ոչ միայն մեր տնտեսական ուժը, որը անխուսափելիորեն թուլացնելու է նաև ռազմական ուժը: Ուղղակի կամ անուղղակի ձևերով ջարդվում է մեր ժողովրդի կամքը, միասնությունը, բարոյական, ազգային կերպարը, հավատը ապագայի նկատմամբ: Այս վերջին հայտարարությունները Տեր-Պետրոսյանի կողմից հետապնդում են նույն խնդիրը: Մեր պետությունը արդեն չի բավարարում միջազգային հանրության կողմից ընդունված արմատական սկզբունքներին՝ ոչ միայն մեզ օտար դարձնելով ուրիշների աչքին, այլ նաև զրկելով մեզ լուրջ զարգացման հնարավորությունից: Այս պայմաններում, եթե շարունակվի Լ.Տեր-Պետրոսյանի իշխանությունը, նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությունը, մեզ իսկապես ոչ մի լավ բան չի սպասում, ժամանակը աշխատելու է մեր դեմ:

Մեր պետությունը հիվանդ է քաղցկեղով, իսկ Ղարաբաղը հանձնելը առաջարկվում է որպես մորֆիի մեկ անգամվա ներարկում: Հետո ցավն ավելի սաստիկ է լինելու: Լ. Տեր-Պետրոսյանը (և ոչ թե Արևմուտքը) մեր կամքը ջարդելու համար վախեցնում է Բոսնիայի տարբերակով, այսինքն՝ արտաքին ուժերի կողմից ռազմական գործողություններ մեր դեմ, Ղարաբաղի դեմ: Վերը նշված քաղաքական սկզբունքի ճիշտ կիրառման դեպքում դա անհնարին է, առավել ևս, որ այն, ինչ հնարավոր էր անել Եվրոպայի կենտրոնում, վտանգավոր կլինի կրկնել այս պայթյունավտանգ տարածաշրջանում: Պնդումները, որ մեր տնտեսությունը խեղդվում է շրջափակման պատճառով, և Ղարաբաղը տալուց հետո ճանապարհները կբացվեն, ու «Սերգեյը լավ կապրի»[1], լուրջ չեն, առավել ևս, որ մեր մահացող տնտեսության կարիքների համար օգտագործվում է Վրաստանի ճանապարհի կարողության ոչ ավելի, քան 30%-ը:

Միջազգային մեկուսացման մասին: Զարմանալին այն է, որ այդ մասին խոսում է այն պետության ղեկավարը, որի բարձրաստիճան պաշտոնյաները[2] հրապարակավ հայհոյում են

ուրիշ պետություններին, նրանց ղեկավարներին, որտեղ մերժվում են Եվրոպայի կողմից առաջարկությունները 1996 թվի նախագահական ընտրությունների արդյունքներում շտկումներ կատարելու, ԱԺ-ի վաղաժամկետ ընտրություններ կազմակերպելու մասին: Այդ դեպքում «մերոնք» շատ խիզախ են, չեն վախենում մեկուսացումից, դատողություններ են անում մեր անկախության, արտաքին ուժերի ճնշումների անթույլատրելիության մասին: Պարզ է, որովհետև այս դեպքում խոսքը իրենց գումարների, իրենց իշխանության մասին է:

Եթե Հայաստանը լինի իրական ժողովրդավարական պետություն, որտեղ հարգում են մարդու իրավունքները, որը կարևորում է հարգանքով վերաբերվել մյուս պետությունների շահերին՝ միևնույն ժամանակ պարտադրելով, որ հարգեն նաև իր շահերը, այդպիսի պետությունը մեկուսացման մեջ մնալ չի կարող: Ինչ վերաբերում է այլ պետությունների շահերին, նպատակահարմար է ձևակերպել մի քաղաքական սկզբունք ևս:

Յուրաքանչյուր պետության շահը միայն թվաբանական հաշվարկի վրա կառուցված գիծ չէ, այլ ներքին ուժերի պայքարով և փոխզիջումներով առաջացած մի դինամիկ հոսանք, որն ունի լայնություն, այսինքն՝ միշտ գոյություն ունի որոշակի քաղաքական լյուֆտ, որը հնարավոր է դարձնում արտաքին քաղաքականության ճկունությունը, փոխզիջումները, լոբբիզմը, քաղաքական կուրսի հնարավոր փոփոխությունը երկրի ղեկավարության փոփոխության դեպքում: Այլապես այս ամենը գոյություն չէր ունենա և արտաքին քաղաքականությունը կլիներ համակարգիչով հաշվարկած մի կոշտ հետագիծ:

Օրինակ՝ ԱՄՆ պետական շահը ոչ թե Ղարաբաղը Ադրբեջանի կազմում տեսնելն է, այլ հետապնդելով ուրիշ, իր համար կարևոր շահեր՝ նա դրանց լուծումը այժմ տեսնում է Ադրբեջանի տարածքի ամբողջականությունը պահպանելու բանաձևի մեջ: (Մի կողմ թողնենք, թե ինչքանով է այդ բանաձևը տվյալ դեպքում բարոյական կամ արդար:) Կարելի է թվարկել այդ շահերը՝ ազդեցության ընդլայնում տարածաշրջանում, կայունության ապահովում, նավթային շահեր և այլն: Մեր արտաքին քաղաքականությունը իր առջև պետք է հարց դներ. հնարավո՞ր է ԱՄՆ այդ շահերը գոնե մասամբ ապահովել՝ առաջարկելով մեզ համար ավելի օգտակար լուծում Ղարաբաղի հարցում: Այսինքն՝ փորձել Ղարաբաղի հարցի՝ մեզ համար ընդունելի լուծումը տեղավորել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունում գոյություն ունեցող լյուֆտի մեջ: Շփումները օտարերկրյա քաղաքական գործիչների հետ վկայում են, որ այս ասպարեզում մենք ունենք չօգտագործված հնարավորություններ:

Առայժմ մի կողմ թողնելով եվրոպական երկրների, Իրանի, Թուրքիայի դիրքորոշումները, որոնք իհարկե կարևոր են, երկու խոսքով անդրադառնանք Ռուսաստանի դիրքորոշմանը Ղարաբաղի հարցում: Իր տարածքային շահերից ելնելով՝ թվում էր, որ Ռուսաստանը մեզ համար Ղարաբաղի հարցում լինելու է դաշնակից: Մասամբ դա այդպես է, չնայած մենք չենք տեսնում իր կողմից որոշակի արտահայտված դիրքորոշում մեր օգտին (այստեղ Չեչնիայի հարցի թվացող նմանությունը էական չէ): Բայց Ռուսաստանն այժմ այն վիճակում չէ, որ պնդի իր շահերը այս հարցում: Եթե մենք ամուր կանգնած լինենք մեր դիրքերում, և նրանից պահանջվի միայն փոքր աջակցություն, ապա մենք այն կստանանք:

Բարձրացնում են նավթի հարցը, որ իբր նավթի շնորհիվ Ադրբեջանն անընդհատ ուժեղանալու է, Հայաստանը թույլ է և չի կարող ուժեղանալ, և վաղ թե ուշ Ադրբեջանը թելադրելու է իր կամքը՝ կա՛մ ռազմական, կա՛մ քաղաքական միջոցներով: Նախ ասեմ, որ նավթ ունենալն իհարկե լավ է, բայց նավթի շնորհիվ հզորացողները եղել են հիմնականում նրանք, ովքեր մինչև այդ էլ հզոր են եղել: Խորհրդային Միության նավթի հսկայական պաշարները չփրկեցին նրան փլուզումից: Արաբական երկրների նավթի հսկայական պաշարները չօգնեցին, որ նա շահի պատերազմը Իսրայելի դեմ: Միայն նավթը դեռ շատ քիչ է զարգացում ապահովելու համար: Այժմ պետության հզորության հիմնական աղբյուրը նավթը չէ, ընդերքը չէ: Պետության հզորության աղբյուրը աշխատանքն է, ստեղծագործական ոգին, հասարակության լավագույնս կազմակերպումը, որի հիմքում ընկած է ժողովրդավարությունը, համամարդկային քաղաքակրթության հետ համաչափ քայլելը՝ հիմնվելով նաև ազգային արժեքների վրա: Դա է հզորացման աղբյուրը: Եվ մենք բոլոր նախադրյալներն ունենք՝ այդ ճանապարհով գնալու ու ավելի հզորանալու, քան Ադրբեջանը, անկախ այն հանգամանքից՝ ունենք մենք նավթ, թե ոչ: Եվ բազմաթիվ երկրների օրինակներ կարող ենք բերել, հենց թեկուզ Ճապոնիայի, որը ոչ մի ընդերքային շոշափելի հարստություն չունի, բայց ունի ստեղծագործ ժողովուրդ, աշխատող ժողովուրդ, կազմակերպված հասարակություն՝ հիմնված ազգային ու համամարդկային արժեքների վրա: Եվ նա հզորներից մեկն է:

Իսկ ներկա ճանապարհով գնալու դեպքում մենք տկարանալու ենք, Ադրբեջանը ուժեղանալու է: Բայց ոչ թե այն պատճառով, որ Ադրբեջանը նավթ ունի, այլ որովհետև Հայաստանը Լևոն Տեր-Պետրոսյան ունի:

Ի՞նչ է պետք անել: Եթե չենթադրենք այն ոչ իրական տարբերակը, որ բոլոր կողմերը համաձայնվում են այն փուլային տարբերակին, որի առաջին քայլը Ղարաբաղի անկախության ճանաչումն է, ապա մեզ մնում է բանակցությունների ժամանակ վերադառնալ փաթեթային տարբերակին: Փաթեթի մեջ կա երեք հարց. փախստականների հարցը, տարածքների հարցը և Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Այդ երեք հարցերի շուրջն էլ բանակցությունների մեծ դաշտ կա, փոխզիջումների մեծ դաշտ: Բայց մեզ համար անընդունելի է քննարկել Ղարաբաղի կարգավիճակն ի սկզբանե որպես Ադրբեջանի մի անբաժանելի և իրեն ենթարկվող տարածք: Կարելի է, ինչպես առաջարկում է Ղարաբաղի ղեկավարությունը, այդ հարցի քննարկումը սկսել զրոյից: Չեն համաձայնվի, բանակցությունները ժամանակավորապես կդադարեցվեն, մինչև կողմերը պատրաստ կլինեն գնալ իրական փոխզիջումների: Ոչինչ, կսպասենք: Պատերազմ չի լինի, ոչ մի կողմին այն ձեռնտու կամ շահեկան չէ:

Եթե եկանք համաձայնության, ապա փաթեթային լուծումից հետո իրականացումը պետք է կատարվի փուլ առ փուլ, դանդաղ, երկու կողմերը անում են առաջին փոքր քայլը և սպասում են: Առաջին քայլի իրականացումը երաշխիք է՝ անցնելու երկրորդ քայլին, երրորդ քայլին: Գործընթացը կարող է տարիներ տևել:

Սակայն Ղարաբաղի հարցի լուծումը մտել է մի այնպիսի փուլ, Ղարաբաղի հարցով բանակցություններին մասնակցում են այնպիսի մարդիկ, այնպիսի դիրքորոշումներով, երկիրը գտնվում է այնպիսի վիճակում, որ արդեն պարզ է՝ հարցը չի ստանա գոհացուցիչ լուծում՝ առանց ժողովրդի միջամտության, առանց մեր պետության ներքին քաղաքական կացության փոփոխության: Ի՞նչ է պետք անել այդ ուղղությամբ: Առաջին՝ պետք է ունենանք իսկական ժողովրդավարական պետություն, երբ ժողովրդի քվեով են ընտրվում իշխանությունները, պետություն, որտեղ հարգում են մարդու իրավունքները, պետություն, որն ազատություն տալով իր ժողովրդին՝ զարգացնում է արդյունաբերությունը, պետություն, որը հզորանում է տնտեսապես, ֆինանսապես և այդ ամենի շնորհիվ հզորանում նաև ռազմական տեսակետից: Դրա համար անհապաղ պետք է անցկացնել նոր՝ արդար և օրինական նախագահական ընտրություններ, որպեսզի դուրս գանք այս վիճակից: Դա կապահովի և՛ ազգային միասնություն ու զարգացում, և՛ երաշխիք Հայաստանի համար, որպեսզի մյուս երկրների հետ հարաբերվենք ինչպես հավասարը հավասարի: Միաժամանակ իշխանության փոփոխությունը հնարավորություն կտա դուրս գալ այս ակոսից, հրաժարվել գաղտնի կերպով ստանձնած որոշ պարտավորություններից, որոնք ամրագրված չեն պայմանագրերով:

Կարելի է ձևակերպել ևս մի քաղաքական սկզբունք, որը օգտակար կարող է լինել մեր խնդիրները լուծելու համար:

Երբեմն պետության ղեկավարության կողմից հետապնդվող պետական շահի և այդ իսկ պետության հասարակության արմատական սկզբունքների միջև առաջանում է որոշակի հակասություն, որը և հնարավորություն է տալիս մեկ այլ պետությանը կամ որևիցե շահագրգռված խմբի, ապահովելով լայն քարոզչական, տեղեկատվական աշխատանք, գրավել այդ երկրի հասարակության ուշադրությունն ու համակրանքը և դրանով իսկ մասամբ ազդել տվյալ պետության քաղաքականության վրա: Այդ ամենը շատ բնորոշ է ժողովրդավարական երկրների համար:

Այս տեսակետից կարևոր է պրոֆ. Բարսեղովի առաջարկությունը Հայ դատի հարցի վերաբերյալ, որը մեզ համար իհարկե և՛ ազգային զգացմունքի, և՛ իրավունքի հարց է, բայց նաև բարոյական ճնշման միջոց է: Խոսքը ոչ թե Թուրքիայի դեմ թշնամանալու մասին է, հողերը հետ պահանջելու մասին, այլ մարդկությանը մոռանալ չտալու, ինչպես դա հաջողությամբ անում են հրեաներն իրենց ցեղասպանության հարցում:

Նույն տեսակետից կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև նամակի գաղափարը: Կարծում եմ, որ պետք է կազմվի մի նամակ՝ արժանապատվությամբ, առանց սպառնալիքի, բայց առանց լացկանության, հստակ մեր դիրքորոշումը ասող, ուղղված Քլինտոնին, Շիրակին և Ելցինին, որի տակ պիտի ստորագրի ամբողջ աշխարհի 8 մլն հայությունը: Դա միայն թուղթ չէ, դա մի ձև է, որը ընդունված է ամբողջ աշխարհում և մեծ նշանակություն ունի: Միևնույն ժամանակ դա ենթադրում է հսկայական կազմակերպչական աշխատանք, որը առաջին քայլը

կարող է լինել համաշխարհային հայկական կառույցներ ձևավորելու նպատակին հասնելու գործում:

Միևնույն ժամանակ իրենց նախագահին ուղղած այսպիսի նամակ պիտի գրեն ԱՄՆ-ի հայերը, որը պետք է ստորագրվի ոչ միայն հայերի կողմից: Մենք պիտի կարողանանք լեզու գտնել այդ երկրի կազմակերպված ազգային փոքրամասնությունների հետ, և՛ մեքսիկացիների, և՛ չինացիների, և՛ հրեաների, և՛ մյուսների, որ իրենք օգնեն մեզ այս հարցում, մենք էլ կաջակցենք իրենց այլ հարցերում: Դա ճնշման հսկայական ուժ կլինի Միացյալ Նահանգների ներսում: Դա նույնպես մեծ աշխատանք է, որը միասին պետք է անենք, այդ աշխատանքը կնպաստի ամերիկահայերի միասնությանը և հզորացմանը:

Հաճախ են ասում՝ քաղաքականությունը հնարավորին հասնելու արվեստ է: Բայց ի՞նչն է հնարավոր այս աշխարհում: Այն, ինչ հնարավոր է թվաբանությամբ հաշվել, դա կոշկակարներն էլ կկարողանան իրականացնել: Բայց իսկական քաղաքական գործիչը, ազգային գործիչը կարողանում է իրականացնել այն, ինչ թվաբանական հաշվարկներից վեր է: Այդ ո՞ր թվաբանական հաշվարկով էր, որ Ղարաբաղը կարողացավ հաղթել Ադրբեջանին, այդ ո՞ր թվաբանական հաշվարկով էր, որ Չեչնիան դիմացավ հսկայական Ռուսաստանի բանակին: Ամբողջ մարդկության պատմությունն այսպես է ընթանում. ժողովուրդը գիտակցում է, որ նահանջելու տեղ չունի և իրականացնում է այն, ինչը ոմանց կամ շատերին թվում էր անհնարին: Եվ իրականացնելով այն, ինչը թվում էր անհնարին, իրենք նոր ճանապարհներ են բացում ողջ մարդկության համար: Ճակատագիրը ուղարկել է մեզ այս փորձությունը, որպեսզի պարզենք մեզ համար՝ կամ մենք կզիջենք, կհամակերպվենք այս վիճակին, կդառնանք մի փոքր խեղճ ժողովուրդ, որը կօգտվի ուրիշների, հզորների սեղանի փշրանքներից, կամ մենք կդառնանք մի հզոր ժողովուրդ , որը կարողանում է կերտել իր կյանքը, կարողանում է տնօրինել իր ապագան: Սա է ճանապարհը: Եվ ես կոչ եմ անում գնալ այս ճանապարհով, սա է մեր ուղին:

Ես համոզված եմ, որ մենք կգնանք այս ճանապարհով: Իսկ առջևում շողշողուն 21-րդ դարն է, որը, ես համոզված եմ, լինելու է մարդկության ոսկե դար, խաղաղ դար, երբ առաջ կգնան այն ժողովուրդները, որոնք ունեն ստեղծագործական ուժ, ունեն վճռականություն, ունեն արժանապատվություն և հպարտություն: Մենք կգնանք այդ ճանապարհով և կհասնենք գագաթների:

Վ. Մանուկյանի ելույթը 1997թ. հոկտեմբերի 31-ին
Ազատության հրապարակի հանրահավաքում
«Այժմ», 5-11 նոյեմբերի 1997 թ.

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ ՄԻԱՅՆ ՍԿԻԶԲՆ Է

Սովորաբար երբ մի որևէ իրադարձությունից 10 տարի է անցնում, ընկնում ես կարոտախտի, հիշողությունների մեջ: Բայց երևի դրա ժամանակը չէ: Ես վերջերս առիթ ունեցա անդրադառնալու մեր այն ժամանակվա ելույթներին, հոդվածներին, ասուլիսներին. հիացնում է ոգևորությունը, պոռթկումը, միասնությունը, որ ուներ մեր ժողովուրդը: Եվ հետաքրքիր է, որ դրանք կարդալիս ես միամիտ ռոմանտիզմ չեմ նկատում, բավական հավասարակշիռ, լուրջ քննարկումներ են: Ցավոք սրտի, շատ բանից մենք շեղվեցինք:

Կարելի է, իհարկե, գնահատել, թե այս 10 տարվա ընթացքում մենք ինչ ձեռք բերեցինք, ինչ կորցրեցինք: Այդ փորձը բազմիցս արվել է շատերի կողմից: Ինչ կորցրեցինք, ինչ պատճառով, ինչ սխալների հետևանքով: Այս ամենը, իհարկե, շատ կարևոր նշանակություն ունի և սպասում է իր մեկնաբանին: Բայց այժմ մենք ապրում ենք մի իրավիճակում, երբ ինչ հարց էլ քննենք, լինի արդյունաբերության, սոցիալական, արտաքին քաղաքականության, Արցախի, լինի մեր բարոյական հարցերը, բոլորը գալիս են մի հանգուցալուծման. մենք այդ ամենը կարող ենք լուծել միայն և միայն այն դեպքում, երբ ազատվենք Լևոն Տեր-Պետրոսյանից: Այսօրվա խնդիրը դա է: Ես չեմ ուզում հիմա վերլուծել, թե մեր տնտեսական ճգնաժամի մեջ ինչն էր օբյեկտիվ պատճառներով, ինչ դեր խաղաց շրջափակումը կամ Խորհրդային Միության փլուզումը: Բայց հիշենք ազգային այն մթնոլորտը, այն ոգևորությունը,

և հիշենք՝ ինչ կատարվեց այս 10 տարվա ընթացքում: Հայրենասիրությունը սկսեց համարվել ծիծաղելի մի բան, որից պիտի ազատվել, հայության տարբեր հատվածներ սկսեցին իրար դեմ տրամադրել: Լ.Տեր-Պետրոսյանը, տարեցտարի, օրեցօր մեկուսացման մեջ հայտնվելով, հայության ավելի ու ավելի նոր հատվածներ էր հայտարարում թշնամի, ֆաշիստ, տեռորիստ: Սկզբում Դաշնակցությունն էր, հետո դարձան ղարաբաղցիները, ԱԺՄ-ն, ես, մյուս քաղաքական գործիչները, այսինքն՝ այնպիսի տպավորություն էր ստեղծվում, որ այս ազգը ունի Լ.Տեր-Պետրոսյան և անգրագետ, ազգայնամոլ, ֆաշիստ, տեռորիստ մի ժողովուրդ: Դա մեկ-երկու անգամ կարող էր ազդել, սակայն ժամանակի ընթացքում ամբողջ աշխարհն արդեն տեղեկացել է՝ ով ով է, ինչն ինչ է, բայց ցավալին այն է, որ դա մեր ժողովրդի հեղինակությունը գցում է: Եվ այս 10 տարվա ընթացքում ամենաբացասական արդյունքը ես համարում եմ այն, որ պակասեց մեր ժողովրդի հարգանքն իր հանդեպ և ուրիշ ժողովուրդների հարգանքը մեր նկատմամբ:

Անկախությունը նրա համար չէր, որ Լ. Տեր-Պետրոսյանը, նրա կողքին Վանո Սիրադեղյանը կատարեին ցանկացած հանցագործություն: Ամեն ինչ նրանց ներվում էր: Բաժանումը տեղի ունեցավ Ղարաբաղի հարցում: Ի վերջո, արասահակյանների ինչին է պետք ազգի հա՞րց, պետության հա՞րց, Ղարաբաղի հա՞րց… Կանայք, գիհի, փող, իշխանություն, ուրիշ ի՞նչ է իրենց հետաքրքրում: Ես նայում էի երեկ «Չորրորդ իշխանությունը». նկարել են Մայր Հայաստանը՝ փաթաթված վիշապով, և վիշապը Ղարաբաղն է: Դուք պատկերացրեք՝ մեկը 1988 թվականին կամ 1990 թվականին համարձակվեր այդպիսի բան նկարել: Կճզմեր ժողովուրդը այդ մարդուն: Իսկ այս մթնոլորտում դա համարվում է բնական երևույթ, ինչ կա որ, այս թերթն էլ այդ կարծիքին է: Ես կարծում եմ՝ պետք է նկարել Մայր Հայաստանի վրա մի օձ՝ երկու գլխանի, որի մի գլուխը Լ.Տեր-Պետրոսյանն է, մյուսը Վանո Սիրադեղյանը, պոչին էլ միգուցե Բաբիկը:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցին, այժմ անընդհատ կոծկելու փորձ է արվում, թե ինչ է եղել որ (նկատու՞մ եք, մանավանդ Վազգեն Սարգսյանի սուր ելույթից հետո), նույն ձևով ենք մտածում, մի քիչ տարբերություններ կան, քաղաքական լուծումներ են, ուշ թե շուտ կկարողանանք իրար համոզել: Ոչ, շատ հստակ է ճանապարհը: Մեկը ասում է, որ Ղարաբաղը պետք է տալ, ազատվել Ղարաբաղի հիմնախնդրից և զբաղվել ուրիշ հարցերով՝ հիմնականում անձնական, հարստանալու և իշխանությունը պահելու, մյուսն ասում է, որ Ղարաբաղը մեր հայրենիքի մի մասն է և այն ածուրդի չպիտի հանվի: Եվ այս երկու թևերը երբեք ընդհանուր հայտարարի չեն գա:

Լ. Տեր-Պետրոսյանը կարող է նահանջել, փորձել մեղմել իրավիճակը, բայց արդեն բոլորը հասկանում են, որ դա կլինի ժամանակավոր նահանջ, վաղ թե ուշ ուժերը հավաքելով, եթե ինքը մնա, շարունակելու է նույն գիծը: Այդ ամենը բերեց, իհարկե, նաև անձնական հակասությունների. հակասություններ՝ կապված պաշտպանության նախարարի, վարչապետի հետ, բայց այս 10 տարվա, ավելի շուտ վերջին 6 տարվա ընթացքում, լավ ճանաչելով Լ. Տեր-Պետրոսյանի իշխանությունը, դժվար չէր ենթադրել, որ դա չի ներվելու: Այս խաղը, որ սկսվեց Ղարաբաղի հարցի շուրջը, զրոյական խաղ չէ, որ ավարտվի ոչ-ոքի, սա շախմատ չէ, նարդի է, կամ մեկը պիտի հաղթի, կամ մյուսը:

Եվ ես կարծում եմ, որ խնդիրը լրիվ լուծելի է. մենք ղարաբաղյան շարժման առաջին տասնամյակը սկսեցինք առանց Լ.Տեր-Պետրոսյանի և երկրորդ տասնամյակն էլ պիտի սկսենք առանց Լ.Տեր-Պետրոսյանի: Այսինքն՝ Լ. Տեր-Պետրոսյանի դուրս գալու հարցը պիտի լինի շուտափույթ, և դա պետք է լինի ոչ թե պալատական հեղաշրջումների միջոցով, այլ ժողովրդի պահանջով, ժողովուրդը պիտի մասնակից լինի: Մենք սկսել ենք կոնսուլտացիաներ տարբեր կուսակցությունների հետ, տարբեր քաղաքական ուժերի հետ: Ես կոչ եմ անում բոլոր կոլեկտիվներին, բոլոր փոքր ու մեծ հանրահավաքներին՝ միանան այս պահանջին. Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականը, նոր ընտրություններ ազգային վստահության, արդարության մթնոլորտում: Եվ միայն Լ.Տեր-Պետրոսյանին դուրս շպրտելով չեն լուծվելու բոլոր հարցերը, դա կլինի սկիզբ՝ մնացած հարցերը լուծելու: Ես կարծում եմ, որ բոլոր քաղաքական ուժերը պետք է կարողանան նաև գալ ազգային համաձայնության բոլոր կարևորագույն հարցերի շուրջը՝ անկախության, Արցախի հարցի, ժողովրդավարության, սոցիալական ապահովության,

տնտեսության զարգացման, բարոյական մթնոլորտ ստեղծելու, Սփյուռք-Հայաստան համագործակցության և այլն: Այդ հիմնադրույթների շուրջը բոլոր քաղաքական ուժերը պետք է ստորագրեն մի փաստաթուղթ՝ հուշագիր, որի հիմքի վրա կշարունակվի պայքար տարբեր գաղափարների շուրջ: Ընտրություններ կլինեն, թող տարբեր կուսակցություններ մրցեն ԱԺ կամ նախագահական ընտրությունների համար: Բայց պետք է լինի ազգային համաձայնություն կարևորագույն հարցերի շուրջը, և պետք է լինի վստահության մթնոլորտ:

Մենք այդ աշխատանքը սկսել ենք, դեպքերը շատ արագ են ընթանում, մենք 10-ամյակի առթիվ հանրահավաք ենք նախատեսել փետրվարի 12-ին, մինչ այդ դեպքեր կլինեն՝ մենք կարծագանքենք:

Ոմանք հարցնում են՝ ամեն ինչ կորա՞ծ է: Ոչ: Այսօր փլուզումից 10 տարի հետո էլ, միևնույնն է, մենք մեր մեջ հսկայական ուժ ունենք, հսկայական հնարավորություններ նորից վերականգնելու մեր երկիրը, վերականգնելու վստահությունը միմյանց նկատմամբ, ապագայի նկատմամբ, մեր արժանապատվությունը: Ամեն ինչ առջևում է, և ես համոզված եմ, որ բոլոր այդ խնդիրները լուծելի են:

Հանդիպում «Մամուլի ազգային ակումբում»
Վ. Մանուկյանի հետ, նվիրված
Ղարաբաղյան շարժման 10-ամյակին, կրճատումներով
հունվարի 28, 1998 թ., ՄԱԿ-ի գրասենյակ
«Այժմ», 1998, 4-10 փետրվարի

ՄԻԱԿ ԵՐԱՇԽԻՔԸ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ

Նոր ժամանակաշրջան ենք ապրում: 1996թ. սեպտեմբերի 26-ը տևեց մեկուկես տարի: Մենք իսկապես նոր տասնամյակը կրկին սկսում ենք առանց Լ.Տեր-Պետրոսյանի, և արդեն մեզանից է կախված, որպեսզի նոր Տեր-Պետրոսյան ի հայտ չգա: Ի՞նչ տեղի ունեցավ Հայաստանում: Ժողովրդի մեջ վստահություն չկար Լ.Տեր-Պետրոսյանի նկատմամբ, որ ցայտուն արտահայտվեց 1996թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Ժողովրդից պաշտպանվելու միակ հենարանը ուժային կառույցներն էին: Այսինքն՝ նրա և ժողովրդի միջև կանգնեցին ուժային կառույցները: Այն պահին, երբ ուժային կառույցները մի կողմ քաշվեցին, նա մնաց մերկ ու արդեն դատապարտված էր: Իսկ ինչու՞ ուժային կառույցները մի կողմ քաշվեցին: Լ.Տեր-Պետրոսյանի մոտեցումները Ղարաբաղի հարցում ընդունելի չէին մեր ժողովրդի, ինչպես նաև ուժային կառույցների համար:

Եթե հիշում եք, մենք փետրվարի 12-ին հանրահավաք ենք նշանակել: Ժողովրդի կարծիքը պիտի պարտադրեր արդեն Լ.Տեր-Պետրոսյանին հեռանալ: Բայց նա գերադասեց հեռանալ ոչ թե ժողովրդի պահանջով, այլ ձևակերպել դա որպես ուժային կառույցների թելադրանք: Իրականում ի՞նչ բանակցություններ են գնացել պալատում՝ ես չգիտեմ, անկեղծ ասած, ինձ դա շատ էլ չի հետաքրքրում: Իսկ ինչ վերաբերում է արագացմանը, որը տեղի ունեցավ վերջին ամսվա ընթացքում, ապա ամենայն հավանականությամբ մեծ դեր խաղաց այն չբացահայտված մահափորձերի[3] շարքը, և այս պարագայում արդեն սկսեցին մեծ նշանակություն ունենալ անձնական և անվտանգության ապահովության հարցերը: Ես կարծում եմ՝ մահափորձերը վարչակարգը պահպանելու վերջին ճիգերն էին:

Լ.Տեր-Պետրոսյանը այնուամենայնիվ մի ական էլ թողեց, նոր գնաց՝ ձևակերպելով, որ Հայաստանում խաղաղասեր ուժերը գնում են, և գալիս են ռազմատենչ ուժերը: Մի բան, որ բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Իհարկե, Հայաստանում էլ, Ղարաբաղում էլ կան տարբեր քաղաքական ուժեր, որոնք տարբեր կերպ են տեսնում Ղարաբաղի հարցի լուծումը: Սակայն և՛ կառավարական շրջանակներում, և՛ ընդդիմությունում, և՛ Ղարաբաղում այն քաղաքական գործիչները, որոնք որևէ դեր խաղում են, մեծ դպրոց են անցել, բավականին իրատես, պրագմատիկ մարդիկ են: Եվ մենք բոլորս էլ գիտակցում ենք, որ միայն խաղաղ բանակցությունների միջոցով կարելի է խնդիրը լուծել: Այլ հարց է, թե ամեն մեկն այդ խաղաղ բանակցությունների ընթացքը ինչպես է տեսնում: Փուլայինը ընդունելի չէր,

և առաջարկվում էր համալիր ծրագիր, որով քննարկվեր և՛ փախստականների հարցը, և՛ տարածքի, և՛ կարգավիճակի հարցերը: Փոխզիջումների մեծ դաշտ կա: Եվ ես կարծում եմ, որ բանակցությունները, անկախ ամեն ինչից, շարունակվելու են: Անկախ նրանից, թե ով կլինի նախագահ, միևնույնն է, բանակցությունների նույն գործընթացը շարունակվելու է: Եվ համոզված եմ, որ խաղաղություն կլինի ոչ միայն մեր սերնդի, այլ նաև ապագա սերունդների համար:

Հրաժարականի մեջ նաև չարախնդություն կար, թե տեսեք՝ ինչ վատ է լինելու, և դուք հիշելու եք, թե ինչ լավ էր մինչ այս: Ուզում եմ հավաստիացնել պրն Տեր-Պետրոսյանին, որ լավ է լինելու: Ես շատ պայծառ եմ տեսնում Հայաստանի ապագան: Այդ մղձավանջի մեջ մենք նորից չենք հայտնվի: Բայց միակ երաշխիքը, որ Հայաստանը այս վիճակից դուրս գա և քայլի առաջ, միայն և միայն արդար, ազատ ընտրություններն են: Այս հիվանդության բանալին դա է:

Երբեմն կասկածներ են առաջանում, մարդիկ տագնապում են. հիմա չի՞ կրկնվի այն, ինչ եղավ 1996 թվականին: Այս մեկուկես տարին ցույց տվեց բոլորին, թե ինչ է նշանակում ոչ օրինական իշխանություն: Ոմանք, ովքեր խորությամբ զբաղված են Ղարաբաղի հարցով, տեսնում են երկու կողմն էլ: Այսինքն՝ արդար ընտրություններով ընտրված իշխանությունը, լինի Ազգային ժողովը թե նախագահը, մեզ ուժեղացնում է արտաքին հարաբերությունների մեջ, նաև առանց արդար ընտրությունների եկած իշխանությունը չի կարող ունենալ ժողովրդի վստահությունը, ժողովրդի վստահությունը չունենալով՝ հնարավոր չէ զարգացնել ո՛չ տնտեսությունը, ո՛չ համախմբել ժողովրդին այս կամ այն հարցի շուրջ: Ես լավատես մարդ եմ և ներքին համոզմունք ունեմ՝ ամեն ինչ կարվի, որպեսզի այս ընտրությունները անցնեն արդար: Կարո՞ղ են լինել գայթակղություններ այն մարդկանց համար, ում ձեռքում է այժմ ռեալ իշխանությունը: Իհարկե կարող են լինել: Բայց այդ մարդիկ շատ լավ են հասկանում, թե դա ուր կտանի և՛ Հայաստանը, և՛ Ղարաբաղը: Եվ բացի դրանից, մեր ժողովուրդն էլ թույլ չի տա:

Մտահոգող երևույթներ կան: Ես չեմ ուզում հիմա այս կարճ խոսքում անդրադառնալ Ազգային ժողովում տեղի ունեցածին[4]: Բայց մի բան կարող եմ ասել, որ այնուամենայնիվ Լ. Տեր-Պետրոսյանին չհաջողվեց ամբողջ Հայաստանը դարձնել առևետաբուծական ֆերմա: Առևետներ կան, բայց շատ քիչ են: Մտահոգիչ կլինի, եթե իշխանական հարաբերություններում կոմպրոմատ օգտագործվի միմյանց դեմ: Այսինքն՝ ամեն մի փաստ դիմացինի մասին օգտագործվի նրան ճնշելու և իր կողմը գրավելու նպատակով, և ոչ թե բացվեն հարցերը, դատավարություններ լինեն, մարդիկ իմանան ճշմարտությունը: Ուղղակի ամեն մի փաստ դիմացինի մասին օգտագործվի նրան ճնշելու համար, և մենք տեսանք, թե այդպիսի համակարգը ինչքան արագ է քանդվում:

Ժողովրդավարությունից ոչ պակաս կարևոր մի հարց կա: Դեռ ԱԺ ընտրությունների ժամանակ՝ 1995թ., մեր կուսակցությունը առաջարկեց, որպեսզի անպայման օրենք ընդունվի պետծառայողի մասին: Նախագահական ընտրությունների ժամանակ իմ նախընտրական ծրագրում դա նշած էր որպես առանձին կետ: Ուրախալի էր լսել, որ Ռ.Քոչարյանը նույնպես կարևորում է դա: Խնդիրը որն է. իշխանությունների փոփոխությունից ոչ թե կատարվի կադրերի ջարդ, ոչ թե քաղաքական հետապնդումներ սկսվեն գնացողների նկատմամբ, և տեղերը զբաղեցնեն նորերը, այլ աշխատի մի համակարգ, անկախ այն հանգամանքից, թե ով գնաց, ով եկավ: Բայց միաժամանակ եթե գնում ես, պիտի պատասխան տաս, թե ինչ է արվել քո օրոք: **Եթե մենք՝ մեր ժողովուրդը, նոր եկած իշխանությունները, չկարողանանք բացել բոլոր մութ էջերը, որոնք եղել են նախորդ ժամանակաշրջանում, եթե չբացահայտվեն մահափորձերը, սպանությունները, այն խոշոր թալանը, որ կատարվել է Հայաստանում, ապա մեր հասարակությունը չի առողջանա: Մերժել քաղաքական հետապնդումները, բայց այնպես անել, որ ամեն մեկը պատասխան տա իր արածի համար:**

Ժողովրդավարական ընտրությունների համար մենք կոչ ենք արել մյուս կուսակցություններին: Պետք է պատրաստել մի փաստաթուղթ, որի տակ ստորագրեն բոլոր կուսակցությունները, ներկա քաղաքական, պետական գործիչները: Ես կոչ եմ անում, որ այս ընտրարշավի ժամանակ այնպիսի մթնոլորտ լինի, որ մարդիկ առանց թույնի խոսեն իրար հետ: Կրկնում եմ, մենք մի նոր ժամանակաշրջան ենք թևակոխում: Ես լի եմ լավատեսությամբ,

որ մենք կկարողանանք ի վերջո դուրս գալ այս մղձավանջից և կառուցել այն պետությունը, որի համար մենք 1988 թվականին ոտքի կանգնեցինք:

Ասեմ, որ շատ դժվար է լինելու, շատ է քայքայված մեր պետությունը, բայց ժողովրդի հիմնական մասը մնացել է առողջ, և եթե իշխանության բնականոն ժողովրդավարական փոփոխություն լինի, հարյուր հազարավոր մարդիկ կվերադառնան, և մենք ձեռք ձեռքի տալով, ուս ուսի նորից կկառուցենք մեր երկիրը:

-Ուզում եմ հիշել, որ 1996թ. ընտրություններից առաջ էլ դուք լավատեսորեն էիք տրամադրված:

-Ես կարծում եմ, որ իմ լավատեսությունն արդարացվեց: Իմ կարծիքով և ժողովրդի մեծ մասի կարծիքով, ես կարողացա ձայների մեծամասնություն ունենալ: Ի՞նչ խոչընդոտ առաջացավ: Լ.Տեր-Պետրոսյանը օգտագործեց ուժային կառույցները: Դրանց մասնակցության հիմքում, անշուշտ, կային շահեր, բայց կար նաև մոլորություն՝ կապված Ղարաբաղի հարցի հետ: Ես գերագնահատեցի դիմացիների մտավոր կարողությունները: Բայց մեկուկես տարվա ընթացքում իրենք էլ համոզվեցին, թե դա ինչ հարված է և՛ Ղարաբաղին, և՛ պետությանը: Ուստի մի կողմ կանգնեցին: Ես չեմ կարծում, որ ուժային կառույցները ևս մեկ անգամ փորձեն այդ քայլը անել:

Երկրորդը՝ ամենից դժվարը հեղափոխությունից հետո եկած առաջին իշխանության փոփոխությունն է: Ամբողջ աշխարհի փորձն է դա ցույց տալիս: Այն մոգական ուժը, որ ունենում է առաջին մարդը, արդեն ցրվեց: Եվ հիմա մեր ժողովուրդը չի ընկնելու հիպնոսացումների մեջ և շատ ավելի հստակ է պատկերացնում իրավիճակը: Բավականին առողջ ժողովուրդ ենք մենք և կկարողանանք հաղթահարել դժվարությունները: Ես չեմ ասում, թե դժվարություններ չեն լինի, բայց դրանք հաղթահարելի են, շատ ավելի հեշտ, քան նախկինում:

Հատվածներ Վ. Մանուկյանի
ասուլիսից փետրվարի 5-ին,
1998 թ. ԱԺՄ գրասենյակում
Պատրաստեց Անահիտ Հարությունյանը
«Այժմ», 1998, 11-17 փետրվարի

ԵՎ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՀԱՂԹԵԼ

Կրկին ընտրարշավ է: Առջևում ընտրություններ են, տարբեր թեկնածություններ կան, կուսակցությունը մտնում է ընտրարշավի մեջ:

Ես խորապես համոզված եմ, որ առաջիկա ընտրությունները շատ ավելի վճռական նշանակություն կարող են ունենալ մեր ժողովրդի, մեր պետության համար, քան նույնիսկ 1996թ. ընտրությունները: Շատերս ենք այդ գիտակցում, հասարակությունն է սկսում գիտակցել, և դեռ շատ քաղաքական ուժեր կգիտակցեն: Վճռական ժամանակաշրջան է, և նոր ընտրություններից է կախված մեր ժողովրդի, մեր պետության ապագան:

Մենք մտնում ենք այս պայքարի մեջ (ես դիմում եմ մեր կուսակցության անդամներին)՝ ունենալով առավելություններ: Առաջին առավելությունը 1996թ. ընտրությունների հաղթանակն էր, որ ամբողջ ժողովրդինն էր, դաշինքինն էր, բայց նաև մեր կուսակցությանն էր: Մենք երբևէ հարց չբարձրացրինք, որ պետք է վերականգնել այդ ընտրությունների արդյունքները: Մենք բաց ճակատով նորից մտնում ենք այս ընտրարշավի մեջ՝ ունենալով մեր ակտիվում այդ հաղթանակը:

Երկրորդ՝ այն մարդկանց խումբը, որ համախմբված է ընտրությունների շուրջը, Հայաստանում ընտրություններ կազմակերպելու տեսակետից երևի ամենակազմակերպվածն ու փորձառուն է: Այդ խմբի մեջ մարդիկ են, ովքեր մասնակցել ու կազմակերպել են 1990թ., 1995թ. և 1996թ. ընտրությունները և մեծ փորձ են ձեռք բերել: Եվ հիմա այդ մարդկանց խումբը օրեցօր ստվարանում ու հզորանում է:

Երրորդ առավելությունը, որ կուզենայի նշել, այն է, որ մեր կուսակցության վերին շերտում համախմբված են ոչ պատահական մարդիկ: Նրանք 60-ական թթ. ապրելով Խորհրդային Միության ռեժիմում՝ եղել են համալսարանական, գիտական սերուցքի ներկայացուցիչներ, բայց երբեք հարմարվողական չեն եղել, երբեք չեն դավաճանել իրենց սկզբունքներին և ազգային գործունեություն են ծավալել սկսած 1965 թվականից. և՛ ապրիլի 24-ի կազմակերպում, և՛ ազգային հարցերի արծարծում, հասարակության մեջ առողջ մթնոլորտի ստեղծում: Երբ սկսվեց Շարժումը, այդ մարդիկ կանգնած էին առաջին դիրքերում: Դա միայն Հայոց համազգային շարժում չէր, դա մյուս կուսակցությունները չէին, դա ողջ ժողովրդի ցասումն էր, որ վեր պիտի բարձրանար և կերտեր իր ապագան:

Եվ մենք առաջին շարքերում էինք:

Երբ սկսեց ձևավորվել ռեժիմ՝ անձնական շահի և անձնական կարիերայի հիման վրա, առաջինը նորից մենք դրոշ բարձրացրեցինք և ներգրավվեցինք պայքարի մեջ: Ամբողջ այս ժամանակաշրջանում մենք հստակ տարել ենք մեր գիծը, երբեք չենք հարմարվել, բայց ճկունություն ենք ցուցաբերել: Երբ հայրենիքին վտանգ էր սպառնում պատերազմի ժամանակ, մենք կարողացել ենք աշխատել նաև ռեժիմի հետ, որովհետև հայրենիքն էր վտանգված: 1996 թվականի ընտրություններից հետո մենք ունեինք տասնյակ ձերբակալված տղաներ: Ասում էին՝ գնացեք, լեզու գտեք, որ տղաները դուրս գան: Մենք չգնացինք, լեզու չգտանք, մենք պայքարեցինք մարդու իրավունքների համար, օրինականության համար: Եվ բանտերից ազատեցինք մեր տղաներին: Դա, իմ կարծիքով, շատ մեծ նշանակություն ունեցող հանգամանք է:

60-ական թթ. հետո անկախություն ստացած ո՞ր երկրները կտրուկ զարգացան: Այն երկրները, որտեղ իշխանության եկան ժողովրդի վստահությունը վայելող մարդիկ, ովքեր բոլոր քաղաքական խաղերը վարում էին ազնիվ, ընտրությունները կատարում էին ազնվորեն: Առանց դրա հնարավոր չէ կայուն քաղաքական իրավիճակ, իսկ առանց կայուն քաղաքական իրավիճակի հնարավոր չէ տնտեսության զարգացում, հնարավոր չէ պետության զարգացում: **Բայց կայունության, քաղաքական վստահության մեջ պիտի լինի ազնվություն: Առանց ազնվության չկա կայունություն, չկա վստահություն:**

Նոր անկախություն ստացած, նոր զարգացող երկրներից այն երկրները կարողացան թռիչքներ կատարել, որտեղ կար քաղաքական ուժ, որն ազնիվ էր ժողովրդի նկատմամբ, ազնիվ բոլոր ընտրություններում, քաղաքական ուժ, որը չէր զբաղվում կոռուպցիայով, հիմնվում էր իր ազգի, իր ժողովրդի ազգային ավանդական սկզբունքների վրա, որը անհանդուրժելի էր համարում սոցիալական բևեռացումը հասարակության մեջ: Միայն այդ դեպքում կարող է տեղի ունենալ պետության զարգացում, տնտեսության աճ, բարգավաճում:

Չորրորդ առավելությունը, որ ես ուզում եմ նշել, այն է, որ մեր բոլոր սկզբունքները հիմնված են եղել երկու հենասյուների վրա: **Մեկը ազգային մոտեցումն է բոլոր հարցերին՝ հիմնված ազգային ավանդույթների, բարոյականության, մշակույթի վրա, մյուսը՝ ներառաշնակումը համաշխարհային, համամարդկային արժեքներին: Այս երկու սյուների վրա են մշտապես հենված մեր գաղափարախոսությունը, մեր գործելակերպը:**

Մենք պարտավոր ենք մասնակցել առաջիկա ընտրություններին, և պարտավոր ենք հաղթել: Մենք մենակ չենք, մեզ հետ են հասարակության լայն շերտեր, մեզ հետ են շատ բարեկամական, գաղափարակիր կուսակցություններ: Մենք անպայման մտնելու ենք պայքարի մեջ և անպայման հաղթելու ենք: Կասկած չունենաք:

Ի՞նչ է մեզ սպասում հաղթանակից հետո: Հայաստանը այն վիճակում չէ, որ մարդկանց ինչ-որ մի խումբ ընտրություններում հաղթելուց հետո համարի, որ իրենն է իշխանությունը: Ոչ, իշխանությունը պետք է լինի ժողովրդինը: Նոր ընտրված նախագահը պետք է կարողանա հա-մախմբել իր շուրջը բոլոր քաղաքական ուժերը, ստեղծել մի մարմին, որտեղ ներկայացված լինեն բոլոր այդ ուժերը: Եթե նույնիսկ խոսքը ընտրապայքարում ունեցած հակառակորդի մասին է, միևնույնն է, ամեն մի քաղաքական ուժ ներկայացնում է ժողովրդական մի հսկայական հատված: Մենք կարող ենք սկզբունքային հակառակորդ լինել, կարող ենք սկզբունքներով իրարից տարբերվել: Բայց եթե խոսենք համայնավարների մասին, ապա նրանց ետևում մեր ժողովրդի մի ստվար հատված կա: Դաշնակցության ետևում մի մեծ հատված կա: Եվ ամեն մի կուսակցության ետևում կանգնած է իր ժողովուրդը, մարդիկ, որոնք դավանում են տվյալ գաղափարներին, և չի կարելի, որ մի ուժ գա և միայն ու միայն իրենը

առաջ տանի: Ուստի ամբողջ պայքարը մենք պիտի տանենք այնպես, որ աչքի առաջ ունենանք, թե ի՞նչ ենք անելու ընտրություններում հաղթելուց հետո:

Երկրորդ քայլը, որ ես շատ կարևոր եմ համարում, ինչպես և ԱԺՄ վարչությունը, Ազգային ժողովի նոր ընտրությունն է, որը պետք է կատարվի ոչ թե բռնի ձևով կամ միայն օրենքի կիրառմամբ, այլ համաձայնեցված լինի այն բոլոր կուսակցությունների, ֆրակցիաների հետ, որոնք ներկայացված են Ազգային ժողովում: Մենք պետք է միասին քննենք, թե ինչ ժամկետներում է նպատակահարմար Ազգային ժողովի ընտրությունը, բայց պարտադիր հաջորդ քայլը հասարակության առողջացման գործում պետք է նոր խորհրդարանական ընտրությունները լինեն: Եվ դրանից հետո միայն կարող է հարց առաջանալ նոր սահմանադրության ընդունման մասին: Մեր կուսակցության դիրքորոշումը հայտնի է: Մենք կողմնակից ենք ոչ թե նախագահական համակարգի, այլ պառլամենտական հանրապետության: Համաշխարհային փորձը 60-ականներից հետո ցույց է տալիս, որ այն շատ ավելի կայուն համակարգ է, ավելի մեծ վստահություն է ներշնչում ժողովրդին և չի առաջացնում այն հիմնախնդիրները, որոնց մենք առնչվել ենք արդեն, երբ ընտրություններով անգամ հաղթելու դեպքում էլ հնարավոր չի լինում փոխել իշխանությունը: Այդքան մեծ կենտրոնացումը մեկ մարդու, մարդկանց մի փոքր խմբի ձեռքում կործանարար կարող է լինել մեր պետության համար: Տարբեր կուսակցություններ կարող են տարբեր մոտեցում ունենալ: Բայց մենք առաջ ենք տանելու այդ գիծը Սահմանադրության մեջ: Եվ այս հարցում մենք շատ դաշնակիցներ ունենք:

Հաղթելուց հետո գալիս են կարևորագույն տնտեսական հարցեր, բայց ես ուզում եմ նախ կանգ առնել Ղարաբաղի հարցի վրա: ԱԺՄ-ի ղեկավարները ասել են իրենց հստակ կարծիքը 60-ական թվականներից սկսած և իրենց ողջ կյանքով ու գործունեությամբ պահպանել են իրենց հայացքները: **Ղարաբաղի հարցը Ղարաբաղի ժողովրդի անվտանգության հարցը չէ միայն: Ղարաբաղի հարցը Ղարաբաղի ժողովրդի իրավունքի հարցն է, ազատության հարցը, մեր արմատական ազգային հարցը, այն, եթե կուզեք, մեր բանալին է դեպի ապագա: Եվ մենք պայքարելու ենք հետևողականորեն Ղարաբաղի ազատության, անկախության համար:** Ղարաբաղն այդ հարցը բարձրացրեց սահմանադրական եղանակով, իրեն պարտադրեցին պատերազմ: Ադրբեջանը համոզված էր, որ կհաղթի: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանում մնացել էր 500 վագոն զինամթերք, Ադրբեջանում՝ 10 հազար, իսկ Ղարաբաղում գրեթե ոչինչ չկար: Եվ բնական է, որ այդ առավելությունը նկատի առնելով՝ Ադրբեջանը փորձում էր հարցը լուծել պատերազմով: Մենք հարկադրված մտանք պատերազմի մեջ և հաղթեցինք: Հաղթեց Ղարաբաղի ժողովուրդը, Հայաստանի ժողովուրդը, աշխարհի հայությունը:

Բայց մենք հաղթեցինք ոչ հպարտանալու համար, որ հաղթանակներ կարող ենք տանել: Այո, դա հպարտություն է, բայց ռազմական հաղթանակները պարտադրեցին Ադրբեջանին գնալ լուրջ բանակցությունների, և այս բանակցություններից հրաժարվելու ամեն մի փորձ կործանարար կարող է լինել Ղարաբաղի համար, Հայաստանի համար: Մենք այդ բանակցությունները պետք է շարունակենք բոլորիս հայտնի միջազգային կազմակերպությունների շրջանակներում: Մենք համաձայն չենք այն դիրքորոշումներին, որոնք առաջարկում էր Լ.Տեր-Պետրոսյանը, բայց մեզ համար հստակ է, որ փոխզիջումների մեծ դաշտ կա, և մենք ի վիճակի ենք խաղաղ ճանապարհներով հասնելու խնդրի լուծմանը՝ ապահովելով խաղաղություն ոչ միայն մեզ համար, այլ նաև ապագա սերունդների:

Մենք պետք է միասնություն ապահովենք ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի հայության հետ: Լուծենք երկքաղաքացիության հարցը, նոր կառույցներ ստեղծենք, որպեսզի աշխարհի հայությունը, ձեռք ձեռքի տալով, մեզ հետ առաջ քայլի: Մեր փիլիսոփայությունը յուրահատուկ է: Համաշխարհային պատմությունը ազգերի, պետությունների մրցակցություն է: Եթե մի ժամանակ այդ մրցակցությունը ռազմական էր, այժմ, փառք Աստծո, այն փոխադրվել է խաղաղ ոլորտներ՝ տնտեսության, մշակույթի, գիտության, նոր տեխնոլոգիաների, սպորտի: Եվ մենք ոչ թե սոսկ գոյատևման մասին պիտի մտածենք, այլ աշխարհի հայությամբ, համաշխարհային կառույցներով մտնենք այդ մրցակության մեջ և առաջավոր դիրքեր գրավենք:

Ինչ վերաբերում է մեր տնտեսական ծրագրերին, ապա հարկ է նշել, որ անցյալ անգամ ներկայացված ծրագիրը արժանացավ հավանության, գոհունակությամբ ընդունվեց, տարածվեց 100 հազար տպաքանակով: Այժմ նոր ծրագիր ներկայացնելու, կարծում եմ, հարկ

չկա: Անհրաժեշտ է որոշ խմբագրական փոփոխություններ անել: Շատ սկզբունքներ, որ առաջ են քաշվել մեր կողմից, այժմ հասարակությունը լիովին ընդունում է. լինի պետծառայողի մասին օրենքը, որ մենք առաջարկեցինք 1995-ի ընտրությունների ժամանակ, իսկ 1996-ին առանձին կարևոր կետ էր, արդյունաբերական երկիր կառուցելը, գյուղատնտեսությանը պետական հովանավորության անհրաժեշտությունը, մրցակցության համար բաց դաշտը, ձեռներեցների համար ազատ, հավասար պայմաններ ստեղծելը, սոցիալական բևեռացման մերժումը, ծայր աղքատների ու հարուստների առաջացման կանխումը (քաջ գիտակցենք նաև, որ հնարավոր չէ՝ բոլորը հավասար լինեն, պետք է ստեղծել մի պետություն, ուր մարդիկ իրենց աշխատանքով, իրենց ունակություններով կարողանան վերև բարձրանալ, հարստանալ, նոր միջոցներ հայթայթել, բայց և աղքատներ չպետք է լինեն) կրթական համակարգի պահպանումն ու զարգացումը և այլն: Հետևաբար չարժե դրանց կրկին անդրադառնալ: Ավելի նպատակահարմար է գրել նորից՝ խմբագրական փոփոխություններով: Մեր խորհուրդը կհաստատի վերջնական ծրագիրը, որը կներկայացվի ընտրությունների ժամանակ:

Ի դեպ, պարզվում է, որ երբ դու կամ ինչ-որ մեկը մի նոր միտք է հղանում, այն հեշտությամբ կարող են ուրիշները կրկնել, դարձնել իրենց սեփականությունը: Բայց դա նշանակություն չունի: Այն ամենը, ինչ որ մենք ասել ենք, օդից չենք վերցրել, տանջվելով ենք հասել դրան: Եվ նույն միտքը, որ մենք կրկնում ենք, գիտենք ոչ միայն այն, թե ինչ պետք է անել, այլև ինչպես պետք է անել:

Այժմ ներկա ընտրությունների մասին: Համեմատենք նախորդ ընտրությունների հետ: Ես նշեցի արդեն, որ ներկա ընտրությունները շատ ավելի վճռական դեր կարող են խաղալ մեր ժողովրդի և մեր ապագայի համար, քան նախորդը: Բայց անցյալ անգամ պահանջվում էր հրաշք գործել, այս անգամ հրաշք գործելու հարկ չկա: Այն դեպքում Լ.Տեր-Պետրոսյանն էր, որը 1991թ. արդար ընտրություններով դարձել էր նախագահ, վստահված էր ժողովրդի, միջազգային հանրության կողմից բավական երկար ժամանակ, մինչև կամաց-կամաց մարեց վստահությունը, բոլորը հասկացան նրա ով լինելը: Ժողովրդի մեջ առաջին մարդուց հետո միշտ մի միտք է ծագում՝ ինքը չլինի, ինչ պիտի լինի, ով պիտի լինի: Եթե նույնիսկ չեն սիրում, չեն հարգում: Այլընտրանքի հարցը կար: Եվ հրաշք էր պետք դրան հասնելու համար: Հրաշքը գործեցինք մենք մյուս կուսակցությունների հետ, ամբողջ հասարակության հետ: Այն, ինչ կատարվեց 1996թ., հրաշք էր, այն, ինչ կատարվելու է հիմա, արդեն հրաշք չէ, սովորական երևույթ է: Տարբերություններ կան: Անցյալ անգամ նախընտրական շրջանում բավականին ժողովրդավարական մթնոլորտ էր, քանի որ Լ.Տեր-Պետրոսյանը համոզված էր, որ արդար ընտրություններով կընտրվի և հասկանում էր, թե ինչ մեծ նշանակություն ունեն արդար ընտրությունները իր համար: Ուստի ստեղծվել էին բոլոր հնարավորությունները: Եվ ես պետք է ասեմ, որ ընտրարշավի ժամանակ բոլոր դեմոկրատական ազատությունները ապահովված էին, մինչև այն պահը, երբ նրանք սարսափով գիտակցեցին, որ Լ.Տեր-Պետրոսյանը չի ընտրվում: Այս անգամ, պիտի ասեմ, որ ընտրությունները սկզբից ևեթ շատ ավելի պղտոր են, քան անցյալ անգամ: Բայց և այդ պղտորության մեջ մենք նորից պետք է կարողանանք հասնել հաղթանակի: Եվ ես կոչ եմ անում մեր կուսակցության անդամներին, հասարակության ներկայացուցիչներին համախմբվել: Մենք միասին առաջ ենք գնալու, մենք հաղթելու ենք: Ձեր սրտից հանեք թույնը, հանեք փոքրոգությունը, որովհետև մենք հաղթելուց հետո աշխատելու ենք բոլորի հետ, և ամեն մեկը այս համակարգում ունենալու է իր տեղը:

Միայն այդ ճանապարհով, միայն պարկեշտությամբ, վճռականությամբ և մեծահոգությամբ է հնարավոր Հայաստանը դարձնել բնականոն պետություն: Մյուս բոլոր ճանապարհները դատապարտված են: Մենք գնալու ենք այդ ճանապարհով: Մենք շատ մեծ կշիռ ունենք հասարակության մեջ, շատ բարեկամ կուսակցություններ: Տարբեր դիրքորոշումներ կարող են լինել, մենք հարգում ենք նրանց դիրքորոշումները: Վաղ թե ուշ բոլորն էլ հանգելու են ճիշտ դիրքորոշման: Մենք հաղթելու ենք, և Հայաստանը դառնալու է ապագա ունեցող պետություն, որը կունենա ապագա: Ապագա մեզ համար, ապագա մեր երեխաների համար:

Վ. Մանուկյանի ելույթը ԱԺՄ IX արտահերթ համագումարում
«Այժմ», 1998, 18-24 փետրվարի

ԵՎ ՄԵՆՔ ԿՏԵՄՆԵՆՔ, ՈՐ ԱՐԱՐԱՏԻՑ ԼԱՎ ՍԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՉԿԱ

Տասը տարի անցավ: Այս հարթակում կանգնած էին Իգոր Մուրադյանը, Վաչե Սարուխանյանը, Սիլվա Կապուտիկյանը, Զորի Բալայանը, երբեք չի կարելի մոռանալ այն մարդկանց, ովքեր կանգնած էին այստեղ: Նրանք ուզում էին առաջ տանել մեր ժողովրդին դեպի պայծառ ապագա, մեր ազգային իղձերի իրականացում: եվ ինչ էլ որ լինի մեր միջև, ինչքան էլ իրարից խռովենք, դժգոհենք, մենք այդ օրերը և այդ եղբայրությունը մոռանալու իրավունք չունենք: Մենք ամբողջ ժողովրդով մի եղբայրություն էինք և այդ եղբայրությունը պետք է կարողանանք պահպանել: Առանց դրա մեր ժողովուրդը ապագա չի ունենա:

Տասը տարին սկսվեց երջանկությամբ: Այժմ, երբ դառը օրեր ենք ապրում, երբ հարյուրավոր մարդկանց կորուստ ունենք ռազմաճակատում, երբ հարյուր հազարավոր հայեր հեռացել են հայրենիքից, երբ ժողովորդի մեծ մասը չքավորության գիրկն է նետված, մենք երբեմն այս ամենը այն օրերի վրա ենք բարդում, մոռանում ենք այն օրերի երջանկությունը: Իսկապես երջանիկ օրեր էին: Ավաղ, չեղավ այն, ինչի մասին երազում էինք: Բայց դա չի նշանակում, թե այդ երազանքները իրականանալի չեն:

Մենք շատ բան սովորեցինք: Հասկացանք, որ իշխանությունը չի կարելի մեկ մարդու կամ մարդկանց մի խմբի ձեռքը տալ: Այդ պատճառով է, որ մենք շարունակ ասում ենք՝ նոր սահմանարություն պիտի ընդունվի, պառլամենտական և ոչ թե նախագահական համակարգ պիտի լինի, որը հանգեցնում է իշխանության արատավորման, մարդկանց արատավորման: Մենք հասկանում ենք, որ իշխանություններին վերահսկող մեխանիզմներ են անհրաժեշտ: Տարբեր ուժեր կլինեն նախընտրական արշավում, գեղեցիկ խոսքեր կասվեն, խոստումներ կտրվեն, բայց միշտ մնում է այն հարցը՝ իսկ եթե նորից նու՞յնը լինի, ո՞րն է երաշխիքը:

Ես մտադիր չեմ այժմ հանգամանորեն խոսել այդ մեխանիզմների երաշխիքների մասին, որոնք կարող են ապահովել այն, ինչին մենք ձգտում ենք: Բայց ուզում եմ, որ նախորդ իշխանությունների դառը փորձից դաս քաղենք ապագայի համար: Ես չեմ ուզում վարկաբեկել, խոսել շահամոլության, լկտիության, ցինիզմի մասին: Բայց այդ մարդիկ այդպիսին չէին, նրանք ծուղակն ընկան: Համառոտ նկարագրեմ այդ ծուղակները:

Առաջին ծուղակը ավելորդ հեղափոխականությունն էր: Երբ բոլշևիկներն իշխանության եկան Ռուսաստանում, այն գաղափարները, որոնք առաջ էին տանում նրանք, հասարակության կողմից ընկալելի չէին: Բայց համոզված էին, որ ժողովրդին դեպի երջանկություն են տանում: Եվ սկսեցին ջարդել ժողովրդին, հեղափոխական ուժի մեթոդներով իրենցը առաջ տանել:

Բայց երբ մենք եկանք իշխանության, ի՞նչ գաղափար կար, որ ամբողջ ժողովուրդը չէր ընդունում: Անկախությա՞ն գաղափարը, շարժման ընթացքում արդեն ամբողջ ժողովուրդն ընդունում էր այն: Արցախի ազատագրմա՞ն գաղափարը. բոլորիս սրտում էր բաբախում այն: Ժողովրդավարական պետությու՞ն ունենալը, բոլորը կողմնակից էին դրան: Մասնավոր սեփականությու՞նը, այն էլ ինչպես էին կողմ դրան: Չկար մի գաղափար, որի համար հարկ լիներ ջարդել ուրիշներին: Բայց մարդկանց մի խումբ մեծամտությամբ, անհանդուրժողականությամբ, բոլոր քաղաքական ուժերին մի կողմ թողած, փորձում էր իրեն արդարացնել, որ ինքը հեղափոխական գաղափարներ է առաջ տանում: Այնինչ մեր ամբողջ հասարակությունն էր կողմ դրանց: Ե՛վ համայնավարները, և՛ մյուս կուսակցությունները, որոնք նոր էին ձևավորվում, ամբողջ հասարակությունը:

Երկրորդ ծուղակը կայունությունն էր: Շատ երկրներ, երբ անկախություն են ստանում, իրենց զարգացումը ապահովվում է, երբ որ երկրում կայունություն է տիրում: եվ շատ հաճախ, երբ մի քաղաքական ուժ գալիս է իշխանության, տասնյակ տարիներ մնում է իշխանության գլխին: Կարելի է Իսրայելի օրինակը բերել, Սինգապուրի օրինակը, բազմաթիվ օրինակներ: Բայց ինչի՞ շնորհիվ է այդ քաղաքական ուժը մնում իշխանության: Ոչ թե ուժի կիրառմամբ, ոչ թե ժողովրդին վախեցնելով, նրան չքավորության գիրկը նետելով, որպեսզի ձայնազուրկ լինի և ենթակա իշխանություններին, այլ միայն և միայն մեկ ձևով՝ ազնվությամբ, ժողովրդին նվիրվածությամբ, ու արդար ընտրություններով է երկար մնում իշխանության ղեկին և ապահովում երկրի զարգացումը: Դրա փոխարեն նրանք ապավինեցին «հավատարիմ

մարդկանց»: Ի՞նչ ասել է հավատարիմ մարդ: Ո՞վ չդավաճանեց Լ.Տեր-Պետրոսյանին: Տեսա՞ք՝ ինչպես մի օրում առնետների պես խմբով մի ճամբարից վազեցին մյուս ճամբարը: Մարդիկ կային, որ շատ կուզենային վազել, բայց իրենց նույնիսկ դավաճանելու հնարավորություն չէր տրված: Եվ շատ քչերը մնացին հավատարիմ: Դրա վրա կայունություն կառուցել հնարավոր չէ:

Կայունության մյուս դրսևորումը. ասում էին՝ մեր մարդիկ կիարստանան (թալանով է, ինչով է, կարևոր չէ), և հետագայում ինչ էլ որ լինի, փողի միջոցով, ուժի միջոցով մենք կմնանք իշխանության: Էլիտայի գաղափարը այդպիսին չէ: Ամեն մի ժողովրդի մեջ կա մի շերտ՝ արդյունաբերողներ, գիտնականներ, կրոնական, քաղաքական գործիչներ, որոնք սերնդեսերունդ բարձր խավին են պատկանել և ինչ-որ չափով կարող են իրենց էլիտային վերագրել: Բայց այդ էլիտան միշտ ևվիրված է եղել ժողովրդին: Միացյալ Նահանգներում, երբ սենատի կամ նախագահի ընտրություններ են լինում, առաջին հերթին նայում են՝ իսկ նա մասնակցե՞լ է Կորեայի պատերազմին, Վիետնամի պատերազմին: Երբ ժողովուրդը ծանր վիճակում է եղել, նա ժողովրդի հե՞տ է եղել, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա նա հաջողության հասնելու գրավական չունի:

Երբ 1973թ. էներգետիկ ճգնաժամ էր, գները 4 անգամ բարձրացել էին, և շատ երկրներ ծանր վիճակի մեջ էին ընկել, Ֆրանսիայի նախագահ Ժիսկար դը Ստենը որոշում կայացրեց, որ նախագահի սեղյակում ջերմաստիճանը 16 աստիճանից բարձր չպետք է լինի, որ ինքն էլ խնայի: Հիվանդացավ, մեկ ամիս պառկած էր: Դա է էլիտայի գաղափարը: **Էլիտան ոչ թե թալանում է ժողովրդին, այլ ևվիրված է ժողովրդին, ժողովրդի հետ է ապրում: Եվ Հայաստանում կայունություն կարելի է ապահովել միայն մի ձևով՝ արդար ընտրություններով պիտի գա քաղաքական ուժ, որը իր կեցվածքով, իր գործունեությամբ ամեն օր ապացուցի, որ ժողովրդի հետ է, չի խաբում, չի վախեցնում նրան:**

Այժմ մենք կանգնած ենք նոր ընտրությունների շեմին, և դարձյալ այդպիսի երևույթներ կան: Մեզանում տխուր ավանդույթ է ստեղծվել: Եթե մեկը վախեցնի մեր ժողովրդին, ապա ի՞նչ տարբերություն՝ օտա՞ր է նա, թե՞ հարազատ:

Այս ընտրությունների մասին տարբեր կարծիքներ են հնչում, տարբեր բամբասանքներ պտտվում, որ մասամբ սխալ են, մասամբ ճիշտ, բայց մի բանում համոզված եղեք, բոլոր այն մարդիկ, բոլոր այն ուժերը, որոնք կեղծիքներ անելու ֆիզիկական հնարավորություն ունեն, այնուամենայնիվ ուղնուծուծով կապված են նաև Ղարաբաղի հարցի հետ և հիանալի են հասկանում՝ եթե իրենք անձնական շահի համար գնան կեղծիքների, ապա Ղարաբաղը կորած է:

Երրորդ ծուղակն այն է, որ իշխանությունները հրաժարվեցին ազգային բոլոր գաղափարներից, ազգային արմատներից և սկսեցին Արևմուտքից բերել ամենաերկրորդական, մակերեսային գաղափարները: Արևմուտքի հնացած գաղափարները: Անկախություն ստանալուց հետո տարբեր ժողովուրդներ տարբեր ճանապարհներով են գնացել: Ժողովուրդներ են եղել, որոնք հրապուրվելով Արևմուտքով՝ իրենց մշակույթն ու ավանդույթները դեն են նետել և վերցրել են Արևմուտքի արժեքներն ու մտածելակերպը: Նրանք ոչնչի չեն հասել: Եվ երկրորդ ճանապարհն է եղել՝ դարձյալ ծայրահեղական: Երբ ամեն ինչ, համամարդկային բոլոր արժեքները մերժվել են, և ասել՝ մենք ենք, մեր սարերը, մնալու ենք մեր գաղափարներով, մեր ազգային ավանդույթներով, ոչինչ աշխարհից չենք վերցնելու: Մեկուսացում աշխարհից, զարգացման կասեցում: **Շահել են այն ժողովուրդները, որոնք կարողացել են իրենց արմատների, ազգային ավանդույթների, մշակույթի վրա հանվելով՝ վերցնել համաշխարհային փորձից ամենակարևորը, պատվաստել և առաջ գնալ: Օրինակ՝ Ճապոնիան և շատ ու շատ երկրներ: Միայն այդ ճանապարհով կարելի է առաջ գնալ:**

Եվ երբ հաջողվում էր ժողովրդին ճնշել, իշխանություններն արհամարհանքով էին վերաբերվում ժողովրդին, երբ ժողովուրդը չէր ճնշվում, ատելությամբ էին լցվում: Եվ այդ խոսքերը՝ մենք սովորակա՞ն, սովորակա՞ն ժողովուրդ ենք... Չկա սովորական ժողովուրդ: ամեն մի ժողովուրդ պետք է տոգորված լինի վճռականությամբ մրցակցության մեջ մտնելու մյուս ժողովուրդների հետ: Մրցի նրանց հետ, հպարտանա իրենով: 70-ական թթ. մենք շատ հպարտ ժողովուրդ էինք, շատ էինք հիանում մեզանով: «Արարատը» հաղթեց, ասում էինք, մենք ամենալավ ֆուտբոլիստներն ենք, Վիկտոր Համբարձումյանը լավագույն գիտնականն է աշխարհում, մեր ճարտարապետությունը լավագույնն է: Սահմանները բացվեցին, սփռվեցինք աշխարհով մեկ, հարյուր հազարավոր մարդիկ գնացին, ու տեսանք, որ հոյակապ կոթողներ են կանգնեցրել նաև մյուս ժողովուրդները, շատ մեծ արդյունքների են հասել նաև ուրիշ

պետություններ, և մարդկանց սրտում բուն դրեց կասկածը. միգուցե մենք իսկապե՞ս թույլ ժողովուրդ ենք, ինչքա՞ն մեզանից շատ ավելի հզոր ժողովուրդներ կան: Ոչ: Մենք կրկին կվերադառնանք, բոլորը կվերադառնան մեր երկիրը, և մենք կտեսնենք, որ Արարատից լավ սար աշխարհում չկա, մեր ժողովրդից լավը չկա: եվ ոչ բնավ ուրիշ ժողովուրդների նկատմամբ արհամարհանքով վերաբերվելով: Ոչ: Ամեն մի ժողովուրդ դրանով է կարողանում մրցել, դրանով է կարողանում իր տեղը զբաղեցնել:

Իհարկե, մենք պետք է կառուցենք մի պետություն, որտեղ կլինի և՛ պետական, և՛ մասնավոր սեփականություն: Պետություն, որտեղ չի լինի բևեռացում՝ աղքատների և հարուստների, որտեղ գյուղատնտեսությունը կլինի պետության հովանավորության ներքո, որտեղ ամեն մի մարդ կկարողանա հպարտ ու ազնիվ ապրել, հնարավորություն կունենա իր սեփական աշխատանքով բարգավաճել, պահել իր ընտանիքը: Եվ ես համոզված եմ, որ բոլոր դեպքերում, եթե մենք անցկանցնենք այս անգամ արդար ընտրություններ (իսկ դա անխուսափելի է, ոչ մեկը մեր ժողովրդի դեմ չի կարող կանգնել, մեր ժողովուրդը հիմա այն չէ, որ կարողանան նրան վախեցնել), մենք կունենանք այդպիսի պետություն:

Նախորդ տասնամյակը մենք սկսեցինք պայծառությամբ, երջանկությամբ, ավարտեցինք դառնությամբ: Ես համոզված եմ, որ երկրորդ տասնամյակն սկսվում է դառնությամբ, ավարտվելու է երջանկությամբ: Քայլ առ քայլ միասին գնալու ենք երջանկության:

Վ. Մանուկյանի ելույթը
Արցախյան շարժման տարելիցին
նվիրված, հանրահավաքում
«Այժմ», 1998, 25. 02 - 3. 03

ԿԵՂԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԵՂԾ ԿՅԱՆՔ

Այս հրապարակում մենք հավաքվել ենք՝ լուծելու մեր պետության, մեր ժողովրդի ճակատագիրը: Այսպես հավաքված էինք և 1996-ին, երբ ընտրությունը վերածվեց համաժողովրդական շարժման, և մենք դուրս եկանք ռեժիմի դեմ: Մենք հաղթեցինք սեպտեմբերի 22-ին, սեպտեմբերի 26-ին իշխանությունը զինված ուժերի միջոցով վերցրեցին, և Լ.Տեր-Պետրոսյանը մնաց նախագահ: Բայց շատ կարճ տևեց այդ իշխանությունը՝ մեկուկես տարի: Ապացուցված է՝ ցանկացած իշխանություն, որ չի եկել ժողովրդի կամքով, ժողովրդի ցանկությամբ, ժողովրդի քվեով, տապալվում է այս կամ այն ձևով: Նույնն է սպասվում և առջևում: Եթե գտնվեն մարդիկ, ովքեր փորձեն կեղծիքով, ժողովրդին վախեցնելով, ձրի նավթ տալով, գումարներ բաժանելով գալ իշխանության, կարճ է տևելու այդ իշխանությունը: Չի հաջողվի, եթե գան էլ իշխանության, տապալվելու են, բայց այդ ընթացքում մենք ենք կորուստներ կրելու: Ունենալու ենք կորուստներ Հայաստանում, ունենալու ենք կորուստներ Ղարաբաղում:

Ինչպե՞ս ընթացան այս ընտրարշավի օրերը: 40 օր փորձում էին մեր ձայները պակասեցնել: Դա էր ամբողջ պայքարի նպատակը: Թերթերն առանձին, հեռուստատեսությունն առանձին, թեկնածուներն առանձին: Հաջողվե՞ց: Այո, ինչ-որ ձայներ պակասեցին: Բայց միևնույնն է, բոլոր այն տվյալները, որ տալիս են հեռուստացույցով, սուտ են: Նորից առաջին տեղում ենք, ավելորդ հիստերիա են բարձրացրել Կարեն Դեմիրճյանի անվան շուրջը, և շատ դժվար է կռահել, թե ում է դա ձեռնտու, և ինչու է դա արվում:

Մեզ սպասում են ընտրություններ, և ընտրություններով պիտի որոշվի Հայաստանի բախտը: Կան 12 թեկնածուներ, կան տարբեր ճանապարհներ, բայց կամաց-կամաց գծագրվում է երկու հնարավորություն: Մենք դարձյալ կանգնած ենք ռեժիմին դեմ հանդիման: Ռեժիմը ամեն ջանք թափում է, որպեսզի վերականգնի իշխանությունը, պահի իր իշխանությունը, շարունակի գոյատևել: Դա կարող է անել մյուս թեկնածուների միջոցով: Բայց ինչ թեկնածու էլ լինի, նրա թիկունքում կանգնած կլինի Վազգեն Սարգսյանը: Այն մարդը, որը կրակում էր ժողովրդի վրա, այժմ հեռուստացույցով խոսում է, թե ով պիտի լինի նախագահը, ով պիտի լինի վարչապետը, խոսում է բարոյականության և ազգային հարցերի մասին: Ամոթ է մեզ՝ որպես ժողովրդի, ապրել հազարամյակներ այս հողի վրա, և Վազգեն Սարգսյանի նման մարդը որոշի, թե ով պիտի լինի նախագահ, ով վարչապետ, և ինչպես պիտի ընթանա

Հայաստանի կյանքը: Ամոթ է: Կհաջողվի՞: Ոչ: մենք կպայքարենք մինչև վերջ: Եվ մեր ժողովուրդն արդեն գիտակցում է, թե ինչ մեծ բան է կախված այս ընտրություններից: Կամ Հայաստանում կպահպանվի նախկին ռեժիմը, մարդկանց մի խումբ՝ շուկաների տնօրեններ, անգրագետներ, կտնօրինեն Հայաստանի բախտը, կամ Հայաստանի ճակատագրի որոշումը իր ձեռքը կվերցնեի ժողովուրդը: Ես համոզված եմ, որ մեզ կհաջողվի, մենք միասին կկառուցենք ժամանակակից ազգային պետություն:

Վերջերս շատ են շահարկում այդ «ազգային» բառը: Ի՞նչ է նշանակում ազգային: Ազգայինի մեջ ամենակարևորը ազնվությունն է: Չկա ազնվություն, ուրեմն ազգայինի մասին խոսելը սրբապղծություն է: Մեր պետությունն ազգային կարող է լինել միայն այն դեպքում, եթե ներսում ամեն ինչ կատարվի ազնվորեն, ամեն ինչ կատարվի օրենքով, բոլորը հավասար լինեն օրենքի առաջ: Նախագահ, գյուղացի, բանվոր, մտավորական, առևտրական, բոլորի համար օրենքը նույնը լինի: Առանց դրա չկա զարգացում:

Մենք կդառնանք ժամանակակից ազգային պետություն, որտեղ կլինի կարգուկանոն, որտեղ ժողովուրդը միշտ ձգտում կունենա մրցելու հարևան ժողովուրդների հետ, աշխարհի մյուս պետությունների հետ և առաջավոր դիրքերի հասնելու: Դա է ազգայինը: Լինել ժամանակակից պետություն՝ հենված մեր ազգային մշակույթի, ազգային արժեքների, ազգային բարոյականության վրա: Հպարտանալ մեր պատմությամբ, ապրել ազգային մթնոլորտում և վերցնել աշխարհից այն, ինչ ժամանակակից է: Միասին քայլել մյուս պետությունների հետ դեպի 21-րդ դար:

Եվ համոզված եղեք, մենք այն ժողովուրդն ենք, որ գնալու ենք այդ ճանապարհով և հասնելու ենք մեծ հաղթանակների:

Կլինեն ընտրություններ, կընտրվի նախագահ: Ով ում կուզի, թող ընտրի, բայց ինքը պիտի որոշի: Ոչ ոք իրավունք չունի բռնանալու մեր ժողովրդի կամքի վրա: Լավ կլինի, մեր պատիվն է, վատ կլինի, մենք ենք մեղավոր: Բայց մեզ պարտադրել չի կարելի:

Իհարկե, իշխանության փոփոխությունը կախարդական փայտիկ չէ, միանգամից կյանքը չի լավանա: Իհարկե, բարդություններ կլինեն սոցիալական հարցեր լուծելիս, որոնք շատ կարևոր են մեր ժողովրդի համար: Իհարկե, մեծ ջանքեր պիտի գործադրվեն, որպեսզի վերականգնվի մեր արդյունաբերությունը, զարգանա գյուղատնտեսությունը, պահպանվի ժառանգություն ստացած առաջավոր կրթական համակարգը: Այդ ամենը ճիգ ու ջանք է պահանջելու: Բայց, ժողովուրդ, ամենակարևորն այն է, որ ընտրությունից հետո սկսվի մի ժամանակաշրջան, երբ մարդիկ, նայելով ապագային, տեսնեն, որ ամեն մի հաջորդ փուլը մի միլիմետրով ավելի լավ է, քան նախորդը: Տեսնեն, որ մեր երկիրը ապագա ունի, մեր երեխաները ապագա ունեն, և մենք մնալու ենք այս հողի վրա, ապրելու ենք, միասին, ուս ուսի տալով, հետ ենք կանչելու մեր հայրենակիցներին, ասելու ենք վերադարձեք, Հայաստանում արդեն բնականոն պայմաններ են, եկեք միասին այս երկիրը վերականգնենք, միասին գնանք առաջ:

Եվ այս ամենի բանալին այժմ ամսի 16-ի արդար ընտրություններն են: Ով փորձ անի կեղծել այդ ընտրությունները, կնշանակի դավաճանում է մեր ապագային, մեր ժողովրդին և ասում է մեր հակառակորդին՝ Ղարաբաղը ձեզ: Կգնա՞ն դրան, թող փորձեն: Իրենք թող փորձեն, մենք կպայքարենք: Մենք ավելի շատ ենք, ավելի հզոր ենք, մենք ավելի ազնիվ ենք: Եվ վերջնական հաղթանակը, միևնույնն է, ժողովրդինն է լինելու:

Սիրելի ժողովուրդ, շատ հանդիպումներ են եղել, հեռուստացույցով ծրագրեր են ներկայացրել: Իմ նպատակը չէ այժմ ներկայացնել ծրագիր, պատասխանել հարցերի: Փառք Աստծո, մենք դրանով և՛ 96-ին ենք զբաղվել, և՛ հեռուստացույցով ենք խոսել, և՛ ծրագրեր ենք բաժանել: Կարևոր է ճիշտ գնահատել այս պահի քաղաքական խնդիրները: Դա է կարևորը: Եվ համոզված եղեք, կանցնի ժամանակ, և մենք կզարմանանք, որ այսպես ընկած ենք եղել: Մենք ոտքի կկանգնենք, կքայլենք առաջ, ետ կնայենք, կզարմանանք ինքներս մեզ վրա: Որովհետև բոլոր նախադրյալները կան, որ մենք լինենք հզոր պետություն: Ամենակարևոր հումքը, որով պետությունը հզորանում է, մարդկային աշխատանքն է, մարդն է: իսկ Հայաստանում կա լավագույն հումքը՝ հայ մարդը՝ իր խիզախությամբ, իր ձեռներեցությամբ, իր խղճով, իր պարկեշտությամբ: Եվ համոզված եղեք, որ մենք հաղթելու ենք:

Վ. Մանուկյանի ելույթը
1998թ. մարտի 14-ի հանրահավաքում
Այժմ», 1998, 18-24 մարտի

ՄԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԱՊԱԳԱ ԵՆՔ ՏԱԼՈՒ

Նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել այն մարդկանց, ովքեր քվե տվեցին ինձ և, հետևաբար, մեր պաշտպանած ուղղությանը: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել այն հազարավոր մարդկանց, ովքեր քվեատուփերի մոտ, հանձնաժողովներում, շտաբներում քրտնաջան աշխատանքով կարողանում էին քիչ թե շատ արդարություն ապահովել, որը, ցավոք սրտի, մեր հասարակությունից և պետությունից վաղուց ի վեր դուրս է մղվել: Մենք դեռ կհավաքվենք, մանրամասն կքննարկենք այն ամենը, ինչ տեղի ունեցավ այս օրերի ընթացքում, կքննարկենք մեր կազմակերպչական աշխատանքների լավն ու վատը, քարոզչական ու քաղաքական աշխատանքները: Բայց այժմ մենք կանգնած ենք ուրիշ հարցի առջև՝ ինչ անել երկրորդ փուլում: Որպեսզի այդ հարցին պատասխան տանք, մենք պետք է կարողանանք քննել, թե ինչ տեղի ունեցավ առաջին փուլում:

Մենք հավաքվեցինք այս դահլիճում, առաջարկվեց իմ թեկնածությունը, և մենք մտանք ընտրապայքարի մեջ: Ես կուզենայի մի քիչ ավելի մանրամասն ներկայացնել մեր քաղաքական խոհանոցը՝ ինչ մտադրություններով և ինչ հաշվարկներ էինք անում այս ընտրությունների վերաբերյալ: Առաջին ենթադրություն. եթե այս պետությունը իսկապես լիներ ժողովրդավարական, ապա ինչպես ցույց է տալիս ԱՊՀ մյուս երկրների, Եվրոպայի փորձը, այսպիսի իշխանությունից հետո ճոճանակը թեքվում է հետ, և ժողովրդի մեջ ավելի է մեծանում կարոտախտը, հետդարձի ձգտումը, և մեծ դեր են խաղում հասարակության մեջ կոմունիստական, սոցիալիստական հայացքները: Այդ երևույթը մենք տեսնում ենք և՛ Լեհաստանում, և՛ Բուլղարիայում, և՛ մյուս պետություններում:

Այդ տեսակետից, եթե մենք մոռանանք, որ Լևոն Տեր-Պետրոսյանի գնալը ընտրություններով չէր և ընտրությունները վաղաժամկետ էին, եթե ենթադրենք, որ ժողովրդավարական երկիր ենք, մեր հաշվարկը հետևյալն էր. ճոճանակը գալիս է այս կողմ, և բավականին մեծ ուժ կա ճոճանակի այդ կողմում՝ համայնավարական կուսակցությունը՝ Ս.Բադալյանի ղեկավարությամբ: Մյուս կողմից՝ 1996 թվականի արդյունքները և նախորդ գործունեությունը մեծ հնարավորություն էին տալիս նաև մեզ: Եվ այսպիսի պետությունում պետք է պայքար տեղի ունենար համայնավարների և մեր միջև: Ամենայն հավանականությամբ այդ պայքարում հնարավոր էր հաղթանակ, համայնավարները դեռ չէին հագել սոցիալիստական «շինելը» և մնացել էին մաքուր համայնավարական հագուստով: Շատ հեշտ էր ցույց տալ ժողովրդին, որ այդպիսի պետություններ աշխարհում գոյություն չունեն, և այդ հաղթանակի դեպքում Հայաստանը կհայտնվի միջազգային մեկուսացման մեջ: Դա կլիներ հիմնական քարոզչությունը, որը կապահովեր մեր առաջխաղացումը:

Իհարկե, չի կարելի մոռանալ, որ մենք և համայնավարական կուսակցությունը արդեն փորձված մեծ թիմեր ունենք, որոնք պետք է մտնեին միմյանց հետ պայքարի մեջ: Բայց չմոռանանք, որ բացի դրանից, գոյություն ուներ նաև մարդկանց մի շերտ Հայաստանում, բավական հարստացած, որոնք սարսափում էին համայնավարների իշխանության գալուց, սակայն նրանց մի փոքր մասը սարսափում էր և մեր իշխանության գալուց: Նրանք գիտեին, որ պատասխան են տալու այն հանցագործությունների համար, որ արել են մեր հասարակության, մեր ժողովրդի դեմ: Բնական է, որ այդ մարդիկ պետք է ելք փնտրեին իրավիճակից, բայց չէր երևում, թե ում միջոցով դա կարելի էր անել: Այնուամենայնիվ, գոյություն ուներ եռյակ՝ Ռ.Քոչարյան-Վ.Սարգսյան-Ս. Սարգսյան, որը Լ.Տեր-Պետրոսյանի գնալու և այս փոփոխությունների հեղինակ էր համարվում: Ինչպիսին էին մեր գնահատականները այս եռյակի պահվածքի վերաբերյալ: Ամբողջ աշխարհում այդ փոփոխությունը կասկած էր առաջացրել: Մենք պաշտպանեցինք իրավիճակը՝ ասելով, որ Հայաստանում հեղաշրջում տեղի չի ունեցել, Հայաստանում տեղի է ունեցել բնական ընթացք, որը պայմանավորված էր 1996-ի պարտություններով: Եվ դա շահավետ էր մեր ժողովրդի, մեր պետության համար, ստեղծվել էր նոր իրավիճակ, որից կարելի էր դուրս գալ, հասնել նոր բարձունքների:

Մի բան պարզ էր, քանի որ Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականի պատճառաբանությունը Ղարաբաղի հարցն էր: Շատ վտանգավոր կլիներ, եթե երեքից որևէ մեկը իր թեկնածությունը դներ: Դա կլիներ ինչ-որ առումով նախորդ պնդումների ժխտում, դա կլիներ ապացույց, որ ինչպես մյուս պետություններում, խունտան փոխում է իշխանությունը և հետո ուզում է օրինականացնել իր իշխանությունը: Մենք համոզված էինք, որ այդ ճանապարհով չեն գնա: Այդ դեպքում ի՞նչ հնարավորություն էր մնում:

1. Եռյակը հայտարարում է, որ ոչ մի անձնական շահ չի հետապնդում, կողմ է կանգնում՝ ապահովելով միայն ընտրությունների արդարությունը և պետության կայունությունը: Այդ

դեպքում այդ երեքի անունը այնքան է բարձրանում , որ ով էլ լինի նախագահ, պարտավորված է լինում երեքին պահել որպես անձնազոհ մարդկանց, ովքեր հանուն Ղարաբաղի, հանուն երկրի ապագայի իրենց ամբողջ հեղինակությունը դրեցին նժարի վրա: Դա մի քիչ ռոմանտիկ մոտեցում է, այդպիսի բաներ միգուցե լինում էին Հին Հռոմում, բայց այժմ հազվադեպ են:

2. Եռյակը, համարելով, որ իրենք են այս գործը արել, փորձում է մի որևէ խամաճիկի դարձնել հանրապետության նախագահ: Սցենարները քննարկվեցին, անուններ ասվեցին (մենք գիտենք նույնիսկ, որ որոշ բանակցություններ գնացին), բայց կարծես թե ոչ մեկը չհամաձայնեց խամաճիկ դառնալ: Այդ սցենարն էլ մի կողմ դրվեց:

3. Գնալ միասնական պայմանավորվածության: Մենք համաձայն էինք ազգային համաձայնության պայմաններում անցկացնել ընտրություններ՝ նույնիսկ մի կողմ դնելով իմ թեկնածությունը: Մինչև Արարատի դեպքերը (դրանից հետո Վազգեն Սարգսյանի հետ խոսելու բան այլևս չունեմ) ես զրույցում բացատրեցի նրան իրավիճակը: Ասացի, որ կար ավելի լավ սցենար, քան իրենց ընտրածը (որովհետև մինչ այդ մեր բանակցությունները ոչ մի արդյունքի չբերեցին), այն է՝ երեքից ոչ մեկը թեկնածությունը չի դնում, եթե իմ թեկնածությունը իրենց վախեցնում է, այն կարելի է մի կողմ դնել և ազգային միասնության պայմաններում գնալ ընտրությունների՝ ապահովելով արդարությունը: Նա պատասխանեց, որ դա դեռ ուշ չի անել, կարելի է ինչ-որ բան ձեռնարկել, ինչից հետո եղան Արարատի դեպքերը:

Երկար վեճեր եղան, թե ում թեկնածությունը դնեն՝ Ռ.Քոչարյանի, թե Վ.Սարգսյանի: Կանգնեցին առաջինի վրա: Ազգային պետական տեսակետից այդպիսի թեկնածություն դնելը անհեթեթություն էր, ոչ թե որովհետև Քոչարյանը վատ մարդ է (խոսքը այլ բանի մասին էր): Միանգամից առաջանում էին գրանցման հետ կապված բարդությունները, որը խոցելի էր դարձնում մեզ միջազգային ասպարեզում: Բայց շատ ավելի կարևորն այն էր, որ մենք բոլորս հասկանում էինք՝ Ռոբերտ Քոչարյանը արդար ընտրություններով Հայաստանում քվե հավաքելու հնարավորություն չունի: Նրա թեկնածություն դնելը նշանակում էր գնալ կեղծիքների, այն, ինչ մենք հետո տեսանք: Միգուցե նրանք այդպես չէին գնահատում, բայց Ռ.Քոչարյանը իր թեկնածությունը դրեց:

Անկեղծ ասած, մեզ մտահոգում է նաև մի այլ հարց: Լ.Տեր-Պետրոսյանի օրոք և նրա նախաձեռնությամբ Հայաստանում սկսվեցին «հայաստանցի-ղարաբաղցի» քննարկումները, որոնք մենք համարում ենք շատ վտանգավոր մեր ժողովրդի համար: Քաղաքական ուժերը զերծ էին մնում և չէին շահարկում այդ փաստը, բայց կենցաղային մակարդակով դա կար: Մի բան էլ էր հայտնի. ով էլ դառնա Հայաստանի նախագահ, առջևում սպասվում են ծանր տարիներ, դժվարին վիճակ: Ժողովուրդը դժգոհ է մնալու ցանկացած նախագահի դեպքում, որովհետև իրավիճակը միանգամից փոխվելու նրա սպասումները չեն արդարանալու: Փոփոխությունները դանդաղ են ընթանալու: Եվ եթե Քոչարյանն է դառնում նախագահ, ապա սկսվում է այդ հակասությունների շահարկումը, ինչը, կրկնում եմ, մենք համարում ենք շատ և շատ վտանգավոր ժողովրդի և պետության ապագայի համար: Մեր տեղեկություններով, իրենք էլ էին հասկանում, որ տոկոսը ապահովել հնարավոր չէ, և մյուս կողմից, նաև հասկանալի էր, որ անօրինական, անարդար ընտրությունները Հայաստանում կործանարար կարող են լինել և՛ Ղարաբաղի, և՛ Հայաստանի համար: Այդ գիտակցումով նրանք գնացին ընտրությունների: Ըստ մեզ հասած տեղեկությունների, այսպես էր դա նախատեսվում անել:

Հաշվարկը շատ պարզ էր: Հաշվում էին Հայաստանում բնակվող ղարաբաղցիներին, նրանք իբր իրենց օգտին էին քվեարկելու, կեղծիքների հիմնական մասը (ես ասում եմ կոնֆիդենցիալ ինֆորմացիա) նախատեսվում էր անել Ռուսաստանում՝ Հայաստանը կեղծիքներից մաքուր պահելով: Այդ սցենարը չհաջողվեց:

Ինչևիցե, Ռ. Քոչարյանի առաջադրվելուց հետո պարզ էին արդեն այն բարդությունները, որոնք առաջանում էին Հայաստանի ներսում ազատ, արդար ընտրություններ կազմակերպելու համար: Այդ ժամանակ առաջ քաշվեց նոր թեկնածություն՝ Կարեն Դեմիրճյան: Թե ինչպե՞ս եղավ, ես չգիտեմ, բայց դա միանգամից լուծեց մի կարևոր խնդիր: Ժողովրդի մեջ կարոտախտ կար. վերջին տարիների կյանքն այնքան դառն էր, որ ուզում էին հանգիստ, հանդարտ, ապահով կյանք, և դա տեսնում էին ոչ թե այս 10 տարիների մեջ, այլ անցյալում: Եվ Դեմիրճյանի թեկնածության առաջադրումը սկսեց մեծ քանակությամբ ձայներ խլել և՛ համայնավարներից, և՛ մեզանից: Եվ Դեմիրճյանի վարկանիշը սկսեց բնական ձևով աճել: Դրանով լուծվեց և՛ Ս.Բադալյանի, և՛ մեր ձայների հարցը, և դաշտը մաքրելու հարցը, որտեղ

հնարավոր կլիներ անել այն, ինչ նպատակադրված էր: Այդ ժամանակ հիստերիա սկսվեց՝ կապված Դեմիրճյանի առաջ գնալու հետ: Այդ հիստերիայի մեջ կային և՛ բնական, և՛ անբնական նոտաներ: Բնական, որովհետև լավ տեսանելի էր, որ Դեմիրճյանի ձայները ավելանում են, և անբնականն այն էր, որ անընդհատ շահարկվում էր այն միտքը, թե միևնույնն է, Վազգեն Մանուկյանը չի անցնելու, անցնելու են Քոչարյանը և Դեմիրճյանը, Վ.Մանուկյանին տված ձայները կորած ձայներ են, կողմնորոշվեք, և ձայները այդ երկուսից մեկին տվեք: Ձայները գնացին և՛ Ռ.Քոչարյանին, և՛ Դեմիրճյանին: Այդ հիստերիան հասավ այն աստիճանի, որ մեր շատ հարգված Ռաֆայել Ղազարյանը, օգտագործելով Ռ.Քոչարյանի ժամը, ելույթ ունեցավ Կ.Դեմիրճյանի դեմ: Մենք աշխատում էինք ոչ մեկի դեմ ելույթ չունենալ, դա մեր սկզբունքներին հակասում է:

Սկսվեցին ընտրությունները: Համախմբված էին ուժեր, որոնք իրենց հայտարարել էին ազգային: Ազգայինի մեջ ամենակարևորը ո՞րն է. հարգանք իր ժողովրդի նկատմամբ, ձգտում, ջանքեր, որ իր ժողովրդի մակարդակը բարձրանա և ոչ թե իջնի: Սկսվեց ժողովրդին կաշառք բաժանելը՝ այն չափերի, որ չէինք տեսել ոչ 1995-ին, ոչ 1996-ին: Մնացած կեղծիքներից ամենասարսափելին դա է՝ հիվանդ հասարակությունը փչացնել մինչև վերջ: Եվ չհամարձակվի որևէ մեկը ասել, թե կեղծիքներ է անում հանուն ազգային գաղափարի: Ոչ: Ես դա համարում եմ ազգային դավաճանություն, մեր ժողովրդի փչացում, որ միայն օտարը կարող է անել: Փչացնում էին հազարների, տասնյակ հազարների՝ ծախսելով միլիոնավոր դոլարներ: Բանը հասել էր նրան, որ մարդուն տալիս էին փողը և պարտադրում ձեռքը դնել Աստվածաշնչի վրա, որ երդվի, թե ձայնը տալու է այսինչին: Դա արդեն սրբապղծություն է: Ահաբեկում: Ինձ պատմել են, թե ինչպես են կատարվել ընտրությունները Արշալույս գյուղում: Գեներալ Մանվելի եղբոր կերպարանքի սարսափի տակ: Եվ դա ազգային ու՞ժ է:

Այն, ինչ կատարվեց Հայաստանում, սարսափելի է: Մանր-մունր կեղծիքներ ամեն տեղ լինում են: Մեզանում հարյուր հազարավոր մահացածներ երևի հնարավորություն ունեցան քվեարկելու: Բայց այդ ամեն ինչի մեջ սարսափելին հասարակությունը փչացնելու ձգտումն էր: Եվ փչացած հասարակությունով ի՞նչ պիտի կառուցեն: Ի՞նչ տնտեսություն, ի՞նչ ազգային նպատակներ, եթե դու հասարակությունը փչացնում ես մինչև վերջ, մինչև խորքը:

Ի վերջո, ինչ է նշանակում ժողովրդավարություն: Ասում են՝ դա արևմուտքից եկած մի մոդայիկ բան է, մեր ինչի՞ն է պետք ժողովրդավարությունը: Ժողովրդավարությունը և ազատ ընտրությունները լուծում են միաժամանակ մի քանի հիմնախնդիր: Առաջինը. ամեն մարդու ի ծնե ձգտումը արժանապատիվ կյանքով ապրել և ունենալ ազատություն: Երկրորդ. հասարակության կազմակերպման լավագույն ձևն է դա, եթե դու մրցում ես ուրիշ պետությունների հետ, լինի ռազմի դաշտում, տնտեսության թե գիտության ոլորտում: Ապացուցված է, որ հասարակության լավագույն կառուցվածքը ժողովրդավարությունն է: Միայն ժողովրդավարությամբ կարող ես աշխարհի հետ շփվել: Հնում մենք շփվում էինք քրիստոնյա ժողովուրդների հետ: Այժմ քրիստոնեությունը կորցրել է իր այդ դերը, շփումը կատարվում է ժողովրդավարական պետությունների միջև: Եվ երրորդ. չնայած Լ.Տեր-Պետրոսյանի ընտրությունը ապացուցում է հակառակը, բայց ով որ նշանակում է մարդուն պաշտոնի, նրան է ծառայում այդ մարդը: Եթե ժողովուրդն է նշանակում, իշխանությունները կամա թե ակամա ծառայում են իրենց ժողովրդին: Այնպես որ, այն միտքը, թե հանուն մի ինչ-որ վերացական ազգային գաղափարի կարելի է խախտել ժողովրդավարությունը, ամենամեծ հարվածն է մեզ: **Եթե Ադրբեջանի ուժը նավթն է, Վրաստանինը՝ ծովը, ապա Հայաստանի ուժը իր ժողովուրդն է, որը կարող է ստեղծագործ աշխատանքով ապրել միայն և միայն ժողովրդավարության, արդար ընտրությունների և ազնիվ պայքարի միջոցով:**

Բերվում է նաև այլ փաստարկ, ասում են՝ բա Պինոչե՞տը: Պինոչետը խղճուկ ձևով, թուղթ գցելով չէր անում այդ ամենը: Նա զենքը ձեռքին պայքարեց հանուն իր գաղափարների, իր շուրջը հավաքված էին ինտելեկտուալ մարդիկ: Բայց կարևորն այն էր, որ Չիլին ուներ այն, ինչ մենք չունենք: Նախ՝ բնական ռեսուրսներ, և քանի որ Պինոչետի պայքարը համայնավարների դեմ էր, նա ուներ հզոր դաշնակից՝ Միացյալ Նահանգներ: Բերում են Ուզբեկստանի օրինակը, որ այնտեղ տոտալիտար ռեժիմ է, հին նոմենկլատուրան իշխանությունը վերցրել է իր ձեռքը, բայց այնտեղ Կորեան կառուցում է ավտոմեքենաներ արտադրող գործարան, մեծ ներդրումներ են անում: Դարձյալ մոռանում են, որ Ուզբեկստանը հսկայական ռեսուրսներ ունեցող երկիր է:

Մեր միակ ռեսուրսը մարդն է, և այդպիսի համակարգը Հայաստանի համար կործանարար կլինի:

1993թ. պաշտպանության նախարարությունում վերջին օրերին ես, երկու օր լինելով Ղարաբաղում, խոսակցություն ունեցա Ռոբերտ Քոչարյանի և Սամվել Բաբայանի հետ: Ղարաբաղը ռազմականացված պետություն էր, որտեղ խոսել ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին անիմաստ էր: Եվ մենք բնական էինք համարում, փոքր պետություն էր, ամբողջովին բանակ դարձած, որը պայքարում էր ազգային նպատակների համար: Բայց այդ խոսակցության ժամանակ ես ասում էի, որ նույնը Հայաստանում կրկնելը ոչ միայն աղետ է, այլև չի հաջողվի: Այստեղ պարզ ժողովուրդ չէ, բազմաշերտ է, և նույն մոդելը իրականացնել հնարավոր չէ: Այժմ, իմ կարծիքով, այդ փորձը կատարվում է Հայաստանում: Մարդը վախեցած, Մանվելի եղբոր կողքով անցնելով ու կուչ գալով, քվեատուփ է գցում այն թուղթը, որը իրենից պահանջվում է: Այս ամենը հանգեցնում է նրան, որ մենք Ռոբերտ Քոչարյանին չենք պաշտպանելու երկրորդ փուլում:

Բայց այդ դեպքում տրամաբանական է, որ Դեմիրճյանին պաշտպանենք: Բայց Դեմիրճյանը, պարզ ասեմ, անհայտ մարդ է: Մենք գիտենք նրա 14 տարվա իշխանությունը Հայաստանում: Իհարկե, կարելի է ասել, որ այն ժամանակ Դեմիրճյանի իշխանությունը չէր, բրեժնևյան իշխանություն էր, և դա ճիշտ կլինի: Հայաստանը ոչնչով չէր տարբերվում մյուս հանրապետություններից, մի քիչ լավ, մի քիչ վատ, բայց թելադրողը Հայաստանի իշխանությունը չէր: Նա մտցնում էր այն նրբերանգները, որոնց մասին մեզնից շատերը չգիտեին էլ: Թեպետ երբ ես խոսում եմ այն տարեց մարդկանց հետ, որոնք ժամանակին շփում ունեին ղեկավարության հետ, շատ էլ հիացած չեն:

Համենայն դեպս և՛ Դեմիրճյանը, և՛ Ռ. Քոչարյանը եղել են կոմունիստական նոմենկլատուրայի մեջ: Մեկին հաջողվել է վեր բարձրանալ, մյուսին՝ ոչ: Բայց անցյալը մի կողմ թողնենք. վերջին 10 տարիներին եթե Ռ.Քոչարյանը պայքարի մեջ է եղել Ղարաբաղի հարցի համար, ապա Դեմիրճյանը ընդհանրապես չի երևացել քաղաքական ասպարեզում, երբեմն-երբեմն հօգուտ սահմանադրության կամ Լ.Տեր-Պետրոսյանի հայտարարություններ է արել: Եվ մենք չգիտենք նրան՝ որպես քաղաքական գործչի, որպեսզի ասենք՝ քանի որ Ռ.Քոչարյանին չենք պաշտպանում, եկեք պաշտպանենք Դեմիրճյանին: Մենք դրա իրավունքը չունենք: Այս ընթացքում մենք հանդիպումներ ենք ունեցել. Դավիթ Վարդանյանը հանդիպել է Ռ.Քոչարյանին, ես հանդիպել եմ Կ.Դեմիրճյանին, երկարատև զրույց ենք ունեցել: Երկուսն էլ խոստացել են փայլուն ապագա Հայաստանին: Բայց դա բավական չէ: Երբ մենք ենք մի բան ասում, հստակ է՝ այդպես ենք մտածում, թե ոչ: Որովհետև մենք 10 տարվա կուսակցություն ենք, և մեր գործունեությունը պարզ ցույց է տալիս, թե ովքեր ենք մենք: Եվ՛ լավը, և՛ վատը մի խոսքով փոխել չի լինի, քանի որ դա 10 տարվա գործունեություն է և արդյունք: Նրանց դեպքում այդպիսի բան ասել չենք կարող: Ավելին: Եթե Ռ.Քոչարյանի դեպքում կարող ենք կանխատեսել, որ նրա մտադրությունները չեն իրականանալու, ապա Դեմիրճյանը լավ չի էլ պատկերացնում, թե ինչ կարող է լինել: Որովհետև իշխանության գալուց հետո սկսվում է մի խաղ, որ չես էլ կարող էապես գիտակցել: Եվ մեր վախն այն է, որ մի դեպքում լինելու է խիստ բռնապետական համակարգ, տա Աստված, որ մենք սխալվենք, մյուս դեպքում՝ միգուցե մի քիչ ազատ քաղաքական դաշտ, բայց մի ճահիճ, որտեղ եռանդուն ազգային ծրագրեր իրականացնել հնարավոր չի լինի: Ուստի մենք չենք պաշտպանում Կարեն Դեմիրճյանին: Այդ դեպքում մենք ի՞նչ ենք պաշտպանում:

Ինչպես և առաջին փուլում, մենք պաշտպանելու ենք արդար ընտրությունները և նույնիսկ չհամաձայնվելով այն արդյունքների հետ, որոնք կարող են ստացվել, մենք հարգանքով ենք վերաբերվելու ժողովրդի քվեին: Միակ ուժը, որին մենք հարգում ենք և որի հետ հաշվի ենք նստում, ժողովուրդն է: Ինձ հարց են տալիս՝ տարիներն անցնում են, մենք միշտ այսպես ընդդիմադի՞ր ենք մնալու: Իսկապես ցավոտ հարց է: Մարդիկ տարիներ շարունակ՝ իրենց ընտանիքը մոռացած, ծանր սոցիալական պայմաններում, շատերը՝ բանտեր, ռազմաճակատներ անցած, պայքարում են հանուն գաղափարի: Մարդիկ կան, որոնք պայքարը սկսել են 1965 թվականից: Մարդիկ կան, որ պայքարի մեջ մտան 1988 թվականին: Կան, որ պայքարի մեջ մտան վերջին տարիներին: Մեր նպատակը ոչ իշխանությունն է, ոչ ընդդիմությունը: Մենք ունենք հստակ պատկերացումներ, թե ինչպիսին ենք տեսնում Հայաստանը և պայքարում ենք դրա համար: Ցանկացած մարդ գա իշխանության և սկսի

իրականացնել այդ ծրագրերը, մենք նրա կողմն ենք: Մենք չունենք այնպիսի հավակնություններ, նպատակներ չունենք, թե հենց մենք պիտի լինենք, բայց մենք ունենք սկզբունքներ: Ու այդ սկզբունքներով միայն կարելի է իրականացնել այն, ինչ երազում է մեր ժողովուրդը:

Այս ընտրությունները մի բան էլ ցույց տվեցին: Ընդդիմադիր դաշտը մաքրվեց: Ցավոք սրտի: 1996թ. մեր կողքին կային տասնյակ կուսակցություններ, անհատներ: Արանքում շարունակ բոլորը փորձում էին բանակցությունների մեջ մտնել Լ.Տեր-Պետրոսյանի հետ իրենց վարչություններով, իրենց բյուրոներով, իրենց խորհուրդներով, իրենց դիվաններով: Լ.Տեր-Պետրոսյանը արհամարհանքով էր վերաբերվում բոլորին, դա իր մեղքն էր, չէր ուզում համագործակցել ոչ մեկի հետ: Միգուցե միակ ուժը, որի հետ նա կուզենար համագործակցել, մենք էինք, բայց մենք չգնացինք դրան: Եվ հիմա, երբ բացվեց ճանապարհը, պարզվեց, որ բոլորը այնտեղ են: Սկզբունքներ չէին հետապնդվում, հետապնդվում էր նպատակ՝ լինել իշխանության կողքին: Մենք մնալու ենք նույն դիրքում:

Ընտրությունների արդյունքները շատերի համար ապշեցուցիչ էին: Բայց մի բան հաշվի առեք: Այս ծանր պայմաններում, այս հալածանքների, վախի, կաշառքի մթնոլորտում հարյուր հազարավոր մարդիկ, և հիմնականում երիտասարդությունը, բարձրագույն կրթություն ունեցողները, գնացին այս ամենի դեմ, գնացին քվեարկության և ծայն տվեցին ու պայքարեցին, որպեսզի արդար լինեն ընտրությունները: Եվ մենք հիմա արդեն կուսակցություն չենք, քաղաքական հոսանք ենք: Եվ միակն ենք մնացել որպես այդպիսին, որը ապագա է տալու Հայաստանին: Հայաստանի ապագան կապված է այս հոսանքի հաղթանակի հետ: Ոչ թե անձամբ իմ անձի հետ կամ մեր կուսակցության: Թող գան ուրիշ կուսակցություններ, թող գան ուրիշ անձինք: **Բայց այդ ջահը՝ դառնալ ժամանակակից, ազգային, ժողովրդավարական միություն, մտնել համաշխարհային ընտանիքի մեջ՝ որպես լիարժեք անդամ, մտնել մրցակցության մեջ մյուս ժողովուրդների, պետությունների հետ, լուծել մեր ազգային հարցերը և երկրի ներսում ապրել բարգավաճող, հայ մշակույթի, հայ ավանդույթների մթնոլորտում, մարդուն արժանավայել կյանքով, մնաց այս հոսանքի խնդիրը: Եվ մենք ամեն ինչ անելու ենք, որ այս հոսանքը պահպանվի, լինի մաքուր և կարողանա հասնել հաղթանակի: Սա է Հայաստանի ապագան: Ոչ թե 10 տարով կամ 100 տարով հետ գնալ:**

Ի վերջո, ի՞նչ է ազգայինը: Ազգայինը թուրք ատելը չէ: Ազգայինը իր ժողովրդին սիրելն է, իր ժողովրդին հարգելն է, ազգային մշակույթի, ազգային ավանդույթների վրա հիմնված պետություն կառուցելն է, ազգայինը մյուս ժողովուրդների հետ արդար մրցելն է: Կորավ այդ ամենը: Ազգայինը մնաց գավառական օգտագործման, հնաոճ, անցյալ դարի մնացուկ: Բայց համոզված եղեք, կգա այդ օրը, այս գաղափարներն են հաղթելու, դրանից հետո մարդիկ կառույցներում քրտնաջան կաշխատեն, շատ-շատերը, հանգիստ շունչ քաշելով, տուն կվերադառնան՝ ասելով, թե հասանք մեր նպատակին: Մենք կունենանք ապագա, մեր երեխաները կունենան ապագա: Եվ մենք մինչև վերջ պայքարելու ենք այդ ապագայի համար:

Վ. Մանուկյանի ելույթը
ԱԺՄ կոնֆերանսում (նախագահական
ընտրությունների երկու փուլերի միջև
ընկած ժամանակահատվածում)
«Այժմ», 1998, 25-31 մարտի

ՉԱՐՅԱՑ ՓՈՔՐԱԳՈՒՅՆԻՆ ԴԵՄ ԵՄ

«Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում Մամուլի ազգային ակումբը հյուրընկալեց Վազգեն Մանուկյանին: Եվ առաջին հարցը, որով դիմեցին լրագրողները, վերաբերում էր նրա լռությանը:

- Անկեղծ ասած, այս տասը տարիների ընթացքում այնքան շատ բան է ասվել, և այնքան քիչ բան՝ փոխվել, որ խոսքի արժեքը ընկել է: Բացի դրանից, շատ բան ակնհայտ է: Մի հին անեկդոտ կա. ԿԳԲ-ն բռնում է մեկին, որ պատերին թռուցիկներ է փակցնում: Հետո պարզվում

է, որ թռուցիկները մաքուր թղթեր են: Ինչու՞: Առանց այդ էլ ամեն ինչ հայտնի է, պատասխանում է նա, էլ ի՞նչ գրեմ:

Կատակը կատակ, բայց մյուս կողմից էլ ճիշտ է, Ռ.Քոչարյանը մոտ մեկ տարի վարչապետ էր և նախագահական ընտրություններից առաջ էլ փաստորեն նախագահ էր, բայց սովորական քաղաքական վարվեցողությունը կամ պարկեշտությունը պահանջում է մի որոշ ժամանակ սպասել, տեսնել՝ ինչ է տեղի ունենում, և ամեն մի հարցին միանգամից չարձագանքել: Թեև կան սուր հարցեր, որոնց ուզես-չուզես պիտի անմիջապես արձագանքես: Օրինակ՝ կոնյակի գործարանի վաճառքը:

Նախորդ տարիներին մենք՝ և՛ կուսակցությունները, և՛ ամբողջ հասարակությունը, պայքարում էինք մի բացասական երևույթի դեմ, որի անունը ռեժիմ էր: Երբեմն իրավացի, երբեմն էլ ոչ իրավացի, բոլոր չարիքները վերագրվում էին մի մարդու, մի վարչախմբի: **Կար կարծիք, որ Լ.Տեր-Պետրոսյանը լավն է, շրջապատն է վատ: Լ.Տեր-Պետրոսյանը գնաց, իր շրջապատը եկավ իշխանության:**

Համենայն դեպս, այն սպասումները, որ ունեցանք բոլորս փետրվարի 4-ին, բերեցին խորը հիասթափություն: Եղած հիվանդությունները դարձան քրոնիկ, և հետզհետե դառնում են անբուժելի:

Ես ոչ մի դրական փոփոխություն չեմ տեսնում: Նույն հասարակությունն է: Ցանկացած պետությունում ամենաէականն այն է, թե ինչ մթնոլորտում են տեղի ունենում փոփոխությունները, ինչ սպասումներով է ապրում ժողովուրդը: Դուք ինքներդ ինձանից լավ գիտեք, որ ընտրությունները կեղծ էին, չէին արտահայտում ժողովրդի կարծիքը: Եվ այն ժամանակ էլ մենք պնդում էինք, որ ցանկացած ոք, ով ժողովրդի քվեով չի գա իշխանության, դատապարտված է հայտնվելու այն նույն իրավիճակում, ինչ Լ.Տեր-Պետրոսյանը 1996 թվականից հետո:

Ակնհայտ է՝ ներիշխանական հակամարտություններ կան: Պարտադիր չէ բամբասանքների վրա հիմնվել: Տեսնելով միայն, թե ում են նշանակում մարզպետ, այլ ոլորտներում ինչ է կատարվում, դատելով միայն թերթերից, դժվար չէ կռահել, թե խորքում ինչ է տեղի ունենում: Երբեմն մեզ մատնացույց են անում Վազգեն Սարգսյան-Ռոբերտ Քոչարյան երկընտրանքը:

Անկեղծ ասած, ինձ շատ քիչ է հետաքրքրում այդ պայքարը և չարյաց փոքրագույնին ես կողմնակից չեմ: Արտաքին քաղաքականության մեջ մենք ստիպված ենք եղել ընտրելու չարյաց փոքրագույնը: Սակայն ներքին քաղաքականության մեջ ես միշտ դեմ եմ եղել չարյաց փոքրագույնին: Այստեղ միշտ պիտի ընտրել ճշմարիտը, բարին, արդարը:

Այս 100 օրերը ցույց տվեցին, որ ոչ մի դրական տեղաշարժ չի եղել: Եվ շատ բնական են ազգային միասնության կեղծ լոզունգները: Իշխանավորները միշտ էլ նախընտրում են խաղի այսպիսի կանոնները. ես մնում են իշխանության, մենք մնում ենք իշխանության, դուք էլ հա-մախմբվեք մեր շուրջը: Բայց ինչի՞ շուրջը, ի՞նչ գաղափարների շուրջն են խոսում ազգային միասնության մասին: Ես այդպիսի բան չեմ տեսնում: Ընդհակառակը, այժմ նույնիսկ հիասթափությունը շատ ավելի մեծ է, քան նախկինում: Որովհետև ժողովուրդը փոփոխության հետ հույս էր կապում: Այդ վերջին հույսն էլ կարծես թե մարեց:

Բնական է, որ մեկ-երկու շաբաթում կամ 100 օրում տնտեսության մեջ պիտի որ կտրուկ փոփոխություններ չլինեին: Բայց պետք է լինեին միտումներ, տեսնեինք, որ այդ միտումները 1-2-3 տարի հետո բերելու են դրական արդյունքներ: Դրական միտում տնտեսության մեջ չի երևում:

Եթե նախորդ տարիներին հիստերիկ սեփականաշնորհում էր տեղի ունենում, օբյեկտները հապճեպ տրվում էին յուրայիններին, որպեսզի քաղաքական հենարան լինեն, ապա այժմ Հայաստանում մնացել են ավելի մեծ, յուղալի և ստրատեգիական նշանակություն ունեցող պատառներ, որոնք խոշոր գումարներ արժեն: Ինձ հասել է Ռ.Քոչարյանի այն թեզը, թե «Լ.Տեր-Պետրոսյանը տալիս էր հայաստանցիներին, և ոչինչ չստացվեց, մենք կտանք արտասահմանցիներին, և ինչ-որ բան կստացվի»: Բացարձակ կեղծ թեզ է:

«Արմենտելի» սեփականաշնորհման մասին մենք ժամանակին ասել ենք մեր բացասական կարծիքը (երբ Ռ.Քոչարյանը վարչապետ էր), կոնյակի գործարանի մասին բազմիցս հանդես է եկել Արշակ Սադոյանը: Ի վերջո կոնյակի գործարանի

սեփականաշնորհումը ինքնանպատակ չէ: Ի՞նչ ծրագիր ունեինք, որ պարզեինք՝ պետական մնալն է նպատակահարմար, բաժնետիրական ընկերություն ստեղծելը, որին մասնակցեին հայաստանցիները, թե համատեղ ձեռնարկությունը: Ոչ մի տրամաբանություն չկա այդ վաճառքի մեջ: Չեմ խոսում արդեն գումարների մասին: Միայն հայկական կոնյակի պիտակը 30 մլն-ից ավելին արժե, ներսի ունեցվածքը՝ բազմապատիկ: Եվ ես համաձայն եմ Արշակ Սադոյանի հետ, երբ ասում է, որ այս գործում մարդիկ են, ովքեր կամ բան չեն հասկանում, կամ մեծ շահ ունեն: Կարծում եմ, որ այդ մարդիկ այնքան են հասկանում, որ մնում է երկրորդ տարբերակը: Ապացուցելի չէ, բայց այլ բան չի մնում եզրակացնելու:

Մենք դեմ ենք նաև այն ծրագրերին, որոնք վերաբերում են մյուս ձեռնարկություններին (օրինակ, Քաջարանին): Դրանք մեր պետության շահերից չեն բխում: Բանն այն չէ, որ արտասահմանցիները իրավունք չունեն ֆիրմաներ ստեղծելու Հայաստանում: Իրավունք ունեն: Եվ երբեմն դա բավական շահավետ է: Կոնյակի գործարանի դեպքում բացարձակապես անիմաստ է: Քաջարանի համար շատ ավելի լավ ծրագրեր կային դեռ 1990-91թ.թ., որոնք, իրականանալու դեպքում, իսկապես Հայաստանին մեծ օգուտ կարող էին բերել: Սա լուծում չէ՝ վերջին պատառները տալ և մի կողմ քաշվել:

Ընտրություններից առաջ ջրի վարձը գյուղում իջեցրին, իսկ հետո պարզվեց, որ իրականում վճարում են նույն չափով, նույնիսկ ավելին: Ընտրությունների ժամանակ շատ էին խոսում ինչ-որ կառույցներ ստեղծելու մասին, որոնք բերքը հավաքելուց հետո կկարողանային ապրանքը Հայաստանից արտահանել ու վաճառել Ռուսաստանին: Չարվեց: Երկու օր առաջ գյուղացիներ էին եկել կուսակցություն Արտաշատի, Արմավիրի շրջաններից: Գյուղապետը թույլ չի տալիս, որ կոմբայնը աշխատի, ասում է՝ ջրի վարձը մուծեք, որ կոմբայնը աշխատի: Այսինքն՝ բերքը փչանում է՝ փչանա: Մնացել է նույն մտածողությունը, նույն անպարկեշտությունը: Եվ սա արմատ է գցում: Եթե նախագահական ընտրություններում բազմաթիվ կեղծիքներ ես թույլ տալիս, խաբեբայություն, օրենքի խախտումներ, ապա ինչպե՞ս կարող ես պահանջել, որ ներքևում մարդիկ օրենքը պահպանեն: Եթե անգամ վերևում օրինապահ լինեին, դարձյալ դա շատ դժվար խնդիր է, բայց երբ խախտումն արդեն վերևից է գալիս, ներքևում ոչինչ հնարավոր չէ անել:

Ոմանք պնդում են, որ ելքը նոր Ազգային ժողովի ընտրություններն են: Դուք գիտեք մեր դիրքորոշումը, մենք միշտ այն կարծիքին ենք եղել, որ արդար չընտրված, ժողովրդի կարծիքը չարտահայտող ԱԺ-ն ցրվի և նոր խորհրդարան ընտրվի: Բայց համոզվա՞ծ եք, որ այսպիսի մթնոլորտում ընտրությունները դրական արդյունք կբերեն: Ես խիստ կասկածում եմ: Հայաստանում սա արդեն դարձել է մշակույթ: Մինչև 1998թ. ընտրությունները երևույթը վերագրվում էր ռեժիմին, 1998թ. ընտրություններից հետո, երբ ռեժիմը գնաց, դա արդեն դարձավ ավանդական, որից ազատվելը շատ բարդ է լինելու: Ինչ վերաբերում է սահմանադրությանը, ապա մեր կուսակցությունը ակտիվորեն մասնակցում է քննարկումներին: Մենք կողմ ենք այն տեսակետին, որ սահմանադրությունը պետք է փոխվի, քանի որ կեղծ է, չընդունված: Բայց զարմանալի է, այն կառույցները, որոնք ժամանակին հայտարարեցին, թե սահմանադրությունը կեղծ է, այսօր խոսում են միայն խորհրդարանի մասին: Նույնիսկ եթե մի կետ է փոփոխվելու, միևնույնն է, սահմանադրությունը ամբողջությամբ պետք է դրվի հաստատման: Ի՞նչ ձևով, դեռ մի կողմ թողնենք: Եվ մեր կարծիքը մնում է նույնը, մենք կողմնակից ենք ժողովրդավարական պետության, որի կառուցվածքն է՝ պառլամենտական հանրապետություն: Բայց մենք համաձայն ենք նաև փոխզիջումների գնալ՝ սահմանափակելով նախագահի իշխանությունը և վերահսկելու հնարավորություն տալով: Հիշենք նույն կոնյակի գործարանի օրինակը: Այդպիսի օբյեկտների սեփականաշնորհումը կատարվում է մրցույթով, պայմանների մասին նախապես բոլորը, ամբողջ հասարակությանը տեղեկացվում է: Հայաստանում ամեն ինչ կատարվում է կուլիսների ետևում:

ԱԺՄ-ն, չհարմարվելով ներկա իրավիճակի հետ, շարունակելու է պայքարը հաստատելու համար Հայաստանում իրական ժողովրդավարական արժեքներ, որովհետև այդ ուղու վրա է տեսնում Հայաստանի ապագան: Այս լռության օրերին մեր կուսակցության շարքերը մեծ արագությամբ ընդլայնվել են, իսկ դա նոր խնդիրներ է առաջադրում մեզ: Մենք ձգտելու ենք

հասարակության հետ միասին ինչ-որ ձևով փոխել իրավիճակը, որովհետև այս ճանապարհը ոչ մի տեղ չի տանում:

Սեպտեմբերի սկզբներին կկայանա ԱԺՄ քաղաքական կոնֆերանսը, որում կհստակեցվի մեր ստրատեգիական կուրսը:

Կուսակցությունների հետ երկրի ղեկավարը շփվելու շատ ավելի բնական ճանապարհներ ունի: Մեկը խորհրդարանն է, որի միջոցով են կուսակցությունները մասնակից դառնում քաղաքական կյանքին, ոչ թե արհեստական մարմինների միջոցով, որտեղ ոչ մեկը, պարզվում է, կշիռ չունի: Եվ իհարկե, երկրի ղեկավարը կարևոր հարցերով խորհրդակցություններ պիտի անի տարբեր կուսակցությունների հետ՝ անկախ այն հանգամանքից՝ ընդդիմադիր են, թե ոչ: Այս ֆորմալիզացված խորհուրդը որևէ հարց, ըստ իս, չի լուծելու: Բայց կարծում եմ, որ եթե ստեղծվում է, ապա մեր կուսակցությունը պետք է ներկայացուցիչ ունենա այնտեղ և զեղծ չմնա նաև այդ քաղաքական դաշտից: Մյուս քաղաքական դաշտում՝ «Պապլավոկում», մենք միշտ մի 2-3 հոգի պահում ենք...

Մեր հասարակության հոգեբանության մեջ միշտ էլ եղել են որոշ ախտեր: 70 տարիների ընթացքում դրանց մի մասը խորանում էր, մի մասը՝ բուժվում: 1988թ. Շարժումը զգալի առողջացում բերեց: Ժամանակի պահանջն էր, որ երկրի ղեկավարը, օրինակ ծառայելով, առաջ գնար և բուժողի դեր կատարեր, ոչ թե խորացնելով հիվանդությունները, հիմնվելով դրանց վրա՝ իր իշխանությունը պահեր: Լ.Տեր-Պետրոսյանը գնաց երկրորդ ճանապարհով, և Հայաստանում մի կարծրացած մտածելակերպ ստեղծվեց, որն ինչքան շուտ քանդվեր, այնքան լավ: Լ.Տեր-Պետրոսյանի հեռանալը հնարավորություն էր տալիս:

Այն ժամանակ մենք հանդիպումներ ունեցանք Ղարաբաղի ղեկավարության, Վ. Սարգսյանի, Ռ. Քոչարյանի հետ: Եվ մի բան հստակ էր. նրանք ասում էին (ու ես կարծում եմ, որ այդ պահին նրանք անկեղծ էին), որ եթե ընտրությունները արդար չլինեն, ապա Ղարաբաղի հարցում մենք որևէ առաջխաղացում չենք ունենա: Բայց հենց որ Ռ.Քոչարյանը իր թեկնածությունը առաջադրեց, արդեն պարզ էր, որ խաղը գնալու է այլ կանոններով: Հոռետես լինելը ամենահեշտ բանն է, բայց դժվար էր ենթադրել՝ կհամարձակվե՞ն դավաճանի պիտակով գալ իշխանության... Փետրվարի 4-ից հետո մեր ժողովուրդը մի հնարավորություն կորցրեց: Ե՛վ Ռ. Քոչարյանը, և՛ Վ. Սարգսյանը կարող էին շատ ավելի մեծ բան անել, քան խղճուկ իշխանություն ունենալը: Կարող էին երկիրը դուրս բերել այս ակոսից և պատմության մեջ մնալ իբրև անհատներ, որոնք վեր գտնվեցին իրենց անձի շահերից: Թեպետ թերևս դա էլ՝ հիշողության մեջ մնալն էլ վերջին հաշվով անձի շահ է: Ինչևէ, այդ ճանապարհով չգնացին:

Ժամանակը, աշխարհը մեզ շարունակ մարտահրավերներ է նետում: Եվ մենք դրանց պատասխանը չունենք: Այսպիսի պետությունը մարտահրավերներին պատասխան տալ չի կարող: Չեմ բացառում, որ կարող են լինել հեղաշրջումներ: Իսկ ռազմական դիկտատուրան Հայաստանում անհավանական է: Սա ես ասում եմ տեսությունից ելնելով, և ոչ թե որոշակի տեղեկատվությունից:

Դաշնակցությունն իր վրա մեծ պատասխանատվություն վերցրեց ընտրությունների ժամանակ, և քանի որ Ռ.Քոչարյանը դարձավ նախագահ, շարունակում է պատասխանատվություն կրել: Եվ չնայած իշխանությունը ընկավ Լ.Տեր-Պետրոսյանի շրջապատի ձեռքը, որոշ օղակներում կա նաև Դաշնակցությունը, որ նույնպես պատասխանատու է Հայաստանի համար: Ե՛վ Դաշնակցության կասեցումը, և՛ հայ դատի սահմանափակումը Տեր-Պետրոսյանի անձնավորված մոտեցումն էր: Ով էլ գար իշխանության, այդ արգելքը վերանալու էր: Դաշնակցությունը բացվեց, Հայ դատի մասին պարզորոշ խոսում են: Բայց դա համարել Դաշնակցության գաղափարախոսություն, ընկած իշխանության հիմքում, կարծում եմ, ճիշտ չէ: Պարզապես վերացավ անբնական պատնեշը, և վերականգնվեց բնականոն վիճակը:

Միշտ էլ կարող է լինել, որ իշխանության համակարգում մի խումբը մյուս խմբի դեմ գործեր հարուցի: Իսկ իրավիճակի փոփոխությունն այն դեպքում է լինում, երբ որևէ ոլորտ վարագույրի ետևում չի մնում: Թերթերից, որոշ աղբյուրներից ինձ հայտնի է, որ մարդկանց բռնում են, ասում՝ բեր 1 մլն, 2 մլն և ազատ ես: Թույլ տվեք կասկածել, եթե մարդուն ասում են՝ 2 մլն դոլար տուր բյուջե, ապա ես իրավունք ունեմ կասկածելու, որ 1 միլիոնն էլ իրենց գրպանն են դնում: Այդ քրեական գործերը օգտագործվում են կամ փող վերցնելու, կամ շանտաժի համար:

Իմ վարչապետ եղած ժամանակ ես մի միտք եմ ասել, որ բավական բացասական հնչեղություն ունեցավ հասարակության մեջ. «Մենք կուլակաթափ չենք անելու»: Դա

պատահական չէր ասվել, ես անքուն գիշերներ եմ անցկացրել: Գերմանիան դատապարտեց ֆաշիզմը, դատավարություններ արեց: Ես այն ժամանակ կարծում էի, թե մեր ազգի առաջ բացված հորիզոնները թելադրում են հետ չնայել և գնալ առաջ: Չգիտեմ, ճիշտ էի այն ժամանակ, թե ոչ: Բայց հիմա ես համոզված եմ, եթե մենք գնահատական չտանք անցածին, եթե մենք չկարողանանք դատապարտել որոշ մարդկանց (պարտադիր չէ քրեական, երբեմն նաև բարոյական), մենք չենք կարողանա առաջ գնալ:

«Այժմ»,1998, 15-21 հուլիսի

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԳՆՈՒՄ ԷՐ ԴԱՌՆԱԼՈՒ ԻՐ ԵՐԿՐԻ ՏԵՐԸ

Հարյուրավոր մարդիկ այստեղից ասել են պայծառ մտքեր, այդ պայծառ մտքերը արտահայտելիս եղել են շատ անկեղծ, ոչ մեկը կեղծ չի խոսել: Կյանքը դրանից հետո չի փոխվել դեպի լավը, և երբեմն մարդկանց մեջ հուսահատություն է առաջանում. միգուցե այս ամենն ավելորդ է, միգուցե մենք չենք որոշում մեր ճակատագիրը, մեր բախտը ուրիշներն են որոշում: Եվ հուսահատություն է առաջանում. մարդիկ թողնում հեռանում են իրենց հայրենիքից, սկսում են վարկաբեկել անկախությունը, մեր ազգային արժեքները: Երկու տարի առաջ էր, որ մենք այստեղ հավաքված էինք, բայց այսքան չէինք, հարյուր հազար մարդ էր հավաքված, ժողովուրդ էր հավաքված, ուսանողությունն էր այստեղ, և մենք գնացինք մեր իրավունքները պահանջելու: Հարցն այնպես չէր դրված, թե Լևոն Տեր-Պետրոսյանը պետք է չլինի նախագահ, այլ Վազգեն Մանուկյանը պետք է լինի: Հավաքված էին մարդիկ, որոնք ձայն էին տվել նաև Լևոն Տեր-Պետրոսյանին, այդպիսի մարդիկ էլ կային ժողովրդի մեջ:

Ժողովուրդը գնում էր արդարություն պահանջելու, ժողովուրդը գնում էր դառնալու իր երկրի տերը, այնուամենայնիվ այս ամբողջ պայքարը, սկսած 1988 թվականից, բոլոր զրկանքները ժողովրդինն էին, ոչ թե մի քանի հերոսներինը: Բայց իշխանություն, երկրի տեր դարձավ մարդկանց մի խումբ, որը ինչ ուզեց՝ արեց: Սեպտեմբերի 25-ին տեսաք՝ մեզ պատասխանեցին կրակոցներով, սկսվեց 26-ը: Լուծվեցի՞ն հարցերը, թե՞ ոչ: Լևոն Տեր-Պետրոսյանի դուրս գալու հարցը կարելի էր կանխատեսել դեռ 25-26-ին: Ո՛չ դրսի ուժերը, ո՛չ ներսի ուժերը, ո՛չ ժողովուրդը, ո՛չ մեկն արդեն իրեն հենարան չէին: Այս կամ այն առաջին պատահած քամին իրեն գցելու էր: Այդպես էլ եղավ: Բայց այն հիմնական խնդիրը, որի լուծման համար մենք գնացինք, դեռ լուծված չէ: Երկիրը չի պատկանում ժողովրդին, երկիրը պատկանում է նորից մի խումբ մարդկանց: Ուղղակի իշխանության թևի մի մասը դուրս շպրտեց մյուս մասին և ինքը դարձավ երկրի տերը: Եվ ինչպե՞ս կատարվեց դա, ովքեր էին այդ ուժերը: Առաջինը Վ.Սարգսյանն էր, որ 1996-ին հանցագործություն կատարեց, դեռ չեմ հիշեցնում 1995-ը: 1996-ին կրակելով ժողովրդի դեմ՝ ասում էր. «Ես չեմ թողնի, որ պետական հեղաշրջում լինի», հետո հպարտանում էր, թե իրենք հեղաշրջում են արել, իրենք տղամարդ են:

Կողքին հավաքված մարդկանցով շատ հետաքրքիր տպավորություն են ստեղծել, թե իրենք են արյուն թափել, հետևաբար իրենք են լինելու այս երկրի տերը: Սուտ է, նրանք չեն հաղթել, նրանք արյուն չեն թափել: **Տասնյակ հազարավոր երիտասարդներ են եղել ռազմաճակատում: Պատերազմի հաղթանակը պատկանում է տասնյակ հազարավոր զինվորների, պատկանում է այն սպաներին, որոնք թողեցին ռուսական բանակը և եկան ծառայելու հայոց բանակում, պատկանում է մեր ինժեներներին և բանվորներին, որոնք նեղ վիճակում նորոգում էին տանկերը, պատկանում է մեր գիտնականներին, որոնք ծանր պայմաններում կարգի էին բերում էլեկտրոնիկան, որպեսզի մենք հաղթենք: Եվ այդ գաղափարը, թե՝ «մենք ենք արյուն թափել, ուրեմն երկիրը մերն է», չարաշահում է, խաբելու միջոց է, իրականում այդպես չէ: Իհարկե այս պատերազմի մեջ տարբեր մարդիկ տարբեր դեր են ունեցել: Շատ հերոս տղաներ կան՝ զոհված և չզոհված, և՛ երկրապահներ, և՛ ոչ երկրապահներ, և իհարկե մենք պետք է հարգանքով լցվենք նրանց նկատմամբ, պետությունը պետք է արտոնություններ տա պատերազմի մասնակիցներին և զոհվածների ընտանիքներին: Երկիրը մարդկանց մի խմբինը չէ:** Բայց այժմ այդպես է: Երբ օգտագործվեցին Վ.Սարգսյանի և պետական կառույցի բոլոր հնարավորությունները, որպեսզի Ռ.Քոչարյանին նախագահ դարձնեն, երկրորդ ուժը, որ

կանգնեց նրանց կողքին, Դաշնակցությունն էր: Մեր հին բարեկամը, մի կուսակցություն, որը մեծ ազգային երևույթ է, ես կարող եմ չընդունել նրա այս կամ այն որոշումը, բայց որպես ազգային երևույթ նա մեր ժողովրդի ծնունդն է, մեր արժեքն է: Ինչու՞ անցան այն կողմ, ես չգիտեմ: Նրանք հարկ չհամարեցին մեզ բացատրել՝ ինչն է պատճառը: Մենք երկու անգամ դիմեցինք նրանց խոսելու համար: Ոչ մի պատասխան: Իրենք որոշում էին ընդունել: Ինչ մակարդակով, ո՞վ, ես չգիտեմ: Ես հարցրել եմ մարդկանց, իմ ընկերներին, դաշնակցականներին՝ ովքեր են այդ որոշումը ընդունել, ինչպե՞ս եք այդ որոշումը ընդունել, բացատրեք, միգուցե մենք էլ հասկանանք: Այդ ինչպես են այն մարդկանց հետ, որոնք իրենց ծեծում էին, հալածում, ձերբակալում, հիմա միասին են գնում: Ինչն է պատճառը, միգուցե համոզեն, մենք էլ միասին լինենք: Ասում են՝ բյուրոն է որոշել: Ես չգիտեմ՝ բյուրոն է որոշել, թե ոչ: Ես ինքս անձամբ բյուրոյի անդամների մի զգալի մասին ճանաչում եմ, ոմանց հետ ընկերություն եմ անում, նրանք տարբեր երկրների քաղաքացիներ են, շատ ազգային, պարկեշտ հայ մարդիկ են, բայց ամեն մեկն իր երկրում երկրորդական դերում է: Իր երկրի ներքին կյանքին՝ ոչ քաղաքական, ոչ տնտեսական, ոչ հասարակական ասպարեզներում մասնակից չէ: Մեծ դեր է կատարում գաղութի համար, և ինչպե՞ս կարող է որոշում կայացնել, թե որն է ճիշտ, որը սխալ Հայաստանի ժողովրդի համար: Մենք բացատրություն չստացանք, չնայած իմ ընկերները Բեյրութից, Լոս Անջելեսից, Փարիզից ինձ ասացին, որ իրենք Վազգեն Մանուկյանին սատար չենք կանգնում, որովհետև նա թուրքամետ է:

Ծիծաղելի է ձեզ համար, բայց դուք պետք է լավ պատկերացնեք մեր սփյուռքը, որ առաջացել է 1915 թվականի ցեղասպանությունից հետո, և իր սրտում շատ խորն է Հայ դատի հարցը, թուրք ատելու հարցը, և դա այն զգացմունքն է, որի վրա խաղում են, բայց ես կոչ եմ անում մեր դաշնակցական ընկերներին. կարդացեք Արամ Մանուկյանի, Ռուբեն Դարբինյանի գրվածքները, ձեր դասականներին կարդացեք, երբ իրենք ասում էին, թե ինչ իրական քաղաքականություն է պետք վարել Թուրքիայի հետ, և պետք չէ առաջնորդվել զգացմունքներով: Եթե դա միայն արվում է մարդկանց խաբելու համար, ապա ուղղակի անբարոյականություն է, իսկ եթե դա քաղաքականություն է, ապա կործանարար քաղաքականություն կարող է լինել մեր ժողովրդի համար: Երրորդ ուժը, որը միացավ, ՀՀՇ-ն էր: ՀՀՇ-ն պաշտոնական հայտարարություն չարեց, ՀՀՇ-ի ներսում տարբեր թևեր առաջացան, ՀՀՇ-ի կողմից ստեղծված հանձնաժողովները առնվում և ծախվում էին ամեն րոպե, և դեռ մի կողմ դնենք ՀՀՇ-ի ղեկավարների անձնական շահերը: Լինել Համազգային շարժում, հավաքել միլիոնավոր մարդկանց, պայքարել ժողովրդի բարիքի համար, վերջում ձայնի համար փո՞ղ աշխատել: Դրան վերածվեցին ՀՀՇ-ի հանձնաժողովները: Ինչևիցե, ընտրություններում եղավ և՛ կաշառակերություն, և՛ խաբեբայություն, բռնություն ավելի քիչ եղավ՝ համեմատած 95-96 թվականների ընտրությունների հետ: Բռնություններ քիչ եղան 98 թվականին, ավելի խորամանկ ձևերի էին դիմում:

Մենք՝ հայերս, շատ լավատես ենք, մտածում ենք՝ լավ, Ռոբերտ Քոչարյանը իրավունք չուներ իր թեկնածությունը դնելու, որովհետև Հայաստանի քաղաքացի չէր, բայց դրեց: Չգիտեմ, այդ ժամանակ սկսեցին բացատրել, որ կան հայրենասիրական օրենքներ և ոչ հայրենասիրական: Այժմ գիտեք՝ փորձում են սահմանադրության մեջ փոփոխություն մտցնել, որ նախագահի թեկնածուն Հայաստանի քաղաքացի պետք է լինի ոչ թե տասը տարի, այլ՝ հինգ: Ռ.Քոչարյանը մտածում է, որ նորից նախագահ պետք է լինի, բայց արդեն հինգ տարվա քաղաքացիությամբ, գոնե այդ կետը խախտած չի լինի: Եթե դրա մասին խոսեցինք, ես ավելին ասեմ: Միացյալ Նահանգները արտագաղթածների երկիր է, այսինքն՝ բնակչությունը տարբեր երկրներից եկած մարդիկ են: Եթե մեկը Միացյալ Նահանգներում ծնված չլինի, իրավունք չունի նախագահ ընտրվելու: Նույնը պետք է լինի Հայաստանում: Ինչու՞ պիտի Սիրիայից գան, ինչու պիտի ուրիշ տեղից գան Հայաստան, դա ազգի տրոհում չի նշանակում: Մենք ամբողջ ազգով՝ հայաստանցի, ղարաբաղցի, սփյուռքահայ, միասնական մի ժողովուրդ ենք: Բայց ամեն մի երկրում, շատ երկրներում կա այդ օրենքը. տեղում ծնվիր, եղիր այդ երկրի քաղաքացի, սնվիր այդ հող ու ջրով, այս դպրոցում սովորիր, այս թաղում կռվիր, առաջին անգամ այս հողի վրա սիրահարվիր և նոր դարձիր նախագահ, որ հասկանաս, թե ինչ պետք է անել, տուրիստ չլինես այս երկրում: Եվ դրանից հետո հարց առաջացավ: Լավ Լևոն Տեր-Պետրոսյանի հարցը լուծվեց բոլոր դեպքերում, ես այդ փոփոխությունը համարում եմ դրական փոփոխություն, որովհետև եթե սեպտեմբերի 25-ին այստեղից չգնայինք, այդ հարցը չբարձրացնեինք, Լևոն Տեր-Պետրոսյանը հաջորդ հինգ տարին էլ կլիներ մի զառամյալ, հնամաշ իշխանություն: Գոնե այդ փոփոխությունը եղավ, ես դա համարում եմ դրական,

անկախ արդյունքներից, միևնույնն է, դա դրական փաստ է: Եվ հույս կար, որ Ռ.Քոչարյանը ի վերջո շարժման մարդ է, կոփված է այս ամեն ինչով: Լավ չանցավ, օրենքների խախտումներով անցավ, բայց միգուցե մի բան կարողանա փոխել: Ոչ մի բան չփոխվեց: Խոսքը ոչ թե այն մասին է, որ արդյունաբերությունը ոտքի չկանգնեցրին, բոլորս էլ հասկանում ենք, որ երեք-չորս ամսում արդյունաբերությունը ոտքի կանգնեցնել հնարավոր չէ, մենք հիմար չենք, բոլորս էլ հասկանում ենք, բայց մենք քայլեր չենք տեսնում այդ ուղղությամբ:

Խոսեցինք կոնյակի գործարանի վաճառքի մասին, ես լիովին համաձայն եմ նախորդ ասածների հետ, բայց մի կարևոր հարց: Ռ.Քոչարյանը ինչպե՞ս պատասխանեց կոնյակի գործարանի հարցումին, ասաց՝ ձեր գործը չէ, երկու տարի սպասեք, լավ կլինի: Այսինքն՝ ոճ է, իշխանական ոճ՝ դուք տգետներ եք, դուք ով եք, որ մեզ սովորեցնեք, մենք կանենք, հետո կտեսնեք, որ լավ է: է, Լևոնն էլ էր ասում՝ Ղարաբաղը տվեք, երկու տարի հետո ամեն ինչ լավ կլինի: Դե ինքն այսպես ծայրահեղացված չէր ասում, ես ծայրահեղացրի նրա խոսքերը: Այսինքն՝ նույնիսկ մտածելակերպը, ոճն է նույնը մնացել: Երբ մենք անընդհատ խոսում ենք ազատ ընտրություններից, ոմանց թվում է, թե դա ձև է կամ քմահաճույք, կամ Ամերիկայից, Արևմուտքից եկած մի կեղծ գաղափար: Բայց եկեք ինքներս մեզ մի հարց տանք. Խորհրդային Միությունը փլուզվեց: Մարդիկ ասում են, որ Խորհրդային Միությունը փլուզվեց Գորբաչովն էր մեղավոր, տարբեր հանրապետությունների շարժումներն էին մեղավոր, Ամերիկան էր մեղավոր իր հետախուզությամբ: Այդ ասածների մեջ մի փոքր ճշմարտություն կա, բայց Խորհրդային Միությունը փլուզվեց հիմնականում մի պատճառով. մեր հասարակության կառուցվածքը չկարողացավ մրցակցել արևմուտքի երկրների կառուցվածքի հետ: Մենք ունեինք լավագույն գիտնականներ, լավագույն կրթական համակարգ, կիրք ժողովուրդ, գործարաններ ունեինք, ամեն ինչ ունեինք, բայց հասարակության կազմակերպման ձևը հանգեցրեց նրան, որ ԽՍՀՄ-ը կանգնեց փակուղու առջև: Նույն փակուղու առջև կանգնեցին բոլոր սոցիալիստական երկրները: Սկսվեցին ռեֆորմներ: Մի երկրում ռեֆորմներ անում էին խելոք մարդիկ, և երկիրը այդ վիճակից դուրս էր գալիս, մյուսներում ռեֆորմներ անում էին հիմար մարդիկ, և երկիրը կործանվում էր: Բայց սկզբունքը դա է: Այժմ Հայաստանում շատ ավելի վատ համակարգ է, քան Խորհրդային Միությունում էր: Եթե խորհրդային համակարգը չդիմացավ մրցակցությանը, ինչպե՞ս պիտի դիմանա այս համակարգը: Երբ մարդկանց մի խումբ ինչ-որ մեկին պաշտոն է տալիս: Հիմա կգնա Ռ.Քոչարյանը, կասեն. «Ինչու, թող Ռ.Քոչարյանից հետո Վ.Սարգսյանը լինի նախագահ»: Հետո ախպեր-տղերքով կհավաքվեն, կասեն՝ Վ. Սարգսյանը մեր պետության համար շատ ինտելեկտուալ է, բարձրագույն կրթություն ունի, ֆիզկուլտ ինստիտուտն է ավարտել, գնանք Գորիսից Լիսկային բերենք, ինքը մեզ ավելի լավ կնայի: Եվ երկիրը գնալու է այդ ճանապարհով: Իսկ ի՞նչ ենք մենք սպասում այս երկրից, ոնց պետք է փոխվի: Թերթերում անընդհատ ակնարկներ են արվում, ժողովուրդը խոսում է, որ այնտեղ գզվռտոց է՝ մի թևը մյուսի դեմ, եկեք սպասենք մինչև մեկը մյուսին ուտի: Որ ուտի, մե՞զ ինչ: Տեսանք,՝ մի թևը մյուսին կերավ, եկավ իշխանության: Հետո նրանց մի թևը մյուսին կուտի: Դրանից երկրի վիճակը չի փոխվի: Դրա հետ չպետք է հույսեր կապել: Ուղղակի, եթե ներսում գզվռտոց կա (իսկ դա բացարձակապես ինձ չի հետաքրքրում), հակասություններ կան, երկիրը դեռ կարողանում է ազատ շնչել, գոնե քաղաքական հետապնդումներ չկան: Եթե մի թևը մյուսին հաղթի, որն էլ հաղթի, Հայաստանում պետական տեռոր կսկսվի:

Վերջ ի վերջո Ռ.Քոչարյանի անձի մասին չէ խոսքը: Խոսքը համակարգի սկզբունքների մասին է: Մյուս ձևը. ես ուսանողների հետ հանդիպման էի, ասացին՝ պրն Մանուկյան, մի քսան հերոս թող զենքով գնան իշխանությունը վերցնեն, էստեղ էլ կողքից, թե ճիշտ են ասում: Որովհետև դա հեշտ է. ձեզ համար ինչ կա, դուք տանը նստած հեռուստացույցով նայում եք, թե տեսեք՝ 20 հերոս գնացին իշխանությունը վերցրին: Բացի նրանից, որ դա հիմա հնարավոր չէ, պատկերացրեք, որ այդ 20 հերոսը իշխանությունը վերցնեն: Հրեշ են դառնալու այս ժողովրդի համար՝ ասելով, թե «մենք ենք վերցրել այս իշխանությունը, ուրեմն երկիրը մեզ է պատկանում»: Երկիրը կպատկանի ժողովրդին միայն այն դեպքում, եթե ժողովուրդը վերցնի իշխանությունը: Մյուս առաջարկությունը. «Լավ, չես կարողանում հետները լեզու գտնել, գնա համակարգում աշխատիր, հետո ներսից հեղաշրջում կանենք, և ամեն ինչ բնականոն կլինի»: Սա նույնպես պարզունակ մտածողություն է, ըստ որում իմ վերաբերմունքը դրա մասին ասեմ: Երբ ես պաշտպանության նախարար էի և բավական հարգանք ունեի բանակում, միշտ սպաներին ասում էի. «Բանակը երկու բան իրավունք չունի անելու՝ երկրում հեղաշրջում կազմակերպելու և որևէ մեկի հրամանով կրակելու իր ժողովրդի վրա»: Եթե մենք

չպահպանենք այդ երկու սկզբունքները, շատ հեշտ է համոզել ինքներս մեզ, չէ որ մենք ազնիվ ենք, խելոք ենք, գնանք այդ ճանապարհով: Այդ ճանապարհը նույն անդունդն է տանելու: Միայն ժողովրդով դա կարելի է անել, բայց ինչպես, նորից հավաքվենք, գնանք դղյակը շրջապատե՞նք, հիմա դա հնարավոր չէ: Կգա պահը, պետք կլինի, ես ինքս այստեղից կասեմ: Բայց տա Աստված, որ այդպիսի պահ չլինի: Կան ավելի քաղաքակիրթ ձևեր: Այժմ Ազգային ժողովի որոշ պատգամավորներ բարձրացրել են հրաժարականի հարցը: Դժվար թե այս Ազգային ժողովում այդ հարցը լուծվի: Որովհետև ինքներդ գիտեք, թե ինչպիսին է ԱԺ-ը: Բայց եթե մինչև նոր ընտրությունները ԱԺ-ի հարցը լուծված չլինի, ես կոչ եմ անում ժողովրդին ձայն տալ միայն այն կուսակցություններին և այն մարդկանց, ովքեր կպարտավորվեն, որ առաջին օրը մտնելով ԱԺ՝ հայտարարելու են հրաժարական Ռ. Քոչարյանին և նոր ընտրություններ: Դրա շուրջ պետք է համախմբվենք: Ժողովրդի մեծ մասը դեռ չքավոր է, սոված: Մենք դեռ կարողանում էինք ապրել, երբ որ Ռուսաստանից մեր հարյուր հազարավոր հայրենակիցներ փող էին ուղարկում: Ժողովրդի մի մասը կարողանում էր ապրել: Տարբեր գնահատականներով մոտ 200 մլն դոլար տարեկան փող էր մտնում Հայաստան: Մեր բարեկամների օգնությունն է հիմնականում, որ ժողովրդին ապրեցնում է, շատ փոքր մասն է, որ հիմա կարողանում է գործ գտնել, աշխատել: Ռուսաստանում էլ վիճակը դժվարացավ, այդ եկամուտներն էլ են պակասելու, այսինքն՝ Հայաստանի սոցիալական վիճակը շարունակելու է վատանալ: Եվ ես նորից ասում եմ՝ տնտեսական, սոցիալական հարցերից առաջինը իշխանության հարցն է: Ու՞մ է պատկանում իշխանությունը, ժողովրդի՞ն, թե՞ մարդկանց մի խմբի, դա է հարցերի հարցը, այդ հարցը լուծենք՝ մնացած հարցերի լուծման հույս կունենանք, ճանապարհ կբացվի, չլուծենք՝ մնալու ենք այսպես:

Եվ այսպես մտնելու ենք 21-րդ դար: Աշխարհում ամեն օր գիտական նոր հայտնագործություն է կատարվում, ամեն օր մրցակցություն է ֆինանսների ասպարեզում, իրենց մշակույթը ուրիշներին թելադրելու ասպարեզում: Իսկ մենք մի գյուղ ենք դարձել երկրագնդի վրա: Արժանի՞ ենք այսպիսի կյանքի, ընդ որում, մենք տեղում կանգնած չենք, բոլորս արագորեն առաջ են մղվում, մենք հետ ենք գնում: Երբ 1990-ին եկանք իշխանության՝ մեր տնտեսական համակարգով, մեր ապրուստ-կապուստով, դեպի ապագա ուղղված ծրագրերով, համեմատելի էինք միայն 3 մերձբալթյան հանրապետությունների հետ: Մենք էինք: 4 հանրապետություն կար ԽՍՀՄ-ում: Հիմա 3 հանրապետությունները փորձում են օգնել Ռուսաստանին, դեռ մի քիչ էլ անհամեստորեն դե եթե վատ է վիճակը, մենք նրանց օգնենք: Իսկ մենք ասում էինք, լսում էի՝ պետք է ծնկաչոք խնդրենք, որ Ռուսաստանը մեզ մի բան տա: Ծնկաչոք ժողովուրդը երբեք հաջողության չի հասնի: Ես նորից կոչ եմ անում, հույս մի դրեք այս կամ այն մարդու վրա, այս կամ այն կուսակցության վրա, բոլորս միասին, միայն ժողովրդով կարելի է այս իրավիճակը փոխել: Հիմա ընկճված ենք, թուլացած ենք: Ոչինչ, կանցնի 1-2 ամիս, մեկ է, շատ հեշտ է մարդու հոգին վերականգնվում, առջևում բարդ խնդիրներ կան, ու այդ խնդիրները պետք է լուծենք հանուն մեզ, հանուն մեր երեխաների ապագայի:

Վ. Մանուկյանի ելույթը 1998թ.
սեպտեմբերի 25-ի հանրահավաքում
«Այժմ», 1998, 30. 09 – 06. 10

ՄԱՐԴՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Պատմում էր երկրի մասին, պատմում էր 1915թ. ցեղասպանության մասին: Շատ մեծ նշանակություն ունեցավ ինձ և մեր սերնդի համար 1965թ. ապրիլի 24-ը: Բայց իրականում ես քաղաքականությամբ զբաղվելու որոշում ընդունեցի 21 տարեկան հասակում, երբ Մոսկվայում մենք ստեղծեցինք կազմակերպություն, որի առաջին ձեռնարկումը ապրիլի 24-ին Թուրքական դեսպանատան առջև ցույց կազմակերպելն էր: Այդպես առաջացավ մի ընկերություն, մի մտածողություն, որը շարունակվեց տարիներ և ինչ-որ չափով պահպանվեց: Խորհրդային Միությունում քաղաքականությամբ զբաղվելիս (քաղաքականություն բառը երևի այնքան էլ ճիշտ չէ) նախ և առաջ պետք է ունենայիր երազանք, պատկեր, թե դու ինչ ես ուզում քո երկրի, քո ժողովրդի համար, որովհետև խոսքն այն ժամանակ ոչ թե կոմունիստական կուսակցություն մտնելու և ինչ-որ պաշտոնի գնալու մասին էր, այլ, թե ինչ փոփոխություններ

ես ուզում քո երկրի համար, և եթե քո ցանկությունն է անկախությունը, ազգային ժողովրդավարական պետությունը, նշանակում է դու գնում ես դիմադրության: 1965թ. հետո Հայաստանում ստեղծվեցին բազմաթիվ խմբեր, կազմակերպություններ, որոնց մի մասը անլեգալ էր: Ես հիշում եմ կազմակերպություններ, որոնք իրենց պատրաստած մի թերթիկի համար անգամ ձերբակալվում էին: Այդ ժամանակ մենք՝ ես և իմ ընկերները, եկանք այն եզրակացության, որ լրիվ ընդհատակյա գործունեությունը Խորհրդային Միությունում քեզ դնում է այնպիսի սահմանափակումների մեջ, որ ոչինչ անել չես կարող, ավելի բացահայտ է պետք գործել: Եվ մենք գնացինք ավելի լեգալ գործունեության, այսինքն՝ Մոսկվայի համալսարանից հետո, երբ տեղափոխվեցինք Երևանի համալսարան, հայ մշակույթի անվան տակ հիմնեցինք մի կազմակերպություն, որն իր առջև դնում էր և՛ քաղաքական, և՛ քարոզչական խնդիրներ, այսինքն՝ միշտ կարողացել ենք եզրին մնալ: Մարդիկ եղան, որոնք բանտ ընկան:

Ինձ համար այդ ժամանակ շատ կարևոր էր դիսիդենտ չդառնալը, որովհետև դիսիդենտական շարժումը մեկուսացնում է ժողովրդից: Ավելի լավ է՝ ոչ թե 100%-անոց ճշմարտություն ասես, այլ 80%, բայց հնարավորություն ունենաս շփվելու մարդկանց հետ:

Ղարաբաղյան շարժումը սկսեցին այն անձինք, որոնք իրենց առջև լոկալ խնդիրներ էին դնում՝ կապված Ղարաբաղի հարցի հետ: Հարցերի սկզբնական շրջանակը շատ խայտաբղետ էր, բայց հիմնական մոտեցումն այն էր, որ տվյալ պահին հնարավոր է լուծել Ղարաբաղի հարցը: Հետագայում «Ղարաբաղ» կոմիտեն փոփոխվեց: Ոմանք գնացին, ուրիշները եկան, և այն մարդկանց թիվը, որոնք այդպիսի երազանք կամ ձգտում ունեին, կարծես թե մի քիչ ավելացավ: Բայց և այնպես չէի ասի, թե այդ մարդիկ լրիվ պատրաստված էին տվյալ գործունեության համար: Սակայն սխալ կլինի մտածել, որ ինչ-որ տեղ ուրիշ մարդիկ կային, և ինչ-որ մեկը խանգարեց նրանց ասպարեզ դուրս գալ:

1988թ., երբ մարդիկ ասպարեզ էին գալիս, բեմ էին ելնում, մտնում էին «Ղարաբաղ» կոմիտե, ելույթներ էին ունենում, խենթ երազանք կարող էր թվալ, որ նրանք որոշ ժամանակ անց իշխանության կգան: Այն ժամանակ դա նաև վտանգավոր էր, հայտնի չէր, թե ինչ է լինելու, գնդակահարելու՞ են այդ մարդկանց, նստեցնելու՞ են: Եվ նրանք, ովքեր տանը նստած մտածում էին, թե այդ մարդիկ ճիշտ չեն կամ պատժվելու են, հետո սկսեցին ասել, որ իրենք ավելի պատրաստ էին: Պատրաստ էիր՝ այն ժամանակ գայիր: Այն ժամանակ պահանջվող հատկությունները ցուցաբերեցին այն մարդիկ, որոնք բեմ ելան: Ես չեմ կարծում, որ հանգիստ մնալով՝ մի բանի կհասնեինք: Կարծիք կա, թե օբյեկտիվ իրականությունն է տանում ինչ-որ ուղղությամբ, և չպետք է պայքարել դրա դեմ, վաղ թե ուշ լավն էլ կլինի, վատն էլ: Կան ժողովուրդներ, որոնք ուղղակի վերացան այդ սկզբունքին հետևելու պատճառով: Երբ Թուրքական կամ Պարսկական կայսրություններն էին փլուզվում, որոշ ժողովուրդներ նույնիսկ պայքարեցին ու անկախություն ստացան: Հայաստանը չպայքարեց, չստացավ այդ անկախությունը և հետ ընկավ մյուս երկրներից: Ես այն կարծիքին եմ, որ միշտ պետք է լավ գիտակցենք, թե ինչ ուղղությամբ է ընթացքը և երբեմն ռիսկի գնալով՝ կարողանանք ակտիվ գործողություններով ազդել այդ ընթացքի վրա: Ռիսկը այս դեպքում արդարացված է:

Ես շահագրգռված էի, որ Լևոն Տեր-Պետրոսյանը, Բաբկեն Արարքցյանը, Դավիթ Վարդանյանը, Ռաֆայել Ղազարյանը լինեն «Ղարաբաղ» կոմիտեում, որովհետև Հայաստանի ներսում և կենտրոնական մամուլում տպավորություն էր ստեղծվել, թե այստեղ ինչ-որ մորուքավոր մարդիկ են, որոնք առանձնապես գրագետ չեն, կյանքից չբավարարվածությունն է նրանց բերել ասպարեզ: Առաջարկեցի, որ «Ղարաբաղ» կոմիտե մտնեն մարդիկ, որոնք Խորհրդային Միության հասարակությունում արդեն որոշակի դիրք և հնարավորություններ ունեին: Լևոն Տեր-Պետրոսյանը գիտնական էր՝ դոկտորականը պաշտպանած, Մատենադարանում աշխատում էր որպես գիտքարտուղար, Դավիթ Վարդանյանը լավագույն ֆիզիկոսներից էր՝ թեկնածուականը պաշտպանած, Բաբկեն Արարքցյանը ամբիոնի վարիչ էր համալսարանում, մաթեմատիկոս, Ռաֆայել Ղազարյանը՝ նույնպես հաջողությունների հասած: Ես ինքս պաշտպանած դոցենտ էի, աշխատում էի համալսարանում: Այսինքն՝ մտածում էի, որ գոնե ղեկավար մարմնում պետք է հավաքված լինեն հաջողակ մարդիկ, որոնց հիմնական ձգտումը ոչ թե անբավարարվածությունն է, այլ ավելի խոր գաղափարների շուրջ համախմբվելը: Այո, տարածված կարծիք է, և դա երևի ճիշտ է, որ ես «Ղարաբաղ» կոմիտեի գաղափարախոսն եմ եղել, բայց հարկ է նախ հասկանալ, թե դա ինչ է նշանակում: Կոմիտեի որոշումները հիմնականում իմն էին, ես էի համոզում մյուսներին: Երբ բանտից դուրս եկանք, ժողովրդի ընկալումն ու վերաբերմունքն ուրիշ էր՝ մեզ ազգային հերոսների տեղ էին դնում: Եվ դա նոր հիմնախնդիրներ առաջացրեց. եթե մինչև այդ, «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատոր

լինելով, ես հեշտությամբ կարողանում էի համաձայնություն ձեռք բերելով, համոզելով կառավարել կոմիտեն, ապա արդեն դժվար էր կառավարել 11 հոգուց բաղկացած ազգային հերոսների կազմակերպությունը: Եվ ես մի երկու անգամ հրաժարականի հարց առաջադրեցի. հրաժարվում եմ կոորդինատորությունից, թող ընտրություն լինի, նախագահ ընտրեն, ժողովրդին հայտնեն, արդեն նոր ձևեր կան:

Երբ մենք եկանք իշխանության, նոր հարցեր առաջացան: Ես համոզված եմ, թերևս քիչ մեծամիտ հնչի, այն ժամանակ իսկապես շարժման մեջ չկար մի մարդ, որ կարողանար այդ պաշտոնը վարել: Գերագույն խորհրդի նիստերը երևի շատերը կկարողանային վարել, դրանք կարծես հանրահավաքների շարունակությունը լինեին, բայց գործադիր իշխանության ղեկավարից բոլորովին այլ բան էր պահանջվում: Ես իմ գիտելիքներով մասամբ պատրաստ էի այդ աշխատանքին և հստակ պատկերացնում էի, թե ինչ է պետք անել: Շատ բան էլ ուղղակի ընթացքում սովորեցի: Հակասություններ առաջացան առաջին հերթին, իհարկե, կադրային հարցերում: Ես ունեցել եմ և՛ շատ հաջող նշանակումներ, և՛ սխալներ ու թերություններ, անկասկած, բայց մի կարևոր հարց էլ կար: Իշխանության եկած շարժման ներկայացուցիչների կողմից շարունակ ճնշում կար, ասում էին, թե եղած պաշտոնյաներին պետք է հեռացնել, իրենք են հաղթել, իրենք էլ պետք է դառնան իշխանության տերը: Ես դրան կտրականապես դեմ էի, ասում էի, որ պատրաստի մարդիկ մեր շարժման մեջ չկան, թող նրանք ավելի ցածր պաշտոններում լինեն, պատրաստվեն դրան, երբ փոխվում է իշխանությունը, չի կարելի այդպիսի կտրուկ փոփոխություն կատարել, կադրային ջարդ կազմակերպելը շատ սխալ է: Նախկինների մեջ փորձված մարդիկ կային, նրանց մի մասը գուցե ազնիվ չէր, բայց իրավիճակն այնպիսին էր, որ հենց այդ մարդիկ էլ սկսեցին, ինձ թվում է, ավելի ազնիվ աշխատել: Այսինքն՝ հարցն այն էր, թե ում պահել, ումից ազատվել: Եվ դրանից արդեն ծագեցին հակասություններ: «Ղարաբաղ» կոմիտեի այն մասը, ՀՀՇ-ի այն խումբը, որ հետապնդում էր նաև անձնական շահեր, իշխանության տեր դառնալով՝ օգտագործում էր շարժման շատ ազնիվ տղաների՝ գրգռելով նրանց իմ դեմ: Եվ դա խորացնում էր մեր հակասությունները: Ավարտվեց նրանով, որ ես ինձ պարտադրված զգացի հրաժարական տալ և դուրս գալ վարչապետի պաշտոնից: Երբ ծագեց նախագահի պաշտոնի հարցը, և պետք է մեկը ընտրվեր, որոշակի հանգամանքներ հանգեցրին նրան, որ ՀՀՇ-ի մի զգալի մասը սկսեց համախմբվել Լևոն Տեր-Պետրոսյանի շուրջը: Քննարկելու հարց է, թե ինչու: Ես մի կողմ կանգնեցի՝ տեսնելով, որ սկսվել է մի նոր պայքար՝ արդեն ուրիշ գաղափարների համար, ուրիշ շահերի համար: Երբ մարդիկ գալիս են իշխանության, առաջանում են նոր շահեր: Շատերի համար իշխանությունը, իշխանության տված հնարավորությունները քաղցր են: Հեղափոխության ճանապարհով իշխանությունը նվաճելը մեծամտություն է առաջացնում և ձեռք բերածը ամեն գնով պահելու մղում: Դա արդեն հակասում էր այն նպատակներին, հանուն որոնց մենք եկանք իշխանության:

Ես ստանձնեցի պաշտպանության պետնախարարի պաշտոնը, Վազգեն Սարգսյանը պաշտպանության նախարար էր: Հետո մի պահ եղավ, բանակը նոր էր ձևավորվում, Լաչինում դժվար վիճակ ստեղծվեց: Ես խնդրեցի, որ Վ.Սարգսյանը հրավիրի Երկրապահներին, զինված ջոկատներին և համոզի նրանց, որ որպես կամավորական գնան, Լաչինում վտանգավոր վիճակ է ստեղծվել: Ոչ ոք չգնաց: Նորից հավաքվեցինք, ես ու Վ.Սարգսյանը միասին խոսեցինք, դարձյալ չգնացին: Ես Վազգեն Սարգսյանին ասացի՝ եթե արդեն վստահություն չկա քո նկատմամբ, դու պիտի դուրս գաս պաշտպանության նախարարի պաշտոնից: Մենք՝ ես, Վ.Սարգսյանը, Լ.Տեր-Պետրոսյանը, երեքով խոսեցինք. ես առաջարկեցի, որ պաշտպանության նախարար կամ ես պետք է լինեմ, կամ Տեր-Գրիգորյանցը, և ավելի հակված եմ, որ Տեր-Գրիգորյանցը լինի: Վ.Սարգսյանը գտնում էր, որ Տեր-Գրիգորյանցը, կադրավիկ լինելով և չիմանալով իրավիճակը, չհասկանալով երկրապահի և զինված ջոկատների հիմնախնդիրները, չի կարողանա ղեկավարել, մի խոսքով որոշվեց, որ ես պետնախարարի հետ միասին լինեմ նաև պաշտպանության նախարար: Եվ ես վերցրեցի այդ ծանր բեռը ինձ վրա: Լ.Տեր-Պետրոսյանի այդ սկզբնական առաջարկության մեջ, ինձ թվում է, նաև այն միտումը կար, որ միևնույն է, բան չի ստացվի: Նա վստահ էր, որ ռազմական հաղթանակներ հնարավոր չեն, և այդ մասին շատ բացահայտ ԱԺ-ի փակ նիստում ասել էր: Եվ ըստ երևույթին պարտությունների պատասխանատվությունը իմ ուսերին դնելը ինչ-որ իմաստով ձեռնտու էր: Բայց պարզվեց, որ նրա հաշվարկները սխալ էին: Եվ Ղարաբաղի բանակի ղեկավարությունը, և Հայաստանի ժողովուրդը, և Հայաստանում արդեն ձևավորվող բանակը, և զինված ջոկատները այնքան ուժ ունեին, ներքին ուժ, որ շատ ծանր պայմաններում հրաշք տեղի

ունեցավ, Ղարաբաղի և Հայաստանի միացյալ բանակը կարողացավ մեծ հաջողությունների հասնել:

Դուք հաշվի առեք, որ պատերազմը շատ արագ գնդացիր կրակելուց անցավ ավելի բարդ բաների: Միանգամից տանկերի նորոգման կարիք առաջացավ: Մի քանի գործարաններ՝ իրենց ինժեներատեխնիկական ու բանվորական կազմով, լծվեցին այդ գործին:

Հաջորդ հարցը հակաօդային պաշտպանությունն էր, որտեղ արդեն նուրբ էլեկտրոնիկա էր, և ինստիտուտներ կային, որտեղ գիշեր-ցերեկ մեր գիտնականները աշխատում էին այդ համակարգի վերականգնման համար: Բանակը պահանջում է մեր ժողովրդի տեխնոլոգիական և ինտելեկտուալ պոտենցիալը զուգակցել հայրենիքին նվիրված, անձնազոհ երիտասարդներին, մի ամբողջություն կազմել: Դա հաջողվեց: Եվ ես կարծում եմ, որ երբ հաղթանակներ եղան, իմ հեղինակությունը և՛ բանակում էր բարձրացել, և՛ ժողովրդի մեջ: Բացի դրանից, Լ.Տեր-Պետրոսյանը իշխանափոխության մտավախություն ուներ: Եվ երբ Փարիզում իմացա Երկրապահների առաջին համախմբման մասին, մտածեցի՝ երևի չեն հասկանում, որ ես այդպիսի բան չեմ անի: Լ.Տեր-Պետրոսյանի համար երկրապահների միության ստեղծումը ինչ-որ չափով ուղղված էր իմ դեմ:

Ի դեպ, բանակում գրեթե բոլոր ժողովների ընթացքում, երբ հավաքվում էր բարձրագույն սպայակազմը, ես միշտ արծարծել եմ երկու հարց. բանակը որևէ իրավիճակում իրավունք չունի հեղաշրջում անել և իրավունք ունի չենթարկվելու հրամանատարին, եթե հրաման է տրվում բանակն ուղղել ժողովրդի դեմ: Ես կարծում եմ, որ դրանք այն երկու հիմնարար սկզբունքներն են, որոնք անպայման պետք է պահպանի մեր բանակը: Եվ նրանք, ովքեր որ գիտեին իմ դիրքորոշումը, երբեք կասկած չէին կարող ունենալ, որ ռազմական ուժը կարող եմ օգտագործել իշխանության փոփոխության համար: Երբ ձեռքիդ այդպիսի մեծ ուժ է, երբ ժողովուրդն է քեզ վստահել այդ ուժը, միշտ գայթակղություն կարող է առաջանալ. չէ որ երկիրը կործանվում է, ես մտածում եմ երկրի մասին, ուստի պետք է բանակը օգտագործել իշխանությունը փոխելու համար: Դա անխուսափելիորեն ծանր հետևանքների է հանգեցնում, և՛ բանակն է փչանում, և՛ պետությունը: Կրկնեմ՝ բանակը երբեք հեղաշրջում չպետք է կատարի Հայաստանում և բանակն իրավունք ունի չենթարկվել իր գլխավոր հրամանատարին, եթե հրաման է տրվում բանակը ուղղել ժողովրդի դեմ: Բայց այդ սկզբունքների խախտումները մենք արդեն տեսել ենք:

1996թ. ընտրություններից առաջ ներկուսակցական քննարկումների ընթացքում շատերը մատնանշում էին 1995-ից հետո առաջացած հիմնախնդիրը, որ միևնույնն է, ընտրությունները արդար չեն լինելու, ինչ իմաստ ունի մտնել մրցավազքի մեջ: Իմ մոտեցումը քիչ ուրիշ էր, ես ասում էի՝ երկու տարբեր խնդիրներ ունենք, առաջինը ժողովրդի աչքում Լ.Տեր-Պետրոսյանին այլընտրանք ստեղծելն է, մի բան, որ փաստորեն չհաջողվեց Ադրբեջանում և Վրաստանում: Դա շատ նուրբ հարց է: Նոր կայացող անկախ պետությունում հեղափոխությամբ եկած իշխանավորին այլընտրանք ստեղծել: Նախ ժողովրդի կողմնորոշման հարցն է, հետո նոր՝ կեղծիքների: Եվ այդ առումով այն աշխատանքը, որը կատարեցինք ես և մեր կուսակցությունը 1996թ. նախընտրական շրջանում, շատ կարևոր էր: Երբ արդեն մեկ ամիս էր մնում մինչև ընտրությունները, հասկանալի էր, որ ժողովրդի մեջ այդ այլընտրանքի գաղափարը ստեղծվել է, այսինքն՝ ես այդ ժամանակ արդեն մեր սոցիոլոգիական հարցումներով, մեր շփումներով համոզվում էի, որ եթե նորմալ ընտրություն լինի, և ժողովուրդը հավատա ընտրություններին, Լ.Տեր-Պետրոսյանին հնարավոր է հաղթել: Ժողովուրդը իր դեմ տեսնում էր մեծ ուժ՝ իշխանական ամբողջ համակարգը, մյուս կողմից՝ տեսնում էր մի քանի թեկնածու, ինձ առանձնացված էր տեսնում, բայց իբրև մի կուսակցության ղեկավարի: Հղացավ դաշինքի գաղափարը, որը ոչ թե մի հարվածով լուծելու էր ձայների կամ այլընտրանքի ձևավորման հարցը, այլ օգնելու էր ժողովորդին հավատալ, թե ընտրությունով կարելի է ինչ-որ բան փոխել: Եվ ես այն կարծիքին էի, որ ինչքան ուշ կայանա դաշինքը, այնքան լավ, որպեսզի իշխանավորները հանկարծակիի գան: Պետք է ասեմ, որ այդ փուլը բավական բնականոն ընթացավ, ԼՏեր-Պետրոսյանը, իր շրջապատը, Բաբկեն Արարքցյանը, որը շտաբի ղեկավարն էր, այնքան համոզված էին, թե այլընտրանք չկա, ինչքան էլ Լևոնից դժգոհ լինի ժողովուրդը, միևնույնն է, գնալու է Լ.Տեր-Պետրոսյանին ընտրելու, որ ընձեռեցին բոլոր հնարավորությունները, և մենք էլ դրանք օգտագործեցինք: Այսինքն՝ բավական հավասարաչափ տրվում էին հեռուստացույցով հաղորդումները, հնարավորություն կար դահլիճներ վերցնելու, հանրահավաքներ անելու շրջաններում, և կարծում եմ՝ լավ օգտվեցինք այդ ամենից: Չնայած դաշինքում թեկնածությունների վերաբերյալ տարբեր

խոսակցություններ եղան, նույնիսկ ես պատրաստ էի իմ թեկնածությունը հանել, բայց բոլորս էլ հասկանում էինք, որ միակ հնարավորությունը իմ թեկնածության շուրջ համախմբվելն ու առաջ գնալն էր, որն իհարկե ուրիշ բնույթի հիմնախնդիրներ էր առաջացնում, որովհետև այդ համախմբված կուսակցությունների մեջ տարաձայնություններ կային շատ հարցերի վերաբերյալ, և՛ մեր արտաքին քաղաքականության, և՛ ներքին քաղաքականության: Բայց եթե հիշում եք, դաշինքը կազմված էր, այսպես. մենք միասին էինք լինելու 6 ամիս: 6 ամսվա ընթացքում ընդունվելու էր նոր սահմանադրություն, ընտրվելու էր նոր ԱԺ և հայտարարվելու էին ԱԺ-ի նոր ընտրություններ: Եվ այդ նոր ԱԺ-ի ընտրություններում արդեն այն ուժերը, որոնք միասին փոխելու էին իշխանությունը, կարող էին առանձին -առանձին գնալ կամ նոր բլոկներ կազմել, այսինքն՝ միասին գործելու ժամկետը վեց ամիս էր, որից հետո երկիրը գնալու էր նորմալ ուղիով:

Եվ այսպես հանգեցինք երրորդ հիմնախնդրին՝ կեղծիքներին: Իմիջիայլոց, քանի որ իշխանությունները խորապես համոզված էին, որ Լ.Տեր-Պետրոսյանը հաղթելու է, սկզբում շատ ջանքեր չթափեցին կեղծիքների մեքենան գործի դնելու համար և վերջին օրերին, ինչպես ժողովուրդն է ասում, «ափալ-թափալ» գործադրեցին այդ մեքենան, բայց արդեն ուշ էր, արդեն հնարավոր չէր աննկատ կեղծիքներով Տեր-Պետրոսյանին անցկացնել: Եվ տեղի ունեցավ այն, ինչ որ սկզբում էլ սպասելի էր՝ մենք հաղթեցինք: Բայց հաղթանակը սկսեցին վերագրել Լ.Տեր-Պետրոսյանին, թեպետ ժողովուրդը հասկանում էր՝ Տեր-Պետրոսյանը չէր հաղթել: Եվ արդեն հիմնախնդիրն այն էր, թե ինչպես տեր դառնալ ժողովրդի կամքին: Առաջավոր գծի վրա, ուզեի թե չուզեի, ես էի: Լավագույնն այն կլիներ, եթե ամբողջ Հայաստանը՝ հիմնականում Երևանի բնակչությունը, ոտքի կանգներ ու պահանջեր վերանայել արդյունքները, ստուգումներ կատարել և դրանց արդյունքում երկրորդ փուլ հայտարարել: Բայց օրեր տևող հանրահավաքները բերում էին այն եզրակացության, որ ժողովուրդը երկար չի դիմանա, պատրաստ չէ տևական պայքարի: Ժողովրդի մի 10-20 տոկոսը միշտ էլ կողմնակից է ակտիվ գործողությունների: Եթե ակտիվ գործողություններ չկան, նրանք միանգամից հիասթափվում են, ասում են՝ դե լավ, ոչ մի բան չի ստացվի, բայց մի 80 տոկոսն էլ, որքան էլ որ փոփոխություն է ուզում, այս ծանր սոցիալական, վստահության կորստի պայմաններում երկարատև պայքարի մասնակցել չի կարող: Հետևաբար ակնհայտ էր, որ լավագույն, քաղաքական ամենաճիշտ, գրագետ ճանապարհը՝ ժողովրդին ոտքի կանգնեցնելով իշխանությունների վրա ճնշում գործադրելը, զիջումներ հարկադրելը, որևէ արդյունք չի տալու: Այն ակտիվ 20 տոկոսից շատերը մոտենում էին ու ասում, թե ժողովուրդը արդեն քվեն տվել է, պետք է գնալ ուժով իշխանությունը վերցնել: Իմ կարծիքն այն էր, որ ուժով իշխանություն վերցնել չի ստացվի: Թե ինչ ուժեր կային այնտեղ, ինչ հրամանների կենթարկվեին, ինչ անձնական շահեր դեր կխաղային, զգացվում էր: Բայց նույնիսկ հաջողելու դեպքում, արյուն թափելով լինում է մի իշխանություն, որը պատանդ է դառնում իշխանության բարձրանալու ճանապարհին: Ուստի այդ երկրորդ ճանապարհն էլ էի ես մերժում: Ինչ էր մնում անել: Ես մտածում էի, որ իսկապես պետք է ճնշում գործադրել: Մեր պահանջները շատ պարզ էին՝ արկղները բացել և ստուգում կատարել, ըստ որի կամ երկրորդ փուլ կհայտարարվի, կամ մեկնումեկիս՝ իմ կամ Տեր-Պետրոսյանի նախագահ լինելը կասկած չի առաջացնի ժողովորդի մեջ: Եվ մենք գնացինք: Այդ որոշումները հապճեպ, հույզերի կամ պահի ազդեցության տակ չեն կայացվել, մտածված են եղել, բայց իրավիճակն այնպիսին էր, որ որոշումները ես պիտի միայնակ ընդունեի: Ուստի ինձ վրա վերցրեցի պատասխանատվությունը: Իմ հայտարարության մեջ սպառնալիք կար՝ եթե կես ժամ հետո չվերադառնամ, եկեք իմ ետևից: Ես հասկանում էի, որ կարող են միջադեպեր լինել, իշխանությունները օգտվեն դրանցից, բայց կարող է և նրանք հետ կանգնեն, և հնարավոր լինի գնալ բանակցությունների: Հետագա ընթացքը դուք գիտեք արդեն: Կրակոցներից հետո իշխանություններին ասացինք՝ հաջորդ օրը, ժամը 12-ին մենք հրավիրում ենք հանրահավաք: Մտածում էինք՝ եթե իշխանությունները գիշերվա ընթացքում հակադարձ քայլեր չանեն, մյուս օրվա ժամը 12-ի հանրահավաքը արդեն կդառնա այն, ինչը որ ես համարում էի ամենագրագետը: Դա արդեն հնարավորություն կտար անհրաժեշտության դեպքում մի ամիս էլ ժողովուրդը ոտքի կանգնեցնել և խաղաղ միջոցներով պարտադրել իշխանություններին նրա կամքը: Կամ այդ ճանապարհը պետք է լիներ, կամ իշխանությունները պետք է դիմեին կտրուկ քայլերի, այսինքն՝ քայլը տրված էր իշխանություններին: Իշխանությունները տակներով արեցին իրենց քայլը: Հասարակական կարծիքի առումով ես, իհարկե, ինչ-որ չափով կորցրեցի, բայց երբ մտածում էի, որ սա նման է տառանին, երբ պատերազմի ժամանակ մի ինքնաթիռը խփում է մյուս ինքնաթիռին:

Իշխանությունը ստացավ այն վերքը, որից ուշ թե շուտ արյունաքամ էր լինելու: Դա տևեց մեկուկես տարի: Բայց եթե չլուծվեց ժողովրդի կամքով իշխանության գալու հարցը, լուծվեց Լ.Տեր-Պետրոսյանի՝ իշխանության ղեկին չմնալու հարցը: Նրան մոտիկ մարդիկ ասում էին, որ ընկճված էր: Երևի կարելի էր ավելի խաղաղ, մեղմ անել դա: Հիշում եմ՝ ընտրություններից առաջ ես մտածում էի, որ զանգեմ Լ.Տեր-Պետրոսյանին, հանդիպեմ նրա ու իր շրջապատի հետ: Պայմանավորվենք՝ ես հաղթեմ, նա ինձ առաջինը շնորհավորի, 40 օր միասին կառավարենք, նա գնա, ես շարունակեմ, նա հաղթի, առաջին շնորհավարողը ես լինեմ: Երկրի համար շատ կարևոր է, որ ժողովուրդը հասկանա՝ արդար ընտրություններով կամ մնում է իշխանությունը կամ փոխվում է, դրանից հետո ժողովուրդը ինքն իրեն միայն կարող է մեղադրել: Ցավոք սրտի, դա տեղի չունեցավ, հետագայում, երբ ես հարցնում էի Լ.Տեր-Պետրոսյանի շրջապատի մարդկանց, ասում էին, որ նա պատրաստ չէր խոսակցության: Այդ ժամանակ արդեն նա այն վիճակում էր, որ նման խոսակցությունը ոչինչ չէր տա: Համենայն դեպս, Լ.Տեր-Պետրոսյանի հարցը լուծվեց, բայց դա չլուծեց Հայաստանի հիմնախնդիրները, քանի որ համակարգը պահպանվեց, պահպանվեց այն մարդկանց մեծ մասը: Ուղղակի իշխանության ներսում մի թևը տեր դարձավ մյուս թևի հնարավորություններին, ընդամենը: Եվ 1998թ. ընտրությունները մեծ հիասթափություն առաջացրին: Ես կարծում եմ՝ 1998թ. ժողովուրդը շատ մեծ հարված ստացավ, որովհետև մինչ այդ նրան թվում էր, թե Լ.Տեր-Պետրոսյանը կգնա, և դրանից հետո բոլորը ազնիվ կլինեն ընտությունների ժամանակ, ամեն ինչ բնականոն կընթանա: Ժողովուրդը հիմար չէ, հասկանում է, որ միանգամից բոլորը հաց ու պանիր չէին ունենա կամ բոլորը «Մերսեդես» չեն քշի, բայց կսկսվի արդար պետության կառուցում, որտեղ մարդը կարող էր տեսնել իր ապագան, գոնե իր երեխաների ապագան: Բայց ժողովուրդը շատ արագ վերականգնվող մեխանիզմ է, և ես կարծում եմ, որ շատ կարճ ժամանակ անց ժողովուրդը նորից իր առջև հստակ խնդիրներ կդնի, մենք բոլորս միասին կլուծենք նաև այդ հարցերը, քանի այսպես ընտրված իշխանության օրոք Հայաստանին ոչ մի լավ բան չի սպասում:

Ամեն մի շարժում հնարավորություն ունի իր սկզբունքները ստուգելու միայն իշխանության գալով: Իշխանության ղեկին են առաջանում շատ գայթակղություններ, այն խմբերը, որոնք շատ չնչին դեր են ունեցած լինում շարժման մեջ, սկսում են կարևոր դեր խաղալ իշխանության լծակներին տիրապետելու ժամանակ: Այդ ամենը տեղի ունեցավ ՀՀՇ-ում: Ինձ և շատերի համար իշխանությունը ինքնանպատակ չէր: Իհարկե, այն նպատակները, որոնք կապված են մեր պետության, մեր ժողովրդի հետ, ավելի հեշտ է իրականացնել, երբ իշխանության լծակները ձեռքիդ են: Շատ խնդիրներ միայն այդ ճնով կարելի է լուծել, այսինքն՝ ուզես թե չուզես, ոչ միայն գաղափարների քարոզիչ պետք է լինես, այլև պետք է աշխատես այդ լծակներին տիրանալ: Բայց երբ մենք եկանք իշխանության և տեսանք, որ մարդկանց մի խումբ ձգտում է այդ լծակները ամեն գնով իր ձեռքին պահել, երբ սկսեց այլասերումը, մենք դուրս եկանք և ստեղծեցինք նոր կուսակցություն՝ ԱԺՄ, և հետագա տարիների ընթացքում փորձում էինք և շարունակելու ենք իրականացնել այն գաղափարները, որոնք մեզ համախմբել են դեռ տասնյակ տարիներ առաջ: Իհարկե, այդ գաղափարները զարգանում են, բայց կտրուկ չեն փոփոխվում: Նախորդ շրջանում այդ գաղափարները անցկացնելու համար, իհարկե, մենք պայքարի մեջ էինք իշխանությունների դեմ, փաստորեն երկու բևեռ էր ստեղծվել, մի կողմից՝ Լ.Տեր-Պետրոսյանը և իշխանությունները, մյուս կողմից՝ մենք՝ մեր զինակիցներով, մեր դաշնակիցներով: Եթե Հայաստանում իշխանության փոփոխությունը հանգեցներ մի իշխանության, որը ժողովուրդն ընտրած լիներ, ապա մենք հարց կդնեինք համագործակցելու այդ իշխանության հետ, եթե ոչ ամբողջ, ապա գոնե այն ծավալով, որ հնարավորություն է տալիս մեր ծրագրերն իրականացնել, գոնե մի մասը: Բայց ներկա իշխանությունները, օրենքը ոտնահարելով, ժողովրդի կամքը ոտնահարելով, եկան: Այդ իշխանության բնույթը, որ ձևավորվել է նախորդ իշխանության տարիներին, բերում է այն եզրակացության, որ համագործակցելը մեզ ոչինչ չի տալու, հետևաբար ստիպված ենք նորից ընդդիմադիր լինել և պայքարել այս իշխանությունների դեմ: Ես ինքս համոզված եմ, որ Ռ.Քոչարյանը չպետք է լիներ Հայաստանի նախագահ, նա արդար ճևով չի դարձել նախագահ և իրավունք էլ չուներ դնելու իր թեկնածությունը: Օրենքն օրենք է: Եթե դու առաջին օրվանից օրենք ես խախտում, ոչ ժողովրդի վստահություն ունես, ոչ էլ որևէ բան կարող ես անել: Հետևաբար մենք հանգում ենք պայքարը շարունակելու մտքին: Ես չէի ասի, թե պայքարը հաճույք է պատճառում մեզ: Շատ ավելի հաճելի է հանգիստ ապրել, բայց եթե նվիրվել ես որոշ գաղափարների իրականացմանը, պարտավոր ես պայքարել: Ես կարծում եմ՝ այդ

գաղափարները բացառիկ կամ էկզոտիկ գաղափարներ չեն: Դրանք շատ պարզ ու ընդունելի են մեր ժողովրդի համար:

Երբ լրացավ Ռ.Քոչարյանի նախագահ լինելու 100 օրը, մամուլի ասուլիսում նա ասաց տղամարդկության մասին այն հայտնի միտքը, որ ծիծաղի արժանացավ հասարակության մեջ: Ոմանք նույնիսկ բորբոքվեցին, դա համարեցին մի ինքնահավանի անհաջող միտք: Սակայն հասարակության զարգացման համար շատ մեծ նշանակություն ունի այդ գաղափարը: Դարեր շարունակ, երբ հայերը անկախություն չեն ունեցել, յուրաքանչյուր մարդ մտածել է իր ընտանիքը պահելու մասին, բոլոր ձևերով՝ օրինական թե ոչ օրինական, և շահում էին զոռբաները: Առաջացավ զոռբայի կերպարը, որը ամեն ինչ կարող է ջարդուփշուր անել, զոռբայություն անել հանուն իր ընտանիքի: Եվ տղամարդկությունն ու զոռբայությունը մեր հասարակությունում սկսեցին շփոթել: Համեմատեք, **Եվրոպայում առաջացավ ասպետի գաղափարը, Ճապոնիայում՝ սամուրայների, այսինքն՝ այն տղամարդկանց, որոնք բարի են, առաքինի, թույլին պաշտպանող, անձնազոհ: Եվ տղամարդկությունը սահմանող հատուկ կոդեքսներ կային: Կարծում եմ, որ այդ երկրների զարգացման համար այդ գաղափարը շատ մեծ նշանակություն ունեցավ: Հայաստանում մինչև օրս զոռբայությունը համարվում է տղամարդ-կություն, և քանի դեռ մեր հասարակությունը չի ազատվել այդ շփոթից, չի կարող զարգանալ:** Այնուամենայնիվ, տղամարդկությունը վեհություն է, բարությունը, մարդասիրությունը, անձնազոհությունը և նաև խիզախությունը ռազմաճակատում: Ես երկրորդական չեմ համարում տղամարդկության այդ պատկերացումը, բայց պատկերացումներով կյանքը չի փոխվում: Մարդիկ պետք է օրինակով սովորեն: Երբ տեսնում են, որ մարդիկ ամենաբարձր իշխանության են գալիս զոռբայությամբ, խախտումներով, կաշառելով, այսինքն՝ զուտ զոռբայական ձևերով, համոզվում են, որ հաջողության հասնելու ճանապարհը դա է, դա օրինակ է ծառայում ժողովրդին: Եվ ես կարծում եմ՝ վաղ թե ուշ մենք կհաղթենք: Մենք ասելով՝ ես միայն ԱԺՄ-ն նկատի չունեմ: Ժողվուրդը կապավինի այդ սկզբունքներին, որ ապրի մի պետությունում, որտեղ կա արդարություն, որտեղ մարդը ազատ է և հպարտ, որտեղ ազգային արժեքները պահպանվում են: Այդպիսի պետություն վաղ թե ուշ լինելու է: Եվ ես համոզված եմ՝ շուտով:

ԱԺՄ նախագահ Վ.Մանուկյանի հեռուստաելույթը
«Մարդու ժամանակը» հաղորդաշարով,
1998թ., դեկտեմբերի 23

ԱՌԱՆՑ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱԿՈՍԻՑ ՀԱՆԵԼ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ

Մամուլին հետևելով՝ ես տեսնում եմ, որ գրեթե ամեն ինչի մասին բաց գրվում է: Այնուամենայնիվ անհրաժեշտություն է առաջանում հանդիպել ձեզ հետ և զրուցել: Շուտով լրանում է 1 տարին, ինչ հեռացավ Լ.Տեր-Պետրոսյանը, և երևի ժամանակն է արդեն, որ տեսնենք, թե ինչ տվեց մեզ այս մեկ տարին:

Նախորդ ժամանակաշրջանում՝ պայքարի ժամանակ, մենք միշտ հայտարարում էինք, և ես ինքս էլ բազմիցս ասել եմ, որ մեր պետությունը գտնվում է ակոսում, և եթե մենք դուրս չգանք ակոսից, ապա վերջը վատ է լինելու: Ես կարող եմ այժմ ասել միայն, որ մենք այդ ակոսից դուրս չեկանք, նույն արագությամբ սայլը ճռճռալով այդ ակոսով գնում է դեպի անդունդ: Եվ սրա շարունակությունը բերելու է նրան, որ մենք դառնալու ենք մշակութային ռեզերվացիա աշխարհի այս մասում:

Շարունակվում է չբացահայտված սպանությունների, անհասկանալի ինքնասպանությունների շարանը, բոլոր նրանք, ովքեր հնարավորություն ունեն,

Հայաստանից հեռանում են, աստիճանաբար զրկվում ենք մեր անտառներից, Սևանը գրեթե ճահճի է վերածվում, նույն զոռբայության մտածելակերպն է քաղաքական ու տնտեսական գործունեության մեջ: Եվ այդ հենքի վրա պայքար է մղվում տարբեր կուսակցությունների միջև, տարբեր տեսակետների քննարկում, քննադատություն:

Մոտենում են 1999 թվականի ընտրությունները: Անկախ նրանից, թե որ կուսակցությունը ում հետ դաշինք կկապի, իրավիճակը նույնն է լինելու: Մենք ընտրությունների միջոցով այս ակոսից դուրս չենք գալու: Մամուլին հետևելով՝ ես տեսնում եմ, որ շարունակ ենթադրություններ են արվում, թե ով ում հետ կգնա ընտրություններին, և այդ կարծեցյալ դաշինքների մեջ զարմանալի կերպով երևում է իշխանության այս կամ այն թևի հետ միասին մեկ ուրիշի դեմ գնալու միտումը:

Միակ փոփոխությունը, որ տեղի ունեցավ Հայաստանում այս մեկ տարվա ընթացքում, այն է, որ եթե նախկինում կար նախագահ Լ.Տեր-Պետրոսյան, և մնացած բոլոր կառույցները նրա ենթակայության տակ էին գտնվում, վիճաբանության ժամանակ կար մի մարդ, որը տիրապետում էր իրավիճակին, ապա այժմ այդ իրավիճակին տիրապետող էլ չկա: Բացահայտ երևում է երկու թև. մեկը Ռոբերտ Քոչարյանի թևն է, մյուսը՝ Վազգեն Սարգսյանի: Եվ անկախ նրանից, թե նրանք միասին ինչ կասեն, միասին խաշ կուտեն, թե ընկերություն կանեն, պարզորոշ երևում է շահերի բախումը: Դա հանգեցնում է նրան, որ քաղաքական ասպարեզում հնարավոր է դառնում մի քիչ ազատ շնչել, բայց նրանցից մեկնումեկի հաղթանակի դեպքում շատ ավելի ծանր վիճակի մեջ կընկնենք, քան նախորդ ժամանակաշրջանում:

Չարաշահումներն արվում են շատ պարզ ձևերով: Մի մասն ասում է՝ երկու թև են, իրար հետ կռվում են, եկեք միանանք Վազգեն Սարգսյանին, որպեսզի ղարաբաղցիները իշխանությունը չվերցնեն Հայաստանում, մի մասն էլ ասում է՝ եկեք Ռոբերտ Քոչարյանի շուրջը համախմբվենք, որովհետև նա ամուր հենարան չունի, իսկական հենարան ունեցողն ու չարիքը Վազգեն Սարգսյանն է: Ես կարծում եմ, որ թե՛ մեկ, թե՛ մյուս ճանապարհը որևէ արդյունքի Հայաստանում բերել չեն կարող: Այդ ճանապարհով մենք մնալու ենք նույն ակոսի մեջ: Ցավալի է, որ առաջացել է այդ հարցը՝ հայաստանցի-ղարաբաղցի: Առաջին անգամ դա ասպարեզ բերեց Լ.Տեր-Պետրոսյանն իր հայտնի ելույթում, երբ թևերը քշտեց ու սկսեց բացատրել, թե մենք վատ վիճակում ենք, որովհետև Ղարաբաղի հարց կա, ժողովրդին տրամադրեց դրա դեմ: Դրանից հետո մեկ-երկու անգամ էլ այդպիսի արտահայտություններ արեց: Հիշենք նաև, թե ինչպես 1993 թվականին Սերժ Սարգսյանը, Ղարաբաղի պաշտպանության նախարար լինելով, մատ թափ տվեց հայաստանցիների վրա (այդ ժամանակ ցույցեր էին տեղի ունենում Երևանում): Նույնը կատարվեց 1996թ. 25-ի դեպքերից հետո, երբ Ղարաբաղի ղեկավարությունը փորձեց գնահատական տալ, թե որ դեպքում է Ղարաբաղի համար ճիշտը: Բայց Ռոբերտ Քոչարյանի նախագահ լինելը, ինչպես և ի սկզբանե ենթադրվում էր, սրեց հակասությունները:

Այդ հակասությունների մասին քաղաքական ասպարեզում բացահայտ չեն ասում, դրանք կենցաղային մակարդակում են, սակայն այդ հիմնահարցի հաշվարկումով շատ հարցեր կարելի է հասկանալ քաղաքական ասպարեզում:

Վերադառնալով ընտրություններին՝ ասեմ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ բլոկներ կձևավորվեն, որ կուսակցությունը ինչքան ձայն կունենա, դրանք Հայաստանի համար փրկություն լինել չեն կարող: Փրկությունը մեկն է՝ ժողովուրդը պետք է հաղթի մինչև ընտրությունները: Ընտրությունները պետք է վավերացնեն արդեն ստացված արդյունքները: Կհաջողվի՞, ժողովրդին ոտքի հանելով, փոխել քաղաքական իրավիճակը, թե ոչ, ցույց կտա ժամանակը, բայց առանց ժողովրդի՝ Հայաստանն ակոսից հանել հնարավոր չէ: Այդ մեկը բացահայտ է:

Ժողովրդի դժգոհությունը նույնն է, եթե ոչ ավելի, քան 1996թ., երբ նա համախմբված էր: Հարցը լուծվելու է ժողովրդով: Այդ կոչերը՝ կայունություն, նշանակում է մնալ այդ նույն ակոսի մեջ և սելը ճռճռալով տանել դեպի անդունդի եզրը:

Մենք պետք է խորապես գիտակցենք, որ խոսքը ոչ թե այս կամ այն կուսակցության, այս կամ այն քաղաքական գործչի շահի մասին է, այլ բոլորիս: Բոլորս հայ ենք, Հայաստանի քաղաքացիներ ենք, և այժմ լուծվում է Հայաստանի ապագայի հարցը: Կրկնում եմ, մանր խորամանկություններով, բանսարկություններով, պաշտոններով, բլոկներ կազմելով՝ փոքր քայլերով Հայաստանի վիճակը փոխել հնարավոր չէ: Կտրուկ փոփոխություն է պետք, և

կտրուկ փոփոխությունը կարող է իրականացնել միայն և միայն ժողովուրդը: Ուժ կգտնի՞ փոխելու, մենք կկարողանա՞նք ժողովրդին համախմբել, Հայաստանի իրավիճակը կփոխվի: Չի ստացվի, շարունակվելու է այս նույն ճանապարհը, որի վերջը ոչ մի լավ բան չի խոստանում:

Սա է հիմնական եզրակացությունը, որը, կարծում եմ, վատ եզրակացություն չէ: Ուզում եմ հավատաք, որ դա կուսակցական եզրակացություն չէ, անձնական չէ: Դա իսկապես այն անհանգստությունն է, որը բոլորիս է:

Ինչ վերաբերում է կոնկրետ քայլերին, ասենք, Արմենտելին, այս վերջին վաճառքներին՝ հացամթերքների, կոնյակի գործարանի, մենք կխոսենք, սակայն ասեմ՝ ստեղծված է մի մեքենա Հայաստանում, որ այդպիսի հիմնախնդիրներ շարունակ առաջանալու են: Մի հիմնախնդիրը ավարտվելու է, սկսվելու է մյուսը: Դա անվերջ շարան է:

Արտաքին քաղաքականության մասին ես միտումնավոր չեմ խոսում, որովհետև դա ամենահեշտ գործն է, մարդիկ նստած ինչ-որ գեոպոլիտիկ դատողություններ են անում: Արտաքին քաղաքականությունում կան ինչ-ինչ վրիպումներ, կան քայլեր, որոնք կարելի է դրական գնահատել, բայց կարևոր է հասկանալ՝ ճիշտ է, մեզ նման երկրի համար արտաքին քաղաքականությունը շատ մեծ նշանակություն ունի, սակայն արտաքին քաղաքականությունը ներքինի շարունակությունն է: Խոսեք Հայ դատի մասին, Ղարաբաղի մասին, հարցը լուծվում է հետևյալ կերպ. ինչ ժողովուրդ, ինչ պետություն է կանգնած այդ հարցերի հետևում: Գեղեցիկ նախադասություններ Հայ դատի, Ղարաբաղի մասին միշտ կարելի է ասել, դրանից իրավիճակը չի փոխվում:

Հատվածներ Վ. Մանուկյանի մամուլի ասուլիսից 1999թ. հունվար

ԱԺՄ-ն ԲԱՑԱՌՈՒՄ Է ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

...Ամեն մի ժողովրդի մեջ հինգ տոկոսը անձնազոհ մարդիկ են, ովքեր միշտ նվիրված են ժողովրդին, իրենց գաղափարներին: Այդպիսի մարդիկ միշտ հայտնվում են ռազմաճակատում, կամավոր են գնում հետախուզության, առաջինն են պայքարի ելնում հանուն ազգային խնդիրների ու գաղափարների իրականացման:

Մյուս հինգ տոկոսը ամենալկտի, կեղտոտ մարդիկ են, որ ցանկացած պայմաններում միայն իրենց անձնական շահն են հետապնդում:

Ժողովրդի 90 տոկոսը ազնիվ, նորմալ մարդիկ են: Եվ երբ անձնազոհների հինգ տոկոսն է վերևում լինում, 90 տոկոսին էլ անձնազոհություն ու ազնվություն է սովորեցնում: Եթե վատ հինգ տոկոսն է բարձրանում, ամբողջ ժողովուրդը վերից վար սկսում է փչանալ:

Հայաստանում պատահակա՞ն էր, թե՞ մեր բախտը չբերեց, այն հինգ տոկոսը բարձրացավ վեր ու մնաց վերևում:

...Կուսակցությունների հետ մենք կարող ենք պայմանավորվել ազատ ընտրությունների շուրջ: Բայց ինչ պետք է պայմանավորվենք իշխանության հետ: Եթե ընտրությունները քիչ թե շատ նորմալ լինեն, ապա միայն և միայն ժողովրդի և կուսակցությունների համախմբվածությամբ իշխանավոր օղակների դեմ, երկրապահը կամ Վազգեն Սարգսյանը չպետք է կարգուկանոն պահպանեն Հայաստանում: Դրա համար կան իրավապահ մարմիններ, թող իրենց գործն անեն:

...Բանակցելու ենք տարբեր կուսակցությունների հետ: Եկեք, միացեք մեզ: Այս պայքարը 1-2 օրում չի լուծվի: Բայց այն ավարտվելուց հետո ոչ թե ձգտենք, որ պատահական մի մարդ գա, ասենք՝ ինչքան գեղեցիկ մարդ է, թող ինքը դառնա Հայաստանի թագավոր, այլ համախմբվենք, տեսնենք՝ ինչ ենք ուզում: Եթե միասնական, նույն գաղափարների շուրջը համախմբված չլինենք, մեր պայքարից ուղղակի օգտվելու են պատահական «հերոսները»: Այս անգամ մենք միասին ենք հաղթելու:

Հատվածներ Վ.Մանուկյանի՝ 1999թ.
փետրվարի 26-ի հանրահավաքի ելույթից
Վահան Վարդանյան
«Հայոց Աշխարհ», 27 փետրվարի 1999թ.

ԱՌԱՆՑ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎԻ

-Ինչպե՞ս եք վերաբերվում այն պնդմանը, որ Հյուսիսային Կովկասում ստեղծված ներկայիս վիճակը մեծապես կնպաստի Մեծ Կովկասի նկարագրի ձևավորմանը և հարավային Կովկասում շատ հարցեր կպարզվեն Հյուսիսային Կովկասում ծավալվող գործողությունների ավարտից հետո:

– Ներկա դրությամբ Կովկասում վճռվում է Ռուսաստանի ունեցած ազդեցության հարցը տարածաշրջանում: Ռուսաստանի ազդեցության պահպանումը կախված է Հյուսիսային Կովկասում ստեղծված իրադրության կարգավորումից: Այդ հարցերի լուծումը մեծապես կազդի Հարավային Կովկասի 3 հանրապետությունների քաղաքական և տնտեսական վիճակի վրա: Մյուս կողմից՝ չէի ասի, թե Հյուսիսային և Հարավային Կովկասում ժողովուրդները միասնական պատմամշակութային ամբողջություն են կազմում, երբ մեկի որոշումը էապես ազդում է մյուսի դիրքորոշման վրա: Ո՛չ, Կովկասը բավականին խայտաբղետ է: Անդրկովկասի բոլոր երեք հանրապետություններն էլ այնքան ծանր ու դժվարին ուղի են անցել և այնքան բարդ պատմություն ունեն, որ հազիվ թե ներքաշվեն այդ ռազմական գործողությունների մեջ:

-Ինչո՞վ կբացատրեք վերջերս մեծացող դիվանագիտական ուշադրությունը մեր տարածաշրջանի հանդեպ:

– Ռուսաստանի ազդեցության պահպանման խնդիրը Կովկասում չափազանց կարևոր հիմնախնդիր է, որը ներկա պահին գտնվում է միջազգային դիվանագիտության ուշադրության կենտրոնում: Այդ առումով Կովկասում խիստ հրատապ են դառնում կայունության հետ կապված հարցերը: Մյուս կողմից՝ ինչպես հայտնի է, որ մեր տարածաշրջանի գլխավոր խնդիրներից է կասպիական նավթը և գազն է: Բացի դրանից, Կովկասում ստեղծված իրավիճակի հետ են կապված նաև Իրանի հարաբերությունները Արևմուտքի հետ, և այն փոփոխությունները, որ տարբեր երկրներ ակնկալում են Իրանի վարած քաղաքականությունից: Մեկ այլ տեսակետ էլ գոյություն ունի՝ թերևս ավելի շուտ փիլիսոփայական. մարդկության ցանկությունն է ոտք դնել երրորդ հազարամյակ՝ որպես խաղաղության և զարգացման ոսկեդար՝ հետևում թողնելով բոլոր տարաձայնությունները:

-Ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ներկա փուլը: ԵԱՀԿ-ի գործող նախագահ Կնուտ Վոլլեբեկը վերջերս կատարած այցի ժամանակ հայտարարեց, որ ինչ-որ մի փուլում Ղարաբաղը պետք է միանա բանակցություններին: Կարելի՞ է արդյոք դա գնահատել որպես առաջընթաց բանակցության գործընթացում:

– Հակամարտության կարգավորման այս վերջին տարիների փորձը ցույց տվեց, որ առանց Ղարաբաղի մասնակցության ղարաբաղյան խնդիրը չի կարող լուծվել, առավել ևս, որ շատ հաճախ հաշվի չեն առնվում 1991թ. դեկտեմբերի Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեի արդյունքները: Տարիների փորձը ցույց տվեց, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի ձեռքին խաղալիք չէ: Նա ինքնուրույն է: Եվ եթե սկզբում որոշ միջազգային քաղաքական շրջաններ դա ընկալում էին որպես խաղ, ապա վերջին տարիների գործընթացները ցույց տվեցին, որ այն իրականություն է, և եթե այդ հանգամանքի հետ հաշվի չնստես, ապա հակամարտության կարգավորումը պարզապես անհնար կդառնա: Բացի դրանից, ըստ միջազգային փորձի, եթե որևէ մեկը հանդես է գալիս որպես հակամարտության ինքնուրույն կողմ, ապա առանց նրա մասնակցության չի կարող հարցը լուծվել: Այս երկու փաստարկները հանգեցրին բանակցության գործընթացին Լեռնային Ղարաբաղի մասնակցության հարցի առավել լուրջ քննարկմանը: Եվ քանի որ, իմ կարծիքով, հարցի միակ լուծումը ԼՂՀ մասնակցությունն է բանակցություններին, և միջազգային կազմակերպությունները էլ համաձայն են այդ մտքին, ուստի պետք է հավաստել, որ մի քայլ առաջ է արվել:

-Մեր հասարակության բոլոր խավերը առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջիկա ընտրություններին: Սեպտեմբերի 28-ին մամուլում հրապարակվել է Կաթողիկոսության Աթոռի հավակնորդների հայտարարությունը, որում անհանգստություն էր հայտնվում պետության բռնած դիրքից: Այդ առթիվ, դուք ինչպե՞ս կմեկնաբանեք 132-րդ Կաթողիկոսի ընտրությունների նախօրեին ստեղծված իրավիճակը:

- Սա շատ նուրբ հարց է. եկեղեցին շատ մեծ նշանակություն է ունի մեր ժողովրդի համար, որովհետև բացի կրոնից՝ դարերի ընթացքում, երբ Հայաստանը զրկված է եղել պետականությունից, ինչ-որ առումով նա է իր վրա վերցրել պետության գործառույթը, եղել հայության առաջնորդը: Արտերկրի հայկական գաղութներում, չնայած ավանդական կուսակցությունների և տարբեր կառույցների բազմազանությանը, այնուամենայնիվ, միավորող առանցքը այս կամ այն տեսքով եղել է եկեղեցին: Կաթողիկոսական ընտրությունները միայն եկեղեցու խնդիրը չէ: Դա հայկական ազգային ամենակարևոր ինստիտուտներից մեկի առաջնորդի ընտրություններն են, և այդ հարցին հարկավոր է շատ զգույշ վերաբերվել: Նախորդ անգամ՝ 1995 թվականին, մենք ականատես եղանք կաթողիկոսական ընտրություններում պետության կոպիտ միջամտությանը: Հարկավոր է ամեն ինչ անել, որ նման միջամտությունը բացառվի, և ընտրվի այնպիսի հովվապետ, որ լրջորեն գիտակցում է եկեղեցու առջև ծառացած խնդիրները: Ուստի եկեղեցու առաջնորդ պետք է այն մարդը ընտրվի, որը ոչ միայն չի գայթակղվի իր անսահմանափակ իշխանության անվերահսկելիությունից, այլ կկարողանա եկեղեցին ծառայեցնել ժողովրդին, ինչպես եղել է անցյալում: Կարծում եմ՝ եկեղեցին կկարողանա ճիշտ ընտրություն կատարել: Իշխանությունները, ինչպես և հայության բոլոր մյուս հատվածները, իրենց կարծիքն արտահայտելու իրավունք ունեն, սակայն իշխանական լծակների օգտագործումը վատ հետևանքներ կունենա մեր եկեղեցու համար:

Վ. Մանուկյանի հետ հարցազրույցը
վարեց Ս. Պետրոսյանը
«Գոլոս Արմենիի», 1999, 12 հոկտեմբերի

ՊԱՀՊԱՆԵՆՔ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

...Ես հենց առաջին օրը ենթադրեցի, որ դրա հետևում ուժ չկա կանգնած: Հետագայում, ծանոթանալով սոցիոլոգիական հարցումներին, ես հասկացա, որ իմ կարծիքը չի համապատասխանում հասարակության կարծիքին: Տարբեր տեսակետներ հայտնվեցին հանցագործների հետևում կանգնած ուժերի մասին, սակայն ես մնում եմ իմ կարծիքին, քանի դեռ հետաքննությունը չի ապացուցել հակառակը:

Եթե նույնիսկ որոշ կասկածներ ունենայի, իրավունք չունեի դրանք արտահայտելու, որովհետև դա ուղղակի ճաքեր է առաջացնում հասարակության մեջ, ուրիշ ոչինչ:

Մեկը չի սիրում դաշնակցությանը, հարձակվում է նրա վրա, մյուսը չի սիրում ղարաբաղյան ինչ-ինչ ուժերի, հարձակվում է նրանց վրա, և այդպես շարունակ: Դրանով ճեղքերը մեծանում են....

...Երեկ գլխավոր դատախազը մտավ Ազգային ժողով և պահանջեց Մուշեղ Մովսիսյանի ձերբակալությունը: Ես չգիտեմ՝ նա մեղսակից եղե՞լ է, թե՞ ոչ, բայց որ կազմակերպիչ չէր կարող լինել, ինձ համար ակնհայտ է: Եվ դատախազության ներկայացրած փաստաթուղթն ինձ ավելի շատ մտահոգեց, քան պարզություն մտցրեց: Փաստաթղթում երկու շատ տարօրինակ նախադասություն կար՝ Մուշեղ Մովսիսյանը երաշխավորել է, որ նրանց ոչինչ չի լինի: Մուշեղ Մովսիսյանն իր կրթական մակարդակով, քաղաքական շրջաններում իր ներկայությամբ էապես ավելի ցածր է, քան ահաբեկիչների խմբի ղեկավար Նաիրի Հունանյանը: Ինչպե՞ս կարող էր այդ մարդը երաշխիք տալ:

Երկրորդ նախադասությունը՝ ահաբեկիչները սպասում էին որոշ ուժերի գալուն: Ի՞նչ ուժեր կարող էին գալ: 1996 թվականը ցույց է տվել, որ եթե հարյուր հազարավոր մարդիկ էլ հավաքվեն, բանակը 5 րոպեում կգրավի քաղաքը: Այսինքն՝ որևէ ուժ չկա, որ կարողանա հակադրվել բանակին: Իսկ ենթադրել, թե բանակում կային ուժեր, որոնց ձեռնտու էր սա, և նրանք էլ ծրագրել են, արդեն անհեթեթություն կլինի.....

Հայաստանում վերջին տարիներին քաղաքական պայքարը հետին պլան էր մղվել. այսպիսի ծանր սոցիալական վիճակում, երբ ժողովրդի 80-90 տոկոսը սոված է, երբ մի քանի մարդիկ կարողանում են տեր դառնալ ամբողջ պետական, ազգային ունեցվածքին, միշտ էլ նման երևույթներ են առաջանում: Գաղտնիք չէ, որ տարիների ընթացքում տարբեր խմբերի կողմից նման խոսակցությունները եղել են, մեկը կարող էր դա օգտագործել, մյուսը՝ ոչ… Վերևում հայտնվել են մարդիկ՝ և՛ երկրի նախագահը, և՛ գործադիր իշխանության ղեկավարությունը, որոնք ոչ մի կերպ ժողովրդի համակրանքը չեն շահել: Իրական կայունություն կարող է լինել միայն ժողովրդի միջոցով, իսկ ժողովուրդը քաղաքական կյանքին կարող է մասնակցել միայն ընտրությունների միջոցով: Ի՞նչ հերթականությամբ՝ ԱԺ-ի, նախագահի՞, ի՞նչ օրենքներ պետք է փոխել, պե՞տք է սահմանադրությունը փոխել, հետո անցնել ընտրությունների, թե՞… Բոլոր կուսակցությունները պետք է իրար հետ նստեն, խոսեն…

…Բանակը կապված էր ներկա քաղաքական համակարգի հետ, բանակի ղեկավարությունը՝ Վազգեն Սարգսյանի հետ, և բնական է զգացմունքային ու կասկածամտության այն մթնոլորտը, որ տիրում էր բանակում այդ գիշեր: Բայց բանակը հետագայում քաղաքական դաշտը պետք է զիջեր քաղաքական ուժերին: Իսկ եթե ինչ-ինչ պահանջներ էլ ուներ, ապա դրանք պետք է կարողանար ներկայացնել ԱԺ մեծամասնության միջոցով, որտեղ բավական մեծ ազդեցություն ունի:

Ավելին, նշելով, որ բանակը 1996 թվականից մտել է ներքին քաղաքականության մեջ, Վ.Մանուկյանը հայտարարեց.

…Մեր երկրի համար կործանարար կլինի, եթե բանակը զորեղ գործոն դառնա քաղաքական դաշտում: Մեր քաղաքական ղեկավարությունը այդ մարդկանց օգտագործեց քաղաքական իշխանությունը պահելու համար, հենվեց ոչ թե ժողովրդի, այլ բանակի վրա… …Ամեն մարդ պետք է որոշի՝ կամ բանակում լինի, կամ բիզնեսում, կամ քաղաքականության մեջ: Դրանք իրար խառնել չի կարելի…

…Առաջին երկու օրը քաղաքական գործիչներս շատ մտահոգված էինք: Որքան էլ դժգոհ էինք Հայաստանում ստեղծված վիճակից, որքան էլ ցնցող էր դեպքը, որ տեղի ունեցավ հոկտեմբերի 27-ին, ամենավտանգավորը քաոսն էր, որ կարող էր առաջանալ դրա հետևանքով: Լավն է, թե վատը եղած քաղաքական դաշտը, ուրախալի է, որ որևէ կուսակցություն չփորձեց իրավիճակից օգտվել: Պետք է ամեն ինչ անել, որ գոնե ժամանակավոր կայունություն պահպանվի….

…Այն կայունությունը, որ ակնկալում ենք այժմ և ձգտում ենք անպայման հասնել դրան, կարկատան է լինելու, իրավական կայունություն չի լինելու: Բայց շատ վտանգավոր է, եթե այս պահին լուծումներ չգտնվեն, Ռոբերտ Քոչարյանը կամ Արամ Սարգսյանը հրաժարական տան: Դա կկործանի մեր երկիր՝ էլ ավելի անկայուն վիճակ ստեղծելով: Ամեն ինչ պետք է անենք, որ նպաստենք համաձայնությանը, և այդ առումով մեծ դեր ունի «Միասնություն» խմբակցությունը՝ որպես ԱԺ մեծամասնություն:

Ինչ վերաբերում է Արամ Սարգսյանին վարչապետ նշանակելու հարցին, ԱԺՄ ղեկավարի կարծիքով, այդ նշանակումը ճիշտ չէր.

-…Այն փաստը, որ նա ժառանգաբար է եկել իշխանության, այսինքն՝ Վազգեն Սարգսյանի եղբայրը լինելու շնորհիվ, նրան խոցելի է դարձնում, նա չի ընկալվում ժողովրդի կողմից և ծանր վիճակում է հայտնվում: Նրա վրա պատասխանատվություն է դրվում, և այն հուզական վերաբերմունքը, քանի որ Վազգեն Սարգսյանի եղբայրն է, նրա աշխատանքին ավելի շատ խանգարելու է, քան օգնելու…

Հատվածներ «Մամուլի ազգային ակումբում»,
«Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում
Վ.Մանուկյանի հանդիպումից 1999թ., նոյեմբերի 11

ԱՇԽԱՐՀԸ ԲԱՑ Է ՄԵԶ ՀԱՄԱՐ

Հարգելի՛ գործընկերներ, հարգելի՛ հյուրեր, այսօր և՛ դեմքերն են հարազատ՝ տարիներ շարունակ միասին ճանապարհ ենք անցել, և՛ Կինոյի տան դահլիճը: Այս դահլիճում էր, որ 1988թ.՝ Ղարաբաղյան շարժման հենց սկզբին կազմակերպեցինք առաջին հավաքը, ծնունդ առավ Ղարաբաղյան շարժումը: Այս դահլիճում ենք անցկացրել մեր կուսակցության շատ համագումարներ: Այս դահլիճից էր, որ 1996 թվականին մենք, Դաշնակցությունը, ԱԻՄ-ը, ՍԻՄ-ը, Դեմոկրատական կուսակցությունը միասին դուրս եկանք ու հաղթեցինք: Ճիշտ է մեր դեմ տանկեր քշեցին, բայց, միևնույն է, հաղթանակը տվեց այն արդյունքը, որին սպասում էր ժողովուրդը:

Այս տարի լրացավ մեր անկախության 10-ամյակը, նաև՝ մեր կուսակցության 10-ամյակը: Կուսակցությունը ձևավորվեց 1991 թվականին, մենք դուրս եկանք շարժումից, ստեղծեցինք մեր կուսակցությունը, բայց մեր անդամները շատ կարևոր մասնակցություն են ունեցել շարժմանը: Այժմ փորձում են վարկաբեկել շարժումը, նրան վերագրել չեղած բաներ: Այնինչ հարկ է ընդունել, որ շարժումը հայ ժողովրդի հարյուրամյակների պատմության ամենաճշանակալի էջերից է, որը նոր ճանապարհ բաց արեց նրա համար: Այն հայ ժողովրդի՝ մինչ այդ արգելված ու զսպված ազգային իղձերի պոռթկումն էր, և ի տարբերություն XX դարասկզբի, երբ ցանկացած պոռթկում մարվում էր թափած արյունով, որովհետև անմիջապես հանգեցնում էր հայ-թուրք հարաբերությունների, շարժումը ցույց տվեց, որ մեր ժողովուրդը գիտակից է: Շարժումը ապագա պատերազմից սպասվող արհավիրքների դեմ ջոկատներ ստեղծեց, միևնույն ժամանակ զերծ պահեց մեր ժողովրդին, և չիրականացավ այն սցենարը, որ թելադրվել էր Սումգայիթով: Շարժման ընթացքում առաջադրվեցին նոր արժեքներ. Արցախի հարցին գումարվեցին անկախության, ժողովրդավարության, մյուս երկրների հետ համաչափ քայլելու հարցերը: Շարժման շնորհիվ ձևավորվեց մեր ազգային ռոմանտիկ պատկերացումների իրատեսական դառնալու գիտակցումը: Գուցե արտաքուստ դա չէր երևում, բայց կար այն ըմբռնումը, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում Հայաստանում, Խորհրդային Միությունում, աշխարհում, ինչպես կարելի է այդ գործընթացներում առաջ տանել ազգային հարցերը և լուծել:

ԱԺՄ-ի ապագա անդամները շատ մեծ դեր էին կատարում և՛ այդ ժամանակ, և՛ 1990-91թթ., երբ շարժումը եկավ իշխանության: Ինչ էլ որ հիմա ասեն, այդ քաոսային, ծանր վիճակում էլ հիշյալ տարիները մեր ժողովրդի համար լի էին սպասելիքներով: Իշխանությունն անձնավորված չէր, ինչպես հետագայում Լևոն Տեր-Պետրոսյանի կամ Ռոբերտ Քոչարյանի նախագահության օրոք եղավ, միասնական իշխանություն էր Հայաստանում: Կար ժողովրդի կողմից իսկապես ընտրված Գերագույն խորհուրդ, և նրա վերահսկողության տակ գտնվող կառավարություն: Սխալներ, անշուշտ, թերևս անփորձությունից շատ էին լինում, բայց ժողովուրդը համախմբված էր իշխանության շուրջ: Եվ ԱԺՄ-ի անդամների դերը դարձյալ մեծ էր: ԱԺՄ-ի 10-ամյակի օրերին դեռ շատ կխոսենք, բայց հարկ եմ համարում այժմ մի քանի խոսք ասել մեր կուսակցության մասին:

Շուշիի փայլուն հաղթանակից, Լաչինը վերցնելուց հետո ռազմաճակատում ծանր պարտություններ կրեցինք: Մեծ կորուստներ ունեցանք: Այդ ժամանակ ԱԺՄ-ն ձևավորված էր, և նա էր առաջին դաշինքի նախաձեռնողներից մեկը, եթե ոչ հիմնական, որ այդպիսով փորձում էր դեմ կանգնել պարտություններին: Մենք միշտ էլ գերադասել ենք դաշինքը, մանավանդ այն ժամանակ, երբ մեր կուսակցությունը բաղկացած էր 10-15 հոգուց և միայն դաշինքով կարող էր հարց լուծել: Իմ համոզմամբ դաշինքի գործունեությունը այս կամ այն չափով ազդեց նաև պատերազմի ընթացքի վրա, կադրային փոփոխություններ տեղի ունեցան, նոր մոտեցումներ դրսևորվեցին: Եվ հիմնական խնդիրը, ի դեպ, միայն բանակ ձևավորելը չէր: Իշխանությունների մեջ արդեն նկատվում էր այն հիվանդությունը, որը խորացավ և՛ Լևոն Տեր-Պետրոսյանի, և՛ Ռոբերտ Քոչարյանի իշխանության օրոք. խորանում ու խորանում էր անվստահությունը ժողովրդի նկատմամբ, կարծում էին, թե ժողովուրդը ոչինչ չի կարող անել: Խուսափում էին ժողովրդի պոտենցիալը օգտագործելուց, քանի որ վախ կար, թե ինչքան ժողովուրդը սթափ լինի, ինչքան ոգևորված ու համախմբված լինի, այնքան մեծ վտանգներ կարող են առաջանալ իշխանության համար: Բայց 1988 թվականի ոգևորությունը, 1988 թվականի ալիքն էր, որ համախմբեց մեր տղաներին, դրա շնորհիվ էր, որ կարողացանք հաղթել ծանր պատերազմում: Ցանկացած ժողովուրդ այս հաղթանակը դրոշ կդարձներ, իր ապագայի ուղենիշ: Մեզանում դա տեղի չունեցավ, ընդհակառակը, արհեստականորեն մարեցրին ամբողջ ոգևորությունը: Երբեմն-երբեմն թերթերում ակնարկներ են երևում, թե արտաքին օգնություններով կամ, չգիտեմ, Ռուսաստանի օգնությամբ հաղթեցինք: Մյուս հանրապետությունները մեզ հետ բարեկամ են եղել, Ռուսաստանը մեզ համար շատ կարևոր դաշնակից է, բայց մե՛նք ենք հաղթել: Մեր ժողովուրդն է հաղթել: Եվ այդ հպարտությունը մերն

է, հաղթանակը մեր հազարավոր տղաների զոհողության գնով է եղել: ԱԺՄ-ն դեր ունեցել է, մյուս կուսակցությունները՝ երկրապահները, Դաշնակցությունը և այլք, դեր ունեցել են, բայց եթե չլիներ պետական մեքենան, հաղթանակ պատերազմում չէր լինի: Աշխատում էր ամբողջ պետական մեքենան: Ոչ մի կուսակցություն, ոչ մի խումբ չի կարող հաղթել պատերազմում: Պատերազմում հաղթում է պետությունը: Մեր պետությունը կարողացավ հաղթանակել: Եվ եթե այսօր փորձում ենք գնահատել մեր ունեցած արժեքները, ապա անվերապահորեն ամենամեծ արժեքները անկախությունն ու հաղթանակն են. հաղթանակը, որ շատ անգամ մոռացության է տրվում:

Երբ ժողովուրդը ոտքի էր ելել և փորձում էր փոխել իշխանությունը, ԱԺՄ-ն դարձյալ կանգնած էր առաջին շարքերում և մյուս համախոհ կազմակերպությունների հետ գնաց մինչև վերջ: Փաստորեն ԱԺՄ-ն միշտ առաջավոր դիրքերում է եղել, միշտ կարևոր դեր է կատարել մեր ժողովրդի համար, միշտ գաղափարակիր կուսակցություն է եղել:

Մենք նույնիսկ 1996 թվականից հետո չէ, որ խնդիրներ ունեցանք: 1996 թվականին հարցը հենց այնպես էլ դրված էր, որ մենք կհաղթենք, բայց համոզված էինք՝ մեր դեմ բիրտ ուժ գործադրվելու դեպքում, արյուն թափելով իշխանություն վերցնելը, եթե նույնիսկ դա հնարավոր լինի, ոչ մի արդյունք և ոչ մի օգուտ մեր պետությանը չի բերի: Երբեմն մեղադրանքներ են հնչում, թե ինչու մինչև վերջ չգնացիք: Մինչև վերջ գնալ կնշանակեր գնալ արյունահեղության, գնալ պետության կործանման: Արյունով պետություն չեն կառուցում: Արյուն պետք է թափել արտաքին թշնամիների հետ կռվելիս, և ոչ միմյանց հետ:

Մեր կուսակցության մեջ խոր հիասթափություն առաջացրին 1998թ. նախագահական ընտրությունները: Անկեղծ ասած, երևի ամենաքիչ հիասթափությունը ես ապրեցի, որովհետև անակնկալի չեկա: 1998թ-ի իշխանափոխությունն, իհարկե, պայմանավորված էր 1996թ-ի մեր հաղթանակով, Դաշինքի հաղթանակով, բայց 1998թ-ին, երբ Կարեն Դեմիրճյանը դրեց իր թեկնածությունը, Ռոբերտ Քոչարյանը՝ իրենը, խաղի կանոններն ակնհայտ դարձան, հասկանալի էր, թե ընտրողների որ մասը պետք է Կարեն Դեմիրճյանին կողմ քվեարկի, որ մասը՝ Քոչարյանին: Հայտնի էին նաև քվեարկության մեխանիզմները, այնպես որ արդյունքը ապշեցուցիչ կամ անսպասելի չէր: Սակայն կուսակցության շատ անդամների համար այն, ողբերգություն չասեմ, շատ ծանր փորձություն էր: Մանավանդ այն մարդկանց համար, ովքեր ապրում էին ոչ թե գաղափարներով, այլ իշխանություն կամ հակաիշխանություն մտայնությամբ, սև ու սպիտակի պատկերացումներով: Այնպես որ ես մեր կուսակցության համար կորցրած ժամանակահատված եմ համարում 1998 թվականի ընտրություններից մինչև 1999 թվականի հատվածը: Քանի որ, ըստ իս, մեզ լավագույն ժամանակ էր ընձեռված: Հենց այս դահլիճում էր, երբ երկու փուլերի միջև հավաքվել էինք և պիտի որոշեինք՝ ու՞մ կողմը լինենք՝ Կարեն Դեմիրճյանի՞, թե՞ Ռոբերտ Քոչարյանի: Եվ կուսակցությունը որոշեց ազատություն տալ իր անդամներին, որպեսզի յուրաքանչյուրը քվեարկի և մասնակցի ընտրություններին այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Այդ ժամանակ էլ առաջարկվեց ստեղծել ազգային ժողովրդավարական շարժում, որովհետև արդեն շատ ուժեր կային, որ համախմբված նույն գաղափարի շուրջը՝ կարող էին տեր լինել պետությանը: Տեր լինելու համար պարտադիր չէ շատ բարձր պաշտոն ունենալ, տեր լինել նշանակում է զանգվածային, մեծ քաղաքական ուժ լինել, որը թելադրում է և՛ իշխանությունների, և՛ ժողովրդի կեցվածքը, ինչ անել և ինչպես: Ես կորցրած ժամանակ եմ համարում, որովհետև դա չարեցինք: Այդ ալիքի վրա պետք էր միավորվել Կարեն Դեմիրճյանի և ՀԺԿ-ի հետ, մեծամասնություն դառնալ Ազգային ժողովում: Երկար բանակցություններ ընթացան, բայց արդյունքը եղավ այն, որ միավորվեցին Կարեն Դեմիրճյանը և Վազգեն Սարգսյանը, նրանք դարձան Ազգային ժողովի մեծամասնությունը: Անկախ նրանից մենք գոհ էինք դրանից, թե ոչ, անկախ նրանից, թե ինչպես անցան 1998թ-ի և 1999թ-ի ընտրությունները, այդ ժամանակաշրջանը և՛ ես, և՛ մեր կուսակցության անդամները համարում էինք խոստումնալից:

Շատ կարևոր իրավիճակ էր. երեքն էին՝ Ռոբերտ Քոչարյան, Կարեն Դեմիրճյան, Վազգեն Սարգսյան. երեքի միասին լինելը հակակշիռ էր ստեղծում, նրանք խիստ տարբեր էին, բայց պետությունն այդ ժամանակ այս կամ այն ձևով հավասարակշռված վիճակում էր: Մի ինչ-որ ուժի ձեռքում չէր: Եվ այդ ժամանակ մեր շփումներն ու բանակցությունները Հայաստանի ապագայի, այս կամ այն տնտեսական, արտաքին քաղաքականության հարցի շուրջ միշտ փոխըմբռնումով էին ընթանում, մի իրավիճակ էր, երբ հնարավոր էր հարցեր քննարկել ու լուծել: Արտաքուստ միգուցե դա չէր երևում, բայց ես կարծում եմ, որ այդ իրավիճակը զարգացում ուներ:

Հոկտեմբերի 27-ը փշրեց նաև դա: Եթե ուշադրություն եք դարձրել, հոկտեմբերի 27-ի մասին մենք բավական քիչ ենք խոսում: Սա չի նշանակում, որ չենք հասկանում, թե ինչ տեղի ունեցավ, կամ ինչ հետևանքներ դա կունենա մեր պետության համար: Բայց ցանկալի չէ մտնել այն խոսակցությունների մեջ, թե այդ 5-ի հետևը կայի՞ն կանգնած, թե՞ չկային: Երկու վարկածն էլ կյանքի իրավունք ունեն, մեկի կամ մյուսի պնդումը ինչ-որ իմաստով ճնշում է նշանակում: Իհարկե, դա պետք է պարզել, բայց պետության համար շատ ավելի կարևոր է հասկանալ, թե ինչ փոխվեց պետության մեջ, կարելի՞ է կարգավորել վիճակը:

Այն ժամանակ մենք հանդես եկանք Ազգային ժողովում հանձնաժողով ստեղծելու առաջարկով, բայց ինձ շատ մանրամասն բացատրեցին, թե ինչու Ազգային ժողովում այդպիսի հանձնաժողով ստեղծել չի կարելի, այնինչ շատ ավելի ուշ, այնուամենայնիվ, հանձնաժողով ստեղծվեց: Չեմ հասկանում, թե ինչն էր խանգարում այն ժամանակ «վստահում ենք Ջհանգիրյանին» ասելու փոխարեն ստեղծել հանձնաժողով և գնալ քաղաքակիրթ, բնականոն քննարկումների: Այլ լուծումներ էլ կային: Առաջին սրացումն իսկապես մի վտանգավոր իրավիճակ էր ստեղծել, և ԱԺՄ-ն, ինչքան որ իրենից կախված էր, չսրեց իրավիճակը, փորձեց հանդարտեցնել: Շատ չէ, բայց ինչ-որ չափով կախված էր նաև ԱԺՄ-ից, և մենք քիչ թե շատ հավասարակշռված վիճակ պահեցինք: Միաժամանակ առաջարկում էինք, որ և՛ նախագահը, և՛ վարչապետը, և՛ քաղաքական ուժերը, և՛ Ազգային ժողովը հավաքվեն ու նոր Սահմանդրություն ընդունեն, արտահերթ նախագահական և Ազգային ժողովի ընտրություններ անցկացնեն, բայց դա կատարվի ոչ թե իրար դեմ կռվելով, այլ որպես ընդհանուր մի քայլ պետության ապագայի համար: Ցավոք սրտի, դա չկատարվեց:

Տնտեսությունը եթե քանդվում է, միշտ էլ կարելի է շատ արագ վերականգնել, բայց ծանր է, երբ կորչում է մարդկանց հավատն իրենց երկրի ապագայի նկատմամբ, երբ կորչում է հավատը սեփական ժողովրդի, սեփական անձի նկատմամբ: Մենք հիմա ապրում ենք մի երկրում, որտեղ և՛ քաղաքական գործիչները, և՛ իշխանությունները, և՛ ժողովուրդը կորցրել են հավատը երկրի ապագայի նկատմամբ, կորցրել ենք հավատը մեր նկատմամբ: Եվ այս պայմաններում կուսակցությունների միջև կատարվող վերադասավորումները բացարձակապես որևիցե հարց չեն լուծում, դրանցից ո՛չ վստահությունն է մեծանում, ո՛չ հավատը, և ո՛չ էլ գաղափարներն են ավելի հստակվում, նույն խաղն է մնում, և այն մարդիկ, որոնք հիասթափված են արդեն, չեն հավատում ժողովրդի ապագային, բնական է, որ պիտի փորձեն պղտոր ջրի մեջ ձուկ բռնել: Ուրիշ բան չի մնում: Բայց հարց է ծագում՝ այն մարդիկ, որոնք կորցրել են վստահությունը, հավատը իրենց ժողովրդի ապագայի նկատմամբ, ինչու՞ են զբաղվում քաղաքականությամբ, թող դուրս գան, մի կրպակ բացեն, գարեջուր վաճառեն, շատ ավելի պատվաբեր գործ է:

Ամբողջ քաղաքական դաշտում, բոլոր կուսակցություններում, այդ թվում նաև մեր կուսակցությունում առկա էր այդ հիասթափությունը: Իբր այս ժողովուրդը այնքան էլ (տգետ բառը չեմ ուզում օգտագործել) հասուն չէ: Ես դա լսել եմ և՛ առաջին նախագահից, և՛ երկրորդ նախագահից, այսինքն՝ ի՞նչ է ասվում. այս ժողովուրդը չի հասկանում, թե ինչքան կարևոր է մեզ համար անկախությունը, եթե դնենք Ռուս-Բելառուս միության հարցը, կարող է գնալ դրա հետևից, և այլն: Այսինքն՝ եթե մենք փորձենք ժողովրդի քվեով պետության հարցերը լուծել, չի ստացվի, մենք ընտրյալներ ենք, և ինքներս պետք է որոշենք, թե ինչն է ճիշտ: Հետևաբար ժողովրդի քվեն մեզ՝ պետք չէ, ժողովրդի քվեն նրա ձեռքից խլել կամ գնել, որովհետև մենք ենք ավելի խելոք, մենք ենք որոշողը:

Ասեմ, որ այս տարիների ընթացքում մենք մի բան հստակ տեսանք. նորմալ, կարգին իշխանություն չունեցանք, բայց ունեցանք մի ժողովուրդ, որն այս ծանր պայմաններում և՛ հաղթանակ տարավ, և՛ կարողացավ տնտեսությունը այս կամ այն ձևով իր ձեռքին պահել ու ինչ-որ չափով զարգացնել: Այն ամեն դրականը, ինչ որ ունենք հիմա մեր պետության մեջ, ժողովրդի շնորհիվ է, որի մասին անընդհատ խոսվում է: Խոսում են և՛ իշխանությունները, և՛ ընդդիմությունը:

Առհասարակ որևէ խնդիր չի դրվում: Իշխանավորների հետ խոսում ես, ասում են՝ սերնդափոխություն պետք է լինի, այս սերունդը հին կյանքին է սովորել, այս նոր բաները դեռ չի ընկալում: Այդ նույն սերունդը դուրս է գալիս Հայաստանից, գնում է Արևմտյան Եվրոպայի տարբեր երկրներ և շատ հեշտությամբ (մի զգալի մասը) կյանք է մտնում, բարգավաճում է, լավ էլ կարողանում է իր ապրուստը ստեղծել: Այսինքն՝ եթե սերնդափոխության հարց ես դնում,

նշանակում է, որ որպես իշխանավոր պետք է նստես ձեռքերդ ծալած, սպասես, մինչև սերունդը փոխվի, հարցերն ինքնըստինքյան լուծվեն:

Կարելի է խոսել կաշառակերության մասին, կլանների մասին, անօրինականությունների մասին, որոնք եղել են ու կան, բայց եթե մի ժամանակ վրդովեցնում էին, հիմա դարձել են սովորական: Սելը նույն ակոսի մեջ է, բայց վտանգավորն այն է, որ և՛ իշխանությունները, և՛ քաղաքական ուժերը, և՛ ժողովուրդը կորցրել են հավատն իրենք իրենց նկատմամբ, իրենց ապագայի նկատմամբ: Վտանգավորն այն է, որ մենք՝ որպես ժողովուրդ, մեր առջև որևէ խնդիր չենք դնում: Որ մեր երկիրը պետք է լինի հզոր, բարգավաճող, ինքնին հասկանալի է, բայց թե ի՞նչ գործընթացներ են աշխարհում, ի՞նչ է տեղի ունենում, մենք ի՞նչ տեղ պետք է զբաղեցնենք:

Մեր կուսակցության համար անգնահատելի արժեք է անկախությունը: Այն ժամանակ, երբ շատ ու շատ քաղաքական գործիչներ ասում էին, թե ճիշտ է, երազում են անկախության մասին, բայց դա հնարավոր չէ, մենք պնդում էինք, որ հնարավոր է, գնում էինք այդ ճանապարհով: Եվ երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, մենք հենց այնպես՝ նստած տեղը չստացանք անկախությունը, արդեն պատրաստ էինք, և հետագա ընթացքը ցույց տվեց, թե որքան մեծ նշանակություն ունի պատրաստ լինելը:

Ներկայիս՝ XXI դարասկզբի անկախության գաղափարը նույնը չէ, ինչ որ նախորդինը: Հիմա այնպիսի անկախություն չկա, որ կար նախորդում: Ներկայիս մեծ թվով միջազգային պայմանավորվածությունները պետությունների հարաբերություններն են կարգավորում, ինչպես և պետությունների ներքին կյանքը: Այսինքն՝ այժմյան պետություններն այնքան անկախ չեն, ինչքան, ասենք, սրանից 100 տարի առաջ էին: Շատ ավելի մեծ պարտավորություններ կան: Մի հզոր հոսանք է այժմ աշխարհում, այսպես ասած գլոբալիզացիայի գործընթացը, և վիճել՝ ընդունել, թե չընդունել գլոբալիզացիան, ուղղակի անիմաստ է: Ուզենք, թե չուզենք, այդ հոսանքը կա, այդ հոսանքին չենք կարող դիմադրել, այդ հոսանքի մեջ պետք է լինենք: Հարց է՝ ինչ օգուտ է տալիս այդ գլոբալիզացիան մեզ և ինչ վնաս, ինչպես անենք, որ չվնասվենք և առավելագույնս օգտվենք դրանից: Հիմա աշխարհում երկու ներհակ գործընթացներ են ընթանում, մի կողմից՝ մարդկանց, ազգերի, պետությունների փոշիացում, պետական սահմանները ինչ-որ չափով դառնում են երկրորդական, ամեն մարդ կարծես համաշխարհային համակարգի մեջ է ապրում, որտեղ կարող են կորչել ազգային մշակույթը, ազգային նպատակները և այլն, և այլն: Բայց դրա հետ միասին գլոբալիզացիան և այլ գործընթացներ մի ուրիշ իրողության էլ են հանգեցնում. ստեղծվում են խմբեր: Եվ աշխարհում հիմա պայքարը խումբ-խումբ է ընթանում: Խմբերը միայն պետություններ չեն, տարբեր միջազգային կազմակերպություններ են, տարբեր ֆիրմաներ, աշխարհով մեկ սփռված տարբեր ազգեր: Եվ որպեսզի կարողանանք, չվնասվելով այդ գործընթացից, օգտվել, առաջինը պետք է լուծենք մեր պահպանության հարցը՝ հոգևոր արժեքների, մշակույթի զարգացման, ավանդույթների հարատևման, հայրենասիրության և ազգային դաստիարակության: Ամբողջ աշխարհի հայությունը՝ ինչպես մի թիմ, պիտի համախմբվի: Սփյուռքը կազմակերպելու այն հին ձևերը, որ կիրառում էին ավանդական կուսակցությունները կամ Լևոն Տեր-Պետրոսյանը (Սփյուռքի մի մասը համախմբել պետության շուրջը, լինեն հովանավորներ, որոնք փող ներդնեն Հայաստանում), արդեն սնանկ են, դրանցից օգուտ չկա, նորոգել է պետք այդ ձևերը: Կրկնեմ՝ համընդհանուր գործընթաց է աշխարհում: Կարծում եմ, որ այն լավագույն հնարավորություններ կարող է ընձեռել մեզ: Եթե նկատի առնենք մեր ազգային հատկանիշները, ապա այդ հոսանքում անտարակույս մեզ կզգանք ինչպես ձուկը ջրում: Աշխարհը բաց է մեզ համար: Իսկ մենք փոխանակ թիմ դառնանք, խրվել ենք գյուղական, խուժանական, մանր գզվռտուքի, գումարներ աշխատելու մրցավազքի, փոխադարձ մեղադրանքների մեջ: Հիմա այս պետությունում հիմնախնդիրը ոչ այնքան արդարության կորուստն է՝ մի կտոր հացը մեկմեկուց փախցնելը, այլ հայ ժողովրդի ապագան, որ ոչնչացվում է այս ճանապարհով: Ոչ ոք այսպիսի խնդիրներ չի դնում: Ոչ ոք այդ ուղղությամբ աշխատանք չի տանում:

Մենք մյուս կուսակցությունների հետ համատեղ կոնֆերանսների, տարբեր ստրատեգիական հետազոտությունների կենտրոնների միջոցով փորձելու ենք մշակել այդ ծրագրերը: Մեր ժողովուրդն աշխարհի առաջավոր ուժերից մեկը դառնալու և շատ բան շահելու աննախադեպ հնարավորություն է ստացել: Եվ, իրոք, կշահենք՝ շատ բան տալով մարդկությանը ու միաժամանակ վերցնելով մարդկությունից: Այսօր գզվռտոցով, այսպես

կառուցված պետությունով կորցնում ենք այդ հիանալի հնարավորությունը: Այս տեսակետից էլ հենց պարզ է դառնում, թե ինչու ենք կողմ պառլամենտական և ոչ թե նախագահական կառուցվածքին: Եթե դու ուզում ես թիմ կազմել, թիմով առաջ գնալ, ապա պառլամենտականը շատ ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծում, քան մի առաջնորդ ունենալը: Բախտդ կարող է բերել, եթե առաջնորդը լավը լինի, բայց քանի՞ անգամ բախտ փորձենք: Ավելի լավ չէ՞ բախտը փորձելու փոխարեն գործունակ մեխանիզմ ստեղծել:

Նույնպես և Արցախի հարցը: Մենք Արցախի հարցում հիմա զիջումներ չենք տեսնում: Արյունով վերցված հողեր են, գուցե հետագայում զիջումների հարց առաջանա, բայց հիմա այդ զիջումը ոչինչ չի տալիս մեզ: Խնդիրը պետք է դրվի շատ ավելի մեծ ծրագրի մեջ, մեծ տարածաշրջանի ապագայի մեջ, լինեն Ռուսաստանը, Հարավային Կովկասի երեք հանրապետությունները, Պարսկաստանը, Թուրքիան, միգուցե արաբական երկրները: Այդ մեծ տարածաշրջանի ապագայի ըմբռնման մեջ կարող է տեղավորվել Ղարաբաղի հարցը, երբ լուծված լինեն ամբողջ տարածաշրջանի անվտանգության, տնտեսական զարգացման, հաղորդակցման հարցերը: Միայն այդ շրջանակում կարելի է տեսնել՝ ով ում ինչը զիջելով՝ կարող է ընդհանուր տարածաշրջանի զարգացմանը նպաստել: Այս պայմաններում խոսել Ղարաբաղի հարցի ինչ-որ զիջումների մասին, թե որպեսզի պատերազմ չանեն… Եթե կարողանան, միշտ էլ կանեն, զիջես, թե չզիջես: Դա հարցի լուծում չէ:

Տնտեսության առնչությամբ ԱԺՄ-ի տեսակետն ու սկզբունքները մնում են նույնը: Կողմնակից ենք ազատ մրցակցության միջոցով տնտեսության զարգացմանը, ազատ մրցակցությանը: Բայց ազատ մրցակցությամբ տնտեսությունն ինքնիրեն չի ստեղծվում: Առանց պետության միջամտության գուցե հավի, ձվի արտադրությունը առաջ գնա, կամ կոշիկի արտադրությունը, բայց ավելի լուրջ գործեր ձեռնարկել, թիմային մեծ պայքարում հաղթել հնարավոր չէ: Եվ երկրորդ՝ եթե ազգ թիմ ես հանդես գալիս, չես կարող ընդունել, որ ուժեղը հաղթի, թույլը սովից մահանա, այսինքն՝ ժողովրդի սոցիալական պաշտպանության որոշակի հարցեր պետք է դնել: Սա նույնպես քննարկելու հարց է: Երբ որ ասում եմ՝ տնտեսությունը 15 կամ 9,9 տոկոսով աճեց, այդ թվերը բացարձակապես ոչինչ չեն ասում: Իհարկե, կարող եմ ասել, թե զրոյի վրա է աճել, այդ պատճառով էլ չի զգացվում: Բայց եթե պետությունը տարիների ընթացքում 10 տոկոսանոց աճ է ունենում, նոր երևույթներ են առաջանում, բյուջեն է լցվում, ինֆլյացիոն գործընթացներ են առաջանում: Այդ տվյալները չկան, տա Աստված, որ 10 տոկոսի աճ լինի, բայց չկա: Ի՞նչ է արվել, որ 10 տոկոսով աճ լինի: Ի՞նչ խնդիր է դրել կառավարությունը մեր ժողովրդի առջև, իր առջև, թե մենք 10 կամ 20 տարում հասնում ենք այս արդյունքին:

Վերջերս հրավիրել էին Չինաստան: Ցույց տվեցին իրենց առաջընթացը: Ուղղակի ապշեցուցիչ էր: 30-40 տարվա նախագիծ ունեն և քայլ առ քայլ կատարում են: Մենք նույնպես պետք է զարգացման նախագծեր ունենանք, որոնք քաղաքական ուժերով պայմանավորված չլինեն, ոչ թե 5 տարին մեկ քաղաքական ուժը փոխվի և հրամցնի իր տնտեսական ծրագիրը: Պետք է տնտեսական ընդհանուր մի ծրագիր ընդունենք, ցուցանիշներ նախանշենք, որոնց ձգտենք կատարել առաջիկա 10, 20, 30 տարում: Լավ կլիներ, եթե մի քաղաքական ուժ լիներ, որը կարողանար ժողովրդի ազնիվ քվեով 20-30-40 տարի իշխանություն ունենար: Սա դժվար է, ուստի բոլոր քաղաքական ուժերը միասին այդպիսի մի ծրագրի շուրջը պետք է համախմբվեն, որպեսզի կուսակցությունների տարբերությունները նրբերանգների մեջ լինեն, ոչ թե կտրուկ փոփոխությունների: Ասենք, ուզում ես էլեկտրոնիկան զարգացնել, պետական ծրագիր ես ընդունում, որի առաջին 5 տարում ներդրում ես անում, բայց եթե հետագայում փոխվի ծրագիրը, ոչինչ էլ չի ստացվի: Հետևաբար մեր կուսակցությունը մյուս կուսակցությունների հետ համատեղ նախաձեռնելու է նաև այդպիսի երկարաժամկետ ծրագրերի մշակումն ու ծավալելու է դրանց իրականացման գործունեությունը:

Մեզ երբեմն հարց են տալիս՝ դուք ընդդիմադի՞ր եք, թե՞ոչ: Նույնիսկ այն ժամանակ, երբ մենք 6 հոգի ունեինք Ազգային ժողովում և կառավարությունում էլ անդամ ունեինք, իշխանություն չէինք, ընդդիմություն էինք: Ուր մնաց հիմա, երբ Ազգային ժողովում 1 հոգի է, կառավարությունում՝ ոչ ոք, և սկզբունքային տեսակետից էլ շատ բաների դեմ ենք: Իհա՛րկե ընդդիմություն ենք: Բայց մենք այն ընդդիմությունն ենք, որը ոչ թե ուզում է հանրահավաքներով իշխանություն փոխել, իմպիչմենտ անել, այլ իր շուրջը հավաքել կողմնակիցների, մարդկանց, որոնք իր նման են մտածում, որպեսզի քաղաքական դաշտում ոչ թե ֆիզիկական ընդդիմության պայքար լինի, այլ ծրագրերի, գաղափարների պայքար: Եվ

մենք ամեն ինչ կանենք, որպեսզի մեր շուրջը հավաքենք շատերին, ամեն ինչ կանենք, որպեսզի ԱԺՄ-ն նորից դառնա այն ուժը, որը եղել է մինչև հիմա: Եվ միշտ հակված կլինենք մյուս կուսակցությունների հետ համագործակցության, բայց ցանկացած դաշինք արվելու է որոշակի հարցերի շուրջը:

Կգան 2003թ. ընտրությունները: Կնստենք կմտածենք, թե որ կուսակցության հետ դաշինք կազմենք, որ հարցի շուրջ: Բայց մի բան այսօր իսկ ուզում եմ ասել. եթե անցնի նախագահական սահմանադրությունը, շատ կարևոր ու էական է, որ, ով էլ լինի նախագահը, նա և Ազգային ժողովի մեծամասնությունը նույն ուժը չլինի, դա կործանարար կլինի մեր պետության համար: Ռոբերտ Քոչարյանի, Վազգեն Սարգսյանի ու Կարեն Դեմիրճյանի կազմած ուժը, որը մեծամասնություն ուներ, շատ դրական դեր էր խաղում պետության համար: Ամեն մեկի մասին (Վազգեն Սարգսյանի, Կարեն Դեմիրճյանի, Ռոբերտ Քոչարյանի) կարող ես և՛ դրականն ասել, և՛ բացասականը, բայց մեխանիզմը գործում էր: Ուստի 2003 թվականի ընտրությունների մասին վաղ է խոսել, բայց մենք ամեն ինչ անելու ենք, որպեսզի եթե ինչ-որ մեկը դառնա նախագահ, նրան հակակշռող, հակադիր-բարեկամական (եթե այդպիսի արտահայտություն կարելի է օգտագործել) ընդդիմադիր մի ուժ Ազգային ժողովը վերցնի իր ձեռքը: Միայն այդ դեպքում կարող է այս պետությունը զարգանալ: Բայց ավելի լավ կլիներ, իհարկե, պառլամենտական կառուցվածքը: Ես հասկանում եմ, որ հազիվ թե դա իրականանա, հետևաբար պետք է պատրաստ լինել նաև մյուս սցենարներին:

Ես պետք է խոսեմ նաև այն մասին, թե ինչ տեղի ունեցավ մեր նախորդ համագումարից մինչև այս համագումարը ընկած հատվածում: Նախորդ համագումարում ընդունեցինք որոշում: Որոշումը արդիական է նաև այժմ, քանի այն թղթի վրա է մնացել: Չեզ հայտնի պատճառներով՝ կռիվների մեջ էինք, վեճերի, պայքարի մեջ: Փառք Աստծո, այդ էջը փակվեց, նոր էջով ենք գնում առաջ, և ես կարծում եմ, քանի որ նախորդ համագումարի որոշումը չի կատարվել, նախորդը մնում է ուժի մեջ: Իսկ միջանկյալ երեք նոր աշխատատեղ առաջացավ, երեք կուսակցության նախագահ, երևի դրական արդյունքը մեր պետության համար առայժմ այդքանն է: Յուրաքանչյուրի դուրս գալը մեզ համար ցավ է, նույնիսկ այն դեպքում, երբ ինչ-որ պահից արդեն ուզում էինք ազատվել: Բայց կրկնում եմ, մեզ համար ցանկացած մարդու դուրս գալը, անկախ դրդապատճառներից, ցավ է, չէ որ նրանց հետ մեծ ճանապարհ ենք անցել: Եվ ինչ հարաբերություններ էլ հիմա ունենանք, միշտ պետք է երախտապարտ լինենք միմյանց, ուս ուսի տված ենք ճանապարհ անցել: Դա ուրանալ չի կարելի:

Այժմ Հայաստանի քաղաքական վիճակը շատ ծանր է, բայց մարգարեություն չանեմ, ես նոր ժամանակների գալիքն եմ տեսնում, նոր ժամանակների, որովհետև բոլոր հնարավոր հիմարութունները քաղաքական դաշտում, ինձ թվում է, արդեն սպառված են: Անշուշտ, հանճարեղ ժողովուրդ ենք, միշտ մի հիմարություն կարող ենք անել: Մենք էլ ենք հիմարություններ արել, մյուս կուսակցություններն էլ, և բոլորս հասկացել ենք, որ եթե համախմբված չենք ինչ-որ գաղափարների, նպատակների շուրջ, ապա քաղաքական դաշտում որևէ մեկը ոչ անձնական հաջողության կհասնի, ոչ էլ իմաստ ունի մնալ քաղաքական դաշտում: Ես, շփվելով տարբեր կուսակցությունների անդամների, մարդկանց հետ, տեսնում եմ, որ այդ գիտակցությունը հասունանում է. որ մի ուրիշ խումբ հիմա ուզի գալ իշխանության և օգտվել իշխանության պտուղներից, ինձ թվում է, արդեն անցած փուլ է: Հիմա շատ մարդիկ, քաղաքական գործիչներ նախորդ ժամանակաշրջանից ելնելով են կառուցում իրենց ապագան, որ սխալ է: Ապագան շատ ավելի պայծառ է լինելու, ապագան շատ ավելի փայլուն է լինելու, ապագան շատ ավելի նպաստավոր է լինելու հայ ժողովրդի համար: Մենք դժգոհում ենք մեր կյանքից, ասում ենք՝ քանդվեց պետությունը, բնականոն ապրում էինք, ինչ էր եղել: Ուզում եմ նորից ու նորից կրկնել. հազարամյակների ընթացքում թերևս երբեք այսքան բարենպաստ պայմաններ չեն եղել հայ ժողովրդի համար ապրելու, ստեղծագործելու, հզորանալու, մի թիմ կազմելու համար: Եվ մենք՝ որպես Ազգային ժողովրդավարական միություն, ամեն ինչ անելու ենք, որ նպաստենք դրան, այսօր չի ստացվի՝ վաղը կստացվի, վաղը չստացվի՝ մյուս օրը կստացվի: Բայց դա է մեր առաքելությունը, և մենք մեր առաքելությունը մինչև վերջ կհասցնենք:

Վ. Մանուկյանի ելույթը ԱԺՄ XIII համագումարում
2001թ., դեկտեմբերի 1

ՀԱՐՑԵՐՆ ԻՆՔՆԸՍՏԻՆՔՅԱՆ ՉԵՆ ԼՈՒԾՎՈՒՄ

Եթե ինձ 1988 թվականին ասեիր, որ 14 տարի անց ես նորից խոսելու եմ այս հարթակից, կծիծաղեի: Թվում էր, թե ԱԺ-ում, կառավարությունում և այլուր գործերը հունի մեջ են, պետություն ենք կառուցում: Հսկայական Խորհրդային Միությունը փլուզվեց, մենք ստացանք անկախություն, Ղարաբաղին պատերազմ հայտարարեցին՝ հաղթեցինք, օրենքներ ընդունեցինք, որպեսզի երկրում յուրաքանչյուր քաղաքացի ազատ լինի: Թվում էր, թե բարենպաստ ժամանակաշրջան է սկսվել՝ աշխատիր, բարգավաճիր, հզորացիր: Բայց այդպես չեղավ: Եվ մենք կրկին հավաքվել ենք այստեղ, կրկին մեր հարցերն ենք քննում:

Բայց, ժողովո՛րդ, այդպես է ամբողջ աշխարհում: Բոլոր զարգացած և զարգացող երկրներում ժողովուրդը ոտքի է կանգնում՝ իր չլուծված հարցերը լուծելու: Հարցերն ինքնըստինքյան չեն լուծվում: Այդպես չի լինում, հույս չունենաք: Իշխանությունը լոտո չէ, որ լավ համարի վրա դնես, շահես ու հանգիստ գնաս տուն: Ժողովուրդն անընդմեջ պետք է պայքարի, որպեսզի իր ուզածին հասնի: Ծանր ժամանակներ ապրեցինք. հոսանք չկար, հաց չկար, հարյուր հազարավոր մարդիկ հեռացան հայրենիքից: Ժողովրդի միայն 10 կամ 20 տոկոսը կարողացավ իր կյանքը բարելավել. մի չնչին մասը՝ կեղծարարությամբ ու թալանով, մի մասն էլ՝ ձեռներեցությամբ, մանր առևտրով, այլևայլ միջոցներով: Թվում է, որ եթե այս ճանապարհով գնանք, մի բանի կհասնենք: Ոչ, չենք հասնի, երկիրը այսպես զարգանալ չի կարող: Այն երկրում, որտեղ շարունակ խրախուսվում է լկտիությունը, խարդախությունը, զոռբայությունը, ապագա չկա:

Ամեն ինչ սկսվում է ընտրություններից: Խաբեությամբ, կեղծիքով գալիս են իշխանության, և այդ հիվանդությունը տարածվում է բոլոր շերտերի մեջ, միայն իշխանությունները չեն: Զոռբայությունը դարձել է մեր հասարակության՝ վերևից խրախուսվող մտածողությունն ու ապրելու ձևը: Օրինակ՝ Ազգային ժողովի վերջին քննարկումները: Օրենքներն իհարկե վատն էին, բայց խոսքը միայն օրենքների մասին չէ, լկտիության՝ «ես եմ այս աթոռին նստած, ինչ կուզեմ՝ կանեմ» բանաձևի մասին է: Ոչ մի երկիր այդպես զարգանալ չի կարող: Ցանկացած երկրի, ցանկացած ժողովրդի զարգացման համար (դեռ չեմ խոսում աշխատատեղեր ստեղծելու, թալանի, գործարանների կործանման մասին) շատ կարևոր մի բան կա՝ ի՞նչ հիմքի վրա է հասարակությունը կառուցում իր կյանքը: Ես 5 կետ կնշեմ:

Առաջինը ազատությունն է: Մարդիկ պետք է ազատ լինեն, պաշտպանված օրենքով, ազատության հիմքի վրա է ամբողջ մարդկության զարգացումը: Եթե ազատություն չլինի, երկիրը չի զարգանա: Երկրորդ՝ օրինականության պահպանումը: Ունեցվածքով կարող ենք տարբեր լինել, իրավունքով բոլորս հավասար ենք, օրենքը նույնն է բոլորիս համար՝ նախագահից մինչև վերջին գործազուրկը: Եթե դա անտեսվի, երկիրը կործանման եզրին կկանգնի: Երրորդը հայրենասիրությունն է: Ոչ մի օրենքով, ոչ մի օրինականությամբ երկիրը չի զարգանա, եթե հիմքում հայրենասիրություն չկա: Հայրենասիրությունը միայն թուրքի դեմ խոսելը չէ, անընդհատ ցեղասպանության մասին խոսելը չէ, Նժդեհի սկզբունքների մասին խոսելը չէ: Հայրենասիրությունն ավելի մեծ ու ընդգրկուն զգացում է՝ սիրել, հավատալ երկրի ապագային, միասնաբար զգալ, որ այս պետությունը մերն է, մրցել մյուս ազգերի հետ, մեծ նպատակներ ու բարդ խնդիրներ դնել: Չորրորդը պարկեշտությունն է: Գրված օրենքների հետ միասին, եթե մենք պարկեշտ չլինենք, ոչ մի նպատակի չենք հասնի: Եվ հինգերորդը կազմակերպվածությունն է: Դա նշանակում է ունենալ սահմանադրություն, ունենալ օրենքներ, նշանակում է, որ ժողովուրդը պետք է կարողանա հասարակական կազմակերպություններ ստեղծել, թույլ չտա, որ օպերայի շրջակայքում ցանկացած մեկը շենք կառուցի: Սա բոլորինն է: Մի ուրիշ երկրում կամ գիշերը կպայթեցնեին, կամ բուլդոզերով կջարդեին, կամ ժողովուրդը կպառկեր տրակտորի առաջ, երիտասարդությունը թույլ չէր տա:

Իսկ մենք ի՞նչ ենք անում. անընդհատ ասում ենք՝ վատ իշխանություն ունենք: Իշխանությունը ընդամենը մի չինովնիկ է, իրենը չէ այս երկիրը: Ռոբերտ Քոչարյանին պատմական մեծ շանս էր տրված, չնայած ինքը արդար ձևով չընտրվեց նախագահ, բայց մի իրավիճակ էր ստեղծվել, որ այս 5 կետը կարող էր հետևողականորեն իրականացնել: Չարեց, դուրս է գալու: Ինչքան էլ ձեր մեջ թերահավատություն լինի, թե թերթիկներ կգցեն, կկեղծեն, միևնույն է, չի լինելու: Նա նախագահ չի մնալու: Բայց միայն դրանով հարցը չի լուծվի:

Ենթադրենք նախագահին հանեցինք, հետո՞, ովքե՞ր են գալու: Խոսքը անձերի մասին չէ, սկզբունքի մասին է: Ի՞նչ սկզբունքներ են ունենալու իշխանությունները, ինչպե՞ս են երկիրը կառավարելու:

Եվ հիմա մեր առջև երկու շատ ծանր խնդիր է դրված: Միացած կուսակցությունները համախմբվել են մեկ-երկու նպատակների շուրջ, բայց այս ընթացքը երկարաժամկետ է, նրանք պետք է կարողանան իրենց մեջ թիմ ստեղծել, որը վստահություն ներշնչի, նպատակներ և ծրագրեր ունենա, ժողովրդին ոչ միայն ասի, թե սրանք վատն են, պետք է գնան, այլ ասի, որ սրանք գնալու են, որովհետև գալու են նոր ուժեր, երկրի համար անելու են այս բաները: Առանց դրա անիմաստ է անընդհատ խոսել իշխանությունների վատ լինելու մասին: Եվ մի հարց էլ: Հեշտ է ասել, թե ժողովուրդը պետք է ընտրի իշխանությանը: Ժողովրդի այն մասի համար, որը սոված է, չքավոր, մտածում է միայն մի կտոր հաց վաստակելու մասին, շատ դժվար է տեր զգալ իր երկրին: Բայց մեր հասարակության մեջ կա մի հատված, որն այս կամ այն կերպ լուծել է հացի խնդիրը, կարող է հիշյալ հարցերի շուրջը մտածել: Նա պետք է կարողանա ինքնակազմակերպվել, որ ով էլ գա իշխանության, թագավոր չլինի, զգա ժողովրդի շունչը:

Ես համոզված եմ, մինչև հիմա ում ուզել ենք փոխել, փոխել ենք: Բայց, կրկնում եմ, հիմնահարցն այն է, թե ով և ովքեր են գալու, ինչ նպատակներ են հետապնդելու, և ժողովուրդը թույլ կտա՞, որ նորերը նույն կերպ վարվեն իր հետ: Դա է խնդիրը, մեր բոլորիս առջև ծառացած բարդ, բայց և, կարծում եմ, լուծելի խնդիրը:

Վ.Մանուկյանի ելույթը հանրահավաքում
2002թ. մայիսի 5
«Ազատության» հրապարակ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԸ ՊԵՏՔ Է ՈՒՂԵՑՈՒՅՑ ԼԻՆԻ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

-ՄԱԿ -Ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի ներկայիս իրավիճակը և ի՞նչ զարգացումներ եք տեսնում:

-Առհասարակ շատ հետաքրքրական են թվում Հայաստանի ներքին խառը պատմությունները, իսկ երբ դրսից ես նայում. ամբողջ աշխարհում քաղաքական, ֆինանսական, տնտեսական կայսրություններ են ստեղծվում ու փլուզվում:

Մարդկությունը արագորեն ոտք դրեց մի նոր՝ ինֆորմատիկայի, նոր հաղորդակցությունների ժամանակաշրջան: Գլոբալիզացիան, որի մասին հիմա շատ են խոսում, նոր երևույթ չէ: Միաժամանակ համախմբվում են առանձին փնջերով, որպեսզի դիմադրեն այդ հոսանքին, որպեսզի այն չփոշիացնի իրենց ժողովրդին ու քաղաքակրթությունը: Այդ տեսանկյունից երևի պատահական չէր Հայաստանի անկախանալը տվյալ ժամանակաշրջանում: Եվ մենք, հուսով էինք, որ կկառուցենք ժամանակակից պետություն:

Ցավոք, իրականությունը այլ բան է վկայում: Ես չեմ կարող ասել, թե պետությունը չի զարգանում: Հիմա մայթեզրեր են փոխում, ծառեր կտրում, նոր սրճարաններ են բացում, բայց աշխարհի համեմատությամբ, կարծում եմ, շարունակ հետ ենք ընկնում: Նպատակներ չունենք, և թե ընդհանուր գործընթացների մեջ ինչ դեր ենք խաղալու, դեռևս հստակ չէ: Երկիրը հետզհետե մի մեծ գյուղի է վերածվում՝ իր քյոխվայով, որն ինչ ուզում անում է: Ռոբերտ Քոչարյանին հակացուցված է պետություն ղեկավարելը: Հասկացնել նրան, թե ինչն է սխալ անում, ինչը՝ ճիշտ, հնարավոր չէ. նա ինքնասիրահարված մարդ է և միշտ համոզված սեփական անսխալականության մեջ:

Պետության ղեկավարը պետք է ուղեցույց լինի իր ժողովրդի համար, կարողանա կարգավորել երկրի ներքին կյանքը, մինչդեռ անցած տարիներին փլուզվեց քաղաքական դաշտը, սկսում է բանակի փլուզումը: Ճղճիմ բանավեճ է սկսվել գեներալների միջև, թե ով քանի փամփուշտ բերեց, պատերազմի ժամանակ ով էր ռազմաճակատում, ով՝ ռեստորանում: Գժտեցնել զինվորականներին, ըստ իս, հանցագործություն է: Ես հիմա չեմ ուզում գնահատել

Վաղարշակ Հարությունյանի դերը, նա, ինչպես ուրիշ հազարավոր զինվորականներ, իր համեստ լուման ունի մեր ռազմական հաջողությունների մեջ, և նրան գեներալի կոչումից զրկելը համարում եմ հիստերիկ քայլ, որը բնութագրում է Ռոբերտ Քոչարյանին: Հասարակությանը շարունակ պարտադրվում է մանր հարցեր քննարկել. ոստիկանը իրավունք ունի՞ պատգամավորին ծեծել, թե ոչ, եթե ծեծել է, ազատե՞լ նրան, թե ոչ... Կարելի՞ է խոսել ականջ քաշելու մասին, կարելի՞ է գեներալներին կռվեցնել, կարելի՞ է գեներալ-մայորի կոչումից զրկել և այլն, և այլն: Այսպիսի հարցերով շեղում են հասարակությանը կարևոր հիմնախնդիրներից:

Առջևում 2003 թվականն է, մինչ այդ, իհարկե տարբեր կուսակցություններ, քաղաքական գործիչներ կբանակցեն, միասին ընտրությունների կգնան, բայց հասարակությունը կարոտ է գաղափարների հոսքի, իսկ Հայաստանում չկան բյուրեղացման կետեր, որտեղ գաղափարներ կուտակվեն, և մարդիկ համախմբված պայքարեն բյուրեղացած գաղափարների համար: Կարծում եմ, մինչև 2003 թվականի ընտրությունների շրջանը նախ պետք է պարզենք այն հարցը, թե ինչ ուղղությամբ է գնում աշխարհը, և մենք՝ որպես պետություն, որպես ազգ, որպես հասարակություն, ինչ դեր ունենք այդ գործընթացում: Մեխանիկական միացումները ընտրությունների առիթով Հայաստանին օգուտ չեն տալու, ավելի օգտակար են այն միացումները, որոնք հիմնված են որոշակի առաջավոր գաղափարների, հոսանքների վրա:

- «Օրրան»- *Հասարակական այդ ի՞նչ պահանջարկով էր, ի վերջո, որ մեր գլխին այսպիսի առաջնորդ եկավ:*

-Բարդ հարց է, իհարկե: Նախորդ փուլում պետական կառուցվածքն այնպիսին էր, որ կարելի էր ինչ-որ մեկին ինչ-որ տեղից բերել ու դնել ինչ-որ տեղ: Բերեցին ու դրեցին: Բերողները գնացին, ինքը մնաց:

-Իսկ առաջիկայու՞մ...

-Ամենահեշտ բանը մեղադրելն է, ես կարող եմ նախկին իշխանություններին մեղադրել, շատերին մեղադրել: Բոլոր մեղադրանքներն էլ արդարացի կլինեն, ես հանգել եմ այն եզրակացության, որ մեղավոր են և՛ քաղաքական գործիչները, և՛ լրագրողները, և առհասարակ հասարակությունը: Մեր հասարակությունը իր շահերը, իր նպատակները, լավ չի պաշտպանում: Մի ուրիշ հիմնախնդիր էլ կա՝ նպատակները հստակ չեն ձևակերպվում: Եվ եթե նպատակը հստակ չի ձևակերպվում և առաջադրվում, շատ դժվար է այն պաշտպանել, և կարծում եմ, որ մինչև 2003 թվականի ընտրությունները շատ ջանքեր կվատնվեն դրա վրա:

-ԱԺՄ-ն առաջիկա ընտրություններին որ ուժերի հետ դաշինքի մեջ կմտնի:

-Նախ ասեմ, որ մենք միշտ դաշինքների մեջ ենք եղել, բայց ոչ ինքնանպատակ դաշինքների: Մեր նպատակը միշտ եղել է ստեղծել քաղաքական, գաղափարական հոսանք և այնպես անել, որ այն հաղթի: ԱԺՄ-ն ինքնուրույն քաղաքական հոսանք է: ԱԺՄ-ն ազատական, ազգային, ժողովրդավարական գաղափարախոսության կրողն է: Մենք միշտ դաշնակիցներ ենք ունեցել՝ և՛ ազատական, և՛ ազգային դաշտում: ԱԺՄ-ն այսօր, ինչպես 1996 թվականին, կփորձի ինքնուրույն առաջ գնալ: Շուրջը կհավաքվեն, թե ոչ, դժվար է ասել, համենայն դեպս, մեր հավակնությունները մի կողմ ենք դնելու հանուն միասնական նպատակի: Ինչ վերաբերում է թեկնածու առաջադրելուն, ապա 1988 թվականից սկսած հոդվածներով, հարցազրույցներով, հանրահավաքների ելույթներով ներկայացրել եմ, թե ինչպես եմ պատկերացնում Հայաստանի ապագան ու պետության կառուցվածքը: Եթե մեր ժողովուրդը, մեր հասարակությունը ընդունում է դա, ես ինձ վրա կվերցնեմ ցանկացած բեռ, եթե չի ընդունում, եթե իմ ու նրանց մտածելակերպը չի համընկնում, իմաստ չունի պայքարել նախագահական ընտրություններում: Հիմա քաղաքական դաշտում կան տարբեր կուսակցություններ ու քաղաքական գործիչներ, ինչ գաղափարի մասին էլ խոսեն, ինձ համար հայտնություն չի լինի, որովհետև ես լավ գիտեմ, թե ում դեպքում ինչպիսի Հայաստան կլինի:

-ՄԱԱ - *Իսկ ինչպե՞ս եք պարզելու՝ կա՞ արդյոք Ձեր պատկերացրած Հայաստանի պահանջարկը:*

-Պահանջարկը ժամանակին կար, այժմ դժվարանում եմ ասել:

-Ինչպե՞ս եք գնահատում Ղարաբաղի ներկա ներքաղաքական իրավիճակը. այս փուլում Ղարաբաղի նախագահական ընտրությունները ի՞նչ քաղաքական նշանակություն ունեն:

-Իհարկե, նախագահական ընտրությունները անհրաժեշտ են: Ամենայն հավանականությամբ միջազգային որոշ կազմակերպություններ ինչ-որ հայտարարություններ կանեն, թե չճանաչված երկիր է և այլն, բայց ընտրությունները պարտադիր պետք է

կազմակերպվեն և լինեն առավելագույնս արդար: Դա քաղաքական մեծ նշանակություն ունի Ղարաբաղի համար: Կարծում եմ՝ ընտրությունները կընթանան բնականոն հունով::

Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցի լուծմանը, ապա միայն և միայն կասեի՝ բանակցել, բանակցել և կրկին բանակցել, ինչպես նախորդ շրջանում: Առկա է հարցի լուծումը արագացնելու հարկադրանքը: Դժվար է գնահատել, քանի որ Ղարաբաղը շատ ավելի մեծ հարցի մասնիկն է: Ի՞նչ նախագծեր ունեն այստեղ բնակվող ժողովուրդները և հզոր պետությունները՝ կապված հիշյալ տարածաշրջանի հետ: Իմ տպավորությունը այն է, որ բացի խաղաղությունից որևէ հստակ ծրագիր չկա, մենք էլ չունենք, տարածաշրջանի մյուս ժողովուրդներն էլ չունեն, հետևաբար, կարծում եմ, բանակցությունները դեռ կշարունակվեն, և որոշակի լուծումներ առաջիկայում չեն սպասվում:

-ՄԱՄ - Դուք հարցի փուլայի՞ն, թե՞ փաթեթային տարբերակի կողմնակից եք:

-Միշտ էլ կողմնակից եմ եղել այն փաթեթային տարբերակին, որը պետք է իրականացվի փուլ առ փուլ: Ընդ որում, փաթեթը ես շատ ավելի մեծ եմ պատկերացնում, քան Ղարաբաղի հարցը: Փաթեթի մեջ պետք է ներառվեն Վրաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը, Ռուսաստանը, Պարսկաստանը, Թուրքիան: Մի մեծ, գլոբալ պատկեր պիտի լինի, մի խճանկար, որի մեջ մենք մեր ճիշտ տեղում լինենք: Իրականացումն, իհարկե, կլինի փուլ առ փուլ, բայց առանց փաթեթային տարբերակի, իմ կարծիքով, հարցը լուծել հնարավոր չէ:

-«Հայոց աշխարհ» - *Սրանից մոտավորապես, եթե չեմ սխալվում, մի տարի առաջ Դուք բանակցություններ էիք սկսել, որին մասնակցել է Պարույր Հայրիկյանը, Լյուդմիլա Հարությունյանը: Պարզաբանեք, խնդրեմ, ի՞նչ ելք ունեցան այդ բանակցությունները, արդյոք դրանք հեռանկարներ ունե՞ն:*

- Բանակցություններ չեն եղել, միայն մի հանդիպում է եղել. Պարույր Հայրիկյանն ինձ հրավիրել է սրճարան, ես հրավերը ընդունել եմ, ներկա է եղել նաև Լյուդմիլա Հարությունյանը: Մենք խոսել ենք ընդհանուր խնդիրների շուրջ և բաժանվել, դա գործընթացի բնույթ չի կրել, նման շատ հանդիպումներ են եղել տարբեր կուսակցությունների հետ, քանի որ քաղաքական դաշտում գործընկերների, գաղափարակիցների փնտրտուք է: Պետք է ասեմ, որ գաղափարները շատ կարևոր են, բայց կարևոր է նաև, թե ովքեր են տվյալ գաղափարները կրողները, վստահու՞մ ես նրանց, հավատ կընծայե՞ս, կգործակցե՞ս նրանց հետ: Կրկնում եմ, հռչակված գաղափարները բավական չեն, էական է, թե նախորդ տարիներին ի՞նչ են արել տվյալ քաղաքական կազմակերպությունները կամ գործիչները, ո՞ր ուղղությամբ են գործել, ի՞նչ նկարագիր ունեցել:

-«Հայոց աշխարհ»- Ինչպիսին է ԱԺՄ կուսակցության կառույցների վիճակը տրոհումից հետո:

Իհարկե, ոմանց համար քաղցր, չափազանց հրապուրիչ թեմա է ԱԺՄ-ն: ԱԺՄ-ից հեռացավ Շավարշ Քոչարյանը, նրա հետ՝ մոտ 30-40 հոգի, դուրս եկավ Արշակ Սադոյանը, նրա հետ՝ ևս մի 30-40 հոգի: Մի մասին մենք հեռացրինք, այդ խմբի մի մասն էլ ինքնակամ դուրս եկավ: Քանակային առումով ԱԺՄ-ի հազարավոր անդամները կան, մնացել են, գործում են: Կառույցները զարգանում են: Պարզապես ցավն այն է, որ այս տարիների ընթացքում կուսակցությունը մեծ ջանքեր գործադրեց, որ որոշ մարդիկ հայտնի դառնան հասարակությանը, երևան քաղաքական ասպարեզում, և նրանք հիմա չկան: Բայց նրանց զարգացման մակարդակն ունեցող մարդիկ կան ԱԺՄ-ում, և ես հավատացած եմ, որ շատ չանցած՝ նրանք գնացածների պես ճանաչված կլինեն:

-«Ազատություն» ռ/կ - Որքան ինձ հայտնի է, Ձեր կուսակցությունը սոցիոլոգիական հարցումներ է անցկացնում իր վարկանիշի վերաբերյալ, ցանկալի է՝ խոսեիք արդյունքների մասին, մանավանդ այդ տրոհումներից հետո:

- 1995 թ. ի վեր ԱԺՄ-ն հետազոտություններ է կատարում, դժվար է ասել՝ սոցիոլոգիական, որովհետև սոցիոլոգիական հետազոտություն նշանակում է բնակչությունը բաժանել համապատասխան խմբերի, մենք նման բան չենք անում: Տնից տուն ենք մտնում, և ստեղծվում է ընդհանուր պատկերը: Մենք թվեր չենք հրապարակում: Հայաստանում մի նոր խաղ է սկսվել՝ թվերով իրար խաբել: Ոչ ոք ոչ մի թվի չի հավատում: Ընդամենը տեղեկացնեմ, որ ԱԺՄ-ն պահպանել է իր վարկանիշը: Զարմանալի է, բայց, ժողովրդի մի զգալի մասը չգիտի էլ, որ տրոհում է եղել ԱԺՄ-ում, մարդիկ են հեռացել: Մի կարծեք, թե բոլորը, տանը նստած, մտածում են, թե որ կուսակցությունը ինչ եղավ: Ամեն մեկին (նաև քաղաքական գործիչներին և

լրագրողներին) թվում է, թե ինքը տիեզերքի կենտրոնում է, և ժողովուրդը սոված-ծարավ, ուշի ուշով իրեն է հետևում: Ոչ, այդպես չէ:

- *«Ազատություն» ռ/կ -Լևոն Տեր-Պետրոսյանը, եթե չեմ սխալվում, նույնպես ասել է, որ չի բացառվում իր առաջադրումը, ինչպե՞ս եք պատկերացնում նրա ընտրվելուց հետո Հայաստանը և ինչպե՞ս եք վերաբերվում դրան:*

- Լևոն Տեր-Պետրոսյանը քաղաքական գործիչ է, և ինքն է որոշում իր թեկնածությունը դնել-չդնելու հարցը, ես չէ, որ պետք է մեկնաբանեմ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա շատ հեշտ հարց եք տալիս, որովհետև Լևոն Տեր-Պետրոսյանի Հայաստանը ես լավ եմ պատկերացնում, տեսել, ապրել եմ այդ Հայաստանում: Դրա համար մտքի թռիչքի հարկ չկա:

- *«Հայկական ժամանակ» - Արարատում բանաստեղծություն մեքենագրելու համար ձերբակալել էին Ձեր կուսակցության անդամներից մեկին: Ձե՞ք կարծում, որ 37 թվի հոտ է գալիս: Եվ երկրորդ՝ հնարավոր համարու՞մ եք Ձեր կուսակցության համագործակցությունը Ձեր արմատից ծնված կուսակցությունների, ասենք, ՀՀՇ-ի հետ:*

-Այո, Արարատում նման դեպք եղել է, մեր կուսակցության անդամին, որը զուտ մեքենագրուհու դեր է կատարել, ձերբակալել էին: Մեր կուսակցության ներկայացուցիչները եղան Արարատում, նրան ազատեցին, հարցը փակվեց, քննարկելու բան չկա: Այդ դեպքով չէ, որ պետք է դատել Հայաստանի ներքին կյանքի զարգացումների մասին: Ըստ երևույթին, Հայաստանի ներքին կյանքի մակարդակը խիստ իջել է: Տնտեսությունում կարող ես մի քիչ հետ ընկնել, բայց եթե պետական, հասարակության մեքենան ճիշտ է գործում, կարելի է տնտեսական հարցերը բավական արագ լուծել: Ինչքան մարդկանց մակարդակը ցածր է, նրանք այնքան ավելի վրեժխնդիր են միմյանց նկատմամբ, այնքան ավելի անհանդուրժող են, դա տեսանելի է իշխանությունների մեջ: Շատ օրինակներ կարելի է բերել:

Ինչ վերաբերում է համագործակցությանը այս կամ այն կուսակցության հետ, ապա մենք կողմնակից ենք, որ Հայաստանում գաղափարական հոսանք լինի և ոչ միան ծրագրեր: Յուրաքանչյուր քաղաքական ուժ, քաղաքական գործիչ, տնտեսական, քաղաքական, ազգային պատկերացումների մի փունջ է, որի հիման վրա ընտրությունների ժամանակ կարող են տարբեր ծրագրեր գրվել: Ծրագիրը մի կողմ: Եթե տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ լինեն, էլի խնդիր չունենք, ոչ մի կուսակցության առնչությամբ խնդիր չունենք:

-«Ա1+»- *Ասացիք, որ ինքնուրույն եք առաջ գնալու, սա նշանակու՞մ է արդյոք, որ Ձեզ դուրս եք դնում 13-ի ֆորմատից և չեք մասնակցելու միասնական թեկնածուի ձևավորմանը: Երկրորդ՝ բոլոր թեկնածուները, ովքեր հայտարարել են, որ մասնակցելու են նախագահական ընտրություններին, համոզված են իրենց հաղթանակի հարցում: Դուք համոզվա՞ծ եք Ձեր հաղթանակի հարցում, և երրորդ՝ եթե ընտրվեք նախագահ, պատասխանատվության ենթարկելու՞ եք այն անձանց, ովքեր օրենք և սահմանադրություն են խախտել:*

-Նախ, 13–ի մեջ մենք կանք և շարունակում ենք մասնակցել: Դա պայմանավորված է մի քանի խնդիրներով. «Ա1+»-ի փակման հարցին գումարվեցին իպիչմենթի հետ կապված որոշ հարցեր, ԱԺ-ի որոշ գործընթացներ: Ասում են, թե 13 կուսակցությունները միասնական թեկնածու պետք է առաջադրեն, բայց, անկեղծ ասած, նրանք այդպիսի խնդիր դեռ իրենց առջև չեն դրել: Մյուս կողմից՝ չափազանցություն է մտածել, թե բանակցություններով կարող է միասնական թեկնածու լինել: Բոլորը օրինակ են բերում 1996 թվականը՝ մոռանալով, որ 1996-ի գործընթացները ուրիշ էին: 5-6 կուսակցություն բանակցում էին միասնական թեկնածուի համար, բոլորը պնդում էին, որ Հայաստանի փրկությունը իրենց մեջ է, որ իրենք կարող են միայն ընտրվել, մենք էլ էինք մասնակցում այդ քննարկումներին, հետո ամեն մեկը գնաց իր ճանապարհով: Երբ պարզվեց, որ հաղթանակի հնարավորություններ ամենից շատ մենք ունենք, մեր գաղափարները ընդունող մյուս կուսակցությունները մեզ հետ միավորվեցին և ընտրեցին միասնական թեկնածու: Դա տեղի ունեցավ ընտրություններից առնվազն մի ամիս առաջ, և ես չեմ կարծում, որ հիմա պետք է մեծ ուշադրություն դարձնել բանակցությունների միջոցով միասնական թեկնածու ձևավորելու հարցին:

Ինչ վերաբերում է հաղթանակի հավանականությանը, ապա այն մարդիկ ում համար քաղաքականությունը խաղ է, դիմում են հոգեբանական հայտնի հնարքների: Մեզ համար քաղաքականությունը խաղ չէ, դեռ 1988-ից ի վեր մենք ցանկացել ենք, որ որոշակի գաղափարների հաղթանակ լինի, 1988թ. մեր հասարակությունը իր առջև խնդիրներ էր դրել,

որոնք ուզում էինք լուծել: Ինչ վերաբերում է իշխանության փոփոխությանը, իշխանությանը մեր մաս կազմելուն և որոշիչ դեր ունենալուն, իհարկե, կուզեինք վերանայել, թե ինչ է եղել մինչ այս: Այն մարդիկ, ովքեր հանցագործություններ են կատարել իրենց ժողովրդի և պետության դեմ, պատասխան տային, բայց սեփականության վերաբաշխում, մարդկանց հետապնդում չի լինի: Խոսքը այն մարդկանց մասին է, ովքեր ժողովրդի քվեով, ժողովրդի վստահությամբ եկան իշխանության և չարաշահեցին իշխանությունը, նրանք պետք է մի դեպքում՝ քրեական մեկ այլ դեպքում՝ բարոյական պատասխանատվության ենթարկվեն:

«Իրավունք» -*Դուք վերջերս եք վերադարձել Ղարաբաղից, ի՞նչ կարող եք ասել Ղարաբաղի ներքաղաքական իրավիճակի մասին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ղարաբաղը ներկայումս գտնվում է մի շարք երկրների իրավապաշտպան կազմակերպությունների սև ցուցակներում որպես ռազմականացված բռնապետություն:*

-Նախ ասեմ, որ ինձ համար անընդունելի, երբ այդպես են խոսում Ղարաբաղի մասին: Հայտարարություններ արվում նույնիսկ Ռոբերտ Քոչարյանի մասին, թե Միլոշևիչի պես նա էլ պատերազմի հանցագործ է. այս մոտեցումն անընդունելի է: Ռոբերտ Քոչարյանը, իմ կարծիքով, շատ վատ նախագահ է, պետք է հեռանա, առհասարակ չպիտի դառնար Հայաստանի նախագահ, խոսքը դրա մասին չէ: Բայց երբ վրեժխնդրությամբ կամ ինչ-որ նկատառումով քաղաքական հարց են ուզում լուծել և հարվածի տակ են դնում Ղարաբաղի նվաճումը կամ Ղարաբաղի ժողովրդին, այ դա ինձ համար ընդունելի չէ: Ղարաբաղում կան մարդու իրավունքների խախտումներ, Հայաստանում էլ կան, բայց հենց դրա վրա կենտրոնանալը ճիշտ չէ, կարծում եմ, որ Ղարաբաղն, այնուամենայնիվ, Հայաստանի շարունակությունն է: Ղարաբաղի բուժումը, ըստ իս, Հայաստանի միջոցով է լինելու. Հայաստանը պետք է բուժվի, որպեսզի բուժումը տարածվի նաև Ղարաբաղի վրա: Մի անճնավորություն կա, որ շարունակ ասում էր, թե մարդու իրավունքները խախտվում են, երբ Հայաստանից հայ երիտասարդներին տանում են Ղարաբաղ ծառայելու: Քաղաքական պայքարում կա մի եզր, որից անցնելը ես համարում եմ ազգային դավաճանություն: Ճիշտ չէ ճշմարտություն չասելը, բայց և կա եզր, որից այն կողմ նույնպես ազգային դավաճանության ոլորտն է: Ինչ վերաբերում է իմ այցելությանը Ղարաբաղ, ես մենակ չէի, մեր կուսակցության ներկայացուցիչների հետ էի: Ցավոք, շաբաթ և կիրակի օրեր էին, ժողովրդի հետ շփում չունեցանք: Հանդիպումներ ենք ունեցել Արկադի Ղուկասյանի, Անուշավան Դանիելյանի, Պարգև Սրբազանի, Աշոտ Ղուլյանի՝ այնտեղի ԺԱՄ կուսակցության նախագահի հետ:

-«Ազգ»- *Դուք կարևորում եք գաղափարական դաշինքները, ըստ ձեր կանխատեսումների, առաջիկա խորհրդարանական ընտրություններում ո՞ր գաղափարախոսությունը կրող ուժերը մեծամասնություն կկազմեն, ազատականնե՞րը, թե՞ սոցիալիստները:*

-Անկեղծ ասած՝ ես չեմ հասկանում՝ սոցիալիստներն ովքե՞ր են:

-*Դաշնակցությունը, «Սոցիալիստական Հայաստան» միավորումը, կոմկուսը…*

-Դաշնակցությունը, օրինակ, իրեն սոցիալիստ է համարում, բայց այն բոլոր ծայրահեղ աջակողմյան նախագծերին, որոնք ԱԺ բերել իշխանությունները, նրանք կողմ են քվեարկել. օրինակ՝ ԲՑ-ների սեփականաշնորհումը, օդանավակայանը Էռնեկյանին տալը: Ի՞նչ սոցիալիզմի մասին է խոսքը: Հայաստանում ոչ թե սոցիալիստական և ազատական, այլ ուրիշ հոսանքների պայքար է: Բոլորն էլ կողմնակից են մասնավոր սեփականությանը, բոլորն էլ կողմնակից են, որ ժողովրդի սոցիալական շահերը պետք է պաշտպանվեն:

Ըստ իս՝ Հայաստանում այսպիսի պայքար է մղվում. մենք մի ժողովուրդ ենք, ինչպես ԽՍՀՄ-ում էիք, գանք իշխանության, մեզ համար ապրենք, չխառնվենք աշխարհի անցուդարձին, Ամերիկային խաբենք, Ռուսաստանին խաբենք, փող բերենք, ուտենք, լավ ապրենք, ուրիշին էլ լավություն անենք: Սա մի հոսանքն է, մյուսն ուզում է մեր ժողովրդին, պետությունը դարձնել ժամանակակից պետություն, որտեղ լինեն և՛ ազատական, և՛ սոցիալիստական գաղափարներ: Կեղծ են այդ բաժանումները. կոմունիստները բավական հետևողական են իրենց գաղափարական տեսակետներում, դրանք համեմունք են ընդհանուր քաղաքական դաշտում, բայց Հայաստանում պայքար է մղվում ոչ թե աջակողմյանների և ձախակողմյանների միջև, այլ մի կողմից՝ այն մարդկանց, ովքեր ուզում են այս պետությունը դարձնել իրենց բոստանը ու հանգիստ ապրեն, և նրանց՝ ովքեր ուզում են այս պետությունը

դարձնել ժամանակակից, մյուս կողմից՝ մտցնել համաշխարհային հոսանքների մեջ, պահպանել ազգային արմատները, լուծել ազգային խնդիրներ:

-«Առավոտ»- *Կոնկրետ վերջինը ո՞ր կուսակցություններն են ներկայացնում*:

-Ես սև ցուցակներ չէի ուզենա ներկայացնել: ԱԺՄ-ն միշտ ձգտել է ժամանակակից պետություն ունենալ, որ մեր ժողովուրդը կարողանա համագործակցել մյուս ժողովուրդների հետ, կարողանա առաջին տեղերը գրավել տարբեր ասպարեզներում: Կարծում եմ, որ և՛ մեր ժողովուրդը, և՛ պետությունը այդ բոլոր հնարավորություններն ունեն: Վերջերս տարածվել է այն կարծիքը, թե մենք՝ հայերս, պետություն ստեղծել չենք կարող: Ոչ: Մենք հիմա հրաշալի երիտասարդություն ունենք՝ ձեռներեց ու գրագետ, Խորհրդային Միության օրոք գրագետ, բանիմաց, խելացի երիտասարդությունը չի նկատվել: Ունենք լավ գիտնականներ, գործարարներ (խոսքը թալանչիների մասին չէ), որոնք համապատասխանում են համաշխարհային չափանիշներին: Եվ այդ հարստությամբ հանցանք է հետ գնալը, երկիրը մի մեծ գյուղի վերածելը՝ իր քյոխվայով հանդերձ, և վիճել՝ քյոխվան լավն է, թե վատն է:

-«Ազատություն» - *Ինչպե՞ս եք վերաբերվում հայ-թուրքական հարաբերությունների վերահաստատմանը, դիվանագիտական երկխոսությանը: Ձեր ծրագրում ի՞նչ տեղ ունեն հայ-թուրքական տնտեսական հարաբերությունները:*

-Շարժման ժամանակ, երբ բարձրացնում էինք Ղարաբաղի հարցը, Մոսկվայի հետ բանակցելիս ասում էինք՝ եթե չի լուծվելու Ղարաբաղի հարցը, մենք կպայքարենք անկախության համար, իսկ Ռուսաստանի քաղաքական գործիչներն ասում էին. «*Կուդա վի դենիտես*, չէ որ ձեր կողքին Թուրքիան է, ցեղասպանություն է եղել, ու ձեր ժողովուրդը վախենում է Թուրքիայից, հենց անկախ լինեք, Թուրքիան ձեզ կուտի»: Այն ժամանակվա գաղափարախոսությունը միտված էր, առանց ցեղասպանությունը մոռանալու, պահանջատիրության շեշտադրումը թուլացնել և գնալ Ղարաբաղի հարցի լուծմանը, անկախությանը, որովհետև այն քաղաքական պայմաններում այդ խնդիրն էր հնարավոր լուծել: Երբ մենք իշխանության անցանք, փորձեցինք զուգահեռ երկու գործընթաց վարել՝ քաղաքական բանակցություններ՝ կապված 1915 թ. Հայոց ցեղասպանության և անվտանգության հարցերի շուրջ, միաժամանակ ձեռք մեկնել Թուրքիային, տնտեսական, քաղաքական որոշակի համագործակցություն սկսել: Այդ ձեռքը կախված մնաց օդի մեջ, երբ Հայաստանը նեղ վիճակում էր շրջափակման պատճառով, Թուրքիան փակեց ճանապարհները: Իսկ երբ Ղարաբաղի պատերազմը սկսվեց, Թուրքիան միակողմանի դիրքորոշում ընդունեց՝ հօգուտ Ադրբեջանի, ոչ թե տարածաշրջանային կամ ընդհանուր խաղաղության: Մենք նորից խնդիրներ ունեցանք Թուրքիայի հետ: Հիմա, իմ կարծիքով, այդ երկու գործընթացը շատ ավելի խելամտորեն ու դիվանագիտորեն պետք է շարունակենք: Մի կողմից՝ ցեղասպանության ճանաչման հարցի հետապնդումը ճիշտ է, Թուրքիան ցույց տվեց, որ եթե դա չասենք, միանգամից մոռացության կտա և կփորձի ուրիշ նպատակներ հետապնդել այս տարածաշրջանում: Միաժամանակ ես գտնում եմ, որ Թուրքիայի հետ բանակցությունները պետք է շարունակել տարբեր մակարդակներով՝ տնտեսական, հաղորդակցությունների, տարածաշրջանային խաղաղության և անվտանգության. չպետք է հրաժարվել նման բանակցություններից, ուղղակի պետք է դրանք կշռադատված վարել:

-«Մեդիամաքս»- *Ինչպե՞ս եք գնահատում Ռուսաստանի հետ «Գույք պարտքի դիմաց» ծրագիրը*:

- «Գույք պարտքի դիմաց» ծրագիրը ես համարում եմ անհեթեթություն: Մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ նախորդ տարիներին շատ լավ են եղել: Չեմ կարծում, որ այս ճանապարհով պետք է հարաբերությունները նրա հետ լավացնենք: Եթե մեկին թվում է, որ այդ կերպ է Հայաստան-Ռուսաստան քաղաքական հարցը լուծվելու, չարաչար սխալվում է, ընդհակառակը, այդ ամենի մեջ ինչ-որ չափով նույնիսկ ոչ արժանապատիվ բան կա: Պետական հարաբերություններում, երբ անցնում ես արժանապատվության եզրը, պատժվում ես: Բացի այդ: Արդյոք Ռուսաստանը ներդրումներ կկատարի՞ այդ գործարանների համար, և Հայաստանը դրանից կշահի՞: Խիստ կասկածում եմ, որովհետև Ռուսաստանում այդպիսի գործարաններ շատ կան, Ռուսաստանն ինքն էլ լուրջ հիմնախնդիրներ ունի, դժվար թե ինքը կարողանա, նույնիսկ ցանկության դեպքում, լուրջ ներդրումներ կատարել: Սպասենք՝ տեսնենք: Բայց մի բան ակնհայտ է՝ կան այլ քաղաքական նկատառումներ. իշխանությունները, իրենց կարծիքով, դրանց հաշվին հարաբերություններ են ստեղծում

Ռուսաստանի հետ: Եթե այսպես շարունակվի մինչև ընտրությունները, Հայաստանի կեսը կնվիրեն Ամերիկային, կեսը՝ Ռուսաստանին, միայն թե իշխանությունը պահեն իրենց ձեռքում: Եվ մի հարց էլ կա (Քոչարյանի գործունեությունից դա հստակ է երևում). արդյունաբերության, տնտեսության ինչքան շատ ճյուղեր լինեն ուրիշների ձեռքին, այնքան լավ, խնդիրներ չեն առաջանա: Արդյունքն այն կլինի, որ Հայաստանը կդառնա մի տարածք, որտեղ բազմաթիվ օտար պետությունների ունեցվածք կլինի, և սևագործ աշխատող, արհամարհված մի ժողովուրդ, որը ոչ մի քաղաքական խնդիր չի լուծի: Ես կողմ եմ, որ այստեղ լինեն ամերիկյան, ֆրանսիական, ռուսական ֆիրմաներ, բայց պատառ տալով՝ անձնական հարաբերություն են շտկում որոշ պետությունների հետ: Դա մի տեսակ մանկական, գյուղական խորամանկություն է: Ոչ ավելի: Բոլորս էլ շատ ուրախ կլինենք, եթե այստեղ ներդրումներ կատարվեն, եթե դա նպաստի միասնական շուկայի ձևավորմանը: Կապրենք՝ կտեսնենք: Պարզապես վատն ենք տեսել մինչև հիմա, վատն ենք ենթադրում:

-«Մեդիամաքս» -Դուք ասացիք, որ կմասնակցեք նախագահական ընտրություններին այն դեպքում, երբ հասարակության և Ձեր գաղափարները կհամընկնեն, այնումանայնիվ, Դուք առաջադրելու եք Ձեր թեկնածությունը:

- ԱԺՄ-ն հետևում է, թե ինչ գործընթացներ են տեղի ունենում այժմ, վստահեցնում եմ՝ մենք թույլ չենք տա, որ Հայաստանը մնա այս վիճակում: Բայց շատ կարևոր է, թե ինչ քաղաքական խմորումներ կլինեն երկրում, ու գիտակցենք, թե որն է մեր դերը դրանցում: Խմորումները կհասունանան, այդ մասին կհայտարարվի: Ընտրությունները ձիարշավ չեն, որ ձիու վրա խաղագումար դնեն, ավելին են, քան ձիարշավը, ուրիշ բան էլ կա, այդ ուրիշ բանի մասին է, որ ես ուզում էի խոսել: 1988 թվականին ձիարշավ է՞ր, երբ ժողովուրդը ոտքի էր կանգնել գաղափարներ իրականացնելու համար, ըստ որում ոչ միայն Ղարաբաղի, այլև բնապահպանական, դեմոկրատական, պարզապես Ղարաբաղից սկսվեց: Համաշխարհային բոլոր հոսանքները ներգրավված էին շարժման տարբեր հատվածների մեջ: Եվ ձիարշավի կանոնները՝ ով առաջ կընկնի, ով՝ հետ, նշանակություն չունեին: Ես կուզեի, որ 2003թ.այդպես մոտենանք հարցին, ձի միշտ էլ կգտնվի:

-«Օրրան» -Ի՞նչ հնարավոր զարգացումներ են կատարվելու 2003 թվականին: Դուք հաշվարկներ արե՞լ եք՝ ով է ավելի մոտ հաղթանակի, և հնարավո՞ր է աջ արմատական ուժերի կոնսոլիդացիա, ընդհուպ մինչև ՀՀՇ:

-Նախ՝ հիմա շատ դժվար է ասել՝ ով է ավելի մոտ, ով մոտ չէ, և բոլորի խոսքին էլ կասկածանքով ես վերաբերվում: Ավելի լավ է՝ ես չասեմ, որ ինձ էլ կասկածանքով չվերաբերվեն: Ինչ վերաբերում է կոնսոլիդացիային, ապա երբ խնդիրը է դրվում ամեն գնով փոխել իշխանությունը, կոնսոլիդացիա կարող է կատարվել տարբեր քաղաքական տեսակետներ ունեցող ուժերի մեջ: Այդպիսի խնդիր հիմա Հայաստանում դրված է. անպայման իշխանություններից ազատվել: Բայց կա նաև երկրորդ խնդիրը, որը ես շատ կարևոր եմ համարում, միգուցե ավելի կարևոր, որովհետև առաջին խնդիրը ամեն դեպքում լուծվելու է: Մի մտածեք, որ թերթիկներ կգցեն, կկեղծեն, նույնիսկ եթե գցեն, կեղծեն, դա երկար չի տևի: Հայաստանի և համաշխարհային վեկտորները այնպիսի հակասության մեջ են, որ դրանք շտկվելու են, ուստի այդ գործընթացն ինձ այնքան չի հուզում, որքան երկրորդը: Ինչ գաղափարների շուրջ, ինչ քաղաքական բնավորությունների շուրջն են խմորումները: Ամեն ինչ դեռ առջևում է:

-Դուք չափազանց լավատես եք, բայց կարծիք կա, որ 2003 թվականին Ռոբերտ Քոչարյանը հաղթելու է, եթե այդպես լինի, ձեր կարծիքը:

-Իմիջիայլոց, ինձ անընդհատ մեղադրել են լավատեսության մեջ, 1988 թվականին, որբ սկսվեց շարժումը, ես ասում էի, որ միևնույն է, Ղարաբաղի հարցը այսպես թե այնպես լուծվելու է, ասում էին՝ անհիմնաստ լավատեսություն է նաև, երբ ասում էի՝ անկախ պետություն ենք դառնալու (խոսքը սկզբնական շրջանի մասին է, հետո բոլորին ակնհայտ դարձավ). դարձյալ նույնն էին կրկնում: Երբ Լևոն Տեր-Պետրոսյանը պատերազմի ժամանակ հայտարարում էր, որ պետք է գնալ բանակցությունների, պատերազմը դադարեցնել, զիջել, ասում էին՝ տես՝ ազգային դավաճանություն է, բայց երբ ես մարդկանց հետ առանձին էի խոսում, զգում էի՝ ներքուստ բոլորը համոզված էին, որ պարտվելու ենք: Ինձ դրեցին այդ գործի գլխին, որ պարտությունը ինձ վերագրվի, բայց սխալվեցին, մենք հաղթեցինք: 1996 թվականին ես ասում էի՝ Լևոնը գնալու է, 98-ին գնաց: Հիմա էլ ասում եմ՝ Ռոբերտ Քոչարյանը գնալու է, 2003-ին կլինի, թե 2004-ին, դա չէ խնդիրը, իհարկե, դրա համար պետք է պայքարել:

Այդ խնդիրը լուծելի է: Մյուս խնդիրը՝ որ հոսանքն է հաղթելու Հայաստանում: Ես ասացի՝ երկու հոսանք եմ տեսնում, ոչ թե սոցիալիստների և աջակողմյանների, այլ նայած, թե որը ինչ է ուզում երկրի համար, և դա արդեն միայն քաղաքական գործիչների հարցը չէ:

-Ռոբերտ Քոչարյանի ընտրվելուց հետո դուք աջակից չէիք, բայց չէիք էլ քննադատում նրան, ինչպես այսօր, ի՞նչը փոխվեց, ո՞րն է այն գլխավոր հարցը, որ Ձեզ այսօր ստիպում է ասել, որ նա պիտի գնա:

-Ինձ համար մի բան հասկանալի չէ, ի վերջո Ռոբերտ Քոչարյանին ինչո՞ւ բերեցին Հայաստան: Պարզ ասեմ, գնացեք, ՀՀՇ-ի հետ խոսեք: Ռոբերտ Քոչարյանին բերեցին 1996-ին Լևոն Տեր-Պետրոսյանի պարտությունից հետո, կարծես «տղա բերեցին»: Սկզբում Ռոբերտ Քոչարյանին Հայաստան բերելը ուղղված էր իմ դեմ: 1998-ին այն տեղը, որ նա զբաղեցրեց, 1996-ին մենք ազնիվ պայքարով վերցրել էինք: Մի կողմ թողնենք գաղափարական հարցերը, ի՞նչ եք կարծում, զուտ մարդկային տեսակետից ես ինչպե՞ս կարող էի սատար կանգնել Քոչարյանին: Մենք էինք պայքարում Ռոբերտ Քոչարյանի դեմ, իսկ հիմա այն մարդիկ, որ պայքարում են Ռոբերտ Քոչարյանի դեմ, նրանք են, ովքեր նրան բերեցին, այդ տարբերությունը, ցավոք, մոռացվեց: 1998 թվականին ԱԺՄ-ն պայքարում էր և՛ Ռոբերտ Քոչարյանի,և՛ Վազգեն Սարգսյանի դեմ, և մենք բնական էինք համարում մեր և Դեմիրճյանի դաշինքը: Ցավոք, այդպես չեղավ: 1999 թվականի ընտրություններից հետո իսկապես ԱԺՄ-ն մի պահ լռեց, ընտրություններից հետո ես զանգել եմ Վազգեն Սարգսյանին և ասել եմ. «Վազգեն, ինչ-որ եղել է՝ եղել է, հիմա երկիրը գտնվում է ձեր ձեռքում, ի՞նչ եք ուզում անել, հանդիպենք, խոսենք»: Նա եկավ մեր տուն, խոսեցինք, ասաց, թե ուզում են այս, այս անել, ես ասացի. «Նայիր, լավ բաներ ես ասում, վեց ամիս ԱԺՄ-ն ձայն չի հանի, չի քննադատի, այդ ճանապարհով գնա, ցանկացած խորհուրդ պետք լինի, զանգիր, վեց ամիս հետո կտեսնենք, եթե դուք գնում եք այդ ճանապարհով, սատար կկանգնենք ձեզ, գնում եք հակառակ ճանապարհով՝ ԱԺՄ-ն նորից քննադատելու է և շարունակելու է իր ճանապարհը»: Եղավ հոկտեմբերի 27-ը, որից հետո սուր առճակատումների գնալ իշխանությունների որևէ թևի հետ, կնշանակեր կործանման եզրին հասցնել Հայաստանը: Մենք այն ժամանակ թել ու ասեղն առած կայունության կարկատան էինք անում, կարկատանով էինք զբաղվում, և հույս կար, որ այդ դժբախտություններից հետո մարդիկ կիմաստնանան: Ես ուզում էի, որ իմաստությունը իշխանության օղակների մեջ էլ թափանցեր, այդ թվում նաև Ռոբերտ Քոչարյանի, որ նա կարողանար իր շուրջը համախմբել քաղաքական հոսանքները, քաղաքական ուժերը, կարողանար գնալ զիջումների, հասկանար այն, ինչ որ իրեն ասում են: Եվ ոչ միայն հիանար ինքն իրենով, ոչ միայն բասկետբոլ խաղար, ոչ միայն անգլերեն սովորեր, այլև տեսներ շուրջը, տեսներ, թե ինչ է կատարվում: Չեղավ, սկսվեց սահմանադրության քննարկումներից, մենք դեմ դուրս եկանք պառլամենտականով, հաջորդեց «Ա1+»-ի փակումը, մտանք 13-ի մեջ և բնական կարգով վերադարձանք մեր դիրքերը:

-«Հայկական ժամանակ» *-Ես ուզում եմ վերադառնալ հասարակության բարոյալքման գործընթացին՝ կապված Վաղարշակ Հարությունյանի դեպքի հետ: Որոշ քաղաքետեր նամակով քննադատում են քաղաքական ուժերին՝ իբր թե նրանք շահարկում են հոկտեմբերի 27-ը: Տարբեր շերտերի բարոյալքման գործընթաց է, չե՞ք կարծում, որ այդ բարոյալքման ընթացքում ժողովրդին կպարտադրվի ցանկացած լուծում և՛ Ղարաբաղի խնդրում, և՛ նախագահի ընտրության:*

-Եթե խոսում ենք որոշ քաղաքետերի մասին, որոշ իշխանավորների մասին, դուք ինքներդ ձեզ հարց չե՞ք տալիս՝ ինչու՞ մենք 600 տարի պետություն չունեինք: Երբ Լեոյի պատմությունը կարդում ես, այդ 600 տարվա մեջ մի երեք-չորս ժամանակշրջան ես գտնում, երբ համախմբվելով կարելի էր պետություն ստեղծել: Այնուամենայնիվ, մեր հասարակության մեջ կան մարդիկ, ովքեր, եթե մոնղոլները գան տիրանան այս պետությանը, իլու-հնազանդ կենթարկվեն նրանց, կասեն՝ մեր ազգային շահն է պահանջում, որ կայունություն լինի, որ արյուն չթափվի, մենք ստիպված ծառայում ենք: Այդպիսիք հիմա ջրի երես են բարձրացել: Բայց, հավատացեք, նրանք հասարակության չնչին տոկոսն են կազմում: Ինչ վերաբերում է քաղաքետերի ստորագրությանը, մի հետաքրքիր երևույթ նշեմ. ես իսկապես գտնում եմ, որ շահարկվում է հոկտեմբերի 27-ը, ես միշտ խոսել եմ դրա դեմ, բայց առաջացել են նաև ուրիշ հարցեր՝ կապված ԱԺ-ի կանոնակարգի փոփոխությունների հետ, կապված «Ա1+»-ի փակման

հետ: Հիմա իշխանություններին ձեռնտու է, որ միայն հոկտեմբերի 27-ը կռվախնձոր լինի: Այսինքն՝ նրանք արհեստական ձևով ուզում են հիմնահարցերը տեղափոխել նորից այն դաշտը, որտեղ իրենք գիտեն, թե ինչ է պետք անել: Ամեն խաղացող աշխատում է խաղը տանել այն դաշտում, որը իրեն ծանոթ է: Ինչ վերաբերում է գեներալներին, նախագահն, այնուամենայնիվ, գլխավոր հրամանատարն է, իսկ բանակում լուրջ խնդիրներ կան: Միշտ էլ եղել են: Քոչարյանը մի անպտուղ պայքար հրահրեց բանակում: Երբեմն ինձ ասում են՝ տես, նա շատ խորամանկ մարդ է, քաղաքական դաշտը քանդեց, հիմա էլ բանակն է քանդում, որ Ղարաբաղի հարցի լուծման մեջ խնդիր չունենա: Նա շատ էլ խորամանկ չի, պարզապես այն է, ինչ կա. դա է կարողանում, դա է անում: Բանակը երկու անգամ ընկել է ծանր վիճակի մեջ. 1996-ին, երբ օգտագործվեց ժողովրդի դեմ, որ հանցագործություն էր, հարված էր բանակին, և հիմա, որ, իհարկե, համեմատելու չէ: Այս անպտուղ վեճը, որ նախագահի դրդմամբ ստեղծվեց տարբեր զինվորականների միջև, խայտառակություն է: Իսկ բարոյալքումը, ցավոք սրտի, նոր չէ Հայաստանում: Հայաստանում երկու զուգահեռ գործընթաց կա, մի կողմից՝ բարոյալքման, մյուս կողմից՝ կարգին մարդկանց, լուսավոր երիտասարդության մի մեծ հոսանք: Նրանք չեն հանդուրժի, որ երկիրը այս վիճակում մնա: Մի մասը հույսը կտրած ուզում է թողնի հեռանա, մյուս մասը հակված է պայքարելու մինչև վերջ:

- ՄԱԱ- *Եթե այնուամենայնիվ վերադառնանք Վաղարշակ Հարությունյանին գեներալ-մայորի կոչումից զրկելու հարցին, Ձեր կարծիքով նախագահը ունե՞ր լուրջ հիմքեր դրա համար:*

-Զինվորականին կոչումից զրկում են պետական ծանր հանցագործության, դավաճանության դեպքում: Եթե փոքր մարդուն հնարավորություն ես տալիս, նա այդ հնարավորությունը օգտագործում է, սա է: Ես Վաղարշակ Հարությունյանին չէ, որ ուզում եմ պաշտպանել, նա զինվորական է, ես եղել եմ պաշտպանության նախարար, նրան վաղուց եմ ճանաչում, նա եղել է մեր ներկայացուցիչը Մոսկվայում, բավական հաջող լուծել է խնդիրները: Այն ժամանակ նրա առջև խնդիր էր դրված հարաբերություններ ունենալ Ռուսաստանի զինվորականության հետ, նա այդ խնդիրը լուծում էր, նրան տրվել է գեներալի կոչում, հրավիրվել այստեղ, նշանակվել պաշտպանության նախարար, հիմա զրկում են գեներալի կոչումից: Այդ մեծամտությունը՝ ես եմ գեներալի կոչում տալիս, ես էլ կարող եմ զրկել, լավ բան չի ասում մարդու մասին: Ես ու Ռոբերտ Քոչարյանը գաղափարական սկզբունքներ գրենք, ու պարզվի, որ 90 տոկոսով համընկնում են, կարող են ասել՝ ուրեմն գաղափարակից են, թող միասին աշխատեն: Մարդ էակի համար հենց այն տասը տոկոսն է կարևոր, թե գրածն ինչպես է իրականացնելու, ինչ նշանածող ունի հոգում: Այդ ծողերն են տարբեր, վրան ինչ ուզես, կարող ես գրել, եթե ծողը կա:

-«Ա1+»-*Վ.Հարությունյանին մեղադրում են, որ քաղաքականացված է եղել հոկտեմբերի 27-ից հետո, շատ է խորացել քաղաքականության մեջ: Ձե՞ք կարծում, որ այսօր շատ ավելի քաղաքականացված է բանակը՝ ի դեմս գեներալիտետի, որոնք քաղաքական գնահատականներ են տալիս նաև նախագահին և Սերժ Սարգսյանին:*

- Ես մեղադրում եմ Ռոբերտ Քոչարյանին, որ այս կռիվը սկսեց, ինչ վերաբերում է քաղաքականացված լինելուն, եթե մարդը պաշտպանության նախարար է, քաղաքական գործունեությամբ չպետք է զբաղվի: Եթե դրսում է, ցանկացած քաղաքական գործունեությամբ կարող է զբաղվել:

-«Նոյյան տապան» - *Ձեր կողմից քննարկվող հարցերում կա մի ուրիշ՝ ոչ պակաս կարևոր անուն՝ Սերժ Սարգսյան, ինչու՞ շրջանցեցիք նրան:*

-…որովհետև Սերժ Սարգսյանը չի կրում պատասխանատվությունը: Նույնիսկ եթե պարզվի, որ Սերժ Սարգսյանը ամենաազդեցիկն է Հայաստանում, միևնույն է, նա պատասխանատվություն չի կրում այն ամենի համար, ինչ տեղի է ունենում Հայաստանում, նա պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչ տեղի է ունենում բանակում: Եվ այդ տեսանկյունից ես ձեզ հետ մի բանում համաձայն եմ, որ եթե բանակի գեներալները սկսում են իրար դեմ գրել, պատասխանատվություն կրում է նաև Սերժ Սարգսյանը:

- Ռոբերտ Քոչարյանին տրված պատմական շանսի մասին, և երկրորդ՝ 1998 թվականի Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո ենթադրվում էր, որ Դուք իրավական հիմքեր ունեիք առանց ընտրությունների նախագահ լինելու:

-Հոկտեմբերի 27-ից հետո, երբ կարկատաններով հարցը սկսեց կարգավորվել, բոլոր քաղաքական գործիչները մի պահ հասկացան, որ իրար դեմ կռվելով՝ Հայաստանը կարող են կործանել: Եվ դա պատմական շանս տվեց Քոչարյանին համախմբել, կոնսոլիդացիայի, բյուրեղացման կետ դառնալ, Հայաստանը առաջ տանել առաջ: Այդ պատմական շանսը նա չօգտագործեց: 1998-ի Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետո եղան այդպիսի նախագծեր, օրինակ, ՍԻՄ-ը գտնում էր, որ պետք է վերականգնել 1996 թվականի ընտրությունների արդյունքը, ես դեմ էի, գտնում էի, որ ճիշտ չէ, երկու է տարի անցել, թող նորից ընտրություններ լինեն, և ես չէ, որ պետք է այդպիսի նախաձեռնությամբ հանդես գայի, մի խոսքով, եղավ այն, ինչ եղավ:

Վ. Մանուկյանի հանդիպումը
մամուլի Ազգային ակումբում
24 հուլիսի, 2002թ.

* * *

Վազգեն Մանուկյանը ծնվել է 1946 թվականին, Մեծ եղեռնի ժամանակ Մոկսից Երևան գաղթած Մանուկյանների ընտանիքում: Հայրը՝ Միքայել Մանուկի Մանուկյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր էր, Երևանի պետական համալսարանի պրոֆեսոր: Մայրը՝ Աստղիկ Հմայակի Հակոբյանը, ծնվել է Գյումրիում, ավարտել Երևանի պետական համալսարանը: Վազգեն Մանուկյանը ավարտել է Երևանի պետական համալսարանը, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու է: Քաղաքական գործունեությունը սկսել է ուսանողական տարիներից: 1967թ. ապրիլի 24-ին Մոսկվայում՝ Թուրքիայի դեսպանատան առջև ցույց կազմակերպելու պատճառով ստիպված է եղել թողնել Մոսկվայի համալսարանը և վերադառնալ Երևան: Մինչև 1988թ. եղել է տարբեր քաղաքական կազմակերպությունների անդամ և կազմակերպիչ: 1988թ. փետրվարից «Ղարաբաղ» կոմիտեի անդամ էր, 1988թ. հունիսից՝ «Ղարաբաղ» կոմիտեի կոորդինատորը: 1988թ. դեկտեմբերի 10-ին «Ղարաբաղ» կոմիտեի մյուս անդամների հետ ձերբակալվել է և 6 ամիս անցկացրել Մոսկվայի «Մատրոսկայա տիշինա» բանտում: Վազգեն Մանուկյանը ՀՀԾ վարչության առաջին նախագահն է: Նա 1990թ. մայիսին ընտրվել է Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավոր, 1990թ. օգոստոսի 13-ին ԳԽ-ի կողմից նշանակվել է Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդի նախագահ:

1991թ. սեպտեմբերի 26-ին Վազգեն Մանուկյանը հրաժարական է տվել վարչապետի պաշտոնից: ԳԽ-ում Ազգային ժողովրդավարներ խմբակցության ձևավորումից հետո նախաձեռնել է շարժման ակտիվ մասնակիցներին և համախոհներին միավորող ԱԺՄ կուսակցության հիմնադրումը:

1992թ. սեպտեմբերին նշանակվել է ՀՀ պաշտպանության պետնախարարի, այնուհետև պաշտպանության նախարարի պաշտոնակատար՝ միաժամանակ ղեկավարելով ՀՀ ռազմաարդյունաբերական համալիրը:

Այդ ժամանակաշրջանում վերջնականորեն ձևավորվեց ՀՀ կանոնավոր բանակը, բազմաթիվ պարտություններից հետո սկսվեց Ղարաբաղի բանակի փայլուն հաղթանակների շրջանը, ռազմական գործողությունները փոխարինվեցին քաղաքական բանակցություններով:

1993թ. օգոստոսին ազատվել է պաշտպանության նախարարի պաշտոնից:

1995թ. ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր՝ թիվ 20 ընտրական ընտրատարածքից:

1996թ. ՀՀ նախագահական ընտրություններում դառնալով ազգային համաձայնության միասնական թեկնածու՝ Վազգեն Մանուկյանը արժանացավ ժողովրդի վստահության քվեին, սակայն Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմը կեղծիքներով և սվիններով պահեց իշխանությունն իր ձեռքում:

1999թ. ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր ԱԺՄ համամասնական ցուցակով:

Այսօր նա ԱԺՄ նախագահն է, ՀՀ ԱԺ պատգամավոր, ղեկավարում է Ստրատեգիական հետազոտությունների կենտրոնը:

Ամուսնացած է, ունի երեք դուստր:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ*

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ՀԱՐՑԱԶՐՈՒԹՑՆԵՐԸ

1989

Վազգեն Մանուկյանի ելույթը հոկտեմբերի 14-ի հանրահավաքում: - Մաշտոց, փետրվար, էջ 58-68:

«Ղարաբաղ» կոմիտեի անդամ Վ.Մանուկայնի ելույթները: [1988թ., 2 հունիսի, 5, 20 հուլիսի, 23, 29 սեպտեմբերի]: - Մաշտոց, մայիս, էջ 29-39:

Չերչիլը սխալվեց...Եվ 21-րդ դար կմտնենք որպես հասունացած, հզոր, մի մեծ ժողովուրդ: [Ելույթ Ազատության հրապարակում 1988թ. սեպտեմբերի 29-ին]: - Հանրապետություն, թիվ 14:

1990

Հարցազրույց Վազգեն Մանուկյանի հետ: - Հայաստան, թիվ 5-6, հունվար:

Չորս հարց Վազգեն Մանուկյանին: - Հայք, 4 մարտի:

Èíòåðâüþ ñ ÷ëåíîì êîìèòåòà "Êàðàáàõ" è ïðàâëåíèÿ ÀÎÄ Âàçãåíîì Ìàíóêÿíîì. –"88" (Èíôîðìàöèîííûé Àðìÿíñêîãî îáùåíàöèîííîãî äâèæåíèÿ) íîì.1, 16-30 àïðåëÿ.

Գնացքից թռչելու ժամանակն է: - Հայք, 19, 27 մայիսի, 10, 17 հունիսի:

Քաղաքական ծրագիր: - Հայք, 17 օգոստ.:

Այսպիսի մի օր: [Վարչապետի խոսքը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության շենքի վրա պետական դրոշի՝ եռագույնի տեղադրման առթիվ]: - Երեկոյան Երևան, 28 օգոստ.:

Առանց ուրիշի հույսի: [Վարչապետը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը]: - Հայք, 20 սեպտ.:

L'independance maintenant. / Propos recueillis par Zabel Cheghikian.-France-Armenie, septembre, p. 3.

Զորահանդեսն ընդունում ենք մենք: [Վազգեն Մանուկյանի ողջույնի խոսքը ՀՀ ՆԳՆ հատուկ գնդի երդման արարողության առթիվ]: - Հայք, 9 հոկտ.:

Մեր ազգին մեծ ապագա է սպասում: - Հայաստանի Հանրապետություն, 30 հոկտ.:

Ne Vendons pas la peau de l'URSS / Propos recueillis par Ursulla Gouthier-Le Nouvel Observateur. N11.

Լցվենք լավատեսությամբ, կարողանանք համախմբվել: [Քաղվածքներ նոյեմբերի 17-ի մամուլի ասուլիսից]: - Հայաստանի Հանրապետություն, 20 նոյեմբ.:

Տիրապետենք իրադրությանը, հստակեցնենք մեր քաղաքականությունը: [ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ.Մանուկյանի ելույթը Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդում]: - Հայաստանի Հանրապետություն, 1 դեկտ.:

Բոլորին համախմբված տեսնելու հույսով («Ղարաբաղ» կոմիտեն «Հայքին»): - Հայք, դեկտ.:

Մենք համաշխարհային ազգ ենք: [Ելույթ դեկտեմբերի 15-ի մամլո ասուլիսում]: - Հայաստանի Հանրապետություն, 16 դեկտ.:

Սիրելի կանայք, մայրեր, քույրեր...[Շնորհավորանքի խոսք Ամանորի կապակցությամբ]: - Հայաստանի աշխատավորուհի, թիվ 11-12:

1991

ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի ամանորյա ողջույնի խոսքը հայ ժողովրդին հայկական հեռուստատեսությամբ, 1990 թ., դեկտեմբերի 31-ին: - Հայաստանի Հանրապետություն, 1991, 6 հունվ.:

Վարչապետը պատասխանում է «Մունետիկին» / Հարցազրույցը Ա.Կարապետյանի: [Վարչապետի արտակարգ լիազորությունների մասին]: - Մունետիկ, 8 հունվ.:

Մեր միասնությունից է կախված՝ կդառնա՞նք արդյոք մենք հզոր համաշխարհային ազգ: [ՀՀ նախարարաց խորհրդի նախագահի մամուլի ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 21 հունվ.:

ՀՀ նախարարաց խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի հեռուստահարցազրույցը 1991թ. հունվարի 23-ին: - Հայաստանի Հանրապետություն, 24 հունվ.:

Վճռական քայլի անհրաժեշտությունը / Հարցազրույցը Վ. Իշխանյանի: - Հայաստանի Հանրապետություն, 12 փետրվ.:

Íåîáõîäèìîñòü ðåøèòåëüíîãî øàãà / Èíòåðâüþ Â.Èøõàíÿíà. –Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 14 ôåâðàëÿ.

«Նաիրիտը»՝ գոյատևման լծակ: - Գարուն, թիվ 4, էջ 51: (Միայն մեկ հարց):

Ռուսական շովինիզմի զարթոնքը շատ թանկ կնստի մյուս ժողովուրդների վրա / Հարցազրույցը Ու. Գոթիեի [Թարգմանություն «Նուվել Օբսերվատոր» ամսագրից, 1990, նոյեմբեր]: - Ժողովուրդ, 1-10 ապրիլի:

Գետաշենի պայքարը ոսկե տառերով կգրվի մեր ժողովրդի պատմության էջերում: [ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վ.Մանուկյանի ելույթը հայկական հեռուստատեսությամբ 1991թ. մայիսի 1-ին]: - Հայաստանի Հանրապետություն, 2 մայիսի:

Պետք է առաջ գնանք: [Հարցազրույց հայկական հեռուստատեսությամբ 1991թ. մայիսի 11-ին]: - Հայաստանի Հանրապետություն, 14 մայիսի:

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանի մամուլի ասուլիսից: [Մայիսի 12-ին ՀՀ, Նախարարների խորհրդում, արտասահմանյան լրագրողների համար]: - Հայաստանի Հանրապետություն, 18 մայիսի:

Առաջին հարցազրույցը Հայաստանի վարչապետ Վազգեն Մանուկյանի հետ: - Յառաջ, 18,19 հուլիսի:

ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի օգոստոսի 27-ի ելույթը հայկական հեռուստատեսության «Լրաբեր» ծրագրով: - Հայաստանի Հանրապետություն, 29 օգոստ.:

Մեր «Այո»-ն կհիշեն սերունդները… [ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի սեպտեմբերի 19-ի հարցազրույցը հայկական հեռուստատեսությամբ]: - Հայաստանի Հանրապետություն, 20 սեպտ.:

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի ելույթը ՀՀ ԳԽ նստաշրջանում [սեպտեմբերի 25-ին]: - Երկիր, 28 սեպտ.:

Պետք է օգտվիլ գիտնանք հանգամանքներեն և ոչ թե ծառայենք ուրիշներու շահերուն / Հարցազրույցը Ս.Նաճարյանի: - Արարատ (Բեյրութ), 16,17 հոկտ.:

Ամեն ինչ դեռ առջևում է: / Հարցազրույցը Ռ.Խասապետյանի: - Գրական թերթ, 30 նոյեմբ.:

1992

Իմ վարչապետության տարին ամենածանրն էր / Հարցազրույցը Հ.Ասատրյանի: - Ազգ, 11 հունվ.:

Քայլ մը ետ, քայլ մը առաջ [AIM –ի 1991թ. դեկտեմբերի համարում լույս տեսած հարցազրույցի թարգմանությունը]: - Ազդակ, 23 հունվ.:

Մինչև կյանքիս վերջը սովորելու եմ / Հարցազրույցը Ս.Սահակյանի: - «21», 9 մայիսի:

Հպարտությամբ տոնել Շուշիի ազատագրումը / Հարցազրույցը Մ.Սահակյանի: -Երկիր, 13 մայիսի:

Երիտասարդական քաղաքականություն: - «21», 30 հունիսի-6 հուլիսի, 8-15 հուլիսի:

Íåìíîãî â òåíè, íî âñåãäà íà âèäó /Èíòåðâüþ Ì.Ãðèãîðÿí. - Ãîëîñ Àðìåíèè, 30 èþëÿ.

Մեր միասնությունը հեքիաթային չէ / Հարցազրույցը Կ.Հեքիմյանի: - Անկախություն, 24 հուլիսի:

1993

Պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանի խոսքը՝ ասված մայիսի 28-ի զորահանդեսի ժամանակ: - Ձինվոր, 1-10 հունիսի:

Ìíîãèå ñ÷èòàëè, ÷òî ìåíÿ ñäåëàþò êîçëîì îòïóùåíèÿ / Èíòåâüþ Ï. Ôåëüãåíãàóýðà. –Ñåãîäíÿ, 24 àâãóñòà.

Շատերը կարծում էին, որ ինձ կդարձնեն քավության նոխազ / Հարցազրույցը Պ. Ֆելգենհաուերի: - Երկիր, 27 օգոստ.:

1994

Եռյակի իշխանություն, որը վարում է ապազգային քաղաքականություն / Հարցազրույցը Ա.Դոխոլյանի: - Երկիր, 23 փետրվ.:

“Ïîëîæåíèå îáÿçûâàåò” èëè Ïîñåùåíèå âèöå – ïîæåëàíèå áóäåò / Èíòåðâüþ È.Ìàðòèðîñÿí.-Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 26 ôåâðàëÿ.

[Գևորգ Վարդանյանի մասին] Հ.Արմենյանի «Անավարտ դիմանկար ասուլիսի ֆոնի վրա. Գևորգ Վարդանյան» հոդվածում: - Լրագիր, 5 մարտի:

Öèíèêè äîëæíû óéòè. (Èíòåðâüþ) –Óðàðòó, íîì.19.

Վազգեն Մանուկյանի ելույթը օգոստոսի 12-ի հանրահավաքին: - Ասպարեզ, 20 օգոստ.:

Ոչինչ պետք չէ բացարձականացնել / Հարցազրույցը Ս.Գալոյանի: - Երկիր Նաիրի, 23 սեպտ.:

Հզոր բանակ կունենանք միայն պետական ընդհանուր կառույցի բարեփոխմամբ: - Դրոշակ, 6-19 հոկտ.:

ß ïðèâåðæåíàö ÷åñòíî èãðû / Èíòåðâüþ À.Òàäåâîñÿíà.- Maximum weekly, 19 îêòÿáðÿ.

Un entretien avec M.Vazgen Manoukian, dirigeant de l’Union Democratigue Nationale.- La Lettre de l’UGAB, 22 octobre.

Ես ազնիվ խաղի կողմնակից եմ / Հարցազրույցը Ա.Թադևոսյանի: - Maximum weekly, 2 նոյեմբ.:

Àðìÿíñêàÿ ìå÷òà â òóïèêå ïðîçÿáàíèÿ. –Ãîëîñ Àðìåíèè, 18, 20, 22 äåêàáðÿ.

1995

Արծագանքում են նախագահի հրամանագրին: - Ազգ, 10 հունվ.:

Թե ինչ մնաց 88-ի միասնությունից: Շրջան, 24 փետրվ.:

Լևոն Տեր-Պետրոսյանին ես բերեցի «Դարաբաղ» կոմիտե, բայց ոչ որպես պրեզիդենտ: [Հանդիպում քաղաքացիների հետ]: - Իրավունք, 14-21 մարտի: Նույնը՝ Հորիզոն, 27 մարտի:

Աշխարհում հայի համար ամենավատ ապրելու տեղը դարձել է Հայաստանը / Հարցազրույցը Վ.Իշխանյանի: - Շրջան, 7 ապրիլի:

Նամակ խմբագրությանը: - Լրագիր, 19 մայիսի:

Բարեկրթությունը ազգային մշակույթի բաղադրիչ մասերից է / Հարցազրույցը Ն.Դիլբարյանի: - Առավոտ, 13 հունիսի:

Բոլոր հեղափախական ալիքները մի օր իջնում են՝ աթոռներին թողնելով մի քանի հոգու / Հարցազրույցը Գ.Նալբանդյանի: - Լրագիր, 20 հունիսի:

Ես ուզում եմ, որ ժողովուրդը գոնե մեկ շաբաթ լավ ապրի / Հարցազրույցը Նարեկ Մեսրոպյանի: - Առավոտ, 22 հունիսի:

Elections le'gislatives / Toranian A.-Nouvelles d'Armenie, juin, p. 17:

Պայքարի մեջ չեմ ունեցել իշխանության և ընդդիմության խնդիր / Հարցազրույցը Ա.Եսայանի: - Լրագիր, 4 հուլիսի:

Պետք է ընդունել պարտադրող պատերազմը և հաղթել նաև ներքին կյանքում / Հարցազրույցը Ա.Վարդանյանի: - Հուսաբեր (Կահիրե), 7 օգոստ.:

Համապարփակ զրույց Ազգային ժողովրդավարական միության նախագահ Վազգեն Մանուկյանի հետ / Հարցազրույցը Հ.Պողոսյանի: - Նոր օր, 9,13 սեպտ.:

Հին և նոր սփյուռքը Հունաստանում / Հարցազրույցը Ն.Փաշինյանի: - Լրագիր, 6 հոկտ.:

Ընդդիմություն. 1995թ. աշուն: - Ազգ, 26 հոկտ.:

Սփյուռքը մեծ նշանակություն ունի [«Ազատություն» ռադիոկայանով Մ.Սողոյանին տված հարցազրույցը] / Պատրաստեց Ա.Զաքարյանը: - Լրագիր, 4 նոյեմբ.:

Հայաստանում քաղաքական աշխուժացում չկա / Հարցազրույցը Ն.Դիլբարյանի: -Առավոտ, 22 նոյեմբ.:

Պետդումայի ընտրությունները կարող են խթան հանդիսանալ ՀՀ-ում քաղաքացիական աշխուժացման համար: [Հարցազրույց]: - Ասպարեզ, 23 դեկտ.:

1996

Դա ներքին պայքարի տակտիկական քայլ էր: Երկու հարց Վազգեն Մանուկյանին: - Այժմ, 20-26 մարտի:

Միջնորդագիր [ՀՀ Գերագույն դատարանի անդամ պրն է.Մանուկյանին Հրանտ Մարգարյանի դատավարության առթիվ]: - Այժմ, 10-16 ապրիլի:

Առանց իշխանությունների փոփոխության՝ Հայաստանում առաջընթաց չի լինի: [Ելույթ ԱԺՄ կոնֆերանսում]: - Այժմ, 17-23 ապրիլի:

Պայքարի լավագույն ձևը ընտրությունների միջոցով ժողովրդավարության անիվը տեղից շարժելն է: Հարցազրույցը՝ Հովի. Գալաջյանի: - Իրավունք, 20-26 ապրիլի:

Վահան Հովհաննիսյանի խմորը ազնիվ է: - Իրավունք, 20-26 ապրիլի:

Եթե մենք ապրեինք ժողովրդավարական պետությունում... [Հարցազրույց]: - Դրոշակ, ապրիլ:

Ես լավատեսությամբ եմ նայում այն փոփոխություններին, որոնք տեղի կունենան Ռուսաստանում / Հարցազրույզը՝ Ռ.Հովհաննիսյանի: - Ազգ, 22 մայիսի:

«Հայաստանի կոմունիստ» թերթի խմբագրությանը: [Հերքում թերթում տպագրված «Ոչ ոք բեմ չբարձրացավ» (# 20) հոդվածի առթիվ]: - Հայաստանի կոմունիստ, 7 հունիսի:

Երբ մե՛նք օգնության ձեռք կմեկնենք: [Ելույթ ԱԺՄ VII համագումարում]: - Այժմ, 19-25 հունիսի:

Մասնավոր սեփականությունը և շուկայական տնտեսությանն անցնելը ինքնանպատակ չէր: - Այժմ, 17-23 հունիսի:

Սովորական ժողովուրդը այն վիճակն է, որում գտնվում ենք: - Այժմ, 24-30 հունիսի:

Մեզ նոր Հայաստան է պետք / Հարցազրույցը՝ Ս.Առուստամյանի: - Հայաստան, 27 հուլիսի:

Մի՞թե մենք արժանի չենք ճակատագրի ընձեռած հնարավորություններին: - Այժմ, 31 հուլիսի-7 օգոստ.:

Âàçãåí Ìàíóêÿí íå ãëóõåå Ëåâîíà Òåð-Ïåòðîñÿíà, íî ýòî åùå íå äîñòèíòâî. [Èíòåðâüþ].- Óðàðòó, N 21, èþëü.

Իշխանությունն ինքնանպատակ չպետք է լինի / Հարցազրույցը՝ Ջ.Մարտիրոսյանի: - Ավանգարդ, 7 օգոստ.:

Իշխանության բոլոր մակարդակներում կան հայրենասեր, պարկեշտ մարդիկ / Հարցազրույցը՝ Հովի. Գալաջյանի: - Իրավունք, օգոստ.:

Միասնականության գաղափարը շահարկվում է / Հարցազրույցը՝ Ն.Դիլբարյանի: - Առավոտ, 9 օգոստ.:

Համաշխարհային ազգ լինել նշանակում է...: - Այժմ, 17-13 օգոստ.:

Հայաստանը՝ կրկին արդյունաբերական երկիր: Օգոստոսի 12-ի հեռուստատեսային ելույթը: - Այժմ, 14-20 օգոստ.:

Մեր դրոշի վրա պետք է գրված լինի պարկեշտություն / Հարցազրույցը՝ Մ.Խաչատրյանի: - Մոլորակ, 22 օգոստ.:

Դիմում ժողովրդին: - Այժմ, 28 օգոստ.-3 սեպտ.:

ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում պարտավորվում եմ: - Այժմ, 28 օգոստոսի-3 սեպտեմբերի:

Âëàñòè íå ñîîãóò ïðåääàðèòü åùå îäíî 5 èþëÿ / Èòåðâüþ Í.Ìåñðîïÿíà.-Âîëîñ Àðìåíèè, 3 ñåíò.

Նոր խաչմերուկ: [Սեպտեմբերի 1-ի հեռուստատեսային ելույթը]: - Այժմ, 4-10 սեպտ:

Հասարակությունը խռովել է ներկա իշխանություններից / Հարցազրույցը Ն. Մկրտչյանի: - Ազգ, 13 սեպտ.: [Նախագահական ընտրապայքար]:

Միավորումը հաղթանակի գրավականն է: [Կինոյի տանը կայացած հինգ ընդդիմադիր կուսակցությունների մամուլի ասուլիսը]: - Այժմ, 11-17 սեպտ.:

Վախեցած ժողովուրդը ստեղծագործ լինել չի կարող [Սեպտեմբերի 10-ին ֆիլհարմոնիայի դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր նիստի ժամանակ ունեցած ելույթը կրճատումներով]; - Իրավունք, 14-20 սեպտ.:

Կամք և հաղթանակ: - Այժմ, 18-24 սեպտ:

«Ազգային համաձայնություն» միավորման ուղերձը սփյուռքի մեր հայրենակիցներին: - Շրջան, #19:

Ցավոք սրտի մեր երազած անկախությունը այս չէր: [Հարցազրույց] - Ազատ օր, 21 սեպտ.:

Դիմում ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գ.Հարությունյանին: - Առավոտ, 3 հոկտ.:

Այս պետությունը մեր բոլորինն է: Վազգեն Մանուկյանի հայտարարությունը: [27 սեպտ.] - Այժմ, 4-10 հոկտ.:

Ապօրինի իշխանությունը կայուն լինել չի կարող / Հարցազրույցը Հ.Գալաջյանի: - Իրավունք, 8-14 հոկտ.:

Òîëïà ñàìà âûáèðàò ñåáå ëèäåðîâ... íî ÿ áóäó âìåñòå ñ íàðîäîì. È÷òåðâúþ Ì.Âàðäàíÿí.-Îïîêîâåñêèé êîìïîíåíò, 9 îêòÿáðÿ.

Un entretien m.Vazken Manoukian, dirigent de L'Union De'mocratique Nationale / V.Mardikian. - La Lettre de L'UGAB, N 51.

Եվ մենք կհաղթենք: [Վազգեն Մանուկյանի ելույթը նոյեմբերի 22-ի հանրահավաքում]: - Այժմ, 27 նոյեմբերի-3 դեկտեմբերի:

Եթե իշխանություններն իրոք անհանգստացած էին Ղարաբաղի հարցով... / Հարցազրույցը՝ Ա.Հարությունյանի: - Այժմ, 13-19 նոյեմբ.:

Ցանկացած ոլորտում դավաճանությունն անընդունելի է, լինի դա ընտանիք, թե քաղաքական սկզբունքներ / Հարցազրույցը՝ Հովի. Գալաջյանի: - Իրավունք, 15-21 նոյեմբ.:

Այս իշխանությունների օրոք Հայաստանը ապագա չունի: [Ելույթ ԱԺՄ խորհրդաժողովում]: - Այժմ, 25-31 դեկտ.:

Նախագահական ընտրությունների արդյունքների վիճարկումը Սահմանադրական դատարանում: - Շրջան, 1996, #21:

1997

Ժողովրդի հետ կկարողանանք փոխել իրավիճակը: - Կամք հայրենյաց, հունվար, թիվ 1(11): [Երկու հարց հանրապետության քաղաքական գործիչներին]:

Âñå îíè pîäñòâåííèêè ñ÷àñòëèâû â áðàêå / Áåñåäà. Í.Ãîìöýí. –Ãîëîñ Àðìåíèè, 1 ôåâðàëÿ.

Վ.Մանուկյանի դիմումը ՀՀ գլխավոր դատախազին: - Այժմ, 5-11 մարտի:

Եվ մենք կհաղթենք: [Ելույթ Ազգային համաձայնության դաշինքի համաժողովում 1997թ. մարտի 29-ին]: - Այժմ, 2-8 ապրիլի:

Կամք և վճռականություն: [Ելույթ ապրիլի 18-ին կայացած հանրահավաքում]: - Այժմ, 23-29 ապրիլի:

Ընդդիմությունը փորձել է իշխանություն փոխելու բոլոր օրինական միջոցները / Հարցազրույցը Ն. Փաշինյանի: - Մոլորակ, թիվ 65, ապրիլ:

Նախապայմաններ չենք դնում, ասում ենք, թե ինչ թեմաների շուրջն ենք համաձայն խոսել / Հարցազրույցը Հ. Յորտեքյանի - Զարթոնք, 30 ապրիլի:

Ճակատագիրը մարտահրավերներ է նետում մեզ: [Վազգեն Մանուկյանի ելույթը ԱԺՄ 8-րդ համագումարում]: - Այժմ, 21-27 մայիսի:

Կառավարող համակարգում դեպի օրինավոր կյանք տանող կամուրջներն այրած մարդիկ չնչին փոքրամասնություն են / Հարցազրույցը Հ.Գալաջյանի: - Իրավունք, 23-29 մայիսի:

Հայության միասնականության հիմքերը: [Ելույթ Լոս Անջելեսում]: - Այժմ, 11-17 հունիսի:

Այդպես է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում / Հարցազրույցը Ա. Իսրայելյանի: [ՀՀՇ 9-րդ համագումարում Լ.Տեր-Պետրոսյանի ելույթի մասին]: - Առավոտ, 17 հուլիսի:

Vazguen Manoukian. – Nouvelles d' Arme'nie, juin, p.6-7.

Մեր հիվանդությունը բուժողը պետք է լինենք մենք, մեր ժողովուրդը: (Հարցազրույց): - Ազատ օր, 4 սեպտ.: Նույնը՝ Այժմ, 10-16 սեպտ.:

Âëàñòü è ñîáñòâåííîñòü â ïðîöåññå ïðèâàòèçàöèè íà òåððèòîðèè áûâøåãî ÑÑÑÐ. [Äîêëàä, "Àôèíñêèé ñàììèò-97"] - Ãîëîñ Àðìåíèè, 25 ñåíòÿáðÿ.

Ժամանակը պիտի աշխատի մեր օգտին: (Ելույթ Ազատության հրապարակի հանրահավաքում): - Այժմ, 5-11 նոյեմբ.:

Ես անհեթեթ եմ համարում Լևոն Տեր-Պետրոսյանի հետ բանավիճելը / Հարցազրույցը Ա.Իսրայելյանի: - Առավոտ, 6.նոյեմբ.:

Մեր պետությունը առողջ չէ: [Հարցազրույց «Ազատություն» ռադիոկայանին]: - Ազատ օր, 15 սեպտ.:

Ժողովուրդը սպասում է կոչի՝ իշխանությունը փոխելու ձևի մասին / Հարցազրույցը Հ.Գալաջյանի: - Իրավունք,19-25 սեպտ.:

Âðåìÿ äîëæíî ðàáîòàòü íà íàøó ïîëüçó. (Îòðåäàêòèðîâàííûé âàðèàíò âûñòóïëåíèÿ ëèäåðà ÍÄÑ Âàçãåíà Ìàíóêÿíà íà ìèòèíãå 31 îêòÿáðÿ íà ïëîùàäè Àçàòóòÿí). - Ãîëîñ Àðìåíèè, 20,20 íîÿáðÿ.

Վազգեն Մանուկյանը Արգենտինա կատարած այցի մասին և ոչ միայն / Դեկտեմբերի 2-ին «Ազատություն» ռ/կ-ին տված հարցազրույցը պատրաստեց Ա.Իսրայելյանը: - Առավոտ, 4 դեկտ.:

1998

Ñëääû âåääóò âî âëàñòíûå ñòðóêòóðû /Ïîïäãîòîâèëà Ì.Ìêðòû÷ÿí.. - Ãîëîñ Àðìåíèè, 27 ÿíâàðÿ. (Âûñòðåëû â Åðåâàíå. Îöåíêè ïîëèòèêîâ).

Ստեղծված իրավիճակը քաղաքական գործիչների գնահատմամբ / Ճեպազրույցները հեռախոսով Ռ.Հովհաննիսյանի: - Ազգ, 5 փետրվ.:

Ñèòóàöèÿ â ñòðàíå. Ìíåíèÿ ïîëèòèêîâ / Ñíàðê. - Ãîëîñ Àðìåíèè, 5 ôåâðàëÿ.

Aucune force politigue en Arme'nie n'est en faveur de la guerre» / Propos recueillis par A. Dastakian . – Marianne, 16-22 fevrier, p. 42.

Առայժմ՝ միայն դիվանագիտական պատասխաններ [Ճեպազրույց]: - Առավոտ, 17 փետրվ.: Ստորագր.՝ Ա.Ի.

Եվ մենք պարտավոր ենք հաղթել: - Այժմ, 18-24 փետրվ.:

Նոր հնարավորություն 10 տարի անց: [Ղարաբաղյան շարժման 10-ամյակի առթիվ] / Պատրաստեց Ա.Ջաքարյանը: - Առավոտ, 19 փետրվ.:

Եվ մենք կտեսնենք, որ Արարատից լավ սար աշխարհում չկա: (Արցախյան տարելիցին նվիրված հանրահավաքի ելույթը): - Այժմ, 25 փետրվ.-3 մարտի:

Òåëåãðàììà Âàëåíñà / Èíòåðâüþ Ì.Ãðèãîðÿí. - Ãîëîñ Àðìåíèè, 26 ôåâðàëÿ.

Այսպես խոսեց Վազգեն Մանուկյանը / Հարցազրույցը Ա.Իսրայելյանի: - Առավոտ, 28 փետրվ:

Թուրքիան Հայաստանի կարևոր հարևաններեն միևնույնն է / Հարցազրույցը Ս. Տեյիրմենջյանի: - Ժամանակ (Թուրքիա), 3 մարտի:

Փոքր ժամանակ խաղում էինք չլիկ-դաստա, էշ- միլիցա, բանկա-փլավ / Հարցազրույցը Հ.Խուրշուդյանի: - Մոլորակ, 12 մարտի:

Միավորման գաղափարը երբեք չենք ժխտել [Ճեպազրույց] / Արմենպրես: - Ազգ, 17 մարտի:

Կեղծ ընտրություններ՝ կեղծ կյանք [Ելույթ մարտի 14-ին կայացած հանրահավաքում]: - Այժմ, 18-24 մարտի:

ԱԺՄ-ի հայտարարությունը: [Արտահերթ նախագահական ընտրությունների առաջին փուլից հետո]: - Այժմ, 25-31 մարտի:

Մենք ենք տալու Հայաստանին ապագա: [Ելույթ ԱԺՄ կոնֆերանսում]: - Այժմ 25-31 մարտի:

Le Karabagh ne doit pas etre un theme de campagne electorale / Propos recueillis par L.Baghdassarian. - Nouvelles d'Armenie, 1998, mars, p. 16.

Կապրենք, կտեսնենք / Հարցազրույցը Ռ.Խաչատրանի [«Ազատություն» ռ/կ): - Առա]վոտ, 23 ապրիլի:

Միշտ ասպարեզում լինել, չի նշանակում միշտ աշխատել [Հարցազրույց «Ա1+» հեռուստաընկերությանը]: - Այժմ, 20- 26 մայիսի:

Ունենք ոչ լեգիտիմ իշխանություն... և հիվանդ եկեղեցի / Հարցազրույցը Ն.Գրիգորյանի: - Հայք, 4 սեպտ.:

Ամեն ինչ դեռ առջևում է: [Ելույթ ԱԺՄ կոնֆերանսում]: - Այժմ, 16-22 սեպտ.:

Ժողովուրդը գնում էր դառնալու իր երկրի տերը [Ելույթ հանրահավաքում]: - Այժմ, 30 սեպտ.-6 հոկտ.:

Ես ինձ համարում եմ «լավը» / Հարցազրույցը Ա.Իսրայելյանի: - Առավոտ, 17 հոկտ.:

Դարը նախ նկարում են նկարիչները: - Հայաստանի Հանրապետություն, 4 դեկտ.:

Այսօր կարևոր էր, և ես եկա / Հարցազրույցը Ն.Դիլբարյանի: - Ազգ, 5 դեկտ.:

Եվ նույնիսկ Վազգեն Մանուկյանը: [Ճեպազրույց]: - Հայոց աշխարհ, 5 դեկտեմբերի:

Ñàìàÿ ñëëüíàÿ îïïîçèöèÿ – íàðîä / Èíòåðâüþ Ì.Ãðèãîðÿí.-Ãîëîñ Àðìåíèè, 5 äåêàáðÿ.

Մեր նպատակը մնացել է նույնը: [Ելույթ ԱԺՄ 10-րդ համագումարում]: - Այժմ, 16-22 դեկտ.:

Հրայր Մարուխյանը ոչ դաշնակցականների աչքերով / Հարցազրույցը Վ. Վարդանյանի: - Հայոց աշխարհ, 25 դեկտ.:

1999

Անձնական հաշվարկներում իշխանությունները չեն սխալվում / Հարցազրույցը Գ.Մովսիսյանի: - Հայացք Երևանից, թիվ 10, հունվար, էջ 9-11:

«Մեկ բան է փոխվել»: Շարժումը ծնեց նաև իր վստահությանը ոչ արժանի մարդիկ / Հարցազրույցը Թ.Հակոբյանի: - Երկիր, 4 մարտի:

Ադրբեջանը հայտնվել է վատ վիճակում / Հարցազրույցը Ս.Տրուզյանի: - Հայոց աշխարհ, 17 մարտի:

Աժ ընտրություններից հետո քաղաքական դաշտը գուցե մի քիչ մաքրվի / Հարցազրույցը Ա.Եսայանի: - Հայոց աշխարհ, 17 ապրիլի:

Ցանկացած խենթություն ընդունելի է, եթե ուրիշներին չես վնասում / Հարցազրույցը Ա.Եսայանի, Հ.Բերբերյանի: - Հայոց աշխարհ, 21 ապրիլի:

Áåç ó÷àñòèÿ Êàðàáàõà êàðàáàõñêèé âîïðîñ íå ðåøèòñÿ / Èíòåðâüþ Ñ.Ïåòðîñÿí. - Ãîëîñ Àðìåíèè, 12 îêòÿáðÿ.

Եթե այլոց ձեռքերում լիներ… / Ճեպազրույցը Կ.Դանիելյանի: - Հայ գործարար, 26 հոկտեմբերի-1նոյեմբերի:

Կառավարությունը պետք է աշխատի / Հարցազրույցը Հ.Գևորգյանի: - Հայկական ժամանակ, 29 հոկտ.:

2000

Հոկտեմբերի 27, նախագահ, խորհրդարան...[Հարցազրույց «Եռանկյունուն»]: - Երկիր, 28 ապրիլի:

Մինչև ժողովուրդը երկրի տերը չդառնա, երկիրը չի փոխվի / Հարցազրույցը Ռ.Հովհաննիսյանի: - Հայացք Երևանից, թիվ 5, մայիս, էջ 9-11:

Â ïîëèòèêå íóæíî òåðïåíèå [Èíòåðâüþ]. - Àðãóìåíòû è ôàêòû, N 42.

ԱԺՄ-ն ու՞մ է ծառայելու, Աստծու՞ն, թե՞ սատանային / Հարցազրույցը Ա.Սիմոնյանի: - Երկիր, 19 դեկտ.:

2001

Քաղաքականությունը միայն զիջումներ չէ, պետք է պաշտպանես սեփական շահերդ / Հարցազրույցը Վ.Վարդանյանի: - Հայոց աշխարհ, 16 հունվ.:

Նախագահներն իրենց պետությունների շահերին դեմ չեն գնա / Հարցազրույցը Վ.Վարդանայանի: - Հայոց աշխարհ, 22 մարտի:

ԱԺՄ-ում կատարվեց այն, ինչ տեղի է ունենում ամբողջ հասարակությունում / Հարցազրույցը Ա.Իսրայելյանի: - Առավոտ, 9 հունիսի:

Այս կամ այն անձին վստահելով չէ, որ պետք է հարցը լուծել / Հարցազրույցը Փ. Մելիքսեթյանի: - Իրավունք, թիվ 43, հունիս:

Տագնապներով լի 3 օր / Հարցազրույցը Ս.Սեյրանյանի: [ÃÊ×Ï-ի մասին]: - Հայոց աշխարհ, 21 օգոստ.:

Íè÷òî íå ìåøàåò ðàáîòàòü íàä îñóùåñòâëåíèåì çàäóìàííîãî. [Îòâå÷àåò íà âîïðîñ êîððåñïîíäåíòà "ÃÀ" îá èòîãàõ Êàðàáàõñêîé âîéíû]. - Ãîëîñ Àðìåíèè, 1 ñåíòÿáðÿ.

Ինձ ոգեշնչում է ժողովրդի կամքը / Հարցազրույցը Գ.Պողոսյանի: - Ժամանակ, 4 սեպտ.:

Ձայն ժողովրդի / Հարցազրույցը Լ.Մարտոյանի: - Ժամանակ, 20 սեպտեմբերի:

Հակառակորդի համեմատ մեր վիճակը լավ է / Հարցազրույցը Ա.Հակոբյանի: - Հայոց աշխարհ, 31 հոկտ.:

Â Àðìåíèè ñòðîèòñÿ ýêîíîìèêà, íå èìåþùàÿ áóäóùåãî. [Îòâå÷àòî íà âîïðîñ "Ãîðÿ÷åé ëèíèè"]. - Ãîëîñ Àðìåíèè, 8 íîÿáðÿ.

Պաուզան ավարտվել է ./ Հարցազրույցը Ա.Իսրայելյանի: - Առավոտ, 4 դեկտ.:

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1989

Վազգենը: - Տեղեկագիր (14-ի պաշտպանության խորհուրդ), թիվ 3, էջ 4-8:

Ղարաբաղ կոմիտեի ձերբակալված անդամներուն մասին: - Յառաջ, 9 մարտի:

Alain Garignon Pasraine Vasken Manoukian. -Azad magazine, N 45.

1990

Ostian E. Vous representez un grand et juste combat. –Grenoble, 23 juin.

Maison de la culture Armenienne. Manoukian, de'pute' du Mouvement national arme'nien. Propos sur l'independanc....-Grenoble, 24 juin.

Pour mieux connaitre la diaspora. –Azad magazine, 1990, N 50, p. 1-3.

Oskanian V. A new era - AIM, Sept.

Çèãçàãè äåìîêðàòèè: Íîâûé ïðåìüåð ïîëó÷åò îñíîâû ïîëíîì÷èÿ. –Äåëîâîé ìèð,16-23 äåêàáðÿ.

1991

ANM's Second Conference. -AIM, January.

Malkasian M. ANM: The Road to Leadership. - AIM, January.

Վարչապետ Վազգեն Մանուկյանի հանդիպումը Ջեյմս Բեյքերի հետ: - Հայաստանի Հանրապետություն, 19 մարտի:

Հարության խորհուրդը [Զատիկի տոնի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 2 ապրիլի:

Հեռագիր իրանից: Նույն տեղում:

ՀՀ վարչապետի այցը Ամստերդամ: - Հայաստանի Հանրապետություն, 16 ապրիլի:

Strijbosch M. Soviet-Unie zal vroerg of laat uiteenvallen. –Elsevier, 18 mei, p. 18.

Հայաստանի վարչապետը օգնություն է խնդրում Արևմուտքից: - Ազատամարտ, 3 հուլիսի:

Հայաստանի վարչապետը՝ Վ.Մանուկյան Փարիզ ժամանեց հուլիսի 8-ին: - Յառաջ, 9 հուլիսի:

Հանդիպումներ Ֆրանսիայում: - Հայաստանի Հանրապետություն, 10 հուլիսի:

L'Armenie Joue perso. - Liberation, 10 juillet.

Millot Lorraine. L'Armenie Joue perso. –Monde, 10 juillet.

Le traite' d'union n'a aucune espe'ce d'importance/ M.J. - Le monde, 11 juillet.

Քերսոն է. Վ.Մանուկյան տեսակցությունը: - Յառաջ, 10 հուլիսի:

Վ. Մանուկյանի այցելութեան առթիվ: - Յառաջ, 11 հուլիսի:

Վ.Մանուկյանի վերջին հանդիպումները: - Յառաջ, 12 հուլիսի::

Հայաստանի վարչապետի այցը Փարիզ: - Ազգ, 13 հուլիսի:

ՀՀԾ խորհրդի հայտարարությունը [հուլիսի 14-ի]: - Հայաստանի Հանրապետություն, 17 հուլիսի:

L'ouest doit aider directement les republiques.-Fig-Eco, 17 Juillet. Նույնը՝ Հայաստանի Հանրարապետություն, 6 օգոստ.:

ՀՀ Նախարարների խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանի մամլո ասուլիսը [օգոստ. 12-ին ՀՀ ԳԽ նիստերի դահլիճում] / Արմենպրես: - Հայաստանի Հանրապետություն, 14 օգոստ.:

Ìèíàñÿí Ã. Õðîíèêà ïåðåâàðîòà è ñîîðòèâëåíèÿ.- Íåçàâèñèìàÿ ãàçåòà, 22 àâãóñòà.

Oskanian V. Hambartzoumian C. Where Now? – AIM, august/september, p. 25-26.

Մելքոնյան Ե. Վարչապետը փոխու՞մ է գնացքը: - Ազգ, 2 հոկտ.:

Անկախ Հայաստանի առաջին վարչապետը հրաժարական է տալիս: - Անդրադարձ, 3 հոկտ.:

Արշակունի Վ. Փոկեր խաղացողի քաղաքական մեկնաբանումը: - Կանքեղ, 12 հոկտ.:

Անտոնյան Մ. Վազգեն Մանուկյանը բացում է փակագծերը: - Ազատամարտ, նոյեմբեր:

Vazgen Manoukian: ''J' ai parfois le sentiment que L'Armenie est diriqe' de l'exte'rieur. –Hajastan, novembre, p. 8.

Ïðåññ-êîíôåðåíöèÿ Â.Ìàíóêÿíà.-Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 24 íîÿáðÿ.

Oskanian V. Looking Ahead. – AIM, nowember.

Oskanian V. War is inevitable. – AIM, december.

1992

Ասատրյան Հ. «Պետք է կարողանանք մեր ազգային արժեքներն ու հողը պաշտպանել» [ասաց սահմանամերձ գոտու հանձնաժողովի նախագահ Վ.Մանուկյանը]: - Ազգ, 16 հուլիսի:

Վազգեն Մանուկյանը դուրս է եկել ԱԺՄ-ից: - Ազգ, 11 սեպտ: Ստորագր.՝ Ա.Հ.

Նախագահը ներկայացրեց Վազգեն Մանուկյանին: - Ազգ, 15 սեպտ.:

Ìóðàäÿí È. Ìû ñ âàìè, à íå ÎÎÍ è íå ÑÁÑÅ, áóäåì äîêàçûâàòü ñóâåðåíèòåò Àðìåíèè. - Ãîëîñ Àðìåíèè, 17 ñåíòÿáðÿ.

Արցախը հայ ազգի գոյատևման բանալին է: - Ազգ, 19 սեպտ.:

Արցախը հայ ազգի գոյատևման բանալին է: - Երկիր, 19 սեպտ.:

Մարգարյան Մ. Վազգեն Մանուկյանի մամուլի ասուլիսը: - Հայաստանի Հանրապետություն, 19 սեպտ.:

Վազգեն Մանուկյան. Ես չէի կարող դրսում մնալ, դրված է Արցախի լինել-չլինելու խնդիրը [սեպտեմբերի 19-ին ԳԽ դահլիճում տված ասուլիսի մասին]: - Ազգ, 19 սեպտ.:

Ասատրյան Հ. Պետնախարար Վազգեն Մանուկյանը՝ պաշտպանության նախարար: - Ազգ, 21 հոկտ.:

«Հոբլի ծրագիրը չի իրականանա, և Ջանգեզուրը ոչ ոք մեզանից չի վերցնի»: [Սեպտեմբերի 19-ին ԳԽ դահլիճում տված ասուլիսի մասին]: - Հայք, 23 սեպտ.:

Արցախի խնդիրը մեր ազգային հարցն է: - Երկիր, 3 նոյեմբ.:

Հայաստանը բանակի կազմավորման աշխատանքներ է տանում: - Երկիր, 3 նոյեմբ.:

Վազգեն Մանուկյան. «Սպաների զորակոչը կնպաստի բանակի ստեղծմանը»: - Ազգ, 3 նոյեմբ.: Ստորագր.՝ Ա.Հ.

Արղության Ա. Խաղաղություն հաղթանակի միջոցով: - Ազգ, 1 դեկտ.:

Բոլորս ձգտում ենք խաղաղության, բայց… [Մամլո ասուլիս]: - Հայաստանի Հանրապետություն, 1 դեկտ.:

Մամիկոնյան Ռ. Խաղաղության հասնել հաղթանակած [Մամլո ասուլիս]: - Երկիր, 1 դեկտ.:

Une matine au parlament…/Sona Nigolian -La Reveue du Liban, 18 juillet.

Òîï÷ÿí Ê. Âàçãåí Ìàíóêÿí íàñòîîí ðåøèòåëüíî. -Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 1 äåêàáðÿ.

1993

Պասկևիչյան Տ. Պատերազմի նախարարը: - Ար, 14-21 հունվարի:

Ով է լինելու Հայաստանի նոր վարչապետը: - Ազգ, 4 փետրվարի:

Բաղդասարյան Ա. Ղարաբաղի ռազմական հաջողությունները մեր հզորության արդյունքն են: - Ազգ, 6 ապրիլի:

Ամենախաղաղասեր ուժը բանակն է [Վ.Մանուկյանի մամուլի ասուլիսը]: - Երկիր, 8 ապրիլի:

Ջորյան Հ. Արցախը կհաղթի [ՊՆ պաշտոնակատար Վ.Մանուկյանի ճեպազրույցը]: -Հայաստանի Հանրապետություն, 8 ապրիլի:

Àãàáåêÿí Ø. Ïðàâäà ïðîñòà, íî êîãäà íîà íå íàðóêó, è Àðìåíèþ ïðåäñòàâëÿþò àãðåññîðîì, è Àðöàõ.- Ãîëîñ Àðìåíèè, 10 àïðåëÿ.

Ղարաբաղյան կոնֆլիկտը հնարավոր չէ լուծել ռազմական միջոցով: - Հայաստանի Հանրապետություն, 6 մայիսի:

Ինչ են գրում Ֆրանսիայի թերթերը Ղարաբաղի մասին: - Հայաստանի Հանրապետություն, 15 մայիսի:

Հովհաննիսյան Լ. Առաջին զորահանդեսից առաջ: - Ջինվոր, 1-10 հունիսի:

Վազգեն Մանուկյանը գնու՞մ է, թե՞ մնում: - Երկիր, 6 հուլիսի:

Իրո՞ք արծակուրդ, պարոն պաշտպանության նախարար: - Երկիր, 7 հուլիսի:

Vasken Manoukian, ministre d'Armenie, en visite privee sur l'agglomeration / S.J.. –Nord Dauphine, 22 aout.

Savoye J. Vasken Manoukian: La croisade du coeur. - Le Grand Grenoble, 23 aout.

Վազգեն Մանուկյանը կրկին հեռանում է, կամ հաղթող բանակի պարտված հրամանատարը: - Երկիր, 24 օգոստ.:

Ìàíó÷àðîâà Í. Âèíîâàòà íå ôèãóðà, à ïîðòíé. –Âðåìÿ, 25 àâãóñòà.

Ãðèãîðÿí Ì. Èãðû ñ Âàçãåíîì èëè èãðû Âàçãåíà ?. - Ãîëîñ Àðìåíèè, 26 àâãóñòà.

Un ministre armenien en visite. –Le grand Grenoble, 27 aout.

Åðêàíÿàí À. Âàçãåí Ìàíóêÿí æääò íîâîãî íàçíà÷åíèÿ. [Áðèôèíã]. –Ãîëîñ Àðìåíèè, 28 àâãóñòà.

Փակ նիստում փակ ինֆորմացիա չկա: - Երկիր, 18 դեկտ.:

1994

Մելքոնյան Գ. Վեց հարց Վազգեն Մանուկյանին: - Հայաստանի Հանրապետություն, 29 փետրվ.:

Աշոտ Մանուչարյանը միացնում է քաղաքական ժամացույցը: - Ար, թիվ 2:

Խաչատրյան Ռ. Վազգեն Մանուկյան. «Ստվերային կաբինետները միշտ էլ ստվերում են մնում»: - Ազգ, 9 ապրիլի:

Մամիկոնյան Ո. Վերջապես խոսեց Վ.Մանուկյանը: - Երկիր, 13 օգոս.:

Առաքելյան Վ. Բաց նամակ պարոն Վազգեն Մանուկյանին: - Հայք, 6 սեպտ.:

Haroutinian -Ghazarian S. Adding up for the long run. – AIM, october.

Մելիքյան Խ «Ղարաբաղից» հետո: [Մոսկովյան «Նովոյե վրեմյա» թերթում Ս. Վոսկրեսենսկու հրապարակած հոդվածների անդրադարձը]: - Ասպարեզ, 14 դեկտ.:

1995

Ëåçâèåì óêàçà-ïî ãîðëó äàøíàêñêîé ïàðòèè. - Óðàðòó, N 1-2.

Վազգեն Մանուկյանն այցելելու է Կանադա: - Ազգ, 25 փետրվ.:

Սկսավ Վազգեն Մանուկյանի Գանատա այցելությունը: - Հորիզոն, 27 մարտի:

Խուրշուդյան Հ. Բադալյան Ն. Վազգեն Մանուկյան. քաղաքական դիմանկար: -Լրագիր, 2 մայիսի:

Վազգեն Մանուկյան. Ցավում եմ, որ ժողովուրդն ատում է իշխանություններին (Ա-1 հեռուստաընկերությանը հյուր): - Լրագիր, 16 մայիսի:

ԱԺՄ-ն ժողովրդին կոչ է անում մասնակցել ընտրություններին: - Ազգ, 26 մայիսի:

Կամ հաղթանակ, կամ ճահիճ: - Լրագիր, 26 մայիսի:

ÍÄÑ: öåëü-äîñòèæåíèå àðìÿíñêîé ìå÷òû. -Ãîëîñ Àðìåíèè. 6 èþíÿ.

Վազգեն Մանուկյան. Պարտվելու է ոչ թե ընդդիմությունը, այլ ազգը: - Լրագիր, 13 հունիսի:

Մտածելու համար՝ հինգ օր: [Հունիսի 16-ին կայացած հանրահավաքը]: - Լրագիր, 17 հունիսի:

Պետրոսյան Ս. Ընդիմությունը սպառնում է անցնել վճռական քայլերի: [Հունիսի 16-ին կայացած հանրահավաքը]: - Ազգ, 17 հունիսի:

Ազատության հրապարակում «հանրապետության 2-րդ իշխանությունը» դիմավորեց կրակոցներով: - Ազգ, 22 հունիսի:

Մարտիրոսյան Գ. Դիլբարյան Ն. Դա Մանուչարյանի սադրանքն էր: - Առավոտ, 22 հունիսի:

Փաշինյան Ն. Հեղաշրջման փոխարեն այլընտրանքային իշխանություն: [Հունիսի 20-21-ը նախագահի նստավայրի պաշարումը]: - Լրագիր, 22 հունիսի:

Հովհաննիսյան Ա. Աղետի գոտու վատնված տարադրամային միջոցների, Վազգեն Մանուկյանի և իշխանության մասին: - Երկիր 23 հունիսի:

Ղազինյան Ա. Իշխանություններն անզոր են քաղաքացիների դեմ: - Ազգ, 7 հուլիսի:

Âîçìîæåí ëè â Àðìåíèè "37 ãîä"? –Óðàðãó, àâãóñò.

Vazken Manoukian. –Ellada, 21 zeptebpioy

Վազգեն Մանուկյան Հունաստանի մեջ: - Ասպարեզ, 26 սեպտ.:

Պետրոսյան Գ. Հետընտրական սոցիոլոգիական հարցումները փաստում են: -Հայաստանի Հանրապետություն,12 հոկտ.:

Հրապարակային հանդիպում Վազգեն Մանուկյանի հետ: - Ասպարեզ, 18 հոկտ.:

Վազգեն Մանուկյանի հանդիպումները Լոս Անջելեսի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: [Մամլո ասուլիս]: - Ասպարեզ, 20 հոկտ.:

Հայրապետյան Օ. Վազգեն Մանուկյանի մամլո ասուլիսը: - Ասպարեզ, 21 հոկտ.:

Վ. Մանուկյանի ասուլիսը Լոս Անջելեսում: - Լրագիր, 25 հոկտ.:

Թաղթաջյան Մ. Այսօր հայու հոգին չի թաւծում Հայաստանում: - Ասպարեզ, 27 հոկտ.:

Վ. Մանուկյանի մամլո ասուլիսը Աթենքում: - Առավոտ, 27 հոկտ.:

Վազգեն Մանուկյան Լոս Անջելեսի մեջ: - Հառաջ, հոկտ.:

Վազգեն Մանուկյանը հրավիրվեց ԱՄՆ-ի Կոնգրես: - Առավոտ, 31 հոկտ.:

Vazgen Manukian meets with Doie, Kennedy, others. - Asbarez, 4 nevember.

Ցանկացած ճահիճ օվկիանոսի համեմատ խաղաղ է: - Իրավունք, նոյեմբ.:

Հայաստանում հինգ թայֆա կա. Այդպես է կարծում Դավիթ Վարդանյանը: [Նոյեմբերի 30-ին կայացած ԱԺՄ–ի ասուլիսը]: - Առավոտ, 1 դեկտ.:

Վարդանյան Հ. Իշխանություններին հեռացնելու հարցը - սա է միակ խնդիրը [ԱԺՄ 6-րդ համագումարը]: - Հայք, 11դեկտ.:

Դիլբարյան Ն. Պարտության դասերը: [ԱԺՄ 6-րդ համագումարը]: - Առավոտ, 12 դեկտ.:

Խաչատրյան Մ. Վազգեն Մանուկյանը պարզում է ԱԺՄ տեսակետները: [ԱԺՄ 6-րդ համագումարը]: - Լրագիր, 12 դեկտ.:

Պրագմատիզմը և քաղաքական իրատեսությունը: - Առավոտ, 12 դեկտ.: Ստորագր. Ն.Դ.

Վարդանյան Դ. Պետությունը ստեղծվում է, բայց ինչպիսի՞ / Հարցազրույցը Ն. Դիլբարյանի: - Առավոտ, 13 դեկտ.:

Â ÍÄÑ ïîìèíàëè íåãîäÿââ. [VI ñúåçä]. Âðåìÿ. 13 äåêàáðÿ.

Àêîïÿí À. ÍÄÑ äåëåãò ñòàâêó íà ïðåçèäåíòñêóþ âûáîðû.- Ãîëîñ Àðìåíèè, 14 äåêàáðÿ.

Vazgen Manoukian Re-Elected NDU Chairnan at Party's Sixth Assembly. -The California courier, 21 december.

Ազգային ժողովրդավարական միության 6-րդ համագումարը: - Հորիզոն, 25 դեկտ.-1 հունվ.:

L'UND reaffirme son appartenance al'opposition. –Horizon, 25 dec.

ԱԺՄ-ի համագումարը և Վ.Մանուկյանի ելույթը: - Յառաջ, 30 դեկտ.:

1996

Պետության ղեկավարը պետք է զուսպ լինի / Սնարք: - Լրագիր օր, 24 հունվ.:

Haroutinian-Ghazarian S. Running for president.-AIM, january.

Դիլբարյան Ն. ԱԺՄ-ն քաղաքական խրամատներում: - Առավոտ, 16 ապրիլի:

Հարությունյան Մ. ԱԺՄ համագումարում ՀՀ նախագահական թեկնածու կառաջադրվի Վազգեն Մանուկյանը: - Լրագիր օր, 16 ապրիլի:

ÍÄÑ íàçûâàåò êàíäèäàòà. - Ãîëîñ Àðìåíèè, 16 àïðåëÿ.Ïîäïèñü: Ì.Ã..

ÍÄÑ íà÷èíàåò ïðåäâûáîðíóþ êàìïàíèþ. - Âðåìÿ, 17 àïðåëÿ.

Ìêðò÷ÿí Ã. ×üè ëèöà "ïåðåæèâàþò" ïðîãðåññ. - Ãîëîñ Àðìåíèè, 20 àïðåëÿ.

Զաքարյան Ա. «Ընտրությունները ժողովրդի կադրային քաղաքականությունն է» [Մայիսի 17-ին «Կանազի» մշակույթի տանը ընտրողների հետ հանդիպման մասին]: - Առավոտ, 18 մայիսի:

Զաքարյան Ա. Զյուգանովը պարկեշտ մարդ է: Այսպիսին է Վազգեն Մանուկյանի տպավորությունը: - Առավոտ, 21 մայիսի:

Հովհաննիսյան Ս. Սկզբունքների վախճանը: Նախագահական ընտրարշավի հողմապտույտում: [Մայիսի 17-ին «Կանազի» մշակույթի տանը ընտրողների հետ հանդիպման մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 21 մայիսի:

Միապետական համակարգի պայմաններում որևէ խնդիր չի կարող լուծվել: [Մայիսի 17-ին «Կանազի» մշակույթի տանը ընտրողների հետ հանդիպման մասին]: - Այժմ, 22-28 մայիսի:

Ãðèãîðÿí Ì. Âàçãåí Ìàíóêÿí: "Ñòðàõ ïåðää áóäóùèì çàñòàâëÿò îãëÿäûâàòüñÿ â ïðîøëîå" [Î âñòðå÷å ñ èçáèðàòåëÿìè â äâîðöå "Êàíàç"]. - Ãîëîñ Àðìåíèè, 23 ìàÿ.

Ետ «դեպի պայծառ ապագա» ուղիներ չկան: [Հանդիպում բնակչության հետ] / Սնարք: - Լրագիր օր, 24 մայիսի:

Հակոբյան Ս. Ոչ ոք բեմ չբարձրացավ: - Կոմունիստ, 24 մայիսի:

Սարգսյան Վ. «Իմ չծնված երեխան արդեն իսկ պարտք է արևմտյան մանչուկին»: [Բնակչության հետ Վ.Մանուկյանի հանդիպումների մասին]: - Այժմ, 29 մայիսի - 4 հունիսի:

Հակոբյան Վ. «Հակառակորդն այնքան ուժեղ չէ, որքան թվում է»: - իրավունք, 8-14 հունիսի:

Սարգսյան Վ. Իշխանյան Վ. «Անվերահսկելի իշխանությունը բերում է այլասերում» [Նախագահական թեկնածուի հանդիպումը բնակչության հետ «Արագած» կինոթատրոնում]: - Այժմ, 12-18 հունիսի:

Այս ընտրությունը թագավորի ընտրություն չէ: Ցանկացած ծրագիր իր հիմքում պետք է ունենա հասարակությանը վախից ազատելու խնդիր: [ԱԺՄ 7-րդ համագումարի մասին]: - Լրագիր օր, 13 հունիսի:

Ասատրյան Հ. Ազգային-ժողովրդավարները՝ ՀՀՇ-ի կոմկուսի մեջտեղում: Նախագահության թեկնածու առաջադրվեց ՀՀՇ-ի նախկին գաղափարախոս, ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը: - Ազգ, 13 հունիսի:

Հարությունյան Մ. Այս ընտրությունը թագավորի ընտրություն չէ: - Լրագիր օր, 13 հունիսի:

Նախորդների նման միաձայն Վազգեն Մանուկյանն առաջադրվեց նախագահի թեկնածու: - Առավոտ, 13 հունիսի: Ստորագր. Վ.Հ.

Վազգեն Մանուկյան՝ ԱԺՄ-ի նախագահական թեկնածուն: - Ազատ օր, 13 հունիսի:

Խաչատրյան Մ. Հատվածներ ԱԺՄ համագումարում Վազգեն Մանուկյանի ելույթից: - Լրագիր օր, 14 հունիսի:

Գալաջյան Հ. «Լուլիկ ցանողին և չարչուն բարձրագույն կրթություն պետք չէ»: [ԱԺՄ 7-րդ համագումարի մասին]: - Իրավունք, 15-21 հունիսի:

Àêîïÿí À. Ñâîáîäà ïðåâûøå âñåãî? [VII ñúåçä ÍÄÑ]. - Ãîëîñ Àðìåíèè, 15 èþíÿ.

Ìàíó÷àðîâà Í. “Ó Ãðóçèè-ìîðå, ó Àçåðáàéäæàíà- íåôòü, ó íàñ- íàðîä... ” [VII ñúåçä ÍÄÑ]. - Âðåìÿ, 15 èþíÿ.

ԱԺՄ VII համագումարի որոշումը և Վ.Մանուկյանի համառոտ կենսագրությունը: - Այժմ, 19-25 հունիսի:

Սարգսյան Վ. Արժանապատիվ կյանքի համար պետք է պայքարել: [Նախագահի թեկնածուի հանդիպումները բնակչության հետ]: - Այժմ, 24-30 հունիսի:

«Դաշնակցությունը միակ ինկուբատորն է սփյուռքահայության համար», - գտնում է Վազգեն Մանուկյանը: [Նախընտրական արշավ] / Նույյան տապան: - Այժմ, 4 հուլիսի:

Խաչատրյան Մ. Նախընտրական ընտրարշավն սկսվե՞լ է: - Մոլորակ, 4 հուլիսի:

Գրիգորյան Մ. «Ժողովուրդը պետք է սատար կանգնի իր քվեին»: [Նախընտրական արշավի մասին]; - Այժմ, 10-16 հուլիսի:

Ìàíó÷àðîâà Í. Ïîìàøè ðóêîé íàðîäó, ïðåçèäåíò. - Âðåìÿ, 10 èþëÿ.

Ãðèãîðÿí Ì. Íèêîí íå ïîìîæåò íàì, êðîìå íàñ ñàìèõ. - Ãîëîñ Àðìåíèè, 13 èþëÿ.

Իշխանյան Վ. Երկիրը առանց հստակ նպատակների չի կարող զարգանալ: [Եղեգնաձորի բնակչության հետ հանդիպման մասին]: - Այժմ, 17-23 հուլիսի:

Avedikian H. Portrait du pre’sident. - Nouvelles L’Arme’nie, juillet, p. 12-14.

Halpin T. Electing to Continue. A certain win and an uncertain road ahead. - AIM, July, p. 21-23.

84084 [Նախընտրական ստորագրահավաք]: - Այժմ, 7-13 օգոստ.:

84084 ïîäïèñè-â ïîääåðæêó Âàçãåíà Ìàíóêÿíà. - Ãîëîñ Àðìåíèè, 8 àâãóñòà.

Հակոբյան Վ. Մանուկյան Վազգեն(13.02.1946) [Դիմանկար ըստ համաստեղության]: - Մոլորակ, 9 օգոստ.:

Գալաջյան Հ. Ընտրություններում հաղթելու թվաբանությունը: - Իրավունք, 10-16 օգոստ.:

Մերուժան. Նկատառումներ: - Մոլորակ, 13 օգոստոսի:

Մեկին՝ պարտք, մյուսին՝ պատասխանատվություն: [Նախընտրական արշավի մասին]: - Այժմ, 14-20 օգոստ.:

Սադոյան Ա. Գնահատականը միարժեք է [Նախընտրական արշավի մասին]: - Այժմ, 14-20 օգոստ.:

Սարգսյան Վ. «Հուլիսի 5-ով» ընտրված նախագահը ծեռնոց է նետելու ողջ ժողովրդին: [Նախընտրական արշավը Գյումրիում]: - Այժմ, 21-27 օգոստ.:

Petrosyan D. Vazgen Manoukian. –Noyan tapan, issue128, 28 august.

ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի հայտարարությունը [Քելբաջարի գրավման վերաբերյալ]: - Հայաստանի Հանրապետություն, 31 օգոստ.:

Բաղիրյան Ի. Ճգնաժամից դուրս գալու ռազմավարությունը: Ճգնաժամի համակարգային և ինստիտուցիոն բնութագրերը. դրա պատճառահետևանքային մոդելը: - Այժմ, 4-10 սեպտ: [Վազգեն Մանուկյանի նախընտրական ծրագրի հիմնադրույթների քննարկում և այն հիմնավորող տնտեսական հետազոտություններ, հաշվարկներ]:

Մելքումյան Մ. Մի շարք նկատառումներ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման մասին: - Այժմ, 4-10 սեպտ.: [Վազգեն Մանուկյանի նախընտրական ծրագրի հիմնադրույթների քննարկում և այն հիմնավորող տնտեսական հետազոտություններ, հաշվարկներ]:

Ëåâîí Òåð-Ïåòðîñÿí: “ß íå ïðèçíàþ ïðåäàòåëüñòâà â ïîëèòèêå...” [Èíòåðâüþ êîðð. “Ìîñêîâñêèå íîâîñòè” À. Òàòåâîñÿíó ío è Ì.Øâåëåâó]. - Âðåìÿ, 6 ñåíò.

Ասատրյան Հ. Վազգեն Մանուկյան. «Արտաքին ուժերը չունեն այն լծակները, որ Հայաստանում իշխանություն փոխեն»: [Նախընտրական արշավ]: - Ազգ, 7 սեպտ.;

Դիլբարյան Ն. ՀՀՇ-ական կամ ԱԺՄ-ական Հայաստան չի լինի [Ժուռն. տանը կայացած մամլո ասուլիսի մասին]; - Առավոտ, 7 սեպտ.:

Գալաջյան Հ. Հասարակական գիտակցության մեջ Վ.Մանուկյանն արմատավորվում է որպես Լ.Տեր-Պետրոսյանի այլընտրանք: - Իրավունք, 7-13 սեպտ.:

Ընդդիմությունը իշխանությունը փոխելու կոչ է անում / Նույյան տապան: - Ազգ, 7 սեպտ.:

Հարությունյան Մ. Վազգեն Մանուկյանը Հայաստանը չի դարձնի ԱԺՄ-ական երկիր: [Նախընտրական արշավ]: - Մոլորակ, 1996, 7 սեպտ.:

Տեր-Վահանյան Հ. Երևանում թևածում է 1988-ի ոգին: [Սեպտ. 5-ի հանրահավաքի մասին]: - Իրավունք, 7-13 սեպտ.:

Âîåðåä - â 1988... [Î ìèòèíãå â Òåàòðàëüíîé ïëîùàäè]. - Ãîëîñ Àðìåíèè, 1996, 7 ñåíò. Ïîäïèñü: À.Ò.

Îïïîçèöèÿ ïðèçûâàåò...[Î ìèòèíãå]. - Âðåìÿ, 7 ñåíò.

Գրիգորյան Մ. Ընտրելով բարոյականությունը: [Նախագահական թեկնածուի մասին]: - Այժմ, 11-17 սեպտ.:

Դիլբարյան Ն. Հուզախառն տեսարաններ և օրինաչափ համաձայնություն [Ազգային համաձայնության միասնական թեկնածուի առաջադրման հայտարարության մասին]: - Առավոտ, 11 սեպտ.:

Խաչատրյան Մ. Միասնական թեկնածու դառնալու երեկոյան: - Մոլորակ, 11 սեպտ.:

Հարությունյան Մ. Ոչ թե առաջնորդը թիմով, այլ թիմը՝ առաջնորդով: [Միասնական թեկնածուի հայտարարության մասին]: - Մոլորակ, 11 սեպտ.:

Հայաստանի «Սահմանադրական իրավունք» միության հայտարարությունը Հայաստանի նախագահի ընտրության մասին; - Այժմ, 11-17 սեպտ.: Նույնը՝ Իրավունք, 7-13 սեպտ.:

Հայտարարագիր ազգային համաձայնության միասնական թեկնածուի առաջադրման մասին: - Այժմ, 11-17 սեպտ.:

Հովհաննիսյան Ռ. Նոր քաղաքական իրադրություն Հայաստանում: Ի՞նչ կտա «Ազգային համաձայնության» միասնական թեկնածուի առաջխաղացումը: - Ազգ, 11 սեպտ.:

Միավորումը հաղթանակի գրավականն է: [Նախագահական միասնական թեկնածուի մասին 5 ընդդիմադիր կուսակցությունների հրավիրած մամլո ասուլիսի մասին]: - Այժմ, 11-17 սեպտ.:

Մկրտչյան Ն. Այընտրանքը ձևավորվեց: Վազգեն Մանուկյան. «Մեզ միավորել է անհանգստությունը մեր երկրի ապագայի հանդեպ»: [Միասնական թեկնածուի հայտարարությունը]: - Ազգ, 11 սեպտ.:

Սարգսյան Մ. Սա երկար ժամանակ լինելու է վերջին խաչմերուկը: [Սեպտ. 5-ի հանրահավաքի մասին]; - Այժմ, 11-17 սեպտ.:

Âàçãåí Ìàíóêÿí-åäèíûé êàíäèäàò îò ïÿòè ïîïóëÿðíûõ ïàðòèé / Ñíàðê.- Âðåìÿ, 11 ñåíòÿáðÿ.

Ìàíó÷àðîâà Í. Â êðóãå òðåòüåì...-Âðåìÿ, 11 ñåíòÿáðÿ.

«Ազգային առաջադիմությունը» պաշտպանում է միասնական թեկնածուին: - Իրավունք, 14-20 սեպտ.:

Տեր-Վահանյան Հ. Ազգային համաձայնություն չէր կարող չլինել: - Իրավունք, 14-20 սեպտ.:

Մկրտչյան Գ. Վազգեն Մանուկյան. «Այսօր մի նոր իրավիճակ ենք տեսնում Հայաստանում»: [Նախընտրական հանդիպում Գյումրիում]: - Ազգ, 17 սեպտ.:

«Ազգային պետություն» հասարակական-քաղաքական կազմակերպության հայտարարությունը: [Ի պաշտպանություն նախագահական ընտրություններում Վ. Մանուկյանի թեկնածության]: - Այժմ, 18-24 սեպտ.:

Իշխանյան Վ. «Ուրախություն է մեր հոգիներում» [Վ.Մանուկյանի ընտրարշավը Ապարանից Վանաձոր]: - Այժմ, 18-24 սեպտ.:

Կապուտիկյան Ս. Երբ վտանգված է ազգը: - Այժմ, 18-24 սեպտ.:

Համատեղ հայտարարություն [ՍԻՄ-ը, «Ազգային պետությունը», Հայ արիական ցեղապաշտական դաշինքը և «Էություն» միավորումը ողջունում են նախագահական 3 թեկնածուների հրաժարումը ընտրապայքարից հօգուտ Վ.Մանուկյանի]: - Այժմ, 18-24 սեպտ.:

Հովսեփյան Ռ. Այլընտրա՞նք էիք փնտրում, ահա նա: - Կամք (Փարիզ), 18 սեպտ.:

Մտավորականների միության կոչը: [1996թ. նախագահական ընտրություններին հանձին Վ.Մանուկյանի մեկ միասնական թեկնածուով հանդես գալու օգտին]: - Այժմ, 18-24 սեպտ.:

Վահան Հովհաննիսյանի կոչը ԱԱՆ մեկուսարանից: [Վ.Մանուկյանի թեկնածության օգտին]: - Այժմ, , 18-24 սեպտ.:

Âàçãåí Ìàíóêÿí: “Äîñðî÷íûå âûáîðû íåèçáåæíû”. - Âðåìÿ, 23 ñåíò.

ԱՄՆ-ի Պետական քարտուղարության հայտարարությունը: - Կամք (Փարիզ), 28-29 սեպտ.:

Արձանագրությունների կրկնօրինակները Հայաստանից հանվել են: (Վարդուհի Իշխանյանի ասուլիսը և Վ.Մանուկյանի հայտարարությունը) / Փաստ.: - Ազգ, 28 սեպտ.:

Բանակը Երևան իջեցնելուն զուգահեռ՝ ընդդիմության պատգամավորներ կծերբակալվին, ապա…անձեռնմխելիութենե կզրկվին. Վազգեն Մանուկյան և Արշակ Սադոյան ընդհատակ անցած: - Կամք (Փարիզ), 28-29 սեպտ.:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հայտարարությունը: - Կամք (Փարիզ), 28-29 սեպտ.:

Մտավորականներու հայտարարությունը նախագահական ընտրության ընթացքին դրսևորած կեղծիքներու առնչությամբ: - Կամք (Փարիզ), 28-29 սեպտ.:

Սայմընը Օզպորն և Հայաստանի նախագահական ընտրությունը: - Կամք (Փարիզ), 28-29 սեպտ.:

Òðè âîïðîñà êàíäèäàòàì â ïðåçèäåíòû. - Åðåâàíñêèé ïðåññ-êëóá, #1, ñåíòÿáðü, ñ. 16-17.

Վազգեն Մանուկյանի հայտարարությունը. - Յառաջ, 1 հոկտ.:

Çàÿâëåíèå êàíäèäàòà â ïðåçèäåíòû Âàçãåíà Ìàíóêÿíà. –Âðåìÿ, 2 îêòÿáðÿ.

Դիլբարյան Ն. «Այս խմորը շատ ջուր կտանի», - փաստում է Վազգեն Մանուկյանը: [Հոկտ 2-ի մամլո ասուլիսը իր բնակարանում]: - Առավոտ, 3 հոկտ.:

Դիմում ՍԴ նախագահ Գ.Հարությունյանին: - Առավոտ, 3 հոկտ.:

Մարտիրոսյան Գ. Ում ձեռքին է կարթը: - Առավոտ, 3 հոկտ.:

Վազգեն Մանուկյանը մամուլի ասուլիս է հրավիրել իր բնակարանում: - Մոլորակ, 3 հոկտ.:

Ìåñðîïÿí Í. Ïîäçàòûëüíèêè åùå âîåäåäè. - Ãîëîñ Àðìåíèè, 3 îêòÿáðÿ.

Àêîïÿí À. Âàçãåí Ìàíóêÿí íáðàòèëñÿ â Êîíñòèòóöèîííûé ñóä. - Ãîëîñ Àðìåíèè, 3 îêòÿáðÿ.

Êàçàðÿí Ð. Ëþäè øëè â ÖÈÊ (Èíòåðâüþ). - Ãîëîñ Àðìåíèè, 3 îêòÿáðÿ.

×èñòîòà âûáîðîâ ïîä âîïðîñîì. Ãðóïïà íàáëþäàòåëåé ÎÁÑÅ ñäåëàëà îêîí÷àòåëüíîå çàÿâëåíèå. - Ãîëîñ Àðìåíèè, 3 îêòÿáðÿ.

ԱՄՆ պետդեպարտամենտը մտահոգված է: - Այժմ, 4-10 հոկտ.:

ԵԱՀԿ դիտորդական խմբի վերջնական հայտարարությունը: - Այժմ, 4-10 հոկտ.:

Հայտարարություն / Սիլվա Կապուտիկյան, Մարգո Ղուկասյան, Ալվարդ Պետրոսյան, Պերճ Զեյթունցյան, Ազատ Եղիազարյան, Ռուբեն Հովսեփյան, Ալեքսանդր Թոփչյան, Արմեն Հովհաննիսյան: - Այժմ, 4-10 հոկտ.:

Վազգեն Մանուկյանի ասուլիսը [հոկտ. 2-ի]: - Այժմ, 4-10 հոկտ.:

Բաբուխանյան Հ. Ինչպես եղավ այդպես: - Իրավունք, 8-14 հոկտ.:

Գոռ է. Ում էր անհրաժեշտ սեպտեմբերի 25-ը: - Իրավունք, 8-14 հոկտ.:

Ժողովրդի և մաֆիայի պայքարը ավարտվեց ժողովրդի փայլուն հաղթանակով: - Իրավունք, 8-14 հոկտ.: Ստորագր.՝ Հ.Բ.

Իշխանյան Ա. «Ընտրությունները» վերջացած են, մոռացեք: - Իրավունք, 8-14 հոկտ.:

Հայաստանի «Սահմանադրական իրավունք» միության հայտարարությունը 1996թ. սեպտ. 22-ի Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների վերաբերյալ: - Իրավունք, 8-14 հոկտ.:

Դիլբարյան Ն. Վազգեն Մանուկյանը դիմելու է Սահմանադրական դատարան: [«Ազգային համաձայնության հոկտ. 16-ի մամլո ասուլիսը»]: - Առավոտ, 17 հոկտ.:

Àäàìÿí Ð. Ðîññèÿ ïðåäïîëàãàåò íåâìåøàòåëüñòâà". - Ãîëîñ Àðìåíèè, 17 îêòÿáðÿ.

Àðóòþíyí Ã. Ðåçóëüòàòû ïðåçèäåíòñêèõ âûáîðîâ, îí ìåíüøé ìåðå, ñïîðíû.-Ãîëîñ Àðìåíèè, 17 îêòÿáðÿ.

Çàÿâëåíèå áëîêà "Íàöèîíàëüíîå ñîãëàñèå". - Ãîëîñ Àðìåíèè, 17 îêòÿáðÿ.

Ìåñðîïyàí Í. Ïàðëàìåíòñêàÿ ðàñïðàâà. - Ãîëîñ Àðìåíèè, 17 îêòÿáðÿ.

Ժողովրդի միջից ազատության ձգտումը հանել հնարավոր չէ: [Ազգային համաձայնության դաշինքի միասնական մամուլի ասուլիսը]: - Այժմ, 18-24 հոկտեմբերի:

Kouyoumdjian J.-N. Vazken Manoukian, Parcours d'un leader. –France Armenie, octobre.

Դիլբարյան Ն. Վեճ՝ տարբեր հարթություններից [Հոկտեմբերի 31-ին «Ազգային համաձայնության»՝ ժուռն. տանը տված մամլո ասուլիսի մասին]: - Առավոտ, 1 նոյեմբ.:

Խաչատրյան Մ. Վ.Մանուկյան. Ընդդիմության գործողությունները կիստակվեն ՍԴ որոշումից հետո: [Հոկտեմբերի 31-ին «Ազգային համաձայնության» մամուլի ասուլիսի մասին] : - Մոլորակ, 1 նոյեմբ.:

Խեմչյան Ա. Ընդդիմությունը փաստեր ունի, իսկ իշխանություննե՞րը… [Հոկտ. 31-ին «Ազգային համաձայնության» տված մամուլի ասուլիսի մասին]: - Լրագիր, 1 նոյեմբ.:

Մկրտչյան Ն. Վազգեն Մանուկյան.«ՍԴ-ի որոշումը քաղաքական հետևանքներ կունենա մեր երկրի ապագայի համար»: [Հոկտ. 31-ին ժուռն. տանը «Ազգային համաձայնության» տված ասուլիսի մասին]: - Ազգ, 1 նոյեմբ.:

Տեր-Վահանյան Հ. Վարչախումբը հող է նախապատրաստում կեղծիքներն արդարացնելու համար: [Հոկտ. 31-ին ժուռն. տանը «Ազգային համաձայնության» տված ասուլիսի մասին]: - Իրավունք, 2-8 նոյեմբ.:

Լևոն Տեր-Պետրոսյան. «Վազգեն Մանուկյանը ազնիվ է և անշահասեր, բայց որպես քաղաքական գործիչ՝ վտանգավոր մարդ է» [«Մոսկովսկիե նովոստի» թերթի թղթակիցներ Արա Թադևոսյանին և Միխայիլ Շնեյդովին տված հարցազրույցի արտատպությունը]: - Ազգ, 9 նոյեմբ.:

Ընտրական տեղամասերում քվեարկության ամփոփման կարգի խախտումների մասին: - Այժմ, 13-19 նոյեմբ.:

Կարևոր չէ, թե ով ինչպես է քվեարկում, կարևոր է, թե ով և ինչպես է հաշվում ձայները: - Այժմ, 13-19 նոյեմբ.:

Մկրտչյան Ն. Վ.Մանուկյանի ներկայացուցիչները լքեցին ՍԴ-ի դահլիճը: - Ազգ, 20 նոյեմբ.:

Սարգսյան Վ. Կա՞ արդյոք սահմանադրական դատարան: - Այժմ, 20-26 նոյեմբ.:

Ասատրյան Հ. Սահմանադրական դատարանը մերժեց նախագահության թեկնածուների պահանջը: Դիմող կողմը չզարմացավ, պատասխանողը՝ գոհացավ: - Ազգ, 23 նոյեմբ.:

Դիլբարյան Ն. Սահմանադրական դատարանի գիշերը: - Առավոտ, 23 նոյեմբ.:

Իշխանություններ-ընդդիմություն վեճից Սահմանադրական դատարանը ընտրեց ուղիղ ճամապարհը: - Մոլորակ, 23 նոյեմբ.:

Մելքոնյան Ա. Ռաֆայել Ղազարյանը թագադրեց Վազգեն Մանուկյանին [Հանրահավաք]: - Մոլորակ, 23 նոյեմբ.:

Միհասյան Ռ. Մամուլի ասուլիս. 4-րդ փուլ: [Վ. Մանուկյանի մամուլի ասուլիսը]: - Մոլորակ, 23 նոյեմբ.:

Միհասյան Ռ. Նոյեմբերի 21- լույս 22-ի գիշերը ժամը 3 անց 3 րոպեին դատարանը որոշեց: - Մոլորակ, 23 նոյեմբ.:

Մկրտչյան Ն. Վ.Մանուկյան. «Ընտրությունների ժամանակ մեզ հաջողվեց հաղթել իշխանություններին, բայց դրանք փոխել չհաջողվեց» [Նոյեմբերի 22-ին ԱԻՄ-ի գրասենյակում կայացած ասուլիսը]: - Ազգ, 23 նոյեմբ.:

Վազգեն Մանուկյանը ապստամբության կոչ է անում [«Ազգային համաձայնության» հրավիրած նոյեմբերի 22-ի հանրահավաքի մասին] / Արմենպրես: - Լրագիր, 23 նոյեմբ.:

Սարգսյան Վ. Դատավարություն հանուն դատավարության: - Այժմ, 27 նոյեմբերի-3 դեկտեմբերի:

Îãàíåñyí À. Ïîëèòè÷åñêàÿ îáſçàííîñòü. - Ãîëîñ Àðìåíèè, 17 äåêàáðÿ.

Դիլբարյան Ն. «Դա միակ ճևն է իշխանության հետ խոսելու», - ասում է Վազգեն Մանուկյանը խորհրդարանի գրոհի մասին: [ԱԺՄ կոնֆերանսի մասին]: - Առավոտ, 24 դեկտ.:

Խաչատրյան Մ. Պահանջվում են նոր ընտրություններ: [ԱԺՄ կոնֆերանսի մասին]: - Մոլորակ, 24 դեկտ.:

Մամիկոնյան Ն. ԱԺՄ-ն վերլուծեց անցյալը, բայց չնախանշեց ապագան: [Դեկտ. 21-ի ԱԺՄ կոնֆերանսի մասին]: - Լրագիր, 24 դեկտ.:

Մկրտչյան Ն. ԱԺՄ համաժողովը կարևորում է համաժողովրդական ճակատի ստեղծումը: [Դեկտ. 21-ին կայացած ԱԺՄ կոնֆերանսի մասին]: - Ազգ, 24 դեկտ.:

Հարությունյան Ա. Մեկուսարանը՝ ընթերցարան: - Այժմ, 25-31 դեկտ.:

Վազգեն Մանուկյանի շնորհավորանքը Ամանորի առթիվ: - Իրավունք, 27 դկտեմբերի:

1997

Ազգային ժողովրդավարական միություն: - Լրագիր, 30 հունվարի:

Նահապետյան Գ. Վազգեն Մանուկյան. Հայաստանի անկախությանը առայժմ ոչինչ չի սպառնում: - Մոլորակ, 14 փետրվ.:

Վազգեն Մանուկյանի հանդիպումները Իրանում: - Մոլորակ, 14 փետրվարի:

Կորուսյալ քաղաքական ուղեգիծ: [Իրանի Սպահանի հայկական համայնքի հետ հանդիպման մասին] / Նոյյան տապան: - Լրագիր, 14 փետրվ.:

Բազմահազար ժողովուրդը որոտընդոստ ծափերով ողջունեց Վազգեն Մանուկյանին: - Ալիք, 15 փետրվ.:

Âàçãåí Ìàíóêÿí: Îñíîâà òåêñòîâ ýêîíîìè÷åñêè-ñèñòåìà êîðóïöèè / Íîÿí Òàïàí. – Ãîëîñ Àðìåíèè, 15 ôåâðàëÿ.

Âûõîä åñòü - ïîëîãàåò Âàçãåí Ìàíóêÿí / Íîÿí Òàïàí. -Íîâîå Âðåìÿ, 15 ôåâðàëÿ.

Lazarian B. Continued Karabakh Cease-fire Logical, Manoukian. -Iran News. February 16.

Առաջարկվում է ներկայանալ մեղայականով: [Վ.Մանուկյանի ՀՀ գլխավոր դատախազին գրած դիմումի կապակցությամբ] - Լրագիր, 7 մարտի:

Իշխանությունները պիտի գնան երկխոսության: - Հայաստանի Հանրապետություն, 12 մարտի: Ստորագր.՝ Կ.Դ.:

Դավթյան Կ. ԱԺՄ-ն կրկին հրաժարվեց: -Հայաստանի Հանրապետություն, 19 մարտի:

Ինչու չկայացավ հանդիպումը: - Այժմ, 19-25 մարտի:

Վազգեն Մանուկյանը պատրաստ է ներկայանալու դատարան, սակայն ոչ դատախազություն: - Ազգ, 19 մարտի:

96-ի ընտրությունը իրավունք է տալիս խոսելու ապագայի մասին: - Այժմ, 26 մարտի–1ապրիլի:

Դիլբարյան Ն. «Իշխանության քայլերը կախված են նաեւ մեզանից», - որոշում է Ազգային համաձայնության դաշինքը: - Հայկական ժամանակ, 1 ապրիլի:

Խաչատրյան Մ. «Թեժ գարնան» սկիզբ. կազմավորվեց Ազգային համաձայնության դաշինքը: [ԱՀՌ համաժողով]: - Մոլորակ, 1 ապրիլի:

Պողոսյան Լ. Մարտահրավերը նետված է: [ԱՀՌ հիմնադիր համաժողով]: - Ազգ, 1 ապրիլի:

Ìêðò÷ÿí Ì. Ôîðóì äàøèíêà"Íàöèîíàëüíîå ñîãëàñèå" [Ñòåíîãðàììà èç ïåðâîãî ðÿäà ïàðòèé]. –Ãîëîñ Àðìåíèè, 1 àïðåëÿ.

Դիլբարյան Ն. «Թույլ տվեք երկխոսություն, և ժողովուրդը կկողմնորոշվի»: [Հանրահավաք Ազատության հրապարակում ապրիլի 4-ին]: - Հայկական ժամանակ, 5 ապրիլի:

Մելքոնյան Ա. «Թեժ գարնան» սկիզբը: [Հանրահավաք Ազատության հրապարակում ապրիլի 4-ին]: - Մոլորակ, 5 ապրիլի:

M.Vazken Manoukian envisage de lancer un mouvement de desobeissance civile inspire du modele serbe. – La Lettre de l'UGAB, 5 avril.

Սարգսյան Մ. Հուսո գարուն: [Հանրահավաք Ազատության հրապարակում ապրիլի 4-ին]: - Այժմ, 9-15 ապրիլի:

Դիլբարյան Ն. Քաղաքակիրթ երկրներում ցանկացած մեղմ անցումի մեխը արտահերթ Ազ ընտրություններն են: [Ապրիլի 18-ին կայացած հանրահավաքը]: - Մոլորակ, 19 ապրիլի:

Ìêðò÷ÿí Ì. Óäàñòñÿ ëè ðàçâàëèòü äàøèíê. -Ãîëîñ Àðìåíèè, 22 àïðåëÿ.

Վարդանյան Հ. Ազգային համաձայնության դաշինքը ներկայացնում է գործողությունների իր ծրագիրը: - Հայաստանի Հանրապետություն, 2 մայիսի:

Հակոբյան Թ. Ուսանողությունը չի կարող անընդհատ պայքարի մեջ լինել, բայց իր արժանապատվությունը պահպանել պարտավոր է: [ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողության հետ հանդիպումը]: - Մոլորակ, 8 մայիսի:

Մարտոյան Գ. Դաշինքը թուլանում է, իսկ ԱԺՄ-ն՝ ուժեղանու՞մ: [Քաղվածքներ ԱԺՄ 8-րդ համագումարում Վ.Մանուկյանի ելույթից]: - Հայաստանի Հանրապետություն, 10 մայիսի:

Ïëóòíèê À. Äâîå èç îäíîãî ãíåçäà, èëè ïîðòðåò àðìÿíñêîãî ïëèòêèíà íà ôîíå íèùåòû. - Èçâåñòèÿ, 13,14, 15, 16 ìàÿ. Òî æå: Íîâîå âðåìÿ, 21, 24 ìàÿ.

Դիլբարյան Ն. Ազգային ժողովրդավարները և ճակատագրի նետած երեք մարտահրավերները: [ԱԺՄ 8-րդ համագումարից]: - Հայկական ժամանակ, 20 մայիսի:

Դ.Վարդանյան. «Վարչախումբը մարտահրավեր է նետել, ԱԺՄ-ն բարձրացրել է ձեռնոցը»: [ԱԺՄ 8-րդ համագումարը]: - Ազգ, 20 մայիսի:

Խաչատրյան Մ. Փնտրվում են ժողովրդի համակրանքը շահելու ուղիներ: [ԱԺՄ 8-րդ համագումարը]: - Մոլորակ, 20 մայիսի:

Ìêðò÷ÿí Ì. Íà VIII ñúåçäå ÍÄÑ. – Ãîëîñ Àðìåíèè, 20 ìàÿ.

Petrossian S. Current leadership will ruin Karabakh, NDU leader says. –The Noyan Tapan Highlights, 21 may.

Վ.Մանուկյան.«Չէի ցանկանա 88-ի ճանապարհով գնալ ու նույն արդյունքներին հասնել» / Փաստ: - Մոլորակ, 22 մայիսի:

Վազգեն Մանուկյանը բացում է փակագծերը, Պարույր Հայրիկյանը՝ ընդունում նեղացածի կեցվածք: - Իրավունք, 23-29 մայիսի:

Պեպանյան Ա. Ո՞վ կլինի ՀՀ հաջորդ նախագահը. Վազգեն Մանուկյան. առայժմ հավանական թեկնածու թիվ 1: - Հայաստանի Հանրապետություն, 23 մայիսի:

Ավետիսյան Տ. Վազգեն Մանուկյան. «Իշխանական համակարգում անհրաժեշտ են հիմնարար կառուցվածքային փոփոխություններ»: [Մամուլի ազգային ակումբում «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում կայացած մամուլի ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 30 մայիսի:

Դիլբարյան Ն. Վազգեն Մանուկյան. «Միայն իշխանությունը փոխելը բավական չէ»: [Մամուլի ազգային ակումբում «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում կայացած մամուլի ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 30 մայիսի:

Խաչատրյան Մ. Ինչպիսի պետություն կունենանք՝ այս խնդրում մեծ դեր կունենա մամուլը: [Մայիսի 29-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամուլի ասուլիսը]: - Մոլորակ, 30 մայիսի:

Մկրտչյան Ն. ԱԺ-ի նոր ընտրությունները քաղաքական առումով գրագետ քայլ կլինեն: [Մամուլի ազգային ակումբում մայիսի 29-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Ազգ, 30 մայիսի:

Տեր-Սարգիսյան Ն. Մայիսյան անկախության փառաշուք տոնակատարություն: Վազգեն Մանուկյան կարժանանա ժողովուրդի ջերմ ընդունելության: - Ասպարեզ, 10 հունիսի:

Vazgen Manukian calls for National Uniti during Independence day celebration. –Asbarez, 10 june.

Տեր-Սարգիսյան Ն. «Կարևորագույնը օրինականության վերականգնումն է»: [Լոս Անջելեսում հունիսի 9-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ասպարեզ, 12 հունիսի:

Manoukian discasses Washington visit at press conference.- Asbarez, 12 june.

«Կարևորը օրինականության վերականգնումն է»: [Վազգեն Մանուկյանի մամուլի ասուլիսը Լոս Անջելեսում] / «Երևան» տեղեկ. կենտ.: - Մոլորակ, 13 հունիսի:

Գրիգորյան Գ. Մայիս 28-ը և Վազգեն Մանուկյանի ելույթը Փասատինայի մեջ: [Հունիսի 8-ին կայացած տոնակատարությունը]: - Նոր օր, 14 հունիսի:

«Կարևորը օրինականության վերականգնումն է», - ըսավ Վազգեն Մանուկյան: (ՀՅԴ Արև. Ամերիկայի կեդր. կոմիտեի կազմակերպած ասուլիսի ընթացքին): - Հայրենիք, 19 հունիսի:

Hovsepian G. President and opposition leader demonstrate model of correctness in ‘‘Izvestiya. - Yerevan Times, 19 june.

«Ժամացույցի սլաքն ի վնաս մեզ է աշխատում» [Հունիսի 13-ին Գլենդելի Ս. Աստվածածին եկեղեցու «Արմենակ Պետրոսյան» դահլիճում հայության հետ հանդիպումը] / «Երևան» տեղեկատվական կենտրոն: - Հայկական ժամանակ, 21 հունիսի:

«Ես չեմ տեսնում, որ դաշինքով հնարավոր է լուծել մեր ժողովրդի առջև դրված խնդիրները» [«Ազատություն» ռ/կ-ին տված հարցազրույցի մասին]: - Մոլորակ. 24 հունիսի:

Լևոն Տեր-Պետրոսյանը և Վազգեն Մանուկյանը ձգտում են փրկել համակարգը: -Մոլորակ, 24 հունիսի:

Ավետիսյան Տ. Ըստ Վազգեն Մանուկյանի, նավթային գործոնը նաև հայանպաստ բաղադրիչ ունի: [Հունիսի 25-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 26 հունիսի:

Բաբաջանյան Ա. Մեկ անգամ էլ Ամերիկայում: Վազգեն Մանուկյանի կարծիքով Հայաստանն Ա խմբից տեղափոխվել է Ճ խումբ: [Հունիսի 25-ին հրավիրված մամուլի ասուլիսը]: - Առավոտ, 26 հունիսի:

Դիլբարյան Ն. «Քաղաքականություն չեն կառուցում սիրո կամ ատելության վրա»: [Հունիսի 25-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 26 հունիսի:

Հակոբյան Ա. Մեր ժողովուրդը սրա՞ն էր արժանի…:[Հունիսի 25-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 26 հունիսի:

Մկրտչյան Ն. «Սփյուռքը տրոհելու գործում Լևոն Տեր-Պետրոսյանը ավելի մեծ հաջողությունների հասավ, քան ԿԳԲ-ն»,-պնդում է Վազգեն Մանուկյանը: [Հունիսի 25-ին ԱԺՄ գրասենյակում տեղի ունեցած մամուլի ասուլիսը]: - Ազգ, 26 հունիսի:

Ազատյան Գ. Համակարգը կազմալուծվում է:-Հայկական ժամանակ, 1 հուլիսի:

Իսրայելյան Ա. Այդպես է աշխարհի բոլոր ժողովրդավարական երկրներում: - Առավոտ, 17 հուլիսի:

Òåð-Ãåâîðêÿí Ã. Çà òðè ïóíêòà äî âçðûâà èëè êëàí êëàíîì âûòàáàþò. –Óðàðòó, 15-21 àâãóñòà.

Իշխանյան-Մանուկյան Վ. Երկխոսությունը կեղծ կատեգորիա է: / Հարցազրույցը Ա.Զաքարյանի: - Առավոտ, 3 սեպտ.:

Պարոն Վազգեն Մանուկյանի հանդիպումը Հունաստանի Հ.Կ. Խաչի շրջանային վարչության հետ: - Ազատ օր, 3 սեպտ.:

Մեր պետությունը առողջ չէ: [«Ազատություն» ռադիոկայան]: - Ազատ օր, 15 սեպտ.:

Գրիգորյան Ն. Դաշինքը մեռավ, պարոնա՛յք, իսկ ԱԺՄ-ն հզորանալու միտումներ ունի [Սեպտեմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայք, 23 սեպտ.:

Իսրայելյան Ա. Վազգեն Մանուկյանը հրապարակեց Դաշինքի մահազդը [Սեպտեմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Առավոտ, 23 սեպտ.:

Խաչատրյան Մ. Ամբողջ հայության միասնությունն է պետք: [Սեպտեմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Մոլորակ, 23 սեպտ.:

Հակոբյան Ա. «Դաշինքը մեռած է»,- հայտարարեց Վազգեն Մանուկյանը մեկ տարի անց: [Սեպտեմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 23 սեպտ.:

Մենք շարունակելու ենք, և համոզված եմ, որ հաջողության կհասնենք: [Սեպտեմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Այժմ, 24-30 սեպտ.:

Պողոսյան Լ. Դաշինքը մեռած է, թաղման բանակցություններ են գնում, ասում է Վազգեն Մանուկյանը: [Սեպետմբերի 22-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 23 սեպտ.:

Ãðèãîðÿí Ì. "Íîîìçèöèÿ íèãäå íå áûëà òàê ñèëüíà, êàê â Àðìåíèè" (Ïðåññ-êîíôåðåíöèÿ, 22 ñåíòÿáðÿ).-Âîëíà Àðìåíèè, 23 ñåíòÿáðÿ.

Փաշինյան Ն. Սեպտեմբեր 25. Օրվա ժամանակագրություն. - Մոլորակ, 25 սեպտ.:

Òîâìàñÿí À. Âîñïîäðàâäîò ñîñòîÿëñÿ? -Âîëíà Àðìåíèè, 25 ñåíòÿáðÿ.

Նահապետյան Գ. Ինչով է զբաղված «Սեպտեմբեր 26 և ընկ.» թատերախումբը: -Մոլորակ, 26 սեպտ.:

Այդ մարդուն հակացուցված է ղեկավար լինել: [Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած մամլո ասուլիսը]: - Այժմ, 1-7 հոկտ.:

Ասատրյան Հ. Վազգեն Մանուկյանը «ջախջախեց» Տեր-Պետրոսյանի հայացքները, թեև չուրացավ վերջինիս լավ հատկությունը: [Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած ասուլիսը]: - Ազգ, 1 հոկտ.:

Իսրայելյան Ա. Բաց բանակռիվ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: [Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած ասուլիսը]: - Առավոտ, 1 հոկտ.:

Հայաստանի և Արցախի միջև սեպ է խրվում: [Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 1 հոկտ.: Ստորագր.՝ Գ.Հ.:

Պետրոսյան Ա. Ասուլիս ընդդեմ ասուլիսի: [Սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտ.:

1998

Դիլբարյան Ն. Սա զրոյական խաղ չէ, որ ոչ-ոքիով ավարտվի, սա նարդի է: [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսը]: - Առավոտ, 29 հունվ.:

Ջոհրաբյան Ն. ՀՀ Սահմանադրությունը մեր ընտանիքում բեստսելլեր չէ, որ անգիր իմանանք [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսը]: - Հայք, 29 հունվ.:

Մկրտչյան Ն. Ղարաբաղի հարցի լուծման միակ խոչընդոտն այսօր Լ.Տեր-Պետրոսյանն է: [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսը]: - Ազգ, 29 հունվ.:

Գալաջյան Հ. Շարժման 2-րդ տասնամյակը պետք է սկսենք առանց Լ.Տեր-Պետրոսյանի: [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Իրավունք, 30 հունվ.-5 փետրվ.:

Վարդանյան Վ. Միակ խոչընդոտը Հայաստանի գործող նախագահն է: [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 29 հունվ.:

Տեր-Պետրոսյանի հեռացումը միայն սկիզբն է: [Հունվարի 28-ին Մամուլի ազգային ակումբում կայացած ասուլիսը]: - Այժմ, 4-10 փետրվ.:

Հրաժարականը ժողովրդի հիասթափման արդյունք է / Սնարք.: - Հայոց աշխարհ, 5 փետրվ.:

Մամիկոնյան Ն. Մեզ առավել քան լավ ապագա է սպասում: [Փետրվարի 5-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 6 փետրվ.:

Մկրտչյան Ն. Կարևորը ժողովրդավարության հաղթանակն է: [Փետրվարի 5-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 6 փետրվ.:

Վարդանյան Վ. Վազգեն Մանուկյանը Հայաստանի, Ղարաբաղի, ժողովրդավարության ու ընտրությունների մասին [Փետրվարի 5-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 6 փետրվ.:

Տեր-Վահանյան Հ. «Լ.Տեր-Պետրոսյանին չհաջողվեց ամբողջ Հայաստանը դարձնել առևետաբուծական ֆերմա» [Փետրվարի 5-ին կայացած ասուլիսը]: - Իրավունք, 6-12 փետրվ.:

Հարությունյան Ա. Վազգեն Մանուկյան. Միակ երաշխիքը ազատ և արդար ընտրություններն են: [Փետրվարի 5-ի մամլո ասուլիսը ԱԺՄ գրասենյակում]: - Այժմ, 11-17 փետրվ.:

«Կունենանք նախագահ և չենք ունենա կոտրած տաշտակ» [Փետրվարի 12-ին կայացած ԱԺՄ հանրահավաքը]: - Հայկական ժամանակ, 13 փետրվ.:

Մերուժան. Ջոհերը միշտ անմեղներն են լինում: / Հարցազրույցը՝ Հ.Փ [Վ.Մանուկյանի մասին]: - Բումերանգ, 14-21 փետրվ.:

ԱԺՄ-ն նախագահական ընտրություններում կձգտի հաղթանակի: [Փետրվարի 14-ին կայացած ԱԺՄ IX արտահերթ համագումարը]: - Հայք, 17 փետրվ.:

Իսրայելյան Ա. Ըստ ԱԺՄ-ականների՝ ընտրարշավը պղտոր է սկսվել: [Փետրվարի 14-ին կայացած ԱԺՄ IX արտահերթ համագումարը]: - Առավոտ, 17 փետրվ.:

Մինասյան Ռ. Վազգեն Մանուկյան. «Այս անգամ ընտրությունների սկիզբը շատ ավելի պղտոր է»: [Փետրվարի 14-ին կայացած ԱԺՄ IX արտահերթ համագումարը]: - Մոլորակ, 17 փետրվ.:

Մկրտչյան Ն. «Մենք անպայման հաղթելու ենք, կասկած չունենաք»: [Փետրվարի 14-ին կայացած ԱԺՄ IX արտահերթ համագումարը]: - Ազգ, 17 փետրվ.:

Բաբաջանյան Ա. Իշխանությունների ընկած երեք ծուղակները: [Փետրվարի 18-ին «Ազգային առաջադիմություն» կուսակցության համագումարը]: - Առավոտ, 19 փետրվ.:

«Ազգային առաջադիմություն» կուսակցության արտահերթ համագումարի որոշումը: - Շրջան, 20 փետրվ.:

«Ազգային պետություն» կուսակցության որոշումը: - Շրջան, 20 փետրվ.:

ԱԱ համագումարում ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվեց Վազգեն Մանուկյանը: - Շրջան, 20 փետրվ.: Ստորագր.՝ Ժ.Ա.

Հովսեփյան Ս. Կատարիր ընտրությունդ՝ անսալով քո խղճի ձայնին: - Մոլորակ, 20 փետրվ: (Թեկնածուների պատկերասրահ):

Իսրայելյան Ա. Տխուր խոհեր տոնի առթիվ: [Ղարաբաղյան շարժման 10-ամյակին նվիրված հանրահավաքի մասին]: - Առավոտ, 21 փետրվ.:

Հակոբյան Թ. Մենք այդ օրերը, եղբայրությունը մոռանալ չենք կարող: - Մոլորակ, 21 փետրվ.:

Մարտոյան Լ. Մենք այդ օրերը մոռանալու իրավունք չունենք: - Հայաստանի Հանրապետություն, 21 փետրվ.:

Թրվանց Ա. Իշխանությունն ու փողն այլևս փորձություն չեն ԱԺՄ-ի համար: [Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի հանրապետություն, 28 փետրվ.:

Իսրայելյան Ա. Ոչ «հետ դեպի նավահանգիստ», ոչ էլ «մենք ենք մեր սարերը», այլ առաջարկվում է մյուսների հետ համաչափ քայլել դեպի 21-րդ դար: [Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Առավոտ, 28 փետրվ.:

Հակոբյան Ա. Սկսվե՞ց...[Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 28 փետրվ.:

Մկրտչյան Գ. Ուսուցիչը ո՛չ լավ հողագործ է, ո՛չ լավ մանկավարժ: - Առավոտ, 28 փետրվ.:

Մկրտչյան Ն. «ՀՀ նախագահն ընտրվում է ո՛չ Մոսկվայում, ո՛չ Վաշինգտոնում, այլ՝ Հայաստանում» [Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 28 փետրվ.:

«Շուկաների տնօրենները քաղաքականություն են անում»: [Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Մոլորակ, 28 փետրվ.:

Վազգեն Մանուկյանը՝ ժողովրդավարական պետության երաշխավոր: [Ուսանողության հավաք Ժուռնալիստի տանը]: - Առավոտ, 28 փետրվ.:

Âòîðîãî òóðà íå áóäåò (Ïðåññ-êîíôåðåíöèÿ â 27 ôåâðàëÿ). –Íîâîñòè âðåìÿ, 28 ôåâðàëÿ.

Ñòåïàíÿí Â. Â.Ìàíóêÿí.Òðåòèé ïóòü? .-Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 28 ôåâðàëÿ.

Վ Մանուկյան. Ժողովուրդը պետք է համոզված լինի, որ ինքն է ընտրել իր նախագահին: [Փետրվարի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Այժմ, 4-10 մարտի:

Թախտաջյան Մ. Վազգեն Մանուկյան՝ ազգային գործիչ և քաղաքացի: - Հայ կյանք, 11-17 մարտի:

Վ.Մանուկյան. Մենք անցնում ենք այրվող կամուրջով: [Մարտի 10-ին Ժուռնալիստի տանը կայացած մամուլի ասուլիսը]: - Այժմ, 11-17 մարտի:

Աթոյան Լ. Որպես քաղաքագետ և հայորդի: (Քաղաքական դիմանկար): - Առավոտ, 12 մարտի:

Ամիրով Լ. Ռուսաստանի մամուլը մեր ընտրությունների մասին: - Առավոտ, 13 մարտի:

Իսրայելյան Ա. Վազգեն Մանուկյանը վստահ է, որ ինքը երրորդ տեղում չի հայտնվի: -Առավոտ, 13 մարտի:

Վազգեն Մանուկյան. Հայաստանին տնտեսական հրաշք է պետք: [Հանդիպում ընտրողների հետ մարտի 12-ին Արամ Խաչատրյան մեծ դահլիճում] / Արմենպրես: - Ազգ, 13 մարտի:

Դիլբարյան Ն. Վազգեն Մանուկյանը բանակցում է: - Առավոտ, 18 մարտի:

Իսրայելյան Ա. Ոչ Քոչարյանին, ոչ Դեմիրճյանին ԱԺՄ-ն չի պաշտպանում՝ առաջարկելով «քվեարկել համաձայն սեփական խղճի»: [Մարտի 14-ին տեղի ունեցած ԱԺՄ համաժողովը]: - Առավոտ, 25 մարտի:

Հովհաննիսյան Ա. Քվեարկել համաձայն սեփական խղճի: - Հայոց աշխարհ, 25 մարտի:

Պողոսյան Լ. ԱԺՄ-ն հոսանք է, ոչ կուսակցություն, որևէ թեկնածուի չի պաշտպանում: [մարտի 14-ին տեղի ունեցած ԱԺՄ համաժողովը]: - Ազգ, 25 մարտի:

Այսօրվա պրեզիդենտության թեկնածուները: - Լույս (Գլենդել), թիվ 3, մարտ:

Զաքարյան Ա. ԱԺՄ-ում և նրա նիստի շուրջ: - Առավոտ, 8 մայիսի:

Դավթյան Կ. Այս ճանապարհը ոչ մի տեղ չի տանում: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 10 հուլիսի:

Դիլբարյան Ն. Վազգեն Մանուկյանի լռելու և խոսելու ժամանակը: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 10 հուլիսի:

Մամիկոնյան Ն. Երեկվա «Հրատապ թեման» Վ.Մանուկյանի լռությունն էր: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Երկիր, 10 հուլիսի:

Վազգեն Մանուկյանը հոռետես է: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը] / Արմենպրես: - Առավոտ, 10 հուլիսի:

Վարդանյան Վ. ԱԺՄ-ն մնացել է արմատական ընդդիմություն: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 10 հուլիսի:

Վ.Մանուկյան. Չարյաց փոքրագույնին դեմ եմ: [Ասուլիս «Հրատապ թեմա» ծրագրի շրջանակներում Մամուլի ազգային ակումբում]: - Այժմ, 15-21 հուլիսի:

Տեր-Վահանյան Հ. Վազգեն Մանուկյանն արթնացավ «քաղաքական քնից»: [Հուլիսի 9-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Իրավունք, 10-16 հուլիսի:

Ջաքարյան Ա. ԱԺՄ-ն ՔԽ-ից դուրս: - Առավոտ, 15 հուլիսի:

Դիլբարյան Ն. Իջնենք իրական հողի վրա: - Ազգ, 12 սեպտ.:

Թրվանց Ա. Մակեդոնացու, պետռեգիստրի պետի, սուլթանին աղջիկներ մատուցած մարդու մասին ԱԺՄ համաժողովում: [Սեպտեմբերի 11-ին կայացած ԱԺՄ համաժողովի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 12 սեպտ.:

Իսրայելյան Ա. ԱԺՄ. միայն... հուշեր: - Առավոտ, 12 սեպտ.:

Հարությունյան Գ. ԱԺՄ-ն կոնֆերանս էր հրավիրել: - Երկիր, 12 սեպտ.:

Իսրայելյան Ա. «...Կգաք իմ հետևից». 2 տարի անց: - Առավոտ, 26 սեպտ.:

Ղազինյան Ա. Սեպտեմբերյան տարելից: - Ազգ, 26 սեպտեմբերի:

Մանվելյան Ա. Հանդիպման վայրը չի փոխվում: - Օրագիր, 26 սեպտ.:

Նախընտրական փուլն սկսվեց: - Հայոց աշխարհ, 26 սեպտ.: Ստորագր.՝ Վ.Վ.:

Բալյան Ա. Երկու կուսակցություն, երկուսն էլ մի դիրքի: - Առավոտ, 9 հոկտ.:

Կարապետյան Ա. Ազգային ժողովրդավարական միություն. Ինչ անել: - Օրագիր, 5 նոյեմբ.:

Վարդանյան Վ. Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցը կարծես թե մոտ է լուծման: - Հայոց աշխարհ, 10 նոյեմբ.:

Անցյալից եկած մարդը.. և հայտնի չէ նրա ճամփան: [Նոյեմբերի 27-ին «Օրագիր» թերթում կայացած մամլո ասուլիսը]: - Երկիր, 28 նոյեմբ.:

Գրիգորյան Ա. Ժողովրդավարությունը բաժնետիրական ընկերություն է և պատկանում է բոլորին: [Նոյեմբերի 27-ին «Օրագիր» թերթում կայացած մամլո ասուլիսը]: - Առավոտ, 28 նոյեմբ.:

Վարդանյան Վ. Ովքե՞ր իշխանության բերեցին Լ.Տեր-Պետրոսյանին: [Նոյեմբերի 27-ին «Օրագիր» թերթում կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 28 նոյեմբ.:

Áàðñåãyí À. ÍÄÑ íå ñîáèðàåòñÿ áîéêîòèðîâàòü âûáîðû. [Ïðåññ-êîíôåðåíöèÿ â ðåäàêöèè “Îðàãèð”, 27 íîÿáðÿ].- Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 28 íîÿáðÿ.

Միկոյան Մ. «Միակ բանը, որ Հայաստանում բուռն զարգացել է, կեղծիքն է»: - Ազգ, 1 դեկտ.:

Ջաքարյան Ա. Վազգեն Մանուկյանը վերադարձավ խորհրդարան: - Առավոտ, 5 դեկտ.:

Ավագյան Լ. Համարյա «Վազ-գեն, նա-խա-գահ»; [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Առավոտ, 12 դեկտեմբերի:

Թևոսյան Վ. ԱԺՄ-ում ժողովրդից հիասթափվածներ կան: [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Օրագիր, 12 դեկտ.:

Թևոսյան Վ. Մարդու բացառման օրենքը: [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Օրագիր, 12 դեկտ.:

Հարությունյան Գ. Ըստ ԱԺՄ-ի՝ ժողովուրդը և պետությունը հիվանդ են; [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Երկիր, 12 դեկտ.:

Ղալեչյան Թ. Ժողովրդից հիասթափվելը կործանարա՞ր է: [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 12 դեկտ.:

Պողոսյան Լ. ԱԺՄ-ն փոթորիկ է երազում «տանկերի գերեզմանոց Հայաստանը» փրկելու համար: [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Ազգ, 12 դեկտ.:

Վարդանյան Վ. Սովորական նախընտրական համագումար: [ԱԺՄ 10-րդ համագումարի մասին]: - Հայոց աշխարհ, 12 դեկտ.:

Կարապետյան Ա. Ներքաղաքական դաշտում սպասվում են ընդդիմահիշխանական գործարքներ: - Օրագիր, 22 դեկտ.:

Վ.Մանուկյանը հրավեր է ստացել: - Օրագիր, 22 դեկտ.:

Բաբաջանյան Ա. Վազգեն-նախագահից մինչև Դավիթ-վերահսկող: ԱԺՄ-ն հնարավոր պառակտման եզրին: - Առավոտ, 23 դեկտ.:

ԱԺՄ-ն առայժմ սպասում է: - Օրագիր, 28 դեկտ.:

1999

Բաբաջանյան Ա. Իշխանությունը կփոխվի ցնցումներով: [Հանդիպում ԱԺՄ տարածքային կառույցների ղեկավարների հետ]: - Առավոտ, 14 հունվ.:

Դիլբարյան Ն. Ռոբերտ Քոչարյանն ու Վազգեն Սարգսյանը պետք է հեռանան: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]: - Ազգ, 21 հունվ.:

Իսրայելյան Ա. Սելից թռչելու ժամանակը: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]: - Առավոտ, 21 հունվ.:

Զարգարյան է. Ում ժողովուրդն է ժողովուրդը: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]): - Հայաստանի Հանրապետություն, 21 հունվ.:

Հարությունյան Գ. Հեղափոխական պայքարի են կոչում բոլորը: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]: - Երկիր, 21 հունվ.:

Ջիփիից թռչելու ժամանակը: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]: - Օրագիր, 21 հունվ.: Ստորագր.՝ Վ.Թ.:

Վարդանյան Վ. Նախընտրական հայտ: [Հունվարի 20-ին կայացած մումուլի ասուլիսը]): - Հայոց աշխարհ, 21 հունվ.:

Áàðñãàÿí À. Ñïðûãíóòü ñ ïîâçàà... â òåëåãó ? [Ïðåññ-êîíôåðåíöèÿ, 20 ÿíâàðÿ]. –Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 21 ÿíâàðÿ.

Ãðèãîðÿí Ì. Íàðîä äîëæåí ïîáåäèòü äî âûáîðîâ,-ñ÷èòàåò Âàçãåí Ìàíóêÿí [Ïðåññ- êîíôåðåíöèÿ 20-îãî ÿíâàðÿ]. - Ãîëîñ Àðìåíèè, 21 ÿíâàðÿ.

Òàòåâîñÿí À. Ïðîãíîçèðîâàòü êàòàêëüÿ â áåçäíó. [Ïðåññ-êîíôåðåíöèÿ, 20 ÿíâàðÿ] –Íîâîå âðåìÿ, 21 ÿíâàðÿ.

Իսրայելյան Ա. Վազգեն Սարգսյանին կանչեցի մյուս սենյակ: [Վանո Սիրադեղյանի հեռուստաելույթում Վ.Մանուկյանի մասին ասված խոսքերի մեկնաբանությունը]: - Առավոտ, 28 հունվ.:

Մովսիսյան Գ. Վազգեն մանուկյան. «Անձնական հաշվարկներում իշխանությունները չեն սխալվում»: - Հայացք Երևանից, թիվ 10, հունվ.:

Եսայան Մ. Մեր հոգսերի փետրվարը: [Փետրվարի 5-ի հանրահավաքը]: - Առավոտ, 6 փետրվ.:

Կարապետյան Ա. Վազգեն Մանուկյանի ելույթը լի էր կենցաղային մանրամասներով: [Փետրվարի 5-ի հանրահավաքի մասին]: - Օրագիր, 6 փետրվ.:

Հարությունյան Գ ԱԺՄ-ն՝ առջևից, ժողովուրդը՝ արանքում, ինչու՞ է երկիրը, այնուամենայնիվ, «գլորվում»: [Փետրվարի 5-ի հանրահավաքի մասին]: - Երկիր, 6 փետրվ.:

Հին և նոր երկրապահներ: [Փետրվարի 5-ի հանրահավաքը]: - Օրագիր, 6 փետրվ.:

Մուրադյան Ռ. ԱԺՄ-ն բացեց հանրահավաքային «սեզոնը»: [Փետրվարի 5-ի հանրահավաքից]: - Հայաստանի Հանրապետություն, 6 փետրվ.:

Սահակյան Ռ. Վազգեն Մանուկյանը ժողովրդին կոչ է անում միասին լուծել իշխանափոխության խնդիրը: [Փետրվարի 5-ի հանրահավաքը]: - Ազգ, 6 փետրվ.:

Տրուզյան Ս. ԱԺՄ-ն կոչ է անում ժողովրդին համախմբվել և փոխել իշխանություններին: [Փետրվարի 5-ի հանրահավաքի մասին]: - Հայոց աշխարհ, 6 փետրվ.:

ԱԺՄ-ն պատրաստվում է ԱԺ ընտրությունների: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Երկիր, 27 փետրվ.:

Անտոնյան Ա. Հեռացնել Պավլիկ Մորոզովներին: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Օրագիր, 27 փետրվ.:

Ավագյան Լ. Երկու գլուխ մի ղազանում չի եփվի: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Առավոտ, 27 փետրվ.:

Զարգարյան է. ԱԺՄ-ն հավատարիմ է իր ավանդույթներին: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 27 փետրվ.:

Մարտիրոսյան Ա. ԱԺՄ-ն ուզում էր լավ բան ասել, բայց բան չգտավ: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Ժամանակ, 27 փետրվ.:

Պողոսյան Լ. ԱԺՄ նոր կարգախոսը. ազատվել Պավլիկ Մորոզովներից: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Ազգ, 27 փետրվ.:

Վարդանյան Վ. ԱԺՄ-ն բացառում է երկխոսությունը իշխանությունների հետ: [Փետրվարի 26-ի հանրահավաքի մասին]: - Հայոց աշխարհ, 27 փետրվ.:

ÍÄÑ íèêîìó íå äîâåðÿåò. [Ìèòèíã 26 ôåâðàëÿ]. –Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 27 ôåâðàëÿ.

Սիմոնյան Ա. Հին ու նոր բացահայտումներ [Վ. Մանուկյանի հանդիպումը ֆիզիկայի ինստիտուտում]: - Ժամանակ, 4 մարտի:

Եգորյանը խորհրդարան բերեց Մանուկյանին: - Օրագիր, 16 մարտի:

Անտոնյան Ա. Ժողովրդին սիրահարված ֆանատիկոսը [Մարտի 17-ին ԵՊՀ-ում ուսանողների հետ հանդիպման մասին]: - Օրագիր, 18 մարտի:

Ավագյան Լ. Շահ՝ անանձնական, բոլորանվեր: [Հանդիպում համալսարանի ուսանողների հետ]: - Առավոտ, 18 մարտի:

Գրիգորյան Խ. ԵՊՀ հերթական հյուրը: [Մարտի 17-ին ԵՊՀ-ում ուսանողների հետ հանդիպման մասին]: - Երկիր, 18 մարտի:

Դեմիրճյանի խնդիրը Մանուկյանին խանգարելն է: [Հանդիպում համալսարանի ուսանողների հետ]: - Օրագիր, 18 մարտի: Ստորագր.՝ Ա.Ա.:

Չաղարյան Ա. «Սիմվոլից» մերժված ԱԺՄ-ն դատափետում է սիմվոլիզմը: [Մարտի 17-ին ԵՊՀ-ում ուսանողների հետ հանդիպման մասին]: - Ժամանակ, 18 մարտի:

Պողոսյան Լ. Վազգեն Մանուկյանը չափավոր հոռետես է: [Մարտի 17-ին ԵՊՀ-ում ուսանողների հետ հանդիպման մասին]: - Ազգ, 18 մարտի:

Տրուզյան Ս. ԱԺՄ-ԻՄ դաշինքը բացառված է, չի ձևավորվի նաև ԱԺՄ-ՀԺԿ դաշինք: [Մարտի 17-ին ԵՊՀ-ում ուսանողների հետ հանդիպման մասին]: - Հայոց աշխարհ, 18 ապրիլի:

ԱԺՄ-ն ինքնամաքրման շեմին: [«Օրագիր» թերթում լրագրողների հետ հանդիպումը]: - Օրագիր, 24 ապրիլի:

ԱԺՄ լիդերը առայժմ նշում է միայն վճասակարությունը: [«Օրագիր» թերթում լրագրողների հետ հանդիպումը]: - Ժամանակ, 24 ապրիլի

Եթե Ղարաբաղը զիջենք, կդադարենք ինքներս մեզ հարգել: [«Օրագիր» թերթի հյուրն է Վազգեն Մանուկյանը]: - Օրագիր, 24 ապրիլի:

Եսայան Մ. Վազգեն Մանուկյանի հետևից գնալու հարկ չեղավ, նա եկավ կապույտ «Նիվա»-ով [«Օրագիր» թերթում լրագրողների հետ հանդիպման մասին]: - Առավոտ, 24 ապրիլի:

Վարդանյան Վ. Ազատականություն չի նշանակում թալան: [«Օրագիր» թերթում լրագրողների հետ հանդիպումը]: - Հայոց աշխարհ, 24 ապրիլի:

Ìêðò÷ÿí Ì. Äî ñèëîâûõ ñòû÷åê íå äîéäåò-îãðàíè÷àòñÿ ïîâêóïîì. [Âñòðå÷à ñ æóðíàëèñòàìè â ðåäàêöèè ãàçåòû "Îðàãèð"]. – Ãîëîñ Àðìåíèè, 24 àïðåëÿ.

Իսրայելյան Ա. Բաժանումի տխուր խոսքեր [ԱԺ ընտրությունների մասին]: - Առավոտ, 14 մայիսի:

Չարտասանված անուններ [Ակնարկներ նոր կուսակցությունների մասին]: - Առավոտ, 14 մայիսի:

Եսայան Մ. Ճոճանակ-Ճոճանակ, գնա-արի շարունակ: [Հետընտրական խոհեր]: - Առավոտ, 9 հունիսի:

Հակոբյան Թ. Գոնե հանրահավաք կազմակերպեիք: [Վ.Մանուկյանը ԱԺ ընտրությունների վերաբերյալ]: - Երկիր, 9 հունիսի:

Մարտոյան Լ. Ինչ էլ որ լինի, ԱԺՄ-ն կա ու կա: [Վ.Մանուկյանը ընտրությունների մասին]: Հայաստանի Հանրապետություն, 9 հունիսի:

Պետրոսյան Ս. Ժողովրդի ամենալսումպենացված մասն ընտրեց մեր ազգի և պետության ապագան: [Վ.Մանուկյանը ԱԺ ընտրությունների մասին]: - Ազգ, 9 հունիսի:

Տրուզյան Ս. Նոր խորհրդարանը հիմնականում արտացոլում է հասարակության մեջ տիրող վիճակը: [Հունիսի 8-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 9 հունիսի:

Բաբաջանյան Ա. Մորմոնները և մենք: - Առավոտ, 24 սեպտ.:

Ավագյան Լ. Վազգեն Մանուկյան. «Կարծում եմ դատ կլինի»: - Առավոտ, 29 հոկտ.:

Դիլբարյան Ն. Համախմբվել Սահմանադրության միակ երաշխավորի՝ նախագահի շուրջ: [Կարծիք հոկտեմբերի 27-ի դեպքերի մասին]: - Ազգ, 29 հոկտ.:

Զոհրաբյան Ն. Կայունություն՝ թեկուզ կարկատաններով: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 12 նոյեմբ.:

Թաթոյան Ռ. Կայունությունը չի կարող հաստատուն լինել, եթե հենվում է միայն անձերի վրա: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Իրավունք, 12-18 նոյեմբ.:

Հակոբյան Ա. Օդի պես կայունություն է պետք: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 12 նոյեմբ.:

Հովհաննիսյան Լ. Պահպանենք կայունությունը: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 12 նոյեմբ.:

Մանուկյանին էլ էին զանգել: - Հայոց աշխարհ, 12 նոյեմբ.:

Մարտիրոսյան Գ. «Ես արյունոտված աթոռին չեմ նստի»: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Նորաթերթ, 12 նոյեմբ.:

Մկրտչյան Ն. ԱԺՄ նախագահը վտանգավոր է համարում ՀՀ նախագահի հրաժարականը: [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 12 նոյեմբ.:

«Մուշեղ Մովսիսյանը չի կարող դրա կազմակերպիչը լինել» [Նոյեմբերի 11-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Երկիր, 12 նոյեմբ.:

Áàðñåãÿí À. Êàæäûé èùåò â îâíå ñâîé æàðåíûé êàøòà.[Ïðåññ-êîíôåðåíöèÿ 11-îãî íîÿáðÿ â Íàöèîíàëüíîì ïðåññ-êëóáå] –Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 12 íîÿáðÿ.

Եսայան Մ. Գահը մեկն է, թեկնածուները՝ բազում: [Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության վերաբերյալ]: - Առավոտ, 20 նոյեմբ.:

Ավագյան Լ. Վազգեն Մանուկյան. «Կարծում եմ դատ կլինի»: [Հոկտեմբերի 27-ի դեպքի վերաբերյալ]: - Առավոտ, 29 նոյեմբ.:

Ëåâîíÿí À. Áûâøèå ïðåìüåðû: Âçãëÿä ñêâîçü ãîäû.- Ãîëîñ Àðìåíèè, 2 äåêàáðÿ.

ԱԺՄ առաջնորդի կարծիքով ներկայիս մթնոլորտում ճիշտ չէ արտահերթ ընտրություններ անցկացնելը: [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը] / Նոյյան տապան: - Հայաստանի Հանրապետություն, 24 դեկտ.:

Ավագյան Լ. Անվերջ վերադարձ: [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը]: -Առավոտ, 24 դեկտ.:

Գալաջյան Հ. ԱԺՄ-ն յոթ երգ ունի, յոթն էլ արդար ընտրությունների մասին: [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Իրավունք, 24-30 դեկտ.:

Պողոսյան Լ. Կարկատած կայունությունը անկայունության ժամանակավոր սառեցում է: [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Ազգ, 24 դեկտ.:

Վարդանյան Ա. Քննությունը շանտաժի է վերածվում [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Նորաթերթ, 24 դեկտ.:

Վարդանյան Վ. ԱԺՄ-ն կողմնակից է փոխհամաձայնության: [Դեկտեմբերի 23-ին կայացած մամուլի ասուլիսը]: - Հայոց Աշխարհ, 24 դեկտ.:

Անցած մեկ ամսվա ընթացքում իրավիճակն ավելի է սրվել: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 20 հունվ.:

Ավագյան Լ. Վազգեն Մանուկյանը սկսում է ընտրարշավը: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Առավոտ, 20 հունվ.:

Դարձյալ առաջինը: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 20 հունվ.:

Ջոհրաբյան Ն. Հայաստանում չկա իշխանություն: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 20 հունվ.:

Մամյան Ս. Ի՞նչն է կործանում երկիրը: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 20 հունվ.:

Մարգարյան Լ. Կամավոր հրաժարականի պարտադրանք: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Ժամանակ, 20 հունվ.:

Պողոսյան Լ. ՀՀ նախագահի միակ հենարանը Վազգեն Սարգսյանն էր: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Ազգ, 20 հունվ.:

Վարդանյան Ա. ԱԺՄ-ն և նախագահական նոր ընտրությունները: [Հունվարի 19-ի մամլո ասուլիսը]: - Նորաթերթ, 20 հունվ.:

“Åñëè ïðåçèäåíò óéäåò,ïîñëå ýòîãî áóäåò åùå õóæå”. [Ïðåññ-êîíôåðåíöèÿ 19-îãî ÿíâàðÿ] / Íîÿí Òàïàí. - Íîâîå âðåìÿ, 20 ÿíâàðÿ.

Íèêîãîñÿí À. Îò ïðåññ-êîíôåðåíöèè, äî ïðåññ-êîíôåðåíöèè.[Ïðåññ-êîíôåðåíöèÿ 19-îãî àíâàðÿ]- Ãîëîñ Àðìåíèè, 20 ÿíâàðÿ.

Ñòåïàíÿàí Ë. Íåò, ëèäåð ÍÄÑ íå óáåäèë. [Ïðåññ-êîíôåðåíöèÿ 19-îãî ÿíâàðÿ]. - Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 20 ÿíâàðÿ.

Վազգեն Մանուկյանը բացահայտեց պրոցեսը: [Հունվարի 19-ի մամուլի ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 21 հունվ.:

Ավագյան Լ. Կառավարություն թռչելու ժամանակը: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Առավոտ, 11 մարտի:

Բաբաջանյան Ա. ԱԺՄ-ն՝ երկընտրանքի առաջ: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Հայկական ժամանակ, 11 մարտի:

Գրիգորյան Լ. Կուսակցությունների համախմբումով փրկենք Հայաստանը: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Ազգ, 11 մարտի:

Խաչատրյան Մ. Պայքարի կոչ ԱԺՄ համագումարում: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Նորաթերթ, 11 մարտի:

Հակոբյան Ա. Ախտորոշումը կա, բուժման կուրսը հստակ չէ: [Ազմ 11-րդ համագումարի մասին]: - Հայոց աշխարհ, 11 մարտի:

Ղալեչյան Թ. Երկիրը փոսից դուրս բերելու փնտրտուքում: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 11 մարտի:

Մարգարյան Լ. ԱԺՄ-ն սկսեց իր համագումարը: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - ժամանակ, 11 մարտի:

Ìàíó÷àðîâà Í. Íáà êðûëà äîëæíû ïðèìèðèòüý, ëèáî –óéòè. [11-ûé ñúåçä ÍÄÑ]. –Íîâîå Âðåìÿ, 11 ìàðòà.

Բաբաջանյան Ա.Կողմ լինելով՝ դեմ ենք: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Հայկական ժամանակ, 14 մարտի:

Գրիգորյան Լ. Վազգեն Մանուկյան. «Ուզում եմ, որ ԱԺՄ-ի ձեռքերը մի քիչ ազատ լինեն»: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Ազգ, 14 մարտի:

Տեր-Վահանյան Հ. ԱԺՄ-ն յոթ երգ ունի, յոթն էլ՝ արդար ընտրությունների մասին: [ԱԺՄ 11-րդ համագումարի մասին]: - Իրավունք, 14-20 մարտի:

Բաբաջանյան Ա. Բա ինչու՞ Դավիթ Վարդանյանը չի գալիս: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 31 մարտի:

Դիլբարյան Ն. Վազգեն Մանուկյան.«Եվս մի քանի ամիս ժամանակ տանք իշխանավորներին»: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Ազգ, 31 մարտի,:

Եսայան Մ. Շտապ պահանջվում են նորմալ մարդիկ: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Առավոտ, 31 մարտի:

Պողոսյան Լ. Երկիրը գլորվում է, բայց մի քանի ամիս կարելի է համբերել: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 31 մարտի:

Սեյրանյան Լ. Քաղաքական կարուսելը պտտվում է: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Ժամանակ, 31 մարտի:

Վարդանյան Ա. «Հայ ժողովուրդն այնքան մազոխիստ չէ, որ պահանջի Լ.Տեր-Պետրոսայնի վերադարձը»: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: - Նորաթերթ, 31 մարտի:

Տերտերյան Վ. ԱԺՄ առաջնորդն իրադարձությունների սեփական գնահատականներն ունի: [Մարտի 30-ին Մամուլի ազգային ակումբում հրավիրված մամուլի ասուլիսը]: -Հայաստանի Հանրապետություն, 31 մարտի:

Գալաջյան Հ. Ընդմիշտ Վազգեն Մանուկյան: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Իրավունք, 28 ապրիլի-4 մայիսի:

Դիլբարյան Ն. Մեծ լիազորություններով փոխհամաձայնեցված կառավարություն: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 28 ապրիլի:

Եղիազարյան Կ. Հայոց նոր ժամանակի գրաֆիկը: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Երկիր, 28 ապրիլի:

Զարգարյան է. Երրորդ ասուլիսն ու երրորդ առաջարկը: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 28 ապրիլի:

Ջաքարյան Ա. ԱԺՄ առաջարկը «Միասնությանը»: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 28 ապրիլի:

Գևորգյան Գ. Դիտարկումներ դիտորդի կարգավիճակում[Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ժամանակ, 28 ապրիլի:

Հարությունյան Գ. Կիկոսի կանխավարկածով չառաջնորդվենք: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Նորաթերթ, 28 ապրիլի:

Միրզոյան Տ. ԱԺՄ-ն լուծումների գրաֆիկ է առաջարկում: [Ապրիլի 27-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 28 ապրիլի:

Áàðñåãÿí À. Ó Âàçãåíà Ìàíóêÿíà- ñâîè ðåöåïòû [Ïðåññ-êîíôåðåíöèÿ 27-îãî àïðåëÿ]. - Ðåñïóáëèêà Àðìåíèÿ, 28 àïðåëÿ.

Հովհաննիսյան Ռ. Մինչև ժողովուրդը երկրի տերը չդառնա, երկիրը չի փոխվի: - Հայացք Երևանից, թիվ 5 (26), մայիս:

Գրիգորյան Լ «Բազմակուսակցական այս կառավարությունը միասնական թիմի տպավորություն չի թողնում»: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 8 սեպտ.:

Զոհրաբյան Ն. «Այսօր քաղաքական դադար է պետք»: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայկական ժամանակ, 8 սեպտ.:

Իսրայելյան Ա. «Ոնց որ չամիչը բուլկիի մեջ»: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Առավոտ, 8 սեպտ.:

Մարտիրոսյան Ա. Առայժմ չկողմնորոշվող ԱԺՄ: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Ժամանակ, 8 սեպտ.:

Սարուխանյան Ս. Երկրի քաղաքական դաշտը խճճված է, ասում է Վազգեն Մանուկյանը: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 8 սեպտ.:

Սիմոնյան Ա. ԱԺՄ-ի դիմազրկության պատճառը իր իսկ առաջնո՞րդն է: - Երկիր, 8 սեպտ.:

Վարդանյան Վ. Եթե կարող ես օգուտ բերել, արժե դա անել: [Սեպտեմբերի 7-ին Մամուլի ազգային ակումբում կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 8 սեպտեմբերի:

Բերիկյան Ֆ. «ԱԺՄ-ն դիտում եմ կիսակայացած կուսակցություն»: / Հարցազրույցը Ա.Սիմոնյանի: - Երկիր, 19 սեպտ.:

ԱԺՄ համագումարը կշարունակվի երկու շաբաթից: [ԱԺՄ համագումարը]: - Ազգ, 5 դեկտ.:

Գալաջյան Հ. ԱԺՄ արտահերթ համագումարում փորձում են լուծել «Իշխանության մեջ մնալով՝ ընդդիմադիր ըլլալու» գերխնդիրը: [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: - Իրավունք, 5-11 դեկտ.:

Իսրայելյան Ա. «ԱԺՄ-ն կորցրել է իր տեսիլքը»: - Առավոտ, 5 դեկտ.:

Իսրայելյան Ա. Գնացեք, դուք էլ տեղերում բաժանվեք թևերի: [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: - Առավոտ, 5 դեկտ.:

Քոչարյան Շ., Ավագյան Ս. Թերևս իրենք էլ չգիտեն, թե իրարից կոնկրետ ինչ են ուզում: / Հարցազրույցը Ա.Հակոբյանի: - Հայոց աշխարհ, 5 դեկտ.:

Հովակիմյան Վ. Լինել, թե չլինել աղքատ: [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: - Հայկական ժամանակ, 5 դեկտ.:

Մարտիրոսյան Ա. ԱԺՄ-ն ի մի չբերվեց: [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: - Ժամանակ, 5 դեկտ.:

Սարդարյան Գ. Ես մերժում եմ հեղափոխական ուղին,-հայտարարում է Վազգեն Մանուկյանը: [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 5 դեկտ.:

Սիմոնյան Ա. Կարապը, խեցգետինն ու… [ԱԺՄ արտահերթ համագումարի մասին]: -Երկիր, 5 դեկտ.:

Íèêîãîñÿí À. ÍÄÑ ïîêà èçáåæàë ðàñêîëà. [XII ñúâçâ] -Ãîëîñ Àðìåíèè, 5 äåêàáðÿ.

Èøõàíÿí-Ìàíóêÿí Â. “Áåää â òîì, ÷òî íàøà ñòðàíà äåðæèòñÿ íà ñïëåòíÿõ”. / Ëíòåðâüþ Í.Ìàíó÷àðÿí.-Íîâîå âðåìÿ, 9 äåêàáðÿ.

ԱԺՄ-ի գլխավոր խնդիրն է վերականգնել ժողովրդի վստահությունը: [ԱԺՄ համագումարի մասին] / Նույյան տապան: - Ազգ, 19 դեկտ.:

Գալաջյան Հ. ԱԺՄ. հակասությունները գնալով խորանում են: [ԱԺՄ համագումարի մասին]: - Իրավունք, 19-25 դեկտ.:

Իսրայելյան Ա. ԱԺՄ երկու թևերից ընտրվեց երրորդը: [ԱԺՄ համագումարի մասին]: -Առավոտ, 19 դեկտ.:

Իսրայելյան Ա. Ոչ ձուկ, ոչ միս: [ԱԺՄ համագումարի մասին]: - Առավոտ, 19 դեկտ.:

Հովակիմյան Վ. ԱԺՄ-ն ոչ ընդդիմություն է, ոչ էլ դիմություն: [ԱԺՄ համագումարի մասին]: - Հայկական ժամանակ, 19 դեկտ.:

Մարտիրոսյան Ա. ԱԺՄ-ն նորից գնացք նստեց: [ԱԺՄ արտահերթ 12-րդ համագումարի մասին]: - Ժամանակ, 19 դեկտ.:

Սահակյան Վ. ԱԺՄ-ն ուղեխաչքի առաջ: [ԱԺՄ համագումարի մասին]: - Հայոց աշխարհ, 19 դեկտ.:

Ìàíâåëÿí Ã. Çóä àìáèöèé. [Î XII ñüåçäå ÍÄÑ]–Ãîëîñ Àðìåíèè, 19 äåêàáðÿ.

2001

Աբրահամյան Գ. ԱԺՄ-ն քայքայվում է ինքնամաքրման քողի տակ: - Ազգ, 6 փետրվ.:

Իսրայելյան Ա. ԱԺՄ-ն պառակտվեց: - Առավոտ, 6 փետրվ.:

Իսրայելյան Ա. Իքիբիրների՞, մի նախարարությա՞ն ԱԺՄ [«Առավոտ»-ի հարցերն ԱԺՄ վարչության ընտրությունից հետո]: - Առավոտ, 6 փետրվ.:

Հովակիմյան Վ. ՀՀՇ-ն ծնեց ԱԺՄ-ին, ԱԺՄ-ն՝ ԱԺԿ-ին:-Հայկական ժամանակ, 6 փետրվ.:

Վարդանյան Վ.Չախորդ օրերը ծմռան նման կուգան ու կերթան: [ԱԺՄ 12-րդ համագումարի մասին]: - Հայոց աշխարհ, 6 փետրվ.:

Քոչարյան Շ., Բերիկյան Ֆ. Այսուհետ՝ տարբեր ճամբարներում: / Հարցազրույցը Ա.Սիմոնյանի: - Երկիր, 6 փետրվ.:

Իսրայելյան Ա. Կնոջ հայացք [Վարդուհի Իշխանյանի խոսքը ԱԺՄ բեկումնային համագումարում]: - Առավոտ, 9 փետրվ.:

Վարդանյան Վ. Մենք աֆրիկացիներից խելացի չենք: [Պարզաբանումներ]: - Հայոց աշխարհ, 22 հունիսի:

Ջոհրաբյան Ն. ԱԺ-ն որոշեց վերահսկել: [Հոկտեմբերի 27-ի շուրջ]: Հայկական ժամանակ, 24 մայիսի:

Âàçãåí Ìàíóêÿí êàê òîðìîç ðàçâèòèÿ ÍÄÑ? - Íîâîå âðåìÿ, 18 èþëÿ.

Ìàíâåëÿí Ã. Âàçãåí Ìàíóêÿí ïîéäåò äî êîíöà. Îäèí èëè... - Ãîëîñ Àðìåíèè, 23 èþíÿ.

Հակոբյան Ա. Գահավիժում: - Առավոտ, 14 հուլիսի:

ԱԺՄ-ն բաժանումներից հետո էլ չպրծավ հակասություններից / Նոյյան տապան: - Ազգ, 26 հուլիսի:

Գասպարյան Գ. Օրինական խորհուրդը դիրքերը չի զիջի: [Վ.Մկրտչյանի և Ս. Ավագյանի ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 26 հուլիսի:

Ջոհրաբյան Ն. Սեյրան Ավագյանը սպառնում է պատժել բոլորին: - Հայկական ժամանակ, 26 հուլիսի:

Թադևոսյան Վ. ԱԺՄ կանոնադրությունը թերի է: - Հայկական ժամանակ, 26 հուլիսի:

Իսրայելյան Ա. ԱԺՄ-ն անվստահությու՞ն կհայտնի Վազգեն Մանուկյանին: - Առավոտ, 26 հուլիսի:

Հակոբյան Ա. ԱԺՄ-ում էլ են կրքերը շիկանում: - Հայոց աշխարհ, 26 հուլիսի:

Սիմոնյան Ա. Վազգեն Մանուկյանին առաջարկվել է հեռանալ ԱԺՄ-ից, Բերիկյան-Բաղդասարյան-Ավագյան եռյակը՝ ընդդեմ Մանուկյանի: - Երկիր, 26 հուլիսի:

Կա՛մ Վազգենի հետ, կա՛մ նրա դեմ: - Երկիր, 30 հուլիսի: Ստորագր.՝ Ա.Ս.

ԱԺՄ-ում ցլամարտ, այնուամենայնիվ, սպասվում է: [Մամուլի ազգային ակումբում հուլիսի 31-ին կայացած մամլո ասուլիսը]: - Երկիր, 1 օգոստ.:

Թրվանց Ա. Վազգեն Մանուկյանը դետեկտիվ մտածողություն չունի: [Մամուլի ազգային ակումբում հուլիսի 31-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայաստանի Հանրապետություն, 1 օգոստ.:

Իսրայելյան Ա. Իր իսկ ստեղծած հերթական մոնստրի զոհը: [Մամուլի ազգային ակումբում հուլիսի 31-ին կայացած մամլո ասուլիսը]: - Առավոտ, 1 օգոստ.:

Մկրտչյան Ն. ԱԺՄ-ում մարդկանց մի խումբ հեղաշրջում է իրականացնում՝ փորձելով ուզուրպացնել կուսակցությունը: [Մամուլի ազգային ակումբում հուլիսի 31-ին կայացած մամլո ասուլիսը]: - Ազգ, 1 օգոստ.:

Պողոսյան Լ. ԱԺՄ-ում ցլամարտ չի նախատեսվում: [Մամուլի ազգային ակումբում հուլիսի 31-ին կայացած մամլո ասուլիսը]: - Հայոց աշխարհ, 1 օգոստ.:

Íèêîãîñÿí À. Íåïðèñòóïíàÿ èñòîðèÿ [Ïðåññ-êîíôåðåíöèÿ 31-îãî èþëÿ â Íàöèîíàëüíîì ïðåññ-êëóáå]. - Ãîëîñ Àðìåíèè, 2 àâãóñòà.

Թադևոսյան Վ. Վազգեն Մանուկյանը մոտ է հաղթանակին, եթե չասենք, որ արդեն իսկ հաղթել է: - Հայկական ժամանակ, 15 օգոստ.:

Ավետիսյան Ա. ԱԺՄ-ում խառնաշփոթը շարունակվում է: - Ժամանակ, 1 սեպտ.:

Մամիկոնյան Ն. «ԱԺՄ-ում խառը իրավիճակ է»; - Առավոտ, 1 սեպտ.:

Սիմոնյան Ա. Սառը ցնցուղ Վազգեն Մանուկյանի համար: - Երկիր, 1 սեպտ.:

Վարդանյան Վ. Համախմբման միգուցե վերջին փորձը: - Հայոց աշխարհ, 1 սեպտ.:

Վ.Մանուկյանն, ըստ ԱԺՄ վարչության, ունի բռնապետի լիազորություններ: - Ազգ, 1 սեպտ.: Ստորագր.՝ Լ.Գ.:

Հակոբյան Ա. Խոսե՞լ, թե՞ չխոսել. րոպեավճարն է խնդիրը: [Մամուլի ազգային ակումբում ռոպեավճարին նվիրված քննարկման մասին]: - Հայոց աշխարհ, 6 սեպտ.:

Ավետիսյան Ա. «Արմենտելի» հետ հակասությունները սրվում են: [Կապի ոլորտում կառավարության գործունեությունը ստուգող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի հաշվետվության մասին]: - Ժամանակ, 13 սեպտ.:

Գասպարյան Գ. Հանձնաժողովը լրացուցիչ ժամանակ է խնդրում: [Կապի ոլորտում կառավարության գործունեությունը ստուգող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի հաշվետվության մասին]: - Հայաստանի Հանրապետություն, 13 սեպտ.:

Թարփոշյան Վ. Ուշ թե շուտ րոպեավճարը պետք է կիրառվի: [Կապի ոլորտում կառավարության գործունեությունը ստուգող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովի հաշվետվության մասին]: - Հայոց աշխարհ, 13 սեպտ.:

Իսրայելյան Ա. «Նրանց բոլորին քացու տակ էին գցում»; [ԱԺՄ 13-րդ համագումարի մասին]: - Առավոտ, 5 հոկտ.:

«Կուսակցությունը երբեք իմը չի եղել»: ԱԺՄ մանուկյանական թևը դիմում է կոշտ քայլերի: - Ազգ, 5 հոկտ.:

ÍÄÑ â íââîëå íå ðàçìîææàòñÿ, äðóãîå äåëî- ñåé÷àñ.... - Íîâîå âðåìÿ, 10 îêòÿáðÿ.

Առողջացում [Հանդիպում կապանցիների հետ]: - Հայոց աշխարհ, 20 նոյեմբ.:

Մկրտչյան Ա. Անընդհատ խոսելն էլ որևէ բան չի տալիս: (Հանդիպումներ Սյունիքում): - Հայկական ժամանակ, 20 նոյեմ.:

Ավետիսյան Ա. Գնացքից թռչողներ այլևս չեն լինի: [ԱԺՄ 13-րդ համագումարի մասին]: - Ժամանակ, 4 դեկտ.:

Ըստ Վազգեն Մանուկյանի: [ԱԺՄ 13-րդ համագումարի մասին] / Արմենպրես: - Հայոց աշխարհ, 4 դեկտ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

1988 փետրվար – 1990 մայիս

Մեր քաղաքական սկզբունքները 5
Ի՞նչ է պանիսլամիզմը և ի՞նչ է պանթուրքիզմը 7
Սիրելի հայրենակիցներ 8
Մենք ընտրեցինք սահմանադրական ուղին 9
Նպատակը մեր շարժումը ջարդելն է 11
Մեր քաղաքական ուղին 12
ԽՍՀՄ ԳԽ նախագահության հուլիսի 18-ի որոշումը 16
Հայոց համազգային շարժում 17
Մենք բոլոր հարևանների հետ կարող ենք խաղաղ ապրել,
մեզ միջնորդներ պետք չեն 24
Պատերազմը սկսվել է 24
Ղարաբաղյան հարցը միայն Ղարաբաղի հարցը չէ, դա այն փորձաքարն է,
որը ցույց կտա, թե մենք ինչպես կմտնենք 21-րդ դար 26
Մոսկվան լավ գիտի, որ հայերից իրենց ոչ մի վտանգ չի սպառնում 28
Ժողովուրդը պետք է հույսը դնի իր ուժերի վրա և փնտրի
ոչ թե հովանավորներ, այլ դաշնակիցներ 33
Հզորության համար մեծ նշանակություն ունի կազմակերպվածությունը,
միասնությունը 38

Պայքարում կարող ենք հաղթել միայն այն դեպքում, եթե կարողանանք զինվել, կազմակերպվել, հզորանալ 42
Չորս հարց Վազգեն Մանուկյանին 43
Գնացքից թռչելու ժամանակն է 50
Ռուսական շովինիզմի զարթոնքը շատ թանկ կնստի մյուս ժողովուրդների վրա 79

1990 թ. օգոստոս – 1992 թ. սեպտեմբեր

Քաղաքական ծրագիր 90
Առանց ուրիշի հույսի 94
Ջորահանդեսն ընդունում ենք մենք 98
Ունենանք մեր ազգային բանակը 99
Մեր ազգին մեծ ապագա է սպասում 102
Լցվենք լավատեսությամբ, կարողանանք համախմբվել 106
Մենք համաշխարհային ազգ ենք 107
Տիրապետենք իրադրությանը, հստակեցնենք մեր քաղաքականությունը 111
Մեր միասնությունից է կախված՝ կդառնա՞նք արդյոք մենք հզոր ու համաշխարհային ազգ 114
Խորհրդային դրամն անվստահելի է 120
Վճռական քայլի անհրաժեշտությունը 122
«Նախիրիտը»՝ գոյատևման լծակ 128
Նվեր Ադրբեջանին՝ Հայաստանին պատժելով 130
Անբարոյական և մեծ պայքար է գնում իշխանության համար 134
Անկախություն ստանալու շանսերը մեծ են 140
Առանց հավատի հնարավոր չէ պետություն ստեղծել 145
Ցուցաբերենք միասնություն 146
Կլինի դժվարին պայքար 150
Մեր «Այո»-ն կհիշեն սերունդները 156
Վատ վիճակում չէ, որ թողնում եմ համակարգը՝ հրաժարվելով վարչապետությունից 164
Պետք է օգտվել գիտնանք հանգամանքներեն և ոչ թե ծառայինք ուրիշներու շահերուն 169
Իմ վարչապետության տարին ամենածանրն էր 178
Հպարտությամբ տոնել Շուշիի ազատագրումը 186
Մեր միասնությունը հեքիաթային չէ 190

1992 թ. սեպտեմբեր – 1995 թ. դեկտեմբեր

Արցախը հայ ազգի գոյատևման բանալին է 195
Ես չէի կարող դրսում մնալ, դրված է Արցախի լինել-չլինելու խնդիրը 196
Պետնախարար Վազգեն Մանուկյանը պաշտպանության նախարար 197
Սպաների զորակոչը կնպաստի բանակի ստեղծմանը 198
Խաղաղություն հաղթանակի միջոցով 199
Ղարաբաղի ռազմական հաջողությունները մեր հզորության արդյունքն են 201
Ամենախաղաղասեր ուժը բանակն է 203
Մեր ժողովրդի ազատությունը և ապագան ազգային բանակի ձեռքին է 204
Վազգեն Մանուկյանը կրկին հեռանում է 205
Շատերը կարծում էին, որ ինձ կդարձնեն քավության նոխազ 207
Մոնթե Մելքոնյանի այդ երազանքը մեր ժողովուրդը կիրականացնի 212
Մենք հաղթել ենք մեր զինվորների արյան գնով 213
Հզոր բանակ կունենանք միայն պետական ընդհանուր կառույցի բարեփոխմամբ 224
Ես ազնիվ խաղի կողմնակից եմ 226
Հայկական երազանքը գոյատևման փակուղում 230
Բարեկրթությունը ազգային մշակույթի բաղադրիչ մասերից է 244
Պայքարի մեջ չեմ ունեցել իշխանության և ընդդիմության խնդիր 249
Բոլոր հեղափոխական ալիքները մի օր իջնում են՝ աթոռներին թողնելով մի քանի հոգու 253
Պետք է ընդունել պարտադրվող պատերազմը և հաղթել նաև ներքին կյանքում 258
Հայաստանում քաղաքական աշխուժացում չկա 260
Վազգեն Մանուկյանը պարզում է ԱԺՄ տեսակետները 266

1996 թ.

Պայքարի լավագույն ձևը ընտրությունների միջոցով
ժողովրդավարության անիվը շարժելն է....270
Երբ մենք օգնության ձեռք կմեկնենք....272
Վազգեն Մանուկյանը Լևոն Տեր-Պետրոսյանից պակաս խելոք չէ,
բայց դա դեռ արժանիք չէ....280
Հետադարձ հայացք....290
Հայաստանը կրկին արդյունաբերական երկիր....311
Իշխանության բոլոր մակարդակներում կան հայրենասեր, պարկեշտ մարդիկ...316
ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում մեր ժողովրդի առջև պարտավորվում եմ....320
Իշխանությունները չեն կարող ևս մեկ հուլիսի 5 մարսել....328
Նոր խաչմերուկ....333
Ունենանք պետություն, որտեղ ժողովուրդը չի վախենում ապագայի համար....340
Վախեցած ժողովուրդը ստեղծագործ լինել չի կարող....345
Կամք և հաղթանակ....348
Այս պետությունը մեր բոլորինն է....352
Ապօրինի իշխանությունը կայուն լինել չի կարող....354
Ցանկացած ոլորտում դավաճանությունն անընդունելի է,
լինի դա ընտանիք, թե քաղաքական սկզբունքներ....361
Եվ մենք կհաղթենք....368
Այս իշխանությունների օրոք Հայաստանը ապագա չունի....373

1997 թ.- 2002 թ.

ՀՀ գլխավոր դատախազ Ս.Գևորգյանին....380
Իշխանությունները պիտի գնան երկխոսության....381
Շատ բան ունենք դեռ աշխարհին տալու....382
Կամք և վճռականություն....389
Ճակատագիրը մարտահրավեր է նետում մեզ....394
Իշխանություն և սեփականություն նախկին ԽՍՀՄ տարածքում
մասնավորեցման գործընթացում....410
Ժողովուրդը սպասում է կոչի իշխանությունը փոխելու ձևի մասին....416
Այդ մարդուն հակացուցված է ղեկավար լինել....421
Ժամանակը պիտի աշխատի մեր օգտին....427
Տեր-Պետրոսյանի հեռացումը միայն սկիզբն է....435
Միակ երաշխիքը ազատ և արդար ընտրություններն են....438
Եվ մենք պարտավոր ենք հաղթել....442
Եվ մենք կտեսնենք, որ Արարատից լավ սար աշխարհում չկա....447
Կեղծ ընտրություններ, կեղծ կյանք....451
Մենք Հայաստանին ապագա ենք տալու....454
Չարյաց փոքրագույնին դեմ եմ....462
Ժողովուրդը գնում է դառնալու երկրի տերը....468
Մարդու ժամանակը....474
Առանց ժողովրդի Հայաստանը ակոսից հանել հնարավոր չէ....484
ԱԺՄ-ն բացառում է երկխոսությունը իշխանությունների հետ....486
Առանց Ղարաբաղի մասնակցության ղարաբաղյան հիմնախնդիրը չի լուծվի....487
Պահպանենք կայունություն....490
Աշխարհը բաց է մեզ համար....492
Հարցերը ինքստինքյան չեն լուծվում....502
Պետության ղեկավարը պետք է ուղեցույց լինի իր ժողովրդի համար....505
Կենսագրական տվյալներ....520
Մատենագիտական ցանկ....521

ՎԱԶԳԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՓԱԿՈՒՂՈՒՄ

Ելույթների և հոդվածների ժողովածու